НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК АРМЕНИИ
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

ИСТОРИЯ СОПРЕДЕЛЬНЫХ С АРМЕНИЕЙ СТРАН

В ЧЕТЫРЕХ ТОМАХ

ТОМ III

НОВОЕ ВРЕМЯ

ЗАНГАК
ИЗДАТЕЛЬСТВО
ЕРЕВАН 2023

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

HISTORY OF NEIGHBOURING COUNTRIES OF ARMENIA

IN FOUR VOLUMES

VOLUME III

MODERN TIMES

ZANGAK
PUBLISHING HOUSE
YEREVAN 2023

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱԿԻՑ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՉՈՐՍ ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՏՈՐ III

ՆՈՐ ՀՐԶԱՆ

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2023

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63
Հ 247

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ Է ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼ
ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Հրատարակվում է ՀՀ ԿԳՄՍՆ Գիտության պետական կոմիտեի պատվերով՝
պետական ֆինանսավորմամբ

Գլխավոր խմբագիր՝ Ռուբեն Սաֆրաստյան
Խմբագրական խորհուրդ՝ Վ. Ա. Բայբուրդյան (պ. գ. դ.), Ն. Վ. Հարությունյան (պ. գ. դ.),
Ն. Հ. Հովհաննիսյան (պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից–անդամ), Պ. Մ. Մուրադյան (պ. գ. դ.),
Պ. Ա. Չոբանյան (պ. գ. դ.), Ռ. Ա. Սաֆրաստյան (պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս),
Ա. Վ. Քոսյան (պ. գ. դ.)
Հատորի խմբագիր՝ Վահան Բայբուրդյան
Անվանացանկերի կազմողներ՝ Աննա Անտոնյան, Աշխեն Գևորգյան,
Վերոնիկա Թորոսյան, Մոնիկա Միրզոյան
Քարտեզների հեղինակ՝ Վարդան Մխիթարյան

Հայաստանի հարակից երկրների պատմություն / Խմբ. խորհուրդ՝ Ռ. Սաֆրաստյան և ուրիշ.—
Հ 247 Եր.: «Զանգակ» հրատ., 2023:
Հ. 3: Նոր շրջան.— 600 էջ + 24 էջ ներդիր:

Հայաստանի հարակից երկրների պատմության երրորդ հատորն ընդգրկում է Հայաստանին սահմանակից երկրների՝ Իրանի, արաբական երկրների, Վրաստանի, Օսմանյան կայսրության, ինչպես նաև Արևելյան Այսրկովկասի տարածաշրջանի XVIII դարի վերջից XX դարի սկիզբն ընկած ժամանակաշրջանի պատմությունը:

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63

ISBN 978–9939–99–018–7

© ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, 2023
© «Զանգակ–97» ՍՊԸ, 2023

Editor in Chief: Ruben Safrastyan
Editorial Board: V. A. Bayburtyan, Dr. Sci. (Hist.), P. A. Chobanyan, Dr. Sci. (Hist.),
N. V. Harutyunyan, Dr. Sci. (Hist.), N. H. Hovhannisyan, Dr. Sci. (Hist.), Corresp. Member of NAS RA,
A. V. Kosyan, Dr. Sci. (Hist.), P. M. Muradyan, Dr. Sci. (Hist.),
R. A. Safrastyan, Dr. Sci. (Hist.), Academician of NAS RA
Editor of the Volume: Vahan Bayburtyan
Indices by Anna Antonyan, Ashkhen Gevorgyan, Monika Mirzoyan, Veronika Torosyan
Maps by Vardan Mkhitaryan

Главный редактор: Рубен Сафрастян
Редакционная коллегия: Н. В. Арутюнян (д. и. н.), В. А. Байбуртян (д. и. н.), А. В. Косян (д. и. н.),
П. М. Мурадян (д. и. н.), Н. О. Оганесян (д. и. н., член–корр. НАН РА),
Р. А. Сафрастян (д. и. н., академик НАН РА), П. А. Чобанян (д. и. н.)
Редактор тома: Ваан Байбуртян
Составители индексов: Анна Антонян, Ашхен Геворгян, Моника Мирзоян, Вероника Торосян
Автор карт: Вардан Мхитарян

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 13

ԲԱԺԻՆ I
ԻՐԱՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՂԱՋԱՐՆԵՐԻ ԱՐՔԱՅԱՏԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ: ԻՐԱՆԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ *(Վ. Բայբուրդյան)*

1. ԻՐԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ: ԵՐԿՐԻ ԸՆԴԳՐԿՈՒՄԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ, ԱՌԱՋԻՆ ԻՐԱՆԱ–ՌՈՒՍԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ 16
2. 1821–1823 ԹԹ. ԻՐԱՆԱ–ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ 26
3. 1826–1828 ԹԹ. ԻՐԱՆԱ–ՌՈՒՍԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԸ 30
4. ՀԵՐԱԹԻ ԱՌԱՋԻՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ 33
5. XIX ԴԱՐԻ 30–40–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱՆԱ–ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 37

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԻՐԱՆՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ *(Վ. Բայբուրդյան)*

1. ԲԱԲԻՆԵՐԻ ԵՎ ԲԱՀԱՅԻՆԵՐԻ ՇԱՐԺՈՒՄԸ 39
2. ԲԱՐԵՆՈՐՈԳՉԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ 46

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ «ԽԱՂԱՂ» ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄՆ ԻՐԱՆ ԵՎ ՆՐԱ ՎԵՐԱՇՈՒՄԸ ԿԻՍԱԳԱՂՈՒԹԻ *(Վ. Բայբուրդյան)*

1. ՀԵՐԱԹԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆԳԼՈ–ԻՐԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ 51
2. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԵՐԹԱՓԱՆՑՄԱՆ ՈՒԺԵՂԱՑՈՒՄՆ ԻՐԱՆ 54

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
1905–1911 ԹԹ. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՆՈՒՄ
(Վ. Բայբուրդյան)

1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋ 64
2. 1905–1911 ԹԹ. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 67
3. ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆԸ 74

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ԻՐԱՆԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ *(Վ. Բայբուրդյան)*

1. ԻՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ 79
2. ԻՐԱՆԻ ՉԵԶՈՔՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄԸ ՊԱՏԵՐԱԶՄՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՎԱԼՈՒՄԸ ԵՐԿՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 82

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ
ԻՐԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ
(Վ. Բայբուրդյան)

1. ԻՐԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԸ, ՑԵՂԵՐԸ, ԿՐՈՆՆԵՐԸ ԵՎ ԱՅԼՆ 93
2. ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ, ԱՐՀԵՍՏՆԵՐԸ ԵՎ ԱՌԵՎՏՈՒՐԸ 96
3. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՐԳԸ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԴԱՏԱՀԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ԲԱՆԱԿԸ, ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 99
4. ՀԱՅԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ: ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔՈՒՄ 108

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ
ԻՐԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

1. ԳԵՂԱՆԿԱՐՁՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԱՅԼ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐ *(Վ. Բայբուրդյան)*. . . 118
2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ *(Ա. Կոզմոյան)* 123

Օգտագործված գրականություն 130

ԲԱԺԻՆ 2
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ XVIII ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ — XIX ԴԱՐԻ 30–ԱԿԱՆ ԹԹ. *(Ռ. Սաֆրաստյան)*

1. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԵԼԻՄ Գ–Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ . . .138
2. ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԵՐԸ ՄԱՀՄՈՒԴ Բ–Ի ՕՐՈՔ 145

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ 40–60–ԱԿԱՆ ԹԹ.
(Ռ. Սաֆրաստյան)

1. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ԹԱՆԶԻՄԱԹԻ ՇՐՋԱՆՈՒՄ 151
2. ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԹԱՆԶԻՄԱԹԻՆ 161

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ 70–ԱԿԱՆ ԹԹ.
(Ռ. Սաֆրաստյան)

1. ՃԳՆԱԺԱՄ 165
2. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ 170

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ 70–ԱԿԱՆ ԹԹ. ՎԵՐՋԻՆ — 1908 Թ. *(Ռ. Սաֆրաստյան)*

1. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԻԴՅԱՆ «ՁՈՒԼՈՒՄԻ» ՇՐՋԱՆՈՒՄ. 176
2. ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԵՐԻՏԹՈՒՔԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ. 189

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ 1908–1918 ԹԹ. *(Ռ. Սաֆրաստյան)*

1. ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ. 193
2. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ 1908–1914 ԹԹ. 197
3. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ:.
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ 210

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ
ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ XVIII ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ — XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ *(Վ. Ղևեյան)* 217

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ (XVIII ԴԱՐԻ ՎԵՐՋ — XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ) *(Ա. Խառատոյան)* 226

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ
ՄՇԱԿՈՒՅԹ

1. ԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄԱՄՈՒԼ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ *(Ա. Սաֆարյան)* . . .236
2. ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ *(Ա. Հովհաննիսյան)* 242
3. ՀԱՅԵՐԻ ԴԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ *(Հ. Ստեփանյան)* . 247

Օգտագործված գրականություն 254

ԲԱԺԻՆ 3
ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԵԳԻՊՏՈՍԸ XIX ԴԱՐՈՒՄ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ *(Ն. Հովհաննիսյան)*

1. ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ: ԹՈՒՐՔ–ՄԱՄԼՈՒՔՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԲԱԽՈՒՄՆԵՐԸ XIX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ 260
2. ՄՈՒՀԱՄՄԵԴ ԱԼԻՆ ԵՎ ՆՐԱ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՐԻԵՐԱՅԻ ՍՐԸՆԹԱՑ ՎԵՐԵԼՔԸ. 263
3. ՄՈՒՀԱՄՄԵԴ ԱԼԻՆ՝ ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՒՍԱԿԱԼ 267
4. ՄՈՒՀԱՄՄԵԴ ԱԼԻԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 269
5. ՄՈՒՀԱՄՄԵԴ ԱԼԻԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԵԳԻՊՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ 275
6. ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿ 277
7. ԵԳԻՊՏԱԿԱՆ ՁՈՐՔԵՐԻ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ՊԱՂԵՍՏԻՆ ԵՎ ՍԻՐԻԱ: ԵԳԻՊՏԱ–ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ (1831–1833 ԹԹ.) ԵՎ ԵՐԿՐՈՐԴ (1839–1840 ԹԹ.) ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ. 280
8. ԵԳԻՊՏՈՍԸ ՍԱՅԻԴ ՓԱՇԱՅԻ ԵՎ ԻՍՄԱՅԻԼԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1854–1879 ԹԹ.): ԵԳԻՊՏՈՍԻ ԱՌԱՋԻՆ ՎԱՐՉԱՊԵՏ ՆՈՒԲԱՐ ՆՈՒԲԱՐՅԱՆԸ. . 285
9. ԱՀՄԱԴ ԱՐԱԲԻԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵԳԻՊՏՈՍԻ ՆՎԱՃՈՒՄԸ ԱՆԳԼԻԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ (1881–1882 ԹԹ.) 288
10. ԱՆԳԼՈ–ԵԳԻՊՏԱԿԱՆ ԿՈՆԴՈՄԻՆԻՈՒՄԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՍՈՒԴԱՆՈՒՄ (1898–1899 ԹԹ.): ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ 293
11. ԵԳԻՊՏՈՍՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ. ԵԳԻՊՏՈՍԸ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՊՐՈՏԵԿՏՈՐԱՏ 296

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԻՐԱՔԸ XIX ԴԱՐՈՒՄ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ *(Ն. Հովհաննիսյան)*

1. ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐՈՒՄ, ԴԱՈՒԴ ՓԱՇԱՆ ԵՎ ԻՐԱՔԻ ՎԵՐԱՆՎԱՆՈՒՄԸ «ԲԱԲԵԼՈՆԻ ԵՐՋԱՆԻԿ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ» 301
2. ԿՅՈՒԼԵՄԵՆՆԵՐԻ ԴԻՆԱՍՏԻԱՅԻ ՏԱՊԱԼՈՒՄԸ: ԻՐԱՔԸ ԽՌՈՎԱՀՈՒՅԶ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ (1830–1840–ԱԿԱՆ ԹԹ.) 306
3. ԹԱՆՁԻՄԱԹԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐՆ ԻՐԱՔՈՒՄ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ. . .312
4. ԻՐԱՔԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ. 314

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ
ՍԻՐԻԱՆ XIX ԴԱՐՈՒՄ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ *(Ն. Հովհաննիսյան)*

1. ՍԻՐԻԱՆ ԵՎ ՊԱՂԵՍՏԻՆԸ ԵԳԻՊՏԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1832–1840 ԹԹ.) 319
2. ՄՈՒՍՈՒԼՄԱՆ–ՔՐԻՍՏՈՆՅԱ ԲԱԽՈՒՄՆԵՐԸ 1840–1860 ԹԹ. 325
3. ԹԱՆՁԻՄԱԹԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՓՈՐՁԵՐԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ 328
4. ՍԻՐԻԱՆ ԱԲԴՈՒԼՀԱՄԻԴՅԱՆ ՁՈՒԼՈՒՄԻ ԵՎ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1876–1914 ԹԹ.) 329
5. ՍԻՐԻԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1914–1918 ԹԹ.) 335
6. ԱՐԱԲՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ 1915 Թ. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ ԵՎ ԱՐԱԲ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՍՊՆՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 341

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ԼԻԲԱՆԱՆԸ XIX ԴԱՐՈՒՄ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ *(Ն. Հովհաննիսյան)*

1. ԼԻԲԱՆԱՆՅԱՆ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ. 345
2. ԼԻԲԱՆԱՆԻ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ ԵՎ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՈՒՂՂԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ. 348
3. ԼԻԲԱՆԱՆԻ ՄԱՍՆԱՏՈՒՄԸ ՄԱՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԴՐՈՒԶԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ: ԴՐՈՒԶ–ՄԱՐՈՆԻ ԲԱԽՈՒՄՆԵՐԸ 1840–1860 ԹԹ. 349
4. ԼԻԲԱՆԱՆԻ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ: ԱՐԹԻՆ ԴԱՈՒԴՅԱՆԸ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՍԱԿԱԼ. 353
5. ԼԻԲԱՆԱՆԸ ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴ Բ–Ի ԵՎ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1876–1914 ԹԹ.) 355
6. ԼԻԲԱՆԱՆԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1914–1918 ԹԹ.) 358

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՄՇԱԿՈՒՅԹ *(Կ. Խուդավերդյան)*. 361

Օգտագործված գրականություն 369

ԲԱԺԻՆ 4
ՎՐԱՍՏԱՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՎՐԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԵՍՆԱՄՅԱԿԻՆ
(Վ. Բայբուրդյան, Պ. Չոբանյան)

1. ՔԱՐԹԼԻԻ ԵՎ ԿԱԽԵԹԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ . . 374
2. ԱՐԵՎՄՏՅԱՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ: ՎՐԱՍՏԱՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ . . 393
3. ՎՐԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ XIX ԴԱՐԻ 20–30–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 402

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՎՐԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ 30–50–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ
(Վ. Բայբուրդյան, Պ. Չոբանյան)

1. ՑԱՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ 410
2. ԴՐԻՄԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ՎՐԱՍՏԱՆ 417
3. ՑԱՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՎՐԱՑԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ 421

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ
ՎՐԱՍՏԱՆԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ *(Վ. Բայբուրդյան, Պ. Չոբանյան)*

1. ՃՈՐՏԱՏԻՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՃՈՐՏԱՏԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ 429
2. ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ, ԱՊՐԱՆՔԱԴՐԱՄԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ: ՔԱՂԱՔՆԵՐԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՌԵՎՏՈՒՐԸ: ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 435
3. ՑԱՐԻԶՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԵՏՌԵՖՈՐՄՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ: ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԸՆԴՎԶՈՒՄՆԵՐԸ 441

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ՎՐԱՍՏԱՆԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ: ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ *(Վ. Բայբուրդյան, Պ. Չոբանյան)*

. 453

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՀԱՅԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ *(Վ. Բայբուրդյան, Ս. Սահակյան)* 460

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ
ՄՇԱԿՈՒՅԹ

1. ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՄԱՄՈՒԼ *(Վ. Բայբուրդյան, Ս. Սահակյան)* 469
2. ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ, ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԹԱՏՐՈՆ, ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ *(Վ. Բայբուրդյան, Ս. Սահակյան)* 473
3. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ *(Հր. Բայրամյան)* 476
4. ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ *(Պ. Չոբանյան)* 480

Օգտագործված գրականություն 481

ԲԱԺԻՆ 5
ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԸ
XVIII ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XIX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ *(Վ. Բայբուրդյան)*

1. ՌՈՒՍ–ԻՐԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ԵՎ ԳՅՈՒԼԻՍՏԱՆԻ ՈՒ ԹՈՒՐՔՄԵՆՉԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ 487
2. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՆԱԽԿԻՆ ԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ: ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐԱՍՏԵՂԾ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ 497

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԸ XIX ԴԱՐԻ 30–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ԴԱՐԻ ՎԵՐՋԸ *(Վ. Բայբուրդյան)*

1. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ: ԵՐԿՐԱՄԱՍՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 500
2. ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ: 1870 Թ. ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՌԵՖՈՐՄԸ: ԵՐԿՐԱՄԱՍՈՒՄ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ 512

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ
ՆԱՎԹԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՈՒՌՆ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ: ՀԱՅԵՐԻ ԴԵՐԸ ՆԱՎԹԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ *(Վ. Բայբուրդյան)*

1. ԲԱՔՈՒՆ ՆԱՎԹԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆ ԿԵՆՏՐՈՆ 518

ԳԼՈՒԽ ՉՈՐԲՈՐԴ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԸ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԲՈՎՈՒՄ: 1900–1903 ԹԹ. ՃԳՆԱԺԱՄԸ *(Վ. Բայբուրդյան)* 525

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՀԱՅ–ԹԱԹԱՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ԲԱՔՎՈՒՄ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ *(Վ. Բայբուրդյան)* 532

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ *(Վ. Բայբուրդյան)* 542

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ
ՀԱՅԵՐՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ: ՀԱՅԵՐԻ ԴԵՐԸ ԵՐԿՐԱՄԱՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔՈՒՄ *(Վ. Բայբուրդյան)* 545

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ՄՈՒՍՈՒԼՄԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԷԹՆԻԿ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԳՐԱՎՈՐ ԹՅՈՒՐՔԱԼԵՁՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԻ ՎՐԱ *(Վ. Գալստյան)* 561

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ՄՈՒՍՈՒԼՄԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ *(Վ. Բայբուրդյան)* 564

Օգտագործված գրականություն 570

Անձնանուններ 576
Տեղանուններ 588

ԱՌԱՋԱԲԱՆ

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող քառահատորյակի երրորդ հատորը ընդգրկում է համաշխարհային պատմության բեկումնային նշանակություն ունեցող շրջաններից մեկը՝ նոր պատմության դարաշրջանը: Ժամանակագրական առումով այն ընդգրկում է մեկ հարյուրամյակից քիչ ավելի մի շրջան, որի ջրբաժան սահմանագիծը միջին դարերից XVIII դարի վերջի Ֆրասիական մեծ հեղափոխությունն է, իսկ վերջնագիծը՝ Առաջին աշխարհամարտի ավարտը: Այդ հեղափոխությունը, որն աչքի էր ընկնում իր առավել արմատական բնույթով, խորությամբ ու թափով, ողջ մարդկության վրա ունեցած քաղաքական, գաղափարախոսական սոցիալական և տնտեսական ազդեցության ծավալներով, չափազանց մեծ ներգործություն ունեցավ նաև Հայաստանում և նրա հարակից երկրներում՝ նրանց ժողովուրդներին ևս ներգրավելով համաշխարհային պատմական զարգացման գործընթացի մեջ:

Հիրավի, նոր պատմության շրջանը մարդկային քաղաքականության զարգացման մեջ նախադեպը չունեցող մի դարաշրջան է, երբ մարդկությունը իրենից թոթափեց միջնադարի խավարը, մտավոր կաշկանդվածությունը, սոցիալ–քաղաքական զարգացման ճանապարհին եղած բազում արգելքներն ու խոչընդոտները և հուժկու թափով դուրս եկավ նորացման, արդիականացման տնտեսական կյանքի բուռն առաջընթացի, գիտության ու լուսավորության վերընթաց զարգացման լայն մայրուղի: Առհասարակ դրական կտրուկ տեղաշարժեր արձանագրվեցին մարդկային կյանքի որակի բնագավառում: Համաշխարհային հաղորդակցության ուղիների բուռն ծավալումը, զարգացումն ու կատարելագործումը, երկաթուղիների և հեռագրական գծերի կառուցումը նպաստեցին ազգերի ու ժողովուրդների փոխադարձ շփումների ուժեղացմանը, գիտական ու մշակութային կապերի սերտացմանը, գաղափարների փոխանակմանը, փոխազդեցությունների վերելքին և այլն: Համաշխարհային պատմության նոր շրջանը վերջ տվեց մեկուսացված քաղաքակրթությունների աշխարհին: Ուժեղացան բազմաբնույթ շփումները տարբեր երկրների ու ժողովուրդների միջև, ծայր առավ տեղական քաղաքակրթությունների մեծացման գործընթացը: Կատարվում էր ոչ միայն գիտելիքների, այլև փորձի ակտիվ փոխանակում, Արևելքն ու Արևմուտքը սերտ կապերով շաղկապվեցին միմյանց հետ, դարեր շարունակ մեկուսացված ու ինքնամփոփ կյանքով ապրող ժողովուրդները

ներգրավվեցին համաշխարհային պատմության գործընթացների մեջ, իսկ պատմությունն ավելի ու ավելի ձեռք բերեց համաշխարհային բնույթ:

Անկասկած, Հայաստանի հարակից երկրները ևս անմասն չեն մնացել համաշխարհային զարգացման այդ հուժկու երթից: Նրանք փորձել են իրենց վրայից թոթափել միջնադարյան կաշկանդիչ արգելքները, կրոնագաղափարախոսական դարերով ձևավորված կաղապարները և աշխատել բարեփոխումների ճանապարհով դուրս գալ արդիականացման ու զարգացման ուղին:

Պատմության նոր ժամանակաշրջանը բնորոշվում է նաև նրանով, որ հեղափոխությունների բովով անցած եվրոպական մի շարք միապետություններ, վերածվելով ուժեղ կենտրոնացված տերությունների, աշխատում էին ռազմական և դիվանագիտական միջոցներով աշխարհի տարբեր մասերում ձեռք բերել գաղութներ, ազդեցության գոտիներ, ռազմական հենակետեր, հումքի աղբյուրներ, վաճառահանման շուկաներ և այլն: Այսպիսով ձևավորվեց գաղութային համակարգը, որն իր գոյությունը շարունակեց ընդհուպ մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը, երբ գաղութատիրությունը վերջնականապես վերացվեց և աշխարհի տարբեր մայրցամաքներում սկիզբ առավ ազգային պետությունների ստեղծման գործընթացը: Գաղութային համակարգի գոյության անխուսափելի հետևանքը եղան գիշատիչ հակումներով տարված աշխարհի հզոր պետությունների և քաղաքական–ռազմական դաշինքների միջև անվերջանալի պատերազմները, բացահայտ ու թաքնված ռազմական ու քաղաքական դիմակայությունն ու առճակատումը, որոնք խլում էին միլիոնավոր մարդկանց կյանքեր, ավերում ու կործանում էին հարյուրամյակների ընթացքում սերունդների կողմից ստեղծած նյութական ու մշակութային արժեքները: Պատմության նոր դարաշրջանի հենց արշալույսին Ռուսական կայսրությունը քայլ առ քայլ ուժեղացնում էր իր նվաճողականությունը դեպի Կովկասյան շղթան՝ նպատակ ունենալով նաև ողջ Հարավային Կովկասի լեռնառազմակալումը և կայուն բնական սահմանի հաստատումը Կուր–Արաքս–Ախոյան ջրբաժան գծի վրա: Այդ հուժկու առաջխաղացման հետևանքով, որն ուղեկցվում էր շահական Իրանի և Օսմանյան կայսրության հետ պատերազմներով, Այսրկովկասը միացվեց Ռուսաստանին: Այդ շրջադարձային նշանակություն ունեցող իրադարձության հետևանքով, անկասկած, այդ երկրամասում ժողովուրդները ձեռք բերեցին տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացման նոր հնարավորություններ:

Հայ ժողովուրդը թևակոխեց նոր պատմության շրջանը որպես մի հավաքականություն, որը զուրկ էր պետականությունից, նաև դարեր շարունակ լինելով Իրանի, Օսմանյան կայսրության, իսկ ավելի ուշ նաև Ռուսական կայսրության տիրապետության տակ՝ զուրկ էր իր սեփական քաղաքական կյանքն ունենալու հնարավորությունից: Ընդհատվել էր նաև հայրենի հողի վրա հայ ժողովրդի համախմբման գործընթացը: Օտար ուժերի քմահաճույքով Հայաստանը մասնատված ու բաժանված էր քաղաքական սահմաններով, կորցրել էր իր ազատությունն ու անկախությունը, հետևաբար նաև իր սեփական ճակատագիրը տնօրինելու հնարավորու-

թյունն ու իրավունքը: Ըստ էության, ողջ նոր պատմության ընթացքում հայությունը կոտորակված էր առանձին մասերի, իսկ նրա կենսական տարածքը բաժանվում էր երեք պետությունների՝ Իրանի, Թուրքիայի և Ռուսաստանի միջև՝ ստանալով Պարսկահայաստան, Թուրքահայաստան, Ռուսահայաստան անվանումները:

Օտարների քմահաճ կամքով բաժանված ու մասնատված հայ ժողովրդի քաղաքական գոյության այդ անմխիթար վիճակը հնարավորություն չէր տալիս հայությանը թևակոխելու ազգային համախմբման գործընթացի մեջ և Հայաստանի կոտորակված մասերից կերտելու մեկ միասնական հայրենիք կամ հայ ժողովրդի տեսլականը՝ Միացյալ, Ազատ ու Անկախ Հայաստան:

Նոր պատմության հենց մայրամուտին տեղի ունեցավ հայ ժողովրդի մեծ ողբերգությունը՝ արևմտահայության ցեղասպանությունը և հայրենազրկումը, որն իր անջնջելի կնիքն է թողել համայն հայության հիշողության վրա՝ անկասկած խոր ազդեցություն ունենալով նաև նրա պատմական ճակատագրի վրա: Վերջապես նոր պատմության շրջանում հայ ժողովուրդն իր մեջ ուժ գտավ դարեր շարունակ պետականությունից զուրկ լինելուց հետո կերտելու իր նորոգ պետությունը՝ Հայաստանի առաջին Հանրապետությունը:

Այսուն հատորում հեղինակային խմբի կողմից փորձ է արվում Հայաստանի հարակից երկրների պատմության հարցերի լուսաբանմանը մոտենալու բուն Հայաստանի պատմության հետ սերտ առնչությունների ու շաղկապվածության տեսանկյունից: Նման մոտեցման գիտական նպատակահարմարության հարցը կասկածի ենթական չէ, քանի որ հայերի և հարևան ժողովուրդների պատմական, մշակութային, տնտեսական ու քաղաքական կապերը, անկախ ամեն ինչից, անժխտելի իրողություն են: Միայն պատմական իրողությունների նկատմամբ նման մոտեցման դեպքում է հնարավոր պարզել այն ընդհանուր միջավայրը, որի պայմաններում ապրել է հայ ժողովուրդը:

Վ. ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

ԲԱԺԻՆ I

ԻՐԱՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՂԱՋԱՐՆԵՐԻ ԱՐՔԱՅԱՏԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ: ԻՐԱՆԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

1. ԻՐԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ: ԵՐԿՐԻ ԸՆԴԳՐԿՈՒՄԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ, ԱՌԱՋԻՆ ԻՐԱՆԱ–ՌՈՒՍԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Պատմության նոր դարաշրջանի արշալույսին Իրանում իշխանության համար պայքարի ասպարեզ էին եկել զենդերը: Այդ երկարատև ու անզիջում պայքարն ավարտվեց ղաջարների առաջնորդ Աղա Մուհամմեդ խանի հաղթանակով: 1794 թ. զենդերի դինաստիան դադարեց գոյություն ունենալուց: Հենվելով մի շարք խոշոր թյուրքական ցեղերի աջակցության վրա՝ կարճ ժամանակամիջոցում Աղա Մուհամմեդն իր տիրապետությունը հաստատեց համարյա ողջ Իրանի տարածքի վրա: 1795 թ. նա մայրաքաղաքը Սպահանից տեղափոխեց Թեհրան, որն այն ժամանակ փոքր և աննշան քաղաք էր, սակայն ուներ մի առավելությունը մոտ էր ընկած իրեն հենարան հանդիսացող թյուրքական ցեղերի բնակության վայրերին:

Ընկճելով և իրեն ենթարկելով Ատրպատականի և թուրքմենական տափաստանի անհնազանդ ու ինքնագլուխ խաներին՝ Իրանի նոր տիրակալն այնուհետև ձեռնամուխ եղավ իրանական հսկողությունից դուրս եկած Վրաստանի ընկճմանը: Այդ նպատակով 1795 թ. աշնանը նա կազմակերպեց պատժիչ արշավանք, գրավեց Թիֆլիսը և այն հիմնովին ավերելուց ու կողոպտելուց հետո հաղթականորեն վերադարձավ իր երկիրը: 1796 թ. մայիսին Մուղանի տափաստանում շահը գումարեց ղուռուլթայ, որի ընթացքում էմիրները, խաները, զորահրամանատարները, ցեղապետերը, շիական հոգևորականության բարձրաստիճան ներկայացուցիչները և այլն Աղա Մուհամմեդին ճանաչեցին որպես Իրանի շահ: Այսպիսով՝ Իրանի գահին

կրկին հաստատվեց թյուրքական արքայատոհմը, որն այդ երկիրը կառավարեց մոտ 130 տարի (1796–1925 թթ.):

Շահ հռչակվելուց անմիջապես հետո Աղա Մուհամմեդը նվաճեց Խորասանը, նոր արշավանք կազմակերպեց դեպի Այսրկովկաս՝ ինքնագլխության ձգտող խանությունները և Վրաստանը կատարելապես ընկճելու և ռուսների առաջխաղացումը դեպի Այսրկովկաս կասեցնելու նպատակով: Սակայն 1797 թ. գարնանը իր այդ երկրորդ արշավանքի ժամանակ նա սպանվեց իր իսկ ծառաների կողմից:

Դեռևս կենդանության օրոք շահը, որը զուրկ էր ժառանգներից, որպես ժառանգորդ էր նշանակել իր զարմիկ Ֆաթհ Ալի խանին (Բաբա խան): Վերջինս 1798 թ. թագադրվեց որպես Իրանի շահ՝ ընդունելով Ֆաթհ Ալի շահ գահակալական անունը (1798–1834 թթ.): Նա համարվում է Իրանի երկարակյաց շահերից մեկը՝ կառավարելով ավելի քան 36 տարի: Հենց Ֆաթհ Ալի շահի կառավարման շրջանում Իրանը դարձավ Մերձավոր ու Միջին Արևելքում բարդ միջազգային քաղաքականության առարկա: Եվրոպական առաջատար պետությունները՝ Անգլիան, Ռուսաստանը և Ֆրանսիան, ձգտում էին իրենց ազդեցությունն ընդլայնելու ողջ Միջին Արևելքում և մասնավորապես տարածաշրջանում ռազմավարական կարևոր դիրք ունեցող իրանական պետության մեջ:

Սկզբում Իրանը հայտնվում է երկու պետությունների՝ Անգլիայի և Ֆրանսիայի միջև բորբոքված անզիջում պայքարի կիզակետում, որին ավելի ուշ միանում է նաև դեպի հարավ շարժվող Ռուսաստանը: Ֆրանսիան աշխատում էր Կովկասում խոշոր պատերազմ բորբոքել մի կողմից՝ Ռուսաստանի, մյուս կողմից՝ Իրանի և Թուրքիայի միջև: Ֆրանսիական դիվանագետների անմիջական մասնակցությամբ թուրքերի և պարսիկների միջև աշխույժ բանակցություններ էին տեղի ունենում Ռուսաստանի դեմ դաշնակցելու և Կովկասում համատեղ գործողություններ վարելու վերաբերյալ: 1795–1797 թթ. դիրեկտորիայի հանձնարարությամբ Իրան ուղարկված ֆրանսիական դեսպանությունը՝ Օլիվիեի և Բրյուգերի գլխավորությամբ, հետապնդում էր հենց այդ նպատակները:

Նապոլեոն Բոնապարտը ծրագրել էր Ֆրանսիայի քաղաքական ախոյանին՝ Անգլիային, մահացու հարված հասցնել ոչ միայն Եվրոպայում, այլև ասիական երկրներում: 1798 թ. դիրեկտորիայի հավանությամբ նրա նախաձեռնած եգիպտական արշավանքը նպատակ ուներ Անգլիային դուրս մղել դեպի Հնդկաստան տանող ծովային ճանապարհներից և Ֆրանսիայի համար ձեռք բերել նոր շուկաներ Մերձավոր ու Միջին Արևելքում ու Հյուսիսային Աֆրիկայում: Այդ արշավանքի ձախողումից հետո Բոնապարտը սկսեց մշակել Հնդկաստանը նվաճելու ցամաքային արշավանքի ծրագիր, որի իրականացումն անհնարին էր առանց Օսմանյան կայսրության և Իրանի տարածքն օգտագործելու: 1800 թվականի վերջին Բոնապարտին հաջողվում է Ռուսաստանի կայսր Պավել Ա–ին ներքաշել մի մեծ արկածախնդրության մեջ: Կողմերի միջև կնքված պայմանագրով նախատեսվում էր Իրանի վրայով կազմակերպել համատեղ արշավանք դեպի Հնդկաստան: Սակայն Պավել Ա–ի նկատմամբ կազմակերպված դավադրությունը, որի հետևանքով նա սպանվեց, խափա-

նեց ողջ մտահղացումը, և, բնականաբար, արշավանքի գաղափարը ձախողվեց ու հանվեց օրակարգից:

Ֆրանս–ռուսական համատեղ արշավանքի ձախողված այդ փորձը անգլիացիների համար եղավ նախազգուշացում: Հնդկաստանի բրիտանական իշխանությունները որոշեցին առանց հապաղելու շարունակել իրենց միջինարևելյան քաղաքականությունը: Հնդկաստանի վրա հարձակվելու ֆրանս–ռուսական ծրագրերին հակազդելու, Իրանն իրենց քաղաքական ազդեցությանը ենթարկելու, ինչպես նաև անգլիական ապրանքների ազատ մուտքը Իրան ապահովելու նպատակով Հնդկաստանում բրիտանական իշխանությունները 1800 թ. Իրան ուղարկեցին կապիտան Ջոն Մալքոլմին՝ հսկայական շքախմբի և զինվորական ուժեղ ջոկատի ուղեկցությամբ: Անգլիացի այս ականավոր դիվանագետը, արևելագետն ու Օստ–Հնդկական ընկերության բարձրաստիճան պաշտոնյան Թեհրանում աներևակայելի առատաձեռնությամբ կաշառում էր պարսկական արքունիքը՝ «շահից մինչև վերջին ուղտապանը»: Նրա եռանդուն ջանքերը պսակվեցին հաջողությամբ, և 1800 թ. դեկտեմբերի 29–ին շահական կառավարությունը Անգլիայի հետ կնքեց քաղաքական պայմանագիր: Ֆրանսիացիների կողմից Հնդկաստանում բրիտանական տիրույթների վրա ուղղակի կամ աֆղանների միջոցով հարձակում կազմակերպելու դեպքում շահը պարտավորվում էր իր բոլոր միջոցներով խափանել այն: Շահական կառավարությունից անգլիացիները նաև խոստում էին կորզում, որ թույլ չեն տա ֆրանսիացիների մուտքն Իրան: Ի լրումն նշված պայմանագրի՝ 1801 թ. հունվարին կնքվեց նաև անգլո–իրանական առևտրական պայմանագիր, որը իրանական շուկան բացում էր անգլիական ապրանքների համար:

Անգլիացի և հնդիկ վաճառականներն Իրանում ստանում էին խոշոր արտոնություններ ու իրավունքներ: Նրանց ապրանքների համար սահմանվում էին ցածր մաքսատուրքեր, Իրանի ցանկացած վայրում ստանում էին բնակություն հաստատելու, տներ և առևտրական գրասենյակներ կառուցելու, երկրի տարածքով անվտանգ տեղաշարժվելու իրավունք և այլն: Այդ բոլորի դիմաց բրիտանական կառավարությունը խոստանում էր Ֆրանսիայի կամ Աֆղանստանի կողմից Իրանի նկատմամբ զինված ոտնձգություն կատարելու դեպքում նրան ցուցաբերել ռազմական օգնություն: Այդ օգնության դիմաց անգլիացիները պահանջում էին վարձակալության իրավունքով իրենց տրամադրել Կասպից ծովի բոլոր նավահանգիստները:

Թեև Մալքոլմի հետ կնքված քաղաքական պայմանագիրն ուներ հակաֆրանսիական, հակաաֆղանական և հակառուսական ուղղվածություն, սակայն Թեհրանում առաջին հերթին այն ընկալվեց հակառուսական առումով, քանի որ օրակարգում առավել հրատապ խնդիր էր Ռուսաստանի հետ հարաբերությունների հարցը:

Իրանի մուտքը եվրոպական պետությունների քաղաքականության շրջանակներ անմիջապես ճշտումներ մտցրեց դաջարական պետության արտաքին քաղաքականության բնագավառում: Այսուհետև այդ քաղաքականության բնորոշ գիծն էր դառնում խուսանավումներին դիմելն ու պետությունների հակասությունների վրա խաղալը:

1801 թ.՝ Վրաստանը Ռուսաստանին միացվելուց հետո, իրանա–ռուսական առանց այն էլ լարված հարաբերությունները կտրուկ սրվեցին: Ցարիզմը քայլ առ քայլ շարժվում էր հարավ՝ ձգտելով տեր դառնալու Այսրկովկասին: Այդ հողի վրա հասունանում էր ռուս–իրանական պատերազմը, որը սկսվեց 1804 թ. մայիսին: Իրանական զորքերը ներխուժեցին Հարավային Կովկաս ոչ միայն վրացիներին պատժելու, այլև ողջ Այսրկովկասում իրենց խարխլված դիրքերը վերականգնելու համար: Դիմելով հակահարձակման՝ ռուսական զորքերը գրավեցին Գանձակը, Շաքիի, Շիրվանի և Արցախի խանությունները, իսկ ապա՝ համարյա ողջ Այսրկովկասը՝ բացառությամբ Երևանի և Նախիջևանի խանությունների: Պատերազմն ընդունեց երկարատև բնույթ:

Վկայակոչելով 1800 թ. անգլո–իրանական պայմանագիրը՝ Ֆաթհ Ալի շահը պահանջեց, որ Անգլիան Իրանին ցուցաբերի ռազմական օգնություն: Սակայն Լոնդոնը չէր կարող գնալ այդ քայլին, քանի որ հակաֆրանսիական դաշնության մեջ Անգլիան հանդես էր գալիս որպես Ռուսաստանի դաշնակից: Ուստի շահի դիմումները անգլիացիները թողնում էին անպատասխան: Շահը և գահաժառանգ Աբբաս Միրզան (1789–1833 թթ.) որոշեցին հարաբերությունները խզել Անգլիայի հետ և գնալ դեպի Ֆրանսիայի հետ մերձեցման: Նապոլեոն Բոնապարտն անմիջապես արձագանքեց Թեհրանի արքունիքի այդ տրամադրություններին և Իրան ուղարկեց իր մոտ ծառայության անցած Դավիթ Մելիք–Շահնազարյանին (Դավութ բեկ Ծատուրով): Համարյա միաժամանակ Փարիզը Իրան գործուղեց նաև ֆրանսիական բանակի սպա Ամեդեյ Ժոբերին, որը, հաղթահարելով մեծ դժվարություններ, 1806 թ. հունիսին հասավ Թեհրան: Վերջինս առաջարկեց շահին Ֆրանսիայի հետ կնքել ռազմական դաշինք ընդդեմ Անգլիայի և Ռուսաստանի:

Բանակցությունների ժամանակ շահը բանավոր խոստում տվեց Ֆրանսիայի հետ կնքել ռազմական դաշինք և Ռուսաստանի նկատմամբ հաղթանակ տանելուց հետո թույլ տալ, որ ֆրանսիական բանակը Իրանի վրայով շարժվի դեպի Հնդկաստան: Նա նաև հավաստիացրեց ֆրանսիացուն, որ ինքը ևս պատրաստ է դիմելու այդ քայլին, եթե դրա անհրաժեշտությունը զգացվի: Ընդ որում, ավելի առաջ գնալով՝ Ժոբերին հայտարարեց, որ ինքն անձամբ ոչ միայն կմասնակցի այդ արշավանքին, այլև իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցները կօգտագործի, որ Հնդկաստանում Անգլիայի բազում թշնամիներն ապստամբեն նրա դեմ:

Իրանի միապետը վերջում խնդրում էր հայտնել ֆրանսիացիների կայսրին, որ անձամբ ինքը, գահաժառանգ Աբբաս Միրզան և Իրանի ողջ ժողովուրդն ու բանակը նայում են Նապոլեոնի կողմը, «ինչպես անապատում բեդվինը նայում է բացվող օրն ավետող աստղին»: Իր հերթին Ժոբերը հավաստիացնում էր, որ Ֆրանսիան պատրաստ է եվրոպական ձևով վերակազմակերպելու իրանական բանակը և Իրան ուղարկելու հրետանի ու զինամթերք, ինչպես նաև օգնելու Իրանին վերստին գրավելու Վրաստանը՝ պայմանով, որ շահը խզի իր կնքած պայմանագիրը Անգլիայի հետ:

Չնայած ֆրանսիացու շռայլած խոստումներին՝ Ֆաթհ Ալի շահը այնուամենայնիվ հրաժարվեց ստորագրելուց որևէ գրավոր պայմանագիր, ուստի Ժոբերը շուտով վերադարձավ Ֆրանսիա:

Ի դեպ, մտավախություն ունենալով, որ Կոստանդնուպոլսից Իրան մեկնելու ճանապարհին Ժոբերը կարող է սպանվել, շրջահայաց ու զգույշ Բոնապարտը համարյա միաժամանակ Թեհրան ուղարկեց նաև իր գործակալներից մեկին՝ Ռոմյեին: Նա Նապոլեոնից հրահանգ ուներ խրախուսել շահին շարունակելու պատերազմը Ռուսաստանի դեմ և առաջարկել դաշինք Ֆրանսիայի հետ: Ղաջարների մայրաքաղաքը ժամանելուց հետո Ռոմյեն և նրան ուղեկցող երկու ֆրանսիացիները խորհրդավոր պայմաններում մահացան: Սպանությունը կատարվել էր Ֆաթհ Ալի շահի իմացությամբ՝ դրանով նպատակ ունենալով ազդելու անգլիացիների վրա և նրանցից ստանալու օգնություն: Շահը հույս ուներ, որ Անգլիան ավելի արագ (Հնդկաստանում բրիտանական իշխանությունների միջոցով) և մեծ չափով կարող է օգնություն ցուցաբերել Իրանին, քան Ֆրանսիան:

Սակայն այդ սպասելիքները իրականություն չէին դառնում: 1806 թ. ռուսական զորքերի կողմից Դերբենտի, Բաքվի, Մուղանի դաշտավայրի և Այսրկովկասի մի շարք այլ շրջանների գրավումը իրանական իշխանություններին դրել էին դժվարին կացության առջև: Շահը որոշեց դրությունից ելք գտնելու ակնկալիքով դիմել Ֆրանսիային: Արքունիքի կարծիքով պահը միանգամայն բարենպաստ էր նման քայլի դիմելու համար: Նապոլեոնը խոշոր հաղթանակներ էր տարել Պրուսիայի և Ռուսաստանի նկատմամբ: Բացի այդ՝ իր հույսը կտրելով Ռուսաստանի մասնակցությունից դեպի Հնդկաստան կազմակերպվելիք արշավանքի հարցում՝ Բոնապարտը մշակել էր մի նոր ծրագիր, որը խարսխված էր Իրանի հետ ռազմական դաշինքի գաղափարի վրա: Այս բոլորը հույս էր ներշնչում իրանական իշխանություններին, որ Ֆրանսիայի կայսրը չի զլանալու օգնություն ցույց տալու Իրանին Ռուսաստանի դեմ նրա մղած պայքարում:

Ֆաթհ Ալի շահը Նապոլեոնի մոտ ուղարկեց իր դեսպան միրզա Մոհամմադ Ռեզա խանին՝ նրան հանձնարարելով հնարավորին չափ շուտ կնքել ռազմական դաշինք Ֆրանսիայի հետ: Դեսպանին տրված հրահանգում ասվում էր, որ «Ռուսաստանի ոչնչացումը երկու տիրակալների՝ շահի և ֆրանսիական կայսրի պարտականությունն է»: Իրանական դեսպանը կեղծ տեղեկություններ էր հաղորդում Նապոլեոնին՝ մասնավորապես նրան պատմելով, թե իբր իրանական զորքերը մեծ հաղթանակներ են տանում Կովկասում ռուսների նկատմամբ:

Իրանական դեսպանի առաջարկը հաճույքով ընդունվեց Բոնապարտի կողմից: Հարկ է նշել, որ այդ շրջանում Նապոլեոնը Արևելքում Ֆրանսիայի քաղաքականության անկյունաքարն էր համարում եռյակ դաշինքը իր, Օսմանյան կայսրության և Իանի միջև ընդդեմ Ռուսաստանի: 1807 թ. ապրիլի 3–ին նա դիմում է սուլթան Սելիմ Գ–ին՝ առաջարկելով համաձայնության գալ Ֆաթհ Ալի շահի հետ և դրանով իսկ հնարավոր դարձնել Թուրքիայի և Իրանի համատեղ ելույթը ընդհանուր թշնամու դեմ: Միաժամանակ նա հայտնում է շահին իր շահագրգռվածությունը երկու

երկրների միջև բարեկամություն հաստատելու հարցում և խնդրում է, որ նրանք վերջ տան իրենց վեճերին և միավորվեն՝ համատեղ դիմագրավելու իրենց «իսկական թշնամուն»:

Եռյակ դաշինքի գաղափարը ըստ երևույթին այն աստիճանի էր հասունացել ֆրանսիական կայսրի մեջ, որ նրա արտաքին գործերի նախարար Թալեյրանը դիմում է նրան հետևյալ հարցումով. աշխատել կնքել եռյակ դաշինք Ֆրանսիայի, Թուրքիայի և Իրանի միջև, ինչպես կայսրն է համարում նպատակահարմար ու ցանկալի, թե ինչպես Իրանում կայսրի գործակալ Ժոբերն է առաջարկում՝ կնքել երկու առանձին պայմանագրեր հիշյալ պետությունների հետ: Անկասկած, Թալեյրանի այդ հարցման մեջ շեշտվում էր, որ Ժոբերի առաջարկը հիմնված է այն իրողության վրա, որ Օսմանյան կայսրության և Իրանի միջև առկա հակասությունները դժվար թե հնարավորություն տան կնքելու եռյակ դաշինք: Իսկապես, միրզա Մոհամմադ Ռեզա խանի՝ Ֆրանսիայում եղած ժամանակ այնտեղ գտնվող թուրքական դեսպան Վահիդ Էֆենդին աշխատում էր համոզել Նապոլեոնին, որ նա ճնշում գործադրի շահական կառավարության վրա՝ Թուրքիայի հետ տարածքային վեճերի հարցում ավելի զիջող լինելու համար:

Նապոլեոնի փորձերը կողմերին հաշտեցնելու և նրանց ընդգրկելու համատեղ դաշինքի մեջ ավարտվեցին անհաջողությամբ: Այդ պատճառով որոշվեց կնքել առանձին ֆրանս–իրանական պայմանագիր:

Ըստ այնմ, 1807 թ. մայիսի 4–ին Ֆինկենշտեյնի մոտ՝ ֆրանսիական ռազմական ճամբարում, կնքվեց ֆրանս–իրանական պաշտպանողական–հարձակողական պայմանագիր, որն ուղղված էր ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Անգլիայի դեմ: Պայմանագիրն ազդարարում էր «Հավերժական դաշինք» Ֆրանսիայի կայսրի և Իրանի շահի միջև: Նապոլեոնը երաշխավորում էր Իրանի «ներկա տարածքի» ամբողջականությունն ու անձեռնմխելիությունը և Վրաստանը ճանաչում որպես «օրինական ձևով» Իրանին պատկանող տարածք: Նա խոստանում էր օգնել, որ Իրանը հետ ստանա Վրաստանը և առհասարակ ողջ Հարավային Կովկասում հաստատվի իրանական իշխանություն: Ֆրանսիական կողմը պատրաստակամություն էր հայտնում վերակազմակերպելու իրանական բանակը և դաջարներին տրամադրելու զենք և սպառազինություն: Իր հերթին շահը պարտավորվում էր Անգլիայի հետ խզել բոլոր տեսակի քաղաքական և առևտրական հարաբերությունները, թույլ չտալ որևէ անգլիական ներկայացուցչի մուտքը Իրան, Բոմբեյից հետ կանչել իրանական դեսպանին և պատրաստ լինել Անգլիային պատերազմ հայտարարելու և իրանական զորքերը շարժելու դեպի Հնդկաստան: Ընդ որում, շահից պահանջվում էր թույլ տալ ֆրանսիական զորքերի անարգել անցումը Իրանի տարածքով, Պարսից ծոցի բոլոր նավահանգիստները բացել ֆրանսիական ռազմական նավատորմի առջև և ծոցի Խարք կղզին տրամադրել Ֆրանսիային՝ որպես լիարժեք սեփականություն:

Ֆինկենշտեյնի պայմանագրով նախատեսվում էր նաև առաջիկայում կողմերի միջև բանակցություններ վարել՝ նոր առևտրական պայմանագիր կնքելու համար:

Ֆինկենշտեյնի պայմանագիրով չեղարկվում էր 1801 թ. Մալքոլմի ստորագրած անգլո–իրանական պայմանագիրը:

Ֆրանս–իրանական այդ «խոստումնալից» պայմանագրի ստորագրումից անմիջապես հետո Կոստանդնուպոլսում ֆրանսիական դեսպանորդ Սեբաստիանին եռանդուն աշխատանքներ էր տանում ֆրանս–թուրք–իրանական եռյակ ռազմական դաշինք կնքելու ուղղությամբ, որն ուղղված էր լինելու Ռուսաստանի դեմ: Անշուշտ, ֆրանսիացիները գիտակցում էին, որ Իրանի և Թուրքիայի միջև երբեք չի եղել իսկական բարեկամություն: Սակայն Նապոլեոնը ենթադրում էր, որ ընդհանուր վտանգը կարող է նրանց միավորել: Ընդ որում՝ Ֆրանսիայի կայսրն առաջարկում էր Ռուսաստանի դեմ պատերազմին հաղորդել կրոնական բնույթ: «Թող Թուրքիան և Իրանը Ռուսաստանին ներկայացնեն բոլոր մուսուլմանների, ինչպես Ալիի հետևորդների (շիաների — Վ. Բ.), այնպես էլ Օմարի կողմնակիցների (սուննիների — Վ. Բ.) համար միատեսակ ատելի երկիր»,— ասվում էր Նապոլեոնի հրամանագրում:

Ֆինկենշտեյնի պայմանագրի իրականացմանը մեծապես խանգարեց ռուսական զորքերի հաղթանակը թուրքերի նկատմամբ 1807 թ. հունիսի 18–ին տեղի ունեցած Արփաչայի ճակատամարտում:

Ռուս–պարսկական առաջին պատերազմում շահական զորքերի կրած պարտությունները համոզեցին իրանական կառավարությանը, որ անկանոն ավատական աշխարհազորն ու իրանական ջոկատները չեն արդարացնում իրենց: Ուստի որոշվեց կազմակերպել կանոնավոր բանակ: Այդ ծրագրի իրականացման ջատագովն ու ոգեշնչողը գահաժառանգ (վալիահդ) Աբբաս Միրզան էր: Հենց նրա, ինչպես նաև Աբբաս Միրզայի վեզիր, դայեմ–մաղամ միրզա Աբուլ–Ղասեմ Ֆարահանիի ներշնչմամբ Ֆաթհ Ալի շահը դիմեց Ֆրանսիային՝ խնդրելով Իրան ուղարկել զինվորական հրահանգիչների մի խումբ՝ իրանական բանակը մարզելու համար: Ընդառաջելով այդ խնդրանքը՝ 1807 թ. Բոնապարտը Թեհրան ուղարկեց 70 սպաներից բաղկացած մի խումբ՝ գեներալ Կլոդ Մաթյե Գարդանի (Ժարդանի) գլխավորությամբ, որի խնդիրն էր լինելու եվրոպական չափանիշներով իրանական կանոնավոր բանակի ստեղծումը և Իրանի խորքային հետախուզումը: Նրան հանձնարարված էր նաև մշակել Իրանից Հնդկաստան տանող ճանապարհների ուղերթները: Շահի վրա առավել մեծ ազդեցություն գործելու մտադրությամբ Նապոլեոնը նույնիսկ որոշել էր իր եղբայր Լյուսիենին որպես դեսպան ուղարկել Իրան:

Թեհրանում 1808 թ. հունվարին Գարդանը շահի առաջին վեզիր Միրզա Շաֆիի հետ կնքեց ֆրանս–իրանական առևտրական պայմանագիր, որը հաստատում ու զարգացնում էր նաև 1708 թ. և 1715 թ. Սեֆյան շահ սուլթան Հուսեյինի կողմից Ֆրանսիային տրամադրված կապիտուլյացիոն իրավունքները՝ միաժամանակ նոր արտոնություններ ու իրավունքներ տրամադրելով Իրանի հետ առևտուր անող ֆրանսիացի վաճառականներին:

1807 թ. մայիսի 10–ին Գարդանին տրված գրավոր հրահանգում Նապոլեոնը կրկին առաջ էր քաշում Ռուսաստանի դեմ Իրանի և Թուրքիայի միջև ռազմական

դաշինք կնքելու անհրաժեշտության հարցը: Միանգամայն ակնհայտ էր, որ Բոնապարտը առանձին երկկողմանի համաձայնագրերը Իրանի և Թուրքիայի հետ չէր համարում բավականաչափ արդյունավետ, նրա կարծիքով առավել ազդու և շոշափելի ուժ կդառնար եռյակ դաշինքը, որը ոչ միայն կարող էր արգելք դառնալ Ռուսաստանի հետագա առաջխաղացմանը դեպի Մերձավոր ու Միջին Արևելք, այլև մեծապես կազդեր ռուսական քաղաքականության ակտիվության վրա նաև Եվրոպայում:

Նապոլեոնի համառ ջանքերը վերոհիշյալ ուղղությամբ պսակվեցին մասնակի հաջողությամբ: 1807 թ. ամռանը օսմանյան սուլթանի հրամանով սերասկեր Յուսուֆ փաշան հրամայեց Թուրքիայի ասիական նահանգների բոլոր փաշաներին, որ իրենց զորքերով շարժվեն ու միանան պարսիկներին, երբ ռուսները ռազմական գործողություններ սկսեն Երևանի նահանգում: Ֆաթահ Ալի շահն իր հերթին խոստացավ օգնել թուրքերին Ռուսաստանի դեմ մղված նրանց ռազմական գործողություններում:

Սակայն 1807 թ. հունիսին Արփաչայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ռուսների հաղթանակը օսմանյան բանակի նկատմամբ ի չիք դարձրեց դաշինքի փորձերը:

1807 թ. միջազգային իրադրության մեջ տեղի ունեցավ արմատական փոփոխություն: Հուլիսի 8–ին Ֆրանսիան Ռուսաստանի և Պրուսիայի հետ կնքեց Տիլզիթի հաշտության պայմանագիրը, որով Ռուսաստանը փաստացի վերածվում էր Ֆրանսիայի դաշնակցի:

Այսպիսով՝ Նապոլեոնը զոհեց Իրանի շահերը հանուն ֆրանս–ռուսական և ֆրանս–պրուսական դաշինքի: Դրանից հետո Փարիզը զգալիորեն կորցրեց իր հետաքրքրությունը Իրանի նկատմամբ, մանավանդ որ Տիլզիթի դաշնագիրը Ֆրանսիային պարտավորեցնում էր թշնամական կեցվածք չորդեգրել Ռուսաստանի նկատմամբ: Հարկավ, ֆրանսիացիներն այլևս չէին կարող իրականացնել իրանական զորքերին զենք մատակարարելու վերաբերյալ իրենց տված խոստումները: Բացի այդ՝ գեներալ Գարդանը սկսել էր պնդել, որ շահը հաշտություն կնքի ռուսների հետ և ավարտին հասցնի պատերազմը:

Մինչդեռ այդ ընթացքում իրանական զորքերը կրում էին խոշոր պարտություններ: 1808 թ. նրանք գրավեցին Նախիջևանի խանությունը և պաշարեցին Երևանը:

Այդ բոլորի հետևանքով առիթը պատեհ համարելով՝ Անգլիան անմիջապես ուժեղացրեց ուշադրությունը իրանական գործերի նկատմամբ: Հնդկաստանի բրիտանական իշխանությունները երկրորդ անգամ Իրան ուղարկեցին Մալքոլմին: Սակայն այս անգամ շահը Ֆարսի նահանգապետին հրամայեց թույլ չտալ բրիտանացու մուտքը Թեհրան: Այդ տհաճ միջադեպը հարթելու նպատակով Լոնդոնը հապշտապ Իրան գործուղեց իր ներկայացուցիչ Հարֆորդ Ջոնսին: Սակայն գեներալ Գարդանի պահանջով նրան չթույլատրվեց Պարսից ծոցի Բուշեհր քաղաքից մեկնել Թեհրան: Այնուամենայնիվ, նրան հաջողվեց Թեհրանի արքունիք հասցնել իր նամակը, որտեղ պարունակվում էր առաջարկ Անգլիայի պատրաստակամության մա-

սին Ռուսաստանի հետ պատերազմում Իրանին արդյունավետ օգնություն ցուցաբերելու վերաբերյալ՝ պայմանով, որ վերջինս խզի իր կապերը Ֆրանսիայի հետ:

Կրկին գայթակղվելով այդ խոստումներով՝ ֆրանսիացիներից հիասթափված Ֆաթհ Ալի շահը 1809 թ. փետրվարին գեներալ Գարդանին առաջարկեց իր ռազմական միսիայի հետ հեռանալ Իրանից: Դրան անմիջապես հետևեց Հարֆորդ Ջոնսի ժամանումը Թեհրան: Նախապես շահին թանկարժեք ադամանդներ, 30 հազար անգլիական հրացան, 20 դաշտային թնդանոթ և 40 արկղ ռազմամթերք նվիրելուց հետո Ջոնսը բանակցություններ է սկսում շահի առաջին վեզիր Միրզա Շաֆիի հետ: Վերջինս 1809 թ. մարտի 12–ին անգլիացու հետ կնքեց նախնական (պրելիմինար) պայմանագիր, որով Ֆինկենշտեյնի ֆրանս–իրանական պայմանագիրը կորցնում էր իր ուժը: Շահը պարտավորվում էր խզել ամեն տեսակի հարաբերությունները Ֆրանսիայի և առհասարակ Անգլիայի թշնամի մյուս պետությունների հետ: Ստորագրված փաստաթղթում շեշտվում էր, որ ցանկացած եվրոպական պետության զինված ուժերին չի թույլատրվելու օգտագործել Իրանի տարածքը դեպի Հնդկաստան շարժվելու համար: Աֆղանների կամ մեկ այլ պետության կողմից Հնդկաստանում անգլիական տիրույթների վրա հարձակվելու դեպքում շահը պարտավորվում էր իր զորքերն ուղարկել այդ տիրույթները պաշտպանելու համար: Անգլիան իրավունք էր ստանում շահի համաձայնությամբ զորքեր մտցնել Պարսից ծոցի Խարք կղզին, եթե նրա վրա կախվեր օտարերկրյա ներխուժման սպառնալիք:

Իրանի տարածքը որևէ եվրոպական պետության ներխուժման դեպքում Անգլիան պարտավորվում էր շահին տրամադրել իր զինված ուժերը կամ ֆինանսական օգնություն ու զենք: Քանի դեռ շարունակվում էր պատերազմը Ռուսաստանի դեմ, անգլիացիները պարտավորվում էին շահական կառավարությանը հատկացնել տարեկան 100 հազար ֆունտ ստեռլինգ: Խոստանում էին նաև Իրան ուղարկել զինվորական հրահանգիչների մի խումբ՝ 16–հազարանոց մի հետևակային զորամաս մարզելու համար:

Ջոնսի առջև դրված խնդիրներից մեկն էր նաև Իրանից ֆրանսիական էմիսարների հեռացումը: Ի դեպ, այդ էմիսարներից մեկին՝ Ժուանենին, անհայտ մեկի կողմից ուղարկվել էր մի գիրք, որի բոլոր էջերը թաթախված էին թույնով:

Դժվար չէ նկատել, որ այդ պայմանագրում բրիտանական հետաքրքրությունների կիզակետում էր Հնդկաստանի պաշտպանության խնդիրը: Կասկածից վեր է, որ Նապոլեոնի «հնդկական նախագծերը», չնայած նրանց անմշակ ու աներևակայելի բնույթին, չափազանց կարևոր դեր խաղացին Իրանի և Հնդկաստանի հետագա քաղաքական ճակատագրում: Դրանք ակնառու կերպով անգլիացիներին ցույց տվին, որ Հնդկաստանի նկատմամբ սպառնալիքը հնարավոր է ոչ միայն ծովի, այլև ցամաքի կողմից: Բոնապարտի այդ ծրագրերը ստիպեցին նրանց հիշել, որ ընդհուպ մինչև XIX դարը Հնդկաստանի բոլոր նվաճողները (Ալեքսանդր Մակեդոնացին, Լենկ Թեմուրը, Նադիր շահը և այլն) անցել են «Իրանի դարպասների» միջով, այսինքն՝ Իրանի և Աֆղանստանի տարածքով: Հենց այդ պահից սկսած անգլիացիները մշակեցին Հնդկաստանի պաշտպանության նոր հայեցակարգ՝ նկատի ունենալով նրա արև-

մտյան խոցելի սահմանը: Դրանից հետո Իրանը անշրջելիորեն հայտնվում է բրիտանական քաղաքականության շրջանակների մեջ:

Հարֆորդ Ջոնսի կնքած պայմանագիրը Լոնդոնում գնահատվեց որպես «հույժ օգտակար» և շահին տարեկան սուբսիդավորման գումարը 160 հազար թումանից հասցվեց 200 հազարի: Այդ պայմանագրի ընձեռած հնարավորության հետևանքով Իրանում բրիտանական դիվանագիտությունը ձեռք բերեց գործունեության լայն դաշտ:

1810 թ. կրկին Իրան ժամանեց Բրիտանական օստ–հնդկական ընկերության ներկայացուցիչ Ջոն Մալքոլմը՝ իր հետ շահական զորքերի համար բերելով թնդանոթներ, հրացաններ, ռազմական հրահանգիչների մի խումբ և ամենակարևորը՝ շահի համար հարուստ նվերներ: Ֆաթհ Ալի շահը ի պատիվ անգլիացու կազմակերպեց փառահեղ ընդունելություն: Մալքոլմին պարգևատրելու համար նա նույնիսկ հիմնեց նոր շքանշան, որը կոչվում էր «Առյուծ և արև» («Շիր–օ–խորշիդ»):

Մալքոլմի առաքելությունից շատ չանցած՝ 1811 թ. Իրան ժամանեց սըր Հենրի Աուզլին անգլիական դեսպանորդի կարգավիճակով: Նա իր հետ բերեց 600 հազար թուման (երեք տարվա սուբսիդավորման գումարը), հրացաններ, թնդանոթներ ու ռազմական հանդերձանք: Նրա հետ Թեհրան ժամանեցին նաև անգլիական նոր ռազմական հրահանգիչներ: 1812 թ. մարտի 14–ին Աուզլին սադրազամ միրզա Շեֆիի հետ ստորագրեց «վերջնական» անգլո–իրանական պայմանագիր, որը փոխարինելու էր 1809 թ. նախնական պայմանագրին: «Վերջնական պայմանագրի» մեջ առաջին անգամ իր պաշտոնական արտահայտությունը գտավ Իրանը Բրիտանական Հնդկաստանի մատույցներում թափարգելի դեր խաղացող պետության վերածելու անգլիական քաղաքականությունը:

Հիշյալ պայմանագիրն, անկասկած, նշանավորում էր բրիտանական դիվանագիտության խոշոր հաջողությունը: Այն նպաստեց անգլիական ազդեցության շեշտակի մեծացմանն Իրանում: Սակայն 1812 թ. Նապոլեոնի ռուսական արշավանքից հետո անգլո–իրանական այդ պայմանագրի գործողության շրջանակները նկատելիորեն սահմանափակվեցին: Իրանը ի վերջո մեն–մենակ մնաց իր հզոր հակառակորդի՝ Ռուսաստանի դեմ: Ճիշտ է, 1810 թ. օգոստոսին վերջապես գլուխ էր եկել թուրք–իրանական դաշնակցային պայմանագրի կնքումը, և Թեհրանում թուրքական դեսպան Խայրեթ Էֆենդիին հանձնարարվել էր մշակել թուրքական և իրանական զորքերի համատեղ գործողությունների պլան 1811 թ. ամռանը Թիֆլիսը գրավելու վերաբերյալ, սակայն այդ դաշինքը գործնական կենսագործում չստացավ, մանավանդ որ 1812 թ. մայիսի 16–ին Ռուսաստանի դեմ պատերազմում պարտություն կրած Թուրքիան ստիպված էր ստորագրել Բուխարեստի հաշտության պայմանագիրը:

Ֆաթհ Ալի շահը կորցրեց իր թուրքական դաշնակցին: Նա Բուխարեստի հաշտությունը գնահատեց որպես սուլթանի կողմից դավաճանություն, քանի որ 1810 թ. իրանա–թուրքական պայմանագրով թուրքերը պարտավորվում էին Ռուսաստանի հետ հաշտություն կնքել միայն Իրանի համաձայնությամբ և Իրանի հետ միաժամանակ:

Մինչդեռ ռուս–պարսկական պատերազմում իրանական զորքերին հետապնդում էր անհաջողությունն անհաջողության հետևից: 1811 թ. դեկտեմբերի 20–ին

ռուսները գրոհով վերցրին Ախալքալաքի ամրոցը: Ռուսական մի փոքրաթիվ ջոկատի քաջության և հայ աշխարհազորայինների խիզախության շնորհիվ ձախողվեցին Աբբաս Միրզայի փորձերը Մեղրիի ամրոցը և Զանգեզուրի մաղալը գրավելու ուղղությամբ:

1812 թ. հոկտեմբերին Արաքսի ափին՝ Ասլանդուզի մոտ, տեղի ունեցած ճակատամարտում Աբբաս Միրզայի զորքերի կրած ջախջախիչ պարտությունը ստիպեց իրանական կառավարությանը խնդրել հաշտություն: 1813 թ. հոկտեմբերի 12–ին Արցախի Գյուլիստան հայկական գյուղում շահական կառավարությունը հարկադրված էր ստորագրել հաշտության պայմանագիր՝ ընդունելով իր պարտությունն ինը տարի տևած պատերազմում: Գյուլիստանի պայմանագրով դաջարները հրաժարվում էին Վրաստանի՝ Իմերեթիայի, Գուրիայի, Մենգրելիայի, Աբխազիայի ինչպես նաև Դաղստանի նկատմամբ հավակնություններից, հրաժարվում էին Արցախի, Գանձակի, Շեքիի, Շիրվանի, Դերբենտի, Ղուբայի, Բաքվի, մասամբ նաև Թալիշի նկատմամբ իրենց իշխանությունից: Արևելյան Հայաստանի տարածքներից Ռուսաստանին էին անցնում Լոռիի, Շամշադինի, Զանգեզուրի և Շորագյալի գավառները, սակայն Նախիջևանի և Երևանի խանությունները նախկինի պես մնում էին Իրանի կազմում: Պայմանագրի 5–րդ հոդվածով Իրանը հրաժարվում էր Կասպից ծովում իր նավատորմն ունենալու իրավունքից, և, ընդհակառակը, Ռուսաստանին տրվում էր բացառիկ իրավունք նշված ծովում պահելու ռազմական նավատորմ: Ռուսական վաճառականները ստանում էին Իրանում առևտրի և ազատ տեղաշարժվելու իրավունք, իսկ իրանական վաճառականները՝ համապատասխանաբար Ռուսաստանում:

Ռուսաստանը բավարարված չէր այդ պայմանագրով, քանի որ նա ծրագրել էր իրեն միացնել Երևանի և Նախիջևանի խանությունները, ավարտել ողջ Այսրկովկասի միացումը Ռուսաստանին և ռուս–իրանական սահմանն անցկացնել Արաքս գետով: Հետևաբար ռուս–իրանական սահմանները մնացին անորոշ ու լարված:

Պայմանագրից բավարարված չէր նաև Իրանը, քանի որ նրա տարածքային հսկայական կորուստներից բացի՝ այն ծանր հարված էր հասցնում նաև նրա պետական հեղինակությանը: Պայմանագիրը ինչ–որ չափով վերանայելու ակնկալությամբ Ֆաթհ Ալի շահը Պետերբուրգ ուղարկեց միրզա Աբուլ–Հասան խանին՝ նրան հանձնարարելով, որ կարողանա հասնել այն բանին, որ կորցրած տարածքների գեթ մի մասը, մասնավորապես Արևելյան Այսրկովկասը վերադարձվի Իրանին: Սակայն շահական դեսպանը 1817 թ. ստիպված էր ձեռնունայն վերադառնալ հայրենիք:

2. 1821–1823 ԹԹ. ԻՐԱՆԱ–ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Գյուլիստանի պայմանագրի թանաքը դեռ չէր չորացել, երբ իրանական արքունիքը սկսեց փայփայել ռևանշի ծրագրեր, որոնք շահին, Աբբաս Միրզայի ենթադրությամբ, կարող էին կյանքի կոչվել միայն Անգլիայի օժանդակությամբ: 1814 թ. նոյեմբերի 25–ին Թեհրանում ստորագրվեց անգլո–իրանական նոր պայմանագիր, որով պահպանվում և ամրակայվում էին 1812 թ. մարտի 14–ի այսպես կոչված «վերջնա-

կան պայմանագրի» բոլոր հիմնական կետերը: Հիշյալ պայմանագրում նորն այն էր, որ Իրանը պատրաստվում էր ստիպել Խորեզմի, Բուխարայի, Սամարղանդի և Թուրքեստանի կառավարիչներին, որպեսզի նրանք թույլ չտան, որ իրենց տարածքներով եվրոպական պետությունների և առաջին հերթին Ռուսաստանի զորքերը շարժվեն դեպի Հնդկաստան: Այնուհետև Իրանը պարտավորվում էր ռազմական հրահանգիչներ հրավիրել միայն Անգլիայից կամ նրա հետ բարեկամական հարաբերությունների մեջ եղած երկրներից: Վերջապես՝ հիշյալ պայմանագրում կար մի կետ, որտեղ ասվում էր. «Ռուսաստանի և Պարսկաստանի միջև սահմանները պետք է որոշվեն Մեծ Բրիտանիայի, Պարսկաստանի և Ռուսաստանի միջև կնքվելիք համաձայնությամբ»: Սա նշանակում էր, որ նախ՝ Անգլիան առաջ էր քաշում Գյուլիստանի պայմանագրով նախատեսված ռուս–իրանական սահմանի վերանայման հարց և ապա՝ իրեն իրավունք էր վերապահում միջամտելու Իրանի արտաքին հարաբերություններին: Պայմանագրով Անգլիան Իրանին տալիս էր նաև օգնության հավելյալ երաշխիքներ:

Ըստ էության 1814 թ. անգլո–իրանական պայմանագիրը պաշտպանողական մի դաշինք էր, որն ամբողջապես կոչվում էր հակազդելու ռուսներին:

Այն ավելի խթանեց ռազմաշունչ տրամադրությունների վերելքը Իրանի կառավարող շրջաններում: Ֆաթհ Ալի շահը, Աբբաս Միրզան և պետության ղեկի մոտ կանգնած մյուս կարևոր դեմքերը գիտակցաբար սրում էին իրանա–ռուսական հարաբերությունները: Օգտագործելով ժամանակավոր խաղաղ դադարը՝ Աբբաս Միրզան անգլիացիների օգնությամբ եռանդուն վերակառուցում ու մարզում էր բանակը, ինչպես նաև կատարում վերափոխումներ պետական կառավարման համակարգը արդիականացնելու ուղղությամբ: Միաժամանակ նա շարունակում էր իր եռանդուն դիվանագիտական գործունեությունը Ռուսաստանին անցած մի շարք տարածքներ վերադարձնելու ուղղությամբ:

Հատկապես խոսքը Արցախի մասին էր, որի ռազմավարական նշանակությունը որպես «Հարավային Կովկասի նախադուռ» հիանալի գիտակցում էին պարսկական արքունիքում:

Սակայն 1816 թ. ապրիլին Ալեքսանդր Ա կայսրի հրամանագրով Կովկասի փոխարքա և Իրանում արտակարգ և լիազոր դեսպան նշանակված Ա. Պ. Երմոլովը կտրականապես հրաժարվեց Իրանին տարածքային զիջումներ կատարելուց:

Շուտով տարածաշրջանի միջազգային հարաբերությունների բնագավառում տեղի ունեցան անկանխատեսելի զարգացումներ: Հատկապես Թուրքիայի և Իրանի միջև հին վեճերը անսպասելիորեն բարձրացան մակերես՝ հանգեցնելով լուրջ քաղաքական ճգնաժամի:

Աբբաս Միրզան որոշել էր Օսմանյան կայսրությունից տարածքային նվաճումների հաշվին փոխհատուցել այն կորուստները, որոնք Իրանն ունեցել էր Այսրկովկասում: Պատերազմում հաղթանակ ձեռք բերելու դեպքում գահաժառանգը հույս ուներ նաև վերականգնելու իր խարխլված դիրքերը: Որպես իրանական բանակի գլխավոր հրամանատար՝ նա անձամբ ինքն էր կրում Ռուսաստանի հետ պատե-

ռազմում պարտությունների և Գյուլիստանի պայմանագրի կնքման պատասխանատվությունը: Վերջապես՝ հաղթանակի դեպքում Աբբաս Միրզան կարող էր ամրապնդել գահաժառանգի իր դիրքերը, քանի որ նրա բազմաթիվ եղբայրները շարունակում էին գահի նկատմամբ ունենալ հավակնություններ: Ընդ որում, մոտալուտ ռուս–թուրքական պատերազմի հավանականությունը հույս էր ներշնչում իրանական կառավարող շրջաններին, որ պատերազմում հաղթանակը կարելի է ապահովված համարել:

Արդեն 1821 թ. ամռան վերջին թուրք–իրանական հարաբերությունները հասան ծայրահեղ սրության: Սահմանի առանձին հատվածներում սկսվեցին կատաղի բախումներ: Կողմերը սկսեցին միմյանց դեմ լայնորեն օգտագործել սահմանամերձ շրջանների իրենց հպատակ քրդական ցեղերին՝ նրանց հրավիրելով անցնել սահմանը և ասպատակ սփռել հակառակորդի կողմում:

Թուրքական իշխանություններն ամենուրեք սկսեցին հալածանքների ենթարկել Օսմանյան կայսրությունում բնակվող իրանահպատակ պարսիկներին: Բաղդադում, Էրզրումում և մի շարք այլ քաղաքներում ծայր առավ հակաշիական ուժգին քարոզչություն: Իրաքի տեղապահ Դավուդ փաշան հրամայեց բռնագրավել Բաղդադում բնակվող բոլոր հարուստ պարսիկների ունեցվածքը, իսկ իրենց ձերբակալել և բանտերը նետել: Այդ նույն կերպ նա վարվեց նաև Քարբալայում և Էն–Նաջաֆում: Շիական այս սրբազան քաղաքների բոլոր հարստությունները կողոպտվեցին և տեղափոխվեցին Բաղդադ, վերածվեցին թուրքական ոսկեդրամի:

Իրանական ավատական ազնվականությունը, բարձրաստիճան հոգևորականությունը և զինվորականությունը, ինչպես նաև շահական արքունիքի մեծ մասը այն կարծիքին էր, որ շահը պետք է անհապաղ պատերազմ հայտարարի Օսմանյան կայսրությանը: Այդ խնդրում հատկապես մեծ շահագրգռվածություն էր դրսևորում Աբբաս Միրզան, որի կարծիքով Թուրքիայի ներքին և միջազգային բարդությունները, պատերազմը Հունաստանում, ապստամբությունը Վալախիայում և այլն) հիանալի հնարավորություններ են ստեղծում Օսմանյան կայսրության դեմ հաղթական պատերազմ մղելու համար: Աբբաս Միրզան հատկապես տենչում էր ճակատամարտի դաշտում փորձել իր բանակի ռազմական վերակառուցումների արդյունքները, մանավանդ որ միանգամայն ակնհայտ էր, որ 1814 թ. մինչև 1821 թ. ընկած շրջանում Իրանի զինված ուժերի վերակառուցման գործը ձեռք էր բերել շոշափելի հաջողություններ:

Քաջ գիտակցելով, որ պատերազմը թուրքերի դեմ կարող է առաջ բերել միջազգային բնույթի բարդություններ, գահաժառանգը ռազմական գործողություններ սկսելու նախօրյակին սկսեց ձեռնարկել որոշակի դիվանագիտական նախապատրաստություններ: Նրան հատկապես մտահոգում էր հավանական պատերազմի ընթացքում Ռուսաստանի դիրքորոշման հարցը:

Վերոհիշյալ նկատառումներից ելնելով՝ Աբբաս Միրզան նախ մի նամակ հղեց Երմոլովին, որտեղ գրում էր, որ իբր թուրքական կառավարության կողմից հույն քրիստոնյաների նկատմամբ գործադրվող դաժանությունները իր մեջ առաջ են բե-

ռում զայրույթի բուռն զգացում և պարտադրում են իրեն պատերազմի դուրս գալ Թուրքիայի դեմ: Անշուշտ, այս հայտարարությունը նպատակ ուներ նախ շահելու Ռուսաստանի համակրանքը և ապա թուրքերի դեմ պատերազմը սքողելու հանուն արդարության մղվող պայքարի լուսապսակով:

Քանի որ Աբբաս Միրզան մտադիր էր իր բանակը շարժել երկու ուղղությամբ՝ Արևմտյան Հայաստանի և Միջագետքի, նա եռանդուն աշխատանքներ էր տանում պատերազմի ընթացքում այդ շրջանների բնակչության աջակցությունը ստանալու համար: Արևմտյան Հայաստանում նա իր հույսերը կապում էր հայ բնակչության հետ՝ նկատի ունենալով, որ օսմանյան լուծը ազդակ կլինի հայերի հակաթուրքական ելույթների համար: Իր այս նպատակին հասնելու համար Աբբաս Միրզան մեծ շքախմբով մեկնեց Էջմիածին, որպեսզի կաթողիկոսն իր սուրն օրհնի մայր տաճարի խորանում: Դրանով նա ըստ երևույթին հույս ուներ նաև շահելու Արևելյան Հայաստանի հայության համակրանքն ու աջակցությունը:

Ինչ վերաբերում է Օսմանյան կայսրությանը, ապա հաշվի առնելով իր համար ստեղծված ծայրաստիճան բարդ իրադրությունը՝ աշխատում էր գործը չհասցնել պատերազմի: Սակայն այդ ուղղությամբ Բ. Դռան ձեռնարկած միջոցները ապարդյուն էին: 1821 թ. հոկտեմբերին սկսվեց իրանա–թուրքական պատերազմ:

Պատերազմի հենց սկզբին Չալդրանի մոտ թուրքական զորքերին առաջին պարտությունը հասցրեց Երևանի սարդար Հասան խանը: Այնուհետև Աբբաս Միրզայի նորավարժ զորամիավորումները, մի շարք պարտությունների մատնելով օսմանցիներին, փոթորկի նման անցան Արևմտյան Հայաստանի վրայով՝ գրավելով Բայազետը, Դիադինը, Մանազկերտը, Բաղեշը, Մուշը, Վանը, Ախլաթը, Ադիլջևազը, Խանդուշը և այլն:

Ռազմական գործողությունների ընթացքում Աբբաս Միրզային աջակցում էին ոչ միայն իրանահպատակ քրդերը, այլև Թուրքիայի քրդական ցեղերը:

Թուրքիան որոշեց կենտրոնացնել խոշոր ուժեր և անցնել հակահարձակման: Օսմանյան մի խոշոր բանակ, շրջանցելով Բայազետն ու Ալաշկերտը, փորձեց ներխուժել Իրանական Ատրպատական և գրավել Թավրիզը: Սակայն հանդիպելով Աբբաս Միրզայի բանակի ստորաբաժանումներին՝ ջախջախիչ պարտություն կրեց:

Թուրքական հրամանատարությունը որոշեց հակագրոհ կազմակերպել այս անգամ Միջագետքի ուղղությամբ: Բաղդադի Դավուդ փաշային հրամայվեց Շահրիզուրի կողմից ներխուժել Քերմանշահի նահանգը: Սակայն այս փորձը ևս մատնվեց անհաջողության, որովհետև թուրքական զորքերը վճռական պարտություն կրեցին Քերմանշահի վալի Մուհամմեդ Ալի միրզայի կողմից, որը, հետ շպրտելով հակառակորդին, հետապնդեց նրան մինչև Բաղդադից ոչ հեռու գտնվող Բենի Սայիդ կոչված վայրը: Միջագետքում զարգացնելով իրենց հաջողությունները՝ իրանական զորքերը գրավեցին նաև Քիրքուքը, Մոսուլը, Սուլեյմանիեն և Բաղդադը:

1823 թ. հունիսի 15–ին Լոնդոնում Իրանի հետ կնքվում է Հարավային Կովկասին վերաբերող քաղաքական մի համաձայնագիր, որով նախատեսվում էր անհապաղ դադարեցնել պատերազմը Թուրքիայի դեմ:

Լոնդոնի համաձայնագրից հետո Իրանի և Թուրքիայի միջև սկսվում են նախնական բանակցություններ հաշտության պայմանագիր կնքելու վերաբերյալ: Թուրքիան շահագրգռվածություն էր դրսևորում արագ ավարտելու բանակցությունները և շուտափույթ կնքելու հաշտություն, որպեսզի հնարավորություն ստանա իր բոլոր ուժերը նետելու Հունաստան այնտեղ ապստամբությունը ճնշելու համար:

Իրանում տեղի ունեցող ներքին ցնցումները (էսմայիլիթների ապստամբությունը Յազդում, միրզա Խալիլ Օլլայի շարժումը Քերմանշահում, թուրքմենների ապստամբությունը Խորասանում և այլն) ստիպում էին իրանական կառավարող վերնախավին անհապաղ դադարեցնել պատերազմը Թուրքիայի հետ և լրջորեն զբաղվել այդ ապստամբությունների ճնշման և երկրի ներքին կյանքը կայունացնելու հարցով, որը կենսական անհրաժեշտություն էր Ռուսաստանի դեմ նախապատրաստվող ծանր պատերազմի նախօրյակին:

Իրանա–թուրքական նախնական բանակցություններն ավարտվեցին հաջողությամբ և 1823 թ. հուլիսին Ռաուֆ փաշան օսմանյան կառավարության կողմից և միրզա Մուհամմեդ Ալի Աշթիանին Իրանի կողմից ժամանեցին Էրզրում հաշտության պայմանագիր կնքելու համար:

Էրզրումի պայմանագիրը ստորագրվեց 1823 թ. հուլիսի 28–ին: Պայմանագրի ներածական բաժնում նշվում էր, որ վերականգնվում են երկու պետությունների սահմանների պատերազմից առաջ եղած վիճակը, այսինքն՝ տարածքային ստատուս–քվոն, կողմերը պարտավորվում են վերադարձնել ռազմագերիներին և այլն: Իրանը պարտավորվում էր պայմանագիրը կնքվելուց հետո՝ 60 օրվա ընթացքում, Թուրքիային վերադարձնել այն բոլոր հողերը, քաղաքներն ու գյուղերը, որոնք գրավել էր պատերազմի ընթացքում:

3. 1826–1828 ԹԹ. ԻՐԱՆԱ–ՌՈՒՍԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Իրանա–թուրքական պատերազմում արձանագրված հաջողություններն Է՛լ ավելի բորբոքեցին իրանական կառավարող վերնախավի ռազմաշունչ տրամադրությունները: Այդ հաջողությունները հավատ ներշնչեցին շահական կառավարությանը, որ Ռուսաստանի դեմ նոր պատերազմում ինքը կարող է հետ բերել կորցրածը: Ընդ որում, զահաժառանգ Աբբաս Միրզան և նրա կողմնակիցները մեծ հույսեր էին կապում անգլիացիների, ինչպես նաև իրենց դաշնակից հարավկովկասյան տեղական խաների օգնության հետ:

Վճռական քայլը կատարելուց առաջ Իրանը փորձեց ռազմական դաշինք կնքել Օսմանյան կայսրության հետ ընդդեմ «իսլամի ոխերիմ թշնամի» Ռուսաստանի: Այդ նպատակով Կոստանդնուպոլիս ուղարկվեց միրզա Ֆեյզ–Օլլան, որը սուլթանի հետ հանդիպման ժամանակ շահի անունից խնդրեց դաշնակցել Իրանին կամ ծայրահեղ դեպքում ուղղակի աջակցել նրան առաջիկայում նախապատրաստվող պատերազմում: Բանակցությունների սկզբում ապակողմնորոշելով իրանական դեսպանին՝ թուրքերը հայտնեցին, որ իրենք ընդունում են առաջարկը և նպատակի իրագործման համար պատրաստ են զինված մի խմբավորում տրամադրել: Մինչ-

դեռ իրականում թուրքերը Ակկերմանում բանակցություններ էին վարում ռուսների հետ: Երբ այդ փաստը իրանական լրտեսների օգնությամբ հայտնի դարձավ շահին, թուրքերն այլևս խուսանավելու ոչ մի հնարավորություն չունեին և ուղղակի հայտարարեցին Ֆեյզ–Օլլային, որ առաջիկա իրանա–ռուսական պատերազմում Օսմանյան կայսրությունը պահպանելու է խստիվ չեզոքություն:

1826 թ. հունիսի 23–ին շիական բարձր հոգևորականության ներկայացուցիչները՝ մոջթեհիդները և ուլեմները, հրապարակեցին ֆեթվա (հրաման) Ռուսաստանի դեմ ջիհադ (սրբազան պատերազմ) սկսելու թույլտվության մասին: Նախահարձակ լինելով 1826 թ. հուլիսի 18–ին՝ Աբբաս Միրզայի բանակը ներխուժեց Արցախ և պաշարեց Շուշին: Միաժամանակ Երևանի սարդարի զորքերը ռազմական գործողությունների անցան Բաշ Ապարանի ուղղությամբ:

Անմիջապես Թալիշի, Շիրվանի և մի շարք այլ վայրերի խաներն անցան պարսիկների կողմը: Այսպիսով սկսվեց իրանա–ռուսական երկրորդ պատերազմը:

Կարճ ժամանակ անց Արևելյան Հայաստանի գավառների մեծ մասն անցավ Իրանի տիրապետության տակ: Իրանը մտավ այդ վտանգավոր պատերազմի մեջ՝ մեծ հույսեր կապելով Անգլիայի ռազմական ու ֆինանսական օգնության և Ռուսաստանի դեմ Թուրքիայի իրականացրած գործողությունների հետ:

Սկզբում ռուսական զորքերը ստիպված էին անկանոն կերպով նահանջել՝ թշնամուն թողնելով Գանձակը, Լենքորանը, Սալյանին, Շիրվանը: Պարսկական զորքերը պաշարեցին Բաքուն: Շուշիի հերոսական պաշտպանությունը, որը 48 օր շարունակ իր վրա գամեց Աբբաս Միրզայի հիմնական ուժերը, ռուսական հրամանատարությանը հնարավորություն տվեց ժամանակ շահելու: Բանակը համալրելով նոր զորամասերով՝ ռուսները ծավալեցին հուժկու հակահարձակում: Գեներալ Մադաթյանցը (Մադաթով) 1826 թ. սեպտեմբերի 3–ին Շամխորի մոտ ջախջախեց Աբբաս Միրզայի որդու՝ Մուհամմեդ Միրզայի զորքերին: Իսկ Գանձակի մատույցներում գեներալ Պասկևիչը կործանիչ հարված հասցրեց հենց իր՝ Աբբաս Միրզայի բանակին: Այդ պարտությունները ստիպեցին Թուրքիային արագացնել Ռուսաստանի հետ Ակկերմանի կոնվենցիայի ստորագրումը (1826 թ. սեպտեմբերի 25–ին):

Հակառակ իրենց բոլոր խոստումներին՝ Թուրքիան և Անգլիան լքեցին Իրանին՝ նրան մեն–մենակ թողնելով ահարկու հակառակորդի դեմ:

1827 թ. ռուսական բանակը պաշարեց Երևանը, և նույն թվականի հոկտեմբերին հայ բնակչության օգնությամբ ռուսներին հաջողվեց գրավել այդ ամուր քաղաք–ամրոցը: Այնուհետև ռուսները գրավեցին նաև Նախիջևանի խանությունը: Արդեն 1827 թ. ձմռանը Աբբաս Միրզայի բանակից մնացել էին միայն խղճուկ մնացուկներ: Պարսկական զորքերը սկսեցին խուճապահար փախուստի դիմել: Ռուսական բանակն անցավ Արաքսը և մուտք գործեց Ատրպատական՝ գրավելով Թավրիզը, Խոյը, Մարանդը, Սալմաստը և այլ քաղաքներ: Խուճապի մեջ էր Թեհրանը, որտեղ ենթադրում էին, որ ռուսական զորքերը կներխուժեն նաև դաջարների պետության մայրաքաղաք: Միանգամայն ակներև էր, որ Իրանը տանուլ է տվել պատերազմը: Աբբաս Միրզայի առաջարկով սկսվեցին հաշտության բանակցությունները, որոնք

ավարտվեցին 1828 թ. փետրվարի 10–ին Թուրքմենչայում հաշտության պայմանագրի ստորագրմամբ: Գյուլիստանի պայմանագիրը հայտարարվում էր իր ուժը կորցրած: Իրանի և Ռուսաստանի միջև սահմանվում էր նոր սահման, որն անցնելու էր Արաքս գետով: Ռուսաստանին էին անցնում Երևանի և Նախիջևանի խանությունները: Իրանը պարտավորվում էր Ռուսաստանին վճարել ռազմատուգանք 10 քուրուր թուման (20 միլիոն արծաթե ռուբլի) գումարով: Պայմանագրի 8–րդ հոդվածը հաստատում էր Գյուլիստանի պայմանագրի համապատասխան կետն այն մասին, որ Ռուսաստանը ստանում է Կասպից ծովում ռազմական նավատորմ ունենալու իրավունք, իսկ պարսիկներին, ընդհակառակը, մերժվում էր այդ իրավունքը: Ռուսաստանը Աբբաս Միրզային ճանաչում էր որպես գահաժառանգ: Ռուսահպատակներին Իրանում տրամադրվում էր հյուպատոսական իրավասություն: Ռուսահպատակ վաճառականների համար սահմանվում էին ներմուծվող և արտահանվող ապրանքների 5%–ի չափով մաքսատուրք և առևտրական այլ արտոնություններ: Պայմանագիրը նախատեսում էր դեսպանորդների փոխանակում և Ռուսաստանին իրավունք էր տրամադրում իր հայեցողությամբ Իրանի քաղաքներում բացելու հյուպատոսություններ: Ընդ որում՝ հյուպատոսությունները ստանալու էին արտաերկրայնության (էքստերիտորիալություն) իրավունք և լինելու էին շահական իշխանությունների հատուկ հովանավորության ներքո:

Պայմանագրի 13–րդ հոդվածը նախատեսում էր ռազմագերիների, ինչպես նաև ավելի վաղ ժամանակներում Իրան քշված գերիների՝ հայերի, վրացիների, թյուրքախոս իրանցիների վերադարձը Կովկաս՝ իրենց օջախները:

Թուրքմենչայի պայմանագիրը նշանավորում էր XIX դարի սկզբի ռուս–իրանական պատերազմների ավարտը: Ընդհուպ մինչև 1917 թվականը այդ պայմանագիրը ծառայում էր որպես գործիք ռուս–իրանական հարաբերությունները կարգավորելու գործում: Այն սկիզբ դրեց Իրանում կապիտուլյացիոն ռեժիմի հաստատմանը, Իրանի կողմից Վրաստանի և Հայաստանի նկատմամբ հավակնություններին՝ ամբողջականացնելով Ռուսական կայսրությանը Հարավային Կովկասի միացման գործընթացը:

Թուրքմենչայի պայմանագրի հետ միաժամանակ 1828 թ. փետրվարի 10–ին ստորագրվեց ռուս–իրանական առևտրի մասին հատուկ համաձայնագիր: Ռուսաստանի հետ անհաջող պատերազմները ուժգին ներգործություն ունեցան Իրանում քաղաքական իրադրության հետագա ընթացքի վրա:

Ռազմատուգանք վճարելու պարտավորությունը շահական կառավարությանը ստիպեց մտցնել արտակարգ հարկեր և տուրքեր, որոնք չափազանց ծանր բեռ էին առանց այն էլ պատերազմի հետևանքով քայքայված Իրանի համար: Երկիրը կանգնած էր ապակայունացման և ներքին պայթյունի առջև: Իրանական հասարակայնության բոլոր խավերին համակել էր զայրույթը՝ որպես հետևանք իրենց անելանելի վիճակի: Այդ զայրույթն ու ցասումը իրանական արքունիքի կողմից վարպետորեն ուղղվում էին Ռուսաստանի և Իրանում նրա ներկայացուցիչների, մասնավորապես դեսպանորդ Ա. Գրիբոյեդովի դեմ: Դրա հետևանքը եղավ այն, որ 1829 թ.

փետրվարի 11–ին Թեհրանում ամբոխը հարձակվեց ռուսական դիվանագիտական ներկայացուցչության վրա և ջախջախեց այն, իսկ Ա. Ս. Գրիբոյեդովը և նրա աշխատակիցները զոհվեցին:

Այսպիսով՝ ընդամենը մեկ սերնդի կյանքի ընթացքում Ռուսաստանը «թռիչք կատարեց» դեպի Կովկաս, նվաճեց նրա հարավային երկրամասերի մեծ մասը՝ իր պետական սահմանը Ղաջարական պետության հետ դարձնելով Արաքս գետը: Սակայն նա բավարարվելո՞ւ էր դրանով, թե՞ շարունակելու էր իր հետագա առաջխաղացումը դեպի Հնդկաստան: Այս հարցը Անգլիայի քաղաքական շրջաններում տեղիք էր տվել ծանր մտորումների:

4. ՀԵՐԱԹԻ ԱՌԱՋԻՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Իրանա–ռուսական երկրորդ պատերազմում կրելով պարտություն՝ երկիրը հայտնվել էր ծայրահեղ դժվարին կացության մեջ: Տնտեսական դժվարություններին գումարվում էր ներքին անկայունությունը: Իրանի վրա կախվել էր տարածքային ամբողջականությունը խախտվելու իրական վտանգ:

Ճգնաժամային վիճակից դուրս գալու փնտրտուքներում շահը և գահաժառանգ Աբբաս Միրզան իրենց առջև տեսնում էին երկու ուղի. հնազանդությունից դուրս եկած տարբեր նահանգների իշխանազուն–կառավարիչների ընկճումը և նրանցից պետության գանձարանի համար խոշոր միջոցների կորզումը և ապա հարևան երկրների՝ Աֆղանստանի ու Կենտրոնական Ասիայի, Օսմանյան կայսրության տիրույթների նվաճման ճանապարհով նոր հողերի և հարուստ ռազմական ավարի ձեռքբերումը:

Իրանա–ռուսական երկրորդ պատերազմի ավարտից հետո խորասանյան խաներին սանձահարելուց և Իրանի պետական իշխանությանը ենթարկելուց հետո շահական կառավարությունը որոշեց վերականգնել իր տիրապետությունը նաև Աֆղանստանի տարածքում գտնվող Հերաթի կիսաանկախ խանության նկատմամբ, որը թեև ձևականորեն ճանաչում էր իրանական շահի գերագույն իշխանությունը, սակայն փաստացի միանգամայն անկախ էր: Հերաթ քաղաքը Կենտրոնական Ասիա, Իրան և Հնդկաստան տանող միջազգային ճանապարհների հանգուցակետում էր: Չափազանց մեծ էր նաև նրա ռազմավարական նշանակությունը: Իզուր չէ, որ ժամանակին Նադիր շահը ասել էր. «Խորասանը Իրանի սուրն է, և ով կտիրի Հերաթին, նա կդառնա նաև Խորասանի տերը»: Հերաթի խանությունը տնտեսապես ու պատմականորեն սերտորեն կապված էր Իրանի հետ և իրավական առումով համարվում էր շահի ենթակայության ներքո գտնվող տարածք: Սակայն այդ նահանգի կառավարիչը ոչ միայն չէր ենթարկվում կենտրոնական իշխանություններին, այլև հաճախ ավազակային հարձակումներ էր կազմակերպում Խորասանի և Սիսթանի (Սեյիսթան) նկատմամբ:

1833 թ. իրանական զորքերը Աբբաս Միրզայի որդու՝ Մոհամմադ միրզայի և Ղայեմ–մաղամ Աբուլ–Ղասեմ Ֆարահանիի գլխավորությամբ Խորասանից զորա-

շարժ կատարեցին դեպի Հերաթ և պաշարեցին այն: Այստեղ նրանց լուր հասավ, որ Մեշհեդում Աբբաս Միրզան կնքել է իր մահկանացուն, իսկ Ֆաթհ Ալի շահը ծանր հիվանդ է և մահվան մահճում է: Մոհամմադ միրզան, որը կարող էր դառնալ գահի հավակնորդ, անմիջապես հանեց քաղաքի պաշարումը և, բավարարվելով Հերաթի նահանգի կառավարիչ Քամրան միրզայի հետ կնքած համաձայնագրով ու բանավոր խոստումներով, որ ինքը ճանաչում է իր վասալական կախումը դաջարներից, շտապեց Թեհրան, որպեսզի ձեռքից բաց չթողնի շահնշահական գահին տիրանալու հնարավորությունը:

1834 թ. հոկտեմբերին՝ Ֆաթհ Ալի շահի մահից հետո, անմիջապես հայտնվեցին գահի մի քանի հավակնորդներ, այդ թվում նաև շահի բազմաթիվ որդիներից երեքը: Նրանցից մեկին՝ Զելլ–ի Սուլթանին, հաջողվեց Թեհրանում զավթել իշխանությունը: Նա իրեն հայտարարեց շահ: Սակայն ելնելով իրենց քաղաքական հաշվարկներից՝ Անգլիան և Ռուսաստանը պաշտպանեցին Մոհամմադ միրզայի թեկնածությունը: Օգտվելով այդ աջակցությունից՝ նա կարողացավ ասպարեզից հեռացնել Զելլ–ի Սուլթանին ու գահի մնացած բոլոր հավակնորդներին և 1835 թ. հունվարի 31–ին թագադրվեց՝ դառնալով դաջարական գահի երրորդ տիրակալը:

Նորաթուխ գահակալն իր ներքին ու արտաքին քաղաքականությունն իրագործելիս ընթանում էր իր պապի՝ Ֆաթհ Ալի շահի և հոր՝ Աբբաս Միրզայի նախանշած ուղիներով: Գահին բազմելուց հետո նրա առաջին գործը եղավ իր առաջին վեզիր Աբուլ–Ղասեմ Ղայեմ–Մազամ ֆարահանիից ազատվելը: Շահը հրամայեց սպանել նրան և 1835 թ. հունիսի վերջին նրա փոխարեն առաջին վեզիր նշանակեց իր տնային ուսուցիչ միրզա Աբբաս Իրավանիին: Վերջինս այդ պաշտոնը զբաղեցրեց տասնչորս տարի՝ ընդհուպ մինչև Մոհամմադ շահի կառավարման վերջին տարին:

1837 թ. Մոհամմադ շահ Դաջարը (1834–1848) նոր արշավանք նախաձեռնեց դեպի Հերաթի խանություն՝ հայտարարելով, որ Քամրան միրզան չի կատարում իր կողմից ստորագրված համաձայնագրի պայմանները, բացի այդ՝ հրաժարվում է նախատեսված հարկային գումարները շահական գանձարան մուծելուց:

1837 թ. նոյեմբերին շահական զորքերը մոտեցան Հերաթին և ամուր պաշարեցին քաղաքը: Դա խիստ անհանգստացրեց անգլիացիներին, մանավանդ որ նրանք ենթադրում էին, որ այդ գործի մեջ խառն է Ռուսաստանի մատը: Այդ կասկածները հիմնավորվում էին նրանով, որ Հերաթը պաշարող իրանական սարբազների շարքերում էր ռուս սպա, կոմս Սիմոնիչը:

Անգլիացիները Հերաթը պաշարող պարսիկ զինվորների թիկունքում տեսնում էին ռուսական զորքերին, որոնք, պարսիկների ձեռքերով գրավելով ռազմավարական այդ կարևոր հանգույցը, այնուհետև կշարժվեն դեպի Հնդկաստան: Պաշարված Հերաթի պաշտպանության գործը հենց այդ պատճառով անգլիացիները անմիջապես վերցրին իրենց ձեռքը՝ ի դեմս անգլիացի սպա Էլդրեդ Պոտտինջերի:

Իսկ Թեհրանում բրիտանական դեսպանորդ Մաք–Նեյլը, Լոնդոնի հանձնարարությամբ մեկնելով Հերաթի մոտ տեղակայված Մոհամմադ շահի ռազմական ճամբարը, սկսեց սպառնալիքներ տեղալ իրանական կառավարության հասցեին՝ փոր-

ձելով ստիպել շահին հանել Հերաթի պաշարումը: Տեսնելով, որ այդ սպառնալիքները բավարար ազդեցություն չեն ունենում միապետի վրա, դեսպանորդը հայտարարեց, որ Հերաթի արշավանքը բրիտանական կառավարությունը դիտում է որպես իր նկատմամբ թշնամական ակտ, ուստի ինքը իր առաքելության ողջ կազմով հեռանում է Իրանից: Հատկապես նա լքեց շահի ճամբարը և մեկնեց արևմուտք՝ թուրքական սահմանի ուղղությամբ: Դիվանագիտական այդ դեմարշը ավելի ազդու դարձնելու նպատակով 1838 թ. անգլիացիները ռազմական ցույց կազմակերպեցին Պարսից ծոցում՝ գրավելով Բուշեհրից հյուսիս–արևմուտք ընկած Խարք կղզին:

Վախեցած շահը ընկրկեց և 1838 թ. օգոստոսին հանեց Հերաթի պաշարումը: Սակայն դա չբավարարեց անգլիացիներին: Վերջիններս պահանջում էին զորքերը հանել նաև Հերաթի իշխանության կազմի մեջ մտնող Հորիան ամրոցից և Ֆեբրահ և Սաբզևար քաղաքներից: Իրանական կառավարության վրա ճնշումը ավելի գործուն ու արդյունավետ դարձնելու համար Լոնդոնի հրահանգով Մաք–Նեյլը 1838 թ. նոյեմբերին հայտարարեց, որ Անգլիան Իրանի հետ խզում է դիվանագիտական հարաբերությունները: Դրան հետևեց դեսպանի կողմից ցուցադրական ձևով Իրանի տարածքի լքումը:

Թեև վերջնագրի ձևով անգլիացիների ներկայացրած պահանջները վիրավորական էին Իրանի պետական հեղինակության համար, սակայն իր անձնական հանգստությանն ու անվտանգությանը հետամուտ շահը ընդունեց դրանք:

Անգլիայի դիվանագիտական հաղթանակը կատարյալ էր: Որպես առաջին քայլ՝ շահական կառավարությունը հապշտապ կատարեց անգլիացիների ներկայացրած նախնական պահանջները, իսկ ապա դիվանագիտական հարաբերությունները վերականգնելու և Անգլիայի հետ լարված հարաբերությունները կարգավորելու նպատակով տագնապահար Մոհամմադ շահը 1838 թ. Լոնդոն ուղարկեց մեծ պատվիրակություն՝ Հոսեյին խանի գլխավորությամբ, որի հետ բանակցությունները սկսեց անձամբ վարչապետ լորդ Պալմերսոնը: Իրանական կողմին ներկայացվեց 11 կետերից բաղկացած մի առաջարկ, որն ըստ էության վերջնագիր էր: Այդ փաստաթղթում բավականին կոշտ արտահայտություններով նշվում էր, որ բրիտանական կողմը իր համաձայնությունը կտա Իրանի հետ վերականգնելու դիվանագիտական հարաբերությունները միայն մեկ պայմանով՝ եթե այդ բոլոր 11 կետերը անվերապահորեն, առանց նույնիսկ չնչին փոփոխությունների ընդունվեն շահական կառավարության կողմից: Պալմերստոնի ներկայացրած առավել կարևոր պահանջներն էին՝ իրանական զորքերը հետ կանչել ոչ միայն Հորիան ամրոցից, այլև առհասարակ Աֆղանստանի այն վայրերից, որտեղ տեղակայված են զինվորական ստորաբաժանումները, Անգլիայի հետ կնքել առևտրական պայմանագիր, որը պարունակեր նաև անգլիացիների համար արտաերկրայնության (էքստերիտորիալության) իրավունք, և որը անգլիական հպատակների վրա կտարածեր կապիտուլյացիաների ռեժիմը:

Թեհրանն ընդունեց այդ բոլոր պահանջները, և Իրանի հետ դիվանագիտական կողմից հրաման արձակվեց դուրս գալ Խարք կղզուց: Դեսպանորդ Մաք–Նեյլը վերադարձավ իր աշխատավայրը՝ Թեհրան:

Սակայն շահական կառավարության նահանջը անգլիացիների առջև դրանով չսահմանափակվեց: 1841 թ. հոկտեմբերի 28–ին կնքված անգլո–իրանական առևտրական պայմանագիրը անգլիացիներին տրամադրում էր լրացուցիչ արտոնություններ և իրավունքներ: Այդ պայմանագրով անգլիացիները ստանում էին արտերկրայնության (էքստերիտորիալության) իրավունք, Անգլիայի վրա տարածվում էին կապիտուլյացիոն այն բոլոր իրավունքները, որոնք հաղթական Ռուսաստանը ստացել էր 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով: Բացի այդ՝ անգլիական վաճառականները ազատվում էին ներքին մաքսեր վճարելու պարտավորություններից, Իրան ներմուծվող անգլիական ապրանքների համար սահմանվում էին արտոնյալ մաքսատուրքեր:

1845 թ. Իրանը հարկադրված էր նույնանման արտոնություններ, այդ թվում նաև արտաերկրայնության (էքստերիտորիալության) իրավունք հատկացնել Ֆրանսիային: Այնուհետև աստիճանաբար կապիտուլյացիոն իրավունքները տարածվեցին նաև Գերմանիայի, Շվեդիայի, Դանիայի, Հոլանդիայի, Բելգիայի, Իսպանիայի, Իտալիայի, Ավստրիայի և Հունաստանի վրա: Այդ կապիտուլյացիաների շնորհիվ եվրոպական ազդեցությունը Իրանում քայլ առ քայլ մեծանում էր: ԱՄՆ–ի վրա արտաերկրայնության ու կապիտուլյացիոն իրավունքները տարածվեցին 1856 թ. դեկտեմբերի 13–ին կնքված իրանա–ամերիկյան «Բարեկամության և առևտրի մասին» պայմանագրի շնորհիվ, որն իրենով նշանավորում էր իրանա–ամերիկյան հարաբերությունների սկզբնավորումը: Մինչ այդ Իրանում եռանդուն գործունեություն էին ծավալել ամերիկյան բողոքական եկեղեցու միսիոներները, որոնք 1834 թ. Ուրմիայում ստեղծել էին իրենց կենտրոնը և այնտեղից աստիճանաբար տարածվել ամբողջ Իրանով մեկ՝ հատկապես քարոզչական լայն գործունեություն ծավալելով Ատրպատականում և Կենտրոնական Իրանում:

Այսպիսով՝ XIX դ. առաջին կեսին օտարերկրյա ազդեցությունն Իրանում զգալիորեն մեծացավ: Դրա անխուսափելի հետևանքն այն էր, որ եվրոպական, հատկապես անգլիական և ռուսական դիվանագետներն ավելի եռանդուն սկսեցին միջամտել երկրի ներքին գործերին: XIX դ. 30–ականներից սկսած՝ Իրանի տարբեր քաղաքներում սկսեցին հիմնադրվել եվրոպական ընկերությունների առևտրական գրասենյակներ, որոնք ամեն կերպ նպաստում էին իրենց երկրների քաղաքական ներթափանցմանը: Օտարերկրյա կապիտալը սկսում էր արագորեն քայքայել երկրի արհեստներն ու տնայնագործական արտադրությունը, որոնք, չդիմանալով եվրոպական մեքենայական արտադրության ապրանքների մրցակցությանը, աստիճանաբար դուրս էին մղվում և դադարում գոյություն ունենալուց:

Այսպիսով՝ XIX դ. առաջին կեսը դաջարական պետության համար կարելի է համարել վայրէջքի ժամանակաշրջան: Իրանը պարտություն կրեց ռուս–պարսկական երկու պատերազմներում, տանուլ տվեց պայքարը Հերաթի խանության համար, ունեցավ տարածքային խոշոր կորուստներ, ի վիճակի չեղավ սանձահարելու ինքնագլխության ձգտող տարրերին և այլն: Երկիրը մխրճվել էր սոցիալ–տնտեսական և քաղաքական խոր ճգնաժամի մեջ, որը համակել էր բնակչության բոլոր խավերին

և տնտեսական ու քաղաքական գործունեության բոլոր բնագավառները՝ անդրադառնալով երկրի ներքին կայունության, մարտունակության և նրա միջազգային հարաբերությունների վրա:

5. XIX ԴԱՐԻ 30–40–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱՆԱ–ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1829 թ. սեպտեմբերի 2–ին ռուս–թուրքական պատերազմում պարտություն կրած Օսմանյան կայսրությունը ստիպված էր ստորագրել Ադրիանապոլսի հաշտության պայմանագիրը: Թուրքիայի պարտությունը այդ պատերազմում միաժամանակ ունեցավ այն հետևանքը, որ Իրանը վերջնականապես հրաժարվեց Օսմանյան կայսրության հետ ռազմական դաշինք կնքելու և Ռուսաստանի դեմ նոր՝ երրորդ պատերազմը սանձազերծելու մտադրությունից:

Պատահական չէ, որ XIX դարի 30–40–ականներին իրանա–թուրքական հարաբերություններում տեղի էին ունենում բարդ զարգացումներ: Կրկին մակերես էին բարձրացել սահմանային վեճերը, որոնք սկիզբ էին առել դեռևս XVI–XVII դարերում, սակայն նոր թափով բորբոքվեցին XIX դարի առաջին երեսնամյակին: Նշված շրջանում երկու սահմանակից պետությունների քաղաքական հակասություններին գումարվեց նաև առևտրական–տնտեսական մրցակցությունը:

1837 թ. ձգտելով հարված հասցնելու Շաթթ–էլ–Արաբ գետի վրա գտնվող Մոհամմերա (ներկայումս՝ Խորբեմշահր) իրանական նավահանգստային քաղաքի առևտրական նշանակությանը, որը օսմանյան տիրապետության ներքո գտնվող Բասրայի մրցակիցն էր, Բաղդադի վալի Ալի Ռեզա փաշան հարձակում գործեց Մոհամմերայի վրա, կողոպուտի և ավերածության մատնեց քաղաքը, իսկ մեծ թվով կանանց ու աղջիկների քշեց գերության «եսիր բազարներում» (ստրկավաճառանոցներում) վաճառքի հանելու համար: Չսահմանափակվելով բացահայտ ագրեսիայի այդ ակտով՝ 1840 թ. թուրքական զորքերը ներխուժեցին Իրանական Քրդստան: Իրանը դրան պատասխանեց՝ «չափաուլներ» (ասպատակություններ) կազմակերպելով դեպի Օսմանյան կայսրության տարածքը: Կողմերի միջև լարվածությունը գնալով շիկանում էր: Ի վերջո 1842 թ. գործը հասավ պատերազմի:

Բաղդադի Ալի Ռեզա փաշան (Նաջիբ փաշա), գրավելով շիաների սրբազան քաղաք Քաբբալան, սրի քաշեց քաղաքի համարյա ողջ շիա բնակչությանը՝ թվով 15–22 հազար մարդու՝ իր փաշայության մեջ բնակվող բոլոր շիաներին՝ համարելով Իրանի կողմնակիցներ: Այդ կոտորածի հետևանքով բազմաթիվ ազդեցիկ շիա ուլեմներ (աստվածաբան–գիտնականներ) սպանվեցին:

Իրանը և Օսմանյան կայսրությունը սուր վեճի մեջ էին նաև կրոնաքաղաքական խնդիրների շուրջ: Այդ երկու պետություններն էլ հավակնում էին մուսուլման աշխարհում հոգևոր առաջնության դերին. նրանցից յուրաքանչյուրը համարում էր, որ իսլամի իր դավանած ուղղությունը՝ շիականությունը կամ սուննիականությունը, ավելի ճիշտ է և «մաքուր»:

Օսմանյան կայսրության տարածքում շիաների սրբավայրերի (Քերբալա, Էն–Նաջաֆ, Քազեմեյն, Սամարրա) լինելը Օսմանյան կայսրությանը հնարավորություն էր տալիս տարբեր եղանակներով ճնշում գործադրելու Իրանի վրա, այդ թվում նաև իրանական ուխտավորների առջև արգելքներ հասցնելու ճանապարհով: Օսմանյան կայսրությունը կրոնի միջոցով կապված էր Իրանի հարևան այն երկրների հետ (Աֆղանստան, Հնդկաստան, Բուխարայի և Խիվայի խանություններ և այլն), որոնք «ուղղադավան» մուսուլմաններ էին, այսինքն՝ սուննիականության հետևորդներ էին: Օսմանյան սուլթանը բոլոր սուննի մուսուլմանների խալիֆն էր՝ հոգևոր առաջնորդը:

Թուրքիան առհասարակ հաճույքով ընդառաջում և ամեն կարգի աջակցություն էր ցուցաբերում դաջարների թագավորող տան բոլոր քաղաքական հակառակորդներին: Դրա հետևանքով այն դարձել էր հակադաջարական ընդդիմության ձգողության կենտրոն: Իսկ Իրանում ապաստանում և հովանավորություն էին գտնում սուլթանական վարչակարգի բոլոր հակառակորդները:

Թուրք–իրանական մերթ հանգչող, մերթ նոր ուժով բռնկվող պատերազմական գործողություններին վերջ տալու նպատակով 1843 թ. մայիսին Էրզրումում գումարվեց միջազգային մի համաժողով, որին մասնակցում էին չորս պետությունների՝ Իրանի, Թուրքիայի, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի ներկայացուցիչները: Համաժողովի աշխատանքները ընդհատումներով տևեցին մինչև 1847 թ., երբ նույն թվականի մայիսի 31–ին կնքվեց իրանա–թուրքական խաղաղության պայմանագիր: Իրանը հրաժարվում էր Սուլեյմանիեի և Զոհաբի շրջանի արևմտյան մասի նկատմամբ հավակնություններից, իսկ Օսմանյան կայսրությունը ճանաչում էր Իրանի իրավունքները Մոհամմերա նավահանգստի, Հեզր կղզու և Շատտ էլ–Արաբ գետի ձախ ափի շրջանում նավագնացության վերաբերյալ: Թուրքերը պարտավորվում էին այլևս արգելքներ չհարուցել Իրաքի տարածքում գտնվող շիական սրբավայրերը մեկնող իրանական ուխտագնացների առջև: Կողմերը պայմանավորվեցին նաև արգելք չլինել երկու երկրների միջև առևտրի համար, թույլ չտալ վաչկատուն ցեղերի ասպատակությունները միմյանց տարածքում և այլն: Որոշվեց ստեղծել խառը հանձնաժողով՝ երկու երկրների միջև ճշգրիտ սահմաններ որոշելու համար:

Էրզրումի պայմանագիրը ստորագրելուց ընդամենը մի քանի ամիս անց խախտելով այն՝ Օսմանյան կայսրությունը բռնի ուժով զավթեց առաջնակարգ ռազմավարական նշանակություն ունեցող Ղոթուրի շրջանը, որն Իրանին հաջողվեց հետ ստանալ միայն 1878 թ. Բեռլինի վեհաժողովի ընդունած 60–րդ հոդվածի շնորհիվ: Այդ հարցում իրանական կառավարությանը մեծ ծառայություն է մատուցել Լոնդոնում իրանական դեսպան, հայազգի Մելքոն խանը (Մելքոմ խան): Նշված ծառայության համար շահը նրան պարգևատրել է Իրանի ամենաբարձր շքանշանով:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԻՐԱՆՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

1. ԲԱԲԻՆԵՐԻ ԵՎ ԲԱՀԱՅԻՆԵՐԻ ՇԱՐԺՈՒՄԸ

XIX դ. առաջին կեսին շահական կառավարության արտաքին քաղաքական անհաջողությունները, բնակչության կյանքի պայմանների շեշտակի վատթարացումը, ներքին խոր ճգնաժամը և այլ գործոններ խոր դժգոհություն էին առաջ բերել երկրում: Պարսիկ (ֆարս) բնակչության մի մասի շրջանում ձևավորվել էր այն մտայնությունը, որ երկրի աղետյալ վիճակի պատճառը թյուրք կառավարիչներն են՝ ի դեմս դաջարական դինաստիայի: Քաղաքական և սոցիալական դժգոհության այդ պարարտ ենթահողի վրա երկրում ծայր առան քաղաքային և գյուղական բնակչության հուզումներ, ցեղերի ապստամբություններ, ծայրամասային շրջանների ավատատերերի անջատողական շարժումներ և այլն: Երկրի առաջավոր ուժերը հանդես էին գալիս նոր սոցիալական կարգեր հաստատելու օգտին: Նրանց մոտ հասունանում էր իրանական պետության արդիականացման գաղափարը: Գահաժառանգ Աբբաս Միրզան, որը բարեփոխումների կողմնակից էր, հստակորեն գիտակցում էր, որ երկրի անկախությունն ու ամբողջականությունը պահպանելու համար անհրաժեշտ է վերակառուցել ու արդիականացնել ողջ պետական համակարգը, զարկ տալ տնտեսությանը, արհեստներին, առևտրին և այլն: Սակայն ռուս–պարսկական երկու պատերազմները մեծապես խանգարեցին Աբբաս Միրզայի և նրա համախոհների կողմից բարեփոխումների լայն ու համապարփակ ծրագրեր իրագործելուն:

Շիական հոգևորականությունը, որն ավանդաբար մեծ ազդեցություն ուներ Իրանում, երկրի առջև կանգնած մարտահրավերների նկատմամբ միասնական տեսակետ չուներ: Նրա մի մասը, հատկապես վերնախավը, կողմնակից էր հին կարգերի պահպանմանը և հանդես էր գալիս ամեն մի նորամուծության դեմ: Իսկ հոգևորականության մի ոչ ստվար մասը, թեև զգում էր պետության մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը, մտածում էր՝ արժեր արդյոք վերադառնալ վաղ իսլամի ժամանակներին, ինչպես կոչ էին անում Արաբական թերակղզու վահաբիները, իսլամական արմատականները և այլն, թե թուրքական Թանզիմաթի օրինակով գնալ պետության աստիճանական արդիականացման ճանապարհով: Կային նաև մարդիկ, որոնք կարծում էին, որ անհրաժեշտ է Իրանի համար որոնել զարգացման սեփական ուղի: Երկրում հասունանում էր նաև գաղափարական մի ընդդիմություն, որը բացահայտ կերպով մղում էր դաջարների նկատմամբ անհնազանդության քարոզչություն և կոչ էր անում իրանական հասարակությունը վերակառուցելու Իրանի դարավոր ավանդույթների և կրոնական հիմքի վրա:

Երկրի քաղաքական զարգացման ուղիների ընտրության այս կատարյալ շփոթի և անորոշության պայմաններում Իրանում հրապարակ եկավ մի նոր ուսմունք՝ բաբիականությունը (բաբիզմ), որը կարճ ժամանակամիջոցում լայն տարածում գտավ ինչպես բուն Իրանում, այնպես էլ նրա հարևան իսլամադավան մի շարք երկրներում՝ տիրապետելով տասնյակ հազարավոր ընչազուրկ ու հուսահատ մարդկանց մտքերը:

Այդ ուսմունքի հիմնադիրը սեյեդ Ալի Մոհամմադն էր (1819–1850), որը ծնվել էր Շիրազ քաղաքում՝ մանր առևտրականի ընտանիքում: Հետևելով ընտանեկան ավանդույթին՝ Ալի Մոհամմադը ևս Բենդեր–Բուշեհրում հինգ տարի շարունակ զբաղվել էր առևտրով: Դեռ պատանեկության տարիներից նա տարվել էր կրոնական–աստվածաբանական խնդիրների ուսումնասիրությամբ՝ մասնավորապես հետաքրքրվելով ու ծանոթանալով քրիստոնեության, զրադաշտականության և հուդայականության ուսմունքներին: Մի որոշ ժամանակ նա վարել է նաև ճգնավորական կյանք՝ իրեն տալով կրոնական հայեցողություններին: Որպես շիականության գաղափարներին անմնացորդ նվիրված անձ՝ նա որոշում է ուխտագնացության մեկնել շիաների սրբավայրեր՝ Քարբալա և Էն–Նաջաֆ: Այնտեղ նա տարվում է մուսուլմանական նոր աղանդի՝ շեյխիների աղանդի գաղափարներով: Այդ աղանդի հիմնադիր շեյխ Ահմեդ Ախսային (1752–1827) քարոզում էր, որ ողջ տիեզերքը համակված է աստվածային սկզբով, իսկ աստծո հատկանիշները իրենց դրսևորումներն են ունենում նրա ընտրյալների՝ իմամների մեջ: Ըստ էության, դա բնապաշտական–պանթեիստական ուսմունքի մի տարատեսակ էր, որը հին արմատներ ուներ Իրանում: Շեյխ Ախսային հայտարարում էր, որ շուտով տեղի է ունենալու նոր աստվածահայտնություն: Ախսայիի ուսմունքի մեջ գլխավորը, որը հրապուրեց և դեպի իրեն ձգեց բազմաթիվ հետևորդների, կերպարանափոխության և մեսիականության գաղափարն էր, ըստ որի՝ ավելի քան հազար տարի առաջ անհետացած շիաների համար պաշտելի 12–րդ իմամ կամ «թաքնված իմամ» Մահդին շուտով հայտնվելու է, որպեսզի իր պատգամները հայտնի ժողովրդին, մաքրագործի իսլամը, երկրի երեսից ջնջի անարդարությունը և սահմանի նոր, արդար կարգեր:

Անկասկած, շեյխ Ախսայիի ուսմունքի մեջ խոսքը լոկ բարոյական նորոգման, ոչ թե հասարակության սոցիալական վերակառուցման մասին էր: Սակայն բնական է, որ ամեն ոք կարող էր այդ «նորոգումն» ընկալել յուրովի՝ նրա մեջ դնելով բոլորովին այլ իմաստ: Այլ կերպ ասած՝ «Ճշմարտության որոշումներում» յուրաքանչյուր անհատ կարող էր ընտրել սեփական ուղին: Իսլամի մեջ գոյություն ունի «թարիքաթի» վերաբերյալ ուսմունքը, որը ենթադրում է ճշմարտության և նրա ընկալման սեփական որոնումներ: Այդ հանգամանքը անխուսափելիորեն դուռ է բացում տարբեր աղանդների ծնունդ առնելու համար, որոնք ամենատարբեր ձևերով կարող են մեկնաբանել Ղուրանի, շարիաթի և հանդիսների դրույթները:

Բոլոր դեպքերում Մահդիին սպասում էին բոլորը. ոմանք նրա գալստյան հետ կապում էին արդարության վերականգնումը, ոմանք ակնկալում էին հարկերի թեթևացում և իրենց կյանքի պայմանների բարելավում, շատերը զայրացած էին

Իրանում օտարերկրացիների «սանձարձակ» վարքագծից, մի մասն էլ պահանջում էր հավասարություն և անձի ու գույքի ապահովության երաշխիքներ:

Քարբալայում և Էն–Նաջաֆում լինելու շրջաններում Ալի Մոհամմադը դառնում է շեյխիների աղանդի ղեկավարներից սեյեդ հաջի Քազեմ Ռեշտցու հետևորդը:

Մեկ տարի Իրաքում մնալուց հետո Ալի Մոհամմադը վերադառնում է իր հայրենի քաղաքը՝ Շիրազ, որտեղ շեյխիների աղանդի հետևորդները նրան ընտրում են իրենց մուրշիդ՝ ղեկավար:

1844 թ. մայիսի 12–ին Ալի Մոհամմադը հայտարարում է, որ եկել է իմամ Մահդիի գալստյան ժամանակը, քանի որ կյանքը երկրի վրա դարձել է անտանելի՝ իշխանությունների բռնությունների և երկրային արհավիրքների՝ երաշտի, համաճարակների և մարդկային անարդարությունների պատճառով: Քիչ ժամանակ անց նա հայտարարեց, որ «նա», որի հայտնության մասին կանխագուշակում էր սեյեդ Քազեմը, շուտով հայտնվելու է: Դրան նա ավելացնում է, որ աստված իրեն ընտրել է որպես «բաբ» (դարպաս) և այդպիսով կբացի նոր կյանքի մուտքը:

Բաբն իր աշակերտներին՝ «բաբիներին», ուղարկեց երկրի տարբեր կողմերը՝ ավետելու «մեծ պատգամաբերի» կամ աստծո պատվիրակի մոտալուտ գալստյան մասին: Բաբի հայտնության լուրը տարածվեց ողջ Իրանով մեկ՝ ալեկոծելով հավատավոր ու աստվածավախ բնակչությանը: Նրա քարոզները մեծ անհանգստության և տագնապի մատնեցին շիա հոգևորականությանը, որը Բաբին հայտարարեց խելագար: Ուլեմները Բաբին հռչակեցին նաև «կեղծ մարգարե», անաստված, հերետիկոս և այլն: Սկսվեցին հալածանքները բաբիների նկատմամբ: Բաբիական քարոզիչների ձայնը խեղդելու համար Շիրազ քաղաքի ուլեմները դիմեցին հաքիմ (նահանգապետ) Հոսեյին խանին՝ խնդրելով բաբիական քարոզիչներին զսպել բռնի ուժով: 1845 թ. օգոստոսին հաքիմի հրամանով քարոզիչները ձերբակալվեցին: Նրանց մահակներով դաժան ծեծի ենթարկելուց հետո քթներին երկաթե օղակներ հագցրին և դրանցից պարան կապելով՝ քարշ տալով պտտեցին շուկաներն ու մարդաշատ վայրերը՝ ժողովրդի առջև ենթարկելով ծաղրուծանակի: Այնուհետև կտրելով նրանց ոտքերի ջիլերը, որպեսզի չկարողանան տեղաշարժվել և մղել քարոզչություն, բաբիներին վտարեցին քաղաքից:

1847 թ. Ալի Մոհամմադը իրեն հռչակեց Մահդի՝ ասելով, որ «նա», որ պետք է հայտնվեր, հենց ինքն է: Նա գրեց «Բայան» («Հայտնություն») անունով մի գիրք, որտեղ շարադրված էին նրա ուսմունքի հիմնական դրույթները: Այդ գիրքը դարձավ բաբիների սրբազան գիրքը: Ըստ Բաբի՝ այն պետք է փոխարիներ իսլամի սուրբ գրքին՝ Ղուրանին: «Բայան»–ի այս աշխարհ գալը առաջացրեց մուսուլման հոգևորականության կատաղի թշնամանքը, որը հայտարարեց, որ Ալլահի մարգարեն միայն Մոհամմադն է, ով կժխտի դա, կենթարկվի մահապատժի և գեհենի հավերժական տանջանքին: Ըստ Բաբի՝ մարդկային հասարակությունը զարգանում է հետևողականորեն մեկը մյուսին փոխարինող դարաշրջաններով: Յուրաքանչյուր հաջորդ դարաշրջան գերազանցում է նախորդին և տարբերվում նրանից: Յուրաքանչյուր դարաշրջան ունենում է իր առանձնահատուկ կարգերն ու օրենքները: Հին կար-

գերն ու օրենքները ոչնչանում են հին դարաշրջանի ավարտին և փոխարինվում են նոր կարգերով: Մարդիկ ինքնուրույն չեն կարող սահմանել նոր կարգեր ու օրենքներ: Աստված դա անում է մարգարեի միջոցով, որին նա ամեն մի դարաշրջանում ուղարկում է մարդկանց մոտ: Ամեն դարաշրջան ունենում է իր մարգարեն, որի պատվիրանները բարձրագույն օրենք են տվյալ դարաշրջանի մարդկանց համար: Իրենց դարն ապրած հասարակական կարգերը և օրենքները, դրանց հետ միասին նաև տվյալ դարաշրջանի մարգարեներն ու նրանց սուրբ գրքերը կորցնում են իրենց արժեքը և փոխարինվում ավելի առաջադեմ մարգարեներով ու սուրբ գրքերով: Բաբը համարում էր, որ հետևողականորեն մեկը մյուսին փոխարինած այդպիսի մարգարեներն ու նրանց սուրբ գրքերն են Մովսեսն ու նրա Հնգամատյանը, Հիսուսն ու նրա Աստվածաշունչը, Մուհամմեդն ու նրա Ղուրանը: Բաբը հայտարարում էր, որ իսլամի հիմնադիր Մուհամմեդ մարգարեի դարաշրջանն արդեն անցել է, Ղուրանն ու շարիաթը արդեն հնացել են և պետք է փոխարինվեն նոր սուրբ գրքով և նոր օրենքներով, որոնք կարող է մարդկանց տալ նոր մարգարեն իր նոր սուրբ գրքով: Սակայն հաքիմներն ու ուլեմները, հենվելով այդ նույն Ղուրանի ու շարիաթի վրա, հափշտակել են իշխանությունը, կառչել են հին կարգերին և չեն ցանկանում հրաժարվել նրանցից: Զգտելով անձնական հարստացման և հաճույքներ վայելելու՝ նրանք պահպանում են միայն օրենքի տառը և հավատի ձևական կողմը, այլ ոչ թե դրանց ոգին և էությունը: Հենց այդ պատճառով էլ երկիրը ծայրից ծայր լցված է անարդարությամբ ու բռնություններով: Ըստ Բաբի՝ պետության մեջ գերագույն իշխանությունը պետք է պատկանի իմամ Մահդիին: Այստեղից եզրակացվում էր, որ շահի և մյուս աշխարհիկ տիրակալների իշխանությունը անօրինական է, որ նրանք այն հափշտակել են բռնությամբ ու ուժով, ուստի նրանց ենթարկվելը պարտադիր չէ: Բաբն ավետում էր Իրանի պատմության մեջ նոր դարաշրջանի բացումը: Իր հետևողների համար նա մշտական բնակավայրեր էր հռչակում Իրանի հինգ նահանգները՝ Մազանդարան, Խորասանը, Ֆարսը, Ատրպատականը և Իրանական Իրաքը, որտեղ, ըստ նրա, պետք է ստեղծվի արդարության սրբազան թագավորություն: Իր պատվիրաններից մեկում Բաբը իր հետևորդներին հանձնարարում էր արգելել ոչ բաբիների բնակությունը բաբիների երկրում:

Բաբը իրանական ժողովրդի բոլոր դժբախտությունների պատճառ էր համարում դաջարական տիրակալներին և բարձրագույն շիական հոգևորականությանը: Նա աներկյուղ հարձակվում էր տիրող կրոնի՝ իսլամի թերությունների վրա, քարոզում նորը, որը, ըստ նրա, հիմնված պետք է լիներ արդարության ու իրավահավասարության սկզբունքների վրա: Բաբիները քարոզում էին հավասարություն, նրանք ընդհանուր էին հայտարարում ստացվածքը և հողը, ներշնչում էին ժողովրդին, որ Իրանը կդառնա այն առաջին երկիրը, որտեղ կհաստատվի արդարության թագավորություն, որտեղ մարդիկ կապրեն միմյանց նկատմամբ եղբայրական սիրո զգացումներով:

Բաբի վարդապետությունն ու գաղափարները պարարտ հող էին գտնում Իրանի տառապող ու կեղեքվող զանգվածների մեջ: Ընկերային կյանքի փոփոխության

ձգտող այդ ուսմունքն արագորեն տարածվում էր Իրանում և դուրս գալիս նրա սահմաններից: Իսկ ամենակարևորը՝ գնալով այն ավելի էր արմատականանում: Բաբը վերացրեց աղոթքը, պասը, ծոմը, ուխտագնացությունը դեպի իսլամի սրբազան կենտրոններ, ողորմության պարտադիր բաշխումը, որոնք իսլամի հիմնարար դրույթներն էին: Նա հայտարարեց, որ չկա մաքուր ու կեղտոտ անձ կամ ցեղ: Բոլորը հավասար են: Տղամարդ և կին ունեն նույն իրավունքները: Կանանց թույլատրվում է չադրան հանել և այլն: Բաբը ասում էր, որ Իրանը կդառնա այն առաջին երկիրը, որտեղ կհաստատվի արդարության թագավորություն, մի բան, որ տառապյալների հավերժական երազանքն էր:

Այսպիսով՝ միանգամայն ակներև է, որ լինելով կրոնաբարենորոգչական՝ Բաբի ուսմունքը միաժամանակ ձեռք բերեց նաև քաղաքական շարժման բնույթ: Այդ ուսմունքը արագորեն տարածվում էր Իրանում՝ նունիսկ դուրս գալով նրա սահմաններից: Այն մեծ թվով հետևորդներ գտավ նույնիսկ պետական պաշտոնյաների և կառավարող ավատական վերնախավի շրջանում: Դրանցից մեկն, օրինակ, Սպահանի նահանգապետ, հայազգի (մուսուլմանացած) Մանուչեհր խան Մոաթամեդ–օդ–Դոուլեն («Պետության հենարան») մինչև իր կյանքի վերջը աջակցել ու պաշտպանել է Բաբին: Հենց Մանուչեհր խանի ջանքերով Բաբին հաջողվել էր փախչել Շիրազ քաղաքի բանտից և ապաստան գտնել Սպահանում՝ նահանգապետի տանը: Վերջինս նույնիսկ նամակ է գրում շահին՝ խնդրելով չհետապնդել Բաբին: Ահաբեկված իշխանությունները և հոգևորականությունը նզովքի ենթարկեցին բաբիներին: Նրանք կոչ էին անում ոչնչացնելու բոլոր հերետիկոսներին և արմատախիլ անելու բաբիականությունը:

1847 թ. Բաբը ձերբակալվեց: Իշխանությունները սկզբում նրան բանտարկեցին Մակու քաղաքի ամրոցում, իսկ ապա՝ 1848 թ. սկզբին, նրան տեղափոխեցին Ուրմիայից ոչ հեռու գտնվող Չեհրիք ամրոցը, իսկ այնուհետև հետաքննության համար՝ Թավրիզ:

1848 թ. ամռանը Շահրուդ քաղաքի մոտ գտնվող Բեդաշտ կոչված վայրում գումարվեց բաբիների համաժողով, որտեղ քննարկվեց նրանց հետագա գործողությունների ծրագիրը: Համաժողովի մասնակիցների մեծ մասը պաշտպանեց այն տեսակետը, որ եկել է բաբիների արդար թագավորություն ստեղծելու ժամանակը, քանի որ երկիրը դարձել է «դառնություններով ու վշտով լի ապականված տուն»: Բեդաշտի համաժողովում առաջարկվեց գոյություն ունեցող բոլոր օրենքների և կարգերի, այդ թվում՝ հարկերի, պարհակների և մասնավոր սեփականության վերացում: Հայտարարվեց, որ եկել է միջմարգարեության ժամանակաշրջանը, որի հետևանքով հին օրենքները վերանում են, և քանի որ դեռևս նոր օրենքներ հրապարակում չկան, բոլոր այն անձինք, որոնք համարվում են բարձր, կդառնան ստորին, իսկ ստորինները՝ բարձր:

1848 թ.՝ Մոհամմադ շահի մահից հետո, երբ գահին տիրելու համար իշխանազունների միջև բորբոքվեց թեժ պայքար, բաբիները որոշեցին օգտվել ստեղծված անկայուն վիճակից և կենտրոնանալով Կասպից ծովի Մազանդարան նահանգի

խիտ անտառներում՝ Շեյխ–Թաբարսի վայրում՝ բարձրացրին ապստամբություն: Նրանց միացան շրջակա գյուղերից գյուղացիներ ու արհեստավորներ՝ թվով մոտ երկու հազար մարդ: Բաբիները չթրծված աղյուսից կառուցեցին մի ամրոց, որտեղ բաբիական համայնքն ապրում էր կոմունայի սկզբունքով. սնունդը միասնական էր, բացակայում էր մասնավոր սեփականությունը, մտցվել էր գույքի ընդհանրություն:

Բաբիների ահից Մազանդարանի բազմաթիվ խաներ իրենց կալվածքներից փախչում էին լեռները: Ապստամբների դեմ ուղարկվեցին կառավարական զորքեր ու շրջակա խաների զինված ջոկատներ: Հոգևորականությունը հայտարարեց «ջիհադ» («Սրբազան պատերազմ»): Չնայած բաբիների անվեհեր կեցվածքին և խիզախ դիմադրությանը՝ նրանց ուժերը սովի և մարդկային կորուստների հետևանքով սպառվում էին: Շահական զորքերի հրամանատար, Մազանդարանի նահանգապետ Մահդի Ղուլի միրզան Ղուրանի վրա երդվեց, որ կխնայի բաբիների կյանքը, եթե նրանք զենքը ցած դնեն և հանձնվեն: Սակայն երբ անզեն բաբիները դուրս եկան ամրոցից՝ հավատալով այդ խոստմանը, նրանց բոլորին սրի քաշեցին:

1850 թ. բաբիական ապստամբություններ բռնկվեցին նաև Զենջանում, Յազդում, Ֆարս նահանգի Նեյրիզ քաղաքում և այլն: Սակայն այդ շարժումները ևս ճնշվեցին անողորմ դաժանությամբ:

Վախենալով, որ բաբիների առանձին ելույթներ կարող են վերածվել համընդհանուր ապստամբության և հանգեցնել դաջարների դինաստիայի տապալմանը, շահական կառավարությունը որոշեց դիմել վճռական գործողությունների: 1850 թ. հուլիսի 19–ին Թավրիզում Բաբը գնդակահարվեց: Մահապատժից առաջ նրան պտտեցնում էին փողոցներում, որպեսզի մարդիկ համոզվեն, որ նա կենդանի է և չի անհետացել, ինչպես Մահդին: Միաժամանակ ողջ Իրանով մեկ սկսվեցին բաբիների զանգվածային ձերբակալություններ ու մահապատիժներ: Նրանց կենդանի այրում էին, կապում թնդանոթների փողերին ու կրակում, ենթարկում ահավոր խոշտանգումների: Հալածանքներից փրկվելու համար շատերը լքեցին հայրենիքը և հեռացան այլ երկրներ:

Սակայն բաբիները չդադարեցրին իրենց պայքարը: Նրանք հաճախակի սկսեցին կիրառել պայքարի ահաբեկչական մեթոդների մարտավարությունը: 1852 թ. օգոստոսին, օրինակ, նրանք անհաջող մահափորձ կազմակերպեցին Նասր–էդ–Դին շահի (1848–1896) դեմ:

Անկասկած, բաբիների շարժումը եղավ այն ազդակը, որը սկիզբ դրեց իրանական ժողովրդի քաղաքական զարթոնքին: Ժամանակին Եվրոպայում Բաբին անվանել են մուսուլման կրոնի նոր Լյութերը Իրանում: Անդրադառնալով Իրանում բաբիզմի տարածման հոգեբանական կողմին՝ ռուս դիվանագետ–արևելագետ Վ. Պ. Նիկիտինը գրել է. «Թափառող ու անհանգիստ Իրանի ոգին չեն դադարում կրծել կրոնական կասկածներն ու որոնումները… Ոչ մի տեղ չեն եղել այնքան հերձվածներ, կրոնական ձևով բողոքի արտահայտություններ, որքան Իրանում»:

Բաբի աշակերտներից Սուբհ–ե Ազալը և նրա եղբայր միրզա Հոսեյին Ալի Բահա–Ուլլան (1817–1892) շահական հալածանքներից փրկվելու համար փախուստի

դիմեցին և հաստատվեցին Բաղդադում: Այստեղ 1863 թ. ապրիլի 22–ին Ռիզվան պարտեզում Բահա–Ուլլան հայտարարեց, որ ինքն այն ավետվածն է, որի գալստյան մասին պատգամել էր Բաբը: Այդ ժամանակվանից նա սկսեց խոսել Աստծո անունից իբրև մարգարե: Նույն թվականի դեկտեմբերին Ադրիանապոլսում նա իրեն ուղղակի հայտարարեց Աստված: Բահա–Ուլլան ստեղծեց մի ուսմունք, որը կոչվեց բահայիզմ: 1872–1873 թթ. նա գրեց «Քեթաբ–ե աքդես» անունով մի աշխատություն, որը համարվում է բահայիների սուրբ գիրքը: Բահա–Ուլլայի ուսմունքի առանցքը կարելի է համարել հետևյալ սկզբունքները. մարդկության միասնականություն, համընդհանուր խաղաղություն և պացիֆիզմ: Բահա–Ուլլան կարծում էր, որ ամբողջ մարդկությունը միասնական ցեղ է, որը պետք է ապրի խաղաղության և համերաշխության մեջ: Աշխարհի միասնականությունը մարդկության կողմից հասունության հասնելու վերջին հանգրվանն է: Միասնականությունը ուղիղ ճանապարհով կտանի դեպի «տիեզերական խաղաղության» հաստատում: Բահա–Ուլլան կոչ էր անում դրսևորել համբերություն, հրաժարվել պայքարի բռնի միջոցներ կիրառելուց և էվոլյուցիոն ճանապարհով աստիճանաբար վերափոխելուց աշխարհը: Ճշմարտությանն անհրաժեշտ է հասնել բանականության օգնությամբ: Բահա–Ուլլան ուսուցանում էր, որ կրոնն ու գիտությունը ներդաշնակ են միմյանցով: Ճշմարիտ կրոնն ու ճշմարիտ գիտությունը իրար երբեք չեն հակասում: Նրանք ճշմարտության ամբողջական մասնիկներն են: Իր կտակում Բեհա–Ուլլան գրում էր. «Օ՛ հողագնդի մարդիկ, Աստվածային կրոնը ստեղծվել է սիրո և միասնության համար, դուք այն միք դարձնի թշնամանքի ու տարաձայնությունների պատճառ»: Մարդկությունը և առանձին անհատը պետք է ազատ փնտրտուքով հասու լինեն ճշմարտությանը: Գիտությունը Աստծո պարգևներից մեծագույնն է: Նրանք, ովքեր իրենց զրկում են գիտություն ձեռք բերելու առիթից, դատապարտված են սահմանափակ մի կյանքի: Նա պնդում էր, որ ազգային պետությունները անցյալի դարաշրջանների ժառանգությունն են, իսկ այժմ պետք է ձգտել ստեղծելու համաշխարհային մի պետություն, մեկ միասնական լեզու, միասնական մշակույթ, ձգտել համայն մարդկության եղբայրությանը: «Միայն իր հայրենիքը սիրողը չէ, որ կարող է հպարտանալ, այլ նա, ով սիրում է համայն աշխարհը: Երկրագունդը մեկ երկիր է, և մարդկությունը՝ նրա քաղաքացիները»,— քարոզում էր Բահա–Ուլլան: Նա հայտարարում էր, որ իր ուսմունքի միակ նպատակն է բարելավել մարդ արարածի բնույթը: Նա տղամարդկանց ու կանանց հավասարության ու համազորության գաղափարը համարում էր հասարակական կառույցի գլխավոր ազդակը: Նա դեմ էր մարդկանց միջև ամեն տեսակի խտրականության՝ գտնելով, որ խտրականության ճշմարիտ դարմանը մարդկության միասնականության գիտակցումն է:

Բահա–Ուլլան այն կարծիքին էր, որ պետք է ջնջել ու վերացնել ինչպես ծայրահեղ հարստությունը, այնպես էլ ծայրահեղ աղքատությունը: Պետք է հիմնադրել տիեզերական մի ատյան ազգերի միջև ծագող վեճերի լուծման համար: Մարդկային հասարակության իշխող սկզբունքը պետք է լինի «արդարության փառաբանումը»: Պետք է գտնել նաև տնտեսական հարցերի «հոգևոր լուծում»:

Բահա–Ուլլան համարում էր, որ Բաբը իրավացի չէր՝ վերացնելով մասնավոր սեփականությունը և քարոզելով ուտոպիստական կոմունիզմի գաղափարը: Մասնավոր սեփականությունը սրբազան է, և այն պետք է պահպանվի: Այն վերացնելու դեպքում հասարակությունը կմատնվի քաոսի:

XIX դարի վերջին բահայիների կրոնը կամ բահայիզմը արդեն չէր դիտվում որպես զուտ իրանական, այն ձեռք բերեց միջազգային կրոնի բնույթ:

Ոմանք բահայիզմը (նեոբաբիզմ) համարել են իսլամի աղանդներից մեկը: Սակայն կան նաև գիտնականներ, որոնց կարծիքով թեև բահայիզմը ծնունդ է առել իսլամական հողի վրա, սակայն այն պետք է համարվի կրոնական բարեփոխում ընդհանրապես և ոչ թե որևէ կրոնական ուսմունքի ռեֆորմ: Արևելագետ Վ. Վ. Բարտոլդը կարծում է, որ բահայիզմը «մուսուլման աշխարհի նորագույն պատմության մեջ ամենաուշագրավ երևույթներից մեկն է»:

Թեև այդ ուսմունքը, ի տարբերություն բաբիականության, Իրանում լայն տարածում չստացավ, սակայն նրա գաղափարները ևս որոշակի դեր խաղացին Իրանում իրադրության փոփոխության և դրական տեղաշարժերի գործում:

2. ԲԱՐԵՆՈՐՈԳՉԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

XIX դ. կեսերին Իրանի ներքին քաղաքական իրադրությունը շարունակում էր մնալ ծայրահեղ լարված: Բնակչության բոլոր խավերի շրջանում դժգոհությունը գնալով մեծանում էր: Երկիրը կանգնած էր բազում մարտահրավերների առջև: Բաբիների շարժումը ստիպեց իրանական հասարակայնությանը լրջորեն խորհել երկրի ապագայի և նրա հետագա զարգացման ուղիների մասին: Միաժամանակ տիրապետող վերնախավի առավել հեռատես մասը սկսել էր գիտակցել, որ անհրաժեշտ է «վերևից», այսինքն՝ կառավարության կողմից իրականացնել որոշ բարեփոխումներ, այլապես նոր սոցիալական ցնցումների հավանականությունը չափազանց մեծ կլինի:

Երկրում բարեփոխումներ իրականացնելու առավել եռանդուն կողմնակիցն էր Նասր–էդ–Դին շահի սադրազամ (առաջին նախարար) միրզա Մոհամմադ Թաղի խան Ֆարահանին: Նա ազնվական ծագում չուներ: Սակայն իր անձնական հատկանիշների՝ բնատուր խելքի, կրթվածության, գրասենյակային աշխատանք կատարելու հմտության, ինչպես նաև գահաժառանգի հովանավորության շնորհիվ երիտասարդ Մոհամմադ–Թաղին սկսեց արագ առաջ գնալ: 1831 թ. նա ստացավ խանի տիտղոս և «սարթիբի» (զորահրամանատար) աստիճան: 1843 թ. Մոհամմադ Թաղի խանը նշանակվեց Ատրպատականում տեղակայված բանակի «ամիր–նեզամի» (գլխավոր հրամանատարի) պաշտոնում: Ընտանեկան կապերը նույնպես նպաստում էին միրզա Թաղի խանի արագ բարձրացմանը պաշտոնների սանդուղքով: Նրա կինը Մոհամմադ շահի աղջիկներից մեկն էր:

1848 թ. գահ բարձրանալով՝ Նասր–էդ–Դին շահը (1848–1896) Թաղի խանին նշանակեց սադր–ազամ (վարչապետ)՝ նրան շնորհելով «Ամիր–ե քաբիր» (մեծ էմիր) և «Աթաբեկ–ե ազամ» (մեծ աթաբեկ) տիտղոսները, միաժամանակ նրան հատկաց-

նելով համարյա անսահմանափակ իրավունքներ: Իրանի նոր տիրակալը իր կառավարումը սկսել էր երկիրը ճգնաժամից դուրս բերելու ցանկություններով, ուստի ըստ ամենայնի խրախուսում էր իր սադր–ազամին ձեռնամուխ լինել բարենորոգչական գործունեության:

Ստանձնելով պետության առաջին նախարարի պաշտոնը և լինելով Օսմանյան կայսրությունում ընթացող Թանզիմաթի բարեփոխումների ուժեղ ազդեցության տակ՝ Ամիր–ե քաբիրը անմիջապես ձեռնամուխ եղավ Իրանում բարեփոխումների իրականացմանը, որոնք կոչված էին որոշ չափով արդիականացնելու պետական կառավարման համակարգը, ամրապնդելու շահի դիրքերը, սահմանափակելու իշխանությունների կամայականությունները և հոգևորականության միջամտությունը պետական գործերին, ամրապնդելու երկրի տնտեսությունը, բարձրացնելու բանակի մարտունակությունը, Իրանի միջազգային հեղինակությունը, նպաստելու իրանական ժողովրդի մշակութային վերածննդին:

Ամիր Նեզամն առաջին հերթին զբաղվեց բանակի վերակառուցմամբ: Նրա իրականացրած միջոցառումները միտված էին բարձրացնելու իրանական բանակի մարտունակությունը: Միաժամանակ նա պայքար ծավալեց բանակում լայնորեն տարածված կոռուպցիայի, պետական փողերի յուրացման, զորամասերի ու նրանց հրամանատարների անկարգապահության ու թափթփվածության դեմ: Դրսևորելով խելահեղ խիզախություն՝ Ամիր Նեզամը կտրուկ միջոցներ ձեռնարկեց նահանգապետերի կամայականությունները սանձահարելու, ինչպես նաև շիական հոգևորականության չափից ավելի մեծ ազդեցությունը պետական գործերի վրա սահմանափակելու ուղղությամբ:

Երկրի ֆինանսական վիճակը բարելավելու նպատակով Թաղի խանը վճռական պայքար ծավալեց երկրում լայնորեն տարածված գանձագողության, կաշառակերության, պետական միջոցների յուրացման և ֆինանսական զանազան չարաշահումների դեմ: Պետական պաշտոնների վաճառքի պրակտիկան համարելով պետության հիմքերը քանդող զորավոր երևույթ՝ նա անողոք պայքար ծավալեց դրա դեմ՝ երբեմն նույնիսկ դիմելով դաժան պատժիչ գործողությունների: Կատարվեց չինովնիկների թվի նշանակալից կրճատում, որոնք Մոհամմադ շահի ժամանակ ստանում էին բարձր աշխատավարձ՝ ըստ էության ոչ մի գործ չանելով: Ծառայության մեջ թողնված չինովնիկների աշխատավարձը կիսով չափ կրճատվեց: Արքայազունների մեծ մասը, որոնք վարում էին ցոփ ու շվայտ կյանք, լինելով պորտաբույծներ՝ զրկվեցին իրենց եկամուտներից: Շահական գանձարանից այսուհետև նրանք ստանալու էին թոշակ, եթե շարունակելու լինեին իրենց անաշխատ կենցաղը:

Միրզա Թաղի խանը մեծ ուշադրություն էր դարձնում երկրում ներքին կարգ ու կանոն հաստատելու գործին: Ներքին առևտուրը խրախուսելու նպատակով նա վճռական մեթոդներով պայքար էր մղում ճանապարհների վրա կողոպուտներով զբաղվող ավազակախմբերի դեմ, որոնք հաճախ գործում էին նահանգապետերի ու

տեղական իշխանությունների աչքի առջև, բարեկարգում էր առևտրական ճանապարհները, կառուցում քարվանսարաներ ու բազարներ:

Թաղի խանը առանձնակի եռանդով աշխատում էր բարենպաստ պայմաններ ստեղծել տեղական արդյունաբերության զարգացման համար՝ հատկապես կարևոր նշանակություն տալով նրա մրցունակության բարձրացմանը: Հայրենական արդյունաբերությունը և առևտուրը օտարերկրյա մրցակցությունից պաշտպանելու համար մտցվեցին հովանավորչական օրենքներ, ներքին մաքսերը վերացվեցին: Միրզա Թաղի խանը ձգտում էր Իրանում ստեղծելու եվրոպական տիպի արդյունաբերություն: Նա արդյունավետ միջոցներ էր ձեռնարկում նաև պետության մայրաքաղաքի՝ Թեհրանի բարեկարգման, փողոցները լուսավորելու, մաքուր պահելու համար: Թեհրանը խմելու և ոռոգման ջրով ապահովելու համար նրա հրամանով մշակվեց նախագիծ Քերեջ գետի ջրերն օգտագործելու վերաբերյալ:

Այնուհետև պայքար ծավալվեց հողերի անօրինական զավթումների դեմ: Իրականացվեց պետական ու մասնավոր հողերի հաշվառում: Որոշ չափով կարգավորվեց հարկահավաքման գործը, վերանորոգվեց ոռոգման համակարգը, Կարուն և Գորգան գետերի վրա կառուցվեցին նոր ջրամբարտակներ: Խրախուսվում էին իրանահպատակների կողմից երկրի օգտակար հանածոների հանույթն ու մշակումը, արդիականացվեց ֆինանսական ու փոստային գործը:

Ամիր–ե Քաբիրի կողմից լուսավորությունը դիտվում էր որպես Իրանի սոցիալական, քաղաքական և մշակութային առաջընթացի հիմնական գործոններից մեկը: Նա համոզված էր, որ անհրաժեշտ է առաջին հերթին զարկ տալ աշխարհիկ կրթությանը, հրաժարվել մաքթաբներում տառաճանաչություն ձեռք բերելու ավանդական համակարգից: Նրա կարգադրությամբ արտասահման էին ուղարկվում երիտասարդ իրանցիներ՝ ուսում ստանալու համար, Իրան էին հրավիրվում օտարերկրյա ուսուցիչներ: Ամիր–ե Քաբիրին հաջողվեց Թեհրանում հիմնադրել ուսումնական մի հաստատություն՝ «Դար–օլ–ֆունունը» («Գիտությունների տուն»), որի նպատակն էր մասնագետներ պատրաստել զինվորական գործի, բժշկության և այլ մասնագիտությունների գծով: Նա ձեռնամուխ եղավ նաև Իրանում առաջին պաշտոնաթերթի հրատարակմանը, որն անվանվեց «Վաղաի–ե Էթթեֆաղիե», հիմնեց տպարան, պետական հիվանդանոց: Միրզա Թաղի խանը առաջինն էր, որ առաջ քաշեց երկրում երկաթուղիներ կառուցելու գաղափարը:

Նրա նախաձեռնությամբ բացվեցին զենքի և թնդանոթների, շաքարի, մահուդի, կտորեղենի արտադրության գործարաններ: Նա ձեռնարկեց մի շարք միջոցառումներ անձի և սեփականության անվտանգության երաշխիքներ ստեղծելու համար: Ամենուրեք փորձում էր արմատավորել օրենք և կարգ ու կանոն: Վերացրեց «սուրսաթը», այսինքն՝ բնակչության պարտականությունը՝ ձրի կերակրելու տվյալ վայրից անցնող զորքերին: Փոփոխություններ մտցրեց դատական համակարգի մեջ, մասնավորապես կրճատեց շարիաթական դատարանների իրավասությունը և ընդլայնեց աշխարհիկ դատարանների իրավունքները: Բոլոր նահանգապետերին ուղարկվեց հրահանգ այն մասին, որ կրոնական փոքրամասնությունները՝ հայերը,

զրադաշտականները և հրեաները, պետք է օգտվեն իրենց կրոնական ծիսակատարությունները կատարելու կատարյալ ազատությունից, և նրանց իրավունքները պետք է պահպանվեն բացարձակ արդարության հիմքի վրա: Սադր ազամը աշխատում էր սահմանափակել Անգլիայի և Ռուսաստանի միջամտությունը Իրանի ներքին գործերին: Փորձում էր նաև սահմանափակել բարձրագույն շիական հոգևորականության չափից ավելի մեծ ազդեցությունը Իրանի պետական գործերի վրա: Մի խոսքով՝ այդ զարմանալի եռանդի տեր շրջահայաց ու հեռատես մարդը փորձում էր շրջել Իրանի պատմության անիվը դեպի երկրի արագացված զարգացումն ու արդիականացումը:

Նման քաղաքականությունը նրա դեմ հանեց հոգևորականությանը և իշխանության ղեկի մոտ գտնվող ավատական ազնվականության մեծ մասին, որոնք չէին ցանկանում զրկվել իրենց արտոնություններից ու իրավունքներից: Դժգոհների այդ խմբի պարագլուխներն էին Նասր–էդ–Դին շահի մայրը, Մահդի–ե Ուլիյան, Թեհրանի իմամ–ջոման, սադր–ազամի պաշտոնի հավակնորդ միրզա Աղա խան Նուրին, որն, ի դեպ, ընդունել էր շահի և նրա մոր ծառայի կարգավիճակը, և ուրիշներ: Սրանք բացահայտ պայքար ծավալեցին միրզա Թաղի խանի և նրա բարեփոխումների դեմ: Կարևոր է նշել, որ Ամիր–ե Քաբիրի իրականացրած միջոցառումները չհասկացվեցին ու չընկալվեցին նաև իրանական բնակչության ցածր խավերի կողմից: Անգրագետ, իրենց առօրյա հոգսերի տակ կքած, հոգևորականության մեծ ազդեցության ներքո գտնվող ժողովրդական զանգվածները, բնականաբար, կասկածանքով էին վերաբերվելու սադր–ազամի կողմից իրագործվող նորամուծությունների նկատմամբ, մանավանդ որ դրանք տոգորված էին արևմտյան շնչով և թելադրված էին, իրենց ընկալմամբ, թշնամի գյավուրների կամ «ֆերենգի»–ների (եվրոպացիների) կողմից: Այս պարագաներում Ամիր–ե Քաբիրի հակառակորդների համար չափազանց հեշտ էր խաղալ իրանցիների կրոնական–քաղաքական զգացումների վրա: Կրակե օղակը սադր–ազամի շուրջը գնալով սեղմվում էր: 1849 թ. մարտին նրա հակառակորդները կազմակերպեցին Թեհրանի զորամասի մի քանի գնդերի խռովություններ: Ապստամբած զինվորները շրջապատեցին միրզա Թաղի խանի տունը և պահանջեցին, որ շահը պաշտոնաթող անի իր առաջին վեզիրին: Սակայն շահը մերժեց այդ պահանջը, և խռովությունը ձախողվեց:

Համոզվելով, որ Նասր–էդ–Դին շահը դեռևս վստահում է իր մեծ վեզիրին, նրա թշնամիները դիմեցին իրենց դավադրական զինանոցի ամենահզոր զենքին՝ սկսեցին շահին կասկածներ ներշնչել, որ Ամիր–ե նեզամը ցանկանում է գահընկեց անել իրեն և հափշտակել շահական գահը, և որ իբր նրա կողմից բարեփոխումների իրականացման գաղտնի նպատակն այն է, որ բանակում և ժողովրդի շրջանում ձեռք բերի բարձր հեղինակություն՝ իր ծրագրերն իրագործելու համար: Դա քիչ համարելով՝ Ամիր–ե Քաբիրին մեղադրեցին լրտեսության մեջ՝ նրան զրպարտելով, թե իբր գաղտնի կապերով կապված է ռուսական դեսպանության հետ:

Այդ նրբին սադրանքներին դեմ հանդիման կատարյալ անպաշտպան առաջին վեզիրը, ի վերջո, շահի կողմից հեռացվեց իր պաշտոնից և աքսորվեց Քաշան քա-

ղաքը: Որոշ ժամանակ անց իջեցվեց շահի հրամանագիրը նրան մահվան դատապարտելու մասին: 1852 թ. հունվարի 10–ին մահապատիժն ի կատար ածվեց: Շահական ոստիկանապետը (Ֆարրաշբաշին) ժամանեց Քաշանի մոտ գտնվող Ֆին կոչված վայրը, որտեղ նախկին մեծ վեզիրը կտրեց նրա երակները:

Այսպիսով՝ սադր–ազամ Միրզա Թաղի խան Ամիր Նեզամի կողմից ձեռնարկված հասարակական–քաղաքական ու ռազմական բարեփոխումները, Իրանի ավատական դասի շրջանում չգտնելով պատշաճ աջակցություն, ավարտվեցին ձախողմամբ:

Չնայած այդ բարեփոխիչի կործանմանը՝ նրա իրականացրած վերափոխումներն ինչ–որ չափով նպաստեցին Իրանի արդիականացմանը, թեև պետք է խոստովանել, որ ի վիճակի չեղան երկրում առաջ բերելու խոր փոփոխություններ: Իսկ ամենակարևորն այն էր, որ այդ բարենորոգչական շարժումը չունեցավ իր շարունակությունը: Նոր սադր–ազամ Էթեմադ–օդ–Դոուլե միրզա Աղա խան Նուրին, որը բարեփոխումների և առհասարակ ցանկացած նորամուծությունների համոզված հակառակորդ էր և նշանակալից դերակատարություն ուներ միրզա Թաղի խանի դեմ կազմակերպված դավադրության մեջ, չեղյալ հայտարարեց կամ կասեցրեց իր նախորդի բարենորոգչական նախաձեռնությունների մեծ մասը:

Կասկածից վեր է, որ Իրանը «վերևից» բարեփոխման ենթարկելու և երկրի արդիականացման համար ուղի հարթելու այդ առաջին փորձի ձախողումը բացասական ազդեցություն էր ունենալու նրա հետագա զարգացման ճանապարհին:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ «ԽԱՂԱՂ» ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄՆ ԻՐԱՆ ԵՎ ՆՐԱ ՎԵՐԱԾՈՒՄԸ ԿԻՍԱԳԱՂՈՒԹԻ

1. ՀԵՐԱԹԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆԳԼՈ–ԻՐԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

XIX դարի կեսերին անգլո–ռուսական մրցակցությունն ու ախոյանությունը գնալով ավելի ու ավելի էր սրվում: Այդ երկու մրցակից պետություններն իրենց առջև խնդիր էին դրել Իրանն ամբողջապես ընդգրկելու իրենց քաղաքական–տնտեսական շահերի շրջանակների մեջ: Ընդ որում՝ այդ պայքարի ու մրցակցության կիզակետ էր ոչ միայն Իրանը, այլև Մերձավոր ու Միջին Արևելքի մյուս երկրները՝ Օսմանյան կայսրությունը և Աֆղանստանը:

Անգլիան ձգտում էր իր ազդեցությանը ենթարկելու Օսմանյան կայսրությունը, իր հսկողությունը սահմանելու Սևծովյան ավազանի նկատմամբ, Ռուսաստանին դուրս մղելու Անդրկասպյան շրջանից, Խիվայից և Բուխարայից, իսկ հնարավորության դեպքում նաև Հարավային Կովկասից: Նա իր այդ նպատակները հիմնավորելու համար վկայակոչում էր Հնդկաստանի պաշտպանության խնդիրը: Որպես մերձավորարևելյան տարածաշրջանի լուրջ «խաղացող» էր հանդես գալիս նաև Ֆրանսիան, որը փայփայում էր սեփական նպատակներ: Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան համատեղ կերպով ձգտում էին կասեցնելու Ռուսաստանի համառ ու հետևողական ջանքերը շարժվելու դեպի հարավ՝ Միջերկրական ծովի ավազանը:

Գնալով հարաճուն խորացող այդ հակասությունների արդյունքը եղավ 1853–1856 թթ. Ղրիմի կամ Արևելյան պատերազմը: Այդ պատերազմի շրջանում օգտվելով այն հանգամանքից, որ մեծ պետությունները միմյանց հետ մտել են սաեղ գոտեմարտի մեջ, շահական կառավարությունը որոշեց լուծել Հերաթի խնդիրը՝ այն մտցնելով Իրանի կազմի մեջ:

Անգլիայի համար Հերաթը առանձնահատուկ արժեք էր ներկայացնում ոչ միայն որպես Հնդկաստանը պաշտպանելու համար ճակատային ամրություն, այլև հենակետ դեպի Իրան ու Կենտրոնական Ասիա շարժվելու համար: Հետևաբար Լոնդոնը չէր կարող անտարբեր դիտորդի դերում հանդես գալ շահական կառավարության կողմից Հերաթի կնճիռը վերջնականապես լուծելու վերաբերյալ Թեհրանից հասնող տեղեկություններին:

1853 թ. հունվարին Իրանում անգլիական դեսպանորդ Շեյլը, կիրառելով կոպիտ ճնշման ու սպառնալիքների քաղաքականություն, ստիպեց շահական կառավարու-

թյանը պարտավորություն տալ այն մասին, որ ինքը հրաժարվում է Հերաթը Իրանին ենթարկելու փորձերից: Անգլիացիների դեմ լուրջ հակակշիռ ստեղծելու նպատակով 1853 թ. հուլիսին Իրանը բանակցություններ սկսեց Ռուսաստանի հետ՝ առաջարկելով կնքել ռազմական դաշինքի վերաբերյալ պայմանագիր: Սակայն Ռուսաստանը հրաժարվեց՝ համարելով, որ Իրանը նախ իր ռազմաստրատեգիական ներուժով առանձնակի արժեք չի ներկայացնում, և ապա՝ այսպես կոչված «Արևելյան հարցի» կապակցությամբ ծայրաստիճան սրվել էին ռուս–անգլիական և ռուս–ֆրանսիական հարաբերությունները, և Պետերբուրգը չէր ցանկանում Միջին Արևելքում ևս իր համար ստեղծել մի լրացուցիչ բարդություն:

Ղրիմի պատերազմի սկսվելուց հետո Հերաթի հարցում Իրանի համար բացվում էին նոր հնարավորություններ: Լոնդոնի զգոնությունը բթացնելու նպատակով 1854 թ. իրանական կառավարությունը պաշտոնապես հայտարարեց, որ Ղրիմի պատերազմում ինքը պահպանելու է չեզոքություն: Սակայն անգլիացիներին հայտնի դարձավ, որ թաքնվելով այդ չեզոքության հետևում՝ Իրանը տենդագին նախապատրաստություններ է տեսնում Հերաթի իրանական կառավարիչ Մոհամմադ Յուսիֆին օգնելու պատրվակով այդ խանություն զորքեր ուղարկելու համար: Անգլիացիները կռահեցին, որ շահը մտադրություն ունի վերջնականապես լուծելու Հերաթի հիմնախնդիրը, որը 30–ական թվականներին ավարտվել էր կատարյալ ձախողմամբ: Բրիտանական դիվանագիտությունը լծվեց տենդագին գործունեության՝ փորձելով խափանել շահի կողմից նախապատրաստվող արշավանքը, այն էլ մի ժամանակ, երբ Անգլիան մտել էր Ռուսաստանի հետ ծանր պատերազմի մեջ: 1855 թ. վերջին համոզվելով, որ Անգլիային չի հաջողվի կասեցնել իրանական զորքերի մոտալուտ արշավանքը Հերաթ, Թեհրանում անգլիական դեսպանորդ Մերրեյը հայտարարեց Մեծ Բրիտանիայի և Իրանի միջև դիվանագիտական հարաբերությունների խզման մասին:

Մինչդեռ 1856 թ. սկզբին իրանական զորքերը Մեշհեդից շարժվեցին դեպի Հերաթ և նույն թվականի մայիսին այն պաշարեցին: Հնգամսյա պաշարումից հետո Հերաթի ամրոցի պաշտպանները 1856 թ. հոկտեմբերին զենքը վայր դրեցին: Քաղաքն անցավ իրանական զորքերին: Որպես դրա պատասխան՝ 1856 թ. նոյեմբերի 1–ին Հնդկաստանի գեներալ–նահանգապետը բրիտանական կառավարության անունից պատերազմ հայտարարեց Իրանին: Սկսվեց այսպես կոչված Հերաթի երկրորդ պատերազմը, որն ընդունված է անվանել նաև Հերաթի երկրորդ կոնֆլիկտ: Բրիտանական ռազմական նավատորմը հայտնվեց Պարսից ծոցում, և ծովային հետևակայինները դեկտեմբերի 4–ին գրավեցին Խարք կղզին, ապա դեկտեմբերի 10–ին՝ նաև Բուշեհր նավահանգիստը: 1857 թ. փետրվարին անգլիական զորքերը Բուշեհրից շարժվեցին Բորազջան: Սակայն Խուշաբի մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո նրանք դադարեցրին առաջխաղացումը, քանի որ որոշվել էր փոխել հարձակման ուղղությունը: Անգլիական հրամանատարությունը որոշել էր ռազմական գործողություններ ծավալել Իրանի համար ավելի խոցելի տարածքներում՝ Կարուն գետի ավազանում: 1857 թ. մարտի վերջին՝ հուժկու ռմբակոծումից հետո,

անգլիացիները գրավեցին Պարսից ծոցի Մոհամմերա (ներկայումս՝ Խորեմշահ) նավահանգիստը: Այնուհետև բրիտանական ռազմանավերը Կարուն գետով շարժվեցին դեպի հյուսիս՝ Իրանի խորք ընկած շրջանները: Ապրիլի 1–ին նրանք գրոհով վերցրին Ահվազ քաղաքը և սպառնացին, որ պատրաստվում են իրենց զորքերն ուղարկելու երկրի խորքերը:

Այդ իրադարձություններից խուճապի մատնված շահը դեռևս 1856 թ.՝ անգլիացիների կողմից Բուշեհրը գրավելուց հետո, Լոնդոն էր ուղարկել իր ներկայացուցիչ Ֆարրոխ խանին՝ նրան հանձնարարելով՝ ինչ գնով էլ լինի, շուտափույթ հաշտության պայմանագիր կնքել անգլիացիների հետ: Շահի դեսպանը կարողացել էր հաջողությամբ գլուխ բերել այդ գործը, և 1857 թ. մարտի 4–ին ստորագրվել էր անգլո–իրանական խաղաղության պայմանագիր:

Այդ լուրը ստանալուն պես անգլիական զորքերի հրամանատարությունը անմիջապես դադարեցրեց ռազմական գործողությունները 1857 թ. հունվար–փետրվարին Հնդկաստանում սկսված հուզումների պատճառով, որոնք վերածվեցին հայտնի սիփայիների հուժկու ապստամբության: Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ Փարիզում խաղաղության վերջնական պայմանագիր կնքելու անգլո–իրանական բանակցությունների ժամանակ անգլիացիները գնում էին որոշակի զիջումների, մի հանգամանք, որը բնորոշ չէր անգլիական դիվանագիտությանը: Փարիզում, օրինակ, անգլիացիները չպնդեցին Պարսից ծոցի առափնյա շրջաններում իրենց «հատուկ շահերը» իրանական կառավարության կողմից ճանաչելու պահանջի վրա:

Փարիզի խաղաղության պայմանագրով նախատեսվում էին հետևյալ պայմանները. 1. Շահը պարտավորվում էր դուրս բերել Հերաթից զորքերը, ապագայում հրաժարվել իր բոլոր հավակնություններից այդ խանության առհասարակ աֆղանական որևէ նահանգի նկատմամբ և այդուհետև առհասարակ ոչ մի պայմանով չմիջամտել Աֆղանստանի ներքին գործերին, 2. ճանաչել Հերաթի և Աֆղանստանի անկախությունը, 3. մի կողմից՝ Իրանի, մյուս կողմից՝ Հերաթի ու Աֆղանստանի տարաձայնությունների կամ վեճի դեպքում պարտադիր կարգով դիմել միայն Անգլիայի միջնորդությանը:

Իր հերթին՝ բրիտանական կողմը իր վրա պարտավորություն էր վերցնում զորքերը Իրանի տարածքից հանել և դադարեցնել ամեն տեսակի ռազմական գործողությունները:

Հիշյալ պայմանագիրը կնքվելուց հետո Անգլիայի և Իրանի միջև ամբողջ ծավալով դիվանագիտական հարաբերությունները վերականգնվեցին: Անկասկած, Փարիզի պայմանագիրը նվաստացուցիչ էր Իրանի պետական հեղինակության համար:

1856–1857 թթ. անգլո–իրանական պատերազմը XIX դարի ընթացքում վերջին իրադարձությունն էր, երբ շահը և նրա կառավարությունը համարձակություն էին ունենում բացահայտ հանդես գալու որևէ եվրոպական պետության դեմ, առավել ևս մտնելու պատերազմի մեջ: Դրանից հետո Իրանի երբեմնի ռազմաշունչ ոգին սկսեց գլխապտույտ արագությամբ անկում ապրել:

2. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԵՐԹԱՓԱՆՑՄԱՆ ՈՒԺԵՂԱՑՈՒՄՆ ԻՐԱՆ

Անգլո–իրանական պատերազմը կամ Հերաթի երկրորդ հակամարտությունը կրկին բացահայտեց Իրանի տնտեսական, քաղաքական և ռազմական թուլությունն ու նրա անհույս հետմնալը եվրոպական տերություններից: Միանգամայն ակնհայտ էր, որ Իրան ներթափանցելու համար այլևս ուժային մեթոդների կարիք չէր զգացվում, ուստի սկսվեց արևմտյան տերությունների «խաղաղ» մուտքը դեպի այդ երկիրը: Դա միանգամայն նոր երևույթ էր այն առումով, որ եթե նախկինում եվրոպական տերությունների գլխավոր գաղութային ձեռքբերումները տեղի էին ունենում առանձին երկրների անմիջական ռազմական զավթումների ճանապարհով, ապա այժմ նախապատվությունը տրվում էր տնտեսական, ֆինանսական և քաղաքական ներթափանցմանը:

Մեծ Բրիտանիայի ռազմավարական շահերն Իրանում թելադրվում էին մի շարք հանգամանքներով և առաջին հերթին Հնդկաստանի հետ աշխարհագրական մոտիկությամբ: Անկախ դրանից Իրանը բացառիկ կարևորություն ուներ Բրիտանական կայսրության համար:

Իրանում նրանից պակաս շահեր չուներ նաև Ռուսաստանը: Հետևաբար Միջին Արևելքի այդ խոշոր պետության համար հիմնական պայքարը և մրցակցությունը ընթանում էր այս երկու պետությունների միջև: Անկասկած, անգլո–ռուսական մրցակցությունն Իրանին որոշ հնարավորություն էր տալիս պահպանելու իր պետական անկախությունը, սակայն դրանով հանդերձ XIX դ. վերջին քառորդին և XX դ. սկզբին այդ երկրին չհաջողվեց խուսափել Արևմուտքի երկրների կիսագաղութի վերածվելուց: Իր հերթին Իրանի կառավարող շրջանները սկսել էին գիտակցել, որ երկրի փակ մնալը Արևմուտքի առջև կասեցնում է նրա զարգացումը: Ճանապարհորդելով Եվրոպայում՝ Նասր–էդ–Դին շահը եկել էր այն համոզման, որ բացելով Իրանի դռները՝ ինքը պետական գանձարանի համար կապահովի առատ դրամական մուտքերը, արդյունաբերական ձեռնարկությունների, ճանապարհների, հեռագրային գծերի կառուցումը և այլն: Ըստ այնմ, Փարիզ, Լոնդոն և եվրոպական այլ մայրաքաղաքներ սկսեցին մեկնել շահի բարձրաստիճան ներկայացուցիչները, որոնք այնտեղ սկսեցին ծանոթություններ հաստատել գործարար շրջանների, ձեռնարկատերերի և դրամատների հետ՝ նրանց ներկայացնելով հեշտ հարստացման գայթակղիչ հեռանկարներ, հորդորելով ներդրումներ կատարել Իրանում և այլն:

Միաժամանակ շահը հույս էր փայփայում, որ Անգլիան կտրամադրի Իրանի տարածքային ամբողջականությունը պահպանելու երաշխիքներ: Նրա այդ ձգտումը պայմանավորված էր նրանով, որ Ռուսաստանի կայուն հիմնավորումը Այսրկովկասում շահի կարծիքով լուրջ սպառնալիք էր իր երկրի համար:

Օտարերկրյա պետություններից առաջինը Անգլիան սկսեց կապիտալներ արտահանել Իրան և ձեռք բերել ֆինանսատնտեսական գործունեություն ծավալելու (բանկերի հիմնադրման, ճանապարհների, ջրանցքների, արդյունաբերական ձեռնարկությունների և այլն) կառուցման ու շահագործման վերաբերյալ բացառիկ

իրավունքներ կամ կոնցեսիաներ: Այդ կոնցեսիաները ինքնին Իրանի համար տնտեսական ու քաղաքական սպառնալիք չէին ներկայացնում: Սակայն ամբողջ խնդիրն այն էր, որ նրանք, ովքեր իրավասու էին (շահը, շահզադեները, սարդարները և այլն) դրանք տրամադրելու օտարերկրացիներին, պատրաստ էին կաշառք վերցնելու ճանապարհով չնչին գնով օտարերկրացիներին տրամադրելու Իրանի ազգային ունեցվածքը: Քանի որ Իրանի հյուսիսային շրջանները գործնականում փակ էին անգլիացիների առջև, այնտեղ ռուսական ազդեցության հաստատվելու կապակցությամբ անգլիական ներթափանցման համար առավել հարմար և հեռանկարային ճանապարհ էր Պարսից ծոցի շրջանը, որն ըստ էության բրիտանական նավատորմի հսկողության տակ էր:

Անգլիացիները առաջին հերթին կենսականորեն շահագրգռված էին կայուն և հուսալի կապ ստեղծելու Պարսից ծոցի գոտու և Հնդկաստանի միջև: Ուստի հետևողականորեն սկսեցին աշխատանքներ տանել Իրանում հեռագրական գծեր անցկացնելու ուղղությամբ՝ կոնցեսիաներ ձեռք բերելու համար: Նրանք առաջին նման մենաշնորհային իրավունքները ստացան 1862 թ. և 1865 թ., որոնց հիման վրա «Հնդեվրոպական հեռագրական ընկերությունը» կառուցելու էր բրիտանական կղզիները Հնդկաստանին կապող մի շարք հեռագրային ցանց: Մինչև 1920 թ. այդ ուղղությամբ կառուցված անգլիական հեռագրական գծերի ընդհանուր երկարությունը կազմում էր 5676 կմ: Հեռագրական գծերը հիմնականում կառուցվում էին Իրանի հաշվին: Դրանք սպասարկվում էին անգլիացիների կողմից և, անկասկած, նպաստում էին երկրում Անգլիայի քաղաքական ազդեցության ամրապնդմանը: Հեռագրատներում աշխատող իրենց մարդկանց միջոցով անգլիացիները արժեքավոր տեղեկություններ էին հավաքում երկրի անցուդարձի վերաբերյալ: Իրանական կառավարությունը չէր կարող ձեռնարկել որևէ քայլ, որը հայտնի չդառնար անգլիական գործակալությանը: Հաճախ Իրանի որևէ շրջանում տեղի ունեցած այս կամ այն իրադարձության վերաբերյալ անգլիական կառավարությունն ավելի շուտ էր տեղեկանում, քան իրանական կողմը: Հեռագրատների միջոցով անգլիացիներն Իրանի մասին հավաքում էին նաև հրատապ տնտեսական–առևտրական տեղեկույթ, անգլիական ընկերություններին տեղեկացնում էին տարբեր ապրանքների պահանջարկի, շուկայական գների մասին և այլն:

Հեռագրական բոլոր գծերի երկայնքով անգլիացիները կառուցում էին կայաններ: Նրանցում պահվում էր զենք և զինամթերք, հաճախ որպես հեռագրիչներ, հեռագրական գործի վարպետներ և այլն աշխատում էին անգլո–հնդկական բանակի սպաները:

Անկասկած, Իրանի տարածքով հեռագրական գծերի անցկացումը դրական երևույթ էր, քանի որ նախ դրանք էապես արդիականացնում էին այդ երկրի ներքին հաղորդակցությունը, և ապա ավատական այդ երկիրը շփումների մեջ էր մտնում եվրոպական քաղաքակրթության հետ: Բացի այդ՝ հեռագրական գծերի առկայությունը հեշտացնում էր կենտրոնական կառավարության կապը նահանգների հետ, նպաստում առևտրի զարգացմանը և որոշակի եկամուտներ բերում գանձարանին:

1872 թ. հուլիսի 25–ին Նասր–էդ–Դին շահը բրիտանահպատակ խոշոր ֆինանսիստ, «Ռեյթեր» հայտնի տեղեկատվական գործակալության հիմնադիր բարոն Ջուլիուս Ռեյթերին տրամադրեց մի աննախադեպ հայեցակարգ՝ 70 տարի ժամկետով: Նա մենաշնորհային իրավունք էր ստանում կառուցելու Կասպից ծովը Պարսից ծոցի հետ կապող անդրիրանական երկաթուղի, որի ճյուղավորումները երկրի տարբեր քաղաքներն ու նահանգները կապելու էին միմյանց, ինչպես նաև միանալու էին տարածաշրջանի այլ երկրների երկաթուղագծերին: Ռեյթերին թույլատրվում էր ողջ Իրանի տարածքում կառուցել խճուղային ճանապարհներ, քաղաքներում տրամվայի գծեր, շահագործել երկաթի, պղնձի, կապարի, նավթի և երկրի այլ բնական հարստությունների հանքավայրերը (բացառությամբ ոսկու, արծաթի և թանկարժեք քարերի, որոնց շահագործումը իրանական պետության մենաշնորհն էր), անտառները, կառուցել ոռոգման ջրանցքներ, ջրամբարտակներ, գործարաններ, ձեռք բերել հողեր, անտառներ և այլն: Կոնցեսիոներին թույլատրվում էր Իրանում բացել բանկ, բարեկարգել մայրաքաղաք Թեհրանը: Ռեյթերի տնօրինության տակ էին անցնում Իրանի բոլոր ճանապարհները, փոստը, հեռագրատները, 20 հազար ֆունտ ստեռլինգով բոլոր իրանական մաքսատների կառավարման գործը: Իրանական կառավարությունը պարտավորվում էր նաև ապագայում առաջին հերթին Ռեյթերին տրամադրել զանազան այլ կոնցեսիաներ:

Ռեյթերի հետ կնքած համաձայնագիրը խոր դժգոհություն առաջացրեց Իրանում: Շիա հոգևորականները հայտարարեցին, որ այն սպառնում է Իրանը ստրկացնել «անհավատների» կողմից: Այն կտրուկ բողոքարկվեց նաև Ռուսաստանի կողմից: Նասր–էդ–Դին շահի Պետերբուրգ կատարած պաշտոնական այցի ժամանակ կանցլեր Ա. Մ. Գորչակովը, իր դժգոհությունը հայտնելով այդ կոնցեսիայի կապակցությամբ, հայտարարեց, որ այն խախտում է Պարսկաստանի անկախությունը: Այդ հայտարարությունը ուղղակի ճնշում էր շահի նկատմամբ և պահանջ չեղյալ հայտարարելու Ռեյթերին հատկացված կոնցեսիան: Միաժամանակ Ռուսաստանը ոտքի հանեց շահական կառավարության կազմում եղած ռուսամետ գործիչներին, իր հետ կապերի մեջ եղած մոլլաներին, նույնիսկ շահի կանանց՝ Ռեյթերի կոնցեսիան տապալելու համար: Ալեքսանդր Բ կայսրը հատուկ ուղերձ հղեց շահին՝ վերջնագրի ձևով պահանջելով չեղյալ հայտարարել այն: Հայտնվելով դժվարին վիճակում՝ 1873 թ. դեկտեմբերի 5–ին Նասր–էդ–Դին շահը պատրվակներ գտավ այն չեղյալ հայտարարելու համար:

1883 թ. Ռուսաստանը փակեց Կովկասը եվրոպական առևտրի համար, որի հետևանքով նշանակալիորեն վատացավ անգլիական ապրանքների արտահանման գործը Իրան: Դա ստիպեց բրիտանական կառավարությանը որոնել այդ երկրի հետ առևտրի այլընտրանքային ճանապարհներ:

Պարսից ծոցից Իրանի կենտրոնական շրջաններ ներթափանցելու համար հիանալի հարմարություն էր ստեղծում Իրանի միակ նավարկելի Կարուն գետը: 1888 թ. շահը հրապարակեց հրամանագիր, որով բոլոր օտարերկրյա պետություններին հատկացվում էր Կարուն գետի վրա նավարկություն կազմակերպելու իրավունք:

Այդ իրավունքից փաստորեն կարող էր օգտվել միայն Անգլիան, որը Պարսից ծոցում ուներ նավատորմ և նավարկության իրավունք: 1888 թ. անգլիական «Լինչ եղբայրներ» նավային ընկերությունը ձեռք բերեց այդ գետի վրա նավարկություն կազմակերպելու իրավունք: «Լինչի ճանապարհը» դարձավ Հարավային Իրանի գլխավոր առևտրական զարկերակը: Անգլիան հնարավորություն ստացավ իր ազդեցությունը տարածելու Պարսից ծոցի գոտուց մինչև Իրանի կենտրոնական շրջանները»: Կարունի կոնցեսիայի կապակցությամբ Ռուսաստանը բարձրացրեց քաղաքական մեծ աղմուկ և նույնիսկ դիմեց ռազմական սպառնալիքների, մինչև որ Թեհրանից իրավունք չստացավ, որ իր առևտրական նավերը ձեռք բերեն Կասպից ծովի իրանական Էնզելի նավահանգիստը մուտք գործելու իրավունք:

1889 թ. անգլիացիները ստացան նաև մի շարք ճանապարհաշինական կոնցեսիաներ: Այդ նույն թվականին, հակառակ Թեհրանում ռուսական դեսպանորդի հակազդեցության, բարոն Ռեյթերի որդին՝ Ջոն Ռեյթերը, իրանական կառավարության հետ կնքեց պայմանագիր, որով 60 տարի ժամկետով ստանում էր Իրանում Կայսերական (Imperial Bank of Persia կամ շահնշահական) բանկ հիմնադրելու կոնցեսիա: Այդ բանկը ընդհուպ մինչև 1928 թ. կատարում էր Իրանի պետական բանկի դեր և ուներ թղթադրամ կտրելու մենաշնորհային իրավունք: Բանկն իր գործունեությունը չէր սահմանափակելու զուտ ֆինանսական գործառնություններով. այն լայն լիազորություններ էր ստանում երկրի առևտրական ու արդյունաբերական գործերում: Այդ դրամատանը տրվում էր թղթադրամ կտրելու, Իրանի տարբեր քաղաքներում բաժանմունքներ բացելու, ճանապարհներ կառուցելու, արդյունաբերական ձեռնարկություններ հիմնելու, երկրի հանքային հարստությունները շահագործելու և այլ իրավունքներ: Այն փաստորեն կատարելու էր Իրանի պետական բանկի դեր: Շահնշահական բանկը դարձավ Իրանում անգլիացիների տնտեսական ու քաղաքական դիրքերի ամրապնդման կարևորագույն լծակներից մեկը: 1890 թ. մարտի 20–ին Նասր–էդ–Դին շահը անգլոհպատակ Ջոն Թալբոթին հատկացրեց Իրանի ողջ տարածքում իրանական ծխախոտի գնման, մշակման, վաճառքի և արտահանման մենաշնորհային իրավունքը 50 տարի ժամկետով:

Թալբոթի ընկերությունը պարտավորվում էր շահական գանձարան մուծել տարեկան 15 000 ֆունտ ստեռլինգ և ընկերության մաքուր եկամուտների 25%–ը: Կոնցեսիոն պայմանագրի կնքման ժամանակ ընկերությունը Նասր–էդ–Դին շահին նվիրեց 25 հազար ֆունտ ստեռլինգ:

Բրիտանական կապիտալը Իրանի տնտեսական կյանքն իրեն էր ենթարկում նաև շահական կառավարությանը բարձր տոկոսներով դրամական փոխառություններ տրամադրելու միջոցով:

1892 թ. շահը, օրինակ, անգլիական բանկից ստացավ Իրանի պատմության մեջ առաջին օտարերկրյա փոխառությունը՝ 500 հազար ֆունտ ստեռլինգ գումարով հարավային Իրանի մաքսատներից ստացվող եկամուտները հայտարարելով որպես վճարման երաշխիք:

1901 թ. մայիսի 28–ին անգլիական հպատակ, ավստրալացի դրամատեր, ինժեներ Վիլյամ Նոքս դ'Արսիին հաջողվեց Նասր–էդ–Դին շահից աննշան գումարով ստանալ Իրանի ողջ տարածքում, բացառությամբ հյուսիսային հինգ նահանգների (Ատրպատական, Գիլան, Մազանդարան, Աստրաբադ և Խորասան), նավթի հանքավայրերի շահագործման մենաշնորհը: Դրա հիման վրա 1909 թ. կազմակերպվեց «Անգլո–պարսկական նավթային ընկերությունը», որը դարձավ համաշխարհային նշանակություն ունեցող տրեստներից մեկը: Այն մինչև XX դ. 50–ական թվականները Անգլիայի հիմնական քաղաքական ու տնտեսական լծակն էր Իրանում: Այդ պահից սկսած Պարսից ծոցը և Հարավային Իրանը իրենց վրա սևեռեցին Անգլիայի ուշադրությունը ոչ միայն առևտրական շահերի տեսակետից կամ Հնդկաստանի պաշտպանության նկատառումներով, այլև «նավթային ռազմավարության» առումով, քանի որ բրիտանական ռազմական նավատորմն արդեն անցել էր հեղուկ վառելիքի օգտագործման, և սուր կարիք էր զգացվում Հնդկական օվկիանոսի ավազանում գործող նավատորմիղներին անխափան մատակարարելու նավթ:

Անկասկած, դեպի Իրան տնտեսական «խաղաղ» ներթափանցման գործում գլխավոր դերակատարությունը պատկանում էր Մեծ Բրիտանիային, քանի որ Ռուսաստանը իր տնտեսական զարգացման հետամնացության պատճառով ի վիճակի չէր մրցակցելու Անգլիայի հետ: Այդ իսկ պատճառով Ռուսաստանն առավել մեծ կարևորություն էր տալիս Իրան ներթափանցելու ռազմական ու քաղաքական բնագավառներին: Ռուսների ակտիվ ներթափանցումն այդ երկիր սկսվել է XIX դ. 70–ականների վերջերից:

1879 թ. շահի խնդրանքով ռուսական սպաները Ռուսաստանի գլխավոր շտաբի գնդապետ Ա. Դոմանտովիչի գլխավորությամբ կազակական զորքերի օրինակով Թեհրանում կազմակերպեցին «Պարսկական կազակական կանոնավոր հեծյալ գունդ», որը հետագայում վերածվեց գումարտակի: Այդ զորամիավորման պաշտոնական անվանումն էր «Նորին Մեծության շահի պարսկական կազակական բրիգադ»: Հիշյալ զորամասի հրամանատարը և բարձր ու միջին սպայական կազմը պարտադիր պետք է լինեին ռուսներ, իսկ կրտսեր հրամկազմը և շարքայինները՝ պարսիկներ: Կրտսեր հրամկազմի մեջ ներգրավված էին նաև հայեր: Զորամասը կատարելու էր նաև ներքին ոստիկանական գործառույթներ: Ռազմական այդ կառույցը դարձավ Իրանում ցարական Ռուսաստանի ռազմաքաղաքական ազդեցության ուժեղացման մի զորավոր գործիք՝ ընդհուպ մինչև Առաջին աշխարհամարտի ավարտը:

Ռուսները ևս կարևոր նշանակություն էին տալիս Իրանի հետ կանոնավոր հեռագրական կապ ունենալու հարցին: 1879 թ., օրինակ, նրանք Իրանի հյուսիսում ձեռք բերեցին Աստրաբադ և Չիքիշլար քաղաքների միջև հեռագրական գծի կառուցման իրավունք: 1893 թ. Աստարայի հեռագրական գիծը ամբողջությամբ անցավ Ռուսաստանի վերահսկողության տակ: Հետագայում նա ձեռք բերեց նաև Մեշհեդ–Սիսթան գիծը: Սակայն, այնուամենայնիվ, ռուսներին չհաջողվեց անգլիա-

ցիներին համահավասար թափով ծավալել այդ գործը, գլխավորապես ֆինանսական միջոցների բացակայության պատճառով:

Ռուսական դրամատերերը մեծ հետաքրքրություն էին դրսևորում նաև Կասպից ծովի իրանական ջրերում ձկնային ռեսուրսների շահագործման նկատմամբ: Արդեն XIX դարի 50–ական թվականների կեսերին ողջ իրանական ծովափը Աստարա քաղաքից մինչև Գորգան ռուս ձկնարդյունաբերողների շահագործման ոլորտում էր:

1888 թ. հայազգի ռուսահպատակ խոշոր դրամատեր, Բաքվի նավթարդյունաբերող Ստեփան Լիանոզովը (Լիանոզյան) իրանական կառավարությունից 20 տարի ժամկետով ստացավ Պարսից ծովի հարավային մասի և նրա մեջ թափվող գետերի ձկնորսական տեղամասերի ձկան որս կազմակերպելու և ձկնամշակման գործարաններ հիմնադրելու մենաշնորհային իրավունք: Լիանոզովի «Հարավ–Կասպիական ձկնորսական ընկերությունը» սարքավորումներով լավ հագեցած ժամանակակից արդյունաբերական ձեռնարկություն էր: Այն Իրանի տարածքում ռուսական կապիտալին պատկանող ամենախոշոր արդյունաբերական ձեռնարկությունն էր: Նրա բաժանմունքներում աշխատում էին մոտ 800 ռուսահպատակներ և չորս հազարից ավելի իրանցիներ: Լիանոզովի ձեռնարկությունը ցարական կառավարության հատուկ հովանավորության ներքո էր:

Ձեռնարկության հիմնադիր Ստեփան Լիանոզովի մահից հետո՝ 1896 թ., նրա որդին՝ Գեորգի Լիանոզովը, շահական կառավարության հետ կնքեց նոր համաձայնագիր, ըստ որի՝ կոնցեսիոն պայմանագրի ժամկետը երկարաձգվում էր մինչև 1925 թ.:

1889 թ. ռուս դրամատեր Լազար Պոլյակովը հիմնադրեց «Պարսկաստանի և Միջին Ասիայի արդյունաբերական և առևտրական ընկերությունը», որը մասնաճյուղեր ուներ նաև Թեհրանում, Ռեշտում, Մեշհեդում և այլ քաղաքներում: 1890 թ. Յակով և Լազար Պոլյակով եղբայրները շահից ստացան նաև ողջ Իրանի տարածքում ապահովագրական ու տրանսպորտային գործի կազմակերպման կոնցեսիա 75 տարի ժամկետով: Հիշյալ կոնցեսիայի հիման վրա ստեղծվեց «Իրանական ապահովագրական և տրանսպորտային ընկերություն», որը կազմակերպեց նավային հաղորդակցություն Կասպից ծովում, իր իսկ հիմնած «Կովկաս և Մերկուրի», «Նադեժդա», «Արևելյան ընկերություն» դուստր ընկերությունների միջոցով, որոնք, հետագայում միավորվելով, կազմեցին «Պարսկական տրանսպորտային բյուրո» խոշոր միավորումը: Պոլյակով եղբայրները ստացան նաև «Էնզելի» նավահանգստի շահագործման իրավունք, կառուցեցին մի շարք խճուղային ճանապարհներ և այլն:

Իրանում Ռուսաստանի կողմից ստացած առավել կարևոր կոնցեսիաներից մեկը Հաշվառու–վարկատու բանկի հիմնադրման վերաբերյալ իրավունքն էր (1890 թ.): Այդ բանկի խնդիրն էր ակտիվորեն ներազդել Իրանի հյուսիսային շրջանների ֆինանսատնտեսական կյանքի վրա և ամեն կերպ խոչընդոտել անգլիական շահնշահական բանկի հետագա ծավալումը: Ռուսաստանը հնարավորություն ստացավ այդ դրամատան միջոցով հսկողություն սահմանելու պարսկական ֆինանսների նկատմամբ: 1894 թ. բանկը գնվեց Ռուսաստանի ֆինանսների նախարարության կողմից և ամբողջությամբ անցավ Ռուսաստանի պետական բանկի վերահսկողու-

թյան տակ՝ փաստորեն դառնալով Ռուսաստանի պետական բանկի մասնաճյուղն Իրանում:

Շահական կառավարությունը Ռուսաստանից վերցնում էր նաև դրամական փոխառություններ, որոնք սովորաբար օգտագործվում էին ոչ արտադրողական ծախսերի համար:

Ռուսական ցարիզմը կտրականապես դեմ էր Իրանում երկաթուղային շինարարությանը: Ուստի նա ամեն կերպ արգելակում ու խոչընդոտում էր այն բոլոր նախագծերը, որոնք առաջարկվում էին ոչ միայն օտարերկրյա պետությունների, այլև ռուս և ռուսահպատակ դրամատերերի կողմից:

Ռուսական կառավարության այդ դիրքորոշման պաշտոնական բացատրությունը հանգում էր նրան, որ Ռուսաստանը, որ ինքը կարիք ունի տնտեսական զարգացման, չպետք է խոշոր միջոցներ ներդնի Իրանում: Իրականում ցարիզմը մտավախություն ուներ, որ Իրանում իր ուժեղ մրցակից Մեծ Բրիտանիան երկաթուղագծերի միջոցով կմոտենա Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի սահմաններին և մրցակցային պայքարում աննախադեպ կուժեղացնի իր դիրքերը ոչ միայն Իրանում, այլև ողջ Միջին Արևելքում: Ուստի 1890 թ. նոյեմբերի 12–ին ռուսները հարկադրեցին իրանական կառավարությանը ստորագրել մի համաձայնագիր, որով վերջինս պարտավորվում էր մինչև 1900 թ. Իրանում չկառուցել և օտարերկրյա պետություններին էլ թույլ չտալ կառուցել երկաթուղագծեր: Ըստ էության այդ պայմանագիրը հավասարազոր էր Իրանում երկաթուղաշինության արգելքին: Հետագայում Իրանում երկաթուղագծերի կառուցման արգելքի վերաբերյալ (մինչև 1910 թ.) նմանատիպ պայմանագիր կնքվեց Ռուսաստանի և Անգլիայի միջև:

Հարկ է նշել, որ Սուեզի ջրանցքի բացումից հետո Անգլիան ստացել էր Հնդկաստանի հետ կապող ծովային հարմար ուղի, ուստի կորցրել էր իր հետաքրքրությունն Իրանում երկաթուղիների կառուցման նկատմամբ: Ավելին՝ նա ևս շահագրգռված էր ամեն կերպ խոչընդոտելու երկաթուղիների կառուցումը՝ նպատակ ունենալով թույլ չտալ Ռուսաստանի հավանական ելքը Պարսից ծոց և Հնդկական օվկիանոս:

Բնականաբար, երկաթուղիների բացակայությունը լրջորեն արգելակելու էր Իրանի տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացումը և առհասարակ լուրջ խոչընդոտ էր լինելու այդ երկրի արդիականացման ճանապարհին: Այսպիսով՝ երկաթուղային ճանապարհների շինարարությունը օտար պետությունների քմահաճույքով փաստորեն 30 տարի սառեցվեց: Իզուր չէ, որ Իրանն անվանել են «դասական ճանապարհազրկության երկիր»: Անշուշտ, սա ևս ցայտուն վկայությունն էր այն իրողության, որ իրանական պետությունը կորցնում էր իր ինքնուրույնությունը:

XIX դ. 70–ական թթ. գաղութային «հին» պետությունների կողքին Մերձավոր ու Միջին Արևելքում հանդես եկավ մի նոր գիշատիչ՝ Գերմանիան: 1873 թ. նրան հաջողվեց Իրանի հետ կնքել «Բարեկամության, առևտրի և ծովագնացության մասին» պայմանագիր, որը սկիզբ դրեց այդ երկու երկրների միջև հարաբերությունների հաստատմանը: Պայմանագիրը Գերմանիային տրամադրում էր դիվանագիտական և առևտրական հարաբերություններում առավել բարենպաստության իրավունք:

Բեռլինը ստանում էր կապիտուլյացիոն արտոնություններ, ազատ առևտրի և նավագնացության իրավունք Թեհրանում, Թավրիզում, Բուշեհրում հյուպատոսություններ բացելու թույլտվություն և այլն:

Պայմանագրի 18–րդ հոդվածը նախատեսում էր Գերմանիայի միջնորդությունը այն դեպքում, եթե Իրանը վեճի կամ ընդհարման մեջ մտներ որևէ երրորդ պետության հետ:

Կնքելով հիշյալ պայմանագիրը՝ Գերմանիան ձգտում էր ամրապնդվելու Իրանում և հող նախապատրաստելու իր հետագա առաջխաղացման համար դեպի Միջագետք և Միջերկրական ծովի ավազանը:

Իրանում գերմանական քաղաքականության հետագա ակտիվացմանը մեծապես նպաստեց Բաղդադի երկաթուղու նախագծի հայտնվելը: Այդ երկաթգիծը պետք է սկիզբ առներ Բեռլինից, այնուհետև անցնելով Բոսֆորի վրայով՝ պետք է հասներ մինչև Պարսից ծոց: 3,5 հազար կիլոմետր երկարություն ունեցող այդ երկաթուղին պետք է պողպատյա շղթայով Մերձավոր ու Միջին Արևելքի երկրները, մասնավորապես Օսմանյան կայսրությունը և Իրանը կապեր Գերմանիայի հետ:

1902 թ. հունվարին Ռայխստագում կանցլեր Բեռնհարդ ֆոն Բյուլովը հայտարարեց, որ այսուհետև Իրանը պետք է ընդգրկվի Գերմանիայի ակտիվ քաղաքականության շրջանակների մեջ:

XIX դարի 50–ականներից սկսած՝ նկատվում էր նաև ԱՄՆ–ի հետաքրքրության մեծացում Իրանի նկատմամբ: 1853 թ. դեկտեմբերի 13–ին Կոստանդնուպոլսում ստորագրվեց իրանա–ամերիկյան «Բարեկամության և առևտրի մասին» պայմանագիր: Կողմերը պայմանավորվում էին փոխանակել դեսպաններ, իսկ իրանական և ամերիկյան վաճառականները այդուհետ օգտվելու էին առավել բարենպաստության իրավունքից: ԱՄՆ–ին իրավունք էր տրվում Իրանում բացելու երեք հյուպատոսություն՝ Թեհրանում, Բենդեր–Բուշիրում և Թավրիզում, իսկ Իրանին՝ Վաշինգտոնում, Նյու Յորքում և Նյու Օռլեանում:

Շահը ԱՄՆ–ի նկատմամբ ցուցաբերում էր շեշտված բարյացակամ վերաբերմունք՝ հույս ունենալով «երրորդ» ուժի օգնությամբ չափավորել Անգլիայի և Ռուսաստանի չափից ավելի մեծ ազդեցությունն իր երկրում:

1855 թ. հուլիսի 12–ին «Բարեկամության և առևտրի վերաբերյալ» պայմանագիր ստորագրվեց նաև Իրանի և Ֆրանսիայի միջև: Կողմերը պայմանավորվում էին փոխանակել դեսպաններ, երկու երկրների վաճառականներին հատկացվում էր առավել բարենպաստության, ինչպես նաև փոխադարձության հիմքի վրա ազատ առևտրի իրավունք: Ֆրանսիան իրավունք էր ստանում հյուպատոսություններ բացելու Թեհրանում, Բանդեր–Բուշերում և Թավրիզում, իսկ Իրանը՝ Փարիզում, Մարսելում և Ռեյունյոն կղզում: 1900 թ. ֆրանսիացիներին հատկացվեց նաև Իրանում հնագիտական պեղումներ կատարելու մենաշնորհային իրավունք:

Նույնատիպ պայմանագրեր Իրանը ստորագրեց նաև Ավստրո–Հունգարիայի, Բելգիայի, Դանիայի, Նորվեգիայի, Հոլանդիայի և Շվեդիայի հետ (այդ բոլորը՝ 1857 թ.): XIX դ. երկրորդ կեսին իրանական կառավարությունից կոնցեսիաներ և

զանազան տնտեսական արտոնություններ ձեռք բերեցին նաև մի շարք եվրոպական փոքր պետություններ (օրինակ՝ Հունաստանը և այլն):

Նասր–էդ–Դին շահը երեք անգամ ճանապարհորդել էր եվրոպական երկրներ: Այդ երկրների զարգացումը խոր տպավորություն էր թողել նրա վրա: Ուստի ամեն անգամ Եվրոպայից վերադառնալիս նա կատարում էր որոշ բարեփոխումներ: Թեև դրանցից շատերը աչքի չէին ընկնում իրենց խորքային նպատակներով, այլ ցուցադրական էին, սահմանափակ ու ոչ արմատական և առավելապես տուրք էին տալիս արտաքին փայլին, սակայն, դրանով հանդերձ, դրանք առաջադիմական քայլեր էին հետամնաց այդ երկրում: Անկասկած, Նասր–էդ–Դին շահի կառավարման շրջանում իրանցիները հնարավորություն ստացան քիչ թե շատ ծանոթանալու արևմտյան քաղաքակրթության հետ: Ստեղծվեցին եվրոպական տիպի նախարարություններ, ավատական ազնվականության զավակների համար բացվեցին մի քանի դպրոցներ, որոնք կոչված էին գլխավորապես պատրաստելու սպաներ, հիմնադրվեց «Դար ֆընունը» («Գիտությունների տուն»), որտեղ դասավանդվում էին նաև օտար լեզուներ, շահի հրամանով ուսանողներ էին ուղարկվում Եվրոպա, որպեսզի կրթություն ստանալուց հետո վերադառնան Իրան և կանոնավորեն պետական վարչությունը: Հրավիրվեցին ավստրիացի սպաներ՝ բանակը եվրոպական ձևով մարզելու համար: Ջանքեր էին գործադրվում նաև երկրի ու մարդկանց արտաքին տեսքը փոխելու ուղղությամբ: Կատարվեց, օրինակ, պալատականների զգեստների որոշ եվրոպականացում: Փորձ արվեց իրականացնելու դատական բարեփոխում, որի նպատակն էր հոգևոր–շարիաթական դատարանների իրավասությունների սահմանափակումը: Շահի կարգադրությամբ ստեղծվեց «Արդարության օրենքների գիրքը» («Քեթաբչե–ե ղանունի»), առաջին անգամ Իրանում կազմվեց պետական նախահաշիվ (բյուջե), կազմակերպվեց գրատպություն և այլն: Շահը Եվրոպայում գնեց մանվածքի, լուցկու, շաքարի, ապակու, հախճապակու, թղթի և այլ գործարաններ, որոնք գլխավորապես տեղաբաշխվեցին Թեհրանի և Սպահանի շրջակայքում:

Թեև այդ բարեփոխումներն ի վիճակի չէին երկրում մտցնելու արմատական փոփոխություններ, սակայն կասկածից վեր է, որ դրանց շնորհիվ Իրանը բռնել էր արդիականացման ու եվրոպականացման (վեստեռնիզացման) ուղին, որը կապիտալիստական հարաբերությունների զարգացման կապակցությամբ այլևս դառնում էր անշրջելի: Անգլիայի և Ռուսաստանի ազդեցության շնորհիվ Իրանի հասարակական–քաղաքական կյանքում ևս կատարվեցին բազում դրական տեղաշարժեր: Օրինակ՝ հենց այդ պետությունների ճնշման ներքո Պարսից ծոցի գոտում և Կասպից ծովի հարավարևելյան ծովափնյա շրջաններում իրանական իշխանությունների կողմից արգելվեց ստրկավաճառությունը:

Այսպիսով՝ թեև եվրոպական տերությունների «խաղաղ» ներթափանցման հետևանքով XIX դ. վերջին քառորդին Իրանը ի վերջո վերածվեց արևմտյան տերություններից կախում ունեցող երկրի, սակայն մյուս կողմից այդ երևույթը, անկասկած, նպաստեց նրա առաջադիմական զարգացմանը: Ուշագրավ է նշել, որ ժա-

մանակի մի շարք առաջավոր մարդիկ, օրինակ՝ հայազգի Մալքոմ (Մելքոն) խանը, միրզա Յուսիֆ Մոսթաշար օդ–Դոուլեն, միրզա Հոսեյին խանը և ուրիշներ, այն տեսակետին էին, որ օտարերկրացիներին կոնցեսիաների տրամադրումը կարևոր միջոց է երկրի առաջադիմության ապահովման համար: Իրանի ավանդական կառույցները, սակայն, չէին հասցնում հարմարվել աշխարհում տեղի ունեցող արագ փոփոխություններին, որի անխուսափելի հետևանքը եղավ երկրի տնտեսական, իսկ ապա նաև քաղաքական կախվածության մեծացումը արևմուտքի տերություններից և, ի վերջո, նրա վերածումը Անգլիայից և Ռուսաստանից կախում ունեցող երկրի:

Իրանցիների ազգային ինքնագիտակցության բարձրացման գործում չափազանց կարևոր դեր է խաղացել միրզա Մալքոմ խանը (Մելքումյան Հովսեփ Հակոբի), որին ռուս արևելագետ Վ. Գուրկո–Կրյաժինը անվանում է «պարսկական Գերցեն»: Իսկ Իրանում նրան համարում են այդ երկրի «լուսավորչական շարժման հայր»: Իր գեղարվեստական ստեղծագործություններում և պրակտիկ գործունեության մեջ (շահական պալատում զբաղեցնում էր բարձր պաշտոններ) նա քննադատում էր Իրանի հասարակական–քաղաքական կյանքում տիրապետող միջնադարյան ինստիտուտները՝ դրանք համարելով հնացած ու ժամանակավրեպ, և պնդում էր տնտեսական, քաղաքական և մշակութային բարեփոխումներ իրականացնելու հույժ կարևորությունն ու անհրաժեշտությունը: Մալքոմ խանը ձգտում էր իրանական ժողովրդին ծանոթացնելու համաշխարհային քաղաքականությանը, օրենքի և ժողովրդական իշխանության ընձեռած առավելություններին, պրոպագանդելու Իրանը արևմտականացնելու, երկրում սահմանադրական կառույցներ արմատավորելու գաղափարներ:

Տասներկու տարի Եվրոպայում կատարելով դիվանագիտական աշխատանք (եղել է իրանական դեսպանատան խորհրդական Ֆրանսիայում, Իրանի արտակարգ և լիազոր դեսպան Մեծ Բրիտանիայում, Ավստրիայում և Գերմանիայում, Իրանի դեսպանորդ Իտալիայում և այլն)՝ Մալքոմ խանը, ի վերջո, շահական կառավարության հետ ունեցած քաղաքական տարաձայնությունների պատճառով հրաժարական է տալիս, հեռանում դիվանագիտական ասպարեզից և լծվում քաղաքական ու լուսավորչական գործունեության: Մալքոմ խանի պատմական ծառայությունն այն է, որ նա դաստիարակեց Իրանի առաջադիմական զարգացման համար պայքարող մի ամբողջ սերունդ: Իրանցիների ազգային ինքնագիտակցության բարձրացման գործում չափազանց կարևոր նշանակություն ունեցավ Լոնդոնում վտարանդիության շրջանում Մալքոմ խանի կողմից հրատարակվող «Ղանուն» («Օրենք») պարսկերեն պարբերականը: Հիրավի, չափազանց մեծ է եղել այդ թերթի դերը իրանական հասարակության զարթոնքի գործում: Այն գաղտնի ճանապարհով մուտք էր գործում Իրան և ընթերցվում երկրի ապագայով մտահոգված հազարավոր մարդկանց կողմից:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

1905–1911 ԹԹ. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՆՈՒՄ

1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋ

Թեև XIX դ. բաբիական շարժումներից հետո Իրանում խոշոր ժողովրդական ապստամբություններ տեղի չունեցան, սակայն, այդուհանդերձ, զանգվածների դժգոհությունը պոռթկումներ էր ունենում տարերային հուզումների ու բռնկումների տեսքով: Այդպիսի բռնկումներից մեկը 1891 թ. ժողովրդական շարժումն էր անգլիական ծխախոտային մենաշնորհի դեմ, որը դիպչում էր իրանական հասարակայնության լայն խավերի շահերին՝ սկսած ծխախոտ արտադրողներից և վերջացրած վաճառականներով ու սպառողներով: Բազմաթիվ խոշոր քաղաքներում ու բնակավայրերում ծայր առան հակակառավարական ելույթներ, որի մասնակիցները պահանջում էին չեղյալ հայտարարել անգլիացիների հետ կնքված պայմանագիրը: Հոգևորականությունը սկսեց հանդես գալ կրակի վրա նավթ ավելացնողի դերում: Նա այդ առիթը միանգամայն պատեհ համարեց իր դժգոհությունն օտարերկրացիների և շահի դեմ դրսևորելու համար: Կրոնապետերը իսլամի անունից «հարամ» («կեղտոտ», «պիղծ») հայտարարեցին անգլիական ընկերության ծխախոտը և արգելք դրեցին Իրանում ծխախոտ ծխելու վրա մինչև ծխախոտի կոնցեսիայի չեղյալ հայտարարումը: Բնակչությունն այն աստիճանի ճշտությամբ էր կատարում այդ կարգադրությունը, որ երբ շահն իր համար պահանջեց ղայլան, նրան պատասխանեցին, որ պալատում ծխախոտ չկա, քանի որ կրոնական հեղինակությունների «ֆեթվայով» ծխելու վրա դրված է ժամանակավոր արգելք և պալատում եղած ծխախոտը ամբողջապես ոչնչացվել է:

Գնալով շարժումը ձեռք էր բերում ավելի ու ավելի հուժկու բնույթ: Ժողովրդի շրջանում հայտնվեցին կոչեր օտարերկրացիների դեմ պայքար ծավալելու համար, որոնցում շահի կառավարությունն անվանվում էր դավաճանների կառավարություն և ասվում էր, որ շահը զբաղված է հայրենիքի առուծախով: Ամենուրեք ղեկավարելով ծխախոտի կոնցեսիայի դեմ շարժումը՝ հոգևորականությունը ձգտում էր օգտագործելու այն իր հեղինակությունը բարձրացնելու համար: Ընդ որում՝ դա ոչ միայն կրոնական թշնամանքի դրսևորում էր ընդդեմ օտարերկրյա ներթափանցման, այլև ուլեմների ուժի ցուցադրում: Ծխախոտի կոնցեսիայի դեմ իրենց ընդդիմադիր վարքագծով նրանք ցուցադրեցին իրենց համախմբվելու և բռունցքվելու կարողությունը:

Երկրի մի շարք խոշոր քաղաքներում՝ Թեհրանում, Թավրիզում, Մեշհեդում, Շիրազում և այլուր, ծայր առան խոշոր հուզումներ: Մայրաքաղաքում ծխախոտի մենաշնորհի դեմ ֆեթվա հրապարակեց քաղաքի գլխավոր մոջթեհիդ հաջի Միրզա Հասան Աշթիանին:

1892 թ. հունվարին Նասր–էդ–Դին շահը հրամայեց Միրզա Հասան Աշթիանիին, որ նա չեղյալ հայտարարի ծխելու արգելքի վերաբերյալ իր ֆեթվան, հակառակ դեպքում նրան սպառնում էր վտարել Թեհրանից: Մոջթեհիդը նախընտրեց վերջինը: Ի նշան բողոքի՝ մոլեգնած ամբոխը փակեց բազարներն ու կրպակները և հոգևորականության առաջնորդությամբ շարժվեց դեպի շահի Գոլեսթան պալատը: Պահակախմբի սարբազների մեծ մասը հրաժարվեց կրակ բացելուց ամբոխի վրա: Ուստի պալատ բերվեց մի հատուկ գունդ, որի զինվորները սկսեցին կրակել մարդկանց վրա: Եղան զոհեր և վիրավորներ: Ամբոխը խուճապահար փախուստի դիմեց: Սակայն դրանից հետո ևս շարժումը չմարեց:

Վախեցած շահը հունվարի 6–ին հրավիրեց պետական խորհրդի նիստ, որտեղ որոշում կայացվեց չեղյալ հայտարարել կոնցեսիոն պայմանագիրը: Սակայն զայրացած ու վրիժառությամբ լցված միապետը հրամայեց մի լավ «դաս տալ» իր անհնազանդ հպատակներին: Որպես պատասխան՝ Թեհրանում ստեղծվեց մի գաղտնի կազմակերպություն, որն իր առջև նպատակ դրեց սպանելու շահին: 1896 թ. մայիսի 1–ին, երբ մեծ շքեղությամբ Աբդ ալ–Ազիմ մզկիթում նշվում էր Նասր–էդ–Դին շահի գահակալման հիսունամյակը, միրզա Ռեզա Քերմանին ատրճանակի կրակոցներով սպանեց նրան: Ղաջարական դինաստիայի այդ վերջին ուժեղ կառավարչի հեռացումը քաղաքական ասպարեզից ռուսների և անգլիացիների համար բացում էր ազատ դաշտ իրենց գործունեության համար:

Ծխախոտի կոնցեսիայի դեմ ուղղված բողոքի շարժումը առաջին հակաօտարերկրյա ելույթն էր Իրանում: Այդ շարժման կարևորությունն այն էր, որ այն, ինչպես իրավացիորեն նշում է անգլիացի իրանագետ Է. Լամբտոնը, սկիզբ դրեց երկրում հասարակական կարծիքի ձևավորմանը: Միաժամանակ այն եղավ 1905–1911 թթ. իրանական սահմանադրական հեղափոխության նախերգանքը:

Ղաջարական գահը ժառանգեց Մոզաֆֆար–էդ–Դին շահը (1896–1906): Թույլ կամքի տեր, վատառողջ այդ մարդը, որը գահին տիրանալու սպասումով քառասունհինգ տարի շարունակ Թավրիզում վարում էր անհմաստ ու անբովանդակ կյանք, վերջապես հոր մահից հետո զբաղեցրեց ղաջարների արքայատան գահը: Նորաբուխ շահը հիմնականում շարունակեց իր հանգուցյալ հոր քաղաքական կուրսը: Նա ևս երեք անգամ (1900 թ., 1902 թ., 1905 թ.) ծախսատար ճանապարհորդություններ կատարեց դեպի եվրոպական երկրներ՝ նպատակ ունենալով աստիճանաբար, էվոլյուցիոն ճանապարհով երկիրը դուրս բերելու զարգացման ուղու վրա և դրանով իսկ թուլացնելու լարված ներքաղաքական վիճակը: Մինչդեռ երկիրը կարիք ուներ արմատական և լուրջ փոփոխությունների:

Առաջադեմ մտածողության տեր մարդիկ գիտակցում էին, որ Իրանը մխրճվել է խոր ճգնաժամի մեջ, որից դուրս գալու համար անհրաժեշտ է իրագործել խորքային

արմատական բարեփոխումներ: Այս հողի վրա XIX դ. վերջին սկսեցին ծնունդ առնել ազգայնականության գաղափարները: Ազգային ինքնագիտակցության ձևավորումը առաջին հերթին իր արտացոլումը գտավ մտավորականության գործունեության մեջ, ընդ որում՝ ինչպես բուն Իրանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս՝ արտասահմանում: Եվրոպական երկրներում կրթություն ստացած և ազատական գաղափարներով ոգեշնչված իրանցիների թիվը նշանակալիորեն աճեց: Ինչպես եվրոպական, այնպես էլ ասիական երկրներում (Օսմանյան կայսրություն, Հնդկաստան և այլն) ապրում էին մեծ թվով իրանցի վտարանդիներ, այդ թվում նաև շահական իշխանությունների հետապնդումներից փախած մարդիկ, որոնք քաղաքական վերափոխումների համոզված կողմնակիցներ էին:

Այսպիսով՝ երկրում գնալով կուտակվում էր դյուրավառ նյութ, որը սպառնում էր պոռթկալ հեղափոխության տեսքով: XX դ. սկզբին Իրանում տարերային հուզումների բռնկումների տեսքով ժողովրդական դժգոհության պոռթկումներ էին տեղի ունենում համարյա ամեն տարի: 1903–1904 թթ. հացի գների արհեստական բարձրացումը Իրանի համարյա բոլոր խոշոր քաղաքներում առաջ բերեց սովահար ամբոխի բունտեր: Ժողովուրդը ջարդուփշուր էր անում հացի ու պարենի խանութները: Տարածվում էին թռուցիկներ, որոնցում սադր ազամ Աթաբեկ Ազամը մեղադրվում էր գանձագողության ու կաշառակերության, ինչպես նաև օտարերկրյա պետությունների գործակալ լինելու մեջ: Ժողովրդին հանգստացնելու նպատակով շահն Աթաբեկ Ազամին պաշտոնանկ արեց և սադր ազամի պաշտոնում նշանակեց իշխանազուն Սուլթան Աբդ ալ–Մաջիդ–Միրզային, որը կրում էր Այն–էդ–Դոուլեին պատվանունը: Սակայն վարչապետի այդ փոփոխությունը հասարակության շրջանում հանգստության չհանգեցրեց:

Գնալով շարժումը ձևավորվում ու ընդհանրական բնույթ էր ստանում: Այն դուրս էր գալիս մայրաքաղաքից և ծավալվում նաև գավառներում: Միանգամայն ակնհայտ էր դառնում, որ այդ շարժումը սոսկ բողոքի դրսևորում չէր կառավարության ընթացքի կամ կամայականությունների դեմ, այլ քաղաքական նպատակներ հետապնդող շարժում էր առհասարակ տիրող կարգերի դեմ: Ներքին ու արտաքին ազդեցությունների ու տարբեր ներշնչումների տակ սկսված այդ շարժումը, թեև կրկին անկազմակերպ ու հոսանքային, սակայն, այնուամենայնիվ, իր մեջ ցուցադրում էր ժողովրդական զարթոնքի որոշ նշաններ:

Անմիջապես հոգևորականությունը, հատկապես նրա բարձր դասը սկսում է ջանքեր գործադրել շարժման ղեկավարությունն իր ձեռքը վերցնելու ուղղությամբ: Մզկիթներում ու շուկաներում քարոզչություն էր տարվում այն մասին, որ օտարերկրացիներն Իրանում ամեն ինչ վերցրել են իրենց ձեռքը, իսկ պարսիկներին ստիպում են ողորմություն խնդրել: Պահանջվում էր երկրից հեռացնել մաքսատների տնօրեն բելգիացի Նաուսին, որին մեղադրում էին գանձարանը և վաճառականներին թալանելու և կողոպտելու մեջ, հորդորում էին բոյկոտի ենթարկել օտարերկրյա բանկերն ու նրանց կողմից թողարկված թղթադրամները: Կոչեր էին հնչում այդ թղթադրամները հայտարարելու «հարամ» («կեղտոտ»), որպեսզի մուսուլմանները

չշփվեն նրանց հետ: Քարոզիչները սուր քննադատության էին ենթարկում նաև շահին ու նրա կառավարությանը՝ նրանց ևս մեղադրելով գողության, կաշառակերության ու գանձագողության մեջ: Ջեմալ անունով քարոզիչներից մեկը մզկիթում ժողովրդի հոծ բազմության ներկայությամբ հայտարարում է. «Պարսկաստանում, հին սովորույթի համաձայն, գոյություն ունի գողության համար ձեռքը կտրելու օրենք, սակայն ներկայումս այն կիրառվում է միայն աղքատների նկատմամբ: Խղճի մտոք ասացե՛ք. եթե այդ օրենքը կիրառվեր արդարացի կերպով, մի՞թե անհրաժեշտ չէր կտրել բոլոր խոշոր ու մանր գողերի ձեռքը՝ սկսած շահից մինչև վերջին պաշտոնյան: Սակայն այդպես չեն վարվում, և հենց դրանում է Պարսկաստանի դժբախտությունը: Օրենքները պետք է հավասար լինեն բոլորի համար»:

2. 1905–1911 ԹԹ. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Արդեն 1905 թ. տարերային ժողովրդական դժգոհությունը սկսել էր կազմակերպչական ձևեր ընդունել: Հակակառավարական ելույթի անմիջական առիթ դարձան 1905 թ. դեկտեմբերի 12–ի իրադարձությունները Թեհրանում, երբ սադր ազամ Այն–էդ–Դոուլեի հրամանով ձերբակալվեցին և մահակներով գանակոծության ենթարկվեցին մի խումբ անվանի վաճառականներ, որոնք իբր Թեհրանում արհեստականորեն բարձրացրել էին շաքարի գինը: Միջնադարյան պատժիչ եղանակով՝ մահակներով կրունկներին հարված հասցվածների թվում էր նաև բարձրաստիճան և հեղինակավոր կրոնական գործիչ հաջ Միրզա Մոհամմադ Ռեզան, որին նվաստացուցիչ ձևով պատժի ենթարկելը զանգվածների շրջանում առաջ բերեց զայրույթի փոթորիկ: Պատժի այդ նվաստացուցիչ ձևը Իրանում սովորական երևույթ էր, որ մինչ այդ լռությամբ տանում էր թե՛ պատժվողը և թե՛ հանդիսատես շրջապատը: Բայց ստեղծված հուզումնալից մթնոլորտում այս անգամ առևտրական դասը, իր պատիվը արատավորված համարելով, բողոքում է ոչ թե այդ մասնավոր դեպքի, այլ ընդհանրապես կառավարության կամայականությունների և գործադրած ապօրինությունների ու խստությունների դեմ: Առևտրական դասին հետևում են նաև զանգվածները, որոնք, պետական պաշտոնյաների հարստահարությունների ու ճնշումների տակ կքած, արդարադատության պահանջ են դնում:

Հաջորդ օրը՝ դեկտեմբերի 13–ին, ի նշան իշխանությունների կամայականությունների դեմ բողոքի՝ փակվեցին մայրաքաղաքի բոլոր խանութները, կրպակներն ու արհեստանոցները, առևտուրն ընդհատվեց: Թեհրանում, Թավրիզում, Շիրազում և այլ քաղաքներում տեղի ունեցան զանգվածային ցույցեր և բողոքի համընդհանուր գործադուլներ: Ցուցարարները պահանջում էին պաշտոնանկ անել շահի ազգական սադր ազամ Այն–էդ–Դոուլեին և իրականացնել բարեփոխումներ: Ցույցերն ավարտվեցին ոստիկանության և զորքերի հետ բախումներով:

Քանի որ հրապարակում չկար իրական ղեկավարություն, որ հանդես գար հանուն զանգվածների շահերի ու իրավունքների պաշտպանության, հրապարակ է գալիս շիա հոգևորականությունը և գրավում շարժման ղեկավարությունը: Ինչպես

նման բոլոր շարժումների դեպքում, ցուցարար ամբոխը թեև հստակորեն չէր ըմբռնում իր ղեկավար հոգևորականության պահանջների միտքն ու էությունը, բայց հոսանքով գնում էր նրա հետևից այն հույսով, որ իր հոգևոր պետերը պաշտպանում են իր շահերը: Առաջին հայացքից խիստ անբնական է թվում հոգևորականության կողմից որդեգրած այդ ընթացքը, որովհետև պահպանողական հոգևորականությունը հարում էր ազատական կարգեր պահանջող սահմանադրական շարժմանը, այլ կերպ ասած՝ նա լծվում էր իր հոգեբանությանը բոլորովին անհարիր գաղափարի հաղթանակի օգտին: Սակայն նա մտնում էր ասպարեզ իր շահերի հիանալի գիտակցությամբ: Բարձր հոգևորականությունը հետապնդում էր մի նպատակ՝ խորտակել իր հակառակորդ պալատի ուժն ու ազդեցությունը և վրեժ լուծել նրանից, որովհետև պալատը համառ հետևողականությամբ կրճատել էր իր իրավունքները և շարունակում էր իր այդ քաղաքականությունը: Ժողովրդական այդ շարժմանը հարելով և նրա ղեկավարությունը ստանձնելով՝ հոգևորականությունը ձգտում էր ժողովրդի միջոցով վերագրավելու իր նախկին դիրքն ու հեղինակությունը և իր բացարձակ իշխանությունը տարածելու երկրի ու ժողովրդի վրա:

Այն բանից հետո, երբ իշխանությունները փորձեցին ձերբակալել աչքի ընկնող մի քանի քարոզիչների, 1905 թ. դեկտեմբերի 14–ին Թեհրանի բարձրաստիճան հոգևորականությունը, այդ թվում նաև մոջթեհիդներ սեյեդ Մոհամմադ Թաբաթաբային և սեյեդ Աբդոլլա Բեհբեհանին, որոնց հետ նաև հինգ հազար «բազարի մարդիկ», արհեստավորներ, վաճառականներ, հոգևոր ուսումնարանների սաներ ու մոլլաներ բեստ[1] նստեցին Թեհրանից ոչ հեռու գտնվող Շահ Աբդուլ–Ազիմ մզկիթում՝ նպատակ ունենալով ստեղծելու քաղաքական ճգնաժամ: Բեստ նստածները կոչով դիմեցին ժողովրդին, որում շահի կառավարությունը հայտարարվում էր ժողովրդական բոլոր դժբախտությունների մեղավոր: Պահանջվում էր կառավարության ղեկավար, ժողովրդի աչքում վարկաբեկված Այն–էդ–Դոուլեի անհապաղ հրաժարականը, մաքսային վարչության ղեկավար բելգիացի Նաուսի հեռացումը իր զբաղեցրած պաշտոնից, ինչպես նաև դրվում էր «Ադալաթ խանե» («Արդարության տուն») ստեղծելու պահանջ՝ ժողովրդի ներկայացուցիչների բողոքները անաչառ քննության ենթարկելու համար: Բեստ նստածների պահանջները շահին հասցվեցին Թեհրանում օսմանյան դեսպանի միջոցով:

Միաժամանակ բարձր հոգևորականությունը տեսակցություն է ունենում սադր ազամի հետ և զգաստացուցիչ գրություններ է ուղղում շահին: Բայց այդ բոլորից որևէ դրական արդյունք չստանալով՝ ի վերջո մի գրությամբ դիմում է Թեհրանում անգլիական դեսպանատանը և խնդրում նրա աջակցությունը: Սակայն դեսպանատնից պատասխանում են, որ «անգլիական դեսպանատունը ոչ մի կերպ չի կա-

[1] Բեստ բառը ծագում է պարսկերեն «բասթան» (կապել, փակել) բառից: Այս կամ այն հանցանքի մեջ մեղադրվող մարդը, որպես կանոն, իր մեղքը ժխտելու համար իրեն շղթայով կապում էր մզկիթի, զբոսավայրի կամ մեկ այլ հասարակական վայրի դռանը: Բեստը Իրանում նաև քաղաքական պայքարի մի յուրահատուկ ձև էր: Բեստ էին նստում ի նշան իշխանությունների կողմից իրականացվող բռնությունների ու հալածանքների դեմ բողոքի: Չգրված օրենքը թույլ չէր տալիս բռնի դուրս հանել բեստ նստածին ու ձերբակալել նրան:

րող աջակցել այն անձանց նպատակներին, որոնց ընթացքը դեմ է շահի կառավարությանը»:

Շարժման ղեկավար կրոնապետ (մոջթեհիդ) Աղա սեյեդ Աբդոլլա Բեհբեհանին երեք օր հետո կրկին դիմում է անգլիական դեսպանատուն, որը հակառակ սկզբնական մերժման, միջամտում է շարժմանը: Դա բացատրվում է նրանով, որ Անգլիան մտադիր էր սահմանադրական շարժման միջոցով թուլացնել Իրանում Ռուսաստանի ազդեցությունը և կասեցնել նրա անզուսպ ձգտումը դեպի Իրանի հարավային նահանգները և Պարսից ծոցի ավազանը, որոնք անգլիացիները համարում էին իրենց ազդեցության շրջանները: 1906 թ. հունվարի սկզբին ժողովրդական շարժումների վերելքից անհանգստացած Մոզաֆֆար–էդ–Դին շահը հրապարակեց հրամանագիր՝ խոստանալով ընդառաջել բողոքավորների պահանջները, այդ թվում նաև հիմնադրել «Ադալաթ խանե» («Արդարության տուն»), սկսել բարենորոգումների իրականացումը պաշտոնանկ անել ժողովրդի ատելությանն արժանացած Թեհրանի նահանգապետին, պատժել Քերմանի նահանգապետին, որը հրամայել էր մահակներով գանակոծել մոլլաներին, Թեհրանում ընտրության կարգով բնակչության կազմից ստեղծել մի խորհուրդ, որը «թանկավաճառության» դեմ պայքարելու համար որոշելու էր սննդամթերքի գները: Դրանից հետո հոգևորականությունը դուրս եկավ բեստից և վերադարձավ Թեհրան: Սակայն շահը իր խոստումը չկատարեց: Դրա հետևանքով սկսվեցին նոր ցույցեր, բեստեր և այլն: Գործադուլներն ու հանրահավաքներն ընդգրկեցին երկրի բազմաթիվ քաղաքներ: Կառավարությունը ցուցարարների դեմ հանեց զորքեր և ոստիկանական ուժեր, որոնք կրակ բացեցին անզեն ժողովրդի վրա: Այդ անտեղի դաժանությունից վրդովված ամբոխը մոլեգնեց: Թեհրանի արհեստավորներն ու վաճառականները բազարում փակեցին իրենց կրպակները, և մոտ 14 հազար մարդ 1906 թ. հուլիսի 15–ին բեստ նստեց Թեհրանում՝ անգլիական դեսպանատան ընդարձակ այգում: Դեսպանատան հուշումներով «Ադալաթ խանե» ստեղծելու պահանջը փոխարինվեց «ժողովրդական ներկայացուցչական կարգեր» հաստատելու, այլ կերպ ասած՝ Իրանում սահմանադրական կարգեր արմատավորելու պահանջով: Միաժամանակ, որպես շահական իշխանությունների դեմ բողոքի նշան, Թեհրանի հոգևորականությունը, որն անցել էր ընդդիմության կողմը, լքեց մայրաքաղաքը և մեկնեց շիաների կողմից «սրբազան քաղաք» համարվող Ղում քաղաքը, որտեղից շահին ներկայացվեցին հետևյալ պահանջները՝ պաշտոնանկ անել Այն–էդ–Դոուլեին, գումարել մեջլիս (խորհրդարան), ընդունել շարիաթի վրա հիմնված սահմանադրություն, երկրից վտարել բելգիական մաքսային աստիճանավորներին և այլն: Հոգևորականությունը սպառնում էր, որ եթե շահը չկատարի այդ պահանջները, ինքը ընդմիշտ կհեռանա Իրանից: Առանձին վայրերում սկսեցին հնչել ապստամբության կոչեր: Գնալով շարժումն ընդունում էր սպառնալից չափեր: Շահը դարձյալ ստիպված էր զիջումների գնալ: Անգլիական գործերի հավատարմատարի միջնորդությամբ նա սկսեց բանակցություններ վարել շարժման մասնակիցների, բեստ նստածների հետ: Ի վերջո 1906 թ. հուլիսի 30–ին Այն–էդ–Դոուլեն պաշտոնանկ արվեց: Սադր ազամի պաշտո-

նում նշանակվեց ազգայնական տրամադրություններ ունեցող, ազատական հայացքների տեր Մոշիր օլ–Դոուլեն:

1906 թ. օգոստոսի 5–ին հրապարակվեց շահի հրովարտակը սահմանադրություն ընդունելու և մեջլիս (խորհրդարան) հիմնադրելու վերաբերյալ: Սակայն այդ հրամանագիրը չբավարարեց անգլիական դեսպանատան այգում և Ղումում բեստ նստած հոգևորականությանը, ըստ որի՝ հրովարտակում հստակ չի նշվում, որ մեջլիսը պետք է լինի ընտրովի, այն պետք է կոչվի «իսլամական», և որ նրա գործածությունը պետք է համապատասխանի շարիաթի նորմերին, ուստի շահը օգոստոսի 7–ին հրապարակեց լրացուցիչ հրամանագիր, որը բավարարում էր բեստ նստածների պահանջները: Դրանից հետո հոգևորականությունը Ղումից վերադարձավ Թեհրան, դադարեցվեց նաև բեստը անգլիական դեսպանատան այգում: Սակայն պայքարը երկրի քաղաքական համակարգի բարեփոխման համար ոչ միայն չթուլացավ, այլև ավելի ուժեղացավ ու սրվեց:

1906 թ. հոկտեմբերի 7–ին տեղի ունեցավ իրանական առաջին մեջլիսի բացման հանդիսավոր նիստը: Իսկ 1906 թ. դեկտեմբերի 30–ին մահամերձ Մոզաֆֆար էդ–Դին շահը հաստատեց «Հիմնական օրենքը»: Իրանը հռչակվում էր սահմանադրական միապետություն: Սահմանադրության 16–րդ հոդվածի համաձայն՝ բոլոր ընդունվող օրենքները պետք է ստանային մեջլիսի անդամների հավանությունը: Առանց մեջլիսի որոշման՝ կառավարությունը իրավունք չուներ օտարերկրացիներին հատկացնելու կոնցեսիաներ:

1907 թ. հունվարի 8–ին Մոզաֆֆար–էդ–Դին շահը ծանր հիվանդությունից մահացավ: Իրանական գահին նրան փոխարինեց որդին՝ Ատրպատականի կառավարիչ Մոհամմադ Ալին: Քանի դեռ նա չէր բազմել շահական գահին, նրան ձեռնտու էր սահմանադրական շարժմանն աջակցելը: Սակայն երբ հասավ իր նպատակին, դարձավ այդ շարժման ոխերիմ թշնամին: Նա կտրականապես հրաժարվեց իր ստորագրությամբ հաստատելուց Հիմնական օրենքի հավելումները և վարչապետի (Աթաբեկ Ազամի) պաշտոնում նշանակեց Ամին–օս–Սալթանին, որը հայտնի էր որպես սահմանադրական շարժման երդվյալ թշնամի: Սակայն շուտով հենց մեջլիսի շենքի առջև Ամին–օս–Սալթանը գնդակահարվեց լումայափոխ Աբբաս Աղայի կողմից:

Հեղափոխական շարժման ալիքը գնալով հուժկու թափ էր առնում: Շահը և հետադիմության կարկառուն ներկայացուցիչները ստիպված էին նահանջել: Նրանք հարկադրված էին հայտարարել, որ իրենք մեջլիսի թշնամի չեն: Ներկայանալով մեջլիս՝ նրանք հավատարմության երդում տվեցին սահմանադրությանը:

1907 թ. հոկտեմբերի սկզբին մեջլիսը ձայների մեծամասնությամբ հաստատեց սահմանադրության «հավելումները» կամ «լրացումները», որոնք իրավաբանորեն ձևակերպեցին երկրի անցումը սահմանադրական միապետության վարչակարգին: Ի դեպ, այդ «հավելումների» հոդվածների մի մասը վերացված էր «Մարդու և քաղաքացու իրավունքների» ֆրանսիական հռչակագրից: Շահն իր ստորագրությամբ վավերացրեց «հավելումները»: Բոլոր իրանցիները հայտարարվում էին օրենքի

առջև հավասար: 9–րդ հոդվածում նշվում էր, որ «բոլոր քաղաքացիների կյանքում ունեցվածքը և պատիվը ապահովվում ու պաշտպանվում են օրենքով»: Իսլամի շիական ուղղությունը հռչակվում էր Իրանի պաշտոնական դավանանք: Մեջլիսի կողմից ընդունված օրենքները պարտադիր կարգով պետք է համապատասխանեին իսլամի սկզբունքներին:

Այսպիսով՝ իրանական ժողովուրդը ստացավ սահմանադրություն: Սակայն խախուտ ու անհաստատ էին սահմանադրության կողմնակիցների դիրքերը, որովհետև բոլոր երդվյալ միապետականները և առհասարակ հետադեմ տարրերը, սահմանադրական դիմակ հագած, շարունակում էին պահել իրենց դիրքն ու իշխանությունը և դավեր էին նյութում սահմանադրության դեմ: Ուստի ժողովուրդը շարունակում էր ալեկոծվել: Կազմակերպվեցին հեղափոխական մարտիկների՝ «մոջահեդների» կազմակերպություններ, ֆիդայիների ջոկատներ, «էնջումեններ» (ընտրովի կոմիտեներ), որոնք տեղական իշխանությունը վերցնում էին իրենց ձեռքը: Գյուղացիները հրաժարվում էին վճարել հարկերը, կալվածատերերին հանձնել նրանց հասանելիք բերքը, խմբեր էին կազմում և հարձակվում էին կալվածատիրական տների ու ագարակների վրա, քանդում ու ավերում էին դրանք: Այդ բոլորը վկայում էր այն մասին, որ սահմանադրական շարժումը ձեռք էր բերում հեղափոխությանը բնորոշ գծեր:

Սահմանադրական շարժումն Իրանում իր ճշտումները մտցրեց նաև Անգլիայի և Ռուսաստանի՝ միջինարևելյան քաղաքականության մեջ: Ռուսաստանը մտավախություն ուներ, որ հեղափոխական շարժումներն Իրանում կարող են այդ երկրում կործանիչ հարված հասցնել իր դիրքերին: Բացի այդ՝ Ռուսաստանի ներքին և արտաքին քաղաքականությունը հայտնվել էր ծայրահեղ դժվարին վիճակում: Անդրադառնալով այդ հարցին՝ արտաքին գործերի նախարար Իզվոլսկին գրում էր. «Ռուսաստանի դիրքերը Արևելյան Ասիայում դժբախտ պատերազմից (նկատի ունի 1904–1905 թթ. ռուս–ճապոնական պատերազմը — Վ. Բ.) և անգլո–ճապոնական պայմանագրի վերականգնումից հետո այն աստիճանի էին թուլացել և ձեռք բերել սպառնալից բնույթ, որ այլևս ոչինչ չէր մնում, քան միայն անմիջականորեն Անգլիայի հետ պայմանավորվելը»: Հենց այդ ժամանակից սկսած նկատվում էր բեկում ռուսական արտաքին քաղաքականության մեջ: Ռուսաստանը ստիպված էր համաձայնության մեջ մտնել Անգլիայի հետ: Անգլիան իր հերթին վախենում էր, որ Իրանում տեղի ունեցող իրադարձությունները կարող են խթանել հեղափոխական շարժումը Հնդկաստանում: Այդ երկու պետություններին հավասարապես անհանգստացնում էր Գերմանիայի ուժգին ներթափանցումն Իրան: Այս և նմանատիպ այլ գործոններ անգլո–ռուսական հակասությունները մղեցին հետին պլան և ստիպեցին Մեծ Բրիտանիային և Ռուսաստանին՝ այդ վաղեմի մրցակից–ախոյաններին, բանակցություններ սկսելու իրանական և ընդհանրապես միջինարևելյան գործերի վերաբերյալ: 1907 թ. օգոստոսի 31–ին ստորագրվեց անգլո–ռուսական համաձայնագիր Իրանը, Աֆղանստանը և Տիբեթը ազդեցության գոտիների բաժանելու վերաբերյալ: Այդ համաձայնագրով Իրանի հյուսիսային մասը 790 հազար քառ. կմ

տարածքով՝ Ղասրե Շիրին–Սպահան–Յեզդ–Զուլֆաղար գծից հյուսիս, հայտարարվում էր Ռուսաստանի ազդեցության գոտի, իսկ հարավային մասը՝ Բանդար Աբբաս–Քերման–Բիրջանդ–Ղազիկ գծից հարավ–արևելք, 350 հազար քառ. կմ տարածքով՝ անգլիական ազդեցության գոտի: Այդ երկու գոտիների միջև թողնվում էր մի շերտ, որը հայտարարվում էր «չեզոք գոտի» և բաց էր մեծ պետությունների մրցակցության համար: Կողմերը պարտավորվում էին քաղաքական և տնտեսական բնույթի կոնցեսիաներ չփնտրել «ուրիշի գոտում» և ճանաչում էին միմյանց «հատուկ շահերը» իրենց ազդեցության գոտիներում: Աֆղանստանն ընդգրկվում էր անգլիական ազդեցության գոտու մեջ: Ռուսաստանը պարտավորվում էր Աֆղանստանի հետ իր քաղաքական շփումների ժամանակ օգտվել «բրիտանական կառավարության միջնորդությունից»: Հրապարակվում էր նաև Աֆղանստանում երկու կողմերի առևտրական իրավահավասարության սկզբունքը: Անգլիան և Ռուսաստանը ճանաչում էին Չինաստանի ինքնիշխան իրավունքները Տիբեթի նկատմամբ, պարտավորվում էին չմիջամտել նրա ներքին գործերին և նրա հետ շփվել միայն չինական կառավարության միջոցով, Տիբեթը հայտարարվում էր անգլիական առևտրական ազդեցության գոտի: 1907 թ. համաձայնագրի կնքումով ավարտվեց անգլո–ֆրանս–ռուսական ռազմաքաղաքական դաշինքի՝ Անտանտի կամ Եռյակ համաձայնության ձևավորումը: Համաձայնագիրը, սակայն, չվերացրեց անգլո–ռուսական մրցակցությունն Իրանում: Դրանից հետո ևս այն շարունակվում էր, բայց ավելի քողարկված ձևերով: Արդեն 1907 թ. սեպտեմբերի 8–ին իրանական մեջլիսը հանդես եկավ բողոքով այդ համաձայնագրի դեմ: Իսկ Գերմանիայում համաձայնագրի կնքման լուրը առաջ բերեց զայրույթի փոթորիկ: Գերմանական կառավարությունը Ռուսաստանին և Անգլիային մեղադրեց նրանում, որ նրանք հող նախապատրաստեցին Իրանը միմյանց միջև բաժանելու համար: Որպես չարյաց փոքրագույն՝ Բեռլինը պահանջում էր «ավարի» իր բաժինը՝ չեզոք գոտին:

Սահմանադրական շարժման տարիներին օգտվելով երկրում ստեղծված անկայունությունից՝ Իրանի նկատմամբ գորշ գայլի ախորժակ էր ցուցաբերում հարևան Թուրքիան, որը հավակնություններ ուներ Ատրպատականի նկատմամբ իբրև թրքախոս մի շրջանի: Թուրքական զորքերը ռազմակալման ենթարկեցին Ատրպատականի և Իրանական Քրդստանի մի շարք շրջաններ:

1907 թ. իրանական հետադիմությունը սկսեց գլուխ բարձրացնել: Մոհամմադ Ալի շահը փորձում էր ուժային մեթոդներով արգելակել սահմանադրական շարժման հետագա զարգացումը՝ մտավախություն ունենալով, որ այն կվերածվի հզոր հեղափոխական ալիքի և սպառնալիք է Ղաջարական արքայատոհմի գոյությանը: Դրությունից ելքը նա համարում էր պետական հեղաշրջման իրականացումը: Նրան այդ քայլին մղում էր Ռուսաստանը: Շահը Թեհրանում ռուսական դեսպանի միջոցով դիմել էր Նիկոլայ Բ ցարին՝ խնդրելով, որ անհրաժեշտության դեպքում իրեն թույլ տրվի ապաստան գտնել Թեհրանի ռուսական դեսպանատանը: Այդ դիմումի վրա Նիկոլայ Բ–ն մակագրել էր. «Շահը կարող է Պարսկաստանը և գահը փրկել մի-

այն մեջլիսը և այլ հեղափոխական խառնամբոխը անհապաղ ցրելով: Դա իմ միակ պատասխանն էր»:

1907 թ. դեկտեմբերի 1–ին և 2–ին Թեհրանի Բահարիսթան հրապարակում՝ մեջլիսի շենքի առջև, կենտրոնացվեցին զորքեր, որոնց տրված էր գաղտնի հրաման՝ ջախջախել ու ցրել մեջլիսն ու հեղափոխական էնջումենները: Սակայն կանխելով զորքերի գործողությունները՝ սահմանադրության կողմնակիցները գրավեցին մեջլիսի շենքը և հարևան Սեփահսալարի մզկիթը: Միաժամանակ մեջլիսի շրջակայքում հավաքվեցին հարյուրավոր զինված կամավորներ՝ սահմանադրությունն ու մեջլիսը պաշտպանելու համար:

Քանի որ ուժերի հարաբերակցությունը բացահայտ կերպով իր կողմը չէր, շահը ստիպված էր ընկրկել: 1907 թ. դեկտեմբերի 9–ին մեջլիսի նիստի ժամանակ Մոհամմադ Ալին ստիպված էր Ղուրանի վրա երդվել, որ ինքը պարտավորվում է հարգել սահմանադրությունը և ոչ մի դեպքում չշեղվել նրա դրույթներից: Իսկ մեջլիսի պատգամավորները երդվեցին հարգել ու պահպանել շահի գերագույն իրավունքները, և քանի դեռ շահը ոտնձգություն չի կատարել սահմանադրության դեմ, «քայքայել գահի հիմքերը»: Սա ոչ այլ ինչ էր, քան գործարք շահի և մեջլիսի միջև:

1908 թ. փետրվարի 15–ին շահի դեմ կազմակերպվեց մահափորձ: Սակայն նետված ռումբը նրան չվնասեց: Այդ միջադեպից հետո առճակատումը շահի և սահմանադրության կողմնակիցների միջև կրկին սրվեց: Թեհրանի էնջումենները պահանջեցին, որ շահը պետական գործերից հեռացնի Ամիր Բահադուր–Ջանգին, որի ազդեցությունը ինքնակալի նկատմամբ չափազանց մեծ էր, ինչպես նաև շահի քարտուղար Շապշալին և նրա մերձավորներից ևս չորս անձանց: Սակայն անպատասխան թողնելով էնջումենի պահանջը՝ 1908 թ. հունիսի սկզբին Մոհամմադ Ալին կազակական գումարտակի ուղեկցությամբ անակնկալ հեռացավ Թեհրանից և մեկնեց մայրաքաղաքից դուրս իր Բաղեշահ պալատը: Էնջումենների ղեկավարները հասկացան, որ շահը պատրաստվում է հարձակման: Մեջլիսի բազմաթիվ պատգամավորներ, ֆիդայիների զինված ջոկատներ, Թեհրանի էնջումենների անդամներ, թվով՝ մի քանի հազար մարդ, կենտրոնացան մեջլիսի շենքում և Սեփահսալարի մզկիթում սահմանադրությունը պաշտպանելու վճռականությամբ: Մայրաքաղաքի բնակչությանը զենք բաժանվեց: 1908 թ. հունիսի 22–ին Մոհամմադ Ալին մայրաքաղաքում մտցրեց ռազմական դրություն: Նա պարսկական կազակական գումարտակի հրամանատար, ռուս գնդապետ Վ. Պ. Լյախովին նշանակեց Թեհրանի զինվորական նահանգապետ՝ նրա տրամադրության տակ դնելով նաև քաղաքում առկա բոլոր զորքերը և ոստիկանական ուժերը: Շահը հրամայեց գնդապետին հաջորդ օրը գրավել Սեփահսալարի մզկիթը և զինաթափ անել այնտեղ գտնվող հեղափոխական ֆիդայիներին ու կամավոր մոջահեդներին: Հունիսի 23–ի առավոտյան թնդանոթները որոտացին: Տեղի ունեցան կատաղի մարտեր, որոնց ընթացքում եղան մեծ թվով զոհեր: Ի վերջո սահմանադրականների դիմադրությունը ճզմվեց: Մեջլիսի բազմաթիվ պատգամավորներ և էնջումենների անդամներ ձերբակալվեցին: Նրանց հետ տեղի ունեցավ գազանային հաշվեհարդար: Մեջլիսի պատգամա-

վորների մի մասը կարողացավ ապաստան գտնել անգլիական դեսպանատանը, իսկ ոմանք փրկություն գտնելու հույսով լքեցին երկիրը:

Շահի հրամանով մեջլիսը և էնջումենները ժամանակավորապես ցրվեցին: Մայրաքաղաքում մտցվեց հատուկ դրություն: Հետադիմությունն ամենուրեք անցավ հարձակման: Բազմաթիվ քաղաքներում էնջումենները ցրվեցին: Աստիճանաբար խաղաղ սահմանադրական շարժումը վերածվեց քաղաքացիական պատերազմի:

3. ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆԸ

Թավրիզին մեծ օգնություն էին ցուցաբերում այսրկովկասյան հեղափոխականները, մասնավորապես հայերն ու վրացիները: Նրանք կազմակերպում էին զենքի գաղտնի փոխադրում Իրան, Թավրիզ էին մեկնում Հարավային Կովկասում կազմակերպված բազմաթիվ զինված ջոկատներ և այլն: 1907 թ. փետրվարին Վիեննայում գումարված «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության չորրորդ ընդհանուր ժողովը որոշում էր կայացրել, որ կուսակցությունը իր գործուն մասնակցությունը պիտի բերի Իրանում ընթացող սահմանադրական հեղափոխությանը:

1908 թ. հոկտեմբերի սկզբին հեղափոխական ֆիդայիների ջոկատներին հաջողվեց Թավրիզից դուրս մղել կառավարական զորքերին և կովկասյան թաթարների ավատատերերի կիսավաչկատուն ցեղերից բաղկացած ջոկատներին: Այդ հաղթանակի մեջ կարևոր դեր ունեցավ նաև Արշակ Գավաֆյանի («Քեռի») մարտական խումբը:

Թավրիզի հեղափոխականների հաջողություններից ոգևորված՝ ապստամբության դրոշ են բարձրացնում նաև Ատրպատականի մյուս քաղաքները՝ Մարանդը, Մարաղան, Սալմաստը, Խոյը և այլն՝ տեղերում ստեղծելով իրենց սեփական իշխանության մարմինները՝ էնջումենները: Նրանց օրինակին հետևելով մի շարք այլ քաղաքներ ևս՝ Մեշհեդը, Սպահանը, Բուշիրը և այլն, ապստամբության միջոցով տիրացան իշխանությանը:

Երկրի հյուսիսում՝ Գիլան նահանգի կենտրոնական քաղաքի Ռեշտում, 1909 թ. փետրվարի 8–ին բռնկվում է հակաշահական ապստամբություն: Նրա ոգին սահմանադրական շարժմանը զինագրված Եփրեմ Դավթյանն էր, որը ժողովրդի շրջանում հայտնի էր Եփրեմ–խան Արմանի անունով: Շարժմանն իր մասնակցությունն ունեցավ Ռեշտում և առհասարակ Գիլան նահանգում ապրող հայությունը: Իշխանությունը Ռեշտում անցավ նահանգային էնջումների ձեռքը: Ապստամբներին միացավ նաև Մոհամմադ Ալի շահի նկատմամբ ատելություն տածող գիլանական խոշոր կալվածատեր Սեփահադարը: Ապստամբները իրենց իշխանությունը տարածեցին ամբողջ նահանգի վրա:

Իր շահերը Իրանի հյուսիսում վտանգված համարելով՝ Ռուսաստանը որոշեց, «ռուսահպատակների պաշտպանության» պատրվակի վկայակոչմամբ, զորքեր մտցնել այնտեղ և ջախջախել ալեկոծվող հեղափոխությունը: 1909 թ. ապրիլի 25–ին ռուսական զորքերն անցան իրանական սահմանը: Գրավելով Թավրիզը՝ նրանք այնտեղ բարձրացրին կախաղանների անտառ: Շատերը շղթայակապ աքսորվեցին

Սիբիր: Ցարական զորքերի հարվածների տակ հեղափոխական շարժումը ջախջախվեց ոչ միայն Թավրիզում, այլև ողջ Ատրպատականում: Իր հերթին շահը Գիլանի ապստամբների դեմ ուղարկեց բանակ: Տեղեկանալով այդ մասին՝ Եփրեմ Դավթյանը Ռեշտի հեղափոխական էնջումենին առաջարկում է արշավանք կազմակերպել դեպի Թեհրան Մոհամմադ Ալի շահին գահընկեց անելու նպատակով:

1909 թ. գարնանը Դավթյանի հրամանատարությամբ գործող հեղափոխական ուժերը շարժվեցին դեպի Թեհրան: Ղազվին քաղաքի մոտ պարտության մատնելով շահական զորքերին՝ նրանք սրընթաց արշավեցին դեպի մայրաքաղաք: Միաժամանակ, նախնական պայմանավորվածության համաձայն, հարավից՝ Սպահան քաղաքի կողմերից, բախթիարական ցեղերի մի մասը, որը հարել էր սահմանադրական շարժմանը, իրենց առաջնորդներ Սամսամ–էս–Սալթանեի և Սարդար Ասադի գլխավորությամբ նույնպես շարժվեցին դեպի Թեհրան: Մայրաքաղաքի մատույցներում միավորվելով՝ կարճատև մարտերից հետո՝ 1909 թ. հուլիսի 13–ին, հեղափոխական ուժերը որպես հաղթողներ մուտք գործեցին Թեհրան: Մոհամմադ Ալի շահը և նրա մերձավորները, որոնց տրամադրության տակ այլևս չկային հավատարիմ ուժեր դիմադրություն ցուցաբերելու համար, հուլիսի 15–ին թաքնվեցին ռուսական դեսպանատան ամառային նստավայր Զերգենդեում:

Հուլիսի 16–ին գումարվեց բարձրագույն «Ազգային խորհուրդ» («Մեջլիս–ե սաալի»), որը Մոհամմադ Ալի շահին հայտարարեց գահընկեց և շահ հռչակեց նրա 14–ամյա որդուն՝ Ահմեդ Միրզային: Նկատի ունենալով նոր միապետի անչափահաս լինելը՝ նրա խնամակալ նշանակվեց ազատական հայացքների տեր դաջարական իշխանազուն Միրզա Ալի Ռեզա խան Ազուդ օլ–Մոլքը, որը համարվում էր նաև դաջարների ցեղի իշխանը (առաջնորդը): 1910 թ.՝ վերջինիս մահանալուց հետո, նրա տեղը նշանակվեց Աբու ալ–Ղասեմ Նասիր ալ–Մուլքը: Կազմվեց ժամանակավոր կառավարություն, որում Եփրեմ խան Դավթյանը զբաղեցրեց զինված ուժերի հրամանատարի, ապա՝ Թեհրանի ոստիկանության պետի պաշտոնը: Հայտարարվեց սահմանադրության վերականգնման և առաջիկայում երկրորդ գումարման մեջլիսի աշխատանքները սկսելու մասին: Քաղաքական կազմակերպությունները, թերթերը և այլն վերսկսեցին իրենց գործունեությունը:

Մայրաքաղաքը հեղափոխականների ձեռքն անցնելուց հետո ևս նահանգներում միապետականները դեռ շարունակում էին դիմադրությունը: Եփրեմ խանին և բախթիարական խան Սարդար Բահադուրին հանձնարարվում է մեկնել Ատրպատական և ընկճել հակահեղափոխական ուժերին: Եփրեմ խանի հրամանատարությամբ գործող զորքերը ջախջախում են դարադաղցի Ռահիմ խանի ուժերը, ստիպում են հնազանդվել Մուղանի՝ ինքնագլխության ձգտող ցեղապետերին և իրար հետևից Ատրպատականի քաղաքներն ու շրջանները մաքրելով հակահեղափոխական ուժերից՝ Իրանի հյուսիսում վերահաստատում սահմանադրական կարգերը:

1909 թ. նոյեմբերի 17–ին աշխատանքները սկսեց երկրորդ գումարման մեջլիսը: Նրա որոշմամբ՝ դաջարական դինաստիան մնաց անձեռնմխելի: Մոհամմադ Ալի շահի համար սահմանվեց ցմահ թոշակ՝ տարեկան 100 հազար թուման գումարով:

Ռուսաստանը նրան հատկացրեց քաղաքական ապաստան՝ որպես բնակության վայր որոշելով Օդեսա քաղաքը:

Նոր կառավարության գլուխ կանգնած Սեփահդարը գործակցության հրավիրեց նախկին միապետական իշխանության բազմաթիվ գործիչների՝ տեղ գրավելու կառավարության կազմում: Վերջիններս հնարավորություն էին ստացել սահմանադրական պատմուճանով կրկին ասպարեզ գալու՝ շարունակելու համար իրենց նախկին գործելակերպը հօգուտ հին կարգերի վերականգնման: Քաղաքական կուսակցությունների, հոսանքների և մեջլիսի ղեկավարությունը ևս, նահանջելով հեղափոխական դիրքերից, թույլ էին տալիս, որ նախկին իշխանության կարկառուն դեմքերից շատերը պետական ապարատում զբաղեցնեն բարձր դիրքեր:

Արտաքին քաղաքականության բնագավառում նոր կառավարությունը վարում էր Ռուսաստանի և Անգլիայի միջև խուսանավելու քաղաքականություն: Միաժամանակ նա աշխատում էր հենվել ԱՄՆ–ի և Գերմանիայի վրա՝ ենթադրելով, որ այդ «չեզոք» երկրները կարելի է հակադրել Ռուսաստանին և Անգլիային: 1910 թ. վերջին այդ կառավարությունը դիմեց ԱՄՆ–ին՝ խնդրելով ֆինանսական խորհրդականներ ուղարկել՝ Իրանի ֆինանսական համակարգը վերակառուցելու համար: 1911 թ. հունվարին Վաշինգտոնը որոշեց Իրան ուղարկել հինգ ամերիկյան խորհրդականների՝ Մորգան Շուսթերի գլխավորությամբ:

Մինչդեռ Օդեսայում ծվարած նախկին շահը՝ Մոհամմադ Ալին, Ռուսաստանի հովանավորությամբ պատրաստություններ էր տեսնում շահական գահը վերստին հետ ստանալու ուղղությամբ: Նրա գործակալության հրահրումով Իրանի հյուսիսում սկսվեցին միապետականների խռովություններ:

1911 թ. հուլիսին ցարական իշխանությունների իմացությամբ ու աջակցությամբ Մոհամմադ Ալին Բաքվից ռուսական նավով անցավ Կասպից ծովը և ժամանեց նրա հարավարևելյան ափի մոտ գտնվող Գյումուշ թեփե վայրը: Այստեղ նրան են միանում իշխանազուրկ հակասահմանադրական գործիչների մեծ մասը: Իր շուրջը համախմբելով հակահեղափոխական բոլոր ուժերին՝ նախկին շահը շարժվում է դեպի Թեհրան: Միաժամանակ նրան օգնելու նպատակով իրանական Քրդստանում խռովություն է բարձրացնում նրա եղբայրներից մեկը՝ Սալար–էդ–Դոուլեն: Հակահեղափոխական ուժերը սկսում են գործել նաև Ատրպատականում, Գիլանում և այլ վայրերում:

Թեհրանում տիրող համընդհանուր հուսալքության ու պարտվողական տրամադրությունների պայմաններում հակահեղափոխական ու միապետական ուժերի ջախջախման գործի նախաձեռնությունը դարձյալ իր վրա է վերցնում Եփրեմ Դավթյանը: Նրա կազմակերպչական տաղանդի շնորհիվ շուտով կազմվում է մի մարտունակ ու կարգապահ «հեղափոխական բանակ», որը Եփրեմ խանի և Սարդար Բահադուրի գլխավորությամբ շարժվում է հակահեղափոխական ուժերի դեմ: 1911 թ. օգոստոսին նախկին շահի կողմնակիցները կրում են ջախջախիչ պարտություն: Այդ հաղթանակի հիմնական պատիվը վերագրելով Եփրեմ Դավթյանին՝ Իրանում ամերիկացի ֆինանսական խորհրդական, դեպքերին ականատես Մոր-

գան Շուսթերը գրել է. «Եփրեմ խանը ոչ միայն մայրաքաղաքը պաշտպանեց գահընկեց շահի զորքերի վտանգից, այլև փրկեց սահմանադրական կարգերը»: Եվրոպական դիվանագիտական շրջանակներն ու մամուլը այդ հաղթանակի առթիվ Եփրեմ Դավթյանին անվանեցին «Պարսկաստանի Գարիբալդի»: Իրանի շիական մեծ կրոնապետը հատուկ հրամանագրով իր օրհնությունը շնորհեց Եփրեմ խանին:

1911 թ. հուլիսի 30–ին իրանական մեջլիսը որոշում ընդունեց նախկին շահ Մոհամմադ Ալի Դաջարին և նրա երկու ակտիվ կողմնակիցներին՝ Սալար–օդ–Դոուլեին և Շոա–օս–Սալթանեին, որոնք մասնակցել էին դավադրությանը, մահվան դատապարտել: Մոհամմադ Ալին, սակայն, կարողացավ կրկին մազապուրծ փախուստի դեմել:

1911 թ. աշնանը Եփրեմն ու իր զինակիցները զենքն ուղղեցին նախկին շահի եղբոր՝ Սալար–օդ–Դոուլեի դեմ, որը Իրանական Քրդստանում հավաքել էր մի հսկայական բանակ և փորձում էր իրադարձությունների ընթացքի մեջ բեկում մտցնել: Սակայն «հեղափոխական բանակը» ջախջախեց այդ ուժերին ու ցրեց նրանց:

1911 թ. նոյեմբերի 16–ին Ռուսաստանը իրանական կառավարությանը ներկայացրեց իր կոպտությամբ աննախադեպ մի վերջնագիր, որով միջամտում էր ինքնիշխան պետության ներքին գործերին: Իրանական մեջլիսը ձայների ճնշող մեծամասնությամբ մերժեց այդ վերջնագիրը: Թեհրանում և մի շարք այլ քաղաքներում սկսվեցին հակառուսական ցույցեր, հանրահավաքներ ու քայլարշավներ, որոնք ընթանում էին «մահ կամ ազատություն» կարգախոսի ներքո: Ժողովուրդը ռուսական ապրանքները սկսեց բոյկոտի ենթարկել: Երկու ֆիդայիների կողմից հենց իր տան մոտ գնդակահարվեց նշանավոր քաղաքական գործիչ Ալա օդ–Դոուլեն, որի կապերը ռուսական դեսպանատան հետ հայտնի էին դարձել հեղափոխականներին: Թավրիզում Ռեշտում, Էնզելիում և այլ վայրերում ծայր առան զինված հարձակումներ: Սկսեցին կոչեր հնչել «անհավատներին» ոչնչացնելու վերաբերյալ:

Ցարական կառավարությունը որոշեց «իրանական կնճիռը» կրկին լուծել զինված ինտերվենցիայի ճանապարհով: 1911 թ. դեկտեմբերին անցնելով իրանական սահմանը՝ ռուսական զորքերը ռազմակալման ենթարկեցին երկրի հյուսիսային շրջանները՝ Ատրպատականը, Գիլանը և Խորասանը՝ դաժան հաշվեհարդար տեսնելով հեղափոխականների և առհասարակ Իրանի անկախության կողմնակիցների հետ: Սակայն ռուսները որոշել էին այս անգամ չսահմանափակվել երկրի հյուսիսային շրջաններում «կարգ ու կանոնի» հաստատմամբ, այլ շարժվել դեպի Թեհրան: Քաջ գիտակցելով, թե ինչ մտադրություններով են ռուսական զորքերը շարժվում դեպի մայրաքաղաք՝ Ահմեդ շահի խնամակալ Նասեր օլ–Մոլքը 1911 թ. դեկտեմբերի 8–ին հրամանագիր ստորագրեց երկրորդ գումարման մեջլիսը ցրելու և նոր ընտրություններ նշանակելու վերաբերյալ: Միաժամանակ իրանական կառավարության անունից ռուսական դեսպանորդին հանձնվեց նոտա այն մասին, որ կառավարությունն ընդունում է ռուսական վերջնագրի բոլոր կետերը: Դա նշանակում էր, որ մեջլիսը ցրվում է, արգելվում են էնջումենները, ցրվում ու վերացվում են ֆիդայական ջոկատները, փակվում են թերթերի մեծ մասը և այլն:

Այս իրադարձություններով իր ավարտին հասավ 1905–1911 թթ. սահմանադրական հեղափոխությունն Իրանում: Թեև ամբողջ ծավալով վերականգնվեց ավատատիրական ազնվականության իշխանությունը, և Ղաջարական դինաստիան շարունակեց իր գոյությունը, սակայն կասկածից վեր է, որ սահմանդրական հեղափոխությունն իր դրական ազդեցությունն ունեցավ Իրանի հետագա զարգացման վրա: Այդ շարժման գլխավոր արդյունքը եղավ այն, որ երկիրը բացարձակ միապետությունից վերածվեց սահմանադրական միապետության, և արմատավորվեց կառավարման սահմանադրական եղանակը: Իրագործվեցին մի շարք բարեփոխումներ, այդ թվում նաև կրթության բնագավառում: Սկսեցին լույս տեսնել թերթեր, քաղաքական ասպարեզ իջան նոր հասարակական ուժեր, ձևավորվեց նոր մտավորականություն, պատմության գիրկն անցան և այլևս չվերականգնվեցին հեղափոխության ընթացքում վերացված մի շարք միջնադարյան հասարակական ինստիտուտներ: Վերջապես սահմանադրական հեղափոխությունն արթնացրեց Իրանը, հզոր զարկ տվեց իրանական ժողովրդի քաղաքական հասունացմանը և առողջ ազգայնականության վերելքին, ուժգին հարված հասցրեց տիրապետող ավատական կարգերին և իրեն սպառած ղաջարական միապետությանը: Ճիշտ է՝ սահմանադրական կարգերը անկարող եղան կտրուկ փոխելու երկրում տիրող ընդհանուր սոցիալ–տնտեսական ու քաղաքական վիճակը, սակայն դրանք կարողացան ինքնավստահության ու ինքնապաշտպանության ոգի ներշնչել մինչ այդ բացարձակապես անշարժ և ամենազոր ճակատագրի պաշտամունքին հանձնված զանգվածներին:

Այդ ամենով հանդերձ՝ Իրանում սահմանադրական շարժումը հետագա զարգացում չունեցավ: Դրան գլխավորապես խոչընդոտեցին Առաջին աշխարհամարտը և երկրի ներքին կյանքում դրական տեղաշարժերի բացակայությունը:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԻՐԱՆԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

1. ԻՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

Համաշխարհային պատերազմի նախօրյակին Իրանում աննախընթաց ուժեղացել էին Անգլիայի և ցարական Ռուսաստանի տնտեսական և քաղաքական դիրքերը: Ըստ էության այդ երկիրը վերածվել էր կիսագաղութի: Բանը հասել էր նրան, որ երկրի կարևորագույն քաղաքական հարցերը լուծելու համար Իրանի կառավարող շրջանների մեջ մտնող խմբավորումները ոչ թե դիմում էին իրենց կառավարությանը, այլ ուղղակի Պետերբուրգին և Լոնդոնին: Հենց ինքը՝ շահը, կարևորագույն քաղաքական վճիռներ կայացնելիս պարտադիր պետք է «համաձայնեցներ» Իրանում Ռուսաստանի ու Անգլիայի դեսպանների հետ:

Անօրինական չափերի էր հասել նաև Իրանի ֆինանսական կախումը վերոհիշյալ պետություններից: Երկրի պետական կառույցների գործունեությունը ապահովելու համար դրամի մշտական կարիք ունեցող շահական կառավարությունը ստիպված էր անընդհատ փոխառություններ վերցնել անգլիական և ռուսական բանկերից: Միայն 1911–ից մինչև 1914 թ. ընկած շրջանում շահական կառավարությունը ստացել էր հինգ խոշոր փոխառություն, որոնց գումարների զգալի մասը կոռուպցիոն ճանապարհներով չքանում էին: 1914 թ. Իրանի արտաքին պարտքը Անգլիային և Ռուսաստանին կազմում էր այդ ժամանակների համար մի հսկայական գումար՝ 6 միլիոն 804 հազար անգլիական ֆունտ ստեռլինգ: Նավթի արդյունաբերական և ռազմական նշանակության աճին զուգահեռ մեծացել էր նաև հետաքրքրությունը իրանական նավթի նկատմամբ: Համաշխարհային պատերազմի նախօրյակին անգլիացիները լայն թափով սկսեցին ծավալել երկրի հարավային շրջանների, մասնավորապես Խուզիստանի նահանգի հարուստ նավթաբեր շրջանի նավթի հանքավայրերի շահագործումը: 1908 թ. Մասջեդ–ե Սոլեյմանի շրջանում հայտնաբերվեցին նավթի նոր հարուստ պաշարներ: 1909 թ. կազմակերպվեց Անգլո–պարսկական նավթային ընկերությունը (1935 թ. այն անվանափոխվեց Անգլո–իրանական նավթային ընկերության): Անգլիական նավատորմի հեղուկ վառելիքի անցնելուց բրիտանական կառավարությունը գնեց ընկերության արժեթղթերի հսկողական ծրարը և դրանով իսկ ընկերության գործողության նկատմամբ սահմանեց կատարյալ հսկողություն: Իրանական նավթի նշանակությունը հատկապես մեծացավ աշխարհամարտի տարիներին, երբ նավթային ընկերությունը բրիտանական ծո-

վային նախարարության հետ կնքված պայմանագրի համաձայն՝ անգլիական ռազմական նավատորմին մատակարարում էր նավթ և նավթամթերք:

Անգլո–պարսկական նավթային ընկերությունը վերածվեց համաշխարհային տրեստի: Բացի տնտեսական բնույթի արտոնություններից՝ Իրանում ընկերությունը ձեռք բերեց նաև քաղաքական իրավունքներ:

Իր հայեցողությամբ նա էր նշանակում բրիտանական ազդեցության գոտու մեջ մտնող նահանգների նահանգապետերին, նրա տրամադրության տակ կար սեփական ոստիկանությունը, զանազան ինքնավար կառավարման կառույցներ, սեփական դպրոցներ և այլն: Ընկերությունը ակտիվորեն միջամտում էր իրանական պետության ներքին կյանքին: «Շահնշահական» բանկի միջոցով անգլիացիները վերահսկում էին իրենց ազդեցության գոտու տնտեսական և ֆինանսական կյանքը: Կարուն գետի վրա երթևեկում էին բրիտանական գետային ռազմանավերը, իսկ հարավի կարևորագույն քաղաքներում՝ Ահվազում, Մոհամմերայում և այլն, տեղակայված էին անգլիական զինվորական ստորաբաժանումներ:

Ցարական Ռուսաստանը ևս «երկաթյա ձեռքով» վերահսկում էր Իրանի հյուսիսում իր ազդեցության գոտին: Նրա զորքերը, որոնք 1911 թ. ռազմակալման էին ենթարկել Հյուսիսային Իրանը, այդպես էլ դուրս չեկան այնտեղից: Նրանք տեղակայված էին հատկապես Ատրպատականի բոլոր հանգուցային կենտրոններում՝ Թավրիզում, Խոյում, Սալմաստում, Մարանդում և այլն:

Համաշխարհային պատերազմի նախօրյակին Իրանում նշանակալից չափով ամրապնդվել էին նաև Գերմանիայի դիրքերը:

Դեռևս 1904–1905 թթ. ռուս–ճապոնական պատերազմի տարիներին օգտվելով այն հանգամանքից, որ Ռուսաստանը Հեռավոր Արևելքում մղում էր ծանր պատերազմ Գերմանիան օգտագործեց ցարական Ռուսաստանի արտաքին քաղաքականության ակտիվության թուլացումը Բալկաններում, Իրանում, Փոքր Ասիայում՝ այդ տարածաշրջաններից Ռուսաստանին իր գրված դիրքերից դուրս մղելու համար: Գերմանական ազդեցությունն Իրանում ամրապնդելու ուղղությամբ Բեռլինի ջանքերը հատկապես ուժեղացան 1908 թ. վերջի և 1909 թ. հեղափոխական իրադարձությունների շրջանում: Գերմանիան սկսեց Իրան արտահանել մեծ քանակությամբ զենք ու զինամթերք, որը, որպես կանոն, բաժանվում էր հակառուսական տրամադրություններ ունեցող ցեղերի շրջանում: Ատրպատականում գերմանացիները եռանդուն կերպով ձեռնամուխ էին եղել գործարանային տիպի խոշոր ձեռնարկություններ բացելուն: Աշխարհամարտի նախօրյակին Իրանի արտաքին առևտրի մեջ Գերմանիան արդեն հաստատուն զբաղեցնում էր երրորդ տեղը Ռուսաստանից ու Անգլիայից հետո: Պարսից ծոցում եռանդուն գործունեություն էր ծավալել գերմանական նավային ընկերությունը: Պատերազմի նախօրյակին Պարսից ծոցով ծովային փոխադրումների բնագավառում Գերմանիան արդեն զբաղեցնում էր Անգլիայից հետո երկրորդ տեղը: 1913–1914 թթ. գերմանական հետախույզները վխտում էին Իրանում: Գերմանական հետախուզությունը սերտորեն համագործակցում էր թուրքական հատուկ ծառայությունների հետ: 1914 թ. Թավրիզում

գերմանացիները բացեցին հյուպատոսություն, որը ղեկավարելու էր Մերձավոր ու Միջին Արևելքի լավագույն գիտակ Լիտտենը: Բազմաթիվ քաղաքներում գործում էին գերմանական առևտրական ընկերությունների բաժանմունքներ, Թավրիզում բացվել էր գերմանական հյուպատոսություն, որը Թեհրանի դեսպանատան հետ միաժամանակ զբաղվում էր ակտիվ քաղաքական–հետախուզական գործունեությամբ:

Աշխարհամարտի նախօրյակին Իրանի մտավորականության, վաճառականության, ավատական դասի, ազգայնականորեն տրամադրված պաշտոնեության շրջանում սկսել էր իր համար ուղի հարթել արտաքին քաղաքական նոր կողմնորոշում Գերմանիայի հանդեպ: Այդ խավերը հանձին Գերմանիայի տեսնում էին մի ուժ, որը ոչ միայն ընդունակ էր ֆինանսական–տնտեսական օգնություն ցուցաբերելու Իրանին, այլև որպես «երրորդ ուժ» հակակշռելու Ռուսաստանին ու Անգլիային:

Իրանի Դեմոկրատական կուսակցության անդամները և ձախ հայացքների տեր քաղաքագետները, որոնք մեծամասնություն էին կազմում երրորդ գումարման մեջլիսում, ունեին գերմանական կողմնորոշում: Մեջլիսում մեծամասնություն կազմող Դեմոկրատական կուսակցության օրգան «Իրան–ե Նոու» («Նոր Իրան») թերթը այն միտքն էր զարգացնում, որ գերմանացիներն Իրանում հետապնդում են բացառապես առևտրական շահեր, ձեռնպահ են մնում Իրանի անկախության նկատմամբ ոտնձգություններ անելուց և ընդհակառակը՝ ամեն կերպ պաշտպանում են իրանական ժողովրդի անկախության ձգտումները: Դեմոկրատների ղեկավարները (Սեյեդ Հասան Թաղի զադեն, Հոսեյին Ղոլի խան Նավաբը, Սուլեյման Միրզան և այլք) համարում էին, որ Իրանը Թուրքիայի օրինակով պետք է անցնի Գերմանիայի կողմը:

Գերմանական վտանգը նպաստեց անգլո–ռուսական Է՛լ ավելի մերձեցմանը: Այդ երկու պետությունները իրենց շահերը շոշափող կարևորագույն հարցերում սկսել էին վարել համաձայնեցված քաղաքականություն, որը համապատասխանում էր 1907 թ. անգլո–ռուսական համաձայնագրի բուն ոգուն:

1912 թ. փետրվարի 18–ին Անգլիայի և Ռուսաստանի համատեղ ճնշման հետևանքով շահական կառավարությունը ստիպված էր պաշտոնապես ճանաչել 1907 թ. համաձայնագիրը Իրանը ազդեցության գոտիների բաժանելու վերաբերյալ:

Աշխարհամարտի նախօրյակին Իրանի նկատմամբ ակտիվ քաղաքականություն էր իրագործում նաև Օսմանյան կայսրությունը: Վերջինս գլխավորապես հենվում էր Իրանի ազգայնական շրջանների, հոգևորականության, վաճառականական դասի, մտավորականության, Ատրպատականի թյուրքալեզու բնակչության, թուրքասիրական ձգտումներ ունեցող շահական աստիճանավորների, Դեմոկրատական կուսակցության (Դեմոքրաթ–ե ամյուն) գործիչների վրա և այլն, որոնք ունեին շեշտված հակաանգլիական և հակառուսական տրամադրություններ:

Թուրքական գործակալների ղեկավարությամբ Իրանի բազմաթիվ քաղաքներում ստեղծվեցին «Էթթեհադ–ե էսլամ» («Իսլամի միասնություն») անվամբ պանիսլամական կոմիտեներ, որոնց հիմնական խնդիրն էր պատերազմի դեպքում իրանցիներին ոտքի հանել «ջիհադի» («սրբազան պատերազմ») Ռուսաստանի դեմ

հանուն «իսլամի պաշտպանության»: Օսմանյան կայսրությունը հատկապես մեծ հետաքրքրություն էր դրսևորում թյուրքալեզու բնակչություն ունեցող Ատրպատականի նկատմամբ, որը, բացի իր ռազմավարական կարևոր նշանակությունից, կոչված էր կարևոր դեր խաղալու թուրքական կառավարող շրջանների պանթյուրքական ծրագրերում: Պատերազմի նախօրյակին Ատրպատականում պանթյուրքիզմի ոգով մտքեր պատրաստելու, ինչպես նաև Ռուսաստանի նկատմամբ քայքայիչ գործունեություն ծավալելու նպատակով Կոստանդնուպոլիսը Իրան ուղարկեց Միասնության և առաջադիմության կուսակցության Ատրպատականի և Արևելյան Կովկասի գործերի գլխավոր հրահանգիչ Օմեր Նաջի բեյին, որն ուներ հետախուզական աշխատանքների մեծ փորձ:

Պատերազմի նախօրյակին ռազմական առումով Իրանը թույլ պետություն էր: Նրա զինված ուժերը ո՛չ իրենց թվաքանակով և ո՛չ էլ մարտունակությամբ համեմատության մեջ չէին կարող դրվել հարևան Ռուսաստանի և Թուրքիայի հետ: Իրանում համեմատաբար մարտունակ զորամասեր էին հյուսիսում 8 հազար հոգուց բաղկացած կազակական գումարտակը և հարավում ժանդարմական զորամասերը (մոտ 7 հազար մարդ)՝ շվեդական սպաների հրամանատարությամբ: Մնացած զորքերը բաղկացած էին աշխարհազորից և քոչվորական ցեղերի հեծելազորային զորամասերից, որոնք աչքի չէին ընկնում ո՛չ իրենց մարտունակությամբ և ո՛չ էլ կարգապահությամբ:

Անշուշտ, իրանական կառավարությունը գիտակցում էր, որ ռուսական զորքերի ներկայությունը Ատրպատականում ստեղծում է պայթյունավտանգ իրադրություն: Այդ պատճառով շահական իշխանությունները բազմիցս դիմումներ էին կատարում ռուսական կառավարությանը՝ պահանջելով զորքերը դուրս բերել Իրանի տարածքից: Սակայն ցարական իշխանությունները նույնպիսի համառությամբ մերժում էին այդ պահանջը:

2. ԻՐԱՆԻ ՉԵՂՈՔՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄԸ ՊԱՏԵՐԱԶՄՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՎԱԼՈՒՄԸ ԵՐԿՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ

1914 թ. հուլիսի 22–ին հանդիսավոր պայմաններում տեղի ունեցավ Ահմադ շահի թագադրման արարողությունը, որի հետևանքով իր ավարտին հասավ Նասիր ալ–Մուլքի խնամակալական (ռեգենտի) կառավարման շրջանը: Սակայն քիչ ժամանակ անց իրանական պետությանը սպասում էր նոր փորձություն:

1914 թ. օգոստոսի 1–ին պայթեց Առաջին աշխարհամարտը: Միանգամայն ակնհայտ էր, որ այն չէր կարող շրջանցել Իրանը, մանավանդ որ պանթյուրքիզմի գաղափարներով տարված երիտթուրքերը երազում էին ստեղծել «Մեծ Թուրքիա»՝ մի նոր համաշխարհային պետություն, որի սահմանները ծավալվելու էին Ասիայի արևմտյան մասից ու Աֆրիկայից մինչև Չինաստան:

Օսմանյան կայսրության և Գերմանիայի կառավարող շրջանները Իրանին տալիս էին առանձնահատուկ նշանակություն: Պատահական չէ, որ արդեն 1914 թ.

սեպտեմբերից սկսած՝ Օսմանյան կայսրությունը Ատրպատականում ու Իրանական Քրդստանում թուրք–քրդական ջոկատների օգնությամբ հրահրեց «Փոքր պատերազմ»: Ապագա մեծ պատերազմում «անբարեհույս տարրերից» իրենց թիկունքն ամրապնդելու նպատակով թուրքերի կողմից կազմակերպված «չեթայական» խմբերն ու քրդական «Համիդիե գնդերը» սկսեցին դաժանորեն դատաստան տեսնել թուրք–իրանական սահմանամերձ շրջանների քրիստոնյա բնակչության՝ հայերի և ասորիների հետ:

Թեև այսպես կոչված «Ադրբեջանական ճակատը» ամրապնդելու նպատակով Ռուսաստանը ձեռնամուխ եղավ մի շարք ակտիվ միջոցառումների (ձերբակալվեցին թուրքերի և գերմանացիների հետ կապված մի շարք իրանական ավատատերեր, ռուսական կողմնորոշում ունեցող տեղական բնակչության, հատկապես հայերին ու ասորիներին, բաժանվեց որոշ քանակությամբ զենք և այլն), սակայն միանգամայն ակնհայտ էր, որ ուշացումով կատարված այդ միջոցառումները բավարար չէին Իրանը թուրքական ներխուժումից պաշտպանելու համար:

Ռուսաստանին լրջորեն անհանգստացնում էր, որ Մոսթոուֆի–օլ–Մամալեքի կառավարությունը, որը կազմվել էր 1914 թ. օգոստոսին, կայուն դիրք չէր գրավում պատերազմող խմբավորումների նկատմամբ, վարում էր «անդունդի եզրին» հավասարակշռելու քաղաքականություն, իսկ մեջլիսում «դեմոկրատները», որոնք ունեին զգալի մեծամասնություն, ըստ էության կապված էին գերմանացիների հետ:

Երիտթուրքական կառավարությունը եռանդուն ջանքեր էր գործադրում Իրանի հետ դաշնակցային պայմանագիր («տարածաշրջանային մուսուլման դաշինք») կնքելու ուղղությամբ: Այդ նպատակով 1914 թ. հոկտեմբերին Կոստանդնուպոլսում բանակցություններ սկսվեցին մի կողմից՝ մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշայի, Էնվերի ու Թալեաթի, իսկ մյուս կողմից՝ Կոստանդնուպոլսում իրանական դեսպան Միրզա Մահմուդ խանի միջև: Սակայն այդ բանակցությունները դրական արդյունքներ չտվեցին, որովհետև շահը խոհեմորեն գերադասեց ձեռնպահ մնալ Օսմանյան կայսրության հետ դաշնակցելուց և կենտրոնական պետությունների խմբավորման կազմում պատերազմի մեջ ներգրավվելուց:

Իրանական տարածքում Օսմանյան կայսրությունը Ռուսաստանի դեմ ռազմական գործողություններ սկսեց փաստորեն 1914 թ. հոկտեմբերի 12–ից, այսինքն՝ մինչև գերմանա–թուրքական նավատորմի՝ ռուսական սևծովյան նավատորմի վրա հարձակվելը (հոկտեմբերի 29–ին) ու Ռուսաստանին պատերազմ հայտարարելը: Այսպիսով՝ ըստ էության, հենց Իրանում և ոչ թե Սև ծովում որոտացին Մերձավոր Արևելքում համաշխարհային պատերազմի առաջին կրակոցները:

1914 թ. նոյեմբերի 2–ին, այսինքն՝ ճիշտ այն օրը, երբ Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Օսմանյան կայսրությանը, Իրանի վարչապետ Մոսթոուֆի օլ–Մամալեքը հրապարակեց շահի հրամանագիրը (ֆերման) պատերազմում Իրանի կողմից չեզոքություն պահպանելու վերաբերյալ: Սակայն Իրանի բարձրագույն շիական հոգևորականությունը համաձայն չէր շահի այդ դիրքորոշման հետ, ուստի 1914 թ. նոյեմբերի 13–ին հրապարակեց ֆեթվա այն մասին, որ Իրանը պետք է հրա-

ժարվի չեզոքության քաղաքականությունից և համագործակցի Գերմանիայի ու նրա դաշնակիցների հետ: Ֆեթվայում ասվում էր, որ Գերմանիան իր կազմավորման օրվանից սկսած երբևիցե ոտնձգություն չի կատարել որևէ իսլամական երկրի նկատմամբ և երբեք պատերազմի մեջ չի մտել իսլամադավան որևէ երկրի հետ:

Ֆեթվայում այնուհետև ասվում էր, որ Իրանի կողմից չեզոքության պահպանումը հնարավոր չէ, որովհետև չի կարելի երկու պատերազմող կողմերի հետ էլ բարեկամ լինել, որ չեզոքությունը կատարելապես անօգուտ է իսլամի համար: «Իմացե՛ք,— շեշտվում էր ֆեթվայում,— որ եթե մենք օգնենք Թուրքիային և հարձակվենք հավատի թշնամիների վրա, մենք կհասնենք նրան, որ կբավարարենք աստծո կամքը, կամրապնդենք մեր ինքնությունը, կազատվենք այլադավանների իշխանությունից, կընդարձակենք մեր պետության սահմանները»:

Մինչդեռ Ռուսաստանին անհրաժեշտ էր ամեն գնով պահպանել պատերազմում Իրանի չեզոք դիրքը: Ուստի Ռուսաստանի արտաքին գերատեսչության ղեկավար Ս. Դ. Սազոնովը Լոնդոնում հարց բաձրացրեց այն մասին, որ անհրաժեշտ է հասկացնել շահական կառավարությանը, որ Թուրքիայի հետ ռազմական բախման դեպքում Ռուսաստանին և Անգլիային աջակցություն ցույց տալու դիմաց այս երկու պետությունները կերաշխավորեն Իրանի տարածքային ամբողջականությունը և բացի այդ՝ նրան կհանձնեն շիաների սրբազան քաղաքներ Քարբալան և Նաջաֆը: Սազոնովի կարծիքով միաժամանակ անհրաժեշտ էր խստորեն նախազգուշացնել շահական կառավարությանը, որ հակառակ դեպքում Իրանն իր վրա կհարուցի Ռուսաստանի ու Անգլիայի զայրույթը:

1914 թ. նոյեմբերի 21–ին օսմանյան բանակը Արևմտյան Ատրպատականի տարածքում լայնամասշտաբ ռազմական գործողություններ ծավալեց ռուսական «Ադրբեջանական ջոկատ» կոչված զորախմբի դեմ: Թուրքական բանակի հետ սերտ համագործակցությամբ ռազմական գործողություններին մասնակցում էին նաև քրդական անկանոն «Համիդիե գնդերը», որոնք զարհուրելի ասպատակ էին սփռում սահմանամերձ շրջաններում՝ կողոպուտի ենթարկելով խաղաղ բնակչությանը և ավերելով քրիստոնյաների՝ հայերի և ասորիների բնակավայրերը:

Վարչապետ Մոսթոուֆի–օլ–Մամալեքի կառավարությունը ոչ միայն չփորձեց դիմադրություն կազմակերպել թուրքական արշավող բանակի դեմ, այլև խստիվ ցուցում տվեց պատժել բոլոր նրանց, ովքեր կդիմադրեն թուրքերին: Միաժամանակ նա թուրքական կառավարությանը դիմեց ձևական բողոքի նոտայով, որ Օսմանյան կայսրությունը խախտել է Իրանի հայտարարած չեզոքությունը, որին թուրքերը պատասխանեցին, որ իրենք մտադրություն չունեն ոտնձգություն կատարել իրանական տարածքների նկատմամբ, և որ իրենք զորքեր են մտցրել Իրան բացառապես ռուսներին այնտեղից վռնդելու նպատակով:

Իրանական իշխանությունների իրականացրած քաղաքականության հետևանքով պատերազմի սկզբնական շրջանում Ատրպատականում ռուսական զորքերի վիճակը (որոնց թիվը կազմում էր ընդամենը 13 հազար) դարձավ ուղղակի օրհասական: Արդեն 1914 թ. նոյեմբերի վերջին օսմանյան զորքերին հաջողվել էր գրավել

Ատրպատականի և Իրանական Քրդստանի արևմտյան շրջանները (այդ թվում նաև Խոյ, Ուրմիա և այլ քաղաքներ): Հայերից և ասորիներից կազմակերպված կամավորական ջոկատները ռուսական զորքերի հետ սերտ համագործակցությամբ կատաղի մարտեր էին մղում թուրքական մեծաթիվ բանակի դեմ՝ փորձելով կասեցնել նրա ներխուժումը Հարավային Կովկաս:

Երիտթուրքերի վարչակարգը մշակել էր լայնահուն ծրագրեր ողջ տարածաշրջանի վերաբերյալ, որոնց մեջ կենտրոնական տեղերից մեկը գրավում էր Իրանը: Նախ խնդիր էր դրված տիրանալու գերակշիռ թյուրքալեզու բնակչություն ունեցող Հյուսիսային Իրանին, այնուհետև միավորելով Ատրպատականը և «ռուսական Ադրբեջանը»՝ ստեղծելու առանձին թյուրքական պետություն Օսմանյան կայսրության հովանու ներքո: Բացի այդ՝ Ատրպատականը ծառայելու էր որպես հենակետ Բաքվի նավթաբեր շրջանը ներխուժելու համար: Թուրքիան ծրագրել էր նաև Թավրիզի վրայով Դաղստան ուղարկել մեկ դիվիզիա՝ Կովկասի մուսուլմաններին ոտքի հանելու և թիկունքից ռուսական զորքերին հարվածելու համար: Նախատեսված էր նաև Ռուսաստանի դեմ պայքարի մեջ ներգրավել Հյուսիսային Իրանին հարող Թուրքեստանի և առհասարակ Անդրկասպյան նահանգի թուրքմեն բնակչությանը, որն իր լեզվով ու ծագմամբ մոտ էր անատոլիական թուրքերին:

Ինչ վերաբերում է Հարավային Իրանին, որի նավթաբեր շրջանները գայթակղիչ խայծ էին Թուրքիայի և Գերմանիայի համար, ապա այն ևս, ըստ երիտթուրքերի ծրագրերի, պետք է դառնար առանձին պետություն: Հետագայում հյուսիսիրանական և հարավիրանական այդ երկու պետությունները միավորվելով կարող էին կազմել ունիա, որպեսզի Առաջավոր Ասիայի պետությունների հետ համատեղ մտնեին թուրանական միավորումների՝ «Մեծ Թուրանի» կազմի մեջ: Օսմանյան կայսրության ռազմական մինիստր Էնվեր փաշայի օպերատիվ պլանում նախատեսված էր նաև Իրանի տարածքը օգտագործել որպես հենակետ դեպի Կենտրոնական Ասիա, Աֆղանստան և Հնդկաստան ներխուժելու համար: Առհասարակ երիտթուրքերը հույս ունեին պանիսլամիզմի գաղափարախոսության օգնությամբ ողջ մուսուլման աշխարհը դնել շարժման մեջ:

Այս լայնահուն ծրագրերն իրագործելիս Թուրքիան հույս ուներ ձեռք բերել Իրանի դաշնակցությունը: 1914 թ. նոյեմբերի 15–ին ռազմական նախարար Էնվեր փաշայի նախաձեռնությամբ Կոստանդնուպոլսում տեղի ունեցավ խորհրդակցություն, որին մասնակցում էին սադրազամը, Թուրքիայում իրանական դեսպանը և Էնվերը: Վերջինս աշխատում էր համոզել իրանական դեսպանին, որ Իրանի պետական շահերի տեսակետից ձեռնտու է անցնել Թուրքիայի և Գերմանիայի կողմը և մտնել պատերազմի մեջ Անտանտի պետությունների դեմ ռուսական և անգլիական ազդեցությունից ազատվելու համար:

Մտավախություն ունենալով, որ թուրքական զորքերը կներխուժեն Պարսից ծոցի գոտին, անգլիացիները 1914 թ. հոկտեմբերին գրավեցին Աբադան կղզին, Շատտէլ–Արաբ գետի ափամերձ տարածքը, իսկ այնուհետև նաև Բանդար–Բուշեհր նավահանգիստը և Բասրա քաղաքը:

Այսպիսով՝ չնայած շահական կառավարության կողմից հայտարարված չեզոքության, Իրանի տարածքը վերածվեց երկու թշնամական խմբավորում ներկայացնող պետությունների ռազմական գործողությունների թատերաբեմի: Անտարակույս միջազգային հարաբերություններում դա Իրանի կախյալ նոր դրսևորում էր: Ընդ որում, Կոստանդնուպոլիսը և Բեռլինը նախատեսում էին Իրանը լրիվ իրենց ազդեցությանը ենթարկելուց հետո ստիպել նրան Եռյակ դաշինքի պետությունների կողմից մտնել պատերազմի մեջ:

1915 թ. հունվարի 14–ին թուրքական զորքերը մուտք գործեցին Թավրիզ: Ատրպատականի նահանգապետ Սարդար Ռաշիդը և այլ բարձրաստիճան անձինք ցնծությամբ դիմավորեցին թուրքերին: Քաղաքի վրա բարձրացվեց թուրքական դրոշը: Թավրիզի գրավումը զավթիչները փորձում էին ներկայացնել որպես օսմանյան բանակի ազատագրական գործողություն՝ Իրանը օտարերկրյա բռնազավթումից փրկելու մի առաքելություն:

Ատրպատականի օսմանյան ռազմակալումն ուղեկցվում էր տեղական ազգաբնակչության, հատկապես հայերի և ասորիների ոչնչացումով ու կողոպուտով: Նույնիսկ Թեհրանում թուրքական դեսպանն աշխատում էր հրահրել հայկական ջարդեր:

Թուրքերին, սակայն, չհաջողվեց Թավրիզը երկար պահել իրենց ձեռքերում: Անցնելով հակահարձակման՝ 1915 թ. հունվարի 31–ին ռուսական զորքերը վերագրավեցին այն: Զարգացնելով իրենց հաջողությունը՝ մայիսին նրանք թուրքերին լրիվ դուրս մղեցին Ուրմիա լճի շրջակայքից: Այդ մարտերում ռուսական զորքերին եռանդուն աջակցում էին հայկական և ասորական կամավորական ջոկատները: Մասնավորապես նրանք կարևոր դեր խաղացին Դիլմանի ճակատամարտում, որտեղ Անդրանիկ Օզանյանի հրամանատարությամբ գործող հայկական կամավորական զորամասը ռուս կազակների հետ սերտ համագործակցությամբ կասեցրեց թուրքերի շարժումը դեպի հյուսիս՝ Հարավային Կովկաս՝ գրավելով Ղոթուր քաղաքի և Խանասորի կիրճը:

1914 թ. վերջին և 1915 թ. սկզբին Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սազոնովի և նրա անգլիացի պաշտոնակից Գրեյի միջև տեղի ունեցած գաղտնի բանակցությունների հետևանքով 1915 թ. մարտի 20–ին Ռուսաստանի և Անգլիայի միջև կնքվեց քաղաքական համաձայնագիր «իրանական գործերի» վերաբերյալ: 1907 թ. անգլո–ռուսական համաձայնագրով նախատեսված չեզոք գոտին համարյա ամբողջությամբ մտնելու էր բրիտանական ազդեցության գոտու մեջ: Փոխարենը Անգլիան Ռուսաստանին խոստանում էր սևծովյան նեղուցները՝ Բոսֆորն ու Դարդանելը, ինչպես նաև Կոստանդնուպոլիսը:

Այդ համաձայնագիրը Թեհրանում գնահատվեց որպես հերթական «նողկալի իմպերիալիստական գործարք»: Այն առաջացրեց զայրույթի փոթորիկ՝ ավելի ուժեղացնելով առանց այն էլ լեռնացած հակառուսական ու հակաանգլիական տրամադրությունները: Ավատական ազնվականության աչքի ընկնող մի շարք ներկայացուցիչներ, որոնք հին կապերի մեջ էին եղել Անգլիայի և Ռուսաստանի հետ, որոշեցին

կտրուկ փոխել իրենց քաղաքական կողմնորոշումը և մերձենալ Գերմանիայի և օսմանյան Թուրքիայի հետ: Այսպես՝ Այն–օդ–Դոուլեն, որը 1915 թ. ապրիլին գլխավորել էր իրանական կառավարությունը, վերոհիշյալ ուղղությամբ սկսեց կատարել գործնական քայլեր: Միաժամանակ նա 1915 թ. մայիսի 27–ին նոտայով դիմեց Ռուսաստանին և Անգլիային՝ պահանջելով իրենց ռազմական միավորումները դուրս բերել Իրանի տարածքից: Նոտայում նաև կետեր էին պարունակվում այն մասին, որ պետք է վերացվի կապիտուլյացիոն ռեժիմը և դադարեցվի մալիաթի (հողային հարկի) անօրինական գանձումները Ատրպատականում ռուս աստիճանավորների կողմից: Սակայն ռուսական իշխանությունները լրջորեն չվերաբերվեցին այդ նոտային, իսկ շատ չանցած Այն–օդ–Դոուլեն հարկադրված էր հրաժարական տալ:

Օգտվելով երկրում վերելք ապրող հակառուսական տրամադրություններից՝ Թեհրանում գերմանական ու թուրքական դիվանագետներին հաջողվեց իրենց կողմը շեղել Ահմադ շահ Ղաջարին: Իսկ վարչապետ Մոսթոուֆի–օլ–Մամալեքը 1915 թ. նոյեմբերին պաշտոնապես տեղեկացրեց Թեհրանում գերմանական դեսպանորդ Ռայսին, որ իր կառավարությունը պատրաստ է կնքելու դաշինքի վերաբերյալ գերմանա–իրանական պայմանագիր՝ դա համարելով Իրանի պետական անվտանգությունն ու տարածքային ամբողջականությունը երաշխավորող միակ ճանապարհը: Բեռլինը, բնականաբար, անմիջապես տվեց իր համաձայնությունը՝ պայմանով, որ Իրանը մտնի պատերազմի մեջ Գերմանիայի և նրա դաշնակիցների կողմից:

1915 թ. Գերմանիայի և Թուրքիայի հատուկ ծառայությունների կողմից իրականացված գործողությունները Անտանտի շահերի տեսակետից ընդունել էին սպառնալից բնույթ: Իրանի հարավարևմտյան և կենտրոնական նահանգներում ինչպես ցեղերը (օրինակ՝ բախթիարական, թանգեսթանյան, դաշղայի և այլն), այնպես էլ նստակյաց բնակչությունը զինված ելույթներ էին ունենում անգլիացիների դեմ: Բացառություն էր կազմում միայն Պարսից ծոցի առափնյա շրջանի՝ Խուզիսթան նահանգի, արաբ բնակչության մի մասը, որը Անգլիայի վաղեմի դաշնակից շեյխ Խազալի ազդեցության տակ էր: Առհասարակ երկրում թևածում էր Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի ճնշող ազդեցությունից ազատվելու գաղափարը: Այդ տրամադրություններն է՛լ ավելի բորբոքելու նպատակով Թուրքիան և Գերմանիան լայնորեն օգտագործում էին համիսլամականության (պանիսլամիզմի) քարոզչությունը՝ նպատակ ունենալով իսլամի դրոշի ներքո մուսուլմանական զանգվածներին ոտքի հանել «անհավատների»՝ Ռուսաստանի և Անգլիայի դեմ:

Անտանտի պետությունների մայրաքաղաքներում մտահոգություն կար, որ սրբազան պատերազմի՝ ջիհադի կոչը կարող է իրենց դեմ հանել նաև Իրանի հարևան երկրների՝ Աֆղանստանի և Հնդկաստանի միլիոնավոր մուսուլման զանգվածներին:

1915 թ. Ֆարս նահանգի Շիրազ քաղաքում հակաբրիտանական շարժման մասնակիցների կողմից կազմակերպվեց «Իրանի անկախության պաշտպանության կոմիտե», որի ջանքերով Իրանի հարավում սկսվեց հակաանգլիական ապստամբու-

թյուն: Սպահանում բախթիարական ցեղերի ու մոջահեդների ջոկատները ջախջախեցին անգլիական Շահնշահական բանկի բաժանմունքը:

Այդ իրադարձություններից անհանգստացած Ռուսաստանը Իրանում գործող իր առաջապահ զորքերին հրամայեց շարժվել Թեհրանի ուղղությամբ: Խուճապի մատնված իրանական քաղաքական գործիչների մի մեծ խումբ (մեջլիսի պատգամավորներ, աստիճանավորներ և այլն) սկսեցին լքել մայրաքաղաքը: Գերմանական դեսպանության ղեկավարները համոզում էին Ահմեդ շահին, որ նա ևս իր մերձավորների հետ հեռանա Թեհրանից: Լուրեր տարածվեցին, որ երկրի մայրաքաղաքը տեղափոխվելու է Սպահան:

Սակայն Անգլիայի և Ռուսաստանի ճնշման ներքո շահը հրաժարվեց տեղափոխվել Սպահան: 1915 թ. նոյեմբերին նա պաշտոնանկ արեց վարչապետ Մոսթոուֆի–օլ–Մամալեքին և ցրեց գերմանասեր կառավարությունը: Ցրվեց նաև երրորդ գումարման մեջլիսը: Պատգամավորների մի մասը և պաշտոնանկ արված կառավարության անդամները, արքայազները, ազնվականության ներկայացուցիչները, բազմաթիվ պաշտոնյաներ, վաճառականներ և այլն հայտնի քաղաքական դեմքեր Մուդարիսի և Նիզամ ալ–Սալթանե Մաֆիի գլխավորությամբ գերմանական և ավստրիական դեսպանների ու թուրքական դեսպանատան ռազմական կցորդի ուղեկցությամբ 1915 թ. վերջին փախան Ղում քաղաք, որտեղ Դեմոկրատական կուսակցության անդամների կողմից ստեղծվեց «Ժամանակավոր ազգային կառավարություն»: Իսկ Թեհրանում ձևավորվեց նոր կառավարություն, որը հայտարարեց, որ Ռուսաստանի և Անգլիայի նկատմամբ վարելու է բարյացակամ քաղաքականություն: Իր հերթին շահը հավաստիացրեց ռուսական և անգլիական դեսպաններին, որ ինքը թույլ չի տա, որ իրեն ներգրավեն Ռուսաստանի և Անգլիայի դեմ արկածախնդրությունների մեջ:

1915 թ. դեկտեմբերի 9–ին ռուսական զորքերը գրավեցին Ղումը: «Ժամանակավոր կառավարությունը» փախավ Քերմանշահ, որտեղ կազմակերպվեց այսպես կոչված «Ազգային կառավարություն» Լուրեսթանի (Փոշթքուհի) նահանգապետ Նեզամ օս–Սալթանեի գլխավորությամբ: Ձևականորեն այն գոյություն ունեցավ մինչև պատերազմի վերջը:

1916 թ. հունվարի 15–ին գեներալ Բարաթովի կորպուսի զորամասերը թուրքական զորքերին դուրս մղեցին Համադանից և շարժվելով Քերմանշահի ուղղությամբ՝ 1916 թ. փետրվարի 13–ին գրավեցին այն: «Ազգային կառավարությունը» փորձեց դիմադրություն ցույց տալ, բայց հաջողություն չունեցավ: Նրա անդամները փախան Թուրքիա կամ թաքնվեցին հեռավոր գյուղերում:

Փոխադարձ պայմանավորվածության համաձայն՝ ռուսական և անգլիական զորքերի հրամանատարությունը պետք է Իրանի հյուսիսից հարավ ստեղծեր ռուս–անգլիական զինված ուժերից կազմված պատնեշ՝ արգելակելու թուրքական զորքերի հետագա առաջխաղացման հնարավորությունը դեպի արևելք: Այդ բանը խափանելու համար օսմանցիները Ալի Իհսան փաշայի հրամանատարությամբ հարձակում կազմակերպեցին Քերմանշահ Համադանի ուղղությամբ: Նրանց հաջողվեց

սկզբում գրավել Ղասրե Շիրինը, իսկ ապա նաև Քերմանշահը (1916 թ. հուլիսի 1–ին)։ Այդ մարտերում թուրքերին մեծ օգնություն ցուցաբերեց քրդական սենջարի ցեղը։ 1916 թ. օգոստոսին թուրքերը գրավեցին նաև Համադանը։

Այսպիսով՝ ամրապնդվելով Քերմանշահ–Համադան գծի վրա՝ օսմանցիները խանգարեցին ռուսական և անգլիական զորքերի հանդիպմանը։ Թուրքական բանակի այդ մասնակի հաջողությունը հնարավորություն տվեց Նեզամ–էս–Սալթանեին և նրա «Ազգային կառավարությանը» կրկին հայտնվելու Քերմանշահի շրջանում։ Այնտեղ թուրքերի նախաձեռնությամբ կազմակերպվեց «Էթթեհադ–ե Էսլամ» («Իսլամի միասնության») պանիսլամական կոմիտեն, որը կոչ էր անում սրբազան պատերազմի դուրս գալու Ռուսաստանի դեմ։

Ինչ վերաբերում է Իրանի հարավային շրջաններին, ապա այստեղ անգլիացիների դեմ ապստամբական շարժումները շարունակում էին Թանգեսթանի և Դաշթիսթանի թուրքալեզու ցեղերի (բահարլու, թանգեսթանլու, դաշթիսթանլու, դաշղայի և այլն), ինչպես նաև իրանալեզու բախթիարական ցեղերի կողմից։ Սպահանում գերմանացիների հենարանն էր բախթիարական ցեղի խոշոր խաներից մեկը՝ Սամսամ–օս–Սալթանեն։ Առհասարակ խոշոր բախթիարական խաները, որոնք, որպես կանոն, Անգլո–պարսկական նավթային ընկերության բաժնետերեր էին, աջակցում էին անգլիացիներին, մինչդեռ բազմաթիվ մանր խաներ անցան գերմանացիների կողմը։

1915 թ. մարտին բախթիարական ցեղերը ավերեցին Անգլո–պարսկական նավթային ընկերության նավթամուղի մի խոշոր հատված։ Անգլիացիների դեմ ապստամբած դաշղայի ցեղին գերմանամետ շվեդական ժանդարմական զորամասերի աջակցությամբ նույնիսկ հաջողվեց գրավել Շիրազ քաղաքը։ Գերմանամետ ուժերը գրավեցին նաև Քերմանը, Յազդը և հարավարևելյան Իրանի մի շարք քաղաքներ։

Արդեն 1915 թ. վերջին Իրանի ողջ հարավը, բացառությամբ միայն Պարսից ծոցի առափնյա շրջանի մի նեղ շերտի, գերմանա–թուրքական հսկողության տակ էր։ Անգլիացիների համար ստեղծվել էր չափազանց ծանր վիճակ։ Ուստի բրիտանական կառավարությունը որոշեց ամբողջապես ռազմակալման ենթարկել ռազմավարական և տնտեսական կարևոր նշանակություն ունեցող այդ շրջանները, որոնք մտնում էին իր ազդեցության գոտու մեջ։ Այդ նպատակով 1916 թ. սկզբին անգլիացիները Հարավային Իրան ուղարկեցին մի հատուկ ռազմական ստորաբաժանում գեներալ Պերսի Սայքսի գլխավորությամբ։ Բացի իր հիմնական խնդրից՝ հարավարևելյան Իրանի ռազմակալումից և այդ վայրերում գերմանական գործակալության վերացումից Սայքսը հանձնարարություն ուներ նաև վերացնելու շվեդական ժանդարմերիայի զորամասերը և նրանց փոխարեն ստեղծելու նոր զինվորական ստորաբաժանումներ անգլիական սպաների գլխավորությամբ։ Ըստ այնմ Սայքսը սկսեց տեղական բնակչությունից հավաքագրել ու կազմակերպել ջոկատներ, որոնք կոչվեցին «Հարավ–պարսկական հրաձիգների» և «Սեյիստանյան հրաձիգների» կորպուս։ Այդ զորամասերի օգնությամբ անգլիացիները աստիճանաբար ռազմակալման ենթարկեցին Իրանի ողջ հարավային, հարավարևելյան և հարավարևմտյան շրջանները։ Մասնավորապես 1916 թ. ընթացքում Սայքսին հաջողվեց ռազ-

մակալման ենթարկել Մեքրանը, Քերմանը, Շիրազը, Յեզդը և այլ քաղաքներ: Անգլիացիները վերացրին նաև շվեդական սպաների կողմից ղեկավարվող ժանդարմական ջոկատները և նրանց փոխարեն ստեղծեցին նոր զինվորական ստորաբաժանումներ:

Հնդկաստանից ուղարկված զորքերի և Իրանում կազմակերպված զորամասերի միջոցով ստեղծվեց այսպես կոչված «Արևելյան պարսկական պատնեշ», որի խնդիրն էր թույլ չտալ, որ գերմանական և թուրքական գործակալները թափանցեն Հնդկաստան և Աֆղանստան: 1916 թ. ապրիլի 1–ին գեներալ Բարաթովի ռուսական կորպուսը գրավեց Սպահանը, իսկ սեպտեմբերին այդ քաղաքում շփման մեջ մտան Պերսի Սայքսի «Հարավ–պարսկական հրաձիգներն» ու անգլո–հնդկական կանոնավոր զորքերը գեներալ Բարաթովի կորպուսի հետ: Այսպիսով՝ «Արևելյան պարսկական պատնեշը» ամբողջացավ:

1917 թ. սկզբներին Իրանի հարավ–արևելքում հակաանգլիական շարժումների կենտրոնների մեծ մասը վերացված էր: Դիմադրությունը շարունակում էին միայն մի շարք քոչվորական ցեղեր, հատկապես ղաշղայի, խամսե և մի շարք այլ ցեղեր ու ցեղային համադաշնություններ:

Արդեն 1917 թ. սկզբին Իրանի ողջ տարածքը ռազմակալման էր ենթարկված օտարերկրյա զորքերի կողմից: Հյուսիսային, հյուսիսարևելյան և կենտրոնական շրջանները ընդհուպ մինչև Սպահան գրավված էին ռուսների կողմից, հարավային և հարավարևելյան նահանգները՝ անգլիացիների կողմից, իսկ արևմտյան որոշ շրջաններ շարունակում էին ռազմակալման մեջ մնալ Թուրքիայի կողմից: Շահի և նրա կառավարության իշխանությունը զուտ ձևական բնույթ ուներ: Փաստորեն Իրանում բոլոր գործերը տնօրինում էին ցարական և անգլիական դեսպանորդներն ու գեներալները: Բնականաբար, դա չէր կարող չառաջացնել իրանական ժողովրդի դժգոհությունը: Չէր հանգչում հակազդեցությունը նաև երկրի ռազմակալման ենթարկած օտարերկրյա պետությունների նկատմամբ: Ստեղծվել էր սուր քաղաքական ճգնաժամ, որի վկայությունը կառավարությունների հաճախակի փոփոխություններն էին: Իրանի համարյա բոլոր շրջաններում տեղի էին ունենում հակառուսական և հակաանգլիական շարժումներ, որոնք առանձնակի լայն տարածում ստացան երկրի հյուսիսում՝ Կասպից ծովի հարակից Գիլան (Գիլյան) նահանգում, որտեղ ծավալվեց այսպես կոչված «Ջենգելիների» («անտառաբնակների») հայդուկային–պարտիզանական շարժումը՝ Միրզա Քուչեք խանի գլխավորությամբ: Վերջինս աշխարհամարտը սկսվելուց անմիջապես հետո Գիլանում կազմակերպել էր ջոկատներ ցարական Ռուսաստանի օկուպացիոն զորքերի դեմ պայքարելու համար: Ջենգելիների հիմնական հենակետերը Գիլանի խիտ և դժվարանցանելի անտառների շրջանում գտնվող Ֆումեն քաղաքն էր՝ իր շրջակա տարածքներով: Ջենգելիները իրենց պայքարի հիմնական նպատակ էին հռչակել Իրանի անկախությունը: Հաճախ նրանք իրենց գաղափարական սկզբունքները պարուրում էին իսլամական կրոնի քողով: Ազգայնականորեն տրամադրված գիլանական վաճառականնե-

որը, կալվածատերերը, գյուղացիությունը, արհեստավորները և քաղաքային բնակչությունը աջակցություն էր ցուցաբերում ջենգելիներին:

1917–1918 թթ. նրանք կարողացել էին իրենց հսկողությունը սահմանել ողջ Գիլանի նահանգի և նրա հարակից շրջանների, ինչպես նաև Մազանդարանի արևմտյան մասի Թալիշի գավառի վրա: Ջենգելիներին ունեին նաև իրենց քաղաքական կազմակերպությունը, որը կոչվում էր «Էթթեհադ–ե Էսլամ» («Իսլամի միասնություն»): Թեև դա անվամբ կրոնական–պանիսլամական էր, բայց իր էությամբ ու բովանդակությամբ ազգայնական գավառների հետամուտ կազմակերպություն էր: «Էթթեհադ–ե Էսլամի» ծրագրի հիմնական կետերն էին՝ հասնել Իրանի կատարյալ անկախությանը, վերականգնել սահմանադրությունը, ստեղծել ազգային բանակ, վերացնել կապիտուլյացիոն ռեժիմը, իսլամի դրոշի ներքո պայքար մղել օտարերկրյա ամեն տեսակի նվաճողների դեմ՝ հանուն երկրի ազատության ու անկախության, վերադարձ կատարել դեպի իսլամի նախնական «դեմոկրատական սկզբունքներ», որի տակ հասկացվում էր «տասանորդի» գանձումը որպես հողային հարկ: Ջենգելիների «Էթթեհադ–ե Էսլամը» սերտ կապերի մեջ էր Թեհրանում գործող նույնական կազմակերպության հետ և ստանում էր նրա նյութական ու բարոյական աջակցությունը:

Ջենգելիները սերտ կապերի մեջ էին նաև Իրանում գործող թուրքական գործակալության հետ: Վերջինս ջենգելիների միջոցով համագործակցում էր Բաքվի մուսավաթականների հետ: Թուրք, գերմանացի և ավստրիացի սպաները ոչ միայն մարզում էին ջենգելիների ջոկատները, նրանց սովորեցնում լեռնային պարտիզանական պատերազմ մղելու ձևերը, այլև Գիլանի «մուսուլման եղբայրներին» մատակարարում էին զենք, զինամթերք և ոսկի: Ընդ որում՝ համագործակցելով ջենգելիների հետ՝ թուրքական գործակալությունը փայփայում էր սեփական նպատակներ: Կոստանդնուպոլիսը ծրագրել էր Ատրպատականը անջատել իրանական պետության կազմից և հետագայում այն միավորելով «ռուսական Ադրբեջանի» հետ՝ ստեղծել «նոր թուրքական պետություն»:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ պանթյուրքիզմը հայությանը դիտում էր որպես թշնամի տարր իր նվաճողական գաղափարները իրականացնելու ճանապարհին, ջենգելիների մոտ ռազմական հրահանգների դերում հանդես եկող թուրք սպաները 1918 թ. փորձում էին կազմակերպել Գիլանի նահանգի հայ բնակչության կոտորած: Սակայն ջենգելիները ոչ միայն վճռականորեն կանխեցին այն, այլև կտրուկ միջոցներ ձեռնարկեցին գիլանահայությանը իսլամական մոլեռանդներից պաշտպանելու համար: Այս փաստը, անշուշտ, վկայում է այն մասին, որ ջենգելիները բնավ կույր գործիք չէին թուրքական գործակալության ձեռքին:

Պատերազմը ծանր հարված հասցրեց Իրանի տնտեսությանը, որը հայտնվեց խոր ճգնաժամի մեջ: Երկրի տարբեր մասերի միջև խզվել էին տնտեսական կապերը, բազմաթիվ քաղաքներ ու գյուղեր քանդվել ու ավերվել էին: Ռոզման համակարգը շարքից դուրս էր եկել: Ռուսական, անգլիական և թուրքական զորքերը բնակչությունից բռնագրավում էին սննդամթերքն ու անասունները: Ցանքատարա-

ծությունները կրճատվեցին, և անասունների գլխաքանակը կտրուկ նվազեց: 1917 թ. ամռանը սարսափելի երաշտի ու ավերածության հետևանքով սկսվեց սով, որին հետևեցին համաճարակները: Մի շարք շրջաններում ոչնչացավ բնակչության 30–ից մինչև 50 տոկոսը: Առանձին վայրեր վերածվեցին անապատի: Քաղաքներում տեղի էին ունենում քաղցած ամբոխի բունտեր: Անիշխանությունը հասավ աննախընթաց չափերի: Ավազակախմբերը կողոպտում էին առևտրական քարավանները և ահաբեկման ենթարկում բնակչությանը: Տեղական իշխանությունները ոչ միայն չէին հետապնդում նրանց, այլև աջակցում էին, քանի որ ավարի մի մասը բաժին էր հասնում իրենց: Կենտրոնական կառավարության իշխանությունը ծայրամասերում դարձել էր լոկ ձևական: Առևտուրը կրճատվեց, ֆինանսները աղետալի վիճակում էին:

1917 թ. փետրվարին Ռուսաստանում տեղի ունեցած հեղափոխությունը և ցարիզմի տապալման լուրը ցնծությամբ ընդունվեց Իրանում: Ենթադրվում էր, թե հեղափոխական Ռուսաստանը շուտով զորքերը դուրս կբերի Իրանից: Հիասթափությունն աննկարագրելի էր, երբ հայտնի դարձավ, որ Ռուսաստանի ժամանակավոր կառավարության արտգործնախարար Միլյուկովը 1917 թ. մարտի 17–ին հեռագրել էր Թեհրանում ժամանակավոր հավատարմատար Վլադիմիր Մինորսկուն, որ Ռուսաստանի քաղաքականությունը Իրանի նկատմամբ ոչ մի փոփոխության չի ենթարկվելու:

Փետրվարյան հեղափոխության հետևանքով ցարական ինքնակալության տապալումը նոր մղում հաղորդեց իրանական ժողովրդի հակաօտարերկրյա պայքարին: Երկում գործող մի շարք կազմակերպություններ՝ «Էթթեհադ–ե մելլի», «Էթթեհադ–ե թարաքքի» և այլն, ինչպես նաև թերթեր՝ «Սեթարե–ե Իրան», հանդես էին գալիս օտարերկրյա զորքերը Իրանից անհապաղ դուրս բերելու պահանջով: 1917 թ. ապրիլին Թեհրանում ստեղծվեց «Քոմիթե–ե մոջազաթ» («Արդար հատուցման կոմիտե») անունով մի ահաբեկչական կազմակերպություն, որն իր առջև խնդիր էր դրել տապալելու շահական կառավարությունը, սպանելու օտարմոլ պետական գործիչներին և երկրից վտարելու բոլոր օտարերկրացիներին: Կոմիտեն իր բաժանմունքներն ուներ Թավրիզում, Մեշհեդում, Սպահանում: Կոմիտեի անդամները կազմակերպեցին մի շարք ահաբեկչական գործողություններ: Երկրի տարբեր քաղաքներում տեղի էին ունենում քայլարշավներ, հանրահավաքներ, գործադուլներ և այլն:

1917 թ. մարտին «Էթթեհադ–ե Էսլամ» («Իսլամի միասնություն») կոմիտեն Ֆումը քաղաքում սկսեց հրատարակել «Զանգյալ» («Անտառ») լրագիրը, որն ուներ պանիսլամիստական ուղղվածություն և կոչ էր անում բոլոր մուսուլմաններին միավորվելու հակաօտարերկրյա պայքարում:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԻՐԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

1. ԻՐԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԸ, ՑԵՂԵՐԸ, ԿՐՈՆՆԵՐԸ ԵՎ ԱՅԼՆ

Իրանը բազմազգ երկիր էր: Պատմության նոր շրջանում նրա բնակչության ստույգ թվի մասին հավաստի տեղեկություններ գոյություն չունեն այն պարզ պատճառով, որ այդ երկրում մարդահամարներ չէին անցկացվում: XIX դ. վերջին երկրի բնակչությունը կազմում էր մոտավորապես ութից տասը միլիոն մարդ, որի կեսից ավելին վարում էր նստակյաց կյանք, իսկ մեկ չորրորդը քոչվորներ ու կիսաքոչվորներ էին, որոնք բնակվում էին երկրի ծայրամասային տնտեսական ու սոցիալական առումով թույլ զարգացած նահանգներում:

Ցեղերի բնակության գոտում տիրապետում էին նահապետական ցեղային և ավատական հարաբերությունները: Այնտեղ ողջ իշխանությունը, որպես կանոն, պատկանում էր տեղական խաներին ու ցեղապետերին, որոնք, մշտապես ձգտելով ինքնագլխության, հաճախ բացահայտ ձևով չէին ենթարկվում կենտրոնական իշխանություններին: Մասնավորապես դա բնորոշ էր հարավում Լուրիստան, Բախթիարի, Արաբստան (Խուզիստան) նահանգներին, արևմուտքում՝ Իրանական Քրդստանին և Ատրպատականում՝ թյուրքալեզու մի շարք ցեղերի:

Ընդհանրապես Իրանը նոսր բնակեցված երկիր էր: Երկրում ժամանակ առ ժամանակ բռնկվող համաճարակների ու սովի պատճառով տեղի էր ունենում առանձին վայրերի բնակչության կտրուկ նվազում:

Իրանի բազմազգ բնակչության մոտ կեսը կազմում էին պարսիկները (ֆարսերը), որոնք իրենց թվաքանակով ամենախոշոր ժողովուրդն էին: Թվաքանակով նրանց հաջորդում էին թյուրքախոս իրանցիները, որոնց բնակության վայրը հիմնականում Ատրպատականն էր: Նրանք վարում էին նստակյաց, կիսաքոչվորական և քոչվորական կյանք: Բացի նրանցից՝ Իրանում բնակվում էին նաև էթնիկապես թյուրքական ցեղեր ու ժողովուրդներ՝ դաշղայիներ, դաջարներ, ղարափափախներ և այլն:

Իրանի բնակչության ճնշող մեծամասնությունը, ըստ դավանանքի, շիա մուսուլմաններ էին (ավելի քան 85%–ը), իսկ մոտ 10%–ը կազմում էին մուսուլման սուննիները (օրինակ՝ արաբները, քրդերը, բելուջները և այլն): Երկրի քրիստոնյա բնակչու-

թյան մեջ մեծամասնություն էին կազմում հայերը, որոնց թվի մասին նույնպես հավաստի տեղեկություններ գոյություն չունեն, ենթադրվում է՝ մոտ 50–60 հազար մարդ: Հայերն ապրում էին հիմնականում Սպահանում (Նոր Ջուղա) Թավրիզում, Շիրազում, Համադանում, Թեհրանում և այլ քաղաքներում: Քրիստոնյա ասորիների (մոտ 20 հազար) բնակության վայրը Ուրմիա լճի հարավարևմտյան շրջաններն էին: Հրեաները (մոտ 20 հազար) ցրված էին ողջ երկրի քաղաքներում: Իսկ զրադաշտական դավանանքի հետևորդները կամ գյաբրերը (մոտ 10 հազար) բնակվում էին գլխավորապես Յազդ, Քերման, Թեհրան և մի շարք այլ քաղաքներում:

Պատմության նոր դարաշրջանի շեմին Իրանը դեռ շարունակում էր մնալ որպես ավատական մի երկիր, որն իր սոցիալ–տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացման մակարդակով հետ էին մնացել Արևմուտքի երկրներից: Վերլուծելով դրա պատճառները՝ գիտնականները թվարկում են մի շարք գործոններ, որոնցից առավել կարևորագույններն են Իրանի բնակչության բազմացեղ ու բազմալեզու կազմը, որն արգելակում էր ազգային համախմբմանը, հնացած, բայց բավականաչափ կայուն սոցիալական կազմակերպությունը շահի բռնատիրական իշխանության գլխավորությամբ, քոչվորների մեծ թվի առկայությունը, տրանսպորտի և կապի թույլ զարգացած ձևերը, նահանգների անջատողականությունը, բնակչության նշանակալից զանգվածների ոչնչացումը իշխանությունների կամայականությունների, ռազմական գործողությունների, համաճարակների, սովի հետևանքով:

Ինչպես միջին դարերում, այնպես էլ պատմության նոր դարաշրջանի արշալույսին Իրանը բազմիցս ենթարկվում էր օտարերկրյա նվաճողների ավերիչ արշավանքներին: Բուն Իրանի տարածքում բնակվող վաչկատուն–քոչվորական ցեղերը (քրդեր, լուրեր, բախթիարներ, թուրքմեններ, բելուջներ, արաբներ և այլն) ևս պարբերաբար ավերիչ ասպատակություններ էին կազմակերպում դեպի նստակյաց հողագործական շրջանները: Ընդհուպ մինչև XIX դարը Իրանում անվերջանալի էին տարբեր ավատական ու ցեղային խմբավորումների միջև երկպառակություններն ու պատերազմները: Ներքին պատերազմների և քոչվորների ասպատակությունների հետևանքով ոռոգման բարդ համակարգը, առանց որի երկրի տարածքի մեծ մասում հնարավոր չէր հողագործության գոյությունն Իրանում, ոչնչանում ու դուրս էր գալիս շարքից, ինչն իր հերթին հանգեցնում էր գյուղերի ու քաղաքների քայքայմանն ու կործանմանը: Բնականաբար, այս բոլորը կասեցնում ու արգելակում էր երկրի տնտեսական ու հասարակական զարգացումը:

Նստակյաց բնակչության կողոպուտն ու ավարառությունը վարչական քոչվորական կյանքով ապրող ցեղերի ապրուստն ապահովող կարևոր կռվաններից մեկն էր: Քոչվոր–նոմադական կացութաձևի առկայությունը արգելակում էր Իրանի հասարակական–տնտեսական զարգացումը: Առհասարակ քոչվորները նստակյաց բնակչության համեմատ զարգացման ավելի ցածր մակարդակի վրա էին: Իրանի քոչվոր–անասնապահական տնտեսություն վարող վաչկատուն ցեղերի շրջանում տիրապետում էին նահապետական–կիսաավատական հարաբերություններ, որոնք վերին աստիճանի կենսունակ էին և արգելակում էին ոչ միայն քոչվորական ու կիսաքոչվո-

րական, այլև նստակյաց շրջանների զարգացումը: Քոչվորական ռազմաշունչ ցեղերը, որոնք ապրում էին նահապետական–ցեղային օրենքներով ու սովորույթներով, չէին ցանկանում ենթարկվել իրենց բացարձակ ազատությունը կաշկանդող երկրի օրենքներին:

Իրանում քոչվորական ու կիսաքոչվորական ցեղերի վերնախավը նշանակալից դերակատարություն ուներ երկրի պետական կառավարման մեջ և բանակում: Շահական հեծելազորը հիմնականում բաղկացած էր տարբեր ցեղերից հավաքագրված ջոկատներից:

Ցեղերի խաները, որոնք օգտվում էին բազմաթիվ արտոնություններից ու իրավունքներից, շահագրգռված չէին, որ իրենց հսկողության տակ եղած ցեղերն անցնեն նստակեցության:

Իլյաթների (քոչվորների) վիճակը նվազ էր, քան նստակյաց գյուղացիներինը (ռայաթներինը): Խաների օգտին հարկերն ու տուրքերը նրանցից գանձվում էին ավելի քիչ, քան ռայաթներից: Պետության գանձարան ևս քոչվորները մուծում էին ավելի քիչ հարկեր կամ ընդհանրապես չէին մուծում: Մտնելով խանական ջոկատների և ավատական աշխարհազորերի մեջ՝ քոչվորները մասնակցում էին ռազմական արշավանքների կամ ասպատակությունների, որոնց հետևանքով ստանում էին ռազմական ավարի իրենց բաժինը: Դա այն պատճառներից մեկն էր, որ քոչվորները չէին ձգտում անցնելու նստակեցության:

Իրանում ցեղերը ցրված էին ամբողջ երկրով մեկ, սակայն մաքուր «ցեղային» էին պետության ծայրամասային շրջանները, որտեղ բնակվում էին ցեղերի հիմնական զանգվածները: Ցեղերը միանգամայն տարբեր էին ոչ միայն ըստ էթնիկական պատկանելության, այլև սոցիալ–տնտեսական զարգացման մակարդակով, իրենց թվաքանակով, զբաղեցրած տարածքների չափերով, կրոնով, ռազմական ներուժով, երկրի քաղաքական կյանքում իրենց խաղացած դերով: Իրանական միապետերը պետք է տիրապետեին բազմաթիվ ցեղերի կառավարման նրբին արվեստին, որպեսզի նրանց կարողանային պահել հնազանդության մեջ: Ամբողջությամբ վերցրած՝ ղաջարներին դա հաջողվում էր: Նրանք կարողանում էին ստիպել ցեղերին ճանաչել կենտրոնական կառավարությանը և պաշտպանել պետական սահմանները: Ավելի դժվար էր ցեղերից հարկեր հավաքելը և իշխանությունների դեմ նրանց պարբերական ելույթները ճնշելը:

Աշիրեթային քոչվորական ցեղերն ունեին արտոնյալ վիճակ, մինչդեռ նստակյաց կամ ռայաթ ցեղերը կախյալ վիճակում էին աշիրեթային ցեղերից: Ցեղերի ավատական վերնախավը բազմաթիվ թելերով կապված էր շահական արքունիքի և տեղական իշխանությունների հետ: Ցեղերի շրջանում գործում էր արյան վրիժառությունը: Այդ հողի վրա հաճախ տեղի էին ունենում արյունահեղ ընդհարումներ տարբեր ցեղերի միջև, որոնց ընթացքում զոհվում էին հազարավոր մարդիկ:

2. ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ, ԱՐՀԵՍՏՆԵՐԸ ԵՎ ԱՌԵՎՏՈՒՐԸ

Իրանում հարստության հիմնական աղբյուրի՝ հողի գերագույն սեփականատերը պետությունն էր՝ ի դեմս շահի: Նա իր հպատակների կյանքի ու մահվան, հավասարապես նաև նրանց ունեցվածքի լրիվ տերն էր: Մոտավոր հաշվարկներով՝ XIX դարի սկզբին մշակման համար պիտանի հողերի մոտ մեկ երրորդը պատկանում էր պետությանը: Շահապատկան հողերը կոչվում էին «խաս» հողեր, որոնք ոչ մի պայմանով չէին հատկացվում որևէ մեկին որևէ ծառայության դիմաց: Պետական ֆոնդի մեջ էին մտնում նաև ցեղերին պատկանող հողերը («իլյաթի»), որոնք կազմում էին Իրանի տարածքի մոտ 1/4 մասը: Այս հողերի վրա, փաստորեն, հարկեր չէին դրվում, քանի որ ցեղերի մեծ մասը պարտավոր էր կատարել զինվորական ծառայություն և իշխանությունների առաջին իսկ պահանջով ներկայանալ նրանց իր զինված ջոկատով: XIX դարում ուժեղացել էր իլյաթի հողերի վերածումը խաների սեփականության: Երկրում շարունակում էր գոյություն ունենալ սելջուկների ժամանակներից արմատավորված այնպիսի համակարգ, երբ ռազմական ծառայության դիմաց շահը խաներին շնորհում էր հողեր որպես «թիուլ» կամ «սոյուրղալ»: Այդ հողերը առուծախի ենթակա չէին և չէին կարող անցնել ժառանգաբար:

Իրանում գոյություն ունեին հողային սեփականության հետևյալ ձևերը՝ պետական հողեր («խալիսե» կամ «դիվանի»), խոշոր ավատատերերի ու խաների ժառանգական հողեր, մասնավոր կալվածատիրական հողեր («արբաբի» կամ «մոլք», «մուլք»), վաքֆեր կամ վաքուֆային հողեր («ամլյաք–ե մոքուֆանե»), այսինքն՝ մզկիթներին, մեդրեսեներին և այլն, կամ առանձին հոգևոր անձանց պատկանող կալվածքներ, համայնքներին պատկանող հողեր («ումումի») և մանր հողատերերի հողեր («խորդեմալեք»):

Վաքֆային հողերը շահական իշխանությունից հարաբերականորեն անկախ հողեր էին, որոնք շիական, մասամբ նաև սուննիական հոգևորականության տնօրինության ներքո էին: Չէր թույլատրվում վաքվային հողերի ո՛չ վաճառք (օտարում) և ո՛չ էլ նվիրաբերում, թեև XIX դարի վերջից այդ կարգն արդեն չէր պահպանվում, և հոգևորականներն ամեն անգամ որևէ պատճառ էին գտնում հողերի վաճառքի համար: Առկա էին երկու տեսակի վաքֆեր՝ ընդհանուր, որոնք կոչված էին ապահովելու մզկիթների, մեդրեսեների և այլնի կարիքները, և մասնավոր, որոնք առանձին հոգևոր անձանց սեփականությունն էին:

Վաքվային հողերն ունեին հարկային իմունիտետ, այսինքն՝ ազատված էին հարկեր վճարելու պարտականությունից:

XIX դ. երկրորդ կեսին մշակվում էր Իրանի ընդհանուր տարածքի ընդամենը տասից քսան տոկոսը, մնացածը կազմում էին ամայի հողերը, լեռները, անապատները ու ճահիճները:

Իրանում ճորտատիրություն գոյություն չի ունեցել: Համաձայն շարիաթի՝ գյուղացին համարվում էր ազատ մարդ: «Տերը» իրավունք չուներ նրան ո՛չ վաճառելու և ո՛չ էլ գնելու: Գյուղացին անձամբ ամրացված էր ոչ թե կալվածատեր–ավատատի-

ոոջը, այլ կալվածքին: Իրանում գյուղացիները հողի նկատմամբ ունեին նշանակալիորեն ավելի շատ իրավունքներ, քան նույն ժամանակաշրջանի եվրոպական գյուղացիները: Սակայն ամբողջությամբ վերցրած՝ գյուղացիների վիճակը ծանր էր, նրանք իրավազուրկ էին, թեև դարերով ձևավորված սովորական (սովորութային) իրավունքի նորմերը և շահիրաթը կանոնակարգում էին վերաբերմունքը գյուղացիների նկատմամբ և նրանց համար ապահովում որոշակի պաշտպանություն: Գյուղացին իրավունք չուներ մեկ ավատատիրոջ մոտից անցնելու մյուսի մոտ: Այդ կարգը խախտելու դեպքում գյուղացուն բռնի վերադարձնում էին նախկին «տիրոջը»: «Գյուղին տիրելը դեռ չէր նշանակում, որ այդ տիրող անձն իրավունք ունի նաև գյուղացիների նկատմամբ»,— գրում էր ֆրանսիացի Գասպար Դրուվիլը: Գյուղացիներն օգտվում էին հողերի ժառանգական վարձակալման իրավունքից մի քանի սերունդների ընթացքում:

Իրանական գյուղում տիրապետում էր բնամթերային տնտեսությունը: Հողագործությունը զուգակցվում էր տնային արդյունագործության հետ: Շատ գյուղացիներ հողագործության ու անասնապահության հետ մեկտեղ զբաղվում էին նաև ջուլհակությամբ, գորգագործությամբ, մետաքսագործությամբ և այլն:

Մինչև XIX դ. առաջին քառորդը Իրանում գոյություն չունեին օրենքներ, որոնք սահմանեին գյուղացիների կողմից կալվածատերերին ու պետությանը վճարվող հարկերի քանակը: Հետևաբար յուրաքանչյուր նահանգ, գավառ կամ շրջան ուներ հարկահանության իր կարգերն ու չափերը: Նահանգներից հարկերի գանձնման պարտականությունը կառավարության կողմից դրված էր տվյալ նահանգի հաքեմի (նահանգապետի) վրա: Հաճախ հարկահավաքման գործը տրվում էր կապալով: Կապալառուները բնակչությունից ավելի շատ հարկեր էին հավաքում, քան մուծում էին գանձարան: Հարկերը հավաքվում էին տարին մեկ անգամ:

Ուղղակի հարկերը («մալիաթ») գանձվում էին կա՛մ դրամով («նաղդ»), կա՛մ բնամթերքով («ջենս»): Իրանում գյուղացիներից գանձվող անօրինական հարկերը սովորական երևույթ էին: Ավատատերերն ու խաները «ռայաներին» համարյա թե մարդու տեղ չէին դնում: Նրանց պարտականությունը միայն աշխատելն էր: Հարկահավաքման ժամանակ հարկահանները ահավոր բռնություններ էին գործադրում ռայաների նկատմամբ:

Գյուղացիների և ավատատեր–հողատերերի միջև փոխհարաբերությունների հիմք էր բերքի բաշխման միջնադարյան հայտնի հնգանդամ սկզբունքը, երբ ամբողջ բերքի արժեքը բաժանվում էր հինգ հավասար մասի՝ հող, ջուր, սերմ, լծկաններ և աշխատող ձեռքեր: Առաջին չորսը, այսինքն՝ բերքի չորս հինգերորդ մասը, պատկանում էր կալվածատիրոջը, իսկ գյուղացին ստանում էր միայն «աշխատող ձեռքերի» իր մեկ բաժինը: Սակայն դա ամենը չէր: Գյուղացին պարտավոր էր խաներին վճարել բնամթերային հարկեր՝ բուրդ, յուղ, ձու, հավ, վառելափայտ և այլն, տարբեր առիթներով (հարսանիք, որդու ծնունդ և այլն) խաներին ու պետության մեծամեծերին տրամադրել «փիշքեշներ» (նվերներ): Գյուղացիներից գանձվում էին նաև հարկեր՝ հոգուտ հոգևորականության («զաքյաթ»), հարկեր անասուններից, արտա-

կարգ հարկեր պատերազմների ժամանակ և այլն: Չափազանց ծանր բեռ էր «սուրսաթ» պարտականությունը, ըստ որի՝ գյուղացիները պարտավոր էին պետական պաշտոնյաներին գյուղերում իջևանելիս նրանց մատակարարել սննդամթերք, ձիերի համար կեր և հատկացնել կացարան:

Անվարան կարելի է ասել, որ Իրանում հարկահանության գործը դրված էր ուղղակի քմահաճ հիմքի վրա: Գյուղացիության դաժան շահագործումն ու անընդմեջ ավատական պատերազմները հանգեցնում էին գյուղերում զանգվածային աղքատացման և պարբերական սովահարությունների: Դրանց գումարվում էին նաև հաճախակի բռնկվող ժանտախտի, խոլերայի և այլ համաճարակները, որոնք ուղղակի մարդաթափ էին անում ամբողջ շրջաններ:

XIX դ. իրանական քաղաքներն ունեին կիսաագրարային բնույթ: Քաղաքների տարածքների համարյա կեսը, քաղաքամերձ բոլոր թաղամասերը զբաղեցված էին այգիներով ու բանջարանոցներով: Իրանի քաղաքային բնակչությունը կազմում էր երկրի ողջ բնակչության մոտ 20%–ը: Կյանքը քաղաքներում հարաբերականորեն ավելի անվտանգ էր, քան գյուղերում: Քաղաքը նաև ավելի լավ էր պաշտպանված քոչվորների ասպատակություններից: Քաղաքներում վարչական իշխանությունների առկայությունն ապահովում էր տնտեսական կյանքի արագ վերականգնում տարերային աղետներից ու ռազմական գործողություններից հետո: Բոլոր խոշոր քաղաքները կառավարվում էին դաջարական իշխանությունների կողմից, որոնք նահանգների կառավարիչներ էին:

Քաղաքային արհեստը պահպանում էր միջնադարյան համքարային կազմակերպության բնույթը: Յուրաքանչյուր մասնագիտության արհեստավորներ միավորված էին համքարությունների մեջ, որոնք ունեին իրենց ավագները, ենթավարպետներն ու աշակերտները: Արհեստավորները հարկեր էին վճարում կա՛մ դրամով, կա՛մ իրենց արտադրանքով: Համքարությունները պաշտպանում էին իրենց յուրաքանչյուր անդամի իրավունքները իշխանությունների ոտնձգություններից:

XIX դ. սկզբներին արհեստների հետ միաժամանակ Իրանում գործում էին պարզագույն մանուֆակտուրաներ: Իրանական արհեստը, նստակյաց գյուղացիների և քոչվոր անասնապահների տնայնագործական արդյունաբերությունը և պարզագույն մանուֆակտուրաները («քարխանե») ողջ երկրին մատակարարում էին բամբակյա, բրդյա և մետաքսյա կտորեղեն, գորգեր, երկաթյա և պղնձյա, ինչպես նաև բրուտագործական իրեր, որոնց մի մասն արտահանվում էր հարևան երկրներ և Եվրոպա:

Արհեստներն ու արհեստավորները սերտորեն կապված էին առևտրի հետ: Արհեստանոցները հիմնականում կենտրոնացված էին «բազարում»: Բազարը ոչ միայն գործարար և տնտեսական կյանքի կենտրոն էր, այլև նշանակալից չափով նաև քաղաքական կյանքի:

Հաճախ, ի նշան բողոքի իշխանությունների այս կամ այն գործողության դեմ, արհեստավորներն ու վաճառականները կամ «բազարի մարդիկ» («ահլ–ե բազար»)

հայտարարում էին գործադուլ, փակում էին բազարները, և այդժամ քաղաքի տնտեսական կյանքը մեռնում էր:

XIX դարի վերջից իրանական տնայնագործական արդյունաբերության ավանդաբար զարգացած ճյուղերում սկսվել էր երկարատև անկման–ժամանակաշրջանը: Արտասահմանյան արդյունաբերական ապրանքներն աստիճանաբար հեղեղում էին իրանական շուկան: Չդիմանալով Արևմտյան Եվրոպայից և Ռուսաստանից ներմուծվող մեքենայական արտադրության էժան ապրանքների մրցակցությանը՝ քարխանեները և արհեստանոցները փակվում էին, իսկ արհեստավորները՝ սնանկանում: Այդ էր պատճառը, որ դարավերջին Իրանում գոյություն ունեցող կապիտալիստական արտադրության սաղմերը հետագա զարգացում չստացան:

Իրանում արհեստավորների և վաճառականների մեջ հարաբերականորեն մեծ տոկոս էին կազմում հայերը:

Իրանում խոշոր կապիտալներ ունեցող վաճառականների թիվը, որոնք զբաղվում էին ներքին առևտրով, այնքան էլ մեծ չէր: Ապրանքաշրջանառության բնականոն զարգացմանը և միասնական ներքին շուկայի ձևավորմանն արգելակում էին երկրի ավատական մասնատվածությունը, հաճախակի բռնկվող ներքին խռովությունները, նահանգապետերի կամայականությունները, ներքին մաքսատուրքերի առկայությունը, ճանապարհների վրա լայնորեն տարածված ավազակությունը և այլն: Կուտակված կապիտալները վախով ու կասկածամտությամբ էին դրվում առևտրական շրջանառության և ձեռնարկատիրական գործունեության մեջ, որովհետև գոյություն չունեին անձի և ունեցվածքի ապահովության երաշխիքներ: Նահանգների մի շարք կառավարիչներ ոչ միայն չէին պայքարում առևտրական ճանապարհների վրա գործող ավազակախմբերի դեմ, այլև հաճախ իրենք էին կազմակերպում այդպիսի խմբեր կամ ավազակապետերից ստանում էին կողոպտված ապրանքներից որոշակի բաժին: Հաճախ նահանգի կառավարիչը մենաշնորհում էր առևտրի առավել եկամտաբեր բնագավառները, և ինքն էլ որոշում էր վաճառվող ապրանքների գները:

XIX դ. առաջին կեսից սկսած՝ ոչ հաճախակի, բայց տարբեր քաղաքներում առավելապես հայ վաճառականների կողմից կազմակերպվում էին առևտրական ընկերություններ: Առևտրական կապիտալը վարկավորում էր իշխանավորներին, այդ թվում նաև շահին:

Վաճառականներն Իրանում համարվում էին հասարակության արտոնյալ մասը: Վաճառականը հարգված մարդ էր, իսկ երբեմն դառնում էր երկրի քաղաքական կյանքում կարևոր դեմք: Վաճառականների գլխավորը («թաջեր–բաշի», «մալեք–օթ–թոջար») քաղաքի գլխավոր դեմքերից մեկն էր:

3. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՐԳԸ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ԲԱՆԱԿԸ, ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Իրանի քաղաքական կարգը անսահմանափակ ավատական միապետություն էր, միայն 1905–1911 թթ. իրանական սահմանադրական հեղափոխությունից հետո

երկրի քաղաքական վարչակարգը վերածվեց սահմանադրական միապետության: Մինչ այդ՝ դարերի ընթացքում, այդ երկրում գերագույն իշխանությունը անսահմանափակ իրավունքների տեր, միահեծան բռնատիրոջ՝ շահի (շահնշահի) ձեռքում էր: Վերջինս բացարձակ բռնապետ էր և ենթակա չէր ոչ մի վերահսկողության: Նրա վեզիրները կամ մինիստրները բարձրաստիճան ծառաներ էին, որոնց պարտականությունն էր կատարել շահի հրամանները: Բոլոր հպատակների կյանքն ու ունեցվածքը ենթակա էին նրա քմահաճույքին: Առհասարակ, շահական բռնատիրության պայմաններում բոլորը պարտավոր էին կատարել շահի կամքը և նույնիսկ պետական գործերի վերաբերյալ իրենց անձնական հայացքները ենթարկել շահի հայացքներին: Սակայն պաշտոնատար անձանց, նույնիսկ արքունիքի կազմում եղած մարդկանց, խոշոր ավատատերերի և այլոց վիճակը վերին աստիճանի հեղհեղուկ էր և ամբողջապես կախված էր իրենց նկատմամբ շահի վերաբերմունքից: Ինքնակալի դժգոհությունը հարուցելու և կամ շահի հասցեին զրպարտանքի մեջ մեղադրվող անձինք անմիջապես զրկվում էին ոչ միայն իրենց ունեցվածքից, այլև կյանքից, իսկ նրանց զավակները անհապաղ հեռացվում էին արքունիքից, առանց հայրական ժառանգությունից օգտվելու իրավունքի, որն անմիջապես բռնագրավվում էր հարքունիս: Նման ճակատագրի արժանացած անձի առջև, որպես կանոն, փակվում էին վերստին բարձրանալու բոլոր դռները: Բացառություն էին կազմում այն դեպքերը, երբ շահի զայրույթին արժանացած անձի ժառանգները ընտանեկան, ամուսնական կապերի մեջ լինեին դաջարների կամ ազդեցիկ խանական ընտանիքների հետ, որոնց օգնությամբ թերևս հաջողվեր ծառայողական աստիճաններով կրկին բարձրանալ վերև: Տիրապետող վերնախավի այդ մասից շատ քչերին էր հաջողվում վերևներում մնալ ինքնուրույն:

Իրանի ողջ պետական ապարատը հագեցված էր բռնատիրության ոգով: Կամայական ձերբակալությունները, բռնագրավումները, մարմնական պատիժները երկրի կառավարման առավել փորձված ձևերն էին: Այդ առթիվ իրանական ժողովրդի շրջանում տարածում ուներ հետևյալ ասացվածքը. «Շահը ժպտում է միայն նրա համար, որպեսզի ցույց տա իր առյուծի ատամները»:

Միայն շահի իրավասությունն էր ընդունելու վերջնական վճիռներ: Նրա իրավունքն էր հայտարարել պատերազմ և կնքել խաղաղություն: Նա էր նշանակում նահանգապետերին, բանակի գլխավոր հրամանատարն էր և այլն:

Երբեմն՝ հույժ կարևոր դեպքերում, շահը հավաքում էր ավատական ազնվականության և հոգևորականության խորհուրդ, որն ուներ լոկ խորհրդակցական իրավունքներ: Շահը ոչ միայն վաճառում էր պաշտոններն ու կոչումները, այլև հաճախ դրանք դնում էր աճուրդի: Դժվար չէ պատկերացնել, թե իր պաշտոնն աճուրդով շահածը իր ծախսած դրամը փոխհատուցելու համար ինչպես պետք է վարվի ռայաների հետ, առավել ևս, որ շահն իրավունք էր տալիս աճուրդում շահածներին շահատակության ենթարկելու իրենց տիրապետության տակ դրված շրջանները:

Չգրված օրենք էր, որ բոլոր բարձրաստիճան պաշտոնյաները թանկարժեք քարեր, ոսկեղեն և հազվագյուտ իրեր պետք է «փիշքեշ» («ընծա») անեին շահին: Փիշ-

քեշները փաստորեն քողարկված կաշառքներ էին և տրվում էին տարբեր առիթներով (այս կամ այն արտոնությունը կամ պաշտոնը ստանալու, հանցանքը քողարկելու համար և այլն): Շահի հետ անձնական մոտիկությունը բարձր պաշտոն ձեռք բերելու ամենահուսալի ճանապարհն էր:

Յուրաքանչյուր հպատակի բարձրացումը և կործանումը կախված էր շահի քմահաճույքից:

Ղաջարական շահերը մշտապես ձգտում էին ազգակցական կապերի մեջ մտնելու Իրանի բոլոր ազնվազարմ ընտանիքների հետ: Նրանք իրենց աղջիկներին ու քույրերին կնության էին տալիս առավել ազդեցիկ աստիճանավորներին, նրանց որդիներին, իսկ իրենք որպես իրենց պաշտոնական («աղդի») կամ ժամանակավոր կին («սիղե») էին վերցնում այն խանական մեծատոհմիկ ազնվականական և նույնիսկ հարուստ վաճառականական ընտանիքների աղջիկներին, որոնց «բարեկամության» ու աջակցության կարիքն իրենք զգում էին: Արդեն Նասր–էդ–Դին շահի ժամանակ Իրանի ողջ կառավարող վերնախավը ամուսնական–ընտանեկան կապերով կապված էր միմյանց հետ և ճգնաժամային պահերին հանդես էր գալիս միասնական ճակատով:

Շահից հետո պետության մեջ առաջին դեմքը սադր–ազամն էր, այսինքն՝ առաջին նախարարը կամ վեզիրը: Փաստորեն, պետության կառավարման գծով հարցերի մեծ մասը լուծվում էր նրա կողմից: Նա էր պետական–վարչական ապարատի ղեկավարը: XIX դ. առաջին կեսին այդ պաշտոնը սովորաբար զբաղեցնում էին խելոք, բայց ոչ միշտ կրթված անձինք, որոնք կարողանում էին նույնիսկ իրենց կամքը թելադրել շահին: Սակայն ինչ պաշտոններ էլ որ զբաղեցնելու լինեին շահի ստորադասները, նրանք ոչ այլ ինչ էին, եթե ոչ բարձրաստիճան ծառաներ:

1858 թ. տեղի ունեցած կառավարման համակարգի բարեփոխման ժամանակ սադր–ազամի պաշտոնը վերացվեց և ստեղծվեց նախարարների խորհուրդ՝ շահի գլխավորությամբ: Ծնունդ առան վեց նախարարություններ: Սակայն շուտով սադր–ազամի պաշտոնը կրկին վերականգնվեց: Սադր–ազամն ուներ երեք օգնական կամ տեղակալ. մոսթոուֆի–օլ–մամալեք (ֆինանսների կառավարիչ), մոնշի–օլ–մամալեք (վարում էր շահական գրասենյակի գործերը, որի պարտականությունների մեջ էր մտնում նաև օտարերկրյա պետությունների հետ հարաբերությունների իրականացումը) և սալար–լաշքյար (ռազմական գործերի գծով վեզիր): Բացի այդ՝ գոյություն ունեին բազմաթիվ տարբեր պալատական պաշտոններ, ինչպես, օրինակ՝ արարողակարգի գծով, ֆարրաշների (ոստիկանության) պետ, գլխավոր ներքինի, որսորդների գլխավոր, շահական ձիանոցների, շնանոցների պետ և այլն: Սրանք սպասարկում էին գլխավորապես շահական արքունիքը, սակայն պետական կարևոր հարցեր լուծելիս և պաշտոնյաներ նշանակելիս նրանք խաղում էին ոչ պակաս կարևոր դեր, քան վեզիրները:

Արդեն XIX դ. առաջին երեսնամյակին սկսեց նկատվել պետական ապարատի եվրոպականացում. սադր–ազամը երբեմն սկսեց կոչվել առաջին մինիստր, մոնշի–օլ–մամալեքը՝ արտաքին գործերի մինիստր և այլն:

Պետական գործերի վրա մեծ ազդեցություն ունեին Թավրիզում գահաժառանգի արքունիքի առաջին դեմքերը՝ դայեմ–մաղամները, որոնք գահաժառանգի գահ բարձրանալուց հետո սովորաբար դառնում էին առաջին մինիստր:

Արտակարգ դեպքերի կապակցությամբ գումարվում էր խորհրդակցական խորհուրդ, որը բաղկացած էր լինում առավել ազդեցիկ պալատականներից, ավատատերերից, շիական հոգևորականության ներկայացուցիչներից: Նրանցում քննարկվում էին գլխավորապես ռազմական բնույթի հարցեր: Իրանում պաշտոնապես Պետական խորհուրդը ստեղծվել է 1859 թ.:

Նահանգների գլուխ էր կանգնած նահանգապետը (բեկլարբեկը կամ «բեյլերբեյ օլ–ումարան»): Բեկլարբեկերը կամ հաքիմները վարչական իշխանությունը զուգակցում էին զինվորականի հետ: Բեկլարբեկի պաշտոնում նշանակումը միշտ ուղեկցվում էր խանի տիտղոսի շնորհումով: Սովորաբար բեկլարբեկեր էին նշանակվում շահի որդիներից (շահզադե) կամ նրա մոտ ազգականներից, ինչպես նաև տեղական ազնվականության ներկայացուցիչներից, իսկ առանձին դեպքերում՝ տեղական խանական տոհմի ընտրյալներից: Ֆաթհ Ալի շահի ժամանակներից սկսած՝ պարտադիր կարգով Իրանի ամենակարևոր ու հարուստ նահանգի՝ Ատրպատականի կառավարիչ էր նշանակվում շահական գահի ժառանգորդը:

XIX դ. սկզբին դաջարները իրենց հյուսիսային վիլայեթները՝ Երևանի խանությունը, Արցախը, Շիրվանը, Ատրպատականը (Ադրբեջանը), Թալիշը և Արդեբիլ քաղաքները իրենց շրջակա տարածքներով համարում էին շահական կալվածք (դոմեն): Դրանք հանված էին բեկլարբեկերի իրավասությունից և կառավարվում էին հատուկ նշանակված քաղաքացիական իշխանությունների կողմից: Որպես կանոն՝ նոր շահի թագադրումից հետո տեղի էր ունենում նահանգապետերի փոփոխություն:

Երբեմն նահանգներում և քաղաքներում իշխանությունը զավթում էին տեղական խաները և նույնիսկ պատահական մարդիկ: Օրինակ՝ Սպահանում Նաբի–խանի բեկլարբեկության ժամանակ քաղաքը փաստորեն կառավարում էր լութի–բաշի (լոթիների պարագլուխը) միրզա Աբդուլ–Հոսեյինը:

Նահանգապետերի պաշտոնը ենթակա էր առուծախի: Իշխող խավերի առանձին ներկայացուցիչներ, շահին որոշակի գումար վճարելով, ստանում էին նահանգապետի պաշտոնը և փաստորեն դառնում տվյալ նահանգի տերն ու տիրակալը:

Բեկլարբեկի վարչական ապարատի մեջ մտնում էին ինքը՝ բեկլարբեկը, շեյխ–ուլ–իսլամը (նշանակվում էր Թեհրանի կողմից որպես շիական հոգևորականության ղեկավար), շարիաթական դատավորները (ղազիներ և մոլլաներ կամ ախունդներ), սադրը (վարում էր վիլայեթի վաքուֆային գույքերի գործերը և ենթարկվում էր բարձրագույն հարկային («սադր աս–սոդուր») դիվանին, վեզիրը (պատասխանում էր հարկերի մուտքի համար և ենթարկվում էր մեծ վեզիրին կամ սադր–ազամին): Յուրաքանչյուր տարի նովրուզի օրերին (իսլամական նոր տարվա՝ մարտի 21–ին) նահանգապետերը պարտավոր էին գնել, ավելի ճիշտ՝ վերականգնել իրենց պաշտոնը: Առհասարակ, Իրանում բոլոր պաշտոնները վաճառվում էին:

Շրջանների կամ գավառների կառավարիչները կոչվում էին «զաբիթ», իսկ գյուղերը կառավարվում էին քեդխուդաների կողմից: Դատաիրավական գործառույթները շիական հոգևորականության ձեռքում էին: Բայց քանի որ շահը օժտված էր անսահմանափակ իշխանությամբ, ապա հենց ինքն էլ գերագույն դատավորն էր: Սովորական (սովորութային «ադաթ») իրավունքի հիման վրա լուծվում էին բազմաթիվ մանր վեճեր հատկապես ցեղերի շրջանում: Եկեղեցական և սովորական իրավունքի միջոցով կարգավորվում էին հարաբերությունները քրիստոնյաների շրջանում, որոնք հազվագյուտ դեպքերում էին դիմում իշխանություններին՝ վիճելի հարցերը լուծելու համար: Մուսուլմանի կողմից քրիստոնյային, հրեային կամ փարսին (զրադաշտական) հալածանքի ենթարկելու դեպքում նրանց բողոքի գործերը քննության էին ենթարկվում տեղական իշխանությունների կողմից, իսկ երբեմն այդ գործերը հասնում էին շահական արքունիք:

Շարիաթական և աշխարհիկ դատարանների վճիռների ի կատար ածումը վարչակարգի ձեռքում էր: Բանտերը քաղաքացիական իշխանությունների իրավասության ներքո էին:

XIX դ. կեսերին ողջ Իրանի տարածքը բաժանված էր 12 խոշոր նահանգների (վիլայեթների)՝ Ադրբեջան (Ատրպատական), Գիլան, Մազանդարան, Աստրաբադ, Քրդստան, Իրաք Աջմի, Խորասան, Խուզիստան (Արաբստան), Սիսթան, Ֆարս, Քերման, Լուրիսթան, որոնք իրենց հերթին բաժանվում էին գավառների (բոլուք), շրջանների (մահալե):

Նահանգապետը իր կողմից կառավարվող նահանգին նայում էր ճիշտ այնպես, ինչպես շահն էր նայում Իրանին՝ որպես իր կալվածքի: Երբեմն հարևան նահանգների կառավարիչների միջև ծագում էին վեճեր «սահմանային տարածքների» և այլ հարցերի շուրջ: Հաճախ այդ վեճերը վերածվում էին բացահայտ ռազմական գործողությունների:

Իրենց պարտականությունների մեջ թերացած բեկլարբեկերը կանչվում էին մայրաքաղաք և իրենց մեղքը հաստատվելու դեպքում կուրացվում էին, կամ նրանց գույքը բռնագրավվում էր հարքունիս: Ուստի հիանալի գիտակցելով, թե ինչ ճանապարհներով կարելի է բավարարություն տալ շահի և նրա վեզիրների պահանջներին, նրանք աշխատում էին իրենց պաշտոնավարության ժամանակ կուտակել խոշոր գումարներ, առավել ևս, որ ոչ ոք իրենցից չէր հարցնում, թե ինչ եղանակներով են ձեռք բերվել այդ գումարները: Բռնանալով իրենց ենթակա հաքեմների վրա՝ բեկլարբեկերը նրանցից կորզում էին խոշոր գումարներ, իսկ վերջիններս էլ իրենց հերթին բռնանում էին գյուղացիների նկատմամբ, որը անգլիացի Մաքդոնալդ Քինները անվանել է «կեղեքման ու թալանի մի կանոնավոր համակարգ»:

Նահանգներում հաճախ տեղի էին ունենում տեղական իշխանությունների և ավատատերերի ապստամբություններ շահի և նրա կառավարության դեմ: Մի շարք ազդեցիկ խաներ նույնիսկ հանդես էին գալիս որպես շահական գահի հավակնորդներ: XVIII դ. վերջին և XIX դ. առաջին կեսին դաջարական շահերը ստիպված էին

մղել համարյա անընդմեջ ներքին պատերազմներ՝ անհնազանդ ավատատերերին ընկճելու համար:

Արևմտյան ճանապարհորդները սովորաբար առանձնացնում էին Իրանի բնակչության չորս հիմնական խմբեր, որոնք իրենց տնտեսական և իրավական դրությամբ ու դիրքերով խիստ տարբերվում էին մեկը մյուսից: Դրանք էին՝ 1) բարձրագույն դասը՝ այն անձինք, որոնք կապված էին արքունիքի հետ, համապետական և նահանգային (քաղաքացիական և ռազմական) վարչություն, որը տիրապետում էր ժառանգական կամ դաջարների կողմից շնորհված հողային սեփականության, 2) քաղաքային բնակչության վաճառականներ, առևտրականներ, արհեստավորներ, ինչպես նաև հոգևորականություն, 3) շահագործվող գյուղացիություն, 4) քոչվորներ: Երբեմն նշվում էին նաև ավելի մանր սոցիալական ստորաբաժանումներ, օրինակ՝ ավատատերերի դասը բաժանվում էր՝ ա) ժառանգական խաների և բեկերի, բ) պարսկական արքունիքից խանական աստիճան ստացողների, գ) ժառանգական հայ մելիքների (Արցախում): Մուսուլմանական հոգևորականությունը բաժանվում էր կազիների, շեյխ–ուլ–իսլամների, մոջթեհիդների, մոլլաների, ախունդների, դերվիշների, Մուհամմեդ մարգարեի սերնդից սերվածների՝ սեյյիդ, որոնք պարտադիր չէր, որ լինեին հոգևոր դեմքեր:

Առանձնակի մեծ ինքնուրույնությունից էին օգտվում քոչվորական ցեղերի (թյուրքալեզու դաշղայի, պարսկալեզու բախթիարական, քրդական, լուր, բելուջական և այլն) խաները: Իրենց ցեղերի քոչի վայրերում նրանք կառավարում էին ինչպես ժառանգական տիրակալներ՝ շատ հաճախ հրաժարվելով նույնիսկ ձևականորեն ճանաչելուց շահի իշխանությունը:

Իրանական բանակը բաղկացած էր հեծելազորից և անկանոն ավատական աշխարհազորից: Ընդհուպ մինչև Ֆաթհ Ալի շահի կառավարման տարիները իրանական կանոնավոր բանակ գոյություն չուներ: Անհրաժեշտության դեպքում հավաքվում էին աշխարհազորեր, որոնք ռազմական արշավանքից հետո ցրվում էին: Հեծելազորը, որպես կանոն, կազմված էր վաչկատուն ցեղերի ջոկատներից: Այդ ջոկատները նախ և առաջ ենթարկվում էին իրենց խաներին, որոնք հաճախ հրաժարվում էին ենթարկվելուց շահի հրամաններին:

Իրանական հրետանին նախանձելի վիճակում չէր: Հրետանային զորամասերում թնդանոթների թիվը մատների վրա կարելի էր հաշվել:

Գահաժառանգ Աբբաս Միրզայի կողմից իրականացված ռազմական բարեփոխման հետևանքով առաջին անգամ ձևավորվեցին զինված ուժերի կանոնավոր գնդեր: Զինվորները հիմնականում հավաքագրվում էին Ատրպատականի բնակչությունից կա՛մ կամավոր վարձակալության սկզբունքով, կա՛մ բռնի ձևով: Կանոնավոր բանակը («նեզամ») բաղկացած էր այսպես կոչված սարբազների և ջանբազների գնդերից: Անկանոն զորքերը կոչվում էին «ղեյրե նեզամ», իսկ աշխարհազորը՝ «չարիք»: Գոյություն ունեին նաև շահական պահակազոր («քեշեքջի») և հրետանային զորամասեր: Անկանոն զորքերն ապահովում էին պետության ներքին հանգս-

տությունը՝ ճնշելով խաների անջատողական ելույթները կամ շահական գահի հավակնորդների ելույթները:

Ռազմամթերքով ու հանդերձանքով իրանական բանակի հագեցվածությունը բավարար չէր: Բարձր չէր նաև բանակի մարտունակությունը: Կարգապահությունը խիստ ցածր մակարդակի վրա էր: Ռազմական ծառայության որոշակիորեն սահմանված ոչ մի կարգ ու ժամկետ գոյություն չունեին: Բանակում հաճախ 80–90–ամյա ծերունիների հետ կողք կողքի կարելի էր տեսնել 16–ամյա պատանիների: Նույնիսկ օրենքով որոշված չէր զորակոչման տարիքը: Զինվորի ծառայության ժամկետը սահմանված էր 20 տարի: Կառավարությունը բանակի վրա ծախսում էր չնչին միջոցներ: Մատակարարումը պատշաճ մակարդակի վրա չէր: Աշխատավարձը կանոնավոր չվճարելու կապակցությամբ, սպաների համաձայնությամբ, զինվորները սկսեցին զբաղվել արհեստներով, մանր առևտրով, ոմանք դառնում էին այս կամ այն մեծահարուստի մոտ դռնապան կամ ծառա: Հաճախ իրենց ապրուստը հայթայթելու համար բանակը կողոպտում էր սեփական ժողովրդին: Բանակում կարող էին ծառայել միայն մուսուլմանները, իսկ այլադավաններին իսլամական օրենքներով արգելվում էր զենք կրել, հետևաբար նաև բանակում ծառայել: Փոխարենը այլադավանները պարտավոր էին պետությանը վճարել զինվորական հարկ: Գոյություն չուներ նաև զինվորական աստիճաններ շնորհելու որոշակի կարգ: Հաճախ զինվորական ծառայության մասին գաղափար չունեցող մարդիկ միանգամից ստանում էին բարձր սպայական կոչումներ: Յուրաքանչյուր հարուստ բեկ կամ խան կարող էր գնել նույնիսկ սարթիբի (գեներալ) աստիճան:

Սովորաբար բանակի հրամանատարներ էին դառնում խոշոր հողատերերն ու նրանց զավակները: Հաճախ սպայական կոչումները փոխանցվում էին ժառանգաբար:

Իրանում չափազանց լայն տարածում ունեին կաշառակերությունն ու կոռուպցիան: Աստիճանները, պաշտոնները, կոչումները, տիտղոսները շահի կողմից վաճառվում էր: Նվիրատվության («փիշքեշ») անվան տակ կաշառք տալը սովորական, նույնիսկ պաշտոնապես ընդունված երևույթ էր: Առանց փիշքեշի ենթակա անձին նույնիսկ թույլ չէին տալիս այցելել աստիճանավոր մարդկանց:

Երկրի հասարակական–քաղաքական կյանքում մուսուլման շիական հոգևորականությունը խաղում էր չափազանց կարևոր դեր: Խիստ ուժեղ էր հոգևորականության ազդեցությունը ժողովրդի և երկրի բովանդակ գործերի վրա: Իր հերթին՝ իրանական հասարակությունը հարգալից վերաբերմունք էր դրսևորում հոգևոր անձանց նկատմամբ, որոնք հաճախ հանդես էին գալիս որպես կեղեքվող բնակչության պաշտպաններ:

Իրանական բարձրագույն հոգևորականությունն իրեն իրավունք էր վերապահում քննադատելու դաջարների գործողությունները, մի հանգամանք, որը ժողովրդի աչքում բարձրացնում ու ամրապնդում էր նրա հեղինակությունը՝ միաժամանակ նպաստելով շիականության դիրքերի ամրապնդումը, որն Իրանում վերածվել էր ազգային գիտակցության յուրահատուկ ձևի: Իրանում Ղուրանը, շարիաթը և

հաղիսները համարվում էին քաղաքացիական և քրեական դատավարության հիմքը: Տիրելով վաքուֆային ունեցվածքի (հողեր, խանութներ, արհեստանոցներ և այլն), ինչպես նաև բնակչությունից գանձելով զանազան հարկեր («զաքյաթ», «խոմս» կամ «սահմե–ի իմամ» և այլն)՝ հոգևորականությունը ձեռք էր բերում նաև տնտեսական անկախություն: XIX դարի կեսերին Իրանում կային մի քանի մոջթեհիդներ, որոնց հարստությունը համահավասար էր շահի ունեցվածքի հետ: Ուլեմեների՝ գիտնական–աստվածաբանների շրջանում բարձր հոգևոր հեղինակություն վայելող մոջթեհիդները իրականացնում էին շիական համայնքի ղեկավարության դերը: Բնակչությունը հենց նրանց էր դիմում բոլոր վիճելի կրոնական և իրավական հարցերի կապակցությամբ: Հենց դրանով էր պայմանավորված նրանց քաղաքական, իրավական և բարոյական ազդեցությունը դաջարական Իրանում: Ըստ Մուհամմեդ մարգարեի սահմանած սկզբունքի՝ մուսուլմանների ղեկավար կարող էր լինել միայն գիտնականն ու իրավագետը: Ուստի մոջթեհիդ դառնալու համար անհրաժեշտ էր հասնել իջթիհադի, այսինքն՝ ձեռք բերել իրավունք և ունակություններ՝ մեկնաբանելու համար կրոնական օրենքները: Մոջթեհիդը պետք է իմանար աստվածաբանություն, կրոնագիտություն, տրամաբանություն և իրավագիտություն:

Արդեն դաջարների շրջանում մոջթեհիդները աստիճանաբար սկսեցին կոչվել այաթոլլա (աստվածային հայտնություն), իսկ առավել հեղինակավորները ստացան հոջաթ–օլ–էսլամ տիտղոսը («իսլամի փաստարկը»): Շատ հաճախ հոգևորականները միջնորդավորված անձանց միջոցով կամ անմիջականորեն կապված էին առևտրի հետ և զբաղվում էին նաև վաշխառությամբ: Բացի այդ՝ հոգևորականության ձեռքում կենտրոնացված էր ժողովրդական կրթությունը և քաղաքացիական դատավարությունը (շարիաթական դատարանը), որը վճիռներ էր կայացնում կրոնական գործերի, ժառանգության, ամուսնության, ապահարզանի, առևտրական և այլ գործարքների վերաբերյալ):

Հոգևորականները զբաղվում էին նաև փաստաթղթերի հաստատմամբ՝ կատարելով նոտարի դեր: Բացի կրոնական շարիաթական դատարանից՝ գոյություն ուներ նաև աշխարհիկ («ուրֆ») դատարան, որի ներկայացուցիչները՝ դարուղաները, որոշումներ էին կայացնում՝ հաշվի առնելով կրոնական դատավորների՝ ղազիների, մոլլաների և այլն, մոտեցումներն ու կարծիքը: Սովորական իրավունքի (ադաթ) հիմքի վրա լուծվում էին բազմաթիվ մանր վեճեր: Մարդասպանության, զինված կողոպուտի, գողության և նման հանցագործությունների համար պատժամիջոցը մահապատիժն էր կամ երկարաժամկետ բանտարկությունը: Բացի այդ՝ կտրում էին հանցագործների ձեռքերն ու ոտքերը, ականջներն ու քիթը, մահակներով ծեծի էին ենթարկում նրանց և այլն:

Երկրի իրական երկու մեծ ուժերը՝ պալատն ու հոգևորականությունը, մշտապես խուլ պայքար էին մղում միմյանց դեմ ի խնդիր իշխանության և կատարյալ տիրապետության: Նկատի ունենալով բարձրագույն շիական հոգևորականության ընդդիմադիր կեցվածքը՝ դաջարները փորձում էին ձեռնարկել այնպիսի միջոցառումներ, որոնք մի կողմից՝ սահմանափակեին նրանց ազդեցությունը երկրում, իսկ մյուս

կողմից՝ նրանց ցուցաբերելով աջակցություն, հատկացնելով զանազան շնորհներ, ուլեմներին դնել իրենց հսկողության տակ: Թեհրանի արքունիքի կողմից բոլոր խոշոր քաղաքներում նշանակվող շեյխ–ուլ–իսլամները և իմամ ջոմեները իրենց բարձր ռոճիկները ստանում էին իշխանությունների կողմից և բնականաբար աջակցում էին Թեհրանի կառավարության իրականացրած բոլոր ձեռնարկներին և տեղերում իրականացնում էին նրա քաղաքականությունը:

Բազմաթիվ ազդեցիկ շիական հոգևորականներ բնակվում էին Իրաքի շիական սրբազան կենտրոններում՝ Քարբալայում, Էն–Նաջաֆում, Քազեմեյնում և Սամարրայում:

Առաջին դաջարների շրջանում նկատելիորեն ուժեղացավ նաև սուֆիական միաբանությունների և դերվիշական «խանեքաների» գործունեությունը:

XIX դ. կեսերին եվրոպական պետությունների հետ կապերի ընդլայնումը, պետական ապարատի որոշ արդիականացումը, առևտրի զարգացումը, բանակի վերակառուցումը և այլն ստեղծում էին նոր գիտակ կադրերի պատրաստման անհրաժեշտություն: Այդ հողի վրա ծնունդ էր առնում ժամանակակից իրանական մտավորականությունը («ռոշանֆեքրան»): XIX դ. կեսերին Իրանում արդեն ի հայտ եկավ կրթված և եվրոպական լեզուների տիրապետող մի խավ: Այդ ժամանակ շահական արքունիքում համարյա այլևս չէին մնացել հին քոչվորական սովորույթները:

Սակայն այդ ամենով հանդերձ՝ ընդհուպ մինչև XIX դ. վերջը Իրանը տիպիկ արևելյան միջնադարյան երկիր էր: Գյուղերում և քաղաքներում, առավել ևս ցեղերի շրջանում դեռևս կայուն կերպով տիրապետում էին ավատական կարգերը: Բնակչության կենցաղի ու սովորությունների մեջ էական փոփոխություններ չէին կատարվել: Միայն զարգացած կապիտալիստական պետությունների կողմից այդ երկրին հաղորդած ներքին մղումը պատճառ եղավ Իրանում կապիտալիզմի տարրերի զարգացման համար: Արևմտյան տերությունների քաղաքական և մշակութային ազդեցությունը նպաստեց Իրանի «արևմտականացմանը» և հարաբերական արդիականացմանը:

Ընդհուպ մինչև XIX դարի կեսերը Իրանում գոյություն ուներ սևամորթ ստրուկների առևտուր: Սևամորթերը ներմուծվում էին Պարսից ծոցի նավահանգիստների վրայով և վաճառքի էին հանվում Բասրայում և Բաղդադում: Պատերազմների ժամանակ գերի վերցված քրիստոնյաները սովորաբար վերածվում էին ստրուկների, որոնց մի մասը հետագայում ստանում էր ազատություն: Քոչվորական ցեղերի շրջանում կային ստրուկներ տեղական բնակչությունից, որոնք հափշտակվել էին հարևան ցեղերից կամ նստակյաց գյուղացիներից: Նստակյաց բնակչությունից հափշտակված բնակչության վաճառքի մասին, հատկապես միջինասիական խանություններում, ինչպես նաև Իրանի Սիսթան և Բելուջեսթան նահանգներում, վկայում են նույնիսկ XIX դարի վերջի մի շարք աղբյուրներ: Ստրկական աշխատանքը բավականին տևական ժամանակ օգտագործվում էր Իրանի Հյուսիսարևելյան և Արևելյան շրջանների քոչվորական տնտեսություններում:

Շատ ստրուկներ, ժամանակի ընթացքում ստանալով ազատություն, երբեմն դառնում էին ազդեցիկ դեմքեր, բարձրաստիճան պաշտոնյաներ և այլն:

1851 թ. միրզա Թաղի–խան Ամիր Նեզամի կողմից ստորագրված կոնվենցիայով իրանական կառավարությունը պարտավորվում էր արգելել սևամորթ–ստրուկների ներմուծումը Իրան:

4. ՀԱՅԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ: ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔՈՒՄ

XVIII դ. վերջին Իրանը թևակոխում էր իր պատմության նոր դարաշրջանը: Իր դարավոր պատմության ողջ շրջանում թերևս այդ երկիրը չէր տեսել այդպիսի ավերածություններ, ներքին արյունահեղ կռիվներ, արտադրողական ուժերի այնպիսի ահարկու կործանում, ինչպես նշված շրջանում: Այդ իրադարձությունների ժամանակ իրանահայությունը օրորվում էր քաղաքական վայրիվերումների հորձանուտում՝ լինելով տուժողի վիճակում: Իսլամական շարիաթական օրենքը հայերին դիտում էր որպես այլադավան–անհավատ «քաֆիր», իրավազուրկ ռայա, որը զուրկ էր երկրի քաղաքական կյանքում ձայնի իրավունքից:

Հայ եկեղեցին, Էջմիածնի կաթողիկոսի գլխավորությամբ, իրավասու չէր միջամտելու իրանահայ թեմի աշխարհիկ–քաղաքական գործերին: Ուստի աշխատում էր գեթ ուժի մեջ թողնել նախկին ժամանակներում իրանական շահերից ստացած հայերի վերաբերյալ իրավունքներն ու արտոնությունները և հնարավորին չափ նվազեցնել հայերից գանձվող հարկերը: Իսկ Իրանի հայ համայնքի հոգևորականությունը, ինչպես նաև կրոնական այլ փոքրամասնությունների հոգևոր դասը (քրիստոնյա–նեստորականներ, զրադաշտականներ և հուդայականներ) ազդեցություն ուներ միայն իր հոտի շրջանակներում և իրավասու չէր իր մասնակցությունը բերելու հայ համայնքի նկատմամբ պետական քաղաքականության մշակմանը և առհասարակ զուրկ էր պետական գործերի վրա ներգործություն ունենալու որևէ իրավունքից:

Կասկածից վեր է, որ XIX դ. սկզբի ռուս–իրանական երկու պատերազմները հայ ժողովրդի հետագա պատմական ճակատագրի առումով դրական ձեռքբերումներից բացի ունեցան նաև բացասական լիցք պարունակող հետևանքներ: Այդ պատերազմների ընթացքում Երևանի խանությունից մեծ թվով հայ ընտանիքներ տարագրվեցին Իրանի տարածքը: Գյուղացիներին պարտադրվում էր իսլամը: Կրոնական չափանիշներով «առաջնորդվող մուսուլման զանգվածների համար քրիստոնյա պետության դեմ մղվող պատերազմի պայմաններում իրանահայերը դիտվում էին որպես իրենց թշնամի ռուսների դավանակից–համակիրներ և ենթարկվում հալածանքների: Այդ մտայնությունը նրանց մեջ ամրակայվում էր Ռուսաստանի նկատմամբ հայության դրսևորած համակրանքի բազմակի հարկի և անհարկի ցուցադրումների պատճառով: Պատերազմների արդյունքում ստեղծված աշխարհաքաղաքական նոր իրողությունների հետևանքով իրանահայության և Այսրկովկասի հայության միջև անմիջական շփումներն ընդհատվեցին, և հայությունը հարկադրա-

բար Արաքս սահմանային գետով բաժանվեց երկու առանձին հատվածների՝ «Պարսկահայաստանի» և «Ռուսահայաստանի», որը ստեղծում էր անջրպետ հայ ժողովրդի քաղաքական զարգացման, նրա ազգային ինքնագիտակցության հասունացման և ազգային համախմբման ճանապարհին:

Թուրքմենչայի ռուս–իրանական պայմանագրի (1828 թ.) 15–րդ հոդվածով բուն Իրանի տարածքում ապրող հայերին իրավունք էր տրվում ցանկության դեպքում իրենց ընտանիքներով անցնելու «ռուսական մարզերը», այսինքն՝ Արևելյան Հայաստան: Ըստ այնմ՝ սկսվել էր հայ բնակչության զանգվածային ներգաղթ հայրենիք: Թավրիզից, Խոյից, Սալմաստից, Ուրմիայից, Մարաղայից և պատմական «Պարսկահայք» նահանգի հայաշատ այլ վայրերից Երևանի և Նախիջևանի նահանգներ տեղափոխվեց շուրջ 45 հազար հայ բնակչություն: Նրանց մեծագույն մասը դիմեց այդ քայլին, քանի որ նրանց մեջ դարերի ընթացքում չէր մեռել հայրենիքի կարոտն ու սերը: Շատերը, սրտնեղած ու տառապած պարսկական լծից, ապահով ու բարեկեցիկ կյանքի երազանքներ էին փայփայում քրիստոնյա Ռուսաստանի տիրապետության ներքո: Իսկ մի մասն էլ հարկադրված էր բռնել գաղթի ճամփան, որովհետև «խաչով էր դիմավորել» ռուսական զորքերին և վախենում էր մուսուլմանների վրիժառությունից, թեև Թուրքմենչայի պայմանագրի համաձայն՝ բոլոր բնակիչներին, անկախ իրենց ազգությունից ու դավանանքից, շնորհված էր «բացարձակ ու կատարյալ ներում»:

1828–1830 թթ. տեղի ունեցած իրանահայության գաղթը նշանավոր է նրանով, որ դա հայ ժողովրդի պատմության մեջ առաջին ներգաղթն էր և առաջին հայահավաքը, որը կոչված էր նոր շունչ ու կենսունակություն հաղորդելու XVII դարում շահ Աբբաս Ա–ի կողմից կազմակերպված հայերի բռնի տարագրության հետևանքով հայաթափ եղած Արևելյան Հայաստանին, որտեղ անցած երկու հարյուրամյակների ընթացքում բազմացել ու արմատներ էին նետել թյուրքալեզու և իրանալեզու բազմաթիվ վաչկատուն ու կիսաքոչվոր ցեղեր:

Քանի որ «ռուսական մարզեր» ներգաղթողների ջախջախիչ մեծամասնությունը Ատրպատականի հայերն էին, ուստի այդ նահանգի հայ բնակչության թվաքանակը կտրուկ կրճատվեց: Դա տեղի ունեցավ այնպիսի չափերով, որ, ըստ էության, Ատրպատականը, որը աչքի ընկնող հայ գաղթօջախներից մեկն էր, հայաթափ եղավ, Հարավային Իրանի, մասնավորապես Նոր Ջուղայի հայությունը մասնակից չեղավ այդ ներգաղթին գլխավորապես տեղի հեռավորության, նաև այն պատճառով, որ իր գաղթավայրը Հնդկաստանն էր և ավելի արևելք՝ Ճավան, Սինգապուրը, Սիամը, Բիրման, Չինաստանը, մասամբ նաև Մերձավոր Արևելքի երկրներն ու Եվրոպան:

Իրանական իշխանությունները և հատկապես գահաժառանգ Աբբաս Միրզան, որին պատկանում էր Ատրպատականի դոմենը, լրջորեն մտահոգված էր նրանով, որ իր ժառանգական կալվածքը զրկվում է աշխատող, հարկատու և օրինապահ տարրից: Ուստի նա փորձում էր համոզել հայերին «չգայթակղվել ռուսների խոստումներով» և «չլքել երկիրը»՝ խոստանալով լրացուցիչ արտոնություններ և իրավունքներ: Իսկապես, նա շտապեց Թավրիզի հայ վաճառականներին շնորհել մի

շարք լրացուցիչ առանձնաշնորհներ, իսկ իրանահայ հոգևորականությանը՝ նոր արտոնություններ: Թագաժառանգը միջոցներ հատկացրեց Ատրպատականի հայոց թեմի առաջնորդանիստ կենտրոն Սբ Թադեի (Սբ Թադևոս Առաքյալ) վանքի վերանորոգման համար: Նա հույսեր էր փայփայում, որ իր այդ քաղաքականության շնորհիվ Ատրպատականի և Նոր Ջուղայի հայկական թեմերի առաջնորդարանները ձեռք կբերեն ինքնավար կարգավիճակ, և կվերանա նրանց անմիջական կախումը Ռուսաստանին անցած տարածքում գտնվող Ամենայն հայոց կաթողիկոսության կենտրոն Էջմիածնից: Առհասարակ Աբբաս Միրզան, որն անկասկած XIX դարի առաջին քառորդի Իրանի ականավոր քաղաքական դեմքերից մեկն էր, տարածաշրջանում ռուսական ազդեցության ամենաեռանդուն հակառակորդներից մեկն էր: «Ռուսական մարզում» Ռուսաստանի համակիր հայության թվաքանակի ստվարացման մեջ նա տեսնում էր Իրանի պետական շահերի տեսակետից անցանկալի բան: Նրա հետ այդ հարցում կատարելապես համակարծիք էին անգլիացիները, որոնք հորդորում էին գահաժառանգին կանոնակարգել ու նվազեցնել հայերից գանձվող հարկերի չափը, պահպանել հայկական եկեղեցիների հարկային իմունիտետը, ավելի ուշադիր լինել «քրիստոնյա հպատակների» նկատմամբ և այլն: Անգլիացիների այդ մտահոգությունների պատճառները միայն տարածաշրջանում մրցակից ու ախոյան Ռուսաստանի դիրքերի թուլացումը չէր: Անգլիան եռանդուն ջանքեր էր գործադրում իրանահայությանը վերցնելու իր հովանավորության տակ՝ ձգտելով այդ հարցում կանխելու Ռուսաստանին: Պատահական չէ, որ արդեն XIX դ. 20–ական թվականներին Հյուսիսային Իրանի հայության շրջանում անգլիկան և բողոքական միսիոներները եռանդուն գործունեություն էին ծավալել հայերի շրջանում՝ նրանց բրիտանական հոգևոր և քաղաքական ազդեցության տակ դնելու համար: Եվրոպական ու ամերիկյան միսիոներական կենտրոնների կարծիքով սկսվում էր արևելքում քրիստոնեությունը տարածելու նոր դարաշրջան:

Ուշագրավ է նշել, որ Ատրպատականի հայ գաղթօջախում ևս կային գործիչներ, որոնք, մտահոգված լինելով այդ երկրամասի հայ համայնքի ապագայի հարցով և միաժամանակ չցանկանալով սրել պարսկական իշխանությունների մոտ հպատակ հայ բնակչության նկատմամբ գոյացած բացասական նստվածքը, դեմ էին հայերի զանգվածային գաղթին դեպի ռուսների կողմից «գրավյալ հողերը»: Նման գործիչներից մեկն էր նաև Ս. Բարթուղեմեոս վանքի վանահայր Իսրայել եպիսկոպոսը: Չնայած այն հանգամանքին, որ այլադավանների գործունեության ասպարեզը Իրանում խիստ սահմանափակ էր, նրանք չէին կարող զբաղեցնել զինվորական ու վարչական պաշտոններ, քանի որ օրենքն արգելում էր այլադավանին իշխել մուսուլմանի նկատմամբ, Աբբաս Միրզան երբեմն շրջանցում էր այդ կարգը: Այսպես՝ առաջին ռուս–իրանական պատերազմից հետո, երբ ռուսական բանակից փախած ռազմագերիներից ու դասալիքներից մոտ 300 զինվորներ որոշեցին մնալ Իրանում և ծառայել Աբբաս Միրզայի բանակում, վերջինս հրամայեց ստեղծել հատուկ քրիստոնեական գումարտակ՝ Սամսոն Մակինցևի (Մակինցյան) գլխավորությամբ: Գահաժառանգը հրամայեց Սալմաստի հայ համայնքին այդ ռազմագերիներին կնու-

թյան տալ հայ աղջիկներ: Ի դեպ՝ Սամսոն Մակինցյանին ռազմական ծառայությունների ու խիզախության համար շնորհվել էր խանի տիտղոս:

Հանրահայտ իրողություն է, որ հնուց անտի Իրանի հայ համայնքը օգտվել է իրանական շահերի հովանավորությունից և իրանական ժողովրդի հյուրընկալ, ասպնջական վերաբերմունքից: XVIII դ. վերջին՝ Իրանում Ղաջարական դինաստիայի հաստատումից հետո, գահը ժառանգած Ֆաթհ Ալի շահը (1798–1834) ևս, հայերին համարելով պետության համար օգտավետ տարր, աշխատում էր Իրանում նրանց բնակության համար ստեղծել տանելի պայմաններ: Նա նույնիսկ վարչական խստություններ էր բանեցնում պետության ինքնագլուխ ու անսանձ տարրերի դեմ, հայերի իրավունքներն ու պատիվը պաշտպանելու համար: Շահը հայկական եկեղեցիներն ու վանքերը ազատում էր հարկերից, դրամական նպաստներ էր շնորհում նրանց, հրովարտակներ հրապարակում նախորդ շահերի կողմից հայկական կղերին հատկացված իրավունքներն ու արտոնությունները վերահաստատելու ուղղությամբ և այլն:

Թեև պատմությամբ վկայված է, որ Իրանում մյուս կրոնական փոքրամասնությունների (փարսեր կամ գյաբր–զրադաշտականներ, ասորիներ և հուդայականներ) համեմատությամբ հայերն ավելի բարվոք վիճակում էին, սակայն ինչպես նշվեց, նրանց համար ևս կային շարիաթական օրենսդրությունից բխող այլադավանների համար սահմանված բազմաթիվ սահմանափակումներ: Օրինակ՝ հայը չէր կարող հագնել պարսկական զգեստ (աբու), չէր կարող տնից դուրս գալ անձրևոտ օրերին, որպեսզի իր վրայի ջրով հանկարծ «չպղծի» մուսուլմաններին, փողոցով անցնել ձի հեծած, շուկայում դիպչել մի քանի սննդամթերքի (շարիաթական օրենքով մուսուլմանն իրավունք չուներ ուտելու այն սննդամթերքը, որին «անհավասար քրիստոնյայի» ձեռք էր կպել, հայերին արգելված էր մսագործությամբ և թաց մշակման հետ կապված մյուս մասնագիտություններով զբաղվել, սակայն նրանք կարող էին զբաղվել Իրանում արգելված կամ հարգանք չվայելող արհեստներով՝ գինեգործությամբ, անասուններին մաշկազերծ անելու գործով, կաշեգործությամբ և այլն):

Մուսուլմանի հանդիպելիս հայը պետք է խոնարհաբար ողջուներ նրան և զիջեր ճանապարհը, հայերը իրավունք չունեին ավելի բարձր տներ կառուցել, քան իրենց հարևան մուսուլմանների տներն էին, իրավունք չուներ մզկիթներից բարձր եկեղեցիներ կառուցել, նրանք կարող էին ազատորեն դավանել իրենց կրոնը, սակայն «լուռ ու հանգիստ» ձևով, այսինքն՝ չէին կարող կոչնակ հնչեցնել (ուստի զանգի փոխարեն օգտագործում էին փայտի մի կտոր), կազմակերպել աղմկալից կրոնական արարողություններ և այլն:

Այլադավաններին արգելված էր մի հավատից անցնել մյուսին՝ բացի իսլամից: Եթե հայերը մուսուլմանին թեկուզ սխալմամբ անվանեին «մոսիհի» (քրիստոնյա) կամ «յահուդի» (հրեա), դա դիտվում էր վիրավորանք ու հանցանք, և հարուցվում էր քրեական գործ: Հայերի բռնի հավատափոխության դեպքերը XIX դարում ևս շարունակում էին գոյություն ունենալ, սակայն չէին կրում զանգվածային բնույթ: Անհ-

ռաժեշտության դեպքում ոչ մուսուլմանները դիմում էին իրենց իսկական հայացքները թաքցնելու Իրանում օրինականացված սկզբունքին («թաքիյա»), որը լայնորեն կիրառվում էր շիա մուսուլմանների շրջանում: Քրիստոնյաներն ու հուդայականները Իրանում ապրում էին փակ, մեկուսացված կյանքով: Նրանց շփումները մուսուլմանների հետ սահմանափակ էր միայն աշխատանքի բերումով: Այլադավանի և մուսուլմանի միջև վեճ առաջանալու դեպքում այն լուծվում էր մուսուլման դատավորի՝ ղադիի միջոցով՝ ըստ շարիաթի: Սովորական երևույթ էր, երբ մուսուլմանները քրիստոնյա կանանց հետ ամուսնանալու դեպքում նրանց պարտադրում էին իսլամը:

Այլադավանները բանակում ծառայելու և զենք կրելու իրավունք չունեին, չէին կարող զբաղեցնել զինվորական ու վարչական պաշտոններ, քանի որ օրենքը արգելում էր այլադավանին իշխել մուսուլմանի նկատմամբ: Ուստի ազգային–կրոնական փոքրամասնությունները (այլադավանները) աշխատում էին ապրել հավաքական կյանքով միևնույն բնակավայրում ու թաղամասերում, որպեսզի անհրաժեշտության դեպքում կարողանային պաշտպանել հալածանքներից ու ջարդերից: Բացի այդ՝ XIX դ. ընթացքում, չնայած կառավարության կողմից հայերի նկատմամբ իրականացվող հովանավորչական քաղաքականությանը, ժամանակ առ ժամանակ տեղի էին ունենում հայ բնակչության նկատմամբ բռնությունների և հալածանքների դեպքեր, որոնց պատճառը կարող էր լինել նախանձը հայ հաջողակ վաճառականների նկատմամբ, նրանց ունեցվածքին տիրանալու ձգտումը կամ պարզապես մուսուլմանի ու քրիստոնյա հայի միջև դատարկ վեճը, որը ճարպկորեն ուռճացվում և օգտագործվում էր տեղական իշխանությունների և մոլեռանդ հոգևորականների կողմից: Հաճախ այլադավաններին՝ հայերին, ասորիներին, փարսերին և հրեաներին հալածանքների ենթարկելու համար օգտագործում էին նաև քաղաքների ապադասակարգայնացված տարրերին՝ «լոթիներին» (պարսկերեն՝ «լութի»): Վերջիններս հարձակվում էին այլադավանների թաղամասերի վրա, կողոպտում ու այրում էին նրանց տները, խանութներն ու արհեստանոցները և այն ու սպանում նրանց բնակիչներին ու տերերին: 1851 թ., օրինակ, Թեհրանում լոթիները տակնուվրա արեցին հայկական թաղամասը, որն ուղեկցվեց հայ բնակչության ջարդով: Տեղի էին ունենում նաև հայերի բռնի մուսուլմանացման դեպքեր:

Որպես կանոն՝ մուսուլմանների ընդհարումները քրիստոնյաների հետ ավելի հաճախ տեղի էին ունենում անբերրի տարիներին անկայուն քաղաքական իրադրության դեպքում: Օրինակ՝ 1848 թ. Թավրիզում ծագեց խռովություն, մուսուլմանները սկսեցին կողոպտել հայերի տներն ու խանութները (Իրանի հյուսիսային շրջաններում մորեխը ոչնչացրել էր ցանքերի մեծ մասը, ուստի զգացվում էր սննդամթերքի սուր պակաս):

Մոլեռանդ ամբոխի հալածանքներից պաշտպանվելու համար Թավրիզում հայությունը հավաքվել էր քաղաքի կենտրոնում և բերդի վերածել իրենց թաղամասը՝ այն անվանելով «բերդաթաղ» կամ «ղալա» (թուրքերեն՝ բերդ — Վ. Բ.): Թաղը վտանգից ազատ պահելու համար ձեռնարկվել էին ապահովության զանազան մի-

ջոցներ, մասնավորապես կառուցվել էին ամրակուռ պատեր և երկաթյա դարպասներ: Ուշագրավ է նշել, որ Բերդաթաղ թաղամասում էին հաստատվել օտարերկրյա հյուպատոսությունները և առհասարակ եվրոպացիները՝ որպես առավել անվտանգ վայր:

Նման բռնկումների ժամանակ, որպես կանոն, պարսից շահերը աշխատում էին զսպել անսանձ տարրերին և պաշտպանել իրենց այլադավան հպատակներին: Այսպես՝ 1842 թ. Ֆաթհ Ալի շահը, անձամբ բանակի գլուխ անցած, մի ամբողջ ռազմական արշավանք կազմակերպեց դեպի Սպահան՝ հայ բնակչությանը հարստահարող, նեղող տարրերին պատժելու համար:

1834 թ. դաջարական գահի վրա Ֆաթհ Ալի շահին փոխարինած Մոհամմադ շահը (1834–1848) ևս վարում էր հայերին հովանավորելու քաղաքականություն: Այսպես՝ 1844 թ. նա հրամայեց վերադարձնել Նոր Ջուղայում հայերից բռնագրավված եկեղեցին և պետական միջոցներով վերանորոգել այն: Իսկ Նասր–էդ–Դին (1848–1896) և Մոզաֆֆար–էդ–Դին (1896–1906) շահերի կառավարման շրջանում իրանահայության վիճակում տեղի ունեցան դրական առումով կարևոր փոփոխություններ: Իրանի այդ երկու տիրակալները աշխատում էին մղում տալ հայության գործարար և հոգևոր եռանդին ու ակտիվությանը: Երկիրը տնտեսական լճացման վիճակից դուրս բերելու, արհեստներն ու առևտուրը խթանելու նպատակով նրանք հրապարակեցին մի շարք ֆիրմաններ (հրամանագրեր), որոնցով վերջ էր տրվում հայերի նկատմամբ եղած մի շարք սահմանափակումներին, արգելվում էր նրանց բռնի հավատափոխությունը, կանոնավորվում էր հայ քաղաքային և գյուղական բնակչությունից գանձվող հարկահավաքման գործը, օրինականացվում էին հայ եկեղեցիների կալվածքները և այլն: Հայերին նորից վստահվեցին արքունի և պետական բարձր պաշտոններ: Մի խոսքով՝ օրենսդրական կարգով հայերը վերցվեցին պետության հովանավորության տակ և ձեռք բերեցին «հավատարիմ ժողովրդի» կարգավիճակ: Մասնավորապես Նասր–էդ–Դին շահի հրապարակած հրովարտակներից մեկում ասվում էր, որ «հայերը լավ հպատակներ են, տերության հավատարիմ քաղաքացիներ»: 1858 թ. նա հրապարակեց մի հրամանագիր, որով պահպանվում էին նախկին շահերի կողմից Իրանի հայ համայնքին հատկացված իրավունքներն ու արտոնությունները, 1879 թ. 100 հազար թուման հատկացրեց Նոր Ջուղայի հայոց Առաջնորդարանին, հոգ էր տանում հայկական դպրոցները պատշաճ վիճակում պահելու համար և այլն:

Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ հոգևորականության դիրքորոշման մեջ ևս դեպի հայերը տեղի ունեցավ որոշակի շրջադարձ: Հակառակ նրան, որ առհասարակ Իրանում բարձր շիական հոգևորականությունը բուռն պայքարի մեջ էր արքունիքի դեմ, որը ջանքեր էր գործադրում թուլացնելու կղերի տիրապետող ազդեցությունը, վերջինը հայության հանդեպ ցույց տված իր վերաբերմունքով կատարելապես համերաշխ էր պալատի հետ: Այսինքն՝ նա էլ հովանավորում ու պաշտպանում էր հայությանը, մինչդեռ պալատի դեմ մղած իր պայքարի մեջ նա կարող էր կառավարության այդ քաղաքականությանը կրոնական գունավորում տալով՝ հա-

տու մի զենք դարձնել իր համար, ինչպես դա անում էր, օրինակ, XIX դ. առաջին երեսնամյակին:

Հայ և իրանական ժողովուրդների միջև մերձեցման պայմաններ էր ստեղծում նաև ինքը՝ հայությունը, իր վերին աստիճանի օրինապահ ընթացքով և անգնահատելի ծառայություններով երկրի տնտեսական, կրթական–մշակութային և քաղաքական մարզերում:

Հայերը նաև անդադրում պայքարում էին իրենց իրավունքների համար՝ ջանալով գեթ ինչ–որ չափով կրճատել իրենց համար սահմանված սահմանափակումները: Օրինակ՝ Ատրպատականի հայոց թեմական առաջնորդ Գևորգ եպիսկոպոսը 1855 թ. հուլիսի 27–ին Նասր–էդ–Դին շահին ներկայացնում է մի բողոքագիր իրանահայ համայնքների ծանր դրության մասին՝ առաջարկելով մի շարք միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են կիրառել իրանահայ գաղթօջախները անկումից դուրս բերելու համար: Մասնավորապես նա խնդրում էր վերացնել «Իմամ Ջաֆար»–ի օրենքը, ըստ որի՝ հավատափոխ հայը դառնում էր քրիստոնյա հարազատների ունեցվածքի միակ ժառանգորդը, արգելել հայերի հավատափոխությունը, վերջ տալ կալվածատերերի բռնություններն ու անօրինականությունները հայ գյուղացիության նկատմամբ, արգելել մուսուլմանների կողմից հայ աղջիկներ փախցնելը և առևանգողներին պատժել, սիրով վարվել հպատակ հայերի հետ, արգելել անզավակ հայ մարդկանց գույքի գրավումը, թույլ տալ, որ հայ եկեղեցիները զանգակ հնչեցնեն, օրինականացնել հայ եկեղեցիների կալվածքները, թույլ չտալ ամերիկյան միսիոներներին քարոզչությամբ զբաղվելու հայերի շրջանում, օգնել Թավրիզի հայկական դպրոցին 250 թուման նպաստով և այլն:

Շահն ընդառաջել է Գևորգ եպիսկոպոսի խնդրանքը և խոստացել բավարարել նրա առաջադրած բոլոր պահանջները՝ բացառությամբ մեկի՝ եկեղեցիների զանգահարության թույլտվություն տալը՝ մտավախություն ունենալով, որ մոլեռանդ ամբոխը կարող է գրգռվել հայերի դեմ:

Իրանահայության դրությունը բարելավելու նպատակով Նասր–էդ–Դին շահին է դիմել նաև Նոր Ջուղայի թեմի առաջնորդ Թադեոս վարդապետ Բեկնազարյանը (1851–1863): Նա կարողացել է համոզել արքունիքին, որ նվազեցվեն Նոր Ջուղայի և Փերիայի հայ բնակչության հարկերը, վերջ տրվեն պարսկական տեղական իշխանությունների շահատակություններին, որոնք «կանոնաւորյայ» տուրքերից բացի շորթում էին նաև «տուրս զանկանոնաւորեալս», այսինքն՝ սահմանված հարկերից ավելին: Իրանական արքունիքը ընդառաջ է գնացել այդ խնդրանքներին:

XIX դ. 90–ական թվականներին Արևմտյան Հայաստանում սուլթան Աբդուլ Համիդի կողմից կազմակերպված հայերի զանգվածային ջարդերի ժամանակ իրանական կառավարությունը անարգել թույլատրում էր հայ փախստականներին անցնելու իրանական սահմանը և ապաստան գտնելու Իրանի հյուրընկալ հողում: Թեև դա թուրքական և իրանական իշխանությունների միջև տեղիք էր տալիս սուր քաղաքական վեճերի ու առճակատման, և թուրքերը նույնիսկ սահմանային մի քանի կետերում կենտրոնացրին զորքեր՝ Իրանի տարածք ներխուժելու սպառնալիքով,

բայց դա հետ չկանգնեցրեց իրանական կառավարությանը, որը թուրքերին պատասխանեց իրանա–թուրքական սահմանների մոտ խոշոր ռազմական ուժեր կենտրոնացնելով: Պարսիկ պատմաբան Խոսրով Չաքերին իրավացիորեն նշում է, որ Իրանում այդ ժամանակ պետությունը հովանավորում ու պաշտպանում էր հայերին նույնիսկ այն ժամանակ, երբ նրանք, Իրանի տարածքն օգտագործելով, «հայդուկային պատերազմ էին մղում թուրքերի դեմ»:

XIX դ. երկրորդ կեսին իրանական կառավարության հայանպաստ քաղաքականության խոսուն վկայությունը կարող է լինել նաև Իրանի հայ բնակչության արագ աճը: Եթե 1851 թ. Իրանում կար շուրջ 20–30 հազար հայ բնակիչ, ապա 1890 թ. այն արդեն կազմում էր 80 հազար:

XIX դարում հայերը հիմնականում բնակվում էին Ատրպատականի, Սպահանի, Գիլիանի, Մազանդարանի նահանգներում և ոչ մեծ թվով՝ երկրի տարբեր մասերում: Նրանք բնակություն էին հաստատում նաև Թեհրանում, որն այդ ողջ հարյուրամյակում աչքի չէր ընկնում իր հայաշատությամբ: XIX դ. վերջին հայերը սկսեցին հայտնվել նաև Սուլթանաբադ (ներկայումս՝ Արաք) քաղաքում և նրա շրջակա գավառներում:

XIX դ. երկրորդ կեսին հայկական նոր գաղթօջախներ ստեղծվեցին Քերմանշահում, Մեշհեդում և այլ վայրերում: Դրանով հայության տեղաբաշխման աշխարհագրական սահմանները ծավալվեցին թե՛ արևելյան և թե՛ արևմտյան ուղղություններով:

XIX դ. սկզբին իրանահայերի հոգևոր–հասարակական կյանքը կենտրոնացված էր երկու թեմերում՝ Ատրպատականի թեմի կենտրոնը Ս. Թադեոսի կամ Թադեի վանքն էր, որտեղ հաստատված էր Ատրպատականի թեմակալի աթոռանիստը): 1833 թվականից թեմի կենտրոնը տեղափոխվում է Թավրիզ:

Մյուսը Իրանա–հնդկական թեմն էր՝ Նոր Ջուղա կենտրոնով: Վերջինս ընդգրկում էր նաև Հնդկաստանի, Աֆղանստանի և Հեռավոր Արևելքի հայկական գաղթօջախները: Հարկ է նշել, որ եթե հյուսիսային իրանահայությունը ռուսական, ֆրանսիական, մասամբ նաև գերմանական մշակութային ազդեցության ներքո էր, ապա հարավային իրանահայությունը բացառապես անգլիական էր: Իրանահայերի իրավական դրության հիմքը կրոնաեկեղեցական ինքնավարությունն էր:

Հայ համայնքի ինքնավարության մարմիններն էին թեմական առաջնորդարանները: Իրանում գտնվող թեմերը ենթարկվում էին Էջմիածնի Մայր Աթոռին: Ճիշտ է՝ 1828 թ. ռուսական տիրապետության տակ անցնելուց հետո Ամենայն հայոց կաթողիկոսությունն այլևս նախկինի պես չէր կարող անմիջականորեն զբաղվել Իրանի հայ համայնքի գործերով, սակայն իշխանությունները հարգանքով էին վերաբերվում Էջմիածնին և ընդունում նրա հոգևոր իշխանությունը Իրանի հայ գաղութի նկատմամբ: Վերջինս իր դատաիրավական հարցերը լուծում էր հայ Առաքելական եկեղեցու իրավական նորմերի և Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» հիման վրա: Հոգևոր առաջնորդը իրավունք ուներ դատելու համայնքի անդամներին, պատժելու կրոնազանցներին (բայց ոչ՝ մուսուլմանություն ընդունածներին): Ամուսնական,

ամուսնալուծական, ժառանգական և կրոնական խնդիրների լուծման իրավասությունը ևս պատկանում էր Հայոց Առաջնորդարանին:

Հայերի իրավական դրությունը ապահովված էր ոչ միայն շահական հրովարտակներով, այլև ավանդույթներով և սովորությունների ուժով: Նշված շրջանում հայ բոլոր գաղթօջախները, մասնավորապես Ատրպատականը մշակութային վերելք ապրեցին: Իրանահայությունը հանդես էր գալիս որպես իր միջավայրի քաղաքակրթության զարգացմանը նպաստող ազդու ուժ: Իրանի մշակութային կյանքում հայերի խաղացած ակնառու դերը հիմք է տվել այդ երկիր այցելած եվրոպացիներին հայերին անվանել «արևելյան քաղաքականության ջահակիրներ»:

XIX դ. երկրորդ հիսնամյակին բացվում են եվրոպական տիպի առաջին դպրոցները, Իրանում առաջին գրադարանները և կրթամշակութային այլ հաստատություններ: Հայկական ազգային դպրոցների իրավական երաշխիք էր տրված շահերի մի քանի ֆիրմաններով (հրամանագրերով): Թավրիզում, Թեհրանում և Նոր Ջուղայում ձևավորվում է նաև հայ թատերական կյանքը: Տարբեր քաղաքներում կառուցվում են բազմաթիվ եկեղեցիներ: Վերելք է ապրում նաև պարսկահայ տպագրությունը, ծնունդ են առնում իրանահայ պարբերականները:

XIX դ. վերջին և XX դ. Իրանի հասարակական–քաղաքական, տնտեսական և կրթական–մշակութային կյանքում արգասավոր գործունեությամբ աչքի են ընկել մեծ թվով հայեր: Նրանցից շատերին վստահվել են արքունի և պետական բարձր պաշտոններ: Մեծ է եղել հայերի դերը նաև Իրանում ժամանակակից եվրոպական քաղաքակրթության ձեռքբերումները և տեխնոլոգիական նվաճումներն Իրանում արմատավորելու, իրանական քաղաքական կուլտուրայի ձևավորմանը նպաստելու և այլ ասպարեզներում:

XIX դ. վերջերից Իրանում հայտնվում են նաև հայազգի մեծահարուստ արդյունաբերողներ ու առևտրականներ, խոշոր կալվածատերեր: Իրանահայ վաճառականներն առաջատար դիրքեր են ունեցել Իրանի միջազգային առևտրում և ֆինանսների բնագավառում: Մեծ է եղել հայերի դերը նաև Իրանի արհեստագործության մեջ:

Հայությունը նպաստել է նաև իրանական ժողովրդի քաղաքական զարթոնքին, նրա քաղաքացիական–ընկերային կյանքի բարեփոխմանը:

Այն, որ իրանահայերը տիրապետում էին եվրոպական լեզուների և Եվրոպայում ունեին առևտրական ու անձնական լայն կապեր, դաջարական միապետերը նրանց որպես դեսպաններ, դեսպանորդներ, դիվանագիտական հանձնակատարներ և այլն ուղարկում էին տարբեր երկրներ: Դաջարական Իրանում քիչ չեն եղել նաև բարձր պետական պաշտոններ զբաղեցրած հայազգի (ճիշտ է՝ դավանափոխ) գործիչները: Հայկական ծագում է ունեցել Աթաբեկ Ամին ալ–Սուլթանը, որը զբաղեցրել է «սադ–ազամի» (վարչապետի) պաշտոնը: Մեծ է եղել ծագումով հայ գործիչների դերը նաև դաջարական Իրանի բանակում և ռազմական կառույցներում: Ճիշտ է՝ պարսկական պետական, հասարակական–քաղաքական ու զինվորական ծառայության մեջ եղած բազմաթիվ հայ գործիչներ, որոնց մի մասը, հանգամանքների բերումով դա-

վանափոխ լինելով և ընդունելով իսլամը, անմիջական մասնակցություն չի ունեցել իրանահայերի համայնքային կյանքին, սակայն չի կարելի նրանց կտրել մեր պատմությունից, մանավանդ որ նրանցից շատերը, օժտված լինելով ազգային զգացումներով, փորձել են պահպանել հայ դիմագիծն ու նկարագիրը, օգտակար լինել սեփական ժողովրդին:

XIX դ. 90–ական թվականներից աշխուժություն է ապրում նաև իրանահայ գաղութի հասարակական–քաղաքական կյանքը: Այստեղ են թափանցում հենց գործունեության սկզբում հայ քաղաքական կուսակցությունները՝ Արմենական, Սոցիալ–դեմոկրատական հնչակյան կուսակցությունը և Հայ հեղափոխական դաշնակցությունը: Հանդես են գալիս զանազան հասարակական կազմակերպություններ, բարեգործական ընկերություններ ու միություններ:

1890–ական թվականների աբդուլհամիդյան բռնատիրության տարիներին Օսմանյան կայսրությունում կազմակերպված հայկական ջարդերից մազապուրծ եղած մեծ թվով հայեր ապաստան են գտնում Իրանի տարածքում՝ ստվարացնելով տեղի հայ գաղթօջախները:

Իրանահայությունն իր մասնակցությունն է ունեցել Իրանի 1905–1911 թթ. սահմանադրական շարժմանը: Այդ շարժման տարիներին իրանահայությունն իրավունք ստացավ իրանական խորհրդարանում՝ մեջլիսում ունենալու երկու պատգամավոր: Հայերն ընտրվեցին տեղական ինքնավարության մարմիններում:

1908 թ. փետրվարի 17–ին կազմակերպվեց Թեհրանի հայոց Ազգային խորհուրդը, որը, իբրև տեղի հայոց բարձրագույն իշխանություն, միջնորդ էր լինելու հայ համայնքի և կառավարության ու մեջլիսի միջև: 1911 թ. Ազգային խորհուրդը պաշտոնապես ճանաչվեց և կոչվեց «Թեհրանի հայոց համայնական վարչություն»: Այդ վարչության որոշումով 1917 թ. կազմվեցին Համադանի, Սուլթանաբադի և այլ հայաշատ վայրերի համայնքային կազմակերպությունները, որոնց ներկայացուցիչներից էլ ստեղծվեց «Իրանահայ ընդհանուր խորհուրդը»:

Առաջին աշխարհամարտը ծանր հետևանքներ ունեցավ նաև իրանահայ կյանքում: 1918 թ. թուրքական զորքերը, մտնելով Ատրպատական, կոտորեցին զգալի թվով հայերի, ավերեցին բազմաթիվ հայկական գյուղեր, կողոպտեցին բազում եկեղեցիներ և այլն:

Արևմտահայության եղեռնից փրկված ու վերապրած բազմաթիվ հայեր ապաստան գտան Իրանի հյուրընկալ հողում և արժանացան բարի ու ազնիվ իրանական ժողովրդի ասպնջական վերաբերմունքին:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ԻՐԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

1. ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԱՅԼ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐ

Ղաջարների տիրապետության շրջանում մշակույթի բոլոր բնագավառները զարգանում էին որպես այն միտումների բնական շարունակություն, որոնց հիմքերը դրվել էին դեռևս Սեֆյանների շրջանում: Աղա Մոհամմադ շահը և նրանից հետո գահ բարձրացած Ֆաթհ Ալի շահը, հետևելով իրենց նախորդի՝ Քարիմ–խան Զենդի օրինակին, պալատ էին հրավիրում ժամանակի առավել աչքի ընկնող նկարիչներին, որոնց հանձնարարվում էր նկարել դաջարական իշխանազունների և ազնվականների դիմանկարները: Ղաջարների շրջանի ողջ գեղանկարչությունը կարելի է բաժանել երեք խմբի. 1. իշխանազունների, մեծատոհմիկ աստիճանավորների և երևելի տղամարդկանց ու կանանց դիմանկարներ՝ նրբաճաշակ զգեստներով և թանկարժեք ոսկերչական զարդերով, 2. արքունիքի կյանքի տարբեր տեսարաններ, ներառյալ պարողների, կրկեսային մարմնամարզիկների և այլ ելույթները, ընդ որում՝ այդ տեսարաններում հաճախ ներկայացվում էին կանանց պատկերներ (նման սյուժեներով նկարները չափազանց մեծ պահանջարկ ունեին հասարակության ունևոր խավերի շրջանում, դրանք նման նկարները լայնորեն օգտագործում էին որպես իրենց առանձնատները զարդարելու և նրանց շքեղությունը շեշտելու տարրեր), 3. այնպիսի սյուժեներ, որոնք պատկերում էին երկրի պատմության հերոսական դրվագներ, ինչպես նաև կրոնական ու ազգային պատմական բնույթի իրադարձություններ: Նման նկարները սովորաբար անվանվում էին «թեյատների նկարներ»: Գեղանկարչության այդ ոճի վարպետները պահպանում էին հին գեղանկարչության ավանդույթները: Չափազանց լայն տարածում ունեին նաև հայտնի գիտնականների և փիլիսոփաների դիմանկարները:

Ղաջարների շրջանում որոշակի տարածում ունեին բնության տեսարանները ներկայացնող նկարները: Նման աշխատանքներում սովորաբար օգտագործվում էին տաք գույները, նարնջագույն և դեղին նրբերանգները, երբեմն կապույտի և կանաչի ելևէջների ուղեկցությամբ նկարիչները օգտագործում էին նաև կոմպոզիցիոն լուծումներ՝ պատկերելով, օրինակ, պատուհանի առջև նստած մարդու, որի մարմինը մասնակիորեն փակված էր անթափանց վարագույրով: Նկարի մյուս մասերում, որպես կանոն, պատկերվում էին ոչ ռեալիստական պատկերներ: Նման աշխատանքները բնորոշում էին վերածնության դարաշրջանի իտալական նկարիչներին, և, անկասկած, իրանցի նկարիչներն ընդօրինակում էին նրանց:

Դեռևս զենդերի տիրապետության շրջանում մշակվել էր և դաջարների շրջանում ստացել հետագա զարգացում գեղանկարչության մեկ այլ ոճ ևս, որը կոչվում էր «ծաղիկների և թռչունների» ոճ: Այն օգտագործվում էր գլխավորապես առաստաղների, դռների, գրքերի կազմերի և այլնի նկարազարդման մեջ: Նշված ժամանակներում նման ոճի հետևորդ վարպետների թվից կարելի է հիշատակել Միրզա–Բաբային, Սայիդ–Միրզային և Մուհամմեդ Սադիղին (Աղա Սադիղ): Հիշյալ նկարիչները Իրանի մայրաքաղաքը Թեհրան տեղափոխվելուց հետո այնտեղ հիմնել էին Դաջարական գեղարվեստի դպրոց՝ միաժամանակ շարունակելով աշխատել որպես պալատական նկարիչներ:

Դաջարների դարաշրջանի հայտնի դիմանկարիչներից արժե հիշատակել այնպիսի նկարիչների անուններ, ինչպիսիք են Միհր–Ալի Իսֆահանին (նկարել է Ֆաթհ Ալի շահի դիմանկարները), Աբդ Ալլահ–խան (Աբբաս Միրզայի դիմանկարիչը) և Մուհամմեդ Հասանը (ստեղծել է մի շարք դաջարական իշխանազունների դիմանկարներ): Այլ նկարիչներ նկարել են կանանց դիմանկարներ, մասնավորապես պարուհիների և այլն, ընդ որում՝ ավելի հենվելով իրենց երևակայության, քան ռեալականության վրա: Սովորաբար նրանք չէին ստորագրում իրենց նկարների տակ: Դրա պատճառն այն էր, որ իրենց աշխատանքները համարվում էին բարոյականության ու պատշաճության վերաբերյալ հասարակության պատկերացումներին չհամապատասխանող գործեր, ուստիև նրանք աշխատում էին խուսափել վիրավորանքների և լուտանքների վտանգից:

Հայտնի գիտնականների, փիլիսոփաների և բանաստեղծների դիմանկարները ստեղծվում էին գլխավորապես նկարիչ Ռաջափ–Ալի Նամիի կողմից, որը սովորաբար իր ստորագրությունը տեղադրում էր ոչ մեծ բանաստեղծության մեջ կտավի ներքևի մասի մի անկյունում: Այդ ժամանակներում ստեղծվում էին նաև ոչ քիչ թվով կրոնական թեմաներով նկարներ, որոնցում արտացոլվում էին այնպիսի սյուժեներ, ինչպես Հովսեփ Գեղեցիկի պատմությունը, նրա կյանքը մանկության տարիներին, ժամանումը Եգիպտոս և վերադարձը իր հոր մոտ: Այդ կարգի նկարները նկարված են սովորական պալատական ոճով և նկարչի կողմից անստորագիր էին:

Դաջարների շրջանում գեղանկարչության մեջ ծնունդ առան նաև նոր ուղղություններ, որոնց թիվը թեև մեծ չէր, սակայն դրանք ունեն նշանակալից տեսողական–էսթետիկական արժեք: Խոսքը բնապատկերների (նկարիչ Մահդի Հուսայնի) կամ իմամներ Ալիի, Հասանի և Հուսեյնի, Սալմանի և Ղանբարի դիմանկարների մասին է (նկարիչ Իբրահիմ Նաղղաշբաշի): Այդ բոլոր աշխատանքներում կարելի է նկատել այն ոճը, որը ի հայտ էր եկել դեռևս Սեֆյանների շրջանում: Այդ նույն ոճով նկարված է նաև միստիկ Նուր–Ալի–շահի դիմանկարը (պատկանում է Իսմայիլ Ջալայիրի վրձնին), նկարիչ Մուսայի պատկերները շահական հարեմից, «Գորգագործ կանայք» գործերը, ինչպես նաև Մահմուդ–խան Մալիք ալ–Շուարա Սաբայի վրձնին պատկանող թեհրանյան կյանքից վերցված տեսարանները: Այդ շրջանի ռեալիստական և բարձր մակարդակով ստեղծված գործերից, որոնք կարելի է համատեղ եվրոպական վարպետների ստեղծագործությունների հետ, հիշատակության ար-

ժանի է նկարիչ Ալի–Աքբար Մուզայյին ալ–Դաուլայի գործերը (օրինակ՝ նրա «Հերկում» գործը): Հիշյալ նկարիչը գեղանկարչություն է ուսումնասիրել Եվրոպայում և եղել է արևմտյան արվեստի ուժգին ազդեցության տակ: Մեզ են հասել նաև նկարիչ Աղա–Բուզուրգ Նաղդաշբաշիի մի քանի գործեր:

Նշված ժամանակների մեկ այլ հայտնի նկարիչ Մուհամմեդ Գաֆֆարին, որը հայտնի է Քամալ ալ–Մուլք անունով, Նասր–էդ–Դին և Մուզաֆար–էդ–Դին շահերի օրոք պալատական նկարիչ էր: Իր ստեղծագործական գործունեությունը նա սկսել էր որպես բնանկարիչ: Ավելի ուշ նա դարձավ բազմաժանր ուղղությունների վարպետ: Ընդ որում, նա գերազանցապես դիմեց ռեալիզմին, որը սահմանակցում էր նատուրալիզմի հետ: Վրձնի այդ վարպետը Մոզաֆֆար Էդ–դին շահի օրոք ճանապարհորդում էր Եվրոպայում, որտեղ նա մեծ վարպետությամբ պատճենում էր եվրոպական հին վարպետների ստեղծագործությունները: Վերադառնալով Իրան՝ նա իր վարպետությունը և գեղարվեստական փորձը փոխանցում էր իր աշակերտներին: Հենց Մուհամմեդ Գաֆֆարին ռեալիզմը և նատուրալիզմը դարձրեց իր ժամանակի տարածված գեղարվեստական ոճը: Նրա հայտնի ստեղծագործություններից հիշատակության արժանի են այնպիսի գործեր, ինչպիսիք են «Բաղդադցի գուշակողը», «Գյուլիստանի պալատի այգին և շատրվանը», «Հայելիների դահլիճը», «Սահիբքիրանիյա պալատի դահլիճը ջրավազանի հետ», «Կանխագուշակողը» և այլն: Արևմտյան արվեստով նրա հրապուրվելը հանգեցրեց նրան, որ տեղի ունեցավ դաջարական գեղարվեստական ավանդույթի զարգացման լճացում: Նրա ազդեցությամբ իրանական նկարիչներն ավելի ու ավելի էին հրապուրվում արևմտյան, իրենց համար օտար գեղարվեստական դպրոցի սկզբունքներով:

Այն նկարիչների թվում, որոնք ձգտում էին իրենց ստեղծագործություններում ավելի մեծ տեղ տալ երևակայությանը (հատկապես թեյատների համար նախատեսված նկարներում), կարելի է հիշատակել այնպիսի հայտնի անուններ, ինչպիսիք են Հուսեյին Քուլլալար Աղասին, Մուհամմեդ Մուդաբիրը, Աբբաս Բուլուկիֆարրը, Մուհամմեդ Համիդին, Հուսեյին Համադանին, Հասան Իսմայիլ–զադե Չալիփան և Միրզա Մահդի Շիրազին: Նրանց ստեղծագործությունների ոճն ամբողջապես դաջարական էր:

Դաջարների տիրապետության շրջանում ակտիվորեն զարգացող մյուս արվեստներից կարելի է հիշատակել շենքերի հայելապատ հարդարումը, գիպսի վրա փորագրումը (գիպսաքանդակումը), ինչպես նաև պատուհանների գունավոր վիտրաժների պատրաստումը: Իրանական արվեստի պատմության մեջ դաջարների դարաշրջանի հայելապատ զարդարանքները մինչ օրս մնում են անգերազանցելի իրենց գեղեցկությամբ ու նրբագեղությամբ:

Նշված ժամանակների արվեստի մյուս բնագավառներից լայն տարածում ուներ արծաթագործությունը և առհասարակ ոսկերչությունը: Զարգացման բարձր աստիճանի էին հասել գորգագործությունը, ջուլհակության և ոստայնանկության տարբեր տեսակները: Սակայն ինչպես և արվեստի շատ ճյուղերում, վարպետները

հիմնականում պատճենում էին Սեֆյանների շրջանի ոճերն ու գեղարվեստական ուղղությունները:

Լայն տարածում ունեին նաև արվեստի այն ճյուղերը, որոնք կապված էին քարերի վերամշակման հետ: Ղաջարական շրջանի բնորոշ ստեղծագործություններից կարելի է հիշատակել քարից առյուծների արձանները, մեծ քարե պատուհանները, ինչպես նաև տարբեր հարթաքանդակները:

Ղաջարների ժամանակ վերածնունդ ապրեց աղյուսի միջոցով շենքերը զարդարելու հին արվեստը: Այդ ժամանակներում արտադրվում էին այնպիսի թրծված աղյուսներ, որոնց վրա փորագրված էին զանազան նկարներ, զարդանկարներ ու նախշեր: Նման հարդարման հետաքրքիր օրինակներ կարելի է գտնել Թեհրանի և Յազդի մի շարք շենքերում: Դա հին իրանական արվեստ է, որը տևական ժամանակ մոռացության էր մատնվել:

Ճարտարապետություն: Ղաջարների դարաշրջանի ճարտարապետությունը անհրաժեշտ է բաժանել երկու շրջանի: Առաջինը սկսվել է ղաջարական արքայատան կառավարումը հաստատվելուց հետո՝ մինչև Նասր–էդ–Դին շահի տիրապետության շրջանը: Նշված ժամանակաշրջանը Զենդերի և Սեֆյանների ճարտարապետական ավանդույթների շարունակությունն էր՝ շինությունների կառուցվածքի և նրանց հարդարման աննշան փոփոխություններով հանդերձ: Այդ հանգամանքը ցայտուն երևում է այնպիսի շինությունների համեմատության դեպքում, ինչպիսիք են Աշրաֆի պալատը Սպահանում (Սեֆյան շրջան), Շիրազի փոստատան հին շենքը (Զենդերի շրջան), Մարմարյա գահը (Թախթ–ի մարմար, Զենդերի և Ղաջարների շրջան) և Ղավամ–ադ–Դոուլեի հին առանձնատունը (1845 թ., Ղաջարների շրջան): Նշված շրջանում ճարտարապետության մեջ գերակշռում են իրանական տարրերը, իսկ օտարերկրյա ազդեցությունը, որը երևան եկավ միայն Նասր–էդ–Դին շահի թագավորության սկզբնական շրջանում, դեռևս խիստ աննշան էր:

Ղաջարների տիրապետության շրջանում կառուցվում էին ուշադրության արժանի զգալի թվով շենքեր՝ մզկիթներ, մեդիսեներ և այլն, թեև պետք է նշել, որ գեղարվեստական առումով դրանք նշանակալիորեն զիջում էին Սեֆյանների շրջանի ճարտարապետների ձեռքբերումներին: Սեֆյանների ավանդույթների շարունակությունը տևեց մինչև Նասր–էդ–Դին շահի կառավարման կեսերը: Վերջինիս տիրապետության տևական շրջանը նշանավորվեց հարաբերական ներքին կայունության հաստատումով, որը նպաստեց ճարտարապետության և նրան հարող արվեստների նոր ծաղկմանը (հախճասալիկների ձևավորում գիպսի քանդակում և փորագրում, հայելապատ զարդարանքներ, քանդակագործություն և քարի մշակում, ինչպես նաև կերպարվեստ և նկարչություն): Ակտիվորեն զարգանում էին Իրանի կապերը եվրոպական երկրների, մասնավորապես Ռուսաստանի հետ, որը հանգեցրեց օտարերկրյա ազդեցության մեծացմանը Իրանի նկատմամբ: Դրա հետևանքով բուն իրանական հին ավանդույթների պահպանման հետ միաժամանակ հայտնվեցին նաև այլ երկրների գեղարվեստական փորձի ոչ վատ փոխառումներ: Նշված ժամանակաշրջանում լայն տարածում գտավ նկուղային տիպի շքեղ հարդարմամբ

շենքերի շինարարությունը՝ կամարակապ աղյուսե «խվանչա» կոչված առաստաղով, ինչպես նաև փակ շինությունները՝ ոչ մեծ ջրավազանով: Բուռն թափով սկսեցին իրագործվել ճարտարապետական նախագծեր, որոնք օժտված էին «բադգիր» կոչված հատուկ օդափոխիչ անցքերով: Կառուցվում էին մեծ պալատներ, որոնք օժտված էին շքահանդեսային դահլիճներով, էյվաններով և այլ կարգի ճարտարապետական լրացումներով: Շենքերը նախագծելիս ճարտարապետները մեծ կարևորություն էին տալիս կլիմայական պայմաններին, տեղական ավանդույթներին և այլն: Նշված շրջանի կրոնական ճարտարապետությունը (մզկիթներ, մեդրեսեներ, թաքիյաներ, հուսայինիյաներ) ըստ էության չորս էյվանանի մզկիթների հին պարսկական ավանդույթի շարունակությունն էր՝ ոչ մեծ փոփոխություններով հանդերձ:

Խոշոր առանձնատների կառուցումը, որոնք օժտված էին էյվաններով (պատշգամբներով), տարբեր չափերի դահլիճներով, նկուղային շինություններով, քառասյուն դահլիճներով, ջրավազաններով և շատրվաններով (սովորաբար դրանք նկուղային շինություններում էին և ամառային շոգ օրերին ծառայում էին հանգստանալու համար), մեծ շքահանդեսային դահլիճներով, հին ոճի տաղավարներով, որոնք սովորաբար տեղադրվում էին մեծ այգիների մեջտեղում, լճակների, շատրվանների կամ առուների մերձակայքում՝ այս բոլորը իրանական ավանդական ճարտարապետական ոճերի շարունակությունն էր, որոնց գործնական իրագործումը կախված էր պայմաններից և պատվիրատուի ֆինանսական հնարավորությունից:

Իրանական ճարտարապետության վրա օտարերկրյա ազդեցությունը առանձնակի ուժգնության հասավ Նասր–էդ–Դին շահի կառավարման շրջանի կեսերին, նրա որդու՝ Մուզաֆֆար–էդ–Դինի և թոռան՝ Մուհամմեդ Ալիի կառավարման տարիներին:

Որպես այդ ազդեցության օրինակներ կարելի է հիշատակել Շիրազում Ղավում ալ–Մուլքի տունը, որը հայտնի է «Նարնջեսթան» անունով, Աֆիֆաբադ պալատը, Բաղ–ի Դիլգուշա շենքը Շիրազում և այլն: Այդ շենքերի հարդարանքը կատարվել է բարոկկո և XVIII դարի ռոկոկո ոճերով:

Ղաջարական ճարտարապետության զարգացման երկրորդ շրջանը, որը նկատվում էր Նասր–էդ–Դին շահի կառավարման վերջին շրջանում, իրենից ներկայացնում էր իրանական և արևմտյան ճարտարապետական ոճերի հաջողված համադրում, թեև պետք է խոստովանել, որ երբեմն արևմտյան ազդեցությունն ունենում էր ակնառու գերակշռություն: Որպես նման ճարտարապետության ցայտուն օրինակներ կարելի է բերել Թեհրանում հին շահական վարչական շինությունները, մասնավորապես Նիյավարանում Սահիբքիրանիյա պալատի, Գյուլիսթանի պալատի շքահանդեսային դահլիճը, Ադամանդե դահլիճը, Գյուլիսթան այգիների հարավային մասում գտնվող Բաղգիր կոչված շենքը:

Հարկ է նշել, որ ղաջարական արքայատան կառավարման միջնամասային շրջանի ճարտարապետությունը չէր սահմանափակվում լոկ պալատների ու պետական հիմնարկությունների շենքերով: Այդ նույն ժամանակ Իրանի տերբեր քաղաքներում կառուցվել են ոչ քիչ թվով առևտրի կենտրոններ գմբեթաձև տանիքներով:

Այդ շինությունները, որպես կանոն, ունեցել են ոչ երկար կյանք, քանի որ եթե շենքերի նկուղային հարկերը կառուցվել են թրծված աղյուսով, ապա մնացած մասում օգտագործվել է չթրծված աղյուս: Այն ոչ մեծ թվով շենքերը, որոնք պահպանվել են մինչ օրս, ամբողջապես կառուցված են թրծված աղյուսով: Նման շենքերից է, օրինակ, Թեհրանում Մասուդիյա պալատը:

2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

XVIII դարը մոտենում էր ավարտին, երբ Իրանի գահին տիրացավ թյուրքական ծագման դաջարների արքայատոհմը: Իրանի պատմության այդ հատվածը ավատատիրական ինստիտուտների քայքայման երկարատև և բարդ ժամանակաշրջանն էր, երբ երկիրը սոցիալ–տնտեսական, քաղաքական և հոգևոր ճգնաժամի մեջ էր: Պատմության էջերն արձանագրում են արքունական խարդավանքների, ներքին երկպառակությունների, դաժան պատիժների բազմաթիվ փաստեր: Այդ ամենով հանդերձ՝ Ֆաթհալի շահի պալատում եռում էր արքունական կյանքը, զարգանում էր գրականությունը, որը ժառանգականության օրինաչափությամբ իր շեշտադրումներում շարունակում էր մնալ դասականների ավանդույթների ու կարծրատիպերի ծիրում, դառնում էր նախորդների հետահայաց ամփոփումը: Եվ պատահական չէ, որ պարսից գրական ոճերի շարքում (Խորասանյան, Իրաքյան, Հնդկական) «Բազգյաշթ» — «Վերադարձ» անունն էր կրում: Սակայն նախորդների արվեստին, հատկապես խորասանյան պարզ ոճին վերադառնալու «գեղագիտական ռազմավարությունը» ժամանակավրեպ էր, քանի որ նոր ժամանակները նոր խոսք էին պահանջում: Ճիշտ է՝ յուրաքանչյուր բանաստեղծ իր տաղանդի և շնորհի սահմաններում մի նորույթ էր բերում կամ թարմացնում էր հինը, սակայն «Վերադարձի» դերն առավելապես երկու պատմամշակութային ֆենոմենները՝ միջնադարյան գրականությունն ու այլ հովերով ձևավորվող նոր շրջանը, հանդիպեցնելու մեջ էր:

Նմանակում էր նաև ինքը՝ Ֆաթհալի շահը, որը պոետների հայտնի մեկենաս, XI դարի սուլթան Մահմուդ Ղազնավիի օրինակով ստեղծեց պալատական գրական միություն, որը համախմբում էր արվեստի նվիրյալներին և իրազեկ դարձնում նոր խոսքին և մտքին: Ավելին՝ նրա պալատում պոետ Սաբայի գլխավորությամբ շարունակում էր գործել դեռևս Մահմուդի կողմից ստեղծված «պոետների արքայի» (մալեք աշ–շոարա) ինստիտուտը, որի առաջին ներկայացուցիչն էր եղել XI դարի տաղանդավոր պոետ Օնսորին:

Սաբան, Նեշաթը, Մեջմեր Էսֆահանին կրթված մարդիկ էին, սակայն գրական աշխարհում՝ ավանդամետ: Ծաղկում էին բանաստեղծական բոլոր ձևերը՝ ներբող–դասիդեն, մասնավին, դազալը, ռոբային՝ դառնում գովասանքի, հավատարմական զգացումների դրսևորման միջոց, սակայն մեծապես հետապնդում էին շահադիտական նպատակներ: Օրինակ՝ Սաբան, որ «պոետների արքան էր», նրբաճաշակ ոճի բազմաթիվ դասիդեների, դազալների հետ մեկտեղ շահին նվիրեց «Շահնշահնամե»

պոեմը՝ գրված Ֆիրդուսու «Շահնամեի» չափով: Դա շահի պատվերն էր, որի համար ստացավ բեյթերի թվով ոսկի:

Իրավամբ, անքննելի են Աստծո գործերը: Այն, ինչ երեսունհինգ տարվա աշխատանքի դիմաց Մահմուդից չէր ստացել հանճարեղ Ֆիրդուսին, ստացավ Սաբան մի քանի տարում: Ինչ վերաբերում է պոեմին, ապա դա օրվա համար էր, բայց ոչ՝ դարերի: Սաբան գրել է նաև կրոնական թեմաներով՝ «Խոդավանդնամե» — «Գիրք Աստծո», որտեղ ներբողել է շիիզմի հիմնադիր Ալիին: Սաադիի «Բուսթանը» նմանակելով (թաղլիդ)՝ գրել է «Սաբայի պարտեզ» պոեմը: Սաբան, փաստորեն, «վերադարձ» կոչվող ոճի մեծագույն ջատագովն էր:

Արժանահիշատակ է դաջարների արքունական բանաստեղծ, «Վերադարձ» ոճի ջատագով Ղանիի գրական մեծ ժառանգությունը: Էդվարդ Բրաունը նրա պոեզիային անդրադառնում է «Ժամանակի սպասավոր» վերնագրի տակ: Նա տիրապետել է պոետիկայի նրբություններին, իմացել լեզուներ, այքի է ընկել սուր մտքով, նմանակելու վարպետությամբ («Փարիշան» — «Խոռվահույզներ»), սակայն, ինչպես Բրաունն է նշում. «…նա զուրկ էր վսեմ նպատակներից և բարձր իդեալներից»: Ղանիի Դիվանն առատ է դասիդեներով, մոսամաթներով, ղազալներով: Առանձնանում է նեոլոգիզմներով, որ կարծես յուրովի մարտահրավեր էր կարծրատիպերին: Այսպիսով՝ որոշ ժամանակ պոեզիան մնում էր որպես դասական ավանդույթների անընդմեջ կրող, սակայն նոր հովերն արդեն իրենց զգացնել էին տալիս:

Գրական զարգացումների համատեքստում առանձնահատուկ է Յաղմա Ջանդաղիի և՛ ստեղծագործությունը, և՛ անձը: Նա պարսից պոեզիայի լեզուն օտարաբանություններից, հատկապես արաբերենից ազատելու կոչ է արել, իսկ ժողովրդական, հաճախ շուկայական ցածր և գռեհիկ ոճը՝ համակցել ավանդականին: Ճիշտ է՝ նրբաճաշակ և էլիտար ոճի որոշակի անկում առկա էր նաև Ղանիի պոեզիայում, սակայն Յաղմայի պատկերներն ու բառարանն այնքան բաց ու անսքող էին, որ երկար տարիներ նրա պոեմները չէին թարգմանվում օտար լեզուներով և ինչպես հարկն է չէին ուսումնասիրվում: Օրինակ՝ անազնիվ իշխանավորին ուղղված «Սարդարիե» պոեմում բազմաթիվ անգամներ կրկնվում է «պոռնիկ» բառը: Շահագործող դասի դեմ գրված ըմբոստ և մեղադրական պոեմներում երգիծանքը առաջնային տեղ է զբաղեցնում: Յաղմայի պոեզիայում առաջադիմական է համարվում անցումը անձնական մոտիվներից սոցիալական երգիծանքի տարրերին, բարքերի և կարգերի քննադատությունը, որը դառնում է այդ ժանրի ձևավորման նոր փուլերից մեկը: Սակայն և՛ նա, և՛ պոետ Շեյբանին հայտնի են որպես «անհատ մարտնչողներ»: Շեյբանին, որը Յաղմայի պես «այլ ուղղության» (ջանբեյե դիգյարի) բանաստեղծ էր, քննության էր առնում արդարության, հավատի, իշխանության խնդիրները: «Սակայն Շեյբանիի ձայնը և հառաչը չէին հասնում իշխողների ականջին»: Սուրուշը, Շուրիդեն, Հոման, Ադիբ Նիշապուրին և բազմաթիվ նրանց ժամանակակիցներ, ճիշտ է, «Վերադարձ» ոճի ջատագովներից են, սակայն որոշ առումով ազդարարում են նոր ժամանակաշրջանի սկիզբը, նախանշում այն միտումները, որոնք

XIX դարի երկրորդ կեսին պիտի հանգեցնեին առաջադիմական մի երևույթի՝ լուսավորչականության:

XIX դարի երկրորդ կեսից սկսած՝ Իրանը հայտնվել էր Անգլիայի, Ռուսաստանի և այլ եվրոպական երկրների շահերի բախման կենտրոնում: Այդ պետությունների և՛ քաղաքական, և՛ մշակութային, և՛ տնտեսական ներթափանցումը Իրան մեծ ազդեցություն ունեցավ երկրի հետագա զարգացումների վրա և խթանեց հատկապես առաջադիմական գաղափարները:

Լուսավորչականությունը Իրանում դառնում է սեփական ավանդույթների և եվրոպական մշակութային ձեռքբերումների սինթեզ: Ի դեպ, այն նաև իր որոշակի կախվածությունն ուներ իսլամի հզոր ազդեցությունից, հարևան երկրներում կատարվող սոցիալ–քաղաքական իրադարձություններից, հատկապես ռուսական հեղափոխական գաղափարներից: Իրանական լուսավորչականությունը դառնում էր մի յուրահատուկ պատմամշակութային ֆենոմեն:

Պետական գործիչներ, առաջադեմ և լուսավոր այրեր Ամիր Քյաբիրը և Ղաեմ մաղամ Ֆարահանին ջանում էին ձևավորել և կայացնել նոր խոսք և նոր ոճ: Ղաեմ մաղամը նույնիսկ համարձակություն ունեցավ փոխելու վարչական գրագրության մեջ դարերով քարացած ճոռոմաբան ոճը:

Ճշմարիտ լուսավորիչ էր Ամիր Քյաբիրը: Նրա մտահղացման արդյունքն էր ֆրանսիական ազդեցությունն ունեցող աշխարհիկ բարձրագույն ուսումնական հաստատության՝ Դար օլ ֆոնունի ստեղծումը, որը համախմբել էր ժամանակի առաջադեմ մտավորականներին: Այստեղ ուսուցանում էին եվրոպական չափանիշներով և ակտիվ էին պահում կապը այլ երկրների կրթօջախների հետ: Արժանահիշատակ է «Դար օլ ֆոնունի» առաջին տնօրեն, պատմաբան–բանասեր, գրող, դիվանագետ Ռեզա Ղուլի Խան Հեդայաթը, որի հատկապես «Պերճախոսների ծաղկաքաղ» («Մաջմա ալ ֆոսահա») մինչ օրս արդիական հատընտիրը ամեն իրանագետի սեղանի գիրքն է: Այդ բարձրագույն ուսումնական հաստատությունն ավարտած տասնյակ գրողների, պետական գործիչների, դիվանագետների, գիտնականների, լրագրողների անունները հարստացրին պարսից ժողովրդի պատմության լավագույն էջերը:

Այդ շրջանի առաջադիմական ձեռքբերումներից մեկը գրահրատարակության սկիզբն էր, որում մեծ դեր էին ունեցել նաև հայերը: Չեխ արևելագետ Յան Ռիպկան նկատում է, որ XIX դարի առաջին կեսին Սպահանում հայերը ջանում էին կազմակերպել գրքի տպագրության գործը, սակայն նրանց փորձերն ապարդյուն էին: Յան Ռիպկան մասամբ էր ճշմարիտ: Իրականում դեռևս 1641 թ. Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի առաջնորդ Խաչատուր Կեսարեցին՝ «ինքնին զտառն ձուլելով», տպագրել է առաջին գիրքը՝ «Վարք հարանց»: Որոշ ընդհատումից հետո՝ 1647 թ., Ամստերդամում տպագրության գործը ուսանած վարդապետներից մեկը շարունակել է այն:

Թավրիզում և Թեհրանում տպագրվում էին առաջին գրքերը, հանդեսները և թերթերը: Բարձրացվող խնդիրները հասարակական հնչեղություն էին ստանում

մամուլում և արքունական–պաշտոնական գրիչների ձայնը խլանում էր պարսիկ մտավորական զանգվածի միջավայրում:

1905–1911 թթ. Իրանի սահմանադրական հեղափոխության տարիներին, երբ ժողովուրդը հիմնական օրենքի (մաշրութիե) պահանջատերն էր, պետական խիստ գրաքննությունից խուսափելով, մամուլի բազմաթիվ նմուշներ հրատարակվում էին արտասահմանում՝ Լոնդոն, Ստամբուլ, Կահիրե («Ախթար» — «Աստղ», «Ղանուն» — «Օրենք» ևն): Իրանում հրատարակվող մամուլը («Սուրե էսրաֆիլ» — «Գաբրիել հրեշտակի փողը», «Նասիմե շոմալ» — «Հյուսիսային զեփյուռ», «Հաբլօլ Մաթին» — «Ամուր պարան») ձևավորում էր առաջադիմական մտայնություն: Գրվում էին հրապարակախոսական նյութեր, «թասնիֆ» կոչվող խարազանող ժողովրդական երգեր (Արեֆ Ղազվինի), պատմվածքներ, երգիծական ֆելիետոններ (Ալի Աքբար Դեհխոդա), քննադատական հոդվածներ (Մալեք օշ–շոարա Բահար), քարոզչական հենք ունեցող ակնարկներ, ինչպես նաև քաղաքական ուղղվածության ըմբոստ բանաստեղծություններ (Աշրաֆ Գիլանի, Ադիբ–օլ Մամալեք, Միրզադե էշղի, Ֆառոխի Յազդի ևն): Պարբերական մամուլը հարստացնում էր այն դաշտը, որտեղ ձևավորվում և ինքնորոշվում էին գրական բազմաթիվ ժանրեր և ձևեր:

Այս գաղափարական և մշակութային վերելքում առաջնային էր նաև թարգմանական արվեստի դերը: Այն գիտական օջախների, մամուլի և գրական զանազան միությունների զորակցությամբ նպաստում էր և՛ լայնակտավ, և՛ փոքր արձակի՝ նովելի կայացմանը: Ժողովրդին հետաքրքրում էր արկածախնդիր հերոսը, բարոյախրատական բելետրիստիկան, զավեշտական դրվագները՝ այն, ինչն առավելագույնս համապատասխանում էր տեղային կոլորիտին և բարքերին: Արձակում ակնհայտ էր դառնում լեզվի պարզեցումը, գրական և խոսակցական լեզուների փոխներթափանցումը:

Թարգմանիչներին և մտավորականությանը միավորում էր «Դար օլ–ֆոնունը», որը առաջադիմական գաղափարների ճանապարհ էր հարթում հետագա սերունդների համար:

Ոչ մի վերլուծաբան չի շրջանցում Միրզա Ֆաթհալի Ախունդովի դերը Իրանում լուսավորչական միտումների ձևավորման հարցում: Նրա թատերական երկերը հմտորեն թարգմանվում էին պարսկերեն: Սակայն Յան Ռիպկան Ախունդովին համարում է «…ռուս գրականության ազդեցության կրող»:

Պարսից նոր արձակի զարգացումները (Միրզա Մալքոմ խան, Աբդուռահիմ Թալեբով, Զեյն օլ աբեդին Մարաղեի) Յահյա Արիանփուրը լուսաբանում է «Արտերկրում ջանացող գործիչները» խորագրի տակ: Այսպիսով՝ վեստերնիզացիան ակնհայտորեն իր հետքն էր թողնում պարսից գրական–մշակութային զարգացումների վրա:

Սահմանադրական հեղափոխության ջատագով, ազգությամբ հայ Միրզա Մալքոմ խանի գրական գործունեության մեջ, հատկապես պիեսներում գերակշռում է ռեալիստականը, տեղայինը, տիպականը: Դրա արձագանքն էր «Թեաթր» շաբա-

թաթերթը: Գնահատելով վերը թվարկված երեք լուսավորիչ գրողների ստեղծագործական ոճը և գաղափարական մոտեցումները՝ ռուս իրանագետները գրում են. «…Մարաղեիի և Թալեբովի համակրանքները առաջադիմական Ռուսաստանի կողմն էին, այն դեպքում, երբ Մալքոմ խանը մինչև վերջ մնաց արևմտյան քաղաքակրթության կողմնակից»: Մալքոմ խանը նաև հեռատես քաղաքական գործիչ էր, մեծ դիվանագետ և իրական լույսի տակ էր տեսնում Իրանի հետագա զարգացումները:

Դանդաղ և հետևողականորեն զարգանում էր XX դարի պարսից արձակը՝ համալրվում նոր ձևերով և նոր բովանդակությամբ: Կայանում էր սոցիալական վեպը. օրինակ՝ Քազեմիի «Սարսափելի Թեհրանը» («Թեհրանե մախուֆ»), Աբբաս Խալիլի «Գիշերվա գաղտնիքը» («Սերե շաբ»), «Սև օրերը» («Ռուզհայե սիահ») ևն: Բյուրեղանում էին տեղային հարցադրումները, ուրվագծվում էր իրանական նոր կենսաձևի մոդելը, առաջնային էին դառնում իրանցի կնոջ դրամատիկական վիճակի խնդիրները, իսկ պատմական արձակում անցյալի արժեքները դառնում էին նոր ժամանակների խորհրդանիշ:

Ռեալիստական և հոգեբանական նովելում անթաքույց դրսևորվում է արևմտյան մոդեռնիզմի, ինչպես նաև ռուս գրականության ազդեցությունը:

Ջամալ–Զադեն, Սադեղ Հեդայաթը, Սայիդ Նաֆիսին, Բոզորգ Ալավին, Սադեղ Չուբաքը, Բեհազինը, Ջալալ ալե Ահմադը և բազմաթիվ այլ գրողներ ռեալիստական, նատուրալիստական, ինչպես նաև եվրոպական ավանգարդի տարբեր ուղղություններով գերակա դարձրին մինչև օրս հոգեբանների, սոցիոլոգների և փիլիսոփաների միտքը տանջող՝ անհատականություն–անդեմություն, ազատություն–ենթակայություն, խիղճ–պարտավորություն և այլ խնդիրներ: Նրանք իրենց երգիծական, ճանաչողական, մարդու խորքային հոգեբանական բացահայտումներում պարսից նովելի և պատմվածքի ժանրը դուրս էին բերում համաշխարհային գրականության ծիր: Չուբաքի «Նավթավաճառը» («Նաֆթի»), «Կապիկը, որի պարեցնողը մեռել էր» («Անթարի քե լութիաշ մորդե բուդ»), Ջալալ ալե Ահմադի «Ավելորդ կինը» («Զանե զիադի»), «Սեթառ», «Ուրիշի երեխան», Մողադամի «Շների սպանդը» («Քոշթանե սագհա») և բազմաթիվ այլ գործեր: Էքզիստենցիալ անելանելիության մեջ հայտնված հերոսներին ոչինչ չի մնում՝ բացի ճակատագրին համակերպվելուց: Կապիկը, որ իրերի բերումով հայտվել էր ազատության մեջ, հիշում էր իր տառապանքները, ծեծը, նսեմացումը: Սակայն տիրոջ մահը մի քանի րոպե է միայն ուրախացնում կապիկին: Անշարժ նստած՝ նա հետևում էր փայտերով «զինված», հարայհրոցով իրեն մոտեցող խառնամբոխին: Նա դատապարտված էր ազատության այն հասարակության մեջ, որտեղ ազատությունը միայնություն էր, միայնությունը՝ մահ: Ահա այն դիլեման, որի զանազան դրսևորումներին է անդրադարձել XX դարի ազդեցիկ սոցիոհոգեբան Էրիխ Ֆրոմը իր «Փախուստ ազատությունից» աշխատության մեջ:

Պարսիկ արձակագիրներ Ջամալ Զադեն «Ինչ՝ ամանը, ինչ՝ ճակնդեղը» («Բիլե դիգ, բիլե չողոնդար»), «Պարսկերենը քաղցր է» («Ֆարսի շեքյար ասթ») և այլ պատմ-

վածքներում հումորով, հաճախ սարկազմով արտացոլում է պարսից կյանքը, կենցաղը, ժողովրդական լեզվի ողջ կոլորիտը:

Սադեղ Հեդայաթի նովելը այդ ժանրի գագաթն է: Անտեր շունը (Սագե վելգյարդ), լոթին (Դաշ Աքոլ), ամուսնու մյուս կնոջ երեխային սպանած և աստծուց «Թողություն հայցողը» (Թալաբե ամորզեշ), դժբախտ ու տգեղ, տղամարդու կարոտ «Աբջի Խանումը» և բազմաթիվ վեհ և ցածր մարդիկ այս արևի տակ իրենց տեղն են փնտրում: Հեդայաթն ապրում էր Եվրոպայում և զերծ չէր գրական ավանգարդի ազդեցությունից, որն իր անդրադարձն է գտել բազմաթիվ միստիկական նովելների սյուրռեալիստական նկարագրություններում («Քոռ բուն» — «Բուֆե քուր», «Երեք կաթիլ արյուն» — «Մե դաթրեյե խուն»): «Վաղը–ֆարդա» նովելում իշխում է «Այսպես այլևս հնարավոր չէ…» միտքը, որն ուղեկցում է մարդկությանը բոլոր ժամանակներում: Բայց միշտ կա վաղվա հույս, որն էլ մշտապես օգնում է մարդուն ապրել՝ «Այստեղ և հիմա»: Հեդայաթը ինքնասպան եղավ Փարիզում՝ դեպրեսիվ տագնապի պահին, ամենայն հավանականությամբ, չտեսնելով իր վաղվա օրը:

Մեծ է Սադեղ Հեդայաթի ներդրումը և՛ նովելի ժանրի կայացման, և՛ ազգային արժեք հանդիսացող պարսից բանահյուսական նյութի հավաքման ու համակարգման գործում: «Նեյրանգեսթան — Հրաշքների աշխարհ» և «Օսանե — Հեքիաթ» ժողովածուները ներկայացնում են ժողովրդական հավատալիքները, սովորույթները, գուշակությունները, ծեսերը և այլն: Ավանդույթները ցույց են տալիս, որ պարսից մեջ պահպանված բազմաթիվ երևույթներ ունեն և՛ տիպաբանական, և՛ ուղղակի ընդհանրություններ տարածաշրջանի այլ ժողովուրդների բանահյուսական նյութերի հետ: Օրինակ՝ հայերի համար մի շատ հետաքրքիր փաստ՝ Սադեղ Հեդայաթի ծանոթությունը Կոմիտաս Վարդապետի «…Գացին տեսան գէլնա կերէլ զէծ…» կատակերգին և պարսից լեզվով պահպանված դրա մի տարբերակին:

Սոցիալ–հոգեբանական հարցադրումները անմիջականորեն կապակցված էին նաև հասարակության մեջ կնոջ կարգավիճակի խնդրին:

Գաղտնիք չէ, որ կնոջ կարգավիճակն իսլամում եղել է ոչ միայն քննության նյութ, այլև իսլամի քննադատության իրողություն: Կանանց կողմից քող (հեջաբ) կրել–չկրելու հարցը կարծես մի չափանիշ լիներ իրանցի կնոջ ազատությունը, ինչպես նաև Իրանում ֆեմինիզմի կայացման աստիճանը որոշելու համար: Սակայն դա խնդրի ձևական դրսևորումներից մեկն էր: Պարզվեց, որ լիբերալ և որոշ առումով արևմտականացած շահական Իրանում քողի պարտադրանքից ազատ կինն էր, որ ռեալիստական արձակում ներկայանում էր որպես անկամ, անպաշտպան, զգվանքի կարոտ, միայնակ ու կամազուրկ մեկը. հանգամանք, որ նրան դուրս է դնում անհատականության և սեփական սեռի ինքնագիտակցությունից և դարձնում առավելապես կենսաբանական երևույթ: Այս հողի վրա գրականության մեջ դրսևորվում են գրողների ֆեմինիստական և հակաֆեմինիստական (Ահմադ Նեմաթ) մոտեցումները:

Շուտով պարզ դարձավ, որ պատմվածքի ժանրը ի վիճակի չէր արտացոլելու հետհեղափոխական կենսաձևի բազմաթիվ խնդիրներ: Փաստորեն, ժանրային հա-

մակարգում ակնարկի, էսսեի, հուշագրության, վիպագրության ստեղծումը և ակտիվացումը դառնում էր լսարանի պահանջը:

Սաղեղ Հեդայաթից հետո ավանգարդն իր ճանապարհն էր հարթում դեպի պարսից արձակ՝ Ծամիմ Բահար, Ալիմորադ Ֆաղայինի, Համիդ Սաղր, Մահշիդ Ամիրշահրի, Գոլի Թարաղի, Մոդարես Նարաղի, Մոհամադ Այուբի, Ամիրհոսեին Ռուհի, Հուշանգ Գոլշիրի և շատ ուրիշներ, որոնք մոդեռնիզմի տարբեր ուղղություններով արտացոլում են իրականությունը և դարի հարցադրումները: Այլ խնդիր է, թե այդ գերժամանակակից «իզմերը» որքանով էին պարսից արձակը մոտ ու հարազատ պահում ազգային հոգեկերտվածքի առանձնահատկություններին, պարսից գրական ավանդույթներին:

Այսպիսով՝ պարսից արձակն իր բոլոր դրսևորումներով զարգանում էր համաշխարհային գրականության համընդհանուր հունով:

Որոնումների բարդ ճանապարհ էր անցնում նաև XX դարի պարսից պոեզիան: Պատմության ճգնաժամային պահերը՝ սահմանադրական հեղափոխական շարժումը (1905–1911 թթ.), դաջարական հարստության անկումը, Ռեզա շահ Փահլավիի գահակալումը և արևմտամետ քաղաքականությունը, ռեակցիայի «Սև շրջանը» (դորեյե սիյահ), գրական կյանքում ստեղծում էին այն ելևէջները և բազմազանությունը, որոնք դժվար է նույնիսկ համակարգել:

Դեռևս 1917 թ. Մալեք օշ–շոարա Բահարը «Դանեշքյադե» կրթօջախում համախմբել էր և՛ ավանդամետներին, և՛ նորարարներին: Վերջիններս առանց բացասական մակդիրների չէին հիշատակում Սաադիին, Հաֆեզին և այլոց: Այդ ամենը խոսուն նկարագրում է Զորայր Միրզայանը. «Առաջին շրջանի սանձարձակ ժխորի մեջ, որի զանգվածը կազմված էր պատեհապաշտներից և ամբոխավարներից, սկսեցին փայլել մի քանի տաղանդավոր ժողովրդական–հեղափոխական բանաստեղծներ՝ Աշրաֆ Գիլանի, Դեհխոդա, Մալեք օշ–շոարա Բահար, Արեֆ Ղազվինի, Միրզադե Էշղի, Ֆառռոխի Յազդի, Իրաջ Միրզա և այլն»: Նոր սերնդի ուսերին էր մնում պարսից դասականների «բեռը», որից դժվար էր ազատվել: Մի կողմում եվրոպական «սպիտակ», պոլիթեմատիկ բանաստեղծության ազդեցությունն էր, որը ճանաչում և գնահատում էին, մյուսում՝ ժամանակավրեպ թեմաները, արուզի բարդ ու հնացած տաղաչափական համակարգը, ժանրերը, ժանրային ձևերը, ուժեղ հանգերը, կրկնատողերը, մի խոսքով՝ այն ամենը, ինչը դարեր շարունակ պարսից պոեզիայում ամուր էր պահել ավանդույթը և ժառանգականությունը: Կարելի է եզրահանգել, որ պարսից պոեզիան անհանգիստ որոնումների մեջ էր:

Սահմանադրական–հեղափոխական շրջանի պոեզիայի քաղաքական շեշտադրումներն էին Իրանի ազատագրումը օտար երկրների ազդեցությունից և շահագործումից, երկրում ժողովրդավարության հաստատումը, սոցիալական հակասությունների, պետական գործելակերպի քննադատությունը: Օրինակ՝ Միրզադե Էշղիի «Ռասթախիզե շահրիարանե Իրան» («Իրանի տիրակալների վերածնունդը»), Լահութիի՝ «Խեթաբ բե խալղե Իրան» («Դիմում պարսից ժողովրդին»), «Ֆարյադե

մելլաթ» («Ժողովրդի ողբականչը»), Արեֆի՝ «Լեբասե մարգ» («Մահվան հագուստը»), Յազդիի՝ «Մոսամաթե վաթանի» («Բանաստեղծություն հայրենիքին»):

Այսպիսով՝ XVIII–XX դարի սկզբի պարսից գրականությունն իր բազմազանության մեջ միասնական է մի կարևոր խնդրում, այն է՝ մշակույթի և՛ ստեղծողները, և՛ կրողներն իրենց սոցիալ–պատմական դարաշրջանի ծնունդն են, և բոլորին ուղղորդում և կողմնորոշում են նույն գործոնները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աճառյան Հր., Վավերագրեր հայ–պարսկական հարաբերությանց մասին, Ե., 1927:
2. Ամուրյան Ա., Հ. Յ. Դաշնակցութիւնը Պարսկաստանում 1890–1918, Թեհրան, 1950:
3. Առաքելյան Հ., Պարսկաստանի հայերը: Նրանց անցյալը, ներկան և ապագան, Իմամաթ, Ալեքսանդրապոլ, 1906:
4. Բայբուրդյան Վ., Թուրք–իրանական հարաբերությունները (1900–1914 թթ.), Ե., 1974:
5. Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Ե., 2005:
6. Բայբուրդյան Վ., Օսմանյան կայսրության պատմություն, Ե., 2011:
7. Գորոյան Ն., Պարսկաստանի հայերը, Թեհրան, 1968:
8. Դարֆի Գ., Հովհաննես Մասեհյան (1864–1931), մահվան 30–ամյակի առթիվ, Թեհրան, 1963:
9. Եգանյան Հ., Ագրարային հարաբերությունները Իրանում XIX դ. առաջին կեսին, Ե., 1963:
10. Եգանյան Հ., Ագրարային հարաբերությունները Իրանում XIX դ. երկրորդ կեսին, Ե., 1970:
11. Եգանյան Հ., Հասարակական–քաղաքական հոսանքները Իրանում XIX դ. վերջին և XX դ. սկզբին, Ե., 1966:
12. Էլմար, Եփրեմ, Թեհրան, 1964:
13. Թաղիադյան Մ., Պատմութիւն Պարսից, հատ. Ա, Կալկաթա, 1846:
14. Լեո, Հայոց պատմություն, Երկերի ժողովածու, հատ. 3, Երևան, 1969, հատ. 4, Ե., 1984:
15. Մելիք–Շահնազարեանց Դավիթ–բեգ Ծատուր, Տեղեկութիւնք ի վերայ այժմեան կացութեան թագավորութեան Պարսից, Փարիզ, 1818:
16. Միրզայան Զ., Իրանի ժամանակակից բանաստեղծությունը, Պեյրութ, 1968:
17. Յահյամասիհի Ա., Սադեղ Հեդայաթ, կյանքը և գիտագրական ժառանգությունը, Ե., 2020:
18. Շերմազանյան Գ., Նյութեր ազգային պատմության համար: Երևելի հայկազունք ի Պարսկաստան, Ռոստով, 1890:
19. Պատմութիւն Ատրպատականի հայոց թեմական կենտրոնական դպրոցի, Թեհրան, 1981:
20. Տեր–Հովհանեանց, Պատմութիւն Նոր Ջուղայի որ յՍպահան, հ. Բ, Նոր Ջուղա, 1881
21. Алибиджян З., Иран. Власть, реформы, революции (XIX–XX), М., 1991.
22. Анаркулова Д. М., Социально–политическая борьба в Иране в середине XIX в., М., 1983.
23. Артамонов А. К., Персия как наш противник в Закавказье, Тифлис, 1889.
24. Аршаруни А. М., Бехаизм, М., 1930.
25. Атаев Х. А., Торгово–экономические связи Ирана с Россией в XVIII–XIX вв., М., 1991.
26. Атрпет, Бабизм и бехаизм. Отчет научно–религиозного исследования, Тифлис, 1910.
27. Атрпет, Имамат. Страна поклонников имамов (персидское духовенство). Историческое исследование, Александрополь, 1909.
28. Атрпет, Мамед Али шах. Народное движение в крае Льва и Солнца, Александрополь, 1909.
29. Атрпет, Откупная система в Персии, Александрополь, 1909.
30. Атрпет, Рахим–хан сардар. Народное движение в стране Льва и Солнца, Александрополь, 1910.

31. Балаян Б. П., Дипломатическая история русско–иранских войн и присоединение Восточной Армении к России, Ер., 1988.
32. Балаян Б. П., Международные отношения Ирана в 1813–1828 гг., Ер., 1967.
33. Бартольд В. В., Иран. Исторический обзор, Ташкент, 1926.
34. Батюшков, Бабиды. Персидская секта. Очерк, СПб., 1897.
35. Березин И., Путешествие по Северной Персии, Казань, 1852.
36. Бларамберг И. Ф., Статистическое обозрение Персии, составленное в 1841 г., СПб., 1853.
37. Богданов Л., Персия в географическом, религиозном, бытовом, торгово–промышленном и административном отношений, СПб., 1909.
38. Бондаревский Г. Л., Английская политика и международные отношения в бассейне Персидского залива (конец XIX — начало XX вв.), М., 1968.
39. Брагинский И., Комиссаров Д., Персидская литература. Краткий очерк, М., 1961.
40. Бушев П. П., Герат и англо–иранская война 1856–1857 гг., М., 1959.
41. Васильев А., Россия на Ближнем и Среднем Востоке: от мессианства к прагматизму, М., 1993.
42. Гурко–Кряжин В., Краткая история Персии, М., 1925.
43. Даров И., Бехаизм (Новая религия Востока), Л., 1930.
44. Дорошенко Е. А., Зороастрийцы в Иране (историко–этнографический очерк), М., 1982.
45. Дорри Дж., Персидская литература XX века, М., 2005.
46. Емельянов А. С., Персидский фронт (1915–1918), Берлин, 1923.
47. Жигалина О. И., Этносоциальная эволюция иранского общества, М., 1996.
48. Записки А. П. Ермолова 1798–1826, М., 1991.
49. Зиновьев И. А., Россия, Англия и Персия, СПб., 1912.
50. Иванов М. С., Бабидские восстания в Иране (1848–1852), М.–Л., 1939.
51. Иванов М. С., Иранская революция 1905–1911 гг., М., 1957.
52. Игамбердыев М. А., Иран в международных отношениях первой трети XIX в., Самарканд, 1961.
53. Иран: история и культура в средние века и в новое время, М., 1980.
54. Истягин Л. Г., Германское проникновение в Иран и русско–германские противоречия накануне первой мировой войны, М., 1979.
55. Казем–Заде Ф., Борьба за влияние в Персии. Дипломатическое противостояние России и Англии, М., 2004.
56. Кафтырев Д., Исторические, географические и статистические сведения о Персии, СПБ., 1829.
57. Китаб–е Акдес. «Священнейшая книга» современных бабидов. Текст, перевод, введение и примечания А. Г. Туманского.— Записки АН по историко–филологическому отделению, т. III, № 6, СПб., 1899.
58. Кляшторина В. Б., «Новая поэзия» в Иране, М. 1975.
59. Кузнецова Н. А., Иран в первой половине XIX в., Москва, 1983.
60. Кузнецова Н. А., Об участии немусульман в торговле Ирана. «Ближний и Средний Восток. Торгово–денежные отношения при феодализме», Москва, 1980.
61. Кузнецова Н. А., Политическое и социально–экономическое отношение Ирана в конце XVIII — первой половине XIX в. В кн.: Очерки новой истории Ирана, Москва, 1978.
62. Кулагина Л. М., Россия и Иран (XIX — начало XX в.), Москва, 2010.
63. Кулагина Л. М., Экспансия английского империализма в Иране в конце XIX — начале XX вв., Москва, 1981.
64. Кулагина Л. М., Экспансия иностранного империализма в Иран и превращение его в полуколонию. В кн.: Очерки новой истории Ирана, Москва, 1978.

65. Материалы для географии Азиатской Турции и Персии. Путевой журнал Е. И. Чирикова, русского комиссара–посредника по русско–персидскому разграничению, 1849–1852, СПб., 1852.
66. Медведев А. И., Персия, военно–статистическое обозрение, СПб., 1909.
67. Мирза Казем–бек. Баб и бабиды: религиозно–политические смуты в Персии в 1844–1852 гг., СПб., 1865.
68. Мирошников Л. И., Английская экспансия в Иране (1914–1920), Москва, 1981.
69. Н. М., Письма русского из Персии, СПб., 1844.
70. Новая история Ирана. Хрестоматия, Москва, 1988.
71. Огранович И., Поездка в Персию в 1863 году. «Военный сборник», 1866, кн. 11, отд. 2.
72. Очерки новой истории Ирана (XIX — начало XX вв.), Москва, 1978.
73. Павлович М., Иранский С., Персия в борьбе за независимость, Москва, 1925.
74. Павлович М., Экономическое развитие и аграрный вопрос в Персии XX века, Москва, 1921.
75. Петрушевский И. П., Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI — начале XIX вв., Ленинград, 1949.
76. Пигулевская Н. В., Якубовский А. Ю., Петрушевский И. П., Строева Л. В., Беленицкий Л. М., История Ирана с древнейших времен до конца XVIII в., Ленинград, 1958.
77. Повествование Набиля в переложении Зины Сарабджи, Алматы, 2004.
78. Попов А., Англо–русское соперничество на иранских путях.— «Новый Восток», 1926, № 12.
79. Путешествие Оливера в Персию и Малую Азию в 1796 г. «Журнал новейших путешествий», 1809, № 2.
80. Риза Шабани, Iranica, Краткая история Ирана, Санкт–Петербург, 2000.
81. Рипка Я., История персидской и таджикской литератур, М., 1970.
82. Риттих П. А., Отчет о поездке в Персию, ч. I, СПб., 1901.
83. Риттих П. А., Политико–статистический очерк Персии, СПб., 1896.
84. Сборник дипломатических документов, касающихся событий в Персии, вып. V, СПб., 1912.
85. Строева Л. В., Борьба иранского народа против английской табачной монополии в Иране в 1891–1892 гг.— «Проблемы по истории национально–освободительного движения в странах Азии», Ленинград, 1963.
86. Сухоруков С. А., Иран между Британией и Россией от политики до экономики, С. Петербург, 2009.
87. Талипов Н. А., Общественная мысль в Иране в XIX — начале XX вв., Москва, 1988.
88. Тер–Гукасов Г., Политические и экономические интересы России в Персии, Петроград, 1916.
89. Тигранов Л., Из общественно–экономических отношений в Персии, СПб., 1909.
90. Томара М. Л., Экономическое положение Персии, СПб., 1895.
91. Триа В., Кавказские социал–демократы в персидской революции, Париж, 1910.
92. Широкрид А., Персия–Иран. Империя на Востоке. (Друзья и враги России), Москва, 1910.
93. Шитов Г., Персия под властью последних каджаров, Ленинград, 1933.
94. Штейнберг Е. Л., История британской агрессии на Среднем Востоке, Москва, 1951.
95. Элвелл–Саттон Л., Иранская нефть. К истории политики силы, Москва, 1956.
96. «Correspondence respecting the Demarcation of the frontiers between Turkey and Persia. Presented to both Houses of Parliament», London, 1865.
97. Abbas Amanat, Pivot of the Universe Nazir–Al–Din Shah Qajar and the Iranian Monarchy 1831–1896, Los Angeles, 1997.
98. Abol Qasem Lacini, Abbas Mirza Nayeb os Saltaneh, Tehran, 1947.
99. Abrahamian E., Iran between Two Revolutions, Princeton, New Jersey, 1983.

100. Afary J., The Iranian constitution revolution: Grassroots Democracy, Social Democracy, and the Origins of feminism, New York, 1996.
101. Afschar M., La politique européenne en Perse. Quelques pages de l'histoire diplomatique, Berlin, 1921.
102. Ahmadi I., Anglo–Iranian Relations 1905–1919, New York, 1974.
103. Aitchison C. U., A Collection of Treaties, Engagements and Sanads Relating to India and Neighbouring Countries, vol. XIII, Calcutta, 1933.
104. Algar H., Mirza Malkam Khan, Berkeley, 1973.
105. Algar H., Religion and State in Iran 1785–1906. The Role of the Ulama in the Qajar Period, Berkeley–Los–Angeles, 1969.
106. Thilinkirian A., The Persian Revolution (1909–1910). In.: The Armenians of Iran. The Paradoxical Role of a Minority in a Dominant Culture: Articles and documents, ed. by Cosroe Chaqueri, Harvard University Press, Cambridge, Massachusetts, 1999.
107. Atkin M., Russia and England in Iran 1780–1828, Minneapolis, 1980.
108. Bakhash Shaul, Monarchy, Bureaucracy and Reform under the Qajars. 1858–1896, London, 1978.
109. Bast Oliver, Les Allemands en Perse pendant la Premiere Guerre Mondiale. Diffusion Peeters, Paris, 1977.
110. Bayat Mangol, Iran's First Revolution; Shi'ism and the Constitutional Revolution 1905–1906, New York, 1991.
111. Berberian H., Armenians and the Iranian Constitutional Revolutioan of 1905–1911: The love for Freedom Has No Fatherland, Westview Press, 2001.
112. Lewis B., The Middle East, London, 1995.
113. Bonakdazian M., Britain and Iranian Constitutional Revolution 1906–1911; Foreign Policy, imperialism and Dissent, New York, 2006.
114. Bosworth E. and Hillenbrand C., Qajar Iran: Political, Social and Cultural Change 1800–1925, Costa Mesa, California, 1992.
115. Bradford M. G., German–Persian diplomatic relations, 1873–1912, S.–Gravenhage, Mouton, 1959.
116. Browne E. G., A Traveller's Narrative Written to Illustrate the Episode of Bab. Vol. 1–2, Cambridge, 1891.
117. Browne E. G., Materials for the Study of the Babi Religion, Cambridge, 1918.
118. Browne E. G., A Literary History of Persia, v.4, Cambridge, 1969.
119. Browne E. G., The Persian Revolution of 1905–1909, Cambridge, 1910.
120. Browne E. G., The Babis of Persia, vol. 1, Sketch of their History and Personal Experiences Amongst Them.— JRAS, vol. 21, 1889.
121. Bullard R., Britain and the Middle East, London, 1951.
122. Busse H., History of Persia under Qajar Rule, New York, 1972.
123. Chaqueri C., Armenian–Iranians and the Bizt of Iranian Socialism: A Historical Persual, The Armenians of Iran, The Paradoxical of a Minority in a Dominant Culture: Articles and Documents, ed. by Chaqueri C., Massachussets, Harvard University Press, Cambridge, 1998.
124. Chaqueri C., Introduction to the Armenians of Iran: A Historical Persual, The Armenians of Iran, The paradoxical of a Minority in a Dominant Culture: Articles and Documents, ed. by Chaqueri C., Massachussetts, Harward University Press, Cambridge, 1998.
125. Chosroe Chaqueri, The Role and Impact of Armenian Intellectuals in Iranian Politics 1905–1911, «Armenian Review», 41/2, 41/4, 1998.
126. Churchile R., The Anglo–Russian Convention of 1907, London, 1939.
127. Churchile W., The World Crisis. 1911–1914. New York, 1923.

128. Chuster M., The Strangling of Persia, New York, 1912.
129. Curzon G. N., Persia and the Persian Question, vol. I–II, London, 1966.
130. Diplomacy in the Near and Middle East. A documentary Record, 1535–1914. Ed. by J. C. Hurewitz, Vol. I, New York, 1972.
131. Driault E., La Politique orientale de Napoleon I, Paris, 1904.
132. Elwell–Sutton L. P., Bibliographical Guide to Iran, New York, 1983.
133. Farmayan Hafez F., The Forces of Modernization in the Nineteenth Century. Iran, a Historical Survey. Beginning of Modernization on the Middle East, Chicago, London, 1968.
134. Fasai Hasan, History of Persia under Qajar Rulle, London, 1972.
135. Firuz Kazem–Zadeh, Russian and Britain in Persia, 1864–1914, A Study of imperalizm, New Haven and London, 1968.
136. Floor Willem, Industrialization in Iran, 1900–1914. Durham, 1984.
137. Foran John, Social Transformation in Iran from 1500, to the Revolution, Boulder–San Francisco–Oxford, 1984.
138. Fraser J. B., An Historical and discriptive account of Persia, Edinburgh, 1834.
139. Gaspart Drouville, Voyage en Perse, pendent les annés 1812 et 1813, tome I, St. Petersbourg, 1819.
140. Gehrke U., Persien in der deutschen Orientpolitik, Wahrend des Ersten Weltkrieges, t. 2, Stuttgart, 1961.
141. Grow E. E., Persia. English Enterprise in Persia in the Nineteenth Century, v. 41, London, 1897.
142. Guity Nashat, The Origins of Modern Reform in Iran, 1870–1880, Urbana, Chicago, London.
143. Hamid Algar, Religion and State in Iran. 1785–1906. The Role of the Ulama in the Qajar Period, Berkeley–Los Angeles, 1969.
144. Ingram Edward. Britain's Persian connection, 1798–1829. Prelude to the great Game in Asia, Oxford, Clarendon Press, 1992.
145. Issawi Ch., The Economic History of Iran 1800–1914. Chicago–London, 1971.
146. Jack M., The Purchase of the British government's Share in the British Petroleum Company, 1912–1914. «Past and Present», vol. 39, 1968, April.
147. Jaubert P. A., Voyages en Arménie et en Perse en 1805–1806, Paris, 1821.
148. Kaye J. W., The life and correspondence of Sir John Malcolm, London, 1856, vol. I.
149. Kazemzadeh F., Russia and Britain in Persia, 1864–1914, Haven–London, 1968.
150. Keddie Nikki R., Historical Obstacles to Agrarian Change in Iran, Clarmont, 1960.
151. Keddie Nikki R., Qajar Iran and the Rise of Reza Khan 1796–1925, Tehran, 1999.
152. Keddie Nikki R., Religion and Rebbelion in Iran. The Tobacco Protest of 1891–1892, London, 1966.
153. Keddie R. Nikki, Iran, Religion, Politics and Society, Collected Essays, London, 1983.
154. Ker Porter Robert, Travels in Georgia, Persia, Armenia, Ancient Babylonia, vol. I, London, 1821.
155. Kinneir J. M., A Geographical memoir of the Persian Empire, London, 1813.
156. Lambton A. K. S., Landlord and Peasant in Persia, London, 1991.
157. Lambton A. K. S., Qajar Persia, Austin: University of Texas Press, 1987.
158. Lambton A. K. S., The Case of Hajii Abd al–Kazim. A Study of the Role the Merchant in Mid–nineteenth Century. Persia–Iran an Islam. Edinburgh, 1971.
159. Lambton A. K. S., The Persian Ulama.— Le Shi'ism Imamite, Paris, 1970.
160. Lambton A. K. S., The Tobacco Regie: prelude to revolution, «Studia Islamica», XXII (1965).
161. Macdonald J. Kinneir, A Geographical Memoir of the Persian Empire, London, 1813.
162. Malcolm J., Histoire de la Perse, t. 3, Paris, 1821.
163. Migeot Heinz–Georg, Die Persische Gesselschaft unter Nasir ud–din Shah (1848–1896), Berlin, 1990.
164. Miroshnikow L., Iran in World War I, Moscow, 1964.

165. Mission du general Gardane en Perse sous le premier Empire, Paris, 1851.
166. Motamen ol–Molk, Recueil des traités de l'Empire Persan avec les pags étrangèrs, Teheran, 1908.
167. Myr−Davoud−Zadour de Melik Shahnazar, Envoyè de Perse en France, Notice sur l'etat actuel de la Perse, Paris, 1818.
168. Nashat G., The Origins of Modern Reform in Iran, 1870–1880, Urbana, Chicago, London, 1982.
169. Neutralité persane, Doc. diplomatiques, Paris, 1919.
170. Niedermayer Oskar von, Unter der Glutsonne Irans. Hamburg, 1925.
171. Olivier G. A., Voyage dans l'Empire Ottoman, l'Egypte et la Perse, t. 3, Paris, 1807.
172. Pakravan E., Abbas Mirza, Tehran, t. 1, 1959, t. 2, 1960.
173. Polak J. E., Persien. Das land und seine Bewohner, v. I, Leipzig, 1865.
174. Qajar Iran. Political, Social and Cultural Change, 1800–1925, Edinburgh, 1983.
175. Ramazani R., The Foreign Policy of Iran. A developing Nation in World Affairs 1500–1941, Virginia, 1966.
176. Rawlinson H., England and Russia in the East, London, 1975.
177. Reza Arasteh, The Character, Organization and Social Role of the Lutis (Javanmardan) in the Traditional Iranian Society of the Nineteenth Century.— «Journal of Economic and Social History of the Orient», 1961, February.
178. Richard Yann, Der verborgene imam. Die Geschichte des Schiismus in Iran, Berlin, 1983.
179. Robbins K. G., Public Opinion, the Press and Pressure Groups. In: British Foreign Policy under Sir Edward Grey, Cambridge, 1977.
180. Sandra Mackey, The Iranians, London, 1999.
181. Shuster W. M., The Strangling of Persia, London, 1912.
182. Sykes Christopher. Wassmus. «The German Lawrence», 1936.
183. Sykes P. M., A History of Persia, vol. 1–2, London, 1930.
184. Sykes Persy, Persia, Oxford, 1922.
185. Taherzade Adip, The Revelation of Baha U'llah, vol. 1, Oxford, 1996.
186. Tarich–i Jadid or New History of Mirza Ali Mohammad the Bab by Mirza Huseyn of Hamadan. Transl. from the Persian by E. G. Browne, Cambridge, 1893.
187. The Armenians of Iran. The Paradoxical Role of a Minority in A Dominant Culture: Articles and Documents. Edited by Cosroe Chaqueri. Harvard University Press, Cambridge, Massachusetts, 1998.
188. The Economic History of Iran 1800–1914, Ed. by Charles Issawi, Chicago and London, 1971.
189. The Middle East and North Africa in World Politics. A Documentary Record. vol. I, Europian Expansion, 1535–1914. Ed. by J. C. Hurewitz. New Heaven–London, 1975.
190. The Tobacco Regie: Prelude to Revolution, «Studia Islamica», 1965, NXXII.
191. Waterfield R., Christians in Persia. Assirians, Armenians, Roman Catholics and Protestants, London, 1973.
192. Watson R. G., A History of Persia from the beginning nineteenth century to the year 1858, London, 1866.
193. Whighman H. J., The Persian Problem: An Exsamination of the rival positions of Russia and Great Britain in Persia with Some Account of the Persian Gulfand Bagdad Realway, London, 1903.
194. Yeselson A., United States — Persian Diplomatic Relations 1883–1921, New Brunswick, 1956.
195. Աբբաս Էղբալ, Միրզա Թաղի խան Ամիր–ե քաբիր, Թեհրան, 1962:
196. Ադամիյաթ Ֆերիդուն, Ամիր–ե քաբիր վա Իրան, Թեհրան, 1348:
197. Ադամիյաթ Ֆերիդուն, Ֆեքր–ե ազաղի վա մողադդամե–ե նեհզաթ–ե մաշրութիյաթ, Թեհրան, 1340:
198. Ալի Աքբար Բինա, Թարիխ–ե սիյասի վա դիփլոմասի–ե Իրան, ջելդ–ե ավվալ, Թեհրան, 1958:

199. Աշթիանի Իղբալ Աբբաս, Թարիխ–ե մուֆասսալ–ե Իրան, Թեհրան, 1375/1996:
200. Արյանպուր, Ազ Սաբա Թա Նիմա, Թեհրան, 1, 1372:
201. Բայբուրդյան Վ., Սիյասաթ–ե Թորքիե նեսբաթ բե Իրան դար ավայել–ե դարն–ե բիսթոմ, Էսֆահան, 1976:
202. Բարրեսի վա մոհաքամե դար թարիխ–ե ըղայեդ վա էհքամ–ե բաբ վա բահայի, Թեհրան, 1955:
203. Բի թարաֆի–ե Իրան, Թեհրան, 1914:
204. Բրաուն Էդվարդ, Էնղելաբ–ե Իրան, Թեհրան, 1959:
205. Գարդան Ալֆրեդ, Խաթիրաթ–ի մա՛ումիրաթ–ի ժինիրալ Գարդան դար Իրան, առանց հրատ. վայրի, 1362/1983:
206. Դանեշվուր Ա., Բանք–ե շահենշահի վա էմթիազ, Թեհրան, 1326:
207. Դավարի Մահդի, Այն ալ–Դաուլա վա ռիժիմ–ի մաշրութա, Թեհրան, 1372/1993:
208. Դավուդի Մեհդի, Այն ադ–դոուլե վա ռեժիմ–ե մաշրութե, Թեհրան, 1962:
209. Զենդեգի–ե թուֆանի: Խաթերաթ–ե Հասան–ե Թաղի–զադե: Բեքուշեշ–ե Իրաջ Աֆշար, Թեհրան, 1372/1993:
210. Թաջբախշ Ահմեդ, Բավաբաթ–ե Իրան վա Ռուսիե (1800–1850), Թավրիզ, 1337:
211. Թեյմուրի Է, Ղարարդաղ–ե սալ–ե 1891 ռեժի, Թեհրան, 1954:
212. Թեյմուրի Է., Ասր–ե բիխաբարի յա թարիխ–ե էմթիազաթ դար Իրան, Թեհրան, 1953:
213. Թեյմուրի Է., Թահրիմ–ե թանբաքու, Թեհրան, 1358/1979:
214. Խան Մալեք Սասանի, Սիասաթգարան–ե դոուրե–ե դաջար, Թեհրան, 1960:
215. Հաբիբոլլա Մոխթարի, Թարիխ–ե բիդարի–ե Իրան, Թեհրան, 1947:
216. Հասան Հալլաջ, Թարիխ–ե թահավոլաթ–ե սիյասի–ե Իրան, Թեհրան, 1387:
217. Հոմա Նաթեղ, Բազերգանան դար դադոսեթաղ բա բանք–ե շահի վա ռեժի–ե թանբաքու, Փարիզ, 1992:
218. Հոսեյին Մաքքի, Զենդեգանի–ե միրզա Թաղի խան–ե Ամիր–ե քաբիր, Թեհրան, 1958:
219. Մազենդարանի Գ., Էղթեսադ–ե մելլի վա սիյասաթ–ե էղթեսադի–ե Իրան, Թեհրան, 1316:
220. Մալեք Սասանի Ահմադ խան, Սիյասաթգարան–ե դոուրե–ե Ղաջար, Թեհրան, 1379:
221. Մալքոմ խան Նեզամ օդ–Դոուլե, Մաջմույե–ե ասար–ե Միրզա Մալքոմ խան: Թադվին վա թանզիմ–ե Մոհամմադ–ե Մոհիթ–ե Թաբաթաբայի, ջելդ–ե ավվալ, Թեհրան, 1948:
222. Մահմուդ–ե Մահմուդ, Թարիխ–ե ռեվաբեթ–ե սիյասի–ե Իրան վա էնգլիս դար դարն–ե նովազդահոմ–ե միլադի, ջելդ–փանջոմ, Թեհրան, 1331:
223. Մեհդի Մալեքզադե, Թարիխ–ե էնղելաբ–ե մաշրութիյաթ–ե, Իրան, Թեհրան, 1363/1984:
224. Միրզա Զանի Քաշանի, Քեթաբ–ե նուքթաթ ալ–քաֆ ֆի թարիխ–ե բաբիե, Լեյդեն–Լոնդոն, 1910:
225. Մոարեխ էդ Դոուլե Սեփեհր, Իրան դար ջանգ–ե բոզորգ 1914–1918, Թեհրան, 1957:
226. Մոհամմադ Մոհիթ Թաբաթաբայի, Մոջմուե–ե ասար միրզա Մալքոմ խան, Թեհրան, 1948:
227. Մոհամմադ Ջաֆար Խուրմուջի, Թարիխ–ե Ղաջար, Թեհրան, 1344:
228. Նազեմ–օլ էսլամ–ե Քերմանի, Թարիխ–ե բիդարի–ե իրանիան յա թարիխ–ե մաշրուհ վա հաղիղե–ե մաշրութիաթ–ե–Իրան, Թեհրան, 1371/1992:
229. Նաթեղ Հոմա, Քարնամե վա զամանե–ե Միրզա Ռեզա Քերմանի, Քյոլն, 1984:
230. Նաջմի Նասեր, Իրան դար միան–ե թուֆան յա շարի–ե զենդեգանի–ե Աբբաս Միրզա նայեբ աս–սալթանե, վա ջանգհա–ե Իրան վա ռուս, Թեհրան, 1957:
231. Նաֆիսի Սայիդ, Թարիխ–ե էջթեմաի վա սիյասի–ե Իրան դար դոուրե–ե մոասեր: Ազ աղազ–ե սալթանաթ–ե Ղաջարիե թա փայան–ե նախոսթին ջանգ բա Ռուսիե, Թեհրան, 1335:
232. Շամիմ Ալի Ասղար, Իրան դար դովրե–ե սալթանաթ–ե Ղաջարիա, Թեհրան, 1342:
233. Շաֆի Խադկանի Մ., Ադվարե շերե ֆարսի, Թեհրան, 1387
234. Ռային Է., Եփրեմ խան–ե սարդար, Թեհրան, 1971:

235. Ռային Է., Իրանյան–ե արմանի, Թեհրան, 1970:
236. Ռային Է., Մալաք Շահնազար Միրդավուդ Զաղուրյան, նախոստին ֆերեսթաղե–ե Նապոլեոն բե Իրան, Թեհրան, 1973:
237. Սաֆաի Ի., Ասնադ–ե սիյասի–ե դոուրան–ե դաջարիե, Թեհրան, 1967:
238. Վահիդ–ե Մազենդարանի, Ղարարդաղ–ե 1907, Թեհրան, 1960:
239. Քասրավի Ա., Թարիխ–ե հիջդասալե–ե Ազարբայջան, Թեհրան, 1353/1976:
240. Քասրավի Ա., Թարիխ–ե մաշրութե–ե Իրան, Թեհրան, ջելդ–ե 1–3, 1355/1976:
241. Ֆերիդուն Ադամյաթ, Ամիր Քաբիր վա Իրան, Թեհրան, 1348:

ԲԱԺԻՆ 2

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ XVIII ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ — XIX ԴԱՐԻ 30–ԱԿԱՆ ԹԹ.

1. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԵԼԻՄ Գ–Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

XVIII դարի վերջերից Օսմանյան կայսրության պատմության մեջ սկսվեց մի նոր դարաշրջան, որի հիմնական սոցիալ–տնտեսական էությունն էին կազմում ավելի քան մեկ հարյուրամյակ տևած ավատատիրական հասարակական–տնտեսական հարաբերությունների քայքայումը և կապիտալիստական կացութաձևի տարրերի դանդաղ հասունացումը նրանց ընդերքում:

Բազմազգ Օսմանյան կայսրությունում այդ պատմականորեն օրինաչափ գործընթացների ամենակարևոր առանձնահատկություններից մեկն այն էր, որ կապիտալիստական հարաբերությունների կրող էին հանդես գալիս առաջին հերթին հպատակ քրիստոնյա ժողովուրդների ներկայացուցիչները՝ հույները, սլավոնները, հայերը, իսկ քաղաքական տեսակետից գերիշխող ժողովուրդը՝ թուրքերը, զերծ մնալով զարգացման գլխավոր ուղուց, արգելակող գործոնի դեր էին կատարում: Համապատասխանաբար, նոր կացութաձևը սկսվեց ձևավորվել նախ կայսրության այն տարածաշրջաններում, որոնք մեծ մասամբ բնակեցված էին քրիստոնյա ժողովուրդներով՝ Բալկանյան թերակղզում և Փոքր Ասիայի մերձափնյա և մի շարք այլ շրջաններում: Համապատասխանաբար, քրիստոնյա ժողովուրդների բուրժուազիայի ձևավորումը սկսվեց թուրքականից շատ ավելի վաղ: Կուտակելով կապիտալ՝ աստիճանաբար այն առաջատար դիրք գրավեց տնտեսության մեջ՝ միևնույն ժա-

մանակ քաղաքականապես մնալով հալածված: Սկսեց ձևավորվել նաև հպատակ ժողովուրդների մտավորական խավը:

Սոցիալական շերտավորման խորացող գործընթացները արագացրին քրիստոնյա ժողովուրդների ազգային համախմբումը: 1789 թ. Ֆրանսիական մեծ հեղափոխության ազդեցության ներքո նոր լիցք ստացան ազատագրական գաղափարախոսության հիմնական դրսևորումները: Որպես հետևանք՝ այդ ժողովուրդների մեջ սկսվեց ազգային հոգևոր–մշակութային զարթոնքը, ծնունդ առավ և հզորացավ ազգային–ազատագրական շարժումը:

Այս ամենը ուղեկցվում էր Օսմանյան կայսրության պարտություններով ռազմի դաշտերում: Նրա կտրուկ թուլացումը և պարտությունը 1768–1774 թթ. հերթական ռուս–թուրքական պատերազմում հանգեցրին Արևելյան հարցի առաջացմանը, որը հետզհետե դարձավ եվրոպական դիվանագիտության կարևոր օրակարգային խնդիրներից մեկը: Այն, ըստ էության, հանդես էր գալիս երեք հարթություններում: Առաջինը հպատակ քրիստոնյա ժողովուրդների, սկզբում՝ բալկանյան, հետագայում նաև հայ ժողովրդի, ազգային–ազատագրական շարժումն էր: Երկրորդը օսմանյան իշխանությունների ձգտումն էր, կիրառելով բոլոր հնարավոր միջոցները, ընդուպ մինչև ցեղասպանություն, ամեն գնով չեզոքացնելու այդ շարժումները: Այդ երկու գործընթացները, որոնք ողջ XIX դարի ընթացքում և XX դարի սկզբին՝ մինչև կայսրության կործանումը Առաջին աշխարհամարտի ավարտին, ձեռք էին բերել որոշիչ նշանակություն Օսմանյան կայսրության ներքին քաղաքական կյանքում, օգտագործվում էին այդ դարաշրջանի առաջատար եվրոպական տերությունների և Ռուսաստանի կողմից իրենց շահերը իրականացնելու նպատակով՝ այդպիսով կազմելով Արևելյան հարցի երրորդ հարթությունը:

Քրիստոնյա ժողովուրդների ազգային–ազատագրական շարժումների անշեղ աճը, ինչպես նաև վերևում նշված սոցիալ–տնտեսական բնույթի առանձնահատկությունները հանգեցրին Օսմանյան կայսրության կառուցվածքային ճգնաժամի: Առավել սուր այն արտահայտվեց հպատակ ժողովուրդների նկատմամբ կառավարող շրջանների կողմից տարվող քաղաքականության մեջ: Կայսրության կազմում մտնում էին 60 ժողովուրդներ ու ցեղեր: Նրանք սոցիալ–տնտեսական, մշակութային ու քաղաքական զարգացման տարբեր աստիճանների վրա էին: Թուրքերը այդպես էլ չկարողացան ուծացնել հպատակ ժողովուրդներին, որոնցից շատերը իրենց զարգացման մակարդակով գերազանցում էին նրանց: Նվաճված տարածքներում, որոշ բացառություններով, նրանք այդպես էլ մնացին զավթիչներ՝ դաժանորեն ճնշելով տեղաբնիկ ժողովուրդներին:

Կայսրության ռազմաքաղաքական հզորության շրջանում նվաճված ժողովուրդներին հպատակ վիճակում պահելու հիմնական միջոցը բռնի ռազմական ուժն էր: Ապստամբությունները ճնշվում էին մեծ դաժանությամբ, հաճախակի կիրառվում էր զանգվածային կոտորածների քաղաքականությունը, որի նպատակն էր մշտական վախի մթնոլորտ ստեղծել քրիստոնյաների միջավայրում: Այդ քաղաքականությունը բխում էր օսմանական ռազմաավատատիրական բռնապետության

պետական կարգի էությունից: Ինչպես ասում էին այն ժամանակվա թուրք գործիչները. «Պետությունը դաշույնով է ձեռք բերվել և միայն դաշույնով կարող է պահպանվել»: Իսլամը համարվում էր կայսրության «հոգևոր միասնության» և ամբողջականության պահպանման գլխավոր գաղափարական գործոնը՝ հանդես գալով իրավական ոլորտում իսլամական օրենսդրության՝ շարիաթի տեսքով: Շարիաթը նախատեսում էր ոչ մուսուլման ազգաբնակչության ստորադաս և իրավազուրկ իրավիճակ՝ այդպիսով «օրինականացնելով» թուրքական լուծը նրանց վրա: Ոչ մուսուլման ժողովուրդների բռնի մուսուլմանացումը, որը հակասում էր շարիաթին, թուրքական իշխանությունների կողմից դիտարկվում էր նվաճված երկրներում իրենց տիրապետության հաստատման և պահպանման լրացուցիչ «խաղաղ» միջոցներից մեկը: Այդ նպատակին էր ծառայում նաև միլեթների համակարգը:

Ռազմաավատատիրական համակարգի քայքայումը օսմանական բանակի հզորության անկման պատճառ դարձավ, որը սկսեց պարտություն կրել ոչ միայն օտար բանակների հետ ընդհարումների ժամանակ, այլև անկարող դարձավ երկրի ներսում արագ ճնշել զինված ապստամբությունները: Դրան ավելանում էր այն հանգամանքը, որ քրիստոնյա ժողովուրդների ազգային ինքնագիտակցության ուժեղացումը, ինչպես նաև եվրոպական երկրների և Ռուսաստանի միջամտությունները դժվարացնում էին բռնի մուսուլմանացման քաղաքականության անցկացումը:

Ստեղծված իրադրությունում օսմանյան պետության ղեկավարների համար առաջնային նշանակություն ձեռք բերեց երկրի տարածքային ամբողջականության պահպանումը, ինչը նրանցից պահանջեց նոր միջոցների որոնում ինչպես քրիստոնյա ժողովուրդների ազատագրական շարժումները չեզոքացնելու, այնպես էլ բանակի երբեմնի հզորության վերականգնման համար:

Վերը նշված հանգամանքներով էին պայմանավորված սուլթան Սելիմ Գ–ի (1789–1807 թթ.) իշխանության ժամանակ օսմանյան վերնախավի մի փոքր խումբ ներկայացուցիչների կողմից նախաձեռնած բարենորոգումները: Նրանք առաջին հերթին նպատակ ունեին արդիականացնելու օսմանյան բանակը: Ռազմական ոլորտի բարենորոգումները ստացան հավաքական *նիզամ–ը ջեդիդ* («նոր կարգ») անվանումը: Նրանց մասին որոշումն ընդունվեց 1792 թ. և հաջորդ տարի սկիզբ դրվեց իրականացման գործընթացին, որի վերջնական նպատակն էր, ստեղծելով նոր բանակային հետևակային ստորաբաժանումներ, որոնք անվանվեցին «նիզամ–ը ջեդիդ»–ի ստորաբաժանումներ, սահմանափակել ոչ մարտունակ ենիչերիական բանակի դերն ու նշանակությունը: Նրանց անդամները պետք է անցնեին համապատասխան պատրաստություն և լինեին ավելի մարտունակ, քան ավանդական օսմանյան բանակը:

Այդ բարենորոգումը բացասաբար ընդունվեց կայսրության վերնախավի բացարձակ մեծամասնության կողմից, որի շատ ներկայացուցիչներ կապված էին մուսուլմանական հոգևորականության և ենիչերիների հետ: Նրանք բնութագրեցին *նիզամ–ը ջեդիդի* ստորաբաժանումները որպես ոչ հարիր մուսուլմաններին և սկսեցին ամեն կերպ խոչընդոտել նրանց կազմավորման գործընթացը: Տեղի ունեցան ենիչե-

րիների ապստամբություններ *նիզամ–ը ջեդիդի* դեմ: Արդյունքում՝ Սելիմին ու նրա կողմնակիցներին ոչ միայն չհաջողվեց նոր ստեղծվող բանակային ուժի թվաքանակը հասցնել նույնիսկ նախապես նախատեսված շատ համեստ թվաքանակին՝ 12 հազարի, այլև նրանք ստիպված էին ընդհանրապես հրաժարվել այդ ծրագրից և ցրել *նիզամ–ը ջեդիդի* այն փոքր ջոկատները, որոնք արդեն ստեղծվել էին: Հետագայում՝ 1805 թ., Սելիմը մեկ անգամ ևս փորձեց ստեղծել *նիզամ–ը ջեդիդի* ստորաբաժանումները, սակայն հերթական անգամ մատնվեց անհաջողության:

Ավելի հաջող ընթացք ունեցան սուլթան Սելիմի ջանքերը եվրոպական օրինակով որոշ բարենորոգումներ անցկացնել ռազմածովային ու հրետանային ուժերում, օգտագործել եվրոպական փորձը ռազմական կրթության ոլորտում: Մասնավորապես հաջողվեց ստեղծել փոքրաթիվ նոր հրետանային ստորաբաժանում, կազմակերպել նոր ռազմանավերի կառուցումը: Այդ սահմանափակ հաջողությունները պայմանավորված էին այն հանգամանքով, որ հրավիրվել էին եվրոպացի մասնագետներ՝ ռաազմական ճարտարագետներ, վարպետներ, նավաշինարարներ: Եվրոպական երկրներից հրավիրված մասնագետները և դասախոսները որոշիչ դերակատարում ունեցան ռազմածովային և ռազմաճարտարագիտական ուսումնարանների գործունեությունը եվրոպական չափանիշներին մոտեցնելու գործում: Ֆրանսերենի իմացությունը դարձավ պարտադիր այդ ուսումնարանների աշակերտների համար, քանի որ ոչ միայն դասախոսների մեծ մասն էր ֆրանսիացի, այլև դասագրքերն էին հիմնականում ֆրանսերեն: Ռազմաճարտարագիտական ուսումնարանին կից հիմնադրվեց նաև տպարան, որտեղ սկսեցին տպագրել ֆրանսերենից թարգմանված դասագրքերը:

Սակայն վերոնշյալ հաջողված բարենորոգումները չափազանց սահմանափակ էին և չունեցան որևիցե իրական դրական ազդեցություն կայսրության քայքայման գործընթացի վրա:

Բարենորոգումները ֆինանսավորելու նպատակով սուլթանը ստեղծեց հատուկ գանձարան, որտեղ սկսեցին հավաքագրել պետական հարկերի մի մասը: Մտցվեցին մի շարք նոր հարկեր, որոնք նույնպես ուղարկվում էին նորաստեղծ գանձարան: Արդյունքում կայսրության բնակչության սոցիալ–տնտեսական դրությունը սկսեց կտրուկ վատանալ, ինչը առաջացրեց զինված ապստամբությունների ալիք: Առավել հաճախակի էին ապստամբությունները երկրի եվրոպական հատվածում՝ Ռումելիայում: Ձևավորվեցին զինված ջոկատներ, որոնց անդամները ստացան *քրրջալը* անվանումը: Այդ ջոկատները ոչ միայն հարձակվում էին և կողոպտում պետական հաստատությունները, այլև դաժան հաշվեհարդար էին տեսնում բնակչության բոլոր խավերի ներկայացուցիչների նկատմամբ, ինչպես մուսուլմանների, այնպես էլ՝ քրիստոնյաների:

Քըրջալիների գործունեությունը փորձում էին օգտագործել գավառներում բնակվող որոշ խոշոր մեծահարուստներ, որոնք վայելում էին մուսուլմանների միջավայրում հեղինակություն և կրում էին *այան* պատվավոր տիտղոսը: Նրանց նպատակն էր իրենց տիրույթների ընդարձակումը և Կոստանդնուպոլսից կախվածու-

թյան թուլացումը: Նրանցից ամենահայտնին էր բուլղարական Վիդին քաղաքի այան Օսման Փազվանթօղլուն, որին հաջողվել էր իր իշխանությունը տարածել Բուլղարիայի զգալի հատվածում: Նույնիսկ հարյուր հազարանոց բանակ ուղարկելով այդ անհնազանդ ավատատերի դեմ՝ սուլթանին չհաջողվեց վերջնական պարտության մատնել նրան: Փազվանթօղլուն հետ քաշեց իր զինված ջոկատները Բուլղարիայի գրավված տարածքներից և փոխարենը ստացավ Սելիմից Վիդինի նահանգի նահանգապետի՝ *վալիի* պաշտոնը:

Կոստանդնուպոլսի իշխանությունների պայքարը կենտրոնախույս ուժերի դեմ ծանր էր անդրադառնում առաջին հերթին տեղական քրիստոնյա բնակչության դրության վրա: Արդյունքում ուժեղանում էր բալկանյան քրիստոնյա ժողովուրդների ազգային–ազատագրական պայքարը թուրքական լծի դեմ: Պատահական չէր, որ Սելիմի սուլթանության տարիներին օսմանյան ծառայողական վերնախավի առանձին ներկայացուցիչներ սկսեցին գիտակցել, որ անհրաժեշտ է կանխել քրիստոնյաների ապստամբությունները, այլ ոչ թե հույսը դնել նրանց ուժով ճնշելու վրա: Այդ գաղափարը առաջին անգամ արտահայտված էր Օսմանյան կայսրության եվրոպական հատվածի (*Ռումելի*) գլխավոր դատավոր (*կադիասկեր*) Թաթարջըք Աբդուլա էֆենդիի զեկուցագրում (*յահիա*), որը 1791 թ. նա ներկայացրել էր Սելիմ Գ սուլթանին, ի պատասխան վերջինիս հրամանի՝ կազմել բարեփոխումների ծրագիր: Թաթարջըք Աբդուլա էֆենդին գրում էր, թե շատ տարիներ առաջ, երբ ոչ մուսուլմաններից գլխահարկը (*ջիզյե*) գանձվում էր շարիաթի համաձայն, նրանք ապրում էին լիության մեջ՝ չզգալով որևէ բանի կարիք, և նույնիսկ նրանց դավանակիցները ուրիշ երկրներից նախանձում էին նրանց: Բայց այնուհետև սկսվեց *ռայայի* կեղեքումը՝ հարկային բեռի ուժեղացումը: Դա դժգոհություն առաջացրեց և 1770 թ. ապստամբության հիմնական պատճառը դարձավ: Հեղինակը նշում էր, որ *ռայայի* դժգոհությունից օգտվում են *մոսկովները*՝ դրդելով նրան ապստամբելու իշխանությունների դեմ: Հեղինակը առաջարկում էր խստորեն պահպանել քրիստոնյաներից հարկահավաքի մասին շարիաթի բոլոր օրենքները և այդպիսով վերականգնել ռայայի վստահությունը օսմանյան պետության նկատմամբ: Թուրք պաշտոնյայի այս պարզունակ ընկալումները քրիստոնյաների ազատագրական շարժումների դրդապատճառների մասին վկայում են, թե որքան հեռու էին թուրքական վերնախավի նույնիսկ բարենորոգումների սակավաթիվ կողմնակիցները կայսրության իրական իրավիճակը ըմբռնելուց:

Թաթարջըք Աբդուլլահ էֆենդիի նույնիսկ այդ խիստ սահմանափակ բարեփոխում իրականացնելու առաջարկը չընդունվեց սուլթանի կողմից: Քրիստոնյա ժողովուրդների ճնշումները շարունակվեցին նույն դաժանությամբ: Պատասխանը եղան բալկանյան քրիստոնյա ժողովուրդների զինված ապստամբությունները թուրքական բռնապետության դեմ: Իշխանությունների համար առավել վտանգավոր բնույթ ձեռք բերեց սերբ ժողովրդի լայնածավալ ապստամբությունը, որը սկիզբ առավ 1804 թ.՝ այն բանից հետո, երբ ենիչերիները դաժանորեն սպանեցին 70 սերբ իշխանների: Ապստամբությունը հաջողվեց ճնշել միայն 1813 թ.:

Սելիմի կառավարման շրջանի կարևոր իրադարձություններից էր պատերազմը Ֆրանսիայի դեմ (1798–1802 թթ.): Պատերազմի ընթացքում ձևավորվեց հակաֆրանսիական դաշինք, որի մասնակիցներն էին Օսմանյան, Ռուսական ու Բրիտանական կայսրությունները: Դաշինքին հաջողվեց պարտության մատնել ֆրանսիացիներին, սակայն այդ չամրապնդեց Սելիմի դիրքերը երկրի ներսում: Նրա հակառակորդները, որոնք հանդես էին գալիս *նիզամ–ի ջեդիդի* բարենորոգումների դեմ, գնալով ավելի էին ուժեղացնում իրենց դիրքերը: Օգտվելով այն հանգամանքից, որ 1807 թ. հերթական թուրք–ռուսական պատերազմի ժամանակ օսմանյան բանակի խոշոր ուժեր ռազմաճակատում էին, Սելիմի հակառակորդները, ստանալով Կոստանդնուպոլսում և մերձակայքում գտնվող զինուժի, այդ թվում՝ ենիչերիների աջակցությունը, ապստամբություն բարձրացրին մայրաքաղաքում և գահընկեց արեցին նրան: Ապստամբները գահ բարձրացրին Մուսթաֆա Դ–ին (1807–1808 թթ.), որը հնազանդորեն կատարում էր նրանց ցուցումները: Նա չեղյալ հայտարարեց *նիզամ–ը ջեդիդը* և ազդարարեց վերադարձ հին կարգերին: Սելիմը բանտարկվեց, նրա կողմնակիցները, համաձայն օսմանյան ավանդույթի, դաժանաբար սպանվեցին:

Թվում էր, թե բարենորոգումների կողմնակիցների պարտությունը վերջնական է: Սակայն անսպասելի մայրաքաղաքի քաղաքական պայքարի թատերաբեմում հայտնվեց բուլղարական Ռուսե (թուրքերեն՝ Ռուսչուք) քաղաքի այաններից Ալեմդար Մուսթաֆա փաշան՝ իր մի խումբ կողմնակիցներով: Նրանք դեռևս մինչև մայրաքաղաքում ծավալված իրադարձությունները ստեղծել էին գաղտնի կազմակերպություն, որը հետագայում հայտնի դարձավ որպես «ռուսչուքյան ընկերների» խմբակ: Վերջիններս կազմեցին դավադրություն և համախմբելով Սելիմին հավատարիմ մնացած զինված ստորաբաժանումների ուժերը՝ արշավեցին Կոստանդնուպոլսի վրա՝ նրան բանտից ազատելու և նորից գահ բարձրացնելու նպատակով: 1808 թ. հուլիսին Մուսթաֆա փաշայի զորքը մտավ մայրաքաղաք և ուղղվեց դեպի սուլթանական պալատ, որտեղ պահվում էր բանտարկված և գահընկեց եղած սուլթան Սելիմը: Սակայն Մուսթաֆա Դ–ի կողմնակիցները փախուստի դիմելուց առաջ արդեն հասցրել էին սպանել նրան:

Իշխանությունը երկրում անցավ Մուսթաֆա փաշա Բայրաքթարին: Նա գահընկեց արեց Մուսթաֆա Դ–ին և գահ բարձրացրեց նրա 23–ամյա եղբորը, որը հռչակվեց սուլթան որպես Մահմուդ Բ (1808–1839 թթ.): Վերջինս էլ նշանակեց Ալեմդար Մուսթաֆա փաշային մեծ վեզիր: «Ռուսչուկյան ընկերների» խմբակի մյուս անդամները ստացան մի շարք բարձրագույն պաշտոններ:

Դավադիրների գործողությունները արտաքուստ ոչինչով չէին տարբերվում օսմանյան Թուրքիայի պատմության ընթացքում բազմաթիվ անգամներ տեղի ունեցած դավադրություններից և ապստամբություններից, որոնց հիմնական նպատակը զուտ իշխանությանը տիրանալն էր: Սակայն իրականում «ռուսչուկյան ընկերները» ունեին քաղաքական նպատակներ: Դրա մասին են վկայում նրանց կարճատև գործունեության մի շարք դրվագներ: Մասնավորապես նրանց նախաձեռնությամբ և վերնախավի շատ ներկայացուցիչների մասնակցությամբ 1808 թ. սեպտեմբերի

29–ին ընդունված «Դաշնության համաձայնագիրը» (*Sened–i Ittifak*), որի նպատակն էր խոչընդոտել կայսրությունում անջատողական շարժումների ծավալմանը և, հաշվի առնելով տեղական խոշոր ավատատերերի ու պաշտոնյաների շահերը, համախմբել նրանց կենտրոնական իշխանության շուրջը:

Ուշագրավ է, որ «Դաշնության համաձայնագրի» 7–րդ կետում հատուկ նշված էր «ռայայի և աղքատների» չափավոր հարկման անհրաժեշտության մասին: Այն համապատասխանում էր դեռևս 1791 թ. Թաթարջըք Աբդուլլահ էֆենդիի հեղինակած զեկուցագրում տեղ գտած առաջարկին, ինչը վկայում է XVIII դարի վերջում և XIX դարի սկզբում Օսմանյան կայսրությունում ի հայտ եկած բարենորոգչական ընկալումների շարունակականության մասին:

«Ռուսչուկյան ընկերների» երեքամսյա գործունեության կարևոր արդյունքներից էր նաև մեծ վեզիր Ալեմդար Մուսթաֆա փաշայի արձակած հրամանը, համաձայն որի՝ մուսուլմաններին արգելվում էր այլևս քրիստոնյաներին անվանել «*գյավուր*» (անհավատ): Որպես հիմնավորում նշվում էր այն հանգամանքը, որ քրիստոնյան, ինչ դավանանքի էլ պատկանի, հավատում է միևնույն աստծուն, որին հավատում են նաև մուսուլմանները: Ձևականորեն այդ հրամանը չէր հակասում Ղուրանին: Սակայն XIX դարի սկզբում նրա արձակումը օսմանյան Թուրքիայի բարձրագույն պաշտոնյայի կողմից, որտեղ գերիշխում էին մուսուլմանական ծայրահեղ մոլեռանդության և մուսուլմանների գերազանցության գաղափարները, անկասկած ուշագրավ երևույթ էր, քանի որ այն հող էր նախապատրաստում հետագայում՝ Թանզիմաթի արևմտամետ բարենորոգումների շրջանում, քրիստոնյաների և մուսուլմանների իրավական առումով ձևական հավասարության մասին թեզի համար: Ուշադրություն է գրավում նաև այն հանգամանքը, որ քրիստոնյաներին «գյավուրներ» անվանելու արգելքը հիմնավորվում էր զուտ կրոնական հանգամանքով՝ նրանց երկրպագությամբ միևնույն աստծուն: Կարելի է եզրակացնել, թե ինչ մեծ դժվարությամբ էր օսմանյան վերնախավի համեմատաբար ավելի առաջադեմ ներկայացուցիչների շրջանում ձևավորվում կրոնական մտածելակերպից ավելի սակավ կախում ունեցող մտածելակերպը: Անտարակույս, օրենքի նախապատրաստման մեջ դերակատարում էր ունեցել Մուսթաֆա փաշայի մերձավորներից հայազգի մեծահարուստ Մանուկ բեյ Միրզայանը:

Ավելորդ է նույնիսկ նշել, որ օրենքը որևէ կիրառական նշանակություն չունեցավ և արհամարհական «գյավուր» մականունի օգտագործումը շարունակվեց նույնիսկ հանրապետական Թուրքիայում:

«Ռուսչուկյան ընկերների» գործունեությունը տևեց ընդամենը երեք ամիս: 1808 թ. նոյեմբերի 15–ին մայրաքաղաքում ենիչերիները բարձրացրին ապստամբություն և սպանեցին Ալեմդար Մուսթաֆա փաշային ու նրա համախոհներից շատերին: Մանուկ բեյը խուսափեց հաշվեհարդարից և հետագայում ծավալեց նշանակալից պետական ու դիվանագիտական գործունեություն Մոլդովայում ու Տրանսիլվանիայում:

Ապստամբ ենիչերիները և նրանց հետևում կանգնած բարենորոգումների կատաղի հակառակորդ հոգևորական դասի ներկայացուցիչները և բարձրաստիճան պաշտոնյաները ստիպված էին համակերպվել Մահմուդ Բ–ի սուլթանության հետ, քանի որ նա օսմանյան հարստության միակ կենդանի մնացած ներկայացուցիչն էր, ով իրավունք ուներ բազմելու սուլթանների գահին: Դրան նպաստեց նաև Մահմուդը՝ հրապարակավ հրաժարվելով որևէ բարենորոգչական քայլ կատարելուց:

2. ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԵՐԸ ՄԱՀՄՈՒԴ Բ–Ի ՕՐՈՔ

1808 թ. հեղաշրջմանը հաջորդած տարիներին Օսմանյան կայսրության ներքին և արտաքին կացությունը շարունակում էր վատթարանալ: Ռազմական պարտություններին, մասնավորապես ռուսների հետ տեղի ունեցող ճակատամարտերում, հաջորդում էին հպատակ բալկանյան ժողովուրդների զինված ապստամբությունները օսմանյան կեղեքիչների դեմ: Դրան ավելանում էր տեղական մեծահարուստների և կառավարիչների գնալով ավելի մեծ անհնազանդությունը կենտրոնական իշխանություններին: Այդ համատարած քայքայման պայմաններում Օսմանյան կայսրության գոյությունը պահպանվում էր միայն շնորհիվ Մեծ տերությունների միջև գոյություն ունեցող հակասությունների և թուրքերի կողմից դրանց հմտորեն օգտագործման: Այսպես, օրինակ՝ մի շարք ջախջախիչ պարտություններ կրելով 1806–1812 թթ. հերթական թուրք–ռուսական պատերազմի ընթացքում՝ Օսմանյան կայսրությանը, այնուամենայնիվ, հաջողվեց 1812 թ. Բուխարեստում կնքել իր համար շատ թե քիչ բարենպաստ պայմանագիր, որի արդյունքում կրելով մի շարք տարածքային կորուստներ հօգուտ Ռուսաստանի, մասնավորապես նրան զիջելով Բեսարաբիան՝ կարողացավ իր ձեռքում պահել Մոլդովան ու Վալախիան, ինչպես նաև զգալի տարածքներ Կովկասում:

Բուխարեստի պայմանագրից հետո, որը վերահաստատեց Ռուսաստանի իրավունքը հովանավորելու ուղղափառ քրիստոնյա ժողովուրդներին, վերջիններիս ազատագրական շարժումը նոր վերելք ապրեց: Մասնավորապես 1821 թ. զինված ապստամբություն տեղի ունեցավ Հունաստանում, որը շուտով վերաճեց համազգային ազատագրական պատերազմի թուրքական իշխանությունների դեմ: Այն ստացավ լայն արձագանք եվրոպական մի շարք երկրների առաջադեմ շրջանակների կողմից: Ժամանակի խոշորագույն մտավորականները հայտնում էին իրենց աջակցությունը հույն ժողովրդի ազատագրական պայքարին, ստեղծում էին «հունասերների» կազմակերպություններ, որոնք հանգանակությունների միջոցով հավաքված դրամը և զենքը ուղարկում էին Հունաստան: Սկսվեց նաև Եվրոպայի տարբեր երկրները ներկայացնող կամավորների մեկնումը Հունաստան և նրանց մասնակցությունը օսմանյան բանակի դեմ մղվող զինված պայքարին: Վերջիններիս թվում էր նաև ժամանակի անգլիացի խոշորագույն գրող լորդ Բայրոնը, որն իր կյանքը զոհաբերեց հանուն հույն ժողովրդի ազատագրման թուրքական բազմադարյա լծից:

Այդպիսով՝ հունական պատերազմը ձեռք բերեց համաեվրոպական նշանակություն: Օսմանյան իշխանությունները հասկացան, որ միայնակ ի վիճակի չեն պայքարելու, ըստ էության, ողջ Եվրոպայի առաջադեմ ուժերի դեմ: Սուլթանը ստիպված էր դիմել Եգիպտոսի տիրակալ Մուհամմեդ Ալիին: Եգիպտական մեծաքանակ և լավ զինված բանակը 1824 թ. ներխուժեց Հունաստան, և չնայած հույն զինյալները համառ դիմադրություն էին ցույց տալիս, 1826 թ. գարնանը գրավեց Հունաստանի մեծ մասը: Սուլթանը, համոզվելով, որ իր հրամանատարության տակ եղած օսմանյան բանակի մարտունակությունը զիջում է նույնիսկ մուսուլման եգիպտացիների բանակին, որոշեց նրանց օգնությամբ ստեղծել նոր ստորաբաժանումներ՝ այդպիսով շարունակելով Սելիմի բարենորոգումների անհաջողությամբ ավարտված փորձը: 1826 թ. մայիսին հրապարակվեց սուլթանի համապատասխան հրամանը, և սկսվեց նոր ստորաբաժանումների ուսուցումը եգիպտացիների հսկողության ներքո:

Ինչպես և Սելիմ Գ–ի ժամանակ, այս անգամ ևս նոր զորքի ստեղծման դեմ ընդվզեցին ենիչերիները: Մեկ ամսվա ընթացքում հասունացավ նրանց հերթական ապստամբությունը: Հունիսի 14–ին ենիչերիները հավաքվեցին մայրաքաղաքի հրապարակներից Աթ մեյդանի (Ձիու հրապարակ, բյուզանդական ժամանակների հայտնի «Իպոդրոմը») և Էթ մեյդանի (Մսի հրապարակ) վրա և շուռ տվեցին դազանները՝ այդպիսով ազդարարելով, որ սկսում են ապստամբությունը: Նրանք պահանջեցին անհապաղ վերացնել սուլթանի հրամանը և ցրել նոր ստորաբաժանումները: Ենիչերիներին միացան մայրաքաղաքի բնակչության այն խավերի ներկայացուցիչները, որոնք դեմ էին որևիցե փոփոխության: Մահմուդը, ի տարբերություն Սելիմի, ցուցաբերեց վճռականություն: Նրան հավատարիմ զորքերը շրջապատեցին հրապարակները և սկսեցին թնդանոթներով անխնա կոտորել ապստամբներին: Համաձայն այդ ժամանակ Կոստանդնուպոլսում տեղակայված Անգլիայի դեսպան Սթրադֆորդ Քանինգի՝ մի քանի ժամվա ընթացքում սպանվեց վեց հազար ապստամբ: Սուլթանին հավատարիմ զորքերը հարձակվեցին նաև ենիչերիների կացարանների վրա, և ինչպես հաղորդում են ժամանակակիցները, 21 բոպեի ընթացքում գրավեցին դրանք և ներսում եղած ենիչերիներին նույնպես սպանեցին: Վիլայեթներում նույնպես ենիչերիները ենթարկվեցին դաժան հաշվեհարդարի: Դրան հետևեց սուլթանի հրամանը՝ ցրելու ենիչերիական զորքը: Այսպիսով՝ մի քանի օրվա ընթացքում բռնի կերպով, մեծ արյունահեղության գնով վերջ տրվեց օսմանյան բանակի ամենամոլեռանդ և ամենադաժան ստորաբաժանումներին, որոնք դարեր շարունակ պատուհաս էին դարձել ոչ միայն թուրքական լծի տակ գտնվող քրիստոնյա ժողովուրդների, այլև բուն օսմանյան պետության համար: Արգելք դրվեց նաև ենիչերիների հովանավոր Բեքթաշի սուֆիական ծայրահեղական հոգևոր եղբայրության գործունեության վրա: Նրա անդամները նույնպես ենթարկվեցին դաժան բռնաճնշումների, շատերը սպանվեցին: Փոխարենը իշխանությունները ավելի ընդլայնեցին իրենց հովանավորությունը հավատարիմ Նաքշիբենդի, Քադրի Հալվեթի, Մևլևի և Սաադի հոգևոր–միստիկական եղբայրություններին՝

այդպիսով փորձելով ընդլանել իրենց աջակցությունը ծայրահեղ մոլեռանդ մուսուլմանների շրջանում:

Ենիչերիների վերացումից հետո սուլթան Մահմուդը ձեռնամուխ եղավ բարենորոգումներին ռազմական ոլորտում՝ այդպիսով շարունակելով դեռևս Սելիմի ժամանակ որդեգրած քաղաքականությունը: Նրա կողմից փորձ արվեց վերափոխելու օսմանյան բանակը եվրոպական օրինակով և բարձրացնելու նրա մարտունակությունը: Սակայն ինչպես վկայում են հետագա իրադարձությունները, այդ նախաձեռնությունը, ինչպես և ժամանակին «նիզամ–ի ջեդիդը», տապալվեց: Մահմուդին չհաջողվեց հասնել իր նպատակին: Օսմանյան բանակը և նավատորմը շարունակում էին կրել ծանր պարտություններ:

Այդպես եղավ, օրինակ, Նավարինի ծովային ճակատամարտում, որի ընթացքում Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի նավերից կազմված միացյալ նավատորմը լիովին ոչնչացրեց թուրքական նավատորմը: Այդպես եղավ նաև 1828–1829 թթ. թուրք–ռուսական պատերազմի ժամանակ, որի արդյունքում օսմանյան բանակը լիովին ջախջախվեց: Պատերազմի ավարտին՝ 1829 թ. սեպտեմբերի 14–ին, Օսմանյան կայսրության և Ռուսաստանի միջև ստորագրվեց Ադրիանապոլսի պայմանագիրը, համաձայն որի՝ Բարձր դուռը ստիպված էր ճանաչել Սերբիայի և Հունաստանի ինքնավարությունը և կատարել մի շարք կարևոր տարածքային զիջումներ հօգուտ ռուսների: Մասնավորապես Ռուսաստանին միացվեցին Դանուբի դելտան, Սև ծովի արևելյան ծովեզրյա շրջանների մեծ մասը, Վրաստանը և տարածքներ Հայաստանում: Մեկ տարի անց՝ 1830 թ., Հունաստանը հռչակվեց անկախ պետություն:

Սուլթանի հարաբերությունները իր ենթակայության տակ գտնվող Եգիպտոսի կուսակալ Մուհամմեդ Ալիի հետ սրվեցին այն բանից հետո, երբ վերջինս հրաժարվեց պետական գանձարան փոխանցել Եգիպտոսում հավաքագրված հարկերի տարեկան չափաբաժինը և փոխարենը պահանջեց, որ սուլթանը իրեն փոխանցի խոստացված գումարը՝ ի հատուցումն Իբրահիմ փաշայի ծախսերի, որոնք նա կրել էր հունական ապստամբությունը ճնշելու ընթացքում: Չստանալով սուլթանից խոստացած գումարը՝ եգիպտական բանակը Իբրահիմ փաշայի հրամանատարության ներքո սկսեց հարձակում Կոստանդնուպոլսի ուղղությամբ: Օսմանյան բանակը կրում էր հերթական ջախջախիչ պարտությունները, որոնց հետևանքով մայրաքաղաքը մնաց անպաշտպան: Օսմանյան կայսրությանը փրկեց միայն Ռուսատանի միջամտությունը: Ցար Նիկոլայ Ա–ն որոշել էր փրկել Օսմանյան կայսրությունը անխուսափելի թվացող կործանումից և պահպանել նրա գոյությունը որպես Ռուսաստանի ազդեցության տակ գտնվող և նրա կամքին ենթարկվող պետություն: Ռուսական նավատորմը մտավ Բոսֆոր, իսկ նավերով ժամանած ցամաքային ուժերը տեղակայվեցին մայրաքաղաքի մատույցներում: Եգիպտական բանակը ստիպված էր դադարեցնել առաջխաղացումը մայրաքաղաքի ուղղությամբ: Արդյունքում 1833 թ. հուլիսի 8–ին ստորագրվեց Ունքյար Իսքելեսիի թուրք–ռուսական պայմանագիրը, որով Օսմանյան կայսրությունը փրկվեց, սակայն ստիպված էր գնալ հեր-

թական զիջումների Ռուսաստանին՝ մասնավորապես այս անգամ գաղտնի համաձայնություն տալով փակել նեղուցների անցանելիությունը օտարազգի ռազմական նավերի համար:

Միաժամանակ, շարունակում էր ուժեղանալ Անգլիայի ազդեցությունը Օսմանյան կայսրության վրա: Արդյունքում՝ 1838 թ. կնքվեց անգլո–օսմանյան առևտրային համաձայնագիրը, որը հաստատեց Անգլիայի գերակայությունը Օսմանյան կայսրության, այդ թվում նաև Եգիպտոսի տնտեսական կյանքում: Վերջինիս տիրակալ Մուհամմեդ Ալիի անհամաձայնությունը այդ համաձայնագրի հետ հանգեցրեց հերթական պատերազմի: Վճռորոշ ճակատամարտը տեղի ունեցավ 1839 թ. հունիսի 24–ին Նիզիբի մոտակայքում: Այն ավարտվեց թուրքերի ջախջախիչ պարտությամբ: Օսմանյան կայսրությունը, որը կորցրել էր, ըստ էության, իր զինված ուժերի հիմնական մասը և այլևս հնարավորություն չուներ խոչընդոտելու եգիպատական բանակի առաջխաղացումը, հայտնվեց անխուսափելի փլուզման եզրին: Սակայն այս անգամ էլ, ինչպես վեց տարի առաջ, այդ տեղի չունեցավ: Հերթական փրկիչի դերում հանդես եկավ Անգլիան՝ գործի դնելով իր դիվանագիտությունը: Նրան Օսմանյան կայսրությունն անհրաժեշտ էր որպես պատվար ռուսական ազդեցության ուժեղացման դեմ:

Սուլթան Մահմուդ Բ–ի կառավարման շրջանում, մասնավորապես 1820–ական թթ. սկսված բալկանյան ժողովուրդների ազգային–ազատագրական շարժման վերելքի պայմաններում որոշ օսմանյան պետական գործիչներ սկսեցին պնդել, որ ապստամբությունների կանխման նպատակով անհրաժեշտ է գնալ նվազագույն քաղաքական բնույթի զիջումների, այլ ոչ թե սահմանափակվել զուտ հարկերի գանձման ոլորտով: Արդեն 1827 թ. Բարձր դռան կողմից Ռումելիայի տեղական իշխանություններին ուղարկված հատուկ հրովարտակում նշվում էր քրիստոնյաների կյանքի և նրանց ունեցվածքի ապահովության պահպանման անհրաժեշտությունը:

Սակայն բարենորոգումների կողմնակից օսմանյան պաշտոնյաների համար շարունակում էր գերակա գաղափար մնալ քրիստոնյաներից գանձվող հարկերի ոլորտում որոշ զիջումների անհրաժեշտությունը: Այդ ոգով կազմած զեկուցագրով 1828 թ., այսինքն՝ հունական ապստամբության թեժ պահին, սուլթանին դիմեցին հայտնի դիվանային բանաստեղծ և պետական գործիչ Քեչիջի զադե Իզեթ Մոլլան և դեֆթերդարի գրասենյակի (ֆինանսների գերատեսչության) պաշտոնյա Բեջիհ էֆենդին: Նրանք գրում էին, որ ըմբոստացած «անհավատներին» հնազանդության մեջ պահելու համար անհրաժեշտ է գնալ որոշ զիջումների, մասնավորապես մեկ տարվա ընթացքում գլխահարկը չգանձել: Այդ միջոցը հնարավորություն կտար, ըստ հեղինակների, թուլացնելու ապստամբության կրակը, ինչից հետո կարելի էր այդ նույն հարկը գանձել ավելի մեծ չափով, քան առաջ:

Այդ առաջարկը չընդունվեց և նրա հեղինակներին սուլթան Մահմուդը հրամայեց պաշտոնանկ անել և աքսորել: Սակայն արդեն մեկ տարի անց՝ 1829 թ., նա, ձգտելով ինչ գնով էլ որ լինի պահել Հունաստանը Օսմանյան կայսրության կազմում, ստիպված էր այնպիսի զգալի զիջումների գնալ, որոնք մուսուլման տիրակալի տե-

սակետից նույնիսկ անընդունելի էին: 1829 թ. հուլիսին հրապարակվեց սուլթանական հրովարտակը, որտեղ դիմելով հույներին՝ Մահմուդը խոստանում էր. «Այսուհետև ոչ մի տարբերություն չի դրվելու մուսուլմանների և ռայայի միջև, և բոլորի ունեցվածքը, կյանքը և պատիվը ապահովված կլինեն սուրբ օրենքով (*շարիաթով*) և իմ բարձր հովանավորությամբ»: Այս առաջին դեպքն էր օսմանյան պատմության մեջ, երբ սուլթանը խոստումներ տվեց քրիստոնյաներին՝ ճանաչելով նրանց իրավահավասար մուսուլմանների հետ: Մի կողմից՝ հրովարտակը նպատակ էր հետապնդում «խաղաղեցնելու» զենքը ձեռքը վերցրած հույն ժողովրդին ամեն գնով պահպանել օսմանյան տիրապետության ներքո, իսկ մյուս կողմից՝ ձգտում էր հասնելու Անգլիայի աջակցությանը հունական խնդրի լուծման հարցում, քանի որ վերջինս արդեն սկսել էր Բարձր դռան առջև դնել քրիստոնյաների ու մուսուլմանների իրավահավասարության հարցը:

Հրովարտակը այդպես էլ մնաց թղթի մի կտոր: Սակայն այնտեղ առաջին անգամ արտահայտված գաղափարները դարձան Թանզիմաթի շրջանի արևմտամետ բարենորոգումների հիմնական թեզերից մեկը՝ շարունակելով, այնուամենայնիվ, իրենց գոյությունը զուտ թղթային տարբերակով:

1837 թ. ապրիլին՝ բուլղարների հերթական հզոր ապստամբությունը ճնշելուց հետո, սուլթանը այցելեց Բուլղարիա և տեղական համայնքների ղեկավարների հետ հանդիպումներից մեկում դիմելով նրանց՝ հայտարարեց. «Մեր ցանկությունն է … մեր պետության բոլոր բնակիչների, ինչպես մուսուլմանների, այնպես էլ *ռայայի*, անվտանգության ապահովումը… Դուք, նկատի ունենալով մեր այս ցանկությունը, պետք է հավատարիմ լինեք մեզ»:

Այսպիսով՝ խոստում տալով «հոգալ» ռայայի անվտանգության մասին՝ սուլթանը փոխարենը պահանջում էր նրա հնազանդությունը: Այդ նույն տարում Մահմուդ Բ–ն ելույթ ունեցավ իր հայտնի հայտարարությամբ այն մասին, որ բոլոր հպատակները իր հարազատ զավակներն են, և ինքը նրանց վերաբերվում է հավասար մոտեցումով:

Իհարկե, թուրք սուլթանը չէր կարող մուսուլմանների և «անհավատների» կրոնական կամ իրավական իրական հավասարության կողմնակից լինել կամ անկեղծորեն ձգտել *ռայայի* դրության բարելավմանը: Պատահան չէ, որ նրա վերը նշված ճառահատյալ հայտարարությունները չներմուծվեցին իրական կյանք, չունեցան իրավական կամ քաղաքական հետևանքներ: Եվ ամենակարևորը՝ չկարողացան թուլացնել Բալկանյան թերակղզու հպատակ քրիստոնյա ժողովուրդների ազգային–ազատագրական պայքարի թափը: Հունաստանը անկախացավ, Սերբիան վերահաստատեց իր ինքնավարությունը, մյուս քրիստոնյա ժողովուրդները շարունակեցին զինված պայքարը իրենց անկախության համար:

Միաժամանակ, այդ հայտարարությունները վկայում էին, որ օսմանյան վերնախավի առանձին ներկայացուցիչներ սկսել էին հասկանալ, որ պետության քայքայման ու բանակի թուլացման, ինչպես նաև դրսից եկող ճնշման պայմաններում հնարավոր չէ այլևս պահել քրիստոնյա ժողովուրդներին օսմանյան իշխանության տակ՝

հենվելով միայն բիրտ ուժի կիրառման վրա, և որ անհրաժեշտ են որոշ զիջումներ, առնվազն ձևական բնույթի: Մասնավորապես միջոցներ էին ձեռնարկվել մուսուլմանների և ոչ մուսուլմանների միջև հագուստի մեջ տարբերության աստիճանաբար վերացման համար, օրինակ՝ քրիստոնյաներին թույլ տվեցին կրել նույն գործվածքից կարված հագուստ, ինչ կրում էին մուսուլմանները:

Միաժամանակ, միայն վերը նշված փաստը ակներև է դարձնում, թե Օսմանյան կայսրությունում որքան խորն էր դարեր շարունակ գոյություն ունեցող խտրականությունը քրիստոնյաների նկատմամբ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ 40–60–ԱԿԱՆ ԹԹ.

1. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ԹԱՆԶԻՄԱԹԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Սուլթան Մահմուդ Բ–ի կառավարման տարիներին ազդարարված բարենորոգումները և նոր գաղափարները հող նախապատրաստեցին ավելի լայնածավալ և հետևողական բարեփոխումների ժամանակաշրջանի համար: Այն ընդունված է անվանել *Թանզիմաթի* (կարգավորումների) դարաշրջան և ընդգրկում է երեք տասնամյակ՝ 1839–1869 թթ.: Թանզիմաթը արևմտամետ բարենորոգումների շրջան էր: Այդպիսով սկիզբ առավ Օսմանյան կայսրության արդիականացման գործընթացը, որը հիմնականում ընթացավ արևմտականացման տարբերակով: Դա պատահական չէր, քանի որ գնալով ուժեղանում էր Օսմանյան կայսրության ինչպես արտաքին, այնպես էլ ներքին քաղաքականության վրա ժամանակի եվրոպական առաջատար երկրների՝ Անգլիայի և Ֆրանսիայի ազդեցությունը: Ըստ էության, Թանզիմաթը արդյունք էր այդ ազդեցության:

Թանզիմաթի առաջին փուլը, որը սկիզբ առավ 1839 թ. և շարունակվեց մինչև Ղրիմի պատերազմը (1853–1856 թթ.), նշանավորվեց օսմանյան պետության մեջ արևմտամետ բարենորոգումների քաղաքականության ազդարարմամբ և քրիստոնյա ժողովուրդների կարգավիճակի մասին նոր կարգավորումների առաջ գալով: Դրանց հեղինակն էր թուրքական պատմության ամենահայտնի գործիչներից մեկը՝ դիվանագետ, արտաքին գործերի նախարար Մուսթաֆա Ռեշիդ փաշան, որը բազմիցս զբաղեցրել է նաև մեծ վեզիրի պաշտոնը: Նրան անվանում էին «Թանզիմաթի հայր»:

Ռեշիդը բարձր պաշտոններ էր զբաղեցրել դեռևս Մահմուդ Բ–ի կառավարման տարիներին և համարվում էր ժամանակի ամենահմուտ և լայնախոհ դիվանագետներից մեկը: Զբաղեցնելով Լոնդոնում և Փարիզում Օսմանյան կայսրության դեսպանի պաշտոնները նա հնարավորություն է ունեցել մոտիկից ծանոթանալու եվրոպական երկրների պետական կառուցվածքին, ինչի արդյունքում հանգել է եզրակացության, որ Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանումն ու հզորության վերականգնումը հնարավոր է՝ միայն ներմուծելով եվրոպական առաջատար երկրների պետական կառուցվածքի և օրենսդրության հիմնական տարրերը պետության կառավարման համակարգ: Ռեշիդը կարծում էր նաև, որ արևմտամետ բարենորոգումները չպետք է սասանեն պետության չորս հիմնական սյուները՝ իսլամը, Օսմանի ժառանգների հարստությունը, երկրի կառա-

վարությունը՝ Բարձր դուռը և Կոստանդնուպոլիսը՝ որպես մայրաքաղաք: Նրա այդ մոտեցումը սկզբունքորեն տարբերվում էր իր իսկ աշակերտներ Ալի փաշայից ու Ֆուադ փաշայից, որոնք ղեկավարեցին Թանզիմաթի երկրորդ փուլի բարենորոգումները 1856 թ. սկսած և արժանացան Ռեշիդ փաշայի սուր քննադատությանը այն բանի համար, որ, ինչպես նշում էր Ռեշիդը, անտեսում էին վերը նշված չորս հիմնասյուները և, չափից ավելի ընդօրինակելով Արևմուտքին, վտանգում էին Օսմանյան կայսրության գոյությունը:

Ռեշիդ փաշայի ընկալումները բարենորոգումների ուղղվածության, ընթացքի և նպատակների մասին ավելի խորն էին ու հիմնավորված, քան Սելիմ Գ–ի և Մահմուդ Բ–ի շրջանի բարենորոգումների հեղինակներինը: Դա պայմանավորված էր, ինչպես արդեն նշեցինք, ոչ միայն նրանով, որ նա տարիներ էր անցկացրել Ֆրանսիայի և Անգլիայի նման ժամանակի առաջադեմ երկրներում, այլ նաև նրա սերտ անձնական հարաբերություններով անգլիական վերնախավի մի շարք ներկայացուցիչների հետ: Մասնավորապես հայտնի են բազմաթիվ փաստեր, որոնք վկայում են, որ Ռեշիդը համագործակցում էր XIX դարի Անգլիայի ամենաականավոր պետական գործիչներից լորդ Պալմերստոնի և Կոստանդնուպոլսում երկարամյա դեսպան վիկոնտ Սթրադֆորդ դը Ռեդքլիֆի հետ: Ընդհանրապես, Ռեշիդ փաշան հիացած էր Անգլիայով և նրա գործունեությամբ, այդ թվում նաև բարենորոգչական, ըստ էության, նպաստում էր Բոսֆորի ափերին վերջինիս ազդեցության աճին: Իրենց հերթին՝ ժամանակի բրիտանացի գործիչները կարծում էին, որ արևմտամետ բարենորոգումներով հնարավոր կլինի թուլացնել Բալկանների հպատակ քրիստոնյա ժողովուրդների ազգային–ազատագրական պայքարի թափը, ինչը կնպաստի Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանմանը և այդպիսով հնարավորություն կտա շարունակելու օգտագործել օսմանյան Թուրքիան որպես պատնեշ Բալկաններում Ռուսաստանի ազդեցության ուժեղացման դեմ:

Արդյունքում՝ Ռեշիդի մեջ ձևավորվեց մոտեցում, համաձայն որի՝ միայն արևմտյան օրինակով բարեփոխումներ անցկացնելով հնարավոր կլինի վերականգնել օսմանյան պետության անցյալում գոյություն ունեցած հզորությունը: Այդ բարեփոխումները պետք է վերաբերվեին, ըստ նրա, նաև քրիստոնյա ժողովուրդներին: Մասնավորապես Ռեշիդը համարում էր, որ արևտյան մի շարք երկրների սահմանադրություններում տեղ գտած անհատի կյանքի, ունեցվածքի և պատվի անձեռնմխելիության սկզբունքներն անհրաժեշտ է ներմուծել Օսմանյան կայսրություն՝ տարածելով դրանք նաև ոչ մուսուլմանների վրա:

Դեռևս սուլթան Մահմուդ Բ–ի կենդանության օրոք Ռեշիդի նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ ստեղծվեց հատուկ հանձնախումբ, որը սկսեց նախապատրաստել բարենորոգումների փաթեթը: 1839 թ. հուլիսին Մահմուդը մահացավ, և գահ բարձրացավ նրա 16–ամյա որդին՝ Աբդուլ Մեջիդը, որը հայտնվեց անգլիացիների և Ռեշիդի ազդեցության ներքո: Այդպիսով ստեղծվեցին բարենպաստ պայմաններ բարենորոգումների սկզբի մասին հրապարակայնորեն ազդարարելու մասին: Դա տեղի ունեցավ 1839 թ. նոյեմբերի 3–ին, երբ սուլթանական պալատի՝

«Գյուլհանե» այգում Ռեշիդը ընթերցեց իր իսկ հեղինակած, սակայն երիտասարդ սուլթանի ստորագրությամբ հրովարտակը: Այն ստացավ «Գյուլհանեի սուլթանական հրովարտակ (*հաթթ–ը շերիֆ*)» անվանումը: Այդպիսով սկիզբ դրվեց Թանզիմաթի դարաշրջանին:

Հրովարտակում մասնավորապես ասվում էր. «Մենք (այսինքն՝ սուլթանը) պետության բոլոր բնակիչներին, առանց բացառության, կրոնական օրենքի համաձայն, տալիս ենք իրենց կյանքի, ունեցվածքի կատարյալ ապահովություն»: Այդ դրույթը շարունակությունն ու զարգացումն էր դեռևս Մահմուդ Բ–ի կողմից արդեն հիշատակված մուսուլմանների ու ոչ մուսուլմանների նկատմամբ «հավասար վերաբերմունքի» մասին հայտարարության: Ուշագրավ է, որ այս կետի հիմնավորումը զուտ կրոնական էր՝ «կրոնական օրենքի համաձայն», այսինքն՝ շարիաթի համաձայն: Հարկ է նշել, որ Ռեշիդը փորձում էր խուսափել ընդհարումներից հոգևոր դասի ներկայացուցիչների հետ և հաճախակի վկայակոչում էր Ղուրանը և շարիաթը՝ հավաստիացնելով, որ իր կողմից առաջարկված կամ անցկացված բարեփոխումները ոչ մի դեպքում չեն հակասում նրանց:

Այդ պնդումը համապատասխանում էր իրականությանը: Ձևականորեն, Թանզիմաթի առաջին փուլի բարեփոխումների մեծ մասը չէր հակասում իսլամի հիմնադրույթներին, այլ նպատակ էր հետապնդում ապահովելու նրանց ավելի խիստ պահպանումը: Ռեշիդը և նրա կողմնակիցները կարծում էին, որ դա բավական է, որպեսզի հնազանդության մեջ պահեն քրիստոնյա հպատակներին: Հրովարտակը ամրագրում էր մուսուլմանների իշխող դրությունը քրիստոնյաների նկատմամբ: Նրա հեղինակն ընդգծում էր, որ իր նպատակն է անհավասարության «մեղմացումը», այլ ոչ թե վերացումը: Դրա հետ մեկտեղ կայսրության բոլոր բնակիչների նկատմամբ «հավասար վերաբերմունքի» սկզբունքը իր մեջ պարունակում էր հետագա զարգացման հնարավորություն ընդհուպ մինչև ձևական առումով նրանց հավասարեցումը օրենքի առջև և ուներ իր ժամանակի համար առաջադեմ բնույթ: Պատահական չէ, որ, ինչպես նշում էին ժամանակակիցները, Ռեշիդի օգնականները հիմնականում հույները և հայերն էին, այսինքն՝ այն ազգերի ներկայացուցիչները, որոնք առավել շահագրգռված էին երկրի զարգացման և արևմտամետ բարենորոգումների անցկացման մեջ:

Գյուլհանեի հրովարտակի հրապարակմանը հետևած երկու տարիների ընթացքում Ռեշիդ փաշան շարունակեց զբաղեցնել մեծ վեզիրի պաշտոնը: Այդ շրջանում նա որոշ քայլեր ձեռնարկեց հրովարտակի դրույթները իրական կյանք ներմուծելու ուղղությամբ: Այսպես, օրինակ՝ հայտնի է, որ նա շրջաբերականներ էր ուղղարկում նահանգային իշխանություններին՝ պահանջելով չափից դուրս չկեղեքել և չճնշել քրիստոնյա *ռայային* և խստորեն հետևել շարիաթի դրույթներին: Սակայն մայրաքաղաքից ստացված այդ շրջաբերականները մնում էին զուտ թղթի կտոր և գործնական նշանակություն չունեին:

Թանզիմաթի բարենորոգումների ցանկում տեղ էր հատկացված տեղական կառավարման համակարգում նոր մարմինների՝ մուսուլմաններից և ոչ մուսուլմանե-

ից կազմված *մեջլիսների* (խորհուրդների) ստեղծմանը: Հատկանշական է, որ հատուկ կարգավորումներով նախատեսվում էր ապահովել մեջլիսներում մուսուլմանների թվական գերակայությունը: Մեջլիսների ստեղծման գաղափարը դեռևս սուլթան Մահմուդ Բ–ի կառավարման տարիներին առաջարկել էին անգլիացիները, սակայն այն սկսեց իրականություն դառնալ միայն Թանզիմաթի շրջանում: Առաջարկելով այդ գաղափարը՝ անգլիացիները նպատակ ունեին այդպիսով ամրապնդել, ինչպես իրենք էին նշում, ոչ մուսուլմանների «կապը» օսմանյան իշխանությունների հետ:

Բարենորոգումների քաղաքականության անցկացմանը Ռեշիդի ջանքերով սկսեց նպաստել դեռևս Մահմուդ Բ–ի կառավարման տարիներին ստեղծված Բարձրագույն իրավագիտական խորհուրդը, որը նախապատրաստեց մի շարք օրինագծեր, որոնք նախատեսված էին բարենորոգումներ իրականացնել ոչ մուսուլմանների իրավական դրությունում: Այդ տեսակետից կարևոր նշանակություն ուներ 1840 թ. ընդունված Քրեական օրենքը, որը վերահաստատում էր Գյուլհանեի հրովարտակում տեղ գտած՝ մուսուլմանների և ոչ մուսուլմանների իրավահավասարության մասին սկզբունքը: Ռեշիդը փորձեց կարգավորել նաև կենտրոնական և տեղական իշխանությունների փոխհարաբերությունները՝ ուժեղացնելով կառավարման համակարգի կենտրոնացման մակարդակը: Մասնավորապես վալիները զրկվեցին իրենց ղեկավարած նահանգում տեղակայված բանակային ստորաբաժանումներից:

Իրական քաղաքականության ասպարեզում նոր գաղափարները և նրանց վրա հիմնված իրավական ակտերը տեղ էին գտնում մեծ դժվարությամբ: Հիմնականում մնաց թղթի վրա մեջլիսների ստեղծման առաջարկը: Դրան նպաստում էր նաև «Թանզիմաթի հայր» Մուսթաֆա Ռեշիդ փաշայի անհետևողականությունը: Բավական է նշել, որ 1846–1852 թթ., երբ նա որոշ ընդմիջումներով զբաղեցնում է մեծ վեզիրի պաշտոնը, չի ընդունվել որևէ պաշտոնական որոշում, որը վերաբերեր ոչ մուսուլման հպատակներին:

Թանզիմաթի տարիներին, ըստ էության, շարունակվեց թուրքական իշխանությունների կողմից «ավանդական»՝ ճնշումների և հալածանքի վրա հիմնված քաղաքականությունը քրիստոնյա հպատակների նկատմամբ: Պատահական չէր, որ շարունակվեցին և ավելի մեծ թափ ստացան քրիստոնյա ժողովուրդների ազգային–ազատագրական շաժումները: Տեղի ունեցան մի շարք զինված ընդվզումներ թուրքական լծի դեմ Վալախիայում, Բոսնիայում, Բուլղարիայում: Առավել վտանգավոր էր վերջինը, որի ընթացքում տեղի ունեցան բավականին լավ կազմակերպված զինված ընդվզումներ թուրքական իշխանությունների դեմ: Թուլացող և օտար պետություններից գնալով ավելի մեծ կախվածության մեջ հայտնվող Օսմանյան կայսրությունը այդ ապստամբությունները ճնշում էր մեծ դժվարությամբ՝ ստիպված լինելով հաճախակի ապավինել ոչ միայն իր զինված ուժերին, այլև օգտագործել քրիստոնյաների դեմ մուսուլմանական զանգվածների միջավայրում իր իսկ կողմից գիտակցաբար բորբոքվող ագրեսիվ կրոնական մոլեռանդության և հակաքրիստոնե-

ության տրամադրությունները: Մասնավորապես 1850 թ. բուլղարական հզոր ապստամբությունը ճնշելու նպատակով կանոնավոր բանակի ստորաբաժանումների հետ մեկտեղ օգտագործվեցին կառավարության կողմից զինված *բաշիբոզուկների* (հրոսակների) ջոկատները: Համաձայն Օսմանյան կայսրությունում դարերի ընթացքում ձևավորված ավանդույթի՝ քրիստոնյաների զինված ապստամբությունը ճնշելուց հետո իշխանությունները կազմակերպեցին խաղաղ բնակչության դաժան սպանդ:

1840–ական թթ. Օսմանյան կայսրության միջազգային դրությունը շարունակում էր մնալ բարդ: Նրան չհաջողվեց ինքնուրույն հանգուցալուծել հակամարտությունը Եգիպտոսի հետ, որից օգտվեց առաջին հերթին Անգլիան՝ ուժեղացնելով իր ազդեցությունը և՛ Եգիպտոսի, և՛ Օսմանյան կայսրության վրա, միաժամանակ թուլացնելով Ռուսաստանի դիրքերը: Արդյունքում 1841 թ. հուլիսին Լոնդոնում ստորագրվեց միջազգային համաձայնագիր սևծովյան նեղուցների վերաբերյալ, որը զրկում էր խաղաղ պայմաններում ռուսական ռազմական նավերին Սև ծովից Միջերկրական ծով դուրս գալու հնարավորությունից:

Ռուսական դիվանագիտության այդ պարտությունը պարարտ հող էր նախապատրաստում հերթական ռուս–թուրքական պատերազմի համար: Այն բռնկվեց 1853 թ. աշնանը և ստացավ Արևելյան կամ Ղրիմի պատերազմ անվանումը: 1854 թ. որպես Օսմանյան կայսրության դաշնակիցներ պատերազմին միացան Անգլիան, Ֆրանսիան և Սարդինիան: Ռազմական գործողությունները տեղի էին ունենում եվրոպական, կովկասյան, սևծովյան և խաղաղօվկիանոսյան ռազմաճակատներում: Ռուսներից Օսմանյան կայսրությունը ծանր պարտություններ կրեց Կովկասյան ռազմաճակատում՝ մասնավորապես 1855 թ. կորցնելով Կարսը, և Սինոպի ծովային ճակատամարտում՝ կորցնելով համարյա իր ողջ սևծովյան նավատորմը: Սակայն Անգլիայի և Ֆրանսիայի մասնակցությունն ունեցավ որոշիչ նշանակություն, և 1856 թ. Ռուսաստանը ճանաչեց իր պարտությունը՝ ստորագրելով մարտի 30–ին Փարիզի խաղաղության պայմանագիրը, համաձայն որի՝ Օսմանյան կայսրությունը պահպանեց և որոշ չափով ընդլայնեց իր դիրքերը Բալկանյան թերակղզում: Կովկասյան ռազմաճակատում Ռուսաստանը ստիպված էր վերադարձնել գրավված դիրքերը, մասնավորապես Կարսը: Արդյունքում վերականգնվեց նախապատերազմյան թուրք–ռուսական սահմանը: Արևմտյան դաշնակիցների հետ համատեղ ձեռք բերված հաղթանակը ուժեղացրեց Թուրքիայի միջազգային դիրքերը. նա ճանաչվեց եվրոպական միջպետական հարաբերությունների համակարգի իրավահավասար անդամ և երեք առաջատար երկրները՝ Անգլիան, Ֆրանսիան և Ավստրիան, գաղտնի համաձայնագրով պարտավորվեցին պաշտպանել նրա տարածքային ամբողջականությունը:

Փոխարենը Օսմանյան կայսրությունը պարտավորվեց շարունակել և խորացնել արևմտամետ բարեփոխումները: 1856 թ. փետրվարի 18–ին հրապարակվեց սուլթանական նոր հրովարտակ (*Hatt–ı Hümâyûn* կամ *Islâhat Fermanı*)՝ սկիզբ դնելով Թանզիմաթի երկրորդ փուլի համար, որն ընդգրկում է XIX դարի 50–ական թթ. կե-

սերից մինչև 60–ական թթ. վերջն ընկած ժամանակաշրջանը: Այդ շրջանի բարենորոգումները, ի տարբերություն Թանզիմաթի առաջին փուլի, իրականացվում էին Անգլիայի ու Ֆրանսիայի հովանավորության և հսկողության ներքո:

Փարիզի խաղաղության պայմանագրին հաջորդած 1–2 տարիները Օսմանյան կայսրության XIX դ. պատմության ամենահանգիստ շրջանն էին: Թվում էր, թե կայսրությունը, ամրապնդելով իր միջազգային դիրքերը և ազդարարելով լայնածավալ բարենորումներ անցկացնելու վճռականությունը, կանգնած է իրական վերափոխումների շեմին: Այնպիսի վերափոխումների, որոնք կբարելավեն հպատակ քրիստոնյա ժողովուրդների վիճակը և բարենպաստ հնարավորություններ կստեղծեն նրանց, ինչպես նաև ողջ լայնածավալ պետության զարգացման համար:

Սակայն այդ հույսերը չիրականացան: Պատերազմի հետևանքով երկրի տնտեսական դրությունը սրընթաց վատացավ: 1858 թ. Օսմանյան կայսրությունը ստիպված էր հայտարարել սուլթանական գանձարանի սնանկության մասին:

1861 թ. մահացավ սուլթան Աբդուլ Մեջիդ Ա–ն, և գահ բարձրացավ նրա կրտսեր եղբայրը՝ Աբդուլ Ազիզ Ա–ն: Սակայն ինչպես և իր նախորդը, նա ազդեցություն չուներ պետական գործերի վրա: Երկիրը ղեկավարում էին Մեհմեդ Էմին Ալի փաշան և Մեհմեդ Ֆուադ փաշան, որոնք, զբաղեցնելով բարձրագույն պաշտոններ, դարձան Թանզիմաթի երկրորդ փուլի բարենորոգումների քաղաքականության առաջնորդներ: Նրանք, հաշվի առնելով Անգլիայի ու Ֆրանսիայի շահագրգռվածությունը՝ պահպանելու Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը, վարում էին վերջիններիս հետ մերձենալու քաղաքականություն՝ դրանով իսկ հուսալով պահպանել ինչքան հնարավոր է շատ տարածքներ սուլթանի իշխանության տակ: Արևմտամետ բարենորոգումները նրանք դիտարկում էին որպես այդ նպատակին հասնելու լավագույն միջոց՝ այդպիսով շարունակելով իրենց ուսուցիչ Ռեշիդ փաշայի քաղաքականությունը: Հետևելով նրա օրինակին՝ նրանք փետրվարի 18–ի հրովարտակի տեքստում լայնորեն օգտագործում էին մուսուլմանների և ոչ մուսուլմանների իրավահավասարությունն արտահայտող ձևակերպումներ: Սակայն նրանք դրանով չսահմանափակվեցին և, ի տարբերություն իրենց ուսուցիչ Ռեշիդի, փորձեցին իրավահավասարության մասին խոստումների հիմքի վրա կառուցել մի նոր քաղաքականություն, որը նրանք անվանում էին «միախառնում ու միաձուլում» (*mezc*–ü *telifi*):

Նրանք համոզված էին, որ միայն բազմազգ օսմանյան պետության ժողովուրդներին «միաձուլելով» է հնարավոր փրկել կայսրությունը տրոհումից: Դրա մասին են վկայում նրանց բազմաթիվ հայտարարությունները: Այսպես, օրինակ՝ Ֆուադ փաշան սուլթանին ուղղված իր գաղտնի քաղաքական կտակում գրում էր. «Առանց միաձուլման իրականացման Օսմանյան կայսրության գոյությունը ինձ անհնարին է թվում»: Նրանք կարծում էին, որ միաձուլումը պետք է ընդգրկի հասարակական կյանքի բոլոր ոլորտները՝ բացառությամբ կրոնի:

Այդ փաշաները ընդգծում էին նաև, որ Օսմանյան կայսրությունը պետք է շարունակի մնալ «թուրքական պետություն», և թուրքերը պետք է կառավարեն մյուսնե-

ին: Ըստ էության, «միախառնման ու միաձուլման» քաղաքականության վերջնական նպատակը Օսմանյան կայսրության քրիստոնյաների թուրքացումն էր, որը կհանգեցներ ազգային–ազատագրական պայքարից նրանց հրաժարվելուն:

Ալին և Ֆուադը առաջարկեցին նաև մի շարք միջոցների կիրառում, որոնք պիտի նպաստեին «միաձուլմանը»: Ամենագլխավոր միջոցը նրանք համարում էին իշխանություններին նվիրվածության միասնական ոգով կայսրության բոլոր ժողովուրդների դաստիարակումը: «Պետությունը կարող է խուսափել գաղափարական հակասություններից իր հպատակների միջև, եթե այն դաստիարակի իր բոլոր հպատակներին միևնույն ոգով»,— գրում էր Ալի փաշան: Ֆուադ փաշան իր հերթին ընդգծում էր. «Միաձուլումը սկսվում է դպրոցական նստարանից»:

Իրենց ձգտումը դարձնելու Օսմանյան կայսրության բազմազգ բնակչությունը միայն երկու հիմնական տարրից՝ մուսուլման և ոչ մուսուլման թուրքերից կազմված, Ալին և Ֆուադը «հիմնավորում էին» Եվրոպայի օրինակով՝ նշելով, որ, օրինակ, Ֆրանսիայում ապրում են ֆրանսիացիները, Անգլիայում՝ անգլիացիները: Այդ պարզունակ մոտեցումները ստանում էին եվրոպական տերությունների աջակցությունը, իսկ Ալի փաշային և Ֆուադ փաշային եվրոպական մամուլը անվանում էր լիբերալներ: Սակայն Թանզիմաթի երկրորդ փուլի այդ առաջնորդները իրականում մարմնավորում էին թուրքական հետադիմության թեթևակի արդիականացված տարբերակը: Այդ փաստը ստիպված էին ճանաչել նաև որոշ լավատեղյակ եվրոպական դիտորդներ: Օրինակ՝ անգլիացի Վ. Դենթոնը գրում էր, որ նրանք ժամանակ առ ժամանակ կազմակերպում էին քրիստոնյաների այնպիսի դաժան կոտորածներ, որոնք «սարսափեցնում էին Եվրոպային»: Միաժամանակ նրանց գաղափարախոսության մեջ սկսեցին արտահայտվել թուրքական ազգայնամոլության առաջին նշանները:

1860–ական թթ., համաձայն «միախառնման ու միաձուլման» հայեցակարգի, կատարվեցին մի շարք օրենսդրային բարենորոգումներ տարբեր ոլորտներում: 1860 թ. հրատարակվեց կառավարական հրամանագիրը, որտեղ նշված էր քրիստոնյաների մուտքի անհրաժեշտությունը պետական, այսինքն՝ մուսուլմանական դպրոցներ, որը հնարավորություն կտար դաստիարակելու նրանց, ինչպես նշում էին Թանզիմաթի առաջնորդները, «կառավարության ոգով»: 1869 թ. հրատարակվեց «Ժողովրդական կրթության մասին օրենքը»: Այդ լայնածավալ փաստաթղթում, որը բաղկացած էր 196 հոդվածից, հետագա զարգացումը ստացան «օսմանյան հայրենիքին» հավատարմության ոգով ոչ թուրք ժողովուրդների «նպատակասլաց դաստիարակման» մասին գաղափարները:

Բարենորոգումները տարածվեցին նաև բարձրագույն կրթության ոլորտում: 1870 թ. Կոստանդնուպոլսում հիմնադրվեց առաջին համալսարանը, որն իր գործունեությունը սկսեց ծավալել 1874 թ.: Ժամանակակիցները նշում էին, որ այն ունի միայն մեկ ֆակուլտետ՝ իրավաբանական և 2–3 դասախոս: Ուսուցման մակարդակը խիստ ցածր էր: Հիմնադրվել էին նաև մի շարք գիտական ընկերություններ, որոնցից աչքի էր ընկնում Օսմանյան գիտական ընկերությունը:

Թանզիմաթի գործիչները մեծ նշանակություն էին տալիս բարեփոխումներին վարչատարածքային կառավարման բնագավառում: Պատահական չէ, որ նրանց կողմից իրականացված վիլայեթների համակարգի բարեփոխումը դիտվում էր որպես «միաձուլման» անցկացման համար պայմանների նախապատրաստման ամենակարևոր քայլերից մեկը: Այդ հայեցակարգային մոտեցումն էր դրված 1867 թ. ընդունված և նոր տարածքային բաժանում նախատեսող օրենքի հիմքում: Այն նախատեսում էր *վիլայեթների* (նահանգների) ստեղծում, որոնք պետք է փոխարինեին *Էյալեթներին*: «Միաձուլման» ոգով վերակազմավորման ենթարկվեցին նաև կառավարման կենտրոնական մարմինները: 1867 թ. մարտին ստեղծվեցին երկու նոր մարմիններ՝ Պետական խորհուրդը և Արդարադատության խորհուրդը: Բարձր դուռը հատուկ նշանակություն էր տալիս Պետական խորհրդին: Նրա կանոնադրության առաջին հոդվածում նշվում էր, որ «այն վարչական կառավարման բնագավառում կայսրության կենտրոնական մարմինն է»: Խորհուրդներում նշանակված էին նաև ոչ մուսուլմանները: Սակայն խորհուրդների կազմը չէր արտացոլում կայսրության մեջ տարբեր ժողովուրդների և ազգային–դավանական խմբերի միջև ստույգ հարաբերակցությունը: Այսպես՝ Պետական խորհրդի 41 անդամներից միայն 13–ն էին ոչ մուսուլման: Խորհրդի նախագահ նշանակվեց Ահմեդ Միդհատ փաշան՝ «միաձուլման» քաղաքականության ջերմ կողմնակիցը: Ընդհանուր առմամբ, Պետական խորհրդի ստեղծումը ևս մեկ քայլ էր դեպի «միաձուլման» գաղափարների արմատավորումը Օսմանյան կայսրության վարչական համակարգում:

Կայսրության օրենսդրության մեջ «միաձուլման» հայեցակարգի ներդրման ջանքերի վերջակետը դարձավ 1869 թ. օսմանյան հպատակության մասին օրենքը: Նրա առաջին հոդվածի համաձայն՝ Օսմանյան կայսրության բոլոր բնակիչները, անկախ իրենց ազգային և կրոնական պատկանելությունից, հայտարարվում էին «օսմանյան պետության հպատակներ», ինչը, համաձայն Թանզիմաթի առաջնորդների, հող էր նախապատրաստելու հետագայում բազմազգ կայսրության բնակչության «միախառնման ու միաձուլման» համար:

Կարևոր նշանակություն ունեցան բարենորոգումները իրավական ոլորտում: 1858 թ. ընդունվեց նոր Քրեական օրենսգիրք, որը, կրելով բացահայտ ֆրանսիական ազդեցություն և հաստատելով կայսրության բոլոր հպատակների, անկախ կրոնական պատկանելությունից, իրավահավասարության սկզբունքը, միաժամանակ պարունակում էր նաև մուսուլմանական օրենսդրության՝ *շարիաթի* տարրեր: 1864 թ. Վիլայեթների մասին օրենքով կարևոր բարենորոգումներ տեղի ունեցան դատական համակարգում: Այդ օրենքը նախատեսում էր մասնավորապես դատական և իշխանական համակարգերի տարանջատում, որը հակասում էր *շարիաթին*: 1869 թ.՝ երկար տարիների նախապատրաստական աշխատանքից հետո, սուլթան Աբդուլ Ազիզի հրամանով հրապարակվեց Քաղաքացիական օրենսգիրքը, որը ստացավ *Մեջելլե* անվանումը: Այն հիմնականում հիմնվում էր *շարիաթի* վրա: Չնայած այդ հանգամանքին՝ *Մեջելլեի* հրապարակումը վկայում էր այդ ոլորտի հետագա

արդիականացման և արևմտականացման մասին, քանի որ պարունակում էր նաև աշխարհիկ դրույթներ:

1860–ական թթ. առաջին անգամ կայսրության պատմության մեջ քրիստոնյաներն ընդգրկվեցին կառավարության կազմում, սկսեցին ներգրավվել դիվանագիտական ծառայության մեջ: Արտաքին գործերի նախարարության կազմում սկսեց գործել թարգմանչաց գրասենյակ, որտեղ աշխատում էին գերազանցապես քրիստոնյաներ՝ հույներ և հայեր:

Վերոնշյալ և մի շարք այլ բարեկարգումներ փոխեցին կայսրության արտաքին պատկերը՝ տպավորություն ստեղծելով, որ նա արագորեն զարգանում է և արևմտականանում: Սակայն իրականում այն իր էությամբ շարունակում էր մնալ հետամնաց, արևելյան տիպի բռնապետություն: Բարեփոխումները չունեին խորքային ազդեցություն, ընդունված օրենքները մնում էին թղթի վրա:

Թանզիմաթի երկրորդ փուլի առաջնորդները հասկանում էին, որ օրենքները կյանքի կոչել լայնածավալ և վատ կառավարվող կայսրության ողջ տարածքի վրա դժվար կլինի: Այդ պատճառով նրանք որոշեցին սկզբից փորձարկել նոր քաղաքականության կիրառման հնարավորությունները հիմնականում քրիստոնյաներով բնակեցված մեկ առանձին նահանգի (*vilayet*) շրջանակներում: Ընտրվեց բուլղարներով բնակեցված Դանուբի վիլայեթը, որի տարածքը զգալի չափով համընկնում էր բուն Բուլղարիայի տարածքի հետ: Այդ ընտրությունը պատահական չէր: Հաջողությունը հնարավորություն էր տալիս Բարձր դռանը ցույց տալու Արևմուտքին, որ ինքը ոչ միայն կարող է կատարել 1856 թ. սուլթանական հրովարտակի խոստումները, այլև կարող է արդյունավետ կառավարում իրագործել Եվրոպական Թուրքիայի առավել զարգացած և պայթյունավտանգ շրջաններից մեկում: Ալին և Ֆուադը ձգտում էին նաև իրապես ստուգելու բուլղարական ժողովրդի գնալով ընդլայնվող ազգային–ազատագրական շարժման հետ պայքարի նոր, «արևմտականացված» մեթոդները: Այդ որոշման ընդունելու վրա ազդեց նաև այն հանգամանքը, որ Բուլղարիան մայրաքաղաքից ոչ հեռու էր, որը կենտրոնական իշխանություններին հնարավորություն էր տալիս անմիջապես վերահսկելու և կանոնավորելու տեղական ղեկավարության քաղաքականությունը:

Նորաստեղծ Դանուբի վիլայեթի նահանգապետ (*vali*) նշանակվեց Ահմեդ Միդհատ փաշան: Նա հայտնի էր իր արևմտամետ հայացքներով և վայելում էր գործունյա ղեկավարի համբավ:

Միդհատի գործունեությունը Դանուբի վիլայեթի նահանգապետի պաշտոնում շարունակվեց մինչև 1868 թ.: Այդ տարիների ընթացքում նա կարողացավ կյանքի կոչել «միախառնման ու միաձուլման» հայեցակարգի հիմնական դրույթներից շատերը՝ ներմուծելով դրանք կրթական, կառավարման, քաղաքական, տնտեսական, մշակութային ոլորտներ:

Միաժամանակ շարունակվում էին կիրառվել բուլղարացիների ազգային–ազատագրական շարժման դեմ պայքարի «ավանդական» մեթոդները: Մասնավորապես

շարունակվում էր նրանց բռնի իսլամացման և թուրքացման քաղաքականությունը, որը կրում էր իշխանությունների կողմից կազմակերպված բնույթ:

Միդհատին չհաջողվեց հասնել իր հիմնական նպատակին՝ կասեցնելու Դանուբի նահանգում բուլղար ժողովրդի ազգային–ազատագրական շարժման ընդլայնման գործընթացը: Բուլղարացիներին թուրք սուլթանին հավատարմության ոգով «դաստիարակելու» և «միաձուլելու» նրա քաղաքականությունը տապալվեց: Բուլղար ժողովուրդը այդ քաղաքականությանը պատասխանեց թուրքական բռնապետության դեմ ուղղված ազատագրական պայքարի ուժեղացումով: 1867 թ. և 1876 թ. Բուլղարիայում բռնկված զանգվածային զինված ապստամբությունները ակնհայտ դարձրին, որ «միաձուլման» քաղաքականությունը, որը նրա հեղինակների կողմից ներկայացվում էր որպես «արևմտամետ» բարենորոգումների իրականացում, դատապարտված է անհաջողության: Միդհատի պատասխանը 1867 թ. բուլղարական ապստամբությանը աչքի ընկավ բացառիկ դաժանությամբ: Այն խեղդվեց արյան մեջ, նահանգը պատվեց բազմաթիվ կախաղաններով: Այդպիսով ի հայտ եկավ արևմտամետ և «քաղաքակիրթ» «բարենորոգչի համբավ վայելող Միդհատ փաշայի իրական դեմքը:

Ինչպես արդեն նշել էինք, բարենորոգումների հիմնական նպատակը արևմտականացման քողի ներքո քրիստոնյա ժողովուրդների ազգային–ազատագրական շարժման ուժեղացման կասեցումն էր: Սակայն 1860–ական թթ. այն շարունակեց հավաքել է՛լ ավելի մեծ թափ՝ ձեռք բերելով ավելի անզիջում բնույթ:

Եվրոպայում մեծ արձագանք ստացավ 1866–1869 թթ. XVII դարից թուրքական տիրապետության ներքո գտնվող Կրետե կղզու հույն ազգաբնակչության հերոսական ազատագրական զինված պայքարը: Կրետացիների կողմից ընտրված ազգային ժողովը 1866 թ. սեպտեմբերին կազմեց ժամանակավոր կառավարություն, ազդարարեց Կրետեի անկախությունը Օսմանյան կայսրությունից և միացումը Հունաստանին: Ի պատասխան դրան՝ կղզում գտնվող օսմանյան բանակի կանոնավոր ստորաբաժանումները, ստանալով համալրում, անցան հարձակման՝ ցուցաբերելով աննախադեպ դաժանություն և բարբարոսաբար ոչնչացնելով խաղաղ հույն բնակչությանը: Չկարողանալով ճնշել ապստամբությունը զենքի ուժով՝ օսմանյան կառավարությունը փորձեց կիրառել ավելի «ճկուն» քաղաքականություն: 1867 թ. հոկտեմբերին կղզի ժամանեց օսմանյան բարձրաստիճան պաշտոնյաներից կազմված պատվիրակություն՝ մեծ վեզիր Ալի փաշայի ղեկավարության ներքո: Պատվիրակության կողմից նախապատրաստվեց կղզու կառավարման նոր համակարգի մասին «Օրգանական ստատուտ», որը 1868 թ. փետրվարին հրապարակվեց սուլթանի ստորագրությամբ: Սակայն այն չընդունվեց ապստամբների կողմից, և ռազմական գործողությունները վերսկսվեցին: Միայն մեծ ջանքերի շնորհիվ օսմանյան բանակը պարտության մատնեց ապստամբ կրետացիներին և ձերբակալեց նրանց ժամանակավոր կառավարության անդամներին: Եվրոպացիները օգնության չեկան…

Ստացան օժանդակություն Եվրոպայից նաև 1862 թ. թուրքական լծի դեմ զինված ապստամբության դրոշը բարձրացրած լեռնային Կիլիկիայում գտնվող Զեյթունի հայ հերոսները: Մեծ դժվարությամբ օսմանյան 40–հազարանոց բանակին հաջողվեց ձևականորեն վերահաստատել օսմանյան տիրապետությունը ազատատենչ զեյթունցիների նկատմամբ: Զեյթունի զինված պայքարը ստացավ համահայկական հնչեղություն և դարձավ հայոց ազատագրական շարժման կարևոր էջերից:

Թանզիմաթի երկրորդ փուլի տարիներին թուրքական լծի դեմ լայնածավալ զինված պայքար էին մղում նաև բալկանյան ժողովուրդները՝ Բուլղարիայի, Սերբիայի, Չեռնոգորիայի, Բոսնիա–Հերցեգովինայի և Ռումինիայի բնակիչները: Այստեղ նույնպես Ալի փաշային և Ֆուադ փաշային չհաջողվեց իրականացնել քրիստոնյա ժողովուրդների «միաձուլման» քաղաքականությունը:

1869 թ. կյանքից հեռացավ Ֆուադ փաշան, երկու տարի անց՝ նաև Ալի փաշան: Նրանց մահով ավարտվեց Թանզիմաթի՝ հետամնաց Օսմանյան կայսրության արևմտականացման և արդիականացման չստացված փորձի դարաշրջանը: Կյանքի վերջում Ալի փաշան ստիպված էր ցավով արձանագրել. «Մենք անզոր եղանք…»:

2. ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԹԱՆԶԻՄԱԹԻՆ

Արևմտամետ բարենորոգումները բացասաբար ընդունվեցին Օսմանյան կայսրության մուսուլմանական, հիմնականում թուրքական ազգաբնակչության կողմից: Առավել դժգոհություն առաջացրին Թանզիմաթի առաջնորդների հայտարարությունները և բարենորոգումների փորձերը, որոնք ուղղված էին մուսուլմանների ու քրիստոնյաների միջև ձևական իրավահավասարության հաստատմանը, քանի որ այդ քաղաքական գիծը ընկալվում էր որպես անհարկի զիջում հպատակ քրիստոնյա ժողովուրդներին, որոնք ժամանակին նվաճվել էին թուրքերի կողմից և դրանից հետո բնակվում էին Օսմանյան կայսրությունում որպես ստորադաս դասի ներկայացուցիչներ:

Սկզբնական փուլում Թանզիմաթին առավել ակտիվ հակազդեցություն ցույց տվին մուսուլմանական հոգևորականները, որոնք մզկիթներում գրգռում էին բնակչությանը Թանզիմաթի դեմ և նույնիսկ վկայակոչում էին երազում հայտնված Մուհամմեդի դժգոհությունը և հորդորում էին չենթարկվել Թանզիմաթի արևմտամետ բարենորոգումները ազդարարող հրովարտակներին և շարունակել իշխել քրիստոնյաների վրա՝ համաձայն Մուհամմեդի պատվիրանների ու շարիաթի օրենքների: Թուրք ազգաբնակչության տարբեր խավերի ներկայացուցիչները բացեիբաց հայտարարում էին, որ նրանք չեն ճանաչում գյավուրների ազատությունները կամ իրավահավասարությունը մուսուլմանների հետ և ապագայում էլ չեն ճանաչի. հաղորդում էր ավստրիացի հյուպատոսը բուլղարական Ռուսե քաղաքից:

Հետզհետե դիմադրությունը Թանզիմաթին և հակաքրիստոնեությունը ընդունում են ավելի կազմակերպված բնույթ, և կազմակերպվում է դավադրություն սուլթանի և Թանզիմաթի առաջնորդների դեմ: Այդ դավադրությունը ընդունված է անվանել «Քուլելիի իրադարձություն»:

Օսմանյան կայսրության պատմությունը լի է դավադրություններով, հաջողված ու չհաջողված հեղաշրջումների փորձերով: Սակայն դրանցից և ոչ մեկը չի առաջացրել այնքան գիտական ու քաղաքական հետաքրքրություն, որքան 1859 թ. սեպտեմբերին Կոստանդնուպոլսում բացահայտված սուլթան Աբդուլ Մեջիդի դեմ ուղղված դավադրությունը: Այդ ամսվա կեսերին մայրաքաղաքում ձերբակալվեց դավադիրների մի խումբ: Նրա անդամները բանտարկվեցին «Քուլելի» անվանումը կրող զորանոցում, երեք–չորս շաբաթվա ընթացքում հարցաքննվեցին ու շատ արագ դատվեցին պետական բարձրաստիճան այրերից կազմված հատուկ դատական ատյանի կողմից: Նրանցից չորսը դատապարտվեցին մահվան, իսկ մնացյալը՝ տարբեր ժամկետների ազատազրկման կամ աքսորի: Սուլթան Աբդուլ Մեջիդի կարգադրությամբ մահապատիժները փոխարինվեցին աքսորով:

Հետազոտողների հետաքրքրությունը այս՝ առաջին հայացքից նախորդ բազմաթիվ դավադրություններից ոչնչով չտարբերվող իրադարձության նկատմամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ դավադիրները, որոնցից շատերը պատկանում էին մուսուլմանական հոգևոր դասին, ստեղծել էին ժամանակակից հասկացողությամբ առաջին քաղաքական կազմակերպությունը Թուրքիայի պատմության մեջ: Այն ուներ իր քաղաքական ծրագիրը, որի շուրջը համախմբվել էին կազմակերպության անդամները: Դավադիրների հիմնական նպատակն էր վերջ դնել Թանզիմաթի արևմտամետ բարեփոխումներին ու վերականգնել քրիստոնյաների ստորադաս իրավական դրությունն Օսմանյան կայսրությունում ամրագրող շարիաթի օրենքներն իրենց «անաղարտ» տեսքով: Այդ են վկայում ձերբակալվածների ցուցմունքները:

Դավադիրները եղել են լավ կազմակերպված և ունեցել են բազմաթիվ համախոհներ: Համաձայն ձերբակալվածների ցուցմունքների՝ դավադրությանը պատրաստ էին միանալ տասնյակ հազարավոր զինվորականներ և կրոնական կազմակերպությունների անդամներ: Մատնության հետևանքով այն բացահայտվելուց հետո տեղի ունեցան ձերբակալություններ: Բանտարկվեցին շուրջ երկու հարյուր դավադիրներ և նրանց համախոհներ: Սակայն նույնիսկ դավադրության բացահայտումից հետո հակաքրիստոնեության ալիքը գնալով ուժեղանում էր, ինչը հանգեցնում էր կայսրության տարբեր ծայրամասերում տեղի ունեցած քրիստոնյա խաղաղ բնակչության կոտորածների և տասնյակ հազարավոր զոհերի: Այսպես, օրինակ՝ տեղի ունեցան քրիստոնյաների կոտորածներ ինչպես կայսրության եվրոպական, այնպես էլ ասիական շրջաններում: 1860 թ. Սիրիայի և Լիբանանի կոտորածներին զոհ գնաց, անգլիացի ականատես գնդապետ Չերչիլի վկայությամբ, շուրջ 11 հազար քրիստոնյա: Նրանք կազմակերպված էին կենտրոնական իշխանությունների այն հատվածի կողմից, որը դեմ էր Թանզիմաթին:

Վերը նշված հակաքրիստոնեական տրամադրությունները ներազդեցին «նոր օսմանցիների» ընդդիմադիր սահմանադրական շարժման ղեկավարների գաղափարախոսության վրա: Այն սկիզբ առավ մոտավորապես 250 մարդուց կազմված գաղտնի խմբակից, որը ստեղծվեց 1865 թ. Կոստանդնուպոլսում: Նրա անդամները հիմնականում ներկայացնում էին մայրաքաղաքի ծառայողական խավը: Սկզբնա-

կան շրջանում «նոր օսմանցիները» «Քուլելիի» դավադրության առաջնորդ շեյխ Ահմեդի արմատական մուսուլմանական և ծայրահեղ հակաքրիստոնեական գաղափարների ազդեցության ներքո էին: Պատահական չէ, որ նրանց ղեկավարները բարձր գնահատեցին դավադիրների գործունեությունը: Նամըք Քեմալը (1842–1888 թթ.)՝ «նոր օսմանցիների» գաղափարախոսը, նշում էր, որ Ահմեդը և նրա ընկերները ձգտում էին «փրկելու պետությունը»:

«Նոր օսմանցիները», հետևելով շեյխ Ահմեդի օրինակին, դավադրություն կազմակերպեցին Թանզիմաթի առաջնորդներից Ալի փաշայի ղեկավարած կառավարության դեմ, որը 1866 թ. բացահայտվեց: Նրանց մի մասը ձերբակալվեց, իսկ մյուսները, խուսափելով ձերբակալությունից, լքեցին Օսմանյան կայսրությունը և բնակություն հաստատեցին Եվրոպայում: Այստեղ նրանք հնարավորություն ունեցան մոտիկից ծանոթանալու եվրոպական երկրների կառավարման համակարգերին և եկան եզրակացության, որ հենվելով միայն իսլամի գաղափարախոսության վրա՝ հնարավոր չէ վերջ դնել քրիստոնյաների ազգային–ազատագրական պայքարին և պահպանել Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը, այլ անհրաժեշտ է եվրոպական մի շարք երկրների օրինակով հռչակել սահմանադրություն և հնարավորություն տալ քրիստոնյաներին ունենալու այնտեղ իրենց ներկայացուցիչներին: Սակայն «նոր օսմանցիները» չսահմանափակվեցին առանձին նոր գաղափարներ առաջ քաշելով, այլ կարողացան համադրելով դրանք Թանզիմաթի երկրորդ փուլի առաջնորդներ Ալի փաշայի և Ֆուադ փաշայի, ինչպես նաև նրանց կատաղի քննադատ «Քուլելիի» դավադրության ղեկավար շեյխ Ահմեդի մոտեցումների հետ՝ ստեղծել իրենց ուրույն քաղաքական գաղափարախոսությունը, որն ընդունված է անվանել «օսմանիզմ»: Այն, ժամանակակից ընկալմամբ, առաջին թուրքական քաղաքական գաղափարախոսությունն էր, որը երիտթուրքերի կառավարման առաջին տարիներին կատարում էր, ըստ էության, պաշտոնական գաղափարախոսության դեր:

Օսմանիզմի գաղափարախոսության շրջանակներում «նոր օսմանցիները» ձևակերպեցին «օսմանյան ազգի» (կամ «օսմանյան համայնքի») և «օսմանյան հայրենասիրության» գաղափարական հայեցակարգերը: Նրանց հիմնադրույթները լայնորեն քննարկվում էին Եվրոպայում վտարանդիության տարիներին (1867–1870 թթ.) օսմաներենով հրատարակվող «Հյուրիյեթ» («Ազատություն») և «Մուհբիր» («Թղթակից») լրագրերի էջերում:

«Օսմանյան ազգ» (*millet–i osmani*) հասկացությունը «նոր օսմանցիները» ուսմունքի կենտրոնական հասկացություններից մեկն էր: Այն օգտագործվում էր կայսրության բոլոր ժողովուրդների ամբողջությունը բնութագրելու նպատակով, ընդ որում՝ այդ առասպելական «ազգի» մեջ ընդգրկվում էին ինչպես մուսուլմանները, այնպես էլ ոչ մուսուլմանները:

Օսմանական պետության բոլոր ժողովուրդների՝ մուսուլմանների և ոչ մուսուլմանների՝ միասնական «օսմանյան ազգի» կազմի մեջ միաձուլման անհրաժեշտությունը «նոր օսմանցիները» հիմնավորում էին եվրոպական մի շարք երկրների օրինակով: Նրանց առաջնորդ Նամըք Քեմալը, «Ժողովուրդների միաձուլում» հոդվա-

ծում օրինակ բերելով Անգլիան, Ֆրանսիան, Ավստրիան, Պորտուգալիան, Բելգիան և այլ եվրոպական պետությունները, պնդում էր, որ ազգության, լեզվի, դավանանքի տարբերությունները «երբեք չեն կարող խոչընդոտ կամ արգելք լինել միաձուլման համար»: Նրանք, կեղծելով օսմանյան պետության պատմությունը, պնդում էին, որ այնտեղ հենց սկզբից ստեղծված էին բարենպաստ պայմաններ ոչ մուսուլման ժողովուրդների զարգացման համար: «Հյուրիեթը» գրում էր. «Անմիջապես Ստամբուլի գրավումից հետո մենք բոլոր դավանանքի ներկայացուցիչներին տվեցինք բացարձակ հավասար իրավունքներ»:

«Օսմանյան ազգի» հայեցակարգի առանցքային գաղափարը Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդներին մեկ ազգի կազմի մեջ միաձուլելն էր և այդպիսով նրանց «օսմանցի» դարձնելը: Ընդ որում, միայն թուրքերն էին համարվում «առաջին կարգի օսմանցիներ», իսկ քրիստոնյա ժողովուրդները բնութագրվում էին որպես «օսմանյան ազգի» առանձին «տարրեր»: Իրենց հոդվածներում «նոր օսմանցիները» փորձում էին քրիստոնյաներին համոզել, որ իրենց շահերից է բխում լինել մեծ և հզոր «օսմանյան ազգի տարրեր», այլ ոչ թե ստեղծել իրենց ազգային պետությունները: Չսահմանափակվելով այդ ոչ համոզիչ քարոզով՝ նրանք առաջարկում էին իրականացնել մի շարք բարենորոգումներ, որոնց վերջնական նպատակն է լինելու ամրապնդել «օսմանյան ազգի» միասնությունը՝ «դաստիարակելով» նրա ոչ մուսուլման «տարրերին» Օսմանյան կայսրությանը հավատարմության ոգով և ստիպելով, որ նրանք հրաժարվեն իրենց ազգային դպրոցներից, ազգային լեզուներից և արդյունքում՝ ազգային ինքնությունից: Ըստ էության, «նոր օսմանցիները» առաջարկում էին իրականացնել ոչ թուրք ժողովուրդների թուրքացման ծրագիր: Պատահական չէր, որ նրանց առաջնորներից Ալի Սուավին եզրակացնում էր, թե «թուրքերեն խոսողը թուրք է»:

«Նոր օսմանցիների» մյուս հիմնական գաղափարական–քաղաքական հայեցակարգը, այսպես կոչված, «օսմանյան հայրենասիրության» հայեցակարգն էր: Նրա հիմնական հասկացություններն էին՝ «օսմանյան հայրենիք», «սերը դեպի հայրենիք» և այլն: Հիմնական քաղաքական նպատակն էր սերմանել ոչ թուրք և ոչ մուսուլման ժողովուրդների մեջ հավատարմություն Օսմանյան կայսրության իշխանություններին: Վերը նշված հայեցակարգերով սպառվում է հիմնականում «Նոր օսմանցիների» ուսմունքի գաղափարական բովանդակությունը: Նրանց վերլուծությունը հնարավորություն է տալիս ի հայտ բերելու այդ ուսմունքի քաղաքական ուղղվածությունը: «Օսմանյան ազգի» ստեղծումն իրականում իրենից ներկայացնելու էր Օսմանյան կայսրության բազմազգ բնակչության թուրքացման ճանապարհին կատարված սկզբնական քայլ: Նրա իրականացմանը նպատակաուղղված միջոցառումները հետապնդում էին նաև քրիստոնյա ժողովուրդների ազգային–ազատագրական շարժմանը «խաղաղ» ճանապարհով հարված հասցնելու նպատակը:

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ 70–ԱԿԱՆ ԹԹ.

1. ՃԳՆԱԺԱՄ

XIX դ. 70–ական թթ. առաջին կեսին Օսմանյան կայսրության քաղաքական կյանքում տեղի են ունենում կարևոր տեղաշարժեր: Համեմատաբար կայուն իրավիճակը, որը հաստատվել էր երկրում 1860–ական թթ. երկրորդ կեսին և արդյունք էր հաջորդաբար մեծ վեզիրի պաշտոնը զբաղեցրած Ֆուադ փաշայի և Ալի փաշայի երկարամյա ճկուն քաղաքականության, ավարտվում է: Նրանց կյանքից հեռանալուց հետո իշխանության բարձրագույն ոլորտներում ծավալվում է կատաղի պայքար կառավարող բյուրոկրատական վերնախավը ներկայացնող պաշտոնյաների առանձին խմբավորումների միջև, որը իր գագաթնակետին հասավ 1876 թ., երբ այդ տարի գահակալած երեք սուլթաններից մեկը դավադրության արդյունքում հեռացվեց իշխանությունից և հետագայում սպանվեց, իսկ մյուսը հայտարարվեց անգործունակ և նույնպես հեռացվեց իշխանությունից: Նրանցից միայն Աբդուլ Համիդ Բ–ին՝ խորամանկ ու դաժան սուլթանին, հաջողվեց պահպանել գահը:

Սրվում են բազմազգ ու բազմադավան կայսրության սոցիալ–քաղաքական կյանքի ամենատարբեր ոլորտներում առկա բազմաթիվ հակամարտությունները, առաջին հերթին, իհարկե, ազգային–դավանական հարցը: Սրընթաց վատթարանում է երկրի տնտեսական վիճակը: Այդ պայմաններում սկսում է գերակշռել մի գործընթաց, որը կարելի է բնութագրել որպես ծայրահեղ հակաքրիստոնեություն: Այն շարունակությունն էր այն երկրի մուսուլմանական ազգաբնակչության որոշ խավերի կողմից ցուցաբերվող հակաթանզիմաթյան հակազդեցության, որն ի հայտ էր եկել դեռևս Թանզիմաթի շրջանում: Սակայն եթե Ալի փաշային ու Փուադ փաշային հաջողվում էր հսկողության տակ պահել այն, ապա նրանց կյանքից հեռանալուց հետո այդ հակաարևմտյան շարժումը ուժեղանում է և ձեռք է բերում ակնհայտորեն հակաքրիստոնեական բնույթ, որի թիրախն էին կայսրության հպատակ քրիստոնյա ժողովուրդները: Այն արտահայտվում էր առաջին հերթին հոգևորականների առաջնորդությամբ և մոլեռանդությամբ կուրացած զինված մուսուլմանական ամբոխի հարձակումներով խաղաղ քրիստոնյա ազգաբնակչության վրա, տների հրկիզումով, զանգվածային սպանություններով: Բազմաթիվ փաստեր վկայում են, որ այդ շարժումը խրախուսվում էր այդ տարիների օսմանյան իշխանությունների կողմից:

Սկսում են տարածվել այնպիսի ծայրահեղ հակաքրիստոնեական գաղափարներ, որոնք հետագայում կազմեցին համիդյան շրջանի պանիսլամիզմի գաղափա-

ռախոսության հիմքը: Նրանց կրողները կարևոր դիրք էին զբաղեցնում կառավարման բարձրագույն օղակներում, մտավորականության շրջանում: Մայրաքաղաքում տպագրվող «Բասիրեթ» լրագիրը դառնում է այդ ծայրահեղական գաղափարների կրողների խոսափողը: Նրա մեծ տպաքանակը պայմանավորված էր տպագրվող նյութերի պանիսլամիստական ու ծայրահեղ հակաքրիստոնեական ուղղվածությամբ: «Բասիրեթի» խմբագիրը՝ Էսսադ բեյը, այդ տարիներին հեղինակեց պանիսլամիզմին նվիրված առաջին գիրքը Օսմանյան կայսրությունում, որտեղ կոչ էր անում ամբողջ աշխարհի մուսուլմաններին հավաքվել Մեքքայում և սկսել տարածել իսլամը աշխարհով մեկ՝ կանգ չառնելով ոչ մի խոչընդոտի առջև:

1870–ական թթ. կեսերից սկսած՝ ծայրահեղական մուսուլմանական մոլեռանդությունը Օսմանյան կայսրությունում Է՛լ ավելի է ուժեղանում: Գերմանական «Ալգեմայնե Ցայտունգ» լրագիրը արձանագրում էր, որ վկայությունները դրա մասին գալիս են երկրի ամենատարբեր նահանգներից: Ըստ լրագրի՝ քրիստոնյաների հետ իրավահավասարության սկզբունքի դեմ արտահայտվողները հայտարարում էին. «Մենք (այսինքն՝ մուսուլմանները — Ռ. Ս.) հնազանդեցրել ենք քրիստոնյաներին և դաշույնով նվաճել ենք երկրներ: Մենք չենք ցանկանում բաժանել նրանց հետ կայսրության ղեկավարությունը»: Հարձակումները քրիստոնյաների վրա, նրանց սպանությունները դառնում են ավելի հաճախակի:

1870–ական թթ. Օսմանյան կայսրության քաղաքական կյանքում ի հայտ է գալիս նոր երևույթ՝ սոֆթաների (մուսուլմանական կրթական հաստատությունների ուսանողների) քաղաքական ակտիվությունը, որն արտահայտվում էր մայրաքաղաքում նրանց զանգվածային ցույցերի տեսքով: Այդ ցույցերն ունեին բացահայտ հակաքրիստոնեական ուղղվածություն: Ականատեսի վկայությամբ՝ նրանց ընթացքում սոֆթաները սպառնում էին երկրի երեսից բնաջնջել «գյավուրներին»՝ անհավատներին: Այդ ցույցերի ընթացքում տեղի էին ունենում բազմաթիվ վայրագություններ քրիստոնյաների նկատմամբ, և մշտապես վտանգ կար, որ դրանք կվերածվեն քրիստոնյաների լայնածավալ ջարդերի, քանի որ սոֆթաները զինված էին: Սոֆթաներին օգտագործում էին Միդհատ փաշան և նրա ղեկավարած ուժերը՝ իրենց քաղաքական նպատակներին հասնելու համար: Նրանք ուղղակի վճարում էին սոֆթաներին:

1875 թ. և 1876 թ. կայսրությունը կանգնել էր փլուզման եզրին: Աղետալի սովը, որը խլեց տասնյակ հազարավոր կյանքեր, հիմնականում եվրոպական հատվածում ծանրագույն ֆինանսական ճգնաժամը, որի հետևանքով պետությունը հայտարարեց իրեն սնանկ, և, իհարկե, քրիստոնյաների ապստամբությունները Բալկաններում՝ Հերցեգովինայում, Բոսնիայում, հետագայում նաև Բուլղարիայում, այդ ճգնաժամի նշաններն էին:

Թուրքական հասարակությունը արձագանքեց այդ ծանր իրավիճակին, ինչպես արդեն նշել էինք, հակաքրիստոնեական արմատական տրամադրությունների ուժեղացմամբ, իսկ կառավարությունը, զինելով 1875 թ. Բալկաններում բնակվող մու-

սուլման ազգաբնակչությանը, ստեղծեց նրանցից զինված ջոկատներ՝ պատրաստվելով օգտագործելու նրանց ապստամբ քրիստոնյաների դեմ:

1875 թ. բռնկվեց հերթական բուլղարական ապստամբությունը: Այն ուներ ինքնաբուխ և սահմանափակ բնույթ: Նրա ճնշման նպատակով իշխանությունները օգտագործեցին ոչ միայն բանակային ստորաբաժանումները, այլև ներգրավվեցին մուսուլմանական ազգաբնակչության ամենաֆանատիկ խմբերին՝ բաժանելով նրանց զենք: Սա անուղղակի վկայություն է առ այն, որ իշխանությունները նախապատրաստվում էին իրականացնելու շատ ավելի լայնածավալ գործողություններ, քան պահանջվում էր այդ սահմանափակ ապստամբությունը ճնշելու համար:

Ուշագրավ է, որ ապստամբությունը ճնշելուց հետո էլ կառավարությունը շարունակում էր ձեռնարկել «ակտիվ միջոցառումներ», ինչպես նշվում էր Ադրիանուպոլսում բրիտանական փոխհյուպատոսի կողմից ստացված հաղորդագրության մեջ. մասնավորապես նրանք սկսել էին «զինյալների հավաքագրումը»:

Կարևոր է նշել այն հանգամանքը, որ համաձայն օտարազգիների վկայությունների՝ բուլղարների 1876 թ. լայնածավալ ապրիլյան ապստամբությունը դեռ չէր սկսվել, սակայն թուրքական իշխանություններն արդեն հրամայել էին մուսուլմանական գյուղացիներին սպանել իրենց հարևան քրիստոնյաներին: Բրիտանացի ականատեսն իր գրքում բերում է մուսուլման մի կնոջ պատմությունը, համաձայն որի՝ նրա ամուսինը սուլթանի անունից ստացել էր հրաման՝ սպանել իր քրիստոնյա հարևաններին, որը և ստիպված նա կատարել էր:

Այդ և նմանատիպ բազմաթիվ հաղորդագրություններ փաստում են թուրքական իշխանությունների շրջանում լայնածավալ բռնությունների քաղաքականություն իրականացնելու մտադրվածության ձևավորման վաղ փուլը, որը, դեռևս չունենալով «ցեղասպանական դիտավորություն», միաժամանակ ազդարարում էր «ավանդական» միջնադարյան կոտորածների քաղաքականության՝ պետականորեն նախապես նախապատրաստված ցեղասպանության քաղաքականության վերաճման գործընթացի սկիզբը:

Ամիսներ անց իշխանությունների հրամանով ստեղծվեցին զինված հրոսակախմբեր, որոնք բացի թուրքերից՝ կազմված էին նաև ալբանացիներից և փախստականներից Հյուսիսային Կովկասից և ենթարկվում էին տվյալ տեղանքում տեղակայված կանոնավոր զինված ուժերի հրամանատարությանը: Նրանք օգտագործվեցին բուլղարների դեմ 1876 թ. ապրիլյան ապստամբությունը ճնշելու նպատակով: Այդ ջոկատների անդամները անվանվում էին *բաշիբոզուկներ* և մեծապես նմանվում էին դեռևս միջնադարում թուրքական նվաճումների ժամանակ օգտագործված ջոկատներին: Նրանց դաժանությունների մասին լայնորեն գրեց ժամանակի եվրոպական մամուլը: «Թուրքերի գաղափարը հետևյալն էր. կոտրել բուլղարների ոգին և այդպիսով կանխել ապստամբությունը»,— գրում էր բրիտանացի ականատեսը: Բրիտանական մամուլը տպագրեց տեղեկույթ, համաձայն որի՝ Ապրիլյան ապստամբության ճնշման ընթացքում 60 բուլղարական գյուղերի բնակչությունը, այդ թվում նաև երեխաները, կանայք, ծերերը, լիովին ոչնչացվել էր:

Առավել արյունալի սպանդ, որն ուղեկցվել է ահավոր վայրագություններով, տեղի է ունեցել 1876 թ. մայիսի առաջին մի քանի օրվա ընթացքում բուլղարական խոշոր Բաթաք գյուղում, որին զոհ է գնացել շուրջ ութ հազար խաղաղ բնակիչ, մեծ մասամբ կանայք, երեխաներ և ծերեր: Ամերիկացի արևելագետ–ցեղասպանագետ Ջեյմս Ռիդը, որը հատուկ ուսումնասիրել է Բաթաքի կոտորածը, հանգել է եզրակացության, որ այն ուներ ցեղասպանական բնույթ:

Պատահական չէ, որ Օսմանյան կայսրությունում առաջին ցեղասպանական բնույթի պետական ծրագիրն ընդունվել է Բաթաքի սպանդից շուրջ երկու շաբաթ հետո: Նրա քննարկումը և ընդունումը կառավարության կողմից հնարավոր էր դարձել միայն այն բանից հետո, երբ զինված սոֆթաների ճնշման ներքո, որոնք գրավել էին մայրաքաղաքի կենտրոնական փողոցները և պահանջում էին Միդհատ փաշային մտցնել կառավարության կազմի մեջ, սուլթանը մայիսի 12–ին ստիպված էր ընդունել Միդհատի կողմից կաշառված սոֆթաների պահանջը՝ ցրելով հին կառավարությունը և կազմելով նորը, որի մեջ և ընդգրկվել էր Միդհատը՝ դառնալով նրա փաստացի ղեկավարը:

Այդ ծրագիրը նախատեսում էր մի շարք միջոցառումների իրականացում, որոնք պետք է կանխեին ապագայում բուլղարական ապստամբությունների կրկնությունը: Մեր օրերի ընկալումների համաձայն՝ ծրագիրն ուներ ցեղասպանական բնույթ: Այն նախատեսում էր «ոչնչացնել լիովին բուլղարական այն … բնակավայրերը, որոնց բնակիչները առավել առաջընթաց են ապրել, իսկ մնացյալ գյուղերն ու քաղաքները ավերել բաշիբոզուկների ասպատակությունների միջոցով, քաղաքային բնակչության լավագույն ներկայացուցիչներին ոչնչացնել այս կամ այն ձևով, բնաջնջել ողջ մտավորականությանը և կենդանի չթողնել Ռուսաստանում կրթություն ստացած ոչ մի ուսուցչի, փակել ուսումնարանները և այնպես ճնշել ժողովրդին, որ նա հնարավորություն չունենա երբևիցե վերականգնվելու ու վերադառնալու ներկայիս վիճակին, երբ նա վտանգ է ներկայացնում թուրքերի տիրապետության համար, և, վերջապես, թուրքացնել նրա մի մասին, որ Է՛լ ավելի թուլացնի նրան»: Բրիտանական դիվանագիտական աղբյուրները իրենց հերթին հայտնում էին, որ կառավարությունը որոշել է «բնաջնջել ցեղը (race) և ստիպել մնացածին արտագաղթել»: Այդ ծրագրի մասին գրում էին նաև ժամանակի մի շարք բուլղարացի գործիչներ: Օրինակ՝ Թոդոր Բուրմովը, լավ տեղեկացված լինելով բուլղարական ապրիլյան ապստամբության ճնշման նպատակով թուրքական իշխանությունների ձեռնարկած գործողությունների մանրամասներին, հանգել էր եզրակացության, թե «դժբախտ ազգաբնակչության կոտորածը տեղի է ունենում սուլթանական կառավարության նախապես մտածված ծրագրով»:

Երկրում սրընթաց փոփոխվող իրադրության պայմաններում կառավարությունը չհասցրեց իրականացնել վերոնշյալ ծրագրի հիմնական կետերը: Սակայն 1876 թ. երկրորդ կեսի ողջ ընթացքում պահպանվեց քրիստոնյաների լայնածավալ կոտորածների վտանգը: Մասնավորապես մուսուլմանական հոգևորականության հակաքրիստոնեական քարոզչությունը գնալով սաստկացավ և ընդունեց քրիստոնյա-

ներին ֆիզիկական բնաջնջման կոչերի ձև: Ընդ որում, նկատվում էր գործողությունների և քարոզչության որոշակի համակարգում բարձրագույն իշխանությունների և մուսուլման հոգևորականության գործողությունների միջև: Սակայն տարակուսանք չի հարուցում, որ նախաձեռնությունը պատկանում էր կառավարությանը և պատճառը ոչ միայն և ոչ այնքան մուսուլման մոլեռանդությունն էր, որը դարեր շարունակ գոյություն ուներ Օսմանյան կայսրության մուսուլման ազգաբնակչության միջավայրում, այլ երկրի բարձրագույն իշխանությունների նոր քաղաքականությունը բուլղարների և այլ քրիստոնյաների նկատմամբ: Այս կարևոր հանգամանքը ընդգծել է դեռևս այդ իրադարձությունների մեզ անհայտ ժամանակակիցը՝ Ռուսաստանի դեսպան կոմս Ն. Պ. Իգնատևի անձնական ֆոնդում այլ ձեռագրերի հետ պահվող անստորագիր վերլուծական տեղեկագրի հեղինակը: Նա գրում էր. «Առաջներում քրիստոնյաներին ճնշում ու ջարդում էին մուսուլմանները, այժմ նրանց ճնշում ու ջարդում է կառավարությունը»: Այդ տեսակետը կիսում էր նաև Իգնատևը: Պետերբուրգ ուղարկած իր զեկուցագրերից մեկում նա ընդգծում էր, որ ուժեղացող մուսուլման մոլեռանդության պատճառը թուրքական կառավարման համակարգի ներկայացուցիչների մեծ մասի գործողություններն են՝ ամենավերևում գտնվողից մինչև ամենաստորինը:

Փաստերը վկայում են, որ 1876 թ. վերջին ամիսներին թուրքական իշխանությունները պատրաստվում էին կազմակերպելու լայնածավալ կոտորած նաև հայ ժողովրդի դեմ: Արդեն հոկտեմբերի սկզբներին հայկական մամուլը արձանագրեց հայերի դեմ ուղղված մուսուլման մոլեռանդության ուժեղացման փաստը՝ միաժամանակ զգուշորեն ենթադրելով, որ դա տեղի է ունենում տեղական իշխանությունների թողտվության պայմաններում: Նույն ժամանակահատվածում թուրքական մամուլը, մասնավորապես կառավարության շեփոր «Բասիրեթ» լրագիրը, մեղադրում է հայերին, թե իբր նրանք՝ Պոլսի պատրիարքի ղեկավարությամբ նախապատրաստում են զինված ապստամբություն՝ այդպիսով հող նախապատրաստելով նրանց կոտորածի համար:

Դիվանագիտական աղբյուրները հնարավորություն են տալիս պատկերացում ստանալու այդ ծրագրի որոշ մանրամասների մասին: Մասնավորապես նշվում է, որ Միդհատը մեղադրել է հայերին, թե իբր նրանք մեծ քանակությամբ զենք են գնել արտասահմանում և նախապատրաստում են ապստամբություն Ռուսաստանի հետ սահմանամերձ շրջաններում, որպեսզի «ապահովեն Ռուսաստանի միջամտությունը»:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ կոտորածը իրականացվելու էր հենց այդ պատրվակով: Նմանությունը «նոր օսմանցիների» առաջնորդի և երիտթուրքերի պարագլուխների գործելակերպի միջև ակնառու է: Հետաքրքիր է նշել, որ Ռուսաստանի գործոնը մեծ դեր է խաղացել նաև Միդհատ փաշայի հակաբուլղարական ծրագրերում: Դեսպան Իգնատևի զեկուցագրերից մեկում բերված են Միդհատ փաշայի հետևյալ խոսքերը՝ ուղղված բուլղարների ներկայացուցիչներին. «Դուք ձեր հույսը դնում եք Ռուսաստանի վրա, սակայն երբ նա վերջիվերջո կգա, կգտնի

միայն ավերակներ»: Նոյեմբերի վերջերին Կոստանդնուպոլսի դիվանագիտական աղբյուրները հայտնում էին, որ Օսմանյան կայսրության ողջ տարածքի վրա շարունակվում է քրիստոնյաների «աղաղակող ճնշումը», ընդ որում՝ ոչ միայն սլավոնների, այլև «Փոքր Ասիայի քրիստոնյաների»:

Ահա այս պայմաններում էր, որ տեղի ունեցավ Վանի դեկտեմբերի 1–ի հայտնի հրկիզումը՝ կազմակերպված տեղի թուրքական իշխանությունների կողմից: Այդ իրադարձությանը հայրենական պատմագիտությունը բազմիցս անդրադարձել է, սակայն դիտարկել է այն որպես մեկուսի երևույթ: Մինչդեռ, ինչպես վկայում է իր կոնֆիդենցիալ զեկուցագրում Իգնատևին վերջինիս գաղտնի գործակալ Պ. Անինոն, որը Միդհատի օգնականն ու անձնական թարգմանիչն էր և այդպիսով լավատեղյակ էր երկրի անցուդարձին, այդ թվում նաև այնպիսի իրադարձություններին որոնք իշխանությունները պահում էին գաղտնի, համարյա միաժամանակ թուրքական կանոնավոր բանակը իրականացրեց «զազանություններ Յոզղատի հայկական գյուղերում»: Անտարակույս, բանակը ստացել էր համապատասխան հրաման: Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ հայերի դեմ նախապատրաստվող կոտորածի վտանգը բավականին իրական էր:

Ի մի բերելով փաստերը՝ կարելի է եզրակացնել, որ 1876 թ. երկրորդ կեսին, գնալով ավելի սրվող ճգնաժամի պայմաններում, Օսմանյան կայսրությունում ստեղծվել էր նախացեղասպանական իրավիճակ: Կառավարությունը հաստատել էր իր էությամբ ցեղասպանական բնույթի ծրագիր: Սակայն նրա իրականացումը կասեցվեց 1876 թ. դեկտեմբերին Բրիտանիայի ճնշման ներքո սահմանադրության հռչակումով: Ըստ երևույթին, Բրիտանիայի դեսպան սըր Հենրի Էլիոթը, որը ստեղծել էր գործակալական ծավալուն ցանց, եկավ եզրակացության, որ ավելի հեշտ կլինի հասնել հպատակ ժողովուրդների ազգային–ազատագրական շարժման կասեցմանը և պահպանել Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը՝ իրականացնելով երկրում սահմանադրական վերափոխումներ և ներգրավելով այդ գործընթացի մեջ նաև քրիստոնյա ժողովուրդների ներկայացուցիչներին:

2. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

1870–ական թթ. կեսերին Օսմանյան կայսրությունում ստեղծված ճգնաժամային իրավիճակը նպաստում էր վտարանդիությունից վերադարձած «նոր օսմանցիների» կազմակերպության անդամների գործունեության ակտիվացմանը: 1876 թ. մայիսն 30–ին գահ բարձրացավ երիտասարդ սուլթան Մուրադ Ե–ն: Լինելով մայրաքաղաքում գործող մասոնական կազմակերպության անդամ՝ նա նախապատվությունը տալիս էր ազատական գաղափարներին և հովանավորում էր սահմադրության կողմնակիցներ «նոր օսմանցիներին»: Նրանց մի մասը սուլթան Մուրադի կողմից ստացան բարձր պաշտոններ, մյուսները՝ հնարավորություն ազատորեն քարոզելու սահմանադրական վերափոխումների անհրաժեշտությունը: Առաջացավ սահմանադրական շարժումը:

Բրիտանացիները նպաստեցին, որ այդ շարժման առաջնորդի դերը ստանձնի իրենց հովանավորյալ Միդհատ փաշան: Նամըք Քեմալից, Ալի Սուավիից, Զիյա փաշայից և այլ «նոր օսմանցիներից» նա տարբերվում էր ցինիզմի հասնող ավելի մեծ քաղաքական ճկունությամբ, գլխավոր նպատակին հասնելու համար ժամանակավոր զիջումների գնալու պատրաստակամությամբ, ինտրիգներ նախապատրաստելու ունակությամբ: Լինելով իրականում ծայրահեղ հակաքրիստոնեական գաղափարների կրող, ինչպես ցույց է տրվել վերևում, նա 1876 թ. երկրորդ կեսի ընթացքում սկսեց հրապարակայնորեն հանդես գալ որպես սահմանադրության հռչակման և խորհրդարանական ընտրությունների միջոցով մուսուլմաններից և ոչ մուսուլմաններից կազմված խորհրդարանի ստեղծման կողմնակից: Նա հայտարարում էր, որ հարկավոր է ավելի վճռական միջոցներ ձեռնարկել կայսրությունը փլուզումից փրկելու և նրա ամբողջականությունը պահպանելու համար, և սահմանադրական վերափոխումները այդպիսի միակ միջոցն են:

Սահմանադրական վերափոխումները «նոր օսմանցիները» և Միդհատը կապում էին կայսրության ժողովուրդների «միաձուլման» իրականացման հետ: Այսպես՝ Փարիզում հրատարակված գրքում Միդհատը գրում էր. «Թուրքիան … պետք է կառավարվի սահմանադրական համակարգով, եթե կա լուրջ բարեփոխումներ կատարելու անկեղծ ցանկություն, իրականացնի տարբեր ժողովուրդների միաձուլումը, որը կհանգեցնի ժողովուրդների առաջադեմ զարգացմանը՝ անկախ նրանց կրոնական կամ ազգային պատկանելությունից: Դա դժվարությունների դեմ պայքարի միակ միջոցն է և այն միակ միջոցը, որը մենք ունենք արտաքին և ներքին թշնամիների դեմ պայքարելու համար»:

Անհրաժեշտ է նշել, որ «նոր օսմանցիների» սահմանադրական գաղափարները դրական արձագանք էին գտնում հպատակ քրիստոնյա ժողովուրդների ազատական, արևմտամետ գաղափարների կողմնակից գործիչների շրջանում: Նրանք հավատում էին, որ հնարավոր է եվրոպական առաջատար երկրների օրինակով արևմտականացնել և արդիականացնել Օսմանյան կայսրությունը և ապահովել հպատակ քրիստոնյա ժողովուրդների իրավահավասարությունը մուսուլմանների հետ: Նրանց մեջ կային գործիչներ, որոնք միամտորեն հավատում էին, որ սահմանադրության հռչակումով հնարավոր կլինի նույնիսկ ստանալ ինքնավարություն քրիստոնյա ժողովուրդների համար:

Այդ ազատական գործիչներն իրենց հույսերը կապում էին Միդհատ փաշայի հետ, քանի որ նա, ինչպես արդեն նշվել է վերևում, կարողացել էր ստեղծել իր մասին ազատական, արևմտամետ գործչի տպավորություն: Պատահական չէ, որ դեռևս տարիներ առաջ, երբ Միդհատ փաշան առաջին անգամ նշանակվեց *մեծ վեզիր*, Զմյուռնիայում հրատարակվող հայկական «Արևելյան մամուլ» ամսագիրը գրեց. «Ընթացիկ տարին կբացի նոր դարաշրջան Թուրքիայի վերակառուցման պատմության մեջ: Նույնիսկ 1839 թ. քրիստոնյաները այդքան ուրախ չէին, ինչքան այժմ»: Միդհատի հետ սերտորեն համագործակցում էին հայ ազատականների առաջնորդներ Գրիգոր Օտյանը և դոկտոր Սերվիչենը: Կան փաստեր, որոնք վկայում են, որ

հայ սարրաֆները ֆինանսական աջակցություն էին ցույց տալիս Միդհատին և թուրք սահմանադրականներին:

Մինչդեռ Օսմանյան կայսրության վիճակը 1876 թ. ամռան ամիսներին շարունակում էր ծանրանալ: Երկրի ներսում տեղի ունեցող ապստամբություններին և տնտեսական ճգնաժամին ավելացան խիստ անբարենպաստ արտաքին գործոնները: Հունիսի 30–ին պատերազմ հայտարարեց Սերբիան, հուլիսի 2–ին՝ Չեռնոգորիան: Ուժեղացավ եվրոպական երկրների և Ռուսաստանի ճնշումը՝ անհապաղ իրական բարենորոգումներ անցկացնելու և քրիստոնյաների դրությունը բարելավելու պահանջով: Բրիտանական դիվանագիտությունը դժվարանում էր անվերապահորեն օժանդակել Օսմանյան կայսրությանը, քանի որ երկրի հասարակական կարծիքում գերիշխում էին հակաթուրքական տրամադրությունները, ինչը արդյունք էր բուլղարական ապստամբության ճնշման ընթացքում թուրքական իշխանությունների ցուցաբերած աննախադեպ դաժանության դեպքերի մասին անգլիական մամուլի բազմաթիվ հրապարակումների: Կայսրության փլուզման վտանգը գնալով դառնում էր ավելի իրական: Դրան ավելացավ սուլթան Մուրադի ծանր հոգեկան խանգարումը, որն այլևս հնարավոր չէր քողարկել:

Կայսրության մի շարք բարձրագույն պաշտոնյաներ, համոզվելով, որ այլևս անհնարին է Մուրադի հետ կապել իրենց ծրագրերի իրականացումը, Միդհատի գլխավորությամբ գահընկեց արեցին Մուրադ Ե–ին: 1876 թ. օգոստոսի 31–ին նրանց կողմից գահ բարձրացվեց Աբդուլ Համիդ Բ–ն: Չունենալով որևիցե հենարան՝ երիտասարդ սուլթանը ստիպված էր ենթարկվել իրեն գահ բարձրացնողներին: Վերջիններիս առաջնորդ Միդհատ փաշան դեռևս մինչև գահ բարձրանալը ստիպել էր Աբդուլ Համիդին իր կամքին հակառակ երդվել, որ սուլթան դառնալուց հետո նա չի խոչընդոտի սահմանադրության հռչակմանը:

Արդեն սեպտեմբերին սուլթան Աբդուլ Համիդը արտոնեց սկսել սահմանադրության նախապատրաստումը: Այդ նպատակով ստեղծեց սահմանադրական հանձնաժողով՝ Միդհատի ղեկավարությամբ: Հանձնաժողովի կազմում ընդգրվեց նաև վեց քրիստոնյա: Նրանցից ամենաակտիվ գործունեությունն էր ծավալել Գրիգոր Օտյանը: Նրա համառ ջանքերի շնորհիվ սահմանադրության նախագծի տեքստում ընդգրկվեց 12–րդ հոդվածը, ըստ որի՝ կայսրության ոչ թուրք ժողովուրդներին իրավունք էր ընձեռվում օգտագործելու իրենց մայրենի լեզուն: Սակայն այդ դրույթը հետագայում հանվեց, քանի որ սուլթան Աբդուլ Համիդի կողմից սահմանադրության նախագծի վերջնական տեքստը հաստատելու նպատակով ստեղծված հատուկ կոմիտեն դեմ արտահայտվեց դրան: Կոմիտեի կողմից սուլթանին ներկայացված զեկուցագրում ասվում էր, թե Օսմանյան կայսրության ողջ պատմության ընթացքում նրա կազմի մեջ մտնող բոլոր ժողովուրդները հնարավորություն են ունեցել ազատ օգտագործելու իրենց ազգային լեզուները, ինչը նրանց միջև առաջացրել է «թշնամանք և անըմբռնողություն»: Հատուկ կոմիտեն նշում էր, որ ազգային լեզուներից օգտվելու իրավունքի պահպանումը կլիներ մեծ սխալ «պատմության առաջ»: Հիմք ընդունելով վերը նշված դրույթը՝ կոմիտեն առաջարկեց հայտարարել

թուրքերենը պետական լեզու և դարձնել նրա իմացությունը պետական ծառայության ընդունելու համար պարտադիր պայման: Այդ առաջարկին սուլթանը հավանություն տվեց, և սահմանադրության վերջնական տեքստի մեջ մտցվեց համապատասխան հոդված:

Սահմանադրության վրա աշխատանքներին զուգընթաց մուսուլմանական հոգևորականությունը ուժեղացնում էր հակաքրիստոնեական և հակասահմանադրական քարոզը: Կազմվեց դավադրություն, որի ղեկավարներն էին *ուլեմաների* դասի (մուսուլմանական հոգևորականության առավել կրթված հատվածի) ներկայացուցիչներ Մուհիէդդինն ու Շերիֆը, ինչպես նաև Ռըզա բեյը: Դավադիրները նպատակ ունեին ձերբակալելու Միդհատին և այլ սահմանադրականների և պահանջելու սուլթանից վերջ դնել սահմանադրական շարժմանը: Բրիտանական գործակալական ցանցի օգնությամբ դավադրությունը բացահայտվեց, նրա ղեկավարները ձերբակալվեցին: Դավադրության բացահայտումից հետո աշխատանքը սահմանադրության տեքստի վրա շարունակվեց: Դեկտեմբերի 13–ին նրա վերջնական տեքստը ստորագրվեց սուլթան Աբդուլ Համիդի կողմից: Սահմանադրության հռչակումը արագացնելու նպատակով դեկտեմբերի 19–ին Միդհատը հերթական անգամ զբաղեցրեց մեծ վեզիրի պաշտոնը:

Օսմանյան կայսրության ղեկավարները այդպես շտապում էին, քանի որ հույս ունեին օգտագործելու սահմանադրության հռչակումը որպես միջոց եվրոպական երկրների և մանավանդ Ռուսաստանի ճնշումը թուլացնելու և հերթական անգամ իրական բարենորոգումներ իրականացնելուց խուսափելու միջոց:

Դեկտեմբերի 23–ին Կոստանդնուպոլսում բացվում է Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Գերմանիայի, Ավստրո–Հունգարիայի և Ռուսաստանի ներկայացուցիչների խորհրդաժողովը, որի ընթացքում Օսմանյան կայսրությանը պետք է ներկայացվեր նախապես պատրաստված լայնածավալ բարենորոգումների ծրագիր պարունակող փաթեթ: Տերությունները պայմանավորվել էին ցուցաբերել միասնականություն և պարտադրել Բ. Դռանը ընդունել այն: Սակայն օսմանյան կառավարությունը մեծ վեզիր Միդհատ փաշայի գլխավորությամբ պատրաստել էր իր հակաքայլը: Խորհրդաժողովը սկսելուն պես լսվում են թնդանոթային համազարկեր և Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարար Սավֆեթ փաշան հայտարարում է, որ այդ համազարկերը ազդարարում են սահմանադրության ընդունումը, որ երկրի ողջ բնակչությունը, անկախ դավանանքից, արդեն ազատ են ու ցնծության մեջ են, և այդ պատճառով որևիցե այլ բարենորոգումների անհրաժեշտություն չկա: Նա առաջարկում է ավարտել խորհրդաժողովի աշխատանքները: Ստանալով տերությունների ներկայացուցիչների բացասական արձագանքը՝ օսմանյան պատվիրակությունը լքում է խորհրդաժողովը: Եվրոպական ներկայացուցիչները բնութագրեցին օսմանյան պատվիրակության նման գործելակերպը որպես «մանկամիտ»:

Այդպիսով՝ 1876 թ. դեկտեմբերի 23–ին օսմանյան առաջին սահմանադրությունը մտավ գործողության մեջ: Այն բաղկացած էր 12 բաժիններից և 119 հոդվածներից:

Առաջին 5 հոդվածները նվիրված էին սուլթանի իրավունքներին, որոնք, ըստ էության, համարյա չէին սահմանափակվում, և նա, ըստ էության, շարունակում էր մնալ երկրում բարձրագույն իշխանության միակ կրողը: Մասնավորապես կառավարությունը նշանակվում էր սուլթանի կողմից և պատասխանատու էր միայն նրա առջև: Դեռևս քննարկումների փուլում Աբդուլ Համիդի ճնշման ներքո սահմանադրության տեքստի մեջ մտցվեց 113–րդ հոդվածը, որը հնարավորություն էր տալիս սուլթանին ցանկացած պահի ցրելու խորհրդարանը: Սահմանադրության արդեն իսկ առաջին հոդվածները վկայում էին, որ այն շատ հեռու է իրական, գործող սահմանադրություն լինելուց: Նրա ընդունման բուն նպատակն էր Օսմանյան կայսրության վրա Մեծ տերությունների ճնշման թուլացումը:

Սահմանադրության 42–րդ հոդվածով նախատեսվում էր գումարել խորհրդարան, որը բաղկացած պետք է լիներ երկու պալատից: Վերին պալատի (Heyet–i Ayan) անդամները նշանակվում էին սուլթանի կողմից, իսկ ստորին պալատի (Heyet–i Mebusan) պատգամավորները ընտրվում էին *վիլայեթների* (նահանգների) կառավարման խորհուրդների անդամների կողմից փակ գաղտնի ընտրությունների արդյունքում կամ էլ նշանակվում էին նահանգապետերի կողմից:

1876 թ. Սահմանադրության գաղափարական հենքը կազմում էր օսմանիզմի հասարակական–քաղաքական հայեցակարգը: Այսպես, ըստ 8–րդ հոդվածի՝ բոլոր հպատակները հայտարարվում էին «օսմանցիներ»՝ անկախ իրենց ազգային և կրոնական պատկանելությունից: Միաժամանակ, ամրապնդվում էր թուրքերի և իսլամական կրոնի իշխող դիրքը՝ թուրքերենը հայտարարվում էր պետական լեզու, իսկ իսլամը՝ պետական կրոն: Բացի այդ՝ խորհրդարանի երկու պալատներում էլ թուրքերենը համարվում էր միակ աշխատանքային լեզուն, որի չիմացությունը խորհրդարան ընտրվելու արգելքներից մեկն էր: Սահմանադրության մեջ իրենց արտահայտումը ստացան նաև օսմանիզմի ուսմունքի այլ դրույթներ: Ըստ 16–րդ հոդվածի՝ կայսրության բոլոր դպրոցները, այդ թվում նաև քրիստոնյա ժողովուրդների, դրվում էին պետության անմիջական վերահսկողության ներքո: Մեկնաբանելով այս հոդվածը՝ Ռուսաստանի դեսպան կոմս Ն. Պ. Իգնատևը գրում էր, որ նրա կիրառումը գործնականում կնշանակեր «մահացու հարված հասցնել թուրքական քրիստոնյաների շրջանում լուսավորության գործին»:

Խորհրդարանական ընտրությունները տեղի ունեցան 1876 թ. վերջին ամիսներից 1877 թ. առաջին ամիսներին: Իրականում դրանք դժվար է անվանել ընտրություններ, քանի որ տեղական իշխանությունները լիովին վերահսկում էին գործընթացը և փաստացի նշանակում էին իրենց համար ցանկալի մարդկանց: Որոշ դեպքերում նահանգապետերը պարզապես կատարում էին տվյալ նահանգը ներկայացնող պատգամավորների նշանակում:

Արդյունքում՝ օսմանյան առաջին խորհրդարանի ստորին պալատի կազմը՝ ըստ կրոնական և ազգային պատկանելության, ունեցավ հետևյալ պատկերը. 115 պատգամավորից 46–ը ոչ մուսուլման էին, որոնցից 12–ը հայ էին:

Խորհրդարանի ստորին պալատի առաջին նիստը տեղի ունեցավ 1877 թ. մարտի 19–ին Բոսֆորի ափին գտնվող Դոլմաբահչե սուլթանական պալատի սրահներից մեկում: Ներկա էին կառավարության անդամներ, բարձրաստիճան պաշտոնյաներ, օտարերկրա դեսպաններ: Նիստը վարում էր սուլթանի կողմից օրենքի խախտումով ստորին պալատի նախագահ նշանակված հայտնի լեզվաբան Ահմեդ Վեֆիկ փաշան, որը նույնիսկ խորհրդարանի անդամ չէր: Սկսեց գործել նաև խորհրդարանի վերին պալատը, որի անդամները նշանակվում էին սուլթանի կողմից: Դրա 26 անդամներից 21–ը մուսուլման էին:

Երեք ամիս հետո խորհրդարանը սուլթանի հրամանով ցրվեց, և նշանակվեցին նոր ընտրություններ: 1877 թ. նոյեմբերին տեղի ունեցած ընտրությունների արդյունքում պատգամավորներ «ընտրվեցին» մեծ մասամբ նույն մարդիկ: Նոր խորհրդարանը, որը սկսեց գործել դեկտեմբերին, նույնպես ունեցավ երեքամսյա կյանք: 1878 թ. փետրվարին սուլթան Աբդուլ Համիդ Բ–ն Ռուսաստանի հետ պատերազմի պատրվակով ցրեց խորհրդարանը: Նոր ընտրություններ չնշանակվեցին: Հաջորդ ընտրությունները տեղի ունեցան 30 տարի հետո՝ երիտթուրքական հեղաշրջումից հետո:

Ձևականորեն սահմանադրությունը պահպանեց իր գոյությունը՝ չարգելվեց: Սակայն իրականում նա ոչ միայն չէր կիրառվում, այլ նույնիսկ բուն «սահմանադրություն» բառը դուրս մղվեց հանրային օգտագործումից: Այդպիսով փաստացի վերջ դրվեց սահմանադրական կարգերին: Կարճատև՝ ընդամենը մեկ տարի կյանք ունեցան դրանք, որը միանգամայն բացատրելի է, քանի որ դրանք չէին բխում Օսմանյան կայսրության զարգացման օրինաչափություններից, այլ արդյունք էին քաղաքական ինտրիգների:

Աբդուլ Համիդը չներեց Միդհատին՝ նրա ակտիվ մասնակցությունը 1876 թ. սահմանադրական շարժմանը: Տարիներ անց ուժեղացնելով իր դիրքերը՝ 1881 թ. նա կազմակերպեց Միդհատի ձերբակալությունը և հետագա դատավարությունը, որի ընթացքում վերջինս ստիպված էր ընդունել իր մեղքը 1876 թ. գահընկեց արված սուլթան Աբդուլ Ազիզի սպանության մեջ: Միդհատը դատապարտվեց մահապատժի: Բրիտանացիներին հաջողվեց միայն երկու տարով հետաձգել իրենց հովանավորյալի դատավճռի ի կատար ածումը: 1883 թ. Աբդուլ Համիդի հրամանով նա սպանվեց իր բանտախցում և գլխատվեց: Նրա գլուխը ուղարկվեց մայրաքաղաք և հանձնվեց անձամբ Աբդուլ Համիդին, որպեսզի նա համոզվի, որ Միդհատը սպանված է:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ 70–ԱԿԱՆ ԹԹ. ՎԵՐՋԻՆ — 1908 Թ.

1. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԻԴՅԱՆ «ԶՈՒԼՈՒՄԻ» ՇՐՋԱՆՈՒՄ

Աբդուլ Համիդ Բ–ն մտավ օսմանյան պատմության մեջ որպես բացարձակ բռնապետ, որի կառավարումը առանձնանում էր իր դաժանությամբ: Պատահական չէ, որ ժամանակակիցները նրան անվանում էին «արյունարբու» կամ «կարմիր», «գազան» և այլն:

Աբդուլ Համիդին հաջողվել էր ստեղծել բռնապետական, բիրտ ուժի վրա հիմնված բացարձակ միապետական կառավարման մի ամբողջ համակարգ, որը գոյատևեց շուրջ երեք տասնամյակ: Այդ տասնամյակները ընդունված է անվանել «զուլումի»՝ մեծ չարիքի դարաշրջան:

Համիդյան «զուլումի» շրջանի սկիզբը ազդարարվեց խորհրդարանը 1878 թ. փետրվարին սուլթանի կողմից ցրելով: Պատրվակը Ռուսաստանի հետ պատերազմում կրած ծանր պարտությունն էր: Այդ պատերազմը սկիզբ էր առել 1877–ի ապրիլի 24–ին, երբ Ռուսաստանը Թուրքիային պատերազմ հայտարարեց և անցավ հարձակման Բալկանյան թերակղզում՝ Ռումինիայի ուղղությամբ: Այն ընթանում էր երկու ռազմաճակատներում՝ Բալկանյան և Կովկասյան:

Բալկանյան ռազմաճակատում ռուսական բանակի հարձակումը ընդհանուր առմամբ հենց սկզբից ընթացավ հաջող և, օգտվելով բալկանյան ժողովուրդների զինված ուժերի օժանդակությունից, արդեն հաջորդ՝ 1878 թ. հունվարի 4–ին ռուսները գրավեցին Սոֆիան, հունվարի 8–ին՝ Ադրիանապոլիսը և նույն ամսվա վերջին հասան Կոստանդնուպոլսի մատույցներին: Թուրքական բանակը կարողացավ երկարատև դիմադրություն ցույց տալ միայն Պլևենի պաշարման ժամանակ, որի համար նրա հրամանատար Օսման փաշան ստացավ *Ղազի* պատվավոր տիտղոսը:

Օսմանյան կայսրության համարյա ողջ եվրոպական տարածքները հայտնվեցին ռուսական բանակի հսկողության ներքո: Միայն Կոստանդնուպոլիսը ռուսները չգրավեցին, քանի որ բրիտանական ռազմանավերը, փետրվարի 1–ին մտնելով Դարդանել, ակնհայտորեն հասկացրին, որ իրենք դա չեն հանդուրժի:

Կովկասյան ռազմաճակատում ռազմական գործողությունները ընթանում էին Հայաստանի և Վրաստանի տարածքում: Սկզբնական շրջանում թուրքական զորքերը, որոնք ունեին թվային առավելություն, օգտվելով Ռուսաստանի հարավում մուսուլմանական ժողովուրդների ապստամբություններից, մտան ռուսական տա-

ռածք և գրավեցին սևծովյան ծովեզրյա շրջանները, սակայն շատ արագ ստիպված էին նահանջել: 1877 թ. սեպտեմբերին ռուսական բանակը անցավ հարձակման և նոյեմբերի 6–ին՝ երեք շաբաթ տևած պաշարումից հետո, գրավեց կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող Կարս քաղաքը, ինչը կանխորոշեց օսմանյան բանակի պարտությունը նաև Կովկասյան ռազմաճակատում: Ռուսական բանակի կազմում աչքի էին ընկնում հայազգի գեներալներ Մ. Լոռիս–Մելիքովը, Ա. Տեր–Ղուկասովը, Բ. Շելկովնիկովը և Ի. Լազարևը: Մ. Լոռիս–Մելիքովը նշանակված էր կովկասյան ռազմաճակատում գործող ռուսական բանակի հիմնական ուժերի հրամանատար, Ա. Տեր–Ղուկասովը հրամանատարն էր Էրիվանյան խմբավորման, իսկ Ի. Լազարևը՝ Կարսը գրաված զորքերի:

1878 թ. հունվարի 21–ին Կովկասյան ռազմաճակատում կնքվեց զինադադար, որից հետո ռուսական բանակը փետրվարի 10–ին առանց մարտերի գրավեց Կարինը (Էրզրումը), որի երկարատև պաշարումը սկիզբ էր առել դեռևս 1877 թ. հոկտեմբերի 24–ից:

Շաբաթներ տևած բանակցություններից հետո՝ 1878 թ. մարտի 3–ին, Կոստանդնուպոլսի մատույցներում՝ Սան Ստեֆանո գյուղաքաղաքում, ստորագրվեց ռուս–թուրքական պայմանագիր, որը վերջ դրեց պատերազմին: Շատ արագ՝ արդեն մարտի 16–ին, կողմերը վավերացրին պայմանագիրը, և այն մտավ գործողության մեջ: Սան Ստեֆանոյում տեղի ունեցած բանակցություններում Օսմանյան կայսրությունը մնացել էր միայնակ, առանց դաշնակիցների, ինչը հնարավորություն տվեց ռուսներին, բանեցնելով ճնշում պարտված կողմի վրա, պարտադրել վերջինիս գնալ լուրջ զիջումների: Մասնավորապես Սերբիան, Ռումինիան և Չեռնոգորիան, որոնք մինչև այդ ունեին ինքնավար կարգավիճակ Օսմանյան կայսրության կազմում, ստացան անկախություն և ավելացրին իրենց տարածքները: Բուլղարիան ստացավ ինքնավարություն՝ կազմվեց մեծ տարածքներ զբաղեցնող Բուլղարական իշխանություն, որը ստանում էր ելք դեպի Սև և Էգեյան ծովեր: Նախատեսվում էր, որ ռուսական զորքը կմնա Բուլղարիայում երկու տարի: Փաստորեն, Օսմանյան կայսրության կազմում ձևականորեն ինքնավարության կարգավիճակ ստացած Բուլղարական իշխանությունը իրականում անցնում էր Ռուսաստանի ազդեցության ներքո և ապահովելու էր նրա համար ելք դեպի Միջերկրական ծով:

Համաձայն Սան Ստեֆանոյի պայմանագրի՝ Օսմանյան կայսրությունը վճարելու էր մեծ ռազմատուգանք, որի զգալի մասը նա համաձայնվեց մարել՝ զիջելով Ռուսաստանին Կարսը, Արդահանը, Բաթումը, Բայազետը, Ալաշկերտը: Կարինը ռուսները վերադարձրին թուրքերին:

Սան Ստեֆանոյի պայմանագրի որոշ հոդվածներ վերաբերում էին Հայաստանին: Դրանք, ինչպես նաև հետագայում կնքված Բեռլինի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող հոդվածները քննության են առնվում սույն գլխի համապատասխան ենթագլխում:

Սան Ստեֆանոյի պայմանագիրը դժգոհություն առաջացրեց երկրի ներսում և նույնիսկ հանգեցրեց հակահամիդյան դավադրության: Այն ղեկավարում էր «նոր

օսմանցիների» կազմակերպության անդամ Ալի Սուավին, որը հայտնի էր իր բուռն խառնվածքով և ժամանակակիցներից ստացել էր «գլխաշորով հեղափոխական» մականունը: Նրան հաջողվել էր ներգրավել դավադրության մեջ 200–300 մասնակիցների, որոնք աչքի էին ընկնում իրենց ծայրահեղ հակաքրիստոնեական հայացքներով: Նրանց հիմնական հատվածը կազմում էին Բալկանյան թերակղզում օսմանյան տարածքային կորուստների հետևանքով իրենց տները կորցրած և մայրաքաղաքում մեծ քանակությամբ կուտակված փախստականները, որոնք իրենց կորուստների համար քրիստոնյաներից բացի մեղադրում էին նաև սուլթան Աբդուլ Համիդին: Համաձայն որոշ աղբյուրների՝ դավադիրների այդ խումբը համագործակցում էր մեկ այլ գաղտնի խմբավորման հետ, որը բաղկացած էր մասոններից և նպատակ ուներ գահընկեց անելու Աբդուլ Համիդ Բ–ին ու երկրորդ անգամ սուլթան հռչակելու մեկ այլ մասոնի՝ նախկին սուլթան Մուրադ Ե–ին:

Դավադիրները Ալի Սուավիի ղեկավարությամբ 1878 թ. մայիսի 20–ին զինված ապստամբություն բարձրացրին և ծովից ու ցամաքից հարձակվեցին սուլթանական Չըրաղան պալատի վրա: Այդ պալատի անունով ապստամբությունը մտավ օսմանյան պատմության մեջ որպես «Չըրաղանի իրադարձություն»:

Պալատում հարձակվողներին արդեն սպասում էր Մուրադը: Ալի Սուվիին մի խումբ զինյալների հետ հաջողվեց թափանցել պալատ և հասնել մինչև Մուրադի սենյակը, սակայն վերջին պահին նրանք սպանվեցին Աբդուլ Համիդին հավատարիմ պահակազորի կողմից: Ալի Սուվիի սպանությունն ունեցավ որոշիչ նշանակություն: Ապստամբների մեծ մասը դիմեց փախուստի, մյուսները սպանվեցին կամ ձերբակալվեցին: Հետևած հետաքննությունը ղեկավարում էր անձամբ Աբդուլ Համիդը, նա վարում էր նաև հարցաքննությունները: «Չըրաղանի իրադարձությունը» խոր հետք թողեց Աբդուլ Համիդի վրա՝ դարձնելով նրան ավելի կասկածամիտ ու դաժան:

Սան Ստեֆանոյի պայմանագիրը դժգոհություն առաջացրեց նաև միջազգային թատերաբեմում: Մասնավորապես Բրիտանիան այն գնահատեց որպես Ռուսաստանին շատ մեծ առավելություններ ապահովող փաստաթուղթ և պահանջեց նրա վերանայում: Միաժամանակ բրիտանական դիվանագիտությունը ծավալեց բուռն անդրկուլիսյան գործունեություն, որի արդյունքում 1878 թ. հունիսի 4–ին ստորագրվեց գաղտնի բրիտանա–թուրքական համաձայնագիր: Այն նախատեսում էր Բրիտանիայի աջակցությունը Օսմանյան կայսրությանը Ռուսաստանի դեմ պայքարում և բարենորոգումների քաղաքականությունում, փոխարենը Կիպրոս կղզին, ձևականորեն մնալով թուրքերի ձեռքում, իրականում անցնում էր անգլիացիների հսկողության ներքո: Ըստ էության, այդ գաղտնի գործարքը սկիզբ դրեց Աբդուլ Համիդի շուրջ երեք տասնամյակ տևած գործունեությանը որպես ճարպիկ դիվանագետի, որի արդյունքում նրան հաջողվեց երկարաձգել քայքայվող Օսմանյան կայսրության գոյությունը:

Բրիտանիայի հակառուսական դիրքորոշումը կիսում էր նաև Ավստրո–Հունգարիան, որը ձգտում էր ի հաշիվ թուլացած Օսմանյան կայսրության ընդլայնելու իր

տարածքը Բալկանյան թերակղզում: Նորաստեղծ Գերմանական կայսրությունը պաշտոնապես բռնել էր չեզոք դիրք, սակայն իրականում աջակցում էր Բրիտանիային:

Ռուսաստանը, հայտնվելով դիվանագիտական մեկուսացման մեջ և պատրաստ չլինելով նոր պատերազմ մղելու, ստիպված էր համաձայնվել վերանայել Սան Ստեֆանոյի պայմանագիրը: 1878 թ. հունիսի 13–ին Գերմանական կայսրության մայրաքաղաք Բեռլինում բացվեց եվրոպական մի շարք երկրների և օսմանյան Թուրքիայի մասնակցությամբ վեհաժողով, որի շուրջ մեկամյա լարված աշխատանքը ավարտվեց Բեռլինի պայմանագրի ստորագրումով: Այն անբարենպաստ էր պատերազմում հաղթող կողմերի՝ Ռուսաստանի ու նրա սլավոնական դաշնակիցներ Բուլղարիայի, Սերբիայի և Չեռնոգորիայի համար: Մասնավորապես Ռուսաստանը ստիպված էր վերադարձնել Օսմանյան կայսրությանը Ալաշկերտը և Բայազետը: Սան Ստեֆանոյի պայմանագրով նախատեսված Բուլղարիայի տարածքը բաժանվում է երեք հատվածի, որոնցից մեկը՝ Մակեդոնիան, որը հնարավորություն էր տալիս բուլղարներին և նրանց միջոցով ռուսներին փաստացի ելք ստանալու դեպի Միջերկրական ծով, անվերապահորեն վերադարձվում էր թուրքերին, իսկ մյուսը՝ Արևելյան Ռումելիան, ստանում էր խիստ սահմնափակ ինքնավարություն Օսմանյան կայսրության կազմում: Բուն Բուլղարիայի իշխանությունը ընդգրկելու էր միայն Սոֆիան և նրան հարող տարածքները: Նրա ինքնավարությունը Օսմանյան կայսրության կազմում պահպանվում էր: Բեռլինի վեհաժողովի մասնակիցները համաձայնվեցին, որ Ավստրո–Հունգարիան գրավի Հերցեգովինան:

Համաձայն Բեռլինի պայմանագրի՝ Օսմանյան կայսրությունը կորցրեց իր տարածքի շուրջ երկու հինգերորդը, իսկ բնակչության՝ մեկ հինգերորդը, որը կազմում էր մոտ հինգուկես միլիոն: Այդ կորուստները օսմանյան Թուրքիայի պատմության ամենածանրերից էին:

1880–ական թթ. Օսմանյան կայսրության տարածքային կորուստները շարունակվեցին: 1881 թ. Ֆրանսիայի գերիշխանության տակ անցավ Թունիսը, մեկ տարի անց բրիտանացիները գրավեցին Եգիպտոսը: Շարունակվեց տարածքային կորուստների շարանը Բալկանյան թերակղզում. Հունաստանի հետ վերամիավորվեց պատմական Թեսալիան, իսկ Բուլղարիայի հետ՝ Արևելյան Ռումելիան: Ընդհանուր առմամբ, Աբդուլ Համիդ Բ–ի կառավարման շրջանում Օսմանյան կայսրության տարածքային կորուստները կազմեցին նրա ողջ տարածքի մինչև երկու հինգերորդը, իսկ բնակչության կորուստները՝ ընդհանուր բնակչության մեկ հինգերորդը, որը կազմում էր մոտ հինգուկես միլիոն մարդ: Ընդ որում՝ նրանց մոտ կեսը կազմում էին մուսուլմանները:

Անշեղորեն ուժեղանում էին թուրքական լծի դեմ ուղղված հպատակ ժողովուրդների ազատագրական շարժումները: Դրանցից ամենավտանգավորը օսմանյան իշխանությունների տեսակետից հայ ժողովրդի հերոսական ֆիդայական շարժումն էր: Գնալով ծանրանում էր երկրի սոցիալ–տնտեսական կացությունը, ավելի

ակնհայտ էր դառնում նրա հետամնացությունը: Ուժեղանում էր կախվածությունը օտարերկրյա կապիտալից:

Քայքայվող Օսմանյան կայսրությունը հայտնվել էր վերջնական փլուզման եզրին: Աբդուլ Համիդ Բ–ի գործունեությունը ուղղված էր այդ վտանգը հնարավորինս հեռացնելուն: Ներքին քաղաքականության մեջ նա այդ նպատակին հասնելու համար սկսեց քայլ առ քայլ կառուցել դաժան բռնապետական կառավարման համակարգ: Այն հիշեցնում էր բուրգ, որի գագաթին սուլթանական պալատն էր՝ Յըլդըզ քյոշքը: Կայսրության արտաքին և ներքին քաղաքականությունը մշակվում էր սուլթանական պալատում, իսկ կառավարությունը պարզ կատարողի դերում էր: Օսմանյան արխիվների վավերագրերը վկայում են, որ Աբդուլ Համիդը հեռագրական կապի միջոցով անձամբ ղեկավարում էր նաև տեղական իշխանությունների գործունեությունը՝ տալով նրանց համապատասխան կարգադրություններ՝ այդպիսով շրջանցելով կառավարությանը: Կարևոր որոշումները նախապատրաստելու համար սուլթանական պալատում ստեղծվել էին առանձին գրասենյակներ, որոնց ղեկավարները վայելում էին սուլթանի կատարյալ վստահությունը:

Համիդյան «զուլումի» շրջանի կառավարման համակարգի կարևորագույն առանձնահատկությունն էր նրա ոստիկանական բնույթը: Երկրում գործում էր խիստ ոստիկանական հսկողության համակարգ, որի հիմքը կազմում էին գաղտնի գործակալները՝ «ժորնալջիները», որոնք գրում էի գաղտնի զեկուցագրեր այս կամ այն իրադարձության, կազմակերպության կամ անհատի մասին: Ըստ էության, դրանք մատնիչներ էին, որոնք վարձատրվում էին իշխանությունների կողմից: Բազմաթիվ տեղեկություններ կան, որոնք փաստում են, որ բոլոր մատնությունները ուղարկվում էին սուլթանական պալատ, որտեղ Աբդուլ Համիդն ամեն օր ժամեր էր հատկացնում դրանց հետ ծանոթանալուն: Դրան հետևում էին նրա հրամանները. ձերբակալել, հարցաքննել, տանջել, կախաղան բարձրացնել… 1908 թ.՝ հուլիսյան երիտթուրքական հեղաշրջումից հետո, հայտնի դարձան շատ մատնիչների անուններ, որոնց թվում էին ինչպես շարքային հպատակներ, այնպես էլ պետական բարձրագույն պաշտոնյաներ:

Սուլթանի հրամանով հաստատվել էր խստագույն գրաքննություն: Այն գործում էր հանրային կյանքի շատ ոլորտներում՝ կրթական և մշակութային հաստատություններում, մամուլում և գրականության մեջ՝ շատ դեպքերում ձեռք բերելով զավեշտալի բնույթ: Արգելված էին «հեղափոխություն», «բռնապետություն», «ազատություն» և նույնիսկ «վերածնունդ» ու նմանատիպ բազմաթիվ այլ բառերի օգտագործումը, համաշխարհային համբավ վայելող եվրոպացի գրողների ստեղծագործությունները, արտասահմանյան մամուլը: Նույնիսկ Շեքսպիրի «Համլետը» արգելված էր, քանի որ Աբդուլ Համիդը մտավախություն ուներ, որ դանիական թագավորի սպանությունը կարող էր դրդել օսմանահպատակներին իրենց սուլթանի սպանությանը… Բազմաթիվ արգելքների խախտումը հանգեցնում էր ծանրագույն պատիժների, որոնցից չէին կարող խուսափել նույնիսկ բարձրագույն պաշտոնյաները: Սուլթանի կասկածամտությունը սահման չուներ: Կայսրության բնակչությունը՝

ինչպես շարքային հպատակները, այնպես էլ բարձրագույն պաշտոնյաները, նրա խիստ հսկողության ներքո էր:

Կայսրության տարածքով մեկ գործում էին բազմաթիվ բանտեր, որոնք լեփ–լեցուն էին: Բանտարկյալների նկատմամբ կիրառվում էին ամենադաժան կտտանքները և տանջանքները: Շատ դեպքերում մահապատիժները ի կատար էին ածվում հրապարակայնորեն՝ Է՛լ ավելի ուժեղացնելով կայսրությունում տարածում գտած համատարած վախի մթնոլորտը:

Փորձելով գտնել գաղափարական հիմնավորում իր կողմից հաստատած կառավարման այդպիսի դաժան համակարգի համար՝ Աբդուլ Համիդը սկսեց օգտագործել այն ծայրահեղ իսլամական արմատականության ու ջիհադիստական հակաքրիստոնեության տարրերը, որոնք լայն տարածում էին գտել դեռևս Թանզիմաթի դարաշրջանում որպես հակազդեցություն արևմտամետ բարենորոգումներին՝ հավելելով դրանք նոր ձևավորվող համաիսլամականության գաղափարներով: Ներմուծելով այդ գաղափարները իր ներքին քաղաքականության մեջ՝ Աբդուլ Համիդը մի կողմից՝ ձգտում էր համախմբելու կայսրության թուրք և ոչ թուրք մուսուլման բնակչությանը իր իշխանության ներքո, մյուս կողմից՝ հրահրում էր նրան քրիստոնյա ժողովուրդների դեմ, որոնց համարում էր իր ամենավտանգավոր թշնամիները:

Այդ ջիհադիստական հակաքրիստոնեական գաղափարները իրական քաղաքականության մեջ ներդնելու նպատակով 1890 թ. սուլթանի հրամանով ստեղծվեցին իր իսկ անունը կրող «համիդիե» հեծելազոր գնդերը: Նրանք կազմվում էին քրդերից, տեղակայվում էին հիմնականում Արևմտյան Հայաստանի նահանգներում և ենթարկվում էին միայն սուլթանական պալատից ուղարկվող հրամաններին: Նրանք «աչքի ընկան» իրենց վայրագություններով արդեն մի քանի տարի հետո՝ 1894–1896 թթ. հայկական կոտորածների ժամանակ:

Աբդուլ Համիդը փորձեր ձեռնարկեց օգտագործելու պանիսլամիստական գաղափարները նաև արտաքին քաղաքականության բնագավառում՝ փորձելով համախմբել Բրիտանական ու Ռուսական կայսրությունների մուսուլմաններին իր՝ որպես խալիֆի շուրջը և օգտագործել այդ հանգամանքը որպես ճնշման միջոց այդ երկրների դեմ: Սակայն այդ քաղաքականությունը տապալվեց, քանի որ օսմանյան սուլթան–խալիֆի հեղինակություն չէր վայելում մուսուլմանական աշխարհում: Նա ստիպված էր ապավինել իր դիվանագիտության ճարպկության ու խորամանկության վրա՝ փորձելով դրանց օգնությամբ պահպանել ծանր ճգնաժամի մեջ եղած կայսրության տարածքային ամբողջականությունը: Այդ քաղաքականության շնորհիվ Աբդուլ Համիդին հաջողվեց տասնամյակների ընթացքում խուսափել, համաձայն 1878 թ. Բեռլինի պայմանագրի 61–րդ հոդվածի, Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու պարտավորությունը կատարելուց:

Սուլթանի ճարպկությունը դիվանագիտական թատերաբեմում չօգնեց պահպանելու Կրետեն Օսմանյան կայսրության կազմում նույնիսկ այն դեպքում, երբ թուրքերին հաջողվել էր պարտության մատնել Հունաստանին, որը օգնության էր եկել զինված ապստամբություն բարձրացրած կրետացիներին: Աբդուլ Համիդը ստիպ-

ված էր համաձայնություն տալ Կրետեի փաստացի ազատագրմանը թուրքական լծից:

Աբդուլ Համիդի կառավարման տարիները, սկսած 1880–ական թթ., համընկան Օսմանյան կայսրության նկատմամբ Մեծ Բրիտանիայի քաղաքականության փոփոխման հետ: Բրիտանացիներն այլևս շահագրգռված չէին ամեն գնով պահպանել նրա տարածքային ամբողջականությունը, քանի որ իրենք էին ձգտում թուրքերից վերցնելու Եգիպտոսը և Միջագետքը: Այդ պայմաններում սկսեց ձևավորվել Օսմանյան կայսրության դաշինքը նորաստեղծ Գերմանական կայսրության հետ, ինչը հնարավորություն էր տալիս համիդյան դիվանագիտությանը պահպանելու մանևրելու հնարավորությունը: Օգտագործելով այդ՝ օսմանյան իշխանություններին հաջողվում էր ոչ միայն վիժեցնել Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու իր պարտավորությունները, այլև կազմակերպել արևմտահայերի զանգվածային կոտորածներ և մնալ անպատիժ: Սակայն միաժամանակ գնալով ուժեղանում էր կայսրության կախվածությունը օտար երկրներից, որի արտահայտումն էր, օրինակ, 1881 թ. ստեղծված «Օսմանյան հանրային պարտքի կառավարում» կազմակերպությունը, որը իրավունք ստացավ հավաքագրելու պետական հարկերի ու մաքսերի մի մասը և ուղղելու դրանք արտասահմանյան պարտքի մարմանը: Այն ղեկավարվում էր Ֆրանսիայի, Գերմանիայի, Բրիտանիայի, Ավստրո–Հունգարիայի և Իտալիայի ներկայացուցիչների կողմից:

Իրենց արտոնյալ դիրքից՝ որպես Օսմանյան կայսրության դաշնակից, լայնորեն օգտվում էին գերմանացիները: Նրանք 1903 թ. իրավունք ստացան ավարտին հասցնելու Բաղդադի հայտնի երկաթգիծը, որը, սկիզբ առնելով Բեռլինում, պետք է Օսմանյան կայսրության տարածքով հասներ մինչև Բաղդադ՝ այդպիսով ապահովելով Գերմանիայի դիրքերի ուժեղացումը ոչ միայն այդ երկրում, այլև ողջ Մերձավոր Արևելքում: Օսմանյան կայսրությունը իր հերթին օգտվեց Գերմանիայի հետ դաշնակցային հարաբերություններից՝ 1882 թ. դիմելով վերջինիս խնդրանքով օգնել արդիականացնել բանակը: Գերմանացիները արձագանքեցին այդ խնդրանքին և ուղարկեցին Պրուսական ռազմական ակադեմիայի դասախոս և գերմանական բանակի Գլխավոր շտաբի աշխատակից Կոլմար ֆոն դեռ Գոլցին, որը 13 տարվա ընթացքում բուռն գործունեություն ծավալեց այդ ուղղությամբ և ստացավ թուրքական բանակի մարշալի (*մյուշիրի*) զինվորական կոչումը:

Շուրջ երեք տասնամյակ տևած «զուլումի» շրջանի արդյունքում Օսմանյան կայսրությունը հայտնվեց ծանր քաղաքական և սոցիալ–տնտեսական վիճակում՝ վերջնական քայքայման եզրին:

Այդ տարիներին սուլթան Աբդուլ Համիդ Բ–ն ստեղծել էր մարդկային պատմության ամենադաժան և բռնատիրական կառավարման համակարգերից մեկը, որին զոհ գնացին հարյուր հազարավոր հպատակներ: Ծայրահեղ կասկածամտությամբ տառապող բռնակալը երկրում հաստատել էր համատարած վախի մթնոլորտ: Մոլեգնում էր գաղտնի ոստիկանությունը, զանգվածային բնույթ էին ստացել մատնությունները:

Սակայն Աբդուլ Համիդին այդպես էլ չհաջողվեց ապահովել իր ստեղծած «զուլումի» համակարգի կայունությունը: Միայն այն փաստը, որ, օրինակ, 1878–1896 թթ. ընթացքում երկիրն ունեցել է 14 վարչապետ (*սադրազամ*), շատ բանի մասին է խոսում: Չհաջողվեց նաև կանխել վտանգավոր մահափորձը սուլթանի դեմ: Գաղտնի ոստիկանությունն ի զորու չեղավ կանխել: Միայն պատահականությունը փրկեց «արյունարբու սուլթանի» կյանքը ՀՅԴ–ի կողմից 1905 թ. հուլիսի 21–ին Կոստանդնուպոլսում իրականացված մահափորձը:

Աբդուլ Համիդի կառավարման տարիներին առաջացավ և նրա քաղաքականության վրա մեծ ազդեցություն ձեռք բերեց Հայկական հարցը՝ փաստորեն կլանելով իր մեջ Արևելյան հարցը: Այն միջազգային դիվանագիտության թատերաբեմ իջավ 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմում օսմանյան Թուրքիայի ջախջախիչ պարտությանը հետևած Սան Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերով և ձևակերպվեց որպես Օսմանյան կայսրության տիրապետության ներքո գտնվող Արևմտյան Հայաստանում օսմանյան կառավարության կողմից բարելավումներ ու բարենորոգումներ անցկացնելու հարց: Այդպիսով՝ Հայկական հարցը հանդես եկավ աղճատված տեսքով, քանի որ նրա բուն էությունն էր Հայկական բարձրավանդակում հայոց ամբողջական պետականության վերականգնումը:

Արևմտահայության առաջնորդները փորձեցին ներազդել ժամանակի առաջատար պետությունների վրա՝ առաջ քաշելով Օսմանյան կայսրության կազմում Արևմտյան Հայաստանի ինքնավարության գաղափարը, սակայն այն չընդունվեց մեկը մյուսի դեմ կատաղի դիվանագիտական պայքարի մեջ ներգրավված ու հայ ժողովրդի առաջարկներն անտեսող եվրոպական պետությունների և Ռուսաստանի կողմից: Եթե Սան Ստեֆանոյի պայմանագրում հիշատակվում էր Հայաստանը, ապա Բեռլինի վեհաժողովը պայմանագրի 61–րդ հոդվածով դուրս թողեց մեր երկրի անունը պարունակող նրա սկզբնամասը, ուստի մնաց «հայաբնակ վայրեր» անորոշ արտահայտությունը, որտեղ օսմանյան կառավարությունը պարտավորվում էր իրագործել «տեղական կարիքներից բխող բարելավումներ և բարենորոգումներ»:

Հայկական հարցի միջազգայնացումն ուներ իր և՛ դրական կողմերը, քանի որ նպաստեց նրա՝ թեկուզ և աղճատված տեսքով, միջազգային քաղաքականության թատերաբեմում տեղ գտնելուն, և՛ բացասական, քանի որ միջազգային քննարկումներից դուրս մղելով հայոց պետականության վերականգնման հարցը և այն փոխարինելով օսմանյան իշխանությունների կողմից բարենորոգումներ անցկացնելու մասին խոստումներով՝ ոչ միայն չկարողացավ ապահովել նույնիսկ դրանց իրականացումը, այլև կասեցնել այդ իշխանությունների հայաջինջ քաղաքականության է՛լ ավելի սաստկացումը:

Բեռլինի պայմանագրից երկու տարի անց՝ 1880–1881 թթ., այն ստորագրած վեց երկրները Մեծ Բրիտանիայի նախաձեռնությամբ պահանջեցին Օսմանյան կայսրությունից իրականացնել Արևմտյան Հայաստանում խոստացված բարենորոգումները, սակայն օգտագործելով տերությունների միջև գոյություն ունեցող հակասությունները և սուտ խոստումներ տալով՝ սուլթանին հաջողվեց խուսափել վերցրած

պարտավորությունների կատարումից: Իրականում Աբդուլ Համիդը ոչ մի մտադրություն չուներ բարենորոգումներ իրականացնելու Արևմտյան Հայաստանում և բարելավելու արևմտահայության վիճակը, քանի որ հավատացած էր, որ բարենորոգումները կհանգեցնեն Արևմտյան Հայաստանի՝ ինքնավար կարգավիճակի ձեռքբերմանը և հետագայում անկախացմանը: Հատկանշական է նրա խոստովանությունը Գերմանիայի կայսրին. «Նախընտրում եմ մեռնել, քան թե ընդունել Արևելյան Անատոլիան [Արևմտյան Հայաստանը — Ռ. Ս.] ինքնավարության տանող բարենորոգումները»:

Խուսափել բարենորոգումներից կարելի էր՝ վերացնելով Արևմտյան Հայաստանի հայ ազգաբնակչությանը: Այդպիսով՝ հայ ժողովրդի բնաջնջումն իր պատմական հայրենիքի տարածքում դարձավ Աբդուլ Համիդի քաղաքականության հիմնական նպատակը՝ սկիզբ դնելով Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության քաղաքականությանը: Նրա երկարամյա անձնական քարտուղար Թահսին փաշան իր հուշերում խոստովանում էր, որ սուլթանը որոշել էր «հայերի դեմ վարել բռնությունների քաղաքականություն»:

Հայոց ցեղասպանության համիդյան փուլի քաղաքականության նախապատրաստումն ունեցել է մի շարք առանձնահատկություններ: Թերևս նրանցից ամենակարևորն այն է, որ այն, ի տարբերություն երիտթուրքերի շրջանի ցեղասպանության, ընթացել է կառավարող քաղաքական կուսակցության բացակայության պայմաններում: Դրա հետևանքով ողջ նախապատրաստական աշխատանքը տեղի է ունեցել համիդյան պետական կառավարման բարձրագույն մարմնի՝ սուլթանական պալատի ընդերքում և ղեկավարվել է անձամբ Աբդուլ Համիդի կողմից: Նրա մոտեցումը հայ ժողովրդի նկատմամբ շատ հստակ կերպով արտահայտվեց հետևյալ բնութագրման մեջ, որը մեջբերում են հենց թուրք հեղինակները. «Հայերը դեգեներացված ժողովուրդ են… Նրանք միշտ ծառաներ են եղել»: Պատահական չէր, որ հայ ժողովրդի մասին նման կարծիք ունեցող թուրք սուլթանն ընտրել էր Հայկական հարցը Հայաստանը հայաթափ անելու միջոցով լուծելու ճանապարհը: Եվ այդ ցեղասպան քաղաքականության հեղինակը կյանքի վերջում գրի առված իր հուշագրություններում դեռ զարմանում էր, թե ինչու են իրեն անվանում «Կարմիր գազան»…

Սուլթանական *Յըլդըզ քյոշք* պալատում տեղակայված գրասենյակներից մեկը պաշտոնապես կազմված էր երկու հանձնաժողովներից, որոնք պատասխանատու էին Հիջազի երկաթգծի կառուցման և ֆինանսական հարցերի համար, սակայն իրականում այդ գրասենյակը հույժ գաղտնիության պայմաններում զբաղվում էր Հայկական հարցով: Նրա ղեկավարն էր Իզզեթ փաշան, որը կարևոր դերակատարում ուներ Աբդուլ Համիդի կառավարման համակարգում: Սուլթանի քարտուղար Թահսին փաշայի վկայությամբ՝ նա միջնորդի դեր էր կատարում Աբդուլ Համիդ Բ–ի և պետական բարձրագույն պաշտոնյաների միջև՝ փոխանցելով վերջիններիս սուլթանի հրամանները, այդ թվում նաև հայերին վերաբերող: Համաձայն լավատեղյակ աղբյուրների տեղեկությունների՝ Իզզեթ փաշան վստահ էր, որ Հայկական հարցին

կարելի է վերջ տալ՝ վերացնելով հայերին: Այդ առումով նա լիովին միակարծիք էր արյունարբու սուլթանի հետ: Վերը նշված մոտեցումը կիսում էին նաև կայսրության բարձրագույն պաշտոնյաներից շատերը: Այսպես, օրինակ՝ արդեն Բեռլինի վեհաժողովից շատ ժամանակ չանցած օսմանյան հայտնի գործիչ և բազմամյա *սադրազամ* (կառավարության նախագահ, վարչապետ) Քյամիլ փաշան եկավ եզրակացության, որ «հայ ազգին» անհրաժեշտ է վերացնել և այդպիսով խուսափել Արևմտյան Հայաստանում Մեծ տերությունների կողմից պարտադրված բարենորոգումների անցկացումից:

Հայոց ցեղասպանության առաջին փուլի հեղինակները որպես իրենց հանցավոր քաղաքականության գաղափարական հիմնավորում օգտագործում էին համաիսլամականության և դեռևս նոր ձևավորվող համաթուրքականության հասարակական–քաղաքական վարդապետությունները:

Համաիսլամականությունը երկրի ներսում օգտագործվում էր որպես գաղափարական միջոց կայսրության տարածքային ամբողջականությունը պահպանելու համար: Այդ մասին շատ են գրում թուրք և արտասահմանցի հեղինակները՝ անտեսելով այն փաստը, որ համաիսլամականությունը օգտագործվեց նաև որպես հայկական կոտորածները «տեսականորեն» հիմնավորելու և մուսուլման թուրքերին ու քրդերին հայերի՝ որպես քրիստոնյաների դեմ գրգռելու միջոց: Պատահական չէ, որ ժամանակի Ավստրո–Հունգարիայի դեսպանը Կոստանդնուպոլսում, որը ականատեսն էր հայկական ջարդերի, պատկերավոր բնութագրում էր նրանց որպես «քրիստոնյաների դեմ ուղղված մուսուլմանների խաչակրաց արշավ»:

Համաիսլամականության քարոզչությունը իրականացվում էր ինչպես հրապարակային միջոցներով, այնպես էլ գաղտնի, ինչի համար օգտագործվում էին իսլամական միստիկական եղբայրությունների ղեկավարները՝ շեյխերը և մոլլաները, որոնք շրջում էին երկրով մեկ և թուրքերին ու քրդերին լարում «գյավուր» հայերի դեմ: Այդպիսով՝ կայսրության հայ ազգաբնակչությունը սկսեց դիտարկվել նրանց կողմից որպես Օսմանյան կայսրությանը թշնամի քրիստոնյա աշխարհի ներկայացուցիչ, որը ենթակա էր ոչնչացման: Հետագայում՝ ջարդերի ժամանակ, մուսուլմանական մոլեռանդությունը ամբոխին հայերի դեմ գրգռելու հիմնական միջոցն էր:

Համիդյան շրջանում սկսեցին զարգանալ նաև համաթուրքականության վարդապետության՝ պանթյուրքիզմի որոշ տարրեր, որոնք երիտթուրքերի կառավարման տարիներին հիմք դարձան նրա՝ պետական գաղափարախոսության վերաճման համար: Այդ տարրերից էր «թուրքական Անատոլիայի» հայեցակարգը: «Անատոլիա» բառով փոխարինվեց Փոքր Ասիա ընդունված եզրույթը, և Անատոլիան սկսեց պրոպագանդվել որպես բացառապես օսմանյան թուրքերին պատկանող «թուրքական հայրենիքի» մի կարևորագույն տարածաշրջան, որն իր մեջ ընդգրկում էր նաև հին ժամանակներում նրա մի մասի վրա գոյություն ունեցած Հայաստանը: Որոշ թուրք հեղինակներ սկսեցին նույնիսկ պնդել, որ հայերի նախնիները ոչ մի կապ չունեն ներկայիս հայերի հետ և եղել են թուրքեր: Կային հեղինակներ,

որոնք պնդում էին, որ Անատոլիայի քրիստոնյաները իրականում թուրքեր են, որոնք տարբերվում են նրանցից միայն կրոնով:

Աղբյուրները վկայում են, որ արդեն 1890–ական թթ. սկզբներից սուլթանը և նրա մերձավորները սկսեցին հայերի զանգվածային կոտորածների անմիջական ծրագրավորումը: Այդ են վկայում և՛ բրիտանական դիվանագիտական, և՛ թուրքական աղբյուրները: Այսպես, օրինակ՝ անգլիացի հոգևորական Մալքոլմ Մաքքոլը, ուսումնասիրելով Օսմանյան կայսրությունում տեղակայված բրիտանացի հյուպատոսների հաղորդագրությունները, հանգել է եզրակացության, որ հայկական կոտորածների ծրագիրը սկսվել է նախապատրաստվել 1890 թ. ամռանից: Ռիզեում Ռուսաստանի փոխհյուպատոս Ալեքսանդր Գիպիուսը նույնպես բացահայտել էր հայկական կոտորածների համիդյան քաղաքականության կանխամտածված լինելու հանգամանքը: Նա իր կազմած վերլուծական գրությունում ընգծում էր, որ սխալ կլինի թուրքական իշխանությունների կողմից կազմակերպված կոտորածները բնութագրել որպես պատասխան գործողություններ հայ «ագիտատորների» ցուցաբերած ակտիվության նկատմամբ: Ռուս դիվանագետը, բարեխիղճ կերպով վերլուծելով բազմաթիվ փաստեր, հանգում է եզրակացության, թե թուրքերի կողմից տարիների ընթացքում կազմակերպվող հայերի հալածանքները մաս են կազմում ներքին քաղաքականության ծրագրի և, մաթեմատիկայի լեզվով ասած, «մշտական մեծություն են», այսինքն՝ շարունակվելու են անկախ այն գործողություններից, որոնք կձեռնարկեն հայերը:

Հայոց ցեղասպանության համիդյան ծրագրի ամբողջական տեքստը դեռևս չի հաջողվել հայտնաբերել: Սակայն վերլուծելով թուրքական իշխանությունների հետագա գործողությունները՝ կարելի է հանգել եզրակացությունների նրա որոշ դրույթների վերաբերյալ: Սուլթան Աբդուլ Համիդի անձնական քարտուղարներից Մուսթաֆա Նեդիմը իր հուշագրություններում նշում է, որ «Համիդիե» հեծելազորային ջոկատները սկսեցին կազմավորվել 1890 թ. հուլիսի 27–ի Քում Քափուի հայտնի ցույցից որոշ ժամանակ անց: Նրանց ստեղծումը վկայում էր, որ հայ ժողովրդի բնաջնջման համիդյան ծրագիրն արդեն հիմնականում պատրաստ էր, քանի որ հետագայում «Համիդիե» մարդասպանական ջոկատները օգտագործվեցին սուլթանական իշխանությունների կողմից որպես հայ խաղաղ ազգաբնակչության զանգվածային սպանդն իրականացնող կարևորագույն միջոց:

Համիդյան հրեշավոր ծրագիրը սկսեց իրականացվել հայոց ազատագրական շարժման կարևոր կենտրոններից մեկում՝ Սասունում, արդեն 1892 թվականից: Երկու տարի անց՝ 1894 թվականին, ինչպես հաղորդում էին ռուսական դիվանագիտական աղբյուրները, կայսրության բանտերը արդեն լցված էին հայերով:

Արյունալի զանգվածային կոտորածները սկիզբ առան այդ նույն՝ 1894 թ.: Նրանք տեղի ունեցան Սասունում ու Մշո դաշտում: Մասնակցեցին ինչպես «Համիդիե» ջոկատները և օսմանյան կանոնավոր բանակի ստորաբաժանումները, այնպես էլ հազարավոր թուրք ու քուրդ *բաշիբոզուկներ*՝ հրոսակներ: Նրանք սրի քաշեցին շուրջ 10 հազար հայերի: Դրան հաջորդեցին խաղաղ հայ ազգաբնակչության դաժան

զանգվածային կոտորածները Արևմտյան Հայաստանի և կայսրության հայաբնակ այլ բնակավայրերում, ինչպես նաև մայրաքաղաքում՝ Կոստանդնուպոլսում՝ օտարազգի դիվագետների աչքի առջև, որտեղ զոհերի թիվը հասավ մի քանի հազարի:

Ականատեսների վկայությամբ՝ կոտորածները տարբեր բնակավայրերում տեղի էին ունենում նույն սցենարով՝ ուրբաթ օրվա կեսօրյա աղոթքի՝ *հուտբայի* ընթացքում *իմամը* մեղադրում էր հայերին դավաճանության մեջ և գրգռելով մզկիթում հավաքված մուսուլմանների հակաքրիստոնեական զգացմունքները՝ կոչ էր անում պատժելու հայերին: Նա էլ սովորաբար ուղղորդում էր ամբոխին դեպի տվյալ բնակատեղիի հայերի տները և թաղամասերը: Հայերի տները նախապես նշած էին լինում հատուկ նշաններով: Զանգվածային սպանությունները իրականացվում էին հիմնականում *համիդիե* ջոկատների և զինված ոստիկանների կողմից, որոնք նախապես բերվում էին տվյալ բնակավայր: Սպանություններին հետևում էին հայերի ունեցվածքի կողոպուտը, հրկիզումները… Կոտորածներին նախորդում էր նահանգապետերի «նախապատրաստական» աշխատանքը՝ համապատասխան սուլթանական պալատից ստացված հրահանգների: Այդ հրահանգները փոխանցվում էին Օսմանյան կայսրությունում արդեն տարածվող հեռագրական ցանցով: Մասնագետների բնութագրմամբ՝ դա առաջին դեպքն էր պատմության մեջ, երբ հեռագրական մեքենաները և ցանցը օգտագործվեցին զանգվածային կոտորածներ իրականացնելու նպատակով: Կոտորածները ուղեկցվում էին զանգվածային բռնի մուսուլմանացման գործընթացով:

Տարբեր բնակավայրերում տեղի ունեցած խաղաղ հայ ազգաբնակչության զանգվածային կոտորածների իրականացման մեթոդների միջև նմանությունը վկայում է, որ դրանք կազմակերպվել էին՝ համաձայն նախապես մշակված ծրագրի, որը նախապատրաստվել էր երկրի բարձրագույն իշխանության կենտրոնում՝ սուլթանական «Յըլդըզ» պալատում գործող արդեն հիշատակված գրասենյակում: Ժամանակակից ընկալումներով՝ համիդյան կոտորածները կարելի է բնորոշել որպես ցեղասպանական գործողություններ: Փաստորեն, նրանք սկիզբ դրեցին հայոց ցեղասպանության քաղաքականությանը, որը շարունակեցին երիտթուրքերը և քեմալականները:

Ընդհանուր առմամբ, Հայոց ցեղասպանության համիդյան փուլին զոհ գնացին շուրջ երեք հարյուր հազար մարդ, շուրջ հարյուր հազարը ենթարկվեցին բռնի մուսուլմանացման, ըստ մոտավոր հաշվարկների՝ արտագաղթածների թիվը նույնպես կազմում էր շուրջ հարյուր հազար: Օսմանյան իշխանությունների վայրագությունները մնացին անպատիժ: Հայ ժողովուրդը պատասխանեց Զեյթունի և Վանի հերոսական ինքնապաշտպանական կռիվներով, հայդուկային շարժման ընդլայնմամբ:

Համիդյան կոտորածները մարդկային պատմության ամենադաժան էջերից էին: Նրանց կազմակերպիչը՝ «այրունարբու սուլթանը», արժանացավ ժամանակի առաջադեմ մտավորականության միահամուռ քննադատության: Իրենց ցասումը արտահայտեցին Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի, ԱՄՆ–ի, Գերմանիայի հասարակական, քաղաքական, գիտական շրջանակները, մամուլի առաջա-

տար ներկայացուցիչները: Նրանք պահանջում էին իրենց երկրների կառավարություններից անհապաղ միջամտել և կանգնեցնել կոտորածները:

Մեծ տերությունները, որոնք տարիների ընթացքում արդեն մոռացության էին տվել Հայկական հարցը, քայլեր ձեռնարկեցին այն վերաբացելու ուղղությամբ: Նրանցից երեքը՝ Մեծ Բրիտանիան, Ռուսաստանը և Ֆրանսիան, նախապատրաստեցին բարենորոգումների ծրագիր: Այն նախատեսում էր Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթներում (Կարինի, Խարբերդի, Վանի, Սեբաստիայի, Բիթլիսի, Դիարբեքիրի) իրականացնել մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված էին հայ ազգաբնակչության կյանքի և ունեցվածքի ապահովության համար որոշ երաշխիքների ստեղծմանը, նրա ներկայացուցիչների ներգրավմանը տեղական կառավարման համակարգում, վերափոխումներ վարչական ու դատական ոլորտներում և այլն: Բարենորոգումների իրականացման համար անհրաժեշտ երաշխիքների խնդիրը կենտրոնականն էր ծրագրում, քանի որ տերությունները, հաշվի առնելով թուրքական իշխանությունների կողմից նախորդ տարիներին առաջարկած բարենորոգումների իրականացման տապալումը, լուրջ մտավախություն ունեին, որ այս անգամ էլ սուլթանին կհաջողվի խուսափել իրական բարենորոգումներ անցկացնելուց: Մասնավորապես, ծրագիրը նախատեսում էր քրիստոնյաներից և մուսուլմաններից կազմված խառը հանձնաժողովի ստեղծումը, որը պետք է վերահսկեր բարենորոգումների կիրառման ընթացքը:

Այդ ծրագիրը արդյունք էր մի կողմից՝ Մեծ Բրիտանիայի և մյուս կողմից՝ Ռուսաստանի ու Ֆրանսիայի միջև ձեռք բերված կոմպրոմիսի: Վերը նշված երկրների դեսպանները 1895 թ. մայիսի 11–ին այն ներկայացրին սուլթան Աբդուլ Համիդ Բ–ին: Այդ պատճառով բարենորոգումների ծրագիրը ստացավ «մայիսյան» անվանումը:

Տպավորություն կարող էր ստեղծվել, որ այս անգամ Մեծ տերությունները տրամադրված են վճռական, և նրանց կհաջողվի պարտադրել թուրքական իշխանություններին իրականացնել վաղուց արդեն խոստացված բարենորոգումները: Սակայն «արյունարբու» սուլթանին հաջողվեց հերթական անգամ օգտագործել Մեծ տերությունների միջև գոյություն ունեցող հակասությունները, մասնավորապես բրիտանա–գերմանական և բրիտանա–ռուսական, և խուսափել Արևմտյան Հայաստանի վիլայեթներում բարենորոգումներ իրականացնելուց: Աբդուլ Համիդ Բ–ն ոչ միայն վիժեցրեց «մայիսյան ծրագիրը», այլև ավելի մեծ թափ հաղորդեց հայ ժողովրդին Օսմանյան կայսրության ողջ տարածքում և մասնավորապես Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթներում, որտեղ, ըստ «մայիսյան ծրագրի», նախատեսվում էր անցկացնել բարենորոգումներ կոտորածի գործընթացում: Փաստորեն նա վարում էր Հայկական հարցը հայերի բնաջնջման միջոցով «լուծելու» քաղաքականություն:

2. ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԵՐԻՏԹՈՒՔԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Սուլթան Աբդուլ Համիդ Բ–ի կառավարման տարիներին սկիզբ առավ երիտթուրքական շարժումը, որին վիճակված էր գերակշռող ազդեցություն ունենալ Օսմանյան կայսրության և հետագայում նաև հանրապետական Թուրքիայի քաղաքական կյանքում ընդուպ մինչև XX դ. կեսերը: Այդ շարժման ծնունդն էր «Միություն և առաջադիմություն» կոմիտեն, որը զավթեց իշխանությունը 1908 թ. հուլիսյան հեղաշրջման հետևանքով և հաջորդ տարի պարտադրեց Աբդուլ Համիդին հեռանալ գահից:

Երիտթուրքական շարժման առաջացումը պայմանավորված էր հետևյալ հիմնահարցի պատասխանի փնտրտուքով. «Այս երկիրը ինչպե՞ս կարելի է փրկել»: Նրա սկիզբը դրվեց 1887 թ. Կոստանդնուպոլսի ռազմական բժշկական ուսումնարանի մի քանի ուսանողների կողմից: Նրանց կողմից ստեղծված գաղտնի կազմակերպությունն ուներ «Օսմանյան միություն» անվանումը: Ուշագրավ է, որ երիտթուրքական շարժման հիմնադիրներից և ոչ մեկը ազգությամբ թուրք չէր:

Մի քանի տարվա ընթացքում այդ կազմակերպությունը իր գործունեությունը տարածեց նաև Պոլսի ռազմական, բժշկական, վարչական ուսումնարաններում: Կազմակերպության ղեկավարներն էին Իսհակ Սյուքութին, Աբդուլլահ Ջևդեթը, Մեհմեդ Ռեշիդը, Իբրահիմ Թեմոն, Հյուսեյն Զադե Ալին: Նրանք, լինելով «Նոր օսմանցիների» ազդեցության տակ, կարծում էին, որ օսմանյան պետության փրկությունը սահմանադրության հաստատման մեջ է: Նրանք չստեղծեցին ո՛չ գաղափարական–քաղաքական դոկտրինա, ո՛չ էլ կարողացան ծավալել քաղաքական գործունեություն: Նրանցից մի քանիսը՝ Մեհմեդ Ռեշիդը, Հյուսեին Զադե Ալին և հետագայում նրանց շրջանակի մեջ ընդգրկված Նազըմը, դարձան «Միություն և առաջադիմություն» կոմիտեի գործուն անդամներ, իսկ մյուսները՝ Աբդուլլահ Ջևդեթը, Իբրահիմ Թեմոն, տեղ գրավեցին այդ կոմիտեի ընդդիմադիրների շարքում:

«Միություն և առաջադիմություն» կոմիտեի երկրորդ ակունքը Փարիզում թուրք վտարանդիների խումբն էր, որի ղեկավարն էր Ահմեդ Ռըզան: Այդ խումբը փաստորեն ստեղծեց «Միություն և առաջադիմություն» կոմիտեն, նրա քաղաքական ծրագիրը և այդ ծրագիրը տարածելու միջոցը՝ մամուլը: Այդ խմբի գաղափարախոսությունը կենտրոնանում էր Ահմեդ Ռըզայի հետևյալ հայեցակարգի շուրջ. Օսմանյան կայսրությունը հնարավոր է փրկել՝ ապահովելով նրա առաջադիմությունը, հենվելով նրա բոլոր ժողովուրդների միասնության, նպատակների ընդհանրության և կարգի հաստատման սկզբունքների վրա: Այդ ամենը կարող էր ապահովել 1876 թ. սահմանադրության վերահաստատումը, կառավարման կենտրոնացումը և օտար պետությունների միջամտության բացառումը: Այդ խմբի գաղափարախոսությունը, որի հիմքում Ահմեդ Ռըզան դրել էր պոզիտիվիզմի գաղափարները, հստակեցվեց Սաբահէդդինի ղեկավարած խմբի հետ պայքարում: Այն հանդես էր գալիս ապակենտրոնացման և օտար պետությունների միջամտության օգտին:

Ահմեդ Ռըզայի ղեկավարած խումբը, որն ընդունել էր «Միություն և առաջադիմություն» անվանումը, կարողացավ ծավալել նաև բավականին գործունյա կազմա-

կերպական ու քաղաքական գործունեություն, որը ղեկավարում էին Նազըմը և Բեհաէդդին Շաքիրը: Վերջինը աչքի էր ընկնում իր կազմակերպչական ունակություններով և այդ պատճառով բնութագրվել է մեր ժամանակակից թուրք պատմաբանի կողմից որպես «Ստալին»: Նա և Նազըմը արդեն այն շրջանում ցուցադրում էին հակվածություն պանթյուրքիստական գաղափարների նկատմամբ: Անհրաժեշտ է նշել, որ Ահմեդ Ռըզայի մոտ մերթընդմերթ արտահայտվում էին այնպիսի գաղափարներ, որոնք կարելի է բնութագրել որպես հետագայում երիտթուրքական կուսակցական դիկտատուրայի գաղափարական հիմնավորում: 1906 թ. նա իր «Զինվորը» գրքույկում ձևակերպեց մի գաղափար, որը կարևոր նշանակություն ունեցավ «Միություն և առաջադիմություն» կուսակցության հետագա գործունեության համար: Այն է՝ Օսմանյան կայսրության առաջադիմության իրականացման գործում կարևոր դեր պիտի ստանձնեն սպաները, որոնց համար դա պիտի դառնա արտաքին թշնամու դեմ պայքարի հետ մեկտեղ հայրենիքին ծառայելու լավագույն միջոց: Ընդհանուր առմամբ, փարիզյան խմբավորման գաղափարախոսությունը կարելի է բնութագրել որպես XIX դարի վերջի Եվրոպայում առաջացած նախաամբողջատիրական (pre–totalitarian) հոսանքների արձագանք:

«Միություն և առաջադիմություն» կոմիտեի երրորդ ակունքը 1906 թ. Սալոնիկ քաղաքում ստեղծված «Օսմանյան ազատության կոմիտեն» էր: Հիմնադիրներն էին Թալեաթը, Միդհաթ Շյուքրյուն, Ռահմին, Իսմայիլ Ջանբոլաթը և այլք: Նրանց գաղափարախոսությունը հիմնված էր, երիտթուրքական այլ կազմակերպությունների օրինակով, սահմանադրության վերահռչակման գաղափարի վրա: Կազմակերպական առումով նրանց համար օրինակ էին ծառայում այդ տարածաշրջանում գործող գաղտնի բուլղարական Ներքին Մակեդոնիայի հեղափոխական կազմակերպությունը (IMRO) և մասոնական կազմակերպությունները, որոնց անդամ էին նաև Թալեաթը և նրա ընկերներից ոմանք: Նրանց կազմակերպության հրատարակած կանոնադրությունից երևում է, թե որքան մեծ նշանակություն էր տրվում անդամների բացարձակ հավատարմությանը և հնազանդությանը ղեկավարությանը ապահովելու, ինչպես նաև դավաճանների դեմ պայքարին: Ըստ էության, դա ընդհատակյա հեղափոխական կուռ կազմակերպություն էր: Այն ղեկավարվում էր երեք հոգուց բաղկացած խմբի (Heyet–i Aliye) կողմից, որի հրամանները ենթակա չէին քննարկման կազմակերպության շարքային անդամերի կողմից: Ղեկավար խմբի անդամներն էին Թալեաթը, Իսմայիլ Ջանբոլաթը և Ռահմին: Այդ գաղտնի կազմակերպությունը ակտիվ գործունեություն ծավալեց տարածաշրջանում տեղակայված օսմանյան երկրորդ և երրորդ բանակների սպայական կազմի շրջանում, որի հետևանքով «Միություն և առաջադիմություն» կոմիտեն ձեռք բերեց իր չորրորդ ակունքը:

Չորրորդ ակունքը կազմում էին այսպես կոչված «ֆիդայիները»: Այդպես հետագայում սկսեցին անվանել օսմանյան կոնոնավոր բանակի այն երիտասարդ սպաներին, որոնք, կազմելով ոչ մեծ զինված խմբեր, պայքարում էին բուլղար ազատամարտիկների զինված ջոկատների դեմ Մակեդոնիայի տարածքում: Այդ պայքարն ուներ

չափազանց արյունալի բնույթ՝ գերիներ չէին վերցնում: «Ֆիդայիների» խմբավորման կարևոր դեմքերից էր Էնվերը, որը 1907 թ. ընդգրկվեց «Օսմանյան ազատություն կոմիտեի» մեջ: Էնվերի և նրա ընկերների համար կյանքի գործ էր դարձել Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանումը: Նրանց համար կարևորություն չունեին գաղափարական կամ կազմակերպական խնդիրները, նրանք գործողության մարդիկ էին:

Գնահատելով վերը նշված խմբավորումների դերը և նշանակությունը՝ անհրաժեշտ է նշել, որ Թալեաթին և նրա խմբին հաջողվել էր իրենց կոմիտեի կազմում ընդգրկել Օսմանյան կանոնավոր բանակի սպաներին, սակայն նրանք այդ շրջանում ինքնուրույն դեր չէին կատարում, ինչպես նաև Փարիզի կենտրոնի կողմից և Սալոնիկի կազմակերպության կողմից կայսրության մայրաքաղաքում և նահանգներում ստեղծված խմբավորումները և բաժանմունքները: 1906 թ. տեղի է ունենում Փարիզի ու Սալոնիկի կոմիտեների միացում: Ստեղծվում է մեկ կազմակերպություն՝ իր ուրույն քաղաքական ծրագրով և կանոնադրությամբ, որտեղ արտացոլվում են նրանց գաղափարական և կազմակերպական առանձնահատկությունները:

Եվրոպայում և Եգիպտոսում ապաստան գտած երիտթուրքերը հրատարակում էին մի քանի տասնյակ պարբերականներ: Նրանցից մի քանիսն ունեին բավականին մեծ տպաքանակ, աչքի էին ընկնում Օսմանյան կայսրությունում տիրող բարքերի և անձամբ սուլթանի սուր քննադատությամբ, քննարկման էին ներկայացնում ապագա բարենորոգումների ծրագրերը: Դրանց թվին էին պատկանում «Շուրա–ը ումմեթը» («Համայնքի խորհուրդ»), ֆրանսալեզու «Մեշվերեթը» («Քննարկումներ»), «Միզանը» («Կշեռք»): Երիտթուրքերը հրատարակում էին նաև քաղաքական ուղղվածության բրոշյուրներ, տպագրում էին թռուցիկներ: Այդ գրականության մի մասը գաղտնի տեղափոխվում էր Օսմանյան կայսրություն և տարածվում բնակչության շրջանում: Այդպիսով ստեղծվում էր երիտթուրքերի հզորության և երկրի ներսում անդամների ու աջակիցների մեծ ցանցի մասին առասպելը:

Իրականում, ինչպես արդեն նշվել է, երիտթուրքական շարժումը միասնական չէր, կապը առանձին խմբերի միջև թույլ էր, հարաբերությունները նրանց անդամների միջև շատ դեպքերում թշնամական էին: Երտթուրքական շարժման պառակտմանը իր գաղտնի գործակալների միջոցով նպաստում էր Աբդուլ Համիդը: Ժամանակ առ ժամանակ նրան հաջողվում էր կաշառքի կամ ձերբակալությունների միջոցով չեզոքացնել երիտթուրքերի առաջնորդներին ու շարքային անդամներին: Ընդհանուր առմամբ, երիտթուրքական շարժումը մինչև XX դարի սկզբները սուլթանի հսկողության ներքո էր և նրա իշխանության համար վտանգ չէր ներկայացնում:

Երիտթուրքական շարժումը սկսեց վերափոխվել 1902 թ., երբ նրան միացավ մեծ հարստության տեր և փառասեր արքայազն Սաբահէդդինը, որի հայրը՝ Դամադ Մահմուդ փաշան, Աբդուլ Համիդի քրոջ ամուսինն էր, այսինքն՝ մաս էր կազմում օսմանյան վերնախավի ամենաբարձր շրջանակի:

Սաբահէդդինի ջանքերի շնորհիվ 1902 թ. փետրվարին Փարիզում կայացավ երիտթուրքերի առաջին համաժողովը: Մասնակցում էին նաև օսմանյան լծի դեմ

պայքարող մի շարք ժողովուրդների ներկայացուցիչները: Նրանց թվում էին հայերը, հույները: Մասնակցում էին նաև այլ ժողովուդների ներկայացուցիչներ: Սաբահէդդինը ոչ միայն ֆինանսավորում էր համաժողովը, այլև ընտրվելով նախագահող՝ ղեկավարում էր նրա աշխատանքները:

Չնայած այն հանգամանքին, որ համաժողովը չլուծեց իր հիմնական խնդիրը՝ ապահովել երիտթուրքկան շարժման միասնությունը, այնուամենայնիվ, նպաստեց կայսրությունում երիտթուրքերի գաղտնի գործունեության ակտիվացմանը: Համագումարի արդյունքում Սաբահէդդինին հաջողվեց համախմբել իր կողմնակիցներին և ստեղծել իր ղեկավարության ներքո գործող առանձին կազմակերպություն՝ «Անձնական նախաձեռնության և ապակենտրոնացման ընկերակցությունը»: Ինչպես հուշում է այդ խմբավորման անվանումը, նրա անդամները հանդես էին գալիս բազմազգ կայսրության կառավարման համակարգի ապակենտրոնացման և տեղական իշխանություններին մեծ լիազորությունների տրամադրման օգտին: Որոշ հետազոտողներ պնդում են, որ Սաբահէդդինի առաջարկած բարենորոգումները նախապայմաններ էին ստեղծում բազմազգ Օսմանյան կայսրությունը դաշնային պետության վերափոխելու համար:

Սաբահէդդինի գաղափարները կիսում էին երիտթուրքական շարժման փոքրաթիվ մասնակիցներ: Մեծամասնությունը կողմ էր կուռ կառուցվածք ունեցող կենտրոնացված պետության:

Երիտթուրքերի երկրորդ համաժողովը տեղի ունեցավ, ինչպես և առաջինը, Փարիզում 1907 թ. դեկտեմբերին: Նախաձեռնողը Հայ յեղափոխական դաշնակցությունն (ՀՅԴ) էր, իսկ նրա ներկայացուցիչ Ակնունին (Խաչատուր Մալումյան) ընտրվել էր համաժողովի համանախագահ: Մասնակիցների թվում էին նաև Օսմանյան կայսրության այլ հպատակ ժողովուրդների ներկայացուցիչներ: Համաժողովը ընդունեց «Հռչակագիր»: Այն ընդգծում էր բոլոր ընդդիմադիր հակահամիդյան ուժերի համատեղ գործողությունների անհրաժեշտությունը և կոչ էր անում նախապատրաստվել զինված ապստամբության: Երիտթուրքերը համաժողովի հպատակ ժողովուրդները ներկայացնող մասնակիցներին խոստացան հետևել կայսրության բոլոր ժողովուրդների «հավասարության» մասին սկզբունքին:

Խմորումները, որոնք տեղի էին ունենում վտարանդիության մեջ գործող ընդդիմադիր ուժերի շրջանում, վկայում էին, որ հասունանում է պահը, երբ նրանց գործունեությունը կարող է լուրջ վտանգ ներկայացնել «կարմիր սուլթան» Աբդուլ Համիդ Բ–ի հետագա կառավարման համար: Համաժողովից հետո կայսրությունում գործող երիտթուրքական գաղտնի խմբերը ակտիվացրին իրենց գործունեությունը, ընդլայնվեց նրանց կապը վտարանդի երիտթուրքական շրջանակների և հպատակ ժողովուրդների հեղափոխական կազմակերպությունների հետ: Օսմանյան կայսրությունը հայտնվեց լուրջ վերափոխումների եզրին:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ 1908–1918 ԹԹ.

1. ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը ինչպես օսմանյան, այնպես էլ հանրապետական Թուրքիայի պատմության ամենակարևոր իրադարձություններից է: Խոսուն է այն փաստը, որ հուլիսի 23–ը, երբ հեղաշրջումը հաղթեց, մինչև 1934 թ. ներառյալ տեղ էր գտել Թուրքիայի Հանրապետության պաշտոնական տոների ցանկում՝ որպես «ազատության տոն»: Դա պայմանավորված էր ոչ միայն այն հանգամանքով, որ հանրապետության հիմնադիրները, այդ թվում՝ Մուսթաֆա Քեմալ Աթաթյուրքը, մաս էին կազմում երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կոմիտեի, այլև որ հեղաշրջումը հաղթեց «ազատություն, հավասարություն, եղբայրություն» կարգախոսի ներքո:

Իրականում հեղաշրջումը իրականացրած երիտթուրական կազմակերպության անդամ սպաները առաջին հերթին մտահոգված էին կայսրության տարածքային ամբողջականության, այլ խոսքերով ասած՝ հպատակ ժողովուրդների վրա թուրքական լծի պահպանման խնդրով: Զավթելով իշխանությունը և հետզհետե տիրանալով պետական բոլոր լծակներին՝ նրանք «մոռացության տվեցին» վերը նշված կարգախոսները և, հաստատելով «Միություն և առաջադիմություն» կոմիտեի ամբողջատիրական կառավարման համակարգը, նախապատրաստեցին և իրականացրին Հայոց ցեղասպանությունը՝ ծանրագույն հանցագործությունը հայ ժողովրդի և մարդկության դեմ:

* * *

Հեղաշրջումը սկիզբ առավ Մակեդոնիայում, որտեղ XIX դարի վերջերից ծավալվել էր հզոր զինված պայքար թուրքական տիրապետության դեմ: Միաժամանակ բալկանյան մի շարք ժողովուրդների ներկայացուցիչներից, մասնավորապես հույներից, սերբերից, բուլղարներից, ալբանացիներից, վլախներից կազմված զինված խմբավորումները (*չետեները*) պայքարում էին մեկը մյուսի դեմ՝ ձգտելով վերահսկողության տակ վերցնելու Մակեդոնիայի հնարավորինս ավելի մեծ շրջաններ: Ակտիվ էին նաև թուրք հրոսակներից կազմված *չետեները*, որոնք զբաղված էին խաղաղ քրիստոնյա բնակչության կողոպուտով: Մակեդոնիայի համար մղվող պայքարում բացի բալկանյան պետություններից ներգրավվել էին նաև ժամանակի մի շարք հզոր տերություններ: Փաստորեն, Մակեդոնիան վերածվել էր Օսմանյան կայսրության եվրոպական հատվածի ամենաթեժ տարածաշրջանի:

Մակեդոնիայում էին տեղակայված օսմանյան 3–րդ բանակի ստորաբաժանումները: Նրանց հիմնական խնդիրն էր պայքարել ազատագրական պայքար մղող զինված ջոկատների դեմ և ամեն գնով պահել այն Օսմանյան կայսրության կազմում: XX դարի սկզբներից երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կոմիտեն իր գաղտնի գործունեության կենտրոնը տեղափոխեց Մակեդոնիա՝ նպատակ ունենալով ոչ միայն այստեղից ծավալելու պայքար սուլթան Աբդուլ Համիդ Բ–ի բռնապետության դեմ, այլև նպաստելու Մակեդոնիայի «հնազանդեցմանը» և խոչընդոտելու նրա անկախացման գործընթացը:

Երիտթուրքերը սերտորեն համագործակցում էին այստեղ բավականին մեծ թվով անդամներ ունեցող իտալական ազդեցության տակ գտնվող «Մակեդոնիա Ռիսորտա» և ֆրանսիական ազդեցության ներքո գործող «Վերիտաս» մասոնական օթյակների հետ: Բանակի երիտասարդ սպաներից շատերը ներգրավված էին երիտթուրքական կազմակերպության մեջ կամ համագործակցում էին նրա հետ: Երիտթուրքական կազմակերպությունը կապեր էր հաստատել նաև տարածաշրջանում գործող թուրքական հրոսակային *չետեների* հետ՝ հաստատելով նրանց վրա իր վերահսկողությունը: «Միություն և առաջադիմություն» կոմիտեն իր ընդհատակյա բջիջները ստեղծել էր նաև Մակեդոնիայի բազմաթիվ բնակավայրերում: Ըստ վերջերս հրատարակված փաստաթղթերի՝ կոմիտեի անդամների թիվը նախքան հեղաշրջումը գերազանցում էր երկու հազարը:

Երիտթուրքերի գործունեությունը կտրուկ ակտիվացավ 1908 թ. մայիսին, երբ սկսեց նշմարվել անգլո–ռուսական մերձեցումը Մակեդոնիական հարցում, որն անխուսափելի էր դարձնում Մակեդոնիայի կորուստը Օսմանյան կայսրության համար: 1908 թ. հունիսի 9–12–ը Ռևելում (ներկայումս՝ Տալլին) տեղի ունեցան բանակցություններ Մեծ Բրիտանիայի թագավոր Էդվարդ Յոթերորդի և Ռուսաստանի կայսր Նիկոլայ Երկրորդի միջև, և կողմերը համաձայնության եկան երկու երկրների զինված ուժերը Մակեդոնիա մտցնելու մասին՝ նպատակ ունենալով խթանելու ի նպաստ քրիստոնյաների լայնածավալ բարենորոգումների իրականացումը: Երիտթուրքական կոմիտեին հաջողվեց նաև ստանալ գաղտնի տեղեկություններ այն մասին, որ սուլթանական պալատում նախապատրաստվում է լայնածավալ գործողություն երիտթուրքերի դեմ: Դա նույնպես նպաստեց երիտթուրքական կոմիտեի կողմից ակտիվ գործողությունների դիմելուն:

«Միություն և առաջադիմություն» կոմիտեն որոշում ընդունեց անցնել նախապես արդեն ծրագրած քարոզչական, ահաբեկչական և ապստամբական գործողությունների: Տարածվեցին մեծ թվով թռուցիկներ, որոնք սուր քննադատության էին ենթարկում սուլթանի կառավարությանը՝ անգործության և օտար պետությունների միջամտության դեմ չպայքարելու համար: Կազմակերպվեցին մահափորձեր Բալկանյան թերակղզում տեղակայված 3–րդ բանակի մի շարք բարձրաստիճան հրամանատարների դեմ:

Ապստամբությունը սկիզբ առավ հուլիսի 3–ին, երբ ազգությամբ ալբանացի մայոր Ահմեդ Նիյազին՝ Հյուսիսային Մակեդոնիայի Ռեսեն (Ռեսնե) քաղաքում տե-

ղակայված օսմանյան բանակի ստորաբաժանման սպաներից, կատարելով երիտթուրքական կոմիտեի գաղտնի հրամանը, իր ենթակայության ներքո գտնվող 200 զինվորից կազմված «Ազգային գումարտակով» լքեց կայազորը և բարձրացավ մոտակա լեռները: Օգտվելով այն հանգամանքից, որ այդ օրը ուրբաթ էր, և կայազորի սպաները մասնակցում էին ուրբաթօրյա մեծ աղոթքին, նա իր հետ վերցրեց ոչ միայն կայազորի զենքը, այլև գանձարանը:

Մի քանի օրվա ընթացքում Նիյազի բեյի գումարտակը համալրվեց ևս 200 հոգով: Սկսեցին ստեղծվել օսմանյան բանակի ստորաբաժանումներից կազմված նաև այլ ապստամբական ջոկատներ՝ երիտթուրքական կազմակերպության անդամ սպաների հրամանատարությամբ: Նրանց թվում էր նաև հայ ժողովրդի դահիճ Էնվերը, որն այդ ժամանակ դեռևս մայորի կոչում ուներ:

Օսմանյան բանակի ապստամբ ստորաբաժանումներին սկսեցին միանալ որոշ ալբանական զինված չեթեներ (ջոկատներ), որը նպաստեց ապստամբության հետագա ընդլայնմանը: Արդեն հուլիսի 23–ին նրա մասնակիցների հսկողության տակ էին Բալկանյան թերակղզու այնպիսի խոշոր քաղաքներ, ինչպիսիք էին Սալոնիկը և Մոնաստիրը: Նրանց էին միանում նաև տեղական իշխանությունների բազմաթիվ ներկայացուցիչներ: Աբդուլ Համիդի կողմից ձեռնարկվող միջոցները արդյունք չտվեցին: Ճնշելու նպատակով կայսրության ասիական հատվածներից ուղարկված բանակային ստորաբաժանումները հրաժարվեցին զենք կիրառելուց ապստմբների դեմ:

Ապստամբությունն այլևս հնարավոր չէր կասեցնել: Հուլիսի 23–ին երիտթուրքական կոմիտեի որոշմամբ հայտարարվեց Մակեդոնիայում սահմանադրության վերականգնման մասին: Մոնաստիր քաղաքում, որտեղ հռչակվեց սահմանադրության վերականգնումը, դրա կապակցությամբ թնդանոթները օդ արձակեցին 21 համազարկ: Այդ լուրը պարունակող հեռագիր ուղարկվեց մայրաքաղաք՝ սուլթանական Յըլդըզ Քյոշք պալատ, ինչպես նաև կայսրության այլ կենտրոններ:

Ապստամբների առջև բացվում էր ճանապարհ դեպի Կոստանդնուպոլիս: Այստեղ տեղակայված առաջին բանակի սպաները չէին թաքցնում իրենց համակրանքը նրանց նկատմամբ: Սուլթան Աբդուլ Համիդ Բ–ն, հասկանալով, որ կարող է կորցնել իշխանությունը, ստիպված էր արդեն հաջորդ օրը՝ հուլիսի 24–ին, պաշտոնապես հայտարարել, որ վերականգնում է սահմանադրության գործողությունը: Հրապարակվեց համապատասխան սուլթանական *իրադեն՝* որոշումը, որը հաջորդ օրվա առավոտյան արդեն տպագրվեց մայրաքաղաքի լրագրերում: Սուլթանը ոչ միայն ազդարարում էր սահմանադրության վերականգնման մասին, այլև կարգադրում էր պետական պաշտոնյաներին սկսել նախապատրաստել խորհրդարանական ընտրությունները:

Երտթուրքական կոմիտեն չէր վստահում Աբդուլ Համիդին՝ մտավախություն ունենալով, որ նա կարող է ամեն րոպե «մոռանալ» իր խոստումը և անտեսել իր իսկ արձակած իրադեն, ինչպես դա եղավ 1878 թ.: Այդ պատճառով երիտթուրքերը ստիպեցին, որ սուլթանը հուլիսի 27–ին շեյխ–ուլ–իսլամի ներկայությամբ երդվի Ղուրա-

նի վրա: Այդպիսով սահմանադրությունը մաս էր կազմում մուսուլման օրենսդրության՝ *շարիաթի*, և հաջորդ սուլթանները նույնպես չէին կարողանալու հրաժարվել դրանից:

Սահմանադրության վերահաստատումը ցնծությամբ ընդունվեց կայսրության բազմազգ բնակչության կողմից: Լայն տարածում ստացան «ազատություն», «հավասարություն», «արդարություն» և «եղբայրություն» կարգախոսները: Սկզբում եվրոպական հատվածում, այնուհետև նաև ասիական հատվածում տեղի ունեցան բազմահազար հանրահավաքներ և երթեր, որոնց մասնակիցները ազդարարում էին Օսմանյան կայսրության պատմության նոր դարաշրջանի՝ ազատության և եղբայրության դարաշրջանի սկիզբը: Մայրաքաղաքում սուլթանի սահմանադրության մասին *իրադեի* հրապարակումը առաջին օրվա ընթացքում ընդունվեց կասկածանքով. իշխում էր այն մոտեցումը, որ այն արյունարբու բռնապետի հերթական խորամանկությունն է, որին կհետևեն նորանոր բռնաճնշումներ: Միայն հաջորդ օրը սկսեցին սահմանադրության կողմնակիցների զանգվածային ցույցերը, որոնք ուղեկցվում էին դավուլ ու զուռնայի երաժշտությամբ:

Տեղի էին ունենում տարբեր ազգությունների և դավանանքների ներկայացուցիչների, մասնավորապես թուրքերի և քրիստոնյաների միջև ինքնաբուխ «եղբայրացումներ»: Բացի մայրաքաղաքից և բալկանյան քաղաքներից՝ դրանք տեղի ունեցան նաև Վանում, Բիթլիսում, Դամասկոսում, Բեյրութում, Տրապիզոնում և մի շարք այլ քաղաքներում: Սամսունում այդ «եղբայրացումը» գնաց այնքան հեռու, որ եվրոպացի դիվանագետը, չկարողանալով զսպել զարմանքը, հաղորդում էր, որ թուրքերը գրկախառնվում էին նույնիսկ հույն եպիսկոպոսի հետ:

Երիտթուրքական հեղաշրջումը խանդավառությամբ ընդունվեց հայկական քաղաքական շրջանակների կողմից: Հայկական քաղաքական կուսակցությունները հնարավորություն ստացան ազատ գործելու, նրանց անդամները և աջակիցները բանտերից ազատ արձակվեցին: Հայկական միջավայրում իշխում էին հույսերը, որ թուրքական իշխանությունների կողմից հայ ժողովրդի նկատմամբ վարվող զանգվածային կոտորածների քաղաքականությունը այլևս անցել է պատմության գիրկը, որ Օսմանյան կայսրությունում սկիզբ է առնում քրիստոնյաների և մուսուլմանների միջև հավասարության և եղբայրության դարաշրջանը: Ավա՜ղ, շատ շուտով պարզ դարձավ, որ այդ հույսերը անհիմն էին… Այրունարբու սուլթան Աբդուլ Համիդ Բ–ի հայաջինջ քաղաքականությունը երիտթուրքերը ոչ միայն շարունակեցին, այլև ավելի «կատարելագործեցին»՝ իրականացնելով կայսրության հայ ազգաբնակչության ցեղասպանությունը և հայաթափելով Արևմտյան Հայաստանը:

Հեղաշրջումից հետո արագ ի հայտ եկան միտումներ, որոնք վկայում էին, որ հույսերը, որ կայսրությունում սկսվում է նոր՝ ժողովուրդների «եղբայրության» դարաշրջան, անհիմն էին: Պարզվեց, որ մի կողմից՝ սուլթանական բյուրոկրատիան, մյուս կողմից՝ մուսուլման հոգևորականությունը սկսում են իրենց ձեռքը վերցնել բնակչության ցնծության արտահայտումների կառավարումը: Մզկիթներում հոջաները սկսեցին քարոզել սահմանադրության բարիքների և իսլամի նորմերին նրա

համապատասխանության մասին, իսկ պետական պաշտոնյաները փորձում էին սուլթան Աբդուլ Համիդ Բ–ին ներկայացնել որպես սահմանադրության իրական հեղինակ: Ակնհայտ է, որ դա արվում էր սուլթանական պալատից եկող հրամանների միջոցով: Աբդուլ Համիդն, օգտվելով այն հանգամանքից, որ երիտթուրքերը չէին նպատակադրվել գահընկեց անել իրեն, գործի դնելով իր ձեռքում դեռևս եղած իշխանական լծակները՝ պահպանեց միապետի գահը: Միաժամանակ, նա ստիպված էր համաձայնվել իր իշխանության սահմանափակումների հետ: Այսպես, օրինակ՝ բացի սահմանադրության վերահաստատումից սուլթանը զրկվեց իրավունքից՝ նշանակելու մի շարք կարևոր նախարարների: Փաստացի անմիջապես հուլիսյան հեղշրջումից հետո երկրում հաստատվել էր երկիշխանություն: Պայքարը հանուն իշխանության սուլթանի և երիտթուրքերի միջև դեռևս ավարտված չէր, և նրանց միջև վճռական բախումը անխուսափելի էր:

2. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ 1908–1914 ԹԹ.

Հուլիսյան հեղաշրջումից հետո երիտթուրքերի ճնշման ներքո սուլթանը ձևավորեց նոր կառավարություն և նրա ղեկավար նշանակվեց Քյամիլ փաշան, որը հայտնի էր բրիտանամետ հայացքներով: Այդ կառավարությունը ձեռնարկեց մի շարք քայլեր, որոնք խանդավառությամբ ընդունվեցին կայսրության բնակչության ամենատարբեր խմբերի և խավերի կողմից: Մասնավորապես վերացվեցին Աբդուլ Համիդի բռնատիրական վարչական համակարգի՝ «զուլումի» երկու հենասյուները՝ գաղտնի ոստիկանությունը և մատնիչների բազմահազար ցանցը, հրապարակվեցին նրանց ցուցակները, ձերբակալվեցին և դատապարտվեցին մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնք հայտնի էին բազմաթիվ հանցագործություններով և կաշառակերությամբ: Կառավարությունը սկսեց նախապատրաստվել խորհրդարանական ընտրություններին, որոնց անցկացումը նախանշված էր աշնանը:

Միաժամանակ կարևոր գործընթացներ էին տեղի ունենում՝ կապված երիտթուրքական կազմակերպության հետ: Նրա թվաքանակը շատ արագ աճեց, երկրով մեկ բացվեցին բազմաթիվ կոմիտեներ, գրասենյակներ, ակումբներ: Արտաքուստ տեղի էր ունենում գաղտնի փոքրաթիվ կազմակերպության վերաճում զանգվածային կուսակցության: Սակայն իրականում «Միություն և առաջադիմություն» կոմիտեն այդպես էլ չդարձավ իրական զանգվածային կուսակցություն դասական իմաստով: Նա այդպես չկարողացավ կամ, ավելի ճիշտ, չցանկացավ ազատվել գաղտնի գործելու ձգտումից: Միայն այն փաստը, որ կուսակցության կառավարման բարձրագույն մարմնի՝ կենտրոնական կոմիտեի անդամների անունները պահվում էին գաղտնի, շատ խոսուն է: Այդ գաղտնիությունը նպաստեց խիստ արտահայտված կառուցվածքային հիերարխիայի առաջացմանը: Երիտթուրքերի հուշագրություններից պարզ է դառնում, որ կուսակցության ընդերքում առաջացել էր 50–60 հոգանոց մի խումբ, որը կառավարում էր կուսակցական կազմակերպությունները և՛ մայրաքաղաքում, և՛ նահանգներում: Նրանց թվից առանձնանում էին կառավարող մարմինների՝ նախագահության և կենտրոնական կոմիտեի անդամները: Այդ

երկուսից կենտրոնական կոմիտեն էր, որ համարվում էր կուսակցական կառույցի կառավարման բարձրագույն մարմինը: Նրա ընտրությունը տեղի էր ունենում երիտթուրքերի տարեկան համաժողովների ընթացքում: Համաժողովների մասնակիցները երդվում էին Ղուրանի վրա գաղտնի պահել համաժողովի ընթացքի և որոշումների մասին տեղեկատվությունը:

Սակայն նույնիսկ կենտրոնական կոմիտեի ներսում գոյություն ուներ հիերարխիա. նրա անդամներից մոտավորապես կեսը՝ 6–7 հոգի, իրենց ձեռքում էին պահում կառավարման բոլոր լծակները և ընդունում էին որոշումներ, որոնց մասին ուղղակի տեղյակ էին պահում կենտկոմի մյուս անդամներին: Առաջին խմբի անդամներն էին Թալեաթը, Էնվերը, Նազիմը, Բեհաէդդին Շաքիրը, Զիյա Գյոքալփը, Միդհաթ Շյուքրյուն, Օմեր Նաջին: Ստորադաս խմբի անդամների թվում էր նաև հայազգի Հալայջյան էֆենդին, որը որոշ ժամանակ կենտկոմի անդամ էր: Կուսակցության վերնախավի շրջանում արագ ձևավորվեց երկու խմբավորում, որոնք կատաղի պայքար էին մղում իշխանության ավելի մեծ չափաբաժին ձեռք բերելու համար: Դրանք էին զինվորականների խմբավորումը՝ Էնվերի ղեկավարությամբ, և քաղաքացիական երիտթուրքերի խմբավորումը՝ Թալեաթի ղեկավարությամբ: Վերջինս փաստացի իր ձեռքն էր վերցրել կուսակցության ղեկավարությունը: Ժամանակակից ընկալումներով՝ երիտթուրքական կուսակցությունը ամբողջատիրական տիպի կուսակցություն էր:

Հեղաշրջումից հետո «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը քայլ առ քայլ թուլացնում էր սուլթանի իշխանությունը և փոխարինում էր այն իր իշխանությամբ: Տեղի էր ունենում ամբողջատիրական կուսակցության կողմից երկրում ողջ իշխանությունը զավթելու գործընթաց: Փաստացի, սուլթանի բռնատիրական իշխանությունը փոխարինվեց երիտթուրքերի կենտկոմի բռնատիրական իշխանությամբ: Կուսակցությունը և պետությունը նույնացան, պետական կառավարման համակարգի էությունը մնաց անփոփոխ:

Երիտթուրքական կուսակցության ամբողջատիրական էությունը և կայսրության կառավարման բռնատիրական համակարգը նպաստեցին Օսմանյան կայսրության հայ ժողովրդի նկատմամբ զանգվածային ցեղասպանություն կազմակերպելուն և Արևմտյան Հայաստանը հայաթափելուն:

Խորհրդարանական ընտրությունները տեղի ունեցան 1908 թ. նոյեմբեր–դեկտեմբեր ամիսներին: Հետազոտողների բնութագրմամբ՝ դրանք օսմանյան պատմության մեջ միակ շատ թե քիչ արդարացի ընտրություններն էին: Ընտրության իրավունք ունեին, անկախ կրոնական, դավանական կամ ազգային պատկանելությունից, 25 տարին լրացած հարկատու բոլոր տղամարդիկ: Պատգամավոր կարող էր ընտրվել 30 տարին լրացած հարկատու տղամարդը, որը տիրապետում էր թուրքերենին:

Ընտրությունների արդյունքում ձևավորվեց 275 պատգամավորից կազմված խորհրդարան: Երիտթուրքերը ստացան 142 պատգամավորական տեղ: Նրանց ընդդիմադիր Ահրար («Ազատականներ») կուսակցությունը խորհրդարանում ներ-

կայացված էր միայն մեկ պատգամավորով: Այն ստեղծվել էր ընտրությունների նախօրեին և համախմբում էր երիտթուրքական շարժման այն մասնակիցներին, որոնք համախմբվել էին արքայազն Սաբահէդդինի շուրջը: Խորհրդարանի անդամ ընտրվեցին նաև 11 հայեր: Ոչ թուրք ժողովուրդներերից ամենամեծ ներկայությունը խորհրդարանում ունեին արաբները՝ 60 պատգամավոր, և ալբանացիները՝ 23 պատգամավոր: Նոյեմբերի 15–ին տեղի ունեցավ նորընտիր խորհրդարանի առաջին նիստը: Նախագահ ընտրվեց երիտթուրքական կուսակցության հիմնադիր Ահմեդ Ռըզան: Նա մեկուսացվել էր ավելի երիտասարդ կուսակցականների կողմից և կորցրել էր ազդեցությունը, որի արտահայտումն էլ եղավ նրան խորհրդարան «զորձուղելը»:

Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, երիտթուրքերը ոչ միայն մտադիր չէին կիսվելու իրենց իշխանությամբ, այլև, ինչպես արդեն նշել ենք, գնալով կենտրոնացնում էին իրենց ղեկավար մարմնի՝ կենտրոնական կոմիտեի ձեռքում ողջ իշխանությունը: Դրանով պայմանավորված՝ խորհրդարանի դերը Օսմանյան կայսրության կառավարման համակարգում անխուսափելիորեն նվազում էր:

1908 թ. հուլիսյան հեղաշրջումից հետո երիտթուրքերի առջև ծառացած մի շարք խնդիրներից ամենակարևորը, թերևս, ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ նոր քաղաքականության հիմքերի մշակումն էր: Նրանք դա փորձեցին անել՝ հենվելով օսմանականության ընդհանուր դրույթների վրա:

Այդ խնդրի լուծման առաջին փորձը կուսակցության ծրագրի 1908 թ. օգոստոսյան նախագիծն էր: Այն դարձավ նույն թվականի հոկտեմբերի երիտթուրքերի համաժողովի կողմից ընդունված ծրագրի տեքստի հիմքը: Երկու տեքստերի միջև որոշ տարբերություններ կային. օգոստոսյան նախագիծը կազմվել էր այնպիսի մի ժամանակ, երբ երիտթուրքերը սուր կերպով զգում էին Մակեդոնիայում լայն հեղինակություն վայելող Ներքին Մակեդոնա–Օդրինյան Հեղափոխական Կազմակերպության՝ «Լևիցա»–ի աջակցության կարիքը: Այդ պատճառով նրանք որոշ զիջումների գնացին, որն իր արտացոլումը գտավ օգոստոսյան նախագծում:

Հետագայում ծրագրի վերջնական տեքստում նրանք այդ զիջումներից հրաժարվեցին: Ծրագրում իրենց արտացոլումը գտան օսմանցիության գաղարաքաղաքական ուսմունքի հիմնական դրույթները: Հետևելով դեռևս XIX դարի 60–70–ական թթ. «նոր օսմանցիների»՝ սահամանադրական շարժման ղեկավարների կողմից ձևակերպված «օսմանյան ազգի» հայեցակարգին՝ երիտթուրքերը կայսրության բոլոր հպատակներին, անկախ նրանց ազգությունից և դավանանքից, հռչակեցին օսմանցիներ: Որպես հոմանիշ՝ ծրագրում օգտագործվում էր նաև «օսմանյան հպատակներ» արտահայտությունը: Օսմայան կայսրության ոչ թուրք ժողովուրդներն անվանվում էին «տարրեր»: Այսպիսով՝ հպատակ ժողովուրդները, որոնք զրկված էին նույնիսկ առանձին էթնոնիմով նշվելու իրավունքից, ծրագրի հեղինակների կամքով մտցվում էին այսպես կոչված «օսմանյան ազգի» մեջ որպես նրա բաղկացուցիչ մասեր:

Բոլոր «օսմանցիները», այդ թվում նաև ոչ մուսուլմանները, հռչակվում էին ազատ և հավասար օրենքի առջև և առանց որևէ խտրականության կարող էին ընդունվել պետական ծառայության: Ծրագրում առկա էր նաև կետ ոչ մուսուլմաններին բանակ ընդգրկելու մասին: Այդ դրույթներով ծրագրի հեղինակները ձգտում էին ոչ թուրք ժողովուրդների մոտ ստեղծելու այսպես կոչված «օսմանյան ազգի» շրջանակներում «հավասարության և ազատության» հասնելու հնարավորության պատրանքը՝ նպաստելով դրանով ազատագրական գաղափարախոսությունից նրանց հեռացմանը ու թուրքական տիրապետության դեմ պայքարի դադարեցմանը:

Կրթության բնագավառում քաղաքականության գլխավոր նպատակն էր հռչակվում «օսմանյան հպատակների դաստիրակումը միասնության ու կարգուկանոնի» ոգով: Այդ նպատակին հասնելու միջոցներ էին հռչակվում պետության վերահսկողության սահմանում կայսրության բոլոր դպրոցների, այդ թվում նաև ոչ թուրք ժողովուրդների դպրոցների նկատմամբ պետական, այսպես կոչված «խառը դպրոցների ստեղծումը, այսինքն՝ այնպիսի դպրոցների, որտեղ մուսուլմանների և ոչ մուսուլմանների երեխաները կսովորեին համատեղ: Պետական բոլոր դպրոցներում ուսուցումը պետք է պարտադիր տեղի ունենար թուրքերենով:

Հուլիսյան հեղաշրջումը, սահմանադրության վերահռչակումը, ինչպես նաև խորհրդարանական ընտրությունները և խորհրդարանի աշխատանքների սկիզբը չտվեցին այն արդյունքները, որոնք ակնկալում էին երիտթուրքերի պարագլուխները: Կայսրության և՛ ներքին, և՛ արտաքին դրությունը շարունակում էր վատթարանալ, լարվածությունը ուժեղանում էր: Օսմանյան կայսրության և երիտթուրքերի համար ծանր հարված էր Ավստրո–Հունգարիայի կողմից օսմանյան տիրապետության ներքո գտնվող Բոսնիայի և Հերցեգովինայի գրավումը 1908 թ. հոկտեմբերին: Դրան հետևեց Բուլղարիայի հայտարարությունը լիովին անկախության մասին և Կրետեինը՝ Հունաստանի հետ միավորվելու մասին: Հեղաշրջումից հետո դեռևս ուշքի չեկած և միջազգային թատերաբեմում մեկուսացած Օսմանյան կայսրությունը ստիպված էր հաշտվել այդ ծանր կորուստների հետ:

Կայսրության տարբեր անկյուններում, այդ թվում նաև մայրաքաղաքում տեղի էին ունենում գործադուլներ, գյուղացիական ապստամբություններ: Միայն հեղափոխությանը հաջորդած 3 ամիսների ընթացքում տեղի ունեցավ շուրջ 100 գործադուլ: Աճում էր դժգոհությունը նաև ոչ թուրք ժողովուրդների, մասնավորապես քրիստոնյաների շրջանում: Նրանց համար ակնհայտ էր դառնում, որ քարոզելով «հավասարություն և եղբայրություն»՝ օսմանցիության ուսմունքի շրջանակներում երիտթուրքերը իրականում ձգտում էին հարված հասցնելու իրենց ինքնությանը և հող նախապատրաստելու ուծացման քաղաքականության համար:

Անկայուն իրադրությունից օգտվում էին երիտթուրքերին ընդդիմադիր ուժերը: Ձևավորվեց երկու հակաերիտթուրքական ուժ: Նրանցից առաջինը Ահրար կուսակցությունն էր: Նրա անդրկուլիսյան առաջնորդն էր վտարանդիության շրջանում երիտթուրքական շարժման ականավոր գործիչ արքայազն Սաբահէդդինը: Նրա հայացքները տարբերվում էին երիտթուրքերի մեծամասնության կողմից քարոզվող

կենտրոնամետ մոտեցումներից և հիմնվում էին ապակենտրոնացման գաղափարների վրա: Սաբահէդդինը անձնական խոր հակասություններ ուներ իշխանության եկած երիտթուրքերի առաջնորդների հետ: Նրա հետ համագործակցում էին հնչակյանները, իսկ Քյամիլ փաշան հովանավորում էր «Ահրար» կուսակցությանը՝ փորձելով օգտագործել նրան որպես իր իշխանության հենարան:

Երկրորդ հիմնական ընդդիմադիր ուժը կազմում էին մուսուլման հոգևոր դասի և այլատեսակ հոգևոր եղբայրությունների ներկայացուցիչները, որոնք համարում էին երիտթուրքերին անաստվածներ և դավաճաններ: Նրանց միջավայրում առաջացավ «Մուհամմեդի միություն» կուսակցությունը, որի առաջնորդն էր Նախշիբենդի եղբայրության շեյխ՝ հոգևոր առաջնորդ Դերվիշ Վահդեդին:

Այդ երկու ուժերն էլ իրենց հսկողության տակ գտնվող մամուլի միջոցով կատաղի քարոզչություն էին վարում երիտթուրքերի դեմ: Երբ 1909 թ. ապրիլի 6–ին սպանվեց ընդդիմադիր թերթերից մեկի խմբագիրը, մայրաքաղաքում իրադրությունը կտրուկ սրվեց: Ընդդիմադիրները մեղադրեցին սպանության մեջ երիտթուրքերին, սկսվեցին հակաերիտթուրքական բազմահազարանոց ցույցեր: Ընդդիմադիրների շարքերում էին ինչպես «Ահրար» կուսակցության և արքայազն Սաբահէդդինի, այնպես էլ՝ Դերվիշ Վահդեդիի կողմնակիցները:

Մեկ շաբաթ հետո՝ ապրիլի 13–ին, ընդդիմադիրներին միացան մայրաքաղաքում տեղակայված օսմանյան բանակի որոշ զինված ստորաբաժանումներ: Սկսվեց հակաերիտթուրքական զինված ապստամբություն: Ապստամբների գլխավոր կարգախոսն էր. «Պահանջում ենք շարիաթ»: Նրանք ստացան սուլթան Աբդուլ Համիդ Բ–ի և նրա շրջապատի աջակցությունը: Միաժամանակ տարածվում էին լուրեր, որ ապստամբության հետևում կանգնած է Անգլիան: Այդ լուրերի իսկությունը այդպես էլ չստուգվեց, սակայն նպաստեց երիտթուրքերի իշխող շրջանակում Մեծ Բրիտանիայի նկատմամբ անվստահության առաջացմանը: Ինչպես այդ հաճախ էր պատահում օսմանյան պատմության ընթացքում, տեղի ունեցան արյունալի հաշվեհարդարներ հակառակորդների նկատմամբ, երիտթուրքերի որոշ պարագլուխներ ստիպված էին թաքնվել կամ լքել մայրաքաղաքը, նրանցից Հալիլը ապաստան գտավ Գրիգոր Զոհրապի տանը:

Տպավորություն կարող էր ստեղծվել, թե ապստամբները անվերապահորեն հաղթում են Կ. Պոլսում: Սակայն այդ տպավորությունը խաբուսիկ էր: Իրականում նրանք գործում էին ծայրաստիճան անկազմակերպ, չունեին միասնական ղեկավարություն և պատրաստ չէին դիմագրավելու երիտթուրքերի և նրանց կողմնակիցների հակազդող գործողությունները:

Ի տարբերություն ապստամբների՝ Օսմանյան կայրության եվրոպական հատվածում տեղակայված 2–րդ և 3–րդ բանակների ստորաբաժանումները և նրանց միացած կամավորները, արագ հավաքագրվելով այստեղ գործող երիտթուրքական կոմիտեների և մասնավորապես մեծ ակտիվություն ցուցաբերած Սալոնիկում գտնվող նրանց կենտրոնական կոմիտեի կողմից, առանց հապաղման երկաթգծով շարժվեցին դեպի Կոստանդնուպոլիս: Նրանք ստացան «Գործողության բանակ»

անվանումը, որի հրամանատարությունը ստանձնել էր Մահմուդ Շևքեթ փաշան՝ Սալոնիկում տեղակայված 3–րդ բանակային կորպուսի հրամանատարը: Այդ բանակի ստորաբաժանումներից մեկի հրամանատարն էր երիտասարդ սպա և երիտթուրքական կուսակցության ակտիվ անդամ Մուսթաֆա Քեմալը, որը հետագայում Օսմանյան կայսրության փլատակների վրա իր կողմից հիմնադրված Թուրքիայի Հանրապետությունում ընդունեց Աթաթյուրք ազգանունը: Համաձայն որոշ աղբյուրների՝ հենց նա էր առաջարկել «Գործողության բանակ» անվանումը:

Ապրիլի 24–ի վաղ առավոտյան «Գործողության բանակը» առանց լուրջ դիմադրության մտավ մայրաքաղաք և գրավեց այն: Այդպիսով շատ արագ վերջ տրվեց հակաերիտթուրքական խռովությանը: Երիտթուրքերի ղեկավարությունը որոշեց օգտվել բարենպաստ պահից և ազատվել դեռևս ազդեցություն ունեցող սուլթան Աբդուլ Համիդից՝ այդպիսով վերջ դնելով հուլիսյան հեղաշրջումից հետո երկրում հաստատված երկիշխանությանը: Նրան մեղադրեցին ապստմաբությունը կազմակերպելու մեջ և խորհրդարանի վերին և ստորին պալատների համատեղ նիստում ապրիլի 27–ին գահընկեց արեցին և զրկեցին խալիֆի պաշտոնից: Այդպիսով ավարտվեց արյունարբու սուլթանի 33–ամյա գահակալությունը, որը իրավամբ համարվում է օսմանյան պատմության ամենադաժան էջերից մեկը:

Որոշվեց խնայել Աբդուլ Համիդի կյանքը: Մտավախություն ունենալով, որ գահընկեց արված սուլթանը կշարունակի իր դավադիր գործունեությունը, երիտթուրքերը նրան տեղափոխեցին Սալոնիկ՝ իրենց կենտրոնական կոմիտեի անմիջական հսկողության ներքո: Հետագայում՝ Բալկանյան պատերազմների շրջանում, նրան տեղափոխեցին մայրաքաղաք, որտեղ էլ՝ Բեյլերբեյ պալատում, Աբդուլ Համիդ Բ–ն կնքեց իր մահկանացուն 1918 թ. փետրվարի 10–ին:

Գահ բարձրացավ Աբդուլ Համիդի կրտսեր եղբայրը՝ Օսմանի հարստության 35–րդ սուլթանը՝ 65–ամյա Մեհմեդ Ռեշադ Ե–ն, որը գահակալեց մինչև 1918 թ. հուլիսի 3–ը՝ դառնալով երիտթուրքերի հլու–հնազանդ կամակատարը: Նա այն սուլթանն էր, որի կառավարման տարիներին տեղի ունեցավ մարդկության պատմության ամենադաժան իրադարձություններից մեկը՝ օսմանյան իշխանությունների կողմից կազմակերպված Հայոց ցեղասպանությունը:

Ապստամբությունը ճնշելուց հետո բանակի հրամանատարության հեղինակությունը, ի դեմս Մահմուդ Շևքեթ փաշայի, կտրուկ բարձրացավ, իշխանության սուլթանական բևեռը ըստ էության վերացավ, ընդդիմադիր կուսակցությունները և գործիչները ենթարկվեցին բռնաճնշումների: Երիտթուրքական կուսակցությունը, հենվելով բանակի վրա, Օսմանյան կայսրությունում հաստատեց իր բռնատիրական իշխանությունը:

Ինչպես սովորաբար պատահում էր Օսմանյան կայսրությունում, զինված հակաիշխանական ելույթները ուղեկցվում էին քրիստոնյա հպատակների զանգվածային կոտորածներով: Դրանցից խոշորագույնը 1909 թ. ապրիլին Կիլիկիայի հայերի զանգվածային կոտորածն էր, որին զոհ գնացին Ադանայի և Հալեպի վիլայեթների շուրջ 30 հազար խաղաղ բնակիչներ: Այն պարունակում էր ցեղասպանության

կարևոր հատկանիշ՝ կանխամտածվածություն, որը հնարավորություն է տալիս բնութագրելու Օսմանյան կայսրության հայության ցեղասպանության ծրագրի իրականացման փուլերից մեկը:

Որոշումը կոտորածի մասին ընդունվել է Ադանայի վիլայեթի վալիի մոտ կայացած խորհրդակցության ժամանակ, որին մասնակցում էին վիլայեթի բարձրաստիճան պաշտոնյաները: Այն իրականացնելու նպատակով բանտերից բաց թողեցին մարդասպան հանցագործներին, թուրք ազգաբնակչության բազմաթիվ ներկայացուցիչների բաժանեցին զենք: Ապրիլի 14–ին սկսվեց Ադանայի խաղաղ հայության կոտորածը, որը ուղեկցվում էր դաժան վայրագություններով: Այն տևեց 3 օր:

Մայրաքաղաքում իրենց իշխանությունը վերահաստատելուց հետո երիտթուրքերը կանոնավոր բանակի ստորաբաժանումներ ուղարկեցին Ադանա՝ իբրև թե Աբդուլ Համիդին հավատարիմ մնացած նախկին իշխանությունների ներկայացուցիչներին ձերբակալելու նպատակով: Սակայն ինչպես վկայում են գիտական շրջանառության մեջ արդեն դրված աղբյուրները, ստորաբաժանումների հրամանատարական կազմը ստացել էր նաև մեկ այլ հրաման՝ կոտորել հայերին:

Երկրորդ զանգվածային կոտորածը տեղի ունեցավ նույն՝ ապրիլ ամսվա 25–ից 27–ը: Ականատեսների վկայություններով՝ այն իր դաժանությամբ նույնիսկ գերազանցեց «արյունարբու» սուլթանի կողմնակիցների նախաձեռնած ջարդը:

Իրենց հեղինակությունը փրկելու նպատակով երիտթուրքական իշխանություններն արտոնեցին ստեղծել խորհրդարանական հետաքննիչ հանձնաժողով, որը հավաքեց լայնածավալ փաստացի նյութ թուրք ջարդարարների ծանրագույն հանցագործությունների մասին: Սակայն հանցագործները մնացին անպատիժ և պատասխանատվությունը դրվեց հայերի վրա: 1909 թ. հայկական կոտորածը հնարավորություն տվեց քրիստոնյա ժողովուրդների կազմակերպություններին սկսելու հասկանալ երիտթուրքերի իրական նպատակները:

1909 թ. սեպտեմբերին Սալոնիկում տեղի ունեցավ երիտթուրքերի հերթական համաժողովը: Այն նույնպես անցկացվեց գաղտնիության պայմաններում: Համագումարը վերահաստատեց երիտթուրքերի հավատարմությունը օսմանցիության դրույթներին: Հիմնվելով Թանզիմաթի բարենորոգումների դարաշրջանի առաջնորդների՝ օսմանցիության վերաբերյալ մոտեցումների վրա՝ նրանք մշակեցին Օսմանյան կայսրության բազմազգ բնակչության «օսմանացման» ծրագիրը: Ինչպես ցույց է տալիս վերլուծությունը, այդ նպատակին հասնելու միջոցներն էին.

1. Իրականում գոյություն չունեցող «հավասարության և եղբայրության», «օսմանյան ազգի» և «օսմանյան հայրենիքի» մասին քարոզի միջոցով համոզել հպատակ ոչ թուրք ժողովուրդներին վերջնականապես հրաժարվել ազատագրական գաղափարներից:

2. Կառավարության հսկողության ներքո գտնվող կրթական հաստատությունների համակարգի միջոցով դպրոցական տարիքից «դաստիարակել» նրանց այսպես կոչված «օսմանյան հայրենիքին» հավատարմության ոգով:

3. Թուրքերենի բռնի տարածումը որպես «օսմանյան ազգի» միասնական լեզու:

Հետագայում, ելնելով երկրում ստեղծված անկայուն իրավիճակից և փորձելով Ադանայի կոտորածների ազդեցության հետևանքով շահել ոչ թուրք ժողովուրդների սասանված վստահությունը իրենց նկատմամբ, ծրագրում կետ մտցրին այն մասին, որ առաջին աստիճանի տարրական դպրոցներում «ուսուցման լեզու պետք է լինի այս կամ այն ժողովրդի լեզուն»:

Այն, որ այդ զիջումն ուներ ձևական բնույթ, հաստատում էր համագումարի որոշումը՝ զինել Արևմտյան Հայաստանի վիլայեթների մուսուլմաններին և արգելել քրիստոնյաներին զենք կրել: Այդպիսով՝ վերահաստատելով իսլամի հիմնասյուներից մեկը, որն արգելում էր ոչ մուսուլմաններին կրել զենք, երիտթուրքերը, ըստ էության, սկսեցին նախապատրաստվել «լուծելու» Հայկական հարցը օսմանյան սուլթաններին հոգեհարազատ ձևով՝ հրահրելով զինված մուսուլման հրոսակների կողմից խաղաղ ազգաբնակչության զանգվածային կոտորածները:

«Միություն և առաջադիմություն» կուսակցության 1909 թ. համաժողովին մասնակցեց երիտասարդ սպա և ակտիվ երիտթուրք Մուսթաֆա Քեմալը: Նա հանդես եկավ առաջարկով՝ արգելել զինվորականներին զբաղվել քաղաքականությամբ: Այդ առաջարկը հակասում էր երիտթուրքական շարժման հիմնական միտումին, քանի որ նրա հիմնական ուժը հենց զինվորական հրամատարական կազմն էր: Այդ պատճառով Մութաֆա Քեմալի առաջարկը չընդունվեց. նրան աջակցեց միայն նույնպես երիտասարդ սպա Քյազըմ Քարաբեքիրը: Այդ երկու երիտթուրքը հետագայում որոշիչ դերակատարում ունեցան Հայաստանի Հանրապետության դեմ սանձազերծած ագրեսիվ պատերազմում:

Հատկանշանական է, որ այդ նույն համագումարում Կենտրոնական կոմիտեի անդամ ընտրվեց Զիյա Գյոքալփը՝ ծագումով քուրդ երիտասարդ մտավորականը Դիարբեքիրից: Նա վայելում էր Թալեաթի հովանավորությունը և շատ արագ ձեռք բերեց երիտթուրքական կուսակցության գաղափարախոսի կարգավիճակ ու դարձավ պանթյուրքիզմի գլխավոր ջատագովը՝ ղեկավարելով երկրով մեկ նրա տարածումը: Զիյան տարիներ շարունակ նաև Կենտկոմի պատասխանատուն էր ազգային փոքրամասնությունների, հիմնականում հայերի նկատմամբ վարվող քաղաքականության մշակման համար: Նրա եզրակացությունները այդ քաղաքականության վերաբերյալ կարևոր նշանակություն ունեցան Հայոց ցեղասպանության նախապատրաստման մասին «Միություն և առաջադիմություն» կուսակցության Կենտկոմի մի խումբ անդամների կողմից քննարկումների ժամանակ:

1909 թ. համաժողովից հետո երիտթուրքերին հաջողվեց միաժամանակ համախմբել իրենց շարքերը: Օգտագործելով սուլթանական ուժերի ապստամբության հանգամանքը՝ նրանք դաժան հաշվեհարդար իրականացրին ընդդիմադիրների նկատմամբ: Այդ ամենը ուղեկցվում էր իսլամականության դերի վերականգնման քաղաքականությամբ: Երկրում սկսեց ձևավորվել երիտթուրքերի բռնատիրական կառավարումը, որը իր էությամբ քիչ էր տարբերվում արյունարբու սուլթան Աբդուլ Համիդ Բ–ի «զուլումի» շրջանից: Այդքան կարճ տևեց Օսմանյան կայսրությունում «հեղափոխական գարունը»:

Այդ փոփոխությունը անդրադարձավ նաև երիտթուրքերի ազգային քաղաքականության վրա: Արդեն 1910 թ. օգոստոսին Սալոնիկում երիտթուրքերի ղեկավար կազմի հավաքի ժամանակ Թալեաթի կողմից արտասանած գաղտնի ճառում, ինչպես հաղորդում էր Մոնաստիրի անգլիական փոխհյուպատոսը, առաջին անգամ հնչեց թեզն այն մասին, որ անհրաժեշտ է Օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդներին ենթարկել բռնի օսմանացման և միայն դրանից հետո կարելի է հայտարարել հավասարություն «օսմանցիների» միջև: Թալեաթի այդ ճառը արդյունք էր Չիյայի վերլուծությունների, որը, վերանայելով Թանզիմաթի շրջանի թուրք բարենորոգիչների քաղաքականությունը, հանգել էր եզրակացության, որ նրանք սխալվել էին՝ չօսմանացնելով հպատակ ժողովուրդներին, և որ այդ սխալը պետք է ուղղվի:

Թալեաթի ելույթից հետո նրա արտասանած մտքերը Չիյայի կողմից ձևակերպվում են որպես քաղաքական դրույթներ և գաղտնի կուսակցական շրջաբերականների միջոցով ուղարկվում են երիտթուրքական կուսակցության տեղական կազմակերպություններին:

Միաժամանակ, 1910 թ. «Միություն և առաջադիմություն» Կենտրոնական կոմիտեի հովանավորությամբ երկրում սկսվում են ստեղծվել հասարակական կազմակերպություններ, որոնք ակտիվորեն քարոզում էին թուրքական ծայրահեղ ազգայնականության՝ *թյուրքչյուղքի* և պանթյուրքիզմի՝ *թուրանջղղքի* գաղափարները: Այդ կազմակերպություններից ամենակարևորն էր 1911 թ. ստեղծված «Թյուրքական օջախ» կազմակերպությունը, որը Չիյայի անմիջական ղեկավարության ներքո էր: Ինչպես նշվում է «Թյուրքական օջախի» ծրագրային փաստաթղթերում, նրա նպատակն էր ստեղծել բոլոր թյուրքերի մշակութային միություն և նպաստել համաթուրանական ազգայնականության գաղափարների տարածմանը: Այդ տարիներին Օսմանյան կայսրությունում սկսվում են հրապարակվել բազմաթիվ պարբերականներ, որոնք քարոզում էին նույնանման գաղափարներ: Նրանց մի մասը նույնպես ղեկավարվում էր Չիյայի կողմից, որն այդպիսով սկսում է հանդես գալ որպես *թյուրքչյուղք–թուրանջղղք* գաղափարական–քաղաքական հոսանքի առաջնորդը:

Այսպիսով՝ 1910 թ. ավելի պարզորոշ տեսք է ստանում «Միություն և առաջադիմություն» կոմիտեի երկերեսայնությունը: Շարունակելով պաշտոնապես հավատարիմ մնալ օսմանիզմի գաղափարախոսությանը՝ նա միաժամանակ գաղտնի փաստաթղթերում հարց է բարձրացնում բռնի օսմանացման մասին և նպաստում է *թյուրքչյուղք–թուրանջղղք* գաղափարախոսության տարածմանը, որը հակառակ էր իր էությամբ օսմանիզմին:

Այդ ամենը հանգեցնում է իշխանությունների և քրիստոնյա հպատակ ժողովուրդների հարաբերությունների սրմանը: Լարվածությունը երկրում գնալով ուժեղանում էր:

Արտաքին քաղաքականության բնագավառում Օսմանյան կայսրության դրությունն է՛լ ավելի ծանր էր: Երեք տարվա ընթացքում՝ 1911–1913 թթ., նա ստիպված էր վարել երեք պատերազմ: Առաջինը 1911 թ. սեպտեմբերի 29–ին սկիզբ առավ

Իտալիայի դեմ պատերազմը, որը հայտնի է որպես Տրիպոլիտանական կամ Լիբիական պատերազմ: Այն շարունակվեց մինչև 1912 թ. հոկտեմբերի 18–ը և ավարտվեց Օսմանյան կայսրության պարտությամբ: Արդյունքում կնքվեց գաղտնի նախնական հաշտության պայմանագիր, համաձայն որի՝ սուլթանը հրամանագիր արձակեց Օսմանյան կայսրության աֆրիկյան վերջին տիրույթների՝ Տրիպոլիտանիայի և Կիրենայիկայի բնակչությանը «ինքնավարություն շնորհելու» մասին, որը նշանակում էր նրանց փաստացի կորուստը և անցումը Իտալիայի տիրապետության ներքո: Ներկայումս Տրիպոլիտանիան և Կիրենայիկան մաս են կազմում Լիբիա պետության: Դեռևս 1912 թ. մայիսին իտալական ռազմածովային ուժերը գրավել էին Էգեյան ծովի հարավ–արևելքում գտնվող Դոդեկանեսյան արշիպելագի կղզիները, որոնք նույնպես անցան Իտալիային: Թուրքիայի կորուստները կազմեցին 12 հազար՝ սպանված և մահացած վիրավորումներից ու հիվանդություններից:

Տրիպոլիտանական պատերազմը դեռ չավարտված՝ բռնկվեց Առաջին Բալկանյան պատերազմը (1912 թ. հոկտեմբերի 8 — 1913 թ. մայիսի 30): Այս պատերազմում Օսմանյան կայսրությունը ստիպված էր միայնակ պայքարել չորս պետություններից՝ Բուլղարիայից, Հունաստանից, Չեռնոգորիայից և Սերբիայից կազմված Բալկանյան դաշինքի դեմ: Վերջինիս անդամ պետությունների նպատակն էր ավարտին հասցնել Բալկանյան թերակղզու ազատագրումը թուրքերի լծից և նրանց դուրս շպրտել Եվրոպայից: Դաշնակիցների զինված ուժերը պատերազմի սկզբնական փուլում մոտ երկու անգամ գերազանցում էին օսմանյան բանակին՝ ավելի քան 600 հազար զինյալներ 345 հազարի դիմաց:

Բալկանյան երկրների բանակները, տոգորված ազատագրական գաղափարներով, պատերազմի առաջին շաբաթների ընթացքում մի շարք ծանր պարտությունների մատնեցին թուրքական զորքերին: Նրանց համար առավել ծանր էր պարտությունը հոկտեմբերի 28–30–ին տեղի ունեցած Լյուլեբուրգասի ճակատամարտում, որի արդյունքում կորուստները կազմեցին 30 հազար սպանված: Դրան հետևեց մեկ այլ ծանր պարտություն, այս անգամ՝ Մոնաստիրի (Բիտոլի) մերձակայքում տեղի ունեցած ճակատամարտում, որտեղ օսմանյան բանակը կորցրեց 20 հազար սպանված զինյալ: Կորուստի վտանգի ներքո հայտնվեց Կոստանդնուպոլիսը: Օսմանյան կայսրությունը ստիպված դիմեց Մեծ տերություններին՝ խնդրելով միջամտել և կանգնեցնել պատերազմը: Դեկտեմբերին Բուլղարիան ու Սերբիան նրանց ճնշման ներքո զինադադար կնքեցին Օսմանյան կայսրության հետ, և Լոնդոնում կողմերի միջև բանակցություններ սկսվեցին խաղաղության պայմանագիր կնքելու նպատակով, որոնք, սակայն, ավարտվեցին անարդյունք: 1913 թ. հունվարին Օսմանյան կայսրությունում հեղաշրջման արդյունքում իշնանության եկած նոր կառավարությունը վերսկսեց ռազմական գործողությունները: Սակայն պատերազմի անհաջող ընթացքը կասեցնել չհաջողվեց, հետևեցին նոր ծանր պարտություններ, մասնավորապես թուրքերը ստիպված էին հանձնել Սալոնիկը, որտեղ տեղակայված էր երիտթուրքական կուսակցության կենտրոնական կոմիտեն: Գերի հանձնվածների թիվը անցնում էր 60 հազարից: Սալոնիկի կորուստը վճռորոշ դեր ունեցավ: Թուրքիան

ստիպված համաձայնվեց զինադադարի և խաղաղության մասին բանակցությունները վերսկսելու Մեծ տերությունների առաջարկի հետ: 1913 թ. մայիսի 30–ին Լոնդոնում ստորագրվեց խաղաղության պայմանագիր հաղթանակած Բալկանյան Միության և պարտված Օսմանյան կայսրության միջև: Վերջինս կորցրեց իր համարյա բոլոր եվրոպական տարածքները՝ բացառությամբ մայրաքաղաք Կոստանդնուպոլսի և նրա արվարձանների, ինչպես նաև Կրետե կղզու և Էգեյան ծովի մի շարք կղզիների: Ալբանիան հռչակվեց անկախ պետություն:

Երկրորդ Բալկանյան պատերազմը տեղի ունեցավ 1913 թ. հունիս–հուլիս ամիսներին նախկին դաշնակիցների՝ մի կողմից՝ Բուլղարիայի, իսկ մյուս կողմից՝ Սերբիայի և Հունաստանի միջև: Օգտվելով բարենպաստ իրադրությունից՝ Օսմանյան կայսրությունը պատերազմի վերջին փուլում միջամտեց ռազմական գործողություններին և վերադարձրեց Ադրիանապոլիսը և Արևելյան Թրակիան: Եվրոպական տիրույթների մեծ մասը վերանվաճել չհաջողվեց:

Ստիպված լինելով երեք տարվա ընթացքում վարել երեք պատերազմ՝ Տրիպոլիտանականը և երկու Բալկանյան պատերազմները, Օսմանյան կայսրությունը ունեցավ ծանր կորուստներ՝ ինչպես տարածքային, այնպես էլ՝ մարդկային: Մասնավորապես սպանվածների թիվը կազմում էր շուրջ 250 հազար: Պարտությունների շարանը անհայտորեն ազդարարում էր Օսմանյան կայսրության մոտալուտ փլուզումը:

Օսմանյան կայսրության հետագա թուլացման արդյունք էր 1912–1914 թթ. ընթացող Հայկական ճգնաժամը: Բալկանյան պատերազմները բարենպաստ պայմաններ ստեղծեցին Հայկական հարցի վերաբացման համար: Դրան նպաստեց նաև բարենպաստ աշխարհաքաղաքական մթնոլորտը: Եվրոպական տերությունները, բաժանված երկու բևեռի, նախապատրաստվում էին հասունացող մեծ պատերազմին և խուսափում էին սուր դիվանագիտական պայքարից Հայկական հարցի շուրջ, ի տարբերություն նախորդ տասնամյակների: Նշված համգամանքները նպաստում էին Օսմանյան կայսրության մեկուսացմանը:

Այդ պայմաններում 1912 թ. Ռուսաստանի նախաձեռնությամբ սկիզբ առավ Հայկական բարեփոխումների հերթական փուլը: 1913 թ. հուլիսի 3–24–ը Կոստանդնուպոլսում տեղի ունեցած Անտանտի (Ռուսաստան, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա) և Եռյակ միության անդամ երկրների (Գերմանիա, Ավստրո–Հունգարիա, Իտալիա) դեսպանների համաժողովում քննարկվեց Ռուսաստանի կողմից պատրաստված բարենորոգումների նախագիծը: Այդ նախագիծը զգալիորեն բարենպաստ էր հայ ժողովրդի համար: Մասնավորապես նախատեսվում էր վեց հայկական վիլայեթներից (Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի և Սեբաստիայի) ստեղծել մեկ վիլայեթ, որի վալին պետք է լիներ օսմանահպատակ քրիստոնյա կամ եվրոպացի: Նրա նշանակումը պետք է համաձայնեցված լիներ Մեծ տերությունների հետ: Նախագիծը պարունակում էր նաև մի շարք այլ հայանպաստ դրույթներ: Ռուսական նախագիծը հիմնականում ստացավ Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի հավանությունը, սակայն Գերմանիան կտրականապես մերժեց այն:

Ռուսաստանը գնաց զիջումների, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան թուլացրին բանակցային ակտիվությունը, Գերմանիան հորդորեց Օսմանյան կայսրությանը ընդունել բարենորոգումների ծրագրի աղճատված տարբերակը, և թուրքական դիվանագիտությունը, հայտնվելով մեկուսացման մեջ, ստիպված ընդունեց այն: Արդյունքում՝ 1914 թ. փետրվարի 8–ին Կոստանդնուպոլսում ստորագրվեց համաձայնագիր Ռուսաստանի և օսմանյան Թուրքիայի միջև՝ Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու մասին:

Պայմանագիրը նախատեսում էր Արևմտյան Հայաստանը բաժանել երկու հատվածի (Էրզրումի, Տրապիզոնի, Սեբաստիայի վիլայեթներ և Վանի, Բիթլիսի, Խարբերդի, Դիարբեքիրի վիլայեթներ) և Մեծ տերությունների համաձայնությամբ նրանց կառավարիչներ նշանակել եվրոպացիների: Պայմանագիրը հայերին չէր տրամադրում ինքնավարության այն լայն իրավունքները, որոնք նախատեսված էին ռուսական նախագծով, սակայն դրա հիմնական դրույթների իրականացումը կնպաստեր թուրքական լծից Արևմտյան Հայաստանի ազատագրման գործընթացի արագացմանը:

Ցավոք, հայկական բարենորոգումների ծրագիրը մնաց թղթի վրա: Օսմանյան կայսրությունն ամեն կերպ ձգձգում էր նրա իրականացման սկիզբը և, օգտվելով Առաջին աշխարհամարտի հանգամանքից, 1914 թ. դեկտեմբերի 16–ին չեղյալ հայտարարեց այն:

Տրիպոլիտանական և բալկանյան պատերազմները Օսմանյան կայսրության ներքաղաքական կյանքում առաջացրին խոր ճգնաժամ: Պարտությունները, տնտեսական դրության վատթարացումը առաջացրին բնակչության շրջանում խոր դժգոհություն երիտթուրքերի կազմած կառավարությունների նկատմամբ: Օգտվելով առիթից՝ հիմնական ընդդիմադիր «Ազատություն և համաձայնություն» կուսակցությունը 1912 թ. հուլիսին իրականացրեց հեղաշրջում: Այն ստեղծվել էր 1911 թ. և իր շարքերի մեջ էր ներգրավել մի շարք ընդդիմադիր կուսակցություններ ու խմբավորումներ: Նա վայելում էր նաև ազգային փոքրամասնությունների օժանդակությունը:

Սկզբում ընդդիմադիրները պարտադրեցին կառավարության հրաժարականը և կազմեցին իրենց կողմնակիցներից կազմված կառավարություն, իսկ օգոստոսին ստիպեցին սուլթանին ցրել խորհրդարանը: Սակայն անհաջողությունները ռազմաճակատներում և բանակցային սեղանների շուրջը շարունակվում էին: 1913 թ. հունվարի 22–ին Օսմանյան կայսրությունը ստիպված էր հանձնել Բուլղարիային Ադրիանապոլիսը, որը պատճառ դարձավ մայրաքաղաքում բուռն հակակառավարական ընդվզումների համար:

Իշխանությունից հեռացված երիտթուրքերը անմիջապես օգտվեցին իրադրությունից, և արդեն հաջորդ օրը՝ հունվարի 23–ին, նրանց զինված ջոկատները Էնվերի և Թալեաթի ղեկավարությամբ հարձակվեցին կառավարական նստավայրի վրա և, ներխուժելով կառավարության նիստերի դահլիճ, սպանեցին ռազմական նախարարին և ձերբակալեցին կառավարության մյուս անդամներին: Կազմվեց նոր՝ ամ-

բողջությամբ երիտթուրքական կառավարություն Մահմուդ Շևքեթ փաշայի ղեկավարության ներքո: Սակայն ընդդիմությունը դեռևս լիովին չէր պարտված: Կես տարի չանցած՝ վարչապետ Մահմուդ Շևքեթ փաշան սպանվեց երիտթուրքերի հակառակորդի կողմից: Օգտվելով առիթից՝ երիտթուրքերը հաստատեցին երկրում իրենց դիկտատուրան և արյունալի հաշվեհարդար տեսան իրենց հակառակորդների հետ: Բոլոր կուսակցությունները արգելվեցին, քաղաքական թատերաբեմում մնաց միայն «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը: Պետությունն իր ողջ կառույցներով անցնում է երիտթուրքերի Կենտրոնական կոմիտեի ձեռքը: Նա իր ներկայացուցիչներին գործուղում է վիլայեթներ և պետական տարբեր կառույցներ, որ տեղում իրականացնեն Կենտրոնական կոմիտեի որոշումները: Համաձայն լավատեղյակ աղբյուրների՝ շատ դեպքերում որոշումները Կենտրոնական կոմիտեի անունից միանձնյա ընդունում էր Թալեաթը, որը հեղաշրջումից հետո զբաղեցրել էր ներքին գործերի նախարարի պաշտոնը: Չափազանց մեծ էր նաև Էնվերի իշխանությունը: Նա հեղաշրջումից հետո զբաղեցրել էր ռազմական նախարարի և բանակի Գլխավոր շտաբի պետի պաշտոնները՝ այդպիսով իր հսկողության տակ վերցնելով կայսրության ռազմական ոլորտը, ինչպես նաև արտաքին քաղաքականությունը: Նա հայտնի էր իր պանթյուրքիստական հայացքներով, իսկ արտաքին քաղաքականության մեջ նախապատվությունը տալիս էր Գերմանիայի հետ համագործակցությանը: Օսմանյան կայսրության՝ Առաջին աշխարհամարտի նախապատերազմյան տարիների և պատերազմի շրջանի երկու ղեկավարները մի շարք այլ գործիչների հետ դարձան Հայոց ցեղասպանության գլխավոր պատասխանատուները, հայ ժողովրդի դաժան դահիճները:

Գնահատելով նախապատերազմյան շրջանում երիտթուրքական կառավարման արդյունքները՝ նշենք, որ այն աղետալի էր կայսրության համար: Պարտություններ պատերազմներում, մեկուսացում արտաքին քաղաքական ոլորտում, այլազգիների, գլխավորապես հայերի զանգվածային կոտորածներ, այլախոհների և ընդդիմադիրների բռնաճնշումներ և սպանություններ, տնտեսական իրավիճակի սրընթաց վատթարացում: Խոսուն է հետևյալ փաստը. երիտթուրքերի կառավարման հինգ տարիների ընթացքում Օսմանյան կայսրությունը ստիպված էր վերցնել ավելի շատ արտաքին վարկեր, քան նախորդ 120 տարիների ժամանակահատվածում:

Կարևոր փոփոխություններ տեղի ունեցան նաև գաղափարական ոլորտում: Սկսած 1913 թ.՝ «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը պանթյուրքիզմը որդեգրում է որպես պետական գաղափարախոսություն, համապատասխան փոփոխություններ են կատարվում ուսումնական համակարգում: Ըստ էության, սկիզբ է առնում ծավալապաշտական ագրեսիվ պատերազմի և ցեղասպանության քաղաքականության գաղափարական նախապատրաստումը:

3. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ: ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Օսմանյան կայսրության մասնակցությունն Առաջին աշխարհամարտին (1914–1918 թթ.)՝ որպես կայսերական Գերմանիայի կողմից ղեկավարվող Քառյակ միության անդամ, պայմանավորված էր ամենից առաջ երիտթուրքերի պանթյուրքական ծրագրերն իրականացնելու նպատակով: Այդ ծրագրերն առաջ էին քաշել երկրում իրենց միանձնյա իշխանությունը հաստատած «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարները: Նրանք նախատեսում էին հարձակում Ռուսաստանի և Իրանի վրա ու նրանց կազմում գտնվող թյուրքալեզու ժողովուրդներով և ցեղերով բնակեցված տարածքների նվաճում: Հայերը դիտարկվում էին որպես սեպ, որը բաժանում էր Օսմանյան Թուրքիան Կովկասի թյուրքալեզու ժողովուրդներից և խանգարում էր պանթյուրքական ծրագրերի իրականացմանը:

Օսմանյան կայսրությունը ներքաշվեց պատերազմի մեջ հանցավոր ճանապարհով՝ որպես արդյունք գաղտնի դիվանագիտական քայլերի, որոնց հեղինակը ռազմական նախարար էնվերն էր: Դեռևս նախքան պատերազմը՝ 1914 թ. հուլիսի 22–ին, նա առաջարկել էր թուրք–գերմանական դաշինք կնքել Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպան բարոն ֆոն Վանգենհայմին: Դաշինքը, նույնպես գաղտնի, կնքվեց արդեն պատերազմը սկսվելուց հետո՝ 1914 թ. օգոստոսի 2–ին, ինչը նշանակում էր, որ այդպիսով Օսմանյան կայսրությունը ներքաշվում է պատերազմի մեջ: Նույնիսկ կառավարության անդամներից շատերը տեղյակ չէին դրա մասին:

Պատերազմի առաջին երեք ամիսների ընթացքում Օսմանյան կայսրությունը պաշտոնապես պահպանում էր չեզոքություն: Սակայն իրականում արագացված պատրաստվում էր նվաճողական պատերազմի: Արդեն օգոստոսի 2–ին հայտարարվեց զորահավաք: Ավելի ուշ գերմանացիները ուղարկեցին Բոսֆոր երկու խոշոր ռազմական նավ՝ «Բրեսլաուն» ու «Գյոբենը», որոնք ձևականորեն հանձնվեցին Թուրքիային և ստացան թուրքական անվանումներ: Նրանք փոխեցին ուժերի հարաբերակցությունը օսմանյան և ռուսական սևծովյան նավատորմերի միջև հօգուտ առաջինի: Օսմանյան նավատորմը, համալրվելով գերմանական ռազմանավերով, դարձավ լուրջ ռազմական միավոր: Նրա հրամանատար նշանակվեց գերմանացի ծովակալ Վ. Սուշոնը: Պատահական չէր, որ հենց Սև ծովը դարձավ Օսմանյան կայսրության համար պատերազմի առաջին թատերաբեմը: Հոկտեմբերի 29–ին և 30–ին օսմանյան նավատորմը գնդակոծեց Ռուսաստանի սևծովյան նավահանգիստները: Ի պատասխան դրան՝ Ռուսաստանը նոյեմբերի 2–ին պատերազմ հայտարարեց Օսմանյան կայսրությանը, երեք օր հետո նրան հետևեցին Ֆրանսիան ու Մեծ Բրիտանիան: Նոյեմբերի 23–ին Օսմանյան կայսրությունը հայտարարվեց ջիհադ՝ սրբազան պատերազմ անհավատների դեմ:

Երիտթուրք պարագլուխները, ներքաշելով երկիրը պատերազմի մեջ, հույս ունեին, որ օգտվելով գերմանացիների օժանդակությունից՝ իրենց կհաջողվի արագ հասնել նվաճողական ծրագրերի իրականացմանը: Սակայն այդ հաշվարկները շատ հեռու էին իրականությունից: Պատերազմը տևեց 4 տարի, օսմանայն բանակը

ստիպված էր կռվել չորս ռազմաճակատներում՝ Կովկասյան, Բալկանյան, Միջագետքի և Սինայի, և կրեց ծանր պարտություններ: Զորքերը չունեին արդիական զենք, եղած հնացածն էլ բավարար չէր: Շատ ցածր էր կառավարման մակարդակը՝ խոսուն է այն փաստը, որ շարքայինների 95%–ը և նույնիսկ որոշ սպաներ անգրագետ էին: Այդ ամենը հանգեցրեց ծանր մարդկային կորուստների: Սպանվածների թիվը կազմեց 600 հազար մարդ, վիրավորներինը՝ ավելի քան 2 միլիոն:

Պատերազմի առաջին փուլում օսմանյան Գլխավոր շտաբը Էնվերի նախաձեռնությամբ նախապատրաստեց և փորձեց իրականացնել երկու հարձակողական գործողություն: Առաջինը Սարիղամիշի գործողությունն էր: Այն ուղղված էր ռուսական բանակի դեմ և նպատակ ուներ գրավելու Կովկասը և այդպիսով սկսելու իրականացնել պանթյուրքիստական ծրագրերը: Զորքերի հրամանատարությունը Էնվերը վերցրել էր իր վրա: Գործողությունը սկսվեց 1914 թ. դեկտեմբերի 18–ին և ավարտվեց 1915 թ. հունվարի 10–ին: Թուրքական բանակի պարտությունը կատարյալ էր, կորուստները՝ ահռելի: Միայն սպանվածների և ցրտից ու հիվանդություններից մահացածների թիվը հասնում էր 60 հազարի: 3–րդ բանակը դադարեց գոյություն ունենալուց: Ռուսական բանակի համար ստեղծվեցին բարենպաստ պայմաններ հայկական կամավորական ջոկատների հետ համատեղ սկսելու հսկողության տակ վերցնել Արևմտյան Հայաստանը:

Երկրորդ հարձակողական գործողությունն ուղղված էր բրիտանական զորքերի դեմ և նպատակ ուներ հսկողություն սահմանելու Սուեզի ջրանցքի վրա՝ այդպիսով դժվարացնելով Մեծ Բրիտանիայի ծովային հաղորդակցությունը Հնդկաստանի հետ, ինչպես նաև գրավելու Եգիպտոսը: Գործողությունը իրականացնում էին օսմանյան 4–րդ բանակի երկու դիվիզիաները: Նրանց հրամանատարությունը ստանձնել էր երիտթուրքական եռաիշխանության անդամ և 4–րդ բանակի հրամանատար Ջեմալը, որը պահպանել էր նաև ռազմածովային նախարարի պաշտոնը: Այս գործողությունն էլ ավարտվում է պարտությամբ: Սկզբում թվում էր, թե թուրքերի հարձակումը զարգանում է հաջողությամբ. 1915 թ. հունվարին նրանց հաջողվել էր գրավել Սինայի թերակղզին: Սակայն Սուեզի ջրանցքը, չնայած մեծ կորուստներին, չհաջողվեց անցնել, Եգիպտոսում էլ մուսուլման բնակչության սպասված ապստամբությունը անգլիացիների դեմ տեղի չունեցավ: Ավելի մեծ կորուստներից խուսափելու համար 1915 թ. փետրվարի 3–ին օսմանյան զորքերը ստիպված էին նահանջել:

Այդ պարտությունից երկու շաբաթ հետո՝ 1915 թ. փետրվարի 18–ին, սկսվեց բրիտանական և ֆրանսիական զորքերի համատեղ հարձակումը մայրաքաղաք Կոստանդնուպոլսի ուղղությամբ: Այն մտավ պատմության մեջ Դարդանելի գործողություն անվամբ: Երկարատև արյունալի մարտերի վերջնական արդյունքն անբարենպաստ էր դաշնակիցների համար: Մայրաքաղաքը գրավել նրանց չհաջողվեց, և 1916 թ. հունվարին բրիտանական վերջին ստորաբաժանումները լքեցին Գալիպոլիի թերակղզին:

Հաջորդ՝ 1916 թ. օսմանյան բանակը Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող մարտերում ծանր պարտություններ կրեց ռուսական բանակից և ստիպված էր նահանջել: Ռուսական զորքերը գրավեցին Էրզրումը (Կարինը), Վանը, Տրապիզոնը, Երզնկան, Մուշը, Բիթլիսը: Նրանց հսկողության տակ անցավ Արևմտյան Հայաստանի մեծ մասը:

Այդ թվականը նշանավորվեց նաև արաբական ապստամբությամբ թուրքերի տիրապետության դեմ, որը տեղի էր ունեցել բրիտանացիների դրդմամբ: Օգտվելով դրանից՝ 1917 թ. գարնանը բրիտանական զորքերը գրավեցին Բաղդադը և սկսեցին առաջընթաց դեպի Պաղեստին: Ակնհայտ էր դառնում, որ Օսմանյան կայսրությունը կանգնած է մերձավորարևելյան տիրույթները կորցնելու վտանգի առջև:

Փորձելով շտկել իրադրությունը՝ օսմանյան բանակի թուրք–գերմանական համատեղ հրամանատարությունը դիմեց արկածախնդրության: Առանց լուրջ նախապատրաստական աշխատանքի 1917 թ. ամռանը հապճեպ ստեղծվեց «Յըլդըրըմ» («Կայծակ») բանակային հարվածային միավորումը: Ենթադրվում էր, որ անսպասելի հարվածով հնարավոր կլինի դուրս շպրտել բրիտանացիներին Բաղդադից: Սակայն այս դեպքում նույնպես օսմանյան զինված ուժերը կրեցին ծանր պարտություն: «Յըլդըրըմը» կորցրեց իր կազմի մոտ մեկ երրորդը և ստիպված նահանջեց: 1917 թ. նոյեմբեր–դեկտեմբեր ամիսներին բրիտանական զորքերը շարունակեցին իրենց հաղթական գործողությունները Մերձավոր Արևելքում և գրավեցին Երուսաղեմը:

1914–1917 թթ. ռազմական գործողությունների արդյունքները աղետալի էին Օսմանյան կայսրության համար: Տարածքային կորուստներն ահռելի էին՝ համարյա ողջ Արևմտյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի զգալի հատվածը: Բանակի կազմի կորուստները կազմում էին շուրջ 900 հազար մարդ: Չէին համալրվում զենքի և զինամթերքի կորուստները: Քիչ չէին դեպքերը, երբ նրանց բացակայության պատճառով բանակը ի վիճակի չէր լինում վարելու ռազմական գործողություններ:

Պատերազմը ծանր հարված հասցրեց առանց այդ էլ ճգնաժամային վիճակում գտնվող երկրի տնտեսությանը՝ ինչպես գյուղատնտեսությանը, այնպես էլ արդյունաբերությանը: Ավելի քան կիսով չափ կրճատվեցին ցանքատարածությունները, անասունների գլխաքանակը: Զգալիորեն նվազեց սննդամթերքի արտադրությունը, երկրի որոշ շրջաններ մատնվեցին սովի: Արդյունաբերական արտադրությունը նույնպես մեծ անկում ապրեց: Այսպես, օրինակ՝ ածխի արտադրությունը նվազեց ավելի քան երեք անգամ, իսկ աղի արտադրությունը՝ շուրջ երկու անգամ: Գրեթե ամբողջությամբ կանգ առավ արտաքին առևտուրը: Առավել ծանրացավ երկրի ֆինանսական դրությունը: Մասնավորապես բյուջեի դեֆիցիտը աճեց շուրջ 15 անգամ: Կտրուկ աճեցին սննդամթերքի գները: Այսպես՝ հացը թանկացավ 37 անգամ, բրինձը՝ 30 անգամ, իսկ կարտոֆիլը՝ 27 անգամ: Երկրում, ըստ էության, սկսվեց սով: Հատկապես աղետալի էր վիճակը Սիրիայում և Լիբանանում, որտեղ սովից և հիվանդություններից մահացավ բնակչության շուրջ 40 տոկոսը: Ծաղկեցին կաշառակերությունը և զեղծարարությունները, որոնք կազմակերպվում էին իշխանությունը-

ների բարձրաստիճան ներկայացուցիչների կողմից: Բնակչության լայն խավերի դժգոհությունը համատարած էր: Ընդհանուր առմամբ, Օսմանյան կայսրությունը հայտնվել էր ծանր իրավիճակում:

Առաջին աշխարհամարտի տարիներին Օսմանյան կայսրության իշխանությունները իրականացրին ծանրագույն հանցագործություն՝ Հայոց ցեղասպանությունը: Նրա գաղափարական նախապատրաստումը սկիզբ է առնում դեռևս 1910 թ. օգոստոսին, երբ Թալեաթը, ելույթ ունենալով երիտթուրքական կուսակցության բարձրագույն ներկայացուցիչների առջև, ձևակերպում է հպատակ քրիստոնյա ժողովուրդների բռնի օսմանացման գաղափարը: Միաժամանակ սկսվում է թուրքական մեծապետական ազգայնամոլական գաղափարախոսության՝ թյուրքչուլուքի քարոզչությունը, որի արդյունքում ձևավորվում է Անատոլիայի՝ որպես թուրք ազգի գոյության կարևորագույն օրրանի գաղափարը՝ առանց որի թուրք ազգը գոյություն ունենալ չի կարող: Նույն շրջանում ուժեղանում է երիտթուրքական կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներից Զիայի դերը, և նա դառնում է կուսակցության գլխավոր գաղափարախոսը: Նա ձևակերպում է պանթյուրքիզմի մի շարք կարևոր դրույթներ, որոնք գաղափարական «հիմնավորում» դարձան Հայոց ցեղասպանության համար:

1913 թ. կեսերին ուրվագծվում է «Միություն և առաջադիմություն» կուսակցության նոր քաղաքականությունը ազգային հարցում, որը, վերջնականորեն ազատվելով օսմանյան եղբայրության շղարշից, սկսում է հիմնվել պանթյուրքիզմի և ծայրահեղ ազգայնամոլության գաղափարների վրա, որոնց իրականացումը ենթադրում էր զանգվածային բռնի տեղահանություններ և սպանություններ: Հետագայում Թուրքիայի Հանրապետության երրորդ նախագահ դարձած Ջելալ Բայարը իր հուշերում գրում է, որ արդեն այդ շրջանում գոյություն է ունեցել «Անատոլիայի թուրքացումը քրիստոնյաներին վերացնելու միջոցով» գործողությունների ծրագիր: Կառավարության կողմից այն առաջին անգամ կիրառվել է կայսրության հույն հպատակների նկատմամբ, ուղեկցվել է զանգվածային բռնություններով, որոնք իրականացվել են «Թեշքիլյաթ–ը մահսուսե»՝ «Հատուկ կազմակերպություն» գաղտնի կազմակերպության կողմից: Այն հետագայում լայնորեն օգտագործվեց իշխանությունների կողմից Հայոց ցեղասպանության տարիներին:

Երիտթուրքական կուսակցության ղեկավար գործիչների հուշագրությունները և ժամանակակից հետազոտողների աշխատությունները վկայում են, որ Արևմտյան Հայաստանը հայաթափ անելու սկզբունքային որոշումը ընդունվել է 1914 թ. մայիս–օգոստոս ամիսներին:

Առաջին աշխարհամարտը լավագույն հնարավորություն էր Օսմանյան կայսրության իշխանությունների կողմից կյանքի կոչելու իրենց հանցավոր որոշումները: Պատերազմի առաջին ամիսների ընթացքում մշակվում է ցեղասպանության իրականացման տասը կետից կազմված ծրագիրը, և սկսվում է նրա իրականացումը: 1915 թ. մայիսի 24–ին Անտանտի երեք երկրները՝ Մեծ Բրիտանիան, Ռուսաստանը և Ֆրանսիան, հանդես եկան հայտարարությամբ, որտեղ խստագույնս դատապար-

տեցին հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջումը Օսմանյան կայսրության իշխանությունների կողմից, բնութագրեցին այն հանցագործություն մարդկության դեմ և պահանջեցին կանգնեցնել դրա իրականացումը: Սակայն զանգվածային կոտորածները ոչ միայն չշարունակվեցին, այլև ավելի ընդլայնվեցին: Ցեղասպանության հրեշավոր քաղաքականության զոհ դարձան 1,5 միլիոն հայեր:

1918 թ. հուլիսի 3–ին սուլթան Մեհմեդ Ռեշադ Ե–ն մահացավ, հաջորդ օրը գահ բարձրացավ Մեհմեդ Վահիդդին Զ–ն: Նա աչքի էր ընկնում չափազաց վախկոտ և կասկածամիտ բնավորությամբ: Համաձայն պալատականների հուշերի՝ նրա վախը շրջապատից այնքան մեծ էր, որ նույնիսկ սուլթանական պալատում նա գրպանում մշտապես պահում էր ատրճանակ: Այդ վախկոտ մարդուն վիճակված էր լինել վերջին օսմանյան սուլթանը: Ինչպես և նրա նախորդը, Վահիդդինը երիտթուրքերի պարագլուխների ազդեցության տակ էր:

Վերջիններս, մասնավորապես Էնվերը, շարունակում էին փայփայել պանթյուրքիստական ծրագրեր: Նրա հրամանով 1918 թ. հուլիսին դեռևս ամիսներ առաջ ստեղծված «Իսլամի կովկասյան բանակը» իրեն միացած կովկասյան թաթարների զինված ջոկատների հետ համատեղ սկսում է առաջխաղացում դեպի Բաքու: Նպատակը ոչ միայն Բաքվի նավթի հանքերին տիրանալն էր, այլև պանթյուրքիստական ծրագրերի իրականացումն էր: Բանակի հրամանատարն էր Էնվերի զարմիկ Նուրի փաշան: Սեպտեմբերի 15–ին պարտության մատնելով Բաքուն պաշտպանող միացյալ բազմազգ զինուժը, որի կազմում ի թիվս այլոց կռվում էին ինչպես անգլիացի, այնպես էլ հայ զինյալներ, թուրքերից և կովկասյան թաթարներից կազմված բանակը մտնում է քաղաք և շարունակելով Հայոց ցեղասպանության հրեշավոր քաղաքականությունը՝ սրի է քաշում շուրջ 30 հազար խաղաղ բնակչության:

Բաքվի գրավումը չէր կարող սքողել այն աղետալի վիճակը, որը ստեղծվել էր Օսմանյան կայսրության համար Բալկաններում և սիրիական ռազմաճակատում: Սեպտեմբերի կեսերին ռազմական գործողությունների բալկանյան թատերաբեմում Անտանտի երկրների բանակները ձեռք բերեցին որոշիչ առավելություն և ճանապարհ հարթեցին դեպի Կոստանդնուպոլիս: Սեպտեմբերի 24–ին Քառյակ պետությունների միության անդամ Բուլղարիան ընդունեց իր պարտությունը, ստորագրեց զինադադար և դուրս եկավ պատերազմից: Այդպիսով Օսմանյան կայսրությունը կորցրեց ցամաքային կապը իր մյուս դաշնակիցների հետ, և նրա մայրաքաղաքը մնաց անպաշտպան:

Թուրքական զորքերը ծանր պարտություններ կրեցին Սիրիայում և Պաղեստինում: Սեպտեմբերի 24–ին սկսված անգլիական զորքերի հարձակման արդյունքում Օսմանյան կայսրության կրած ծանր պարտությունից հետո թուրքական երկու բանակները փաստորեն դադարեցին գոյություն ունենալուց, ռազմաճակատը փլուզվեց, թուրք ռազմագերիների թիվը կազմեց շուրջ 75 հազար մարդ: Անգլիական բանակը և նրանց դաշնակցած արաբական զինված ստորաբաժանումները դարավոր թուրքական լծից մեկը մյուսի հետևից ազատագրեցին Ամանը, Դամասկոսը, Հալեպը:

Կայսրությունը հայտնվեց ռազմական աղետի եզրին: Երիտթուրքական կուսակցության փաստացի ղեկավար և սադրազամ (կառավարության նախագահ) Թալեաթ փաշան ստիպված էր հայտարարել. «Մեր քաղաքականությունը պարտություն կրեց»: Հոկտեմբերի 14–ին երիտթուրքերի կառավարությունը՝ Թալեաթի ղեկավարությամբ, հրաժարական տվեց: Կազմվեց նոր կառավարություն՝ ծագումով ալբանացի Ահմեդ Իզզեթ փաշայի ղեկավարությամբ, որը զինադադարի խնդրանքով դիմեց Անտանտին: Դաշնակիցները համաձայնեցին սկսել բանակցությունները հոկտեմբերի 27–ին: Անտանտի անունից դրանք վարում էին անգլիացիները: Նրանք նույնիսկ թույլ չտվին, որ բանակցություններին մասնակցի Ֆրանսիայի ներկայացուցիչը:

Զինադադարը կնքվեց 1918 թ. հոկտեմբերի 30–ին Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստի մատույցներում խարիսխ գցած անգլիական ռազմանավի վրա: Այն ազդարարեց Օսմանյան կայսրության պարտությունն Առաջին աշխարհամարտում և պատմության մեջ մտավ որպես Մուդրոսի զինադադար:

Զինադադարի տեքստը բաղկացած էր 25 կետից, որոնք նախատեսում էին Բոսֆորի և Դարդանելի նեղուցների, ինչպես նաև Տավրոսի թունելների համակարգի և մի շարք կարևոր նավահանգիստների անցումը Անտանտի դաշնակից երկրների անմիջական հսկողության տակ: Անհրաժեշտության դեպքում, եթե վտանգ էր սպառնում դաշնակիցներին, նրանք իրավունք էին ստանում գրավելու կայսրության տարածքում գտնվող բոլոր ռազմավարական նշանակություն ունեցող շրջանները:

Զինադադարի պայմանները թուրքերին թելադրվել էին բրիտանացիների կողմից: Վերջիններս էլ, նպատակ ունենալով հերթական անգամ օգտագործելու թուրքական զորքը ռուսների դեմ, որոշեցին չպահանջել օսմանյան բանակի ամբողջական զորացրումը: Զինադադարը նախատեսում էր, որ կպահպանվեն այն ստորաբաժանումները, որոնք անհրաժեշտ են «սահմանների և ներքին կարգուկանոնի» պահպանման համար: Այս կետն ունեցավ ճակատագրական նշանակություն, քանի որ հետագայում հնարավորություն տվեց թուրք ազգայնականներին օգտագործելու այդ ստորաբաժանումները զինված պայքար ծավալելու համար:

Մուդրոսի զինադադարի մի քանի կետեր (4, 11, 15, 16, 24) ուղղակիորեն առնչվում էին Հայաստանի շահերին: Այսպես, օրինակ՝ նախատեսվում էր, որ թուրքերի կողմից գերեվարված և բռնագաղթեցված բոլոր հայերը պետք է տեղափոխվեին մայրաքաղաք Կոստանդնուպոլիս և հանձնվեին դաշնակիցներին: Թուրքական զորքերը դուրս էին բերվում Այսրկովկասի որոշ շրջաններից և Հայոց Կիլիկիայից: Հայկական վիլայեթներից որևէ մեկում անկարգությունների դեպքում դաշնակիցներն իրավունք էին ստանում անհապաղ գրավելու այն:

Վերը նշված կետերը նպաստավոր էին հայ ժողովրդի համար: Սակայն այն հանգամանքը, որ զինաթափ չարվեցին Արևմտյան Հայաստանում և Այսրկովկասի մի շարք շրջաններում տեղակայված օսմանյան կանոնավոր բանակի ստորաբաժանումները, նշանակում էր, որ Հայոց անկախ պետականությունը լրջորեն վտանգված էր և ցեղասպանությունից փրկված հայության մնացորդները կանգնած էին

նոր կոտորածների վտանգի առջև: Հիշեցնենք, որ դրանք այն ստորաբաժանումներն էին, որոնք մասնակցել էին հայ ժողովրդի բնաջնջմանը 1915–1916 թթ. Արևմտյան Հայաստանում և 1918 թ. Արևելյան Հայաստանում ու Այսրկովկասի այլ հայաշատ վայրերում:

Այսպիսով՝ Մուդրոսի զինադադարը փաստեց, որ Անտանտի անդամ պետությունները, առաջին հերթին՝ Մեծ Բրիտանիան, հերթական անգամ զոհաբերեցին հայ ժողովրդի կենսական շահերը հանուն իրենց աշխարհաքաղաքական հաշվարկների:

Զինադադարն ուժի մեջ մտավ հոկտեմբերի 31–ին: Երեք օր անց՝ նոյեմբերի 2–ից 3–ի գիշերը, երիտթուրքերի հանցագործ պարագլուխները գերմանական ռազմական նավով դիմեցին փախուստի, կուսակցությունը հայտարարեց ինքնալուծարման մասին: Այդպիսի անփառունակ վախճան ունեցավ «Միություն և առաջադիմություն» կուսակցության շուրջ տասը տարի տևած կառավարման շրջանը:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ XVIII ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ — XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

XVII–XVIII դարերում օսմանյան ռազմաավատական համակարգի ճգնաժամի խորացումը հանգեցրեց դրա անխուսափելի վերացմանը: Արդեն XIX դարի 20–ական թվականներին թիմարների և զեամեթների նախկին թվաքանակից քիչ բան էր մնացել: Ռազմաավատական համակարգի վերացումը, որն ագրարային բարեփոխում էր, ընթացավ XIX դարի 30–50–ական թվականներին: Սկզբում թիմարիոտները և զայիմներն իրենց հողային տիրույթները տվեցին պետական իշխանություններին, որոնցից էլ իլթիզամի կարգով ստանում էին իրենց հասանելիք եկամուտը: Այնուհետև պետությունը նրանցից օրենքով վերցրեց հողին տիրելու նախկին իրավունքը և որպես փոխհատուցում՝ տերերին վճարում էր ունեցած ավատի եկամտի կեսը: Սակայն ավատատերերը դրանից էլ զրկվեցին: Եվ միայն նրանք, ովքեր փաստաթղթով կարող էին ապացուցել հողին տիրելու իրենց նախկին իրավունքը, պետական գանձարանից ստանում էին դրամական նպաստներ: Մահմուդ Բ–ն այդ կարգը տարածեց նաև մուքաթաա (որոշակի հողային տարածք, որից պետական առանձին ունեցվածքի կառավարիչը՝ էմինը կամ կապալառուն, հարկեր էր հավաքում), մալիքանե (ցմահ կապալառությամբ տրված հող կամ որպես սեփականություն՝ վերնախավին տրված կալվածք) և այլ հողային տիրույթների վրա: Ըստ էության, սուլթանը փորձում էր ամեն կերպ վերահաստատել իր անվերապահ իրավունքներն Օսմանյան տերության բոլոր հողերի նկատմամբ, ինչը որոշակիորեն վերադարձ էր դեպի անցյալ: Ահա թե ինչու, շատ հետազոտողների կարծիքով, Օսմանյան կայսրությունում չձևավորվեց դասական իմաստով տոհմիկ ազնվականություն, որն այնքան հատուկ էր շատ երկրների:

Պետության իրավասության տակ անցած հողերը մեծ մասամբ տրվում էին գյուղացիներին՝ թափուի (միրի՝ պետական, հողերը գյուղացիների կողմից օգտագործելու իրավունքը և հարկերը վճարելու պարտավորությունը հաստատող փաստաթուղթ) իրավունքով: Ընդհանուր օգտագործման համայնական հողերի մի մասը (արազ–ի մեթրուքե), ինչպես նաև չօգտագործված խոպան հողերը (արազ–ի մևաթ), որոնք ոչ մեկին չէին պատկանում, ենթակա էին վաճառքի: Այս բոլորը հայտնի չափով նպաստեց գյուղատնտեսության զարգացմանը: Հատկապես մեծ տարածում էր ստանում հողի մասնավոր սեփականությունը: Գյուղացիության մի մասը դառնում էր հողատեր: Գյուղատնտեսությունն ավելի ու ավելի էր ներքաշվում շուկայա-

կան հարաբերությունների մեջ, որը, սակայն, համատարած բնույթ չուներ: Ահա թե ինչու Մահմուդ Բ–ի ագրարային բարեփոխումը շարունակվեց Թանզիմաթի դարաշրջանում: Սակայն պետք է նկատի ունենալ, որ երկար ժամանակ հողային օրենսդրության մեջ տիրում էր խառնաշփոթ: Ընդունված օրենքները դեռևս բավարար չէին հողօգտագործման իրավական հիմքերն ամրապնդելու համար: Ղրիմի պատերազմը կտրուկ վատացրեց առանց այն էլ ցածր մակարդակի վրա գտնվող գյուղատնտեսության վիճակը:

Օսմանյան տերությունում հողօգտագործման իրավունքը, որն այնքան կասեցնում էր տնտեսության արևմտականացումը, պահպանվեց մինչև դրա կործանումն Առաջին աշխարհամարտի արդյունքում:

Հողային հարաբերությունները սերտորեն միահյուսված էին Օսմանյան կայսրության սոցիալական և հարկային համակարգերի հետ: Օսմանյան տերության բնակչությունը, տարբեր գնահատականներով, XIX դարի 20–ական թվականներին կազմում էր 20–23 միլիոն: 1844 թ. մարդահամարի տվյալներով՝ տերությունում ապրում էր 37 միլիոն (անմիջական հպատակները՝ 25 միլիոն) մարդ, իսկ 1850 թ. տվյալներով՝ ավելի քան 35 միլիոն: 1876 թ., չնայած տարածքային կորուստներին, սուլթանի անմիջական հպատակների թիվը կազմում էր 23 միլիոն, իսկ կախյալ երկրների հետ միասին՝ ավելի քան 47 միլիոն մարդ: Ինչպես տեսնում ենք, տվյալները հակասական են, ինչը շատ բնորոշ է օսմանյան վիճակագրությանը:

Անդրադառնալով հարկային համակարգին՝ պետք է նկատի ունենալ, որ, ի տարբերություն արևելյան ավանդական հասարակության, որտեղ պետությունն ապահովում էր վերարտադրությունը, Օսմանյան տերությանը գլխավորապես հետաքրքրում էր հարկահավաքումը: Պետությունը չէր խառնվում տնտեսությանը և համայնքի ներքին գործերին: Այդ բնագավառն ուսումնասիրած հետազոտողների մեծ մասն այն կարծիքին է, որ օսմանյան հարկային համակարգը բարդ է, խճճված և ավելի շատ հիշեցնում է հպատակների կողոպուտ և տնտեսական ստրկացում: Այդպիսի իրավիճակի ստեղծմանը պատմականորեն նպաստել են արևելյան հասարակությանը բնորոշ՝ դարերով ամրապնդված սովորույթները, կրոնը, քոչվորական և նստակյաց քաղաքակրթությունների բախումն ու դրանց միախառնման հիվանդագին գործընթացները, նվաճողական անվերջանալի պատերազմները, պետական հիմնարկների շարունակական փոփոխությունները և այլն:

Հարկերի առաջին խումբը կազմում էին շարիաթական հարկերը (թեքալիֆ–ի շերիյյե), որոնք դեռ նախաօսմանյան ժամանակներում սահմանել էր իսլամը: Դրանցից գլխավորներն են՝ քրիստոնյաներից գանձվող գլխահարկը՝ *ջիզյեն* (ջիզիա, ջեզյե), հողահարկը՝ խարաջը, եկամտահարկը՝ ուշրը (աշար) և մզկիթներին ու եկեղեցուն տրվող հարկը՝ զեքիաթը (զեքյաթ, զաքաթ):

Երկրորդ խումբ հարկերը (թեքալիֆ–ի օրֆիյյե) վերաբերում են ավանդույթին և սովորական իրավունքին: Սրանք գյուղացիական այն հողահարկերը և պարհակներն են, որոնք տվյալ երկրամասում եղել են դեռ նախաօսմանյան շրջանից: Դրանց մեջ մտնում էին նաև բազմաթիվ տուգանքները և վարչական տուրքերը, մաքսերի,

մենաշնորհների, ամուսնության, ամուրիության և այլ գործառույթները կարգավորող գանձումները, որոնց չափը սահմանում էր սուլթանը:

Երրորդ խումբն արտակարգ հարկերն էին (ավարիզ–ի դիվանիյյե), որոնք սկզբում գանձում էին մի քանի տարին մեկ՝ մեծ պատերազմների դեպքում: Ժամանակի ընթացքում դրանք այլ անուններով դարձան մշտապես գանձվող սովորական հարկեր:

Ավելի դժվար է հարկերի ընդհանուր թվի ճշտումը: Նույնիսկ կարծիք կա, որ դրանց թիվը հասել է մոտ հազարի: Ընդհանուր տեսակետի համաձայն՝ հարկային ծանր բեռը պայմանավորված էր ոչ միայն հարկերի բազմաքանակությամբ, այլև դրանց սահմանված չափերի կոպիտ խախտումներով: Այսպիսի հարկային խառնաշփոթը պահպանվեց մինչև Առաջին աշխարհամարտը:

Թանզիմաթի դարաշրջանի բարեփոխումները թեև օգտակար էին, չփոխեցին հարկային համակարգի էությունը:

Քաղաքներում արտադրության, ինչպես նաև առևտրի կազմակերպման հիմնական ձևը *էնաֆությունն* (համքարություն) էր: Արհեստավորական արտադրանքի մեջ առաջնային էին տեղական հումքի հիմքի վրա աշխատող մանածագործությունը, ջուլհակությունը, ինչպես նաև կաշեգործությունը, մետաղագործությունը (առաջին հերթին պղնձագործությունը, արծաթագործությունը և զինագործությունը), գյուղմթերքների մշակումը և այլն: Սննդի պատրաստման մեծագույն մասը վերապահված էր մուսուլմաններին: Քաղաքներում այդպիսի էնաֆությունները զբաղեցնում էին առանձին թաղամասեր, որոնք կրում էին համապատասխան անուններ:

Օսմանյան քաղաքները, որպես արհեստների և առևտրի, ինչպես նաև ապրանքային արտադրության և դրամափոխման կենտրոններ, աստիճանաբար վերածվել էին ինքնուրույն տնտեսական գործոնի: XIX դ. դրանց տնտեսական դերն ավելի մեծացավ, քանի որ մի կողմից՝ ակնհայտ դարձան շուկայական տնտեսության ձևավորման արագացման միտումները, մյուս կողմից՝ խորացավ օսմանյան տիրույթների տնտեսական ներգրավումը համաշխարհային շուկայում և հատկապես Եվրոպայում: XIX դ. առաջին կեսին, ըստ պաշտոնական տվյալների, Օսմանյան տերությունում կար 20 հազարից ավելի բնակչություն ունեցող 47 քաղաք: Դրանցից ութն ուներ 100 հազարից ավելի բնակչություն, յոթը՝ 50–100 հազար, 21–ը՝ 30–50 հազար, 11–ը՝ 20–30 հազար: Այս քաղաքները գլխավորապես տեղակայված էին բալկանյան և արաբական երկրներում: Փոքր Ասիայում, եթե նկատի չունենանք մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը, միայն Զմյուռնիան (Իզմիրը) ուներ հարյուր հազարից ավել բնակչություն:

Ըստ որոշ հաշվարկների՝ XX դ. սկիզբին Օսմանյան տերությունում կար 1500–ից ավելի արդյունաբերական ձեռնարկություն, որոնցից միայն 60–ն ուներ եվրոպայից բերված սարքավորումներ: Մեծ զարգացում ապրեց նաև կաշեգործությունը, գորգագործությունը, գործվածքեղենի արտադրությունը: Հաշվարկված է, որ վաճառա-

կանական կապիտալն այդ դարաշրջանում աստիճանաբար վերածվում էր արդյունաբերականի:

Նոր դարերում Օսմանյան կայսրության բոլոր տիրույթները ներքաշվեցին համաշխարհային տնտեսական գործընթացների մեջ: Պետք է նկատի ունենալ, որ մինչ այդ դրանք միջազգային քարավանային առևտրի հնագույն օջախներ էին: Օսմանյան առևտուրը, ինչպես հասարակական կյանքի մյուս բնագավառները, կարգավորված էին շարիաթական օրենքներով: Տերության տարբեր մասերի միջև կար արհեստավորական և գյուղատնտեսական արտադրանքի առևտուր: Դրանցից էին տարբեր տեսակի հացահատիկները, բուրդը, բամբակը, այծի մազը, տորոնը, մեղրամոմը, ձեթը, ափիոնը, վայրի կաղինը (փալամուտ), ծխախոտը, կենդանիները, կաթնամթերքը, վուշը, կանեփը, բմբուլը, կաշվեղենը, մորթին, խմիչքը, հյութերը, ոսկերչական իրերը, մետաղյա իրերը, զենքերը, մահուդը (աբա), թաղիքը, շալը, գորգը, մետաքսե և այլ բազմազան գործվածքեղենը և այլն:

Տեղական առևտրում դեռևս պահպանվում էր ապրանքափոխանակությունը: Դրամական գլխավոր միավորներն էին ակչեն, ղուրուշը (կուրուշ, պիաստր), փարան, լիրան: Սկզբնաղբյուրներում հաճախակի են հանդիպում քաղաքներում և նույնիսկ մեծ գյուղերում գոյություն ունեցող շաբաթական (հնգօրյա) շուկաների մասին հիշատակումներ, որտեղ առևտուր էր կատարվում ինչպես քաղաքի և գյուղի, այնպես էլ քոչվորների և նստակյաց բնակչության միջև: Ներքին շուկայում կարևոր դեր էին խաղում նաև տարածաշրջանային, միջքաղաքային և տեղական տոնավաճառները: XVIII դ. ի վեր տոնավաճառները ներքաշվեցին նաև արտաքին առևտրի մեջ:

Օսմանյան տիրույթներում առևտրի զարգացման խոչընդոտներից մեկը ներքին մաքսերի առկայությունն էր: Պետությունն այն ժառանգել էր նախորդ ժամանակներից: Մաքսահարկը հայտնի էր բաջ (բաժ, բաճ՝ bâc, bâj) կամ գյումռյուկ (gümrük) ընդհանուր անուններով: Այն, որպես ընդհանուր հարկային համակարգի մի մաս, ուներ բազմաթիվ տարանուններ, խճճված բազմատեսակ գանձման ձևեր և դրսևորումներ: Հաճախ վաճառականը ստիպված էր լինում նույն ապրանքի համար մի քանի անգամ մաքս վճարել: Այս վիճակը շարունակվեց մինչև XIX դարի վերջին ներքին մաքսերի փաստացի վերացումը:

Մինչարդյունաբերական արևելյան հասարակություններին բնորոշ է արտաքին առևտրի գերակայությունը ներքինի նկատմամբ: Դա բնորոշ էր նաև օսմանյան կայսրությունում: Օսմանյան տիրույթներում առևտրի զարգացման գործընթացները, որոնք XIX դ. մեծ զարգացում ունեցան, նախ և առաջ խորապես կապված էին Եվրոպայի տնտեսական ներթափանցման հետ: Այդ գործընթացը սկսվել էր ավելի վաղ՝ XVI դարից, արագացել էր Եվրոպայում արդյունաբերական հեղաշրջման դարաշրջանում (XVIII դ. վերջ — XIX դ.):

Արտաքին առևտրի պատմության նոր փուլը սկսվում է Թանզիմաթի դարաշրջանով: 1838 թ. օգոստոսին կնքվում է անգլո–օսմանյան առևտրական համաձայնագիր, որը սահմանում էր երկու պետությունների միջև առևտրի ազատականա-

ցում: Սուլթանը պարտավորվում էր վերացնել առևտրի մենաշնորհները, հարկադիր գնումները, ինչպես նաև պետության կողմից մի շարք արտադրաճյուղերում կանոնակարգումները: Սահմանվում էր տերության բոլոր կողմերում անսահմանափակ ազատ առևտուր: Կապիտուլյացիայով նախատեսված 3%–ի փոխարեն սահմանվեց 5% ներմուծման և 12% արտահանման ընդհանուր մաքսահարկ: Մինչև 1846 թ. համանման պայմանագրեր կնքվեցին նաև եվրոպական մյուս պետությունների հետ: Նման պայմանագրերով պայմանավորված կապիտուլյացիաների նոր կոդավորումը, որը բարդ և հակասական գործընթաց էր, շարունակվեց մինչև Ղրիմի պատերազմը: Արդյունքում ստեղծվեց մի իրավիճակ, երբ Բ. Դուռն իր առևտրական գործընկերոջ հետ կապիտուլյացիայի խախտման դեպքում գործ պետք է ունենար տերությունների համաձայնեցված գործողությունների հետ: Սկիզբ դրվեց տերության ներքին շրջաններ օտարերկրյա վաճառականների ներթափանցմանը, որն առաջներում հնարավոր չէր:

Մինչև XVIII դ. վերջը Եվրոպայի հետ Օսմանյան տերության արտաքին առևտրի գլխավոր գործընկերը Ֆրանսիան էր: Այս իրավիճակը հօգուտ Անգլիայի փոխվեց Մեծ հեղափոխության և նապոլեոնյան պատերազմների դարաշրջանում: Ընդսմին, մինչև XIX դ. 30–ական թվականները Ֆրանսիայի և Ռուսաստանի հետ առևտրական հաշվեկշիռը երբեմն փոխվում էր հօգուտ Օսմանյան տերության, քանի որ սեփական մետաքսագործության, բրդի և բամբակի գործվածքեղենի արտադրության համար այդ երկրներն անհրաժեշտաբար ներմուծում էին մեծ քանակությամբ հումք: Անգլո–օսմանյան առևտրում, ընդհակառակը, գերակշռում էր գործվածքեղենի ներմուծումը: Վիեննայի վեհաժողովից հետո Դանուբ գետով մեծացած նավագնացությունը, ինչպես նաև Միջերկրական ծովում նավահանգիստների ձեռքբերման հնարավորությունը Ավստրիային դարձրին Օսմանյան տերության արտաքին առևտրի կարևոր մասնակիցը:

XIX դ. կեսին Օսմանյան տերությունն առևտրական կապերի մեջ էր 25 երկրների հետ, որոնց մշտական մասնակիցներ էին Անգլիան, Ֆրանսիան, Ավստրիան, Ռուսաստանը և Իրանը: Տնտեսական կապեր կային նաև Ամերիկայի հետ: Համաձայն կատարված հաշվարկների՝ ընդհանուր ապրանքաշրջանառությունը կազմում էր մոտ 500 միլիոն ֆրանկ, որը, դարասկզբի հետ համեմատած, 4 անգամ ավելի էր: Հաջորդ երկու տասնամյակներին այդ շրջանառությունը հասավ 700–725 միլիոն ֆրանկի: Օսմանյան կայսրության արտահանման մոտ 87%–ը գյուղատնտեսական արտադրանք էր: Մնացածն արհեստավորական ապրանքներ էին, որոնք արտահանվում էին Ռուսաստանի կազմում գտնվող Հարավային Կովկասի երկրներ: Ֆրանսիա էին արտահանվում արծաթի ձուլակտոր, պղինձ և արևելյան ոսկեդրամներ:

Եվրոպական երկրներից Օսմանյան կայսրություն գլխավորապես ներմուծվում էր գործվածքեղեն, որտեղ ամենամեծ մասնաբաժինը պատկանում էր Անգլիային: Ժամանակակիցների վկայությամբ՝ գործվածքեղենի ներմուծումը նպաստեց օսմանական համանման արհեստավորական արտադրանքի անկմանը: Ընդս-

մին, անգլիական գործվածքեղենը, որը հարմարեցվել էր արևելյան ճաշակին, թեև էժան էր, սակայն որակով զիջում էր տեղականին: Օսմանյան տիրույթներ ներմուծվում էին նաև շաքար, մետաղյա արտադրանք, երկաթ, պողպատ, զենք (1845 թ. հետո), սահմանափակ քանակությամբ մեքենաներ:

1880–1914 թթ. Օսմանյան տերության արտաքին առևտրական շրջանառությունն աճեց 2,5 անգամ: Նախկինի պես ի վնաս կայսրության էր մնում առևտրական հաշվեկշիռը: Այս դարաշրջանում աստիճանաբար ավելանում էր օտաերկրյա կապիտալ ներդրումների չափը: XIX–XX դարերի սահմանագծում հմաշխարհային առևտրում Օսմանյան կայսրության մասնաբաժինը կազմում էր 1%, իսկ օտար կապիտալ ներդրումները դրանից էլ պակաս էին: Չնայած այդ հանգամանքին՝ գլխավորապես ռազմավարական կարևորության պատճառով այստեղ պահպանվում էին զարգացող երկրների տնտեսական շահագրգռությունները: Պետական բյուջեի սնանկության պատճառով, երբ անհնարին դարձավ արտաքին պարտքերի վճարումները, բանակցությունների արդյունքում շահագրգիռ կողմերը եկան փոխհամաձայնության, որն ամրապնդվեց սուլթանական օրենքով (1881 թ. դեկտեմբերի 20–ի Մուհարրեմի դեկրետը): Ստեղծվեց Օսմանական հասարակական պարտքի վարչություն (ՕՀՊՎ): Վարչությունը ղեկավարում էր պարտատեր երկրների (Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Ավստրո–Հունգարիա, Իտալիա) ներկայացուցիչների խորհուրդը: ՕՀՊՎ–ը, որը տերությունում ուներ 720 բաժանմունք, ոչ միայն վերահսկողություն սահմանեց պետական եկամուտների համակարգում, այլև ծավալեց տնտեսական լայն գործունեություն: Դա նպաստեց մետաքսագործության (1890–1910 թթ. այն աճեց 10 անգամ), ծխախոտագործության, խաղողագործության ու գինեգործության արտադրության ընդլայնմանը, հանքերի շահագործմանը, որոնցից եկած շահույթներն անցնում էին պարտատերերին: ՕՀՊՎ–ն նպաստեց նաև երկաթուղիների կառուցմանը, օտարերկրյա բանկերի կամ մասնաճյուղերի ստեղծմանը, որոնք հեշտացրին կապիտալի ներհոսքը: Դրանցից խոշորագույնը Օտտոմանյան կայսերական բանկն էր:

Նոր դարերում Օսմանյան տերության տնտեսական զարգացման հակասական ընթացքը բնորոշ էր նաև սոցիալական կյանքին: Կարելի է վստահաբար փաստել, որ այդ ժամանակաշրջանում աշխարհի և ոչ մի կողմում սոցիալական տեղաշարժերն այնքան բարդ, տանջալից և հիվանդագին չէին, որքան օսմանյան բոլոր տիրույթներում: Դա ոչ միայն պայմանավորված էր Արևելք–Արևմուտք քաղաքակրթական բախումներով, այլև տերության բազմազգ բնույթով: Ամենագլխավորը՝ տիրող և իրենց պատմական հայրենիքներում ապրող նվաճված ազգերի մեծ մասը պատկանում էր տարբեր քաղաքակրթությունների:

XIX դարից մինչև XX դարի սկիզբը սոցիալական զարգացման գլխավոր արդյունքներից մեկը ձեռներեցների դասակարգի ձևավորումն էր: Այս նոր՝ բավականին ստվար շերտի ձևավորումն ուներ ընդգծված ազգային բնույթ: «Օսմանյան բուրժուազիա» հասկացությունը, որն ընդունված է պատմագիտության մեջ, պետք է համարել պայմանական: Ավելի ճիշտ՝ կար օսմանյան պետության սահման-

ներում առաջացած հույն, հայ, սերբ, բուլղար, արաբ և այլ ժողովուրդների բուրժուազիա: Սովորաբար նրանց անվանում են այլազգի կամ ոչ թուրք բուրժուազիա: Ընդսմին, այդպիսի բուրժուազիայի առաջացման գլխավոր հենակետը նրանց ժողովրդով բնակեցված պատմական հայրենիքներն են, որոնք օրինաչափորեն ձգտում էին դառնալու ինքնուրույն քաղաքական միավորներ: Թուրքական բուրժուազիան, որը մեծ մասամբ չէր միջամտում արտաքին տնտեսական կապերին, ձևավորվում էր համեմատաբար բարենպաստ պատմական միջավայրում: Չնայած դրան՝ օսմանյան թուրքերը երկար ժամանակ արհամարհում էին առևտրական զբաղմունքը, այն համարում էին խաբեություն, անազնիվ զբաղմունք, ձրիակերություն, նվաճված ազգերի գործ: Սկզբնապես նրանք երկրի ներսում զբաղված էին մանր առևտրով, դրամի հետ քիչ էին գործ ունենում և նրանց առևտուրն ուներ փոխանակային բնույթ: Հարուստ թուրք վաճառականներ քիչ կային: Նրանք հիմնականում բնակվում էին Զմյուռնիայում և Կոստանդնուպոլսում, մասնագիտացած էին որևէ ապրանքատեսակի առևտրի մեջ: Նրանցից ոմանք մասնակցում էին նաև տոնավաճառների առևտրին: Ամենատարբեր պատճառներով թուրքերն արտաքին առևտրին չէին մասնակցում: 1842 թ. դրությամբ Կոստանդնուպոլսի արտաքին առևտրով զբաղվող 100 առևտրական տներից ոչ մեկը թուրքական չէր:

Նոր դարերի սկզբին վաճառականությունը գործունեություն էր իրականացնում կայսրության բոլոր կողմերում՝ գլխավորապես իրենց հայրենի հատվածներում: Արտաքին առևտրում ներգրավված էր խոշոր վաճառականությունը: Նրանց կենտրոնատեղին առափնյա խոշոր քաղաքներն էին, որոնցից էին Կոստանդնուպոլիսը, Զմյուռնիան, Տրապիզոնը, Սալոնիկը, Բեյրութը և այլն: Ընդհանուր առմամբ, Փոքր Ասիայում, որն օսմանյան առևտրի գլխավոր հանգույցն էր, գործում էին գլխավորապես հայ և հույն վաճառականությունը, քաղաքներում՝ նաև հրեաները: Հենց նրանք էին սերտ դրամավարկային կապերի մեջ օսմանյան իշխանությունների հետ: Հունաստանի անկախացումից հետո հույների դերը ներքին առևտրում զգալիորեն նվազեց: Հույներն առաջնային դեր էին կատարում ծովային առևտրում, մեծ կապեր ունեին իտալական քաղաքների և Ռուսաստանի հետ: Նրանք նաև կարևոր դեր էին կատարում Բալկանյան երկրներ — Կենտրոնական Եվրոպա ցամաքային առևտրում:

Հայ վաճառականությունը տերության ներքին առևտրում էական դեր ուներ հատկապես Հայաստանում և Փոքր Ասիայում: Միևնույն ժամանակ նրանք իրենց առաջնային տեղն ունեին նաև միջազգային առևտրում: Հայաստանի պետականության կորստից հետո վաճառականները դառնում են երկրի ամենակենսունակ սոցիալական դասը, առաջադիմության գլխավոր հասարակական ուժը: Նրանք ոչ միայն եռանդուն գործունեություն էին ծավալել Հայաստանով անցնող միջազգային մայրուղիներին, այլև ձգտում էին նույնը կատարելու տարանցիկ մյուս ճանապարհներին: Սուլթանները շատ եկամուտներ ունենալու համար հովանավորում էին արտաքին առևտուրը և առանձին օսմանահպատակ հայ և մյուս խոշոր վաճառականներին հատուկ ֆերմանով տալիս էին արտոնություններ: Ընդսմին, դա ինչ–որ չա-

փով սեփական հպատակներին փոխհատուցում էր օտարերկրյա վաճառականների կապիտուլյացիաներով ունեցած արտոնությունների դիմաց: Բերաթ ունեցող վաճառականները, որոնցից շատերին սուլթանն անձամբ էր ճանաչում, որոշ չափով հստակեցված հարկային և իրավական դաշտերում գործում էին համեմատաբար ավելի ապահով:

XIX դ. առաջին կեսին Օսմանյան կայսրությունում ապրող և արևմտյան ուղիով զարգացող ինչպես հայ, այնպես էլ մյուս ազգերի կապիտալը բավարարում էր արդյունաբերական ձեռներեցություն սկսելու համար: Արդյունաբերական ձեռներեցությունը բավականին աշխուժացավ 1840–ական թվականներին, որի արդյունքը երևաց 1851 թ. Լոնդոնում տեղի ունեցած աշխարհի ժողովուրդների արդյունաբերական աշխատանքների մեծ ցուցահանդեսում: Այնտեղ հայ գործարարների կողմից ներկայացված մետաքսի, թղթի և այլ արտադրանքները շահեցին տասնյակ ոսկե և արծաթե մեդալներ: Իսկ 1867 թ. Փարիզի արդյունաբերական և գյուղատնտեսական ցուցահանդեսում հայ գործարարներ Հ. Տետեյանին, Կ. Գրիգորյանին, Գ. Խորասաճանյանին մեդալներ են շնորհվում գյուղատնտեսական ապրանքների համար:

Արդյունաբերական ձեռներեցության զարգացումը ձգվեց մինչև Առաջին աշխարհամարտը: Գլխավոր պատճառն Օսմանյան տերության ռազմական բնույթի, նվաճված ազգերի կողոպուտի, արևելյան հասարակություններին բնորոշ բազմաթիվ կողմերի պահպանումն էր: Մյուս կողմից՝ անհնարին էր օբյեկտիվորեն ստեղծել բռնի ուժով զավթված բազմաթիվ երկրների տնտեսական ընդհանրություն: Օսմանյան տիրույթներում արդյունաբերական ձեռներեցությունը, հակառակ Թանզիմաթի դարաշրջանի ոգևորության, այդպես էլ վերելք չապրեց: Արդյունաբերական հեղաշրջումը, որը հազիվ էր սկսվել, մնաց անավարտ: Պատմական գրականության մեջ հաստատուն կարծիք կա, որ դրանում իր բացասական դերն է կատարել նաև արևմտյան զարգացած երկրների տնտեսական կապիտալի ներթափանցումը: Անշուշտ, դա մի դարաշրջան էր, երբ այդ կապիտալը տնտեսապես յուրացնում էր աշխարհը: Այդ տեսակետից պետք է նկատել, որ Օսմանյան կայսրությունը բացառություն չէր կարող կազմել: Հատկապես որ պետությունն ավելի շատ հետամուտ էր իր քաղաքական շահերին և հանուն դրանց հաճախ էր զոհաբերում տնտեսական օգուտները: Այդ են վկայում Բարձր դռան XIX դ. կնքած առևտրային պայմանագրերը, կապիտուլյացիաները և տնտեսական օրենսդրությունն ամբողջությամբ:

Պատմական նոր պայմաններում հայկական վաճառականական և վարկային կապիտալը, բնականաբար, ներգրավվում է վերարտադրության նոր ոլորտներում: Առաջինն ավանդական ոլորտներն են՝ վաշխառությունը և մասնակցությունը իլթիզամին, հարկադիր առևտրին և այլն: Երկրորդը արդյունաբերական ձեռներեցությունն էր, որը, ինչպես նշվեց, օսմանյան պետությունում սահմանափակ էր: Եվ չնայած դրան՝ մինչև XX դարի սկիզբը նրանք մնացին Փոքր Ասիայում և Հայաստանում արդյունաբերական ձեռներեցության առաջամարտիկներ: Երրորդը, որն ավելի շահավետ էր, մասնակցությունն էր եվրոպական երկրների տնտեսական ներթա-

փանցմանը: Այդ բնագավառում հարստացած նոր ձեռներեցների դասին պատմական գրականության մեջ սովորաբար անվանում են կոմպրադոր (բառացի՝ գնորդ), որը նոր դարերում բնորոշ է Արևելքի արևմտականացող ավանդական հասարակություններին: Կոմպրադորներին, որոնք միջնորդի դեր էին կատարում Արևելք–Արևմուտք առևտրում, մարքսիստական պատմագրությունը գնահատել է որպես օտարերկրյա կապիտալի տնտեսական և քաղաքական գործակալներ, ազգային արդյունաբերության և ձեռներեցության ստեղծման խոչընդոտներ: Սակայն նրանց դերը չի կարելի այդպես միանշանակ բացասական գնահատել, որովհետև այն նպաստում էր արդյունաբերական քաղաքակրթության համաշխարհային տնտեսության ստեղծմանը, որն անկասելի պատմական առաջադիմական գործընթաց էր: Այդ գործում նրանց կրավորական դերը բխում էր օսմանյան հասարակության, մասնավորապես պետության բնույթից: Հենց դրանով է բացատրվում այն իրողությունը, որ մինչև XX դարի սկիզբը կոմպրադորների մեջ հայտնվեցին նաև թուրքեր, արաբներ և ուրիշներ:

Ամփոփելով նշենք, որ XX դ. սկզբին սոցիալ–տնտեսական հետագա զարգացումն անհնարին էր օսմանյան ավանդական հանրույթում և քաղաքական համակարգի պահպանման պայմաններում: Հենց դրանով էր պայմանավորված Օսմանյան կայսրության վախճանն Առաջին աշխարհամարտի արդյունքում:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ (XVIII ԴԱՐԻ ՎԵՐՋ — XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ)

XVIII դ. Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքությունը, իբրև օսմանյան Թուրքիայի հայերի կրոնավարչական և հոգևոր կազմակերպություն, իր կենսունակությունը հաստատում էր երկրում ազգային դավանական միասնության, միլեթների համակարգում իր տեղի ամրապնդումով: Պատրիարքությունը համազգային հեղինակության հասավ իր թեմերի աստիճանական ընդլայնման, հայ կրոնական կենտրոնների հետ հարաբերությունների հստակեցման և սեփական կամ նվիրապետական անկախության շնորհիվ: Օսմանյան տերության քաղաքականությունը նպաստում էր պատրիարքության ամրապնդմանը ոչ միայն Կոստանդնուպոլսի հայ հանրության ներսում, այլև Արևմտյան Հայաստանում և կայսրության բոլոր հայկական համայնքներում: Վերջինիս սահմաններում այլահավատների, այդ թվում նաև հայ հանրության նկատմամբ իշխողների վերաբերմունքն ամենից առաջ որոշվում էր զարգացման ներքին գործոններով: Հարկահավաքման անխափան իրականացումը, հենված հպատակների ավանդական կրոնադավանական կառույցների վրա, ոչ մուսուլմանների անմռունչ ենթարկումը գերակա իսլամին և այն դավանող պետության քաղաքական ու տնտեսական զորությանը շարունակում էին մնալ օսմանյան քաղաքականության անկյունաքարն ամբողջ XVIII դարում:

XVIII դարում՝ ենթադրաբար 1780 թվականից առաջ, Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքության կրոնավարչական իրավասությանն էին ենթարկվում երկու տասնյակի չափ թեմեր կամ առաջնորդություններ, որոնք Արևմտյան Հայաստանում և կայսրության մյուս տարածքներում էին: Պատրիարքական թեմերի ցանկը փոփոխությունների է ենթարկվել 1824 թ. վերջից 1825 թ. սկզբներին՝ թուրք–պարսկական վերջին պատերազմից հետո (1820–ական թթ. սկզբներ), երբ օսմանյան կառավարությունը կտրուկ վերանայեց Էջմիածնի կաթողիկոսության նկատմամբ իր նախընթաց քաղաքականությունը: Ըստ այդմ, վերանայվեցին օսմանյան Թուրքիայում գտնվող էջմիածնական տերունի թեմերի կարգավիճակները, որպիսիք էին Զմյուռնիայի, Պանտրմայի, Նիկոմեդիայի, Կեսարիայի, Արաբկիրի, Բաղդադի և այլ առաջնորդություններ, որոնք դուրս բերվեցին Էջմիածնի իրավասությունից և անցան Կոստանդնուպոլսի պատրիարքության ենթակայության ներքո: 1834 թ.,

որպես արդյունք, պատրիարքության առաջնորդությունների թիվը հասավ 36–ի: XIX դ. վերջին — XX դ. սկզբին թեմերի ցանկում նոր փոփոխություններ մտցվեցին՝ դրանում մասնակի վերաձևումների տեսքով, ինչպես, օրինակ՝ Վառնայի և Շումնայի առանձին թեմերը, որոնք միացվեցին մեկ՝ Բուլղարիայի թեմի մեջ: Կոստանդնուպոլսի պատրիարքությանն էին ենթակա, իրենց ավանդական որոշ առանձնահատկություններով հանդերձ, Աղթամարի (XIX դ. վերջերին կառավարվում էր տեղապահների կողմից՝ առանց կաթողիկոսի) և Կիլիկիայի կաթողիկոսությունները, ինչպես նաև Երուսաղեմի հայոց պատրիարքությունը:

Արդեն Գրիգոր Պասմաճյանի պատրիարքության տարիներին (1764–1773 թթ.) նկատելի են դառնում որոշ տեղաշարժեր պոլսահայ վերնախավի շրջանում: Կապված զգալի փոփոխությունների հետ, որ ապրում էր Օսմանյան կայսրությունը XVIII դարի երկրորդ կեսին, ամրապնդվեց Կոստանդնուպոլսի ամիրայական վերնախավը, որը թիմարային համակարգի քայքայման պայմաններում հաջողություններ արձանագրեց երկրի մասնավորապես ֆինանսական համակարգում և իր գործունեությամբ փաստորեն նախորդեց հետագա Օսմանյան Թուրքիա–Արևմուտք ֆինանսավարկային փոխհարաբերությունների հստակեցման նոր փուլին: Այն ի հայտ էր գալու տասնամյակներ անց, իսկ առայժմ պետությունը փորձում էր արտաքին ճնշումների դեմն առնել միլեթների հանդեպ կենտրոնաձիգ քաղաքականության ուժեղացմամբ:

XVIII դ. վերջին տասնամյակում Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքությունը, իր հերթին, օգտվում էր Բ. Դռան՝ միլեթներն ամրապնդելու ուղեգծից, որը ենթադրում էր իր շուրջը համախմբել Օսմանյան Թուրքիայում գտնվող ենթակա կրոնական կենտրոնները: Այս տեսակետից ուշագրավ են 1791 թ. Երուսաղեմի պատրիարքությանը առաջադրված նոր կանոնները, որոնցից ամենակարևորը սահմանափակում էր Երուսաղեմի պատրիարքի գործողությունների ազատությունը՝ ի դեմս միաբանության ընտրած խորհրդականների (նազըրներ)՝ դրանով իսկ ուժեղացնելով Կոստանդնուպոլսի ազդեցությունը Երուսաղեմում: Ընդգծվեց նաև պատրիարքության գերակայությունը առաջնորդությունների նկատմամբ. առաջնորդներն այդուհետև պաշտոնապես հաստատվելու էին միայն պատրիարքի համաձայնությամբ: Նույն ժամանակահատվածում պատրիարքարանի եռանդուն գործունեության շնորհիվ մայրաքաղաքում նշանակալի բարեփոխումներ իրականացվեցին կրթության և լուսավորության բնագավառում, որտեղ պետք է առանձնացնել թաղային վարժարանների համակարգի ստեղծումը՝ Շնորհք Մկրտիչ ամիրայի գործակցությամբ:

Դեռևս XVIII դ. երկրորդ կեսից Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքների ընտրության, ինչպես նաև պաշտոնանկության գործում եթե ոչ վճռական, ապա կարևոր դերակատարություն ունեին ամիրաները: Պոլսահայ համայնքում, մասամբ նաև գավառներում հայտնի ամիրաների զորեղ խմբերի մեջ առանձնանում էին Տյուզյան, Տատյան, Պալյան և այլ ամիրայական գերդաստանները: Նրանք, որպես վառոդապետեր, փողերանոցի վերատեսուչներ, սեղանավոր ամիրաներ և

այլն, իրենց հասարակական դիրքն ու ազդեցությունը կարողացան պահպանել մինչև Թանզիմաթի դարաշրջանը, իսկ ավելի որոշակի՝ մինչև ազգային սահմանադրության ընդունումը: Հանրային ազդեցության տեսակետից ամիրաներին զիջում էին արհեստապետները՝ էսնաֆությունների գլխավորները, որոնք, սակայն, արդեն Թանզիմաթին նախորդող տասնամյակից հայ համայնքում սակավ առ սակավ սկսել էին հակակշռել պատրիարքի և ամիրաների բացարձակ առաջնայնությանը:

XVIII դ. պատրիարքության թեմերից գանձվում էր *մուքաթաա* կոչվող հարկը, որը երկրում հատկապես նշանակալիություն ստացավ վարձակալական համակարգի ընդլայնման պայմաններում: Օգտվելով այս համակարգից՝ ամիրաները մեծացնում էին իրենց կարողություններն ու ազդեցությունը պատրիարքի հետ հարաբերություններում: Պատրիարքն էր հաստատում մյութևելիներին (հիմնականում՝ ամիրաներ), որոնք ընտրվում էին համայնքի ժողովում և ստանձնում վակֆերը (եկեղեցիների կամ մզկիթների տնօրինությանը հանձնված սեփականություններ), կառավարելու եկամտաբեր գործը: Մյութևելիներն իրենց հերթին նշանակում էին իրենց փոխանորդ եկեղեցականների՝ թվով 4–12 մարդ, որոնք վարում էին համայնքի առօրյա գործերը: Այս համակարգը հարատևեց մինչև 1847 թ. և վերացավ Մատթեոս պատրիարքի ժամանակ: Մյութևելիների հաստատման ու պաշտոնաթողության գործում պատրիարքների իրավունքները սահմանափակվում էին պետության գործառույթով՝ ի դեմս Ստամբուլի քադիի, որին և՛ մեկ, և՛ մյուս դեպքում հայցադիմում (հյոջեթ) էին ներկայացնում մյութևելիության հավակնորդները: XVIII–XIX դդ. պատրիարքության վճարած հարկերը գրեթե նույնն էին մնացել. Ներսես Վարժապետյան պատրիարքին (1874–1884 թթ.) տրված մի ֆերմանում նշված են արքունի տուրքը, պատրիարքարանի տուրքը և «պատրիարքութեան յատկացեալ ստակը»:

Իր ներհամայնքային գործառույթներում պատրիարքությունը մեծապես հենվում էր ազգային արհեստավորական–առևտրային խավերի վրա՝ իրականացնելով հարկահավաքման վերահսկողությունը և կարգուկանոնի պահպանությունը՝ պետական օրենքների ու սեփական կրոնաբարոյական նորմերի համեմատ: XVIII–XIX դդ. հայ հանրության մեջ նշված խավերը, որոնք ընդգրկված էին էսնաֆական կազմակերպությունների մեջ, ներկայացնում էին ազգաբնակչության ստվար մասը: Մ. Ուբիչինին մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի պոլսահայ համայնքը, որի վրա հենվում էր պատրիարքությունը որպես սոցիալական հենքի, բաժանում էր չորս դասի՝ հոգևորականություն, սարաֆներ (սեղանավորներ), գրական և մասնագիտական դաս, արհեստավորներ ու առևտրականներ: Բացի հոգևորականությունից, որը ներկայացնում էր եկեղեցին, մյուս բոլոր դասերը մտնում էին պետության ամրագրած էսնաֆությունների մեջ:

Թանզիմաթի դարաշրջանում օսմանյան վարչաիրավական, կառավարման և մասամբ նաև տնտեսական կյանքի բնագավառներում կատարված փոփոխությունները պետք է իրենց ներգործությունը թողնեին տերության ոչ մուսուլմանների հանրությունների փոխհարաբերությունների վրա: Բարենորոգչական շարժումը, որն ի սկզբանե ենթադրում էր կանխել կայսրության հաջորդ տասնամյակի սկզբում ժո-

ողովուրդների ազատագրական պայքարն օսմանյան լծի դեմ, հետամտում էր բարեփոխումների միջոցով արդիականացնելու նաև միլեթների վարչական ու հոգևոր կազմակերպվածությունը: Փոփոխությունների առջև էր կանգնած նաև Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքությունը՝ հարմարվելով միլեթների հանդեպ օսմանյան տերության հեղհեղուկ քաղաքականության թելադրանքներին: 1820–ական թթ. հայ կաթոլիկների հանդեպ Բ. Դռան անհանդուրժողական վերաբերմունքին պատրիարքարանը պետք է հարմարվեր նույն անմռունչ ըմբռնողականությամբ, ինչպես որ հարմարվում էր այս ասպարեզում կառավարության քաղաքականության կտրուկ փոփոխությանը:

1830 թ. աքսորից վերադարձվեցին հայ կաթոլիկները, նրանց շնորհվեց առանձին եկեղեցիներ ունենալու արտոնություն, և ի վերջո ճանաչվեց նրանց ինքնուրույն համայնքի իրավունքը: Այդպիսով Բ. Դուռն արտաքին քաղաքական ճնշումների ներքո լուծեց այսպես կոչված կրոնական միության հասունացած խնդիրը՝ իրավականորեն վավերացնելով պառակտումը հայ համայնքի ներսում: Այս իրողությունը պատրիարքության իրավունքների սահմանափակության սկիզբն էր, որին պետք է հետևեին նոր փոփոխություններ: Դրանք ենթադրում էին կայսրության կենտրոնացման սկզբունքների իրականացումը կառավարման ոլորտից մինչև պետության տնտեսությունը, ներքին ու արտաքին քաղաքականությունից մինչև դրանց ուղղությունների գործնական դրսևորումները: Եվ երկրորդ, որ դարձյալ բխում էր այս նպատակից, պետք էր պատվար դնել հպատակ փոքրամասնությունների ազգային ազատագրական շարժումների դեմ, որի բավականին թարմ հիշողությունը՝ ի դեմս հունական ազատագրական շարժման և Հունաստանի պետական անկախության հռչակման, սաստիկ անհանգստացնում էր Օսմանյան կայսրությանը: Տերության ամբողջականության գաղափարը, որն այսպիսով ուղղվում էր հպատակ ժողովուրդների ազգային ինքնորոշման դեմ, պետք է դառնար օսմանյան Թուրքիան կառավարողների ներքին ու արտաքին քաղաքականության անկյունաքարը ընդհուպ մինչև 1923 թ.՝ կայսրության կործանումն ու Լոզանի կոնֆերանսը (1922 թ. նոյեմբեր — 1923 թ. հուլիս):

Մատթեոս պատրիարքի օրոք (1844–1848 թթ.)՝ 1847 թ., Կոստանդնուպոլսում հաստատվեցին Հոգևոր և Գերագույն ժողովներ՝ կազմված 14 հոգևորական և 20 աշխարհիկ անձանցից: Երկու ժողովների նախագահը պատրիարքն էր: Երկու տարի տևողությամբ գործող այդ ժողովները վերընտրվելուց հետո վավերացվում էին իշխանությունների կողմից: Հայ հանրության մեջ դրանց գործառույթներով որոշակիորեն տարորոշվում էին կրոնական և աշխարհիկ սկիզբները, ինչը միանգամայն համապատասխանում էր Բ. Դռան նոր քաղաքականությանը միլեթների ազգային վարչությունների կազմակերպական ձևի նկատմամբ: Մ. արք. Օրմանյանն այս առթիվ նկատում է, որ իր այդ տեսքով ազգային վարչությունը «եղած է ազգային սահմանադրութեան տիրապէս սկզբնավորութիւնը»:

1850–ական թթ. Գերագույն ժողովը պետք է առավել հստակեցներ իր գործունեության ոլորտները՝ կազմելով օժանդակ նշանակություն ունեցող մարմիններ՝

ուսումնական խորհուրդ (1853 թ.) և տնտեսական ժողով (1856 թ.), որոնցից առաջինը տնօրինում էր դպրոցական, իսկ երկրորդը՝ պատրիարքարանի բյուջեն և ազգային հիվանդանոցը:

Կոստանդնուպոլսի պատրիարքության գործառութային նշանակության մեջ որակական փոփոխություններ արվեցին 1860 (1863) թ. արևմտահայերի ազգային սահմանադրության նախապատրաստության և կիրառման ժամանակաշրջաններում: Անմիջականորեն համայնքներում պատրիարքների իրավունքներին և պարտականություններին էին վերաբերում Թանզիմաթի երկրորդ փուլի սկիզբը ազդարարող 1856 թ. փետրվարի 18–ի սուլթանական հրովարտակի հրահանգները պատրիարքարանների վարչության բարեփոխումների մասին: Դրանցից հարկ է նշել նախկինում պատրիարքներին և հոգևորականներին տրված արտոնությունների սահմաններում պատրիարքների ընտրության կանոնների վերանայումը, պատրիարքների ու հոգևորականների կայուն եկամտի սահմանումը և ներհամայնքային գործերի կարգավորումը՝ աշխարհիկ ու հոգևոր ներկայացուցիչներից ընտրված ժողովի տնօրինությամբ: Երեք տարի անց՝ 1859 թ., ըստ Փարիզի համաձայնագրի (1856 թ. մարտի 30) դրույթների և եվրոպական տերությունների ճնշման ներքո օսմանյան կառավարությունը ոչ մուսուլմանական համայնքների առաջնորդներին հանձնարարեց մշակել ազգային կանոնադրություններ՝ նրանց ներքին, զուտ համայնքային վարչությունների կազմակերպման համար: Այդպիսի կանոնադրությունը, Ազգային սահմանադրություն հորջորջմամբ, հայ ամիրաների ու բարձրաստիճան եկեղեցականների դիմադրությունը հաղթահարելուց հետո և ժողովրդի, առավել ևս նոր մտավորականության հանրային ակտիվացման պայմաններում ընդունվեց 1860 թ. մայիսի 24–ին, ապա խմբագրված տեսքով վավերացվեց Բ. Դռան կողմից՝ 1863 թ.: Ամբողջ ազգի կողմից ընտրվեց Ազգային երեսփոխանական ժողով՝ իր կենտրոնական վարչությամբ և վերջինիս քաղաքական (քաղաքացիական) և կրոնական ժողովներով: Դրանք իրենց իրավասություններն իրականացնում էին խորհուրդների (ուսումնական, տնտեսական, դատական, կտակների) և ազգային հիվանդանոցի կառույցներով: Պատրիարքը, զրկված լինելով իր երբեմնի դատահիրավական գործառույթներից, հանդես էր գալիս որպես Ազգային ժողովի նախագահ:

Ըստ էության, սահմանադրությունը նախատեսված էր առավելապես Կոստանդնուպոլսի հայության, քան բուն Արևմտահայաստանի բնակչության համար: 1863 թ. սահմանադրությամբ Ազգային ժողովի 120 երեսփոխաններից 80–ին ընտրում էր 200–հազարանոց հայ բնակչությամբ Կոստանդնուպոլիսը, և միայն 40–ին՝ ավելի քան 2,5 միլիոնանոց գավառը: Հայտնի է, որ սահմանադրությունը քաղաքական ոչ մի իրավունք չտվեց հայերին և դույզն–ինչ չվերացրեց նրանց իրավազուրկ վիճակը: Գավառներում շարունակվում էին քրդերի կողմից իրականացվող հարստահարությունները, ժողովրդին կեղեքում էին օսմանյան իշխանությունները, պաշտոնատար անձինք: Մյուս կողմից՝ սահմանադրությամբ ամրագրված կետերով և միանգամայն օսմանականության դրույթների ոգով ու Բ. Դռան թելադրանքով պայմանավորված՝ բուն Ազգային ժողովում սահմանափակված էին եկեղեցու և պատրի-

արքի գործառնությունները: Այս երևույթն արտացոլում էր Թանզիմաթի սկզբնական շրջանում՝ դեռևս հաթթը շերիֆի շրջանակներում ուրվագծված՝ միլեթների ներսում կրոնի ազդեցությունը թուլացնելուն և ապա այն վերացնելուն ուղղված նպատակը, այն է՝ այդ հանրությունները հեռացնել իրենց դավանանքներից և նախապատրաստել նրանց օսմանյան զանգվածի մեջ տարրալուծելու գործը: Ռ. Սաֆրաստյանն այդ ժամանակաշրջանի օսմանյան քաղաքական կողմնորոշումներն ու վերաբերմունքը կայսրության փոքրամասնությունների նկատմամբ իրավացիորեն բնութագրում է որպես «նախացեղասպանական իրավիճակ», երբ ցեղասպանական բնույթի նախնական ծրագրի առկայության պայմաններում այն դեռևս «չի ստացել վերջնական տեսք, և չեն ընտրվել նրա իրականացման միջոցները», և որ օսմանյան քաղաքական միտքը ազատագրական շարժումներին դեռևս հակադրում է սահմանադրական վերափոխումների ուղին:

Մ. Խրիմյանի պատրիարք ընտրվելուց հետո առաջին անգամ մայրաքաղաքի հայերի ազգային վարչության պատմության մեջ առաջ են քաշվում Արևմտահայաստանի հայ բնակչության սահմանադրական իրավունքի (սահմանադրության կիրառման) և նրա հարստահարությունների դեմ բողոքելու խնդիրները: Միմյանց սերտաճած այս խնդիրները որոշակիություն ստացան Ազգային սահմանադրության վերաքննության և գավառական հարստահարությունների տեղեկագրի մշակմամբ: Կոստանդնուպոլսի հայերի և Արևմտյան Հայաստանի սահմանադրական մարմինների կազմության և գործառութային միասնականացմանն էր հետամտում նաև թաղական խորհուրդների համար առանձին հրահանգների մշակումը: Այնուհետև հրապարակային քննարկման առարկա դարձավ և պատրաստվեց գավառական հարստահարությունների տեղեկագիրը, որը ներկայացվեց Բ. Դռանը (1876 թ.), և որով, ինչպես նկատում է հետազոտողը, «Ազգային ժողովն առաջին անգամ զբաղվեց ազգային–քաղաքական խնդիրներով»:

Ե՛վ սահմանադրության վերաքննության խնդիրը, և՛ տեղեկագիրը ոչ մի նշանակություն չունեցան հայերի կացության բարելավման համար: Կոստանդնուպոլսի «աղայական և էֆենդիական դասը և պահպանողական հոգևորականությունը ընդդիմացան պատրիարքի ժողովրդավար ընթացքին», որը փակուղու հասցրեց թե՛ մեկի, թե՛ մյուսի գործունեությունը:

Մ. Խրիմյանի պատրիարքական գործունեությամբ ծայր առած Ազգային վարչության ուղեգիծը հայերի իրավազուրկ դրության և հարստահարությունների դեմն առնելու հունով շարունակվեց պատրիարք Ն. Վարժապետյանի պաշտոնավարման տասնամյակին (1874–1884 թթ.): Այս ժամանակաշրջանում պատրիարքության բնույթի և նկարագրի մեջ հայտնվում են որակական զարգացումներ: Արևմտահայերի «բողոքելու իրավունքի» (Ռոլեն–Ժեկմենի արտահայտությունն է) հանդեպ օսմանյան տերության թշնամական կեցվածքի պայմաններում ազգային վարչությունը Բարձր դռանը հղեց հարստահարությունների վերաբերյալ նոր տեղեկագիր (1876 թ.), որն ընդգրկում էր նախորդ տեղեկագրի ժամանակներից ի վեր հարստահարությունների շարունակական ընթացքը: Այս տեղեկագիրը ևս որևէ ուշադրու-

թյան չարժանացավ բալկանյան տագնապալի իրադարձությունների և արտաքին քաղաքական ճնշումների պայմաններում կայսրության ամբնողջականությունը փրկելուն հետամուտ Բարձր դռան կողմից:

Կոստանդնուպոլսի պատրիարքության գործողությունները՝ կայսրությունից բարենորոգումներ ակնկալելուց մինչև այդ հիմնահարցի միջազգայնացումը, ի հայտ եկան պատրիարքարանի կազմած ծրագրում, որը Մ. Խրիմյանի գլխավորած պատվիրակությունը ներկայացրեց 1878 թ. Բեռլինի վեհաժողովում: Իր ամբողջ չափավորությամբ այն պարունակում էր ազգային ինքնորոշման կամ Արևմտահայաստանի ինքնավարության տարրեր: Միևնույն ժամանակ վեհաժողովի օրակարգում Հայկական հարցի մուտքը հայության գոյությանը սպառնացող աղետի նախանշանը դարձավ: Դրանից հետո Աբդուլ Համիդը, տերությունների միջև առկա խոր տարաձայնությունների և Հայկական հարցի նկատմամբ բացարձակ անտարբերության պայմաններում Արևմտյան Հայաստանում և նույնիսկ իր կայսրության մայրաքաղաքում իրականացրեց 1894–1896 թթ. զանգվածային կոտորածները:

Բեռլինի վեհաժողովից հետո և հատկապես 1880–1890–ական թթ. Կոստանդնուպոլսի պատրիարքությունն ու պատրիարքարանը ստիպված էին համակերպվել սուլթանի բռնակալական քաղաքականության հետ և գործել վերջինիս ծայրահեղ հետադիմության ճնշումների ներքո: Հ. Վեհապետյանի (1885–1888 թթ.) և Խ. Աշըգյանի (1888–1894 թթ.)՝ բավականաչափ դժգույն և անդեմ այդ պատրիարքների գործունեությունն ամփոփվեց համազգային հարցադրումներից զուրկ և բացառապես Կոստանդնուպոլսի ներհամայնքային և նվիրապետական շրջանակներում (առաջնորդական իրավունքներ, Կիլիկիայի կաթողիկոսություն–պատրիարքություն փոխհարաբերություններ, վակֆերի և սեփականությունների ֆինանսավարկային խնդիրներ, դպրոցաշինական հարցեր և այլն): Պատրիարքարանն ավելի խոնարհ և ձեռնասուն դարձավ Խ. Աշըգյանի պատրիարքության տարիներին, երբ նա, չբավարարվելով Բարձր դռանը հղված հավատարմության ցույցերով, չզլացավ նաև «ազգային խռովարարներ մատնանշելով»՝ լարվածություն ստեղծել անգամ բարձրաստիճան հոգևորականության շրջանում: Պատրիարքի այս խոնարհ կեցվածքը գնահատվեց սուլթանի կողմից, որը հանդուրժեց նրա պաշտոնավարությունը նաև 1890 թ. հուլիսի 15–ի այն միջադեպից հետո, երբ հնչակյանները կազմակերպեցին Գումգափուի հայտնի ցույցը տերությունների ուշադրությունը Հայկական հարցի վրա ուղղելու նպատակով: Այդ ցույցի օրերին հրապարակի վրա էր այսպես կոչված պատրիարքարանի առանձնաշնորհումների խնդիրը, որի շուրջ Բարձր դուռը բանակցում էր նաև հունաց պատրիարքարանի հետ՝ ձգտելով սահմանափակելու քրիստոնյա համայնքների կրոնական գլուխներին տրված վաղեմի իրավասությունները (առաջնորդների պաշտոնակալություն, կրոնավորներին վերաբերող քրեական գործերի վարույթին, պսակին և ապահարզանին, ժառանգական իրավունքին և այլնին վերաբերող հարցեր): Այս հարցում հույները ավելի հաստատամիտ եղան, քան իր հրաժարականի և Աբդուլ Համիդի կասկածամտության մեջ տարուբերվող Խ. Աշըգյանն ու օսմանյան իշխանություններին հնազանդ հայ էֆենդիական պաշ-

տոնեությունը: Համենայն դեպս, Մ. Օրմանյանը, իր զգուշավոր–դիվանագիտական ոճով հանդերձ, արձանագրում է այդ առանձնաշնորհումների կրճատումը՝ նշելով, որ այս առթիվ հայ հոգևորականներից կազմված հանձնաժողովի՝ Բարձր դռանը ներկայացրած «Տեղեկագրի» բովանդակությունը համապատասխանում էր Բարձր դռան կողմից պարտադրված որոշումներին:

Մ. Իզմիրլյանի պատրիարքության տարիներին Կոստանդնուպոլսի պատրիարքարանն ապրեց իր գոյության աննախընթաց դժվարին ժամանակաշրջանը: Մ. Իզմիրլյանը՝ այդ հայրենասեր և կորովի հոգևորականը, գործում էր 1894–1896 թթ. օսմանյան պետության սանձազերծած ցեղասպան քաղաքականության, 1895 թ. բարենորոգումների մայիսյան ծրագրին հակառակ Արևմտահայաստանում համատարած կոտորածներ կազմակերպած Աբդուլ Համիդի գործելակերպի պայմաններում: Մ. Իզմիրլյանն առաջին պատրիարքն էր, որ օսմանյան կառավարությանը եռանդուն բողոքներ ուղղեց կոտորածներն իրականացնող թուրք հանցավոր քաղաքացիական ու զինվորական պաշտոնյաների գործողությունների դեմ՝ գավառներում արյան նախճիրը դադարեցնելու և հանցավորներին պատժելու պահանջով:

1896 թ. նոյեմբերին պատրիարքական աթոռը զբաղեցրեց Մ. Օրմանյանը, որի զուսպ և հավասարակշիռ հարաբերությունները մի կողմից՝ Բարձր դռան և մյուս կողմից՝ ազգային կառույցների ու դրանց ներկայացուցիչների հետ նպաստավոր ազդեցություն պետք է ունենային կոտորածների սարսափներից աստիճանաբար ուշաբերվող հայության համար: Նոր պատրիարքն իր պաշտոնավարությունը սկսեց ազգային կուսակցություններից անկախ գործելակերպով, որը հետամուտ էր կանխելու բռնակալ սուլթանի վրեժխնդրության նոր պոռթկումները հայերի դեմ: Մ. Օրմանյանի այս մտայնության և գործողությունների, Արևմտյան Հայաստանում բարենորոգումների հարցի սառեցման պայմաններում էր, որ Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանը ընդառաջ էր գնում մոտալուտ XX հարյուրամյակին:

Մինչև երիտթուրքերի կառավարումը սահմանադրությունը գործել է կա՛մ ընդհատումներով և կա՛մ էլ վարչական խափանումներով, մանավանդ 1880–ական թթ. սկսած: Երիտթուրքերի իշխանության տարիներին՝ մինչև ցեղասպանությունը, այն արժանացավ նույն ոճրագործ վերաբերմունքին, ինչ ամբողջ արևմտահայությունը: 1909 թ. Ադանայի կոտորածին, ապա դրան հետևած՝ հայկական նահանգներում հայերի դեմ սաստկացած հալածանքներին ու բռնություններին, հողազրկման և այլ երևույթներին պատրիարքարանը և Խառը ժողովը քանիցս արձագանքեցին բողոքներով: Չնայած իշխանությունների ճնշումներին՝ 1911 թ. փետրվարին և դրանից հետո էլ պատրիարքարանը բողոքի ձայն բարձրացրեց կովկասյան *մուհաջիրներին* (փախստականներին) Արևմտյան Հայաստանի նահանգներում բնակեցնելու, հայերի հողերը, վանքերն ու եկեղեցիները ապօրինաբար բռնագրավելու դեմ: Ազգային վարչությունն ու պատրիարքարանը ավելի գործուն դարձան 1912–1914 թթ.՝ Արևմտահայաստանում բարենորոգումների և Հայկական հարցի քննարկումների ժամանակաշրջանում: Այս էր այն հիմնական պատճառներից մեկը, որ արդեն

1913 թ. մարտին կառավարությունը դադարեցրեց բանակցությունները պատրիարքարանի հետ՝ ձգտելով մեկուսացնելու և ոչնչի հասցնելու նրա գործունակությունը:

Առաջին աշխարհամարտի մեջ մտած երիտթուրքերը հայերի ցեղասպանության նախաքայլերը սկսեցին նաև մայրաքաղաքի հայության մեջ: Պատերազմ հայտարարելուց հետո Կոստանդնուպոլսից հեռացան Անտանտի երկրների դեսպանները, ինչը գործողության ազատություն ապահովեց երիտթուրքերին: 1915 թ. գարնանը Կոստանդնուպոլսի հայությունը կտրվեց Արևմտահայաստանից: Փոստը չէր գործում, պատրիարքարանը և ժողովուրդը չգիտեին, թե ինչ սպանդ է պատրաստված գավառահայերի նկատմամբ: Այնուհետև 1915 թ. ապրիլի 24–ին մայրաքաղաքում ձերբակալվեցին հարյուրավոր հայ մտավորականներ, որոնց մի մասը տարվեց Չանղըր, մյուս մասը՝ Այաշ: Նրանցից քչերին հաջողվեց ազատվել մահից, իսկ մյուսները ոչնչացվեցին աքսորի ճանապարհին կամ հետո: Ապրիլի 26–ին Խառը ժողովի պատգամավորությունն այցելեց մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշային և իր խորին մտահոգությունը հայտնեց հայերի հանդեպ կիրառվող բնաջաջման քաղաքականության վերաբերյալ: Փաստորեն արևմտահայությունը հռչակվել էր օրենքից դուրս: 1916 թ. մայիսի 12–ին պատրիարք Զավենը գրում էր Գերմանիայի դեսպանին, թե «Կոստանդնուպոլսից և Զմյուռնիայից ամեն շաբաթ այլևայլ առիթներով աքսորվում են հարյուրավոր տղամարդիկ», և որ նրանց ունեցվածքը բռնագրավվում է և վաճառվում: Ամենայն հավանականությամբ, հերթը պետք է հասներ մայրաքաղաքն ամբողջովին հայերից դատարկելուն: Պոլսահայերի մոտալուտ աքսորի նպատակադրումն էր պատճառը, որ Անտանտի դաշնակիցների՝ հայերին բնաջնջելու առթիվ հայտնի հայտարարությունը հերքելու իր փորձերում թուրքական կառավարությունը մեծապես նվազեցնում էր պոլսահայերի թիվը՝ 180–200 հազարից իջեցնելով 77 836 մարդու: Համենայն դեպս, 1915 թ. ապրիլից մինչև տարվա վերջ, պոլսահայությանը ցանկացած պահի սպառնում էր իրենց հայրենակիցների անագորույն ճակատագիրը կիսելու վտանգը: 1916 թ. գարնանը միայն երիտթուրքերը որոշեցին ձեռնթափ լինել Կոստանդնուպոլսի և Զմյուռնիայի հայությանը աքսորելու և ոչնչացնելու մտադրությունից:

1915 թ. ի վեր ոստիկանության խիստ հսկողության տակ գտնվող պատրիարքարանը, այսուհանդերձ, կարողացավ որոշ ազգօգուտ գործեր անել: Պատրիարքը հաջողեց բռնագրավման ենթակա հայկական հաստատությունների՝ բանկային ավանդները փոխանցել պատրիարքարանի հաշվին, ինչպես և աքսորված ու կարոտյալ որոշ հայերի ուղարկել կտակային գումարների մի մասը: Հայ բնակչության հալածանքները Արևմտահայաստանում սաստկանալուն զուգընթաց պատրիարքարանն անում էր հնարավորը՝ իրադրությունն ինչ–որ չափով մեղմելու համար:

1916 թ. կեսին հերթը հասավ պատրիարքարանին: Պատրիարքին ուղղված՝ հուլիսի 25–ի գրությամբ կառավարությունը հայտնում էր, որ «Թաքվիմ–ի վեքայի» պաշտոնաթերթի այդօրվա համարում տպված «Հայոց կաթողիկոսության և պատրիարքության կանոնագրություն» հրապարակման համաձայն՝ միացվել են Սսի և Աղթամարի կաթողիկոսությունները, ինչպես նաև Կոստանդնուպոլսի ու Երուսա-

ղեմի պատրիարքությունները: Կանոնագրությանը կցված թուրքական հեռագրական գործակալության բացատրության մեջ ասվում էր, որ «Բ. Դուռը նկատել է, որ հայոց տրուած Սահմանադրութեամբ կազմուած ժողովներով Պատրիարքարանը հայ յեղափոխականներու ազդեցութեան տակ ինկած է», ուստի կասեցվում է նրա այդ գործողությունը, «որպեսզի միայն կրօնական, դպրոցական և բարեսիրական գործերով զբաղվի»: Կոստանդնուպոլսի պատրիարքությունը և ազգային սահմանադրությունը վերացվում էին, կաթողիկոս–պատրիարքը, ինչպես և սահմանված էր հունաց պատրիարքության համար, պետք է գործեր երկու ժողովների գործակցությամբ միայն վերոհիշյալ ոլորտներում՝ միանգամայն անկախ Էջմիածնի կաթողիկոսությունից: Նոր կրոնական կենտրոնի աթոռը պետք է լիներ Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքում: Պատրիարք Զավենը աքսորվեց Բաղդադ, ապա Մոսուլ:

Երուսաղեմում պատրիարք–կաթողիկոսի պաշտոնը 1917 թ. օգոստոսին ստանձնեց Կիլիկիայի կաթողիկոս Սահակ Խապայանը: Ինքնաբերաբար դադարեցին Երուսաղեմում Կոստանդնուպոլսի պատրիարքարանի պատվիրակ Մ. արք. Օրմանյանի լիազորությունները: Կոստանդնուպոլսում, ըստ վերոհիշյալ կանոնագրության, պատրիարքական փոխանորդ նշանակվեց Գ. եպ. Ճևահիրճյանը: Այդ ժամանակ Արևմտյան Հայաստանը արդեն հայաթափված էր: Օսմանյան կայսրության հանցավոր իշխանությունները շարունակում էին իրենց հակահայ քաղաքականությունը:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ՄՇԱԿՈՒՅԹ

1. ԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄԱՄՈՒԼ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

XVIII դարի վերջից XIX դարի կեսերն ընկած ժամանակահատվածում՝ Օսմանյան կայսրությունում կատարված բարեփոխումների շրջանում, սկսում է ձևավորվել աշխարհիկ կրթության համակարգը, որը, անշուշտ, չէր վերացնում կրոնի ուսուցումը: 1794 թ. վերակազմավորվում է ռազմածովային նավաշինական ուսումնարանը, 1795 թ. հիմնվում է հրետանային ու ռազմահնձեներական դպրոցը: Մահմուդ Բ–ի օրոք և Թանզիմաթի տարիներին ստեղծվում են շուրջ երկու տասնյակ հատուկ ուսումնարաններ, այդ թվում՝ ռազմաբժշկական (1826 թ.), համազորային (1834 թ.), զինվորական երաժիշտների (1834 թ.), անասնաբուժական (1847 թ.): 1839 թ. հիմնվում են հանրակրթական դպրոցներ (*ռյուշդիյե*), իսկ 1845 թ.՝ առաջին աստիճանի միջնակարգ դպրոցներ՝ լիցեյներ (*իդադիյե*), որոնք հիմնականում դիմորդներ էին պատրաստում ռազմաուսումնական հաստատությունների համար: Կրթության համակարգում աշխարհիկ սկզբունքների արմատավորումը որոշ չափով խթանվեց նաև 1845–1846 թթ. դպրոցական բարեփոխման արդյունքում: Աստիճանաբար փոփոխության էր ենթարկվում կրթության բովանդակությունը, մեքթեբեներում տարածվում էր թուրքերենի (օսմաներենի), թվաբանության, աշխարհագրության հիմունքների դասավանդումը, զինվորական ուսումնարաններում ներդրվում էին արևմտյան ծրագրեր:

1851 թ. հուլիսի 18–ին ֆրանսիական գիտությունների ակադեմիայի օրինակով՝ հանդիսավոր, մեծ շուքով, սուլթանի ներկայությամբ բացվում է «Գիտությունների ակադեմիա» հաստատությունը (Encümen–i Daniş): Այս կառույցին անդամակցում էին արտասահմանյան գիտնականներ, հիմնական անդամներ են նշանակվում Մուսթաֆա Ռեշիդ փաշան, Ահմեդ Վեֆիք փաշան, Հայրուլլա Էֆենդին, Զևդեթ փաշան, իսլամական աստվածաբաններ, ազգությամբ հույն և հայ մի քանի մտավորականներ: Ակադեմիայի կազմում բարձրաստիճան պաշտոնյաների ընդգրկումը վկայում էր, որ պետությունը խիստ կարևորում էր այս հաստատության նշանակությունը: «Ակադեմիան» իր առջև դնում էր մի շարք խնդիրներ՝ նպաստել գրականության և գիտության զարգացմանը, հրապարակել լեզվին, Օսմանյան կայսրության պատմությանը վերաբերող աշխատություններ, մասնակցել երկրի բարենորոգմանը: Հրատարակվում է օսմաներենի քերականության մասին առաջին գիրքը («Kavaid–i Osmaniye»): 1854 թ. Զևդեթ փաշան սուլթան Աբդուլ Մեջիդին նվիրում է «Ակադեմիայի» հանձնարարությամբ գրված իր «Օսմանյան կայսրության պատ-

մություն» աշխատության առաջին երեք հատորները: Այսուհանդերձ, 1862 թ. թուրքական առաջին գիտական կենտրոնը դադարեց գոյություն ունենալուց նաև հետադիմական իշխանավորների մշտական անհարկի միջամտության պատճառով:

Թերևս առավել արդյունավետ էր 1861 թ. Անգլիական թագավորական ընկերության օրինակով Մյունիֆ էֆենդիի ստեղծած «Օսմանյան գիտական ընկերության» գործունեությունը: Այս ընկերության հիմնական նպատակներն էին գիտության ու գիտելիքի տարածումը կայսրությունում, գիտական աշխատությունների հրատարակումը, օտարալեզու գիտական աշխատությունների թարգմանությունը, հասարակական դասախոսությունների անցկացումը: 1862 թ. ընկերությունը Մյունիֆ էֆենդիի խմբագրությամբ հրատարակեց «Գիտության ամսագիրը» («Mecmua–i Fünun»), որտեղ տպագրվում էին արևմտյան գիտական նվաճումների մասին հոդվածներ: 1865 թ. կազմավորվում է «Օսմանյան բժշկական ընկերությունը», որը նպաստում էր կայսրությունում բժշկագիտության զարգացմանը: Հատկանշական է, որ Օսմանյան կայսրությունում մեծ համբավ ու հեղինակություն են վայելել հատկապես եվրոպական կրթություն ստացած հայ բժիշկները:

«Նոր օսմանցիները», այնուհետ նաև երիտթուրքերը, հետևողականորեն ընդգծում էին, որ երկրի հետամնացության պատճառները երբեք չի կարելի փնտրել իսլամի մեջ, անգամ բարեփոխումների (նույնիսկ՝ սահմանադրական) պահանջներն էլ հիմնավորում էին գտնում իսլամի նորմերում և ավանդույթներում: Երիտթուրքական կուսակցության հիմնադիր Ահմեդ Ռըզան պնդում էր, որ սոցիալական տեսանկյունից իսլամը կարող է առաջադիմության հենք դիտվել, այն ոչ միայն չի հակասում սահմանադրական միապետության գաղափարին, այլև թշնամի չէ հանրապետական կարգին: Քեմալական պատմագրության մեջ տարածված է այն տեսակետը, որ Թանզիմաթը, պահպանելով կապը արաբական ու պարսկական մշակույթի հետ և չվերացնելով մեդրեսեների ազդեցությունը պետական ու լուսավորության գործերում, չկարողացավ ստեղծել այնպիսի ուսումնական հաստատություններ, որոնք կկարողանային իրապես նպաստել թուրքերի՝ «արևմտյան քաղաքակրթության ընտանիք մուտք գործելուն»: Թեև հենց Թանզիմաթը ստեղծեց մեդրեսեներից առանձնացած եվրոպական տիպի դպրոցներ, որի արդյունքում աճեց արևմտյան մշակույթը յուրացրած անձանց թիվը, և ուժեղացավ «պայքարը սև ուժերի և առաջադեմ ուժերի միջև՝ հօգուտ վերջինների»:

Մշակութային կյանքում զգալի նշանակություն ուներ մամուլը: 1818–1866 թթ. հրատարակվել է «Իրադրության նկարագրում» («Tercüman–ı Ahval») առաջին թուրքերեն մասնավոր թերթը, որտեղ հրատարակվել են Իբրահիմ Շինասու, Ահմեդ Վեֆիկ փաշայի, Զիյա Փաշայի, Ռեֆիկ Բեյի գործերը: 1862 թ. Իբրահիմ Շինասին սկսում է հրատարկել «Կարծիքների պատկեր» («Tasvir–i efkâr») քաղաքական թերթը, որը գոյատևել է մինչև 1925 թ. մարտի 6–ը: Սկզբնական շրջանում թերթը սպառվում էր մոտ 24 հազար օրինակով: Սակայն մեկ տարի անց տպաքանակը շեշտակի պակասում է՝ հասնելով 3 հազարի: Թերթում հրապարակվում էին սուր բնույթ կրող հոդվածներ, որոնցում բողոքի կոչեր էին հնչում սուլթանական բռնապետական

վարչակարգի դեմ, քննարկվում էին գրականությանն ու լեզվին վրաբերող հրատապ հարցեր: 1865–1867 թթ. թերթը խմբագրել է «նոր օսմանցիների» առաջնորդ Նամըք Քեմալը, որը հրապարակախոսական գործունեությունը շարունակել է նաև հետագայում՝ վտարանդիության տարիներին: Մեծ վեզիր Ալի փաշայի դեմ կազմակերպված անհաջող դավադրությունից հետո Նամըք Քեմալը մի քանի «նոր օսմանցիների» հետ հեռանում է Եվրոպա: Այստեղ նրանք սկսում են հրատարակել «Տեղեկատու» («Muhbir») և «Ազատություն» («Hürriyet») թերթերը: Ժամանակի հայտնի թերթերից էին նաև «Խրատը» («İbret»), «Ժամանակը» («Vakit»), «Դիոգենեսը» («Diyojen»), «Հավատարմությունը» («Sadakat»), «Պայծառատեսությունը» («Basiret»), «Գրողը» («Muharir»): Արդեն 1864 թ. Կոստանդնուպոլսում տարբեր լեզուներով հրատարակվում էին շուրջ 30 անուն թերթ և պարբերական: 1870–ական թթ. սկզբներին թերթերի թիվը հասնում է 47–ի, որոնցից միայն 13–ն էր թուրքերեն, իսկ մնացածը՝ արաբերեն, պարսկերեն, հայերեն, հունարեն և եվրոպական լեզուներով: Հատկանշական է, որ 1900–ական թթ. հայերեն հրատարկությունների թիվը երեք անգամ գերազանցում էր թուրքերեն և հունարեն պարբերականներին:

Այդ շրջանում բազմաքանակ տպաքանակով ասպարեզ իջան «Առաջընթաց» («Ikdam»), «Առավոտ» («Sabah»), «Միություն և առաջադիմություն» («Ittihat ve terakki») թերթերը, որոնք մեծապես նպաստեցին երկրում պանթյուրքիզմի գաղափարախոսության քարոզչական աշխատանքներին: Երիտթուրքական հեղաշրջումից հետո կյանքի կոչվեցին «Շատախոս» («Gevez»), «Կոկորդ» («Boğaz»), «Սև աչք» («Karagöz») թերթերը, որոնցում նույնպես քաղաքական թեմաներից բացի հրապարակվում էին նաև լեզվի ու գրականության խնդիրները լուսաբանող գիտահանրամատչելի հոդվածներ, գեղարվեստական գործեր:

Թանզիմաթի դարաշրջանում ի հայտ եկան գրական նոր ժանրեր՝ վեպ, նովել, պատմվածք, դրամա: Եթե օսմանյան միջնադարյան գրականությունն ընդգծված կրում էր արաբա–պարսկական ազդեցություն, ապա Թանզիմաթի շրջանի գրականությունը գաղափարական, ժանրային և թեմատիկ առումով հայտնվել էր արևմտյան լուսավորիչների, մասնավորապես ֆրանսիական գրականության ներկայացուցիչների ազդեցության տակ: Թուրքական գրականություն են ներթափանցում քաղաքական, հասարակական ու սոցիալական խնդիրները, գեղարվեստի միջոցով քննադատվում էին տիրող վարչահրամայական բարքերը, իրավական և սոցիալական անարդարությունը: Առաջին անգամ թուրք գրականությունն անդրադառնում է կնոջ իրավազուրկ վիճակին:

Մատնացույց անելով եվրոպական և թուրքական լուսավորականության մոդելի ընդհանրությունները և հանդես գալով ժամանակաշրջանի արևմտահայ և թուրքական գրականության տիպաբանական վերլուծության հարցադրմամբ՝ պրոֆ. Մ. Քոչարը նշել է, որ «Ռեակցիայի տարիներին գրողներին պաշարած հիսաթափությունը, հոռետեսությունը, այդ տարիներին իշխող լրտեսությունը, գրաքննության ճնշումը, որը գրողներին արգելում էր իրենց ստեղծագործություններում արծարծել հասարակական խնդիրները, իմաստավորումների էր հասցնում ոչ միայն ազգային

գրականություններում, այլև հենց թուրքական գրականության մեջ: Այդպիսի քաղաքական և պատմական իրավիճակը ինչպես թուրք, այնպես էլ ոչ թուրք առաջադեմ գրողներին հարկադրում էր դիմել եզոպոսության, ինչպես նաև վերացարկված և ռոմանտիկ ձևով շարադրել իրենց զգացմունքներն ու մտորումները»:

Թանզիմաթի շրջանի գրականության ու թուրք թատերգության հիմնադիրը համարվում է Իբրահիմ Շինասին (1826–1871 թթ.), որի գրչին է պատկանում «Բանաստեղծի ամուսնությունը» («Şair Evlenmesi») 1860 թ. հրատարակված կատակերգությունը: Նորավեպի ժանրի հիմնադիրն էր Ահմեդ Միդհատը (1844–1913 թթ.): Առաջին վեպի հեղինակն է Շեմսեդդին Սամին (1850–1904 թթ.): Չափածո դրաման սկզբնավորել է Աբդյուլհակ Համիթ Թարհանը (1852–1937 թթ.): Առաջին պատմական դրաման՝ «Հայրենիք կամ Սիլիստրիան» («Vatan yahut Silistre») 1873 թ. հրատարակել է վերը նշված Նամըք Քեմալը (1840–1888 թթ.): Նրա գրական ժառանգությունը մեծ է և բազմազան: Նամըք Քեմալը հանդես է եկել որպես հրապարակախոս, քննադատ, թարգմանիչ, վիպասան, դրամատուրգ ու բանաստեղծ: Նրա ստեղծագործությունները մեծ ազդեցություն են թողել իր ժամանակակից և հաջորդ սերնդի գրողների վրա: Նամըք Քեմալի գրչին են պատկանում նաև «Դժբախտ երեխա» («Zavallı çocuk», 1873 թ.), «Աքիֆ Բեյ» («Akif Bey», 1874 թ.), «Գյունլիհալ» («Günlihal», 1874 թ.), «Խորեզմշահ Ջելալեդդինը» («Celâlettin Harzemşah», 1882 թ.), «Սև բախտ» («Kara Belâ», 1882 թ.) պիեսները: Նամըք Քեմալը, լինելով «նոր օսմանցիների» գաղտնի քաղաքական կազմակերպության գլխավոր գաղափարախոսը, գեղարվեստական միջոցներն օգտագործում էր օսմանիզմի հայեցակարգի քարոզման համար:

Թեմատիկ և լեզվական առումով փոփոխության է ենթարկվում նաև Թանզիմաթի շրջանի պոեզիան, բայց բանաստեղծները մեծ մասամբ շարունակում էին կառչած մնալ արուզի տաղաչափությանը:

Աբդուլհամիդյան բռնատիրությունը, արգելակում էր մշակութային առաջընթացը. Թանզիմաթի ու սահմանադրական շարժման տարիներին որոշակի հաջողության հասած լրագրությունը խիստ սահմանափակումների և սուլթանական բացառիկ դաժան գրաքննության էր ենթարկվում: Բացահայտ հալածանքների են ենթարկվում հասարակական ու մշակութային գործիչները: Այս շրջանում իր «քաղաքացիական» բանստեղծություններով աչքի է ընկնում Թևֆիք Ֆիքրեթը (1867–1915 թթ.): Բանաստեղծին հատկապես մեծ հեղինակություն բերեցին «Մշուշ» («Sis») բանաստեղծությունը, ինչպես նաև «Հին պատմություն» («Tarih–i Kadim») պոեմը: Թևֆիք Ֆիքրեթն իր ստեղծագործություններում քննադատում էր աբդուլհամիդյան բռնապետությունը, հետագայում նաև երիտթուրքական կարգերը:

Ինչպես հայտնի է, «նոր օսմանցիների» գլխավոր նպատակներն էին Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանումն ու սահմանադրական միապետության ստեղծումը: Կայսրությունը փլուզումից փրկելը նրանք պայմանավորում էին տերությունում ապրող ազգությամբ ոչ թուրք ժողովուրդների թուրքաց-

մամբ: «Նոր օսմանցիները» նաև գաղափարական հենք ձևավորեցին թյուրքականության (Türkçülük) ծայրահեղ ազգայնական գաղափարախոսության համար: Թեև ոչ միայն թուրք, այլև արևմտյան, խորհրդային ու ռուսաստանյան արևելագետ–պատմաբանները մշտապես ընդգծում էին «նոր օսմանցիների» գաղափարախոսության արտաքնապես առաջադիմական տարրերը, սակայն կայսրության ոչ թուրք ժողովուրդների համար այն ահագնացող վտանգ էր պարունակում:

Թուրքական գրականության զարգացման գործում կարևոր դեր է ունեցել «Հարստության աղբյուր» («Servet–i Fünün», 1891–1901 թթ.) գրական հանդեսը, որի շուրջ համախմբված գրողների ստեղծագործական մոտեցումները միատարր չէին: Յուրացնելով եվրոպական գրականության տարբեր ուղղություններ՝ թուրք գրողները փորձում էին դրանք ծառայեցնել ազգային գրականության խնդիրներին: «Սերվեթ–ի Ֆյունուն»–ի ծաղկման շրջանը նույնպես կապվում է Թևֆիք Ֆիքրեթի անվան հետ, որը խմբագրել է հանդեսը 1896 թ–ից և վերածել է այն «Նոր գրականության» (Edebiyat–ı Cedide») հոսանքի շեփորի: Այնուհետև հանդեսը խմբագրել է Հյուսեյին Ջահիթը: Հանդեսը փակվել է 1901 թ., կրկին սկսել է հրատարկվել 1908 թ. սահմանադրության հռչակումից հետո նախ որպես օրաթերթ, ապա որպես շաբաթական հանդես: 1910 թ. այն վերաճել է «Գրչագրություն» («Fecr–i Âtî») միավորման պարբերականի: «Ֆեջր–ի Աթը» գրական միավորումը ստեղծվել է 1910–1912 թթ.: Դրան անդամակցում էին ժամանակի հայտնի գրողներ Ահմեդ Հաշիմը, Էմին Բյուլենթը, Ռեֆիք Հալիդը, Յաքուբ Քադրին և ուրիշներ: Գրական այս միավորման նպատակն էր ուղղորդել ազգային լեզվի և մշակույթի զարգացումը:

Արևմտյան գրական մոդելին համապատասխանող թուրքական ռեալիստական վեպի հիմնադիրն է համարվում Հալիթ Զիյա Ուշաքլըգիլը (1867–1945 թթ.):

1910–1912 թթ. Սալոնիկում Ալի Ջանիփի (Յոնթեմի) խմբագրությամբ լույս է տեսնում «Երիտասարդ գրիչներ» («Genç Kalemler») հանդեսը, որը թուրքական մշակույթի պատմության մեջ մտավ իբրև թյուրքականության գաղափարախոսության քարոզչության ու թուրքերենի բարեփոխման պայքարի «միջնաբերդ»: 1911 թ. պանթյուրքիստներ Մեհմեդ Էմին Յուրդաքուլը, Ահմեդ Հիքմեթը, Յուսուֆ Աքչուրան հիմնադրում են «Թուրքական կացարան» («Türk Yurdu») հասարակական–քաղաքական կազմակերպությունը և հրատարակում են համանուն հանդեսը: Դրա էջերում հրապարակվող հոդվածագիրները ձգտում էին ամեն կերպ արդարացնելու Թուրքիայի իշխող շրջանակների պանթյուրքական, պանթուրանական և պանիսլամական նկրտումները: Միաժամանակ, պարբերականում թյուրքականության տեսանկյունից քննարկվում էին երկրի քաղաքական, տնտեսական, մշակութային խնդիրները, թուրքերի ազգային ինքնագիտակցության բարձրացմանը, թուրք կանանց իրավունքների, թուրքերենի բարեփոխմանը վերաբերող հարցերը: Այդ ժամանակ լույս է տեսնում նաև թյուրքականության քարոզչությանը նպատակաուղղված «Թուրք օջախը» («Türk Ocağı») պարբերականը:

Թյուրքականության գաղափարախոսության ջատագովներ էին Մեհմեդ Էմին Յուրդաքուլը (1869–1944 թթ.), Զիյա Գյոքալփը (1876–1924 թթ.), Հալիդե Էդիփ

Ադրվարը (1882–1964 թթ.), Օմեր Սեյֆեդդինը (1884–1920 թթ.) և ուրիշներ: Թուրքական գրականության մեջ պանթյուրքական մոտիվները վառ կերպով դրսևորվում են արդեն 1911–1912 թթ. իտալա–թուրքական (տրիպոլիտանական) ու բալկանյան պատերազմների ժամանակաշրջանում:

Պանթյուրքիզմի գաղափարախոս գրողները մշակեցին երիտթուրքերի ու քեմալականների՝ այլազգի հպատակների նկատմամբ իրականացրած ցեղասպանական վայրագ քաղաքականության տեսական հիմքերը:

Թանզիմաթի շրջանում զարգացում են ապրում նաև թուրքական արվեստն ու ճարտարապետությունը: Օսմանյան ճատարապետության մեջ մեծ ներդրում է ունեցել Պալյանների գերդաստանը: Նրանց նախագծերով կառուցվել են բազմաթիվ պալատական շինություններ, եկեղեցիներ, հասարակական կառույցներ: XIX դարի կեսերից սկսած մասնագետներ են պատրաստվել Ֆրանսիայում և Գերմանիայում: 1882 թ. հիմնադրվում է Գեղարվեստի վարժարանը, որը 1927 թ. վերանվանվում է Գեղարվեստի ակադամիայի: Այստեղ ուսանել են նաև հայ երիտասարդները: Թուրքիայի առաջին արվեստագետները, հիմք ընդունելով եվրոպական նկարելաձևը, իրենց ստեղծագործություններում պատկերել են ժողովրդի կյանքից վերցված թեմաներ:

Թուրքական ժողովրդական երաժշտությունը սերտորեն կապած և ազգակից է թյուրքական մյուս ժողովուրդների ժողովրդական արվեստի հետ: Այն կրել է նաև հարևանների երաժշտության նկատելի ազդեցությունը: Տարածված ժանրերն են միաձայն մանիները: Դրանք դիատոնիկ լադերում ընթացող պարզ կառուցվածքի եղանակներ են՝ գեղջկական քառատող խաղիկներով և հիշեցնում են հայկական համապատասխան ժանրի երգերը: Մյուս տարածված ժանրերից են ղոշմաթյուրքյուները, որոնք ունեն ազատ կառուցվածք և մեղեդիապես զարգացած քնարական երգեր են: Թուրքական երաժշտության զարգացման գործում մեծ ներդրում է ունեցել Դ. Քանդեմիրը (XVII–XVIII դարեր), որի ավանդական ոճով հորինված ստեղծագործությունները մինչև XIX դարի վերջը գերիշխող են եղել և դրանց զգալի մասը պահպանվել է հայկական նոր նոտագրության միջոցով վերաձայնագրված վիճակում: Հայ երաժիշտ, տեսաբան, երգահան և մանկավարժ Հ. Լիմոնջյանի ստեղծած նոտագրական համակարգը լայնորեն օգտագործել են նաև թուրք երաժիշտները: Թուրք նշանավոր երաժիշտների մի մասը աշակերտել է Ջ. Դոնիցետիին՝ հայտնի կոմպազիտորի եղբորը: Թուրքական օպերետի հիմնադիր է համարվում նաև Տ. Չուխաճյանը, իսկ Կոմիտասի ստեղծագործությունները թուրքական երաժշտության մեջ ժողովրդական հիմքով մասնագիտական արվեստի զոյացման օրինակներ են: Կոմիտասը գրառում էր ոչ միայն հայկական ժողովրդական երգեր, այլև թուրքական և քրդական: Թուրքական արհեստավարժ երաժշտարվեստի ձևավորման գործում նկատելի դեր են խաղացել նաև հայ երաժիշտ կատարողները:

XVIII դարի վերջերից արևմտաեվրոպական թատրոնների բեմադրությունները հիմք դարձան Թուրքիայի ժամանակակից թատրոնի զարգցման համար: XIX դարի սկզբին հայերը կազմակերպեցին Թուրքիայի առաջին թատերախմբերը: Մայրա-

քաղաքում հիմնադրվում է արևմտահայ առաջին արհեստավարժ թատրոնը: Հայ դերասաններն ու ռեժիսորները բեմականացրել են նաև թուրքերեն ներկայացումներ՝ նպաստելով թուրքական թատրոնի կազմավորմանը: 1869 թ. ստեղծվել է «Գեդիքփաշա» թատրոնը՝ Հ. Վարդովյանի (Գյուլի Յակուբ) ղեկավարությամբ, որտեղ բեմականացվել են հայերեն և թուրքերեն ներկայացումներ: Հետագայում նա նշանակվում է սուլթանի պալատական թատերախմբի ղեկավար:

2. ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամանակագրական առումով նշված շրջանը համընկնում է Թուրքիայի պատմության բեկումնային զարգացումների հետ՝ Սելիմ Գ և Մահմուդ Բ սուլթանների բարեփոխումներ, Թանզիմաթի բարեփոխումներ, 1876 թ. սահմանադրության հռչակում, համիդյան զուլումի տարիներ, երիտթուրքական հեղաշրջում, Առաջին աշխարհամարտ, Հայոց ցեղասպանություն և, վերջապես, Օսմանյան կայսրության փլուզում: Անկում ապրող Օսմանյան կայսրության արդիականացման փորձերի ավելի քան մեկդարյա ժամանակաշրջանի դիտարկումը տալիս է բարդ պատկեր, որը պայմանավորված է երկակի (ավանդական, դարավոր օսմանյան փորձի վրա հիմնված, վերարտադրվող և ժամանակակից, դեպի Եվրոպա կողմնորոշված) սոցիալական և մտավոր կառույցների հակասական համակեցությամբ: Նույնպիսի երկվածությամբ, հնի և նորի համագոյակցությամբ է բնորոշվում նաև նշված ժամանակաշրջանի օսմանյան պատմագրությունը, երբ հին ձևերով կազմված պատմական ստեղծագործությունների կողքին հայտնվում են եվրոպական մեթոդներով ներշնչված, թեև յուրահատուկ ընկալմամբ գրված աշխատություններ:

Օսմանյան կայսրության պաշտոնական պատմագիրներին երկու խմբի կարելի է բաժանել՝ երկրի դեպքերը ըստ տարիների գրի առնող տարեգիր, որը հատուկ նշանակվում էր փադիշահի կողմից՝ *վաքայինյուվիս* (vaka–i nüvis) և ազատ պատմիչ (müverrih): Պատմագրության ընդհանուր հիմքը կազմում էր կայսերական գաղափարախոսությունը և «պետության ներդաշնակ այուների» կամ էլ ընթացիկ քաղաքականության քննադատությունից խուսափումը, քանի որ դա կարող էր վտանգի ենթարկել «կրոնի և պետության» (din ü devlet) մեծ դերը երկրի ընդհանուր բարեկեցության գործում:

Վաքայինյուվիսլիքը որպես մշտական պալատական պաշտոն հաստատվում է 18–րդ դ. սկզբից: Ստեղծված ավանդույթի համաձայն՝ պաշտոնին նշանակվելուց հետո վաքայինյուվիսը շարունակում էր իրադարձությունների հաջորդական շարադրանքը իրեն նախորդողի ընդհատված պահից՝ վերջինից ստանալով օգտագործած վավերագրերը, ինչպես նաև իրավունք ունենալով օգտվելու արխիվային և տրամադրվող պաշտոնական փաստաթղթերից: Պատմագիրները հաճախ ընտրվել են կենտրոնական բյուրոկրատիայի, առավելապես պալատական դպիրների (hacegân) հեղինակավոր խմբից կամ էլ կրոնագետ իրավագետ (ulema) դասի անդամներից:

1831 թ. սկսած, երբ լույս տեսավ կայսրության պաշտոնաթերթ «Taqvim–i veqayi» («Իրադարձությունների օրացույց») թերթը, սուլթանական պատմագրի պաշտոնը սկսեց վստահվել դրա խմբագիրներին կամ հոդվածագիրներին: Առաջինը դրանց թվում Մեհմեդ Ռեջայի էֆենդին էր, վերջինը՝ Ահմեդ Լյութֆի էֆենդին:

Պաշտոնական պատմագրությունը շարադրվում էր տարեգրությունների տեսքով, որոնց բովանդակությունը, բնականաբար, կազմել է սուլթանական բանակի մղած պատերազմների և հաղթանակների թեման: Առանձին բաժիններ նվիրվում էին զինադադարին կամ հաշտության պայմանագրին: Տեղ էր հատկացվում բարձրաստիճան պաշտոնյաների նշանակմանը և պաշտոնանկությանը, պալատական արարողակարգային իրադարձություններին, մայրաքաղաքի անցուդարձին: Դրանցում բացակայում էր վերլուծությունն ու քննադատական միտքը: Այնուամենայնիվ, որոշ պատմիչների, օրինակ՝ Ծանիզադեին, հաջողվում էր աշխուժացնել իրենց շարադրանքը լրացուցիչ հետաքրքիր մանրամասներով: Այս առումով արժի հիշատակել պաշտոնական պատմագրության այնպիսի ժանրեր, ինչպիսիք են surname (պալատական հարսանիքների, ծնունդների տոնախմբությունների նկարագրություններ), ruzname (սուլթանների կյանքի իրադարձությունների նկարագրություններ), seyahatname (ճանապարհորդագրություններ), sefaretname (դիվանագիտական զեկուցագրեր), որոնք թեև գրվում էին պաշտոնական պատվերով և որոշակի կանոններով, սակայն հնարավորություն էին տալիս «ճոխացնելու» շարադրանքը սեփական հմտությունների չափով: Առավել հայտնի են Մուսթաֆա Սամի փաշայի և Սաղրք Ռըֆատ բեյի զեկուցագրերը (risale), որոնցից մի մասը պատմական–հրապարակախոսական ժանրի ստեղծագործություններ կարելի է համարել:

Կարելի է եզրակացնել, որ արդեն XIX դարում վաքայինյուվիսլիքը դառնում է լոկ ավանդական արարողակարգային անհրաժեշտ պաշտոն, որի գործառույթները մասամբ կատարում է «Takvim–i vekayi» պաշտոնաթերթը: Այսինքն՝ դարավերջին արդեն ավանդական պատմագրությունը սպառել էր իրեն:

Մյուս կողմից, քանի որ մինչև XIX դարի կեսը պատմական գիտելիքներ ստանալու գրեթե միակ աղբյուրը պաշտոնական տարեգրությունն էր, որի միջոցով պետությունն արտահայտում էր իր դիրքորոշումը պատմական իրադարձությունների վերաբերյալ, նման ինստիտուտի օժանդակումը պետության կողմից կարող էր թելադրված լինել նաև պատմական հայեցակարգերի և պատմական տեղեկատվության վրա սեփական վերահսկողության և մենաշնորհային դիրքի պահպանման ձգտումով:

Ամեն դեպքում, XIX դ. և XX դ. սկիզբին՝ մինչև Օսմանյան կայսրության փլուզումը, վաքայինյուվիսների ինստիտուտը մնաց անձեռնմխելի, այդ ընթացքում պաշտոնավարել են 11 պատմագիր (ընդհանուր թվով՝ 29), կայսրության վերջին վաքայինյուվիս Աբդուրրահման Շերեֆը այդ պաշտոնին է նշանակվել 1909 թ.:

Թանզիմաթի շրջանի բարեփոխումները պայմանավորեցին այն կարևոր տնտեսական, քաղաքական, սոցիալական և մշակութային փոփոխությունները, որոնք տեղի ունեցան օսմանյան հասարակության կյանքում՝ միևնույն ժամանակ հանդի-

սանալով գործոն հնի ու նորի ակտիվ պայքարի համար: Թանզիմաթի շրջանի թերևս ամենահայտնի հեղինակներից էր խոշոր պետական գործիչ, հայտնի ուլեմ, օսմանյան ականավոր պատմաբան–տարեգիր Ահմեդ Ջևդեթ փաշան (1822–1895): Ահմեդ Ջևդեթի՝ որպես պատմաբանի, կայացումը սերտորեն կապված է նրա բարենորոգչական գործունեության հետ լուսավորության և կրթության ոլորտում: Ահմեդ Ջևդեթի հայացքներն ու մոտեցումները առավել մանրամասնորեն արտահայտված են նրա՝ Աբդուլ Համիդ Բ–ի հանձնարարականով գրված 1839–1876 թթ. իրադարձությունների մասին պատմող «Marûzat» («Զեկույցներ») աշխատության մեջ:

Մինչև XIX դ. կեսերը պատմությունը դասավանդվում էր միայն մի քանի ուսումնական հաստատություններում: 1869 թ. Կրթության մասին օրենքով (Maârif–i Umûmiyye Nizâmnâmesi) պատմությունը, որպես ուսուցման համար պարտադիր առանձին առարկա, պետական միասնական ծրագրերով ընդգրկվում է կրթական բոլոր մակարդակի հաստատություններում: Այսպիսով՝ պատմության դասավանդման հարցը դառնում է պետական օրակարգի խնդիր, ինչը Թուրքիայի պատմության մեջ սեփական պատմական նոր հայեցակարգ մշակելու առաջին փորձն էր:

Այդ տարիներին բարեփոխիչների շրջանակում տարածում ուներ հետևյալ կարգախոսը՝ «Պատմությունը՝ միջոց, Թանզիմաթը՝ նպատակ (Araç tarih, amaç Tanzimat)»: Վերոհիշյալ նպատակներին պետք է ծառայեր նաև 1850 թվականին Ֆրանսիական Ակադեմիայի նախատիպով ստեղծված Encümen–i Dâniş–ը (Գիտնականների խորհուրդ): Նրա կողմից հրապարակված առաջին աշխատությունները վերաբերում էին լեզվին և պատմությանը: Դրանց մեջ շատ կարևոր էր Ֆուադ փաշայի և Ահմեդ Ջևդեթ փաշայի կազմած Kavaid–i Osmanîye («Օսմաներենի հիմունքները») կարևոր ներածությամբ, ինչպես նաև հետագայում դրա պարզեցված տարբերակ՝ Kavaid–i Türkiye («Թուրքերենի հիմունքներ») թուրքական քերականությունը, որը հաստատվում էր որպես «լեզվական բարեփոխումների ուղենիշային ձեռնարկ»: Encümen–i Dâniş–ի մեկ այլ կարևոր հրապարակումներից էր Ահմեդ Ջևդեթ փաշայի 12 հատորանոց «Օսմանյան կայսրության պատմությունը» (Tarih–i Devlet–i Aliyye), որը հայտնի է նաև «Tarih–i Cevdet» անվանումով: Ջևդեթի «Պատմությունը», որին հեղինակը նվիրել էր իր կյանքի երեսուն տարիները, ընդգրկում են 1774–1826 թթ. իրադարձությունները (53 տարվա պատմություն) և գրված է ավանդական ժամանակագրական–տարեգրային մեթոդին հետևելով: Հնարավորության դեպքում, սակայն, Ջևդեթը հեռանում է ավանդական տարեգրի շարադրման ձևից, կենսագրական, համեմատական էքսկուրսներ է կատարում դեպի անցյալ՝ տալով իր սեփական դիտարկումներն ու մեկնաբանությունները: Դրանով իսկ Ահմեդ Ջևդեթի «Պատմությունը» ներկայանում է որպես տարեգրություն՝ միահյուսված փոքրիկ ակնարկ–մենագրությունների հետ: Աղբյուրների լայն ընդգրկումը, քննադատական ոգին, պատմական տրամաբանության առկայությունը, սահուն գրելաոճն ու համեմատաբար հասկանալի, չբարդացված լեզուն նորույթ էին ժամանակի թուրք պատմագրության համար: Միևնույն ժամանակ, իր ողջ շարադրանքի ընթացքում պատմագիրը մնում է իր՝ կայսերապաշտ պահպանողականի դիրքերում: Ահմեդ

Ջևդեթի այլ կարևոր աշխատություններից հարկ է հիշատակել «Tezakir–i Cevdet» («Ջևդեթի գրառումները»–ը)՝ իր ծառայության ժամանակ իրադարձությունների վերաբերյալ կատարված դիտարկումների հավաքածու, որը, ըստ էության, սկիզբ դրեց հուշագրությունների ժանրին օսմանյան պատմագրության մեջ:

1870–ականների վերջերից «Օսմանյան պատմություն (Tarih–i Osmanî)» դասընթացը փոխարինվում է «Իսլամական քաղաքակրթության պատմություն (Tarih–i İntişa–i İslam)» դասընթացով: Պատմության դասընթացների իսլամացումը կապված էր, անշուշտ, Աբդուլ Համիդ Բ–ի որդեգրած պանիսլամիզմի քաղաքականության հետ: Նոր դասագրքերի պահանջարկը, դրանց եվրոպական նմուշների հետ ծանոթությունը, թարգմանությունն ու ադապտացումը լուրջ խթան դարձան թուրք պատմագրության հետագա զարգացման համար: Մեկ այլ կարևոր արձանագրում ևս պետք է անել. այդ ժամանակվանից սկսած թուրքական իրականության մեջ արմատավորվում է պատմության դասավանդման միջոցով պաշտոնական գաղափարախոսության (այդ ժամանակահատվածի համար՝ օսմանիզմի) հանրայնացման ու լեգիտիմացման, այդ լույսի ներքո սերունդ դաստիարակելու և պատմությունը, այսինքն՝ անցյալը վերահսկելու պրակտիկան, որը ժառանգեց նաև հանրապետական Թուրքիան:

Այսպիսով՝ XIX դարի կրթական քաղաքականության և տպագրական հնարավորությունների ավելացման շնորհիվ արձանագրվեց պատմական գրականության արագ աճ, նոր ժանրերի կայացում և նոր մեթոդաբանության կիրառում:

XIX դարի վերջին — XX դարի սկզբին սկսում է ձևավորվել թուրք ազգայնամոլական գաղափարախոսությունը՝ թյուրքիզմը (türkçülük): Այդ ժամանակահատվածում Օսմանյան կայսրության հասարակական–քաղաքական միտքը աճող հետաքրքրություն էր ցուցաբերում թուրքերի էթնիկ ծագման, թյուրքալեզու այլ ժողովուրդների պատմության, լեզվի և գրականության հարցերի նկատմամբ: Որոշ թուրք հեղինակներ հանդես էին գալիս «արյամբ և լեզվով եղբայրներ»՝ բոլոր թյուրքալեզու ժողովուրդների միավորման գաղափարով: Այս գաղափարը ձևակերպված էր, օրինակ, Ահմեդ Վեֆիք փաշայի «Թյուրքերի տոհմածառը» («Şecer–i Türk» 1884) միջնադարյան տրակտատի թարգմանության նախաբանում: 1900 թ. լույս տեսավ Նեջիբ Ասըմի «Թյուրքերի պատմությունը», իսկ լեզվաբան Շեմսեդդին Սամի բեյը հրատարակեց իր երկհատորյա «Թյուրքերենի բառարան»–ը («Kamus–ı Türki» 1901)՝ նախաբանում ներկայացնելով իր տեսակետները թյուրքերի պատմության վերաբերյալ: Թուրքիայում արթնացող ազգայնամոլական միտումների աշխուժացմանը նպաստում էին որոշ եվրոպացի գիտնականների առաջ քաշած «թուրանական տեսությունները», օրինակ՝ Ա. Վամբերիի, Ս. դե Սասիի, Լ. Քահենի և այլոց աշխատությունները և գիտական հոդվածները լայն տարածում էին ստանում Թուրքիայում: Այսպիսով՝ եվրոպական արևելագետների երբեմն վարկածային և հում, երբեմն էլ քաղաքական–կոնյուկտուրային տեսակետներն ու կարծիքները պարարտ հող էին գտնում իր ինքնությունը փնտրող, նոր–նոր ձևավորվող թուրք

ազգայնականության ծիրում և լրացուցիչ խթան դառնում դրա արագ աճի համար՝ հաղորդելով ազգայնամոլական և պանթյուրքական ուղղվածություն:

Առանձնակի ակտիվություն էին ցուցաբերում Ռուսաստանից ներգաղթած թյուրք մտավորականները՝ Յուսուֆ Աքչուրան, Ահմեդ աղա Աղայովը և այլք: 1908 թ. ձևավորվում է «Թյուրքական խմբակը» (Türk Derneği), որի ծրագրով նախատեսվում էր թյուրքալեզու ժողովուրդների պատմության, մշակույթի, ազգագրության, գրականության ուսումնասիրություններ կատարելը: 1911 թ. հիմնադրվեց «Թյուրք Յուրդու» (Türk Yurdu) ակումբը, որը հրատարակում էր համանուն ամսագիր: Այն կարևոր դերակատարում ունեցավ պանթյուրքիզմի գաղափարախոսության զարգացման գործում: Այսպիսով՝ թուրք պատմագրության մեջ ի հայտ է գալիս նոր՝ պանթյուրքիստական ուղղություն:

Օսմանյան պետության վերջին վաքայինյուվիս և պետական գործիչ Աբդուր-ռահման Շերեֆի (1853–1925) կյանքը և գործունեությունը ժամանակագրական առումով համընկավ կայսրության գոյության ամենավերջին տարիների հետ: Նա 1909 թ. մինչև 1919 թ. եղել է վաքայինյուվիս, եղել է 1909 թ. ստեղծված «Օսմանյան պատմական ընկերության» առաջին նախագահը: «Ընկերությունը» հիմնադրվել էր սուլթան Մեհմեդ Ռեշադի հրամանագրով (irade) և նյութական աջակցությամբ՝ որպես պատմագիտական հանձնաժողով, որի առաքելությունն էր կրթօջախների համար Օսմանյան կայսրության պատմության նոր և համապարփակ դասագիրք պատրաստելը: «Ընկերության» կանոնադրության մեջ նշվում էր նաև, որ միմյանց և ընդհանուր պատմությանը հաղորդակից լինելով՝ կայսրության տարբեր ժողովուրդները կգիտակցեն մի պետության մեջ միահամուռ ուժերով գոյատևելու անհրաժեշտությունը և սեր կտածեն ընդհանուր օսմանյան հայրենիքի (vatan–i müştereke) հանդեպ: «Ընկերության» աշխատանքների մեջ ներգրավվեցին նաև ոչ թուրք մասնագետներ՝ Խորհրդարանի պալատի անդամ սերբ Իսկանդեր Յանկո Հուջին, մեջլիսի պատգամավոր հույն Կառոլիդին, Մուտավիդիս Քրիստովուլուսը, հայ լրագրող, «Սաբահ» թերթի խմբագիր Տիրան Քելեքյանը: «Ընկերությունը» ձեռնամուխ եղավ նաև սեփական ամսագրի հրատարակմանը: Ամսագիրը («Tarih–i Osmani Encümeni Mecmuası») առաջին թուրքական պարբերականն էր, որն օսմանյան հասարակությանը ծանոթացնում էր արդի պատմագիտական ձեռքբերումների հետ, հրատարակում էր հազվագյուտ փաստաթղթեր, հուշագրություններ, համաշխարհային և սեփական պատմության ակնառու դեմքերի կենսագրություններ: Պարբերականը լույս էր տեսնում մինչև 1928 թ., նրա երկու համարները լույս տեսան արդեն 1930 թ.՝ նոր այբուբենի ներդրվելուց հետո (yeni seri): «Encümen»–ի՝ «Օսմանյան պատմության» նախագիծը, իր բոլոր թերություններով հանդերձ, առաջին և վերջին փորձն էր Թուրքիայի ողջ պատմության ընթացքում ներկայացնելու այն՝ պետության ոչ թուրք ժողովուրդների մասնագետների մասնակցությամբ: Այդ նախագիծը այդպես էլ երբեք չիրագործվեց:

Ձևականորեն Շերեֆը «Encümen»–ի նախագահ մնաց մինչև իր կյանքի վերջը (1925 թ.), սակայն այնտեղ գործնականում տիրում էին ծայրահեղ ազգայնական

հայացքներ ունեցող պատմաբանները՝ Ահմեդ Ռեֆիկը, Նեջիբ Ասըմը, Ֆուադ Քյոփրյուլուն և Յուսուֆ Աքչուրան, որն այդ ժամանակահատվածում նույնպես դարձավ «Ընկերության» անդամ: «Mecmua»–ի այդ տարիների հրապարակումներից շատերը զուտ քաղաքական բնույթ ունեին:

Այսպիսով՝ թեև «Encümen»–ը դադարեցրեց իր գործունեությունը 1928 թ., փաստորեն նրա իրավահաջորդը դարձավ հանրապետական Թուրքիայում Մուսթաֆա Քեմալի կողմից 1931 թ. ստեղծված «Թուրքական պատմության ուսումնասիրման» (Türk Tarihi Tetkik Cemiyeti), հետագայում՝ «Türk Tarih Kurumu» (Թուրքական պատմագիտական ընկերություն) կազմակերպությունը: Փաստորեն, նոր Թուրքիան օսմանյան շրջանից ժառանգեց ոչ միայն արդեն իսկ փոխակերպված այդ կառույցը՝ իր ազգայնական անդամներով (Ահմեդ Ռեֆիկ, Նեջիբ Ասըմ, Ֆուադ Քյոփրյուլու և Յուսուֆ Աքչուրա), այլև մոտեցումները, տեսակետները և գաղափարները, որոնք իրենց մարմնավորումը գտան Աթաթյուրքի առաջ քաշած «պատմության նոր հայեցակարգում»:

3. ՀԱՅԵՐԻ ԴԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ

Հայերի դերն Օսմանյան կայսրության մշակութային կյանքի ամենատարբեր ոլորտներում չափազանց զգալի է եղել: Արևմտահայ մշակույթը, չնայած սոցիալ–տնտեսական տաժանելի ու անարդար պայմաններին, XVIII դարից սկսած այնպիսի մի հզոր զարթոնք է ապրել, որ դուրս է եկել զուտ ազգային՝ հայկական սահմաններից, կայսրությունում դարձել լուսավորությանը, եվրոպականացմանն ուղղված շարժման առաջամարտիկը:

Այս ներազդման, համագործակցության հաջողությունն առանձնապես պայմանավորված էր բոլորին հասկանալի մի ընդհանուր արտահայտչամիջոցի գոյությամբ, որը դարձավ հայատառ թուրքերենը:

Հայատառ թուրքերեն գրականության առաջին նմուշները պատկանում են XIV դարին: Բոնի մուսուլմանացման և թուրքացման քաղաքականության արդյունքում արևելյան վիլայեթներում իրենց պատմական հողերի վրա ապրող ավելի քան կես միլիոն հայեր թուրքախոս էին դարձել: Լեզուն կտրելու, մահվան սպառնալիքով արգելված է եղել խոսել հայերեն: Անգամ քարոզը եկեղեցիներում թուրքերեն է հնչել: Մեր ժողովրդի թուրքախոս այս հատվածի, հայերեն չիմացողների, թուրքալեզու դարձածների, մասամբ հայերենին տիրապետողների համար, որպես արևմտահայության ինքնապահպանման ու ուծացման դեմ պայքարի և հաղորդակցման միջոց, ծնունդ է առել հայատառ թուրքերենը:

Որպես մշակույթի մի հզոր, բազմաժանր ու ինքնուրույն, ինքնաբավ ճյուղ՝ հայատառ թուրքերենի ինստիտուտը ոչ միայն արդարացրել է արևմտահայությանը ծառայելու իր առաքելությունը, այլև վերաճել է ավելի լայն գործոնի: Այն առավելապես իր գոյության տպագրական շրջանում ծառայել է նաև Օսմանյան կայսրության թուրքալեզու ժողովուրդներին և իր մեծագույն ներդրումն է ունեցել նրանց ընդհանուր, մշակութային զարգացման, լուսավորության գործում: Այս պնդումն առաջին

հերթին և առավելապես վերաբերում է թուրք ժողովրդին: Ձեռագիր մի հսկայական, եզակի ու անգնահատելի ժառանգություն, որը ներառում է գեղարվեստական և պատմական գիտություններին վերաբերող երկեր: Միայն հայատառ թուրքերեն բանահյուսական, աշուղական գրականությունն արդեն իսկ իրական գանձարան է ոչ միայն հայկական մշակույթի, այլև կայսրության այլ ժողովուրդների և առաջին հերթին թուրք ժողովրդի մշակույթի համար:

1512–1513 թթ. Վենետիկում Հակոբ Մեղապարտը տպագրել է առաջին հայկական գրքերը: Առաջին հայկական տպարանը հիմնադրվել է Աբգար Թոխաթեցու (Եվդոկացու) կողմից 1564 թ. Կոստանդնուպոլսում: Այն գործել է մինչև 1569 թ.: Այս տպարանի հիմնադրումով է սկսվում Օսմանյան կայսրությունում հայկական տպագրական գործի, տպագրական մշակույթի փառավոր ճանապարհը, որը տվել է տպագրիչների, տառաստեղծների, տառաձույլների, հրատարակիչների, տպարանատերերի հարյուրավոր անուններ, որոնք մեծագույն ավանդ են ունեցել մեր ժողովրդի և Օսմանյան կայսրության զարգացման պատմության մեջ:

1677 թ. Երեմիա Քյոմուրճյանը Կոստանդնուպոլսի Գումգափու թաղամասում երկրորդ հայկական տպարանն է հիմնադրում:

Գրիգոր Մարզվանցին (Մերջանզադե Գրիգոր դպիր Մարզվանցի, ?–1735 թթ.) և Աստվածատուր Կոստանդնուպոլսեցին (1670–1747 թթ.) 1694 թ. հիմնադրում են Պոլսի 3–րդ՝ «Աստվածատուր Դպրի» հայկական տպարանը, որը գոյատևում է շուրջ 45 տարի:

XIX դարի սկզբին Կոստանդնուպոլսի հայ տպարանների թիվը հասնում է 25–ի:

Հայատառ թուրքերեն տպագիր գրականությունն ընդարձակ աշխարհագրություն ունի: Հրատարակվել է աշխարհի 50 քաղաքների 200–ից ավելի տպարաններում: Միայն Կոստանդնուպոլսում 1730 թ. սկսած հայատառ թուրքերեն գրքեր տպագրվել են շուրջ 85 տպարաններում: Այն ունեցել է իր սոցիալ–քաղաքական, կրոնական կողմնորոշումը և գրական, լուսավորական նպատակները: Ավելի քան 250 տարիների ընթացքում տպագրված հայատառ թուրքերեն գրքերի թիվն անցնում է 2500–ից: Այս ամենին հավելենք թատրոնի համար կատարված 500–ից ավելի թարգմանությունները, փոխադրությունները՝ իրենց կրթական, լուսավորական, մշակութային ահռելի նշանակությամբ: 1840–1947 թթ. ընկած ժամանակահատվածում հայատառ թուրքերեն մամուլը կազմում է շուրջ 130 անուն պարբերական:

Մի շարք հայ տպագրիչներ մեծագույն պարգևների են արժանացել, մասնավորապես Արապյան ամիրայական տոհմը՝ ի դեմս Պողոս (Օհաննեսյան) Արապյան Ապուչեխցու (Արապ օղլու, 1742–1835 թթ.): Նա իր կյանքի 70 տարիները նվիրել է տպագրական գործին: Եղել է հայերեն թերթերի ու թուրքերեն պաշտոնաթերթերի առաջին տպագրիչը, կայսերական տպարանի ղեկավարը, բացի հայկական տպագրական տառերից՝ նաև թուրքական տառեր է ստեղծել:

Մյուս հայտնի տպագրիչը, որը մեծագույն ծառայություններ է մատուցել Օսմանյան կայսրությունում, Հովհաննես Մյուհենդիսյանն է (1810–1891 թթ.): Նրա

գործունեությունը սկսվում է 1839 թվականից: Հայտնի է եղել որպես «անզուգական տպագրիչ և գրաձուլիչ»:

Օսմանյան կայսրությունում առաջին թղթադրամները տպագրել է Ռաֆայել Գազանճյանը: Սակայն այս թղթադրամները զուրկ են եղել գեղարվեստական արժեքից և, որ ավելի կարևոր է, սկսել են կեղծվել: Այդ իսկ պատճառով նոր թղթադրամների տպագրության գործը հանձնարարվել է Հովի. Մյուհենդիսյանին:

Հայ տպարանատերերից շատերի գործունեությունը դուրս է եկել հայկական շրջանակներից: Բազմաթիվ հայկական տպարաններում տպագրվել են թուրք հեղինակների օսմաներեն, հայերեն, հայատառ թուրքերեն երկերը, թարգմանությունները, փոխադրությունները, ինչպես նաև հայ հրատարակիչների, պատասխանատու խմբագիրների կամ հայ տպարանատերերի օսմաներեն, ֆրանսերեն կամ հայերեն, հունարեն քառալեզու, հնգալեզու պարբերականները, օտարալեզու գրքերը, որոնք տարածվել են ողջ Կովկասով: Հայ տպագրիչների մի մասը Պոլսի զինվորական վարժարանում (Հարբիյե) սկսել է դասավանդել նաև տպագրական գործ, մասնավորապես լիտոգրաֆիա:

Լրագրող, հրատարակիչ Միհրան Նազգաշյանը (1850–1944 թթ.), որը առավելագույնս ծառայել է թուրքական տպագրական մշակույթին, 1879 թ. հրատարակում էր «Արևելքի թարգման» («Tercüman–ı Şark») պարբերականը, որը հետագայում վերանվանվում է «Առավոտ» («Sabah») և վերածվում է թուրքական առաջին մեծ օրաթերթի:

Հայերի կողմից և հիմնականում հայկական տպարաններում են հրատարակվել թուրքական (օսմաներենով) հետևյալ հայտնի պարբերականները. «Առավոտ» («Sabah»), «Երջանկություն» («Saadet»), «Հարստություն» («Servet»), «Նոր Միտք» («Yeni Fikir»), «Գործող գանձապետարան» («Hazine–i Fiilinin»), «Գիտակրթական հոդվածների ժողովածու» («Ceride–i Fenniye ve Edebiye Servet»), «Վերելք» («İrtika»), «Ճանապարհ» («Tarik»), «Տեղեկատվություն» («Malümat»), «Առաջընթաց» («Terakki»), «Կրթություն» («Maarif»), «Զրույց» («Geveze»), «Քարաքուշ Եզոփի շաբաթ» («Hafta Karakuş Ezop»), Օսմանյան նոր սկիզբ («Nevsal–ı Osmani»), Ազգի փրկություն («Necat–ı Millet»), «Գանգատ» («Şikayet»), «Ստամբուլ» («Istanbul»), «Նկարազարդ Թուրքեստան» («Musavver Türkistan»), «Պատկերազարդ թերթ» («Resimli Gazete»), «Պատկերազարդ գյուղատնտեսական թերթ» («Resimli Ziraat Gazetası»), «Նոր թերթ» («Yeni Gazete»), «Դպրոց» («Mekteb»), ինչպես նաև ֆրանսերենով պարբերականների մեծ մասը՝«Բարեփոխում» («La Réforme»), «Կայծակ» («L'éclair»), «Հայրենիք» («La Patrie»), «Անդրդվելի» («L'Intransigeant»), «Երիտասարդ թուրք» («Jeune–Turc»), «Ճշմարտություն» («La Vérité»), «Վերածնունդ» («Renaissance»), «Արևելյան տեղեկատվություն» («L'information d'Orient»), «Թուրքիայի տրանսպորտի ընդհանուր ազդարար» («Indicateur Général des transports en Turquie»):

Բացի հրատարակիչ–տպարանատերերից՝ կարևոր ավանդ է վերապահված եղել հայ գրաձուլիչներին, որոնք տպարանատերեր չեն եղել: Նրանք տառեր են մատա-

կարարել հայկական և օտար տպարաններին, հսկայական ավանդ են ունեցել մեծ քաղաքներում և գավառներում տպագրական գործի հիմնադրման ու զարգացման մեջ:

Օսմանյան կայսրության լուսավորական մթնոլորտի հաստատման մեջ մեծագույն ավանդ են ունեցել հայ գրավաճառները:

Քիթապչի Մարգարը (1789–1845 թթ.) պոլսահայ գրավաճառների նահապետն է համարվում: Նա 1805 թ. հիմնում է «Մարգարյան գրախանութ» առաջին գրավաճառանոցը:

Հայատառ թուրքերենը ինքնուրույն ու ինքնաբավ գրականություն է՝ հարուստ, որակով, միմյանց չկրկնող՝ նպատակաուղղված արևմտահայության ու Օսմանյան կայսրությունում զարթոնքի ու ազգային ինքնագիտակցության բարձրացմանը:

Այս գրականությունը, արևմտահայ հայագիր գրականության հետ միասին, Օսմանյան կայսրության եվրոպականացման, նոր գաղափարների ներթափանցման, զարթոնքի ընդհանուր շրջանի ծնունդ տվողներից ու շարժիչ ուժերից է եղել: Այս լեզվով են թարգմանել ու կարդացել համաշխարհային, եվրոպական դասականներին ու ժամանակի հայտնի, բուլվարային, արկածային, թերթոնային գրականության արքաներին: Այս լեզվով են հիմնականում գործել հայկական թատերախմբերը՝ ներկայացնելու համար թուրքերենով իրենց խաղացանկը: Հայատառ թուրքերենով են գրել, թարգմանել, փոխադրել հայ թատրոնը շրջապատած թուրք լուսավորիչները՝ ծնունդ տալով թուրքական դրամատուրգիային, թուրք նոր գրականությանն ու գրական «թուրքերենին»: Այս լեզվով տպագրվել են տասնյակ պարբերականներ, որոնք աննկարագրելի պատմական դեր են ունեցել Օսմանյան կայսրության սոցիալ–քաղաքական, գիտական, մշակութային կյանքում, կենցաղում՝ նոր աստիճանի բարձրացնելով հայ լրագրողական մշակույթը, միաժամանակ ծնունդ տալով ժամանակահունչ թուրքական լրագրողական մշակույթին: Հայատառ թուրքերեն որոշ պարբերականների հեղինակությունն այնքան մեծ է եղել, որ մյուս ազգերի առաջադեմ մտավորականությունը, մասնավորապես թուրքերը (բարձրաշխարհիկ և պաշտոնյա խավը), ոչ միայն համագործակցել, այլև սովորել են հայկական այբուբենը և ամեն օր կարդացել են այդ թերթերը՝ նախընտրելով դրանք օսմաներենով հրատարակվողներից:

Արևմտահայերի կողմից ստեղծվել է մեծաթիվ գրականություն: Հայատառ թուրքերեն պարբերական հարուստ մամուլը (ինքնուրույն ու թարգմանական), մասնավորապես ֆրանսիական արկածային գրականությունը, հարյուրապատիկ մեծացնելով ընթերցողների շրջանակը, օր օրի, սովորության ուժով, կարդացվում էր մեծ ու փոքր քաղաքների հասարակական վայրերում, սրճարաններում, թեյարաններում, պաշտոնատեղիներում:

Ստեղծվել է օսմաներենի ուսուցման դասագրքերի և բառարանների աննախընթաց առատություն (հայերեն, հայատառ թուրքերեն, օսմաներեն բացատրական տեքստերով): Ամենից շատ այն օգնել է նոր թուրքերենի կայացմանն ու նրա բառացանկի հարստացմանը: Դպրոցներում, նորաբաց մասնագիտական, նաև բարձրա-

գույն բժշկական, տնտեսագիտական, նույնիսկ զինվորական ուսումնական հաստատություններում տասնամյակներ շարունակ թուրքերը, հայ լեզվաբանների հեղինակած թուրքերենի (հայատառ թուրքերենով) հարյուրի հասնող դասագրքերով ու բառարաններով, հայատառ թուրքերենով օգտագործվող մասնագիտական (ինքնուրույն ու թարգմանական) գրականությունով սովորել են սեփական լեզուն:

Հայատառ թուրքերենն օգտագործվել է կայսրություն մուտք գործող գիտությանը, տեխնիկային, գյուղատնտեսությանը, արհեստներին ու մշակույթին վերաբերող գրականություն ստեղծելու համար, որը կոչված էր ծառայելու ոչ միայն հայ, այլև Օսմանյան կայսրության թուրքախոս ազգերին և թուրքերին: Հայատառ թուրքերենը եղել է կենդանի օրգանիզմ և ծառայել է կայսրության շահերին: Իզուր չէ, որ XIX դարի կեսերին երկու մեծ վեզիրների կողմից պալատական վերնախավային շրջանակներում առաջարկվել է օսմաներենի արաբական այբուբենը փոխարինել հայկականով, որի կենսունակությունն արդեն ապացուցված էր: Սակայն թուրքական վերնախավի ուժեղացող հայատյացությունն անընդունելի դարձրեց այդ առաջարկի իրագործումը:

1850–1870–ական թթ.՝ քաղաքական կյանքի համար համեմատաբար բարենպաստ տարիներին, հայատառ թուրքերեն գրականությունը մեծապես նպաստել է հայ ժողովրդի թուրքախոս հատվածի հոգևոր վերելքին, նրա ազգային–ազատագրական ոգու վերածննդին և, ընդհանուր առմամբ, Օսմանյան կայսրությունում հասարակական մտքի զարթոնքին: Այդ տարիներին գրվել են գեղարվեստական գրքեր (ինքնուրույն և թարգմանական), պատմական աշխատություններ, լուսավորական գրականություն, հրապարակախոսություններ, փիլիսոփայական տրակտատներ, գիտական, գիտահանրամատչելի գրքեր, դասագրքեր, զրուցարաններ, բառարաններ, իրավագիտական ակտեր, դիվանագիտական գրագրության որոշակի մասը, տարբեր տեսակի ուղեցույցներ, բժշկական, կենցաղային՝ երգարաններից մինչև երազահաններ ու խոհարարական գրքեր, օրացույցներ, առողջապահական հրատարակություններ, գրքեր երեխաների համար և այլն: Այն իր հսկայական ազդեցությունն ունեցավ թուրք գրողների ու հասարակական գործիչների նոր սերնդի ձևավորման ու զարգացման վրա:

Կայսրությունը արտասահմանյան երկրներում ներկայացնող դիվանագիտական հաստատությունների հայ աշխատակիցները, որոնք չափազանց մեծ թիվ են կազմել, հիմնականում վարել են թարգմանիչների, խորհրդականների, գրասենյակի ղեկավարների, առաջին քարտուղարների պաշտոններ: Եղել են նաև տարբեր նախարարություններում, դատական և իրավական, բանկային ու առևտրական ասպարեզում ղեկավար պաշտոններ վարող հայ մասնագետներ: Քիչ չեն եղել դեսպաններն ու մանավանդ գլխավոր հյուպատոսները, կառավարության արտաքին գերատեսչության ամենապատասխանատու բաժինները տնօրինողները:

Օսմանյան կայսրությունում լուսավորական շարժման զարգացման գործում նկատելի դեր են խաղացել հայկական թատերախմբերի՝ երկրով մեկ կատարած հյուրախաղերը: Այս հյուրախաղերը համընկել են «զուլումի» տարիներին, երբ Կոս-

տանդնուպոլսում ոչ միայն արգելված էին հայերեն ներկայացումները, այլև թուրք հեղինակների ու եվրոպական թարգմանական պիեսների մեծ մասը: Չպետք է անտեսել այն հանգամանքը, որ կայսրությունում անգրագետների ու թուրքերեն կարդալ չիմացողների թիվը հսկայական է եղել, իսկ զարգացած ու թուրքերենին տիրապետողների թիվը՝ սահմանափակ: Նրանք բոլորը միասին դիտել և հասկացել են բեմում հնչող թուրքերենը:

Հայկական թատերախմբերի հետ համագործակցած թուրք մտավորականների ցանկն իրենից ներկայացնում է թուրք նոր գրականության դասականների, լուսավորիչների համարյա լրիվ ցուցակը: Այն է՝ Նամըք Քեմալ, Ահմեդ Միդհատ, Շեմսեդդին Սամի, Էբուզզիյա Թևֆիք, Ռեջաիզադե Էքրեմ, Ալի Հայդար, Հասան Բեդրեդին, Աբդուլհակ Համիդ և այլք: Բացի նյութական կողմից՝ թատրոնը թուրք լուսավորիչներին գրավել է նրանով, որ հենց թատրոնի միջոցով է հնարավոր եղել արտահայտել իրենց ամենամեծ երազանքները և թուրք առաջադեմ մտավորականության տրամադրությունները: Այս շրջանը համարվում է թուրքական ազգային թատրոնի, օպերային և երաժշտական թատրոնի սկզբնավորման ժամանակաշրջան:

Ավելի քան 50 տարի Թուրքիայի բնակչության ամենատարբեր՝ թուրքախոս և թուրքերենին տիրապետող խավերը այս կերպ հաղորդակցվել են թատերական մշակույթի հետ: Եթե օսմանյան սահմանադրության վերականգնման տարիներին թուրք կինն աստիճանաբար հասարակական ասպարեզ մտավ, և Թուրքիայում ծայր առավ կանանց ազատականացման խնդիրներին ուղղված շարժումը՝ առատորեն տպագրվող հայատառ թուրքերեն թարգմանական գրականության հետ միասին, ապա այն միանգամայն կարելի է վերագրել հատուկ կանանց համար տրվող ցերեկային ներկայացումների դաստիարակչական մեծ ազդեցությանը, հայ առաջադեմ կանանց հրատարակած պարբերականներին, նրանց հասարակական կազմակերպություններին:

Արևմտահայ մթնոլորտի, նրա մշակութային գործիչների ստեղծագործական ներդրման արդյունքում կայսրություն է մուտք գործել եվրոպական նոտագրության, դասական երաժշտական մշակույթը, հրատարակվել են երաժշտական ու երաժշտագիտական պարբերականներ, զարգացել է երաժշտական գործիքների արտադրությունը:

Միջազգային ցուցահանդեսներում բազմաթիվ մրցանակներ շահած ու համաշխարհային հռչակ ձեռք բերած Զիլճյան ընտանիքի ծնծղաները 1623 թվականից դարձել էին յուրատեսակ այցեքարտ Թուրքիայի համար: Մինչ օրս էլ 400–ամյա ծնծղայագործ զերդաստանի անունը կրող ծնծղաները լավագույն որակի արտահայտիչներ են թե՛ դասական և թե՛ այլ նվագախմբերի համար:

Տիգրան Չուխաճյանի (1837–1898 թթ.) անունը կապվում է թուրքական օպերայի, կոմիկական օպերաների, քայլերգերի ստեղծման պատմության հետ: Թուրք դասական երաժշտության հիմնադիր, կոմպոզիտոր, երաժշտագետ, դիրիժոր Տիգրան Չուխաճյանի գործերը կատարում էին նաև իտալական օպերային խմբերը, ներկայացվում էին Ռումինիայում, Բելգիայում, Անգլիայում: 1895 թ. Չուխաճյանի

«Զեմիրեն» իտալական «Ֆրանձինի» խմբի կողմից ներկայացվել է Փարիզի «Օպերա–բուֆում»: Նա 1866 թ. հիմնադրել է «Օսմանյան օպերային միությունը», 1874 թ.՝ համերգային և օպերային 800 տեղանոց թատրոնը:

Հայ ճարտարապետների կողմից կառուցվում էին թատրոնի շենքեր ոչ միայն հայկական թատերախմբերի համար:

Մահմուդ Բ սուլթանի օրոք (1808–1839 թթ.) մեծ քաղաքներում, գավառներում և առհասարակ ողջ երկրով մեկ հայ երաժիշտների, երաժշտության հայ ուսուցիչների բեղմնավոր գործունեության արդյունքում հիմնադրվում էին սիմֆոնիկ, կամերային, փողային նվագախմբեր, երգչախմբեր, երաժշտական միություններ ու հրատարակություններ, թատերախմբեր, պարային մասնավոր դպրոցներ, սպորտային տարբեր խմբեր ու թիմեր, հասարակական հարյուրավոր կազմակերպություններ, ինչի արդյունքում հատկապես Կոստանդնուպոլիսը դառնում էր եվրոպական որակներին հավակնող քաղաք:

Հայ մանրանկարչության լավագույն ավանդույթները շարունակվել են Օսմանյան կայսրության ժամանակ ևս: Նկարիչների մի մասը, դուրս գալով ազգային շրջանակներից, մեծ ճանաչման ու փառքի է հասել. դառնալով կայսրության լավագույն վարպետներ՝ ծառայել են պալատում, հեղինակել թուրք սուլթանների ու նշանավոր այրերի դիմանկարներ, պատմական, պատերազմական (հատկապես հայտնի ծովամարտերի) թեմաներով մեծարժեք կտավներ:

Պերայում՝ քաղաքի ամենաեվրոպական հատվածում, կենտրոնացված են եղել հայկական խմբագրատներ, տպարաններ, դեղարաններ, բժշկական մասնավոր ընդունարաններ, փաստաբանական ու ապահովագրական գրասենյակներ, ոսկերիչների և տարբեր այլ արվեստագետների ու արհեստավորների խանութներ, փոքրիկ ֆաբրիկաներ, ամենատարբեր խանութներ, մասնավորապես պերճանքի, շքեղ, եվրոպական նորաձև հագուստեղենի ու կերպասեղենի հայտնի վաճառատներ, ծաղարաններ, ճաշարաններ, Թոքաթլյան պանդոկներ, լուսանկարչատներ: Իհարկե, ամենահայտնի լուսանկարչատունը, որը Օսմանյան կայսրությունում այս արվեստի նախակարապետն է եղել, արքայական նկարիչներ Աբդուլլահ եղբայրների արվեստանոցն էր, ապա նաև լուսանկարչատունը:

Օսմանյան կայսրության ողջ տարածքում գործել են հարյուրի հասնող հայկական լուսանկարչատներ՝ «Սաբահ և ժոայյիե», «Ֆեբյուս», «Նադիր», «Սեպուհ» «Մանասի» «Գարագաշյան եղբայրների», «Պառնաս», «Էգլը», «Ռոման», «Վիրանյան», «Կարոյան», «Ապօլլօն», «Մեզաք», «Սիմոն», «Ճամլճա», «Էլ Ճարք» և այլ: Նրանք առաջիններից էին մշակույթի այս ոլորտում: Հայկական լուսանկարչատները սուլթանական գանձարանի միջոցներով բազմաթիվ փոստային բացիկներ են տպագրել տարբեր երկրների կառավարությունների և հայտնի գրադարանների համար: 1906 թ. Պերայում հիմնադրվել է նաև Հայ գեղարվեստական ակադեմիան:

Կայսերական գեղարվեստի դպրոցն ուներ ճարտարապետության, քանդակի, փորագրության, յուղաներկի, ածխանկարի, ջրաներկի, գրաֆիկայի բաժիններ, որտեղ դասախոսում էին Փարիզի, Իտալիայում գեղարվեստի ակադամիայի հայազգի

շրջանավարտ մասնագետները: Նրանք եղել են նաև երկրի թանգարանների, առանձին հայտնի հավաքածուների հիմնադիրներն ու առաջնեկները:

Հայ վայելչագիրների շնորհիվ զարգանում էր Ղուրանից հուշանվեր–սուրահներ նկարելու արվեստը: Հնագիտական թանգարանի համահիմնադիր քանդակագործ Երվանդ Օսկանը (1855–1914 թթ.), հայտնի Ռոբերտ քոլեջի գեղագրության ուսուցիչ Հակոբ Չերչյանը և շատ ուրիշ հայեր կարևոր դեր են խաղացել Օսմանյան կայսրության հասարակական կյանքի տարբեր բնագավառներում՝ ներդնելով որոշակի մնայուն արժեքներ:

Նշանակալի է եղել ավանդը նույնիսկ այնպիսի ոլորտներում, որտեղ դարեր շարունակ քրիստոնյաների ներկայությունը եթե ոչ արգելված, ապա գոնե ցանկալի չի եղել: Այդ ասպարեզներից առաջինը ռազմական բնագավառն էր, որտեղ հայերը եղել են ռազմական և իրավաբանական ուսումնարաններում տարբեր մասնագիտությունների ու առարկաների դասախոսներ, դասագրքերի հեղինակներ, մատակարարներ, թարգմանիչներ, խորհրդականներ, ծառայել են որպես բժիշկներ, եղել են այս բնագավառի բազմաթիվ կարևոր հայտնագործությունների հեղինակներ՝ ծանրագույն քաղաքական, պատերազմական իրավիճակներում բազմիցս փրկելով երկիրը:

Արևմտահայ մշակույթի ու նրա գործիչների համար XIX դարը կայսրության բոլոր առաջավոր, մտավորական ու լուսավորական ուժերի համագործակցության հրաշալի շրջան է եղել, որն իր պտուղներն է տվել՝ ի դեմս թուրք նոր, ինքնուրույն ու թարգմանական գրականության ու նոր ձևավորված գրական լեզվի, պարբերական մամուլի, գիտությունների, արվեստների, կապիտալիստական նոր ծնունդ առնող տնտեսական հարաբերությունների: Այս համագործակցությունը XX դարի արշալույսին արդեն գոյություն չուներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Թ. Ազատյանի ֆոնդ:
2. Հայաստանի ազգային արխիվ, Ֆոնդ 411, Ֆոնդ 450, Ֆոնդ Քաղվածքներ:
3. Российский государственный военно–исторический архив, Коллекция Военно–ученого архива, 71 Турция.
4. Государственный Архив Российской Федерации, Фонд 730, 1623–1918.
5. Архив внешней политики Российской империи, Фонд Главный архив II–18, 1855–1867; Фонд Посольства в Константинополе, 1861, 1866; Фонд Канцелярия, 1867, 1876; Фонд Канцелярии МИД, 1876.
6. Ալպոյաճյան Ա., Մինաս Չերազ. իր կյանքը և գործը. իր 60–ամյա հոբելյանի առթիվ. Գահիրե, 1927:
7. Ատենագրություններ Ազգային ժողովո, 1876–1877, Կ.–Պոլիս, 1876:
8. Բայբուրդյան Վ., Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, 2011:
9. Դիվան հայոց պատմության, գիրք ԺԳ. Հարստահարություններ:
10. Ինճիկյան Հ. Գ., Օսմանյան կայսրության անկումը. սոցիալ–տնտեսական ակնարկ, Երևան, 1984:
11. Խառատյան Ա. Ա., Արևմտահայ պարբերական մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում (1857–1908), Երևան, 1989:

12. Կիրակոսյան Ա., Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը (XIX դարի 30–ական թթ.— 1914 թ.), Ե., 1999:
13. Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (1915–ից մինչև մեր օրերը), Գիրք երկրորդ, Երևան, Հայաստան, 1983:
14. Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան, 1991:
15. Հովհաննիսյան Ա., «Օսմանի՞զմ, թե՞ թյուրքիզմ» հայեցակարգերի պայքարը «Tarih–i Osmani Encümeni Mecmuası» պարբերականի էջերում, Արևելյան աղբյուրագիտություն, հ. 2, Երևան, 2020, էջ 422–433:
16. Ղազարյան Հ, Արևմտահայերի սոցիալ–տնտեսական և քաղաքական կացությունը 1800–1870 թթ., Երևան, 1967:
17. Մելքոնյան Ա. Ա., Էրզրում (Պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 1994:
18. Ներսիսյան Մ. Գ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, Երևան, 2002:
19. Ներսիսյան Մ. Գ., Պատմության կեղծարարները, Երևան, 1998:
20. Նուրիխան Հ. Մ. Վ., Ժամանակակից պատմություն, 1868–1878. Մասն Գ, Վենետիկ, 1907:
21. Չերազ Մ., Կենսագրական միսիոներ, Փարիզ, 1920:
22. Պողոսյան Վ., Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական մտքի գնահատմամբ (XIX դ. վերջ — XX դ. սկիզբ), Երևան, 2005:
23. Սարուխան, Հայկական խնդիրը և Ազգային Սահմանադրությունը Թուրքիայում (1860–1910), Հ. Ա., Թիֆլիս, 1912:
24. Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876–1920 թթ.), Երևան, 2009:
25. Սիմոնյան Հր., Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Երևան, 2009:
26. Սիրունի Հ. Ճ., Թանզիմաթ և հայեր, Պատմա–բանասիրական հանդես, 1966, թիվ 4, էջ 53–66:
27. Ստեփանյան Հ., Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում, Երևան, 2012:
28. Տաճկահայաստանում (Վավերագրեր, 1801–1888). Հավելվածներով, ծանոթագրություններով և բառգրքով, Հրատ. Գ, Աղանյանց, Թիֆլիս, 1915:
29. Документи за българската история из германски архиви (1829–1877). Съст. и ред. Хр. Христов и В. Паскалева. София, 1963.
30. Документи за българската история Т.1. Архив на Найден Геров, ч.1–2, Подредил Г. Панчев, под ред. на М. Попруженко. София: БАН, 1931–1932.
31. Документи за българската история. Т. III: Документи из турските държавни архиви. Ч. 1: 1564–1872. Подбралъ и превелъ П. Дорев.— София, 1940.
32. Документи за българската история. Т. IV: Документи из турскитъ държавни архиви. Ч. II: 1863–1909. Подбралъ П. Дорев. София, 1942.
33. Документи за българската история. Т. VI: Документи за Новата история на българския народ из Виенските държавни архиви: 1830–1877. Ч. II. Събрал П.Ников. София, 1951.
34. Канитц Ф., Дунайская Болгария и Балканский полуостров. Пер. с нем., СПб, 1876.
35. Миллер А Ф. Мустафа паша Байрактар. М–Л., 1947.
36. Оганесян А. Р., К истории зарождения националистического (тюркистского) направления в турецкой историографии (конец XIX — начало XX вв.),— Вестник общественных наук НАН РА, № 2, Ереван 1996, с.74–79.
37. Освобождение Болгарии от турецкого ига: документы в трех томах. Том первый: Освободительная борьба южных славян и Россия, 1875–1877. Под ред. С. А. Никитина, В. Д. Конобеева, Ал. К. Бурмова, Н. Т. Тодорова. М., 1961.

38. Османски извори за ислямизационните процеси на Балканите (XVI–XIX в.). Серия извори — 2. Под редакцията на: М. Калицин, А. Велков, Евг. Радушев. София, 1990.
39. Пангалос К., Турция и просвещение, СПб., 1862.
40. Панченкова М. Т., Политика Франции на Ближнем Востоке и сирийская экспедиция 1860–1861 гг. М., 1966.
41. Петросян Ю. А., Младотурецкое движение (вторая половина XIX — начало XX в.). М., 1971.
42. Плетньов Г., Съпротивата на българския народ против османизирането на родните училища в Дунавския вилает.— Трудове на Великотърновския Университет «Кирил и Методий», 1974–1975. т. XII, кн. 3, Факултет за история, с. 104–165.
43. По следите на насилието: Документи и материали за налагане на исляма. Съст.: П. Петров, Ч. Първа, София, 1987.
44. Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году. М., 1896.
45. Розен Д. Т., История Турции от реформ в 1826 г. до Парижского трактата в 1856 г. В двух частях, С.–Пб., 1872.
46. Саркисян Е. К., Политика османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX вв. Ереван, 1972.
47. Сафрастян Р. А., Доктрина османизма в политической жизни Османской империи (50–70 гг. XIX в.). Ереван, 1985.
48. Тодоров Н., Балканский город XV–XIX веков. М., 1978.
49. Тодорова М. И., Англия, Россия и танзимат (вторая четверть XIX в.). М., 1983.
50. Турски извори за българската история. IV: Османо–турски документи за руско–турската война през 1977–1878 г. I. Отговорен редактор Христо Христов. София, 1973.
51. Фадеева И. Е., Мидхат–паша: Жизнь и деятельность. М., 1977.
52. Фадеева И. Л., Официальные доктрины в идеологии и политике Османской империи (османизм–панисламизм): XIX — начало XX в., М., 1985.
53. Ahmad F., The Making of Modern Turkey, Routledge, 2014.
54. Ahmad, F., The Young Turks: The Committee of Union and Progress in Turkish Politics, 1908–1911. London, 1972.
55. Ahmed Midhat. Üss–i İnkılap. Kısm–ı 1–2. İstanbul, 1295.
56. Ahmet Rasim, Resimli ve haritalı Osmanlı tarihi. 2. Cilt, 2. Tabı. İstanbul, 1333–1335.
57. Akdağ M., Türkiye'nin iktisadi ve içtimai tarihi, C. I: 1243–1453. İstanbul, 1974.
58. Akyıldız, A., Tanzimat dönemi Osmanlı merkez teşkilâtında reform (1836–1856). İstanbul, 1993.
59. Alderson, A. D., The Structure of the Ottoman Dynasty. Westport, 1982.
60. Ali Suavi, A propos de l'Herzegovine. Paris, 1875.
61. Anderson, P., Lineages of the Absolutist State. London, 1974.
62. Armağan M., Yakın Tarihin Kara Delikleri, Istanbul, 2019.
63. Armaoğlu F., Türk Dış Politikası Tarihi, Istanbul, 2020.
64. Artinian, V., Osmanlı Devleti'nde Ermeni Anayasası'nın Doğuşu 1839–1863. Çeviren: Zülal Kılıç. İstanbul, 2004.
65. Avcıoğlu D., Millî kurtuluş tarihi 1836'den 1995'e. Ikinci Kitap, İstanbul, 1976.
66. Bailey F. Ed., British policy and the Turkish reform movement: a study in Anglo–Turkish relations: 1826–1853. Cambridge, 1942.
67. Bayur Y., Türk İnkılâbı tarihi. Cilt: III: 1914–1918: Genel Savaşı, Kısım III: 1915–1917 vuruşmaları ve bunların siyasal tepkileri. Ankara, 1983.
68. Belgelerle Mısır, Ermeni–Kürt, Doğu Rumeli Meseleleri: II. İkinci Abdülhamid'in sadrıazamları Kamil Paşa ve Said Paşa'nın anıları–polemikleri. Yayına hazırlayan: Gül Çağalı–Güven, İstanbul, 1991.

69. Belgelerle Tanzimat: Osmanlı sadrıazamlarından Âli ve Fuad Paşaların siyasî vasiyyetnâmeleri. Hazır.: E. D. Akarlı, İstanbul, 1973.
70. Benoit–Brunswik, La vérité sur Midhat Pacha. Paris, 1877.
71. Berkes N., Türkiyede çağdaşlaşma. İstanbul, 1973.
72. Bianconi F., La Question d'Orient dévoilée ou la vérité sur la Turquie. Paris, 1876.
73. Biberoğlu M., Tanzimat'tan II. Meşrutiyet'e Ermeni Nizamnameleri. İstanbul, 2003.
74. British documents on foreign affairs: reports and papers from the foreign office confidental print. General editors: Kenneth Bourne and D. Cameron Watt. Part I: from the mid–nineteenth century to the First World War. Series B: the Near and Middle East, 1856–1914. Editor: David Gillard. Volume 2: the Ottoman Empire: revolt in the Balkans,1875–1876. Bethesda, 1984.
75. British documents on foreign affairs: reports and papers from the foreign office confidental print. General editors: Kenneth Bourne and D. Cameron Watt. Part I: from the mid–nineteenth century to the First World War. Series B: the Near and Middle East, 1856–1914. Editor: David Gillard. Volume 2: the Ottoman Empire: revolt in the Balkans,1875–1876. Bethesda, 1984.
76. Çelik H., Ali Suavi ve dönemi. İstanbul, 1994.
77. Cevdet Paşa., Tezakir: 1–12. Yayınlayan: C. Baysun. Ankara, 1953.
78. Clician V., Son Altesse Midhat–Pacha, grand Vizir. Paris, 1909.
79. Çulcu M., Spekülatif marjinal tarih tezleri. 6. Baskı. İstanbul, 2000.
80. Dadrian V., N. The history of the Armenian Genocide: Ethnic conflict from the Balkans to Anatolia to the Caucasus. Providence — Oxford, 1995.
81. Danışmend İ. H., Osmanlı Tarihi Kronolojisi. Cilt: 4. İstanbul, 1955.
82. Davison R. H., Reform in the Ottoman Empire 1856–1876. Princeton, 1963.
83. Davison, R. H. Turkey: A Short History. (2nd ed.) Huntingdon, 1988.
84. Devereux, R., The First Ottoman Constitutional Period. Baltimore, 1963.
85. Düstür. Cild–i evvel. İstanbul, 1289.
86. Düstür. Cild–i sani. İstanbul, 1289.
87. Düstür. Tabb–ı sani. Dersaadet: Amire, 1282.
88. Eastern Papers: Correspondence Respekting Christian Privileges in Turkey. London, 1856.
89. Ebuzziya Tevfik, Yeni Osmanlılar tarihi. İstanbul, 2006.
90. Engelhardt Ed., La Turquie et le Tanzimat, t. 1–2, Paris 1882–1884.
91. Eton W. A., Survey of the Turkisch Empire. London, 1798.
92. Farley L., Turks and Christians, London, 1876.
93. Findley, C. V., Bureaucratic Reform in the Ottoman Empire: The Sublime Porte, 1789–1922. Princeton, 1980.
94. Findley, C. V. Ottoman Civil Officialdom: A Social History. Princeton, 1989.
95. Galerie des contemporains illustres. T. VII: Rechid Pacha. Paris, 1850.
96. Gibb E. J. W., A History of Ottoman poetry, Vol. VI: containing the Turkish originals, London, 1963.
97. Gökbilgin M. T., Rumelide Yürükler, Tatarlar ve Evlâd–ı Fatihan, İstanbul, 1957.
98. Haerkötter R., Sultan Abdülhamîd II. in der türkischen Publizistik seit Gründung der Republik: Vom kemalistischen Feinbild zur Symbolfigur national–religiöser Kreise. Frankfurt am Mein, 1996.
99. Hanioğlu Ş., Brief History of the Late Ottoman Empire, Princeton, 2010.
100. Heper, H., The State Tradition in Turkey. Huntingdon, 1985.
101. Heper M., Türkiye'de devlet geleneği. [İstanbul], 2006.
102. Heyd, U., Foundations of Turkish Nationalism: The Life and Teachings of Ziya Gökalp. London, 1950.
103. İğdemir U., Kuleli Vak'ası hakkında bir araştıma. Ankara, 1937.
104. İkinci Abdülhamid'in hatıra defteri. İstanbul, 1960.

105. İnal H., Bosna'da Tanzimatın tatbikına ait vesikalar.— Tarih Vesikaları, 1941–1942, 1. Cilt, III, s. 374–396.
106. Inalcık H., Tanzimat ve Bulgar Meselesi (Doktora Tezi'nin 50. yılı, 1942–1992). İstanbul, 1992.
107. Inönü I., Hatıralar: 1. Kitap. Yayına Hazırlayan: Sabahattin Selek. Ankara, 1985.
108. Issawi C., The Economic History of Turkey, 1800–1914. Chicago, 1981.
109. Jonquière Le Vte De La, Histoire de Empire Ottoman depuis les origines jusqu'à nos jours. Paris,1881.
110. Kafadar C., Between Two Worlds: the construction of the Ottoman State. Berkeley, 1995.
111. Kaplan M., Namık Kemal: hayatı ve eserleri. Istanbul, 1948.
112. Karadağ R., Muhteşem imparatorluğu yıkanlar. 4. B. İstanbul, 1991.
113. Karal E. Z., Osmanlı tarihi. VI cilt: Islahat Fermanı devri, 1856–1861. Ankara, 1954.
114. Karal E. Z., Osmanlı tarihi. VII cilt: Islahat Fermanı devri, 1861–1876. Ankara, 1956.
115. Kaynar, R., Mustafa Reşit Paşa ve Tanzimat. Ankara, 1954.
116. Keyder Ç., Port Cities in the Ottoman Empire: Some Theoretical and Historical Perspectives, Review, 16, No. 4, 1993, 519–558.
117. Kuntay M. C., Namık Kemal devrinin insanları ve olayları arasında. C. I, Istambul, 1944.
118. Kuran A. B., İnkılap tarihimiz ve İttihad ve Terakki. İstanbul, 1948.
119. Kuran A. B., Osmanlı İmparatorluğunda inkılap hareketleri ve Milli Mücadele. İstanbul, 1959.
120. Kurgan Ş., Ziya Paşa: hayatı, sanatı, eserleri. Istanbul, 1962.
121. Le Baron Lermot, La Turquie demasque et rehabilitation de l'Europe. Paris, 1877.
122. Léouzon le Duc L., Midhat Pacha, Paris: Dentu, 1877.
123. Lewis, G., Modern Turkey. New York, 1974.
124. Lewis R.,. Everyday Life in Ottoman Turkey. New York, 1971.
125. Madden R. R., The Turkish Empire in its relations with Christanithy and civilisation. London, 1862.
126. Midhat Pacha. La Turquie: son passé, son avenir. London, 1878.
127. Midhat Paşa, Hayat–ı siyasiyesi, hidematı, menfa hayatı. Naşiri: Ali Haydar Midhat. Cilt 2: Tabsıra–ı İbret. İstanbul, 1325.
128. Namık Kemal, Vatan yahut Silistre.— Külliyat. I, Ankara, 1960.
129. Oscanjan C., The sultan and his people, New York, 1857.
130. Osmanoğlu A., Babam Abdülhamid. İstanbul, 1960.
131. Öztuna Y. T., Başlangıcından zamanımıza kadar Türkiye tarihi, C. 12, İstanbul, 1967.
132. Prokesch–Osten A. Geschichte des Abfalls der Griechen vom Türkischen Reiche im Jahre 1821 und der Gründung des Hellenischen Reiches. Aus diplomatischem Stand. Band 6, Wien, 1867.
133. Quataert D., The Ottoman Empire, 1700–1922, New York, 2005.
134. Réponse a Son Altesse Moustapha Fazil Pacha au sujet de Sa lettre au Sultan. Paris, 1867.
135. Reports received from Her Majesty's Ambassador and Consuls relating to the condition of Christians in Turkey. 1867. London: Harrison, 1867.
136. Reports received from Her Majesty's Ambassador and Consuls relating to the condition of Christians in Turkey. 1867. London, 1867.
137. Şakir Z., Büyük Türk inkılâbı. C. 1, Istanbul, 1956.
138. Show St. J., History of the Ottoman Empire and modern Turkey. Vol. I: Empire of the Gazis: the rise and decline of the Ottoman Empire, 1280–1808. Cambridge, 1977.
139. Sırma İ. S., II Abdülhamidin İslam birliği siyaseti. 4. Baskı, İstanbul, 1990.
140. St. Clair S. G. B. and Brophy Ch., A. Residence in Bulgaria or, notes on the resources and administration of Turkey, London, 1863.
141. Stambul und das moderne Türkenthum (Politische, sociale und biographische Bilder von Einem Osmanen), Leipzig, 1877.

142. Stern B., Jungtürken und Verschwörer. Die innere Lage der Türkei unter Abdul Hamid II. Zweite Aufgage, Leipzig: Grübel & Sommerlatte, 1901.
143. Sultan Abdülhamid: Tahsin Paşanın Yıldız hatıraları. İstanbul, 1990.
144. Sultan Abdülhamit, Siyasi Hatıratım. İstanbul, 1984.
145. Sungu İ., Mahnud II. nin İzzet Molla ve Asakir–i Mansure hakkında bir Hattı.— Tarih Vesikaları, 1941–1942, 1. Cilt, III, s. 162–183.
146. Tanzimat dönemi türk edebiyatı antolojisi. Hazır.: Ş. Kutlu. Istanbul, 1972.
147. Tarih III: Yeni ve Yakın Zamanlar: T. T. T. Cemiyeti tarafından yazılmıştır. İstabul, 1933.
148. Tashjian J. H., Turkey: author of genocide: the centenary record of Turkey, 1822–1922. Boston, 1965.
149. The Armenian massacres, 1894–1896: U. S. media testimony, edited and with an introduction by Arman J. Kirakossian; foreword by Bob Dole, Detroit, 2004.
150. The Armenian massacres, 1894–1896: British media testimony, edited and with an intro. by Arman J. Kirakossian; foreword by Lord Shannon, Dearborn, 2008.
151. The Cambridge History of Turkey, Vol. 3: The Later Ottoman Empire, 1603–1839. Cambridge, 2008.
152. The Cambridge History of Turkey, Vol. 4: Turkey in the Modern World, Cambridge, 2008.
153. Thouvenel L., Trois années la Question d'Orient 1856–1859, Paris, 1897.
154. Tökin F. H. Türkiye'de siyasî partiler ve siyasî düşüncenin gelişmesi, 1839–1965. İstanbul, 1965.
155. Tunaya T. Z., Türkiye'de siyasal partiler. Cilt I: ikinci meşrutiyet dönemi, 1908–1918. Genişletilmiş ikinci baskı. İstanbul, 1988.
156. Tunaya T. Z., Türkiyede siyasi partiler. İstanbul, 1952.
157. Turan Ş. Türk Devrim tarihi I: İmparatorluğun çöküşünden ulusal direnişe. İstanbul, 1991.
158. Turkey, No. 15 (1877): Further Correspondence respecting the affairs of Turkey. London, 1877.
159. Turkish State, Turkish Society. Finkel, A., and Nükhet Sirman, eds. New York, 1990.
160. Türkiye Tarihi: 3: Osmanlı Devleti: 1600–1908. Yayın Yönetmeni: Sina Akşin. İstanbul 2002.
161. Türköne M, Siyasi ideoloji olarak İslamcılığın doğuşu. 2. Baskı. İstanbul, 1994.
162. Tütengil C. O., Yeni Osmanlılardan bu yana İngiltere'de Türk gazeteciliği: 1867–1967. İstanbul, 1969.
163. Uzunçarşılı İ. H., Osmanlı devleti teşkilatına medhal. İstanbul, 1941.
164. Vaillant J.–A., Solution de la Question d'Orient. Paris, 1853.
165. Vesikalar.— Halil Inalcık, Tanzimat ve Bulgar Meselesi (Doktora Tezi'nin 50. yılı, 1942–1992). İstanbul, 1992, s. 115–134.
166. Walker Ch. J. Armenia: The survival of a nation. London, 1983.
167. Werner E., Die Geburt einer Grossmacht — Die Osmanen (1300–1481). Berlin, 1966.
168. Wittek P., The rise of the Ottoman Empire, London, 1938.
169. Yerasimos S., Azgelişmişlik sürecinde Türkiye. Cilt 1–2, İstanbul, 1977.
170. Zürcher E. J., Modernleşen Türkiye'nin Tarihi, İstanbul, 2017.
171. Zürcher E. J., The unionist factor: the role of the Comittee of Union and Progress in the Turkish national movement, 1905–1926. Leiden, 1984.

ԲԱԺԻՆ 3

ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԵԳԻՊՏՈՍԸ XIX ԴԱՐՈՒՄ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

1. ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ: ԹՈՒՐՔ–ՄԱՄԼՈՒՔՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԲԱԽՈՒՄՆԵՐԸ XIX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

XIX դարի սկզբին, հատկապես 1801 թ. Եգիպտոսից ֆրանսիացիների հեռանալուց հետո այդ երկրում հաստատվեց ուժերի նոր հարաբերակցություն: Այն հայտնվեց երեք տարբեր ուժերի՝ անգլիացիների, թուրքերի և մամլուքների ազդեցության ներքո:

Եգիպտոսից դուրս մղելով Նապոլեոն Բոնապարտին և ֆրանսիացիներին՝ անգլիացիները չհապաղեցին բոլորին ցույց տալու, թե ով է այդ եռյակի մեջ առաջին ջութակը: Անգլիան դրա հնարավորությունն ուներ, քանի որ որպես պետություն ամենահզորն էր նրանց շարքում, բացի այդ՝ այդ պահին Եգիպտոսում եղած անգլիական զորքերն ավելի լավ էին զինված և կազմակերպված, քան թուրքերը և մամլուքները, նրանց թիվը Եգիպտոսում հասնում էր քսան հազարի՝ մամլուքների չորսհազարանոց զորքի դիմաց:

Անգլիական ռազմական ուժերի գերակայությունը Եգիպտոսում քաջ գիտակցում էին թե՛ մամլուքները և թե՛ թուրքերը, որը ստիպում էր նրանց զգույշ լինել անգլիացիների հետ իրենց փոխհարաբերություններում և անհարկի մարտահրավեր չնետել նրանց:

Ֆրանսիացիների հեռանալուց հետո Եգիպտոսի ներքաղաքական կյանքում և սոցիալ–տնտեսական հարաբերությունների ոլորտում տեղի չունեցավ որևէ բարելավում: Անգլիացիները և թուրքերը մամլուքների հետ միացած՝ նոր տառապանքներ պատճառեցին եգիպտացիներին՝ հարկերի քառապատիկ գանձում, քարավան-

ների կողոպուտ, թույլ և փոքրաքանակ ցեղերի շեյխերի ձերբակալություն, կանանց բռնաբարում, բազում այլ կամայականություններ և այլն. ահա այսպիսին էր Եգիպտոսում նրանց ներքին քաղաքականության ոչ լրիվ պատկերը:

Անգլիացիներից, թուրքերից և մամլուքներից կազմված այդ եռապետության անդամներից յուրաքանչյուրը Եգիպտոսում հետապնդում էր իր նպատակները:

Անգլիայի գլխավոր նպատակն էր ֆրանսիացիներին Եգիպտոսից դուրս մղելուց հետո վերջնականապես հաստատվել այդ երկրում և այն վերածել իր գաղութի:

Թուրքերի նպատակն էր, օգտվելով ֆրանսիացիների պարտությունից, վերականգնել օսմանյան տիրապետությունը Եգիպտոսում և այդ տիրապետությունը ձևականից դաձնել իրական:

Ինչ վերաբերում է մամլուքներին, ապա նրանք ձգտում էին վերահաստատելու իրենց իշխանությունը և կրկին դառնալու Եգիպտոսի անսահմանափակ կառավարողները, ինչպես նախքան Նապոլեոն Բոնապարտի ներխուժումն էր: Սակայն մամլուքների քաղաքականության մեջ կար մի նրբություն: Նրանք գիտակցում էին, որ այդքան հզոր չեն, որ կարողանան ինքնուրույն՝ առանց անգլիացիների կամ թուրքերի աջակցության իրականացնել իրենց քաղաքական երազանքները: Նրանք դրանում մասնավորապես համոզվեցին այն բանից հետո, երբ նրանց բիրտ քաղաքականությունը, սաստիկ ճնշումները և բռնությունները 1801–1802 թթ. առաջացրին Կահիրեի բնակչության դժգոհությունն ու ցասումը: Ուստի նրանք կանգնած էին երկընտրանքի առջև՝ կա՛մ պիտի համագործակցեին անգլիացիների, կա՛մ թուրքերի հետ: Բոլոր դեպքերում դա նշանակում էր պառակտում այդ երեք ուժերի միջև:

Այդ մրցապայքարում, որն ընթանում էր բացահայտ և գաղտնի կերպով, մամլուքյան զորքն իր կողմը գրավելու հարցում հաջողությունն ուղեկցեց անգլիացիներին: Անգլիացի գեներալը դիմեց վճռական քայլի՝ պահանջելով թուրք փաշայից մամլուքներին վերադարձնել նրանց պատկանող կալվածքները, որ զավթել էին թուրքերը, և մամլուքներին վերականգնել իրենց նախկին պաշտոններում: Դա բավական եղավ, որ մամլուքներն անցնեին անգլիացիների կողմը: Սակայն օսմանյան սուլթան Սելիմ Գ–ն հասկանում էր, որ այդ հարցում զիջելը նշանակում էր Եգիպտոսի կառավարումը հանձնել մամլուքներին, որն ուղղակիորեն հակասում էր Կոստանդնուպոլսի շահերին: Մամլուքներին վերադարձնել նրանց կալվածքները և վերականգնել նրանց պետական պաշտոններում կնշանակեր նաև ուժեղացնել անգլիացիների դիրքերը Եգիպտոսում՝ նրանց դարձնելով այդ երկրի իրական կառավարողներ: Ելնելով այդ նկատառումներից՝ սուլթան Սելիմ Գ–ն ցուցաբերեց համառություն և հրամայեց իր փաշային մերժել անգլիացիների վերոնշյալ երկու կարևոր պահանջները:

Միաժամանակ իրադրության վերլուծությունը սուլթանին հանգեցրեց այն եզրակացության, որ քանի դեռ մամլուքներն իրենցից ուժ են ներկայացնում, օսմանյան տիրապետությունը Եգիպտոսում երբեք չի կարող կայուն լինել: Այդ պատճառով էլ կարգադրելով իր փաշային չբավարարել անգլիացիների պահանջները՝

սուլթանը միաժամանակ հրամայեց փաշային ամբողջովին ոչնչացնել մամլուքյան զորքը:

Ի կատարումն այդ հրամանի՝ թուրքական զորքերը շրջապատեցին մամլուքներին և սկսեցին նրանց անխնա կոտորածը: Հավանաբար թուրքերին, որոնց զորքերի թիվը այդ պահին Եգիպտոսում հասնում էր քառասուն հազարի, կհաջողվեր իրագործել իրենց ծրագիրն ամբողջությամբ, եթե չմիջամտեին անգլիական զորքերը: Անգլիացի գեներալը վերջնագիր ներկայացրեց թուրք փաշային՝ պահանջելով դադարեցնել մամլուքների կոտորածը և ազատ արձակել ձերբակալվածներին՝ սպառնալով հակառակ պարագայում հրետակոծել Կահիրեն: Թուրքերը հարկադրված էին զիջել անգլիական սպառնալիքները և դադարեցրին մամլուքյան զորքերի սպանդը: Այդուհանդերձ նրանց հաջողվեց չորսհազարանոց մամլուքյան զորքերից սպանել 1500–ին՝ ազատ արձակելով կենդանի մնացած 2500–ին:

Թվում էր, թե Անգլիան մոտ էր հաստատելու իր տիրապետությունը Եգիպտոսում և արաբական այդ երկիրը վերածելու իր գաղութի: Սակայն տեղի ունեցան նոր իրադարձություններ, որոնց պատճառով Անգլիան 1802 թ. հարկադրված էր լքել Եգիպտոսը և հեռանալ այնտեղից: Անգլիայի և նապոլեոնյան Ֆրանսիայի միջև Եվրոպայում մղվող արյունաքամ պատերազմի արդյունքում կողմերը ստիպված էին 1802 թ. Ամյենում կնքել հաշտության պայմանագիր, որի պայմաններից մեկն էլ Անգլիայի հեռանալն էր Եգիպտոսից: Պայմանագրի մեկ այլ կետի համաձայն՝ Անգլիան և Ֆրանսիան երաշխավորում էին Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը նրա մինչպատերազմյան սահմաններում: Դա նշանակում էր, որ և՛ Անգլիան, և՛ Ֆրանսիան այլևս անելիք չունեին Եգիպտոսում: Եվ քանի որ ֆրանսիացիները մինչ այդ արդեն հեռացել էին այնտեղից, ուստի պետք է հեռանային նաև անգլիացիները: Անգլիական զորքերի դուրսբերումը Եգիպտոսից ավարտվեց 1803 թ. մարտին:

Այսպիսով՝ Ֆրանսիային և Անգլիային չհաջողվեց իրենց տիրապետությունը հաստատել Եգիպտոսում:

Նրանց հեռանալուց հետո Եգիպտոսում մնացին միայն թուրքական զորքերը և մամլուքները: Հակամարտության վերսկսումը նրանց միջև անխուսափելի էր: Ընդ որում, թուրքերը համոզված էին իրենց հաղթանակի մեջ: Նրանց հիշողության մեջ դեռևս թարմ էր մամլուքների դեմ տարած իրենց հաղթանակը: Նրանք հաշվի էին առնում, որ մամլուքներին պաշտպանող և նրանց վերջնական ջախջախումից փրկած անգլիական զորքերն արդեն հեռացել էին Եգիպտոսից: Եվ, վերջապես, նրանք ապավինում էին իրենց զորքերի թվաքանակին, որը մի քանի անգամ գերազանցում էր մամլուքներինը:

Սակայն թուրքերի ուշադրությունից վրիպել էր երկու կարևոր հանգամանք: Մամլուքներն այնքան հեռատես էին, որ կարողացան կարգավորել իրենց հարաբերությունները եգիպտական բեդվինների և նրանց ցեղապետերի հետ: Զանազան խոստումներով նրանք կարողացան իրենց կողմը գրավել բեդվիններին՝ ընդդեմ թուրքերի, և իրենց հրամանատարության ներքո կազմակերպել ու վարժեցնել բա-

վականին մեծ բեդվինական բանակ: Մամլուք առաջնորդներին հաջողվեց նաև բարելավել իրենց հարաբերությունները հարևան նուբիացիների հետ և ձևավորել նուբիական մի զորախումբ:

Արդյունքում ձևավորվեց մամլուքների, բեդվինների և նուբիացիների միասնական ճակատ, և երբ սկսվեցին ռազմական գործողությունները թուրքերի հետ, վերջիններիս դեմ կանգնած էին մամլուքյան, եգիպտական, բեդվինական և նուբիացիների միացյալ զորքերը:

Պատերազմական գործողությունները սկսեցին թուրքերը, որոնք 1802 թ. ներխուժեցին Վերին Եգիպտոս, որտեղ կենտրոնացված էին նրանց հակառակորդ ուժերը՝ մամլուքների գլխավորությամբ: Վերջինները սրընթաց առաջ նետվեցին՝ ճանապարհին, ինչպես բնորոշ էր նրանց, սրբելով, թալանելով և հրկիզելով այն ամենը, ինչ հնարավոր էր: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Դամանհուրի մոտ, որն ավարտվեց յոթհազարանոց թուրքական բանակի խայտառակ պարտությամբ: Մարտի դաշտում նրանք թողեցին հինգ հազար դիակ:

Զարգացնելով իրենց հաջողությունները՝ մամլուքները կարող էին առաջ շարժվել և մտնել Կահիրե: Սակայն նրանք խոհեմ եղան և չդիմեցին այդ քայլին՝ ոչ առանց հիմքի վախենալով, որ մայրաքաղաքում նրանք կարող են պարտություն կրել: Ուստի և մնացին Վերին Եգիպտոսում, որտեղ և ամրապնդեցին իրենց դիրքերը:

Իսկ Կահիրեում դրությունն ավելի սրվեց թուրքերի կրած պարտությունից հետո: Այդ պարտությունը մեծապես ապակայունացրեց իրադրությունը մայրաքաղաքում և մեծապես նպաստեց տարաձայնությունների առաջացմանը և խորացմանը թուրքական կառավարող վերնախավում:

2. ՄՈՒՀԱՄՄԵԴ ԱԼԻՆ ԵՎ ՆՐԱ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՐԻԵՐԱՅԻ ՍՐԸՆԹԱՑ ՎԵՐԵԼՔԸ

Հասկանալի է, որ լարված իրավիճակը երկար չէր կարող պահպանվել: Երկու կողմերն էլ՝ մամլուքները և թուրքերը, հասկանում էին, որ նոր և վճռական բախումն անխուսափելի է, և պատրաստվում էին դեպքերի նման զարգացումներին: Սակայն, ինչպես հաճախ է պատահում պատմության մեջ, անսպասելիորեն ստեղծվում է նոր իրադրություն՝ կապված ասպարեզում հայտնված նոր որևէ ուժեղ անհատականության հետ, որը խառնում է բոլոր խաղաթղթերը և տապալում նախօրոք մշակված ծրագրերը: Եգիպտոսի պարագայում XIX դարի սկզբներին քաղաքական ասպարեզում հայտնված այդ գործիչը եղավ Մուհամմեդ Ալին, որին վիճակված էր արտակարգ դեր խաղալ ոչ միայն Եգիպտոսի, այլև հարևան արաբական երկրների և Մերձավոր Արևելքի քաղաքական ճակատագրում: Առանց վարանելու կարելի է ասել, որ այդ անգրագետ, բայց բնածին արտակարգ շնորհներով օժտված տաղանդավոր ալբանացին մոտ կես դար իրադարձությունների և դեպքերի կիզակետում էր, ուղղորդում էր դրանք, ահ ու սարսափ տարածում Օսմանյան կայսրությունում և լուրջ անհանգստություն ու մտավախություն առաջացնում, անգամ տագնապահար

անում ժամանակի եվրոպական Մեծ տերությունները՝ Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը և Ավստրիան:

Իսկ ո՞վ էր Մուհամմեդ Ալին: Նա ծնվել է 1769 թ. Օսմանյան կայսրության մաս կազմող Մակեդոնիայում՝ ալբանական ընտանիքում: Ունեցել է ծանր մանկություն, փոքր հասակում դարձել ծնողազուրկ, բայց իր համառությամբ կարողացել է գոյատևել: Չի խորշել որևէ ծանր աշխատանք կատարելուց, զբաղվել է ծխախոտի առևտրով և այլն: Սակայն փառասիրական մեծ երազանքներ փայփայող երիտասարդին այդ բոլորը չէր գոհացնում, և նա սպասում էր հարմար առիթի՝ օգտվելու ճակատագրի կողմից իրեն սահմանված բարեհաճությունից:

1799 թ. սուլթան Սելիմ Գ–ն հրաման արձակեց կայսրության տարբեր վայրերից նոր զորաջոկատներ կազմավորելու և դրանք ուղարկելու Եգիպտոս ֆրանսիացիների դեմ: Զորահավաքի վերաբերյալ հրամանը տարածվեց նաև մակեդոնական Կավալլա քաղաքի վրա, որտեղ ծնվել և բնակվում էր Մուհամմեդ Ալին: Նա մտավ իր հայրենի քաղաքում 300 հոգուց կազմված զորաջոկատի մեջ, մեկնեց Եգիպտոս և մասնակցեց ֆրանսիական զորքերի դեմ ուղղված մարտերին: Նա, որին վստահվել էր ալբանական զորաջոկատի հրամանատարի օգնականը դառնալ, մարտերում իրեն դրսևորեց հիանալի, աչքի ընկավ խիզախությամբ և ցուցաբերեց գովելի բանիմացություն ռազմական գործերում: Եվ պատահական չէ, որ շուտով նշանակվեց թուքական բանակում գործող ալբանական բոլոր զորքերի հրամանատար: Այդպես սկսվեց Մուհամմեդ Ալիի ռազմական և քաղաքական կարիերայի վերելքը, որը, շատ չանցած, նրան հասցրեց իշխանական բուրգի ամենաբարձր գագաթը:

Եգիպտոսում հայտնվելը և ռազմական կարևոր իրադարձությունների կենտրոնում լինելը Մուհամմեդ Ալիին օգնեց հասկանալու, թե ինչ է կատարվում Եգիպտոսում:

Իր բնավորությամբ լինելով գործնական անձնավորություն՝ նա ընդունում է մի որոշում, որը կապված էր մեծ ռիսկի հետ ոչ միայն իր կյանքի, այլև հետագա գործունեության համար: Նա իր ամբողջ ալբանական զորաջոկատով անցավ մամլուքների կողմը՝ ընդդեմ թուրքերի, որը փոխեց ուժերի հարաբերակցությունը ի վնաս վերջինների:

1803 թ. վերսկսվեցին պատերազմական գործողությունները: Ալբանական և մամլուքյան միացյալ ուժերը գրավեցին Կահիրեն, թուրքական փաշային վռնդեցին այնտեղից և իշխանությունը վերցրին իրենց ձեռքը: Երկիրը կառավարելու համար ստեղծվեց եռիշխանություն, որի մեջ մտան Մուհամմեդ Ալին և երկու մամլուք բեյ: Նրանք կարողացան նորանոր հաղթանակներ տանել թուրքերի դեմ:

Այդ հաղթանակներից հետո մամլուքները հավատացած էին, որ կրկին եկել է իրենց աստեղային ժամը, և իրենք կարող են անել այն ամենը, ինչ ցանկանում են: Սկսվեց բռնությունների նոր ալիք եգիպտացիների՝ ֆելլահների, բեդվինների, արհեստավորների և սոցիալական այլ խավերի դեմ, զավթվեցին արաբներին պատկանող կալվածքները, բարձրացվեցին հարկերը և այլն:

Մամլուքների խժդժությունները լցրին եգիպտացիների համբերության բաժակը, և նրանք հերթական անգամ ապստամբեցին: Ապստամբությունը գլխավորեց Եգիպտոսի և մուսուլմանական աշխարհի ամենահեղինակավոր կենտրոններից մեկի՝ ալ–Ազհարի հոգևորականությունը, որի շնորհիվ ապստամբությունն ընդունեց ավելի կազմակերպված, զանգվածային և համառ բնույթ:

Ալ–Ազհարը կոչ արեց եգիպտացիներին չենթարկվել մամլուքներին և չկատարել նրանց հրամանները, որը ապստամբները կատարեցին ամենայն բարեխղճությամբ: Մասնավորապես նրանք հրաժարվեցին մամլուքներին հարկեր վճարելուց՝ հաշվեհարդար տեսնելով հարկահավաքների հետ, որոնցից շատերը սպանվեցին հենց մայրաքաղաքի փողոցներում: Սկսվեցին փողոցային մարտերը: Ապստամբները պաշարեցին մամլուք բեյ Օսման Բարդիսիի պալատը, և նա հազիվ կարողացավ ճողոպրել և ապաստան գտնել Վերին Եգիպտոսում: Նրա պալատն անցավ ապստամբների ձեռքը:

Իսկ ի՞նչ էր անում այդ ընթացքում Մուհամմեդ Ալին: Նա հայտնվեց շատ ծանր վիճակում, քանի որ նա մամլուք երկու բեյերի հետ մտնում էր 1803 թ. ձևավորված եռիշխանության մեջ: Այդ հանգամանքը կարող էր նրա համար օրհասական լինել: Ապստամբները, հասկանալի է, հանդես էին գալիս ոչ միայն մամլուքյան երկու բեյերի, այլև եռիշխանության մյուս անդամի՝ Մուհամմեդ Ալիի և նրա ալբանական զորախմբի դեմ՝ նրանց դիտելով որպես մամլուքների դաշնակիցներ: Մուհամմեդ Ալիի ճակատագիրը կախված էր այն բանից, թե ինչպիսի ելք կգտնի ստեղծված անելանելի թվացող իրավիճակից: Եվ նա գտավ այդ ելքը՝ կատարելով իր հերթական և բոլորի համար անսպասելի քայլը:

Մուհամմեդ Ալին, ինչպես որ 1802–1804 թթ. թուրք–մամլուքյան պատերազմի ժամանակ լքեց թուրքերին և իր զորախմբով անցավ մամլուքների կողմը, այնպես էլ այժմ՝ ապստամբության թեժ պահին լքեց մամլուքներին և իր ալբանական զորախմբով անցավ եգիպտացի ապստամբների և նրանց ղեկավարության՝ ալ–Ազհարի հոգևորականության կողմը: Դա լավ մտածված և հեռատես քայլ էր, որի շնորհիվ Մուհամմեդ Ալին կարողացավ ոչ միայն խուսափել մամլուքների ճակատագրից, այլև ամրապնդեց իր դիրքերը և նպաստավոր պայմաններ ստեղծեց իշխանական վերին՝ ամենաբարձր սանդղակին բազմելու համար:

Մուհամմեդ Ալին անձամբ գնաց ալ–Ազհար, ներկայացավ Եգիպտոսի հոգևորականությանը, հանդես եկավ շեյխերի համաժողովի առջև և իրեն հայտարարեց եգիպտական ապստամբ ժողովրդի պաշտպան: Նա վստահեցրեց, որ կանի ամեն բան չեղյալ հայտարարելու մամլուքների մտցրած անօրինական և բարձր հարկերը: Ի վերջո՝ նրա հրամանով ալբանական զորքերը մարտի մեջ մտան մամլուքների դեմ:

Մուհամմեդ Ալիի այդ քայլը շատ տպավորիչ էր և ըստ արժանվույն գնահատվեց ալ–Ազհարի հոգևոր առաջնորդների կողմից: Ելնելով Մուհամմեդ Ալիի այդ քայլի հետևանքով ստեղծված նոր իրադրությունից՝ ալ–Ազհարի շեյխերի համաժողովը փոփոխություն մտցրեց Եգիպտոսի կառավարման համակարգում: Եռիշխանությունը վերացվեց, և մամլուքները զրկվեցին Եգիպտոսի կառավարման համակար-

գում որևէ դեր ունենալուց: Համաժողովը Եգիպտոսի կառավարիչ ընտրեց թուրք Խուրշուդ փաշային, որը մինչ այդ իր կարևորությամբ Եգիպտոսի երկրորդ քաղաքի՝ Ալեքսանդրիայի կառավարիչն էր: Ամենայն հավանականությամբ, դա արվեց այն նկատառումով, որպեսզի չգրգռեն Բարձր դռանը և ցույց տան, որ Եգիպտոս–Կ. Պոլիս փոխհարաբերություններում պաշտոնապես փոփոխություն տեղի չի ունենում, և օսմանյան սուլթանը շարունակում է համարվել Եգիպտոսի՝ Օսմանյան կայսրության մեջ մտնող երկրամասի վեհապետը: Դա սոսկ մարտավարական քայլ էր: Բայց կար մի նրբին հանգամանք. Խուրշուդին Եգիպտոսի կառավարիչ–փաշա նշանակեց ոչ թե օսմանյան սուլթան Սելիմ Գ–ն, ինչպես ընդունված էր, այլ եգիպտացիները՝ ի դեմս ալ–Ազհարի շեյխերի համաժողովի: Սուլթանը ստիպված էր անտրտունջ կուլ տալ այդ դառը հաբը:

Մուհամմեդ Ալին հեռատեսորեն չհակադրվեց Խուրշուդին Եգիպտոսի կառավարիչ նշանակելու շեյխերի որոշմանը: Հետագա դեպքերը և նրա քայլերն ավելի բարձրացրին նրա հեղինակությունը: Մասնավորապես նա փայլուն ղեկավարեց մամլուքների կողմից պաշարման ենթարկված Կահիրեի պաշտպանությունը: Մամլուքները, որոնց հաջողվել էր ապստամբության ժամանակ մի կերպ փախուստ տալ Կահիրեից, կրկին զորք հավաքելով՝ հարձակվեցին մայրաքաղաքի վրա, բայց չկարողացան գրոհով գրավել այն, թեև նրանց հաջողվեց պաշարման օղակի մեջ վերցնել Կահիրեն: Մայրաքաղաքը Մուհամմեդ Ալիի եռանդուն ջանքերի շնորհիվ խուճապի չմատնվեց, ինչպես հաճախ էր պատահում նախկինում: Պաշարման մեջ հայտնված կահիրեցիները ալբանացի զորապետի գլխավորությամբ կազմակերպված և համախմբված դիմադրում էին մամլուքներին, որոնք ոչ մի հաջողության չհասան և չորսամսյա պաշարումից հետո ձեռնունայն վերացրին պաշարումը, հեռացան Կահիրեից և վերադարձան իրենց ոստանը համարվող Վերին Եգիպտոս: Եգիպտացիները ցնծության մեջ էին և բարձր էին գնահատում Մուհամմեդ Ալիի ծառայությունները և նրան ընկալում էին որպես իրենց ամենաարժանի և միակ ղեկավարը:

Բոլորովին հակառակն էր Կոստանդնուպոլսի մոտեցումը: Սուլթան Սելիմ Գ–ին մեծապես մտահոգում էր Մուհամմեդ Ալիի հեղինակության բարձրացումը և սրընթաց առաջխաղացումը, որը նա վտանգավոր էր համարում: Սուլթանը կռահում էր, որ Մուհամմեդ Ալին ձգտում է դառնալու Եգիպտոսի կառավարիչը և այդ կարևոր երկրամասը դուրս բերելու օսմանյան ենթակայությունից: Այդ պատճառով էլ նա որոշեց կանխել դեպքերի հետագա զարգացումն այդ ուղղությամբ: Նա պահանջեց, որ Մուհամմեդ Ալին թողնի Եգիպտոսը և անհապաղ մեկնի Կ. Պոլիս:

Մուհամմեդ Ալին կրկին հայտնվեց ծանր դրության մեջ և կանգնեց երկընտրանքի առջև: Բայց անսպասելիորեն այդ հարցում իրենց խոսքն ասացին եգիպտացիները: Նրանք, լսելով սուլթանի որոշման մասին, ոտքի ելան՝ ի պաշտպանություն իրենց կուռքի: Կահիրեում սկիզբ առան ցույցերը, որպես բողոքի նշան՝ փակվեցին խանութները և այլն:

Սելիմ Գ–ն ստիպված էր զիջել:

Այդ միջադեպը հարթելուց հետո Մուհամմեդ Ալին վերսկսեց մամլուքներին հետապնդելու և պատժելու գործողությունները, այս անգամ՝ արդեն Կահիրեից դուրս՝ նրանց որջում՝ Վերին Եգիպտոսում: 1804 թ. ձմռանը և 1805 թ. գարնանը նա մի շարք ծանր հարվածներ հասցրեց մամլուքներին, որը զգալիորեն թուլացրեց նրանց:

3. ՄՈՒՀԱՄՄԵԴ ԱԼԻՆ՝ ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՒՍԱԿԱԼ

Այդ ընթացքում դրությունը կրկին լարվեց Կահիրեում: Այս անգամ դրա անմիջական պատճառը Եգիպտոսի կառավարիչ Խուրշուդ փաշայի անհեռատես քաղաքականությունն էր: Նրա տրամադրության տակ կային թուրքական ենիչերիական զորաջոկատներ, որոնք անմիջապես ենթակա էին նրան՝ որպես թուրքական փաշայի: Նրանք աչքի էին ընկնում անկարգապահությամբ, դաժանությամբ և բնակչությանը կողոպտելով: Հենվելով նրանց վրա՝ Խուրշուդ փաշան Եգիպտոսում հաստատեց մի այնպիսի համակարգ, որը, ըստ էության, չէր տարբերվում մամլուքների կառավարման մեթոդներից: Դրա հաստատումն էր քաղաքացիների ծանր հարկադրումը, ալան–թալանը, գյուղացիներից բռնությամբ մեկ տարի առաջ հաջորդ տարվա հարկերի գանձումը, քաղաքացիներից պատանդներ վերցնելը, նրանց կողոպտելը, զանազան բռնությունների ենթարկելը, անգամ սպանությունները և այլն: Եգիպտացիները թուրք փաշայի կողմից այդ բռնությունների կիրառումն ընկալեցին որպես մամլուքների յուրատեսակ վերադարձ, որն առաջացրեց նրանց խոր վրդովմունքը: Եվ 1805 թ. նրանք կրկին ապստամբեցին, իսկ Մուհամմեդ Ալին կրկին կանգնեց երկընտրանքի առջև:

Այս անգամ ևս նա ճիշտ կողմնորոշվեց և անցավ եգիպտացի ապստամբների կողմը՝ ընդդեմ թուրք փաշայի և ենիչերիական ելուզակների: 1805 թ. ապստամբության հետևանքով Եգիպտոսի կառավարիչ Խուրշուդ փաշան տապալվեց, իսկ ենիչերիական ավազակաբարո զորքերը դուրս վռնդվեցին Եգիպտոսից: Ալ–Ազհարի շեյխերի համաժողովը թուրք Խուրշուդի փոխարեն Եգիպտոսի կառավարիչ ընտրեց Մուհամմեդ Ալիին: Օսմանյան սուլթանը՝ Սելիմ Գ–ն, սրտի կսկիծով հաստատեց նրան այդ պաշտոնում: 1805 թ. Մուհամմեդ Ալին դարձավ Եգիպտոսի փաշա, Եգիպտոսի կուսակալ–կառավարիչը:

Այսպիսով՝ 1799 թ. երեսուն տարեկանում դուրս գալով իր հայրենի Մակեդոնիայից և կյանքում առաջին անգամ ոտք դնելով Եգիպտոս՝ ընդամենը վեց տարվա ընթացքում Մուհամմեդ Ալին կատարեց աննախադեպ թռիչք և ալբանական 300 հոգանոց զորախմբի հրամանատարից հասավ Եգիպտոսի կուսակալի պաշտոնին և դարձավ Եգիպտոսի տիրակալ:

Սակայն շուտով նա ենթարկվեց մի շարք ծանր փորձությունների, որոնք նրա համար եղան յուրատեսակ քննություն պետություն կառավարելու հարցում: Այդ առումով հատկապես ծանր եղան 1805–1807 թթ.:

Դեռ նոր էր նա նշանակվել կուսակալ, երբ 1805 թ. օգոստոսին բռնկվեց անգլո–ֆրանսիական հերթական պատերազմը Եվրոպայում, որն իր անդրադարձն ունեցավ նաև Եգիպտոսի վրա: Անգլիան և Ֆրանսիան կրկին հիշեցին Եգիպտոսը և

փորձեցին միմյանց հարված հասցնել նաև այդ երկրում, որը նրանք արդեն մեկ անգամ փորձել էին վերածել իրենց գաղութի: Բայց այս անգամ նրանք իրենց զորքերը չուղարկեցին Եգիպտոս, այլ օգտագործեցին իրենց հավատարիմ մամլուք բեյերին: Անգլիացիներն ակտիվացրին իրենց ծառայող մամլուք Մուհամմեդ Էլֆիին, իսկ ֆրանսիացիները՝ Օսման Բարդիսիին: Երկու բեյերի տրամադրության տակ կային նշանակալի զորախմբեր, որոնք կազմված էին բացառապես մամլուքներից, և սկսվեցին ռազմական բախումները նրանց միջև:

Մուհամմեդ Ալին ուշադիր հետևում էր նրանց գործողություններին և, ինչպես միշտ, գործեց շատ արագ և վճռական՝ նպատակ ունենալով կանխելու օտարերկրյա ուժերի ներխուժումը Եգիպտոս: Եվ դա նրան հաջողվեց փայլուն կերպով: Նա սկզբում ջախջախեց Էլֆի բեյին, ապա նաև Բարդիսի բեյին: Նրա նոր ռազմական հաղթանակները մամլուք երկու վտանգավոր բեյերի նկատմամբ ավելի բարձրացրեց Մուհամմեդ Ալիի հեղինակությունը և ամրապնդեց նրա իշխանությունը Եգիպտոսում:

Սակայն Մուհամմեդ Ալիի համար փորձաշրջանը դրանով չավարտվեց: 1807 թ. պատերազմի մեջ մտավ Օսմանյան կայսրությունը՝ որպես Ֆրանսիայի դաշնակից: Անգլիան, օգտվելով այդ հանգամանքից և դա օգտագործելով որպես պատրվակ, 1807 թ. մարտի 17–ին իր հինգհազարանոց զորքերը մտցրեց Եգիպտոս, որոնք ամրացան Ալեքսանդրիայում: Անգլիացիները վստահ էին, որ իրենք հեշտ հաղթանակներ կտանեն և Եգիպտոսը կդարձնեն իրենց ենթակա երկիր: Նրանք հաշվի չէին առել, որ իրադրությունը Եգիպտոսում փոխվել է, և Եգիպտոսն ունի նոր, խելացի, հմուտ և խիզախ ղեկավար:

Մուհամմեդ Ալին չվախեցավ անգլիական զորքերից և անմիջապես մարտի մեջ մտավ նրանց դեմ: Եգիպտական և անգլիական զորքերի առաջին մարտը տեղի ունեցավ 1807 թ. մարտի վերջերին Ռոզետա քաղաքի մոտ: Մուհամմեդ Ալիին հաջողվեց ջախջախել անգլիական զորքերը և նրանց դուրս մղել քաղաքից: Դա շատ անսպասելի էր անգլիացիների համար, որոնք, կրկնապատկելով իրենց ուժերը, նորից անցան հարձակման: Ռոզետայի մոտ տեղի ունեցած երկրորդ ճակատամարտը ևս ավարտվեց եգիպտացիների հաղթանակով: Ռազմական պարտությունները ստիպեցին անգլիացիներին հրաժարվել Կահիրեի վրա արշավելու մտքից, և նահանջելով նրանք ամրապնդվեցին Ալեքսանդրիայում: Մուհամմեդ Ալին հասկանում էր, թե ինչ վտանգ է ներկայացնում անգլիացիների ներկայությունը Եգիպտոսում և Ալեքսանդրիայի վերածումը նրանց հենակետի: Այդ պատճառով էլ առանց հապաղելու իր զորքերի գլուխն անցած՝ նա շարժվեց Ալեքսանդրիայի ուղղությամբ և հայտնվեց դրա մատույցներում: Անգլիական զորքերի հրամանատարը, հաշվի առնելով նախորդ երկու պարտությունները, հրաժարվեց նոր ճակատամարտ տալու մտքից և բանակցությունների մեջ մտավ Մուհամմեդ Ալիի հետ հաշտություն կնքելու և անգլիական զորքերը Եգիպտոսից ազատ մեկնելու վերաբերյալ: Եգիպտոսի կուսակալը անգլիացիների երկու պահանջներն էլ բավարարեց: Հաշտությունը ստորագրվեց և անգլիական զորքերն իրենց նավերով 1807 թ. սեպտեմբերին հե-

ռացան Եգիպտոսից: Ամբողջ Եգիպտոսը ցնծությամբ ընդունեց նոր հաղթանակի լուրը: Նրանք հպարտ էին, որ իրենց հաջողվել էր սեփական ուժերով հաղթանակ տանել մի այնպիսի վտանգավոր թշնամու դեմ, ինչպիսին Անգլիան էր:

Անգլիացիների դեմ տարած հաղթանակը և Եգիպտոսը գրավելու նրանց փորձերի ձախողումը կարևոր փուլ դարձավ Մուհամմեդ Ալիի իշխանության և Եգիպտոսի անկախության նվաճման ուղղությամբ: Դա նաև կարևոր քայլ էր Կ. Պոլսից Եգիպտոսի կախվածության թուլացման ճանապարհին:

Մուհամմեդ Ալիի հաղթանակներն անգլիացիների դեմ հենց այդպես ընկալվեցին Օսմանյան կայսրությունում, և սուլթան Սելիմ Գ–ն 1807 թ. նրան պաշտոնանկ անելու և Եգիպտոսից հեռացնելու մի անհաջող փորձ ևս արեց: Մուհամմեդ Ալիին թիկունք կանգնեց ամբողջ Եգիպտոսը, և սուլթանը ստիպված էր հրաժարվել իր այդ մտադրությունից:

Շատ չանցած ենիչերիները Սելիմ Գ–ին տապալեցին և սպանեցին: Ակամայից նրանք մեծ նվեր մատուցեցին Մուհամմեդ Ալիին և Եգիպտոսին:

Մուհամմեդ Ալին, դառնալով Եգիպտոսի անսահմանափակ տիրակալ, մոտ 40 տարի երկաթյա ձեռքով կառավարեց Եգիպտոսը, որն արաբական այդ ամենաազդեցիկ և զարգացած երկրի բազմադարյա պատմության փառավոր ժամանակաշրջաններից մեկն է: Նա բացառիկ դերակատարում է ունեցել Եգիպտոսի՝ XIX դարի առաջին կեսի պատմության մեջ, որից անմասն չեն մնացել նաև հարևան մյուս արաբական երկրները:

Եգիպտոսում Մուհամմեդ Ալիի կուսակալության տարիները պատմագրության մեջ մտել են որպես «Մուհամմեդ Ալիի դարաշրջան»:

4. ՄՈՒՀԱՄՄԵԴ ԱԼԻԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մուհամմեդ Ալին իր նախորդ կառավարիչներից՝ մամլուք բեյերից և թուրք փաշաներից, ստացավ շատ ծանր ժառանգություն: Եգիպտոսը հետամնաց երկիր էր՝ քայքայված տնտեսությամբ, կամայականությունների և բռնությունների վրա խարսխված իշխանությամբ, տնտեսական արխայիկ և ավատական հարաբերությունների բարդ հանգույցով:

Մուհամմեդ Ալին ծրագրել էր Եգիպտոսը դուրս բերել խավարից և անիշխանության ճիրաններից ու վերածել տնտեսապես զարգացած և հզոր երկրի: Նրա վերջնական նպատակն էր Եգիպտոսը դուրս բերել Օսմանյան կայսրության տիրապետությունից և դարձնել անկախ պետություն: Նրա քաղաքական երազանքներից էր արաբական բոլոր երկրները միավորել և ստեղծել մեկ միասնական արաբական պետություն իր գերիշխանության ներքո: Բայց նա լավ էր հասկանում, որ իր ստացած ժառանգության հիման վրա հնարավոր չէ իրագործել իր ծրագրերը: Դրա համար անհրաժեշտ էին արմատական բնույթի բարենորոգումներ, որոնք կկրեին համակարգային բնույթ և կընդգրկեին պետական, քաղաքական, հասարակական, տնտեսական–ֆինանսական, ռազմական, մտավոր–կրթական և այլ ոլորտներ:

Եվ նա ձեռնամուխ եղավ Եգիպտոսի պատմության մեջ աննախադեպ համակարգային բարեփոխումների կիրառմանը:

Այդ բարենորոգումների առանձնահատկությունը նաև այն էր, որ դրանք իրագործվում էին վերևից՝ անձամբ Եգիպտոսի կուսակալ Մուհամմեդ Ալիի կողմից: Ստորև ներկայացված են այդ բարեփոխումները՝ ըստ բնագավառների:

1. Կառավարման համակարգի վերակառուցումը և պետական ապարատի ստեղծումը

Մուհամմեդ Ալին իր բարեփոխումների ծրագրի իրականացումը սկսեց Եգիպտոսի կառավարման համակարգից: Դա շատ բարդ խնդիր էր, և նա ցուցաբերեց որոշ զգուշավորություն: Նա անմիջապես չխզեց կապերն Օսմանյան կայսրության հետ և պահպանեց Եգիպտոսի կարգավիճակը որպես Օսմանյան կայսրության մի երկրամաս՝ գիտակցելով, որ Եգիպտոսի անկախության հռչակման ժամանակը դեռևս չի եկել: Նա, որպես Եգիպտոսի փաշա և կուսակալ, ձևականորեն շարունակում էր մնալ սուլթանի վասալը: Իրականում նա իրեն պահում էր անկախ և սուլթանից ստացվող հրահանգները կատարում էր ընտրովի, միայն նրանք, որոնք չէին հակասում Եգիպտոսի շահերին: Կ. Պոլսում տեղյակ էին այդ մասին, բայց նրանք այդքան ուժ և ազդեցության լծակներ չունեին, որ կուսակալին պարտադրեին կատարել իրենց բոլոր հրամանները:

Մուհամմեդ Ալին իրեն լրիվ անկախ էր պահում նաև Եգիպտոսի ներքին կառավարման բոլոր հարցերում՝ քաղաքական, տնտեսական, ռազմական, անգամ արտաքին քաղաքականության որոշ հարցերում, որոնք նա լուծում էր՝ առանց հաշվի առնելու Կ. Պոլսի կարծիքը: Փաստորեն Եգիպտոսն ուներ յուրահատուկ անկախ կարգավիճակ:

Դա հնարավորություն տվեց նրան ձեռնամուխ լինելու պետական ապարատի ստեղծմանը: Այն, ինչ նա ժառանգել էր մամլուքներից, ոչ թե կառավարման վարչակարգ էր՝ դրա ընդունված հասկացողությամբ, այլ յուրատեսակ պատժիչ ապարատ: Մուհամմեդ Ալին կարողացավ որոգայթի մեջ գցել մամլուքներին և 1811 թ. կոտորեց նրանց Կահիրեում և Եգիպտոսի մնացած բոլոր մասերում, որը նրան հնարավորություն տվեց վերացնելու նաև նրանց այսպես կոչված կառավարման համակարգը և ստեղծել նորը: Դրա համար նա ուսումնասիրեց եվրոպական, հատկապես Ֆրանսիայի փորձը, և շատ բան վերցրեց նրանցից, իսկ երբեմն ուղղակի ընդօրինակեց:

Եգիպտոսի պետական կառուցվածքի հիմքում դրվեց ուղղաձիգ ենթակայության և կենտրոնացված կառավարման սկզբունքը: Կառավարման բուրգի ամենավերևում Եգիպտոսի կառավարիչն էր, որին թուրքերն անվանում էին փաշա, իսկ եվրոպացիները՝ փոխարքա, որը օժտված էր անսահմանափակ իշխանությամբ: Բուրգի միջին սանդղակը գրավում էր կառավարությունը, որը նորություն էր Եգիպտոսի պատմության մեջ և նոր օղակ՝ կառավարման համակարգում: Դրանում չկար վարչապետի պաշտոն, և կառավարությունը գործում էր փոխարքայի անմիջական

ղեկավարության ներքո: Ընդօրինակելով եվրոպական պետական կառուցվածքը՝ Մուհամմեդ Ալին ստեղծեց նախարարություններ, և ըստ այդմ՝ հիմնվեցին ֆինանսների, առևտրի, լուսավորության, ռազմական, ներքին գործերի, արտաքին գործերի և այլ նախարարություններ, ինչը որոշակի քայլ էր ժամանակակից իմաստով պետական ապարատ ստեղծելու ճանապարհին, մանավանդ որ կուսակալը շատ հստակ սահմանեց նրանցից յուրաքանչյուրի գործառույթների և գործունեության ոլորտը:

Կառավարման բուրգի ամենաներքևի սանդղակը գրավեց տեղական մարմինների համակարգը: Այդ բնագավառում աշխատանքները կանոնավորելու նպատակով Մուհամմեդ Ալին անցկացրեց Եգիպտոսի նոր տարածքային–վարչական բաժանում: Եգիպտոսը բաժանվեց յոթ նահանգների, որոնք կոչվեցին մուդիրիյաներ: Դրանք գլխավորում էին փոխարքայի կողմից նշանակվող մուդիրները: Նահանգներն իրենց հերթին բաժանվում էին ավելի փոքր միավորների՝ մարքազների (կենտրոնների) և նահիյաների: Մարքազները ղեկավարում էին մամուրները, իսկ նահիյաները՝ նազիրները:

Մուհամմեդ Ալին հասկանում էր, որ եգիպտացիները չունեն համապատասխան փորձ պետական ապարատը եվրոպական ձևերով կառավարելու համար, այդ պատճառով էլ նա եվրոպական զանազան երկրներից, հատկապես Ֆրանսիայից հրավիրեց մասնագետների, որոնք եգիպտացիներին սովորեցնում էին պետություն կառավարելու արվեստը:

Այսպիսով՝ Մուհամմեդ Ալին, վերցնելով և որոշ փոփոխությունների ենթարկելով ժամանակակից եվրոպական պետական կառուցվածքի մոդելը, տեղափոխեց եգիպտական իրականություն՝ պահպանելով կառավարման արևելյան շատ մեթոդներ, մանավանդ բուրգի ամենավերևի սանդղակարգում:

2. Վերափոխումներ ագրարային հարաբերությունների ոլորտում

Վերափոխումները կամ բարենորոգումներն ագրարային ոլորտում, ինչպես ցույց է տալիս պատմական փորձը, դժվարագույն խնդիրներից մեկն է: Մուհամմեդ Ալին հստակ պատկերացնում էր դրա հետ կապված դժվարությունները, անգամ վտանգները, քանի որ դրանք շոշափում էին Եգիպտոսի ամենալայն սոցիալական խավերի՝ հողագործ ֆելլահների, քոչվոր բեդվինների, ցեղապետ–շեյխերի, մուլթազիմների և մամլուք հողատերերի շահերը: Չնայած դրան՝ Մուհամմեդ Ալին չէր կարող ընկրկել դրա առջև, որը կնշանակեր խաչ քաշել Եգիպտոսը տնտեսապես զարգացած և ուժեղ պետության վերածելու իր քաղաքականության վրա:

Ագրարային ոլորտում բարենորոգումները նա իրագործեց աստիճանաբար՝ 1808–1815 թթ.: Նա առաջին հարվածը հասցրեց մուլթազիմներին (կապալով կամ վարձակալությամբ հարկահավաքներ, որոնց գործունեությունն անվերահսկելի էր և կամայական)՝ պատժելով բոլոր նրանց, ովքեր խուսափում էին հարկեր վճարելուց: Միաժամանակ նա կիսով չափ կրճատեց ֆելլահներից գանձվող հարկերը՝ հօգուտ մուլթազիմների: 1812 թ. կուսակալը կատարեց երկրորդ քայլը, որը ցնցեց իր

համարձակությամբ: Մամլուքներն իրենց ձեռքում էին կենտրոնացրել հսկայական կալվածքներ: Մուհամմեդ Ալին մեկ հարվածով բռնագրավեց նրանց պատկանող և նրանց տնօրինության տակ գտնվող բոլոր կալվածքները, որից հետո նրանք այլևս չկարողացան ուշքի գալ: Դրանից հետո՝ 1814 թ., Մուհամմեդ Ալին ընդհանրապես վերացրեց իլթիզամի համակարգը: Իսկ ինչպե՞ս դասավորվեց ֆելլահների ճակատագիրը:

Նրանք ազատվեցին մուլթազիմներից կախվածությունից, բայց շարունակում էին աշխատել նույն հողակտորի վրա, որն արդեն դարձել էր պետական սեփականություն, և վճարել հարկեր, որոնք գնում էր պետական գանձարան: Այնուհետև Մուհամմեդ Ալին համայնական հողերը բաժանեց ֆելլահներին և բեդվիններին: Գյուղացու վիճակը որոշ չափով լավացավ: Բայց դա չէր նշանակում, թե Եգիպտոսում վերացվեցին ավատատիրական հարաբերությունները: Պետությունը նոր պայմաններում հանդես էր գալիս հավաքական ավատատիրոջ դերում: 1809–1815 թթ. փոփոխություններ տեղի ունեցան նաև վակուֆային հողապատկանելության հարցում: Նա բռնագրավեց վակուֆային հողերը, որոնք մուսուլմանական հոգևորականության տնօրինության տակ էին և դրանք դարձրեց պետականապատկան: Դա առաջ բերեց հոգևորականության որոշակի դժգոհությունը, բայց կուսակալը խստորեն պատժեց նրանց: Նա շատ դաժան վարվեց նաև իր դեմ ըմբոստացած մամլուքների հետ: Այդ բոլորի հետևանքով Մուհամմեդ Ալիին հաջողվեց վերացնել իրեն թշնամի սոցիալական խավի գոյությունը և 1820–1830–ականներին ձեռնամուխ եղավ իր սեփական սոցիալական հենարանի ստեղծմանը: Ազատված հողատարածքները նա բաժանեց իր ազգականներին, մերձավորներին, որոնք գրավում էին բարձր պաշտոններ, և զինվորական սպայական կազմի վերնախավին:

Այսպիսով՝ Մուհամմեդ Ալին ագրարային ոլորտում իրականացրած բարեփոխումների շնորհիվ կարողացավ վերացնել իլթիզամի համակարգը և ավատատիրության՝ իր դարն ապրած եղանակները, իրեն թշնամի մուլթազիմների և մամլուքների դասը և իր համար ստեղծել նոր ու հուսալի սոցիալական հենարան:

Ինչ վերաբերում է գյուղացիներին, ապա նրանք, ազատվելով մամլուքներից և մուլթազիմներից, այդուհանդերձ, չդարձան ազատներ, թեև նրանց վիճակում սկզբնական շրջանում որոշ դրական փոփոխություններ տեղի ունեցան: Սակայն նրանց վրա դրվեցին ծանր պարտականություններ, որի հետևանքով լինում էին գյուղացիական ընդվզումներ, անգամ ֆելլահներից շատերը լքում էին իրենց հողակտորները և փորձում փախչել Եգիպտոսից: Մուհամմեդ Ալին չէր հանդուրժում նման բաներ և խստորեն պատժում էր անհնազանդ գյուղացիներին:

3. Բարեփոխումներ զինվորական բնագավառում

Ռազմական բարեփոխումները թելադրված էին Եգիպտոսը հզոր և անկախ պետության վերածելու անհրաժեշտությամբ, որը Մուհամմեդ Ալիի գլխավոր նպատակներից մեկն էր: Այդ ուղղությամբ առաջին քայլը կառավարության կազմում

ռազմական նախարարության ստեղծումն էր, որի գլխավոր խնդիրն էր եգիպտական ռազմական ուժերի կազմավորումը և զարգացումը: Այդ գործընթացի համար բարենպաստ պայմաններ ստեղծվեցին մամլուքներին և նրանց զինված ուժերը ոչնչացնելուց, կառավարման համակարգում և ազգարային հարաբերություններում համապատասխան բարեփոխումներ իրականացնելուց հետո: Մշակվեց համապատասխան հայեցակարգ, որի հիմքում դրվեց եգիպտական ազգային բանակ ստեղծելու գաղափարը: Մինչ այդ եգիպտացիներին բանակ չէին վերցնում՝ գտնելով, որ նրանցից մարտունակ բանակ չի ստացվի: Դա իր դարաշրջանի և Եգիպտոսում տիրող ավանդույթների տեսակետից համարձակ քայլ էր, որին դիմեց կուսակալը, և նա չսխալվեց: Եգիպտացիներից Մուհամմեդ Ալին կարողացավ ստեղծել մարտունակ բանակ, որը հաղթական պատերազմներ մղեց անգամ Եգիպտոսի սահմաններից դուրս:

Բանակ ստեղծելիս նա դիմեց օտարերկրյա, հիմնականում ֆրանսիական զինվորական մասնագետների օգնությանը, որոնց մեջ աչքի էր ընկնում ֆրանսիական բանակի գնդապետ Սևը, որը, իսլամ ընդունելով, վերցրեց Սուլեյման անունը:

Եգիպտական բանակն ունեցավ իր կանոնադրությունը, որը փաստորեն ֆրանսիական բանակի կանոնադրությունն էր: Մուհամմեդ Ալին այն ֆրանսերենից թարգմանել տվեց արաբերեն և նույնությամբ օգտագործեց իր բանակի համար:

Եգիպտական բանակը վերակառուցումից և արդիականացումից հետո կազմված էր հետևյալ զորատեսակներից՝ հետևակից, որը բանակի հիմքն էր, հեծելազորից և հրետանային զորամիավորումից: Հետագայում Մուհամմեդ Ալին ձեռնամուխ եղավ սեփական ռազմական նավատորմի ստեղծմանը, և եգիպտական բանակը համալրվեց ևս մեկ զորատեսակով՝ ռազմածովային ուժերով: Եգիպտական բանակի թվաքանակը մոտ 200 հազար մարդ էր: Դրան պետք է գումարել նաև 40 հազար ոչ կանոնավոր զորաբանակը, որն օգտագործվում էր ներքին կարիքների համար:

Մուհամմեդ Ալին օտարերկրյա զինվորական մասնագետների օգնությամբ կարողացավ ստեղծել ազգային սպայական–հրամանատարական կազմ: Այդ նպատակով նա Եգիպտոսում բացեց ռազմական ուսումնարաններ՝ հետևակային, հեծելազորային և հրետանային: Հաջորդ քայլը եղավ եգիպտական ռազմական ուժերի Գլխավոր շտաբի ակադեմիայի ստեղծումը, որը պատրաստում էր բարձրաստիճան սպաներ: Եգիպտոսի համար ռազմական մասնագետներ և հրամանատարներ պատրաստվում էին նաև եվրոպական ռազմական ուսումնական հաստատություններում:

Զինվորական բարեփոխումների շնորհիվ Եգիպտոսը կարողացավ ունենալ մեծ և արդիական բանակ, որն իր հերթին խթանեց երկրի արդյունաբերության զարգացումը: Մուհամմեդ Ալին զարկ տվեց ազգային ռազմական արդյունաբերության ստեղծմանը: Կահիրեում, Ալեքսանդրիայում, Ռոզետտայում, Բուլակում, Մարսուդում և այլ վայրերում կառուցվեցին մետաղաձուլարաններ, դարբնոցներ, փականագործական արհեստանոցներ, զենքի, վառոդի, թուջի գործարաններ, նավաշինա-

բաններ և այլն: Բանակի կարիքները համազգեստի հարցում բավարարելու նպատակով կառուցվեցին մահուդի, բամբակե և վուշե գործվածքների, ֆեսի արտադրության ֆաբրիկաներ: Զգալի զարգացում ապրեց սննդի արտադրությունը, մասնավորապես շաքարի, բուսական յուղի և այլն: Կառուցվեցին նաև կաշվի, ապակու և թղթի գործարաններ, արտադրության մեջ սկսվեց օգտագործվել անգամ շոգեուժը:

Արդյունաբերական գործարանները և ֆաբրիկաները պատկանում էին պետությանը: Տնտեսության մեջ 1816–1820 թթ. հաստատվեցին պետական մենաշնորհիներ, որոնք պետական պաշտոնյաներից կազմված վերահսկիչ և կարգադրիչ մարմիններ էին: Նրանք վերահսկում էին ամբողջ արտադրությունը, տնտեսական կյանքը քաղաքում և գյուղում: Նրանք ոչ միայն կարգավորում էին արտադրությունը, այլև նրանց էր վերապահված գյուղական, արհեստավորական և ֆաբրիկագործարանային արտադրանքի գնումը և վաճառքը, արտադրանքի չափերի, տեսակների և գների սահմանումը: Մենաշնորհներ կային նաև ներքին և արտաքին առևտրի ոլորտներում:

Մուհամմեդ Ալիի զինվորական բարեփոխումների շնորհիվ Եգիպտոսը դարձավ մերձավորարևելյան տարածաշրջանի ամենահզոր պետությունը և մի շարք հարցերում անգամ գերազանցում էր Օսմանյան կայսրության միջուկը հանդիսացող բուն Թուրքիային:

4. Բարեփոխումներ կրթության մարզում

Մուհամմեդ Ալիի բարեփոխումներում պակասում էր մի օղակ, առանց որի հնարավոր չէր հաջողության հասնել կառավարման, ագրարային և ռազմական ոլորտներում նախատեսվող վերափոխումների բնագավառում: Խոսքը կրթության մասին է: Հավատարիմ իր սկզբունքներին՝ նախքան բարեփոխումներ սկսելը Կուսակալը մշակեց համապատասխան հայեցակարգ, որի հիմքում դրվեց դպրոցական կրթությունը, դրա մակարդակի բարձրացումը և ոլորտի ընդլայնումը՝ այն հաշվով, որ հնարավորինս շատ երեխաներ ընդգրկվեն դպրոցական կրթության մեջ, և Եգիպտոսում ավելանա կրթված մարդկանց և մասնագետների թվաքանակը: Նա կարծում էր, որ միայն կրթված եգիպտացին կկարողանա ապահովել Եգիպտոսի առաջընթացը բոլոր մարզերում:

Եգիպտոսում ստեղծվեցին ընդհանուր կրթական և մասնագիտական դպրոցներ, և Եգիպտոսի պատմության մեջ առաջին անգամ բացվեցին աշխարհիկ դպրոցներ: Մինչև 20 տարին լրանալը եգիպտացի պատանին կարող էր ստանալ տարրական, միջնակարգ և մասնագիտական կրթություն: Իհարկե, պահպանվեցին նաև զուտ կրոնական բնույթի դպրոցները: Մուհամմեդ Ալին կրթության դռները բացեց նաև մեծահասակների առջև, որոնք, կարելի է ասել, գլխովին անգրագետ էին: Նրանց համար հնարավորություն ստեղծվեց գեթ ինչ–որ չափով հաղորդակից լինելու գրաճանաչությանը: Եվ դրա օրինակը տվեց ինքը՝ Մուհամմեդ Ալին: Նա 45 տարեկանում կարդալ և գրել սովորեց:

Ստեղծվեցին և հրատարակվեցին համապատասխան դասագրքեր, եվրոպական լեզուներից նույնպես արաբերեն թարգմանվեցին և հրատարակվեցին դասագրքեր:

Ինչպես նշվեց, հիմնվեցին նաև միջնակարգ–մասնագիտական՝ ռազմական, ինժեներական, բժշկական, գյուղատնտեսական, տեխնիկական, լեզվաբանական, երաժշտական ուսումնարաններ: Կրթությունը ձրի էր, պետությունն անգամ աշակերտներին և ուսանողներին թոշակ էր վճարում, իսկ գյուղական վայրերից Կահիրե և այլ քաղաքներ եկածներն ապահովվում էին ձրի կացարաններով:

Նոր դպրոցներ բացվեցին ոչ միայն Կահիրեում, Ալեքսանդրիայում և այլ քաղաքներում, այլև գյուղական վայրերում, կարելի է ասել՝ ամբողջ Եգիպտոսում: Այս բնագավառում բարեփոխումներ իրականացնելու գործը կազմակերպելու համար ստեղծվեց կրթության նախարարություն:

1822 թ. Մուհամմեդ Ալիի կարգադրությամբ ստեղծվեց Եգիպտոսում առաջին տպարանը, և դրանով հիմք դրվեց հրատարակչական գործին: Հրատարակվում էին դասագրքեր, ուսումնական ծրագրեր, կանոնադրություններ և այլ պաշտոնական փաստաթղթեր: Եվրոպական լեզուներից թարգմանաբար հրատարակվում էր նաև գեղարվեստական գրականություն: Տպարանների հիմնումը նպաստեց Եգիպտոսում ազգային մամուլի հանդես գալուն: Կուսակալի հիմնած առաջին արաբական տպարանում հրատարակվեց առաջին եգիպտական «Ալ–Վակաի ալ–մսրիյաե» («Եգիպտական իրադարձություններ») արաբական թերթը:

Մուհամմեդ Ալիի բարեփոխումները համապատասխանում էին ժամանակի ոգուն ու պահանջներին և միտված էին ապահովելու Եգիպտոսի քաղաքական, տնտեսական և սոցիալական խնդիրների լուծումը:

5. ՄՈՒՀԱՄՄԵԴ ԱԼԻԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԵԳԻՊՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Մուհամմեդ Ալիի բարեփոխումները բարերար ազդեցություն ունեցան Եգիպտոսում բնակվող հայերի, հույների, հրեաների և ոչ արաբ այլ ժողովուրդների վրա, որոնց նկատմամբ կուսակալի քաղաքականությունը խարսխված էր հանդուրժողականության վրա և միտված էր նրանց մասնագիտական կարողությունները ծառայեցնելու Եգիպտոսի առաջընթացին: Կուսակալի նման քաղաքականությունը լայն ասպարեզ բացեց եգիպտահայության համար:

Հայերը բնակվում էին հիմնականում Կահիրեում, Ալեքսանդրիայում, ինչպես նաև Ռոզետտայում, Դամյաթում, Տանտայում, Զակազիկում, Ասյութում և այլ քաղաքներում: Զգալի թվով հայեր ներգրավվեցին կառավարման ապարատում: Նրանք լավ պատրաստված մարդիկ էին, որոնց մի մասն ուներ եվրոպական կրթություն: Մուհամմեդ Ալին մեծ վստահությամբ էր վերաբերվում նրանց՝ հաշվի առնելով հայերի նվիրվածությունը բարեփոխումների գաղափարին և նրանց գործնական բարձր հատկանիշները: Նրանք նորաստեղծ կառավարությունում և նախարարություններում աշխատում էին որպես խորհրդատուներ, քարտուղարներ, թարգմանիչներ և այլն: Նրանցից մի քանիսը հասան ամենաբարձր պաշտոնների,

ինչպես Պողոս Յուսուֆյանը, որը Մուհամմեդ Ալիի ամենամերձավորներից էր: Դառնալով կուսակալի խորհրդականը՝ շուտով նա գլխավորեց Եգիպտոսի Եվրոպական դեպարտամենտը, որը փաստորեն արտաքին գործերի նախարարության գործառույթներ էր իրականացնում: Նա համարվում էր Մուհամմեդ Ալիի աջ ձեռքը, և վերջինս նախքան վերջանական որոշումներ ընդունելը խորհրդակցում էր Յուսուֆյանի հետ՝ մշտապես հաշվի առնելով նրա կարծիքը: 1844 թ.՝ Յուսուֆյանի մահից հետո, Մուհամմեդ Ալին Եգիպտոսի արտաքին գործերի նախարար է նշանակում Արթին Չրաքյանին, որը Ֆրանսիա սովորելու ուղարկած իր սաներից էր: Այդ և այլ նախարարություններում հայերը զբաղեցնում էին վարչությունների և բաժանմունքների մեծ մասի ղեկավարի պաշտոնները և շատ հաճախ Եգիպտոսը ներկայացնում բանակցությունների ժամանակ: 1841 թ. Լոնդոնում գումարված կոնֆերանսում, որը բախտորոշ եղավ Եգիպտոսի և նրա կուսակալի համար, եգիպտական պաշտոնական պատվիրակությունը գլխավորում էր Արթին Չրաքյանը: Ֆրանսիացի հեղինակ Պ. Համոնը 1843 թ. լույս տեսած իր մի աշխատության մեջ վկայում է, որ «Հայերը մուտք են գործել ամեն տեղ: Նրանցից շատերն ամենաբարձր պաշտոններն են զբաղեցնում փոխարքայի կաբինետում և դիվաններում: Հայկական համայնքն ամենազոր է փոխարքայի արքունիքում»:

Հայերը կարևոր դիրքեր ունեին նաև տնտեսական ոլորտում, արհեստագործության, մասնավորապես ոսկերչության, դերձակության, կոշկակարության, մուշտակագործության բնագավառներում: Նրանք ուժեղ դիրքեր ունեին լումայափոխության ոլորտում, և բնավ պատահական չէ, որ հայերը 1837 թ. Կահիրեում հիմնեցին Եգիպտոսում առաջին բանկը և առատաձեռնորեն ֆինանսավորում էին Մուհամմեդ Ալիի գործունեությունը: Նշանակալի էր նաև հայ առևտրական դասի ներդրումը, մանավանդ երբ սրվեց մրցապայքարը արտասահմանյան, գլխավորապես անգլիական առևտրական կապիտալի հետ, որը փորձում էր նվաճել եգիպտական շուկան: Եվ այդ պայքարում հայ վաճառականությունը դարձավ Մուհամմեդ Ալիի հենարաններից մեկը:

Զգալի էր նաև հայերի ներդրումը լուսավորության բնագավառում: Մուհամմեդ Ալին այլ եգիպտացի երիտասարդների հետ մեծ թվով նաև հայ երիտասարդների ուղարկեց եվրոպական երկրներ ուսանելու, որոնք, Եգիպտոս վերադառնալով, լծվեցին կրթական–լուսավորչական գործին: Բացվեցին նոր հայկական դպրոցներ. 1828 թ.՝ Եղիազարյան դպրատունը Կահիրեում, 1840–ական թվականներին՝ Արամյան վարժարանը Ալեքսանդրիայում և այլն: Հայ ուսուցիչների ջանքերով Կահիրեում հիմնվեցին երկրաչափական, վարչական, թարգմանությունների և այլ ուսումնարաններ: Երկար ժամանակ հայերն են ղեկավարել Կահիրեի արվեստի, արհեստի և մետաղագործական, Նաբուդայի և Շուբրայի գյուղատնտեսական ուսումնարանները, կազմել դրանց ուսումնական ծրագրերը, դասավանդվող առարկաների ցանկը և այլն: Ընդհանրապես, կրթական գործի գլուխ կանգնած հայ մասնագետների ջանքերով Եգիպտոսում հիմնվել է մոտ 70 դպրոց, որտեղ սովորում էին 5 հազար աշակերտ:

Հարկ է նշել այն լումայի մասին, որ հայերն ունեցան թարգմանական գրականության սկզբնավորման և զարգացման գործում, որի բեռն իրենց վրա վերցրին եվրոպական կրթություն ստացած հայերը: Թարգմանվում էին ինչպես գեղարվեստական, այնպես էր քաղաքական գրականություն, որի հանդեպ մեծ հետաքրքրություն էր դրսևորում Մուհամմեդ Ալին:

Վերոնշյալը իրավունք է տալիս ասելու, որ նշանակալի է եղել եգիպտահայության ներդրումը Մուհամմեդ Ալիի բարեփոխումների քաղաքականության մեջ:

6. ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿ

Մուհամմեդ Ալին, իրագործելով համակարգային բարեփոխումներ և Եգիպտոսը վերածելով իր ժամանակի հզոր պետություններից մեկին Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում, ձեռնամուխ եղավ իր կարևոր քաղաքական մեկ այլ ծրագրի իրականացմանը՝ դուրս գալ Եգիպտոսի սահմաններից, նվաճել նոր երկրներ, իր տիրապետությունը հաստատել արաբական մյուս տարածքների վրա և ստեղծել մի կայսրություն, որը մասնագիտական գրականության մեջ կոչվում է արաբա–ասիական կայսրություն: Մուհամմեդ Ալին որոշեց իր տիրույթներն ընդարձակել նախ և առաջ հարևան արաբական երկրների հաշվին: Բայց այստեղ կարող է տարակուսանք առաջանալ այն կապակցությամբ, որ արաբական այդ երկրները նույնպես իրավաբանորեն Օսմանյան կայսրության մաս էին կազմում, ինչպես Եգիպտոսը: Այդ նկատի ունենալով՝ Մուհամմեդ Ալին գործում էր շատ խորամանկ:

Նա իր գործողությունները, այդ թվում՝ ռազմական, արաբական երկրների նկատմամբ ներկայացնում էր որպես իր սյուզերենի՝ թուրքական սուլթանի հանձնարարությունների կատարում: Եվ, իրոք, արդեն թուլացած թուրքական սուլթանը շատ հաճախ ստիպված էր լինում դիմել իր այս կամ այն հզոր վասալին՝ «հանձնարարելով» նրան «խաղաղեցնել» սուլթանին անհնազանդ երկիրը: Օրեցօր հզորացող Եգիպտոսի կուսակալը երբեմն ինքն էր նման նախաձեռնություն դրսևորում՝ վստահ լինելով, որ թուլացած օսմանյան սուլթանը այլևս համապատասխան ուժ և լծակներ չունի իրեն հետ պահելու նվաճողական քաղաքականությունից օսմանյան կայսրության շրջանակներում և պատժել դրա համար:

Առաջինը եգիպտական հարվածի տակ ընկավ վահաբական Արաբիան, որը վաղուց հարձակումներ էր գործում Օսմանյան կայսրության կազմի մեջ մտնող Սիրիայի և Իրաքի վրա: Վահաբիականությունը դեռևս XVIII դարի սկզբներին ձևավորված իսլամական ուղղություն էր, որը հանդես էր գալիս հանուն մաքուր և նախաստեղծ իսլամի, դեմ էր իսլամական օրենքների խեղաթյուրմանը և նորամուծություններին և ստացել էր «իսլամի պուրիտաններ» անվանումը: Վահաբիները հակառակ էին բուն Թուրքիայում տիրապետող սուննի իսլամականությանը, թուրքական սուլթանին համարում էին կեղծ խալիֆա և կոչ անում բոլոր արաբներին տապալելու օսմանյան տիրապետությունը: Դրա համար օսմանյան սուլթանը փորձում էր պատժել վահաբականներին, բայց դա չէր հաջողվում նրան: Մուհամմեդ

Ալին, իրեն ձևացնելով սուլթանի հավատարիմ վասալ, հանձն առավ կատարելու իր սյուզերենի՝ փադիշահի հրամանը: Եգիպտոսի կուսակալն ինքը նույնպես շահագրգռված էր սուլթանի հանձնարարությունը կատարելու մեջ, քանի որ վահաբիները նրան նույնպես անհանգստացնում էին իրենց կրոնական հայացքներով և Եգիպտոսի հարևանությամբ միավորված և ուժեղ պետության հանդես գալու հեռանկարով, որպիսին կարող էր դառնալ Արաբիան վահաբիների իշխանության ներքո: Ինչպես նշել ենք, Մուհամմեդ Ալին ինքն էր հավակնում իր տիրապետության ներքո միավորելու արաբական երկրները և ստեղծելու արաբական կայսրություն, որի ճանապարհին առաջին քայլը լինելու էր Արաբիայի վրա Եգիպտոսի տիրապետության հաստատումը:

1811 թ. սուլթան Մահմուդ Բ–ն հանձնարարեց Մուհամմեդ Ալիին վերջ տալ Իրաքի և Սիրիայի դեմ վահաբիների ասպատակություններին և հարձակումներին: Եգիպտական 10–հազարանոց զորաբանակը Մուհամմեդ Ալիի կրտսեր որդու՝ Թուսունի հրամանատարությամբ 1811 թ. ներխուժեց Արաբիա և հոկտեմբերին տարավ առաջին կարևոր հաղթանակը: Նրանք գրավեցին Կարմիր ծովի ափին Յանբո նավահանգիստը, որը դարձավ եգիպտացիների ռազմավարական հենակետը: Հարկ է նշել, որ եգիպտական հարձակումը ծավալվում էր շատ դանդաղ: Նրանք ստիպված էին գործել բնակլիմայական բարդ պայմաններում, բացի այդ՝ տեղական բնակչությունը թշնամական վերաբերմունք ուներ եգիպտական զինվորների նկատմամբ, որոնք եգիպտացիներին ընկալում էին զավթիչներ: Եվ այս անբարենպաստ և բարդ իրավիճակը պահպանվեց ամբողջ պատերազմի ընթացքում, որի ժամանակ անգամ երբեմն եգիպտական զորքերն անհաջողության էին մատնվում:

Եգիպտական զորքերը դուրս եկան Յանբոյից և սկսեցին Հիջազի գրավումը: 1812 թ. նոյեմբերին նրանք գրավեցին Մադինան, իսկ 1813 թ. մտան Մեքքա, Տաիֆ և Ջիդդա, և ամբողջ Հիջազն անցավ Եգիպտոսի տիրապետության տակ: Եգիպտական բանակը հաղթանակներ տարավ նաև հարավային Արաբիայում՝ Ասիրում, ապա՝ հյուսիսում: 1816 թ. Արաբիա մտավ եգիպտական նոր բանակ, որը գլխավորում էր Մուհամմեդ Ալիի ավագ որդին՝ Իբրահիմը, և սկսվեց պատերազմի նոր փուլը: Իբրահիմը տաղանդավոր անձնավորություն էր, աչքի էր ընկնում կազմակերպչական մեծ ընդունակություններով և իր նպատակին հասնելու վճռականությամբ: Նա 1816–1818 թթ. անողոք դաժանությամբ ճնշեց վահաբիական ապստամբական կենտրոնները, հողին հավասարեցրեց մի շարք քաղաքներ և գյուղեր, գրավեց Նաջդը, Կատիֆը և Ասիրը: Արաբիայի էմիր Աբդալահը անձնատուր եղավ՝ հուսալով այդ կերպ փրկել իր կյանքը: Նա շղթայակապ ուղարկվեց Կահիրե, որտեղ Մուհամմեդ Ալիի հրամանով գլխատվեց: 1818 թ. Իբրահիմն ավարտեց Արաբիայի նվաճումը և կցումը Եգիպտոսին, որը եղավ առաջին լուրջ քայլն արաբական կայսրություն ստեղծելու Մուհամմեդ Ալիի քաղաքականության իրագործման ճանապարհին:

Մուհամմեդ Ալին Արաբիայում մտցրեց կառավարման նոր համակարգ: Արաբիան վերածվեց եգիպտական մեկ ամբողջական նահանգի, որի գլուխ կանգնած էր Մուհամմեդ Ալիի նշանակած փաշան: Սակայն պահպանվեց Հիջազի շերիֆների

ինստիտուտը՝ որպես Մեքքայի կառավարիչներ, բայց Մուհամմեդ Ալին իրավունք ստացավ ըստ իր հայեցողության նշանակել շերիֆների նույն Հաշիմյաններից: Նաջդում մտցվեց եգիպտական փաշայի պաշտոն, որը նշանակվում էր Կահիրեի կողմից և համարվում Մուհամմեդ Ալիի փոխանորդը: Եմենում պահպանվեց նրա ինքնավարությունը՝ զեյդական իմամների գլխավորությամբ:

Արաբիան եգիպտական տիրապետության տակ մնաց երեսուն տարի՝ մինչև 1840 թ.: Բայց դրանք եղան նաև վահաբիների անընդմեջ ապստամբությունների և ընդվզումների տարիներ, ինչը վկայում էր այն մասին, որ նրանք չէին հաշտվել նոր ձևավորված քաղաքական իրողությունների հետ և մոլեռանդորեն նվիրված էին իրենց գաղափարներին և պատրաստ էին իրենց կյանքը զոհաբերելու դրա համար: Հողն այրվում էր եգիպտացիների ոտքի տակ: Եվ 1840 թ. Մուհամմեդ Ալին ստիպված էր հեռանալ Արաբիայից: Միայն թե դա տեղի ունեցավ ոչ թե ռազմական գործողությունների արդյունքում կամ տանուլ տված ճակատամարտի պատճառով, այլ միջազգային շատ բարդ հարաբերությունների հետևանքով, որոնք շատ սուր բնույթ ունեցան XIX դարի 30–ական թվականների վերջերին: Դրանում մեծ էր Մուհամմեդ Ալիի գլխավոր մրցակից և վտանգավոր հակառակորդ Անգլիայի խաղացած դերը: Դրանից հետո՝ XIX դարի երկրորդ կեսին, պահպանվեց Արաբիայի քաղաքական խճանկարը: Այն առանձին պետական կազմավորումների կոնգլոմերատ էր:

Արաբիայի նվաճումից հետո Մուհամմեդ Ալին նախապատրաստվեց գրավելու Արևելյան Սուդանը: Արաբիան գրավելու ընթացքում Եգիպտոսն ունեցավ մարդկային, նյութական և ֆինանսական մեծ կորուստներ, և անհրաժեշտ էր դրանք լրացնելու նոր աղբյուրներ գտնել: Այդ առումով ամենահարմար թեկնածուն Սուդանն էր, որը հռչակված էր իր հարստություններով, նրա ոսկու պաշարների մասին առասպելներ էին պատմում, և ստրուկների մատակարարման հայտնի շուկա էր: Բացի այդ՝ զգալի թվով մամլուքներ, խուսափելով Մուհամմեդ Ալիի հալածանքներից, ապաստան էին գտել Սուդանում: Նա դրանց համարում էր իր թշնամիները և հույս ուներ Սուդանը գրավելով՝ լուծել այնտեղ գտնվող մամլուքների հարցը: Ուրեմն, Սուդանի գրավումն ուներ քաղաքական և տնտեսական դրդապատճառներ:

1820 թ. աշնանը եգիպտական քսանհազարանոց բանակը Մուհամմեդ Ալիի երրորդ որդու՝ Իսմայիլ փաշայի գլխավորությամբ ներխուժեց Սուդան: Այդ երկրամասի նվաճումն առանձնակի դժվարություն չներկայացրեց, քանի որ Սուդանը մեկ միասնական պետություն չէր, կային առանձին պետական միավորումներ, որոնք միմյանց հետ որևէ կապ չունեին: Կային տարբեր ցեղային և էթնիկական խմբեր, որոնք Սուդանի ոչ թե միավորման և համախմբման, այլ բաժանման գործոն էին: Եգիպտական բանակը քայլ առ քայլ գրավում էր Արևելյան Սուդանի շրջանները՝ Հյուսիսային Նուբիան, Դոնղոլան, Խարտումը, Ֆազողլուն, Սեննարը և այլն: 1822 թ. ավարտվեց Արևելյան Սուդանի գրավումը, և այդ երկրամասն անցավ Եգիպտոսի տիրապետության տակ: Մուհամմեդ Ալին 1838 թ. եկավ Սուդան՝ որոշելու դրա կառավարման խնդիրները: Նա Արևելյան Սուդանում նշանակեց կառա-

վարիչ, որը նրա տեղակալն էր: Նվաճված տարածքները բաժանվեցին յոթ շրջանների, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր կառավարիչը:

Արևելյան Սուդանի գրավումով ավելի ամրապնդվեցին Մուհամմեդ Ալիի դիրքերը և կատարվեց ևս մեկ քայլ արաբական երկրները Եգիպտոսի տիրապետության տակ միավորելու և արաբական կայսրություն ստեղծելու ուղղությամբ:

7. ԵԳԻՊՏԱԿԱՆ ՁՈՐՔԵՐԻ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ՊԱՂԵՍՏԻՆ ԵՎ ՍԻՐԻԱ: ԵԳԻՊՏԱ–ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ (1831–1833 ԹԹ.) ԵՎ ԵՐԿՐՈՐԴ (1839–1840 ԹԹ.) ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

1821 թ. սկսվեց հունական ապստամբությունը անկախության համար: Սուլթան Մահմուդ Բ–ն անկարող եղավ ճնշել հույների ազգային–ազատագրական պայքարը և հարկադրված առաջարկեց Մուհամմեդ Ալիին իր զորքերն ուղարկել հունական ապստամբությունը ճնշելու՝ դրա դիմաց եգիպտական կուսակալին խոստանալով Մորեայի և Սիրիայի կառավարումը: 1824 թ. եգիպտական զորքերը ներխուժեցին Հունաստան և տարան մի շարք հաղթանակներ: Նրանք գրավեցին Մորեան, իսկ 1827 թ. հունիսի 5–ին մտան Աթենք: Իրադարձություններին միջամտեցին Ռուսաստանը, Անգլիան և Ֆրանսիան, որոնց պահանջով Մահմուդ Բ–ն հարկադրված էր դադարեցնել ռազմական գործողությունները և ճանաչել Հունաստանի անկախությունը, իսկ Մուհամմեդ Ալին, որը փայլուն կերպով ցուցադրել էր իր հզորությունը, ստիպված էր դատարկաձեռն հեռանալ Հունաստանից:

Մահմուդ Բ–ն, հակառակ իր խոստմանը, չէր ցանկանում զիջել Սիրիան Մուհամմեդ Ալիին: Վերջինս, ելնելով այն իրողությունից, որ այդ պահին Եգիպտոսը ռազմական և տնտեսական առումով ավելի ուժեղ էր, քան Թուրքիան, 1831 թ. հոկտեմբերին հրաման արձակեց իր զորքերին մտնել Պաղեստին և Սիրիա: Եգիպտական զորքերը, Իբրահիմ փաշայի հրամանատարությամբ հոկտեմբեր ամսվա ընթացքում չհանդիպելով լուրջ դիմադրության, գրավեցին Ղազան, Հայֆան և Յաֆան, ապա պաշարումից հետո՝ նաև Ակկա քաղաք–ամրոցը: Սուլթան Մահմուդ II–ը հրապարակեց ֆերման, որով Մուհամմեդ Ալիին հայտարարեց խռովարար և նրան ազատեց զբաղեցրած բոլոր պաշտոններից: Բայց Մուհամմեդ Ալին դա ընդունեց որպես պատերազմի հայտարարություն: Եգիպտական զորքերը ներխուժեցին Սիրիայի տարածք, և Հոմսի մոտ 1832 թ. հունիսի 8–ին տեղի ունեցավ եգիպտա–թուրքական պատերազմի առաջին ճակատամարտը, որն ավարտվեց թուրքական զորքերի խայտառակ պարտությամբ: Իբրահիմը գրավեց Հոմսը և սրընթաց շարժվելով հյուսիս՝ տիրացավ նաև Համա և Հալեպ քաղաքներին: 1832 թ. հուլիսի 29–ին Բեյլանի լեռնանցքի մոտ տեղի ունեցավ երկրորդ ճակատամարտը, որը նույնպես ավարտվեց եգիպտական զորքերի փայլուն հաղթանակով: Դրանից հետո Փոքր Ասիայի դարպասները բաց էին նրանց առջև, և պատմության մեջ առաջին անգամ նրանք մտան Փոքր Ասիա: Իբրահիմ փաշան գրավեց Ադանան և իր 30–հազարանոց զորքով մոտեցավ Կոնիային: Թուրքական հրամանատարությունը որոշեց այստեղ տալ հերթական գլխավոր ճակատամարտը և եգիպտացիներին դուրս

շպրտել Փոքր Ասիայից: Կոնիայի ճակատամարտը սկսվեց 1832 թ. դեկտեմբերի 21–ին, որտեղ Իբրահիմը տարավ իր հերթական փայլուն հաղթանակը՝ ջախջախելով օսմանյան 60–հազարանոց բանակը:

Իբրահիմի առջև բացվեց Կ. Պոլիս տանող ճանապարհը: Սուլթանն ըստ էության այլևս զորք չուներ, որ կարողանար կասեցնել եգիպտական զորքի հետագա առաջխաղացումը: Մուհամմեդ Ալիի տաղանդավոր որդին իր զորաբանակով մոտեցավ խուճապի մատնված մայրաքաղաքին՝ ճամբարելով Քյութահիայում:

Բայց միջամտեցին Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը: Հատկապես ակտիվ էր Ռուսաստանը, որը չէր ցանկանում, որ թուլացած օսմանյան Թուրքիայի փոխարեն իր հարևանությամբ հայտնվի հզոր Եգիպտոսը, որի կուսակալն ուներ քաղաքական մեծ հավակնություններ: Ելնելով այդ նկատառումներից՝ ռուսական ցար Նիկոլայ I–ը, անսալով Ռուսաստանի ոխերիմ ախոյան օսմանյան սուլթան Մահմուդ Բ–ի խնդրանքին, իր հատուկ առաքելությունն ուղարկեց Ալեքսանդրիա՝ գեներալ Մուրավյովի գլխավորությամբ, որը եգիպտական ղեկավարությանը ներկայացրեց վերջնագրի բնույթ կրող հետևյալ պահանջները՝ հրաժարվել Կոստանդնուպոլիսը գրավելուց, դադարեցնել ռազմական գործողությունները և օսմանյան սուլթանին ընդունել որպես իր սյուզերենը և ենթարկվել նրան: Եվ Մուհամմեդ Ալին հարկադրված ընդունեց ռուսական կողմի ներկայացրած պահանջները:

Այդ ընթացքում օսմանյան կայսրության փոքրասիական մի շարք մասերում բռնկվեցին ապստամբություններ: Օգտվելով այդ խառնաշփոթ վիճակից՝ Իբրահիմ փաշան 1833 թ. փետրվարի 2–ին գրավեց Քյութահիան, որին հետևելու էր Կոստանդնուպոլսի գրավումը: Սարսափահար սուլթանը հաջորդ օրը՝ փետրվարի 3–ին, ռուսական ցարից խնդրեց ռազմական օգնություն: Փետրվարի 20–ին ռուսական նավատորմը հայտնվեց Բոսֆորի ասիական ափերին: Միաժամանակ 20–հազարանոց ցամաքային զորքերը Իբրահիմի բանակի առջև փակեցին Կոստանդնուպոլիս մտնելու հնարավորությունը: Կոնֆլիկտին միջամտեցին նաև Անգլիան ու Ֆրանսիան, որոնց շահերին չէր համապատասխանում ռուսական ազդեցության ուժեղացումը և վերահսկողության սահմանումը Օսմանյան կայսրության վրա: Նրանք հանդես եկան իբրև «խաղաղարարներ» և սկսեցին ճնշում գործադրել կոնֆլիկտի մեջ ներգրավված կողմերի վրա, որպեսզի հաշտություն կնքվի Մուհամմեդ Ալիի և սուլթան Մահմուդ Բ–ի միջև ու ռուսական զորքերն օր առաջ հեռանան Թուրքիայից, իսկ եգիպտական զորքերը՝ Փոքր Ասիայից: Այդ նպատակով Անգլիան և Ֆրանսիան իրենց նավատորմերն ուղարկեցին եգիպտական ջրերը: Ի հավելումն՝ նրանք ճնշում գործադրեցին սուլթան Մահմուդ Բ–ի վրա՝ ստիպելով նրան շուտափույթ հաշտվել իր կուսակալի՝ Մուհամմեդ Ալիի հետ: Ի վերջո դա նրանց հաջողվեց, և 1833 թ. մարտի 4–ին Քյութահիայում հաշտության պայմանագիր ստորագրվեց:

Ըստ այդ պայմանագրի՝ Բարձր դուռը ճանաչեց Մուհամմեդ Ալիի իրավունքները և տիրապետությունը Եգիպտոսի, Արաբիայի, Սուդանի և Կրետե կղզու նկատմամբ: Նա իր տիրապետությունը պահպանեց նաև Պաղեստինի, Սիրիայի և Կիլիկիայի վրա՝ որպես կառավարիչ: Մուհամմեդ Ալին ոչ միայն պահպանեց իր իշխա-

նությունը Եգիպտոսում, այլև ընդարձակեց իր տիրապետության սահմանները: Իսկ սուլթանին հաջողվեց պահպանել իր գահը, ստիպել Մուհամմեդ Ալիին հեռանալ Փոքր Ասիայից, պահպանել կայսրության ամբողջականությունը և վերականգնել իր սյուզերենի իրավունքները Մուհամմեդ Ալիի նկատմամբ: Նրա անմիջական տիրապետության տակ մնացին Փոքր Ասիան, Իրաքը և Բալկանների մի քանի շրջաններ:

Մուհամմեդ Ալիին չհաջողվեց լուծել Օսմանյան կայսրության վերացման և Եգիպտոսի անկախության հասնելու խնդիրները, իսկ սուլթանին չհաջողվեց ջախջախել Եգիպտոսը: Քյութահիայի հաշտության պայմանագրով Օսմանյան կայսրությունը թեև ձևականորեն պահպանեց իր ամբողջականությունը, իրականում վերածվեց երկու մասի՝ եգիպտական և թուրքական: Դրանցից ավելի ընդարձակը, կենսունակը և հզորը եգիպտական մասն էր Մուհամմեդ Ալիի գլխավորությամբ:

Չնայած ստորագրված հաշտության պայմանագրին՝ պատերազմի արդյունքներից դժգոհ էր և՛ եգիպտական, և՛ թուրքական կողմը: Սուլթանը չէր կարող հաշտվել այն մտքի հետ, որ Օսմանյան կայսրության մեծ մասը Մուհամմեդ Ալիի տիրապետության տակ էր: Հասկանալով, որ այդ տարածքները չի կարող հետ խլել խաղաղ ճանապարհով, սուլթանը տենդորեն պատրաստվում էր նոր պատերազմի: XIX դարի 30–ականների վերջերին նա արդեն ուներ 100–հազարանոց լավ զինված բանակ: Իսկ եգիպտական կուսակալը դժգոհ էր, որ իրեն չհաջողվեց լուծել Եգիպտոսի անկախության և իր իշխանության դինաստիական ժառանգականության հարցը: Սիրիան, Պաղեստինը, Արաբիան, Սուդանը և Կրետեն նրան էին հանձնված միայն կառավարելու իրավունքով, որը չէր տարածվում նրա հաջորդների՝ ժառանգների վրա: Ուստի Մուհամմեդ Ալին նույնպես չէր բացառում նոր պատերազմի հավանականությունը և նույնպես լրջորեն նախապատրաստվում էր դրան:

Շատ ակտիվ էին նաև եվրոպական պետությունները՝ Ռուսաստանը, Ֆրանսիան և Անգլիան, որոնցից յուրաքանչյուրն իր շահերն էր հետապնդում: Եգիպտա–թուրքական նոր ռազմական բախման նախապատրաստման մեջ գլխավոր դերակատարը դարձավ Անգլիան, որը չէր ցանկանում Մուհամմեդ Ալիի հետագա հզորացումը ի հաշիվ թուրքական սուլթանի և վերջինիս կախվածության պահպանումը ցարական Ռուսաստանից: Ռուսաստանը, հասկանալի է, կողմ էր ստատուս քվոյի պահպանմանը, իսկ Ֆրանսիան օժանդակում էր Մուհամմեդ Ալիին՝ ցանկանալով կանխել իր գլխավոր մրցակից Անգլիայի դիրքերի ամրապնդումը տարածաշրջանում:

Եգիպտա–թուրքական երկրորդ պատերազմը սկսվեց 1839 թ. ապրիլի 21–ին թուրքական զորքերի հարձակումով: Նրանք, անցնելով Եփրատը, մտան Սիրիա: Եգիպտական զորքերը Իբրահիմ փաշայի գլխավորությամբ պատրաստ էին և անակնկալի չեկան: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ 1839 թ. հուլիսի 24–ին Հյուսիսային Սիրիայի Նիզիբ բնակավայրի մոտ և ավարտվեց թուրքական բանակի լիակատար պարտությամբ:

Այդ ընթացքում մահացավ սուլթան Մահմուդ Բ–ն, և նրան փոխարինեց Աբդուլ Մաջիդը: Իբրահիմի առջև կրկին բաց էր Կոստանդնուպոլիս տանող ուղին, սակայն այս անգամ նա, ի տարբերություն առաջին պատերազմի, չէր մտածում Կոստանդնուպոլիսը և նոր տարածքներ գրավելու մասին, այլ բավարարվեց միայն Ուրֆայի և Մարաշի գրավումով՝ խուսափելով Ռուսաստանին միջամտելու նոր առիթ տալուց, որն ի նպաստ սուլթանի էր լինելու: Ֆրանսիան նույնպես հորդորեց Եգիպտոսի կուսակալին նման քայլի չդիմել: Այս պատերազմում Մուհամմեդ Ալիի գլխավոր նպատակն էր լուծել Եգիպտոսի անկախության և դինաստիական հարցերը: Եվ նա հույս ուներ սուլթանի հետ անմիջական բանակցությունների շնորհիվ հասնել դրան, քանի որ Թուրքիան կորցրել էր բանակը և նավատորմը և այլևս ի վիճակի չէր շարունակելու պատերազմը:

Սակայն կրկին միջամտեցին եվրոպական պետությունները՝ Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, Ավստրիան և Պրուսիան, որոնք մոտ մեկ տարի բանակցություններ էին վարում Լոնդոնում, որին թույլ չտվեցին մասնակցել ո՛չ Թուրքիային և ո՛չ էլ Եգիպտոսին: Ի վերջո 1840 թ. հուլիսի 15–ին եվրոպական վերոնշյալ պետությունները՝ մի կողմից, և Թուրքիան՝ մյուս կողմից, Լոնդոնում ստորագրեցին մի համաձայնագիր, որը օգոստոսի 19–ին ներկայացվեց Մուհամմեդ Ալիին: Համաձայնագիրը, որը վերջնագրի բնույթ ուներ, Մուհամմեդ Ալիին ժառանգության իրավունքով թողնում էր միայն Եգիպտոսը, իսկ Պաղեստինը՝ ցմահ կառավարման իրավունքով, մնացած բոլոր տարածքները նա պետք է վերադարձներ սուլթանին: Եթե Մուհամմեդ Ալին մերժեր, ապա նա կտապալվեր տերությունների միացյալ ուժերով և կզրկվեր իր բոլոր տիրույթներից, այդ թվում նաև Եգիպտոսից: Մուհամմեդ Ալին մերժեց իրեն ներկայացրած վերջնագիրը՝ հայտարարելով. «Ես պատրաստ եմ սրով պաշտպանել այն, ինչ սրով է ձեռք բերված»: Ստանալով կուսակալի պատասխանը՝ Անգլիան, Ավստրիան և Թուրքիան ռազմական գործողություններ սկսեցին Եգիպտոսի դեմ: Այս անգամ ճակատագիրը մեջքով էր թեքվել Մուհամմեդ Ալիին, և նրա զորքերը մի շարք պարտություններ կրեցին, որի արդյունքում նա կորցրեց վերահսկողությունը Սիրիայի, Պաղեստինի և Լիբանանի վրա: Նա ստիպված էր ընդունել իրեն ներկայացված նոր վերջնագիրը, ըստ որի՝ պարտավորվում էր իր բոլոր զորքերը դուրս բերել Պաղեստինից և Սիրիայից, որի դիմաց Մուհամմեդ Ալիին խոստանում էին ժառանգական իրավունքներ Եգիպտոսում: 1840 թ. վերջերին եգիպտական բոլոր զորքերը արդեն հեռացել էին Սիրիայից և Պաղեստինից:

Օսմանյան սուլթան Աբդուլ Մաջիդը 1841 թ. հունիսի 1–ի ֆերմանով Մուհամմեդ Ալիին ժառանգականության իրավունքներ շնորհեց միայն Եգիպտոսի և Սուդանի նկատմամբ: Մնացած բոլոր տարածքները՝ Սիրիան, Պաղեստինը, Արաբիան, Կիլիկիան և Կրետե կղզին, վերադարձվում էին օսմանյան սուլթանին: Մուհամմեդ Ալիի բանակը իր շարքերում կարող էր ունենալ ոչ ավելի, քան 18 հազար զինվոր, դրանում չէին կարող լինել հրամանատարներ գեներալի կոչումով, արգելվում էր ունենալ նավատորմ: Ֆերմանի համաձայն՝ Մուհամմեդ Ալին իրեն ճանաչում էր

սուլթանի վասալ և պարտավորվում էր նրան հարկ վճարել իր եկամուտների մեկ քառորդի չափով:

Այսպես ավարտվեց Մուհամմեդ Ալիի մոտ 35 տարի տևած պայքարը Եգիպտոսի անկախության և միասնական արաբական պետություն ստեղծելու համար: Նա այդ պայքարում պարտություն կրեց, սակայն ոչ թե Թուրքիայից, այլ նրա դեմ միավորված եվրոպական պետություններից: Վերջիններս պատմության դեմ մեծ հանցանք գործեցին՝ փրկելով անկման եզրին գտնվող Օսմանյան կայսրությունը:

Մուհամմեդ Ալին շատ ծանր տարավ իր պարտությունը և քաղաքական ծրագրերի լիակատար ձախողումը: Կորուստների ծանրության տակ նա կքեց նախ ֆիզիկապես, ապա նաև հոգևոր–մտավոր առումով: Ու նա հեռացավ երկրի կառավարումից՝ ամեն ինչ հանձնելով իր ավագ որդուն՝ Իբրահիմ փաշային, թեև ձևականորեն նա դեռևս շարունակում էր մնալ Եգիպտոսի կուսակալ–կառավարիչը:

Իբրահիմ փաշան անմիջապես և մեծ եռանդով ձեռնամուխ եղավ երկարատև պատերազմների հետևանքով քայքայված երկրի վերականգնմանը: Նա սկսեց պետական ապարատի աշխատանքների կարգավորումից՝ կանգ չառնելով ամենադաժան պատիժների առջև: Դրան հաջորդեցին ողբալի վիճակում գտնվող ֆինանսները բարեկարգելու միջոցառումները, որոնց մեջ ամենանշանակալին պետական կանոնավոր բյուջեի հաստատումն էր, որում հստակորեն սահմանված էին եկամուտների աղբյուրները, չափերը և ծախսերի ծավալները: Այդ նպատակով նա 1845–1846 թթ. այցելեց Ֆրանսիա, Անգլիա ու Իտալիա և ծանոթացավ եվրոպական ֆինանսաբյուջետային համակարգին: Շրջագայության ընթացքում նրան ուղեկցում էր նրա քարտուղար Նուբար Նուբարյանը՝ Եգիպտոսի պետական համակարգի ապագա փայլուն աստղը: Իբրահիմն ուներ շատ հեռուն գնացող ծրագրեր Եգիպտոսի հզորությունը վերականգնելու հարցում: Սակայն ճակատագրին հաճո եղավ դեպքերի զարգացումն այլ կերպ տնօրինել: Իբրահիմը 1848 թ. պաշտոնապես դարձավ Եգիպտոսի կուսակալ, բայց չհասցրեց երկիրը կառավարել: Նույն թվականի նոյեմբերի 10–ին՝ իր նշանակումից երեք ամիս անց, նա հանկարծամահ եղավ, իսկ 1849 թ. օգոստոսի 2–ին 80 տարեկան հասակում վախճանվեց նրա հայրը՝ հիրավի առասպելական Մուհամմեդ Ալին, որով և ավարտվեց մի ամբողջ դարաշրջան Եգիպտոսի պատմության մեջ:

Մուհամմեդ Ալիի մահից հետո նրա գահին նստեց նրա թոռը՝ Աբբաս Հիլմի Ա–ն, որը Եգիպտոսը կառավարեց 1849–1854 թթ.: Նա իր մեծ պապի հակապատկերն էր, որը պատմության մեջ մտել է որպես հետադիմական՝ ռետրոգրադ: Նա հրաժեշտ տվեց իր երկու մեծ նախորդների քաղաքականությանն առանցքային բնույթի հարցերում, առաջին հերթին՝ Եգիպտոսի անկախության գաղափարին՝ մշտապես շեշտելով, որ ինքն օսմանյան սուլթանի վասալն է: Աբբաս Ա–ն դադարեցրեց բարենորոգումների քաղաքականությունը, փակեց ամենուր իր պապի կողմից բացված դպրոցները, փակվեցին մանուֆակտուրաները, կրճատվեց բանակը՝ հիմնականում ազատվելով եգիպտացիներից, որից հետո հիմնական դերակատարումն անցավ ալբանացիներին, չերքեզներին և բնակչության թրքախոս հատվածին՝ դրանով իսկ վե-

րացնելով եգիպտական բանակի ազգային բնույթը: Նա հալածանքներ սկսեց եվրոպական կրթության կրողների դեմ, շատ գործիչներ, այդ թվում նաև հայեր, որոնք հավատարմորեն ծառայել էին Եգիպտոսի վերածննդին, ձերբակալվեցին կամ հեռացան Եգիպտոսից: Նա ոգեկոչեց մուսուլմանական հետադեմ խավերի կրոնական մոլեռանդությունը և մի առանձին ատելություն էր տածում ֆրանսիական կրթություն ստացած և ֆրանսիական կողմնորոշում ունեցող գործիչների և իր պապի գործընկերների նկատմամբ՝ նրանց դուրս մղելով բոլոր բնագավառներից: Աբբաս Ա–ի տիրապետության հնգամյա շրջանում Եգիպտոսը բոլոր բնագավառներում հետընթաց ապրեց: Դժգոհությունը համակել էր եգիպտական տարբեր սոցիալական խավերի, որոնք ելք էին փնտրում ստեղծված իրավիճակից: Ելքը գտնվեց շատ հեշտ՝ ավանդական ձևով. 1854 թ. հուլիսի 2–ին նա իր պալատում սպանվեց թիկնապահների կողմից:

8. ԵԳԻՊՏՈՍԸ ՍԱՅԻԴ ՓԱՇԱՅԻ ԵՎ ԻՍՄԱՅԻԼԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1854–1879 ԹԹ.): ԵԳԻՊՏՈՍԻ ԱՌԱՋԻՆ ՎԱՐՉԱՊԵՏ ՆՈՒԲԱՐ ՆՈՒԲԱՐՅԱՆԸ

Մուհամմեդ Ալին թողել էր մեծաթիվ ժառանգորդներ՝ որդիներ, դուստրեր, թոռներ և ծոռներ, որոնց թիվը հասնում էր մոտ հարյուրի: Սպանված Աբբաս Ա–ին փոխարինեց Մուհամմեդ Ալիի կրտսեր որդին՝ Սայիդ փաշան, որը Եգիպտոսը կառավարեց 1854–1863 թթ.: Նա Ֆրանսիայում կրթություն ստացած, զարգացած և լուսամիտ անձնավորություն էր և հայացքներով մոտ էր իր հորը:

Սայիդ փաշան իր կառավարման տարիներին կատարեց երկու կարևոր գործ: Առաջին՝ 1854 թ. նոյեմբերի 3–ին Սուեզի ջրանցքի կառուցման կոնցեսիայի տրամադրումն էր ֆրանսիացի Ֆերդինանդ դը Լեսեպսին: Սակայն նա սխալվեց իր հաշվարկներում և թույլ տվեց խոշոր սխալ: Կոնցեսիոն պայմանները կազմված էին թալանչիական սկզբունքներով, որոնք Եգիպտոսին դրեցին շատ ծանր դրության մեջ և դարձան Եգիպտոսի ֆինանսական սնանկացման պատճառներից մեկը: Սայիդ փաշան պարտավորվեց մինչև 25 հազար ֆելլահներ տրամադրել ջրանցքի կառուցման աշխատանքների համար, որոնք պետք է աշխատեին ձրի: Շատերը չդիմացան տաժանակիր աշխատանքներին: Ջրանցքի կառուցման ժամանակ զոհվել է մոտ 20 հազար եգիպտացի:

Երկրորդ՝ Սայիդ փաշան վերադարձավ բարենորոգումների իրականացման և Եգիպտոսն անկախ պետության վերածելու իր հոր քաղաքականությանը: Նա հասավ նրան, որ Կոստանդնուպոլիսը համաձայնվեց մեծացնել եգիպտական բանակի թվաքանակը՝ այն 18 հազարից հասցնելով 30 հազարի, վճռական քայլեր ձեռնարկեց եգիպտական բանակը կրկին ազգային բանակի վերածելու ուղղությամբ, սպայական կոչումներ շնորհեց արաբ եգիպտացիներին: Որոշակի բարեփոխումներ արվեցին ագրարային ոլորտում: 1858 թ. հողային օրենքով թույլատրվեց հողաբաժին ունեցող գյուղացիներին վաճառել, գնել կամ վարձակալության տալ իր հողաբաժինը, և գյուղացին դարձավ մասնավոր հողատեր–սեփականատեր, դրամական հար-

կը փոխարինվեց բնականով, սահմանվեց առևտրի ազատություն, վերացվեցին ներքին մաքսատները, և ֆելլահը կարող էր իր ապրանքը վաճառել այնտեղ, որտեղ ինքն էր ցանկանում: Վերաբացվեցին Աբբաս I–ի ժամանակ փակված բոլոր դպրոցները, և բացվեցին նորերը, հատուկ հրամանով արաբերենը հայտարարվեց պաշտոնական լեզու՝ դուրս մղելով թուրքերենը, եգիպտական պետական դպրոցներում դասավանդումը պարտադիր անցկացվում էր արաբերենով՝ որպես մայրենի լեզու:

Սայիդ փաշան վախճանվեց 1863 թ. հունվարի 18–ին, և իշխանությունն անցավ Մուհամմեդ Ալիի թոռանը՝ Իբրահիմ փաշայի որդուն՝ Իսմայիլ փաշային, որը Եգիպտոսը կառավարեց 1863–1879 թթ.:

Նրա կառավարման տարիները դարձան Եգիպտոսի նոր շրջանի պատմության իրադարձություններով հարուստ և ամենադրամատիկական շրջանը: Իսմայիլը հիանալի կրթություն էր ստացել Ֆրանսիայում, տիրապետում էր մի քանի լեզուների և ֆրանսիական արվեստի ու քաղաքական մշակույթի համակիր էր: Նա առաջին եգիպտական պետական գործիչն էր, որը հայտարարեց, որ իր երկրի ապագան կապված է Եվրոպայի հետ, և նրա քաղաքական նպատակն է «Եգիպտոսը դարձնել Եվրոպայի մաս»:

Նրան մեծ գլխացավանք պատճառեց Սուեզի ջրանցքի կառուցումը: Իսմայիլը քաջություն ունեցավ հայտարարելու, որ կոնցեսիայով շատ մեծ արտոնություններ են տրված Լեսեպսին և կոնցեսիայի պայմանները շատ ծանր են Եգիպտոսի համար: Նա 1863 թ. հունվարի 30–ին առաջին փոփոխությունը մտցրեց Սուեզի ջրանցքի կոնցեսիոն պայմանագրի մեջ՝ արգելելով հարկադրական և ձրի աշխատանքը ջրանցքի կառուցման մեջ, որը նշանակում էր ծանր ֆինանսական հարված հասցնել Լեսեպսին: Վերջինս դատական գործ բացեց Իսմայիլի դեմ, և հարցը «քննարկվեց» միջնորդական դատարանում: Դատարանը հարցը լուծեց հօգուտ Լեսեպսի՝ պահպանվեց հարկադիր և ձրի աշխատանքը ջրանցքի վրա, և Իսմայիլին պարտավորեցրին վճարել 84 մլն ֆրանկ Սուեզի ջրանցքի ընկերությանը՝ որպես «վնասի հատուցում»: Սուեզի ջրանցքի վրա աշխատանքներն ավարտվեցին 1869 թ., և նոյեմբերի 17–ին մեծ շուքով և հանդիսությամբ տեղի ունեցավ դրա բացումը: Դրա կառուցումը Եգիպտոսին արժեցավ 400 մլն ֆրանկ, որն իր ժամանակի համար շատ մեծ գումար էր:

Իսմայիլ փաշան շարունակեց բարեփոխումների քաղաքականությունը տնտեսության, մշակույթի և կրթության բնագավառներում: Եգիպտոս վերադարձան շատ գործիչներ, որոնք, Աբբասի կուսակալության շրջանում խուսափելով բռնություններից, հարկադրված հեռացել էին երկրից: 1866 թ. հիմնվեց Ներկայացուցչական պալատ՝ Մաջլիս ուլ–Նիյաբի՝ բաղկացած 75 պատգամավորներից: Այն, որը հայտնի է նաև «Երևելիների պալատ» անունով, կոչված էր կատարելու խորհրդարանի դեր:

Իսմայիլն իր քաղաքականությունն իրականացնելիս խելամիտ և նվիրված աջակից ունեցավ՝ ի դեմս Նուբար Նուբարյանի, որը պատմության մեջ հայտնի է նաև Նուբար փաշա անվանակոչումով: Բացառիկ է նրա դերը Եգիպտոսի XIX դարի

երկրորդ կեսի պատմության շրջանում: Նա ծնվել է 1825 թ. Զմյուռնիայում և իր նախնական կրթությունը ստացել է տեղի հայկական վարժարանում: Այնուհետև նա տեղափոխվում է Եգիպտոս և հաստատվում Ալեքսանդրիայում: 1844–1849 թթ. նա Մուհամմեդ Ալիի կողմից Ֆրանսիա ուսման ուղարկվող եգիպտացի երիտասարդների շարքում մեկնում է Փարիզ, որտեղ և ավարտում է իր ուսումնառությունը: Վերադառնալով Եգիպտոս՝ զբաղեցնում է զանազան պաշտոններ, այդ թվում նաև Եգիպտոսի երկաթուղիների նախարարի պաշտոնը: Նուբար Նուբարյանը երկար տարիներ ղեկավարել է Եգիպտոսի արտաքին քաղաքականությունը, չորս անգամ զբաղեցրել է արտաքին գործերի նախարարի պաշտոնը: Եվ վերջապես՝ նա եղել է Եգիպտոսի առաջին վարչապետը՝ այդ պաշտոնը զբաղեցնելով երեք անգամ՝ 1878–1879, 1884–1889 և 1894–1895 թվականներին: Մահացել է 1899 թ. և թաղված է Ալեքսանդրիայում:

Նուբար Նուբարյանը եղել է Եգիպտոսի կառավարիչների՝ Սայիդ և Իսմայիլ փաշաների անփոխարինելի խորհրդատուն: Լինելով վերին աստիճանի զարգացած և գործունյա ու բնատուր մեծ խելքի տեր անձնավորություն՝ Նուբար Նուբարյանն իր ողջ ունակությունները և եռանդը դրեց ի նպաստ իր նոր հայրենիքի՝ Եգիպտոսի զարգացմանը և անկախության ամրապնդմանը՝ պայքարելով թե՛ Բարձր դռան և թե՛ անգլիական գաղութարարների դեմ:

Նուբար Նուբարյանի խորհրդով Իսմայիլն օսմանյան սուլթանի առջև հարց բարձրացրեց իր տիտղոսի առնչությամբ: Նա կրում էր «փաշա» տիտղոսը, ինչպես օսմանյան կայսրության բազմաթիվ վալիներ ու կառավարիչներ, և ձևականորեն նրանցից չէր տարբերվում: Խնդիրն այն էր, որ նրան շնորհվեր մի այնպիսի տիտղոս, որով նա կտարբերվեր կայսրության մնացած բոլոր փաշաներից: Մուհամմեդ Ալին նույնպես ժամանակին փորձեր կատարեց այդ ուղղությամբ, բայց ոչ մի հաջողության չհասավ: Եվ ահա այժմ այդ հարցի լուծումն իր ձեռքը վերցրեց Նուբար Նուբարյանը, որը Կոստանդնուպոլսում երկարատև և դժվարին բանակցություններից հետո նուրբ դիվանագիտական քայլերի շնորհիվ կարողացավ այնպես մոլորեցնել թուրքական դիվանագետներին, որ ստացավ իր ուզածը: Օսմանյան սուլթանը համաձայնվեց Իսմայիլին և նրա հաջորդներին շնորհել «խդիվ» տիտղոսը, որը պարսկերենում մի քանի իմաստ ունի և նշանակում է «վեհապետ», «տեր» կամ «իշխան»: Իսմայիլից սկսած՝ Եգիպտոսի բոլոր կուսակալ–կառավարիչներն ունեին խդիվ տիտղոսը՝ դրա վեհապետ իմաստով: Տիտղոսի հարցը ձևական հարց չէր, այլ քաղաքական հեռահար իմաստ ուներ անկախության ձգտող Եգիպտոսի համար:

Իսմայիլի և Նուբար Նուբարյանի համագործակցության մյուս կարևոր նվաճումը եղավ Եգիպտոսում եվրոպացիների արտոնությունների ու հյուպատոսական դատարանների իշխանության սահմանափակումը և խառը դատարանների ստեղծումը, որը կարգավորում էր օտարերկրացիների և եգիպտացիների միջև դատական հարցերն ու խնդիրները, ամրապնդում Եգիպտոսի ինքնիշխանությունը: Այդ բոլորի շնորհիվ մեծապես բարձրացավ Նուբար Նուբարյանի հեղինակությունը երկրի ներսում և եվրոպական շրջանակներում:

Իսմայիլը զարկ տվեց լայնածավալ շինարարությանը: Կառուցվում էին ոռոգման ջրանցքներ, կամուրջներ, երկաթուղիներ, զանազան գործարաններ, դպրոցական շենքեր և այլն: Դա պահանջում էր ֆինանսական մեծ միջոցներ, որոնք ձեռք բերելու համար խդիվը դիմում էր ֆրանսիական և անգլիական բանկերին: Վերջիններս հաճույքով էին տրամադրում վարկեր, քանի որ դրանք տրվում էին շատ ծանր պայմաններով և բարձր տոկոսներով: Եգիպտոսի համար ավելի ու ավելի դժվարանում էր փոխառությունների դիմաց վճարելը, և Իսմայիլը 1876 թ. ապրիլի 8–ին պաշտոնապես հայտարարեց, որ Եգիպտոսն ի վիճակի չէ մարելու իր պարտքերը և հայտարարվեց սնանկ: Դրանից օգտվեցին եվրոպական պետությունները, առաջին հերթին՝ Անգլիան և Ֆրանսիան, և իրենց վերահսկողությունը սահմանեցին Եգիպտոսի ֆինանսների և ամբողջ տնտեսության վրա: Ստեղծվեց Եգիպտոսի պարտքի միջազգային հանձնաժողով՝ կազմված Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ավստրիայի ներկայացուցիչներից, որն ինքն իրեն օժտեց շատ լայն լիազորություններով: Այն խդիվից պահանջեց անմիջականորեն չզբաղվել երկրի կառավարման գործերով, ցրել կառավարությունը և կազմել նոր կառավարություն: Իսմայիլը հարկադրված էր հնազանդվել, և 1878 թ. օգոստոսի 28–ի դեկրետով կազմվեց նոր կառավարություն, որը ստացավ «Եվրոպական կաբինետ» անվանումը: Նրանում գլխավոր պաշտոնները զբաղեցրին Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ավստրիայի ներկայացուցիչները: Սակայն վարչապետ նշանակվեց Նուբար Նուբարյանը:

Նուբար Նուբարյանը, շրջապատված լինելով եվրոպացի նախարարներով, մեծ հնարամտությամբ և նրբին դիվանագիտությամբ փորձում էր պաշտպանել Եգիպտոսի ազգային շահերը՝ չափավորելով ֆինանսների նախարար անգլիացի Վիլսոնի և հասարակական աշխատանքների նախարար ֆրանսիացի դը Բլիների և մյուս եվրոպացի նախարարների ամեն սահման անցնող միջամտությունը Եգիպտոսի ներքին գործերին:

«Եվրոպական կաբինետի» ստեղծումը լավ չընդունվեց եգիպտացիների կողմից: Դժգոհությունը համակեց սոցիալական տարբեր խավերի: Ստեղծված պայմաններում Նուբար Նուբարյանը 1879 թ. մարտի 9–ին նախընտրեց հրաժարական տալ: Իսմայիլը վարչապետի պաշտոնում նշանակեց իր որդուն՝ Թոֆիկին, որը խաղալիք դարձավ կաբինետում իրենց պաշտոնները պահպանած Վիլսոնի և դը Բլիների ձեռքին:

9. ԱՀՄԱԴ ԱՐԱԲԻԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵԳԻՊՏՈՍԻ ՆՎԱՃՈՒՄԸ ԱՆԳԼԻԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ (1881–1882 ԹԹ.)

Նոր կաբինետի ստեղծումը հանգստություն չբերեց Եգիպտոսին: Ավելի ակտիվ սկսեցին հանդես գալ բանակի արաբ սպաները, որոնք զբաղեցնում էին միջին և ցածր սպայական պաշտոնները և տնտեսապես վատ վիճակում էին՝ ի տարբերություն այսպես կոչված ազգությամբ ոչ արաբ «չերքեզների», որոնք գրավում էին բարձր հրամանատարական պաշտոնները: Անգամ կալվածատերերի լիբերալ թևն ընդվզեց: Եվ եթե ի մի բերենք եգիպտական սոցիալական ամենալայն խավերի պա-

հանջները, ապա դրանք հետևյալն էին՝ Եգիպտոսի անկախություն, սահմանադրության ընդունում և սահմանադրական կարգերի հաստատում, գործունյա օրենսդիր մարմին՝ պառլամենտ, ազգային կառավարություն: Ահա այսպիսի մթնոլորտում խդիվ Իսմայիլը ցուցաբերեց վճռականություն և 1879 թ. ապրիլի 7–ին հայտարարեց Եվրոպական կաբինետը ցրելու և ազգային կառավարություն կազմելու մասին, որը գլխավորեց ազատամիտ կալվածատերերի թևին պատկանող Շերիֆ փաշան: Նա կառավարական ապարատից հեռացրեց բազմաթիվ օտարերկրյա պաշտոնյաների և Ներկայացուցիչների պալատի հաստատմանը ներկայացրեց Սահմանադրության և ընտրական օրենքի նախագծերը: 1789 թ. հունիսի 8–ին երկու նախագծերն էլ պալատը հաստատեց: Մնում էր, որ դրանք հաստատվեին խդիվ Իսմայիլի կողմից: Վերջինս պատրաստ էր դրան, բայց չհասցրեց:

Անգլիան և Ֆրանսիան ոչ մի կերպ չհամակերպվեցին այն իրողության հետ, որ իրենց ներկայացուցիչները դուրս էին մնացել Շերիֆ փաշայի կառավարությունից, իսկ Իսմայիլը մոտ էր իր ծրագրերի իրականացմանը: 1879 թ. հունիսի 19–ին նրանք վերջնագիր ներկայացրին խդիվ Իսմայիլին՝ պահանջելով նրանից հրաժարվել գահից և հեռանալ Եգիպտոսից: Նրանց այդ պահանջին միացան նաև Ավստրիան, Ռուսաստանը, Գերմանիան և Իտալիան, ապա նաև օսմանյան սուլթան Աբդուլ Համիդ II–ը, որի ֆերմանով Իսմայիլը հունիսի 25–ին գահընկեց հայտարարվեց, իսկ Եգիպտոսի խդիվ նշանակվեց նրա որդին՝ Թոֆիկը: Վերջինս, որը մի թուլամորթ և կամազուրկ անձնավորություն էր, պատրաստ էր կատարելու Անգլիայի և Ֆրանսիայի բոլոր պահանջները: Նա պաշտոնանկ արեց Շերիֆ փաշային, լուծարեց Իսմայիլի ժամանակ ձևավորված ազգային կառավարությունը, վարչապետի պաշտոնում նշանակեց Ռիյադ փաշային, չհաստատեց Սահմանադրությունը և այլն: Սակայն դա չհանգեցրեց ընդդիմության վերացմանը, որն, ընդհակառակը, վերադասավորելով իր ուժերը, ավելի վճռական դարձավ: Այդ պահից սկսած եգիպտական ընդդիմությունն իր շարքերում համախմբում էր քաղաքի և գյուղի աշխատավորներին, արհեստավորներին, վաճառականությանը, ազգային բուրժուազիային, զինվորականությանը, հատկապես միջին սպայական կազմին, մտավորականությանը, որն առաջ քաշեց «Եգիպտոսը եգիպտացիների համար» կարգախոսը, հայրենասիրաբար տրամադրված լիբերալ կալվածատերերին և հոգևորականությանը: 1881 թ. ստեղծվեց «Հիզբ ալ–Վաթան» կուսակցությունը, որն արտահայտում էր այդ խավերի շահերը:

Զինվորականների մեջ իր հեղինակությամբ առանձնանում էր գնդապետ Ահմադ Արաբին, որի շուրջը համախմբվեցին հայրենասեր զինվորականները: 1881 թ. սեպտեմբերի 9–ին Կահիրեում Արաբիի գլխավորությամբ տեղի ունեցավ եգիպտական բանակի զինված ելույթը, որի անմիջական առիթը եղավ Թոֆիկի կարգադրությունը՝ Կահիրեի կայազորի հեղափոխական տրամադրություններ ունեցող գնդերը դուրս բերել մայրաքաղաքից և տեղավորել երկրի տարբեր մասերում: Զինվորականները, հասկանալով խդիվի և նրա թիկունքում կանգնած անգլիացիների մտադրությունը, չենթարկվեցին Թոֆիկի հրամանին, շրջապատեցին խդիվի պալատը, և

Արաբին պահանջեց Թոֆիկից Ռիյադի կառավարության հրաժարականը, սահմանադրության ընդունում և եգիպտական բանակի թվական կազմի ավելացում: Խդիվը ստիպված էր զիջել և կատարել ապստամբների որոշ պահանջներ, մասնավորապես հրաժարական տվեց Ռիյադի կառավարությունը, և նոր վարչապետ նշանակվեց Շերիֆ փաշան, որը մինչ այդ մեկ անգամ արդեն գլխավորել էր Եգիպտոսի կառավարությունը: Սակայն այդ ժամանակահատվածում տեղի էին ունեցել որոշակի փոփոխություններ Շերիֆ փաշայի հայացքներում, և նա չէր թաքցնում իր արհամարհական վերաբերմունքը ֆելլահների ծոցից դուրս եկած զինվորականների նկատմամբ: Եվ նա պահանջեց, որ Արաբին և նրա զորքերը հեռանան Կահիրեից:

Այսպսով՝ Արաբին և նրա կողմնակիցները բախման մեջ մտան վարչապետ Շերիֆի և նրա գլխավորած կառավարության հետ: Դիմակայությունը նրանց միջև ուժեղացավ այն բանից հետո, երբ Շերիֆ փաշան հրաժարվեց գործողության մեջ դնել իր իսկ մշակած և 1879 թ. հունիսին Իսմայիլի հաստատմանը ներկայացրած սահմանադրությունը և փորձեց բանակին զրկել Եգիպտոսի քաղաքական կյանքում որևէ դերակատարում ունենալու իրավունքից: Շերիֆ փաշայի դեմ դուրս եկավ նաև Ներկայացուցչական պալատը, երբ նա իրեն իրավունք վերապահեց հաստատելու եգիպտական բյուջեն, իսկ վարչապետին չհաջողվեց տարհամոզել պատգամավորներին այդ հարցում: Ակամայից ստեղծվեց դաշինք Արաբիի և Ներկայացուցչական պալատի միջև: Վերջինիս պահանջով Շերիֆ փաշան 1882 թ. փետրվարի 5–ին հրաժարական տվեց, որը պետք է համարել ապստամբների կարևոր հաղթանակը: Կազմվեց նոր կառավարություն՝ Մահմուդ Սամի–Արաբիի կառավարությունը: Մահմուդ Սամի ալ–Բարուդին դարձավ վարչապետ, իսկ Արաբին զբաղեցրեց զինվորական նախարարի կարևոր պաշտոնը:

Սամի–Արաբիի կառավարությունն առանց հապաղելու ընդունեց սկզբունքային բնույթի մի շարք կարևոր օրենքներ: Կառավարությունը հրապարակեց Ներկայացուցիչների պալատի ընդունած Օրգանական օրենքը, վերացրեց անգլո–ֆրանսիական ֆինանսական վերահսկողությունը, սահմանեց հսկողություն օտարերկրյա խորհրդատուների գործունեության վրա, որոշում ընդունեց հիմնել գյուղատնտեսական բանկ, արգելեց որպես գյուղացիներին պատժելու գործիք օգտագործել մտրակը՝ կուրբաշը, և այլն: Այդ բոլորը մեծ գոհունակությամբ ընդունվեց բնակչության կողմից: Ներքին Եգիպտոսում սկսվեցին գյուղացիական ելույթներ, որոնք ուղղված էին կալվածատերերի և բարձր հարկերի դեմ: Տեղի ունեցավ ուժերի նոր սահմանազատում հասարակության ներսում: Հետադիմական ուժերի խորհրդանիշը դարձավ խդիվ Թոֆիկը, որի շուրջը համախմբվեցին ավատատերերը, գյուղացիական ելույթներից սարսափած լիբերալ կալվածատերերը և բանակի սպայական բարձրագույն կազմը, որը բաղկացած էր թուրքերից, ալբանացիներից և չերքեզներից: Մյուս կողմում վաթանիստներն էին՝ հայրենասեր զինվորականները, գյուղացիական զանգվածները, քաղաքային բնակչության աղքատ խավերը, առևտրական բուրժուազիայի առանձին խավեր, մտավորականությունը և այլն: Նրանց առաջնորդը գնդապետ Արաբին էր:

Հետադիմական ուժերը մահափորձ կատարեցին Արաբիի դեմ, որը չհաջողվեց, բայց դա հարկադրեց վաթանիստներին դիմել ավելի արմատական քայլերի: Արաբին Ներկայացուցիչների պալատում հանդես եկավ խդիվ Թոֆիկին տապալելու պահանջով, իսկ խդիվը ի պատասխան պահանջեց այդ պալատի լուծարումը:

Այդ ընթացքում Անգլիան և Ֆրանսիան քննարկում էին ռազմական միջամտության հարցը, սակայն համաձայնության չեկան և ստիպված հրաժարվեցին այդ գաղափարից: Նման ցանկություն արտահայտեց նաև սուլթան Աբդուլ Համիդ II–ը, բայց դրա դեմ ընդդիմացան Անգլիան և Ֆրանսիան: Սակայն նրանք թուրքական ռազմական միջամտությունը կանխելու պատրվակով 1882 թ. մայիսի 20–ին Ալեքսանդրիա ուղարկեցին իրենց ռազմական նավատորմը: Դրա հետ միասին Անգլիան և Ֆրանսիան Թոֆիկին ներկայացրին վերջնագիր՝ պահանջելով Արաբիի և նրա զինվորական համախոհների արտաքսումը Եգիպտոսից և Սամիի կառավարության հեռացումը: Խդիվը բավարարեց Սամիի հրաժարականի վերաբերյալ պահանջը և համապատասխան որոշում արձակեց: Բայց դրա դեմ ընդվզեցին վաթանիստները և նրանց հավատարիմ զինվորականները: Նրանք հանդես եկան ի պաշտպանություն Ահմադ Արաբիի, խդիվին հայտարարեցին դավաճան և պահանջեցին նրան գահընկեց անել: Խդիվը հարկադրված էր նահանջել և համաձայնվեց Արաբիին թողնել ռազմական նախարար: Վերջինս դիմեց անսպասելի քայլի: Նա մնաց ոչ միայն Եգիպտոսի ռազմական նախարար, այլև դարձավ միակ նախարարը, Եգիպտոսի փաստական կառավարիչը՝ իր ձեռքում կենտրոնացնելով ամբողջ իշխանությունը: Եգիպտոսը եռում էր, Կահիրեն դարձել էր հեղափոխության կենտրոն: Խդիվը 1882 թ. հունիսի 13–ին Կահիրեից փախավ Ալեքսանդրիա՝ պաշտպանություն փնտրելով Ալեքսանդրիայում խարիսխ գցած անգլիական և ֆրանսիական ռազմական նավերի մոտ: Այստեղ նա իր կողմնակիցներից կազմեց նոր կառավարություն, որը գլխավորեց Ռաղիբ փաշան: Անգլիական ծովակալ Սեյմուրը 1882 թ. հուլիսի 11–ին հրամայեց նավերից ռմբակոծել Ալեքսանդրիան, և անպաշտպան քաղաքը ավերվեց, իսկ շատ թաղամասեր հրկիզվեցին: Արաբին հրամայեց եգիպտական կայազորին հեռանալ քաղաքից, և հուլիսի 15–ին անգլիական զորքերը մտան Ալեքսանդրիա: Դա դարձավ անգլո–եգիպտական պատերազմի սկիզբը, որի համար ամբողջ պատասխանատվությունն ընկնում էր Անգլիայի վրա:

Երկրորդ փուլում պատերազմական գործողությունները ծավալվեցին Եգիպտոսի ցամաքային տարածքում: Խդիվ Թոֆիկը հրամայեց Արաբիին անհապաղ դադարեցնել դիմադրությունն անգլիացիներին: Արաբին հրաժարվեց կատարել անգլիացիների շահերին ծառայող խդիվի հրամանը, չդադարեցրեց պատերազմական գործողությունները և դիմեց եգիպտացի ժողովրդին՝ բացատրելով իր քաղաքականության նպատակները: Նա հայտարարեց, որ Եգիպտոսի և Անգլիայի միջև գնում է անհաշտ պատերազմ, և Եգիպտոսը պայքարում է իր անկախության և ազատության համար: Նա ընդգծեց, որ բոլոր հայրենասեր եգիպտացիները պետք է կանգնեն ի պաշտպանություն Եգիպտոսի՝ համաձայն «Եգիպտոսը եգիպտացիների համար» կարգախոսի՝ ավելացնելով, որ բոլոր դավաճանները պատժվելու են:

Դրանից հետո դեպքերը զարգացան կայծակնային արագությամբ: Թոֆիկը Արաբիին 1882 թ. հուլիսի 23–ին հայտարարեց խռովարար և ազատեց ռազմական նախարարի պարտականություններից, իսկ Արաբին խդիվին հայտարարեց դավաճան: Արաբին ստեղծեց կառավարման նոր մարմիններ՝ Ռազմական խորհուրդ և Արտակարգ խորհուրդ: Ռազմական խորհրդի մեջ մտան Արաբիին հավատարիմ բարձրաստիճան սպաները, իսկ Արտակարգ խորհրդի կազմն ավելի խայտաբղետ էր, և դրանում քիչ թիվ չէին կազմում տատանվողները: Արաբին ընթացք տվեց եգիպտացիների խանդավառությանը և բավարարեց նրանց ցանկությունը որպես կամավոր մտնել եգիպտական բանակի շարքերը և զենքը ձեռքին պայքարել անգլիական գաղութարարների դեմ: Արաբին հույս ուներ, որ մինչև աշուն նրան կհաջողվի ունենալ լավ զինված, մարզված և կարգապահ բանակ և բեկում առաջացնել պատերազմական գործողություններում՝ հօգուտ եգիպտացիների:

Սակայն իրադարձությունները զարգացան այլ սցենարով: Անգլիական զորքերը հմուտ գեներալ Ուոլսոնի հրամանատարությամբ 1882 թ. հուլիսին վերսկսեցին պատերազմական գործողությունները և, շրջանցելով եգիպտական միջերկրածովյան ամրությունները, օգոստոսին առանց մարտի գրավեցին Սուեզը, ապա նաև Պորտ Սաիդն ու Իսմայիլիան: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ 1882 թ. սեպտեմբերի 13–ին Թել ալ–Քաբիրի մոտ, որը պայմանականորեն կարելի է անվանել ճակատամարտ: Մարտը տևեց ընդամենը կես ժամ: Անգլիական լավ զինված զորքերի դեմ կանգնած էին երեկվա բեդվիններից կազմված, վատ զինված և անկարգապահ եգիպտական զորքերը, որոնք «փայլեցին» փախուստ տալու մեջ: Արաբիի բոլոր փորձերը՝ կանգնեցնելու իր խուճապահար զորքերը, ավարտվեցին անհաջողությամբ, և այսպես կոչված գլխավոր ճակատամարտն ավարտվեց անգլիացիների հաղթանակով: Սակայն ամեն ինչ կորած չէր և դեռ կարելի էր շարունակել դիմադրությունը: Դա լավ էր հասկանում Արաբին, և նա շտապեց Կահիրե ու հրավիրեց Արտակարգ խորհրդի նիստ՝ դրա քննարկմանը դնելով պատերազմը շարունակելու հարցը: Ինքը և նրա փոքրաթիվ համախոհները կողմնակից էին շարունակելու պատերազմը, սակայն խորհրդի անդամները 1882 թ. սեպտեմբերի 13–ին ձայների մեծամասնությամբ քվեարկեցին հօգուտ պատերազմի դադարեցման և Եգիպտոսի անձնատուր լինելուն: Արաբին ենթարկվեց այդ որոշմանը, որը կարելի է համարել նրա սխալներից մեկը, քանի որ դեռևս ռազմական գործողությունների մեջ չէր մտել լավ զինված և մարզված եգիպտական կանոնավոր բանակը, որը տեղակայված էր Եգիպտոսի հյուսիսում: Սեպտեմբերի 14–ին անգլիացիները մտան Կահիրե և մինչև ամսվա վերջը գրավեցին ամբողջ Եգիպտոսը: Անգլիական զորքերի հետ Կահիրե վերադարձավ նաև խդիվ Թոֆիկը: Սեպտեմբերի 14–ին գնդապետ Ահմադ Արաբին անձնատուր եղավ անգլիացիներին: Դեկտեմբերին նա դատապարտվեց մահվան, որը փոխարինվեց ցմահ բանտարկությամբ և աքսորվեց Ցեյլոն կղզի, որն այդ ժամանակ անգլիական գաղութ էր: Համապատասխան պատիժներ ստացան նաև ապստամբության մյուս մասնակիցները: Դատավճիռներն արձակում էր անգլիական հանձնաժողովը:

Եգիպտոսում հաստատվեց անգլիական օկուպացիոն ռեժիմ, եգիպտական կանոնավոր բանակը ցրվեց, թեև իրավական առումով Եգիպտոսի կարգավիճակը չփոխվեց: Այն չբռնակցվեց և չհայտարարվեց անգլիական թագին պատկանող գաղութ և մնաց որպես Օսմանյան կայսրության մի մաս, որի սյուզերենը օսմանյան սուլթանն էր: Իր «իշխանությունը» պահպանեց խդիվը, երկիրն ուներ իր կառավարությունը: 1883 թ. խդիվը հաստատեց երկրի Հիմնական օրենքը, որով Եգիպտոսում ստեղծվեցին Օրենսդիր և Գլխավոր խորհուրդներ՝ խիստ սահմանափակ իրավունքներով:

Սակայն ամբողջ իշխանությունը անգլիացիների ձեռքում էր և պատկանում էր Լոնդոնի նշանակած դիվանագիտական ներկայացուցչին, որը համարվում էր Անգլիայի գլխավոր հյուպատոսը Եգիպտոսում: 1883 թ. այդ պաշտոնում նշանակվեց մայոր Բերինգը, որը շուտով ստացավ լորդի տիտղոս և կոչվեց լորդ Կրոմեր, և այդ պաշտոնում մնաց մինչև 1907 թ.: 1892 թ. վախճանվեց խդիվ Թոֆիկը, և այդ պաշտոնում նրան փոխարինեց նրա որդին՝ Աբբաս II Հիլմին, որն այդ պաշտոնում մնաց մինչև Առաջին աշխարհամարտը:

Բրիտանական նվաճումից հետո Եգիպտոսի քաղաքական պատմությունը սերտորեն միահյուսվում է բրիտանական քաղաքական շահերի հետ, որն իր ազդեցությունն ունեցավ ոչ միայն Եգիպտոսի ներքաղաքական իրողությունների, այլև արաբական այլ երկրների հետ նրա հարաբերությունների վրա:

10. ԱՆԳԼՈ–ԵԳԻՊՏԱԿԱՆ ԿՈՆԴՈՄԻՆԻՈՒՄԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՍՈՒԴԱՆՈՒՄ (1898–1899 ԹԹ.): ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ

Սուդանը, որը Մուհամմեդ Ալին նվաճել և Եգիպտոսին էր միացրել դեռևս 1822 թ., շարունակում էր մնալ Եգիպտոսի կառավարման ներքո որպես նրա նահանգներից մեկը նաև նրա հաջորդների ժամանակ՝ ընդհուպ մինչև 1885 թ.: Այն կառավարում էր Կահիրեի նշանակած հաքիմդարը՝ գլխավոր նահանգապետը: Եգիպտոսի տիրապետության տարիներին Սուդանը հայտնվել էր անտանելի տնտեսական և սոցիալական պայմաններում: Երկրում կուտակվել էր խոր դժգոհություն ինչպես Կահիրեի, այնպես էլ եվրոպական քաղաքականության դեմ, որը 1881 թ. դրսևորվեց քաղաքական, սոցիալական և կրոնական պայթյունի ձևով: Համասուդանական ընդվզումը գլխավորում էր Մուհամմեդ Ահմադը, որը 1881 թ. իրեն հայտարարեց Մահդի՝ Փրկիչ՝ կոչ անելով սուդանցիներին հանդես գալու թուրքերի դեմ՝ հանուն իսլամի բարեփոխումների: Ապստամբները տարան մի շարք հաղթանակներ և 1883 թ. պարտության մատնեցին անգլո–եգիպտական միացյալ բանակը և իրենց վերահսկողությունը սահմանեցին Սուդանի համարյա բոլոր մասերի վրա:

Եգիպտոսի նվաճումը և անգլիական գաղութային տիրապետության հաստատումը երկակի դերակատարում ունեցավ Եգիպտոսի ազգային–քաղաքական կյանքում:

1876 թ. օսմանյան գահին էր բարձրացել Աբդուլ Համիդ II–ը, որը կայսրությունում հաստատեց մի այնպիսի հետադիմական, դաժան և արյունարբու ռեժիմ, որը ստացավ «զուլում» անվանումը: Անգլիական տիրապետությունը ակամայից Եգիպտոսը զերծ պահեց օսմանյան սուլթան Աբդուլ Համիդ II–ի զուլումի անմիջական և ամենօրյա քաղաքականության ազդեցությունից: Համենայն դեպս, զուլումի քաղաքականությունը Եգիպտոսում երբեք այնպես չդրսևորվեց, ինչպես Սիրիայում, Իրաքում, Լիբանանում և Պաղեստինում:

Մյուս կողմից՝ անգլիական տիրապետության հաստատումից հետո դարձյալ ակամայից ավելի նպաստավոր պայմաններ ստեղծվեցին Եգիպտոսում ազգային գաղափարախոսության և զգացմունքների նոր դրսևորումների համար: Դրա կրողները եղան Մուհամմեդ Աբդոն, Աբդ ալ–Ռահման Քավաքիբին և հատկապես Մուսթաֆա Քամիլը: Առաջին երկուսը համարվում են նաև իսլամական բարենորոգիչներ:

Մուհամմեդ Աբդոն համագործակցել է Ջամալ ալ–Դին ալ–Աֆղանիի հետ և մեծապես ազդվել նրա պանիսլամական գաղափարներից: Նա, բացի մաքուր իսլամին վերադառնալու պահանջից, որն արդեն նորություն չէր արաբական և մուսուլմանական իրականության մեջ, հանդես էր գալիս իսլամի նորացման և մուսուլմանական սկզբունքներն ու դոգմաները նոր ժամանակներին հարմարեցնելու պահանջներով: Անգամ դառնալով Եգիպտոսի հոգևոր առաջնորդը՝ մուֆթին՝ Մուհամմեդ Աբդոն չէր վարանում քարոզելու իսլամի դրույթները եվրոպական ազատությունների հետ ներդաշնակելու անհրաժեշտությունը՝ ելակետ ունենալով այն դրույթը, որ իսլամն իր բնույթով դեմոկրատական կրոն է և չի հակասում անհատի և հասարակության ազատություններին: Մուհամմեդ Աբդոն և նրա համախոհները հստակ հանդես էին գալիս արաբների թուրքացման քաղաքականության դեմ: Նա արաբ ազգի ինքնության հաստատման տեսակետի ջերմեռանդ կողմնակիցն էր:

1890–ականներին իր գործունեությունը վերսկսեց Աբդ ալ–Ռահման ալ–Քավաքիբին, որը ձերբակալվել և բանտ էր նետվել Սիրիայում Աբդուլ Համիդ II–ի կողմից: Ազատվելով բանտից՝ նա իր ծննդավայր Հալեպից տեղափոխվեց Կահիրե, որն արդեն դառնում էր թուրքական խավարամոլության դեմ պայքարող արաբական ազատամիտների կենտրոնատեղի: Նա արաբական Նահդայի՝ Վերածննդի ականավոր գործիչներից էր: Քավաքիբիի գրչին է պատկանում «Դեսպոտիզմի բնույթը» աշխատությունը, որ արաբ ազգային գործիչների մի քանի սերունդների ուղեցույցն է եղել: Նա արաբական անկախ պետության ստեղծման կողմնակից էր՝ գտնելով, որ այն պետք է խարսխված լինի դեմոկրատական սկզբունքների վրա և պաշտպանի չունևորների շահերը: Նա զարգացնում էր արդարացի իսլամական պետության գաղափարը և փորձում բացահայտել բռնակալության էությունը՝ ընդգծելով, որ «Բռնապետությունը որպես այդպիսին այլասերում է ամբողջ հասարակությունը»: Քավաքիբին այլասերումից ազատվելու համար անհրաժեշտ էր համարում «ուժերի հավասարակշռության փոփոխություն ումմայի ներսում՝ թուրքականից վերադարձ արաբականին: Միայն արաբները կարող են փրկել իսլամը փտումից»:

Այդ շրջանում Եգիպտոսում գործող ազգային հայրենասերների մեջ առանձնանում է Մուստաֆա Քամիլը, որը կարևոր դեր է խաղացել եգիպտական աշխարհիկ քաղաքական մտքի ձևավորման և զարգացման գործում: Նրա քաղաքական հայացքները կազմավորվել էին ֆրանսիական քաղաքական մտքի բարերար ազդեցության ներքո: Մուստաֆա Քամիլը գաղութատիրության դեմ պայքարը համարում էր Եգիպտոսի անկախության նվաճման առաջին և կարևոր պայմանը: Սկզբնական շրջանում Մուստաֆա Քամիլը որդեգրեց հստակ հակաանգլիական դիրքորոշում, որը հետագայում վերածվեց ընդհանրապես հակագաղութային դիրքորոշման: Այդ խնդրի իրականացման ճանապարհին նա մեծ տեղ էր հատկացնում ազգային գաղափարների տարածմանը եգիպտացիների շրջանում: Իր տեսակետները զանգվածներին հասցնելու նպատակով նա որպես ամբիոն օգտագործեց «Ալ–Լիվա» («Դրոշակ») թերթը, որը մեծ հեղինակություն էր վայելում արաբական առաջադիմական ուժերի շրջանում:

Մուստաֆա Քամիլը, հիասթափված Անգլիայի, ապա նաև Ֆրանսիայի քաղաքականությունից և կորցնելով իր հույսը, նրանց միջոցով հասնել Եգիպտոսի անկախությանը, հետագայում որդեգրեց նոր կողմնորոշում՝ մերձենալ սուլթան Աբդուլ Համիդ II–ին, նրա միջոցով՝ Գերմանիային և Ավստրո–Հունգարիային և նրանց օգնությամբ հասնել իր քաղաքական նպատակների իրագործմանը: Նրանց աջակցությունը շահելու համար նա անգամ հրաժարվեց Եգիպտոսի լիակատար անկախության գաղափարից և կանգ առավ Եգիպտոսը Օսմանյան կայսրության կազմում պահելու տեսակետի վրա: Նա նահանջ կատարեց նաև գաղափարական հարցում և կանգնեց պանիսլամիզմի դիրքերում: Մուստաֆա Քամիլը 1907 թ. հիմնեց «Հիզբ ալ–Վաթան» կուսակցությունը:

Նա իր քաղաքական և գաղափարական նահանջի համար խստորեն քննադատվել է իր ժամանակակիցների, մասնավորապես Նաջիբ Ազուրիի կողմից, որը Մուստաֆա Քամիլի ազգայնականությունը համարում էր «կեղծ եգիպտական, իսլամամետ և օսմանամետ նացիոնալիզմ»: Մուստաֆա Քամիլը մահացավ 1908 թ.:

Եգիպտոսը շնորհիվ իր յուրահատուկ կարգավիճակի դուրս մնաց 1908 թ. տեղի ունեցած երիտթուրքական հեղաշրջման անմիջական ազդեցությունից, ինչպես ժամանակին զուլումի քաղաքականության անմիջական ներգործությունից: Սակայն այն դարձավ արաբական մի շարք գործիչների և կազմակերպությունների նստավայր, որոնք աչքի էին ընկնում իրենց հակաերիտթուրքական հայացքներով: Դրանց մեջ պետք է նշել «Արաբական հայրենիքի լիգան» և նրա հիմնադիր Նաջիբ Ազուրիին, 1909 թ. հիմնված «Ալ–Կահթանիա» գաղտնի կազմակերպությունը, որը գլխավորում էր եգիպտացի սպա Ազիզ ալ–Մըսրին, Կահիրեում հիմնված «Լամարքազիա» կուսակցությունը (1912 թ.), 1913 թ. հիմնված «Ալ–Ահդ» («Պատգամ») գաղտնի կազմակերպությունը, որի հիմնադիրն էր դարձյալ մայոր Ազիզ ալ–Մըսրին և այլն: Եվ երբ օսմանյան ոստիկանությունը 1914 թ. բացահայտեց «Ալ–Ահդ» կազմակերպությունը, ձերբակալեց նրա ղեկավար եգիպտացի Ազիզ ալ–Մըսրիին և նրան դատապարտեց մահվան, ապա ի պաշտպանություն Ալ–Մըսրիի՝ լայն շարժում ծա-

վալվեց Եգիպտոսում և արաբական այլ երկրներում. տեղի ունեցան ցույցեր, մամուլը դատապարտեց օսմանյան դատարանի որոշումը, ստեղծվեց Ազիզ ալ–Մըսրիի պաշտպանության կոմիտե՝ ալ–Ազհարի ռեկտորի գլխավորությամբ: Դրությունն ավելի սրվեց, երբ արաբ սպաները երդվեցին արյունով վրեժ լուծել, եթե եգիպտացի սպայի մահվան դատավճիռն ի կատար ածվի: Միջամտեց նաև Մեծ Բրիտանիան: Ի վերջո սուլթան Աբդուլ Համիդ II–ը ներում շնորհեց, և Ազիզ ալ–Մըսրին մեկնեց Եգիպտոս:

Կարելի է ասել, որ նշանակալի է եղել «Ալ–Ահդ» և Ազիզ ալ–Մըսրիի դերը արաբական հասարակության մեջ անկախության գաղափարը և զինված պայքարի միջոցով դրան հասնելու միտքը արաբական հասարակության լայն խավերի շրջանում տարածելու և նրանց համար ընդունելի դարձնելու մեջ:

11. ԵԳԻՊՏՈՍՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ. ԵԳԻՊՏՈՍԸ՝ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՊՐՈՏԵԿՏՈՐԱՏ

1914 թ., երբ սկսվեց Առաջին աշխարհամարտը, Եգիպտոսը վերածվեց Անգլիայի համար կարևոր ռազմական նշանակություն ունեցող հենարանի: 1914 թ. օգոստոսի 5–ին եգիպտական կառավարությունը հրապարակեց մի հռչակագիր, ըստ որի՝ արգելվում էր որևէ հարաբերություններ պահպանել Գերմանիայի հետ, որն այնուհետև տարածվեց Ավստրո–Հունգարիայի և Օսմանյան կայսրության վրա: Հաջորդ օրը՝ օգոստոսի 6–ին, Եգիպտոսի վարչապետ Հուսեյն Ռուշդին հայտարարեց, որ «Եգիպտոսն այսուհետև չի կազմելու Օսմանյան կայսրության բաղկացուցիչ» մասը: Հասկանալի է, որ եգիպտական կառավարության այդ որոշումն ընդունվել էր Անգլիայի գիտությամբ և հավանությամբ: 1914 թ. նոյեմբերի 2–ին Եգիպտոսում անգլիական օկուպացիոն զորքերի հրամանատար գեներալ Ջոն Գրենվիլ Մաքսվելը Եգիպտոսում ռազմական դրություն մտցրեց: Այդ պահից ամբողջ իշխանությունը Եգիպտոսում անցավ նրա ձեռքը, և գեներալը հրապարակեց հռչակագիր Եգիպտոսը պաշտպանելու վերաբերյալ: Երկրում մտցվեց գրաքննություն, արգելվեցին զանգվածային հավաքները և ցույցերը, բոլորը պարտավոր էին ենթարկվել բրիտանական ռազմական իշխանություններին:

Այդ բոլորին հաջորդեց անգլիական կառավարության հաջորդ՝ արմատական որոշումը: 1914 թ. դեկտեմբերի 18–ին նա հայտարարեց Եգիպտոսի վրա Անգլիայի պրոտեկտորատի հաստատման մասին: Բրիտանական արտաքին գործերի նախարարության պաշտոնական հայտարարության մեջ ասված էր, որ Եգիպտոսն անջատվում է Օսմանյան կայսրությունից, որի վրա հաստատվում է բրիտանական պրոտեկտորատ: Պրոտեկտորատի հաստատումն Անգլիայի կողմից կատարվեց միակողմանիորեն՝ առանց հանրաքվեի կամ եգիպտական կառավարության հետ խորհրդակցելու:

Պրոտեկտորատի հաստատումից հետո որոշ փոփոխություններ տեղի ունեցան Եգիպտոսի կառավարման համակարգում: Մտցվեց Եգիպտոսում անգլիական գլխավոր կոմիսարի պաշտոնը, որը համարվում էր բրիտանական ամենաբարձր

պաշտոնյան՝ օժտված ամենալայն լիազորություններով: Առաջին գլխավոր կոմիսար նշանակվեց գեներալ Մակ–Մահոնը: Վերացվեց Եգիպտոսի արտաքին գործերի նախարարությունը, ցրվեց Օրենսդիր ժողովը և այլն: 1914 թ. դեկտեմբերի 19–ին անգլիացիները գահընկեց արեցին խդիվ Աբբաս II Հիլմիին, որը թուրքական և գերմանական կողմնորոշում ուներ, և նրա փոխարեն գահ նստեցրին Հուսեյն Քամիլիին: Վերացվեց խդիվի տիտղոսը, և Հուսեյն Քամիլիին շնորհվեց սուլթանի տիտղոս:

Պրոտեկտորատի հաստատումը եգիպտացիներն ընդունեցին մեծ դժգոհությամբ: Օսմանյան տիրապետության դեմ պայքարող եգիպտական ազգային հայրենասիրական ուժերի և գործիչների համար հավասարապես անընդունելի էր նաև անգլիական պրոտեկտորատը, քանի որ նրանք պայքարում էին ոչ թե օսմանյան տիրապետությունն անգլիականով փոխարինելու, այլ Եգիպտոսի և արաբական երկրների ազատագրման համար: Հակաբրիտանական հուզումները կանխելու համար բրիտանական իշխանությունները ձերբակալեցին ազգային գործիչների մի մասին, մի մասն էլ արտաքսվեց Եգիպտոսից, արգելվեցին բոլոր տեսակի ժողովներն ու հավաքույթները, խստացվեց գրաքննությունը: Այդուհանդերձ, 1915 թ. փետրվարի 18–ին պրոտեկտորատի դեմ իրենց բողոքը հայտնեցին Կահիրեի իրավաբանական ուսումնարանի ուսանողները, այդ նույն թվականին եգիպտական հայրենասերները երկու անգամ մահափորձ կատարեցին սուլթան Հուսեյն Քամիլիի, վարչապետ Հուսեյն Ռուշդիի, վակուֆների նախարարի դեմ և այլն:

Շատ ծանր վիճակ ստեղծվեց եգիպտական տնտեսության և բնակչության համար: Անգլիան ամեն ինչ անում էր Եգիպտոսի տնտեսությունը հարմարեցնելու իր կարիքների բավարարմանը: Այն օգտագործեց Եգիպտոսի ոսկու պաշարները, շրջանառությունից հանվեցին ոսկյա ու արծաթյա դրամները, և գործածության մեջ դրվեցին արժեզրկված թղթադրամները, որը հանգեցրեց սննդամթերքի և այլ ապրանքների գների կտրուկ բարձրացմանը: Եգիպտական տնտեսությանը ծանր հարված հասցվեց ռազմական շինարարության, խրամատների, ճանապարհների, ամրությունների կառուցման համար եգիպտական բյուջեից կատարվող հատկացումները, ինչը կատարվում էր անգլիական իշխանությունների պարտադրանքով: Անգլիան ամեն ինչ անում էր պատերազմի ծանրությունը եգիպտացիների ուսերին զցելու համար: Այդ նպատակով բարձրացվեցին հարկերը: Անգլիական զինվորական իշխանությունները գյուղացիներից խլում էին հացը և գյուղատնտեսական այլ մթերքներ՝ Եգիպտոսում տեղակայված անգլիական 275–հազարանոց բանակի պարենային պահանջները բավարարելու համար: Պատերազմի տարիներին անգլիական իշխանությունները Եգիպտոսում ստեղծեցին այսպես կոչված աշխատանքային բանակ կամ կորպուս, որի շարքերում հաշվվում էր մոտ 1,5 մլն մարդ՝ ֆելլահներ, բեդվիններ, արհեստավորներ և բնակչության այլ չունևոր խավեր: Նրանք կատարում էին ամենադժվար աշխատանքները, և տասնյակ հազարավորներ մահանում էին՝ չդիմանալով տաժանակիր պայմաններին:

Այդ բոլորի հետ միասին հարկ է նշել, որ պատերազմի տարիներին ակամայից զգալի զարգացում ապրեց եգիպտական արդյունաբերությունը, ինչը պայմանա-

վորված էր նրանով, որ խիստ կրճատվեց արդյունաբերական ապրանքների ներմուծումը Եգիպտոս, զգալիորեն թուլացավ մրցակցության դաշտը, որը նպաստավոր պայմաններ ստեղծեց տեղական արդյունաբերության ընդլայնման համար: Հատկապես զարգացան կաշվի, կոշիկի, տեքստիլ, կարի, շաքարի, կահույքի և այլ ճյուղերը, բացվեցին նոր մանր և միջին ձեռնարկություններ, որոնք սպասարկում էին Եգիպտոսում գտնվող անգլիական զորքերի և տեղական բնակչության պահանջները: Դրա շնորհիվ ավելացավ արդյունաբերության ոլորտում զբաղված աշխատողների թիվը, որը պատերազմի ավարտին մոտենում էր կես միլիոնի:

Եգիպտացի գործարարներն աննախընթաց չափերով հարստացան: Պատերազմը հարստանալու համար հիանալի պայմաններ ստեղծեց նաև հողատերերի և վաճառականների համար, ծաղկում ապրեց «սև շուկան»: Այդ բոլորը տեղի էր ունենում եգիպտացիների հիմնական մասի զանգվածային աղքատացման պայմաններում:

Թեև պրոտեկտորատի հաստատումից հետո Եգիպտոսում ներքին դրությունը մնում էր լարված, և ուժեղանում էր դժգոհությունը անգլիացիների քաղաքականության դեմ, այդուհանդերձ, դա չվերածվեց հակաբրիտանական լայն շարժման: Անգլիացիները կարողանում էին հմտորեն վերահսկել դրությունը և կանխել հակաբրիտանական ելույթները: Թուլացել էր ազգայնական ուժերի գործունեությունը, նրա ղեկավարների և ակտիվիստների մի մասը ձերբակալված էր, իսկ մի մասն էլ՝ արտաքսված երկրից: Իր դերը խաղաց այն հանգամանքը, որ եգիպտական արդյունաբերողների, հողատերերի և վաճառականների այն խավերը, որոնք համագործակցում էին անգլիական իշխանությունների հետ և մեծ շահույթներ ստանում ու հարստություն կուտակում, շահագրգռված չէին հակաբրիտանական պայքարի մեջ:

Ինչ վերաբերում է բուն պատերազմական գործողություններին, ապա Եգիպտոսի տարածքը, բարեբախտաբար, միայն մասնակիորեն դարձավ պատերազմի թատերաբեմ: Թուրքական հրամանատարությունը և նրա գերմանացի խորհրդականները գլխավոր ուղղություններից մեկը համարեցին Սուեզի ջրանցքի և դրա գոտու գրավումը, որը նրանց համար ուներ ռազմավարական նշանակություն: Թուրքական զորքերը Եգիպտոսի վրա հարձակումը սկսեցին 1915 թ. հունվարի 10–ին Սինայի ճակատում: Թուրքերն այստեղ կենտրոնացրին ութ դիվիզիա, որոնք, Սինայի թերակղզով շարժվելով երկու կողմից՝ Ղազա–Ղանթարա և Մաան–Սուեզ գծով, նպատակ ունեին գրավել Սուեզի ջրանցքը և իրենց վերահսկողության տակ առնել այդ միջազգային կարևոր ջրային ուղին: Կտրելով մոտ 400 կմ տարածք Սինայի անապատով՝ թուրքական զորքերը տասնվեցերորդ օրը դուրս եկան Սուեզի ջրանցքի արևելյան ափ և փետրվարի 3–ին սկսեցին գրոհը: Թուրքական ութ դիվիզիաների դեմ կանգնած էր անգլիական 50 հազարի հասնող բանակը, որին օգնում էին Սուեզի ջրանցք մտած անգլիական և ֆրանսիական ռազմանավերը: Թուրքական բանակը հերթական անգամ խայտառակ պարտություն կրեց, և նրա մնացորդները նահանջելով վերադարձան Պաղեստին և Սիրիա:

Սակայն թուրքական բանակը, որն ամեն ինչում հետևում էր գերմանական ռազմական մասնագետների խորհուրդներին, չհրաժարվեց Սուեզը գրավելու մտքից և

գերմանացի մասնագետների խորհրդով նոր մարտավարություն ընտրեց: Կանոնավոր բանակի փոխարեն նրանք գործողության մեջ դրեցին թուրքական IV բանակում հավաքագրված արաբ բեդվիններին, որոնց առջև խնդիր էր դրված անսպասելի հարձակումներ գործել անգլիական դիրքերի վրա: Ռազմական արվեստի տեսակետից, մանավանդ արդյունքների հասնելու առումով դա խիստ կասկածելի մարտավարություն էր: Եվ բեդվինները, որոնք ընդհանրապես չեն սիրում և չեն ենթարկվում կարգապահության, համբերություն չունեն երկարատև ռազմական վարժանքների համար, առանձնապես մեծ անհանգստություն չպատճառեցին անգլիական զորքերին, մանավանդ որ նրանք եռանդուն ջանքեր չէին դրսևորում մարտի դաշտում: Զարդարացան նաև թուրքերի հույսերը, թե արաբ բեդվիններն աջակցություն կգտնեն Եգիպտոսի արաբների կողմից: Արաբական միջավայրն ակնհայտորեն իր թշնամանքը դրսևորեց թուրքերի նկատմամբ, և վերջիններս հարկադրված էին խոստովանել, որ հիմնազուրկ էր արաբների վրա հենվելու և նրանց օգտագործելու իրենց քաղաքականությունը:

Անգլիացիները ոչ միայն կարողացան հետ մղել բեդվինների հարձակումները, այլև օգտագործելով հարաբերական դադարը՝ ավելի ամրացրին իրենց դիրքերը Սուեզի գոտում: Բավական է նշել, որ 1916 թ. այստեղ անգլիական զորքերի թիվն արդեն հասնում էր 275 հազարի: Նրանց հետ միասին Սուեզի ջրանցքի գոտում կենտրոնացված էին նաև ավստրալական, նորզելանդական և հնդկական զորամասեր:

1916 թ. թուրքական զորքերը նոր հարձակում սկսեցին Սուեզի ջրանցքի գոտում: Հաշվի առնելով նախորդ հարձակումների դառը փորձը և թուրքական հրամանատարների կատարյալ ապաշնորհությունը՝ այս անգամ թուրքական զորքերի ռազմական գործողություններն անմիջապես ղեկավարում էին թուրքական IV բանակի շտաբի պետ գնդապետ Կրես ֆոն Կրեսենշտայնը և նրա գերմանացի սպաները: Բայց դա ևս չօգնեց թուրքերին, և նրանք ծանր պարտություն կրեցին: Թուրքերի պարտությունը կատարյալ էր նաև ծովային մարտում, և նրանք ստիպված էին հրաժեշտ տալ Սուեզի ջրանցքը և նրա շրջակա գոտին գրավելու մտքին:

Թուրք–գերմանական արշավանքը ողբալի հետևանքներ ունեցավ ոչ միայն ռազմական առումով, այլև քաղաքական տեսակետից: Այն համոզիչ կերպով ցույց տվեց, որ Թուրքիան չի կարող հենվել արաբների վրա՝ վերջիններիս հակաթուրքական զգացմունքների և կողմնորոշման պատճառներով:

1916–1918 թթ. փոփոխություններ տեղի ունեցան Եգիպտոսի ղեկավարության մեջ: 1916 թ. Մակ–Մահոնի փոխարեն Եգիպտոսում Անգլիայի գլխավոր կոմիսար նշանակվեց Ռեջինալդ Ուինգեյթը, որը մինչ այդ Սուդանի կառավարիչն էր: 1917 թ. մահացավ սուլթան Հուսեյն Քամիլը: Անգլիացիները գահն առաջարկեցին նրա որդուն՝ Քամալ ալ–Դին Հուսեյնին, սակայն վերջինս հրաժարվեց զբաղեցնելուց սուլթանական գահը, որը բացատրվում է նրա հակաբրիտանական զգացմունքներով: Նա չէր ցանկանում դառնալ անգլիական գաղութարարների խամաճիկը: Դրանից հետո անգլիացիների ընտրությունն ընկավ իշխան Ահմադ Ֆուադի վրա, որը Մու-

համմեդ Ալիի թոռը և խդիվ Իսմայիլի կրտսեր որդին էր: Նա 1917 թ. հոկտեմբերի 9–ին դարձավ Եգիպտոսի նոր սուլթանը:

Եգիպտոսը պատերազմի ավարտին շարունակում էր մնալ անգլիական պրոտեկտորատ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԻՐԱՔԸ XIX ԴԱՐՈՒՄ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ

1. ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐՈՒՄ, ԴԱՈՒԴ ՓԱՇԱՆ ԵՎ ԻՐԱՔԻ ՎԵՐԱՆՎԱՆՈՒՄԸ «ԲԱԲԵԼՈՆԻ ԵՐՋԱՆԻԿ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ»

Քննարկվող ժամանակաշրջանում Իրաքի ներքաղաքական կյանքին բնորոշ էր անկայունությունը, որը հաճախ վերածվում էր քաոսային և խառնաշփոթ իրադրության, անհնազանդությունն իշխանություններին ու միջցեղային բախումները: Նման իրադրությունը բացասաբար էր ներգործում Իրաքի, դրա բնակչության սոցիալ–տնտեսական դրության վրա և լարված հարաբերություններ ստեղծում սոցիալական տարբեր խավերի միջև:

Նորմալ չէին հարաբերությունները նաև Իրաքի տեղական կառավարիչների, մասնավորապես Բաղդադի փաշաների և օսմանյան սուլթանների միջև: Իրաքում դեռևս XVIII դարի սկզբներին հաստատվել էր Հասան փաշայի տիրապետությունը: Նա Բաղդադի փաշան էր, որին հասել էր զանազան հնարքներով, ինչպես ընդունված էր Օսմանյան կայսրության մեջ, կաշառելով և գնելով սուլթանի բարձրաստիճան պաշտոնյաներին: Այնուհետև նա իր իշխանությունը տարածեց Իրաքի հարավի՝ Բասրայի և հյուսիսի շրջանների վրա, ներառյալ քրդական շրջանները: Հասան փաշան, հասկանալի է, իր պաշտոնը ստացել էր օսմանյան սուլթանից, որը նրա սյուզերենն էր, իսկ նա՝ նրա վասալը, բայց դա ձևական բնույթ ուներ: Հասան փաշան Իրաքը կառավարում էր ըստ իր հայեցողության և հաշվի չէր նստում Կոստանդնուպոլսի հետ: Իրաքում հաստատվել էր Հասան փաշայի յուրահատուկ դինաստիան, որի ներկայացուցիչները երկիրը կառավարեցին մինչև 1780 թ.:

1780 թ. մամլուք կյուլեմեններն իրենց առաջնորդի՝ Բույուկ Սուլեյմանի գլխավորությամբ կատարեցին պետական հեղաշրջում, տապալեցին Հասան փաշայի դինաստիան և զավթեցին իշխանությունը: Բույուկ Սուլեյմանը դարձավ Բաղդադի փաշան և երկրում հաստատեց իր դինաստիան: Կյուլեմենների տիրապետությունը տևեց մոտ կես դար՝ 1780 թ. մինչև 1831 թ.: Այդ շրջանում Իրաքը մի ինքնավար պետություն էր հիշեցնում, և օսմանյան սուլթանին այդպես էլ չհաջողվեց իրեն ենթարկել կյուլեմեններին: Իսկ վերջիններիս էլ չհաջողվեց Իրաքում հաստատել կայուն իրադրություն, թեև քիչ ջանքեր չգործադրեցին սանձահարելու ցեղերին և ցեղային միություններին, առանձին ավատատեր հողատերերի, որոնք մշտապես իշխանություններին անտեսելու միտումներ էին դրսևորում: Դրան պետք է ավելացնել միջկլանային պայքարը կյուլեմենների տարբեր խմբավորումների միջև ազդեցության

և իշխանության համար: 1802 թ. իր բնական մահով մահացավ Բույուկ Սուլեյմանը, որ հազվադեպ բան էր մամլուքների մեջ: Նրան որպես Բաղդադի փաշա փոխարինեց Հաֆիզ Ալին նույն դինաստիայից: Նա կառավարեց ընդամենը հինգ տարի և սպանվեց 1807 թ., և Բաղդադի փաշա դարձավ Քուչուկ Սուլեյմանը, որը նշանակում էր, որ նա դարձավ նաև Իրաքի կառավարիչ: Սակայն նա կառավարեց ընդամենը երեք տարի և տապալվեց 1810 թ.: 1810–1814 թթ. Իրաքի կառավարիչն էր Աբդալլահը, իսկ 1812–1817 թթ.՝ Բույուկ Սուլեյմանի որդին՝ Սաիդ փաշան: Ինչպես տեսնում ենք, 15 տարվա ընթացքում Բաղդադի փաշա և Իրաքի կառավարիչ էր եղել հինգ մարդ, որոնցից միայն Բույուկ Սուլեյմանն էր մահացել իր անկողնում:

Յուրաքանչյուր փաշայի տապալումը կամ սպանումը խոր ցնցում էր առաջացնում Իրաքում, որն իր հետ բերում էր փոփոխություններ կառավարող ընտրանիի շարքերում, նոր սպանություններ և հալածանքներ քաղաքական հակառակորդների նկատմամբ:

Միայն մի բան էր կայուն՝ Բաղդադի փաշաների վերաբերմունքն օսմանյան սուլթանների նկատմամբ: Բաղդադի փաշաները շատ նախանձախնդիր էին իրենց իրավունքները և արտոնությունները պահպանելու հարցում և այդպես էլ չթողեցին, որ Բարձր դուռը իրական իշխանություն կամ շոշափելի ազդեցություն ունենա Իրաքում:

Իրաքի ներքաղաքական կյանքի վրա խիստ բացասական ազդեցություն ունեցան վահաբիները, որոնք, ինչպես նշվել է, մեծ հավակնություն ունեին արաբական երկրները միավորելու իրենց ուսմունքի և դրոշի ներքո և ստեղծել միասնական արաբական թագավորություն: Վահաբիներն իրենց դիրքերն Արաբիայում ամրապնդելուց հետո դարձան վերին աստիճանի ագրեսիվ և իրենց ծրագրերն իրականացնելու համար նախապատվությունը տալիս էին ռազմական միջամտությանը, անգամ բացահայտ պատերազմական գործողություններին՝ ուղղված հարևան արաբական երկրների դեմ:

Վահաբիները 1801 թ. ներխուժեցին Իրաք, մտան շիաների հոգևոր–կրոնական կենտրոն Քերբելա և մեծ ավերածություններ գործեցին այնտեղ: Վահաբիները խոր թշնամանքով և արհամարհանքով էին վերաբերվում շիաներին, ներխուժում նրանց մզկիթները, թալանում դարերի ընթացքում կուտակված գանձերը, սրբապղծում շիական մասունքները, վիրավորում նրանց կրոնական զգացմունքները: Վահաբիների այդ քայլերը շիաների խոր ատելությունը հարուցեցին նրանց նկատմամբ:

Վահաբիները թեև չամրապնդվեցին Քերբելայում, այլ կողոպուտի ենթարկելով հեռացան, այդուհանդերձ, չդադարեցրին ասպատակել Իրաքը: 1808 թ. նրանց զորքերը, որոնց թիվը հասնում էր 60 հազարի, կրկին հայտնվեցին Իրաքում՝ նպատակ ունենալով գրավել Բաղդադը: Բաղդադի պաշտպանությունը ղեկավարում էր Քուչուկ Սուլեյմանը, որը կարողացավ հետ մղել վահաբական զորքերի հարձակումը, և վերջիններս ստիպված էին դատարկաձեռն հեռանալ Իրաքից:

Իրաքը նվաճելու վահաբիների բոլոր փորձերն ավարտվեցին անհաջողությամբ: Նրանք Իրաքում բարենպաստ միջավայր չգտան: Արաբիայից եկած վահաբիներին,

նրանց շարքերում միավորված բեդվիններին և ֆելլահներին իրաքցիները դիմավորում էին որպես զավթիչների, որոնք եկել էին տիրանալու իրենց հողերին և արոտավայրերին, իրենց ունեցվածքին: Իսկ այդ հարցում ընդհանրապես արաբական, այդ թվում նաև իրաքյան ցեղերը և ցեղային միությունները շատ զգայուն էին:

Իրաքը 1817 թվականը դիմավորեց նոր հեղաշրջումով, որն իրագործեց կյուլեմեն Դաուդը, որը Բույուկ Սուլեյմանի մամլուքն էր: Նա կարողացել էր դառնալ նրա օգնական–քարտուղարը և, ամուսնանալով նրա դստեր հետ, ամրապնդել իր դիրքերն իշխանության համակարգում: Սակայն 1802 թ.՝ Բույուկ Սուլեյմանի մահից հետո, Դաուդը կորցրեց իր դիրքերը և մղվեց հետին պլան: Բայց լինելով խորամանկ և հեռատես անձնավորություն՝ Դաուդը կարողացավ իր շուրջը համախմբել իր համախոհներին՝ սպասելով հարմար պահի՝ կրկին իշխանության բարձունքներում հայտնվելու համար: Զգալով, որ ինքն արդեն բավականին ամրապնդել է իր դիրքերը, Դաուդը 1817 թ. տապալեց Բաղդադի փաշա, Բույուկ Սուլեյմանի որդուն՝ Սաիդ փաշային, որը նրա աներորդին էր, գլխատեց նրան և Բաղդադում ու Իրաքում ամբողջ իշխանությունը կենտրոնացրեց իր ձեռքում: Նախկին կյուլեմեն մամլուք Դաուդը դարձավ Դաուդ փաշա և երկիրը կառավարեց 14 տարի՝ մինչև 1831 թ.:

Դաուդ փաշայի կառավարման տարիները զգալի հետք են թողել Իրաքի պատմության մեջ՝ որպես Իրաքը զարգացած երկրի վերածելու մի փորձաշրջան: Նա, նկատի ունենալով Մուհամմեդ Ալիի օրինակը Եգիպտոսում, ձգտում էր համանման բարեփոխումներ կատարելու նաև Իրաքում, թեև չկարողացավ այնպիսի հաջողությունների հասնել, ինչպես Եգիպտոսի տիրակալը: Սակայն Բարձր դռան հետ հարաբերությունների հարցում նա հետ չմնաց Մուհամմեդ Ալիից: Դաուդ փաշան 14 տարի Իրաքը կառավարեց ինքնուրույն՝ բնավ հաշվետու չլինելով Կոստանդնուպոլսին, թեև օսմանյան սուլթանը ձևականորեն համարվում էր նրա սյուզերենը:

Դաուդ փաշան իր գլխավոր խնդիրը համարեց վերջ տալ խոշոր հողատերերի և ցեղային միությունների անջատողական և կենտրոնախույս ձգտումներին, նրանց բոլորին ենթարկել իրեն և ստեղծել կենտրոնացված ուժեղ համակարգ և կառավարման ապարատ: Այդ խնդիրը նա իրագործում էր ամենադաժան ձևերով՝ արյան մեջ խեղդելով անհնազանդության ամեն մի դրսևորում, հատկապես ցեղերի ապստամբությունները ճնշելու հարցերում: Նա առաջին անգամ կիրառեց անհնազանդ շեյխերին իշխանությունից զրկելու և նրանց փոխարեն իրեն հավատարիմ մարդկանց ցեղապետեր նշանակելու քաղաքականությունը: Այդ քաղաքականությունը նա կիրառում էր այնպիսի ազդեցիկ ցեղային միությունների նկատմամբ, ինչպես մունթաֆիկ, շամմար, անազե և այլ արաբական ցեղային միություններն էին: Եվ Դաուդ փաշային իրոք հաջողվեց ստեղծել կենտրոնացված կառավարման համակարգ և սանձահարել ցեղապետերի և խոշոր ավատատերերի անհնազանդությունն ու անջատողական նկրտումները:

Ստեղծելով ուժեղ կառավարման կենտրոնացված համակարգ և ամրապնդելով իր իշխանությունն ամբողջ Իրաքում՝ Դաուդ փաշան այնուհետև բացահայտ մար-

տահրավեր նետեց օսմանյան սուլթանին: Նա հրաժարվեց հարկ վճարել իր սյուզերենին՝ օսմանյան սուլթանին, որով ավելի ամրապնդեց իր անկախ կարգավիճակը:

Դաուդ փաշայի այդ անսպասելի և համարձակ քայլին հետևեց նրա մեկ այլ քայլը, որը ապշեցրեց բոլորին: Դա Իրաքի անվանափոխության հարցն էր: Դաուդ փաշան որոշում ընդունեց հրաժարվել «Իրաք» հորջորջումից և երկրին «շնորհեց» նոր անվանում՝ «Բաբելոնի երջանիկ թագավորություն»: Դա շատ համարձակ և հավակնոտ, ոչնչով չհիմնավորված քայլ էր: Հետամնաց Իրաքում, ցեղերի առկայության և միջցեղային անընդմեջ բախումների պայմաններում, գոյություն ունեցող հողային հարաբերությունների շրջանակներում, երբ գյուղական ու քաղաքային բնակչության ճնշող մեծամասնությունը տառապում էր շահագործումից և աղքատությունից, պետությունը «երջանիկ պետություն» հռչակելն ուղղակի քաղաքական արկածախնդրություն էր՝ դատապարտված ձախողման: Եվ այդպես էլ եղավ: Նրան չփրկեց և չէր էլ կարող փրկել երբեմնի հզոր Բաբելոնին վկայակոչելը:

Դաուդ փաշայի իշխանության տարիներին փորձեր արվեցին կիրառելու մի շարք բարեփոխումներ, որոնք նպատակաուղղված էին Իրաքի կախվածությունը ոչ միայն Կոստանդնուպոլսից, այլև անգլիական Արևելահնդկական ընկերությունից (ԱՀԸ) թուլացնելուն: Անգլիական այդ ընկերությունը մի հզոր կառույց էր, որն ուներ վիթխարի ֆինանսական հնարավորություններ, սեփական նավատորմ ու բանակ և այլ լծակներ: Այդ ընկերությունը բավականին ուժեղ դիրքեր ուներ նաև Իրաքում և օգտվում էր քաղաքական ու տնտեսական մի շարք արտոնություններից: Դաուդ փաշան ԱՀԸ–ին մարտահրավեր նետեց կապիտուլյացիաների հարցում: Նա 1821 թ. ընդունեց օրենք, որով ԱՀԸ–ն և նրա բոլոր գործակալները զրկվում էին բոլոր արտոնություններից և դրվում այնպիսի պայմանների մեջ, ինչպես իրաքցի վաճառականները: Այդ օրենքը մեծ գոհունակությամբ ընդունեցին իրաքցի վաճառականները, քանի որ դա նպաստավոր պայմաններ էր ստեղծում մրցակցության ասպարեզում և ամրապնդում նրանց դիրքերը: Իսկ ԱՀԸ–ն սվիններով դիմավորեց փաշայի այդ օրենքը և անցավ հարձակման: Նա իր նավերը մտցրեց իրաքյան գետերը հարավից՝ Պարսից ծոցի կողմից՝ սպառնալով Բասրային: Ի պատասխան այդ քայլի՝ Դաուդ փաշան նոր հարված հասցրեց ԱՀԸ–ին. նա բռնագրավեց ընկերությանը պատկանող և Իրաքի տարածքում գտնվող ապրանքները, շրջափակման մեջ վերցրեց ընկերության նստավայրը, փակեց նրան պատկանող բոլոր գրասենյակները և հիմնարկները, ապա նաև Իրաքից արտաքսեց ԱՀԸ–ի բոլոր աշխատակիցներին: Թվում էր, թե Դաուդ փաշան շատ մոտ էր հաղթանակին, բայց այդպես չեղավ: ԱՀԸ–ի ձեռնարկած մի շարք քայլերի արդյունքում, որոնց մեջ առաջնային տեղ էին գրավում ռազմական սպառնալիքները, Դաուդ փաշան ստիպված էր նահանջել և անգլիական այդ ընկերության բոլոր իրավունքները վերականգնել:

Այդ անհաջողությունը չվհատեցրեց Դաուդ փաշային, և նա շարունակեց բարեփոխումների իր քաղաքականությունը: Մուհամմեդ Ալիի օրինակով Իրաքում մտցվեցին պետական մենաշնորհներ արտադրության մի շարք բնագավառներում և վաճառականության ոլորտում, մասնավորապես ցորենի, գարու, արմավի մշակ-

ման և արտահանման մարզերում: Դարձյալ Մուհամմեդ Ալիի օրինակին հետևելով՝ Դաուդը սկսեց խրախուսել բամբակի մշակումը և այլն:

Դաուդ փաշայի առջև կանգնած էր մեկ այլ՝ բավականին բարդ խնդիր՝ Հյուսիսային Իրաքում իր իշխանությունն ամրապնդելու խնդիրը: Նրան հաջողվել էր, ինչպես նշվեց, իր իշխանությունն ամրապնդել Կենտրոնական և Հարավային Իրաքում: Սակայն իր տիրապետությունը կատարյալ դարձնելու և կառավարման ուղղաձիգ համակարգն ամբողջ Իրաքում հաստատելու հարցը դեռևս մնում էր չլուծված Հյուսիսային Իրաքում, հատկապես Քրդստանում: Այդ խնդիրը, որն ինքնին բարդ խնդիր էր, ավելի սուր բնույթ էր կրում այն պատճառով, որ քրդական բեկերի թիկունքում կանգնած էր Պարսկաստանը, որի օգնությամբ նրանք հակազդում էին կենտրոնացված ուժեղ կառավարման համակարգ հաստատելու Դաուդ փաշայի քաղաքականությանը: Պարսկաստանը, որը տևական ճգնաժամից դուրս էր եկել և XIX դարի սկզբներին բավականին հզորացել էր, Իրաքը նվաճելու լուրջ նպատակներ ուներ: Այդ գործում որպես օժանդակ ուժ կարող էին հանդես գալ քրդերը: Պարսկաստանի Ֆաթհ Ալի շահը մեծ խոստումների գնով կարողացավ իր կողմը գրավել քրդական ցեղային ավագանուն և բեկերին, որոնք իրենց հայտարարեցին պարսկական շահի վասալներ: Պարսկական շահն ինքն էր Իրաքի քրդաբնակ վայրերում նշանակում տեղական կառավարիչներ և նրանցից հարկեր հավաքում: Ստեղծվել էր տարօրինակ վիճակ: Իրաքը ձևական–իրավական առումով մեկ այլ պետության՝ Օսմանյան կայսրության մասն էր, բայց մեկ այլ պետություն՝ Պարսկաստանը, ինքն էր կառավարիչներ նշանակում և հարկեր հավաքում իրեն չպատկանող երկրի մի մասում, որը միջազգային իրավունքի կոպիտ խախտում էր: Եվ Դաուդ փաշան որոշեց իր վերահսկողությունը հաստատել Հյուսիսային Իրաքի քրդաբնակ շրջանների վրա, որոնք հիմնականում մտնում էին Մոսուլի վիլայեթի մեջ:

Պարսկական շահը 1821 թ. քրդական բեկերից մեկին նշանակեց Քրդստանի կառավարիչ, որը լցրեց Դաուդ փաշայի համբերության բաժակը: Մի մեծ զորաբանակի գլուխ անցած՝ նա շարժվեց դեպի Քրդստան՝ նպատակ ունենալով տապալելու պարսկական շահի նշանակած քուրդ կառավարչին և իր իշխանությունը հաստատելու Հյուսիսային Իրաքի այդ տարածքում: Նրա այդ քայլը պաշտպանություն գտավ օսմանյան սուլթան Մահմուդ II–ի կողմից, քանի որ հաղթանակի դեպքում ձևականորեն վերականգնվելու էր օսմանյան տիրապետությունն Իրաքյան Քրդստանի վրա:

Դաուդ փաշայի բանակը, որը կռվում էր պարսկական և քրդական միացյալ ուժերի դեմ, պարտություն կրեց, և Դաուդ փաշան իր վրեժը լուծեց Իրաքում գտնվող պարսիկներից: Նրանք ենթարկվեցին զանազան բռնությունների, շատերը ձերբակալվեցին և զնդանները նետվեցին, իսկ շատերն էլ, որոնք ապաստան էին գտել շիական մզկիթներում, սպանվեցին: Փաշան բռնագրավեց պարսիկներին և շիա հոգևորականությանը Նաջաֆում և Քերբելայում պատկանող գույքն ու հարստությունը:

Ահա այս հողի վրա 1821 թ. սկսվեց թուրք–պարսկական հերթական պատերազմը, որը 1823 թ. ավարտվեց պարսկական կողմի հաղթանակով: Պարսիկները գրավեցին Մոսուլը, Սուլեյմանիան և Քիրքուքը: Սակայն նրանք գրավյալ տարածքներում երկար ժամանակ չմնացին՝ վրա հասած համաճարակը նրանց ստիպեց հեռանալ Իրաքից, և օսմանյան տիրապետությունը ձևականորեն վերահաստատվեց Հյուսիսային Իրաքում:

Պարսկաստանի դեմ պատերազմից Դաուդ փաշան մի կարևոր դաս քաղեց: Նա հասկացավ, որ հաղթելու համար պետք է հիմնովին վերակառուցել բանակը ըստ եվրոպական սկզբունքների և զինել արդիական զենքով: Սակայն փաշան գիտակցում էր, որ իր սեփական ուժերով նա ի վիճակի չէր լուծելու այդ խնդիրը, և դրա համար անհրաժեշտ էր որևէ եվրոպական երկրի օգնությունը: Նրա ընտրությունը կանգ առավ անգլիական զինվորական մասնագետների վրա, և Անգլիան մեծ ուրախությամբ ընդառաջ գնաց Դաուդ փաշայի ցանկություններին, քանի որ դա հանգեցնելու էր նրա դիրքերի ամրապնդմանն Իրաքում: Անգլիական զինվորական հրահանգիչների օգնությամբ Դաուդ փաշային հաջողվեց բավականին կարճ ժամանակամիջոցում ստեղծել կանոնավոր բանակ, որը կառուցված էր ըստ անգլո–հնդկական մոդելի, զինել հրետանիով, Բաղդադում կառուցել ժամանակակից զինանոց և այլն: Ստեղծվեց նաև գետային և ծովային առևտրային նավատորմ:

Այդ բոլորի շնորհիվ Դաուդ փաշան 1820–ական թվականների վերջերին իրեն ավելի ուժեղ էր զգում, քան իշխանության գալու առաջին տարիներին: Դա միաժամանակ հնարավորություն տվեց նրան ավելի անկախ պահելու իրեն օսմանյան սուլթանի հետ փոխհարաբերություններում, մանավանդ 1827–1829 թթ. ռուս–թուրքական պատերազմում վերջինիս կրած ծանր պարտությունից հետո:

2. ԿՅՈՒԼԵՄԵՆՆԵՐԻ ԴԻՆԱՍՏԻԱՅԻ ՏԱՊԱԼՈՒՄԸ: ԻՐԱՔԸ ԽՌՈՎԱՀՈՒՅՁ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ (1830–1840–ԱԿԱՆ ԹԹ.)

Ռուս–թուրքական պատերազմում պարտություն կրած Թուրքիան պարտավորվեց մեծ ռազմատուգանք վճարել Ռուսաստանին: Բայց սուլթան Մահմուդ II–ը այդ հնարավորությունը չուներ, քանի որ նրա զանձարանը դատարկ էր, և նա որոշեց ռազմատուգանքի ամբողջ ծանրությունը դնել Օսմանյան կայսրության մեջ մտնող տարբեր երկրամասերի վրա՝ պահանջելով նրանց փաշաներից և կառավարիչներից կատարել համապատասխան վճարումներ: Նման պարտավորություն դրվեց նաև Իրաքի կառավարիչ Դաուդ փաշայի և Եգիպտոսի կառավարիչ Մուհամմեդ Ալիի վրա: Երկուսն էլ հրաժարվեցին ենթարկվելուց սուլթանի պահանջին և ռազմատուգանք վճարելուց, որը կսնանկացներ և՛ Իրաքը, և՛ Եգիպտոսը:

Դաուդ փաշան այդ հարցում այնքան հաստատակամ էր, որ որոշեց գնալ մինչև վերջ և ոչ մի զիջում չանել: Եվ երբ սուլթանի ներակայացուցիչը եկավ Բաղդադ Իրաքում սուլթանի հրամանը ռազմատուգանքի վերաբերյալ կատարելու համար, Դաուդ փաշան ոչ միայն նրան չընդունեց, այլև նրա հրամանով նա սպանվեց: Դա մեծ վիրավորանք էր, որ Իրաքի կառավարիչը հասցրեց փադիշահին, և Կոստանդ-

նուպոլիսը որոշեց, որ Դաուդ փաշան անցել է բոլոր սահմանները, և նրան այլևս ներել չի կարելի: Մահմուդ II–ը Դաուդ փաշային մեղադրեց իր տիրակալին չենթարկվելու մեջ, նրան հայտարարեց խռովարար և պատրաստվեց պատերազմական գործողությունների նրա դեմ, զրկելու նրան իշխանությունից և վերականգնելու իր իրական իշխանությունը Իրաքում: Բայց թուլացած Բարձր դուռը որոշեց ինքը չմասնակցել պատերազմական գործողություններին և դա հանձնարարեց Հալեպի փաշա Ալի Ռիզային, որը գործելու էր նրա անունից: Օսմանյան կայսրության մեջ հաճախ էր կիրառվում այդ ձևը, երբ որևէ անհնազանդ կուսակալի պատժելը հանձնարարվում էր մեկ այլ փաշայի կամ կուսակալի:

Հալեպի փաշա Ալի Ռիզան մեծ պատրաստակամությամբ հանձն առավ սուլթանի հրամանի կատարումը և պատերազմական գործողություններ սկսել Իրաքի դեմ: Դաուդ փաշային հաղթելու դեպքում նա դառնալու էր, ինչպես նրան խոստացել էր Մահմուդ II–ը, Բաղդադի փաշան, որը նշանակում էր, որ նա ինքնաբերաբար դառնալու էր նաև ամբողջ Իրաքի կառավարիչը:

Ալի Ռիզան, իր բազմաքանակ զորքի գլուխն անցած, շարժվեց Իրաքի ուղղությամբ Դաուդին տապալելու և պատժելու համար: Դաուդ փաշան իր հերթին նույնպես պատրաստ էր պատերազմելու և Ալի Ռիզայի զորքերի դեմ հանեց իր բավականին հզոր կանոնավոր բանակը, որն ավելի ուժեղ և ավելի լավ էր պատրաստված, քան Հալեպի փաշայի զորքերը: Չմոռանանք, որ Դաուդ փաշայի բանակն անգլիական ռազմական մասնագետների կողմից պատրաստված բանակն էր: Դաուդ փաշայի տրամադրության տակ կար նաև 20–հազարանոց ոչ կանոնավոր բանակ՝ կազմված հեծելազորից և հետևակից, և 50 հազարի հասնող աշխարհազորայիններ:

Երկու կողմերն էլ հավատացած էին իրենց հաղթանակի մեջ: Բայց նրանց միջև այդպես էլ ճակատամարտ տեղի չունեցավ: Չկայացած «պատերազմի» ելքը տնօրինեց բնությունը: 1830 թ. Իրաքում տեղի ունեցավ մեծ ջրհեղեղ, որը հեղեղեց Իրաքի դաշտերը՝ անհնար դարձնելով զորքերի, հատկապես հեծելազորի և հրետանու տեղաշարժերը: Ջրհեղեղն ուղեկցվեց համաճարակով և զանգվածային տենդով, իսկ 1831 թ. Իրաքի բանակին վերջնական հարվածը հասցրեց ժանտախտը: Իրաքի բանակը դադարեց գոյութուն ունենալուց:

Զուգահեռաբար մեծ կորուստներ ունեցավ քաղաքացիական բնակչությունը: Երկիրը դատարկվեց: Բաղդադի 150 հազար բնակչությունից ողջ մնաց միայն 20 հազարը, պակաս չէին նաև Բասրայի կորուստները: Երբ սկսվեց ժանտախտը, Բասրայի մութասալիմի հրամանով փակվեցին քաղաքի դարպասները՝ բնակչության գլխովին փախուստը կանխարգելելու համար: Այդ «հնարամիտ» քայլի պատճառով ժանտախտը հնձեց քաղաքում մնացածներին և 80 հազար բնակիչներից կենդանի մնաց ընդամենը 5 հազար մարդ: Շատ էին նաև այն քաղաքները, որոնց բնակիչները բոլորը ժանտախտի բաժին դարձան, ինչպես Հիլլայի բնակչությունը, որի 10 հազար բնակիչներից ողջ մնացին միայն մի քանի հոգի:

Եվ երբ վերացավ ժանտախտը, Դաուդ փաշան այլևս բանակ չուներ: 1831 թ. սեպտեմբերին Ալի Ռիզան, որ հեռու էր մնացել այդ համաճարակներից և պահպա-

նել իր բանակը, մտավ Բաղդադ, գահընկեց արեց Դաուդ փաշային, ձերբակալեց նրան և ուղարկեց մայրաքաղաքաղ սուլթան Մահմուդ II–ին՝ որպես ընծա:

Դաուդ փաշայի անկումով ավարտվեց Իրաքում մամլուք–կյուլեմենների կառավարման դարաշրջանը, և Բարձր դուռն ամրապնդեց իր տիրապետությունն Իրաքում: Դրանից հետո Բաղդադի փաշային նշանակում էր միայն և միայն օսմանյան սուլթանը: Նա դադարեց ինքնիշխան կառավարիչ լինելուց և վերածվեց օսմանյան սովորական պաշտոնյայի: Դրանով ավարտվեց նաև Իրաքի հարաբերական ինքնուրույնության ժամանակաշրջանը: Իսկ ժանտախտից ամայացած և մարդաթափ եղած «Բաբելոնի երջանիկ թագավորությունից» պատմության մեջ մնաց միայն դառը հուշ:

Ալի Ռիզան շատ ծանր ժառանգություն ստացավ: Պատերազմի դուրս գալով Դաուդ փաշայի դեմ՝ նա հույս ուներ, որ կստանա մի հարուստ երկիր: Դրա փոխարեն նրան բաժին ընկավ մի ամայացած և քայքայված երկիր: Եվ նա մտորում էր, թե արդյոք արժեր դրա համար հրաժարվել Հալեպի փաշայությունից, մանավանդ որ Բաղդադի փաշան այլևս նախկին լիազորություններն ունեցող և համարյա լրիվ անկախ Իրաքի կառավարիչը չէր, այլ սուլթանի կողմից նշանակվող և նրան ենթակա մի պաշտոնյա: Դաուդ փաշան ստեղծել էր ուժեղ և կենտրոնացված կառավարման համակարգ, որը սանձած էր պահում ցեղերին և հողատերերին: Նրան տապալելուց հետո դրությունը կտրուկ փոխվեց: Կրկին գլուխ բարձրացրին ցեղերը, սկսվեցին միջցեղային բախումները, և վրա հասան խառը ժամանակները: Եթե դրան ավելացնենք ջրհեղեղից տուժած դաշտերն ու այգիները, ժանտախտից ամայացած քաղաքներն ու գյուղերը, ապա ծանր վիճակում հայտնված Իրաքի իրական պատկերն ավելի կատարյալ կդառնա:

Առանձնապես մեծ վտանգ էին ներկայացնում միջցեղային հակասությունները և բախումները: Իրաքում գտնվող ցեղերից ամենաազդեցիկներն էին մունթաֆիկ, շամմար, անազա հզոր ցեղային միությունները, ինչպես նաև զուբեյրը և այլ ցեղեր: Նրանք ոչ միայն միմյանց դեմ էին պայքարում, այլև չէին ցանկանում ենթարկվել Բաղդադին և նրա փաշային, իսկ Ալի Ռիզան այնքան ուժեղ չէր, որ նրանց ստիպեր իրեն ենթարկվել: Եվ նա դիմեց հին ու փորձված մեթոդին՝ ցեղերին և ցեղային միություններին լարել միմյանց դեմ և նրանց ձեռքերով լուծել իր հարցերը:

Ալի Ռիզան սկզբում դաշինքի մեջ մտավ Ջերբի շամմարների հետ, որն անմիջապես առաջացրեց նրանց ոխերիմ հակառակորդ մունթաֆիկ ցեղախմբի դժգոհությունը, որն ի վերջո վերածվեց ապստամբության: Ալի Ռիզային հաջողվեց գժտություն մտցնել մունթաֆիկի շարքերում և նրա առաջնորդ Աջիլի դեմ հանել նրա եղբորը, որը դեռևս ժանտախտի բռնկման ժամանակ Բաղդադից փախել և ապաստան էր գտել Ալի Ռիզայի ճամբարում: Այժմ Ալի Ռիզան որոշեց եղբորը հանել եղբոր դեմ: Նա օգնեց իր ճամբարում գտնվող եղբորը բավականին մեծ և ուժեղ բանակ ստեղծելու, որը դուրս եկավ Աջիլին հավատարիմ իր ցեղակիցների դեմ: Վճռական ճակատամարտն ավարտվեց Աջիլի պարտությամբ: Ձիուց պատահաբար վայր ընկած Աջիլին սրախողխող արեցին նրա վրա հասած եղբոր մարտիկները:

Շատ չանցած՝ գլուխ բարձրացրեց Ջերբի շամմարների ցեղային միությունը: Ալի Ռիզան դեռևս Դաուդ փաշայի դեմ պատերազմի նախապատրաստվելու ժամանակ կարողացել էր զանազան խոստումներով իր կողմը գրավել շամմար ցեղախումբը, որն օգնեց նրան գրավելու Բաղդադը: Դաուդին տապալելուց և Ալի Ռիզայի՝ Բաղդադի փաշա նշանակվելուց հետո շամմարների շեյխ Սուֆուկն Ալի Ռիզայից պահանջեց կատարել իր խոստումը և իրենց վճարել համապատասխան պարգև, շնորհել զանազան արտոնություններ և այլն: Ալի Ռիզան միանգամից չմերժեց շեյխ Սուֆուկի պահանջները, այլ նրա հետ մտավ բանակցությունների մեջ՝ հույս ունենալով չափավորելու շամմարների պահանջները: Բայց դա նրան չհաջողվեց, և ի վերջո փաշան հրաժարվեց կատարելուց շամմարներին տված իր խոտումները: 1833 թ. իր հզոր ցեղախմբի գլուխն անցած՝ Սուֆուկը շարժվեց Բաղդադի վրա և պաշարեց այն, որը տևեց երեք ամիս: Սուֆուկը պաշարումը վերացրեց վրա հասած ձմռան և ցրտերի պատճառով, բայց կասկած չկար, որ գարնանը նա վերսկսելու էր իր հարձակումը Բաղդադի վրա: Օգտվելով ստեղծված իրադրությունից՝ Ալի Ռիզան որոշեց կանխարգելիչ քայլերի դիմել, մանավանդ որ բավարար քանակությամբ ուժեր չուներ միայնակ հետ մղելու շամմարների նոր հարձակումը:

Նա այս անգամ որոշեց շամմարների դեմ հանել ոչ պակաս հզոր և ռազմատենչ անազե ցեղախումբը: Ալի Ռիզայի ընտրությունն ընկավ այդ ցեղախմբի վրա, քանի որ անազե և շամմար ցեղախմբերի միջև վաղուց գոյություն ուներ թշնամանք: Ալի Ռիզան շփումների մեջ մտավ անազե ցեղախմբի շեյխերի հետ, որոնք խոստացան օգնել նրան ընդդեմ շամմարների: Միաժամանակ Ալի Ռիզան որոշեց պառակտում մտցնել շամմարների շարքերում: Նա Սուֆուկին զրկեց շամմարների ցեղախմբի շեյխությունից և նրա փոխարեն շեյխ նշանակեց Սուֆուկի ազգական Շլոշին՝ նրան շնորհելով փաշայի տիտղոս, որն աննախադեպ երևույթ էր:

Սուֆուկն իրեն հավատարիմ մնացած ցեղակիցներով 1834 թ. պատրաստվում էր շարժվելու Բաղդադի վրա: Բայց ասպարեզ իջավ անազե ցեղախումբն իր 35–հազարանոց մարտիկներով, որոնք նույնպես շարժվեցին դեպի Բաղդադ՝ օգնելու Ալի Ռիզային: Սուֆուկը, իմանալով այդ մասին, որոշեց ձեռնպահ մնալ Բաղդադի վրա հարձակվելուց և նահանջեց Բաղդադից դեպի հյուսիս:

Միջցեղային հակասությունների վրա խաղալն այս անգամ ևս օգնեց Ալի Ռիզային:

Դեռ նոր էր «լուծվել» շամմարների հարցը, երբ ծագեց անազե ցեղախմբի խնդիրը: Նա պահանջում էր Ալի Ռիզայից փոխահատուցում ընդդեմ շամմարների ցույց տրված օգնության դիմաց: Միայն դրանից հետո բեդվինները պատրաստ էին հեռանալու անապատ: 1834 թ. նրանք մի փորձ կատարեցին թալանելու դեռևս ուշքի չեկած Բաղդադը: Ալի Ռիզան ստիպված էր մարտի մեջ մտցնել իր զորքերը՝ միաժամանակ օգնության կանչելով Շլոշին: Վերջինս իր զորքերով օգնության շտապեց Ալի Ռիզային և մարտի մեջ մտավ Բաղդադի պատերի տակ: Սակայն նրա զորախումբը պարտություն կրեց, և ինքն էլ ընկավ մարտի դաշտում: Եվ այստեղ կատարվեց անսպասելին:

Սուֆուկը, ստանալով իր ազգական Ճլոշի մահվան և նրա շամմարական զորախմբի պարտության լուրը, դա համարեց անպատվություն և ընդհանրապես շամմար ցեղին նրա ոխերիմ թշնամու կողմից հասցված վիրավորանք: Եվ նա որոշեց իրենց հասցված խայտառակության համար պատժել անազե ցեղին: Նրան հաջողվեց օգնության եկած դաշնակից զուբեյր ցեղի հետ միասին պարտության մատնել անազեներին, որոնք ստիպված էին քաշվել անապատ:

Սուֆուկի հաղթանակը բարձրացրեց նրա հեղինակությունը, և արաբական շատ ցեղեր ցանկություն հայտնեցին դաշնակցել նրա հետ: Սուֆուկի դիրքերի ամրապնդումն անհանգստացրեց Ալի Ռիզային և նրա առջև կրկին կանգնեց շամմարների ցեղախմբի հարցը լուծելու խնդիրը: Այդ նպատակով Ալի Ռիզան այս անգամ ինքը դաշնակցեց իր երեկվա հակառակորդ, բայց շամմար ցեղախմբի թշնամի մունթաֆիկ ցեղախմբի հետ: Օգնելով շեյխ Իսային դառնալու մունթաֆիկ ցեղախմբի ղեկավար՝ Ալի Ռիզան կարողացավ նրան իր կողմը գրավել և ստանալ նրա համաձայնությունը պայքարի դուրս գալու շամմար ցեղախմբի դեմ: Շեյխ Իսան, հավատարիմ իր խոստմանը, հարձակվեց շամմարների վրա և պարտության մատնեց նրանց: Դրանով նա մեծ ծառայություն մատուցեց Ալի Ռիզային, իսկ Բաղդադը փրկվեց վերահաս վտանգից:

Բայց դա վերջ չտվեց միջցեղային բախումներին:

Բաղդադի փաշաների համար մեծ խնդիր էին ոչ միայն արաբական, այլև քրդական ցեղերը, որոնք մեծ աշխուժություն դրսևորեցին Դաուդ փաշային տապալելուց հետո: Քանի դեռ կար Դաուդ փաշան, նրան հաջողվում էր երկաթյա բռունցքով ճնշել քրդերի ընդվզումները և նրանց իրեն ենթարկել: Սակայն Դաուդի՝ ասպարեզից հեռանալուց հետո վերացավ քրդերին զսպող ձեռքը, և նրանք նորից գլուխ բարձրացրին: Նրանք հրաժարվում էին կատարելուց Բաղդադի փաշայի և թուրք պաշտոնյաների հրամանները, հարկեր չէին մուծում և այլն:

Դրությունը բարդանում էր նաև նրանով, որ քրդերն օգնություն էին ստանում ոչ միայն Պարսկաստանից, որը սովորական երևույթ էր, այլև այս անգամ նաև Եգիպտոսի տիրակալ Մուհամմեդ Ալիից, որը Իրաքը նույնպես համարում էր ապագա արաբական միասնական պետության բաղկացուցիչ մասը: Դա կազմում էր Պարսից ծոցում և տարանցիկ առևտրական ճանապարհների վրա հաստատվելու նրա քաղաքական ծրագրերի մի մասը: Այդ պատճառով էլ Մուհամմեդ Ալին պաշտպանում էր Իրաքում ծագող ամեն մի շարժում, որն ուներ հակաօսմանյան ուղղվածություն՝ ելնելով այն հիմնադրույթից, որ դա կթուլացնի Օսմանյան կայսրության դիրքերն Իրաքում և կհեշտացնի Իրաքի կցումը իր արաբական տիրույթներին:

Թուրքիան, իհարկե, տեղյակ էր այս ամենին և հետևում էր իրադարձությունների զարգացմանն Իրաքյան Քրդստանում: 1831–1849 թթ. եղել են բազմաթիվ քրդական ելույթներ, որոնք Թուրքիային հաջողվում էր ճնշել: Բայց Իրաքյան Քրդստանը հանդարտեցնել և իրեն ենթարկել Կոստանդնուպոլիսը այդպես էլ չհաջողվեց: Անգամ եղավ մի պահ, երբ թվում էր, թե Օսմանյան կայսրությունը կորցնում է Իրաքյան Քրդստանը: Դա 1841 թ. էր, երբ Պարսկաստանը, պաշտպանելով քրդական բե-

կերի ապստամբությունը, ներխուժեց Իրաք և գրավեց Սուլեյմանիան: Թուրքիան և Իրանը դարձյալ հայտնվեցին պատերազմի շեմին: Պահանջվեց Անգլիայի և Ռուսաստանի միջամտությունը պատերազմը կանխելու և երկար տարիների համառ աշխատանք Քրդստանի հետ՝ կապված թուրք–պարսկական կոնֆլիկտը խաղաղ ճանապարհով լուծելու համար: 1847 թ. մայիսի 31–ին կնքվեց թուրք–պարսկական պայմանագիր, որով կողմերը համաձայնության եկան սահմանների հարցում, և Պարսկաստանն իր զորքերը դուրս բերեց Սուլեյմանիայից և այն ճանաչեց որպես Օսմանյան կայսրությանը պատկանող քաղաք, որի դիմաց վերջինս տարածքային որոշ զիջումներ կատարեց Պարսկաստանին: 1847 թ. պայմանագիրը պարունակում էր Պարսկաստանի համար նաև մի կարևոր կետ: Դա շիա ուխտագնացների այցելության հարցն էր Իրաքում գտնվող շիական սրբակենտրոններ Քերբելա և Նաջաֆ: Այդ հարցում մշտապես ծագում էին տարաձայնություններ, անգամ տեղի էին ունենում արյունալի բախումներ, հատկապես թուրք–պարսկական հարաբերությունների լարվածության կամ պատերազմների ժամանակ: Սուննի Թուրքիան ուրախությամբ չէ, որ դիտում էր շիա պարսիկների ուխտագնացությունը Իրաքի սրբավայրեր: 1847 թ. պայմանագիրը պարունակում էր հատուկ հոդված պարսիկների ուխտագնացությունը Իրաք կարգավորելու և ուխտագնացներին դյուրություններ տրամադրելու մասին:

Դաուդ փաշայի և կյուլեմենների դինաստիայի տապալումից հետո Իրաքում ուժեղացան Անգլիայի դիրքերը: Առանց Անգլիայի գիտության և հավանության Իրաքում ոչինչ չէր կատարվում: Անգլիայի ազդեցության տակ էր իրաքյան բանակը, իսկ անգլիական Արևելահնդկական ընկերությունն իրականում պետություն էր պետության մեջ: Այն առաջատար դերակատարություն ուներ Իրաքի առևտրում՝ օգտագործելով ոչ միայն Պարսից ծոցի, այլև Տիգրիս ու Եփրատ գետերի հնարավորությունները: Այն իր գրասենյակներն ուներ Իրաքի տարբեր քաղաքներում և շրջաններում, իսկ դրա բազմաթիվ աշխատակիցներ անգլիական գործակալներ էին:

Անգլիացիները, ելնելով իրենց ռազմավարական շահերից, XIX դարի 40–ական թվականներին զգալի ուշադրություն դարձրին կապի միջոցների զարգացմանն Իրաքում: Նրանք Իրաքն ուղիղ հեռագրային կապով կապեցին Հնդկաստանի հետ, հեռագրային ուղղակի կապ հաստատվեց նաև Բաղդադի ու Կոստանդնուպոլսի միջև, որը 50–ական թվականներին շարունակվեց մինչև Բասրա և Պարսից ծոցի ափին գտնվող իրաքյան Ֆաո նավահանգիստը: Հեռագրային ցանցը զարգացավ նաև Իրաքի ներսում, և Անգլիայի օգնությամբ հեռագրային կապ հաստատվեց երկրի տարբեր քաղաքների ու շրջանների միջև:

Այդուհանդերձ, XIX դարի կեսին սոցիալ–տնտեսական տեղաշարժերն Իրաքում շատ դանդաղ էին ընթանում, որին մեծապես արգելակում էին ներքաղաքական անկայունությունը, միջցեղային բախումները և Իրաքի տարածքը թուրք–պարսկական հաճախակի պատերազմների թատերաբեմի վերածվելու հանգամանքը:

3. ԹԱՆԶԻՄԱԹԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐՆ ԻՐԱՔՈՒՄ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

XIX դարում Օսմանյան կայսրությունն ապրում էր խոր քաղաքական, տնտեսական և սոցիալական ճգնաժամ: Այդ ժգնաժամից դուրս գալու նպատակով կայսրության կառավարող շրջանակները ձեռնարկեցին բարենորոգումների քաղաքականություն, որը ստացավ «Թանզիմաթ» անվանումը:

Այդ քաղաքականությունը, բնականաբար, պետք է ընդգրկեր կայսրության բոլոր ծայրագավառները, այդ թվում նաև արաբական երկրամասերը: Բայց այստեղ այսպես կոչված բարեփոխումները իրագործվեցին կիսատ–պռատ: Շատ թե քիչ տեղաշարժեր կատարվեցին բանակի վերադասավորման և վարչական կառավարման ոլորտներում: Սուլթանը որոշեց իր բանակային վեց կորպուսներից երկուսը տեղակայել արաբական երկրներում՝ Սիրիայում, Պաղեստինում և Իրաքում: Վեցերորդ կորպուսը տեղակայվեց Իրաքում, իսկ դրա շտաբը՝ Բաղդադում: Նման «ուշադրությունն» արաբական երկրների նկատմամբ բացատրվում է նրանով, որ սուլթանը չէր վստահում արաբներին և նրանց անջատումը կայսրությունից կանխելու համար իր երկու կորպուսները տեղակայեց հենց արաբական երկու կարևոր երկրներում:

Որոշ ճշգրտումներ կատարվեցին վարչական ոլորտում, ճշգրտվեցին նահանգապետ–փաշաների գործառույթները: Մինչև Թանզիմաթը Իրաքի, ինչպես նաև Սիրիայի և արաբական մյուս երկրների էյալաթների փաշաներն իրականացնում էին վարչակառավարչական, ֆինանսա–տնտեսական և ռազմական գործառույթներ: Թանզիմաթով փաշան զրկվեց ռազմական և ֆինանսական գործառույթներից: Ֆինանսներն անցան դևթերդարների տնօրինությանը, որոնք անմիջապես ենթարկվում էին ֆինանսների նախարարին: Իսկ ինչ վերաբերում է տնտեսական հարաբերություններին, ապա այդ ոլորտը դուրս մնաց Թանզիմաթի բարեփոխումներից:

Բարեփոխումները հատկապես դանդաղ էին ընթանում Իրաքում: Փաստորեն այստեղ 1839 թվականից, երբ ընդունվեց Հաթթի–շերիֆը, մինչև 1848 թվականը ոչինչ չարվեց, ամեն ինչ նախկինի պես էր: Միայն 1848 թ. զինվորական իշխանությունը բաժանվեց քաղաքացիականից, և ստեղծվեցին մի քանի մասնագիտական վարչություններ:

Բարենորոգումներն Իրաքում համեմատաբար մեծ ծավալ ստացան 1860 թ., երբ Բաղդադի նահանգապետ նշանակվեց Միդհատ փաշան: Նա Օսմանյան կայսրության այն հազվագյուտ պետական գործիչներից էր, որն աչքի էր ընկնում իր լայնախոհությամբ և ըմբռնում էր բարենորոգումների անհրաժեշտությունը կայսրությունը կործանումից փրկելու համար: Այդուհանդերձ, նա իր առաքելությունն Իրաքում տեսնում էր թուրքական տիրապետությունն ամրապնդելու մեջ:

Միդհատ փաշայի ջանքերի շնորհիվ Իրաքում մեծ ծավալներ ընդունեց ճանապարհային շինարարությունը, դատական իշխանությունն անջատվեց քաղաքացիականից, ստեղծվեցին տեղական կառավարման մարմիններ՝ մունիցիպալ խորհուրդներ, բացվեցին մի շարք դպրոցներ և այլն: Ցեղապետերին և ավատատիրական ավագանուն իր կողմը գրավելու, երկրում խաղաղություն հաստատելու և

նրանց աջակցությունը շահելու համար Միդհատ փաշան պետական հողերը բաժանեց նրանց, որոշակի քայլեր ձեռնարկեց բեդվիններին նստակյաց դարձնելու ուղղությամբ և այլն:

Սակայն Թանզիմաթը և դրա կիրառման ձևերն ու տեմպերը չլուծեցին և չէին էլ կարող լուծել արաբական երկրների՝ Իրաքի, Սիրիայի, Պաղեստինի, Լիբանանի սոցիալ–տնտեսական և հասարակական կառուցվածքում արմատական փոփոխություններ կատարելու, բնակչության տնտեսական վիճակը բարելավելու, կայսրության մուսուլման և ոչ մուսուլման բնակչության իրավահավասարության, մարդկանց անվտանգության, նրանց գույքի և ունեցվածքի ապահովության խնդիրները՝ անկախ նրանց ազգային և կրոնական պատկանելությունից: Էլ չենք խոսում այն մասին, որ մի շարք արաբական երկրներ, ինչպես Եգիպտոսը, Սուդանը, Թունիսը, Ալժիրը, Մարոկկոն, ընդհանրապես դուրս մնացին Թանզիմաթի գործընթացներից:

XIX դարի 70–ական թվականներից սկսվեց նոր փուլ Օսմանյան կայսրության պատմության մեջ, որը պատմության մեջ մտել է որպես արյունարբու սուլթան Աբդուլ Համիդ Բ–ի զուլումի քաղաքականության դարաշրջան: Դա կայսրության թերևս ամենամռայլ և դաժան ժամանակաշրջանն էր, որը կայսրության բոլոր ժողովուրդների համար եղել է ահ ու սարսափի, բռնությունների, զանգվածային կոտորածների ու ջարդերի դարաշրջան: Արաբ պատմաբան Մրվան Մուդավարը, Աբդուլ Համիդի ռեժիմը դիտարկելով որպես բռնակալական, ընդգծում էր, որ «բռնությունը տարածվում էր կայսրության բոլոր ժողովուրդների վրա, մասնավորապես արաբական ժողովուրդների, բալկանյան ժողովուրդների և հայ ժողովրդի վրա»:

XIX դարի վերջերին հակազուլումյան շարժումներ սկսվեցին Սիրիայում, Լիբանանում, Իրաքում, որոնք միայն հուզումներով և ապստամբություններով չէ, որ դրսևորվում էին: Իրաքում և արաբական մյուս երկրներում տեղի էին ունենում զանազան հավաքներ, գաղտնի ժողովներ, քննարկումներ և այլն, որոնց ընթացքում արաբները, հատկապես մտավորականությունը, գրողները, լրագրողները, ուսուցիչները, ազգային առաջադեմ զինվորական սպաները և այլ խավեր իրենց տեսակետներն էին արտահայտում Աբդուլ Համիդ Բ–ի վարչակարգի, զուլումի կապանքներից ազատագրվելու ուղիների և ձևերի ու ազգային–քաղաքական այլ հուզող հարցերի վերաբերյալ:

Զուգահեռաբար ստեղծվում էին արաբական տարբեր կազմակերպություններ և միություններ, այդ թվում նաև գաղտնի, որոնց մեջ ընդգրկված էին սիրիացիները, լիբանանցիները, իրաքցիները, եգիպտացիները, պաղեստինցիները և այլն, որոնց մի մասը գործում էր Եվրոպայում: Այդ շրջանում արաբական քաղաքական ասպարեզում հայտնված և հետևողական հակազուլումյան դիրքորոշում ունեցող կազմակերպություններից էր արաբական ազատագրական շարժման ականավոր գործիչ Նաջիբ Ազուրիի կողմից 1904 թ. Փարիզում հիմնված «Արաբական հայրենիքի լիգան»: Նա կարծում էր, որ «Արաբ ազգը պետք է անկախ լինի թուրքերից»: Իր տեսակետն ավելի հիմնավորելու համար նա ընդգծում էր, որ «թուրքերը կործանեցին արաբներին: Առանց նրանց արաբները կարող էին լինել աշխարհի ամենազարգա-

ցած ազգերի մեջ»: Եվ նա ձևակերպում է «Արաբական երկրները՝ արաբներին» քաղաքական բանաձևը: Նաջիբ Ազուրին կարծում էր, որ արաբների անկախությանը կարելի է հասնել, եթե արաբները, հայերը և քրդերը միավորվեին և հանդես գային միասնական ճակատով Աբդուլ Համիդի ռեժիմի դեմ՝ մի կողմից, և ստանային եվրոպական երկրների՝ Անգլիայի և Ֆրանսիայի օգնությունը՝ մյուս կողմից:

1908 թ. հուլիսին տեղի ունեցավ զինվորականների պետական հեղաշրջումը, և Օսմանյան կայսրությունում իշխանությունն անցավ «Միություն և առաջադիմություն» կուսակցությանը: Սակայն արյունարբու սուլթանը գահընկեց չարվեց:

Երիտթուրքական այդ հեղաշրջումը իրականացվեց ազատության, հավասարության, արդարության և եղբայրության կարգախոսների ներքո: Դրանով է բացատրվում, որ այդ հեղաշրջումը սկզբում ընդունվեց մեծ խանդավառությամբ արաբների, հայերի, հույների, ասորիների, սլավոնների և կայսրության այլ՝ ոչ թուրք ժողովուրդների կողմից՝ հավատալով երիտթուրքերի խոստումներին: Արաբ ազգային որոշ գործիչներ միամտություն ունեցան հավատալու երիտթուրքերին թուրքերի հետ իրենց եղբայր լինելու հարցում և շտապեցին մայրաքաղաքում հիմնել «Արաբ–օսմանյան եղբայրություն» կազմակերպությունը՝ Սադիկ ալ–Ազըմի գլխավորությամբ, որի կազմում ընդգրկվել էին արաբ պաշտոնյաներ, զինվորականներ, մտավորականներ և ուսանողներ Իրաքից, Սիրիայից, Լիբանանից, Պաղեստինից և արաբական այլ երկրներից: Այն մասնաճյուղեր ուներ կայսրության համարյա բոլոր շրջաններում: Այդ կազմակերպությունը հրաժարվեց իր ծրագրում մտցնել արաբական երկրների անկախության պահանջը: Արաբների մեջ, այդ թվում նաև իրաքցի, կային նաև այնպիսի գործիչներ, որոնք պաշտպանում էին երիտասարդ թուրքերին և նրանց քաղաքականությունը՝ ելնելով այն համոզմունքից, որ օսմանյան կայսրությունը պետք է ամեն գնով պահպանվի: Օսմանյան կայսրության ամենաջերմ կողմնակից էր օսմանյան բանակի բաղդադցի սպա, ծագումով վրացի Մահմուդ Շևքեթ փաշան, որը սպանվեց 1913 թ.:

Սակայն էյֆորիան անցավ, և արաբները սկսեցին ավելի իրատեսական և սթափ գնահատել տեղի ունեցածը: 1909 թ. գահն անցավ Մեհմեդ Ե Ռեշադին, բայց դա, ըստ էության, ոչինչ չփոխեց: Շուտով պատռվեց երիտթուրքերի դիմակը, և նրանք հասարակության առջև կանգնեցին իրենց իսկական դեմքով՝ որպես մոլի ազգայնամոլներ, շովինիստներ, ռասիստներ, որոնք սկզբունքորեն ոչ միայն չէին տարբերվում օսմանյան սուլթաններից ու նրանց վարած հետադիմական քաղաքականությունից, այլև շատ հարցերում անգամ գերազանցեցին նրանց: Դրանով իսկ ավարտվեց Օսմանյան կայսրության «եղբայրություն» խաղալու դարաշրջանը և սկսվեց նոր փուլ՝ հակադրության, դիմակայության և պայքարի շրջանը:

4. ԻՐԱՔԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Օսմանյան կայսրությունը պատերազմի մեջ մտավ 1914 թ. հոկտեմբերի 29–ին Եռյակ դաշինքի՝ կայզերական Գերմանիայի, Ավստրո–Հունգարիայի և Իտալիայի կողմում՝ ընդդեմ Անտանտի, որի միջուկը կազմում էին Անգլիան, Ֆրանսիան, Ռու-

սաստանը, որոնց 1917 թ. միացավ ԱՄՆ–ն: Այդ պատերազմն ուղղակիորեն առնչվում էր Օսմանյան կայսրության շահերին և ճակատագրական եղավ նրա համար:

Օսմանյան կայսրության և Անտանտի երկրների միջև պատերազմական գործողությունները տեղի էին ունենում երկու ճակատում՝ Կովկասյան և արաբական, որն իր մեջ ներառում էր նաև Միջագետք–Իրաքը: Միջագետքում ռազմական գործողությունները ընթանում էին թուրքական և հիմնականում բրիտանական զորքերի միջև:

Արաբական երկրները՝ Իրաքը, Սիրիան, Լիբանանը, Եգիպտոսը և Արաբիան, պատերազմի մեջ ներքաշվեցին ակամայից, ոչ թե որպես ինքնուրույն կամ անկախ ուժ, իրենց սեփական ընտրությամբ, այլ որպես Օսմանյան կայսրության մաս կազմող տարածքներ՝ կամոքն օսմանյան սուլթանի:

Պատերազմում Օսմանյան կայսրության նպատակն էր պահպանել կայսրության տարածքային ամբողջականությունը: Դա կարևորվում էր այն հանգամանքով, որ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի զավթողական ծրագրերի զգալի մասը կապված էր Օսմանյան կայսրության ասիական, արաբական տարածքները գրավելու հետ: Այդ ծրագրերի իրագործումը հնարավոր էր միայն Օսմանյան կայսրությունը բաժանելու միջոցով: Մյուս կողմից՝ Օսմանյան կայսրությունն ինքն էր հետամուտ նոր տարածքներ գրավելու և կայսրությունն ընդարձակելու մեջ, որին նա ձգտում էր հասնելու երիտթուրքական պանթուրքական ծրագրերի իրականացման ուղիով՝ հիմնականում Ռուսական կայսրության հաշվին:

Կարելի է ասել, որ արաբական և պանթուրքական գործոնները իրենց վճռական դերն ունեցան, որպեսզի պատերազմում Օսմանյան կայսրությունը հանդես գա գերմանական խմբավորման կազմում՝ ընդդեմ Անտանտի:

Պատերազմի ժամանակ, հատկապես դրա նախնական փուլում, Թուրքիայի և նրա թիկունքում կանգնած Գերմանիայի համար, նրանց ռազմավարական ծրագրերն իրականացնելու տեսանկյունից բացառիկ նշանակություն ունեին Սիրիան, Լիբանանը, Պաղեստինը, Իրաքը և Արաբիան: Նշված արաբական երկրները համարվում էին գերմանա–թուրքական բլոկի գլխավոր հենարանը: Սակայն առաջնությունն ըստ կարևորության տրվում էր Սիրիային: Թուրքիայի և Գերմանիայի համար, իհարկե, կարևոր էր նաև Իրաքը: 1914 թ. գերմանական կապիտալի շնորհիվ և գերմանական կառավարության աջակցությամբ ավարտվեց Բեռլին–Բաղդադ երկաթգծի Բաղդադ–Սամարրա հատվածի շինարարությունը, որը զգալիորեն ուժեղացրեց Գերմանիայի դիրքերը Իրաքում: Սակայն 1914 թ. Իրաքը Գերմանիայի և Թուրքիայի կողմից չէր դիտվում բրիտանական անմիջական հարձակման ենթակա երկիր, այդ պատճառով էլ նրա պաշտպանության հարցերին մեծ տեղ չէր հատկացվում, ինչպես Սիրիային: Բայց նրանք սխալվեցին:

Պատերազմական գործողությունները Միջագետքի կամ Իրաքի ռազմաճակատում սկսվեցին 1914 թ. նոյեմբերի 6–ին, երբ բրիտանական զորքերի 6–րդ բրիգադի գեներալ Վ. Դելամենը գրավեց Շաթ ալ–Արաբի գետաբերանում գտնվող Ֆաո նա-

վահանգիստը: Շարունակելով հարձակողական գործողությունները՝ անգլիական զորքերը նոյեմբերի 22–ին գրավեցին Բասրան, որը կարևոր նշանակություն ունեցավ հարավային և կենտրոնական Իրաքի գրավման համար: 1915 թ. հուլիսին ամբողջ հարավային Իրաքն ազատագրված էր թուրքական տիրապետությունից: Անգլիացիների նպատակն էր արագորեն գրավել Բաղդադը և հյուսիսային Իրաքը ու դրանով ավարտել ամբողջ Իրաքի ազատագրումը թուրքական տիրապետությունից: Բաղդադի վրա հարձակումը սկսվեց 1915 թ. ամռանը: Նույն տարվա նոյեմբերին անգլիական կորպուսը գեներալ Թաունսհենդի հրամանատարությամբ մոտեցավ Տիզբոնին՝ Սասանյան Պարսկաստանի երբեմնի մայրաքաղաքին, որն Իրաքի տարածքում էր, գրոհեց թուրքական բանակի դիրքերի վրա: Բայց նա հաջողություն չունեցավ և կրելով ծանր կորուստներ՝ նահանջեց: Բաղդադը հընթացս գրավելու անգլիական ծարգիրն անհաջողության մատնվեց: Իսկ թուրքական զորքերը, որոնք հետապնդում էին նահանջող անգլիացիներին, կարողացան 1915 թ. դեկտեմբերին Կուտ ալ–Ամարայի մոտ շրջափակման օղակի մեջ վերցնել գեներալ Թաունսհենդի բանակը: Անգլիական զորքերը պաշարման օղակի մեջ մնացին մինչև 1916 թ. ապրիլ ամիսը: Անգլիացիներն ամեն գնով փորձում էին փրկել շրջապատման մեջ գտնվող իրենց կորպուսը, բայց անհաջող: Այդ նպատակով նրանք փորձեցին օգտագործել նաև անգլիացի հայտնի հետախույզ Թ. Լոուրենսին, որն անգլիական կառավարության հանձնարարությամբ գաղտնի հանդիպում ունեցավ անգլիական զորքերին շրջապատած թուրքական զորքերի հրամանատար Խալիլ փաշայի հետ և նրան առաջարկեց մեծ գումար, սակայն վերջինս չհամարձակվեց կաշառքով շրջափակումից ազատել անգլիական զորքերին: Եվ 1916 թ. ապրիլի 29–ին Թաունսհենդի զորքերն անձնատուր եղան թուրքերին: Գերի հանձնվեցին անգլիացի 5 գեներալ, 476 սպա և 13 հազար զինվոր: Անգլիական զորքերի անձնատվությունը ծանր հարված էր Մեծ Բրիտանիայի հեղինակությանը, և դա առնվազն մեկ տարով հետաձգեց Բաղդադի գրավումը:

Պատերազմը, ինչպես սովորաբար լինում է, շատ ծանր անդրադարձավ արաբական երկրների, այդ թվում՝ Իրաքի ներքաղաքական մթնոլորտի, տնտեսական դրության և ընդհանուր վիճակի վրա: Արաբական երկրների տնտեսությունը, հասարակական և քաղաքական կյանքը հարմարեցվեց պատերազմի պայմաններին, Գերմանիայի և Թուրքիայի պահանջների բավարարմանը: Իրաքում, ինչպես արաբական մյուս երկրներում, մտցվեց ռազմական դրություն, վերացվեցին արաբական վիլայաթների այսպես կոչված մեջլիս–խորհուրդները: Օսմանյան իշխանությունների կարգադրությամբ Իրաքում, Սիրիայում, Լիբանանում և Պաղեստինում բռնագրավում էին պարենը, անասունները և գյուղատնտեսական մթերքները: Բռնագրաված հացահատիկի մի մասն անգամ արտահանվում էր Գերմանիա, թեև արաբ բնակչությունը հայտնվել էր սովի շեմին: Սովը և հիվանդությունը հնձում էին մարդկանց: Մահացան հարյուր հազարավոր մարդիկ: Արաբական աղբյուրներից մեկի հաղորդման համաձայն՝ «Առաջին աշխարհամարտի հետևանքով Իրաքում սով սկսվեց, որն ուղեկցվում էր խոլերայի, ժանտախտի և տիֆի համաճարակներով,

որոնցից մահացան տասնյակ հազարավոր իրաքցիներ»: Լայն տարածում էր գտել արաբներին բռնի տաժանակիր աշխատանքների ուղարկելը և բռնությամբ օսմանյան բանակ զորակոչելը: Արաբները, որոնք ատում էին թուրքերին, ամեն կերպ խուսափում էին թուրքական բանակում ծառայելուց: Մեծ էր այն արաբների թիվը, որոնք լքում էին թուրքական բանակը, իսկ հաճախ էլ անցնում անգլիացիների կողմը և անձնատուր լինում նրանց: Հավանաբար դա այնպիսի ծավալներ էր ընդունել, որ Ջեմալ փաշան հարկադրված է եղել դիմել Կոստանդնուպոլսին՝ պահանջելով համալրել իր բանակը թուրք զինվորներով ու սպաներով: Նշենք, որ նրա դիվիզիաներից մեկն ամբողջապես համալրված էր սիրիացիներից, իսկ մյուսը՝ Մոսուլի նահանգի իրաքցի արաբներից: Իրաքը և արաբական հարևան մյուս երկրները հայտնվել էին տնտեսական փլուզման եզրին:

Թուրքերի դեմ արաբների մոտ կուտակվել էր խոր դժգոհություն և զայրույթ, որը վաղ թե ուշ պետք է պոռթկար: 1915 թ. մի շարք հակաթուրքական ելույթներ տեղի ունեցան Սիրիայում և Պաղեստինում: Այդ նույն տարում հուզումներ տեղի ունեցան նաև Իրաքում՝ Նաջաֆ և Քերբելա քաղաքներում, որն այնուհետև վերածվեց ապստամբության: Նաջաֆի և Քերբելայի բնակիչները կրկին ապստամբեցին 1916 թ.:

Մինչ Իրաքում և արաբական մյուս երկրներում ընթանում էին պատերազմական գործողություններ և տեղի ունենում հակաթուրքական ընդվզումներ, Անգլիայի և Ֆրանսիայի միջև ընթանում էին գաղտնի բանակցություններ արաբական երկրները բաժանելու վերաբերյալ: Այդ բանակցությունները, որոնք սկսվել էին 1915 թ. նոյեմբերի 23–ին, ավարտվեցին 1916 թ. մայիսին: Խոսքն այսպես կոչված «Սայքս–Պիկոյի» գաղտնի համամաձայնագրի մասին է, որն այդպես է կոչվում համաձայնագիրը պատրաստած և ստորագրած Անգլիայի ներկայացուցիչ Մարկ Սայքսի և Ֆրանսիայի ներկայացուցիչ Ժորժ Պիկոյի անուններով: Ըստ այդ համաձայնագրի՝ Իրաքն անցնում էր Անգլիայի տիրապետության տակ, իսկ Սիրիան և Լիբանանը՝ Ֆրանսիայի: Այդ պայմանագիրը ստորագրվեց հակառակ այն խոստումների, որ Անգլիան տվել էր արաբներին նրանց անկախությունը ճանաչելու և անկախ արաբական պետություն ստեղծելու մասին:

Վերադառնանք կրկին պատերազմական գործողություններին Իրաքում:

Մեծ Բրիտանիան, հաշվի առնելով կրած խայտառակ պարտությունը, նոր ուժեր կենտրոնացրեց Իրաքում և փոխեց հրամանատարությունը: Ծեր և հիվանդ գեներալ Պերսի Լեյկի փոխարեն Իրաքում անգլիական զորքերի հրամանատար նշանակվեց գեներալ Մոդը, որը կարողացավ արմատական փոփոխություն մտցնել ռազմական իրադրության մեջ: 1916 թ. դեկտեմբերի 10–ին անգլիական զորքերն Իրաքում անցան հարձակման, ինչը թուրքական զորքերը, չնայած ուժեղ դիմադրությանը, չկարողացան կասեցնել: Նրանք մինչև 1917 թ. փետրվարի 4–ը թուրքերից մաքրեցին Տիգրիսի ամբողջ աջափնյա տարածքները, այնուհետև անցում կատարեցին ձախ ափը: 1917 թ. մարտի 11–ին գեներալ Մոդի զորքերը մտան Բաղդադ:

Դրանով իսկ իրագործվեց հարավային և կենտրոնական Իրաքի գրավումը, որը կազմում էր անգլիական ծրագրերի առաջին փուլը:

1917 թ. մարտի 19–ին գեներալ Մոդը հանդես եկավ բաղդադցիներին և բոլոր իրաքցիներին ուղղված կոչով: Նա հայտարարեց, որ անգլիական զորքերը մտել են Դար ալ–Սալամ, այսինքն՝ Բաղդադ, ոչ թե որպես նվաճողներ և թշնամիներ, այլ ազատարարներ:

Շարունակելով ռազմական հարձակողական գործողությունները՝ անգլիական զորքերը 1917 թ. նոյեմբերին թուրքերից ազատագրեցին Բաղդադից հյուսիս ընկած տարածքները մինչև Թիկրիտ: Սակայն նրանք չհասցրին մինչև Օսմանյան կայսրության հետ զինադադար ստորագրելը ամբողջությամբ գրավել Իրաքը: Նրանց տիրապետությունից դեռևս դուրս էր մնում հյուսիսային Իրաքի գլխավոր կենտրոն Մոսուլը: Այդ քաղաքը նրանք մտան 1918 թ. նոյեմբերի 8–ին:

Դրանով ավարտվեց Իրաքի ազատագրումը չորս հարյուր տարի տևած թուրքական լծից:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՍԻՐԻԱՆ XIX ԴԱՐՈՒՄ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ

1. ՍԻՐԻԱՆ ԵՎ ՊԱՂԵՍՏԻՆԸ ԵԳԻՊՏԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1832–1840 ԹԹ.)

Սիրիան և Պաղեստինը, ինչպես նշվեց, Քյութահյայի պայմանագրով դրվեցին Մուհամմեդ Ալիի կառավարման ներքո: Սակայն ի տարբերություն Եգիպտոսի, Արաբիայի և Արևելյան Սուդանի՝ Սիրիան և Պաղեստինը չէին համարվում նրա տիրույթները: Չնայած այդ հանգամանքին՝ Եգիպտոսի տիրակալը արաբական այդ երկու երկրամասերը նույնպես կառավարում էր ինչպես իրեն պատկանող երկրներ: Մուհամմեդ Ալին ոչ մի տարբերություն չէր դնում նրանց և Արաբիայի կամ Սուդանի միջև:

Կարևորելով Սիրիայի նշանակությունը՝ Մուհամմեդ Ալին իր ավագ որդուն՝ Իբրահիմին, նշանակեց Սիրիայի կառավարիչ՝ նրան օժտելով ամենալայն լիազորություններով: Նա բոլոր սկզբունքային հարցերում իր հոր համախոհն էր, այդ թվում նաև Եգիպտոսի գլխավորությամբ արաբական միասնական մեկ պետություն ստեղծելու և արաբական ազգային ինքնագիտակցությունը վերակենդանացնելու հարցերում: Այդ բանը նկատել են նրա ժամանակակիցները, եվրոպական ականավոր պետական գործիչները և դիվանագետները: Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար լորդ Պալմերստոնը համոզված էր, որ Իբրահիմի վերջնական նպատակն էր ստեղծել արաբական թագավորություն, որի մեջ մտնեն արաբական բոլոր երկրները: Ֆրանսիայի ներկայացուցիչ բարոն Բուալեկոնտի կարծիքով, որը երկար ժամանակ եղել է Իբրահիմի կողքին և մոտիկից ճանաչել նրան, «Իբրահիմը գաղտնի չի պահում, որ նրա նպատակն է վերակենդանացնել արաբական ազգային գիտակցությունը, արաբների մեջ ներդնել իսկական հայրենասիրության զգացմունքը և նրանց հետ համագործակցել ապագա կայսրությունը կառավարելու հարցում»:

Իբրահիմը դարձավ Սիրիայի և Պաղեստինի կառավարիչ՝ ունենալով բավականին հստակ ազգային, քաղաքական և տնտեսական ծրագրեր, որոնք դրվեցին նրա գործունեության հիմքում: Նա որոշեց սկսել բարենորոգումներից, որոնք իրենց բնույթով նման էին իր հոր կողմից Եգիպտոսում կիրառված բարեփոխումներին:

Գնալով իր հոր ուղիով՝ նա բարեփոխումները սկսեց կառավարման համակարգից: Այստեղ նա առաջնահերթ խնդիր համարեց վերացնել տեղական կառավարիչների անջատողական ձգտումները, սահմանափակել նրանց իրավունքները և ենթարկել իրեն, իսկ չենթարկվողներին հեռացնել գրաված պաշտոններից կամ պատ-

ժել, երկրում հաստատել խիստ կարգապահություն և իրագործել կառավարման համակարգի կենտրոնացում: Հաստատվեց կառավարման ուղղաձիգ ենթակայության համակարգ: Բոլորը պարտավոր էին ենթարկվել Սիրիայի և Պաղեստինի կառավարիչ Իբրահիմ փաշային:

Կենտրոնական ապարատի ստեղծմանը հաջորդեց երկրամասի նոր տարածքային վերաբաժանումը: Իբրահիմը Սիրիան, Պաղեստինը և Կիլիկիան բաժանեց վեց մարզերի կամ նահանգների, որոնք, ինչպես Եգիպտոսում, կոչվեցին մուդիրիյա, իսկ նրանց ղեկավարները՝ մուդիրներ, որոնց նշանակում և ազատում էր Իբրահիմը: Կառավարման համակարգում մեծ տեղ հատկացվեց քաղաքներին: Կենտրոնական կառավարությունը քաղաքներում նշանակում էր կառավարիչներ՝ մութասալիմներ, որոնք երկրամասի կառավարիչ Իբրահիմ փաշայի ներկայացուցիչներն էին: Քաղաքները՝ ի դեմս մութասալիմների, կառավարման որոշակի իրավունքներ ստացան շրջակա գյուղերի վրա: Գյուղերի ղեկավարները լիազորությունների և անվանակոչումների առումով որևէ փոփոխության չենթարկվեցին: Ղեկավարները նախկինի պես կոչվում էին շեյխեր, միայն թե նրանք այժմ ենթարկվում էին համապատասխան մութասալիմին:

Իբրահիմը ստեղծեց քաղաքային կառավարման մի յուրահատուկ մարմին՝ մեջլիս, որը կից էր մութասալիմին և գործում էր նրա նախագահությամբ: Բավականին հետաքրքիր էր դրա կազմը, որը նույնիսկ կարելի է համարել ներկայացուցչական: Քաղաքային մեջլիսի կամ խորհրդի անդամ էին տեղական հոգևորականության, վաճառականության և հողատերերի ներկայացուցիչները: Սակայն մեջլիսը խորհրդակցական մարմին էր և ինքնուրույն վճիռներ արձակելու իրավունք չուներ: Այն միայն մի հարցում էր իրավասու վճիռներ արձակելու, որը վերաբերում էր դատական ոլորտին, քանի որ դրա վրա, բացի մութասալիմի խորհրդակցական մարմինը լինելուց, դրվեցին նաև քաղաքացիական դատարանի գործառույթներ, սակայն այն զուրկ էր քրեական և քաղաքական գործառույթից: Իսկ ընդհանրապես բարձրագույն դատական իշխանությունը պատկանում էր Իբրահիմին, որի վճիռները վերջնական էին:

Ստեղծելով կենտրոնական համակարգված կառավարման համակարգ՝ Իբրահիմը կարևոր խնդիր համարեց Սիրիայում, Պաղեստինում և Կիլիկիայում անվտանգության և ապահովության հաստատումը: Նա նկատի ուներ անվտանգություն հաստատել ինչպես բոլոր վեց մուդիրիյաներում, այնպես էլ ճանապարհներում, այդ թվում նաև քարավանային ուղիներում, որոնք անցնում էին անապատներով: Դրա շնորհիվ վերջ տրվեց ավազակային հարձակումներին, քարավանների թալանին և մարդիկ իրենց սկսեցին ավելի ապահով զգալ: Այդ քայլով լուծվում էին ոչ միայն անվտանգության, գույքի և ունեցվածքի ապահովության խնդիրները, այլև տնտեսական և առևտրական հարցեր: Անվտանգության հաստատումը երկրամասում և նրա ճանապարհների վրա, այդ թվում նաև տարանցիկ, նպաստում էր առևտրի ընդլայնմանը, որն իր հերթին խթանում էր Սիրիայի տնտեսական վերելքը: Աշխուժացավ առևտուրը Բաղդադի և Դամասկոսի միջև, եվրոպական ապրանք-

ները Սիրիայի ճանապարհներով հոսում էին Իրաք, իսկ հնդկական և պարսկական ապրանքները՝ դարձյալ Սիրիայով եվրոպական երկրներ:

Բարեփոխումների հերթը հասավ ագրարային ոլորտին: Իբրահիմն իր առջև խնդիր էր դրել գյուղատնտեսությունը զարգացնել և բերքատվությունը բարձրացնել այն աստիճան, որ Սիրիան դառնար ապագա արաբական կայսրության հացահատիկի և գյուղատնտեսական այլ մթերքների հիմնական արտադրողն ու մատակարարողը: Այդ հիմնախնդրի լուծման գլխավոր օղակը նա համարեց հարկերի գանձման համակարգի փոփոխումը: Նա սահմանեց հարկերի գանձման կայուն չափաբաժին՝ փակելով դուռը ֆելլահներից հարկերի կամայական գանձման առջև, որին սովորաբար դիմում էին ավատատերերը և նրանց հարկահավաքները, ինչը հանգեցնում էր գյուղացիների քայքայմանը և գյուղատնտեսության անկմանը:

Ագրարային ոլորտում Իբրահիմը դիմեց ևս մեկ այլ համարձակ քայլի: Սիրիայում, Պաղեստինում, մասամբ նաև Կիլիկիայում կային այսպես կոչված անմշակ և խոպան հողեր, որոնք ֆելլահները մշակելու ոչ մի ցանկություն չունեին, քանի որ չունեին համապատասխան միջոցներ և դրա համար պետք է հարկեր վճարեին: Իբրահիմը որոշեց խոպան հողերի մշակումը հանձնել ֆելլահներին՝ նրանց երկար ժամանակով ազատելով հարկեր վճարելուց: Այդ քայլը նպաստեց ցանքատարածությունների ընդարձակմանը և բերքատվության բարձրացմանը: Բացի դրանից՝ Իբրահիմը պարտադրաբար խոպան հողերի վրա բնակեցրեց քոչվոր բեդվիններին, որոնք ստիպված էին վարժվել նստակյաց կյանքին և անասնապահության հետ միասին զբաղվել նաև հողագործությամբ:

Սիրիայում դեռևս մեծ թիվ էին կազմում, հատկապես ցածր և միջին օղակներում, թուրք պաշտոնյաները: Նրանք էին կաշառակերության, կամայականությունների, անօրինական հարկերի և թալանչիական այլ գործողությունների հիմնական կրողները: Բայց այն բանից հետո, երբ Իբրահիմ փաշան սահմանեց հարկերի կայուն չափեր ու որոշակի արտոնություններ տվեց խոպան հողերը մշակող ֆելլահներին և նստակյաց կյանքի անցած բեդվիններին, դրանից հետո խիստ սահմանափակումներ դրվեցին թուրք պաշտոնյաների անօրինական գործողությունների առջև: Հողագործներն իրենց ավելի պաշտպանված ու ապահով էին զգում, նրանք համոզված էին, որ իրենց գույքը, ունեցվածքը և ստացած բերքը ոչ ոք չի կարող անօրինական ճանապարհով խլել իրենցից:

Իբրահիմը նոր կարգ սահմանեց նաև մաքսերի գանձման ոլորտում և մաքսատների աշխատանքներում: Մինչև բարենորոգումները մաքսատները գտնվում էին անհատ կապալառուների ձեռքում, և մաքսերի գանձումն իրականացվում էր կամայականորեն: Իբրահիմը վերջ դրեց դրան. մաքսատները խլվեցին կապալառուների ձեռքից և դրվեցին նրա անմիջական հսկողության տակ:

Իբրահիմի կիրառած բարենորոգումները ոչ միայն նպաստեցին գյուղատնտեսության զարգացմանը, այլև աշխուժացրին քաղաքները և քաղաքային կյանքը: Ավելացավ քաղաքային բնակչությունը, զարգացան առևտուրը, արհեստները և այլն:

Իբրահիմի բարենորոգումներից դուրս չմնաց նաև կրթական–լուսավորչական ոլորտը: Հիմք դրվեց տարրական կրթության համակարգին, տարրական դպրոցներ բացվեցին համարյա բոլոր քաղաքներում և շրջաններում, իսկ Դամասկոսում, Հալեպում և Անտիոքում բացվեցին նաև միջնակարգ դպրոցներ: Դպրոցներում ուսուցումը տարվում էր արաբերենով, որը համապատասխանում էր Մուհամմեդ Ալիի և Իբրահիմի՝ արաբների ազգային գիտակցության զարգացման հայեցակարգին: Իսկ մնացած հարցերում Սիրիայում կրթական համակարգը նույնությամբ կրկնում էր Եգիպտոսում հաստատված համակարգը՝ աշակերտները ապահովվում էին հանրակացարաններով, սնունդով, պարտավոր էին դպրոց հաճախել համապատասխան համազգեստով և այլն:

Իբրահիմ փաշան, հավատարիմ իր հոր հանդուրժողական քաղաքականությանը քրիստոնյա և այլ ոչ մուսուլման բնակչության ու համայնքների հանդեպ, համանման հանդուրժողական քաղաքականություն որդեգրեց նաև Սիրիայում, Պաղեստինում և Կիլիկիայում բնակվող քրիստոնյաների նկատմամբ, որոնք նշանակալի թիվ էին կազմում: Նրանց թվում էին արաբ քրիստոնյաները, հայերը, ասորիները և այլք: Նա վերացրեց նրանց նկատմամբ կիրառվող մի շարք արգելքներ և խտրականությունը: Հայտնի է, որ քրիստոնյաներին արգելվում էր ձի նստել, կանաչ և կարմիր գլխաշոր կապել, կառավարական համակարգում պաշտոններ զբաղեցնել և այլն: Իբրահիմ փաշան այդ բոլոր նվաստացուցիչ արգելքները և սահմանափակումները վերացրեց:

Ինչպես տեսնում ենք, բարենորոգումները Սիրիայում և Պաղեստինում կրում էին համակարգային բնույթ, նպատակաուղղված էին երկրամասում անվտանգության և կայունության ապահովմանը, տնտեսության և կրթական գործի զարգացմանը: Դրա արդյունքը լինելու էր Սիրիայի և նրա հարակից տարածքների աստիճանական արդիականացումը: Այդ բարեփոխումներն ընդհանուր առմամբ արժանանում էին ժողովրդական ամենալայն խավերի, մասնավորապես գյուղացիների, արհեստավորների, վաճառականների, քրիստոնյա բնակչության հավանությանը և աջակցությանը:

Բայց իրադրությունը փոխվեց XIX դարի 30–ական թվականների կեսերից, որ կապված էր Իբրահիմի ներքին քաղաքականության փոփոխությունների հետ, դա կարելի է համարել նահանջ բարենորոգումների քաղաքականությունից, որը դժգոհության կուտակման պատճառ դարձավ: Դժգոհողների մի մասը ավատատերերն էին, որոնց քաղաքական իրավունքներն Իբրահիմը սահմանափակել և զրկել էր ազդեցության բազմաթիվ լծակներց: Դժգոհների մյուս խավը ավազակները և թալանչիներն էին, որոնք մասնագիտացել էին ավազակության և կողոպուտի մեջ, սակայն Իբրահիմի հաստատած խիստ կարգապահությունը զրկել էր նրանց հեշտ հարստանալու հնարավորությունից:

Բայց քանի դեռ Իբրահիմի կիրառած բարենորոգումները ծառայում էին ֆելլահների, արհեստավորների, վաճառականների, ընդհանրապես հասարակ և ոչ ունևոր

խավերի շահերին, ավատատերերի և ավազակությամբ զբաղվող խավերի դժգոհությունն ընդհանուր առմամբ սոցիալական վտանգ չէր ներկայացնում:

Իրադրությունը փոխվեց, երբ Իբրահիմը հարկադրված դիմեց այնպիսի քայլերի, որոնք արդեն ուղղակիորեն շոշափում էին բնակչության ամենալայն խավերի շահերը:

Մուհամմեդ Ալին և Իբրահիմը հասկանում էին, որ հարաբերությունները Թուրքիայի հետ հուսալիորեն կարգավորված չէին, և պատերազմի վերսկսումը, Սիրիայի, Պաղեստինի ու Կիլիկիայի վերագրավման փորձերը Թուրքիայի կողմից նրանք համարում էին անխուսափելի, որը պարտադրում էր նրանց նախօրոք նախապատրաստվել դրան: Դրա համար անհրաժեշտ էին լրացուցիչ միջոցներ, ֆինանսներ, մարդկային ռեսուրսներ, պաշտպանական համակարգի ամրապնդում և այլն: Դա հանգեցրեց նրան, որ ֆելլահներից, արհեստավորներից, բեդվիններից և այլ խավերից գանձվող հարկերը բարձրացվեցին երեք անգամ, որն անասելի բեռ էր հասարակ բնակչության ուսերին, որի պատճառով Իբրահիմի դեմ ուղղված դժգոհությունը համակեց գյուղացիությանը և քաղաքի ցածր եկամուտներ ունեցող խավերին:

Դժգոհության մյուս պատճառը պաշտպանական կառույցների շինարարության մեջ հարկադրաբար գյուղացիներին ներգրավելու քաղաքականությունն էր: Թուրքիայի դեմ առաջիկա պատերազմին նախապատրաստվելու նպատակով Իբրահիմը կառուցում էր ամրոցներ, ամրացնում լեռնանցքները, փակում հակառակորդի առաջխաղացման բոլոր հնարավոր ուղիները: Եվ այդ բոլորը կատարվում էր գյուղացիների ձեռքերով, որն իր բնույթով տաժանակիր աշխատանք էր հիշեցնում:

Իբրահիմն անհրաժեշտ քայլերի դիմեց բանակի թվաքանակը մեծացնելու համար, որը հնարավոր էր գլխավորապես ֆելլահների և բեդվինների պարտադիր զորահավաքի միջոցով: Բանակային ծառայությունը շատ ծանր էր, և դա նույնպես առաջացրեց սիրիացիների դժգոհությունը:

Ժողովրդական դժգոհության մյուս աղբյուրը եղավ 1834 թ. ընդունված օրենքը զինաթափման մասին: Ժողովրդի մոտ կար կուտակված մեծաքանակ զենք, որի պատճառով հաճախակի էին դարձել զինված բախումները: Նոր օրենքը նրանց պարտադրում էր զենքը հանձնել իշխանություններին, որը բնակչությունը կատարում էր դժկամությամբ:

Այս բոլորի հետևանքով ձևավորվել էր անբավարարության և դժգոհության մի կծիկ, և ստեղծվել էր պայթյունավտանգ իրադրություն:

Առաջին պայթյունը տեղի ունեցավ 1834 թ. Պաղեստինում, որի պատճառը դժգոհությունն էր պարտադիր զինակոչումից: Ապստամբությունը տարածվեց նաև Սիրիայի այլ մասերում: Ապստամբերի դեմ ուղարկվեցին եգիպտական զորքերը, որոնք առաջին իսկ բախման ժամանակ պարտություն կրեցին, և Իբրահիմ փաշան հայտնվեց շրջապատման մեջ: Որդուն շրջապատումից ազատելու համար օգնության փութաց Մուհամմեդ Ալին՝ մի մեծ զորախմբի գլուխ անցած: Նա մտավ Պաղեստին և ջախջախիչ հարված հասցրեց պաղեստինցի ապստամբներին, խստորեն պատժեց նրանց և շրջապատումից ազատեց Իբրահիմին:

Ապստամբական ուժեղ կենտրոն առաջացավ Սիրիայի Հաուրան շրջանում, որտեղ 1837 թ. ապստամբեցին դրուզները, որոնց միացավ Անդրլիբանանի դրուզական գյուղացիությունը: Դրուզները հինգ տարի ժամանակով Իբրահիմի հրամանով ազատված էին զինվորական պարտականությունից և բանակ չէին զորակոչվում: Այդ ժամկետը ավարտվեց 1837 թ., և Իբրահիմը հրաժարվեց երկարացնել դրուզներին տրված արտոնության ժամկետը, և նրանք նույնպես զորակոչվեցին բանակ, ինչը թելադրված էր Թուրքիայի հետ առաջիկա պատերազմի անհրաժեշտությունից: Հենց դա էլ դարձավ ապստամբության պատճառ: Ապստամբներն ամրացան ալ–Լեջա վայրում, որն անապատում էր, և հոջողությամբ հետ էին մղում եգիպտացիների գրոհները: Ի վերջո Իբրահիմին հաջողվեց 1838 թ. դաժանորեն ճնշել դրուզների դիմադրությունը:

Այդ և այլ հակաեգիպտական ընվզումների ճնշումը, հարկավ, հանգստություն չբերեց Սիրիային և Պաղեստինին:

Այսպիսին էր իրադրությունը Սիրիայում, երբ 1839 թ. ապրիլի 21–ին սկսվեց եգիպտա–թուրքական երկրորդ պատերազմը, որի նախահարձակը Թուրքիան էր: Թուրքական 100 հազարանոց բանակը ներխուժեց Սիրիա՝ նպատակ ունենալով ջախջախել եգիպտական բանակը և վերականգնել օսմանյան տիրապետությունը Սիրիայի, Պաղեստինի և արաբական մյուս տարածքների վրա: Եգիպտական կողմը պատրաստ էր թուրքական հարձակմանը, ուստի և անակնկալի չեկավ: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ հուլիսի 24–ին Հյուսիսային Սիրիայի Նիզիբ բնակավայրի մոտ, որն ավարտվեց թուրքական բանակի լիակատար պարտությամբ: Թուրքիան կորցրեց նաև իր ռազմական նավատորմը և ըստ էության մնաց առանց կանոնավոր ու մարտունակ ռազմական ուժերի: Այս անգամ ևս եգիպտական զորքերի առջև բաց էին Կոստանդնուպոլիս տանող ուղիները և օսմանյան մայրաքաղաքը գրավելու հնարավորությունները, բայց Մուհամմեդ Ալին չօգտվեց դրանից, քանի որ նա այս անգամ չէր հետապնդում նոր տարածքներ գրավելու նպատակներ: Ինչ որ պետք էր, նա արդեն վերցրել էր առաջին պատերազմի ընթացքում: Մուհամմեդ Ալին ցանկանում էր, որ սուլթանը ճանաչի իր դինաստիական իրավունքները բոլոր այն արաբական տարածքների նկատմամբ, որոնք այդ պահին նրա տիրապետության տակ էին: Խոսքը ոչ միայն Եգիպտոսի, այլև Սուդանի, Սիրիայի, Պաղեստինի, Լիբանանի, Արաբիայի և Պարսից ծոցի գոտում գտնվող տարածքների մասին էր: Եվ հավանաբար թուրքական նոր սուլթան Աբդուլ–Մաջիդը գնար բանակցությունների Մուհամմեդ Ալիի հետ, եթե չլիներ եվրոպական երկրների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Ավստրիայի, Ռուսաստանի և Պրուսիայի միջամտությունը: Նրանք զրկեցին Մուհամմեդ Ալիին իր հաղթանակի պտուղներից օգտվելուց: Առանձնապես ակտիվ էր և Մուհամմեդ Ալիի նկատմամբ անզիջում դիրք գրավեց Անգլիան: Եվրոպական տերությունները գերադասում էին թույլ և իրենցից կախում ունեցող Օսմանյան կայսրությունը ուժեղ Եգիպտոսից: Մեծ Բրիտանիան վերջնագիր ներկայացրեց Մուհամմեդ Ալիին, որը ստեղծված պայմաններում նա հարկադրված էր ընդունելու: Այդ պայմաններն իրենց արտացոլումը գտան օսմա-

նյան սուլթանի 1841 թ. հունիսի 1–ի ֆերմանում: Դրանով սուլթանը Մուհամմեդ Ալիին ժառանգության իրավունք շնորհեց միայն Եգիպտոսի և Սուդանի նկատմամբ, իսկ մնացած բոլոր տարածքները՝ Սիրիան, Պաղեստինը, Արաբիան, Կիլիկիան, Կրետե կղզին, վերադարձվում էին օսմանյան սուլթանին:

Մուհամմեդ Ալիի հրամանով Իբրահիմը եգիպտական բոլոր զորքերը դեռևս նախքան այդ ֆերմանի հրապարակումը սկսել էր դուրս բերել Սիրիայից և մնացած բոլոր արաբական տարածքներից, որոնք տվյալ պահին այնտեղ էին: 1841 թ. այդ երկրամասում այլևս ոչ մի եգիպտական զինվոր չկար:

2. ՄՈՒՍՈՒԼՄԱՆ–ՔՐԻՍՏՈՆՅԱ ԲԱԽՈՒՄՆԵՐԸ 1840–1860 ԹԹ.

Եգիպտական զորքերի հեռանալուց հետո Սիրիայում վերահաստատվեց օսմանյան տիրապետությունը: Օսմանյան սուլթանը դարձավ ոչ թե ձևական, այլ Սիրիայի, Պաղեստինի և հարակից այլ տարածքների իրական տիրակալը: Իսկ դա նշանակում էր, որ վերականգնվեց կառավարման օսմանյան համակարգը՝ իր բոլոր այլանդակություններով և բռնություններով:

Ժամանակագրական առումով դա համընկավ արաբական աշխարհում և տարածաշրջանում մի շարք կարևոր իրադարձությունների հետ, որի մեջ ներգրավվեց նաև Սիրիան: Առաջին հերթին նկատի ունենք արաբների ազգային–մշակութային զարթոնքը՝ Նահդան, որի կենտրոններից մեկը դարձավ Սիրիան: Նահդան նշանակում էր նաև ազգային ինքնագիտակցության արթնացում և զարթոնք, որն իր սուր ծայրով ուղղված էր օսմանիզմի և թուրքական տիրապետության դեմ: Սակայն XIX դարի կեսերին՝ 1840–1860–ականներին, խիստ սրվեցին ներհամայնքային հարաբերությունները մուսուլմանների և քրիստոնյաների միջև Սիրիայում և Լիբանանում: Հիմնական գործող համայնքներն էին մարոնի քրիստոնյա և դրուզ շիական մուսուլմանական համայնքները, որոնց միջև հակամարտությունները ունեին պատմական խոր արմատներ և պարբերաբար դրսևորվում էին զանազան, այդ թվում նաև արյունալի բախումների ձևերով, իսկ հաճախ էլ վերածվում էին սպանդի: Այդպիսի իրավիճակ ստեղծվեց 1845–1860 թթ. Լիբանանում, որն այնուհետև սովորաբար տարածվում էր Սիրիա: Ե՛վ մարոնիները, և՛ դրուզներն արաբներ են, որոնք միմյանցից տարբերվում են կրոնադավանական պատկանելությամբ, որը սովորական երևույթ է արաբների մոտ: Մարոնի կամ մարոնական անունը սերում է սիրիական Օրոնտես գետի մոտ գտնվող Սուրբ Մարոնի վանքի անունից: Մարոնականները, որոնց բնակության հիմնական արեալը Սիրիան և Լիբանանն են, Մարոնի հետնորդներն են: Դավանական առումով մարոնիները քրիստոնյա մոնոֆելիթներ են: XVII դարում մարոնի հոգևոր ղեկավարությունը Հռոմի պապին ճանաչեց մարոնի եկեղեցու պետ, որը, սակայն, չէր նշանակում, թե նրանք դարձան Վատիկանին ենթակա կաթոլիկներ: Նրանք պահպանեցին իրենց ինքնուրույնությունը և Վատիկանի հետ լոկ կապ հաստատեցին:

Ինչ վերաբերում է դրուզներին, ապա նրանք հայտնվել են XI դարում: Նրանք շիիզմի աղանդներից մեկն են, որոնք ասպարեզ իջան իսմաիլիզմի երկփեղկումից հե-

տոռ: Իսմաիլիզմից անջատված մուսուլման հոգևորականության մի խումբ Ֆաթիմյան խալիֆա ալ–Հաքիմին, որը կառավարել է 996–1021 թթ. և անհետացել առեղծվածային պայմաններում, ճանաչեց որպես մարդկային կերպարում մարմնավորված աստված: Այդ ուսմունքը մեծ հաջողություն ունեցավ Սիրիայի և Լիբանանի լեռնաբնակ արաբների մեջ, և նրա հետևողական կողմնակիցն էր Դարազին, որի անունից էլ ծագեց «դրուզ» աղանդի անվանումը: Գրականության մեջ հանդիպում է նաև «դարազի» ձևը, սակայն ավելի գործածական է դրուզը:

Ահա այս երկու՝ մարոնի և դրուզ համայնքները առաջատար դեր են խաղացել Լիբանանում, նրա ներքաղաքական կյանքում, ինչ–որ չափով նաև Սիրիայում: Երկու համայնքների և նրանց ցեղապետերի միջև մշտապես և փոփոխակի հաջողություններով պայքար է ընթացել իշխանության, կալվածքների, իրավունքների և այլ արտոնությունների համար:

Այդ պայքարին մշտապես միջամտել են օսմանյան իշխանությունները, լարել նրանց միմյանց դեմ և նրանց օգտագործել իրենց նպատակների համար: Իսկ XIX դ. սկզբներից մարոնի–քրիստոնյա հակամարտությանը միջամտում էին նաև Անգլիան և Ֆրանսիան, որոնք արդեն սկսել էին իրենց քաղաքական և տնտեսական ներթափանցումն արաբական երկրներ և իրենց դաշնակիցներ էին փնտրում այդ երկրներում: Ստացվեց այնպես, որ մարոնիների թիկունքում կանգնած էր Ֆրանսիան, իսկ դրուզների թիկունքում՝ Անգլիան:

Մարոնի–դրուզ հակամարտությունը իշխանության համար կրկին սրվեց 1840–ականների կեսերին և 1860–ականների սկզբներին, որոնք վերածվեցին արյունալի բախումների: Այդպիսի ընթացք ստացան մարոնի–դրուզ բախումները 1845 թ.: Սկզբնական փուլում թուրքերը պաշտպանում էին դրուզներին ընդդեմ մարոնիների: Նրանց թողտվությամբ դրուզներն ահավոր ջարդեր կազմակերպեցին: Լիբանանի դրուզներին օգնություն էին ցույց տալիս նաև Սիրիայի Հաուրանի և Վադի ալ–Թայմի շրջանների դրուզները: Քիչ չէին դեպքերը, երբ թուրքերն իրենք էին սպանում նրանց անձնատուր եղած քրիստոնյաներին, իսկ նրանց զենքերը բաժանում դրուզներին:

Եվրոպական երկրների ճնշման տակ այդ արյունահեղությունը դադարեցվեց, և երկու համայնքների միջև 1845 թ. հունիսի 2–ին ձեռք բերվեց միջանկյալ համաձայնություն, որով նրանք պարտավորվում էին ձեռնպահ մնալ հարձակողական գործողություններից, ապաստան տալ անօթևաններին և գաղթականներին, Դամասկոսի, Սայդայի, Դեյր ալ–Կամարի, Տրիպոլիի ճանապարհների վրա տեղակայել թուրքական զորքեր և այլն:

Բայց նման համաձայնությունները սովորաբար խախուտ էին լինում, և ընդհարումները նորից ու նորից էին բորբոքվում: Նման իրադրություն ստեղծվեց Լիբանանում 1859–1860 թթ.: Մարոնի–դրուզ նոր ռազմական ընդհարում սկսվեց 1860 թ. մայիսին, որն անմիջապես վերածվեց զանգվածային կոտորածի: Այդ սարսափելի կոտորածը ցնցեց եվրոպական հասարակությանը, և եվրոպական հյուպատոսների ճնշման տակ օսմանյան սուլթանը կարգադրեց Սայդայի փաշա Խուրշիդին դիմել

քայլերի արյունահեղությունը դադարեցնելու և կողմերի միջև զինադադար կնքելու համար: Զինադադարը մարոնիների և դրուզների միջև կնքվեց 1860 թ. հուլիսի 6–ին:

Ինչպես նշել ենք, բախումները Լիբանանում, որպես կանոն, իրենց շարունակությունն էին ունենում Սիրիայում: Այդպես եղավ նաև այս դեպքում: Հուլիսի 6–ի զինադադարից երեք օր անց՝ հուլիսի 9–ին, դրուզների և մարոնիների միջև բախումների նոր ճակատ բացվեց Դամասկոսում: 1860 թ. հուլիսի 9–11–ը՝ երեք օր շարունակ մուսուլմաններն անխնա կոտորում էին քրիստոնյաներին, ավերում և հրկիզում նրանց եկեղեցիներն ու տաճարները, սպանվեց մոտ 20 հազար քրիստոնյա: Զոհերի թիվն ու ավերածությունների չափերն անհամեմատ ավել կլինեին, եթե սպանդին չմիջամտեր և ի պաշտպանություն քրիստոնյաների հանդես չգար Ալժիրի ազատագրական շարժման ղեկավար Աբդ ալ–Կադիրը, որն անառարկելի հեղինակություն էր վայելում մուսուլմանների շրջանում: Նա Ալժիրում իր ղեկավարած հակաֆրանսիական ապստամբությունը ճնշելուց հետո հաստատվել էր Սիրիայի մայրաքաղաք Դամասկոսում: Ծնորհիվ նրա արիության և ջանքերի՝ հնարավոր եղավ մոլեռանդ ամբոխին հետ պահել հետագա ջարդերից:

Դամասկոսյան արյունալի դեպքերն առիթ դարձան եվրոպական երկրների նոր միջամտության համար, որի նախաձեռնությունը պատկանում էր Ֆրանսիային և նրա կայսր Լուի Նապոլեոն Գ–ին, որը Նապոլեոն Բոնապարտի զարմիկն էր: Նա փորձում էր ամեն բանում նմանվել իր մեծ հորեղբորը՝ առանց նրա տաղանդն ու տվյալներն ունենալու: Նա հայտարարեց իր պատրաստակամության մասին Սիրիա ֆրանսիական էքսպեդիցիոն կորպուս ուղարկելու վերաբերյալ Սիրիայում կարգ ու խաղաղություն հաստատելու նպատակով: Եվրոպական մյուս պետությունները մեծ դժգոհությամբ ընդունեցին ֆրանսիական կայսրի այդ ցանկությունը՝ շատ լավ հասկանալով, թե դրա տակ ինչ քաղաքական նպատակներ են թաքնված: Օսմանյան սուլթան Աբդուլ–Մաջիդը շտապեց հայտարարել, որ ինքն արդեն ամեն ինչ արել է Սիրիայում կարգը վերահաստատելու և հանցագործներին պատժելու համար: Սակայն Ֆրանսիան պնդում էր իր առաջարկությունները, և 1860 թ. սեպտեմբերի 5–ին Ֆրանսիան, Անգլիան, Ավստրիան, Ռուսաստանը, Պրուսիան և Թուրքիան պայմանագիր ստորագրեցին եվրոպական զորքեր Սիրիա ուղարկելու համար: Պայմանագրում նշվում էր, որ նրանց մտահոգությունը Սիրիայում խաղաղություն հաստատելն է, որի համար նրանք նպատակահարմար են համարում Սիրիա ուղարկել մի զորաբանակ՝ բաղկացած 12 հազար զինվորից, որից 6 հազարը հատկացնում էր Ֆրանսիան: Զորքերը Սիրիա էին ուղարկվում վեց ամիս ժամանակով:

Ֆրանսիական և եվրոպական մյուս երկրների զորքերի ժամանումը Բեյրութ մարոնիներն ընդունեցին մեծ ուրախությամբ ու խանդավառությամբ, իսկ դրուզները և սուննիները, ընդհակառակը, չէին թաքցնում իրենց հիասթափությունը և դժգոհությունը:

Ֆրանսիական զորքերն ըստ էության ոչինչ չունեին անելու, որովհետև մինչև նրանց ժամանելը թուրքական իշխանությունները հասցրել էին ջարդերի մի քանի կազմակերպիչների և հանցագործների պատժել:

Ֆրանսիական զորքերի Սիրիայում և Լիբանանում մնալու ժամկետը լրանում էր 1861 թ. մարտի 5–ին: Սակայն Ֆրանսիան հրաժարվում էր իր զորքերը դուրս բերելուց՝ պատճառաբանելով, թե քրիստոնյաներին կոտորելու վտանգը դեռ չի վերացել, շարունակվում են կաղոպուտն ու թալանը: Ֆրանսիան 1861 թ. հունվարի 18–ին դիմեց եվրոպական պետություններին՝ առաջարկելով նրանց քննարկել Սիրիայում և Լիբանանում իր զորքերը թողնելու ժամկետի երկարաձգման հարցը: Երկար բանակցություններից հետո նրանք ի վերջո համաձայնվեցին ֆրանսիական զորքերի՝ Սիրիայու և Լիբանանում մնալու ժամկետը երակարաձգել մինչև 1861 թ. հունիսի 5–ը:

Ֆրանսիան այլընտրանք չուներ և իր զորքերը դուրս բերեց նշված ժամկետում: Դրանով ձախողվեց Սիրիայի վրա Ֆրանսիայի տիրապետությունը հաստատելու Լուի Նապոլեոն Գ–ի քաղաքականությունը:

3. ԹԱՆԶԻՄԱԹԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՓՈՐՁԵՐԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ

Սիրիան դեռևս եգիպտական տիրապետության ներքո էր, երբ 1839 թ. նոյեմբերին հռչակվեց Թանզիմաթի բարենորոգումների դարաշրջանի սկիզբը: Թանզիմաթի սկզբունքները որոշ կիրառում գտան բանակի վերակառուցման և վարչական բաժանումների ոլորտներում: Օսմանյան բանակը բաժանվեց վեց կորպուսների, որոնցից մեկը՝ հինգերորդը, տեղակայվեց Սիրիայում և Պաղեստինում: Այն ստացավ «Արաբստան օրդուսի», այսինքն՝ «Արաբական բանակ» անվանումը, որի շտաբը Դամասկոսում էր: Կորպուսի հրամանատարը՝ մուշիրը, և նրան ենթական ռազմական ուժերն այլևս ոչ մի առնչություն չունեին տեղական փաշայի հետ և անմիջապես ենթարկվում էին կայսրության ռազմական նախարարին:

Ճշգրտվեցին վալիների՝ նահանգապետ–փաշաների վարչական իրավասությունները: Նախքան Թանզիմաթը վալիներն օժտված էին չափազանց լայն լիազորություններով: Սիրիայի էյալաթների փաշաներն իրականացնում էին վարչակառավարական, ֆինանսատնտեսական և ռազմական գործառույթներ: Թանզիմաթը նրանց զրկեց ռազմական և ֆինանսական լիազորություններից, որոնք անցան կառավարության համապատասխան նախարարներին:

Թանզիմաթի առաջին փուլում փոփոխություններ տեղի ունեցան պատմական Սիրիայի վարչատարածքային կառուցվածքում: 1841 թ. Տրիպոլիի և Սայդայի փաշայությունները միավորվեցին մեկ էյալաթի մեջ, որի կենտրոնը դարձավ Բեյրութը, իսկ այն տարածքը, որը սովորաբար կոչվում էր Պաղեստին, կազմավորվեց որպես Երուսաղեմի սանջաք, որը, սակայն, ենթակա էր Բեյրութի փաշային:

Թանզիմաթը, ինչպես նշվել է, Սիրիայում և արաբական մյուս երկրներում չէր ներառում, անգամ չէր շոշափում ագրարային և տնտեսական հարաբերությունների ոլորտը: Բնականաբար, Սիրիայում, Իրաքում, Պաղեստինում և արաբական մյուս երկրներում չէր դրվում ավատատիրության վերացման հարցը: Չնայած այդ

հանգամանքին՝ ավատատեր–հողատերերը և շեյխերն ամեն կերպ դիմադրում էին այն սահմանափակ նորամուծություններին, որոնք սուլթանը առանց այդ էլ մի առանձին եռանդով չէր իրականացնում: Սակայն Սիրիայի և Պաղեստինի հասարակ գյուղացիները միամտորեն Թանզիմաթն ընկալեցին որպես ազատություն ձեռք բերելու հնարավորություն: Այդ հողի վրա Սիրիայում տեղի ունեցան մի շարք հակաավատատիրական ելույթներ և ապստամբություններ, ինչպես գյուղացիական 1852–1853 թթ. ապստամբությունը Հաուրանում և 1859 թ. ապստամբությունը Հալեպում, որոնք դաժանորեն ճնշվեցին:

Ամփոփելով կարելի է ասել, որ Թանզիմաթը չլուծեց և չէր էլ կարող լուծել Օսմանյան կայսրության, այդ թվում՝ նրա մեջ մտնող արաբական երկրների առջև կանգնած որևէ լուրջ քաղաքական, տնտեսական, սոցիալական և ազգային հիմնախնդիր:

4. ՍԻՐԻԱՆ ԱԲԴՈՒԼՀԱՄԻԴՅԱՆ ԶՈՒԼՈՒՄԻ ԵՎ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1876–1914 ԹԹ.)

1876 թ., ինչպես արդեն նշվել է, սուլթանական գահին բազմեց 34–ամյա Աբդուլ Համիդ Բ–ն, որի սուլթանության 33 տարիներն Օսմանյան կայսրության պատմության մեջ մտել են որպես զուլումի դարաշրջան, որի ընթացքում տեղի ունեցան հպատակ ժողովուրդների՝ քրիստոնյա թե մուսուլման՝ հայերի, արաբների, հույների, ասորիների, բուլղարների և կայսրության մյուս ժողովուրդների զանգվածային կոտորածներ և դաժան հալածանքներ: Արաբ մի շարք պատմաբաններ՝ Ֆուադ Հասան Հաֆիզը, Մրվան Մուդավարը, Մուսա Պրենսը, Օսման ալ–Թուրքը, Սալիհ Զահիր ալ–Դինը և այլք, Աբդուլ Համիդին բնութագրում են որպես «աս–սուլթան ալ–ահմար»՝ «կարմիր սուլթան»:

Արաբները զուլումի տարիներին բազմիցս ապստամբել են: Դրանցից նշենք դրուզների 1896 թ. ապստամբությունը սիրիական Ջեբել Դրուզ լեռնային շրջանում՝ Շիբլի Աթրաշի գլխավորությամբ, որի արդյունքում ապստամբ գյուղացիները կարողացան ստիպել Բարձր դռանը փոխել Ջեբել Դրուզի կառավարչին և նրա փոխարեն նշանակել Շիբլի Աթրաշին: Դրուզները 1899 թ. կրկին զենքի դիմեցին, երբ սուլթանը զինապարտության անվան տակ փորձեց բանակ զորակոչել դրուզ տղամարդկանց և նրանց հեռացնել իրենց բնակավայրերից: Նրանք իսկական ճակատամարտ տվեցին իրենց դեմ ուղարկված թուրքական զորքերին: Թեև թուրքերին հաջողվեց ճնշել դրուզների ապստամբությունը, բայց նրանք վերջնականապես չհանձնվեցին և 1906 թ. կրկին ապստամբեցին:

Ապստամբական կարևոր կենտրոնի էր վերածվել Հալեպը: Այստեղ 1895 թ. ապստամբություն բռնկվեց, որն արաբական երկրներում քաղաքային բնակչության առաջին խոշոր ելույթն էր: Ապստամբները արհեստավորները, վաճառականները և քաղաքային բնակչության չքավոր խավերն էին, որոնք այլևս չէին դիմանում թուրքական իշխանությունների կամայականություններին: Թուրքերին հաջողվեց ճնշել Հալեպցիների այդ զինված ելույթը, բայց միևնույնն է, քաղաքը երկար ժամանակ չէր

հանդարտվում: Ուշագրավ է նաև Բեյրութի քաղաքային բնակչության հակաթուրքական ելույթը 1903 թ.:

Հակազուլումյան շարժումները միայն ապստամբություններով չէին արտահայտվում: Սիրիայում և արաբական այլ երկրներում տեղի էին ունենում գաղտնի հավաքներ, ժողովներ, քննարկումներ, որի ընթացքում արաբական մտավորականությունը, գրողները, լրագրողները, ուսուցիչները, ազգային առաջադեմ և հայրենասեր զինվորականությունը և այլ խավեր իրենց տեսակետներն էին արտահայտում զուլումի ճիրաններից ազատվելու պայքարի ձևերի և ուղիների վերաբերյալ: Այդ շարժման մեջ կարևոր փուլ եղավ արաբական երկրներում և արտասահմանում արաբական զանազան կազմակերպությունների և միությունների, գաղտնի ընկերությունների ձևավորումը: Սիրիական և լիբանանյան գործիչները, որոնք հաստատվել էին Եգիպտոսում, շարունակում էին պայքարը զուլումի վարչակարգի դեմ, կոչ անում արաբներին համախմբվելու և միասնական ուժերով հանդես գալու:

Աբդուլ Համիդի զուլումի և դրա հետ կապված հալածանքների և զանգվածային ջարդերի քաղաքականությունը ստիպեց արաբ շատ գործիչների վերանայել իրենց դիքորոշումը «Վաթան»՝ «Հայրենիք» հասկացության նկատմամբ: Սկզբնական շրջանում շատ արաբներ պաշտպանում էին «Օսմանյան հայրենիքի» գաղափարը և նրա միասնության սկզբունքը: Սակայն զուլումի քաղաքականությունը և բռնություններն արաբների նկատմամբ ստիպեցին նրանց շտկումներ մտցնել իրենց մոտեցումների մեջ: Դրա ցայտուն օրինակն է Բուտրուս ալ–Բուստանիի և նրա հրատարակած «Ալ–Ջինան» պարբերականի շուրջը համախմբված սիրիական, լիբանանյան և պաղեստինյան մտավորականության և ազգային գործիչների մոտեցումը: Նրանք, չհրաժարվելով «Օսմանյան վաթանի» գաղափարից, առաջ քաշեցին և պաշտպանեցին «բիլադի», այսինքն՝ «երկրի» գաղափարը: Ըստ այդմ՝ կար ընդհանուր հայրենիք՝ Օսմանյան վաթանը, բայց միաժամանակ կար տեղական հայրենիք՝ երկիրը կամ բիլադը: Այդ կապակցությամբ «Ալ–Ջինանը» գրում էր. «Կայսրությունը մեր վաթանն է, բայց մեր երկիրը Սիրիան է»:

Սակայն Սիրիայում և արաբական երկրներում կային նաև ավելի արմատականորեն տրամադրված գործիչներ, որոնք արդեն այդ ժամանակ կանգնած էին արաբական երկրներն Օսմանյան կայսրությունից անջատելու դիրքերում:

1875 թ. Բուտրուս ալ–Բուստանիի շուրջը համախմբված արաբ գործիչները ստեղծեցին գաղտնի ընկերություն, որի գործունությունն ակտիվացավ 1870–ականների վերջերին և 1980–ականների սկզբներին: Նրանց հիմնական քաղաքական պահանջներն էին՝ Սիրիայի և Լիբանանի ինքնավարություն կայսրության սահմաններում, արաբերենի ճանաչումը պաշտոնական լեզու, սահմանափակումների վերացում, կարծիքների արտահայտման ազատություն և այլն: Բեյրութում ստեղծված այդ ընկերությունն իր մասնաճյուղերն ուներ Սիրիայում՝ Դամասկոսում, Սուվեյդիայում և Ջեբել Դրուզում: Սակայն Սիրիայում կային ուժեր, որոնց չէր բավարարում Սիրիայի ինքնավարությունը Լիբանանի հետ, այլ պահանջում էին պատ-

մաաշխարհագրական Սիրիայի ինքնավարությունը, որը կընդգրկեր Տավրոսի լեռներից մինչև Սինայի թերակղզին:

Այս շրջանում քաղաքական ասպարեզ իջած հակազաուլումյան դիրքորոշում ունեցող արաբական կարևոր կազմակերպություններից էր նաև «Արաբական հայրենիքի լիգան», որը 1904 թ. հիմնել էր Նաջիբ Ազուրին Փարիզում: Նա արաբների անկախության և անկախ պետության համոզված կողմնակիցն էր, որի անբաժան մասն էր կազմելու նաև Սիրիան: Այդ առումով Նաջիբ Ազուրիի հիմնած կազմակերպությունը դրականորեն տարբերվում էր արաբական մյուս կազմակերպություններից: Նրա հետևորդների մեջ քիչ չէին սիրիացիները:

1908 թ. հուլիսին Օսմանյան կայսրությունում իշխանության գլուխ եկան երիտթուրքերը: Սիրիայի արաբները խանդավառությամբ դիմավորեցին երիտթուրքական հեղաշրջումը: Նրանք հավատացին երիտթուրքերի հռչակած ազատության, արդարության և հավասարության կեղծ կարգախոսներին: Պատահականություն չէր, որ սիրիացիները ևս անդամակցեցին 1908 թ. սեպտեմբերի 2–ին լույս աշխարհ եկած «Արաբ–օսմանյան եղբայրություն» կազմակերպությանը, որը ձևավորվեց մայրաքաղաքում, և որի գլուխ կանգնած էր թուրքական բանակի սպա, երիտթուրքական «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության հիմնադիր անդամ Սադիկ ալ–Ազըմը: Դրա անդամներն էին արաբ պաշտոնյաներ, զինվորականներ, մտավորականներ և ուսանողներ: Այդ կազմակերպությունն ուներ իր մասնաճյուղերը կայսրության արաբական բոլոր շրջաններում, ներառյալ Սիրիան:

Անդամակցելով «Արաբ–օսմանյան եղբայրության» կազմակերպությանը՝ արաբները նահանջ կատարեցին իրենց մի շարք սկզբունքային դիրքորոշումներից, որոնք նրանք ընդունել էին նահդայական շարժման և դրան հաջորդած շրջանում: Մասնավորապես այդ կազմակերպությունն ընդունեց «օսմանյան ազգի» վերաբերյալ երիտթուրքերի հիմնադրույթը: Նահանջ կատարվեց մի այնպիսի առանցքային հարցում, ինչպիսին արաբական երկրների անկախության հարցն էր, որը լայնորեն քննարկվում էր արաբական երկրներում XIX դարի վերջերից XX դարի սկզբները: Կազմակերպության ծրագրում ոչ մի խոսք չկար ոչ միայն արաբների անկախության, այլև նրանց ինքնավարության մասին: Դրա փոխարեն «Արաբ–օսմանյան եղբայրություն» կազմակերպության գլխավոր պահանջը դարձավ «սահմանադրության պաշտպանությունը, բոլոր ռասաների միացումը հանուն սուլթանի»:

Երիտթուրքերի հետ սերտ հարաբերություններ հաստատեցին նաև արաբ պատգամավորները, որոնք սահմանադրությունը վերականգնելուց հետո՝ 1908 թ. աշնանը կայացած խորհրդարանական ընտրությունների ժամանակ, ընտրվել էին օսմանյան նոր խորհրդարանի անդամ: Երիտթուրքերն ամեն ինչ արեցին, որ թուրքերը մեծամասնություն կազմեն խորհրդարանում, չնայած այն հանգամանքին, որ կայսրության ամենամեծ ժողովուրդը արաբներն էին: Արդյունքում՝ 245 պատգամավորական տեղերից արաբները ստացան ընդամենը 60 տեղ, իսկ թուրքերը՝ 150: Պատկերն ավելի մռայլ էր սենատում, որը բաղկացած էր սուլթանի կողմից նշանակվող 40 սենատորներից: Նրանցից միայն երեքն էին արաբ: Արաբ պատգամավոր-

ներն այդ փուլում իրենց հայացքներով մոտ էին երիտթուրքերին, ամեն բանում նրանց և հնազանդորեն հետևում էին նրանց:

Այսպիսով՝ երիտթուրքերի իշխանության գլուխ գալու առաջին փուլում արաբները չկարողացան ճիշտ կողմնորոշվել և առաջադրել կամ պաշտպանել արաբների համար առանցքային նշանակություն ունեցող որևէ հարց:

Բայց շուտով արաբները սթափվեցին և աստիճանաբար ընդունեցին ավելի իրատեսական դիրքորոշում: Դրան նպաստեց նաև սուլթան Աբդուլ Համիդը, որը հեղափոխությունից հետո ևս շարունակում էր մնալ սուլթանի գահին: Նա 1909 թ. կատարեց պետական հեղաշրջում, որի ընթացքում մայրաքաղաքում սպանվեց Սիրիայից ընտրված պատգամավոր դրուզ էմիր Մուհամմեդ Արսլանը:

Բայց սուլթանը գահին երկար չմնաց: Երիտթուրքերին հաջողվեց շատ արագ ճնշել սուլթանական խռովությունը, գահընկեց անել նրան և կրկին գրավել իշխանությունը:

Երիտթուրքերը որդեգրեցին նոր քաղաքականություն, որի առաջին զոհերից մեկը դարձավ «Արաբ–օսմանյան եղբայրություն» արաբական կազմակերպությունը, որի գործունեությունը երիտթուրքերն արգելեցին 1909 թ.: Փակվեցին նաև բազմաթիվ հայկական, ալբանական, հունական և այլ կազմակերպություններ, որոնք այլևս երիտթուրքերին պետք չէին:

Երիտթուրքերի այդ նոր քաղաքականության իմաստն այն էր, որ նրանք հրաժարվեցին օսմանիզմից, որը, ինչպես նշում է արաբ պատմաբան Ա. Հաուրանին, «չափազանց փխրուն և արհեստական զգացում էր», և որդեգրեցին ամբողջ Օսմանյան կայսրության և նրա բոլոր ժողովուրդների բռնի թուրքացման քաղաքականությունը՝ որպես կայսրության ամբողջականությունը պահպանելու միակ հուսալի ուղի: Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդների՝ արաբների, հայերի, հույների, քրդերի, ասորիների, բալկանյան և այլ ժողովուրդների բռնի թուրքացումը դարձավ երիտթուրքերի ազգային քաղաքականության հիմնաքարը և վերջնական նպատակը, որը նրանք կիրառում էին հետևողականորեն և ամենադաժան միջոցներով:

Հարկ է ուշադրություն դարձնել ևս մի կարևոր հանգամանքի վրա: Խոսքը պանթյուրքիզմի կամ պանթուրանիզմի մասին է: Եթե թուրքացման քաղաքականությունը նպատակաուղղված էր Օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդների բռնի ձուլմանը, ապա պանթյուրքիզմը հասցեագրված էր կայսրության սահմաններից դուրս գտնվող թրքախոս ժողովուրդներին՝ նպատակ ունենալով նրանց միավորելու և ստեղծելու մի վիթխարի Թյուրքական կայսրություն, որը պետք է ձգվեր Բոսֆորի ափերից մինչև Թուրքեստան և Չինաստան: Դա անհանգստացնում էր արաբներին: Ինչպես նշում է սիրիացի պատմաբան Մրվան Մուդավարը. «Նրանում տեղ չէր մնում մյուս ժողովուրդների համար, այնպիսի ժողովուդների, ինչպիսիք են արաբները և հայերը»:

Արաբական ազգային քաղաքական շրջանակներում եռանդուն քննարկումներ էին գնում այն հարցի շուրջ, թե իրենք ինչ քաղաքականություն պիտի որդեգրե-

ին, որն ապահովեր արաբների՝ որպես էթնոսի պահպանումը և զարգացումը: Այդ հարցին պատասխան գտնելու պահանջը կյանքի կոչեցին մի շարք արաբական նոր կազմակերպություններ՝ իրենց համապատասխան ծրագրային պահանջներով:

Նշենք դրանցից ամենակարևորներից մի քանիսը:

1909 թ. Կոստանդնուպոլսում ձևավորվեց այսպես կոչված «Գրական ակումբը», որն իր բաժանմունքներն ուներ Սիրիայում և Իրաքում: Դրա պատմական ծառայությունն այն էր, որ հրաժեշտ տվեց իր նախորդի՝ «Արաբ–օսմանյան եղբայրություն» կազմակերպության քաղաքական մոլորությանը՝ օսմանների հետ արաբների եղբայրության գաղափարին և քողարկված ձևով կանգնեց օսմանյան բռնություններին դիմակայելու դիրքերում: Պատահականություն չէր, որ դրա ծոցից դուրս եկավ «Ալ–Կահթանիա» կազմակերպությունը, որն ըստ էության գաղտնի կազմակերպություն էր: Այն իր բաժանմունքներն ուներ արաբական հինգ կենտրոններում, այդ թվում նաև Սիրիայում: Դրա հիմնական պահանջն էր Օսմանյան կայսրությունը վերածել Արաբ–օսմանյան դուալիստական կայսրության, ինչպես Ավստրո–հունգարական կայսրությունն էր: Նրա կազմում պետք է ձևավորվեր արաբական թագավորությունը:

1911 թ. մի խումբ արաբներ Սիրիայից, Լիբանանից և Հորդանանից կազմակերպեցին «Երիտասարդ արաբների ընկերությունը», որը ձգտում էր արաբների քաղաքական կյանքում նույն դերը կատարելու, ինչ երիտթուրքերը Թուրքիայի քաղաքական կյանքում: Երիտարաբները ծրագրում էին դառնալ արաբների առաջնորդը, արաբներին ազատել թուրքական ճնշումից և նվաճել անկախություն: Կազմակերպության ղեկավարությունը 1913 թ. Փարիզից տեղափոխվեց Բեյրութ, ապա Դամասկոս:

1912 թ. դեկտեմբերին Կահիրեում սիրիացիների նախաձեռնությամբ հիմնվեց «Վարչական ապակենտրոնացման օսմանյան կուսակցությունը», որը կրճատ կոչվում է «Լամարքազիա», այսինքն՝ «Ապակենտրոնացում»: Դրան միացան նաև լիբանանցիները, իրաքցիները, պաղեստինցիները և եգիպտացիները: Կազմակերպությունը ղեկավարում էր սիրիացի Ռաֆիկ ալ–Ազըմը, իսկ օգնականն էր Աբդ Համիդ ալ–Զահիրավին Հոմսից: Այն դարձավ արաբական ամենահեղինակավոր և զանգվածային կազմակերպությունը և գործում էր օրինական կերպով:

Ապակենտրոնացման կուսակցությունը կամ Լամարքազիան հանդես էր գալիս Օսմանյան կայսրության ապակենտրոնացման և արաբական վիլայաթներին հատուկ ինքնավարության կարգավիճակ տալու պահանջով: Վիլայաթների կամ նահանգների ինքնավարությունները պետք է ունենային իրենց կառավարությունները և նահանգային ժողովները՝ օժտված լայն լիազորություններով, այդ թվում՝ իրենց ոստիկանությունը, արդարադատությունը, ֆինանսական համակարգը, իսկ տեղական պաշտոնյաների մեծ մասը պետք է արաբներ լինեին: Արաբները պետք է ավելի լայն մասնակցություն ունենային օսմանյան կառավարությունում, սենատում և մեջլիսում, իսկ արաբերենը պետք է հայտարարվեր պաշտոնական լեզու արաբական ինքնավար նահանգներում, գործավարությունը և դպրոցներում կրթությունը

պետք է տարվեին այդ լեզվով: Դրանք ընդունելի պահանջներ էին արաբական ամենալայն զանգվածների համար և հազարավոր մարդիկ էին մասնակցում Լամարքազիայի կազմակերպած հավաքներին ու իրենց աջակցությունը հայտնում կուսակցության վերոնշյալ պահանջներին: Լամարքազիան սերտ կապեր հաստատեց նաև արաբական այլ կազմակերպությունների հետ, որոնք այս կամ այն չափով կիսում էին ապակենտրանացման գաղափարները: Այն շփումների մեջ էր նաև թուրքական «լիբերալների» հետ, որոնց գլխավորում էր իշխան Սաբահէդդինը, որոնք կայսրության ապակողմնորոշման կողմնակիցներ էին: Լամարքազիան կապեր հաստատեց և համագործակցեց նաև հայերի հետ, որոնք նույնպես յուրահատուկ ձևով կողմ էին ապակենտրոնացման և ինքնավարության տեսակետներին: Եվ բնական էր, որ հենց Լամարքազիան իր վրա վերցրեց Արաբական առաջին կոնգրեսի գումարման նախաձեռնությունը, որը պետք է քննարկեր ապակենրոնացման վերաբերյալ տեսադրույթը և այն ներկայացներ օսմանյան իշխանություններին՝ որպես համաարաբական պահանջ:

Արաբական Առաջին կոնգրեսն իր աշխատանքները գումարեց 1913 թ. հունիսի 18–ին Փարիզում, որը տևեց մինչև հունիսի 23–ը: Նրա աշխատանքներին որպես պատվիրակներ մասնակցում էին 24 արաբ քաղաքական գործիչներ Սիրիայից, Իրաքից, Լիբանանից և ԱՄՆ–ի արաբական համայնքից: Հյուրի կարգավիճակով մասնակցում էին 200 մարդ, այդ թվում՝ հայերի մեկ ներկայացուցիչ: Մասնակիցների կեսը մուսուլմաններ, իսկ մյուս կեսը քրիստոնյաներ էին:

Կոնգրեսում հարցերի քննարկումն անցնում էր շատ բուռն, և համաժողովը հիմնականում հավանություն տվեց Օսմանյան կայսրության ապակենտրոնացման և ինքնավարությունների ստեղծման վերաբերյալ Լամարքազիայի կուսակցության ծրագրին: Կոնգրեսում Օսմանյան կայսրությունից դուրս գալու և անկախ արաբական պետություն հռչակելու հարց չդրվեց և չքննարկվեց:

Հանդես գալով Կոնգրեսում՝ հայերի ներկայացուցիչը հայ ժողովրդի անունից լիակատար աջակցություն հայտնեց արաբներին, նրանց պայքարին և պահանջներին: Կոնգրեսն իր հերթին քննարկեց հայերի դրությունն Օսմանյան կայսրությունում և անդրադարձավ նրանց պահանջներին: Կոնգրեսի նախագահ Ալ–Զահրավին իր ելույթում հայտարարեց հետևյալը. «Մեր հայ եղբայրների դրությունը նման է մեր դրությանը: Նրանք այնպիսի մարդիկ են, ինչպես մենք, նրանք մտածում են այնպես, ինչպես մենք ենք մտածում, նրանք պահանջում են, ինչպես մենք: Եվ մենք հաջողություն ենք ցանկանում ինչպես մեզ, այնպես էլ նրանց: Մենք միասնական ենք Օսմանյան կայսրության ապակենտրոնացման պահանջի հարցում»: Կոնգրեսի ընդունված որոշումներում հատուկ կետ էր հատկացված հայկական պահանջներին, որտեղ ասված էր. «Կոնգրեսը հավանություն է տալիս օսմանյան հայերի պահանջներին, որոնք հիմնված են ապակենտրոնացման սկզբունքների վրա»: Այդ կետը քննարկվել է առանձին և ընդունվել միաձայն: Միաժամանակ կոնգրեսը հարկ է համարել հայ ներկայացուցչի միջոցով իր ողջույնները հղել հայ ժողովրդին:

Արաբական Առաջին կոնգրսը, բացի հիմնական փաստաթղթից, ընդունեց հավելյալ որոշում, որտեղ ասված էր. «Այս որոշումները քաղաքական ծրագրեր պետք է հանդիսանան օսմանյան արաբների համար, և պառլամենտական ընտրություններում նրանք կարող են աջակցել ամեն մի թեկնածուի միայն այն դեպքում, եթե նա պարտավորվի պաշտպանել և կենսագործել այդ ծրագրերը»:

Լամարքազիայի ծրագիրը և դրա հիման վրա Արաբական Առաջին կոնգրեսի ընդունած որոշումները, որոնք հասցեագրված էին երիտթուրքական կառավարությանը, ի վերջո չընդունվեցին վերջինիս կողմից և չէին էլ կարող ընդունվել, քանի որ երիտթուրքերը հակված էին կայսրության բոլոր ժողովուրդներին, այդ թվում նաև արաբներին բռնի թուրքացման տեսակետին, իսկ ապակենտրոնացումը չէր տեղավորվում այդ քաղաքականության շրջանակներում:

Այսպիսով՝ ընդհուպ մինչև Առաջին աշխարհամարտը Սիրիայի և արաբական բոլոր երկրների կարգավիճակում որևէ փոփոխություն տեղի չունեցավ, և նրանք պատերազմի մեջ մտան որպես Օսմանյան կայսրության երկրամասեր, թեև դա նրանց պատերազմը չէր:

5. ՍԻՐԻԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1914–1918 ԹԹ.)

Արաբական գործոնն իր որոշակի դերակատարումն ունեցավ Առաջին աշխարհամարտում, ինչպես զուտ ռազմական գործողությունների, այնպես էլ քաղաքական լուծումների տեսանկյունից: Քանի որ Օսմանյան կայսրությունը հանդես էր գալիս գերմանական բլոկի կազմում, ուստի Սիրիան, ինչպես նաև Պաղեստինը, Լիբանանը, Արաբիան և Իրաքը, որի մասին խոսվել է նախորդ գլխում, բացառիկ նշանակություն ունեին ոչ միայն Օսմանյան կայսրության, այլև նրա դաշնակից Գերմանիայի համար: Պատմաաշխարհագրական Սիրիան դարձավ այն միակ տարածքը, որը Թուրքիան և Գերմանիան կարող էին օգտագործել Արևելքում իրենց ռազմավարական ծրագրերի իրականացման համար: Այստեղից էին նրանք ծրագրում ներխուժել Եգիպտոս, հարված հասցնել Անգլիայի դիրքերին և նրան դուրս մղել Արաբական Արևելքից, այնուհետև ներթափանցել Հյուսիսային և Կենտրոնական Աֆրիկա:

Ելնելով այդ ռազմավարական խնդրից՝ Թուրքիան Գերմանիայի օգնությամբ փորձեց Սիրիան վերածել ռազմական ամրոցի:

Պատերազմի սկզբում Սիրիայում և Պաղեստինում տեղակայված թուրքական զորամիավորումները վերակազմավորվեցին, և ստեղծվեց թուրքական IV բանակը, որի շտաբի նստավայրը դարձավ Դամասկոսը: Բանակի հրամանատար նշանակվեց երիտթուրքական եռապետության (Թալեաթ, Էնվեր, Ջեմալ) անդամ, կայսրության ռազմածովային նախարար Ահմեդ Ջեմալ փաշան: Սակայն բանակի շտաբի պետ նշանակվեց գերմանական բանակի գնդապետ Կրես ֆոն Կրեսենշտայնը՝ ի հավելումն գերմանական ռազմական առաքելության, որը գլխավորում էր ֆելդմարշալ Լիման ֆոն Զանդերսը: Թուրքական բանակի ռազմական գործողությունների

ծրագրերը հաստատում էին գերմանացի ռազմական մասնագետները և միայն դրանից հետո դրվում գործողության մեջ: Այսպիսով՝ կարելի է ասել, որ թուրքական հիմնական ռազմական ուժերը կենտրոնացված էին Սիրիայում:

Ջեմալ փաշան, որը IV բանակի հրամանատարն էր, շուտով օժտվեց նաև քաղաքացիական ամենալայն լիազորություններով: 1914 թ. վերջերին նա նշանակվեց Սիրիայի կառավարիչ, և նրա ձեռքում կենտրոնացվեց ամբողջ քաղաքացիական իշխանությունը: Նա ռազմական դրություն մտցրեց Սիրիայում և իր կառավարման ներքո գտնվող Պաղեստինում և Լիբանանում: Նրա հրամանով թուրքական և նրա դաշնակից գերմանական բանակների պահանջները բավարարելու համար Սիրիայում, Պաղեստինում և Լիբանանում արաբներից բռնագրավվում էին սննդամթերքը, պարենը և անասունները: Շուտով լուրջ ճգնաժամ առաջացավ հացահատիկի ոլորտում: Հացահատիկի պաշարները թուրքական և գերմանական բանակների կարիքների բավարարման համար արաբներից բռնագրավելու հետևանքով երկրում սով սկսվեց: Սիրիայում սովից մահացածների թիվը միայն 1917 թ. կազմել է բնակչության մեկ տասներորդը, Լիբանանում՝ մոտ 100 հազար մարդ, Պաղեստինում՝ տասնյակ հազարներ: Լայն տարածում էր գտել Սիրիայում արաբներին բռնի կերպով տաժանակիր աշխատանքների մեջ ներգրավելը՝ կապված ռազմական շինարարական աշխատանքների հետ: Արաբները խուսափում էին թուրքական բանակում ծառայելուց, ուստի Ջեմալ փաշան բռնությամբ էր զորակոչում արաբներին: Նրանք ատում էին թուրքերին, որոնք արաբներին նայում էին վերևից, այդ պատճառով էլ մեծ էր արաբների, այդ թվում՝ սիրիացիների թիվը, որոնք լքում էին թուրքական բանակը և հաճախ անցնում անգլիացիների կողմը և անձնատուր լինում նրանց:

Սիրիան, Լիբանանը և Պաղեստինը հայտնվել էին տնտեսական փլուզման և սոցիալական խիստ լարված վիճակում: Արաբների մեջ խոր դժգոհություն և ատելություն էր կուտակվել թուրքերի և նրանց հակաարաբական քաղաքականության դեմ, որն անպայման պետք է պոռթկար: Եվ այդպես էլ եղավ: 1915 թ. ընբոստացան Սիրիայի և Պաղեստինի բնակիչները, որոնք ունեին երկու հիմնական պահանջ՝ հաց և խաղաղություն: Սովի մատնված արաբները հացից և խաղաղությունից բացի ուրիշ բան չէին ուզում, որոնք հնարավորություն կտային նրանց վերադառնալու իրենց տները: 1916 թ. լայն թափ ստացավ պարտիզանական շարժումը, որն ընդգրկեց Ջեբել Դրուզը, որը Սիրիայի ավանդական ապստամբական կենտրոններից մեկն էր, Դամասկոսի նահանգը և այլ շրջաններ, անգամ Հյուսիսային Լիբանանը:

Օսմանյան իշխանությունների դրությունը բավականին բարդացավ եգիպտական ռազմական ճակատում անհաջողություններից հետո: Թուրք–գերմանական ծրագրերում Սիրիային մեծ տեղ էր հատկացվում Եգիպտոսի դեմ ռազմական գործողություններում: Այն համարվում էր հիմնական բազան հարավային Սիրիայից Եգիպտոս ներխուժելու համար: Սակայն Սիրիան, նրա բնակչությունը չարդարացրին իրենց վրա դրված հույսերը: Սիրիան հուսալի թիկունք չդարձավ գերմանա–

թուրքական զորքերի համար: Թուրքական զորքերը խայտառակ պարտություն կրեցին Եգիպտոսում, և նրանց մնացորդները նահանջեցին Սիրիա և Պաղեստին:

1915–1916 թթ. Եգիպտոսի դեմ թուրք–գերմանական ռազմական արշավանքի ձախողումը ցույց տվեց, որ Թուրքիան չի կարող հենվել արաբների վրա վերջիններիս հակաթուրքական դիրքորոշման պատճառով: Երիտթուրքական ղեկավարությունը համոզվեց, որ արաբների ճնշող մեծամասնությունը, նրանց ազգային առաջնորդները և մտավորականությունը ոչ միայն կանգնած չեն Թուրքիայի կողքին և չեն հրաժարվել ազգային ինքնուրույնության և անկախության գաղափարներից, այլև համակրում են Անգլիային և Ֆրանսիային, ցանկանում պատերազմում նրանց հաղթանակն այն հույսով, որ Անտանտի հաղթանակն իրենց ազատություն կբերի օսմանյան տիրապետությունից: Այդ բանն ամենից լավ գիտեր Սիրիայի անսահմանափակ և դաժան տիրակալ Ջեմալը, որը տեղյակ էր, որ արաբական ազգային–քաղաքական կազմակերպությունները, որոնք պաշտոնապես արգելված էին, իրականում շարունակում էին իրենց գաղտնի գործունեությունը և ուղղորդում արաբների հակաթուրքական պայքարը: Այդ ուղղությամբ էին աշխատում նաև Լամարքազիայի առաջնորդները, որոնք այլևս ոչ մի պատրանք չունեին Օսմանյան կայսրության ապակենտրոնացման հնարավորության վերաբերյալ: Նրանք ամուր կանգնել էին Սիրիան, Լիբանանը, Պաղեստինը, Իրաքը և արաբական մյուս մարզերը վերջնական և անվերադարձ Թուրքիայից անջատելու տեսակետի վրա:

Ջեմալ փաշան, երիտթուրքական ղեկավարության գիտությամբ և համաձայնությամբ որոշեց չսպասել և նախահարձակ եղավ՝ նպատակ ունենալով ջախջախիչ հարված հասցնել արաբական անկախական շարժմանը, ոչնչացնել նրա ղեկավարությանը և արաբական երկրները պահել Օսմանյան կայսրության տիրապետության տակ: Ջեմալ փաշայի հրամանով փակվեցին դեռևս իրենց գոյությունը պահպանող մի շարք արաբական կազմակերպություններ, ընկերություններ և ակումբներ, սկսվեցին արաբական ազգային գործիչների, հայրենասիրական կուսակցությունների և կազմակերպությունների ղեկավարների ձերբակալությունները, որոնք կանգնեցին զինվորական տրիբունալների առջև: Զինվորական դատարաններն ընդունում էին այն որոշումները, որոնք թելադրում էին Ջեմալ փաշան և օսմանյան պաշտոնյաները Կոստանդնուպոլսից: Թուրքական «դատարանները» մեկը մյուսի հետևից արձակում էին մահվան վճիռներ, որոնք ի կատար էին ածվում կախաղանի միջոցով:

Արաբական ազգային հայրենասիրական գործիչների առաջին խումբը ձերբակալվեց և կախաղան հանվեց 1915 թ. օգոստոսին Բեյրութի Բուրջի հրապարակում: Այդ օրը կախաղան բարձրացվեցին արաբ 10 առաջնորդներ:

1916 թ. մայիսի 6–ին Դամասկոսում կախաղան հանվեց արաբական ազգային ղեկավարների յոթ հոգուց կազմված երկրորդ խումբը: Նրանց մեջ էր Լամարքազիայի ղեկավար և Արաբական առաջին կոնգրեսի նախագահ Աբդ ալ–Համիդ ալ–Զահրավին, օսմանյան պառլամենտում Դամասկոսը ներկայացնող Շակիկ Մուվայիդ ալ–Ազըմը, թուրքական բանակի գեներալ Խալիմ ալ–Ջազաիրին և ուրիշներ:

Այդ նույն օրը Բեյրութի նույն Բուրջի հրապարակում կախաղանի միջոցով մահապատժի ենթարկվեցին արաբական ազգային–ազատագրական շարժման և՛ 14 ականավոր գործիչներ:

Արաբական ազատագրական շարժման ղեկավարության սերուցքի ոչնչացումը ցնցող տպավորություն գործեց: Երիտթուրքերի աններելի ոճրագործությունը նոր լիցք հաղորդեց արաբների հակաթուրքական զգացմունքներին և պայքարին՝ նրանց դարձնելով ավելի վճռական թուրքական տիրապետությունը տապալելու և անկախ պետություն հիմնելու հարցում:

Այդ գործում վճռական դեր խաղաց 1916 թ. սկսված արաբական մեծ ապստամբությունը (Ալ–սաուրա ալ–արաբիյա ալ–քուբրա), որն ունեցավ պատմական անանց նշանակություն: Ապստամբությունը, որի դրոշը բարձրացվեց 1916 թ. հունիսի 5–ին Հիջազում՝ Մադինայի մոտ գտնվող Համզայի մոտ, գլխավորում էին Հիջազի կառավարիչ և Մեքքայի Շերիֆ Հուսեյն իբն Ալի ալ–Հաշիմին, որն ուղղակի սերում էր Մուհամմեդ մարգարեի տոհմից, և նրա երեք որդիները՝ Ալին, Աբդալլահը և Ֆեյսալը: Այդ օրը հռչակվեց արաբների անկախությունը Օսմանյան կայսրությունից: Շատ չանցած դա վերածվեց համաարաբական ապստամբության, որի շարքերը լրացրին սիրիացիները, իրաքցիները, լիբանանցիները, պաղեստինցիները և արաբական այլ երկրամասերի արաբ ապստամբ հայրենասերները:

Արաբական ապստամբությունը նախապատրաստվել էր Անգլիայի գիտությամբ, օգնությամբ և քաջալերանքով: Նա հույս ուներ դրա օգնությամբ ձեռք բերելու հզոր դաշնակից Օսմանյան կայսրության դեմ մղվող պայքարում՝ նրան պարտության մատնելու և իր քաղաքական ծրագրերն Արաբական Արևելքում իրականացնելու համար:

Հուսեյն իբն Ալին նույնպես գիտակցում էր, որ ապստամբության հաջողության և օսմանյան տիրապետությունից ազատագրվելու համար անհրաժեշտ էր հզոր դաշնակից: Եվ նրա ընտրությունն ընկավ Անգլիայի վրա, քանի որ Անտանտի երկրներից ամենաուժեղ դիրքերն Արաբական Արևելքում նա ուներ և շահագրգռված էր Օսմանյան կայսրության մասնատումով: 1915 թ. հուլիսի 14–ին Հուսեյնի և Եգիպտոսում Անգլիայի գլխավոր կոմիսար Մակ–Մահոնի միջև սկսվեցին գաղտնի բանակցություններ, որոնք տևեցին մինչև 1916 թ. հունվարի 30–ը, որն իրականացվում էր նամակների փոխանակության ձևով: Հուսեյնը որոշակի պահանջներ ներկայացրեց անգլիական կողմին, որոնց մեջ ամենակարևորներն էին. առաջին՝ «Մեծ Բրիտանիան ճանաչում է արաբական երկրների անկախությունը», որը ներառելու էր Արաբիան, Սիրիան, Իրաքը, Լիբանանը, Պաղեստինը, Հորդանանը և Թուրքիայի կազմի մեջ մտնող փոքրասիական հարավային տարածքները, երկրորդ՝ «Մեծ Բրիտանիան համաձայն է արաբական իսլամական խալիֆայության հռչակմանը»: Սակայն հետագա նամակափոխանակության ընթացքում կողմերը գնացին զիջումների, հատկապես արաբական կողմը, և համաձայնության եկան հետևյալի վերաբերյալ: Մերսինը և Ալեքսանդրետը, Դամասկոս–Հոմս–Համա–Հալեպ գծից արևմուտք ընկած ամբողջ տարածքը դուրս էր մնում արաբական ապագա պետու-

թյունից, Բասրայի և Բաղդադի վիլայաթները ձևականորեն մտնում էին արաբական պետության մեջ, բայց Անգլիան այստեղ հաստատելու էր հատուկ կառավարչություն, իսկ արաբական մնացած տարածքների վրա ստեղծվելու էր արաբական պետություն, որի մեջ մտնում էին Արաբիան, Սիրիան, Լիբանանը, Պաղեստինը և Հորդանանը: Մեծ Բրիտանիան համաձայնվում էր ճանաչել արաբական անկախ պետությունը, ինչպես նաև արաբական խալիֆայությունը և ապստամբության ընթացքում Հուսեյնին ցույց տալ քաղաքական, ռազմական, ֆինանսական և նյութական օգնություն:

Այսպիսին էին Հուսեյն–Մակ–Մահոն մոտ յոթ ամիս տևած նամակագրության քաղաքական արդյունքները:

Բայց այն ժամանակ, երբ ընթանում էին գաղտնի բանակցություններ Հուսեյնի և Մակ–Մահոնի միջև, համարյա նույն ժամանակ ընթանում էին մեկ այլ գաղտնի բանակցություններ Անգլիայի և Ֆրանսիայի միջև արաբական երկրները բաժանելու վերաբերյալ: Դրանք սկսվել էին 1915 թ. նոյեմբերի 23–ին Լոնդոնում, և կողմերին հաջողվեց հիմնական հարցերի շուրջ համաձայնության գալ 1916 թ. փետրվարին: Պայմանագիրը պատմության մեջ մտել է «Սայքս–Պիկոյի համաձայնագիր» հորջորջումով, որը ստորագրել էին հանուն Անգլիայի Մարկ Սայքսը և հանուն Ֆրանսիայի՝ Ֆրանսուա Ժորժ Պիկոն:

Ըստ այդ համաձայնագրի՝ արաբական երկրները բաժանվում էին հինգ գոտիների:

Առաջին՝ կապույտ գոտի, որի մեջ մտնում էին Դամասկոս–Հոմս–Համա–Հալեպ գծից արևմուտք ընկած տարածքները, որոնք կազմում էին Արևմտյան Սիրիան, Լիբանանը, Կիլիկիան, Այնթաբը, Ուրֆան, Մարդինը, Դիարբեքիրը և Հաքյարիի շրջանը: Այս գոտին անցնում էր Ֆրանսիայի անմիջական տիրապետության տակ:

Երկրորդ՝ կարմիր գոտի, որը ներառում էր Իրաքի հարավային մասը՝ Բաղդադի և Բասրայի վիլայաթները, Հայֆայի և Ակկայի նավահանգիստները, անցնում էր Անգլիայի անմիջական տիրապետության տակ:

Երրորդ՝ շագանակագույն գոտի, որը ներառում էր Պաղեստինն առանց Հայֆայի և Ակկայի, պետք է անցներ միջազգային կառավարման ներքո, որի ձևը պետք է հաստատվեր Ռուսաստանի և այլ դաշնակիցների հետ համաձայնեցնելուց հետո:

Չորրորդ՝ «Ա» գոտի, որի մեջ մտնում էին Արևելյան Սիրիան և Մոսուլի վիլայաթը, համարվում էր Ֆրանսիայի ազդեցության գոտի:

Հինգերորդ՝ «Բ» գոտի, որը ներառում էր Անդրհորդանանը և Կենտրոնական Իրաքը, համարվում էր Անգլիայի ազդեցության գոտի:

Նախատեսվում էր «Կապույտ» և «Կարմիր» գոտիներում, որոնք անցնում էին համապատասխանաբար Ֆրանսիայի և Անգլիայի տիրապետության ներքո, կառավարման այնպիսի վարչակարգ հաստատել, որը նրանք նպատակահարմար կգտնեին: Իսկ «Ա» և «Բ» գոտիներում նախատեսվում էր ստեղծել արաբական անկախ պետություն:

1916 թ. մարտի 9–ին այդ «Սայքս–Պիկոյի համաձայնագրի» տեքստը հանձնվեց ցարական Ռուսաստանին: Արտաքին գործերի նախարար Սազոնովը պաշտոնապես հայտնեց, որ Ռուսաստանը համաձայն է դրան: Սակայն նա դա պայմանավորեց Կոստանդնուպոլսի և նեղուցների մասին, Բիթլիսի լեռնանցքները, Ուրմիայի շրջանները և Արևմտյան Հայաստանը, Հաքյարիի շրջանը և Սև ծովի հարավային ափերը Ռուսաստանին հանձնելու համաձայնագրի կատարման հետ: Անգլիան և Ֆրանսիան ընդունեցին Ռուսաստանի այդ պայմանները, և «Սայքս–Պիկոյի համաձայնագիրը» ուժի մեջ մտավ 1916 թ. մայիսի 16–ին:

Ինչպես տեսնում ենք, անգլո–ֆրանսիական այդ համաձայնագիրն իր բովանդակությամբ, մոտեցումներով և սկզբունքներով ուղղակի հակադիր էր «Հուսեյն–Մակ–Մահոն» համաձայնագրի դրույթներին:

Սակայն արաբներն անտեղյակ էին «Սայքս–Պիկոյի համաձայնագրին» և, հավատարիմ իրենց վրա վերցրած պարտավորություններին, ապստամբություն բարձրացրին: Արաբական զորքերն իրենց դաշնակից Անգլիայի կողքին պատերազմի մեջ մտան ընդդեմ Օսմանյան կայսրության և համագործակցելով բրիտանական ռազմական ուժերի հետ՝ կոտրեցին թուրքական բանակների ողնաշարը և դրեցին Սիրիայի, Լիբանանի, Պաղեստինի և Հորդանանի ազատագրման սկիզբը: 1917 թ. արաբական բանակն իր շարքերում հաշվում էր 70 հազար զինվոր և սպա, որոնք ոչ միայն Հիջազի և Արաբիայի մյուս շրջանների արաբներն էին, այլև Սիրիայի, Իրաքի, Պաղեստինի և Հորդանանի, որոնց միացան նաև Եգիպտոսի արաբները:

Թուրքերի նկատմամբ արաբների տարած մի շարք հաղթանակներից հետո՝ 1916 թ. նոյեմբերի 2–ին, Մեքքայում գումարվեց արաբական կրոնական առաջնորդների, ցեղապետերի և քաղաքացիական երևելիների համաժողովը, որը Հուսեյն իբն Ալի ալ–Հաշիմիին հռչակեց «Արաբական երկրների թագավոր»: Կազմվեց Արաբական թագավորության առաջին կառավարությունը Հուսեյնի ավագ որդու՝ Ալիի գլխավորությամբ, իսկ նրա եղբայրներ Աբդալլահը և Ֆեյսալը զբաղեցրին համապատասխանաբար արտաքին գործերի և ներքին գործերի նախարարների պաշտոնները: Սակայն Անգլիան և Ֆրանսիան հրաժարվեցին Հուսեյնին ճանաչելուց բոլոր արաբների թագավոր: Նրանք համաձայնվեցին նրան ճանաչել որպես միայն Հիջազի թագավոր, որի հետ ստիպված էր հաշտվել Հուսեյնը:

Արաբական և անգլիական զորքերը, թուրքերին վռնդելով Հիջազից, անցան հարձակման և 1917 թ. մտան Պաղեստին, և սկսվեց Հորդանանի, Լիբանանի և Սիրիայի ազատագրումը, որը հաջողությամբ պսակվեց 1918 թ. աշնանը: Արաբական զորքերը Ֆեյսալի գլխավորությամբ մեկը մյուսի հետևից ազատագրում էին արաբական քաղաքները, գյուղերը և շրջանները:

Թուրքերի դեմ ռազմական գործողություններին արաբների կողքին մասնակցում էին հայերը, հատկապես այն հայ զինվորները, որոնք միավորվել էին 1916 թ. նոյեմբերին ձևավորված Արևելյան կամ Հայկական լեգեոնի մեջ, որի հրամանատարն էր ֆրանսիական բանակի գնդապետ Ռոմիյոն: Լեգեոնի անդամ կարող էին դառնալ միայն հայերը և արաբները: Նրա շարքերում մարտնչում էին մոտ 3 հազար

հայ և համարյա նույնքան էլ սիրիացի կամավորներ: Ըստ էության, դա հայ–սիրիական զորագունդ էր, որը մեծ սխրանք գործեց 1918 թ. սեպտեմբերի 19–ին Նաբլուսից հարավ՝ Արարա սարի մոտ տեղի ունեցած ճակատամարտում: Ճակատամարտը տևեց 12 ժամ, և թուրքական զորքերը, չդիմանալով հայ–սիրիական զորագնդի հարձակմանը, փախուստի դիմեց: Գնդապետ Ռոմիյոն շատ բարձր գնահատեց հայերի մարտական գործողությունները՝ անվանելով դրանք սքանչելի, ավելացնելով, որ հայ հերոսներն օրինակ ծառայեցին ուրիշների համար:

Արաբական բանակները, Ֆեյսալի գլխավորությամբ շարունակելով իրենց հաղթական գործողությունները, 1918 թ. հոկտեմբերի 1–ի գիշերը մտան Դամասկոս: Դա պատմական պահ էր: Դրան հետևեցին Հոմսի և Համայի ազատագրումը, և արաբական բանակն ընդհուպ մոտեցավ Հալեպին: Այստեղ՝ Հալեպից հարավ՝ Խան Թումանի մոտ, 1918 թ. հոկտեմբերի 25–ին տեղի ունեցավ վերջին ճակատամարտը: Արաբները գլխովին ջախջախեցին թուրքերին և Հալեպի ազատագրումով ավարտեցին սիրիական և հարևան արաբական տարածքների ազատագրումը 402 տարի տևած օսմանյան դաժան տիրապետությունից:

6. ԱՐԱԲՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ 1915 Թ. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ ԵՎ ԱՐԱԲ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՍՊՆԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

XX դարի առաջին՝ հայերի 1915 թ. ցեղասպանությունը իրագործվեց Օսմանյան կայսրությունում՝ մի պետության սահմաններում, որի մասերն էին կազմում նաև Արևմտյան Հայաստանը և արաբական երկրները: Այդ ոճրագործությունը բնականաբար չէր կարող անտարբեր թողնել արաբներին և կայսրության մյուս ժողովուրդներին: Հայերի ցեղասպանությունն իրագործվեց կայսրության ոչ թուրք ժողովուրդների՝ արաբների, հայերի, ասորիների, հույների և էթնիկական այլ խմբերի բռնի թուրքացման և մաքուր թուրքական պետություն ստեղծելու երիտթուրքական այդ ոճրագործ տեսության հիմնադրույթների համաձայն, և եղավ այդ հիմնադրույթների վրա խարսխված քաղաքականության պրակտիկայում իրագործման առաջին լուրջ պատմական փորձը:

Ցեղասպանության ընթացքում հայ բնակչության հիմնական մասը ոչնչացվեց իր բնօրրանում՝ Արևմտյան Հայաստանում: Կենդանի մնացածները զանգվածաբար սպանվեցին արաբական անապատներում և բնակավայրերում, Սիրիայում և Իրաքում, բռնագաղթի ճանապարհին՝ դաժան անապատային բնակլիմայական պայմանների, հայ գաղթականներին սովի և ծարավի մատնելու միջոցով նրանց գոյության համար դժոխային պայմաններ ստեղծելով, սակայն ամենագլխավորը՝ արաբների օգնությամբ: Նրանք իրենց հույսը դրել էին արաբների մուսուլման լինելու հանգամանքի վրա և իրենց այլասերված տրամաբանության համաձայն՝ վստահ էին, որ մուսուլման արաբները պետք է դառնային քրիստոնյա հայերի թշնամին և նրանց արյունոտ գործի շարունակողն ու ավարտին հասցնողը:

Արաբները թերևս միակ ժողովուրդն էին, որ 1915 թ. ազգովին հայոց ցեղասպանության ականատեսը եղան, երբ բռնի տեղահանված հայերի քարավաններն անցնում էին նրանց տարածքներով, անապատներով, գյուղերով ու քաղաքներով: Հայոց Գողգոթայի վկաները դարձան Դեյր ալ–Զորի, Ռաս ուլ–Այնի, Հալեպի, Մեսքենեի, Մոսուլի, Բաքուբայի, Բաղդադի, Նահր ալ–Ումարի, Շաթ ալ–Արաբի և այլ բնակավայրերի արաբ բնակիչները: Բայց երբ հայերի հոգնատանջ, քաղցած և բոկոտն քարավանները հայտնվեցին Սիրիայի, ապա նաև Իրաքի տարածքներում, տեղի ունեցավ անսպասելին: Արաբ բնակչությունը, որն ատում էր թուրքերին և արդեն նախապատրաստվում էր ապստամբության ոճրագործ օսմանյան տիրապետության դեմ, օգնության ձեռք մեկնեց հայ տարագիրներին, նրանց առջև բացեց իր սիրտը և տան դռները, որի շնորհիվ հարյուր հազարավոր հայ գաղթականներ փրկվեցին անխուսափելի մահված ճիրաններից: Դա համաշխարհային պատմության մեջ ասպնջականության՝ ասպետական մարդասիրության ամենափայլուն դրսևորումներից մեկն էր: Հայ գաղթականն արաբական երկրներում գտավ ոչ թե թշնամական, այլ բարեկամական միջավայր:

Արաբների նման բարեկամական և մարդասիրական վերաբերմունքը պայմանավորված էր նաև նրանով, որ XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին արաբ և հայ քաղաքական միտքն արդեն հանգել էր այն պատմական նշանակություն ունեցող հետևությանը, որ հայերի և արաբների ազգային–քաղաքական շահերը համընկնում են, քանի որ նրանք միևնույն՝ օսմանական տիրապետության տակ էին, նրանց ընդհանուր թշնամին մեկն էր՝ աբդուլհամիդյան զուլումի արյունարբու վարչակարգը և կայսրության բոլոր ոչ թուրք ժողովուրդներին, այդ թվում նաև արաբներին ու հայերին բռնի թուրքացման ձգտող երիտթուրքերի հանցախումբը: Ուրեմն օսմանյան լծից ազատագրվելու հարցում նրանք բնական դաշնակիցներ էին: Ահա պետք է այդ հարցին նաև այս տեսանկյունից մոտենալ, երբ խոսք է գնում հայերի հանդեպ արաբների դրսևորած ասպնջականության մասին՝ հայոց պատմության ամենադժնդակ ժամանակահատվածում:

Հարկ է նշել նաև, որ հայ գաղթականներին օգնություն ցույց տալը ոչ միայն դյուրին գործ չէր, այլև հղի էր մեծ վտանգներով, քանի որ երիտթուրքական իշխանությունները խստիվ արգելել էին արաբներին որևէ օգնություն ցույց տալ հայերին՝ սպառնալով ամենադաժան պատիժներով: Դրա մասին կան բազմաթիվ փաստաթղթեր, որոնցից բավական է հիշատակել երիտթուրքական կառավարության 1915 թ. մայիսի 14(27)–ի տեղահանության մասին օրենքը, որտեղ սևով սպիտակի վրա գրված էր, որ տեղական իշխանությունները պատասխանատվություն են կրում այդ օրենքի կատարման համար, ըստ որի՝ եթե մուսուլմանները փորձեն իրենց տներում պահել հայերին, «ապա նրանք պետք է կախաղան հանվեն իրենց տների առջև, իսկ տները՝ հրկիզվեն»:

Սակայն շատ արաբներ՝ թե՛ հասարակ մարդիկ, թե՛ պաշտոնյաներ, արհամարհելով այդ արգելքները և մահվան սպառնալիքները, այս կամ այն կերպ օգնություն էին հասցնում հայ գաղթականներին, որն իրականացվում էր տարբեր ձևե-

ռով: Նրանք աշխատում էին սնունդ և ջուր տալ քաղցից և ծարավից հյուծված և տանջահար եղած հայ կանանց, ծերերին և մանուկներին: Հայ մայրերը, կորցնելով իրենց զավակներին մահվան ճիրաններից փրկելու հույսը, իրենց երխաներին շատ հաճախ վստահում էին արաբ մայրերին, որոնք այնուհետև նրանց վերցնում էին իրենց խնամքի տակ, անգամ որդեգրում:

Բազմաթիվ են այն դեպքերը, երբ արաբ պաշտոնյաները և մուսուլմանական կրոնի սպասավորները, ստանալով երիտթուրքական հրահանգներն իրենց ենթակա տարածքներով անցնող կամ այնտեղ գտնվող հայերին ոչնչացնելու մասին, հրաժարվել են կատարելուց այդ անմարդկային որոշումներն ու կարգադրությունները: Այդպես է վարվել Դեյր ալ–Զորի արաբ կառավարիչ Սաիդ Հաքիմը, որը ոչ միայն չկատարեց երիտթուրքական հրահանգը հայերին սպանելու վերաբերյալ, այլև կառուցեց ժամանակավոր կացարան հայ որբ երեխաներին պատսպարելու համար՝ ապահովելով նրանց անհրաժեշտ սնունդով: Դրա համար այդ ազնիվ արաբը հեռացվեց պաշտոնից: Դիարբեքիրի վիլայաթի ալ–Բաշիրի գավառապետ աս–Սուվայդին, ստանալով հայերին ոչնչացնելու վերաբերյալ օսմանյան կառավարության հրամանը, հեռագիր է ուղարկում մայրաքաղաք՝ երիտթուրքական ղեկավարությանը, որ «իր խիղճը թույլ չի տալիս իրեն նման գործ կատարել», և իր հրաժարականը ներկայացնում: Նրա հրաժարականն ընդունվում է, սակայն շուտով նա սպանվում է թուրք զինվորների կողմից: Նույն կերպ է վարվում նաև Դիարբեքիրի Լիջայի գավառապետը և նույնպես արժանանում է աս–Սուվայդիի ճակատագրին. նրան նույնպես թուրք ասքյարները սպանում են: Ամենայն գովեստի է արժանի Սիրիայի Համա քաղաքի մուսուլմանական գործիչ Աբդալլահ Մուսաին, որն իր միջոցներով տուն–որբանոցներ էր կառուցել հայ որբերի համար՝ պատսպարելով և ապահովելով նրանց սնունդով և հագուստով:

Իրենց ազնիվ դիրքորոշումով աչքի ընկան Իրաքի Մոսուլ քաղաքի արաբ երևելիները: Երբ Մոսուլի կառավարիչը Կոստանդնուպոլսից հրաման ստացավ հայերին ոչնչացնելու մասին, նա այդ հրամանն ի կատար ածելու փոխարեն խորհրդակցության հրավիրեց նրանց՝ համապատասխան որոշում ընդունելու համար: Նրանք միաձայն որոշում ընդունեցին չկատարել թուրքական կառավարության պահանջը՝ նշելով, որ «իրենց խիղճը թույլ չի տալիս, որ իրենք իրենց ձեռքերը թաթախեն հայերի արյան մեջ»: Նրանց այդ ազնիվ կեցվածքի շնորհիվ տասնյակ հազարավոր հայերի կյանք փրկվեց:

Անմոռանալի է այն, ինչ արեցին եգիպտացիները՝ բնակչությունը և կառավարությունը, մուսալեռցի հայերի համար: Մուսալեռցիները մի քանի ամիս հերոսական ինքնապաշտպանական մարտեր էին մղում թուրքական կանոնավոր բանակի դեմ և այդպես էլ անձնատուր չեղան: Ի վերջո օգնության եկած ֆրանսիական նավերը 1915 թ. սեպտեմբերի 13–15–ը մոտ չորս հազար հայերի տեղափոխեցին Եգիպտոս՝ Պորտ Սաիդում հատուկ մուսալեռցի հայերի համար պատրաստված ճամբար: Եգիպտոսի սուլթան Հուսեյն Քամիլը հայ գաղթականներին պահելու ծախսերի զգալի մասն անգամ ինքը հոգաց:

Արաբների հայանպաստ դիրքորոշման գործում առանձնահատուկ նշանակություն ունեցավ Հիջազի կառավարիչ և Մեքքայի շերիֆ Հուսեյն իբն Ալիի մոտեցումը: Նա այդ ժամանակ մուսուլմանական աշխարհի ամենահեղինակավոր դեմքն էր, որը շատ չանցած գլխավորեց արաբների հակաօսմանյան ապստամբությունը: Նա իր ուղերձներում և հայտարարություններում խստիվ դատապարտում էր օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդներին բռնի թուրքացնելու երիտթուրքերի քաղաքականությունը, նրանց թշնամական դիրքորոշումը իսլամի հիմնադիր և մուսուլմաններին Ղուրանը պարգևած արաբների նկատմամբ և կայսրությունում հայերի զանգվածային սպանդի համար: Նա կարծում էր, որ երիտթուրքերի այդ քաղաքականությունը հակասում էր իսլամի սկզբունքներին, և որ նրանք «կապերը խզել են իսլամական աշխարհի, սրբազան Ղուրանի և սուննայի հետ»: Հուսեյն իբն Ալին 1916 թ. իր որդուն՝ Էմիր Ֆեյսալին, և Էմիր Աբդ ալ–Ազիզ ալ–Ջաբրային, որոնք ղեկավարում էին արաբական ապստամբ բանակների գործողությունները սիրիական ճակատում, ուղղված նամակում պահանջում էր նրանցից ամեն տեսակի օգնություն ցույց տալ հայ գաղթականներին և «պաշտպանել նրանց այնպես, ինչպես դուք պաշտպանում եք ձեր անձը, ձեր երեխաներին և ձեր ունեցվածքը»:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԼԻԲԱՆԱՆԸ XIX ԴԱՐՈՒՄ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ

1. ԼԻԲԱՆԱՆՅԱՆ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Լիբանանի իշխանապետության նշված ժամանակաշրջանի պատմությունը սերտորեն կապված է նրա կառավարիչ էմիր Բաշիր Բ Շիհաբի անվան հետ: Նա Լիբանանի իշխանապետ դարձավ 1788 թ., երբ լիբանանյան ֆեոդալական ավագանին Ջումբլաթների հեղինակավոր տոհմի գլխավորությամբ տապալեց կառավարող էմիր Յուսուֆ Շիհաբին և Լիբանանի իշխանապետության նոր էմիր ընտրեց նրա զարմիկին՝ Բաշիր Բ Շիհաբին: Նա աչքի էր ընկնում իր խելամտությամբ, խիզախությամբ և դիվանագիտական մեծ հմտություններով:

Բաշիր Բ–ի քաղաքականության գլխավոր նպատակներից մեկը ավատատիրական երկպառակությանը վերջ տալը և ուժեղ պետական կառավարման համակարգ հաստատելն էր: Եվ նրան հաջողվեց երկաթյա բռունցքով նրանց իրեն ենթարկել և իր իշխանությունը հաստատել Լիբանանում: Լիբանանյան իշխանապետությունը զորացավ և դարձավ նշանակալի ուժ: Դա դուր չէր գալիս Ակկայի էմիր բոսնիացի Ջազարին, և նա որոշեց իր մրցակցին ասպարեզից հեռացնել: Նա դրա համար որպես առիթ օգտագործեց Բաշիր Բ–ի հրաժարվելը իրեն օգնության գալուց, երբ Նապոլեոն Բանապարտը պաշարել էր Ակկան և փորձում էր գրավել այն: Ջազարը Բաշիր II–ին մեղադրեց դավաճանության մեջ և հրաման արձակեց նրան պաշտոնանկ անելու մասին: Բաշիրը հայտնվեց ծանր դրության մեջ, և հայտնի չէ, թե այդ ամենն ինչով կվերջանար, եթե նրան անսպասելիորեն օգնության չգար օսմանյան սուլթան Սելիմը: Ակկայի էմիրի և սուլթանի միջև հարաբերությունները վաղուց էին սրված, և վերջինս ցանկանում էր ազատվել Ջազարից: Սուլթան Սելիմը չեղյալ հայտարարեց նրա հրամանը և վերականգնեց Բաշիրի էմիրական իրավունքները: Նա միաժամանակ որոշեց, որ հետայսու Լիբանանի էմիրն անմիջապես ենթարկվում է օսմանյան սուլթանին, որով Ջազարը կորցնում էր իր բոլոր իրավունքները Լիբանանի նկատմամբ և չէր կարող միջամտել նրա ներքին գործերին: Բաշիրի իրավունքները տարածվեցին նաև Սայդայի, Բիքաայի, Բաալբեկի, Ջուբեյլի և Անդրլիբանանի վրա: Սակայն Ջազարը նրանցից չէր, որ հեշտությամբ հաշտվեր այդ բոլորի հետ և հարմար պահի էր սպասում կրկին իր իրավունքները վերականգնելու Լիբանանի նկատմամբ: 1800 թ. տեղի ունեցավ ռազմական բախում նրա և Բաշիրի ուժերի միջև: Վերջինս պարտվեց և ապաստան գտավ Ջուբեյլում: Բաշիրը, իր շուրջը հա-

մախմբելով իր կողմնակիցներին, պայքարի մեջ մտավ Ջազարի հետ, և վերջինս հարկադրված էր 1803 թ. հաշտություն կնքել լիբանանյան էմիրի հետ, որով վերականգնվեց նրա իշխանությունը իշխանապետության միայն մի մասի վրա: 1804 թ. Ջազարը մահացավ, որը Սիրիայի, Պաղեստինի և Լիբանանի արաբները համարեցին փրկություն իրենց համար:

Այսպիսով՝ Լիբանանի իշխանապետության ղեկը կրկին անցավ Բաշիր Բ Շիհաբին, որն իր երկարամյա իշխանության տարիներին ամեն ինչ անում էր Լիբանանը վերածելու կենտրոնացված ուժեղ պետության: Նա վարում էր խիստ քաղաքականություն մարոնի և դրուզ ավատատիրական տների նկատմամբ, որոնք փորձում էին չենթարկվել իրեն, կրճատում էր գյուղացիներին պարտադրվող ավատատիրական պարհակները, մեծ նշանակություն տալիս ճանապարհների անվտանգության ապահովելուն, որի շնորհիվ վերացվեցին ավազակային հարձակումները վաճառականների քարավանների վրա, և ամենադաժան միջոցներով կարողացավ հասնել լիակատար անվտանգության հաստատման, գույքի և անձի ապահովության, որը մեծապես նպաստեց առևտրի և տնտեսական զարգացմանը: Երկրում հաստավեց կարգուկանոն, վերելք ապրեց տնտեսությունը: Հատուկ դրվատանքի է արժանի Բաշիրի գործունեությունը շինարարության ոլորտում. նա բարեկարգեց ճանապարհները, կառուցեց կամուրջներ և իջևանատներ, իր նստավայրը Դեյր ալ–Կամարից տեղափոխեց Բեյթ ալ–Դին, նրա պալատում հյուրընկալվում էին բանաստեղծները, բանասացները, գիտունները և այլ մտավորականներ: Նա հանդուժողական էր տարբեր կրոնների և կրոնական համայնքների նկատմամբ:

1820–ականների սկզբներին դրությունը կրկին լարվեց լիբանանյան իշխանապետությունում: Բաշիր II–ը անհեռատեսորեն ներգրավվեց Ակկայի նոր էմիր Աբդալլահի 1822 թ. հակասուլթանական խռովության մեջ, որը ձախողվեց: Բաշիրը, վախենալով օսմանյան սուլթանի զայրույթից, փախավ Լիբանանից և ապաստան գտավ Եգիպտոսի տիրակալ Մուհամմեդ Ալիի մոտ: Վերջինիս միջնորդությամբ սուլթանը ներում շնորհեց Բաշիրին, որը 1823 թ. վերադարձավ Լիբանան: Դրանից հետո նա մոտ 17 տարի ևս՝ մինչև 1840 թ., մնաց Լիբանանում և կառավարեց որպես այդ երկրամասի էմիր:

Այս փուլում իշխանապետության և Բաշիր Բ–ի քաղաքական ճակատագիրը կապված էր Եգիպտոսի և նրա կուսակալ Մուհամմեդ Ալիի հետ: Բաշիր II–ը պաշտպանեց Եգիպտոսը 1831–1832 թթ. եգիպտա–թուրքական պատերազմի ժամանակ: Ճիշտ է, այստեղ ևս ամեն ինչ հարթ չընթացավ: Էմիրը հապաղեց օգնության հասնել Իբրահիմին, երբ վերջինս պաշարել էր Ակկան: Միայն եգիպտական զորավարի սպառնալից նամակից հետո Բաշիրն իր զորքերով հայտնվեց Ակկայի պատերի տակ՝ Իբրահիմի ճամբարում: Իբրահիմը, Բաշիրին պահելով իր մոտ յուրատեսակ պատանդի կարգավիճակում, կարգադրեց նրա որդուն Լիբանանի առափնյա քաղաքներն ազատագրել թուրքական կայազորներից, որոնք տեղակայված էին Բեյրութ, Սայդա և Սուր նավահանգստային քաղաքներում: Էմիրի որդին այդ հանձնարարությունը կատարեց հաջողությամբ, իսկ Տրիպոլին թուրքական կայազորից

ազատեց Իբրահիմի տրամադրած եգիպտական զորքերի օգնությամբ: Ամբողջ լիբանանյան ծովեզրը՝ Տրիպոլիից մինչև Սուր, անցավ էմիրի և Իբրահիմի իշխանության ներքո: Իսկ Իբրահիմն էլ կարողացավ Բաշիրի օգնությամբ գրավել Ակկան: Բաշիրի զորքերը 1832 թ. մասնակցեցին Դամասկոսի գրավմանը, ապա բավականին ակտիվ դերակատարում ունեցան Հոմսի գրավման և եգիպտա–թուրքական պատերազմի ելքը հօգուտ Եգիպտոսի վճռելու գործում:

1833 թ. Քյութահյայի պայմանագրով Լիբանանը անցավ Եգիպտոսի տիրապետության տակ, սակայն Լիբանանի կարգավիճակը որպես առանձին միավոր՝ իշխանապետություն, պահպանվեց, իսկ Բաշիր Բ–ն մնաց որպես նրա էմիր և Լիբանանի իշխանապետությունը կառավարում էր անկախ՝ լայն լիազորություններ ստանալով Իբրահիմից, սակայն պարտավորվում էր Եգիպտոսին վճարել կայուն չափաբաժնով սահմանված հարկ:

Եգիպտոսի ազդեցության գոտում եղած տարիներին զգալի տեղաշարժեր կատարվեցին Լիբանանյան իշխանապետությունում: Նպաստավոր պայմաններ ստեղծվեցին առևտրի զարգացման և ապրանքային փոխանակության համար այն վիթխարի տարածքում, որը Մուհամմեդ Ալիի տիրապետության տակ էր: Վերելք ապրեցին գյուղատնտեսությունը, արտադրության համար հումք արտադրող ճյուղերը, մասնավորապես մետաքսագործությունը, այգեգործությունը: Վերացվեց թուրքական փաշաների հաստատած համակարգը, որը հիմնված էր կամայականությունների և կողոպուտի վրա, աճեց քաղաքային բնակչությունը, և աշխուժացավ քաղաքային կյանքը, սաղմնավորվեցին կապիտալիստական հարաբերությունները, իսկ դրամական հարաբերությունները մուտք գործեցին տնտեսական կյանքի բոլոր բնագավառները: Եգիպտական բարենորոգումների քաղաքականության կիրառման հետևանքով թուլացան ավատատերերի դիրքերը, նրանց արգելվեց ունենալ իրենց սեփական զինված ուժերը: Բաշիր Բ–ն Իբրահիմի համաձայնությամբ իշխանապետության սահմանների մեջ ներառեց Բաալբեկը՝ իր 70 բնակավայրերով, նրան միացվեց նաև Զուբեյլը: Այլ կերպ ասած՝ եգիպտական աջակցության շնորհիվ ընդարձակվեցին Լիբանանի իշխանապետության սահմանները:

Եգիպտա–թուրքական երկրորդ պատերազմի ժամանակ՝ 1839–1840 թթ., Բաշիր II–ը և իշխանապետությունը, բնականաբար, կանգնեցին Եգիպտոսի կողքին: Սակայն պատերազմի ավարտական փուլում Լիբանանի իշխանապետության լեռնային շրջանների բնակիչները ապստամբեցին և հանդես եկան եգիպտացիների դեմ: Դրա անմիջական պատճառը եղավ Իբրահիմի հրամանը զինաթափման և բանակ զորակոչելու մասին, որին կտրուկ դեմ էին լիբանանցիները, որոնք մերժեցին թեկուզ մեկ զինվոր տրամադրել Եգիպտոսին: Բաշիր II–ի բոլոր ջանքերը՝ կատարելու Իբրահիմի հրամանը, ավարտվեցին անհաջողությամբ, և լեռնալիբանանցիների դիմակայությունը 1840 թ. մայիսին վերածվեց ապստամբության: Հունիսի 8–ին Լիբանանի բոլոր կրոնական համայնքների՝ սուննի, շիա, դրուզ, մարոնի, հույն ուղղափառ և կաթոլիկ, ներկայացուցիչները որոշում ընդունեցին զենքը ձեռքին պայքարել եգիպտացիների դեմ: Նրանց միացան նաև ավատատերերը, որոնք

իրենց հերթին դժգոհ էին Իբրահիմից, որ նա արգելել էր իրենց ունենալ զինված ուժեր, սահմանափակել էր իրավունքները և այլն: Բաշիր Բ–ն անզոր եղավ ճնշել ապստամբությունը: Այդ պահին վճռական գործեց Մուհամմեդ Ալին, որի հրամանով եգիպտական զորքերը հուլիսի 10–ին անցան հարձակման Բեյրութի շրջանում և ճնշեցին ապստամբությունը: Գործին միջամտեցին Անգլիան, Ավստրիան, Թուրքիան, որոնք օգնություն ցուցաբերեցին ապստամբներին: 1840 թ. հոկտեմբերի 10–ին Իբրահիմի զորքերը պարտություն կրեցին Բեյրութի մոտ, որից հետո Իբրահիմը հարկադրված էր հեռանալ Լիբանանից: Սուլթան Աբդուլ–Մաջիդի 1840 թ. սեպտեմբերի 3–ի հրամանով Բաշիր Բ–ն պաշտոնանկ արվեց, որի փոխարեն Լեռնալիբանանի իշխանապետության նոր էմիր նշանակվեց նրա հորեղբորորդին՝ Բաշիր Բին Կասեմը: Իսկ Բաշիրը իր ընտանիքով և մեծաքանակ գանձերով ու հարստությամբ, հեռացավ Լիբանանից և հաստատվեց Մալթա կղզում:

2. ԼԻԲԱՆԱՆԻ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ ԵՎ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՈՒՂՂԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Նոր էմիրը ստացավ ծանր ժառանգություն և բազմաթիվ խնդիրներ, որոնք անհապաղ լուծում էին պահանջում: Սակայն նա ի վիճակի չեղավ լուծելու դրանք: Թեև Լիբանանն աչքի էր ընկնում կրոնական համայնքների բազմազանությամբ, բայց երկու համայնքներն են՝ մարոնիների և դրուզների, որ մշտապես առաջատար դեր են խաղացել Լիբանանում, և իշխանապետության ներքին կայունությունը և խաղաղությունը կախված էին նրանց հարաբերություններից: Բաշիր Բ–ի տապալումից հետո Լեռնալիբանան վերադարձան դրուզ ավատապետերը, որոնց արտաքսել էր նա և նրանց հողերի վրա բնակեցրել հյուսիսային շրջաններից տեղափոխած մարոնիների՝ մեծ մասամբ գյուղացիների: Նրանք պահանջեցին վերադարձնել իրենց կալվածքները: Դա առաջ բերեց դրուզ–մարոնի նոր հակամարտություն, որը վերածվեց արյունալի բախումների: Դրուզ–մարոնի բախումները սկսվեցին 1841 թ. հոկտեմբերին և շարունակվեցին մինչև նոյեմբեր: Նախահարձակը դրուզներն էին, որոնք շրջապատեցին էմիրի պալատը, ի տես բոլորի՝ նրան շորահան արեցին, ներխուժեցին մարոնիների գյուղերը՝ կազմակերպելով զանգվածային կոտորածներ: Նրանք բռնագրավում էին հողատարածքները, հրկիզում մարոնիների տները, ոչնչացնում այգիները, թույլ տալիս այլ բռնություններ և ոճրագործություններ: Մարոնիները կազմակերպեցին ինքնապաշտպանական զորախմբեր և, հարձակման անցնելով, ներխուժեցին դրուզների գյուղերը և նրանց հետ վարվեցին ճիշտ այնպես, ինչպես դրուզներն էին վարվել իրենց հետ: Իսկ Սայդայի թուրք փաշան բարձունքներից հեռադիտակով դիտում էր տեղի ունեցող իրադարձությունները, մեծ բավականություն ստանում՝ դիտելով այրվող գյուղերից բարձրացող ծուխը: Բայց նրանք՝ թուրքերը, չէին շտապում միջամտել և դադարեցնել արյունահեղությունը՝ համարելով, որ դրա պահը դեռևս չի եկել՝ թույլ տալով, որ իշխանապետությունն ինքն իրեն ուժասպառ անի և վերջնականապես թուլանա: Եվ երբ թուրքական իշխանությունները կարծեցին, որ հասել է հարմար պահը, ապա միջամտեցին և իրենց

կամքը թելադրեցին լիբանանցիներին: Օսմանյան սուլթանը խոշոր զորաբանակ ուղարկեց Բեյրութ զինվորական նախարար Մուսթաֆա Նուրի փաշայի հրամանատարությամբ, որը «կարողացավ» դադարեցնել կոտորածները և հաստատել «խաղաղություն»: Էմիր Բաշիր Գ Բին Կասեմը 1842 թ. հունվարի 13–ին սուլթանի հրամանով պաշտոնանկ արվեց, ձերբակալվեց և ուղարկվեց Կոստանդնուպոլիս: Սուլթանի որոշմամբ վերջ տրվեց Շիհաբների իրավունքներին լիբանանյան իշխանապետության նկատմամբ, և Լիբանանի կառավարումը հանձնվեց Օմար փաշային: Լեռնալիբանանի իշխանապետությունը վերացվեց, և այն դարձավ Բարձր դռանն ուղղակի ենթակա թուրքական նահանգներից մեկը:

3. ԼԻԲԱՆԱՆԻ ՄԱՄՆԱՑՈՒՄԸ ՄԱՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԴՐՈՒԶԱԿԱՆ ՀԱՑՎԱԾՆԵՐԻ: ԴՐՈՒԶ–ՄԱՐՈՆԻ ԲԱԽՈՒՄՆԵՐԸ 1840–1860 ԹԹ.

Օմար փաշան՝ այդ դավանափոխ խորվաթը, իր գլխավոր խնդիրը համարեց մարոնի և դրուզ համայնքները Կոստանդնուպոլսին ենթարկելը: Բայց նա հասկանում էր, որ կարող է հաջողության հասնել, եթե հավասարակշռություն պահպանի այդ երկու համայնքների միջև: Օմար փաշան ճանաչեց Շիհաբների կողմից հալածված և երկրից վտարված, բայց նրա տապալումից հետո Լիբանան վերադարձած դրուզ իշխանների և հողատերերի իրավունքները: Այնուհետև նա ճանաչեց նաև մարոնի այն ավատատերերի իրավունքները, որոնք հալածանքների էին ենթարկվել Բաշիր Բ և Բաշիր Գ էմիրների կողմից:

Սակայն հաշտությունը երկար չտևեց: Նախ սրվեցին հարաբերություններն Օմար փաշայի և դրուզ ազնվականության վերնախավի մեջ: Վերջիններս համարում էին, որ մարոնիների դեմ հաղթանակ են տարել և թույլ էին տալիս բռնություններ քրիստոնյաների դեմ: Իսկ մարոնի համայնքն իր հերթին դժգոհ էր, որ Օմար փաշան սիրաշահում էր դրուզ ավագանուն և նրանց կարգի չէր հրավիրում: Օմարը հասկանում էր, որ ստեղծված իրադրությունը հղի էր մարոնի–դրուզ նոր բախումներով, որը նրան այդ ժամանակ չէին ների Բարձր դուռը և եվրոպական շահագրգիռ պետությունները: Օմարը դիմեց կտրուկ քայլի: Նա իր մոտ ճաշի հրավիրեց դրուզ ղեկավարներին և ձերբակալեց բոլորին, որը զոհունակությամբ ընդունեցին մարոնիները: Բայց դրանից փաշայի դրությունը չթեթևացավ, քանի որ եվրոպական պետությունները դատապարտեցին Կոստանդնուպոլսի որոշումը Լիբանանյան իշխանապետությունը վերացնելու վերաբերյալ: Իսկ Բարձր դուռն իր հերթին լսել անգամ չէր ուզում կառավարման հին համակարգը վերականգնելու մասին: Փակուղուց ելք գտնելու համար 1842 թ. Լիբանանում անցկացվեց հանրաքվե, որի ընթացքում լիբանանցիները պետք է պատասխանեին այն հարցին, թե արդյոք նրանք համաձայն են հաստատված նոր վարչակարգին՝ Լիբանանում թուրքական ուղղակի կառավարման հաստատմանը, թե նորից քրիստոնեական կառավարիչ նշանակել: Հանրաքվեի արդյունքները ցույց տվեցին, որ դրուզները քվեարկել էին հօգուտ թուրքական ուղղակի կառավարման, իսկ մարոնիները՝ իշխանապետության վերականգնման՝ քրիստոնյա–մարոնի էմիրի ղեկավարության ներքո:

Այսպիսով՝ հանրաքվեից հետո էլ Լիբանանը մնաց պառակտված, որին 1842 թ. հոկտեմբերին հետևեց դրուզների նոր ապստամբությունը: Դրա պատճառը նրանք համարում էին նենգությամբ իրենց ղեկավարների ձերբակալությունը Օմար փաշայի կողմից: Դրուզ ապստամբները Շիբլի Արիանի գլխավորությամբ ներխուժեցին Շուֆի շրջան, շրջապատեցին Բեյթ ալ–Դինը և Օմար փաշային ներկայացրին իրենց պահանջները՝ ազատ արձակել ձերբակալված դրուզ առաջնորդներին, լեռնցի դրուզներին չզինվորագրել, հրաժարվել նրանց զինաթափելուց և հրաժարական տալ: Դրուզների ապստամբությունը ճնշվեց Սայդայի փաշա Ասադի և Օմար փաշայի միացյալ ուժերով, վերջինս ներխուժեց Ջումբլաթների տոհմական գյուղը և հրկիզեց այն:

Թեև դրուզները ծանր հարված ստացան, բայց Կոստանդնուպոլսում հասկացան՝ ոչ առանց եվրոպական պետությունների օգնության, որ միևնույնն է, անհնար է Լիբանանում պահպանել թուրքական ուղղակի կառավարումը: Բարձր դուռը հրաժարվեց կառավարման այդ ձևից և ստիպված եվրոպական պետությունների հետ կանգնեց Լիբանանը մասնատելու տարբերակի վրա: Դրա գաղափարն առաջին անգամ արտահայտել էր Ավստրիայի արտաքին գործերի նախարար Մետեռնիխը: 1842 թ. դեկտեմբերի 7–ին սուլթանը պաշտոնապես համաձայնվեց այդ տարբերակի հետ: Ըստ այդմ՝ սուլթանը Լեռնալիբանանի դրուզ և մարոնի հատվածների կառավարման համար ղեկավար էր նշանակում համապատասխանաբար երկու՝ դրուզ և մարոնի կայմակամների, որոնցից յուրքանչյուրը պետք է նստեր իր կրոնակից–դավանակից համայնքի միջավայրում: Նրանք վարչական կառավարողներ էին, իսկ սուլթանն իր իշխանությունն իրականացնելու էր վազիրի միջոցով: Օմար փաշան պաշտոնանկ արվեց, և 1843 թ. հունվարի 11–ին քրիստոնյա կայմակամ նշանակվեց մարոնի Հայդար Աբու Լաման, իսկ դրուզների կայմակամ՝ Ահմադ Արսլանը:

Այսպիսով՝ Լեռնալիբանանը բաժանվեց երկու մասի, հյուսիսային՝ մարոնական, և հարավային՝ դրուզական: Նրանց միջև բաժանարար գիծ սահմանվեց Բեյրութ–Դամասկոս ճանապարհը: Բայց կար նաև կենտրոնական մասը՝ Մեթնի շրջանը՝ իր խառը բնակչությամբ: Այնտեղ 1844 թ. սեպտեմբերին մտցվեց վաքիլների՝ ներկայացուցիչների պաշտոն: Բոլոր այն գյուղերում, որոնք ունեին խառը բնակչություն, այսինքն՝ եթե տվյալ բնակավայրում կողք կողքի ապրում էին դրուզներ և մարոնիներ, նշանակվում էին երկու վաքիլ՝ մեկը դրուզ, իսկ մյուսը՝ քրիստոնյա, որոնք կայմակամների օգնությամբ պետք է լուծեին նրանց միջև ծագող խնդիրները:

Կառավարման այդ մոդելը փոխզիջումային տարբերակ էր՝ թելադրված Լեռնալիբանանի յուրահատուկ պայմաններից: Բայց Լեռնալիբանանում կային շատ թերահավատներ, որոնք վստահ չէին, թե կառավարման այդ բարդ և խճողված համակարգը կարող էր կանխել բախումները և միջհամայնքային խաղաղություն հաստատել Լեռնալիբանանում: Եվ նրանք չսխալվեցին:

Հարաբերությունները դրուզների և մարոնիների միջև այն աստիճանի էին լարված, որ ամեն մի շարժում, որը դրսևորվում էր մի կողմից, հակառակ կողմն ընկալում էր որպես սպառնալիք իր գոյությանը, որն ապահովելու համար նա բացի զեն-

քից այլ միջոց չէր տեսնում: Դրա ապացույցը կարող են լինել 1845 թ. գարնան իրադարձությունները Հարավային Լիբանանում: Կառավարման նոր համակարգի հաստատումից հետո դրուզ շեյխերը վերադարձան Հարավային Լիբանան, որը նրանք համարում էին իրենց պատկանող շրջան և իրենց հավակնությունները դրսևորեցին իրենց նախկին կալվածքների նկատմամբ: Դա խոր տագնապ առաջացրեց դրուզ կայմակամի կառավարման ներքո գտնվող Հարավային Լիբանանի մարոնիների մեջ, որոնք արագորեն սկսեցին զինվել: Լարվածությունը շիկացավ, որը 1845 թ. մայիսին վերածվեց ապստամբության: Միջիամայնքային արյունալի ողբերգությունն իր մեջ առավ Մեթնի, Շուֆի, Ջեզինի, Մանասիֆի, Արքուբի և այլ շրջաններ: Եվրոպական պետությունների ճնշման ներքո Բեյրութի փաշան հարկադրված էր 1845 թ. մայիսի 23–ին միջամտել և խորհրդակցության հրավիրել երկու կայմակամներին: Խորհրդակցության մասնակիցները հունիսի 2–ին ստորագրեցին մի համաձայնագիր, ըստ որի՝ նրանք պայմանավորվում էին ձեռնպահ մնալ հարձակողական գործողություններից, ցրել զինված ջոկատները, ձերբակալել կողոպուտով զբաղվողներին, կարևորագույն ճանապարհների վրա տեղակայել թուրքական զորքեր և այլն:

Արյունահեղության դադարեցումը հնարավորություն տվեց բուժելու 1845 թ. վերքերը, որոշ չափով վերականգնել քայքայված տնտեսությունը, ավերված և հրկիզված բնակավայրերն ու տները, շատ փախստականներ վերադարձան իրենց բնակավայրերը և այլն:

Հարաբերական անդորրը երկար չտևեց: 1859 թ. Լիբանանը կրկին ալեկոծվեց, երբ գյուղացիական ապստամբությունը համակեց Քեսրվանը: Հյուսիսային Լիբանանում գյուղացիական ապստամբությունը կապված էր Օսմանյան կայսրությունում Թանզիմաթի երկրորդ փուլի հետ, երբ գյուղացիները միամտաբար բարենորոգումներն ընդունեցին լրջորեն՝ հավատալով, թե բարենորոգումները հավասարություն են հաստատում բոլոր խավերի միջև և վերացնում խտրականությունը: Գյուղացիները կարծում էին, թե արդեն վերացվում է նրանց կախվածությունը ավատատերերից: Բայց նրանց սպասում էր հիասթափություն, և համոզվելով, որ ամեն ինչ մնում է նախկինի պես, նրանք 1859 թ. հունվարին ոտքի ելան՝ սկսվեց զինված ապստամբությունը, որը գլխավորում էր դարբին Թանիուս Շահինը: Ապստամբությունը հակաավատատիրական ուղղվածություն ուներ: Ապստամբ գյուղացիները գրավում էին ավատատերերին պատկանող հողերը, հրաժարվում նրանց հարկեր վճարելուց և պարհակներից: 1859 թ. հունվարի 2–ին ապստամբ 30 գյուղերի գյուղացիներն իրենց վերահսկողությունը հաստատեցին գրաված հողերի վրա, նրանց տնօրինության տակ անցան ավատատերերի ամբողջ գույքը և ունեցվածքը: Ստեղծվեց կառավարման նոր մարմին, որը կոչվեց «Հանրապետության կառավարություն»՝ Թանիուս Շահինի ղեկավարությամբ: Ապստամբությունը հուզեց ամբողջ Լիբանանը, և դարձյալ երկրի վրա կախվեց միջիամայնքային նոր բախումների մահազդեցիկ վտանգը: Մարոնի–դրուզ ռազմական բախումները, որոնք անմիջապես կոտորածների բնույթ ընդունեցին, սկսվեցին 1860 թ. մայիսին: Ընդհարումների հետևան-

քով մայիսի 29–31–ը միայն Բեյրութի շրջանում ավերվեց 60 գյուղ, սպանվեցին հարյուրավոր մարդիկ: Բախումները տարածվեցին Սայդա, Ռաշայյա, Հասբիյյա, Անդրլիբանան, Դեյր ալ–Կամար, Զահլե, Բիքաա և այլ շրջաններ: Դրուզները, որոնք աջակցություն էին ստանում անգլիացիներից և թուրքերից, մեկը մյուսի հետևից գրավում էին մարոնիներով բնակեցված գյուղերը և զանգվածաբար սպանում նրանց: 1860 թ. մայիս–հուլիս ամիսներին ընդհանուր առմամբ ավերվեց 360 գյուղ, 560 եկեղեցի, 42 վանք, մարոնիները տվեցին 3 հազար զոհ, 70 հազար մարդ մնաց անօթևան, իսկ դրուզների զոհերի թիվը հասնում էր հազար երեք հարյուրի:

Եվրոպական երկրների և հասարակայնության ճնշման ներքո 1860 թ. հուլիսի 6–ին հաջողվեց զինադադարի համաձայնագիր կնքել, որով ամրապնդվեց դրուզների հաղթանակը միջհամայնքային պայքարում: Թուրքական կողմը այդ դեպքերի համար պատասխանատու հայտարարեց երկու կայմակամներին և իշխանությունը Լիբանանում փոխանցեց Սայդայի փաշային:

Հուլիսի 6–ի զինադադարից ընդամենը երեք օր էր անցել, երբ միջհամայնքային բախումներ սկսվեցին Դամասկոսում, որոնք վերածվեցին սարսափելի կոտորածների և ըստ էության լիբանանյան դեպքերի շարունակությունն էին Սիրիայում: Դրանից փորձեցին օգտվել եվրոպական պետությունները միջամտելու համար, իսկ Ֆրանսիան այդ պատրվակի տակ ձգտում էր իր զորքերը մտցնելու Սիրիա և Լիբանան: Ի վերջո դա տեղի ունեցավ, որն իր անդրադարձն ունեցավ Լիբանանի քաղաքական իրավիճակի, ապա նաև նրա կարգավիճակի վրա:

Ֆրանսիան, չսպասելով Լիբանան զորքեր ուղարկելու վերաբերյալ պայմանագրի կնքմանը Բարձր դռան, Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Ավստրիայի և Պրուսիայի միջև, որը ստորագրվեց սեպտեմբերի 5–ին, մինչ այդ՝ օգոստոսի 16–ին, արդեն Բեյրութ էր ուղարկել իր էքսպեդիցիոն կորպուսը՝ մարքիզ Բոֆոր դ'Օպուլինի գլխավորությամբ: Մարոնիները և մյուս քրիստոնյաները մեծ խանդավառությամբ դիմավորեցին ֆրանսիական զորքերին, քանի որ ֆրանսիացիները մարոնի–դրուզ հակամարտության ընթացքում պաշտպանել էին մարոնիներին և հանդես էին գալիս որպես նրանց հովանավորներ: Իսկ դրուզները և սուննիները՝ մարոնիների ջարդերի հիմնական կազմակերպիչները, հիասթափված էին, անգամ վախեցած, որ ֆրանսիացիների քննությունները կարող են բացահայտել իրենց մասնակցությունը ջարդերին և պատասխանատվության ենթարկել իրենց:

Ֆրանսիացիներն իրենց ուշադրությունը կենտրոնացրին Հյուսիսային Լիբանանի, այսինքն՝ Քեսրվանի վրա, որտեղ հաստատվել էր հանրապետական կառավարություն՝ Թանիուս Շահինի գլխավորությամբ: Նրանց նպատակն էր ճնշել այդ ապստամբությունը, և երբ ֆրանսիական զորքերն առաջ շարժվեցին դեպի Քեսրվան, ապա Թանիուս Շահինը փախավ և Հյուսիսային Լիբանանի կամ քրիստոնյա–մարոնի շրջանի ժամանակավոր կայմակամ դարձավ Յուսուֆ Քարամը: Նրան հաջողվեց ֆրանսիացիների օգնությամբ իր իշխանությունը տարածել ամբողջ Քեսրվանի վրա, «հանդարտեցնել» գյուղերը և վերականգնել մարոնի կալվածատերերի իրավունքները:

Իսկ Լիբանանի հարավային կամ դրուզական մասը մնաց առանց կայմակամի: Օսմանյան արտաքին գործերի նախարար Ֆուադ փաշան Հարավային Լիբանանը բաժանեց չորս ռազմական գոտիների՝ նրանց ղեկավարներ նշանակելով թուրքական բանակի սպաների:

4. ԼԻԲԱՆԱՆԻ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՍՏԱՏՈՒՏԸ: ԱՐԹԻՆ ԴԱՈՒԴՅԱՆԸ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՍԱԿԱԼ

Դրանից հետո կենտրոնական հարց դարձավ ֆրանսիական զորքերը Լիբանանից դուրս բերելու և Լիբանանի ապագա կարգավիճակի հարցը: Այդ երկու կարևոր խնդիրների շուրջն ընթանում էին թեժ բանակցություններ եվրոպական պետությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Ավստրիայի, Պրուսիայի և Օսմանյան կայսրության միջև, որոնցից յուրաքանչյուրը ձգտում էր այդ հարցերը լուծելու այնպես, որ առավելապես շահի ինքը: Բայց դա ոչ մի կողմի չհաջողվեց և վերոնշյալ պետությունները հարկադրված էին կանգնել փոխզիջումային տարբերակ գտնելու քաղաքականության վրա: Ֆրանսիան, որն ամեն կերպ ձգտում էր երկարաձգելու իր զորքերի ներկայությունը Սիրիայում, ի վերջո հարկադրված էր ընդունել կողմերի սահմանած ժամկետի հետ և 1861 թ. հունիսի 5–ին ավարտել իր զորքերի դուրսբերումը: Դրանով ձախողվեց Սիրիայում և Լիբանանում Ֆրանսիայի տիրապետությունը հաստատելու Լուի Նապոլեոնի քաղաքականությունը:

Հերթը հասավ Լիբանանի կարգավիճակի և կառավարման համակարգի հարցին: Դրանով զբաղվում էր հատուկ միջազգային հանձնաժողովը՝ կազմված Անգլիայի, Ֆրանսիայի, Ավստրիայի, Ռուսաստանի և Պրուսիայի դիվանագիտական ներկայացուցիչներից, որը գլխավորում էր Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարար Ֆուադ փաշան: Հանձնաժողովի աշխատանքները, որոնք սկսվել էին դեռևս 1860 թ. հոկտեմբերի 5–ին, ավարտվեցին 1861 թ. հունիսի 9–ին: Այդ օրը Ֆրանսիան, Անգլիան, Ռուսաստանը, Պրուսիան, Ավստրիան և Թուրքիան ստորագրեցին «Լիբանանին տրված կանոնադրությունը», որը մասնագիտական գրականության մեջ ավելի հայտնի է որպես «Լիբանանի օրգանական ստատուտ»:

Համաձայն այդ Կանոնադրության՝ Լեռնալիբանանը համարվում էր մեկ ամբողջական տարածք, որը «կառավարելու է Օսմանյան կայսրության նշանակած և Բարձր դուռից ուղղակի կախում ունեցող քրիստոնյա մութասարիֆը»: «Մութասարիֆ» բառացիորեն նշանակում է «փոխանորդ» կամ «փոխարինող», քաղաքական իմաստով՝ «փոխարքա», իսկ «մութասարիֆություն»՝ «փոխարքայություն»: Հայերեն կարելի է օգտագործել համապատասխանաբար «կուսակալ» և «կուսակալություն»:

Ըստ կանոնադրության՝ «Կառավարչի պաշտոնում մութասարիֆը պետք է հսկի, որպեսզի պահպանվի կարգ ու կանոն ու խաղաղությունը Լեռնալիբանանի բոլոր կողմերում և ապահովվի հարկերի գանձումը»: Նա էր նշանակում պետական պաշտոնյաներին և դատավորներին: Լեռնալիբանանը կառավարելու համար մութասարիֆը ստեղծում էր 12 դեպուտատներից բաղկացած Գործադիր մեծ ժողով՝ երկուա-

կան ներկայացուցիչներից հետևյալ վեց կրոնական համայնքներից՝ մարոնի, դրուզ, սուննի, շիա, հույն ուղղափառ և հույն կաթոլիկ: Գործադիր ժողովը, որի նախագահն ինքը՝ մութասարիֆն էր, հետևելու էր հարկերի հավաքմանը և ֆինանսական գործերին: Լեռնալիբանանը բաժանվեց 6, իսկ 1864 թ. բարեփոխված Կանոնադրությամբ՝ 7 կազաների: Կազաներում ընտրվում էր մեկ կառավարիչ, որը հաստատվում էր մութասարիֆի կողմից: Կազաները բաժանվում էին նահիյաների, որտեղ կազայի կառավարչի հավանությամբ և մութասարիֆի հավանությամբ նշանակվում էին մեկական տեսուչներ: Իսկ յուրաքանչյուր գյուղում լինելու էր բնակչության կողմից հաստատված մեկական գյուղապետ: Կանոնադրության 5–րդ հոդվածում ամրագրված էր, որ «Օրենքի առաջ բոլորը հավասար են», և դրա հիման վրա վերանում էին որոշ խավերին տրված արտոնությունները: Ստեղծվում էր Գերագույն դատարան և տեղական ոստիկանություն՝ «խաղաղությունը և օրենքը պահպանելու համար»: Ոստիկանական զարախումբը լինելու էր խառը, այսինքն՝ հիմնված չէր լինելու կրոնահամայնքային սկզբունքի վրա: Լեռնալիբանանի մայրաքաղաքը համարվեց Դեյր ալ–Կամարը: Մութասարիֆի կառավարման ժամկետը սահմանվեց երեք տարի, իսկ 1864 թ. բարեփոխված Կանոնադրությամբ՝ հինգ տարի:

Լեռնալիբանանի Օրգանական ստատուտը հրապարակվեց որպես օսմանյան սուլթանի հրովարտակ:

Մութասարիֆի հարցում կողմերը համաձայնության էին եկել, որ նա պետք է լինի քրիստոնյա և պետք է լինի ոչ տեղաբնիկ, կաթոլիկ:

Օսմանյան սուլթանը Լեռնալիբանանի առաջին մութասարիֆ–փոխարքա նշանակեց հայազգի Կարապետ–Հարություն Դաուդյանին, որի թեկնածությունը հատկապես պնդել էին Ռուսաստանը և Պրուսիան, իսկ Անգլիան, Ֆրանսիան, Ավստրիան և Թուրքիան հարկադրաբար զիջել էին:

Նա, որը ավելի շատ հայտնի է որպես Դաուդ փաշա կամ Արթին Դաուդ փաշա, 1816 թ. Կոստանդնուպոլսում ծնված հայ կաթոլիկ էր, եվրոպական լավ կրթություն ստացած իրավաբան, Բեռլինի գիտությունների ակադեմիայի պատվավոր անդամ, Վիեննայի համալսարանի դոկտոր, վերին աստիճանի զարգացած անձնավորություն: Նրա նշանակումը Լեռնալիբանանի կուսակալ բարեբախտություն էր լիբանանցիների համար, և նա երկիր ղեկավարելու իր ունակությունները փայլուն դրսևորեց: Դաուդ փաշան իր հավասարակշռված մոտեցումների, արդարամտության, համբերատարության և դիվանագիտական մեծ արվեստի շնորհիվ կարողացավ լուծել Լիբանանի արյունալի պատմությունից ժառանգություն ստացած մի շարք առանցքային հարցեր, որոնց մեջ առաջին հերթին պետք է նշել տարբեր կրոնադավանական համայնքների միջև հաշտության հաստատումը՝ վերջ տալով արյունալի բախումներին: Նրա կառավարման տարիներին Լեռնալիբանանում հաստատվել էր կարգ ու կանոն, կյանքը դարձել էր անվտանգ, վերջ էր տրվել կամայականություններին, առողջացել էր քաղաքական մթնոլորտը, և թշնամությունն աստիճանաբար իր տեղը զիջել համերաշխությանն ու համագործակցությանը, որը նպաստավոր պայմաններ ստեղծեց տնտեսության վերելքի, առևտրի, արհեստների

և գյուղատնտեսության զարգացման համար: Իհարկե, կային նաև դժվարություններ, խոչընդոտներ, բարդություններ, հատկապես Լեռնալիբանանի մարոնի հատվածի նախկին կայմակամ Յուսուֆ Քարամի կողմից, որը չէր կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ փոխարքայությունը տրված է ոչ թե իրեն, այլ մի հայի:

Արթին Դաուդյանը կարողացավ հիմնականում լուծել իր առաքելությունը, ուստի երբ 1864 թ. լրացավ նրա կառավարման ժամկետը, եվրոպական հինգ պետությունները և Թուրքիան միաձայն որոշեցին Դաուդ փաշային երկրորդ անգամ հաստատել փոխարքայի պաշտոնում՝ 5 տարի ժամանակով: Այդուհանդերձ, նա, զզված Յուսուֆ Քարամի և նրա շուրջը համախմբված որոշ մարոնի ղեկավարների դավերից, 1868 թ. հրաժարական տվեց իր պաշտոնավարության ժամկետի ավարտից մի փոքր շուտ:

Հայազգի փոխարքան խոր հետք է թողել Լիբանանի նոր շրջանի պատմության մեջ և արժանացել մի շարք պատմաբանների և մասնագետների բարձր գնահատականին: Լիբանանի պատմության խոշոր մասնագետ Քամալ Սալիբին, նրան համարելով Օսմանյան կայսրության ամենակրթված պաշտոնյաներից մեկը, նշում է, որ «Հազիվ թե կարելի լիներ ավելի հաջող ընտրություն կատարել»: Ֆիլիպ Հիթթին նրան բնութագրում է որպես «արտակարգ ընդունակ մարդ»: Նրա գործունեությունը բարձր են գնահատել Հ. Լամմենզը, Ա. Կրիմսկին, Ն. Դահդահը և ուրիշներ: Որոշ հեղինակներ այն կարծիքն են արտահայտել, որ Դաուդ փաշայի կառավարման տարիներին Լեռնալիբանանը կատարյալ անկախ պետություն էր:

5. ԼԻԲԱՆԱՆԸ ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴ Բ–Ի ԵՎ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1876–1914 ԹԹ.)

Մենք այս հարցերին հանգամանորեն անդրադարձել ենք աշխատության նախորդ հատվածներում, մասնավորապես Սիրիային նվիրված գլխում, ուստի անհրաժեշտություն չկա կրկին վերադառնալու դրանց: Ուստի կլուսաբանենք միայն այն խնդիրները, որոնք անմիջականորեն առնչվում են Լիբանանին:

Աբդուլհամիդյան վարչակարգը լիբանանցիների ընկալմամբ զուլումի վարչակարգ էր և հավասարապես մերժելի էր նրանց համար: Լիբանանյան հեղինակ Յուսուֆ Յազբեկը, ընդգծելով, որ ամբողջ Օսմանյան կայսրությունը տքնում էր զուլումի լծի տակ, այդ կայսրությունը բնութագրում էր որպես «սուլթան Աբդուլ Համիդի բանտ»: Լիբանանյան մեկ այլ պատմաբանի՝ Զեյն Զեյնի կարծիքով աբդուլհամիդյան զուլումի միահեծան վարչակարգը տարեցտարի դառնում էր ավելի դաժան: Նա ընդգծում էր, որ Օսմանյան կայսրությունում չկար հավասարություն քրիստոնյաների և մուսուլմանների միջև, թեև անհավասարությունը վերացել էր 1856 թ. Հաթթի–հումայունի՝ Թանզիմաթի դեկրետով: Այդուհանդերձ՝ Զեյնն արձանագրում էր, որ հայերի, հույների և մյուս քրիստոնյա ժողովուրդների ռայյայի կարգավիճակը փոփոխության չէր ենթարկվել: Իսկ Լիբանանն այդ հարցում շատ զգայուն էր՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ քրիստոնյաները՝ մարոնի, ուղղափառ, կաթոլիկ և այլն, բավականին մեծ թիվ էին կազմում մայրիների երկրում:

Արաբների՝ աբդուլհամիդյան անտանելի զուլումի դեմ մղվող պայքարում իրենց արժանի մասնակցությունն են ունեցել նաև լիբանանցիները: Նրանք զանազան գաղտնի հավաքների, քննարկումների և ժողովների գումարման առաջին շարքերում էին, շատ եռանդուն էին արաբական երկրներում և արտասահմանում արաբական կազմակերպությունների ձևավորման գործում: Լիբանանցի մտավորականները, գրողները, լրագրողները, մանավանդ նրանք, որոնք, խուսափելով աբդուլհամիդյան հետապնդումներից, հաստատվել էին հատկապես Եգիպտոսում, բացահայտորեն հանդես էին գալիս արյունարբու սուլթանի վարչակարգի դեմ: Լիբանանյան գրողների կողմից Կահիրեում հրատարակվող «Ալ–Մուկադամ» և «Ալ–Ահրամ» թերթերը հետևողականորեն հարձակվում էին սուլթանի, զուլումի վարչակարգի, նրա ներքին քաղաքականության վրա՝ դառնալով հակազուլումյան ուժերի խոսափողը: Բեյրութից օսմանյան պառլամենտի անդամ ընտրված Խալիլ Ղանիմը, որը սուլթանի կողմից 1878 թ.՝ պառլամենտը ցրելուց հետո, հաստատվել էր Փարիզում, դարձել էր օսմանյան կառավարության ընդդիմախոսը և խստորեն քննադատում նրա բռնատիրական քաղաքականությունը: Ֆրանսիայում գտնվելու ընթացքում նա հատուկ գիրք գրեց օսմանյան սուլթանների մասին, որում առանձին բաժին էր հատկացված Աբդուլ Համիդ II–ի կյանքին ու գործունեությանը: Անդրադառնալով «օսմանյան ազգի» հարցին և հավաստելով, որ «օսմանյան ազգը» կործանվեց, Խալիլ Ղանիմը դրա գլխավոր պատճառներն էր համարում աբդուլհամիդյան զուլումի քաղաքականությունը, լիբերալ իսլամի վերածումը բռնակալական իսլամի և թուրքերի անհանդուրժողականությունը: Օսմանյան պառլամենտի նախկին անդամը ելքը տեսնում էր 1876 թ. սահմանադրությանը վերադառնալու մեջ, որը կանխակայել էր արյունռուշտ սուլթանը:

Լիբանանյան մտավորականները, առաջին հերթին Բուտրուս ալ–Բուստանին և նրա «Ալ–Ջինան» պարբերականը զգալի դեր խաղացին ընդհանուր օսմանյան «Հայրենիքի»՝ «Վաթանի» գաղափարի կողքին «Բիլադի» կամ արաբական «Երկրի» գաղափարի առաջադրման և հիմնավորման գործում, որով ընդգծվում էր, որ արաբների համար շատ կարևոր է այն երկրի՝ բիլադի գաղափարը, որտեղ նա ապրում է: Դա օսմանյան հայրենիքին արաբական բիլադի միջոցով հակադրվելու մի փորձ էր, որը հետագայում ավելի մեծ զարգացում ունեցավ:

Պատահականություն չէր, որ 1875 թ. Բուտրուս ալ–Բուստանիի շուրջը համախմբված լիբանանցիները ստեղծեցին իրենց գաղտնի ընկերությունը, որի գործունեությունն ավելի ակտիվացավ հետագա տարիներին: Նրանց հիմնական քաղաքական պահանջներն էին՝ միացյալ Սիրիայի և Լիբանանի ինքնավարություն Օսմանյան կայսրության սահմաններում, արաբերեն լեզվի ճանաչում որպես պաշտոնական լեզու, սահմանափակումների վերացում գիտելիքների ձեռք բերելու և ազատորեն արտահայտվելու հարցերում: Բեյրության այդ ընկերությունը, որի գլուխ կանգնած էին Իբրահիմ Յազիջին և Ֆարիս Նիմրը, իր բաժանմունքներն ուներ նաև Դամասկոսում, Սուվեյդիայում և Հյուսիսային Լիբանանում՝ Տրիպոլիում:

Քաղաքական ասպարեզում զուլումի տարիներին հայտնված և հետևողականորեն հակազուլումյան դիրքորոշում ունեցող կազմակերպություններից էր 1904 թ. Փարիզում լիբանանցի քրիստոնյա արաբ Նաջիբ Ազուրիի հիմնած «Արաբական Հայրենիքի լիգան»: Ազուրին կարծում էր, որ գոյություն ունի մեկ արաբ ազգ, որը հավասարապես ներառում է և՛ մուսուլմաններին, և՛ քրիստոնյաներին, և «Արաբ ազգը պետք է անկախ լինի թուրքերից»: Դա Նաջիբ Ազուրիի քաղաքական հայացքների բարձրակետն էր, որով նա հակադրվում էր Օսմանյան կայսրության ժողովուրդներին ձուլելու Աբդուլ Համիդ II զուլումի քաղաքականությունը: Դեռ ավելին՝ նա այնքան հեռու գնաց, որ հրապարակավ հայտարարեց, որ «Թուրքերը կործանեցին արաբներին: Առանց նրանց արաբները կարող էին լինել աշխարհի ամենաքաղաքակիրթ ազգերի մեջ»: Ելնելով այդ հիմնադրույթներից՝ Նաջիբ Ազուրին առաջ քաշեց «Արաբական երկրները՝ արաբներին» քաղաքական բանաձևը:

Ուշագրավ է լիբանանցիների մոտեցումը հայկական ջարդերին աբդուլհամիդյան զուլումի տարիներին: Նրանց համար այդ հարցի քննարկումը զորեղ փաստարկ էր զուլումի քաղաքականության հակամարդկային և դաժան էությունը բացահատելու և կայսրության տարածքում հալածանքների ու բռնությունների իրականացման քաղաքականության մեխանիզմներն ըմբռնելու տեսակետից: Այդ կապակցությամբ նրանք մեծ տեղ են հատկացնում 1891 թ. «համիդիե» կոչված հեծյալ ավազակախմբի հակահայկական գործունեությանը: Լիբանանյան հանրագիտարանում կարդում ենք, որ «տասնյակ հազարավոր քուրդ քոչվորներ մտնում էին հայկական տարածքներ՝ Մուշ, Վան, Էրզրում: Հետո նրանց զինում էին (օսմանյան կառավարողները — Ն. Հ.) և կազմում ռազմական ջոկատներ, որոնք հայտնի էին «համիդիե» անունով, որոնք կառավարության թողտվությամբ ավերում էին Հայաստանը»: Լիբանանյան հեղինակները զուլումի վարչակարգի գոյության և նրա հակահայկական քաղաքականության հետ էին կապում 1894–1896 թթ. հայկական կոտորածները Օսմանյան կայսրությունում: Մուսա Պրենսն իր «Արմենոցիդ» աշխատության մեջ այդ թվականներին տեղի ունեցած կոտորածները համարում է Հայոց ցեղասպանության սկիզբը՝ այն իրականացնող սուլթան Աբդուլ Համիդին համարելով «մեծ ոճրագործ»: Իսկ լիբանանյան մեկ այլ հեղինակ՝ Ջամիլ Հաբրը, «Հայերը և Լիբանանը» աշխատության մեջ նշում է, որ XIX դարի վերջերին հայերի արտագաղթն արաբական երկրներ «արդյունք էր այն հալածանքների, որոնց այդ ժողովուրդը ենթարկվում էր օսմանյան լծի ներքո, իսկ դա սկսվեց սուլթան Աբդուլ Համիդի կառավարության ժամանակաշրջանում, երբ կատարվեցին բարբարոսական ջարդեր 1894–1896 թթ., և հազարավոր հալածյալներ հորդեցին հարևան երկրներ, և Լիբանանը դրանցից մեկն էր»: Արաբները, այդ թվում նաև Լիբանանում, վերին աստիճանի զգայուն եղան հայ գաղթականների նկատմամբ և դրսևորեցին մարդասիրական վերաբերմունք՝ օգնելով նրանց կազմակերպելու իրենց կյանքը:

Արաբները և հայերն ավելի ու ավելի էին իրենց զգում որպես բախտակից ժողովուրդներ: Աբդուլհամիդյան զուլումի դեմ պայքարում նրանք պոտենցիալ դաշնա-

կիցներ էին և այդ իրողության ըմբռնումը պետք է համարել արաբական և հայկական ազգային–քաղաքական մտքի պատմական նվաճումը:

Երիտթուրքերի 1908 թ. հեղափոխությունը և հաջորդ տարի սուլթան Աբդուլ Համիդ II–ի գահընկեց անելը մեծ խանդավառությամբ ընդունվեց նաև Լիբանանում: Սկզբնական փուլում նրանք ևս հայտնվեցին էյֆորիայի մեջ, իսկ հետագայում խոր հիասթափություն ապրեցին, ինչպես արաբական մյուս երկրներում: Հիշատակենք, որ լիբանանցիները մասնակից էին այն բոլոր արաբական կազմակերպություններին, որոնք հայտնվեցին երիտթուրքական հեղաշրջումից հետո և նույն վրիպումներն ու սխալները թույլ տվեցին, ինչպես որ Սիրիայի, Իրաքի և արաբական մյուս երկրամասերի բնակչությունը: Լիբանանցիներին, որոնց զգալի մասը քրիստոնյաներ էին, հատկապես սարսափեցրեց, ինչպես նշում է Ա. Հաուրանին, «օսմանյան նացիոնալիզմի աստիճանաբար վերածումը թուրքական նացիոնալիզմի» և երիտթուրքերի հռչակած բռնի թուրքացման քաղաքականությունը:

Լիբանանցիները կարևոր դերակատարում ունեցան 1913 թ. Արաբական առաջին կոնգրեսի գումարման գործում և ունեցան իրենց արժանի ներդրումը նրա կողմից ընդունված որոշումներում:

Արաբական աշխարհը մեծ ցնցումների նախաշեմին էր: Սակայն քաղաքական զարգացումներն այլ ընթացք ստացան սկսված Առաջին աշխարհամարտի պատճառով, որի մեջ ներգրավվեցին Օսմանյան կայսրությունը և նրա արաբական երկրամասերը, այդ թվում նաև Լիբանանը:

6. ԼԻԲԱՆԱՆՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1914–1918 ԹԹ.)

Օսմանյան կայսրությունը պատերազմի մեջ մտավ դրա սկսվելուց համարյա չորս ամիս անց՝ 1914 թ. հոկտեմբերի 29–ին՝ միանալով Եռյակ դաշինքին՝ Գերմանիային, Ավստրո–Հունգարիային և Իտալիային: Այդպիսով Լիբանանը ևս հայտնվեց պատերազմի ծիրում՝ ընդդեմ Անտանտի երկրների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, որոնց հետագայում միացան նաև ԱՄՆ–ը և բազմաթիվ այլ երկրներ:

Պատերազմը շատ ծանր անդրադարձավ արաբական երկրների, այդ թվում նաև Լիբանանի վրա: Բացի ընդհանուր դժվարություններից, որոնք բնորոշ էին բոլոր արաբական երկրներին, նրանցից յուրաքանչյուրն ունեցավ իր առանձնահատկությունը: Քաղաքական առումով թերևս ամենածանր հարվածը հասցվեց Լիբանանին: Ջեմալ փաշայի հրամանով, որը պատմական Սիրիայում տեղակայված օսմանյան IV բանակի հրամանատարն էր և Սիրիայի, Պաղեստինի և Լիբանանի անսահմանափակ տիրակալը, 1915 թ. միակողմանիորեն վերացվեց Լեռնալիբանանին դեռևս 1861 թ. շնորհված մութասարիֆության՝ փոխարքայության կարգավիճակը: 1915 թ. մայիսի 26–ին Ջեմալ փաշան լուծարեց Լիբանանի Վարչական խորհուրդը, իսկ հունիսի 15–ին պաշտոնաթող եղավ նրա վերջին կուսակալը՝ Օհանես (Հովհաննես) Կույումջյանը, և վերացվեց մութասարիֆի պաշտոնը: Ինչպես նշվել է, նրա առաջին կուսակալը կամ փոխարքան եղել էր հայազգի Արթին Կարապետ Դաուդ-

յանը: Ճակատագրի բերումով նրա վերջին փոխարքա–մութասարիֆը նույնպես եղավ հայ՝ Հովհաննես Կույումջյանը: Այսպիսով՝ Լիբանանի փոխարքայությունն իր գոյությունը պահպանեց ընդամենը 54 տարի:

Լիբանանի օրգանական ստատուտի վերացումը միջազգային իրավունքի կոպիտ խախտում էր, քանի որ Լեռնալիբանանի ինքնավարության կարգավիճակը հաստատվել էր եվրոպական Մեծ տերությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Ավստրիայի, Ռուսաստանի, Պրուսիայի և Թուրքիայի միջև ձեռք բերված համաձայնությամբ: Հետևաբար Բարձր դուռն իրավունք չուներ միակողմանիորեն, առանց այդ հարցը վերոնշյալ պետությունների հետ նախօրոք համաձայնեցնելու դիմելու նման քայլի:

Երիտթուրքական կառավարությունը լրիվ անտեսեց նաև լիբանանցիների կարծիքը:

Լիբանանը կրկին հայտնվեց օսմանյան ուղղակի կառավարման ներքո: Բարձր դուռը նշանակում էր կառավարիչներ, որոնք ենթակա էին Բեյրութի թուրք վալիին: Մինչև 1918 թ.՝ պատերազմի ավարտը, նա ունեցավ նման երեք կառավարիչ:

Լիբանանում անասելի վատթարացավ տնտեսական դրությունը: Օսմանյան ռազմական իշխանությունները բռնագրավում էին պարենը, գյուղատնտեսական մթերքները, խոշոր և մանր եղջերավոր անասունները: Զանգվածաբար ոչնչացվում էին այգիները, իսկ պտղատու ծառերը ձմռանն օգտագործվում էին որպես վառելափայտ: Մեծ չափեր էին ընդունել սովը և հիվանդությունները, որոնց զոհը դարձավ 100 հազար լիբանանցի: Լիբանանցիները, ինչպես նաև սիրիացիները, իրաքցիները կամ պաղեստինցիները բռնի կերպով ներգրավվում էին տաժանակիր աշխատանքների մեջ, զորակոչվում բանակ և ուղարկվում պատերազմի դաշտ, որն առաջացրեց բնակչության խիստ դժգոհությունը: 1916 թ. լայն թափ ստացան պարտիզանական հակաթուրքական ելույթներն արաբական երկրներում, այդ թվում նաև Հյուսիսային Լիբանանում:

Օսմանյան իշխանություններին ակնհայտ դարձավ, որ պատերազմում արաբները, այդ թվում՝ լիբանանցիները, իրենց կողքին չեն: Նրանք համոզվեցին, որ արաբների ճնշող մեծամասնությունը, նրանց ազգային առաջնորդները և մտավորականությունը ոչ միայն Թուրքիայի հետ չեն, այլև համակրում են Անգլիային և Ֆրանսիային, ցանկանում նրանց հաղթանակը գերմանաթուրքական բլոկի դեմ՝ հուսալով, որ Անտանտի հաղթանակն իրենց ազատություն կբերի օսմանյան տիրապետությունից:

Ջեմալ փաշան, որի հրամանով Սիրիայում, Լիբանանում և Պաղեստինում մտցված էր ռազմական դրություն, որոշեց ջախջախիչ հարված հասցնել արաբական անկախության շարժմանը: Նրա հրամանով տասնյակ հազարավոր մարդիկ ձերբակալվեցին, բանտ նետվեցին և աքսորվեցին Անատոլիայի խորքերը: Նրանց մեջ մեծ թիվ էին կազմում ծերունիները, երեխաները և կանայք: Թուրքական դատարանները մեկը մյուսի հետևից արձակում էին մահվան դատավճիռներ, որոնք ի կատար էին ածվում կախաղանի միջոցով: Արաբ ազգային հայրենասեր գործիչնե-

րի 10 հոգուց բաղկացած առաջին խումբը կախաղան հանվեց 1915 թ. օգոստոսին Բեյրութի Բուրջ հրապարակում, 1916 թ. մայիսի 6–ին երկրորդ խումբը՝ յոթ հոգի, կախաղան բարձրացվեց Դամասկոսում, իսկ մյուս խումբը՝ թվով 14 հոգի, այդ նույն օրը կախաղանի միջոցով մահապատժի ենթարկվեց դարձյալ Բեյրութի Բուրջ հրապարակում: Ընդհանուր առմամբ այդ տարիներին մահապատժի է ենթարկվել 800 մարդ՝ սիրիացիներ, լիբանանցիներ, պաղեստինցիներ և այլք:

1916 թ. կեսերին ակնհայտ դարձավ, որ Օսմանյան կայսրությունն այլևս ի վիճակի չէ պահպանելու իր դիրքերն Արաբական Արևելքում: Անգլիական զորքերը և նրանց միացած արաբական ապստամբական բանակը համատեղ սկսեցին արաբական երկրների ազատագրումը օսմանյան տիրապետությունից: Նրանք 1917 թ. սկզբներին՝ թուրքերին Հիջազից վռնդելուց հետո, մտան Պաղեստին, և սկսվեց Հորդանանի, Լիբանանի և Սիրիայի ազատագրումը: 1918 թ. հոկտեմբերին 8–ին ազատագրվեց Բեյրութը, ապա լիբանանյան մյուս տարածքները: Արաբական Արևելքի երկրների ազատագրումն ամբողջացավ 1918 թ. աշնանը՝ հոկտեմբերի 25–ին, Հալեպի մոտ՝ Խան Թումանում տեղի ունեցած վերջին և արաբների համար հաղթական ճակատամարտից հետո:

Օսմանյան կայսրությունը պատերազմում ծանր պարտություն կրեց և կործանվեց: 1918 թ. հոկտեմբերի 30–ին Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստում զինադադար կնքվեց Օսմանյան կայսրության և Անտանտի միջև, որով Օսմանյան կայսրությունը իրեն պարտված ճանաչեց:

Մուդրոսի զինադադարը եղավ Օսմանյան կայսրության մահվան ողողանջը: Դրանով իսկ արաբներն ազատագրվեցին չորս հարյուր երկու տարի տևած օսմանյան վայրագ տիրապետությունից:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՄՇԱԿՈՒՅԹ

XIX դարի սկիզբը բնորոշվեց արաբական աշխարհում տնտեսական, քաղաքական և մշակութային վերելքով, որը ստացել է «ան–Նահդա» անվանումը: Արաբական երկրներում մշակութային և գրական գործընթացի առանձնահատկությունները պայմանավորված էին արաբական երկրներում կյանքի փոփոխմամբ, որն իր հերթին կապված էր միջնադարյան կացութաձևի հաղթահարման, միապետության հաստատման և նոր հասարակական հարաբերությունների արմատավորման, ինչպես նաև համաշխարհային տնտեսության ոլորտ արաբական երկրների ներառման, դեպի Մերձավոր Արևելք եվրոպական էքսպանսիայի և ազգային–ազատագրական շարժման առաջացման հետ:

Այդ ժամանակաշրջանում կատարվեց նաև անցում միջնադարյան գրականության ավանդական նորմերից դեպի նոր ժամանակի գրականություն, որն ընդունված է անվանել «նոր» կամ «ժամանակակից արաբական գրականություն»: XIX դ. մշակութային զարգացման կարևոր բնորոշիչներից էր, որ նոր արաբական գրականությունը ձևավորվում էր որպես արաբական երկրների ազգային գրականությունների ամբողջություն, սակայն XIX դարից սկսած՝ արաբական գրականությունն այլևս չի կարելի դիտարկել որպես մի ընդհանուր միավոր:

Միաժամանակ արաբական երկրների գրականությունները XIX դարում դեռ պահպանում էին միջնադարից եկած մեկ համընդհանուր գիծ՝ նրանք ստեղծվում էին գրական արաբերենով՝ շարունակելով մնալ արաբական գրավոր մշակույթի դրսևորում: Ավելին՝ հենց XIX դ. կազմավորվեց պատկերացումն արաբական դասականության մասին՝ որպես բոլոր արաբների մշակութային ընդհանուր ժառանգության:

XIX դ. առաջին կեսին արաբական աշխարհի առավել զարգացած երկրների՝ Սիրիայի և Եգիպտոսի հանրային գիտակցության մեջ նկատվում են որոշակի փոփոխություններ. այստեղ կարևորագույն գործոն եղավ 1798–1801 թթ. Բոնապարտի արշավանքը Եգիպտոս, որը նոր էջ բացեց այդ երկրի պատմության մեջ: 1798 թվականը կարևորվում է նրանով, որ ազդարարեց այն ժամանակ Օսմանյան կայսրության մաս կազմող արաբական աշխարհի կտրուկ շրջադարձը դեպի Արևմուտք, որն իր անմիջական հետևանքներն ունեցավ այս աշխարհամասի քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացման համար:

Արաբական միջնադարյան գրական ավանդույթի և Արևմուտքի մշակութային ուժերի բեղմնավոր հանդիպումից է ծնունդ առնում ժամանակակից արաբական գրականության ձևավորման դանդաղ և աստիճանական գործընթացը, որը տար-

բեր պատճառներով սկսվել էր Եգիպտոսում և Սիրիայում (ներառյալ Լիբանանը) և այնտեղից տարածվել ողջ արաբական աշխարհով:

Այն ցնցումը, այդ թվում նաև մշակութային, որն ապրեցին եգիպտացիները, ականատեսի աչքերով հիանալի նկարագրել է եգիպտացի պատմաբան Աբդ ալ–Ռահման ալ–Ջաբարթին (1756–1825) իր «Աջաիբ ալ–ասար» ժամանակագրության մեջ: Ֆրանսիական բանակի տարած հեշտ հաղթանակը Եգիպտոսի բնակչությանն ակնհայտ դարձրեց Արևմուտքի ահռելի գերակայությունը, ոչ միայն նրա ռազմական ուժի, այլև ռացիոնալ մտքի և մշակույթի անվիճելի գերազանցությունը: Բոնապարտն իր հետ բերել էր ֆրանսիացի փորձագետների և հանրաճանաչ գիտնականների մի խումբ, որոնք ձեռնամուխ եղան Եգիպտոսի և նրա ռեսուրսների բազմակողմ և մանրամասն ուսումնասիրությանը՝ գիտական աշխատանքներ վարելով այդ նպատակով իրենց իսկ կողմից հիմնված Եգիպտոսի ինստիտուտում՝ Institute d'Egypte, և կատարած աշխատանքների արդյունքները հրատարակելով նոր հիմնված ֆրանսալեզու պարբերականում:

Ֆրանսիական իշխանությունների հռչակագրերն արաբերենով տպագրելու համար Վատիկանից հատուկ բերվեց արաբալեզու տպագրական սարք՝ առաջին արաբալեզու սարքը Եգիպտոսում: Երեք տարի տևած ֆրանսիական ներկայության կարևորությունը Եգիպտոսի, ինչպես նաև մնացած արաբական աշխարհի համար դժվար է գերագնահատել: Այն վերջ դրեց արաբական աշխարհի մեկուսացմանը՝ ազդարարելով միաժամանակ նաև գաղութացման գործընթացի սկիզբը, որն ունեցավ այնպիսի խոր և ցավագին ազդեցություն արաբների վրա, որ մինչ օրս Արևմուտք–Արևելք հակադրությունը մնում է արաբական գրականության էջերին քննարկվող հիմնական հարցերից մեկը: Այդ ժամանակից ի վեր գրականության մեկ այլ առանցքային թեմա դարձավ ազգային–ազատագրական պայքարի գաղափարախոսությունը:

Այնուամենայնիվ, արաբական գրականության ամբողջ ընթացքը կարող էր լիովին տարբեր լինել, եթե չլիներ ֆրանսիական արշավանքի անուղղակի արդյունքը՝ Մուհամմեդ Ալիի ի հայտ գալը: Դառնալով Եգիպտոսի տիրակալ 1805 թ.՝ նա սկսեց ռազմական բարեփոխումների համապարփակ մի ծրագիր, ինչն իրագործելու նպատակով երկիր էին բերվում ոչ միայն արևմտյան ռազմական խորհրդականներ և ճարտարագետներ, այլև ներմուծվում էր կրթության արևմտյան կաղապարը: 1816 թ. Մուհամմեդ Ալին ձեռնամուխ եղավ արևմտյան տիպի կրթության համակարգի ներմուծմանը, որը շատ քիչ ընդհանրություն ուներ Ազհարի կրոնական ավանդական կրթության հետ: Նա հիմնեց տեխնիկական և ռազմական տարբեր դպրոցներ, որտեղ դասավանդվում էին ժամանակակից գիտությունները և եվրոպական լեզուները: Ալիի կարգադրությամբ եգիպտացի երիտասարդներն ուսման էին ուղարկվում Եվրոպա՝ հիմնականում Ֆրանսիա, և այս կրթական առաքելությունների մասնակիցները դիտվում էին որպես սպաներ, որոնք պիտի յուրացնեին ժամանակակից գիտական նվաճումները: Բնական է, որ այս երիտասարդներին հետաքրքրում էին ինչպես գիտությունները, այնպես էլ ոչ պակաս եվրոպական մշա-

կութային այն արժեքները, որոնք ընկած էին այդ գիտությունների հիմքում: Մյուս կողմից՝ Եգիպտոսում կրթության նոր աշխարհիկ համակարգի հաստատումը իր հերթին տանում էր ավանդական արժեքների հեղինակության խարխլմանը: Արաբամուսուլմանական հասարակությունն այսպիսով դադարում էր լինելուց «փակ մշակույթ», ինչպիսին որ այն եղել էր դարեր ի վեր:

Մուհամմեդ Ալիի օրոք Եգիպտոսում սկսեցին տպվել գրքեր և դասագրքեր ժամանակակից տիպի դպրոցների և բանակի համար, եվրոպական գիտական աշխատությունների, իսկ հետագայում նաև գեղարվեստական գրականության նմուշների թարգմանություններ: Հարկ է նշել, որ այդ ժամանակաշրջանում սկսեցին տպագրվել նաև արաբ դասականների աշխատությունները, որոնք այսպիսով դառնում էին անհամեմատ ավելի մատչելի ընթերցողների համար, քան գոյություն ունեցող թանկարժեք ձեռագրերը: 1828 թ. լույս տեսավ եգիպտական առաջին պաշտոնաթերթը՝ «Ալ–Վակայա ալ–Միսրիյա»: Սա ազդարարեց արաբական պարբերական մամուլի ծնունդը, որին վիճակված էր դառնալ կարևորագույն գործոն ոչ միայն ժամանակակից արաբական մտքի, հասարակության և քաղաքականության, այլև ժամանակակից արաբական գրականության զարգացման համար: Իր գոյության առաջին փուլում տպագրելով մեծ մասամբ գիտական թարգմանություններ՝ պարբերական մամուլը նպաստեց ոչ միայն արաբական ընթերցողի մտահորիզոնի ընդարձակմանը, այլև արաբական արձակի ոճի աստիճանական վերափոխմանը՝ պարզեցնելով և ավելի հարմար դարձնելով այն նոր գաղափարների հաղորդման համար:

Պաշտոնական օրաթերթի խմբագրությունը հանձնարարված էր ալ–Ազհարի հայտնի դասախոս Ռիֆա Ռաֆի ալ–Թահթաուիին, որը 1826 թ. Փարիզ ուղարկված ուսանողների խմբի իմամն էր: Ֆրանսիայում նա անցկացրեց հինգ տարի՝ ուսումնասիրելով ֆրանսերենը և ֆրանսիական մշակույթը, իսկ վերադառնալով Եգիպտոս՝ նա 1834 թ. տպագրում է Ֆրանսիա կատարած իր ուղևորության տպավորությունները «Թախլիս ալ–Իբրիզ իլա թալխիս բարիզ» անվան տակ, որում, ինչպես նաև մի շարք այլ աշխատություններում իր հիացմունք է հայտնում ֆրանսիական մշակույթի, հասարակական և քաղաքական ինստիտուտների մասին:

Թահթաուիի կատարած ճանապարհորդության այս յուրահատուկ հաշվետվությունը կարևոր հանգրվան է նոր արաբական գրականության պատմության համար. այստեղ առաջին անգամ հեղինակը թարգմանաբար ներկայացնում է ֆրանսիական բանաստեղծության նմուշներ՝ այսպիսով ազդարարելով արևմտյան գրականության ներմուծման և առնմանման գործընթացի սկիզբը: Իր աշխատության մեջ Թահթաուին հիշատակում է, որ Փարիզում եղած ժամանակ ծանոթացել է Ռասինի, Վոլտերի, Ռուսոյի և Մոնտեսքյոյի ստեղծագործություններին, ուսումնասիրել է թարգմանության արվեստը:

Թահթաուին նշանակվում է նաև Մուհամմեդ Ալիի կողմից 1835 թ. հիմնված Կահիրեի լեզուների դպրոցի տնօրեն, որտեղ դասավանդվում էին իտալերեն, ֆրանսերեն և անգլերեն, և որի շրջանավարտներից էին արաբ հայտնի թարգմանիչներ և

գրողներ: 1841 թ. Կահիրեում հիմնվում է Թարգմանչական գրասենյակը՝ ազդարարելով թարգմանությունների լայնածավալ շարժման սկիզբը: Առաջին փուլում դրանք սահմանափակվում էին միայն ռազմական և տեխնիկական բնույթի գրքերով, բայց գնալով ներառում էին նաև գրական և պատմական ստեղծագործությունները: Մուհամմեդ Ալիի ձեռնարկած վերափոխումները հանգեցրին Եգիպտոսում գտնվող եվրոպացի մասնագետների քանակի կտրուկ աճին և դրանով իսկ նպաստեցին եվրոպական դպրոցների և միսիոներական գործունեության տարածմանը:

1831–1840 թթ. նկատելիորեն աճում է բրիտանացիների, ֆրանսիացիների և ամերիկացիների միսիոներական և կրթական գործունեությունը նաև Սիրիայում: 1847 թ. ամերիկացիները հիմնում են քոլեջ, որը 1866 թ. դառնում է ամերիկյան քոլեջ, իսկ հետագայում վերանվանվում Բեյրութի ամերիկյան համալսարան: 1874 թ. Բեյրութում բացվում է ճիզվիտների քոլեջը: Բացվում են միսիոներական դպրոցներ աղջիկների համար: Արևմտյան այս հաստատությունների շրջանավարտներն ավելի բաց էին արևմտյան գաղափարների յուրացման համար, և հետագայում նրանք կարևոր դեր ունեցան Սիրիայում և Եգիպտոսում նոր գաղափարների տարածման գործում: Սիրիական հայտնի ալ–Յազիջի, ալ–Բուսթանի, ալ–Նաքաշ ընտանիքների մի քանի սերունդներ դարձան ծավալվող լուսավորչական շարժման ականավոր գործիչներ՝ կատարելով բազմաթիվ թարգմանություններ և հարմարեցումներ, փորձարկելով գրական նոր ձևեր և ժանրեր, ստեղծելով և զարգացնելով արաբական ժուռնալիստիկան: Այսպես՝ 1870 թ. Սալիմ ալ–Բուսթանին սկսեց տպագրել իր վեպերը Բեյրութում իր իսկ կողմից հրատարակվող «ալ–Ջինան» պարբերականում, 1876 թ. Բեյրութում Յակուբ Սառուֆը և Ֆարիս Նիմրը հիմնեցին իրենց «ալ–Մուկթաթաֆ» դարակազմիկ մշակութային պարբերականը, որն արաբ ընթերցողներին մատուցում էր տեղեկատվություն եվրոպական մտքի, գիտության և տեխնիկայի մասին (1885 թ. պարբերականը տեղափոխվել էր Եգիպտոս, որտեղ լույս էր տեսնում մինչև 1952 թ.): Սիրիացի Ջիրջի Զեյդանը իր բազմաբնույթ գործունեության հետ մեկտեղ Կահիրեում հրատարակում է «ալ–Հիլալ» մշակութային ամսագիրը, որտեղ տպագրվում էին նրա բազմաթիվ վեպերը, և որը լույս է տեսնում մինչ օրս:

Սիրիայում կրոնական հողի վրա բախումները և խժդժությունները, որոնք 1860 թ. վերաճեցին կրոնական եղեռնի, օսմանյան իշխանությունների հետադիմական քաղաքականությունը և տնտեսական ծանր պայմանները սիրիացիների զանգվածային արտագաղթի պատճառ դարձան: Նրանցից ոմանք Սիրիայից տեղափոխվեցին Հյուսիսային և Հարավային Ամերիկա, որտեղ ստեղծեցին վտարանդիական գրական դպրոց՝ զգալի նպաստ բերելով արաբական գրականության զարգացմանը: Ոմանք էլ, հատկապես մտավորական շրջանակի ներկայացուցիչները, գայթակղված խդիվ Իսմայիլի շռայլության մասին պատմություններով և Եգիպտոսի անհամեմատ ավելի բարենպաստ տնտեսական պայմաններով, տեղափոխվեցին Եգիպտոս: XIX դ. կեսի և XX դ. սկզբի սիրիացի գրողներից և հրապարակախոսներից շատերն

ապրում և աշխատում էին Եգիպտոսում, նրանց գրական և հրապարակախոսական գործունեությունը հավասարապես կարևոր էր երկու երկրների համար:

XIX դ. 60–70–ական թթ.՝ խդիվ Իսմայիլի կառավարման ժամանակաշրջանում (1863–1883), Եգիպտոսում շարունակվում էր տնտեսական վերելքը: Աստիճանաբար խարխլվում էին ավատատիրական կարգերը, զարգանում էր ապրանքադրամական տնտեսությունը, ամրապնդվում էին կապիտալիստական հարաբերությունների ծիլերը, ընդլայնվում էին եվրոպականացման սահմանները: Ֆրանսիայում ուսում ստացած խեդիվ Իսմայիլը մեծ ուշադրություն էր հատկացնում մշակույթին և կրթությանը և, ի տարբերություն իր պապ Մուհամմեդ Ալիի, կարևորություն էր տալիս ոչ միայն տեխնիկական տիպի, այլև հանրակրթական դպրոցների ստեղծմանը: Նրա իշխանության օրոք Եգիպտոսում բացվեցին ավելի քան 4500 դպրոցներ, այդ թվում նաև դպրոցներ աղջիկների համար:

1860–ական թվականներին արաբերենը փոխարինեց թուրքերենին՝ որպես Եգիպտոսի պաշտոնական լեզու: 1873 թ. Կահիրեում հիմնվում է ուսուցիչների վերապատրաստման բարձրագույն դպրոցը՝ «Դար ալ–ուլում բ–իլ–մադարիս», որտեղ աստվածաբանական գիտություններից բացի դասավանդվում էին նաև աշխարհիկ գիտությունները: 1870 թ. հիմնվեց «Դար ալ–Քութուբ», Եգիպտոսի ազգային գրադարանը, որը ստացավ խեդիվական անվանումը: 1869 թ. Կահիրեում բացվում է Օպերային թատրոնը: 1870 թ. խդիվ Իսմայիլի նախաձեռնությամբ Եգիպտոսում հիմվում է պրոֆեսիոնալ թատրոնը: Վերջինիս կազմակերպումը Իսմայիլը հանձնարարում է Յակուբ Սաննուին, որը երկու տարվա ընթացքում գրում է 32 պիես: Իսմայիլը ֆինանսական աջակցություն է ցուցաբերում Բուտրուս Բուսթանիին (1819–1883)՝ հնարավորություն տալով վերջինիս աշխատելու իր նոր տեսակի արաբական առաջին հանրագիտարանի վրա: Իսմայիլը ձգտում է Եգիպտոսը դարձնելու Եվրոպայի մի մասը, ներմուծվում են եվրոպական վարչարարության ձևերը, թարգմանվում են օրենքները: Եգիպտացի քաղծառայողների կողմից ընդօրինակվում էր անգամ եվրոպական հագուստը: Իսմայիլի իշխանության օրոք վերակառուցվում է նաև Կահիրեն՝ տեղ–տեղ նմանվելով բարոն Օսմանի նախագծած Փարիզին: Երկրում բացվել էին հարյուրից ավելի եվրոպական դպրոցներ, իսկ Եգիպտոսում բնակվող եվրոպացիների թիվը 1876 թ. հասնում էր հարյուր հազարի՝ 1860 թ. մի քանի հազարի փոխարեն: Երկրի արևմտականացման գործընթացը վստահորեն շարունակվում էր:

XIX դ. կեսերին Եգիպտոսում և Սիրիայում սկսում են ձևավորվել լուսավորչական հայացքները: Ֆրանսիական լուսավորչական մտքի ազդեցության տակ առավել եվրոպականացված սիրիական մտավորականության շարքերում ձևավորվում է լիբերալ գաղափարախոսությունը: Վերջինիս հիմքում ընկած էր բռնակալության քննադատումը և անձի, անհատի ազատ դրսևորման գաղափարախոսությունը:

Այս գաղափարախոսությունն առավել հետևողական արտահայտություն ստացավ Ֆրանսիս Մարրաշի (1836–1873) ստեղծագործություններում, որտեղ մանրամասնորեն ներկայացվում էին հեղինակի՝ համընդհանուր սիրո և արդարության

վրա հիմնված պատկերացումները իդեալական հասարակության և պետության վերաբերյալ:

Եգիպտոսում լուսավորչական գաղափարախոսության զարգացումը XIX դ. երկրորդ կեսին սերտորեն կապված էր իսլամի բարեփոխությանն ուղղված շարժման հետ (այսպես կոչված «մոդեռնիզմը իսլամում» կամ «մուսուլմանական ռեֆորմացիան»), որը յուրահատուկ դրոշմ դրեց եգիպտական լուսավորության ողջ բնույթի վրա: Արևմտականացման գործընթացը խնդրահարույց էր մուսուլմանական երկրի համար: Հիմնական խնդիրը, որը մտահոգում էր արաբ մտավորականներին, այն էր, թե ինչպես արդիականացնել կամ եվրոպականացնել ավանդական նիստուկացը, հասարակությունը, պետական ինստիտուտները՝ մնալով մուսուլման: Ինչպես նկատում է Ալբերտ Հուրանին, եթե մուսուլմանական մտավորականների առաջին սերնդի համար հիմնական խնդիրը ֆրանսիական լուսավորչության ռացիոնալիզմի հաշտեցումն էր իսլամի սուրբ օրենքի՝ շարիաթի հետ, ապա հաջորդ սերնդի համար իրավիճակը լիովին այլ էր: Սա արդեն իսլամը արևմտյան արժեքներին մոտեցնելու խնդիրը չէր, այլ վերապրելու, արտաքին վտանգի դեմ պայքարելու խնդիր: Այս շարժման հիմնադիրների՝ Ջամալ ադ–դին ալ–Աֆղանիի (1839–1897) և Մուհամմեդ Աբդոյի (1849–1905) հիմնական խնդիրը իսլամի նորովի մեկնաբանումն էր, համապատասխանեցումը ժամանակակից աշխարհում ապրելու պահանջներին: Ալ–Աֆղանին և Աբդոն քարոզում էին իսլամի վերակենդանացման անհրաժեշտությունը, մուսուլման առաջնորդների բացարձակ իշխանության սահմանափակումը և մուսուլմանական ժողովուրդների միավորումը եվրոպական գաղութատիրության դեմ արդյունավետ պայքարի համար: Մուսուլմանների միասնությունն, իրենց կարծիքով, հնարավոր էր միայն դարավոր աղճատումներից զերծ իրական իսլամի ոգով լայն զանգվածների լուսավորության դեպքում: Այս նոր մուսուլմանական գաղափարախոսությունը նրան նախորդող սիրիական քրիստոնյա լուսավորիչների հայացքների նման ևս ձևավորվում էր (հաճախ և անգիտակցաբար) մեծամասնությամբ եվրոպական հասարակական մտքի ազդեցության և առաջին հերթին ֆրանսիական լուսավորականության հայացքների ներքո:

«Մուսուլմանական մոդեռնիզմում», սակայն, հիմնական շեշտը դրված էր ոչ թե եվրոպական մշակույթի ընկալման, այլ անցյալի լավագույն ավանդույթների վերածնդի և արաբական մշակութային ժառանգության վերակենդանացման վրա: «Մուսուլմանական մոդեռնիզմի» ակունքներում ձևավորվում էր արաբական հայրենասիրությունը, ալ–վաթան (հայրենիքի) մշակույթը, որը ներթափանցում է նոր արաբական գրականություն:

Նոր ժամանակի արաբական գրականության պատմությունը կարելի է բաժանել երեք հիմնական ժամանակաշրջանների, որոնցից առաջինը՝ 1834 թ–ից մինչև 1914 թ., կարող է բնութագրվել որպես «Թարգմանությունների և հարմարեցումների» կամ «Նեոդասականության» դարաշրջան: Այս դարաշրջանը բացում են Ռիֆաա Ռաֆիի ալ–Թահթաուիին (1801–1871), Մուհամմեդ ալ–Թանթաուին (1810–1861), Ահմադ Ֆարիս աշ–Շիդյակը (1804–1887), Ալի Մուբարաքը (1824–1893),

որոնց ողջ գործունեությունը նախապատրաստել է գրականության նորացման գործընթացը: Այս հեղինակների ստեղծագործություններում է, որ ավանդական ժանրերը (ռիհլա, մակամա, ռիսալա) ձեռք են բերում նոր, լուսավորչական ուղղվածություն, նկատվում է դրանց ներքին փոխակերպման սկիզբը:

1870–1914 թթ. նոր գրականության կայացման վրա որոշիչ ազդեցություն ունեցան մուսուլմանական մոդեռնիզմի գաղափարախոսներ Ջամալ ադ–դին ալ–Աֆղանին և Մուհամմեդ Աբդոն, կանանց իրավունքների պաշտպան Քասիմ Ամինը (1865–1908), «ալ–Վաթան» կուսակցության հիմնադիր Մուսթաֆա Քամիլը (1874–1908): 1870–ական թվականները արաբական մամուլի և հրապարակախոսության աննախադեպ ծաղկման, թարգմանչական շարժման վերելքի ժամանակաշրջանն է: Եգիպտոսում ժուռնալիստիկայի առանձնահատուկ աշխուժությունը նկատվում է 70–80–ական թթ.՝ ազգային շարժման վերելքի ժամանակաշրջանում: Ընթերցողների քանակի աճի և այդ ժամանակ առկա հարաբերական ինտելեկտուալ ազատության շնորհիվ XIX դ. 80–ական թթ. Կահիրեն դառնում է արաբական մամուլի կենտրոն, որտեղ, ըստ որոշ աղբյուրների, լույս էր տեսնում մոտ 150 օրաթերթ և ամսագիր: Պարբերականների շուրջ հավաքվում էին ազատության և բարեփոխումների համար պայքարող եգիպտացի և սիրիացի լրագրողները: Այս ժամանակից սկսած՝ թերթը, որպես հասարակական կարծիքի արտացոլում, կարևոր դերակատարում է ստանձնում Եգիպտոսի քաղաքական կյանքում: Հրապարակախոսներ և ազգային շարժման ականավոր գործիչներ Ադիբ Իսհակը (1856–1885), Աբդալլահ ան–Նադիմը (1845–1896), Յակուբ Սաննուն (1839–1912) դիմում են արաբական մշակույթի համար դեռևս անծանոթ ժանրերին (հոդված, էսսե, ֆելիետոն)՝ այսպիսով սկիզբ դնելով գրականության ժանրային համակարգի վերափոխմանը: Միաժամանակ մամուլում ծավալվում էր պայքար արաբերենի պարզեցման և նորացման համար, համալրվում և նորացվում էր դասական արաբերենի բառապաշարը: XIX դ. արաբ հրապարակախոսների գործունեությունը նպաստեց ընթերցողների որակապես նոր լսարանի ձևավորմանը և այդ լսարանի արագ ընդարձակմանը, ինչը վճռական նշանակություն ունեցավ նոր գրականության կայացման համար:

Աշխուժանում է նաև թարգմանչական գործունեությունը: Այն արդեն ներառում է ոչ միայն գիտական և ուսումնական գրականությունը, ինչպես դարի կեսերին էր, այլ նաև գեղարվեստականը: Մեծ մասամբ անգլերենից և ֆրանսերենից թարգմանված ստեղծագործությունները դառնում են ազգային գրականության անբաժանելի մասը: Դրան է նպաստում լուսավորության ժամանակաշրջանում առաջացած վերաբերմունքը դեպի թարգմանությունը, որը հաճախ ավելի շուտ վերափոխում և հարմարեցվում էր բովանդակությամբ և ոճով, ինչպես ընդունված էր Եվրոպայի թարգմանչական ավանդույթում XVIII դարում: Դժվար է թերագնահատել Արևմուտքի հետ մշակութային այդ փոխներգործության նշանակությունը արաբական գրականության համակարգի փոխակերպման և արաբական գեղարվեստական գրականության ստեղծման հարցում:

Հրապարակախոսությանը զուգահեռ զարգանում էր նաև գաղափարախոսական առումով նրա հետ կապված, բայց ձևով դեռ ավանդական բանաստեղծությունը: XIX դ. 70–ականների կեսերին հայրենասիրական թեմաները, որոնք մինչ այդ սնուցում էին միայն հրապարակախոսությունը, ներթափանցում են բանաստեղծության մեջ: Նեոդասականներ Մահմուդ Սամի ալ–Բարուդին (1839–1904) և Ահմադ Շաուքին (1868–1932) դեռ օգտագործում են արաբական դասական բանաստեղծության տաղաչափությունը և ձևերը, սակայն նրանց ստեղծագործություններն արդեն պարունակում են նոր քաղաքական և սոցիալական մոտիվներ՝ դրանով իսկ գրանցելով արաբական բանաստեղծության բազմադարյա ավանդույթի նորացման սկիզբը: Ալ–Բարուդիի և Շաուքիի ժամանակակից Հաֆիզ Իբրահիմը (1871–1932) իր բանաստեղծություններում հանդես է գալիս որպես հրապարակախոս՝ ուղղակիորեն արտահայտելով եգիպտացիներին հուզող քաղաքական և սոցիալական խնդիրները: Սիրիացի Իբրահիմ ալ–Յազիջին (1847–1906) առաջինն էր, որի ստեղծագործության մեջ հստակ երևում է արաբական, այլ ոչ թե համամուսուլմանական հայրենասիրության գաղափարախոսությունը: Անհատի մասին նոր պատկերացումներ, բանաստեղծության «անձնավորումը» ներմուծում է լիբանանցի Խալիլ Մուտրանը (1872–1949): Այսպիսով՝ XIX դ. վերջին արաբական բանաստեղծության մեջ հաղթահարվում են ավանդական պոետիկայի նորմերը և կանոնները, հաստատվում է նոր ոճը:

Արաբ լուսավորիչների հայացքների և գաղափարախոսության արտահայտման ազդեցիկ միջոցներից մեկը դառնում է թատրոնը, որտեղ Շեքսպիրի, Կոռնելի, Մոլիերի, Հյուգոյի թարգմանված պիեսներին գալիս են փոխարինելու սեփական, մեծ մասամբ պատմական դրամաներ, որոնց հեղինակներից էին Ահմադ Շաուքին, Աբդալլահ ան–Նադիմը, Մուսթաֆա Քամիլը, Սալիմ ալ–Բուսթանին (1848–1884):

XIX–XX դդ. սահմանագծին Սիրիայում և Եգիպտոսում փորձեր են արվում՝ ստեղծելու գեղարվեստական արաբական գրականության համար նոր արձակ ժանրեր՝ կարճ պատմվածք և վեպ: Արաբական գրականության պատմության մեջ առաջին անգամ ստեղծվում է արձակի նոր վիպային ձևը՝ արաբական լուսավորչական վեպը, որը Սիրիայում ներկայացված էր Սալիմ ալ–Բուսթանիի ստեղծագործությամբ, իսկ Եգիպտոսում՝ սիրիացի էմիգրանտներ Ջիրջի Զեյդանի (1861–1914) և Ֆարահ Անթունի (1974–1922) պատմական վեպերով:

XIX դ. վերջին արաբական գրականության մեջ ձևավորվող սենտիմենտալ–ռոմանտիկ ուղղությունն իր արտացոլումն է ստանում եգիպտացի Մուսթաֆա ալ–Մանֆալութիի (1876–1924) և սիրա–ամերիկյան դպրոցի հեղինակներներ Ամին առ–Ռեյհանիի (1876–1940) և Ջեբրան Խալիլ Ջեբրանի (1883–1931) ստեղծագործություններում, որոնք արաբական գրականություն են ներմուծում վիպակի և ժամանակակից կարճ պատմվածքի առաջին նմուշները:

Ազգային վեպի ստեղծման ճանապարհին միջանկյալ օղակ հանդիսացան XIX–XX դդ. սահմանագծին և XX դ. սկզբին Եգիպտոսում լույս տեսած մի քանի վեպեր, որոնց հեղինակներ Մուհամմեդ Մուվեյլիհին (1858–1930), Հաֆիզ Իբրահիմը

(1871–1932), Հիֆնի Նասիֆը (1856–1919), Մուհամմեդ Ֆարիդ Վաջդին (1878–1954) փորձում էին ներդաշնակեցնել ավանդական ժանրային ձևը և գեղարվեստական գրականության համար նոր սոցիալական վերլուծությունը: Այս շարքում բացառիկ տեղ է գրավում Մուհամմեդ Մուվեյլիհի «Հադիս Իսա իբն Հիշամ» ստեղծագործությունը (տպագրվել է 1898–1903 թթ. առանձին գլուխներով): Հեղինակը, կապելով դասականության ավանդույթները լուսավորիչների նոր մշակույթի և գաղափարախոսության հետ, առաջին անգամ մանրամասնորեն և ճշմարտացիորեն ներկայացնում է Եգիպտոսի սոցիալական կյանքը, ժամանակակից հասարակությունը՝ հիմք ստեղծելով XX դ. եգիպտական ռեալիստական արձակի հետագա զարգացման համար:

1914 թ. Եգիպտոսում լույս է տեսնում Մուհամմեդ Հեյքալի (1888–1956) «Զայնաբ» վիպակը, որը, նորովի ներկայացնելով եգիպտական հասարակության, երկրի մեծամասնության՝ ֆելլահների նիստուկացը, կնոջ և տղամարդու փոխհարաբերությունները, սկիզբ է դնում ռեալիստական ուղղությանը արաբական գրականության մեջ: XX դ. սկզբին նախանշվում է նաև ազգային գրականությունների տարբերացման սկիզբը: Այսպիսով՝ նոր ժամանակի արաբական գրականության զարգացման առաջին ութ տասնամյակների ընթացքում (1834–1914) գրականության մեջ տեղի են ունենում արմատական փոփոխություններ. վերափոխվում է ավանդական ժանրային համակարգը, առաջանում են նոր հրապարակախոսական ժանրեր և արձակի նոր ձևեր, թատերագրությունը, հաղթահարվում են արաբական բանաստեղծության ավանդական պոետիկայի նորմերը, փոփոխվում են գրականության լեզուն և ոճը, ձևավորվում են նոր գրական ուղղություններ, ինչն ազդարարում է որակապես նոր արաբական գրականության կայացումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ա. Գ., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Ա, Երևան, 1964, հ. Բ, Երևան, 1967:
2. Ազատեան Լ., Հայ որբերը Մեծ եղեռնի, Գիրք առաջին, Լոս Անճելըս, 1995: Գիրք երկրորդ, Լոս Անճելըս, 1999, Գիրք երրորդ, Լոս Անճելըս, 2002:
3. Ալպոյաճեան Ա. Ա., Իրաքի հայերը, Երևան, 2003:
4. Բայբուրդյան Վ., Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, 2011:
5. Թուրքական աղբյուրներ, Հ. Գ, Էվլիյա Չելեբի, Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Ա. Խ. Սաֆրաստյանի, Երևան, 1967:
6. Թուրքական աղբյուրներ, Հ. Դ, Թարգմանություն բնագրերից՝ Ա. Խ. Սաֆրաստյանի և Գ. Հ. Սանթուրջյանի, Երևան, 1972:
7. Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին: Թարգմանություն թուրքական բնագրերից, ներածությունով, ծանոթագրություններով, տերմինաբանական բառարանով և հավելվածով: Հ. Ա, Կազմեց՝ Ա. Խ. Սաֆրաստյան, Երևան, 1961:
8. Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Այսրկովկասի մյուս ժողովուրդների մասին: Թարգմանություն թուրքերեն բնագրերերից, ներածական ակնարկներով, ծանոթագրություններով և հավելվածով: Հ. Բ, Կազմեց՝ Ա. Խ. Սաֆրաստյան, Երևան, 1964:
9. Ինճիկյան Հ. Գ., Օսմանյան կայսրության անկումը: Սոցիալ–տնտեսական ակնարկ, Երևան, 1984:

10. Կարապետյան Ռ. Կ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Երևան, 2003:
11. Կիրակոսյան Ջ. Ս., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1965:
12. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), Պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972:
13. Հարությունյան Լ., Լիբանանը 1958–1990 թթ., Երևան, 2007:
14. Հովհաննիսյան Ն. Հ., Սարգսյան Հ. Հ., Սիրիան անկախության համար մղված պայքարում, Երևան, 1975:
15. Հովհաննիսյան Ն. Հ., Արաբական երկրների պատմություն, Հ. I, Երևան, 2003:
16. Նաջարյան Ե. Հ., Արաբական ազգային մշակութային զարթոնքը, Երևան, 1988:
17. Նաջարյան Ե. Հ., Լիբանանը XVIII դարի վերջին և XIX դարի առաջին կեսին, Երևան, 1985:
18. Պայրամեան Ա. Ա., Կիլիզա. Հայկական Քիլիս, Երևան, 2001:
19. Պոյաճյան Տ. Յ., Հայկական լեզեոնը, Ուռթրթաուն, 1965:
20. Վարժապետյան Ս. Հ., Հայերը Լիբանանի մէջ, Հանրագիտարան Լիբանանի հայ գաղութի, Գ հատոր, Պեյրութ, 1981:
21. Ֆայեզ էլ Ղոսեյն, Ջարդերը Հայաստանի մեջ (Ականատեսի վկայություններ), Գահիրե, 1960:
22. Абд ар–Рахман ал–Джабарти, Египет в период экспедиции Бонапарта (1798–1801), Москва, 1962.
23. Абд ар–Рахман аль–Кавакиби, Природа деспотизма и гибельность порабощения, перев. с араб. Исследование З. И. Левина, Москва, 1964.
24. Абдаррахман ар–Рафии, Восстание 1919 г. в Египте, сокращ. перевод с арабского, Москва, 1954.
25. Адамов А., Ирак Арабский, СПб., 1901.
26. Амин Саид, Восстания арабов в XX веке, пер. с араб., Москва, 1964.
27. Базили К. М., Сирия и Палестина под турецким правительством, Москва, 1962.
28. Бартольд В. В., Халиф и Султан, Сочинения, т. VI, Москва, 1966.
29. Бондаревский Г. Л., Английская политика и международные отношения в басейне Персидского залива, М., 1968.
30. Валерс Ж., Крестьяне Сирии и Ливана, Москва, 1962.
31. Васильев А. М., История Саудовской Аравии (1745–1973), Москва, 1982.
32. Васильев А. М., Пуритане ислама? Москва, 1967.
33. Васильев Л. С., История Востока. Т. 1, Москва, 2001.
34. Геноцид армян в Османской империи. Сборник документов материалов. Под редакцией М. Г. Нерсисяна, Ереван, 1982.
35. Данциг Б. М., Ирак в прошлом и настоящем. Москва, 1960.
36. Данциг Б. М., Ирак. Москва, 1955.
37. Джафар Хайят, Иракская деревня. Пер. с араб., Москва, 1953.
38. Документы внешней политики СССР. Т. I, Москва, 1957.
39. Документы внешней политики СССР. Т. VI. Москва, 1962.
40. Долинина А. А., Очерки истории арабской литературы нового времени, Египет и Сирия, Просветительский роман 1870–1914, Москва, 1973.
41. Долинина А. А., Очерки истории арабской литературы нового времени, Египет и Сирия. Публицистика 1870–1914, Москва, 1968.
42. Иванов Н. А., Османское завоевание арабских стран (1516–1574). Москва, 1984.
43. История дипломатии. Т. II. Под редакцией акад. В. П. Потемкина. М.–Л., 1945.
44. Карниченко В. Н., Сафронов В. В., История египетской литературы XIX–XX веков, т. 1, Москва, 2002.

45. Кильберг Х., Восстание Араби–паши в Египте. Москва, 1937.
46. Ключников Ю. В., Сабанин А. В., Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях. Ч. II. От империалистической войны до снятия блокады с Советской России. Москва, 1926.
47. Котлов Л. Н., Становление национально–освободительного движения в Арабских странах Азии. 1908–1914. Москва, 1986.
48. Котлов Л. Н., Становление национально–освободительного движения на Арабском Востоке (середина XIX в. — 1908). Москва, 1975.
49. Крымский А. Е., История новой арабской литературы. XIX — начало XX века. Москва, 1971.
50. Лазарев М. С., Крушение турецкого господства на Арабском Востоке. Москва, 1960.
51. Левин З. И., Развитие основных течений общественно–политической мысли в Сирии и Египте (новое время). Москва, 1972.
52. Ллойд Джордж Д., Правда о мирных договорах. Т. I, II. Москва, 1957.
53. Луцкий В. Б., Новая история арабских стран. Москва, 1971.
54. Матвеев К. П., Ассирийцы и ассирийская проблема в новое и новейшее время. Москва, 1979.
55. Нерсесов Г. А., Дипломатическая история египетского кризиса. 1981–1982 гг. Москва, 1979.
56. Новая история Армении в трудах современных зарубежных авторов (коллектив авторов). Ереван, 1993.
57. Новая история стран Азии и Африки. Москва, 1975.
58. Оганесян Н. О., Арабская историография по новой истории Армении. В кн. Новая история Армении в трудах современных зарубежных авторов. Ереван, 1993.
59. Проблемы современной советской арабистики. Вып. II. Проблемы истории и филологии. Ереван, 1990.
60. Проблемы современной советской арабистики. Труды IV всесоюзной конференции арабистов. Ереван, 1985. Вып. I. Современные политические и социально–экономические проблемы арабских стран. Ереван, 1988.
61. Раздел Азиатской Турции (по секретным документам б. Министерства иностранных дел). Под. ред. Е. А. Адамова. Москва, 1924.
62. Ротштейн Ф. А., Захват и закабаление Египта. Москва–Ленинград, 1959.
63. Салиби Камаль. Очерки по истории Ливана. Пер. с араб., Москва, 1969.
64. Смилянская И. М., Крестьянское движение в Ливане в первой половине XIX в. Москва, 1965.
65. Смилянская И. М., Социально–экономическая структура стран Ближнего и Среднего Востока на рубеже нового времени. Москва, 1979.
66. Современная Сирия. Москва, 1974.
67. Тума Э., Национально–освободительное движение и проблема арабского единства. Москва, 1977.
68. Федченко А. Ф., Ирак в борьбе за независимость. Москва, 1970.
69. Фридман Л. А., Египет (1882–1952). Социально–экономическая структура деревни. Москва, 1972.
70. Ш. аш–Шафии. Развитие национально–освободительного движения в Египте (1882–1956). Пер. с араб., Москва, 1961.
71. Шульце Э., Борьба за персидско–месопотамскую нефть. Пер. с немецкого, Москва, 1924.
72. Шумов С., Авдеев А., Ирак. История. Народ. Культура. Москва, 2002.
73. Abd al–Razak al–Hasani. Tarih al–Iraq al–Siyasi al–Hadis. 1–3. Saida, 1957.
74. Abd al–Razak al–Hilali. Muajam al–Iraq. Baghdad. 1953.
75. Adib Farhat. Lubnan wa Suriya. Beirut.

76. Ambassador Morgenthau's Story. By Henry Morgenthau. Formerly American Ambassador in Turkey. New York, 1919.
77. Amil Tuma. Al–Arab wa Tatawur Al–Tarihi fi–l Shark al–Awsat. Haifa, 1963.
78. Amin Said. Al–Saura al–Arabiya al–Qubra. Djuz al–Salis, Al–Kahira, 1934
79. An Introduction to the Past and Present of the Kingdom of Iraq. By a Committee of Officials. Baghdad, 1946.
80. Antonius G. The Arab Awakening. New York, 1946.
81. Asad Muflih Daghir. Saura al–Arab. Haleb, 1989.
82. Badawi M. M., A Critical introduction to Modern Arabic Poctry, Cambridge, 1992.
83. Badawi M. M., A Short History of Modern Arabic Literature, Oxford University Press, 1993.
84. Badawi M. M., Modern Arabic Literature, The Cambridge History of Arabic Literature, Cambridge, 1992.
85. Bliss Ådwin Munsell. Turkey and Armenian Atrocities. A Reign of Terror. New York, 1896.
86. Brugman J., An introduction to the History of Modern Arabic Literature in Egypt, Leiden, 1984.
87. Bullard R., Britain and the Middle East. From the Earliest Times to 1950. London, 1951.
88. Colvin Archibald. The Making of Modern Egypt. London, 1906.
89. Diplomacy in the Near and Middle East. A Documentary Record. By J. C. Hurewitz. Vol. I. Princeton, 1956.
90. Documents on the Genocide Against the Assyrian–Suryoye–Chaldean–Arameic People (Seyfo). 1999.
91. Edmunds C., Kurds, Turks, Arabs. London, 1957.
92. Fuad Hasan Hafiz. Tarih al–Shaab al–Armani Munzu al–Bidayat Hatta al–Yaum. Al–Kahira, 1986.
93. Haddad G., Fifty Years of Modern Syria and Lebanon. Beirut, 1960.
94. Hitti Ph., History of the Arabs. From the Earliest Times to the Present. London,1951.
95. Hourani A., Arabic Thought in the Liberal Age. 1798–1939. Cambridge, 1984.
96. Hourani A., Minorities in the Arab World. London, 1947.
97. Hourani A., Syria and Lebanon. London, 1946.
98. Hovhannisyan N. H., The Armenian Genocide. Armenocide. Yerevan, 2002.
99. Kedourie E., England and the Middle East. The Destruction of the Ottoman Empire. 1914–1921. London, 1956.
100. Kirk G., A Short History of the Middle East. From the Rise of Islam to Modern Times. London, 1961.
101. Kouyoumjian Ohannes Pasha. Le Liban. A la veille au Debut de la Grande Guerre. Memoires d'un gouverneur, 1913–1915. Paris, 2003.
102. Lawrence T. Seven Pillars of Wisdom. London, 1935.
103. Longrigg S., Iraq. 1900 to 1950. London, 1953.
104. Mahmud Mustafa Miru. Al–Ar'a al–Idjtimaghiya, al–Siyasiya al–Amin ar–Riyhani. Haleb, 1996.
105. Mahmud Rifat al–Imam. Al–Arman fi Misr al–Karn al–Tasih Ashar. Al–Kahira, 1995.
106. Mahmud Rifat al–Imam. Al–Kadiya al–Armaniya fi–l Duwlati al–Usmaniya. 1878–1923. Al–Kahira, 2002.
107. Marlowe J., Anglo–Egyptian Relations. 1800–1953. London, 1954.
108. Marwan al–Mudawar. Al–Arman Abra Tarih. Beirut, 1982.
109. Moussa Prince. Mujazar al–Arman Jarai'm did al–Insaniya. Beirut, 1956.
110. Moussa Prince. Un Genocide impuni: L'Armenocide. Beyrouth, 1975.
111. Naim al–Yaffi. Mujazar al–Arman wa Mauqif al–Ray al–Amm al–Arabi.
112. Osman at–Turq. Min Tarih al–Umma al–Armaniya. Haleb. 1960.
113. Salih Zahr ad–Din. Al–Arman. Shaab wa Kadiya. Beirut, 1988.

114. Salih Zahr ad–Din. Siyasat al–Huqumat al–Usmaniyat fi Arminiya wa Mauqif al–Kuwa al–Duwaliya Minha. Beirut, 1996.
115. Samir Arbash. Arminiya. Ard wa Shaab. Beirit, 1991.
116. Sati al–Husri. Al–Bilad al–Arabiya wa Duwlat ul–Usmaniya. Beirut, 1960.
117. Shaqir Khasbaq, Muhamad al–Mahna, Feisal al–Atrakji. Jughrafiya al–Iraq. Baghdad, 1960.
118. Soane E. To Mesopotamia and Kurdistan in Disguise. London, 1926.
119. Studies in the Social History of Modern Egypt, Chicago, 1969.
120. Tufik Ali Beru. Al–Arab wa Al–Turq fi–l Udud Al–Dusturi al–Usmani. 1908–1914. Al–Kahira, 1960.
121. Veou P., La passion de la Cilicie. 1917–1922. Paris, 1954.
122. Young G., Egypt. London, 1927.
123. Zein N. Zein, The Struggle for Arab Independence. Beirut, 1960.
124. Ziadeh N., Syria and Lebanon. London. 1959.

ԲԱԺԻՆ 4

ՎՐԱՍՏԱՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՎՐԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԵՍՆԱՄՅԱԿԻՆ

1. ՔԱՐԹԼԻԻ ԵՎ ԿԱԽԵԹԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

XVIII դարում, ինչպես և նրա նախորդած ժամանակաշրջանում Վրաստանը չէր ներկայանում որպես մեկ ամբողջական պետություն: Այն մասնատված ու բաժանված էր երկու թագավորությունների՝ Վրացական կամ Քարթլի–Կախեթական և Իմերեթական թագավորությունների, և երեք ինքնուրույն ու ինքնիշխան իշխանությունների (Գուրիա, Մեգրելիա կամ Օդիշի և Սվանեթ): Ավատական այդ հինգ միավորների միջև մշտապես տեղի էին ունենում երկպառակություններ, մեծ ու փոքր զինված դիմակայություններ, որոնք հաճախ վերածվում էին արյունահեղ պատերազմների:

Լեզվական և մշակութային ընդհանրություն ունեցող այդ ժողովրդի տարաբաժանումը չէր սահմանափակվում դրանով: Թագավորություններից և իշխանություններից յուրաքանչյուրն իր հերթին բաժանվում էր առանձին կիսանկախ ու ներփակ տիրույթների՝ էրիսթավությունների, որոնք կառավարվում էին ազնվազարմ իշխանական տոհմերի կողմից: Վերջիններս ևս մշտապես թշնամական հարաբերությունների մեջ էին մեկը մյուսի հետ: Այդ բոլոր թագավորությունների, իշխանությունների և էրիսթավությունների միջև ընդհանուրը միայն այն էր, որ նրանք բոլորը բնակեցված էին վրացական ցեղերով, որոնք խոսում էին բոլորի համար ընդհանուր լեզվով՝ իհարկե ունենալով նաև իրենց առանձին բարբառները:

Ներքին պատերազմներն ու երկպառակությունները մշտապես խաթարում էին երկրի հանգիստն ու խաղաղությունը: Սակայն Վրաստանի համար առավել մեծ դժբախտություն էին արտաքին թշնամիները՝ օսմանցի թուրքերը, պարսիկները,

Դաղստանի լեռնականները, չեչենները և այլն, որոնց հարվածները պարբերաբար իր կրծքին էր ընդունում վրաց ժողովուրդը: Քրիստոնյա Վրաստանի վիճակն էլ ավելի էր բարդանում, քանի որ նրա բոլոր արտաքին թշնամիները այլադավան մուսուլմաններ էին: Նրանք պարբերաբար հարձակումներ էին գործում Վրաստանի վրա՝ գերեվարելով հազարավոր մարդկանց, ավերելով ու քայքայելով երկիրը և նրա ժողովրդին, նրանց բռնի պարտադրելով իսլամը:

Հայտնվելով ռազմաշունչ հակումներով տարված պետությունների և գիշատիչ ցեղերի թշնամական օղակում՝ մի քանի դար շարունակ վրաց ժողովուրդը կենաց և մահու պայքար էր մղում իր գոյության պահպանման համար:

Պատմության նոր դարաշրջանը Վրաստանի համար սկսվում էր ծայրահեղ տանջալից պայմանների մեջ: 1795 թ. սեպտեմբերին Աղա Մուհամմեդ–խան Ղաջարի պատժիչ արշավանքը Վրաստան, որի հետևանքով Թիֆլիսը հիմնովին ավերվեց, իսկ նրա բնակչության զգալի մասը սրի քաշվեց կամ քշվեց գերության, երկիրը մատնել էին օրհասական վիճակի: Վրացական պետականության բուն գոյությունը դրվել էր սպառնալիքի տակ: Արտաքին գործոնների ազդեցության ներքո երկիրը հայտնվել էր հոգեվարքի և ներքին կազմալուծման վիճակում: Վրաստանը ծվատվում էր նաև թագավորական ընտանիքի և ավատական–իշխանական տարբեր խմբավորումների միջև անզիջում ու թեժ երկպառակությունների հետևանքով:

Թեև Ռուսաստանը 1783 թվականի Գեորգիևսկի պայմանագրով խոստանում էր Վրաստանը պաշտպանել արտաքին վտանգից և ապահովել նրա անվտանգությունը, սակայն առայժմ նա հապաղում էր այդ ուղղությամբ կատարելու արդյունավետ քայլեր: Թշնամական օղակի մեջ գտնվող վրացական պետությանը արևմուտքից շարունակում էր սպառնալ գիշատիչ հակումներով առաջնորդվող Օսմանյան կայսրությունը, հարավից ու արևելքից՝ Ղաջարական Իրանը, որը Այսրկովկասը համարում էր իր օրինական կալվածքը, իսկ հյուսիսից՝ Կովկասյան լեռնաշղթայի կողմից բազմաթիվ ռազմիկ ու գիշատիչ ցեղերը, որոնք փոթորկի պես ավերիչ ասպատակ էին սփռում Վրաստանում, կողոպտում ու գերեվարում նրա բնակչությանը: Իսլամական ռազմաշունչ կարգախոսներով առաջնորդվող այդ բոլոր ուժերը լի էին վճռականությամբ՝ Վրաստանը պահելու իրենց ազդեցության շրջանակներում և թույլ չտալու, որ վրացիները «ռուսներին բերեն» տարածաշրջան:

Վրաստանի իշխող շրջանները և մասնավորապես Հերակլ (Իրակլի) Բ թագավորը ակնհայտ տեսնում էին, որ երեք խոշոր պետություններ՝ Ռուսաստանը, Օսմանյան կայսրությունը և Իրանը, միմյանց միջև վիճարկում են Հարավային Կովկասում իրենց տիրապետությունը հաստատելու իրավունքը, և որ Վրաստանի առջև դրված է երկընտրանք՝ ընտրել նրանցից մեկին: Եվ քանի որ ընտրությունը կանգ էր առել հյուսիսային մեծ պետության՝ Ռուսաստանի վրա, Վրաստանը շարունակում էր թախանձագին աղերսներ ուղղել նրան՝ պաղատելով հանուն քրիստոնեության ու հանուն դավանակցության ժամ առաջ հասնել օգնության:

Արևելավրացական թագավորության կառավարող շրջանները, անընդհատ դիմումներ ուղղելով Պետերբուրգին Վրաստանում ռուսական զորամիավորումների

թվաքանակն ավելացնելու վերաբերյալ, հույսեր էին փայփայում, որ նրանց օգնությամբ իրենց կհաջողվի պահպանել վրացական պետականությունը և վրաց թագավորների ինքնիշխան իրավունքները: Ինչպես գրում է Լեոն, «Վրաստանի աղաչական ձայնը ռուսաց արքունիքին շատ հաճելի էր և շատ ընդունելի, որովհետև Ռուսաստանին հարկավոր էր Կովկասն իբրև մի հսկայական միջնաբերդ, որից կարելի էր նվաճող ձեռքեր տարածել դեպի Միջերկրական ծովը և Հնդկական օվկիանոսը: Վրաստանն այդ մեծ միջնաբերդի առաջավոր պահակն էր՝ ճակատը դարձրած դեպի ճոխ և ջերմ արևով արգասավորվող հարավը»:

XIX դարի սկզբին Վրաստանը պետական մեկ ամբողջություն չէր: Նրա վարչական քարտեզը ներկայացնում էր հետևյալ պատկերը. Քարթլիի և Կախեթի միացյալ թագավորություն, Իմերեթի թագավորություն, Գուրիայի, Մեգրելիայի, Աբխազիայի, Աջարիայի իշխանություններ, Ախալցխայի փաշայություն: Քարթլիի և Կախեթի թագավորությունը դեռևս պահպանում էր իր հարաբերական անկախությունը, թեև մտնում էր Ղաջարների պարսկական պետության կազմի մեջ և ենթակա էր շահի գերագույն իշխանությանը: Սակայն ներքին ավատատիրական երկպառակությունները, գահաժառանգության հարցի շուրջ թագավորական ընտանիքում ծագած անզիջում պայքարը նրա ինքնուրույն գոյության իրավունքը դրել էին սպառնալիքի տակ: Ախալցխայի փաշայությունն արդեն վաղուց Օսմանյան կայսրության կազմում էր, իսկ Արևմտյան Վրաստանի իշխանությունները՝ անմիջականորեն Թուրքիային կուլ գնալու վտանգի առջև:

Կյանքը համոզիչ փաստերով վկայում էր, որ սեփական ուժերով Վրաստանն ի վիճակի չէ դիմագրավելու արտաքին հարձակումներին և վերջ տալու ներքին ավատական վեճերին ու ընդհարումներին: Ուստի Պետերբուրգում որոշեցին ռազմական օգնություն ցուցաբերել Հերակլ Բ թագավորին: 1795 թ. դեկտեմբերին ռուսական զորքերի երկու գումարտակ մուտք գործեց Վրաստան: Նույնքան զորք ուղարկվեց նաև Դաղստան: Ռուսաստանը որոշել էր կանխել Իրանի հավանական ագրեսիան Վրաստանի դեմ և պատժել սանձարձակ կովկասյան խաներին: 1796 թ. ռուսական զորքերը Վ. Զուբովի հրամանատարությամբ գրավեցին Դերբենդը: Սակայն Պետերբուրգի այդ ծրագիրն իր ավարտին չհասավ անկանխատեսելի հանգամանքների, այդ թվում նաև Եկատերինա Բ կայսրուհու մահվան պատճառով: Նույն թվականին Ռուսաստանի նոր կայսր Պավել Ա–ն հրամայեց դադարեցնել արշավանքը: Օգտվելով իր համար ստեղծված բարեպատեհ առիթից՝ Աղա Մուհամմեդ–խանը որոշել էր նոր արշավանք կազմակերպել դեպի Վրաստան և առհասարակ Հարավային Կովկաս հնազանդությունից դուրս եկած ուժերին ճզմելու և ռուսների առաջխաղացումը կանխելու նպատակով, սակայն արշավանքի հենց սկզբում նա սպանվեց իր իսկ մերձավորների կողմից:

Եկատերինա կայսրուհուց ռուսական գահը ժառանգած Պավել Ա կայսրն իր մորից ժառանգել էր դեպի հարավ ծավալվելու ձգտումը: Սակայն ի տարբերություն Եկատերինայի, որը թույլ էր տալիս ունենալ Այսրկովկասի փոքր ժողովուրդներին

մուսուլմանական լծից ազատագրելու և նրանց համար նոր քրիստոնեական–ազգային թագավորություններ ստեղծելու պատրանքներ, Պավելը հարկ չէր համարում ռուսական ծավալապաշտությունը դեպի հարավ սքողել նման խոստումներով ու հիմնավորումներով: Նա ձգտում էր այդ քաղաքականությունն իրականացնելու անսքող ու բացահայտ կերպով, ընդ որում՝ բացառապես զենքի օգնությամբ՝ ավելորդ ու պարտավորեցնող համարելով թեկուզ սին խոստումները: Ընդսմին, Մերձավոր Արևելքում քաղաքական տիրապետության համար իր մղած պայքարում Ռուսաստանը ձգտում էր ոչ միայն նվաճելու Վրաստանը, այլև ողջ Կովկասը: Վրաստանի յուրացումը, նրանում ռուսական տիրապետության հաստատումը թելադրված էր նախ և առաջ ցարիզմի ձգտմամբ՝ իր համար ապահովելու հուսալի թիկունք Թուրքիայի և Իրանի հետ պատերազմ ծագելու դեպքում: Պակաս կարևոր չէին նաև Վրաստանը նվաճելու տնտեսական առավելությունները: Դա հնարավորություն կտար ռուսական պետությանը ոչ միայն օգտվելու Սևծովյան ավազանի երկրների հետ առևտրափոխանակության ընձեռած առավելություններից, այլև վերահսկողություն հաստատել կարևորագույն առևտրական ճանապարհի վրա:

1798 թ. հունվարի 11–ին Հերակլ Բ–ն կնքեց մահկանացուն Թելավ քաղաքի իր ապարանքում: Անմիջապես գահաժառանգության շուրջ ծագեց թեժ պայքար, որն ավարտվեց Հերակլի որդիներից մեկի՝ Գեորգիի օգտին, որն, ըստ տվյալների, իր այդ հաջողությանը հասել էր՝ հենվելով գլխավորապես թուրք և հայ ազնվականության, մասամբ նաև վրաց ազնվականության որոշ շրջանների վրա:

Ստանձնելով վրացական գահը՝ Գեորգի ԺԲ–ն կարճ ժամանակ անց հասկացել էր, որ առանց Ռուսաստանի հովանավորության հնարավոր չէ երկրի պաշտպանությունը գիշատիչ հարևան իսլամական պետությունների հարվածներից: Ուստի շարունակելով իր հոր ուղեգրածը՝ նա սկսեց թախանձագին օգնության ուղերձներ հղել Պետերբուրգին: Այդ ուղերձ–աղերսներից հատկապես 1799 թ. դիմումը Պավել կայսրին ունեցավ վճռորոշ նշանակություն: Նկատի ունենալով Վրաստանում իրանական տիրապետության վերահաստատման իրական սպառնալիքը՝ Ռուսաստանը վճռականորեն ձեռնամուխ եղավ Վրաստանում իր դիրքերն ամրապնդելու և Այսրկովկասում հաստատվելու գործին: Ընդ որում, Գեորգի ԺԲ–ի դիմումը Պավել կայսրին Ռուսաստանին Վրաստանում գործելու իրավական նախադրյալներ էր ընձեռում: Ուստի Թիֆլիս ուղարկվեց գեներալ–մայոր Լազարևի հրամանատարությամբ մի ռուսական զորագունդ և մի քաղաքացիական պաշտոնյա՝ Կովալենսկին, որը պետք է լիներ Ռուսաստանի ներկայացուցիչը վրաց արքունիքում: Ռուսական կայսրության այդ երկու ներկայացուցիչները փաստորեն իրենց ձեռքը վերցրին Վրաստանի ամբողջ իշխանությունը, իսկ թագավորը դարձավ նրանց կարգադրությունների և ցուցմունքների հլու կատարողը: Մուսուլման աշխարհը նորից մեծագույն դժգոհությամբ ու հուզմունքով արձագանքեց այդ իրադարձությանը՝ համարելով, որ «վրացիները երկրամաս բերեցին ռուսներին»: Սկսվեցին վտանգավոր շարժումներ Վրաստանին պատժելու համար: Տարիներ շարունակ Վրաստանի պատուհասը դարձած Օմար խանը, Դաղստանի լեռնական–հրոսակների գլուխ

անցած, հեղեղի նման թափվեց Վրաստան՝ հասնելով մինչև Թիֆլիսի մատույցները: Պատժիչ ասպատակությունն ուղեկցվում էր համատարած կողոպուտով, սպանություններով և բնակչության գերեվարությամբ:

Ռուսներին «Հարավային Կովկաս բերելը» մեծ դժգոհություն ու զայրույթ առաջացեց նաև իրանական արքունիքում: Աղա Մուհամմեդ–խան շահնշահին հաջորդած Բաբախանը, որն ընդունել էր Ֆաթհ Ալի շահ գահակալական անունը (1798–1834), սկզբում համեմատաբար մեղմ, սակայն այնուհետև ցասումնալից ազդարարություններ արեց Գեորգի թագավորին՝ չմոռանալով նաև հիշեցնել Աղա Մուհամմեդ–խանի ավերիչ արշավանքի մասին: Թեհրանի այդ սպառնալիքներն ուղեկցվում էին զորքերի ցուցադրական շարժումներով:

Վրաստանում իրենց ձեռք բերած դիրքերը չվտանգելու մտահոգությամբ ռուսները մի նոր գունդ ուղարկեցին Թիֆլիս՝ գեներալ Գուլյակովի հրամանատարությամբ:

Թեև ռուսական սվինների հովանու ներքո Գեորգի ԺԲ–ն իրեն զգում էր պաշտպանված ու ապահով, սակայն նա գիտակցում էր, որ երկրի ապագայի առումով դա հարցի լուծում չէ: Նրան խոր մտահոգություն էր պատճառում ոչ միայն Վրաստանի արտաքին թշնամիների գործողությունների ակտիվացումը, այլև իր եղբայրների և Հերակլ Բ–ի երկրորդ կնոջ՝ Դարեջան թագուհու հարաճուն թշնամությունը, երկրի ներքին վիճակի ապակայունացումը, ավազակության ու կողոպուտի ավելացումը, անսանձ տարրերի ավելի համարձակ գլուխ բարձրացնելը: Հատկապես մեծ մտահոգություն էր այն, որ թագաժառանգություն պահանջող իր եղբայրներից մեկը՝ Ալեքսանդրը, առանց նրա իմացության, ծածուկ փախուստի էր դիմել Իրան և, հաստատվելով Թեհրանում ու վայելելով շահական արքունիքի հովանավորությունը, ուխտել էր պարսիկների օգնությամբ խլել հայրական ժառանգությունը: Ընդ որում, լինելով Վրաստանի անկախության ջատագով՝ Ալեքսանդրը հանդես էր գալիս որպես Ռուսաստանի թշնամի: 1800 թ. նա գլխավորել էր Օմար խանի 20–հազարանոց զորքի ներխուժումը Վրաստան: Ճիշտ է՝ այն ջախջախվեց, և Ալեքսանդրը ստիպված փախուստի դիմեց, սակայն Պետերբուրգում համոզված էին, որ հանձին նրա՝ Ռուսաստանն ունի երդվյալ թշնամի:

Այսպիսով՝ միանգամայն ակնհայտ էր, որ վրացական գահի շուրջը ծավալված պայքարը ստացել է զուտ ազգային կերպարանք, և երկրում ձևավորվել են երկու հակընդդեմ ու թշնամական հոսանքներ՝ ռուսասեր և հակառուս: Այդ բոլորին ավելանում էր այն, որ 1800 թ. աշնանը Գեորգի ԺԲ–ի ծայրաստիճան խորացած հիվանդությունն այլևս առողջանալու հույս չէր թողնում: Այս բոլորը զումարվելով՝ խթանեցին սկսած գործը ավարտին հասցնելու քայլերը: Ըստ այդմ՝ թագավորը 1800 թ. աշնանը նոր դեսպանություն ուղարկեց Պետերբուրգ՝ Վրաստանի հարցը վերջնականապես լուծելու համար: Դեսպանները Գեորգիի անունից Պավել կայսրին առաջարկեցին հետևյալ պայմանները. վրաց ամբողջ ժողովուրդը պարտավորվում է սրբությամբ կատարել այն ամենը, ինչ կատարում են բոլոր ռուսահպատակները՝ չհրաժարվելով ոչ մի օրենքից ու հրամանից, ճանաչելով ռուսական կայսրին որպես

թագավոր ու ինքնակալ: Մնալով իր գահին՝ Գեորգին հանձն էր առնում կառավարել երկիրն այն օրենքներով, որ կտա ռուսաց կայսրը, և պարտավորվում էր իր կողմից օրենքներ չհրապարակել Վրաստանում:

Միաժամանակ Գեորգին խնդրում էր իրեն ռոճիկ նշանակել ռուսական գանձարանից (տարեկան 200 հազար ռուբլի՝ հատկացնելով նրան նաև ռուս ճորտեր՝ 30 հազար հոգի): Թագավորը չէր մոռանում նաև իր եղբայրներին, խնդրում էր տալ նրանց կենսաթոշակ՝ կա՛մ պահելով նրանց Վրաստանում, կա՛մ տանելով Ռուսաստան: Այս բոլորի դիմաց Գեորգին ռուսական կայսրին էր թողնում Վրաստանի եկամուտները՝ իրավունք տալով ծախսելու դրանք այնպես, ինչպես ինքը կկամենա:

Վերոհիշյալ առաջարկները ցայտուն վկայությունն են այն իրողության, թե ինչ վիճակում էր վրացական թագավորությունը: Կասկածից վեր է, որ Գեորգիի առաջարկներից ամենակարևորի՝ վրաց թագավորի գահին մնալու հետ Պավելը կտրականապես չէր համաձայնելու՝ նկատի ունենալով իր «կովկասյան քաղաքականության» բուն նպատակը: Նրա հաշիվներից դուրս էր իր զորքով ու դրամով Գեորգիի և նրա ժառանգների համար թագավորական գահ պահպանելը:

Պետերբուրգը Վրաստանում գործող իր գործակալներից ստացել էր հավաստի տեղեկություններ, որ Վրաստանի դրությունը ճգնաժամային է, որ եթե Ռուսաստանը մնա կողմնակի դիտորդի դերում, այդ երկիրը չի կարող մնալ թագավորող տան ձեռքին, այլ կընկնի պարսիկների, թուրքերի և կամ Կովկասի լեռնցիների ձեռքը: Այս և նման կարգի տեղեկություններն արագացրին իրադարձությունների ընթացքը: Պավել կայսրը վճռեց առանց պայմանների ու տատանումների Վրաստանը միացնել Ռուսաստանին և այն դարձնել մի սովորական ռուսական նահանգ՝ միաժամանակ թույլ տալով, որ Գեորգին կյանքն ավարտի իր գահին: Միակ զիջումը, որին գնում էր Պետերբուրգը, այն էր, որ ռուսական բանակում ծառայող և գեներալի կոչում ստացած թագաժառանգ Դավիթը կարող էր ժամանակավորապես նշանակվել նոր միացվող երկրի ընդհանուր նահանգապետ:

1800 թ. նոյեմբերին Պավել Ա–ն կարգադրություն իջեցրեց այն մասին, որ եթե Գեորգին վախճանվի, թույլ չտրվի, որ մեկ ուրիշը նրա փոխարեն թագավորի, մինչև որ ինքը կարգադրություն կանի, թե ինչպես պետք է վարվել: Ըստ այդմ՝ վրացական դեսպանությունը հետ ուղարկվեց Թիֆլիս՝ Գեորգիից նոր թղթեր բերելու պատրվակով: Բայց մինչև դեսպանության Թիֆլիս հասնելը Պետական խորհուրդը Պավելի առաջարկով քննության ենթարկեց վրացական հարցը և 1800 թ. դեկտեմբերի 18–ին վճիռ կայացրեց այն մասին, որ ռազմավարական ու տնտեսական տեսանկյուններից օգտավետ է և հետևաբար հարկավոր Վրաստանն անվերապահորեն միացնել Ռուսաստանին՝ այն վերածելով կայսրության ծայրամասային նահանգներից մեկի: Հիմք ունենալով այդ վճիռը՝ դեկտեմբերի 22–ին հրապարակվեց կայսերական հրովարտակ (մանիֆեստ): Այդ ակտը գործնականում նշանակում էր Վրաստանի՝ որպես ինքնուրույն պետական միավորի վերացումը: Մանիֆեստով վերացվում էին վրացական Բագրատունիների թագավորական տան դինաստիական իրավունքները:

1800 թ. դեկտեմբերի 28–ին Գեորգի ԺԲ թագավորը (1798–1800) մահանում է՝ այդպես էլ անտեղյակ մնալով կցման հրովարտակի մասին: Գեներալ Լազարևն անմիջապես Պետերբուրգ է ուղարկում հաղորդագրություն հետևյալ բովանդակությամբ. «Ես իսկույն հավաքեցի այստեղի իշխաններին ու ազնվականներին, հայտնեցի նրանց բարձրագույն կամքը (այսինքն՝ որ նոր թագավոր չնշանակվի), և ամենքն ընդունեցին այդ հայտարարությունը, իսկ ժողովրդին նույն բարձրագույն կարգադրությունը հայտարարվեց Մելիքի իշխան Դարչիի (Բեհբության) միջոցով, և ընդունված է մեծ շնորհակալությամբ»:

Գեորգի ԺԲ–ի մահից հետո, ըստ սահմանված կարգի, գահը ժառանգեց Գեորգի թագավորի ավագ որդի Դավիթը: Ընդ որում, Վրաստանի և Ռուսաստանի միջև կնքված պայմանագրի համաձայն՝ Դավթին թագադրելու իրավունքը պատկանելու էր ռուսական կայսրին: Սակայն անմիջապես գահաժառանգության շուրջ ծավալվեց թեժ պայքար: Դեռևս Հերակլ Բ–ի կենդանության վերջին տարիներին նրա երկրորդ կինը՝ իշխանատենչ ու փառասեր Դարեջան թագուհին, հարկադրել էր իր ամուսնուն մահից առաջ գրել մի կտակ, որով փոխվում էր գահաժառանգության կարգը, և Գեորգիի մահվան դեպքում նրա ժառանգն էր դառնում ոչ թե նրա ավագ որդի Դավիթը, ինչպես պետք է լիներ օրենքով, այլ Դարեջան թագուհու որդի Հուլոնը (Յուլոնը): Այսպիսով՝ եղբայրների միջև ծավալվեց թեժ պայքար: Ընդ որում, նրանց տեսակետները վրացական պետականության և նրա քաղաքական ապագայի վերաբերյալ միանգամայն տարբեր էին: Եթե արքայազն Դավիթը և նրա համախոհները համաձայն էին, որ Վրաստան ներմուծվեն ռուսական վարչություն և ռուսական օրենքներ, ապա Հուլոնը և նրա կողմնակիցները ձգտում էին պահպանելու նախկին վիճակը, այսինքն՝ որպեսզի Վրաստանը շարունակեր կառավարվել Ռուսաստանի հովանու ներքո՝ պահպանելով իր թագավորական գահը և սեփական օրենքները:

Քանի որ Դավթի գահակալումը հակասում էր Վրաստանի վերաբերյալ ընդունված վերոհիշյալ որոշմանը, և Ռուսաստանի ծրագրերի մեջ չէր մտնում վրացական թագավորության պահպանումը, Պետերբուրգի կողմից Դավիթը չհաստատվեց որպես Վրաստանի թագավոր: Դավթին հատկացվեց լոկ Վրաստանի կառավարչի կարգավիճակը, իսկ Հուլոնի դեմ ուղարկվեցին ռուսական զորքեր: Բավականաչափ ուժեր չունենալով նրանց դիմադրելու համար՝ Հուլոնը փախուստի դիմեց:

1800 թ. դեկտեմբերի 22–ի հրովարտակը գլխավոր հրամանատար Կնորինգը նպատակահարմար չհամարեց Թիֆլիսում իսկույն հրապարակել: Թագավորի դիակը դրվեց Սիոնի մայր եկեղեցում և մնաց անթաղ մինչև փետրվարի 20–ը: Դա շատերին առիթ տվեց եզրակացնելու, որ ինչ–որ բան այն չէ, և Վրաստանի դեմ խմորվում է վատ բան: Այդ տարրերը ծավալեցին քարոզչություն, որ Դավիթն արդեն թագավոր է, և շուտով ժողովուրդը պետք է հավատարմության երդում տա նրան: Այդ քարոզչությանը միացան նաև Դավթի կողմնակից եղբայրները: Շարժումը գնալով թեժացավ՝ ավելի խորացնելով երկրում տիրող անիշխանությունը:

Ռուսական հրամանատարությունը ձեռնամուխ եղավ Թիֆլիսում խստություններ իրականացնելուն: Մարդկանց արգելվեց խմբերով հավաքվել փողոցներում, ծայր առան ձերբակալություններ: Հակառուսական բողոքի շարժմանը միացավ նաև Իմերեթի Սողոմոն (Սոլոմոն) թագավորը: Լուրեր տարածվեցին, որ պատրաստվում է հարձակում Գորի քաղաքի վրա: Պետերբուրգում մտավախություն կար, որ օգտվելով բարենպաստ առիթից՝ Թուրքիան և Իրանը կարող են հարձակում գործել Վրաստանի վրա: Ռուսական իշխանությունները նաև տեղեկություններ ունեին, որ Ռուսաստանի եվրոպական ախոյանները սկսել են սևեռուն հետաքրքրություն դրսևորել Վրաստանում ծավալվող իրադարձությունների նկատմամբ, որի հետևանքը կարող էր լինել խոշոր հուզումների ու անկարգությունների հրահրումը:

Իր առջև ծառացած դժվարություններից ելք գտնելու համար ռուսական կառավարությունը որոշում է դիմել անսպասելի միջոցի: Լեոյի կարծիքով, իմանալով, որ վրացական իշխանության պայմաններում Թիֆլիսի հայ գաղութը կարևոր դեր է ունեցել մայրաքաղաքի ներքին կյանքում, ռուսները որոշում են ուժեղացնել ռուսասիրական կուսակցությունը հայ գաղութի աջակցությամբ: Միաժամանակ, օգտվելով Վրաստանում գահակալական տարաձայնություններից՝ Պավել Ա–ն որոշում է արագացնել իր սկսած գործի ավարտը՝ հանդես գալով որպես երկրում կայունության պահպանման երաշխավոր, ինչը պետք է հիմնավորում ծառայեր նաև Վրաստանի միացումը Ռուսաստանին ազդարարող հրամանագրի համար:

1801 թ. հունվարի 18–ին Պավել Ա–ն (1796–1801 թթ.) հրապարակեց Վրաստանը Ռուսաստանին միացնելու հրովարտակը (մանիֆեստը): Թաքցնելով այդ փաստաթղթի բուն նպատակը՝ հրովարտակում գործը ներկայացվում էր որպես «ընդառաջումն» Գեորգի ԺԲ թագավորի խնդրանքին և «դեպի վրաց ժողովուրդն ունեցած գթառատություն»: Նույն մանիֆեստով Պավել Ա–ն հրամայում էր ռուսական զորքերը «մտցնել վրացական մարզերը ինչպես ներքին կարգուկանոնը պահպանելու, այնպես էլ արտաքին հարձակումներից երկիրը պահպանելու համար»:

Հունվարի 18–ի հրովարտակը վկայում էր, որ Ռուսաստանի նախկին կովկասյան քաղաքականության մեջ տեղի էր ունեցել կտրուկ շրջադարձ: Եթե ավելի քան մեկ հարյուրամյակ Ռուսաստանն արծարծել էր Հարավային կովկասում հայ–վրացական թագավորություն ստեղծելու ծրագիրը, թեկուզ այդ ուղղությամբ չձեռնարկելով գործնական քայլեր, ապա այժմ խոսքը գնում էր Քարթլի–Կախեթի թագավորությունը Ռուսաստանին բռնակցելու, այսինքն՝ դեպի Կովկաս պարզ ծավալման մասին:

Հունվարի 18–ի հրովարտակը Վրաստանում հրապարակելու համար ռուսական կառավարության կողմից օգտագործվեց վրացական թագավորական տանը մոտիկ կանգնած և վրաց ազնվականության շրջանում հեղինակություն վայելող, իր հայացքներով ռուսամետ, Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրված Հովսեփ Արղությանի 1801 թ. Թիֆլիս ժամանելու հանգամանքը, որն այնուհետև պետք է ճանապարհվեր Էջմիածին՝ զբաղեցնելու կաթողիկոսական աթոռը: Թիֆլիսում 1801 թ. փետրվարի

16–17–ին նա մասնակցեց երկու ամիս առաջ՝ դեռևս նախորդ տարվա դեկտեմբերին վախճանված Գեորգի ԺԲ–ի թաղման արարողությանը և հունվարի 18–ի մանիֆեստի՝ Թիֆլիսում հրապարակման համար կազմակերպված հանդեսին:

Փետրվարի 16–ին գեներալ Լազարևի հրավերով Թիֆլիսի բնակիչները պատարագի գնացին Սիոնի մայր եկեղեցի: Պատարագից հետո ռուսերեն, հայերեն և վրացերեն ընթերցվեց ինքնակալի դեկտեմբերի 22–ի հրովարտակը, որով Վրաստանը հայտարարվում էր հավիտենապես Ռուսաստանին միացված երկիր: Վրաց կաթողիկոս Անտոնիոսը, որը Դարեջան թագուհու որդին էր, ծնկաչոք զոհաբանական մաղթանք կատարեց: Ամբողջ օրը քաղաքի բոլոր եկեղեցիները կատարեցին զանգահարություն:

1801 թ. մարտի 6–ին Պետերբուրգում մշակվեցին Քարթլի–Կախեթի Ժամանակավոր կառավարության կանոնները, իսկ մարտի 11–ին (24–ին) Ռուսաստանի Սենատը «Վրաստանի գլխավոր կառավարիչ» (գեներալ նահանգապետ) նշանակեց Կնորինգին՝ հեռացնելով Դավիթ արքայազնին «Վրաստանի գահաժառանգի և կառավարչի» պաշտոնից: Ժամանակավոր կառավարչությունը գլխավորեց գեներալ Լազարևը: Կնորինգը Վրաստան ժամանեց 1801 թ. մայիսին: Պավել Ա–ի կողմից նրան տրված շնորհագրում ասվում էր. «Ուզում եմ, որ Վրաստանը լինի նահանգ: Անմիջապես կաջակցենք նրան Սենատի, իսկ հոգևոր մասով՝ Սինոդի հետ: Նահանգապետը թող լինի թագավորական ընտանիքից ինչ–որ մեկը, բայց Ձեր ենթակայության ներքո»:

1801 թ. մարտի 12–ին պալատական դավադրության հետևանքով Պավել Ա–ն սպանվեց: Ըստ էության, տեղի ունեցավ պետական հեղաշրջում, որի հետևանքով գահ բարձրացավ նրա որդին՝ Ալեքսանդր Ա–ն: Պետական խորհուրդը կրկին քննարկման դրեց Վրաստանը Ռուսաստանին միացնելու հարցը: Խնդիրն այն էր, որ Ալեքսանդր Ա–ն այդ հարցում տատանումների մեջ էր: Նույնիսկ վարկած կա այն մասին, որ չկամենալով հափշտակման մի գործ կատարելու, նա կամովին հրաժարվել է վրացական ժառանգությունից: Միացման հարցի վերաբերյալ առարկություններ են եղել նաև կառավարության մի քանի անդամների կողմից: Ընդ որում, այդ տատանումներն ու առարկությունները պայմանավորված էին լոկ արտաքին քաղաքական բարդությունների առաջացման մտավախությամբ Արևելքում Ռուսաստանի ուժեղ մրցակիցների, առաջին հերթին՝ Անգլիայի կողմից:

Վրաստանը Ռուսաստանին միացնելու հարցում առանձնակի հետևողականությամբ պնդում էր կոմս Վալերիան Զուբովը: Ալեքսանդր Ա–ին ներկայացրած իր զեկուցագրում նա համոզում էր կայսերը, որ Կովկասում ռուսական տիրույթների համար Վրաստանն ունի կարևոր ռազմավարական նշանակություն, որ երկիրն ինքնին վերին աստիճանի հարուստ է, իսկ վրացիները միահամուռ ցանկանում են դառնալ Ռուսաստանի հպատակներ:

Ի վերջո Պետական խորհուրդը որոշում կայացրեց վերացնել Քարթլիի և Կախեթի «ինքնավար վարչությունը» և Ռուսաստանին միացված վրացական հողերում մտցնել ռուսական կառավարման համակարգ:

1801 թ. սեպտեմբերի 12–ին հրապարակվեց Ալեքսանդր Ա–ի հրովարտակը («Մանիֆեստ»), որի համաձայն՝ Քարթլի–Կախեթական թագավորությունը դադարում էր գոյություն ունենալուց և միացվում էր Ռուսական կայսրությանը: Ընդ որում, իր նախորդի նման, սքողելով Վրաստանը միացնելու իրական ռազմաքաղաքական նպատակները, Ալեքսանդր Ա–ն իր մանիֆեստում գրում էր, որ «միայն պատվարժանությունն ու մարդասիրությունն է» իրեն թելադրել Վրաստանը միացնել Ռուսաստանին»: 1802 թ. ապրիլի 12–ին հիշյալ մանիֆեստը հրապարակվեց նաև Թիֆլիսում և Քարթլիի ու Կախեթի այլ բնակավայրերում: Այդ հանդիսությանը հրավիրվել էր նաև Քարթլի–Կախեթի իշխանական դասը, իսկ Սիոնի տաճարը շրջափակվել էր զինվորներով: Իշխանական դասը իրադարձությունները փորձում էր ընկալել Գեորգիևսկյան պայմանագրի դիտանկյունից, որտեղ խոսք չկար թագավորությունը վերացնելու մասին: Կախեթի իշխանների մի մասը հրաժարվեց մասնակցելուց կայսեր երդման արարողությանը և ըստ այդմ՝ ռուսահպատակության ընդունմանը, ճեղքեց շրջափակումն ու հեռացավ դեպի Կախեթ:

Այսպիսով՝ Վրաստանը միացնելով Ռուսաստանին՝ կայսրությունը հաստատուն կերպով մուտք էր գործում Հարավային Կովկաս: Գեներալ Լազարևի գլխավորած Ժամանակավոր կառավարությունը պահպանվեց մինչև 1802 թ. ապրիլը:

Սեպտեմբերի 12–ի հրովարտակի հետ միաժամանակ հրապարակվեց «Վրաստանի կառավարման վերաբերյալ կանոնակարգ», որի դրույթները հար և նման էին Ռուսաստանի նահանգների կառավարման համար կիրառվող համակարգին: Այնուամենայնիվ, այն որոշակի չափով հարմարեցված էր տեղական պայմաններին: Կանոնակարգով սահմանվում էին նոր վարչության խնդիրները, այն է՝ Ռուսաստանի դիրքերի ամրապնդումը Վրաստանում, Այսրկովկասի մնացած խանությունների միացումը կայսրությանը, բնական պաշարների, արդյունաբերական արտադրության, գյուղատնտեսության և առևտրի զարգացման խթանումը, հարկերի հավաքումն ու հասարակական կարգի պահպանումը:

Կանոնակարգի համաձայն՝ ստեղծվում էր «Վրաստանի բարձրագույն կառավարություն»: Երկրամասի բարձրագույն ռազմական ու քաղաքական ղեկավար էր դառնում գլխավոր հրամանատարը՝ «գլխավոր կառավարիչը»: Այդ պաշտոնում նշանակվեց գեներալ Կնորինգը: Քաղաքացիական գործերով նրա առաջին օգնական էր լինելու «Վրաստանի կառավարիչ» Պ. Կովալենսկին: 1802 թ. մայիսին Թիֆլիսում հանդիսավոր պայմաններում «Վրաստանի բարձրագույն կառավարությունը» սկսեց իր գործունեությունը: «Վրաստանի կառավարչին» ենթարկվելու էին չորս վարչություններ («էքսպեդիցիաներ»), որոնք էին՝ 1. գործադիր, 2. պետական, որի գործառույթների մեջ էին մտնում ֆինանսական և տնտեսական հարցերը, 3. դատական՝ քրեական գործերով, 4. դատական՝ քաղաքացիական գործերով: Բոլոր էքսպեդիցիաները ղեկավարելու էին ռուս աստիճանավորները: Էքսպեդիցիաների կազմում ընդգրկված ոչ մեծ թվով վրացիները կատարելու էին լոկ խորհրդականի դեր (Մդիվանբեկի): Նրանք ընտրվելու էին վրաց ազնվականությունից:

Արևելյան Վրաստանը բաժանվում էր հինգ գավառների՝ Թիֆլիսի, Գորիի, Անանուրի, Թելավի և Սղնախի:

Վրաստանի ու Հյուսիսային Կովկասի գլխավոր զինվորական ու քաղաքական գլխավոր հրամանատարը պետք է «անդադրում կերպով աչքը պահեր իր բոլոր հպատակների վրա»:

Գավառներում վերացվում էին նախկին մոուրավությունները: Գավառապետեր (գավառային վարչությունների ղեկավարներ) նշանակվեցին ռուս զինվորական պաշտոնյաներ՝ կապիտան–իսպրավնիկներ: Յուրաքանչյուր գավառ ուներ իր ոստիկանությունը, դատարանը և դատախազությունը, որոնց մեջ ընդգրկված էին նաև վրաց ազնվականության ներկայացուցիչներ: Ռուսական վարչակազմը առաջնորդվում էր Ռուսական կայսրության օրենքների ներդրման սկզբունքներով, թեև փորձ էր արվում հաշվի առնել նաև տեղական օրենքներն ու ավանդույթները: Ինչպես կենտրոնական, այնպես էլ տեղական հիմնարկություններում գործավարությունը կատարվելու էր ռուսերենով:

Այսպիսով՝ Քարթլի–Կախեթական թագավորությունը վերացվում էր: Ցարիզմը Վրաստանը զրկում էր անկախ պետական կյանքից՝ նրան պարտադրելով օտար քաղաքական վարչակարգ: Այսուհետև երկրի վարչական կառավարումը և դատավարությունը իրականացվելու էր վրաց ժողովրդի համար անհասկանալի լեզվով: Նոր վարչությունը հաշվի չէր նստում նաև տեղական բնակչության բարքերի ու սովորույթների հետ: Ինքնակալական վարչակարգը պաշտպանում ու անփոփոխ էր թողնում Վրաստանում գոյություն ունեցող ճորտատիրությունը: Այսպիսով՝ հին սոցիալական հարստահարմանն ավելացավ նաև ազգային ճնշումը, քանի որ առհասարակ «այլազգիների» նկատմամբ ցարիզմն իրագործում էր կոշտ ազգային–գաղութային ռուսաֆիկացման քաղաքականություն:

Դեռևս քիչ ծանոթ լինելով երկրին, չունենալով բավարար թվով ռուս կադրեր՝ ցարական կառավարությունը ստիպված էր հրաժարվել կառավարման նոր համակարգը Վրաստանի լեռնային շրջաններում արմատավորելուց: Օսերը, ինչպես նաև վրացի լեռնականները՝ խևսուրները, թուշերը, փշավները և այլն, շարունակում էին հին ձևով կառավարվել վրացական իշխանների՝ մոուրավների կողմից: Նրանք դատում էին գյուղացիներին տեղական սովորույթների համաձայն և նրանցից գանձում հարկեր:

Այդ ամենով հանդերձ՝ չնայած իր պետական անկախության կորստին՝ Վրաստանի միացումը Ռուսաստանին, անկասկած, ուներ նաև որոշակի դրական պահեր: Նախ Վրաստանը խուսափեց Իրանի և Օսմանյան կայսրության կողմից գաղութացման և նրանց բռնատիրական անագորույն լծից: Թեև այդ ժամանակների Ռուսաստանը ևս բռնատիրական պետություն էր, որտեղ իշխում էին ավատատիրական–ճորտատիրական հարաբերությունները, դրանով հանդերձ՝ նա իր զարգացման մակարդակով, անկասկած, անհամեմատ ավելի բարձր էր և՛ Իրանից, և՛ Օսմանյան կայսրությունից: Բացի այդ՝ Ռուսաստանն իր մշակույթով ու կրոնով ավելի մոտ էր Վրաստանին: «Ցարական–բյուրոկրատական ծանր ռեժիմը համե-

նայն դեպս ո՛չ սուլթանական–փաշայական էր, ո՛չ շահական–խանական: … Նա իր նվաճած ասիական երկրները մտցնում էր քաղաքական և քաղաքակրթական մեծ շարժումների մեջ այնպես, որ Ասիայի դարավոր շղթաների մեջ ծվարած և դիակնացած ազգերը հնարավորություն էին ստանում տաքացնելու իրենց ընդարմացած մարմինները իբրև ռուսական ընդհանուր իրականության մասնակիցներ» (Լեո):

Ռուսաստանն ունակ էր նաև միավորելու վրացական հողերը և վրաց ժողովրդի համար ապահովելու տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացման նոր հնարավորություններ: 1801 թվականից սկսած՝ Վրաստանն աստիճանաբար ընդգրկվեց Ռուսական կայսրության կազմի մեջ և թևակոխեց խաղաղ զարգացման ուղի: Այնուհետև վճռականորեն վերացվեցին ներքին երկպառակությունները, արմատախիլ արվեց գերիների վաճառքը (մարդավաճառությունը), վերացվեցին երկրի տնտեսական առաջընթացն արգելակող ներքին մաքսատուրքերը և այլն:

Վրաստանում տեղակայված էր այդ ժամանակների համար խոշոր ռուսական զորաբանակ և ստվարաթիվ վարչական–չինովնիկական ապարատ, որոնց պահելու համար ծախսվում էին հսկայական միջոցներ: Ռազմական ու վարչական բնույթի բազմապիսի կարիքները որոշակի չափով խթանում էին տեղական արտադրության աճը, երկրում անշեղորեն ավելացնում էին դրամաշրջանառությունը, որը հատկապես ուժեղացավ XIX դ. 40–ական թթ. սկսած, երբ Վրաստանում արմատավորվեց միասնական ռուսական դրամական համակարգը:

Առաջին հերթին ռազմական կարիքները ապահովելու համար զգալիորեն կարգավորվեցին հաղորդակցության ճանապարհները, կառուցվեցին մի շարք ցամաքային ճանապարհներ, կարգի բերվեցին հին ճանապարհները, կամուրջները, աստիճանաբար ստեղծվեց կանոնավոր հաղորդակցություն Ռուսաստանի և Վրաստանի միջև և այլն: Կարևոր է նաև նշել, որ 1828–1829 թթ. ռուս–թուրքական պատերազմի հետևանքով Սամցխեի տարածքը, որը դարեր շարունակ օսմանյան տիրապետության ներքո էր, միացավ Վրաստանին:

Վրաստանը Ռուսաստանին միացվելուց հետո այդ երկրի բնակչությունը, մասնավորապես քաղաքային բնակչությունը սկսեց անշեղորեն աճել: XIX դարի մինչռեֆորմյան շրջանի ընթացքում Վրաստանի բնակչությունն ավելացավ ավելի քան կրկնակի:

Այս բոլորը կարևոր նախադրյալներ էին ստեղծում Վրաստանի տնտեսական ու մշակութային վերածնության համար:

1801 թ. սեպտեմբերի 12–ի Մանիֆեստը վրաց իշխանների, ազնվականության ու քաղաքային բնակչության որոշ տարրերի կողմից ընդունվեց դժգոհությամբ: Նոր վարչակարգը ինքնագլուխ վրաց ավանդատերերին զրկում էր քաղաքական արտոնություններից: Վերացվում էին ժառանգաբար փոխանցվող բարձրագույն պետական պաշտոնները և նրանց հետ կապված առանձնաշնորհները: Այդուհետև ավատատեր–թավադի աստիճանավորական իրավունքները կապ չէին ունենալու նրա հողատիրության հետ: Ազնվականությունը կորցնում էր ժառանգական ծառայողական և քաղաքական արտոնությունները: Ուստի ավատատերերի մեծ մասը ոչ մի-

այն դրսևորեց դժգոհություն նոր կարգերի նկատմամբ, այլև պայքար ծավալեց դրանց դեմ հանուն վրացական վարչության վերականգնման: Ընդ որում, ազնվականության զգալի մասը տենչում էր Վրաստանում վերականգնել թագավորական իշխանությունը: Նման դիրքորոշում ունեցող խմբավորման առաջնորդն էր Հերակլ Բ–ի արքայորդի Ալեքսանդրը: Այդ խմբավորման ներկայացուցիչները հանուն իրենց հին իրավունքների և Բագրատունիների գահի վերականգնման չէին խորշում դիմելուց վրաց ժողովրդի դարավոր թշնամիներ շահական Իրանի և սուլթանական Թուրքիայի աջակցությանը: Իսկ վրաց ազնվականության մեկ այլ մասը, որի մեջ մտնում էին ազնվական մտավորականության այնպիսի ներկայացուցիչներ, ինչպիսիք էին Գարսևան Ճավճավաձեն, Հովհան (Իվանէ) Բագրատիոնին և ուրիշներ, պայքարում էր հանուն Վրաստանի ինքնավարության, հանուն նրա նորացված և բարելավված ինքնակառավարման՝ հանդես գալով Ռուսաստանի հետ դաշինքի օգտին: Նրանք մտավախություն ունեին, որ եթե Վրաստանը հեռանա Ռուսաստանից, ապա անխուսափելիորեն կընկնի Իրանի կամ Թուրքիայի արգահատելի լծի տակ:

Չնայած տնտեսական քաղաքականության մեջ ձեռք բերված առաջընթացին՝ սոցիալական վերափոխումները հանգեցրին բնակչության լուրջ դժգոհություններին: Հատկապես մեծ էր խոշոր ազնվականության ներկայացուցիչների դժգոհությունը, որոնք կորցնում էին վրացական թագավորության ժամանակ ունեցած իրենց իրավասություններն ու արտոնությունները:

1802 թ. հուլիսին Կախեթի իշխանները, հավաքվելով Քելմենչուրի գյուղում, ռուսական կայսրից պահանջեցին կատարել 1783 թ. Գեորգիևսկյան պայմանագրի դրույթները և թագավորական գահին հաստատել Հերակլ Բ–ի որդի Յուլոն արքայազնին: Կայսերն ուղարկված պահանջ–նամակը ստորագրել էին 69 իշխաններ, որոնք այդպիսով փորձում էին վերականգնել Քարթլի–Կախեթի գահը՝ Յուլոնին ճանաչել տալով որպես Վրաստանի թագավոր և պարտավորվելով այդ դեպքում հնազանդվել ռուսական կայսերը: Այդ իրադարձությունը որակելով որպես դավադրություն նոր վարչակազմի դեմ՝ Վրաստանում ռուսական բանակի գլխավոր հրամանատարի կարգադրությամբ Կախեթի իշխանների մեծ մասը ձերբակալվեց, նրանցից ոմանք փախան Իրան: Հավաքին ակտիվ մասնակցում էին նաև Հերակլի որդի Վախթանգը և Գեորգիի որդի Փառնավազը: Ալեքսանդր արքայազնը, որ այդ ժամանակ Ջարո–Բելոքանում էր, չհամարձակվեց ներխուժել Կախեթ:

1802 թ. Յուլոն և Փառնավազ արքայազններն ապաստանեցին Իմերեթում: Նշված իրադարձությունները մեծ արձագանք ունեցան վրաց հասարակության շրջանում, որը փաստորեն բաժանվեց երկու թևի: Մի մասն անհնար էր համարում վրաց թագավորության վերականգնումը և հակված էր Ռուսաստանի կազմի մեջ Վրաստանի ինքնավարության ստեղծմանը, իսկ մյուս մասը համաձայն էր Վրաստանը Ռուսաստանին անմիջականորեն միացման գաղափարին: Վրաց արքայազններից ոմանք թեև սկզբնական փուլում ձգտում էին Իրանի օժանդակությամբ վերականգնելու վրաց թագավորությունը և հաստատվելու վրացական գահին, սա-

կայն աստիճանաբար համոզվելով այդ գաղափարի ոչ իրատեսական լինելու մեջ՝ հարեցին նշված երկու թևերին:

Ինչ վերաբերում է ճորտատիրական լծի տակ տառապող վրաց գյուղացիությանը, ապա այն սկզբնական շրջանում համակրանքով էր լցված ռուսների նկատմամբ, քանի որ ռուսական զորքերը Քարթլին ու Կախեթը պաշտպանում էին դաղստանյան ավատատերերի զորաջոկատների կողոպտչական ավերիչ ասպատակություններից և ապահովում շինականների ու արհեստավորների խաղաղ աշխատանքը: Հենց այդ պատճառով Վրաստանի ժողովրդական զանգվածները սկզբնական շրջանում անտարբերությամբ վերաբերվեցին նաև Բագրատիոնիների՝ վրաց Բագրատունիների արքայատան իշխանության վերացմանը: Սակայն իրադրությունն արմատապես փոխվեց, երբ բնակչությունն ակներևաբար համոզվեց, որ իր հույսերը չարդարացան, և այն ուժը, որը կոչված էր նրան օգնելու և պաշտպանելու, իրականում ազգային ճնշման գործիք է: Գյուղացիության շրջանում խուլ տրտունջներ և սուր դժգոհություն էին առաջացնում նաև բանակի պարենավորման հարցում նոր իշխանությունների գործադրած դաժան միջոցները: Այդ բոլորին ավելանում էր ռուսական բյուրոկրատիայի կոպտությունը, տեղացիների նկատմամբ արհամարհական վերաբերմունքը և կամայականությունները:

Վրաստանն աստիճանաբար վերածվում էր Արևելքում Ռուսաստանի ռազմական հենակետի: Հարաճուն կերպով ավելանում էր այնտեղ տեղաբաշխված զորքերի թիվը: Բնակչության վրա ծանր բեռ էր այդ զորքերի սպասարկումը, ռազմական նշանակություն ունեցող ճանապարհների շինարարությունն ու վերանորոգումը և այլն: Առանձնակի դժվարին վիճակի մեջ էին հայտնվել Ռազմա–Վիրական ճանապարհի երկայնքով բնակվող լեռնականները, որոնք վրացական թագավորների ժամանակ հարաբերականորեն ազատ էին, պետական գանձարանին վճարում էին միայն բնամթերային տուրք և իրականացնում զինվորական ծառայություն: Ռուսական ինքնակալությունը խաթարել էր լեռնականների փակ կենցաղի դարավոր հիմքերը: Բացի այդ՝ բնամթերային հարկը փոխարինվել էր դրամականով, որը լեռնականների համար ծանր բեռ էր, քանի որ նրանց համար դրամը հազվագյուտ բան էր: Ձմռան ուժեղ սառնամանիքների ժամանակ ռուսական զինվորական իշխանությունները ստիպում էին գյուղացիներին ճանապարհները մաքրել ձյունից, տեղափոխել ռազմական բեռներ և ի լրումն այդ բոլորի՝ սննդամթերք մատակարարել Ռազմա–Վիրական ճանապարհով շարժվող զորամասերին:

Մի խոսքով՝ ցարիզմի գաղութային քաղաքականությունն առաջ բերեց վրաց գյուղացիության զանգվածային ելույթներ: Արդեն 1802 թ. սեպտեմբերին Քարթլին և Կախեթն ամբողջապես բռնված էին հուզումների ալիքով: 1804 թ. ապստամբեց լեռնային Քարթլիի բնակչությունը: Դա ռուսական իշխանությունների դեմ առաջին խոշոր ելույթն էր: Ապստամբել էին Ռազմա–Վիրական ճանապարհի ուղղությամբ տեղաբաշխված գյուղերի բնակիչները, որոնց պարտադրում էին հոգալ Վրաստան ժամանող ռուսական բանակի կարիքները: Օգտվելով 1804 թ. Պ. Ցիցիանովի՝ դեպի Երևան արշավանքի նախապատրաստական զորահավաքի կազմակերպումից՝ տե-

ղի բնակչությունից հավաքված զորքը նրան միանալու փոխարեն ապստամբության դրոշ բարձրացրեց: Ապստամբության ճնշումը հանձնարարելով իր տեղակալ գեներալ–լեյտենանտ Վոլկոնսկուն՝ Ցիցիանովը շարժվեց Երևան: Ծայր առավ արյունահեղ պայքար ապստամբ–լեռնականների և ռուսական զորքի միջև: Օգտվելով բանակի հիմնական կազմի հեռացումից՝ ապստամբությունն ավելի բորբոքվեց Անանուրում և նրա շրջակա վայրերում: Վրաց ազնվականությունն ու ավատատերերը միացան ապստամբներին, որոնք հրավիրեցին նաև Իմերեթում գտնվող Յուլոն և Փառնավազ արքայազններին: Դա վկայում էր, որ այս անգամ ևս պայքարը միտված էր թագավորության վերականգնման գաղափարի իրականացմանը: Հունիս–օգոստոսին ապստամբությունը մեծ թափով ծավալվեց: Ոտքի կանգնեցին նաև Օսիան, Փշավին և Խևսուրեթը: Ապստամբներին միացան մի շարք հարթավայրային շրջանների գյուղացիները և տեղական ավատատերերի մի մասը: Գյուղացիական խռովություններն առանձնակի ուժգնության հասան 1807–1810 թվականներին:

Ռուսների համար ստեղծվել էր ծայրահեղ անբարենպաստ իրադրություն մանավանդ այն պատճառով, որ նրանք պատերազմական վիճակում էին Իրանի դեմ: Երևանի մոտ ռազմական գործողություններ վարող ռուսական զորամասերը հայտնվել էին վտանգավոր իրավիճակում: Զորքերի հրամանատար Ցիցիանովը նույնիսկ ստիպված էր դադարեցնել Երևանի պաշարումը և խոշոր զինվորական ստորաբաժանումներ նետել վրաց ապստամբների դեմ: Ռուսական իշխանությունները կարողացան պառակտում մտցնել ապստամբների շարքերում՝ Քսանիի էրիսթավներին վերադարձնելով դեռևս Հերակլ Բ թագավորի ժամանակ նրանցից խլված տիրույթներն ու 4000 ճորտերի: Յուլոն և Փառնավազ արքայազններն Իմերեթից Քարթլի անցնելու ճանապարհին՝ Սուրամի մոտ, պարտություն կրեցին անակնկալ հարձակում գործած ռուսական ջոկատի կողմից, որոնց գլխավորում էր Գիորգի Ամիրեջիբը: Յուլոնը գերի ընկավ, իսկ Փառնավազին հաջողվեց փախուստով ազատվել և անցնել Ախալցխա: Սակայն ապստամբությունը շարունակվում էր, և Փառնավազը 1804 թ. սեպտեմբերին կրկին հայտնվեց ապստամբների մոտ: Սեպտեմբերի վերջին՝ Երևանում կրած անհաջողությունից հետո, վերադառնալով Թիֆլիս՝ Ցիցիանովը ձեռնամուխ եղավ ապստամբությունը ճնշելու գործին: Թեև լեռնականները կատաղի դիմադրություն էին ցույց տալիս, սակայն, ի վերջո, չդիմանալով կանոնավոր զորքերի հարվածներին՝ պարտություն կրեցին և ստիպված էին քաշվել անառիկ լեռները:

Վրաստանը խաղաղեցնելու և այդ երկրում ռուսական քաղաքականությունը արդյունավետ առաջ տանելու համար Պետերբուրգը մեծ հույսեր էր կապում գեներալ Պավել Ցիցիանովի (Ցիցիշվիլու) հետ, ուստի 1802 թ. մայիսի 23–ի շնորհագրով Ալեքսանդր Ա–ն նրան նշանակեց Վրաստանի կառավարչապետ և զորքերի հրամանատար: Կայսեր շնորհագրով Ցիցիանովին հանձնարարվում էր ուշադրությունը կենտրոնացնել «Ռուսաստանին միացված մարզերի ներքին բարեկարգման և այն-

տեղ բնակվող ժողովուրդներին մինչ այդ նրանց անծանոթ օրենքների հովանու տակ անդորր կյանքի երանությունը պարգևելու վրա»:

Պ. Ցիցիանովը սերում էր ռուսացած վրացական ազնվական մի տոհմից. նա Գեորգի ԺԲ թագավորի կնոջ՝ Մարիամ թագուհու ազգականն էր: Այդ հանգամանքը ցարական կառավարությանը հույս էր ներշնչում, որ նա ընդհանուր լեզու կգտնի վրաց ազնվականության ու ավատատերերի հետ: Նրա նշանակումով ցարական կառավարությունը նպատակ ուներ նախ Վրաստանը հանդարտեցնել, կալվածատեր–ազնվականներին հաշտեցնել Քարթլի–Կախեթական թագավորության քաղաքական ինքնուրույնության կորստի հետ և ապա ռուսական վարչակազմին հաղորդել որոշ տեղական երանգավորում: 1802 թ. սեպտեմբերի 8–ին Ցիցիանովին տրված հրահանգում նրան հանձնարարվում էր վրաց ժողովրդին համոզել, որ «նա երբեք պատճառներ չի ունեցել զղջալու»՝ իր ճակատագիրը վստահելով Ռուսաստանին: Ցիցիանովի առջև դրված կարևորագույն խնդիրներից մեկն էր նաև Ռուսական կայսրության սահմանների ընդարձակումը մինչև «Կուր և Արաքս գետերի հունը»: Բացի այդ՝ նրան հանձնարարվում էր վերացնել վրացական եկեղեցու անկախությունը և այն ենթարկել Ռուսական ուղղափառ եկեղեցու Սրբազան Սինոդին:

Պ. Ցիցիանովը Թիֆլիս ժամանեց 1803 թ. փետրվարի 1–ին, անմիջապես եռանդուն կերպով ձեռնամուխ եղավ ռուսական տիրապետության հաստատմանն ու կայունացմանը: Նրա առաջին միջոցառումներից մեկը եղավ ատելի դարձած Պ. Կովալենսկու հեռացումը պաշտոնից, որի փոխարեն նշանակվեց գեներալ Գուչկովը: Այնուհետև նա ձեռնամուխ եղավ վրացական թագավորական ընտանիքի անդամներին Վրաստանի սահմաններից հեռացնելու գործին՝ «երկրի ներքին կայունությունն ապահովելու համար»: Այդ քայլը պայմանավորված էր նրանով, որ վրաց արքունիքի ներկայացուցիչները դժգոհ էին թագավորության վերացումից և եռանդուն դիմադրություն էին ցույց տալիս ռուսական տիրապետության հաստատմանը: Բնականաբար, այդ տարրերը խանգարում էին Ցիցիանովին՝ իրականացնելու իր առաքելությունը: Իսկ ամենակարևորը՝ վրաց արքայազնները պատրաստ էին համագործակցելու պարսից իշխանությունների հետ՝ Վրաստանում իրենց տիրապետությունը վերականգնելու գործում: Այդ առումով առավել եռանդուն էին գործում Դարեջան թագուհին, Հերակլի որդիներ Ալեքսանդրը, Յուլոնը, Փառնավազը և Գեորգի ԺԲ–ի որդիները՝ Դավիթն ու Թեյմուրազը: Ցիցիանովի առաջարկով ռուսական արքունիքը ձեռնամուխ եղավ արքայազններին Վրաստանից Ռուսաստան փոխադրելու գործին: Այդ նպատակով Ալեքսանդր կայսեր կողմից հրավեր ուղարկվեց Դարեջան և Մարիամ թագուհիներին՝ փոխադրվելու Պետերբուրգ: Հրավերի իրականացումը ձգձգելու մեղադրանքով Մարիամ թագուհու բնակարան ներխուժած գեներալ Լազարևի կողմից բռնության փորձի ժամանակ վերջինս սպանվեց Մարիամ թագուհու դաշույնի հարվածից: Դա առիթ ծառայեց՝ արագացնելու արքայազններին Ռուսաստան տեղափոխելու գործընթացը, որոնց համար Ռուսաստանում նշանակվեցին բարձր թոշակներ: 1804 թ. Ռուսաստան տեղափոխվեցին Յուլոնը և

Փառնավազը: Բագրատունյաց տոհմի գրեթե բոլոր ներկայացուցիչները ժամանակի ընթացքում արժանացան նույն ճակատագրին ինչպես Քարթլի–Կախեթում, այնպես էլ Արևմտյան Վրաստանում:

Պ. Ցիցիանովը Վրաստանում ստեղծեց ազնվականական առաջին ժողովը և նրա ղեկավար նշանակեց Պետերբուրգում Վրաստանի նախկին դեսպան Գարսևան Ճավճավաձեին: Վրաստանի կառավարչապետը վարչական գործունեության մեջ փորձում էր նաև ռուսական վարչակարգը հարմարեցնել վրաց ժողովրդի բարքերի ու սովորությունների հետ: Առանձնակի եռանդով նա ձեռնամուխ եղավ նաև վրացական թեմերի վերացմանը և 1804 թ. մայիսի 29–ին զեկուցեց կայսրին, որ Վրաստանում իր պաշտոնավարման ընթացքում Քարթլիում արդեն վերացվել է երեք թեմ, սակայն երեքը դեռ մնում են: Հարցի վերաբերյալ հայտնելով իր տեսակետը՝ Ցիցիանովը նշում էր, որ նպատակահարմար չի համարում Քարթլիում մեկից ավելի թեմ թողնելը, սակայն ավելացնում էր, որ թեմերի միանգամից ու հախուռն վերացումը չի համարում նպատակահարմար, քանի որ «դա կարող է ունենալ վտանգավոր հետևանքներ»:

Միանգամայն ակնհայտ էր, որ Ռուսաստանը չէր կարող բավարարվել միայն Վրաստանով և պետք է ընդարձակեր իր տիրապետությունը Այսրկովկասում՝ դուրս մղելով Իրանին և Օսմանյան պետությանը: Ռուսաստանի հետագա ծավալումը դեպի հարավ իրականացնելու համար իր պաշտոնավարման առաջին իսկ օրերից Ցիցիանովը ծավալել էր եռանդուն գործունեություն: 1803 թ. մարտի 12–ին Ալեքսանդր Ա–ին հղած զեկուցագրում նա գրում էր, որ իր առաջիկա ծրագրերի մեջ է մտնում Բաքվի, Գանձակի, Դերբենդի, Շամախիի, Արցախի և Երևանի խանությունների գրավումը: Գեներալը այդ ծրագրի իրագործումը սկսեց Գանձակի խանության հպատակեցումից, որի Ջավադ խանն անսքող պարսկական կողմնորոշում ուներ: 1804 թ. հունվարի 3–ին ռուսական զորքերը գրոհով վերցրին Գանձակի բերդը: Ջավադ խանը փախուստի դիմեց Իրան:

Արևելյան Վրաստանի և Գանձակի խանության միացումը Ռուսաստանին անօրինակ կերպով սրեց ոչ միայն ռուս–պարսկական, այլև ռուս–թուրքական հարաբերությունները: Հատկապես ռուս–իրանական հակամարտությունը հասավ իր գագաթնակետին: Պարսից արքունիքում ձևավորվեց Ռուսաստանի դեմ պատերազմի կողմնակիցների մի ուժեղ խմբավորում Ֆաթհ Ալի շահի և թագաժառանգ Աբբաս Միրզայի գլխավորությամբ, որոնք ձգտում էին ռուսներին դուրս մղելու Վրաստանից ու Գանձակի խանությունից և հնազանդեցնելու և իրանական իշխանությանը ենթարկելու Հարավային Կովկասի բոլոր այն խաներին, որոնք, ձգտելով ինքնագլխության, դադարել էին ենթարկվելուց շահին:

Մինչև հարցի ռազմական լուծումը Ֆաթհ Ալի շահը փորձում էր վերոհիշյալ խնդիրը լուծել դիվանագիտական ճանապարհով: Նա Թիֆլիս է ուղարկում իր դիվանագիտական ներկայացուցչին, որը բանակցությունների մեջ է մտնում գեներալ Ցիցիանովի հետ: Շահական դեսպանը կոպտորեն և սպառնալից տոնով պահանջում է ռուսական զորքերն անհապաղ հեռացնել Վրաստանից՝ հակառակ դեպքում

սպառնալով սկսել ռազմական գործողություններ: Ստանալով մերժում՝ պարսկական արքունիքը որոշում է հարցը լուծել ուժի օգնությամբ՝ պատերազմի միջոցով: 1804 թ. իրանական բանակը Երևանի խանության տարածքից փորձեց ներխուժել Վրաստան, որով և սկիզբ առավ ռուս–պարսկական առաջին պատերազմը (1804–1813 թթ.):

Վրաց արքայազն Ալեքսանդրը, որը շահի կողմից ճանաչվել էր որպես Վրաստանի վալի, հույսեր էր փայփայում, որ հաղթանակի դեպքում ինքը կվերականգնի վրացական թագավորությունը և կգրավի Բագրատունի արքայատան գահը: Նա իր գործակալների միջոցով կապերի մեջ էր մտել լեզգիների հետ՝ նրանց հորդորելով աջակցել պարսիկներին և թիկունքից հարվածել ռուսներին:

1804–1805 թթ. ռուսական զորքերը Պ. Ցիցիանովի գլխավորությամբ գրավեցին Շաքիի, Շիրվանի և Բաքվի խանությունները: Արցախի Իբրահիմ խանը ևս Քուրակ գետի ափին Ցիցիանովի հետ կնքած պայմանագրով ընդունեց Ռուսաստանի հպատակությունը և ստիպված էր համաձայնել Շուշիում տեղակայելու ռուսական զորք՝ մայոր Լիսաննևիչի հրամանատարությամբ: 1806 թ. փետրվարի 8–ին Բաքվում Ցիցիանովի սպանությունը չէր կարող կասեցնել ռուսների առաջխաղացումը, և նույն տարվա աշնանը գեներալ Տորմասովի հրամանատարությամբ գրավվեց նաև Բաքուն:

Պ. Ցիցիանովի սպանությունից հետո ռուսական կառավարությունը նրա փոխարեն Վրաստանի կառավարչապետի և գլխավոր հրամանատարի պաշտոնում նշանակեց գեներալ Իվան Գուդովիչին: Նրա առջև խնդիր էր դրված ամրապնդել ռուսական տիրապետությունը Վրաստանում և շարունակել այն տարածքների միացումը Ռուսաստանին, որոնք դեռ մնում էին Իրանի տիրապետության ներքո:

Ռուսաստանը շարունակում էր Այսրկովկասի երկրների և ռուսական կայսրության կառավարման միջև առկա տարբերությունները համահարթելու քաղաքականությունը՝ այստեղ ևս ներդնելով ռուսական վարչակարգ: Դա վերաբերում էր ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևոր ոլորտներին: 1811 թ. Անտոն կաթողիկոսը հրավիրվեց Ռուսաստան: Վրաց կաթողիկոսությունը վերացվեց, և վրաց եկեղեցին ներառվեց ռուսական եկեղեցու ընդհանուր համակարգի մեջ՝ վերապահելով նրան թեմական հոգևոր ատյանի կարգավիճակ ռուսական սինոդի կազմում: Եպիսկոպոսությունների քանակը 13–ից կրճատվում էր 2–ի: Սկզբնապես արքեպիսկոպոս (էկզարխ) է նշանակվում Քսանիի էրիսթավների տոհմի միտրոպոլիտ Վառլամ էրիսթավը, իսկ այնուհետև՝ Ռյազանի միտրոպոլիտ Ֆեոֆիլակտ Ռուսանովը: 1817 թ. սահմանվում է նոր կարգ, ըստ որի՝ շաբաթը երեք օր պատարագն ու ժամերգությունը Սիոնի տաճարում պետք է տեղի ունենար ռուսերեն: Ռուսերենին չտիրապետող վրաց հոգևորականները կորցնում էին պաշտոնները: Եկեղեցական հողերի վրա բնակվող վրաց ազնվականներն իրենց տիրույթներով ու հպատակներով հայտարարվեցին պետական–արքունական, իսկ վրաց հոգևորականությունն իր վարձը ստանում էր սինոդից և կախված էր նրանից:

1813 թ. հոկտեմբերի 12–ին Գյուլիստանում կնքված պայմանագրով ավարտվեց ռուս–պարսկական պատերազմը (1804–1813 թթ.): Այդ պայմանագրով Իրանը ճանաչում էր Ռուսաստանի բոլոր նվաճումները Հարավային Կովկասում և ստիպված էր գեթ առժամանակ հաշտվել Այսրկովկասի մեծ մասը կորցնելու մտքի հետ:

Ռուսական կողմը գեներալ Ռտիշչևի և հատկապես 1816 թ. ծառայության անցած գեներալ Երմոլովի հրամանատարությամբ աստիճանաբար ամրապնդեց իր ներկայությունը Վրաստանում: Ռուսական տիրապետության հաստատումն ուղեկցվում էր սոցիալ–տնտեսական կարևոր վերափոխումներով: Վրաց իշխանական դասն աստիճանաբար կորցնում էր իր տիրապետող դիրքը հասարակության մեջ: Նա տուժում էր նաև տնտեսապես՝ զրկվելով պետական ծառայության դիմաց վճարներից, և ստիպված էր բավարարվել միայն սեփական կալվածքներից ստացվող եկամուտներով: Վրաց թագավորության մեջ հստակորեն ձևավորված իշխանական ու ազնվականական դասերը ռուսական տիրապետության պայմաններում հավասարվեցին և դիտարկվեցին որպես մեկ դաս, թեև դեռևս պահպանվում էին նրանց ունեցվածքային տարբերությունները: Նախկին թագավորական ու արքայազններին պատկանող ճորտերը հայտարարվեցին արքունական (պետական) հպատակներ: Վատթարացավ նաև եկեղեցական ճորտերի վիճակը: Գրեթե անփոփոխ էր մնում միայն վրաց կալվածատիրական ճորտերի դրությունը:

Այս ամենի պատճառով Վրաստանը չէր խաղաղվում: Լեռնական գյուղացիների ապստամբության ճնշումից հետո դժգոհությունը շարունակում էր թևածել ողջ Արևելյան Վրաստանում:

1811 թ. անբերրիության պատճառով սկսված սովի և համաճարակների հետևանքով Իմերեթում և Քարթլի–Կախեթում եղան զանգվածային մահացության դեպքեր: Ըստ հաշվարկների՝ Իմերեթում մահացավ մոտ 30 հազար մարդ: Մեծ կորուստներ եղան նաև Կախեթում: Բնակչության համար հատկապես դժվարություններ էին հարուցում և դժգոհության տեղիք տալիս տրանսպորտային պարհակները և հացահատիկից գանձվող հարկերը: Չնայած հացի թանկությանը՝ իշխանությունները բնակչությունից հացահատիկը գտնում էին չնչին գներով: Կառավարչապետ Պաուլուչչին փորձեց բռնագանձել հացը բնակչությունից, որն առիթ դարձավ զանգվածային անհնազանդության: Ապստամբությունը սկսվեց 1812 թ. հունվարի 31–ին Կախեթի Ախմետա գյուղից և շուտով ընդգրկեց ողջ Կախեթը: 1812 թ. փետրվարի 2–ին ապստամբները գրավեցին Թելավը, այնուհետև Սղնախը և Բոդբին: Ապստամբությանը միացան փշավներն ու խևսուրները, սակայն Կախեթի ազնվականության մի մասը չմասնակցեց շարժմանը: Ապստամբները մտադիր էին փակել Դարիալի կիրճը և հայտարարել Վրաստանի անկախության մասին: Նրանք գրավեցին Դուշեթի և Փասանաուրիի անցակետերը: Ապստամբությունն ընդգրկեց նաև Քարթլին, սակայն վերջինիս ազնվականությունը ձեռնպահ մնաց շարժմանը մասնակցելուց: Ապստամբները կոտորեցին ռուսական կայազորերի զինվորներին, ավերեցին կառավարական հիմնարկները և, մոտենալով Թիֆլիսին, սպառնում էին հարձակվել քաղաքի վրա:

Իշխանություններն անցան հակահարձակման: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Չումլակի գյուղի մոտ: Այն գլխավորում էր Գրիգոլ Բագրատիոնին, որին ապստամբները բերել էին Քարթլիից և հռչակել «թագավոր»: Ապստամբները սպանեցին Վախթանգ Օրբելիանիին և վիրավորեցին Ա. Ճավճավաձեին: Հաղթանակը, այնուամենայնիվ, իշխանությունների կողմն էր, Գրիգոլ արքայազնը փախավ Դաղստան, որով և ավարտվեց ապստամբության առաջին փուլը: 1812 թ. դեռևս շարունակվում էր ռուս–պարսկական պատերազմը, իսկ հունիսին Ռուսաստան ներխուժեցին Նապոլեոնի բանակները: Նշված հանգամանքները, ինչպես նաև 1812 թ. աշնան սկզբներին Իրանից Ալեքսանդր արքայազնի Կախեթ ժամանելն ու ապստամբության գլուխ անցնելը նպաստեցին ապստամբության ծավալմանը և նոր թափ հաղորդեցին նրան: Իշխանական զորքերը փորձում էին ոչ միայն կրնկակոխ հետապնդել ապստամբների զորքերին, այլև կարողացան իրենց կողմը գրավել իշխանական դասի ներկայացուցիչներին: Բնակչությունը ևս, չդիմանալով երկարատև պայքարի ծանրությանը, աստիճանաբար հակվում էր ավելորդ զոհեր չտալու մտքին: Վճռական հաջորդ ճակատամարտը տեղի ունեցավ Մանավի մոտ, որտեղ նոյեմբերի 25–ին լեզգիների ջոկատի դավաճանության պատճառով Ալեքսանդրի զորամասը պարտություն կրեց:

Պարտությունը, սակայն, չընկճեց Ալեքսանդրին, և նա շարունակեց Ռտիշչևի բանակի դեմ պայքարը խևսուրների և լեռնականների ցուցաբերած օժանդակությամբ: 1813 թ. մայիսին Խևսուրքի բնակիչները Ալեքսանդրին առաջարկեցին անցնել Դաղստան, իսկ իրենք, կազմելով երեքհազարանոց զորք, անցան պաշտպանության: Գեներալ Ռտիշչևի զորքերը մայիսի վերջին հարձակվեցին Շատիլի գյուղի վրա և արյունահեղ մարտում կարողացան պարտության մատնել ապստամբների զորքին: Զոհվեցին 700 խևսուր ապստամբներ, մնացածները որոշեցին դադարեցնել պաշտպանությունը Շատիլիում և թողնել այն: Պատժիչ զորքերը, հետապնդելով ապստամբներին, ավերեցին մոտ 20 գյուղ (այդ թվում նաև Շատիլին): Ապստամբների մի մասը բանտարկության դատապարտվեց, 29 հոգի աքսորվեցին Սիբիր, իսկ ռազմական դատարանն արդարացրեց 62 մարդու, որոնցից՝ 4 քահանա և 2 կին: Իշխանությունները ապստամբած բնակավայրերից գանձեցին ռազմատուգանք բնամթերքով ու դրամով:

Ալեքսանդր արքայազնի կողմից պայքարի շարունակումը դարձավ անհեռանկար: Ռուսական ցարիզմը հաղթանակով ավարտեց ինչպես Նապոլեոնի դեմ պատերազմը, այնպես էլ ռուս–պարսկական պատերազմը և ավելի ամրապնդեց իր դիրքերը Վրաստանում ու ամբողջ Այսրկովկասում:

2. ԱՐԵՎՄՏՅԱՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ: ՎՐԱՍՏԱՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ

Արևելյան Վրաստանի միացումը ցարական Ռուսաստանի կողմից Կովկասում իրականացվող մեծ քաղաքականության սկիզբն էր, որի նպատակն էր ամբողջու-

թյամբ վերցրած իր տիրապետության հաստատումը այդ երկրամասում Կասպից ծովից մինչև Սև ծով ընկած տարածքներում: Արևելյան Վրաստանից հետո հերթը Արևմտյան Վրաստանինն էր:

XIX դ. սկզբին Արևմտյան Վրաստանն իրենից ներկայացնում էր մի տարածք, որը մասնատված էր մի քանի ինքնուրույն քաղաքական միավորների, որոնցից ամենախոշորը Իմերեթի թագավորությունն էր: Արևմտյան Վրաստանի արևելյան սահմանը Լիխի լեռնաշղթան էր, իսկ հարավում սահմանակից էր օսմանյան պետության տիրապետության տակ գտնվող Սամցխեի աթաբեկությանը: Փոթին և Աջարիան նույնպես օսմանցիների տիրապետության ներքո էին: Բնակչության քանակով Արևմտյան Վրաստանը գերազանցում էր Քարթլի–Կախեթին: XIX դ. 30–ական թթ. տվյալներով՝ Արևմտյան Վրաստանի տարածաշրջանի բնակչությունը կազմում էր մոտ 350 հազար: Դարասկզբին այդ թիվը կարող էր փոքր–ինչ պակաս լինել: Ավելի շատ բնակիչ ուներ Իմերեթի թագավորությունը (120 հազ.), Մեգրելիան (70–75 հազ.), Աբխազիան (70 հազ.), Գուրիան (35 հազ.), Սամուրզականո–Ցեբելդան (12 հազ.) և անկախ Սվանեթը (10 հազ.): Մոտ 400–ամյա վարչաքաղաքական մասնատվածությունը խոչընդոտել էր Արևմտյան Վրաստանի տնտեսական ու սոցիալական առաջընթացին, միասնական լեզվամշակութային զարգացմանը, սակայն նրանց կապող հանգամանքը շարունակում էր մնալ դարերի ընթացքում պահպանված վրաց լեզվի, գրականության և մշակութային ավանդույթների ընդհանրությունը:

Իմերեթի թագավորության, Գուրիայի, Մեգրելիայի, Աբխազիայի և Սվանեթի միջև մշտապես տեղի էր ունենում երկպառակչական պայքար: Փոխադարձ թշնամանքը հաճախ վերածվում էր արյունոտ բախումների: Արևմտյան Վրաստանում կենտրոնացված ուժեղ իշխանության բացակայությունը Օսմանյան կայսրությանը հնարավորություն էր տալիս այդ երկրամասում պահպանելու իր քաղաքական ազդեցությունը և իր ձեռքում պահելու Վրաստանի նավահանգստային քաղաքներ Բաթումը, Փոթին և Սուխումը (Սոխում): Դրանց վրայով տեղի էր ունենում Վրաստանում հափշտակված գերիների աշխույժ առևտուր, որոնց ուղարկում էին Արևելքի ստրկավաճառանոցներում վաճառքի հանելու:

Վերևում հիշատակված քաղաքական միավորներից Իմերեթն առավել ուժեղ երկիրն էր: Նրա թագավոր Սողոմոն (Սոլոմոն) Բ–ն իրեն համարում էր ողջ Արևմտյան Վրաստանի տիրակալը: Թագավորության վերացումը Քարթլի–Կախեթում և ռուսական վարչական համակարգի ստեղծումն ակնհայտորեն սպառնալիք էր նաև Արևմտյան Վրաստանի համար, ուստի Սողոմոնը ձգտում էր օժանդակելու թագավորության վերականգնմանն ուղղված պայքարին: Նա շփումների մեջ մտավ Թուրքիայի և Իրանի հետ և օգնություն էր ցուցաբերում արքայազն Ալեքսանդրին՝ ռուսական զորքերը Վրաստանից դուրս մղելու և Բագրատիոնների հարստության իշխանությունը վերականգնելու համար:

Օսմանյան կայսրության հետ հաճախակի պատերազմների, լեռնական ցեղերի ասպատակությունների, ավատական մշտական երկպառակությունների հետևան-

քով Արևմտյան Վրաստանի բոլոր շրջաններն առանց բացառության XIX դ. սկզբին քաղաքական առումով խիստ թույլ էին, իսկ տնտեսական առումով՝ ուժգին ճգնաժամի մեջ: Իմերեթում, Գուրիայում և Աբխազիայի հարթավայրային շրջաններում պահպանվում էր ավատական ճորտատիրական հասարակական համակարգը: Սակայն Աբխազիայի լեռնային շրջաններում և Սվանեթում դեռևս վերին աստիճանի ուժեղ և կենսական էին տոհմա–համայնքային կարգի մնացուկները, իսկ ճորտատիրական հարաբերությունները չէին վերածվել հասարակական կյանքի համընդհանուր կացութաձևի: Այդ բոլորի հետևանքով Արևմտյան Վրաստանը հայտնվել էր տնտեսական անդամալուծության ու քայքայման վիճակում:

Արևմտյան Վրաստանի իշխանություններից յուրաքանչյուրը յուրովի էր նախապատրաստվում գալիք փորձություններին: Մի մասը պատրաստվում էր զինված դիմադրության ու պատերազմի, ոմանք Ռուսաստանի հետ դիվանագիտական բանակցությունների և հովանավորչական դաշնագրերի կնքման կողմնակից էին: Դրանցից մեկն, օրինակ, Աբխազական իշխանությունն էր: Այն տևական ժամանակ Օսմանյան կայսրության ազդեցության ներքո էր: Աբխազ բնակչության շրջանում թուրքերը բռնի կերպով արմատավորում էին իսլամն ու թուրքերենը: Սակայն աբխազ ժողովուրդը, բացառությամբ նրա ավատական դասի ու Աբխազիայի իշխանի՝ մթավարի, հավատարիմ էր մնում քրիստոնեությանը և կորովի դիմադրություն էր ցույց տալիս թուրք ուծացնողներին: Ընդ որում՝ Շերվաշիձե տոհմի տիրակալ իշխանները, արտաքուստ ընդունելով իսլամը, շարունակում էին մնալ քրիստոնյաներ: Մեգրելական իշխանության ժամանակավոր կառավարիչ Նինո Բագրատիոնին, որը հանգուցյալ իշխան Դադիանիի այրին էր, 1808 թ. հաղորդում էր Վրաստանի գլխավոր հրամանատարին, որ Աբխազիայում գյուղացիները «իրենց մեծ մասով քրիստոնյաներ են և հավատ են ընծայում մեր խաչին ու սրբապատկերներին»:

Ուստի պատահական չէ, որ մուսուլման Թուրքիայի անագորույն լծի տակ հեծող Աբխազիան, ինչպես և Արևմտյան Վրաստանի մյուս իշխանությունները ձգտում էին դուրս գալու այդ վիճակից: Ռուսական կողմն ուշադիր հետևում էր իշխանություններին և նրանց միջև հարաբերությունների զարգացմանը:

Իմերեթի թագավոր Սողոմոն Բ–ն, փառասիրությամբ տարված, իր գահակալության ողջ ընթացքում եռանդուն պայքարել էր ողջ Արևմտյան Վրաստանն իր իշխանության ներքո միավորելու համար: Նա ձգտում էր ներկայանալու իբրև ողջ Արևմտյան Վրաստանի թագավոր և եռանդուն փորձեր էր կատարում հնազանդեցնելու Մեգրելիայի Դադիանի իշխանին: Սակայն այժմ Սողոմոնի այդ նկրտումներին խոչընդոտում էր ռուսական կողմը: Իր հերթին Գրիգոլ Դադիանին Սողոմոնի հարձակումներին դիմակայելու համար պատրաստ էր դիմելու Ռուսաստանի օգնությանը:

Չճանաչելով օսմանյան սուլթանի իշխանությունը՝ Սողոմոնը մշտական պայքարի մեջ էր օսմանցիների դեմ՝ ձգտելով նրանց ամբողջովին դուրս մղելու Վրաստանի Սևծովյան ափերից: Սակայն այդ պայքարի հաջողությանն արգելք էին դարձել տի-

ռակալ իշխանները՝ մթավարները: Առաջնորդվելով իրենց ինքնագլխության և սեփական շահերն ապահովելու մտահոգություններով՝ նրանք հանդես էին գալիս Իմերեթի թագավորի դեմ, չխորշելով նույնիսկ քաղաքական գործարքների մեջ մտնել արտաքին թշնամիների, հատկապես օսմանցիների հետ:

XIX դ. սկզբին Սողոմոն Բ–ն տարբեր պատրվակներով մերժում էր Ռուսաստանի հովանավորության առաջարկը: Մինչդեռ ռուսները կարծում էին, որ Արևմտյան Վրաստանի յուրացման գործում առաջնահերթությունը Իմերեթինն էր: Ուստի որպես առանձնահատուկ ուշադրության ցուցադրում՝ նրանք Արևմտյան Վրաստան ուղարկեցին իրենց ներկայացուցիչ Սոկոլովին, որին հանձնարարված էր նաև խորքային ձևով հետազոտել տարածաշրջանը:

Ահա այդպիսին էր Վրաստանի արևմտյան մասի կացությունը, երբ XIX դարի սկզբին Ռուսաստանի տիրույթների սահմաններն ընդհուպ մոտեցան նրա տարածքներին: Հիմնավորվելով Արևելյան Վրաստանում՝ ցարիզմն անմիջապես սկսեց ծրագրեր մշակել Արևմտյան Վրաստանը ևս նվաճելու ուղղությամբ:

Փայփայելով լայնահուն ծավալապաշտական նկրտումներ դեպի Մերձավոր Արևելք շարժվելու համար՝ Ռուսական կայսրությունը ձգտում էր հնարավորին չափ շուտ իր համար ճանապարհ հարթելու դեպի Սև ծովի արևելյան ափերը, նվաճելու ողջ Արևմտյան Վրաստանը և դրանով իսկ իր համար ապահովելու լավագույն ռազմավարական դիրքեր Թուրքիայի հետ առաջիկա գոտեմարտերի համար: Գեներալ Պավել Ցիցիանովին Վրաստան ուղարկելու ժամանակ Ալեքսանդր Ա կայսրը նրան կարգադրել էր «ձեռք բերել Իմերեթը, Մեգրելիան և Գուրիան, երբ դրա համար կստեղծվի հարմար պահ»: Ըստ այդմ՝ դեռևս 1802 թ. գեներալ Կնորինգի փոխարեն նոր գլխավոր կառավարիչ նշանակված Ցիցիանովը ձեռնամուխ էր եղել ակտիվ գործողությունների Արևմտյան Վրաստանում: Նա բանակցությունների մեջ էր մտել Իմերեթի թագավոր Սողոմոն Բ–ի և մյուս իշխանությունների առաջնորդների հետ: Սողոմոն Բ–ն դեմ չէր ստանալու Ռուսաստանի հովանավորությունը, սակայն ձգտում էր պահպանելու նաև իր իրավասությունները: Ցիցիանովն իր հերթին պահանջում էր լիակատար ենթակայություն: Նրա պահանջը մեղմելու համար բանակցությունների նպատակով Սողոմոնը Պետերբուրգ ուղարկեց իր «վիցե–կանցլեր» Սոլոմոն Լեոնիձեին: Սողոմոնը կայսրից պահանջում էր հովանավորության հաստատման ակտը հայտարարել միջպետական համաձայնագիր և դրա մասին իրազեկել միջազգային մակարդակով՝ բոլոր երկրներում հրապարակելով այդ փաստը: Իմերեթի թագավորը պահանջում էր թույլ չտալ Վրաստանի կառավարչապետի միջամտությունը կայսեր հետ իր հարաբերություններում: Այս պահանջները Լեոնիձեն պետք է ներկայացներ այն դեպքում, եթե ռուսական արքունիքը ընդուներ ավելի ընդարձակ ծրագրային «կետերը», որոնցով առաջարկվում էր Ռուսաստանի օժանդակությամբ Այսրկովկասում վերածնել հզոր վրացական միապետությունը: Լեոնիձեի դեսպանագնացությունն, ինչպես սպասելի էր, ավարտվեց անհաջողությամբ:

1803 թ. հուլիսին Պ. Ցիցիանովը հովանավորության վերաբերյալ պայմանագիր ստորագրեց Մեգրելիայի տիրակալ (մթավար) Գրիգոլ Դադիանիի հետ, որով վերջինս ընդունում էր Ռուսաստանի անվերապահ հովանավորությունը: Միաժամանակ այդ փաստը համաձայնեցվեց նաև թուրքական կողմի հետ: Դադիանին պատրաստվում էր հնազանդվելու Մեգրելիա ուղարկվելիք ռուսական իշխանության ներկայացուցիչների կարգադրություններին և անհրաժեշտության դեպքում զինված ուժերով հանդես գալու ռուսական կողմի հետ դաշինքի համաձայն: Գ. Դադիանին երաշխիքներ էր ստանում իր ժառանգական իշխանությունը պահպանելու վերաբերյալ, ինչը նրան պետք է ապահովագրեր Սողոմոն Բ–ի կողմից սպառնալիքներից: Այսպիսով՝ Մեգրելիան, ստանալով Ռուսաստանի դիվանագիտական ու դրամական օգնությունը, դարձավ հզոր հենարան Իմերեթի դեմ պայքարը հաջող կազմակերպելու գործում: Մեգրելիան փաստորեն իր ներքին ինքնավարությունը պահպանելու պայմանով ընդունել էր Ռուսաստանի հպատակությունը: Առանց ռուսական մեծաքանակ զորքերի առկայության՝ Ռուսաստանի ենթակայության ներքո գործելու Արևելյան Վրաստանի իշխանությունների սկզբնական համաձայնությունը կարելի էր հաղթանակ որակել ռուսական կողմի համար, քանի որ վերջինս կարող էր ազատվել ռազմական ծախսերի մի կարևոր բեռից:

Մեգրելիայի իշխանության հետ կնքված համաձայնագիրը Ռուսաստանի կողմից Արևմտյան Վրաստանում իր ներկայությունը հաստատելու առաջին քայլն էր: Այդ պայմանագրից հետո Ռուսաստանի հարաբերությունները Իմերեթի թագավորի հետ դարձան ավելի կտրուկ: Միաժամանակ ռուսական գործակալները լուրեր էին տարածում, թե Իմերեթի Սողոմոն թագավորը պատրաստվում է ռուսների դեմ պատերազմական գործողություններ սկսելու:

1804 թ. Հունվարին՝ Գանձակը գրավելուց հետո, Պ. Ցիցիանովը սկսեց նախապատրաստվել Իմերեթ ներխուժելուն: Բայց մինչ այդ նա մեկ անգամ ևս փորձեց՝ խաղաղ կերպով համոզել Սողոմոնին հնազանդվել: Այդ նպատակով կազմակերպվեց անգամ անձնական հանդիպում, սակայն ընդհանուր հայտարարի չգալով՝ Ցիցիանովը բաժանման ժամանակ հայտարարեց, թե «իրենց հաջորդ հանդիպումը կլինի ռազմի դաշտում, մերկացված սրերով»:

1804 թ. ապրիլի 20–ին ռուսական զորքերը մտան Իմերեթ և Գուրիա: Ապրիլի 25–ին ռուսները Սողոմոնի հետ կնքեցին պայմանագիր, որով Ռուսաստանը Իմերեթի թագավորության նկատմամբ սահմանում էր իր ռազմաքաղաքական իշխանությունը: Սակայն ի տարբերություն Քարթլի–Կախեթական թագավորության՝ Ռուսաստանը Իմերեթի համար պահպանում էր նրա ներքին ինքնավարությունը: Դրա պատճառն այն էր, որ Ռուսաստանն այդ ժամանակ դեռևս ի վիճակի չէր անմիջականորեն նվաճելու ողջ Արևմտյան Վրաստանը: Բացի այդ՝ Սողոմոն Բ–ն ոչ մի կերպ չէր ցանկանում հաշտվել իր գահի և անկախության կորստի մտքի հետ: Նա Ռուսաստանի հետ հարաբերություններն ընդունում էր միայն այն պայմաններով, որոնք նշված էին 1783 թ. Գեորգիևսկի պայմանագրում: Մասնավորապես նա հա-

մաձայն էր ենթարկվել ռուսական կայսրին միայն արտաքին քաղաքականության հարցերում:

Ինչ վերաբերում է Գուրիայի իշխանությանը, ապա այն ռուսների հետ 1871 թ. կնքված պայմանագրով ընդունում էր Ռուսաստանի հպատակությունը:

Ռուսաստանի նվաճումները Վրաստանում և Այսրկովկասում ծայրաստիճան սրեցին հարաբերությունները Իրանի և Օսմանյան կայսրության հետ: Անգլո–ֆրանսիական դիվանագիտությունը ըստ ամենայնի խրախուսում և հրահրում էր այդ պետություններին պատերազմ սկսելու Ռուսաստանի դեմ: Ռուս–թուրքական պատերազմը (1806–1812) նոր իրավիճակ ստեղծեց նաև Արևմտյան Վրաստանում: Պատերազմող կողմերի միջև ռազմական գործողությունները տեղի էին ունենում սևծովյան մեծափնյա ամրոցների շրջանում, ինչը հնարավորություն էր ընձեռելու տիրապետություն հաստատելու Արևմտյան Վրաստանի նկատմամբ:

1809 թ. ռուսները գրավեցին Փոթին, որից հետո ձեռնամուխ եղան Իմերեթի հարցի «կարգավորման» խնդրին: Ռուսական իշխանություններին հայտնի էր դարձել, որ օգտվելով ռուս–թուրքական պատերազմում իրենց դժվարություններից՝ Սողոմոն Բ–ն ցանկանում է վերանայել 1804 թ. իր կնքած պայմանագիրը ռուսների հետ: Ուստի որոշվեց Իմերեթի կատարյալ հնազանդեցումն իրագործել ռազմական ճանապարհով: Վրաստանի գլխավոր հրամանատար նշանակված գեներալ Տորմասովը ձեռնամուխ եղավ ակտիվ գործողությունների: Անտեսելով հպատակության վերաբերյալ գեներալ Ցիցիանովի և Սողոմոն Բ–ի միջև 1804 թ. կնքված պայմանագիրը՝ Տորմասովը ռազմական գործողություններ սկսեց Իմերեթի դեմ:

Սողոմոնի ավատական աշխարհազորը ի վիճակի չեղավ լուրջ դիմադրություն ցույց տալու ռուսական կանոնավոր զորքերին և ստիպված էր զենքը ցած դնել: 1810 թ. մարտին Իմերեթն ամբողջապես ռազմակալման ենթարկվեց ռուսական զորքերի կողմից: Տորմասովը գահազրկեց Սողոմոնին, որն ապաստանեց վերին Իմերեթի լեռներում և պահանջում էր ռուսական զորքերը դուրս բերել Քութայիսից: Տորմասովը բանակցությունների պատրվակով Սողոմոնին հրավիրեց Թիֆլիս, ձերբակալեց նրան և որոշեց ուղարկել Պետերբուրգ: Սակայն Սողոմոնին հաջողվեց փախչել բանտից և ապաստան գտնել Ախալցխայի փաշայությունում: Այդ օրվանից սկսած՝ նա բացահայտ պայքարի մեջ մտավ Ռուսական կայսրության հետ, իսկ 1810 թ. գլխավորեց Իմերեթում սկսված ապստամբությունը: Անհաջողություն կրելով ռուսական տիրապետության դեմ մղած պայքարում՝ Սողոմոնն ի վերջո հեռացավ Տրապիզոն, որտեղ և 1815 թ. կնքեց իր մահկանացուն:

Այսպիսով՝ Իմերեթը վերջնականապես միացվեց Ռուսաստանին: Ցարական կառավարությունը վերացրեց Իմերեթի թագավորությունը և երկրում հաստատեց իր վարչակարգը: 1810 թ. ռուսական հպատակություն ընդունեց նաև Աբխազիան: Սվանեթը ռուսական տիրապետության տակ անցավ միայն 1833 թ.:

Այսպիսով՝ վրացական ավատական պետության քաղաքական տրոհումից հետո՝ 300 տարի անց, Արևելյան և Արևմտյան Վրաստանը կրկին միավորվեցին՝ սակայն Ռուսական կայսրության տիրապետության ներքո: Ռուսներն Այսրկովկասում

ելք ձեռք բերեցին դեպի ծով: Հիմնավորվելով Սև ծովի արևելյան ափերին՝ նրանք պատրաստվում էին թուրքական զորամասերը վռնդելու Արևմտյան Վրաստանի առափնյա գոտուց և ավարտելու ողջ Վրաստանի միացումը իրենց կայսրությանը:

1806–1812 թթ. ռուս–թուրքական պատերազմի միջնամասում ռուսական զորքերը 1809 թ. գրավեցին Անապան և Փոթին, 1810 թ.՝ Սուխումը (Սոխում–կալե) և Ախալքալաքը, 1811 թ. թուրքերը դուրս մղվեցին Ախալցխայից: Սակայն 1812 թ. Թուրքիայի հետ կնքված Բուխարեստի պայմանագրով Ռուսաստանին հաջողվեց պահել հիշյալ քաղաքներից միայն Սուխումը, մյուսները կրկին անցան Օսմանյան կայսրությանը: 1828–1829 թթ. Ռուսական կայսրության կազմի մեջ մտավ Ախալցխայի շրջանը: Ավելի ուշ՝ 1830 թ., Վրաստանին միացվեց Ջարո–Բելոքանը (Սաինգիլոն), որը Վրաստանից անջատվել էր դեռևս XVIII դ. 20–ական թթ.: Աջարիան և Արդվինը ռուսներին ենթակա Վրաստանին միացվեցին միայն 1878 թ.:

1856 թվականից սկսած՝ ցարական զորքերը հարձակողական մարտեր էին մղում Չեչնիայի և Դաղստանի խորքերում: Կովկասյան լեռնականների առաջնորդ Շամիլի տիրույթներն աստիճանաբար կրճատվում էին: 1859 թ. Շամիլի վերջին հանգրվան Վեդենը գրավելով՝ ռուսներն ավարտեցին լեռնականներին հնազանդեցնելու կեսդարյա պատերազմը: Կովկասյան պատերազմները վերջնականապես ավարտվեցին միայն 1864 թ.: Լեռնականների հնազանդեցումը նշանավորեց Կովկասում ցարական Ռուսաստանի կատարյալ քաղաքական տիրապետության հաստատումը:

Այսպիսով՝ XIX դ. առաջին կեսին Իրանի և Թուրքիայի դեմ հաջող պատերազմներով Ռուսաստանը ամուր հիմնավորվեց Հարավային Կովկասում ու ձեռք բերեց իր համար ձեռնտու և շահական ռազմավարական սահմաններ: Այդ պատերազմների հետևանքով նրան ենթակա Վրաստանը համարյա ամբողջությամբ վերականգնվեց իր նախկին սահմաններում: Անջատողականությունը, որը ծաղկում էր Վրաստանի ավատական մասնատվածության շրջանում, վերջնականապես վերացված էր: Դադարել էին ներքին երկպառակությունները, վերջ էր տրված երկրի քաղաքական ու տնտեսական տրոհվածությանը:

Տևական պատերազմների և ներքին անկայունության պատճառով երկիրը հյուծվել և ուժասպառ էր եղել: 1811 թ. սկսվեց սով, որին ուղեկցեց նաև ժանտախտի համաճարակը: Ի հավելումն դրանց՝ տարերային աղետները, հատկապես ջրհեղեղը Արևմտյան Վրաստանի բնակչության վիճակը դարձրին օրհասական: Երկրամասի բնակչության մեկ երրորդ մասը (իսկ Իմերեթի բնակչության համարյա կեսը) ոչնչացավ, գյուղերը դարձել էին ամայի: Շատերը լքում էին հարազատ վայրերը և փախչում Արևելյան Վրաստան կամ Թուրքիա: Աղետներից զերծ չմնաց նաև Արևելյան Վրաստանը: Քարթլիում և Կախեթում ևս ժանտախտը հնձեց մեծ թվով մարդկանց: Համատարած սովի պայմաններում պարենհարկի վճարման պարտավորությունը մնում էր ուժի մեջ:

Այդ ամենի հետևանքով բնակչության դժգոհությունը գնալով ահագնանում էր: Հասարակ ժողովրդից բացի՝ դժգոհություն էր դրսևորում նաև ավատական դասը,

որը երազում էր վերականգնել Բագրատունիների գահը, դրանով նաև իր հին արտոնությունները: Համընդհանուր դժգոհության այդ ենթահողի վրա 1811 թ. բռնկվեց ապստամբություն, որն ընդունեց զանգվածային բնույթ: Շարժումը տեղափոխվեց նաև Քարթլիի լեռնային շրջանները: Արյունահեղ մարտերը խլում էին մեծ թվով մարդկանց կյանքեր: Կախեթի իշխաններն ու ազնվականությունը չհապաղեցին օգտվել շարժումից: Անմիջապես Իրանից Կախեթ վերադարձավ արքայազն Ալեքսանդրը, որը փորձեց ապստամբությանը հաղորդել վրացական թագավորության և Բագրատունիների հարստության վերականգնմանն ուղղված պայքարի բնույթ:

1813 թ. սկզբին ցարական զորքերը գեներալ Օրբելիանիի հրամանատարությամբ վերջնականապես ճնշեցին Կախեթի ապստամբությունը: Հաշվեհարդարը շարժման մասնակիցների հետ դաժան էր: Թեև ապստամբությունը ճնշելուց հետո ցարական վարչությունը հարկադրված էր ուշադրություն դարձնել զինվորական և քաղաքացիական իշխանությունների աղաղակող կամայականությունների ու չարաշահումների վրա և որոշ չափով թուլացնել վարչական մամլիչի ճնշումը, սակայն դրանով հանդերձ՝ դժգոհության բուն պատճառները մնում էին ուժի մեջ:

Դեռևս 1811 թ. հունիսի 30–ի հրամանագրով ցարիզմը վերացրեց վրացական հոգևոր կառույցի ինքնուրույնությունը (ավտոկեֆալիան): Այլ կերպ ասած՝ այդ «ռեֆորմով» վերացվեց Քարթլիի կաթողիկոսի իշխանությունը, և վրաց եկեղեցին զրկվեց ինքնակառավարման իրավունքից: Քարթլի–Կախեթի թագավորության քաղաքական անկախության վերացումից և Վրաստանը Ռուսական կայսրության հասարակ նահանգի վերածումից հետո վրաց եկեղեցին այլևս չէր կարող նախկինի պես մնալ ինքնուրույն, և կաթողիկոսի փոխարեն նրա գլուխ նշանակվեց էկզարխը: Նմանատիպ եկեղեցական ռեֆորմ կատարվեց նաև Արևմտյան Վրաստանում: Այդ բոլորի հետևանքով վրաց եկեղեցին դրվեց Ռուսաստանի եկեղեցական Սինոդի ենթակայության տակ և այդուհետև գործելու էր հօգուտ Ռուսաստանի շահերի: Նշանակալիորեն կրճատվեց սպիտակ և սև հոգևորականության թիվը: Մեծ թվով եկեղեցապատկան գյուղացիներ վերածվեցին պետական գյուղացիների: Այդ նորամուծությունների ու փոփոխությունների նպատակն էր Վրաստանի հոգևորականությանը զրկել ինքնուրույն տնտեսական հիմքից և նրանց վերածել ցարիզմի հնազանդ չինովնիկների: Վրաց ուղղափառ եկեղեցու գույքը դառնում էր պետական գանձարանի սեփականությունը, իսկ նրա սպասավորներն այդուհետև ստանալու էին աշխատավարձ: 1817 թ. ռուսաստանյան սինոդի կողմից նշանակված Վրաստանի երկրորդ էկզարխը՝ Ֆեոֆիլակտը, արգելեց Թիֆլիսի Սիոնի տաճարում վրաց լեզվի օգտագործումը շաբաթը երեք օր:

1816 թ. Վրաստանում կառավարչապետի և կովկասյան հատուկ զորակազմի գլխավոր հրամանատարի պաշտոնում նշանակվեց գեներալ Ա. Պ. Երմոլովը (1816–1826): Նա ղեկավարելու էր Կովկասի ինչպես ռազմական, այնպես էլ քաղաքացիական իշխանությունը: Երմոլովը Կովկասում և Վրաստանում համառ հետևողականությամբ և կտրուկ միջոցներով իրականացնում էր երկրամասը յուրացնելու

և հնազանդության մեջ պահելու քաղաքականություն: Նա համոզված էր, որ դաժան հալածանքների միջոցով հնարավոր է Կովկասի արագ հնազանդեցումը: Սակայն Կովկասում նրա ավելի քան տասնամյա տիրապետության շրջանը երկրամասին խաղաղություն չբերեց: Ամենուրեք տեղի էին ունենում ընդվզումներ, ապստամբություններ ու խռովություններ:

Գլխավորապես զբաղված լինելով նվաճումներով և Կովկասի ժողովուրդների հնազանդեցման գործով՝ Երմոլովը քիչ ուշադրություն էր դարձնում Վրաստանի տնտեսական զարգացման հարցերին: Նրա օրոք սկսվեց նաև Վրաստանի բնակեցումը ռուս վերաբնակիչներով: Այդ նպատակով տարբեր վայրերում ստեղծվում էին զինվորական բնակավայրեր:

Արևելյան Վրաստանի օրինակով եկեղեցական–ավատական կազմակերպության վերափոխություններ կատարվեցին նաև Արևմտյան Վրաստանում: Դրանց իրագործումը Իմերեթում սկսվեց 1819 թ. հունիսին: Այն անմիջապես առաջացրեց ավատատերերի և գյուղացիության բուռն դժգոհությունը:

Արևմտյան Վրաստանում հարկային նոր քաղաքականության արմատավորումը բնակչության անվճարունակության պայմաններում սկսեց դժգոհությունների խորացման պատճառ դառնալ: Դժգոհություններն առավել սրվեցին, երբ իշխանությունները փորձեցին գանձումները մեծացնել եկեղեցական ռեֆորմի միջոցով, ինչը հետապնդում էր երկու նպատակ՝ եկեղեցական հարկերն ուղղել դեպի պետական գանձարան և դրանով շահել բնակչության հավանությունն ու պաշտպանությունը: Սակայն եկեղեցուն վճարվող բնամթերային հարկի փոխարեն դրամական հարկ մտցնելը հանդիպեց բնակչության դիմադրությանը: Դժգոհ էր նաև եկեղեցականների ստորին խավը, որը թեև ազատվում էր ճորտային կախվածությունից, սակայն եկեղեցական հաստիքների կրճատման պատճառով դուրս էր մնում ծառայությունից: Դժգոհ էր բարձրաստիճան հոգևորականությունը, որը զրկվում էր եկեղեցական լայնածավալ կալվածքները պետականացնելուց հետո հօգուտ եկեղեցու այդ կալվածքներից ստացվող մուտքերը վերահսկելուց (հոգևորականության համար նշանակվում էր պաշտոնավարման վարձատրություն): Երկակի դիրքորոշում էին որդեգրել Ծերեթելիների ու Աբաշիձեների խոշոր իշխանական տները, որոնք զրկվել էին իրենց նախկին արտոնություններից: Ըստ էության, Արևելյան Վրաստանում իրականացվող և բնակչության բոլոր խավերի մեջ դժգոհություն հարուցած եկեղեցական ռեֆորմի կիրառման փորձը Արևմտյան Վրաստանում դարձավ 1819–1820 թթ. ապստամբության առիթներից մեկը:

Ապստամբությունը սկսվեց 1819 թ. հունիսին, երբ գործարկվեց եկեղեցական ունեցվածքի հաշվառման գործընթացը: Բնակչությունը պահանջում էր Իմերեթից դուրս քշել Վրաստանի էկզարխ Ռուսանովին: Ապստամբները սկզբնական շրջանում հաջողություն ունեցան և ստիպեցին դադարեցնել եկեղեցական ունեցվածքի հաշվառումը: Սակայն բնակչության կողմից իշխանությունների նկատմամբ անհնազանդությունը շուտով կրկին շարունակվեց, իսկ իշխանությունները չէին շտապում լայն ճակատով հարձակում ձեռնարկել՝ սպասելով ձմռան մոտենալուն, երբ

տերևաթափից հետո ապստամբները կզրկվեին անտառներում թաքնվելու հնարավորությունից: Ապստամբությունը շարունակվեց նաև 1820 թ. և առանձնապես սուր բնույթ ստացավ Գուրիայում: 1820 թ. ապրիլին ընդհարման ժամանակ ապստամբները սպանեցին Իմերեթի նորանշանակ կառավարիչ զնդապետ Պուզիրևսկուն: Նրա հաջորդը ևս փորձեց գրավել ապստամբած Շեմոքմեդի ամրոցը և պատժել գուրիացիներին, սակայն պարտություն կրելով՝ վերադարձավ Օզուրգեթ:

Գուրիացիները գրավեցին Չոխատաուրին, այնուհետև անցան Մեգրելիա: Ապստամբությունը սպառնում էր ծավալվել ավելի մեծ տարածքներում: Գեներալ Երմոլովը Իմերեթ և Գուրիա ուղարկեց նոր թարմ ուժեր՝ գեներալ Վելյամինովի հրամանատարությամբ: 1820 թ. հուլիսին կառավարական զորքերին հաջողվեց արյունահեղ ճակատամարտից հետո գրավել Շեմոքմեդի ամրոցը: Կայսերական զորքերը կարողացան ճնշել ապստամբությունը և ավերել ու հրդեհել ապստամբությանը հարած բնակավայրերը: Ապստամբներից շատերը ձերբակալվեցին և աքսորվեցին: Սակայն իշխանությունները ստիպված էին առժամանակ դադարեցնել ռեֆորմի իրականացումը Արևմտյան Վրաստանում:

3. ՎՐԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ XIX ԴԱՐԻ 20–30–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Վրաստանի տնտեսական կյանքը XIX դ. առաջին տասնամյակներին ընթանում էր ներքին և արտաքին բարդությունների պայմաններում: Այսրկովկասում ցարական Ռուսաստանի տիրապետության կապակցությամբ Վրաստանի սահմանների մերձակայքում համարյա անընդմեջ տեղի էին ունենում պատերազմներ, ներքին հուզումներ և տարերային աղետներ, որոնք հսկայական վնաս էին հասցնում երկրի տնտեսական կյանքին: Ավատական–ճորտատիրական հարաբերությունների, ինչպես նաև ներքին ու արտաքին բարդությունների հետևանքով գյուղատնտեսությունը բնականոն ձևով չէր կարող զարգանալ: Կալվածատեր–ճորտատերերի ճնշումը, ռուսական չինովնիկների կամայականությունները, մթերային ու տրանսպորտային հարկերն ու տուրքերը, դաղստանյան ավատատերերի ելուզակային ջոկատների անվերջ ասպատակությունները, գրեթե չընդհատվող պատերազմների պատճառած ծանր բեռն ուղղակի անտանելի էր դարձնում վրաց գյուղացիության կյանքը: Բնամթերային տնտեսության տիրապետության պայմաններում գյուղացիները գյուղատնտեսական մթերքներ էին արտադրում ինչպես իրենց կարիքների, այնպես էլ ճորտատեր կալվածատիրոջ կարիքների համար: Շուկա էին հանվում գլխավորապես արտադրանքի պատահական ավելցուկները:

Վրաստանում տեղակայված ռուսական զորքերի կարիքները չէին կարող բավարարվել հացի այն քանակով, որ հնուց անտի գյուղացիները հանձնում էին Քարթլի–Կախեթի թագավորին՝ որպես բնամթերային հարկ: Բացի այդ՝ նոր կառավարությունը հացն ընդունում էր շուկայականից շատ ավելի ցածր գնով: Հենց գյուղացիներին չէր բավականացնում իրենց հացը, ուստի նրանք չէին կարող այն հանձնել

ցածր գներով: Ռուսական զորքերի թիվը Վրաստանում գնալով աճում էր, մինչդեռ հացի արտադրությունը չէր ավելանում, և հաց արտադրող գյուղացուն չէր մնում իր գոյության համար անհրաժեշտ նվազագույնը:

XIX դարի առաջին երեսնամյակին անհրաժեշտ զարգացում չստացավ ո՛չ խաղողագործությունը և ո՛չ էլ գինեգործությունը: Գինեգործության հիմնական շրջանը Կախեթն էր, որի գինիները հնուց ի վեր ներքին և արտաքին առևտրի առարկա էին: Սակայն գինու, ինչպես նաև հացի գները որոշում էին գնորդները, որոնց աջակցում էր կառավարությունը:

Արդյունաբերության բնագավառում ևս չէր նկատվում առաջընթաց: Նոր կառավարությանը գլխավորապես հետաքրքրում էին գյուղատնտեսական մթերքներն ու հումքը, որոնք անհրաժեշտ էին Ռուսաստանի ֆաբրիկաների ու գործարանների համար:

Նշված շրջանում Վրաստանում տիրապետող էր արհեստավորական արտադրությունը: Վրացի արհեստավորները շարունակում էին ավանդական ապրանքների՝ կտորեղենի, զենքի, պղնձյա ամանեղենի և այլն արտադրությունը: Սակայն XIX դ. 20–ական թվականներին էժանագին արդյունաբերական ապրանքների լայն ներմուծումը Վրաստան առաջացրեց արհեստագործական արտադրության առանձին ճյուղերի աստիճանական անկում:

XIX դ. 30–40–ական թվականներին եվրոպական և հայ դրամատերերի կողմից հիմնադրվում են ոչ մեծ արդյունաբերական ձեռնարկություններ: Արևմտյան Վրաստանում սկսում են գործել մետաքսագործական ֆաբրիկաներ: 1852 թ. Թիֆլիսում ավստրիացի Ի. Շտյուսսեն կառուցում է մեխանիկական գործարան, հայազգի Զավրյանը (Զավրիև) հիմնադրում է պղնձե ամանեղենի արտադրության գործարան, որտեղ աշխատում էին ազատ վարձու վարպետներ և բանվորներ: Մեկ այլ հայազգի ձեռնարկատեր՝ գնդապետ Ղորղանյանը (Կորգանով), դարձյալ Թիֆլիսում բացում է չուգունի ձուլման գործարան: XIX դ. 30–ական թթ. վերջին Թիֆլիսում Յա. Զուբալաշվիլու և իր գործընկերների կողմից կառուցվում է շաքարի «գործարան», որտեղ աշխատում էին 60 ազատ վարձու վարպետներ ու բանվորներ: Սակայն չդիմանալով շաքար արտադրող ռուսական գործարանների մրցակցությանը՝ այդ գործարանը շուտով դադարեցնում է իր գործունեությունը:

XIX դ. 30–50–ական թվականներին Վրաստանում գործում էին օճառի, կաշվի, բամբակի, ծխախոտի և այլն արտադրության մի շարք ձեռնարկություններ: Սակայն այդ ձեռնարկությունների մի մասը կապիտալի պակասի, թույլ տեխնիկական հագեցվածության, ճանապարհների բացակայության, որակյալ բանվորական ուժ չունենալու, դրսի մրցակցության և այլ պատճառներով ունենում էր շատ կարճ կյանք:

Մինչռեֆորմյան Վրաստանում առաջին քայլերը կատարվեցին նաև մանգանի, քարածխի և այլն հանույթի ուղղությամբ:

Չնայած Վրաստանի տնտեսության մեջ նկատվող տարբեր բնույթի դժվարություններին՝ XIX դ. 20–ական թթ. սկսած Ռուսաստանի և Վրաստանի միջև նկատ-

վում էր արտադրական փորձի արդյունավետ փոխանակում: Այդ հանգամանքը դրական ազդեցություն ունեցավ երկրի տնտեսական առաջընթացի համար: Զարգացման համեմատաբար դրական միտումներ էին նկատվում առևտրի բնագավառում: Նոր կառավարությունն իրականացրեց մի շարք միջոցառումներ առևտրի աշխուժացման համար: Հատկապես մեծ ուշադրություն էր դարձվում ճանապարհների բարելավմանը: Վերացվեցին ավատական մաքսատուրքերը, առանձնացվեցին հատուկ զորամիավորումներ առևտրական–քարավանային ուղիներով երթևեկությունն անվտանգ դարձնելու համար: 1822 թ. կտրուկ նվազեցվեցին արտասահմանյան ապրանքների ներմուծման մաքսատուրքերը: Դրանից հետո Վրաստանը հեղեղվեց էժան արտասահմանյան ապրանքներով: Վերստին վերականգնվեց Վրաստանի միջով առևտուրը Եվրոպայի և Արևելքի միջև: Կարևորագույն նշանակություն ձեռք բերեց սևծովյան ոչ մեծ՝ Կուլևի նավահանգիստը: Ծովով այստեղ բերվող ապրանքներն ուղարկվում էին Թիֆլիս–Բաքու ուղղությամբ, ապա առաքվում դեպի Արևելք:

XIX դ. 20–ական թթ. նկատվում էր վրացական քաղաքների աշխուժացում: Թիֆլիսը վերածվեց Կովկասի կենտրոնի: 1826 թ. Թիֆլիսի բնակչության թիվը հասավ XVIII դ. 80–ական թվականների մակարդակին (20 857 մարդ): Եթե Թիֆլիսի, Գորիի, Թելավի, Սղնախի և Դուշեթի բնակչության ընդհանուր թիվը 1835 թ. կազմում էր 36 170 մարդ, ապա 1865 թ. այն աճել և հասել էր մինչև 92 336 մարդու: 1865 թ. Վրաստանի քաղաքներում ապրում էր 120 941 մարդ: Արևելյան Վրաստանի քաղաքային բնակչությունը, որը գյուղական բնակչության համեմատ աճում էր համարյա երկու անգամ ավելի արագ, 1865 թ. կազմում էր գավառի բնակչության 18,8 տոկոսը:

Քութայիսի գավառի քաղաքներում (Քութայիս, Ախալցխա, Ախալքալաք, Սուխում, Փոթի) ապրում էր մինչև 30 հազար մարդ, այսինքն՝ գավառի բնակչության 4,3 տոկոսը:

Թիֆլիսից հետո բնակչության թվով ամենախոշոր քաղաքն Ախալցխան էր, որտեղ ճորտատիրական իրավունքի վերացման վերաբերյալ ռեֆորմից առաջ բնակվում էր 15 հազար մարդ: Ախալցխայի հիմնական տնտեսական նշանակությունը կարևորվում էր նրանով, որ այն Թուրքիայի հետ առևտրի տարանցիկ կենտրոն էր: Նրա վրայով իրականացվում էր աշխույժ առևտրափոխանակություն Էրզրումի, Կարսի, Կոստանդնուպոլսի, Տրապիզոնի, Աջարիայի և այլ վայրերի հետ: Նկատվում էր նաև գավառային կենտրոնների՝ Քութայիս, Գորի, Թելավ, Սղնախ և այլ քաղաքների աճ:

Ռուսական տիրապետության պայմաններում վերացվեցին վրացական թագավորի իշխանության շրջանում գոյություն ունեցած վարչական այն միավորները, որոնք կոչվում էին թավադություններ (սաթավադո) և օժտված էին որոշակի քաղաքական իրավունքներով: Լինելով կենտրոնացված պետություն՝ Ռուսաստանը չէր կարող հաշտվել թավադների գոյության հետ, որոնք նախկինում վրացական թագավորի արքունիքում գրավում էին բարձր պաշտոններ և տնօրինում իրենց տրա-

մադրության տակ եղած ավատական կալվածքներում ապրող բնակչության ճակատագիրը: Այսուհետև թավադների քաղաքական–վարչական գործառույթները ժողովրդի կառավարման բնագավառում անցնում էին ռուսական վարչությանը: Ինքնագլուխ թավադների անառիկ ամրոցները և բերդերը կորցնում էին իրենց նախկին նշանակությունը:

Նոր կառավարությունը պաշտպանում էր լոկ ավատատերերի սոցիալական ճորտատիրական իրավունքները՝ ձգտելով Վրաստանում սահմանելու ճիշտ այնպիսի ճորտատիրական կարգեր, ինչպիսիք գոյություն ունեին Ռուսաստանում: Վրացական թավադները, զրկվելով քաղաքական իրավունքներից, վերածվում էին սովորական կալվածատերերի: 1832 թ. հրապարակվեց հրամանագիր այն մասին, որ սեփական գյուղացիներ ունենալու և ձեռք բերելու իրավունք ունեն միայն ազնվականները: Քաղաքացիները՝ մոքալաքները, որոնք արդեն ձեռք էին բերել ճորտ գյուղացիներ, սկսած 1833 թվականից պարտավոր էին չորս տարվա ընթացքում նրանց կա՛մ վաճառել ազնվականներին, կա՛մ էլ պարգևել ազատություն՝ կամավոր համաձայնության պայմաններով:

Սակայն թավադական համակարգի վերջնական վերացումը և ճորտատիրական այնպիսի իրավակարգի հաստատումը, ինչպիսին գոյություն ուներ Ռուսաստանում, չէր կարող միանգամից իրագործվել: Ավատատիրական տունը՝ սաթավադոն, բարդ կառույց էր: Նրա մեծաթիվ անդամները կամ սաթավադոների տոհմի ներկայացուցիչներն իրենց տրամադրության տակ ունեին անբաժանելի սեփականություն: Թավադներից կախման մեջ էին ազնավուրները, որոնք արտոնյալ խավ էին թավադների և ճորտ գյուղացիների միջև: Թավադները սկզբում կորցրին կառավարման ժառանգական արտոնությունները, իսկ ավելի ուշ՝ նաև ազնավուրներին տիրելու իրավունքը: Այդ գործընթացը շարունակվեց XIX դարի ողջ առաջին կեսի ընթացքում: Անկասկած, Վրաստանում նշված գործընթացը սոցիալական առաջընթացի ցուցանիշ էր: Այն մոտեցնում էր նոր հասարակական կարգի ծնունդը:

Վրաստանի միացումը Ռուսաստանին բնակչության մեջ մեծ սպասելիքներ էր արթնացրել: Դրանցից գլխավորը արտաքին արշավանքներից բնակչության անվտանգության ապահովումն էր և տնտեսական բարգավաճման ակնկալիքը: Սակայն բնակչության սպասելիքները XIX դ. առաջին երեսնամյակին մասամբ չարդարացան: Նոր իշխանությունները ոչ միայն չսահմանափակեցին տերերի կողմից կատարվող կեղեքումը, այլև դրանց ավելացան նոր իշխանավորների կողմից ճնշումները: Նախկին պարտավորություններին ավելացան նորերը, և բնակչության սոցիալական կեղեքումն ավելի ուժեղացավ: XIX դ. առաջին քառորդի սոցիալական–քաղաքական ելույթներն ուղղված էին ոչ միայն և ոչ այնքան երկրի անկախությունը վերականգնելու նպատակին, որքան սոցիալական ու տնտեսական կեղեքումից ազատագրվելու խնդրին: Վրաց ավատատերերն անգամ իրենց ելույթները պայմանավորում էին ոչ թե Ռուսաստանի տիրապետությունը մերժելու հանգամանքով, այլ պահպանելու 1783 թ. Գեորգիևսկյան դաշնագրի դրույթները:

Պ. Ցիցիանովի սպանությունից հետո Պետերբուրգում քննարկվում էր Կովկասի նոր կառավարչապետի ընտրությունը: Թեկնածուների թվում էր նաև ռուսական բանակի գեներալ Պյոտր Բագրատիոնին: Ցանկանալով նախօրոք ճշտել վրաց ազնվականության դիրքորոշումը և պահանջները՝ նա Վրաստան ուղարկեց իր եղբորը՝ Ռոմանին, և նրա հետ նամակներ գրեց առավել ազդեցիկ վրաց իշխաններին: Ռոմանի ժամանումը վրաց ազնվականության մեջ իրարանցում առաջացրեց, քանի որ այդ ժամանակ պետք է տեղի ունենար ազնվականության առաջնորդի ընտրությունը: Քաղաքում հավաքվել էին Քարթլիի և Կախեթի ազնվականության ներկայացուցիչները: Ցարական իշխանություններից դժգոհ իշխանների խումբը հավաքվեց գաղտնի խորհրդակցության՝ քննարկելու Պ. Բագրատիոնիի նամակները: Գաղտնի քննարկումների հանգամանքը վրդովեցրեց ռուսական գահին հավատարիմ ազնվականներին, և գործը կարող էր հասնել ձեռնամարտի: Ռուսական տիրապետության հակառակորդներն իրենց պահանջները ձևակերպեցին 11 կետով, որոնցով պահանջ էր դրվում վերականգնել վրացական արդարադատությունը, վերականգնել մովրովների ինստիտուտը, վերացնել կապիտան–իսպրավնիկների ինստիտուտը և կալվածատիրական գյուղացիներին հավասարեցնել արքունական գյուղացիության հետ: Պահանջվում էր նաև վրաց ազնվականության իրավունքները հավասարեցնել ռուս ազնվականության իրավունքներին և այլն: Գաղտնի կազմված և իրենց հայրենակցին ուղարկվող այդ փաստաթուղթը վկայում է, որ ռուսական տիրապետությունից դժգոհությունն ու ըմբոստությունը հիմնականում ուղղված էր սոցիալ–քաղաքական խնդիրների լուծմանը:

XIX դ. սկզբներին Վրաստանում սկսել էին գործունեություն ծավալել նաև մարդկանց խմբեր, որոնք ձգտում էին ազատագրելու Վրաստանը և վերականգնելու նրա պետական անկախությունը: Սակայն տարբեր խմբեր այդ գաղափարի գործնական կենսագործման համար տեսնում էին տարբեր ճանապարհներ: Օրինակ՝ խմբավորումներից մեկը, որը գլխավորում էին Ալեքսանդր Ճավճավաձեն և Իվան Աբխազին, կարծում էր, որ դեռևս վաղ է Ռուսաստանից անջատվել և անկախ պետություն ստեղծել, քանի որ Վրաստանի համար դեռևս գոյություն ունի Իրանի և Թուրքիայի կողմից նվաճման սպառնալիքը: Նրանց կարծիքով՝ պահանջվում էր երկար ժամանակ, որպեսզի Ռուսաստանի հպատակության տակ գտնվող Վրաստանը պատրաստ լինի իր անկախությունը վերականգնելուն: Այդպիսի նախապատրաստական, անցողիկ աստիճան նրանք համարում էին ինքնավարությունը: Իսկ մեկ այլ խմբի կարծիքով (Սոլոմոն Դոդաշվիլի, Գրիգոլ Օրբելիանի և այլն) արդեն գոյություն ուներ անկախությունը վերականգնելու բարենպաստ իրավիճակ, ուստի մնում էր վճռական պայքար ծավալել հանուն ազատագրման: Առավել առաջադեմ հայացքներ ունեցող խմբի ներկայացուցիչները չէին պաշտպանում հին թավադական Վրաստանի պետական կարգի վերականգնման գաղափարը: Նրանք երազում էին Վրաստանում ստեղծել հանրապետություն կամ առնվազն սահմանադրական–միապետական պետություն:

Միանգամայն այլ դիրքորոշում էր որդեգրել ավատատերերի բազմամարդ խմբավորումը, որի գաղափարական առաջնորդներն էին Պետերբուրգ արտաքսված վրացական մի խումբ իշխանազուններ: Նրանք իրենց դժգոհությունն էին հայտնում վրաց ազնվականության քաղաքական արտոնությունների կորստի կապակցությամբ, ուստի հանդես էին գալիս ցանկացած գնով «հայրենիքի ազատագրման» պահանջով: Ընդ որում, ազատություն ձեռք բերելը նրանք հասկանում էին որպես Բագրատունիների արքայատան իշխանության և իրենց քաղաքական արտոնությունների վերականգնում:

Հասկանալի է, որ վրացական քաղաքական ընդդիմության գոյության պայմաններում Ռուսական կայսրությունն իր համար սոցիալական ու քաղաքական հենարան էր համարելու վրացական ազնվականության այն հատվածին, որն անվերապահորեն հանդես էր գալիս ռուսասիրական դիրքերից: Այդ ազնվականներին սիրաշահելու նպատակով 1827 թ. ցարական կառավարությունը հրապարակեց հրամանագիր, որով վրացական ազնվականությանը շնորհվում էին այն նույն իրավունքներն ու առավելությունները, որոնցով օժտված էր ռուսական «ազնվականական դասը»:

Ռուս–պարսկական և ռուս–թուրքական պատերազմների շրջանում վրաց հասարակության մեջ շարունակում էին հասունանալ Վրաստանի անկախությունը վերականգնելու հնարավորության մասին գաղափարները: Մտավորականությունը, որի մի մասն իր գաղափարական ձևավորումն ու հասունացումը ձեռք էր բերել հիմնականում Ռուսաստանում և ծանոթ էր ինչպես եվրոպական լուսավորական գաղափարախոսությանը, այնպես էլ դեկաբրիստական շարժմանը, երկար ժամանակ փորձում էր միավորվել սեփական երկրի պետական անկախությունը վերականգնելու համար: Նպատակը կարող էր իրագործվել միայն ապստամբության միջոցով, ինչը պահանջում էր երկարատև նախապատրաստական աշխատանք: Ստեղծվում էին գաղտնի խմբակներ, տեղի էին ունենում գաղտնի քննարկումներ, ընդհանուր դժգոհության պատճառների վերլուծություններ Վրաստանի պառակտված ուժերի միավորման հնարավոր ուղիների շուրջ և այլն: Գաղտնի խմբակի գործունեությունը զգալիորեն ակտիվացավ, երբ Պետերբուրգից Վրաստան վերադարձան երիտասարդ Ս. Դոդաշվիլին, Է. Էրիսթավին, Ռ. Էրիսթավին, Դ. Ջորջաձեն, Վ. Օրբելիանին, Ա. Օրբելիանին և ուրիշներ, որոնք նշանավոր դեր կատարեցին վրաց հասարակական մտքի զարգացման գործում: Այս գործիչներին մտահոգում էր այն իրողությունը, որ վրաց ավատատերերի մի մասը համակերպվել էր ստեղծված իրավիճակին և համագործակցում էր ռուսական իշխանությունների հետ: Դա, ըստ նշված գործիչների, կարող էր վտանգել վրաց ժողովրդի ներկան ու ապագան: Դավադիրները լայն լուսավորական գործունեություն էին ծավալում և ձգտում էին ազնվականության լայն շրջանակներ ընդգրկելու շարժման մեջ՝ կապեր հաստատելով նաև այլ պետությունների հետ: Պետերբուրգի խմբակը գլխավորում էր Դիմիտրի արքայազնը, որի բնակարանը դարձել էր հավաքատեղի: 1826 թ. նման խմբակ ձևավորվեց նաև Մոսկվայում՝ Օքրոպիր արքայազնի գլխավորությամբ: Խմբակներից առավել խոշո-

որը Թիֆլիսում էր: Այդ շարժման մեջ այս կամ այն չափով ընդգրկված էին վրաց մտավորականության համարյա բոլոր առաջավոր ներկայացուցիչները:

1830 թ. Լեհաստանում բռնկված ապստամբությունը մեծ ոգևորությամբ է ընդունվում խմբակների անդամների կողմից: Խմբակները սկսում են արագորեն աճել: Ստեղծվում են նոր խմբակներ Կախեթում, Քարթլիում և Իմերեթում: 1830–1832 թթ. խմբակները գլխավորում էր Ա. Օրբելիանի, Է. Էրիսթավի և Ս. Դոդաշվիլի եռյակը: 1830 թ. Թիֆլիսի խմբակում կազմվում է նաև կազմակերպության կանոնադրությունն ու ծրագիրը: Պահպանվում էին կոնսպիրացիայի բոլոր միջոցները: Խմբակի անդամները ռուսերենից թարգմանում կամ գրում էին հայրենասիրական երկեր: Հայրենիքը, ըստ Փ. Կիկնաձեի, զոհեր է պահանջում: Իսկական հայրենասերը նա է, ով գնում է ինքնազոհության, և ոչ նա, ով պայքարում է անձնական շահերի համար: Վրաց հայրենասերների շրջանում լայն տարածում ունեին ֆրանսիական լուսավորիչների երկերը, նրանց գաղափարները: Լեհաստանում ապստամբության ճնշումը 1831 թ. սեպտեմբերին, որի հաջողության հետ մեծ հույսեր էին կապում վրաց դավադիրները, Թիֆլիսում իշխանությունների կողմից նշվեց թնդանոթների համազարկով: Դավադիրների մի մասը գործը համարեց ձախողված, սակայն առավել կայուն համոզմունքի տեր համառները շարունակեցին գաղտնի աշխատանքներ տանել: Նրանք կազմեցին այսպես կոչված «Առաջին գիշերվա կարգադրություն» փաստաթուղթը, որը նախատեսում էր 1832 թ. դեկտեմբերի 20–ին Թիֆլիսում սկսել բացահայտ ելույթ կառավարության դեմ:

Հույս էր ներշնչում այն հանգամանքը, որ Հյուսիսային Կովկասում իրադրությունը բարդացել էր և գեներալ Ռոզենը զորքով Թիֆլիսից մեկնել էր այնտեղ: Պատերազմը Հյուսիսային Կովկասում երկար ժամանակ չէր դադարում: Դա հարմար ժամանակ էր դիտվում Վրաստանում ելույթի համար: Սակայն Ռոզենին հաջողվեց պարտության մատնել Ղազի–մոլլային և 1832 թ. նոյեմբերի 23–ին զորքի մեծ մասի հետ վերադառնալ Թիֆլիս: Դավադիրները հույսը դնում էին նաև եվրոպական երկրների օժանդակության վրա: Նրանք մտածում էին, որ Ֆրանսիայից կստանան օգնական զորք և դրամ: Ենթադրվում էր հետևյալ զարգացումը. պետք է օգտագործվեր ռուսական բանակի մեկ գունդ՝ «վրաց գրենադերական գունդը», և նրա միջոցով բռնագրավվեր զանձարանը: Դավադրության մեջ մասնակից բոլոր իշխանները պետք է ներկայանային իրենց զորքով: Այդ զորքը (երկու հազար մարդու չափ) պետք է բաժանվեր երկու մասի՝ զինանոցի և բերդի գրավման համար: Այնուհետև ծրագրվում էր կենտրոնական և ծայրամասային շրջաններում ռազմավարական կետերի գրավում, ռուսական զորքի զինաթափում, օտար երկրների հետ կապի հաստատում, վրացական կանոնավոր բանակի ստեղծում և այլն: Նշված ծրագիրը, որում նկատի էին առնված հին ծրագրի փորձը և նոր իրադրությունը, խափանվեց գլխավորապես Լեհաստանում ցարիզմի հաղթանակի պատճառով:

«Առաջին գիշերվա կարգադրությունը» մշակելու գործում մասնակցել էին Դ. Էրիսթավին, Է. Էրիսթավին, Ա. Օրբելիանին, Գ. Էրիսթավին, Ի. Փալավանդիշվիլին և այլք: «Կարգադրության» շարադրանքը սկսվել էր նոյեմբերի 10–ին, որից հետո

այն լրացվում էր, ճշգրտվում և վերջնական ավարտին հասնում 1832 թ. նոյեմբերի 23–ին: «Կարգադրության» կամ ապստամբության ծրագրի համաձայն՝ առաջին հերթին նախատեսվում էր գրավել բերդը և զինաթափել Թբիլիսիում ու նրա շրջակայքում գտնվող զորքը: Դրա համար հատուկ զինված ջոկատներ էին պատրաստում Է. Էրիսթավին, Դ. Օրբելիանին, Վ. Օրբելիանին, Բ. Ամիլախվարին, Գ. Թումանիշվիլին և այլք: Նրանք պետք է գրավեին նաև պարենի պահեստները և ռազմավարական այլ կետեր: Ակտիվ ապստամբները պետք է հավաքվեին «Թաթարական հրապարակում», որտեղ գտնվող ժողովուրդը աստվածամոր պատկերներով դուրս պիտի գային փողոցներ՝ «Կզոհվենք Վրաստանի անկախության համար» կոչերով: Նախատեսված էր բոլոր դիմադրողների, որոնք ընդհանուր շարժմանը չէին մասնակցի, դաժան պատիժ, դավաճանների հետապնդում: «Կարգադրության» համաձայն նախատեսվող պայքարի որոշ մեթոդներ ակնհայտորեն հնացած և ավատատիրական էին: Ապստամբները փորձում էին զանգվածներին խաբելու միջոցով ներգրավել անկախության պայքարին, իբրև թե կառավարությունը վրացիներին զորակոչում է կանոնավոր բանակ, իսկ իշխանները դեմ են դրան, ուստի ժողովուրդը պետք է համախմբվեր իշխանների շուրջը: Նախատեսվում էր կազմակերպել մեծ խնջույքներ, որտեղ կհիավիրվեին զինվորական ու քաղաքացիական կառավարման ներկայացուցիչներ և կոչնչացվեին: Ակնհայտ է, որ դավադիր իշխանների նեղ շրջանը մտածում էր մեկ հարվածով ոչնչացնել ռուսական վարչակազմն ու գրավել իշխանությունը: Նշելի է, որ դավադիրները միշտ չէ, որ համակարծիք էին, նրանց միջև կային նաև տարաձայնություններ:

Ապստամբությունը սկսելու ժամկետները դավադիրները մի քանի անգամ փոփոխեցին՝ 1831 թ. և 1832 թ. ամառ: Այնուհետև ապստամբությունը հետաձգվեց մինչև 1832 թ. երկրորդ կես կամ նոյեմբերի 20, երբ Ռոզենը Հյուսիսային Կովկասում էր: Վերջապես ժամկետ սահմանվեց դեկտեմբերի 6–ը, իսկ հետո՝ դեկտեմբերի 20–ը: Այս ամսաթվերը կապում էին ազնվականական ժողովի հրավիրման հետ, որը իշխանությունները նշանակել էին դեկտեմբերի 6–ին, իսկ հետո փոխել դեկտեմբերի 20–ին: Դեկտեմբերի սկզբին Բորչալու գավառում լուրեր տարածվեցին «դավադիրների» հետ Ալեքսանդր արքայազնի կապի վերաբերյալ: Դավադիրներն անմիջապես տեղեկացան այդ մասին և շտապում էին սկսել, որի համար գրեթե պատրաստ էր ամեն ինչ: Սակայն դրան հաջորդեց ազնվականական ժողովը մինչև դեկտեմբերի 20–ը հետաձգելու որոշումը և դավադիրների գաղտնի կազմակերպությունը չդիմացավ մինչ այդ: Դեկտեմբերի 9–ին իշխան Ի. Փալավանդիշվիլին մատնեց դավադիրներին: Նրանք ձերբակալվեցին, և քննությունը տևեց 1832 թ. դեկտեմբերի 11–ից մինչև 1833 թ. սեպտեմբեր: Դավադիրներին տարբեր ժամկետներով վերաբնակեցրին այլևայլ հեռավոր վայրերում՝ Ֆինլանդիա, Օրենբուրգ, Վյատկա, Տամբով, Պենզա, Վոլոգդա, Լեհաստան և այլն:

1832 թ. գաղտնի կազմակերպության պայքարը XIX դ. 20–30–ական թթ. Վրաստանի հասարակական–քաղաքական կարևոր երևույթներից էր:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՎՐԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ 30–50–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1. ՑԱՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Մինչև XIX դ. 30–ական թվականները ցարական կառավարությունն Այսրկովկասում և Վրաստանում առավելապես զբաղված էր պատերազմներով, արշավանքներով և արտաքին քաղաքական խնդիրների լուծմամբ: Ուստի համեմատաբար քիչ ուշադրություն էր դարձնում երկրամասի համակողմանի յուրացման գործին:

1830–ական թվականներից սկսած, երբ Հարավային Կովկասի միացումը Ռուսական կայսրությանը հիմնականում հասել էր իր ավարտին, և երկրամասի ռազմավարական ու քաղաքական դրությունը դարձել էր բավականաչափ կայուն, հարևան երկրների հետ սահմանները քիչ թե շատ դարձել էին անվտանգ, ցարական կառավարությունը քայլեր է ձեռնարկում Վրաստանի և ամբողջությամբ վերցրած Հարավային Կովկասի յուրացման ու զարգացման ուղղությամբ: Խնդիրն այն էր, որ երկրամասը միացվեր Ռուսաստանին քաղաքացիական ու քաղաքական կապերով մի ամբողջական համակարգի մեջ: Այդ նպատակին հասնելու համար ռուսական իշխանություններին անհրաժեշտ էր Վրաստանում ստեղծել սոցիալական, էթնիկական, առևտրական և այլ բնույթի հենարաններ:

Այդ հարուստ ու բարեբեր երկրամասն անհրաժեշտ էր Ռուսաստանին որպես հումքի աղբյուր, գյուղատնտեսական մթերքների հարուստ շտեմարան, ռուսական արդյունաբերության համար վաճառահանման շուկա, ինչպես նաև հենակետ դեպի Մերձավոր Արևելքի հետագա առաջխաղացման համար: Ընդ որում, Պետերբուրգում այն տեսակետին էին, որ հնարավոր չէ այդ բոլոր կարևորագույն խնդիրները լուծել միայն ռազմական ճանապարհով: Դրանց իրագործումը հնարավոր էր միայն երկրամասը բոլոր առումներով յուրացնելու և այնտեղ ապահով ու կայուն վիճակ ստեղծելու դեպքում: Այդ նպատակով Ռուսաստանի իշխող վերնախավը մշակել էր միջոցառումների մի համալիր ծրագիր, որի մեջ կարևորագույն տեղ էին գրավում երկրամասի կառավարման մարմինների գործունեության բարելավումը, նրա ժողովրդագրական պատկերի փոփոխությունը այլազգի վերաբնակիչների գաղութներ ստեղծելու ճանապարհով և, իհարկե, համատարած ռուսաֆիկացումը:

Նշված ծրագրի գործնական իրականացման նպատակով 1835 թ. բարոն Ռոզենին հանձնարարվեց կազմել նախագիծ–առաջարկներ:

Դեռևս 1817–1819 թթ. գլխավորապես Վրաստանում և մասամբ Արևելյան Այսրկովկասում վերաբնակեցվեցին 500–ից ավելի գերմանացի ընտանիքներ, որոնց հատկացվեցին ընդարձակ հողակտորներ: Գերմանական վերաբնակիչների ներհոսքը շարունակվեց նաև հետագա տարիներին: 1837 թվականից սկսած՝ Վրաստանում ավելանում էր նաև ռուս վերաբնակիչների թիվը: Այդ թվականին հայտնվեցին նաև առաջին զինվորական բնակավայրերը: Դրանք ստեղծվեցին Թիֆլիսի մոտակայքում՝ Ծալկայում, Մանգլիսում, Կոջորում, Ախալցխայի շրջանում և այլն: 1837–1860 թթ. Այսրկովկասում ստեղծվեցին նման 10 բնակավայրեր: 1841 թ. կովկասյան ղեկավարությանն առաջարկվեց պետական ազատ հողերը հատկացնել ստեղծված և ստեղծվելիք զինվորական բնակավայրերին:

Վրաստանի գաղութացումը ռուսական տարրերով իրականացվում էր ոչ միայն զինվորական բնակավայրերի տեսքով: 1830 թ. օրենքի համաձայն՝ Այսրկովկաս և Վրաստան էին ուղարկվում Ռուսական կայսրության պաշտոնական եկեղեցու կողմից հետապնդվող աղանդավորները՝ դուխոբորները, մոլոկանները, շաբաթականները և այլն: Աղանդավորների փոխադրումը նպատակ ուներ լուծելու մի շարք հարցեր: Ռուսաստանում նրանց ներկայությունը սպառնալիք էր աղանդի տարածման առումով, սակայն Վրաստանում, նկատի ունենալով տեղական բնակչության հետ կապի թուլությունը կամ բացակայությունը, նման սպառնալիք չէր կարող լինել: Միաժամանակ, այդ համայնքները իրենց էթնիկ պատկանելության շնորհիվ կարող էին կարևոր հենարան ծառայել իշխանությունների համար: Կար նաև տնտեսական ոչ պակաս կարևոր բաղադրիչը, քանի որ նրանց տնտեսական գործունեությունը կարող էր էապես նպաստել ինչպես երկրամասի արհեստների և գյուղատնտեսության զարգացմանը, այնպես էլ պետական եկամուտների ավելացմանը: 1856 թ. հունվարի 1–ի տվյալներով՝ Թիֆլիսի և Քութայիսի նահանգներում կային 21 ռուսական աղանդավորական բնակավայրեր՝ 1133 ծուխ՝ 6 հազար երկսեռ բնակչով:

1829–1830 թթ. տեղի ունեցած վերաբնակեցման հետևանքով Էրզրումից, Բայբուրդից և Արևմտյան Հայաստանի այլ վայրերից Թիֆլիսի նահանգ փոխադրվեցին հայ և հույն բնակիչներ: Բոլոր վերաբնակիչները ապահովվում էին հողատարածքներով:

Մինչև XIX դ. 30–ական թվականները Վրաստանում համարյա գոյություն չուներ կապիտալիստական արդյունաբերություն: Տեղական բուրժուազիայի շրջանում խոշոր կապիտալիստների բացակայությունը, ներքին մաքսատուրքերի առկայությունը, երկրում ծավալվող ռազմական գործողությունները և այլն արգելք էին արդյունաբերության զարգացման համար: Կար նաև մեկ այլ բնույթի արգելք: Գեներալ Պասկևիչը Կանկրինին գրած նամակում մտավախություն էր արտահայտում այն առթիվ, որ Վրաստանում մանուֆակտուրաների ստեղծումը կարող է հանգեցնել Ռուսաստանի հետ նրա կապերի թուլացմանը: Հիմնական շեշտը դրվում էր Այսրկովկասում և Վրաստանում գյուղատնտեսությանը զարկ տալուն: Վրաստանից ակնկալվում էր ստանալ հումք ռուսական արդյունաբերական ձեռնարկու-

թյունների համար, նաև հարավի բարիքներ՝ խաղող, բամբակ, մետաքս, ծխախոտ և այլն:

XIX դ. առաջին տասնամյակներին Վրաստանից պետական գանձարան կատարվող մուտքերը մնում էին դեռևս աննշան: Բնականաբար, դա չէր կարող մտահոգություն չառաջացնել ռուսական կառավարող շրջանակներում: Ուստի երկրամասի տնտեսությանը և գործարար կյանքին մղում հաղորդելու համար ցարական կառավարությունը ձեռնարկեց մի շարք միջոցառումներ: Այսպես՝ 1831 թ. վերացվեց ներքին ավատական հարկերի համակարգը: Նույն տարում հարավկովկասյան տրանսպորտը փակվեց եվրոպական ապրանքների համար: Թիֆլիսում իրար հետևից ստեղծվում էին առևտրական ընկերություններ և այլն:

Սակայն, այնուամենայնիվ, Պետերբուրգում կարծում էին, որ Վրաստանում ձեռնարկված վերոհիշյալ միջոցառումները թերի են ու անբավարար և սպասված արդյունքները չեն տալիս հատկապես այնտեղ գործող վարչական համակարգի ոչ բավարար աշխատանքի պատճառով: Ուստի 1840 թ. ապրիլի 10–ի որոշման («Պոլոժենիե») համաձայն՝ Վրաստանում իրականացվեց կառավարման համակարգի բարեփոխում: Ցարիզմը Վրաստանում սահմանում էր համարյա նույն կարգերը, ինչ գոյություն ունեին ռուսական նահանգներում: Տեղական տարրերն ամբողջապես հեռացվում էին երկրի կառավարմանը մասնակցելուց: Ցարական իշխանություններն անհանդուրժելի էին համարում վարչակազմի մեջ տեղական կադրերի մասնակցության հանգամանքը և համարում էին, որ պետք է մտցնել ռուսական օրենքներ և ընդգրկել միայն ազգությամբ ռուս պաշտոնյաների: Դադարեցվում էր Վախթանգ Զ թագավորի օրենքների կիրառումը, բարդացվում էր դատավարության համակարգը, էապես ավելացվում էին վարչական ապարատը պահելու ծախսերը:

Այդ բարեփոխման հետևանքով երկրում արմատավորվեց անօրինակ բյուրոկրատիզմը: Ցարական աստիճանավորների կամայականությունների ու չարաշահումների համար ստեղծվեցին լայն հնարավորություններ և պարարտ հող: Ապրիլի 10–ի օրենքը ներառում էր հետևյալ երեք հիմնական փաստաթղթերը. «Այսրկովկասի կառավարման համար բարձրագույն հաստատված հիմնարկները», որը կազմվել էր Գանի նախագծի հիման վրա, «Թիֆլիսի քաղաքային հասարակական կառավարման կանոնադրությունը» և «Կանոնադրություն Այսրկովկասում զեմստվոյական պարհակների կոմիտեների համար»:

Առաջին օրենքի համաձայն՝ Այսրկովկասը բաժանվում էր երկու խոշոր վարչական միավորի՝ Վրացա–Իմերեթական և Կասպիական նահանգների: Վրացա–Իմերեթական նահանգի մեջ էին մտնում Թիֆլիսի, Գորիի, Թելավի, Բելոքանի, Քութայիսի, Ելիզավետպոլի, Ալեքսանդրապոլի, Երևանի, Նախիջևանի, Ախալցխայի և Գուրիայի գավառները, իսկ Կասպիական նահանգի մեջ ընդգրկված էին Շիրվանի, Շաքիի, Արցախի, Թալիշի, Բաքվի, Դերբենդի և Ղուբայի գավառները:

Կառավարումը սահմանվում էր եռաստիճան՝ գլխավոր (որը գործում էր ողջ Այսրկովկասի համար), նահանգային (մարզային) և գավառային: Գլխավոր վարչու-

թյունը կազմում էին Այսրկովկասի կառավարչապետը, Թիֆլիսի զինվորական նահանգապետը և Գլխավոր վարչության խորհուրդը:

Կառավարչապետն իր իրավասությունների առումով հավասարեցվում էր Ռուսաստանի ներքին նահանգների գեներալ–նահազապետին, սակայն նրան տրվում էին նաև լրացուցիչ իրավասություններ՝ նկատի ունենալով հեռավորությունը և երկրամասի առանձնահատկությունները:

Նշված ռեֆորմի հետ միաժամանակ իրականացվեց նաև Այսրկովկասում պետական ունեցվածքի վարչության ռեֆորմ: 1841 թ. հունվարի 5–ին հրապարակված օրենքը մանրամասն սահմանում էր Վրացա–Իմերեթական և Կասպիական նահանգներում այդ վարչությունների իրավունքներն ու պարտավորությունները: Հիմնական խնդիրը պետական եկամուտների կանոնավոր հավաքագրումն էր:

Վարչական ռեֆորմը նպատակ ուներ Այսրկովկասում ներմուծելու և ամրապնդելու ռուսական կառավարման համակարգ և ձերբազատվելու նախկին վարչական ավանդական եղանակներից:

Վերոհիշյալ ռեֆորմները ռուսական վարչական ապարատն ավելի հեռացրին ժողովրդական զանգվածներից: Կառավարման գործից տեղական տարրերի վերջնական հեռացումը, հրաժարումը տեղական օրենքներից, տեղական ավանդույթների անտեսումը, ձգձգվող թղթարարությունը, դրական գործընթացների դանդաղումը և գանձվող հարկերի հարաճուն ավելացումը հարուցեցին բնակչության դժգոհությունը: Դժգոհություն էր դրսևորում նաև վրացական ազնվականությունը, քանի որ ռեֆորմներն անմիջականորեն շոշափում էին նրա կենսական շահերը: Ազնվականությունը դժգոհ էր անտեսված լինելու հանգամանքից:

Դեռևս 1828 թ. ցարական կառավարությունը Գուրիայում վերացրել էր մթավարի պաշտոնը և այնտեղ ձևավորել ժամանակավոր վարչություն՝ ռուս զինվորական աստիճանավորների գլխավորությամբ: Այդ նոր վարչությունն իր գործունեությունը զուգակցում էր երկրում ընդունված հին կարգերի ու սովորույթների հետ: Սակայն 1840 թ. «Պոլոժենիե»–ի արմատավորումից հետո դրությունը փոխվեց, մանավանդ որ բնամթերային հարկը փոխարինվեց դրամականով:

1841 թ. մայիսին, երբ սկսվեց դրամական շնչահարկի գանձումը, ապստամբեցին Լանչխութի գյուղի գյուղացիները: Գյուղացիության դժգոհությունն ուղղված էր նաև տեղացի հարկահանների դեմ, որոնք կամայականորեն բարձրացնում էին հարկերը, գողանում գյուղացիների զավակներին և Թուրքիայում վաճառում ստրկության: Հուզումներն աստիճանաբար ընդգրկեցին ողջ Գուրիան: Ապստամբներին միացան նաև ավատատերերը: Ապստամբությունը գնալով ծավալվեց: Ապստամբների և իշխանությունների միջև տեղի ունեցան արյունահեղ բախումներ: Ապստամբներին հաջողվեց նույնիսկ շրջապատել գավառային կենտրոն Օզուրգեթ քաղաքը:

Գուրիայի ապստամբության արձագանքները տարածվեցին նաև Իմերեթում, Մեգրելիայում և Աբխազիայում: Սակայն շուտով ապստամբների շարքերում տեղի ունեցավ պառակտում: Ավատատերերն աստիճանաբար հեռացան շարժումից, քա-

նի որ գյուղացիության պայքարն ընդունում էր հակաճորտատիրական բնույթ: Գուրիա ուղարկվեցին ցարական զորքերի լրացուցիչ ստորաբաժանումներ: Սեպտեմբերին Օզուրգեթի մոտ տեղի ունեցած արյունահեղ ճակատամարտում ապստամբները պարտություն կրեցին: Ապստամբությունը ճնշվեց:

Հուզումները սկսվեցին նաև Հարավային Օսիայում, որոնք ընդմիջումներով շարունակվեցին ընդհուպ մինչև 1850 թվականը: Ընբոստության բռնկումներն ու հուզումները Վրաստանի տարբեր մասերում չէին դադարում: Մի վայրում ապստամբությունը մարելուց հետո բռնկվում էր մեկ այլ տեղում: Նման պայմաններում ցարական կառավարությունը որոշեց ժամանակավոր նահանջ կատարել, որոշ զիջումների գնալ և հաշվի նստել տեղական կարգերի ու սովորույթների հետ: 1842 թ. Նիկոլայ Ա–ն Ռոզենին և զինվորական նախարար Չեռնիշևին գործուղեց Այսրկովկաս՝ պարզելու դժգոհության պատճառները: Նրանց լիազորություն էր տրված տեղում իրագործելու անհրաժեշտ փոփոխությունները երկրամասի կառավարման գործում: Այդ փոփոխությունների հիմնական իմաստը նախ հանգում էր նրան, որ կառավարումը պետք է օրգանապես զուգակցվեր տեղական կարգերի ու սովորույթների հետ, և ապա տեղի կալվածատերերը պետք է ներգրավվեին կառավարման գործում: Տեղում ծանոթանալով գործերի վիճակին՝ հանձնաժողովն արձանագրեց, որ կառավարման նոր ռեֆորմը կատարելապես անտեսում է Այսրկովկասի բնակչության ապրելակերպը, նրանց սովորույթներն ու կենցաղային առանձնահատկությունները, անթույլատրելի չափերով մեծացնում է բյուրոկրատական քաշքշուկը, ձգձգում նույնիսկ աննշան դատական գործերի վարույթը: Սուր անկյուններն ինչ–որ չափով հարթելու և ամենակարևորը՝ բնակչությանը հանգստացնելու նպատակով կառավարությունը որոշեց 1840 թ. ռեֆորմի մեջ մտցնել որոշ փոփոխություններ: Ըստ այդմ՝ Չեռնիշևի կարգադրությամբ տեղի ունեցան որոշ փոփոխություններ դատական համակարգի ստորին օղակների լիազորությունների ավելացման ուղղությամբ, ինչը, սակայն, բավարար չէր դժգոհությունը վերացնելու համար: Մասնակիորեն վերականգնվեց Վախթանգ թագավորի օրենքների կիրառումը, գյուղական մամասախլիսներին (ավագներին) իրավունք տրվեց տեղում քննության ենթարկելու ոչ կարևոր գործերը, տեղական ավատատերերը ներգրավվեցին կառավարման մարմինների մեջ:

Սակայն այդ բոլոր միջոցառումները թեև բերեցին որոշակի դրական տեղաշարժեր, սակայն ի վիճակի չեղան վերացնելու կառավարման համակարգի հիմնական արատները: XIX դ. 40–ական թթ. երկրորդ կեսից սկսած՝ ցարական ինքնակալության քաղաքականությունը Հարավային Կովկասում դարձավ ավելի ճկուն:

1844 թ. Պետերբուրգը Կովկասում Կառավարչապետի պաշտոնը վերածեց փոխարքայի պաշտոնի՝ լայն լիազորություններով, ինչը պետք է հնարավորություն ընձեռեր բոլոր հարցերը արագորեն վճռելու տեղում: Փոխարքան հաշվետու էր միայն կայսերը: Առաջին փոխարքա և Առանձին Կովկասյան կորպուսի գլխավոր հրամանատար նշանակվեց Մ. Ս. Վորոնցովը (1844–1854), որը պատկանում էր բարձրագույն աստիճանակարգային ազնվականության թվին: Նորանշանակ փոխարքային

Նիկոլայ Ա–ն անձամբ ծանոթացրեց այն նպատակների հետ, որոնք ցարիզմը հետապնդում էր Վրաստանում և առհասարակ Հարավային Կովկասում: Փոխարքան իր պաշտոնավայր Թիֆլիս ժամանեց 1845 թ. մարտի 26–ին:

Վորոնցովին Կովկասի փոխարքա նշանակելու և նրան համարյա անսահմանափակ լիազորություններ տրամադրելու իմաստն այն էր, որ երկրամասում իրականացվեր ավելի ճկուն սոցիալական և տնտեսական քաղաքականություն, ամրապնդվեին կապերը վրաց ազնվականության և կալվածատիրական շրջանակների հետ:

Առաջնորդվելով իրեն տրված հրահանգներով՝ Վորոնցովը, ի հակադրություն իր նախորդների, գաղութային և ռուսաֆիկացման քաղաքականություն սկսեց վարել ավելի զգույշ ու շրջահայաց ձևով: Նա բոլոր միջոցներն օգտագործում էր, որպեսզի տեղական վերնախավի ներկայացուցիչներին ներգրավի ինքնակալության կողմը, նրանց վերածի ցարիզմի հլու կամակատարների և դրանով իսկ իրականացնի «Հարավկովկասյան երկրամասի համաձուլումը կայսրության հետ»:

Նախ և առաջ Վորոնցովն ուշադրություն դարձրեց իր կարծիքով երկրամասի ոչ ճիշտ վարչական բաժանմանը, որը չէր համապատասխանում Հարավային Կովկասում բնակվող ժողովուրդների ո՛չ աշխարհագրական, ո՛չ ազգագրական և ո՛չ էլ պատմական զարգացման առանձնահատկություններին: Փոխարքայի համար, օրինակ, հասկանալի էր, որ Իմերեթի ազնվականությունը չէր կարող հաշտվել այն մտքի հետ, որ «իրենց մեծ հռչակ վայելած թագավորությունը դարձել է լոկ Թիֆլիսի նահանգի սովորական գավառ»: Ուստի իր կառավարման օրոք Վրացա–Իմերեթական նահանգի և Կասպիական մարզի փոխարեն ստեղծվեցին չորս նահանգներ. Թիֆլիսի, Քութայիսի, Շամախիի և Դերբենդի: 1849 թ. ստեղծվեց Երևանի նահանգը:

Վորոնցովը սխալ էր համարում նաև ժամանակից շուտ ռուսական օրենքների ու կարգերի արմատավորումը Վրաստանում, տեղական սովորույթներն ու ապրելակերպը հաշվի չառնելը, ինչպես նաև վարչական մարմիններից ու դատական հիմնարկներից տեղական տարրերի հեռացումը: Փոխարքան ռուսական օրենքների ներմուծումը տեղական հասարակական ու քաղաքական կյանքի տարբեր ոլորտներ սկսեց իրականացնել ոչ թե վարչական, այլ մշակութային միջոցառումների միջոցով: Նրա ջանքերով վերականգնվեց վրաց թատրոնը, բացվեց հանրային գրադարանը, կազմակերպվեցին գիտական հաստատություններ, հրատարակվեցին թերթեր:

Վրաց ավատատերերի համակրանքը շահելու միտում ուներ 1849 թ. հրապարակված օրենքը, ըստ որի՝ ավատատերերն ազատվում էին իրենց ունեցած ճորտերի մասին դատական մարմիններին ցուցակներ ներկայացնելու պարտավորությունից: Այսուհետև ճորտերը պետք է ապացուցեին իրենց ազատությունը և կալվածատիրոջից իրենց անկախությունը:

Փոխարքայի նախաձեռնությամբ սկսեց լայնորեն կիրառվել Վրաստանի ազնվականական ծագում ունեցող պատանիների ուսումնառությունը Ռուսաստանի ռազմական ուսումնարաններում և համալսարաններում: Վորոնցովի ժամանակ

տեղի ունեցավ նաև Այսրկովկասում ցարիզմի տնտեսական քաղաքականության վերանայում: Նա, օրինակ, այն կարծիքին էր, որ Հարավային Կովկասում անհրաժեշտ է թույլատրել առևտրի ազատությունը՝ առանց որևէ սահմանափակումների: Նրան հաջողվեց համոզել ռուսական իշխանություններին վերանայել մաքսային քաղաքականությունը Հարավային Կովկասում: Վորոնցովը կարողացավ վրացական ազնվականության ազդեցիկ շրջաններին կապել Ռուսաստանի հետ: Նրա օրոք այնպիսի խոշոր կալվածատերեր, ինչպիսիք էին Օրբելիանին, Բագրատիոն–Մուխրանսկին, Մեգրելիայի տիրակալ իշխան Դադիանին և ուրիշներ Վրաստանի գաղութակալման հարցում ընդառաջ էին գնում ցարիզմին:

Նույնիսկ 1848 թ. ապրիլի 24–ին վրաց ազնվականությունը գրավոր դիմումով պաշտոնապես իր նվիրվածությունը հայտնեց ռուսական արքունիքին, նաև իր պատրաստակամությունը՝ զենքը ձեռքին հանդես գալու ցարական զորքերի կազմում Արևմտյան Եվրոպայի երկրներում հեղափոխական շարժումները ճնշելու համար:

Ռուսական ապրանքների համար Այսրկովկասյան շուկան լայնորեն բացելու համար Վորոնցովի ջանքներով կարգի բերվեց Սև և Կասպից ծովերի հաղորդակցությունը, բարելավվեց ռազմավարական ճանապարհը: Պարզեցվեց դատավարությունը, վերակառուցվեց վարչական ապարատը, արմատավորվեցին այնպիսի նորամուծություններ, ինչպիսիք էին լրագրի հրատարակումը, օպերային և դրամատիկ թատրոնների ստեղծումը: Միաժամանակ, համառ հետևողականությամբ տարվում էր երկրի ռուսաֆիկացման քաղաքականություն: Հարավային Կովկաս տեղափոխվեցին մի քանի հազար ռուս աղանդավոր գյուղացիներ:

Խելացի ու հեռատես Վորոնցովը կարողացավ իր կողմը գրավել տեղական հասարակության բարձր խավերին: Նա օգնության ձեռք մեկնեց քայքայված վրաց ազնվականությանը: 1849 թ. բացվեց Հարավկովկասյան բանկը, որը նրանց հատկացրեց երկարաժամկետ վարկեր, ազնվականների համար բացվեցին ակումբներ, մտավորականությանը որոշ ազատություն տրվեց՝ հայրենասիրական բնույթի գործունեություն ծավալելու համար: Ազնվականների երեխաներին լայն հնարավորություն ընձեռվեց զինվորական ծառայություն կատարելու համար, արագացվեց ազնվականական կոչման հավակնորդների հաստատման գործը, օրինականացվեց այն սկզբունքը, ըստ որի՝ գյուղացին կարող էր դատական հայց հարուցել ազատություն ձեռք բերելու մասին միայն այն դեպքում, եթե նա ուներ համապատասխան փաստաթղթեր, որոնք կարող էին ապացուցել նրա ազատ կարգավիճակ ունենալու իրավունքը: Փոխարքան անցկացրեց նաև թավադների և ազնավուրների գույքային սահմանազատում՝ վերջիններիս ազատելով թավադներից կախվածությունից:

Այդ բոլորի հետևանքով վրաց ազնվականությունը դարձավ Վորոնցովի հավատարիմ հենարանը ցարիզմի քաղաքականության իրականացման գործում: Ըստ էության, ցարիզմի և վրաց ազնվականության միջև հաստատվեց կայուն դաշինք: Միայն ազնվականության մի հատվածն էր շարունակում պայքարը ռուսաֆիկացման քաղաքականության և ցարական բյուրոկրատական վարչակարգի դեմ:

Վարչական կառավարման հետագա փոփոխությունները կապված են ֆելդմարշալ Բարյատինսկու անվան հետ, որը 1856–1862 թթ. զբաղեցնում էր փոխարքայի պաշտոնը: Փոխարքայի լիազորությունները տարածվեցին նաև ֆինանսների նախարարության հետ հարաբերությունների վրա: Կայսրը թույլատրեց Բայրատինսկուն ֆինանսների տնօրինության գործը կազմակերպել այնպես, ինչպես իրեն է նպատակահարմար: Փոխարքայի ձեռքում էին կենտրոնացած կառավարման բոլոր լծակները: Նա 1858 թ. ստեղծեց երկու մարմին՝ Փոխարքայի խորհուրդ (Գլխավոր վարչության խորհրդի փոխարեն) և Գլխավոր վարչություն: Վերջինս բաղկացած էր հետևյալ բաժանմունքներից՝ ընդհանուր, դատական, ֆինանսական, պետական ունեցվածքի և գյուղատնտեսության ու օտարերկրյա վերաբնակիչների հատուկ վարչություն: Ընդհանուր բաժանմունքին ենթակա էին ուսումնական, փոստային, բժշկական, շինարարական բաժինները, ինչպես նաև հանրային գրադարանը, թերթերի խմբագրությունները, արխիվը և այլն:

Նշված փոփոխությունները մեծապես ընդարձակեցին փոխարքայի լիազորությունները, որը, շրջանցելով կայսերական կառավարման բոլոր օղակները, կարող էր անմիջականորեն հաշվետու լինել միայն կայսրին, ինչը կարող էր նպաստավոր լինել Վրաստանի և ողջ Այսրկովկասի հետագա զարգացման համար:

2. ՂՐԻՄԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՁՈՐՔԵՐԻ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ՎՐԱՍՏԱՆ

XIX դ. կեսերին այսպես կոչված «Արևելյան հարցը» կրկին սրվեց: Հասունացող կոնֆլիկտի հիմքում ընկած էր մեծ պետությունների պայքարը Մերձավոր Արևելքում իրենց տիրապետությունը հաստատելու համար: Այդ պայքարի յուրաքանչյուր մասնակից մտավախություն ուներ, որ հակառակորդն իրեն կկանխի և ձեռք կբերի առավելագույն օգուտներ: 1850–ական թթ. սկզբին աշխատելով իրենց ձեռքից ժամանակը բաց չթողել՝ մրցակիցները սկսեցին արագացնել հանգուցալուծումը:

Ախոյանները փոխադարձաբար երկնչում էին մեկը մյուսից: Անգլիայի և Ֆրանսիայի կառավարող շրջանակները վախենում էին, որ Ռուսաստանը կտիրանա սևծովյան նեղուցներին ու Կոստանդնուպոլսին: Իսկ Նիկոլայ Ա ցարը մտավախություն ուներ, որ Օսմանյան կայսրությունը ահա–ահա կփլուզվի ու կքայքայվի, և Անգլիան կարող է դառնալ դրության տերը ողջ Մերձավոր Արևելքում:

Այդ շրջանում ցարը տարված էր Օսմանյան կայսրությունը բաժանելու ու մասնատելու սևեռուն գաղափարով: 1853 թ. հունվարին նա մայրաքաղաք ուղարկեց ծովային մինիստր, իշխան Մենշիկովին, որին հանձնարարված էր համոզել սուլթանին ճանաչել Ռուսաստանի իրավունքը Օսմանյան պետության քրիստոնյա բնակչության անվտանգության ապահովման հարցում: Մերժում ստանալու դեպքում նրան հանձնարարված էր բորբոքել միապետական հակամարտություն: Ակնկալելով Անգլիայի և Ֆրանսիայի օժանդակությունը՝ սուլթանը մերժեց Ռուսաստանի պահանջը, որով և սկիզբ առավ ռուս–թուրքական հերթական պատերազմը (1853–1856 թթ.), որը հայտնի է Ղրիմի կամ Արևելյան պատերազմ անունով:

Վրաստանը, ինչպես և Հայաստանը, հայտնվեցին պատերազմական գործողությունների առաջին գծում: Թուրքիայի հայացքն ուղղված էր Կովկասում իր տիրապետությունը հաստատելու գաղափարին: Ընդ որում, հիմնական թիրախ կարող էր դառնալ հենց Թիֆլիսը, որտեղ հասնելու համար թուրքական բանակը Կարսից կարող էր անցնել միայն Գյումրիի (Ալեքսանդրապոլի) վրայով: Նման դիրքում էր նաև Ախալցխան, և ռուսական հրամանատարությունը հիմնական ուժերը կենտրոնացրել էր Ալեքսանդրապոլում, Ախալքալաքում և Ախալցխայում: Արարատյան դաշտ թուրքական ներխուժումը կանխելու համար ռուսական զորքեր էին տեղակայվել նաև Երևանում, իսկ Արևմտյան Վրաստանի պաշտպանությունը կազմակերպելու համար ռուսական զորքերը հիմնականում կենտրոնացվել էին Գուրիայում:

Թուրքական զորքերն Այսրկովկասի մատույցներում քանակական ու զինատեսակների առումով ակնհայտորեն գերակշռում էին ռուսականին: 1853 թ. հոկտեմբերի 15–16–ին թուրքական զորքերը ներխուժեցին Վրաստանի սահմանները և, գրավելով Շեքվեթիլի սահմանային պաշտպանական հենակետը (այսպես կոչված Սուրբ Նիկոլայի նավահանգիստը), ավերեցին ու բնաջնջեցին շրջակա գյուղերի բնակիչներին: Ճակատամարտի ժամանակ զոհվում է գուրիացիների աշխարհազորի ղեկավար Գրիգոր Գուրիելին: Թուրքերը գրավում են Գուրիայի նշանակալի մասը: Թուրքական հարձակման հետ միասին տեղի է ունենում նաև կովկասյան ապստամբ լեռնականների առաջնորդ Շամիլի հարձակումը Արևելյան Վրաստան, որը մտադիր էր գրավել Սաինգիլոյում Զաքաթալայի և Բելոքանի ամրոցները: Սակայն գեներալ Գրիգոլ Օրբելիանիի հրամանատարությամբ ռուս–վրացական զորամիավորումներին հաջողվում է պարտության մատնել հակառակորդին և դուրս մղել Ալազանի հովտից:

Թուրքական զորքերը, որոնք թվաքանակով գերազանցում էին Ախալցխայում տեղաբաշխված ռուսական զորամասերին, բոլոր կողմերից շրջապատեցին Ախալցխայի բերդը: Ընդ որում, Աջարիայից և Արդահանից նոր զորամասեր էին ժամանում՝ թուրքական բանակը համալրելու համար: Թիֆլիսի համար ստեղծվեց սպառնալի վիճակ: Օսմանցիները Հայաստանի և Վրաստանի սահմանամերձ շրջաններում կենտրոնացրել էին 60–հազարանոց բանակ: Գիտակցելով երկրի վրա կախված ահավոր սպառնալիքը՝ վրաց ժողովուրդը միավորվեց՝ ռուսական բանակի հետ թշնամու դեմ համատեղ պայքար մղելու համար. վրացիները՝ հանուն այն հողերի վերադարձի, որոնք անցյալում գրավվել էին Թուրքիայի կողմից, իսկ ռուսները՝ հանուն Արևելքում իրենց ազդեցության ընդլայնման: 1853 թ. նոյեմբերի 14–ին Ախալցխայի մատույցներում (Ազզորում) ռուսական և վրացական միացյալ զինված ուժերը գեներալ Իվան Անդրոնիկաշվիլու հրամանատարությամբ պարտության մատնեցին թուրքական զորքերին: Թուրքական բանակը, մեծ զոհեր տալով, նահանջեց՝ թողնելով զինամթերքի ու պարենի պաշարները: Թուրքերի զոհերը կազմում էին 1500, իսկ վիրավորներինը՝ 2000 զինվոր:

Այդ պարտությունից հետո թուրքական հրամանատարությունը չհրաժարվեց Ախալցխայի ճանապարհով Թիֆլիս ներխուժելու մտքից: 1853 թ. նոյեմբերի 26–ին

տեղի ունեցավ համառ և արյունահեղ ճակատամարտ: Չդիմանալով ռուսական զորքերի անկասելի գրոհին՝ Ալի փաշայի թուրքական բանակը սկսեց նահանջել, իսկ ապա դիմեց անկանոն փախուստի ընդհուպ մինչև Արդահան քաղաքը:

Թուրքական զորքերը խոշոր պարտություն կրեցին նաև Հայաստանի տարածքում: 1853 թ. դեկտեմբերի 1–ին Կարսի և Ալեքսանդրապոլի միջև Բաշկադըքլար գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտում օսմանյան զորքերը կրեցին ջախջախիչ պարտություն: Այդ ճակատամարտում գեներալ Բեհբութովը (Բեհբության) հաղթեց հակառակորդին՝ ունենալով հակառակորդից երեք անգամ քիչ զորքեր: Ահմեդ փաշայի 36–հազարանոց բանակից Կարս հասավ մոտ կեսը: Ընդ որում, կենդանի մնացած զինվորներն այլևս ռազմիկներ չէին, այլ բարոյալքված ամբոխ: Կարսի թուրքական գումարտակի ջախջախումը, որը անատոլիական բանակի գլխավոր զորամասն էր, ռազմական խոշոր կորուստ էր Օսմանյան կայսրության համար: Այդ պարտությունից հետո թուրքական հրամանատարությունը ստիպված էր հրաժարվել Երևանի վրա արդեն նախապատրաստված արշավանքից: Իսկ ամենակարևորը՝ Ախալցխայի և Բաշկադըքլարի մոտ կրած պարտությունները կատարելապես ձախողեցին թուրքերի ծրագրերը՝ խորքից ներխուժելու Հարավային Կովկաս, գրավելու Թիֆլիսը և Կովկասի լեռնականներին ոտքի հանելու Ռուսաստանի դեմ:

Սինոպում ռուսական նավատորմի կողմից թուրքական նավատորմի ջախջախումը մեծ անհանգստություն պատճառեց Անգլիայի և Ֆրանսիայի կառավարություններին: Դեպի Թուրքիայի խորքեր ռուսական առաջխաղացման սպառնալիքը կանխելու համար անգլո–ֆրանսիական ուժերն ընդգրկվեցին պատերազմի մեջ, և թուրքական նավատորմը պաշտպանելու նպատակով դաշնակիցների նավատորմը 1854 թ. հունվարին մտավ Սև ծով: Պատերազմական գործողությունների ծավալման սպառնալիքը Վրաստանի սևծովյան ափերի մոտ մեծ վտանգ էր Վրաստանի համար, որը հարձակման կարող էր ենթարկվել նաև թուրքական ցամաքային զորքերի կողմից: Վրաստանի սևծովյան ափամերձ հենակետերը հարձակումից զերծ պահելու համար ծովակալ Սերեբրյակովի (Արծաթպանյան) նավախումբն ուղարկվեց՝ դուրս հանելու կայազորները, ինչն իրագործվեց փայլուն կերպով: Աբխազիայի տիրակալ Միխաիլ Շերվաշիձեի օժանդակությամբ զորքերը Աբխազիայից փոխադրվեցին Մեգրելիա: Մերձսևծովյան ափամերձ տարածքներից դուրսհանումը Վրաստանին դնում էր միանգամայն անպաշտպան վիճակում: Ախալցխայի մոտ պարտություն կրած թուրքական բանակը ձմռան ընթացքում արագորեն վերակազմավորվեց և դարձավ 34–հազարանոց խոշոր միավորում, որի հրամանատար կարգվեց Սելիմ փաշան: Նրան հանձնարարված էր Բաթումից ներխուժել Գուրիա: Միաժամանակ 60–հազարանոց թուրքական բանակը Կարսից սպառնում էր Ալեքսանդրապոլին, իսկ Բայազետից թուրքական մեկ այլ զորախումբ շարժվում էր դեպի Երևան: Թուրքական կողմի նպատակակետը Թիֆլիսի գրավումն էր: Բաթումից թուրքերն անցան Քոբուլեթ: Դաշնակիցների նավատորմը դեսանտ իջեցրեց Ռեդուտ–կալեում, Անակլիայում, Սուխումում և ռուսական զորքերից դատարկված այլ վայրերում: Գեներալ Անդրոնիկաշվիլին, որը հետևում էր թուրքական բանակի

տեղաշարժերին, զորքերը կենտրոնացրեց Ռիոնի ավազանում՝ թույլ չտալու թշնամու շարժումը դեպի Քութայիս: Գուրիայում ժողովրդական աշխարհազորը գլխավորում էր զոհված Գիորգի Գուրիելիի եղբայրը՝ Մաղաքիա Գուրիելին: Գուրիայի սահմաններին մոտեցած Մելիմ փաշան երկար ժամանակ տատանվում էր և չէր համարձակվում անցնել Չոլոկի գետը: Նիգոեթի գյուղի մոտ ճանապարհը դեպի Քութայիս պահպանում էր իշխան Նիկոլոզ Էրիսթավին: Թուրքական բանակն ի վերջո անցավ հարձակման և գրավեց Օզուրգեթը: Գուրիական աշխարհազորը ռուսական փոքրաթիվ զորքի հետ միասին սկսեց մղել պարտիզանական մարտեր: Էրիսթավիի ճկուն մարտավարության հետևանքով ռուս–վրացական ջակատներին հաջողվեց Լանչխութի անտառում լուսադեմին հարձակվել թշնամու վրա և հաղթանակ տանել, ինչը և ստիպեց թուրքերին մեծ զոհերի գնով բռնել նահանջի ուղին: Գեներալ Անդրոնիկաշվիլին որոշեց օգտվել նահանջի դիմած և Թուրքիայի ու Գուրիայի սահմանում Չոլոկի գետի մոտ կանգ առած թուրքական զորքի բարոյալքված վիճակից և նոր հարված հասցնել: 1854 թ. հունիսի 4–ին սկսված ճակատամարտում ռուս–վրացական միացյալ ուժերը փայլուն հաղթանակ տարան՝ ունենալով, սակայն, զգալի զոհեր: Թուրքական բանակը նահանջեց դեպի Քոբուլեթ:

1855 թ. անգլո–ֆրանսիական դաշնակիցները Սևաստոպոլի մոտ պարտության մատնեցին ռուսական զորքերին: Օգտվելով դրանից՝ Սև ծովի ափերին՝ Վրաստանի սահմաններում, թուրքերը հանեցին 40–հազարանոց մի բանակ, որը ռազմակալման ենթարկեց Աբխազիան: 1855 թ. հոկտեմբերի 25–ին՝ Ինգուրի գետի մոտ տեղի ունեցած վճռական ճակատամարտից հետո, թուրքական զորքերը գրավեցին Մեգրելիան՝ սպառնալիքի տակ դնելով նաև Գուրիան և Իմերեթը: Օսմանյան բանակի հրամանատար Օմար փաշան ծրագրում էր այնտեղից արշավանք կազմակերպել դեպի Թիֆլիս: Միաժամանակ, Թիֆլիսին սպառնում էին նաև Հյուսիսային Կովկասի լեռնականները՝ Շամիլի գլխավորությամբ: Օգտվելով իր համար ստեղծված բարենպաստ իրադրությունից՝ վերջինս ներխուժեց Կախեթ և այն ենթարկեց սոսկալի կողոպուտի ու ավերածության:

Թուրքերը համարյա չորս ամիս տեր ու տնօրինություն էին անում Արևմտյան Վրաստանում: Տեղի բնակչությունը նրանց դեմ մղում էր լեռնային պարտիզանական պատերազմ: Որևէ գյուղում սպանված ասկյար հայտնաբերելու դեպքում թուրքական զորքերը հիմնահատակ ավերում ու ոչնչացնում էին տվյալ գյուղը: Նրանք հափշտակում էին գերիների՝ ստրկավաճառանոցներում վաճառքի հանելու համար:

1855 թ. նոյեմբերի 15–ին՝ ռուսների կողմից Կարս քաղաք–ամրոցի գրավումից հետո քիչ ժամանակ անց, թուրքական զավթիչները դուրս մղվեցին Հարավային Կովկասի սահմաններից:

3. ՑԱՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՎՐԱՑԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ

Ղրիմի պատերազմում Ռուսաստանի պարտությունը և նրա պատճառների վերլուծությունը ռուսական քաղաքական վերնախավին թելադրեցին իրենց կովկասյան քաղաքականության մեջ էական ճշտումներ մտցնել:

Ինչպես նշվեց վերևում, XIX դ. առաջին կեսին Արևմտյան Վրաստանի միացումը Ռուսաստանին դյուրացնելու նպատակով ռուսական իշխանությունները հաջողությամբ օգտագործում էին հակամարտությունները վրաց իշխանությունների միջև: Ռուսներին նվիրվածությամբ հատկապես աչքի էին ընկնում Մեգրելիայի տիրակալ Դադիանիները, ինչը հնարավոր դարձրեց համեմատաբար հեշտությամբ իրագործել Իմերեթի և Գուրիայի միացումը Ռուսաստանին: Այդ է պատճառը, որ ցարիզմը չէր շտապում վերացնել իշխանությունները Մեգրելիայում և Աբխազիայում՝ նրանց դիտարկելով որպես ռուսական քաղաքականության իրականացման միջոց: 1834–1837 թթ. Ռուսաստանը կարողացավ վարպետորեն օգտագործել Աբխազիայի և Մեգրելիայի հակամարտությունը Սամուրզականոն նվաճելու համար, և 1840 թ. այնտեղ հաստատվեց ռուսական տիրապետություն: Միաժամանակ ցարական կառավարությունը Մեգրելիայից գրավեց ծովափնյա տարածքը: Առհասարակ Մեգրելիայի և Գուրիայի մթավարները բազմիցս աչքի էին ընկել ցարական կառավարությանը ծառայություններ մատուցելու բնագավառում:

Ղրիմի պատերազմից հետո ցարական իշխանությունների համար պարզ դարձավ, որ Վրաստանում իշխանական տների գոյությունը թուլացնում է իրենց դիրքերը: Դեռևս 1828 թ. ցարական կառավարությունը վերացրել էր Գուրիայի իշխանությունը: Սակայն շարունակում էին գոյություն ունենալ Մեգրելիայի, Սվանեթի և Աբխազիայի մթավարությունները, որոնց ինքնակալ իշխանները շարունակում էին պահպանել ներքին կառավարման ժառանգական իրավունքը: Այդ մթավարներն ամեն կերպ աշխատում էին երկարաձգել իրենց իշխանությունների ինքնուրույն գոյությունը:

Ռուսաստանը հաշտվելու էր իշխանությունների գոյության հետ մինչև այն պահը, քանի դեռ նրանք նպաստում էին՝ Վրաստանում իրականացնելու ինքնակալության քաղաքականությունը: Սակայն Այսրկովկասում ցարական Ռուսաստանի դիրքերի ամրապնդումից և այնտեղ նրա ազդեցության ընդլայնումից հետո վասալական իշխանությունների գոյությունը անհամատեղելի էր դառնում երկրամասի կենտրոնացված կառավարման հետ: Դրանք արգելակում էին Վրաստանում ցարիզմի հետագա նպատակների իրագործմանը: Ինքնավար ավատական իշխանությունների վերացման անհրաժեշտությունը դառնում էր ավելի ու ավելի ակներև Ռուսաստանի կողմից բուրժուական վերափոխումների շրջանը թևակոխելու փուլում, և Ղրիմի պատերազմից հետո որոշվեց միատեսակ կառավարում մտցնել ողջ Վրաստանում:

Մեգրելիայում իշխանությունը վերացնելու համար հարմար առիթ եղավ գյուղացիական ապստամբությունը: Պատերազմի թողած ավերածությունների ու վնաս-

ների վերականգնումը իրագործվում էր բնակչության հաշվին, նրա հարկային բեռը ծանրացնելու միջոցով: Գյուղացիությունը պարտավոր էր հոգալ նաև ավատատերերի աճող պահանջները: Դժգոհության այդ պարարտ հողի վրա 1856 թ. աշնանը Մեգրելիայում բռնկվեց գյուղացիական ապստամբություն: Եկատերինա Դադիանին, որի ձեռքում էին Մեգրելիայում իշխանության լծակները, դիմեց ռուսական իշխանություններին՝ հույս ունենալով, որ նրանք կաջակցեն իրեն ապստամբությունը ճնշելու գործում: Սակայն իշխանությունները չէին շտապում: Կառավարությունը փորձում էր համոզել Եկատերինային, որ միակ հանգուցալուծումը կարող է լինել կառավարման համակարգի փոփոխությունը: Սակայն Եկատերինան լսել չէր ուզում իր լիազորություններից հրաժարվելու մասին: Ուստի գեներալ–նահանգապետ Ա. Գագարինը ռուսական զորքեր տեղաբաշխեց Մեգրելիայի գավառներում ապստամբությունը ճնշելու պատրվակով: Սպաներին հանձնարարված էր տեղերում հաստատել ռուսական կառավարում: Եկատերինան համառորեն պահանջում էր պահպանել և հետևել պայմանագրի այն դրույթներին, որոնցով Մեգրելիան ընդունվել էր Ռուսական կայսրության հպատակության ներքո: Իր հերթին փոխարքա Բարյատինսկին դիմեց կայսերը՝ առաջարկելով թույլատրել գործել պայմանագրի դրույթների շրջանցումով՝ ելնելով իրավիճակային անհրաժեշտությունից: Շուտով Ալեքսանդր Բ–ից ստացվեց նման թույլտվություն, և 1857 թ. հունիսի վերջին փոխարքան ձեռնամուխ եղավ Մեգրելիայի կառավարման համակարգի փոփոխության իրականացմանը: Եկատերինային վերապահվեց ժառանգաբար փոխանցելու Մեգրելիայում իր իրավունքը, իսկ կատարվող փոփոխությունները հայտարարվեցին «Ժամանակավոր»՝ մինչև Եկատերինայի ժառանգորդի (նրա որդու) չափահաս դառնալը: 1857 թ. սեպտեմբերի 26–ի հրամանագրով Մեգրելիայի «Ժամանակավոր կառավարիչ» նշանակվեց գեներալ Կոլուբյակինը: 1867 թ. Մեգրելիայի իշխանության ժառանգորդը՝ 20–ամյա Նիկո Դադիանին, տեղի տալով ռուսական իշխանությունների պահանջին, հրաժարվեց ժառանգական իշխանի իր իրավունքներից: Այսպիսով՝ Մեգրելիայում վերջնականապես հաստատվեց ռուսական վարչաձևը: Այլ կերպ ասած՝ ցարական կառավարությունը վերացրեց մեգրելական իշխանությունը:

Մեգրելիայի հետ միաժամանակ քայլեր ձեռնարկվեցին՝ Սվանեթում ևս հաստատելու ռուսական ուղղակի կառավարումը: 1850–ական թվականներին Սվանեթում տեղի էին ունենում ավատատիրական գժտություններ, որտեղ Դեդեշքելիանների տոհմի երկու ճյուղերն իշխանության համար պայքար էին մղում միմյանց դեմ: 1850–ական թթ. վերջին իր դիրքերն ամրապնդեց Դեդեշքելիանների ավագ ճյուղի ներկայացուցիչ Կոնստանդինը, որը դեռևս 1853 թ. ընդունել էր ռուսահպատակություն: Նրան հաջողվեց սպանել հակառակորդ թևի հավակնորդին և ողջ Սվանեթը միավորել իր իշխանության ներքո: Կոնստանդինի գործելակերպը, սակայն, վտանգավոր էր ռուսական կողմի համար, որովհետև Սվանեթը, ունենալով ռազմավարական անառիկ դիրք և գտնվելով Կարաչայների, Ցեբելդայի և Սամուրզականոյի միջև, կարող էր դառնալ ռուսական իշխանություններից դժգոհ տարրերի համար

թաքստոց ու հենակետ՝ բարդություններ առաջացնելով կառավարման գործում և հարցականի տակ դնելով Արևմտյան Կովկասում Ռուսաստանի դիրքերի ամրապնդման գործը: Այդ է պատճառը, որ ցարիզմին ձեռնտու չէր որևէ մեկի վիճարկող իշխանության հաստատումը՝ ստեղծելով լարվածություն ռուսական կողմի համար: 1857 թ. հուլիսին Դեդեշքելիանների տուժած կողմի իրավունքների վերականգնման պատրվակով ռուսական զորքերը մուտք գործեցին Սվանեթ չորս կողմից՝ Մեգրելիայից, Ցեբելդայից, Կիսլովոդսկից և Նալչիկից: Կոնստանդին Դեդեշքելիանին անհեռանկար համարելով պայքարն այդ զորքերի դեմ, հանձնվեց Վերին Սվանեթի ռուսական հրամանատարությանը: Եղբայրներ Կոնստանդինին և Ալեքսանդրին տեղափոխեցին Թիֆլիս:

Փոխարքա Բարյատինսկին որոշեց դադարեցնել հակամարտ կողմերի միջև պայքարը՝ նրանցից յուրաքանչյուրի համար առանձնացնելով անձնական կալվածքներ: Այդ նպատակով Սվանեթում սկսվեց գույքագրման գործընթաց, որը պետք է ճշտեր տոհմերի ունեցվածքը: Միաժամանակ Սվանեթից դուրս հանված եղբայրներին և այլ «վտանգավոր» անձանց չէր թույլատրվում վերադառնալ:

Իշխան Կոնստանդին Դեդեշքելիանին հսկողության տակ էր Քութայիսում, որտեղից որոշեցին նրան տեղափոխել Երևան: Երբ այդ մասին 1857 թ. հոկտեմբերին տեղեկացրին իշխանին, նա խնդրեց կարճ ժամանակով թույլատրել գնալ Սվանեթ՝ կարգի բերելու իր գերդաստանը, ինչը մերժվեց ռուսների կողմից: Վիճաբանության ընթացքում Դեդեշքելիանին մահացու վիրավորեց Գագարինին, փոխարքայի թիկնապահին և սպանեց պաշտոնյաներից երկու անձի: Այդ քայլի համար Կոնստանդինին բանտարկեցին և ենթարկեցին մահապատժի: Նրա ունեցվածքը գրավվեց հարքունիս, իսկ նրա տոհմի ներկայացուցիչներին, փոխհատուցում տալով իրենց ունեցվածքի համար, արտաքսեցին Սվանեթից:

1859 թ. ռուսական իշխանությունները ստիպեցին իրենց ժառանգական իշխանի իրավունքներից հրաժարվել նաև հակառակորդ թևի ներկայացուցիչներին ու Սվանեթում հաստատեցին ռուսական կառավարում:

Ռուսական կայսրությունը բավականին հանգամանորեն նախապատրաստել էր նաև Աբխազիայի իշխանության վերացման և այնտեղ ռուսական վարչակազմ հաստատելու գործընթացը:

Աբխազիայի տիրակալ Միխայիլ Շերվաշիձեն մեծ հեղինակություն ուներ Աբխազիայում և Հյուսիսային Կովկասի ցեղախմբերի մեջ, ուստի նրա հետ լավ հարաբերությունների պահպանումն ու նրա իշխանության պահպանման անհրաժեշտությունը դեռևս մինչև 1864 թվականը կասկածի տեղիք չէր տալիս: 1859 թ. օգոստոսի 25–ին Գունիբի գրավումով ու Շամիլի ձերբակալումով ավարտվել էր Կովկասի արևելյան հատվածի, այդ թվում նաև Դաղստանի հնազանդեցումը: Դա հնարավորություն ընձեռեց ցարիզմին՝ անցնելու Կովկասյան լեռնաշխարհի արևմտյան հատվածում իր իշխանության հաստատմանը: 1863 թ. ռուսական զորքերը գրավեցին Կուբանը: 1864 թ. մարտին հնազանդեցվեցին ուբըխները, իսկ 1864 թ. հանդիսավորությամբ նշվեց Կովկասյան պատերազմի ավարտը:

Ռուսաստանի համար Աբխազիայի իշխանության պահպանումն այլևս դադարեց անհրաժեշտություն լինելուց: 1864 թ. մարտին Կովկասի փոխարքան դիմեց կայսր Ալեքսանդր Բ–ին՝ Աբխազական իշխանությունը վերացնելու առաջարկությամբ: 1864 թ. ապրիլի 1–ին ռազմական նախարարը հայտնեց կայսեր որոշումը Աբխազիայում Միխայիլ Շերվաշիձեի իշխանության վերացման վերաբերյալ: Շերվաշիձեին առաջարկվեց կամավոր հրաժարվել իր ժառանգական իրավունքներից: Վերջինս համաձայնեց կատարել այդ պահանջը՝ խնդրելով միայն թույլատրել ապրել Աբխազիայում: 1864 թ. հունիսին հայտարարվեց Աբխազիայում «Ժամանակավոր ժողովրդական կառավարում» մտցնելու որոշման մասին: Թեև Մ. Շերվաշիձեն որևէ դիմադրություն չցուցաբերեց այդ գործընթացին, ռուսական իշխանություններն, այնուամենայնիվ, նրան բռնի տեղափոխեցին Ստավրոպոլ, այնուհետև՝ Վորոնեժ, որտեղ էլ նա 1866 թ. վախճանվեց:

Այսպիսով՝ նշված շրջանում ավարտվում էր Կովկասը նվաճելու ուղղությամբ ցարիզմի մղած դարավոր պայքարը:

1864 թ. մայիսին ռուսական զորքերը գրավեցին Արևմտյան Կովկասի լեռնականների վերջին աուլները:

Վրաստանում ինքնիշխան իշխանությունների վերացմամբ վերջնականապես ոչնչացվեցին ավատական տրոհվածության մնացուկները: Վրաստանում և ողջ Այսրկովկասում հաստատվեց միասնական ռուսական վարչություն:

XIX դ. 30–ական թվականներից սկսած՝ Վրաստանում ստեղծվում են հարաբերականորեն բարենպաստ պայմաններ տնտեսության զարգացման համար: Երկրում հաստատվել էր խաղաղություն, դադարել էին ելուզակային բանդաների ասպատակությունները, արմատախիլ էր արված գերիների վաճառքը: Մասնակիորեն վերացվել էին կամայականություններն ու բռնությունները պարտադիր պետական պարհակներն իրագործելու ժամանակ:

Ռուսական շուկան մեծ պահանջարկ էր ներկայացնում վրացական գինու, մետաքսի, ծխախոտի, տորոնի և այլ ապրանքների նկատմամբ: Վրաստանը հնուց ի վեր հայտնի էր որպես գյուղատնտեսական մշակաբույսերի բազմազանությամբ հայտնի երկիր: Ցարական կառավարությունը երկրի գաղութային շահագործման նպատակով նպաստում էր արդյունաբերական հումքի նշանակություն ունեցող արտադրանքի ստեղծմանը:

1833 թ. Թիֆլիսում ստեղծվում է «Գյուղատնտեսական և մանուֆակտուրային արդյունաբերության խրախուսման ընկերությունը», 1836 թ.՝ «Մետաքսագործության և առևտրի տարածման ընկերությունը»: Կազմակերպվում են փորձարարական–ցուցադրական բուժարաններ, այգիներ, անասնապահական ֆերմաներ: Արտասահմանից և Ռուսաստանից բերվում են տեխնիկական մշակաբույսերի տնկիներ, որակյալ սերմեր, կատարելագործված հողագործական գործիքներ: Առանձնակի զարգացում ապրեց Վրաստանի գյուղատնտեսության հիմնական մթերքների՝ հացի ու գինու արտադրությունը: Այդ մթերքների արտադրողների համար սահմանվեցին ձեռնտու գներ: Տեղի էր ունենում նոր հողատարածքների յուրացման

գործընթաց: 1821–1861 թթ. ցորենի բերքը ավելացավ երեք անգամ: Ավելացավ նաև եգիպտացորենի պահանջարկը, որն Արևմտյան Վրաստանից արտահանվում էր Թուրքիա և Եվրոպա:

Նշանակալիորեն ավելացավ նաև ապրանքային գինու արտադրությունը: Մեծ աշխուժություն էր նկատվում մետաքսագործության բնագավառում: 1840–1850–ական թթ. հայտնվեցին համեմատաբար խոշոր ձեռնարկություններ, որոնք հագեցած էին Եվրոպայից բերված հաստոցներով, և օգտագործվում էր վարձու աշխատանքը:

1840–ական թվականներից սկսած՝ Վրաստանի գյուղատնտեսության մեջ զարգացում են ապրում կարտոֆիլի, կաղամբի, բամբակի, ծխախոտի, թեյի, տորոնի և այլ կուլտուրաներ: Ծխախոտագործությունը դառնում է ապրանքային հողագործության աչքի ընկնող ճյուղը:

Ավատատերերն ընդլայնում էին իրենց մշակովի հողերը, հիմնում ընդարձակ խաղողի և պտղատու այգիներ ու եկամտաբեր պլանտացիաներ: Կալվածատերերից ոմանք օգտագործում էին վարձու աշխատանքը, գյուղատնտեսական մեքենաներ ու կատարելագործված գործիքներ: Այդ բոլորն անհարիր էր ճորտատիրական տնտեսական կարգին, որն արգելակում էր երկրի հետագա զարգացումը:

Գյուղացիական ռեֆորմին նախորդող տարիներին ավատա–ճորտատիրական գյուղատնտեսության ընդերքում ծնունդ առավ կապիտալիստական ապրանքային արտադրությունը: Հայտնվեցին ազատ վարձու աշխատանքի վրա հիմնված՝ բուրժուական տիպի տնտեսություններ, ինչպես, օրինակ՝ բարոն Նիկոլայի տնտեսությունը Թիֆլիսի գավառում, Օնանովինը՝ Իմերեթում:

Ապրանքային արտադրության աճի հետ միաժամանակ խորանում էր նաև աշխատանքի հասարակական բաժանումը, ընդլայնվում էր ներքին շուկան, վերանում էր առանձին շրջանների տնտեսական պարփակվածությունը:

Եվրոպայից էժան ապրանքների հոսքը վրացական շուկա, Ռուսաստանի տնտեսական կյանքի հետ մերձեցումը մեծ ազդեցություն գործեցին տեղական արհեստագործական արտադրության վրա: Արհեստագործական ապրանքները թանկ էին և ցածր որակի: Այն դեպքում, երբ քաղաքներում հայտնվել էին եվրոպացիներ, եվրոպական ճաշակի տեր և եվրոպական կյանքի սիրահարներ, արհեստագործության ապրանքներն այլևս չէին կարող բավարարել մարդկանց նոր պահանջները: Նման պայմաններում արհեստավորական համքարային կազմակերպությունը հայտնվեց ճգնաժամային վիճակում: Խոշոր ձեռնարկությունների ստեղծումը դարձել էր ժամանակի պահանջ: Այդ ամենը պայմաններ էր ստեղծում կապիտալիստական տնտեսության ծննդի ու զարգացման համար: Նախառեֆորմյան տարիներին Թիֆլիսում և այլ քաղաքներում հայտնվեցին կապիտալիստական տիպի մի քանի մանուֆակտուրաներ, գործարաններ ու ֆաբրիկաներ: Քութայիսում, Օրփիրիում և Զուգդիդիում օտարերկրյա դրամատերերը բացեցին մետաքսագործական ձեռնարկություններ: Այսպիսով՝ ավատատիրության ընդերքում ծնունդ էին առնում և

զարգանում բուրժուական հարաբերությունները, և դա ճորտատիրական կարգերի վերացման նախագուշակն էր:

XIX դ. 30–40–ական թվականներից սկսած՝ նկատվում էր բնակչության զգալի աճ: 1846 թ. Վրաստանի տարածքում բնակչության թիվը չէր գերազանցում 900 հազարը, իսկ 1859 թ. այն հասավ մեկ միլիոնի: Այդ հանգամանքը երկրի տնտեսական առաջընթացի ցուցանիշն էր: 1847 թ. ողջ Կովկասի վարչական կենտրոն Թիֆլիսում ապրում էր 44 հազար մարդ, իսկ 1862 թ.՝ մոտ 62 հազար: 15 տարվա ընթացքում բնակչության աճը կազմում էր մոտ 40 տոկոս:

1840–ական թվականներից սկսած՝ Թիֆլիսում բուրժուական հարաբերությունների նշանակալի զարգացման արդյունքում աստիճանաբար փոխվեց հին ավատական քաղաքի տեսքը: Տեղի ունեցավ արդյունաբերության ու առևտրի աճ: 1860–ական թթ. սկզբին Թիֆլիսում կային 116 մանր ձեռնարկություններ, ֆաբրիկաներ ու գործարաններ, որոնց արտադրած ապրանքների արժեքը կազմում էր մոտ 600 հազար ռուբլի: 1832 թ. համեմատությամբ 1850 թ. Թիֆլիսի առևտրական շրջանառությունը մեծացավ երեք անգամ:

Մեծացավ նաև Թիֆլիսի նշանակությունը որպես երկրի մշակութային կենտրոն: 1840–1850–ական թվականներից այստեղ սկսում են գործել ռուսական թատրոն և իտալական օպերա: Իր գործունեությունը վերականգնում է նաև վրացական դրամատիկական թատրոնը, ստեղծվում է հանրային գրադարան, ավելանում է ուսումնական հաստատությունների թիվը, հրատարակվում են ռուսերեն թերթեր, վրացերեն «Ցիսկարի» («Արշալույս») ամսագիրը, զարգացում են ապրում Վրաստանի առաջադեմ հասարակական ուժերը:

1840–ական թվականներից սկսած Թիֆլիսի հետ միաժամանակ զարգանում են Քութայիսը, Գորին, Թելավը, Սղնախը, Ախալցխան, Քուլևին, Փոթին, Սուխումը, Ցխինվալը, Դուշեթը և այլն: Այդ ժամանակ հիմնադրվում է քաղաքատիպ ավան Բորժոմը, որը վերածվում է հանգստավայրի և Կովկասի փոխարքայի ամառային նստավայրի:

Քաղաքային կյանքի աճը լուրջ գործոն դարձավ բնամթերային տնտեսության քայքայման համար: Նշված շրջանում ներքին առևտուրը լայն թափ ու ծավալ ստացավ: Այսուհետև վաճառականի կյանքն ու նրա սեփականությունը, ի տարբերություն նախկին ժամանակների, պաշտպանվում էին ավելի հուսալի ձևով: Ավելացավ վաճառականների թիվը:

Առևտուրը, որը նախկինում համարվում էր ազնվականների համար նվաստացուցիչ զբաղմունք, այժմ դառնում էր սովորական ինչպես նրանց, այնպես էլ գյուղացիության համար: Վաճառականներից ոմանք դառնում էին արդյունաբերող–կապիտալիստներ:

Ներքին և արտաքին առևտրի զարգացմանը նշանակալի չափով նպաստում էր արագ զարգացող ճանապարհաշինությունը: Սկսվեց ծովային երթևեկություն: Բարելավվեց նավագնացությունը Ռիոնի և Կուր գետերի վրա:

1847–1848 թթ. կանոնավոր նավային հաղորդակցություն հաստատվեց Ղրիմի և Օդեսայի հետ: 1858 թ. բացվեց Փոթիի նավահանգիստը: 1860 թ. Վրաստանը հեռագրական գծով կապվեց Ռուսաստանի կենտրոնական քաղաքների հետ:

1840–1850–ական թվականներին սիստեմատիկորեն Քուլևի նավահանգիստն էին ժամանում առևտրական նավեր Լոնդոնից, Կոստանդնուպոլսից, Տրապիզոնից և այլ վայրերից: Ամրապնդվեց առևտրական–ծովային կապը Ռուսաստանի այնպիսի քաղաքների հետ, ինչպիսիք էին Կերչը, Եվպատորիան, Ռոստովը, Թեոդոսիան և այլն: Ռուսական և օտարերկրյա նավերը Վրաստան ու Հարավային Կովկաս էին բերում ամենաբազմապիսի արդյունաբերական ապրանքներ, իսկ այնտեղից արտահանում էին նավթ, փայտ, արդյունաբերական հումք, ցորեն, գինի և այլ ապրանքներ:

1830–1840–ական թվականներին առևտրական և վաշխառուական կապիտալը մեծ թվով կալվածատերերի զրկեց իրենց սեփականությունից: Ավելացան անվճարունակ պարտապանների հողերի աճուրդով վաճառքի դեպքերը: Ավատատերերի մեծ մասի փորձերը՝ պետությունից ստացած վարկերի միջոցով վերակառուցելու իրենց տնտեսությունը, կազմակերպելու ապրանքային արտադրություն, ավարտվում էին անհաջողությամբ: Ուժեղացավ պայքարը հողեր զավթելու համար: Գանձարանը և ավատատերերը զավթեցին ընդարձակ անտառներ ու արոտավայրեր:

Նշված պայքարում տուժեց արտադրողների դասը: Աստիճանաբար կրճատվում էր գյուղացիությանը պատկանող հողակտորների տարածքը: Եթե XIX դ. սկզբին գյուղացիներին պատկանող հողակտորների տարածքը միջին հաշվով կազմում էր 10–20 դեսյատին, ապա գյուղացիական ռեֆորմի նախօրյակին այն կրճատվեց մինչև 5–6 դեսյատին: Ավելացավ այն ճորտերի թիվը, որոնք կա՛մ ընդհանրապես չունեին հողակտորներ, կա՛մ դրանք այնքան փոքր էին, որ դրանցից հավաքված բերքը չէր բավարարում նրանց նվազագույն պահանջը:

Անտարակույս, այդ երևույթը ճորտատիրական տնտեսության դեգրադացման ցուցանիշն էր: Նման գյուղացիներն անձնական կախման մեջ էին ընկնում իրենց կալվածատերերից և իրենց գոյությունը պահպանում էին սեփական աշխատուժի վաճառքի միջոցով: Միաժամանակ, գյուղում խորանում էր գյուղացիության շերտավորման գործընթացը: Հարուստ գյուղացիներն ու կուլակային տարրերը նախ և առաջ հայտնվեցին պետական գյուղացիների շրջանում, որոնք գնում էին հողեր, իրենց տնտեսության մեջ օգտագործում էին վարձու աշխատանք ու մթերքներ էին արտադրում վաճառքի համար:

Ապրանքադրամական հարաբերությունների զարգացումը, արդյունաբերության աճը և քաղաքային կյանքի աշխուժացումը, գյուղացիների արտագնա աշխատանքների գնալու հաճախակի դառնալը առաջացրին ավատական հարաբերությունների քայքայում, որի հետևանքով ուժեղացավ գյուղացիության շահագործումը: Նրանք ի վիճակի չէին կատարելու կալվածատերերի բոլոր պահանջները, իսկ վերջիններս ճորտ գյուղացիներին վերաբերվում էին է՛լ ավելի մեծ դաժանությամբ: Սովորական երևույթ դարձավ գյուղացիներին ծեծի ենթարկելը, նրանց կանանց և

աղջիկների պատվին վիրավորանք հասցնելը: Հաճախ խախտելով հին ճորտատիրական նորմերը՝ կալվածատերերը վաճառում էին իրենց ճորտերին: Երբեմն իրենց գյուղացիներին փոխանակում էին հեծկան ձիերի, որսորդական բազեների ու շների հետ: Այդ բոլորը, բնականաբար, առաջ էր բերում գյուղացիության ուժգին դիմադրությունը: Հաճախակի դարձան ճորտ գյուղացիների կողմից դաժան տերերի սպանությունները: Ընդ որում, նման արարքի դիմած գյուղացիները բարձրանում էին լեռները, մտնում էին անտառները և դառնում «ղաչաղներ»:

1830–1840–ական թվականներին հայտնի դեմք էր «ղաչաղ» Արսեն Օձելաշվիլին, որը պայքարում էր ճորտատիրական կարգերի անարդարությունների դեմ: 1843 թ. ցարական գործակալները Մցխեթի մոտ սպանեցին նրան: Էպիկական բանաստեղծություններում և երգերում ժողովուրդը փառաբանում ու գովերգում էր գյուղացիական հերոսի խիզախությունն ու նրա սխրագործությունները:

Գյուղացիները կալվածատերերի կամայականությունների դեմ հանդես էին գալիս ոչ միայն անհատապես, այլև միավորվում էին և կազմակերպում ապստամբություններ: Ճորտատիրության դեմ գյուղացիության պայքարն առանձնակի ուժգնության հասավ 1850–ական թթ. սկզբից: 1852 թ. ապստամբություն բռնկվեց Ռաչայում, 1854 թ.՝ Ախալցխայում, 1856 թ.՝ Գուրիայի գավառներում, 1857 թ. շարժում ծավալվեց Մեգրելիայում: Ցարական կառավարությունն ապստամբների ղեկավարներին ձերբակալում ու աքսորում էր Սիբիր, սակայն մի վայրում շարժումը ճնշելուց հետո այն բռնկվում էր մեկ այլ վայրում:

Նախկինում Մեգրելիայում գոյություն ունեցած սովորույթի համաձայն՝ կալվածատիրոջ համար աշխատող գյուղացուն պետք է կերակրեր նրա տերը: Իսկ այժմ գյուղացիներին քշում էին աշխատանքի, ստիպում էին կերակրվել իրենց հաշվին: Նմանատիպ վարմունքի կամայականությունների ու բռնությունների հետևանքով ծայրահեղ հուսահատության հասած գյուղացիությունը դիմում էր զենքի: 1857 թ. Մեգրելիայում բռնկվեց խոշոր ապստամբություն, որը համակեց ողջ երկրամասը: Գյուղացիները ջարդուփշուր էին անում և կրակի մատնում կալվածատիրական դաստակերտները, սպանում առավել ատելի կալվածատերերին: Դա տարերային գյուղացիական շարժում էր, ուստի և շուտով պարտություն կրեց: Ցարական կառավարությունը շարժման ղեկավարներին և առավել ակտիվ մասնակիցներին աքսորեց Սիբիր:

1850–ական թթ. վերջին գյուղացիական ապստամբությունները չէին դադարում: Գյուղացիների բազմաթիվ ելույթները մոտեցնում էին ճորտատիրական կարգերի ավարտը:

ԳԼՈՒԽ ԵՐԵՔՈՐԴ

ՎՐԱՍՏԱՆԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

1. ՃՈՐՏԱՏԻՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՃՈՐՏԱՏԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ

Ճորտատիրական հարաբերությունների գոյությունը Վրաստանում սպառել էր իրեն: Ճորտատիրությունը դարձել էր ժամանակավրեպ նաև Ռուսաստանում: Ղրիմի պատերազմի դասերի շարքում այդ հանգամանքը կայսերական արքունիքի համար դարձել էր միանգամայն ակնհայտ:

1856 թ. մարտի 30–ին, այսինքն՝ Փարիզի խաղաղության պայմանագրի ստորագրումից 12 օր անց, Ալեքսանդր Բ ցարը, որը, մինչ այդ լինելով գահի ժառանգորդ, լսել անգամ չէր ուզում ճորտատիրական իրավունքի վերացման մասին, մոսկովյան ազնվականության ներկայացուցիչների առջև հանդես եկավ ճառով և նշեց, որ կառավարությունը չի կարող դիմել առավել լավագույն միջոցի, քան սպասումը, երբ ճորտերն իրենց կազատագրեն «ներքևից»:

«Լուրեր են պտտվում,— իր ճառում ասաց ցարը,— որ ես ցանկանում եմ ազատություն շնորհել գյուղացիներին, դա արդարացի չէ, և դա դուք կարող եք աջ ու ձախ բոլորին ասել, սակայն գյուղացիների և նրանց կալվածատերերի միջև թշնամական զգացումը, դժբախտաբար, գոյություն ունի, և կալվածատերերին չհնազանդվելու մի քանի դեպքեր արդեն տեղի են ունեցել: Ես համոզված եմ, որ վաղ թե ուշ մենք գալու ենք դրան: Կարծում եմ, որ դուք ևս համակարծիք եք ինձ հետ, հետևաբար ավելի լավ է, որ դա տեղի ունենա վերևից, քան ներքևից»:

Ճորտատիրական կարգի վերացման վերաբերյալ Ռուսաստանից եկող լուրերը վրաց ավատատերերի շրջանում առաջացնում էին խուճապային տրամադրություններ: Նրանք թշնամաբար էին տրամադրված դարերի ավանդույթով սրբագրված այդ երևույթի դեմ որևէ քայլի ձեռնարկման նկատմամբ:

Մինչդեռ միանգամայն ակնհայտ էր, որ ճորտատիրական տնտեսությունը երկրում ոչ միայն ճգնաժամ է ապրում, այլև թևակոխել է քայքայման ուղին: Խախտվել էր նրա ինքնաբավությունը: Եթե նախկինում ազնվականությունը բավարարվում էր իր կալվածքներից ստացվող հարկերով ու տուրքերով, իսկ գյուղացիությունը՝ տարվա ընթացքում իր ձեռք բերած պաշարով, ապա դրամի պահանջարկի մեծացումը արմատապես փոխում էր իրավիճակը:

Եվրոպական կենցաղի մուտքը Վրաստանի քաղաքային կյանք, ազնվականական ակումբների բացումը, թատրոնների, նոր տիպի դպրոցների, պալատների և

այլևայլ պահանջմունքների բավարարման համար ավելի մեծ ծախսեր էին պահանջվում: Մշտապես դրամական կարիք ունեցող ազնվականությունը կյանքի նոր պայմաններում «մակերեսի վրա» մնալու և իր ազնվականական «պատիվը» չարատավորելու մտահոգությամբ նույնիսկ դիմում էր իր կալվածքները վաճառքի հանելու միջոցին: Հարաճուն կերպով մեծացող վաշխառությունը ոմանց զրկում էր իրենց կալվածքներից: Հին ավատատիրական տների մեծ մասը ունեզրկվեց ու աղքատացավ: Ստեղծվեց ավատական հողատիրության ճգնաժամ: Այդ երևույթը խոր մտահոգություն ու տագնապ էր առաջացնում ցարական իշխանությունների մոտ, քանի որ սպառնալիքի տակ էր դրվում նրանց սոցիալական հենարանի գոյությունը: Ուստի ավատատերերի նյութական դրությունը բարելավելու նպատակով կառավարությունը սկսեց նրանց տրամադրել ցածր տոկոսադրույքներով վարկեր: 1849 թ. բացված բանկը շատերին փրկեց կալվածքները կորցնելու իրական վտանգից:

Գնալով պայքարը հողի համար ընդունում էր թեժ բնույթ: Ընդ որում՝ այդ պայքարը ծավալվում էր ոչ միայն ազնվականության ու գյուղացիության միջև, այլև հենց գյուղացիական տնտեսությունների միջև: Աստիճանաբար ստեղծվում էր հողատերերի նոր խավ, որի ձեռքն էր անցնում նախկին ավատատերերի կալվածքների մի մասը: Ձևավորվում էր նաև հողատերերի մի խավ, որը հողօգտագործումը չէր իրականացնում ճորտերի շահագործման եղանակով, այլ օգտագործում էր վարձու աշխատանք՝ ճանապարհ հարթելով դեպի կապիտալիստական և արտադրական հարաբերությունների ներմուծում: Արքունիքն ու ավատատերերը ձեռք բերեցին համայնքային և հասարակական օգտագործման հողերը, հատկապես անտառներն ու արոտավայրերը: Գյուղացիական հողակտորների կրճատումներն իրենց բացասական հետքն էին թողնում նաև կալվածատերերի եկամուտների վրա:

Ավատատերերի մի մասը փորձում էր բարձրացնել հողի մշակման և օգտագործման արդյունավետությունը, հիմնադրել գյուղմթերքների ապրանքային–շուկայական արտադրություն: Այդ ոլորտում նրանք օգտվում էին կառավարության աջակցությունից. ստանում էին արտոնյալ վարկեր, գյուղատնտեսական գործիքներ և այլն: Կատարելագործվում էր գյուղատնտեսական տեխնիկան: Աստիճանաբար ակնհայտ էր դառնում աշխատանքի կիրառման արդյունավետությունը:

Ճորտատիրական իրավունքի վերացումից առաջ վրացական գյուղում առաջացան վարձու աշխատանքի վրա հիմնված բուրժուական բնույթի որոշ տնտեսություններ:

Ավատատերերի շրջանում խուճապն ուժեղացավ 1858 թվականից, երբ ավելի որոշակի սկսեցին շրջանառվել ճորտատիրական իրավունքի վերացման վերաբերյալ լուրերը: Ավատատերերը սկսեցին մտածել տնտեսությունը մեքենայացնելու մասին: Չնայած որոշ հաջողակների փորձին՝ ավատատերերի մեծ մասը չկարողացավ վերակազմակերպել տնտեսավարությունը: Արդյունաբերության համեմատությամբ գյուղատնտեսության մեջ ավելի հստակ էր ուրվագծվում անհրաժեշտ կապիտալի և ազատ աշխատուժի բացակայությունը, ճորտերի աշխատանքով անհնար էր տնտեսության մեքենայացումը: Դա ավելի էր դժվարանում արդյունաբե-

ության հետամնացության և քաղաքային բնակչության համեմատաբար փոքրաթիվ պայմաններում: Ցածր մակարդակի վրա էին նաև շուկայական հարաբերությունները: Քաղաքային բնակչության մեջ զգալի թիվ էին կազմում գյուղատնտեսական արտադրության մեջ զբաղվածները: Երկրի հետագա առաջընթացի համար անհրաժեշտ էր ճորտերի ազատագրումը, ճորտատիրական իրավունքի վերացումը: Ռուսական տիրապետության շրջանում աստիճանաբար վրացական և ռուսական ճորտատիրության միջև եղած առանձնահատկությունները համահարթվել էին և դարձել միանման: Ավատատիրոջ և ճորտ գյուղացու միջև նախկինում եղած միջանկյալ օղակները վերացել էին, և հարաբերությունը նրանց միջև դարձել էր անմիջական: Աստիճանաբար վերանում էին իրավական տարբերությունները կախյալ գյուղացիների տարբեր խմբերի միջև: Այժմ արդեն ավելի տեսանելի էին նրանց միջև եղած ունեցվածքային տարբերությունները:

1830–1840–ական թթ. ապրանքադրամական հարաբերությունների զարգացումը դրսևորվեց նաև դրամական հարկերի մեծացման մեջ: Պետական հարկերի մեջ մեծացան դրամական պարտույթները: Դրամի նկատմամբ պահանջարկը մեծացավ նաև գյուղացիական տնտեսության մեջ, որն ապրանքային բնույթ էր ստանում: 1837 թ. Սղնախում արքունի գյուղացիներ Շահվերդովները կազմակերպել էին բամբակի մանրաթելի արտադրություն, որտեղ աշխատում էին 25 վարձու մշակներ:

Ճորտ գյուղացիները փորձում էին դրամ հայթայթել հող գնելու և կամ ճորտությունից փրկագնվելու համար, սակայն դա միայն քչերին էր հաջողվում:

1840–1850–ական թթ. հաճախացան ճորտերի ազատման դեպքերը: 1846–1855 թթ. միայն Քութաիսի նահանգում փրկագնվել էր 100 ծուխ: 1850–1864 թվականներին նույն նահանգում հաշվառվել էր 1314 դեպք: Ազատագրման նման հաճախացումը վկայում է, որ ճորտատիրությունը քայքայման ընթացքի մեջ էր:

Միաժամանակ հաճախացան նաև Վրաստանի տարբեր գավառներում բռնկվող գյուղացիական ապստամբությունները ավատատերերի ու իշխանությունների դեմ:

Տարերային գյուղացիական հակաավատատիրական շարժումը, որը սասանեց ճորտատիրական կարգերի հիմքերը, Վրաստանում առանձնակի թափ ստացավ 1850–ական թթ. վերջերին և 60–ականների սկզբին: Վրաստանի համարյա բոլոր մասերում գյուղացիությունը հանդես էր գալիս զենքը ձեռքին: 1857 թ. ճորտ գյուղացիության ելույթն Իմերեթում ընդունեց սպառնալից բնույթ: Քարթլիում ծայր առան գյուղացիական ապստամբություններ: Այդ շրջանում առավել հուժկու էր 1866 թ. ամռանը Աբխազիայում բռնկված շարժումը: Զինված գյուղացիների մի խոշոր ջոկատ պարտության մատնեց իրենց դեմ ուղարկված կազակական հարյուրյակին և շարժվեց դեպի Սուխում: Հուլիսի 27–ին գյուղացիական ջոկատները պաշարեցին Աբխազական սամթավրոյի (իշխանության) կենտրոն Սուխում քաղաքը և կատաղի մարտից հետո հենց նույն օրը գրավեցին այն: Սակայն նրանց չհաջողվեց գրավել քաղաքային ամրոցը, որտեղ տեղակայված էին ցարական զորքերը: Երկ-

որդ օրը ծովով Սուխումին մոտեցան Փոթիից ուղարկված կառավարական զորքերը, որոնք ապստամբներին մատնեցին պարտության: Կառավարությունը Աբխազիայում կենտրոնացրեց խոշոր ուժեր և դաժանորեն ճնշեց ապստամբությունը:

Գյուղացիության հետ միաժամանակ պայքարի ասպարեզ իջավ նաև քաղաքային չքավոր բնակչությունը, արհեստավորները, մանր առևտրականները, մասամբ նաև միջին և խոշոր բուրժուազիան, որը նոր–նոր էր սկսել ամրապնդել իր դիրքերը:

1865 թ. գարնանը կառավարությունը որոշեց գանձարանի հասույթներն ավելացնելու նպատակով Թիֆլիսում մտցնել նոր հարկեր: Դա լցրեց ժողովրդի համբերության բաժակը: Համքարությունները հրաժարվեցին վճարել այդ հարկերը և սկսեցին գումարել գաղտնի ժողովներ: Հունիսի 27–ի կիրակնօրյա առավոտյան Երևանյան հրապարակում գտնվող Թիֆլիսի վարչության առջև հավաքվեց մինչև 10 հազար մարդ: Հուզմունքով ու զայրույթով համակված ժողովուրդը բարձրաձայն արտահայտում էր իր պահանջները: Հրապարակ ժամանեց այդ ժամանակ փոխարքայի պաշտոնակատար Գ. Օրբելիանին: Ժողովուրդը սուլոցներով ու քարեր նետելով գեներալին ևս քշեց հրապարակից: Ապստամբներն ավերեցին քաղաքագլուխ Շերմազան–Վարդանյանի և հարկահավաք Բաժբեուկ–Մելիքովի տները: Վերջինիս տեղնուտեղը սպանեցին, իսկ Շամազան–Վարդանյանը հասցրեց թաքնվել: Իշխանությունները շուտափույթ համախմբելով իրենց ուժերը՝ անցան հարձակման: Թիֆլիսի փողոցներում կառավարական ուժերի և ապստամբած ժողովրդի միջև տեղի ունեցան արյունահեղ բախումներ, որոնց ընթացքում սպանվեցին մի քանի տասնյակ մարդիկ: Թիֆլիս հասան նաև բանակային ուժեր և գրավեցին քաղաքի գլխավոր փողոցները: Իշխանությունները միաժամանակ բնակչությանը հանգստացնելու նպատակով պաշտոնանկ արեցին քաղաքագլխին ու նրա տեղակալին և նշանակեցին Թիֆլիսի բուրժուական խավի առաջադրած թեկնածուին՝ միաժամանակ բնակչությանը խոստանալով դադարեցնել հարկի հավաքումը: Իշխանություններին հաջողվեց համեմատաբար կարճ ժամանակամիջոցում մարել ապստամբությունը: Ձերբակալվեց մոտ 80 անձ, որոնց մի մասը բանտարկվեց, իսկ մյուսներին աքսորեցին Սիբիր:

Երկրում ստեղծված նոր հասարակական–քաղաքական իրավիճակը հրապարակ բերեց նաև հասարակական գիտակցության մեջ նոր հայացքներ, մոտեցումներ, իրադրության նոր ընկալումներ: Տարածում գտան դեմոկրատական գաղափարները: Վրաց երիտասարդության այն սերունդը, որի գործունեության մեջ կամ ստեղծագործություններում դրսևորվել են նշված գաղափարները, ստացել էին ընդհանուր անվանում՝ «թերքդալեուլի», «Թերեքից ջուր խմածներ», որ նշանակում էր Թերեք գետն անցած և Ռուսաստանում կրթություն ստացած և գաղափարական ձևավորում ունեցողներ: Թերքդալեուլների սերնդին էին պատկանում Իլյա Ճավճավաձեն, Ակակի Ծերեթելին, Նիկո Նիկոլաձեն, Ռափիել Էրիսթավին, Դանիել Ճոնքաձեն, Յակոբ Գոգեբաշվիլին, Գեորգի Ծերեթելին, Անտոն Փուրցելիձեն, Կիրիլ Լորթիփանիձեն, Սերգեյ Մեսխին և շատ ուրիշներ:

Վրաց ժողովրդի այդ ուսյալ ներկայացուցիչները համարձակորեն փորձում էին սատար կանգնել ժողովրդի կեղեքվող ստորին շերտերին, լծվել նրանց ոտնահարված իրավունքների պաշտպանությանը: Թերքդալեուլների գլխավոր գաղափարական առաջնորդը Իլյա Ճավճավաձեն է:

Թերքդալեուլները պայքարի հիմնական ու գլխավոր միջոց էին համարում ժողովրդի շրջանում ազատագրական գաղափարների լայն քարոզչությունը: Նման քարոզչությունը նրանք առավելապես մղում էին լեգալ մամուլի միջոցով՝ երբեմն կիրառելով նաև անլեգալ միջոցներ:

Թերքդալեուլների հայացքներն առավել պարզությամբ ու լիակատարությամբ իրենց ստեղծագործություններում ձևակերպում էին անվանի վրացի գրողներն ու մտավորականները՝ Իլյա Ճավճավաձեն, Ակակի Ծերեթելին, Նիկո Նիկոլաձեն, Գեորգի Ծերեթելին:

Թերքդալեուլները ձգտում էին մարդկանց միջև հաստատելու այնպիսի հարաբերություններ, որպեսզի գոյություն չունենար սոցիալական և ազգային ճնշում, ոչնչացվեին ամեն տեսակի սոցիալական արտոնությունները, և բոլոր մարդիկ օրենքի առջև ունենային միատեսակ իրավունք: Նրանք ջանքեր էին գործադրում ուղիներ գտնելու համար, որպեսզի կառուցվեր այնպիսի արդար հասարակություն, որտեղ տիրապետեր «եղբայրությունը, հավասարությունը և ազատությունը»:

Թերքդալեուլները անկեղծորեն հավատում էին, որ եթե իրենց ապագայի տեսլականը հանդիսացող «արդար հասարակությունը» կառուցվի, այն վրաց ժողովրդին կբերի կատարյալ երջանկություն: Թեև նրանց այդ մտածումներն իրական հիմքեր չունեցող երազանքներ էին, սակայն դրանով հանդերձ՝ թերքդալեուլների շարժումն անհետևանք չմնաց՝ նպաստելով ժողովրդական գիտակցության զարգացմանը և նրա հետագա պայքարի վերելքին:

XIX դ. 50–ական թթ. ակնհայտ դարձավ, որ առանց ճորտատիրության վերացման անհնար է բուն Ռուսաստանի տնտեսական և հասարակական առաջընթացը և նրա արտադրողական ուժերի հետագա զարգացումը:

1861 թ. փետրվարի 19–ին Ալեքսանդր Բ կայսրը հրովարտակ («Մանիֆեստ») ստորագրեց Ռուսաստանում ճորտատիրական իրավունքի վերացման վերաբերյալ: Ճորտատիրության վերացումը անհետաձգելի խնդիր դարձավ նաև Վրաստանում: Դեռևս Կովկասում փոխարքա ֆելդմարշալ Ալեքսանդր Բարյատինսկու կարգադրությամբ Վրաստանում ձեռնամուխ եղան գյուղացիական բարեփոխմանը: 1861 թ. ընթացքում Թիֆլիսի նահանգի գավառներում տեղի էին ունենում ազնվականական ժողովներ, որոնց ընթացքում պետք է մշակվեին գյուղացիների ազատագրման պայմանները: Սակայն այդ ժողովները ոչ մի արդյունքի չկարողացան հասնել: Բախումների նախապատրաստությունը ձգձգվում էր, քանի որ ազնվականական դասը չէր ցանկանում զրկվել իր իրավունքներից, ունեցած դիրքից և ձգտում էր պահպանելու ճորտատիրական իրավունքը:

1862 թ. ապրիլին Թիֆլիսում հրավիրվեց արևելավրացական ազնվականության նահանգային հավաք, որտեղ մշակվեցին գյուղացիական բարեփոխումների ուղ-

ողորդիչ սկզբունքները: Դրանց հիման վրա ժողովը հանձնարարեց նշանավոր հասարակական գործիչ Դմիտրի Ղիփիանիին՝ կազմելու բարեփոխումների նախագիծ: Վերջինս վրաց լիբերալ ազնվականության ներկայացուցիչ էր: Լիբերալներն ակնհայտորեն հարեցին պահպանողականների թևին և պահանջում էին ճորտատիրության վերացումն իրականացնել առանց գյուղացիներին հողի տրամադրման: Այդպես վարվեց նաև Դմիտրի Ղիփիանին՝ պաշտպանելով վրաց ազնվականության շահերը, ինչի համար Թիֆլիսի ազնվականությունը նրան ընտրեց որպես իր առաջնորդ: Ղիփիանիի նախագծին հավանություն տվեց վրաց ազնվականության մեծամասնությունը: Գյուղացիության շահերի պաշտպանությամբ հանդես եկան նոր սերնդի ներկայացուցիչ թերքդալեուլները: Այդ երկու կողմերի միջև հակասությունները հասան այնպիսի լարվածության, որ ազնվականական ժողովներից մեկի ժամանակ փորձ կատարվեց ահաբեկման ենթարկել Իլյա Ճավճավաձեին, որը հազիվ խուսափեց մահից: Այդ ժողովում Ճավճավաձեն հայտարարել էր, որ գյուղացիները պետք է հող ստանան:

Ցարական կառավարությունը մի կողմից ձգտում էր պաշտպանելու ազնվականության շահերը, սակայն մյուս կողմից տեղի տալով աճող դժգոհությունների ալիքին և ելնելով պետական գանձարանի մուտքերն ապահովելու խնդրով՝ ընտրեց հետևյալ ուղին. գյուղացիները կարող էին ունենալ ոչ մեծ չափերի հողակտորներ՝ պայմանով, որ այդ հողակտորներից օգտվելու համար վճարեն պետական հարկեր որոշակի ժամկետի ընթացքում, իսկ ժամկետն ավարտվելուց հետո գյուղացիները կարող էին գնել այդ հողերը հողատիրոջից և դառնալ նրանց սեփականատերը:

Մինչև հողակտորների փրկագնումը գյուղացիները համարվում էին «ժամանակավոր պարտապան գյուղացիներ»:

1864 թ. հոկտեմբերի 13–ին Կովկասի փոխարքա Նիկոլաևիչը հաստատեց «հիմնական դրույթները», որոնցում ձևակերպված էին Թիֆլիսի նահանգի գյուղացիության ազատագրման պայմանները: Նույն թվականի նոյեմբերի 8–ին Թիֆլիսում և Արևելյան Վրաստանի բոլոր գավառական կենտրոններում միաժամանակ հայտարարվեց ճորտատիրության վերացման մասին: «Հոկտեմբերի 13–ի դրույթները» այնուհետև տարածվեցին նաև Արևմտյան Վրաստանում: Քութայիսի նահանգում (Իմերեթ, Ռաճա և Գուրիա) ճորտատիրության վերացումը հայտարարվեց 1865 թ. նոյեմբերին, իսկ Մեգրելիայում՝ 1867 թ. փետրվարին: Աբխազիայում ճորտատիրությունը վերացվեց 1870 թ., Սվանեթում՝ 1871 թ.:

Կառավարության հանձնարարությամբ ամենուրեք ճորտատիրության վերացման հայտարարումը ուղեկցվում էր մեծ հանդիսություններով, որոնք նախապես մշակվում էին: Կառավարությունը փորձում էր բարեփոխությունը ներկայացնել որպես գյուղացիությանը երջանկություն պարգևող հանգամանք: Մինչդեռ գյուղացիներն «ազատագրվում» էին առանց հողերի, կալվածատերերն իրենց տրամադրության տակ էին թողնում ընդարձակ ու լավագույն հողերը, իսկ վատ հողերը հատկացնում էին գյուղացիներին, այն էլ՝ հետգնման պայմանով:

Մինչև բարեփոխումը, եթե գյուղացիների տրամադրության տակ էր 84 665 դեսյատին մշակովի հող, ապա բարեփոխությունից հետո մնաց 55 679 դեսյատին, մնացած 28 986 դեսյատինը կրճատվեց և հանձնվեց ավատատերերին: Օրենքով գյուղացիությունը չէր ստանում անտառներից և արոտավայրերից օգտվելու իրավունք, գյուղացիները դրանք պետք է ձեռք բերեին վճարի միջոցով: Ռոզման համակարգերի տնօրինումը ևս թողնվում էր կալվածատերերին: Հող չստացան այն գյուղացիները, որոնք չունեին մինչ այդ, ինչպես նաև ծառաները և տեղափոխված գյուղացիները: Ստացած հողակտորների դիմաց գյուղացիները պարտավոր էին ավելին վճարել, քան վճարում էին մինչ ճորտատիրության վերացումը: Կալվածատերերից հողի գնումը գյուղացիության ծայրահեղ աղքատության պատճառով ընթանում էր չափազանց դանդաղ, իսկ կալվածատիրական հողերի վարձակալության գինը չափազանց բարձր էր: Այդ իսկ պատճառով այսպես կոչված «ժամանակավոր պարտավորություն» ունեցող գյուղացիների (դրանք այն գյուղացիներն էին, որոնք հողի գնման վճարը դեռևս լրիվ չէին կատարել), ինչպես նաև խիզանների ինստիտուտը (այդպես էին կոչվում այլ շրջաններից եկած և կալվածատերերի հողերի վրա հաստատված գյուղացիները) Վրաստանի որոշ շրջաններում շարունակեց իր գոյությունը ընդհուպ մինչև 1912 թվականը, երբ ցարական կառավարությունը ստիպված եղավ այն վերացնել: Այս ամենով հանդերձ՝ բարեփոխումը կարևոր հանգրվան էր երկրում բուրժուական բարեփոխումների իրականացման առումով և մեծ նշանակություն ունեցավ երկրի հասարակական զարգացման մեջ: Բարեփոխման արդյունքում ճորտը ստացավ անձնական ազատություն, նրա անձը ենթակա չէր այլևս առք ու վաճառքի, նվիրատվության կամ փոխանակության, ինչը տեղի ուներ մինչ բարեփոխումը: Ավատատերն այլևս չէր կարող միջամտել նրա անձնական կյանքին, ամուսնությանը: Գյուղացին իրավունք ստացավ իր անունով կնքել պայմանագիր, ընդգրկվել առևտրի ոլորտ, ձեռք բերել անշարժ և շարժական գույք, հանդես գալ դատարանում որպես մեղադրող կամ պատասխանող, թողնել և հեռանալ գյուղից, ձեռք բերել հասարակական այլ կարգավիճակ: Գյուղացի–ճորտը դարձավ իրավաբանական անձ:

Կարևոր է նաև նշել, որ գյուղացիական բարեփոխումների իրականացման ժամանակ ցարիզմը ձգտում էր Վրաստանում որոշ չափով թուլացնելու վրաց ազնվականության ազդեցությունը: Այդ դասակարգն աստիճանաբար զրկվեց իր ճորտ գյուղացիներից և ազնվականական կոչումներից:

2. ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ, ԱՊՐԱՆՔԱԴՐԱՄԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ: ՔԱՂԱՔՆԵՐԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՌԵՎՏՈՒՐԸ: ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ճորտատիրության վերացումից հետո հասարակական ու տնտեսական զարգացման տեմպերը երկրում արագ աճի հնարավորություն ստացան: Կապիտալիս-

տական արտադրությունը ստացավ ազատ աշխատուժ: Ճորտատիրությունից ազատագրված գյուղացին կարող էր արտադրանքը տանել շուկա և ստացված եկամուտը ծախսել իր հայեցողությամբ: Քաղաքի և գյուղի միջև ապրանքադրամային հարաբերություններում գյուղացիությունից բացի ներգրավվեց նաև ազնվականությունը: Կալվածատերերի համար դրամական եկամուտների հիմնական աղբյուրը հենց գյուղատնտեսական արտադրության մթերքների վաճառքն էր: Առևտրի զարգացումը մեծապես նպաստեց տրանսպորտի զարգացմանը: Ազատ աշխատուժով ապահովված բուրժուազիան անընդհատ ընդարձակում էր արտադրությունը:

Վրաստանում գյուղատնտեսության մեջ առաջատար տեղ ունեին հացահատիկային մշակաբույսերը: Արևելյան Վրաստանում մեծ չափերի էին հասնում ցորենի և գարու մշակությունը, Արևմտյան Վրաստանում գերակշռում էր եգիպտացորենը: Հացահատիկային մշակաբույսերը Վրաստանում այնքան առատ էր, որ ստացված բերքը վաճառքի նպատակով նաև արտահանվում էր: Վրաստանում գյուղատնտեսության կարևոր ճյուղերից էր այգեգործությունը: XIX դ. երկրորդ կեսին խաղողի որթի հիվանդության տարածման հետևանքով Գուրիայում և Մեգրելիայում տեղի ունեցավ բերքի նվազում: Դրան հակառակ՝ բերքատվության աճ արձանագրվեց Իմերեթում և Արևելյան Վրաստանում: Գինու մեծ մասը Վրաստանից արտահանվում էր Ռուսաստան:

Վրաստանի լեռնային շրջաններում զարգացում էր ապրում անասնապահությունը: Հարթավայրերում անասնապահությանը վերապահվում էր օժանդակ դերակատարում: Վրաստանում անասնապահական մթերքի մի մասը ևս արտահանվում էր, իսկ հիմնականում սպառվում էր տեղում: Ֆաբրիկային արտադրության մրցակցության պայմաններում Վրաստանում նշանակալի անկում արձանագրվեց մետաքսագործության մեջ: Շուկա էր հանվում ոչ թե մետաքսյա արտադրանքը կամ թելը, այլ հում մետաքսը: Կապիտալիզմի զարգացման շրջանում հին ավանդական ճյուղի՝ այգեգործության և բանջարաբուծության արտադրությունը ներքին սպառումից բացի հանվում էր նաև շուկա:

XIX դ. երկրորդ կեսին Վրաստանում մեծ վերելք է ապրում ծխախոտագործությունը: Մերձարևադարձային գոտիներում ներդրվեց թեյի և ցիտրուսային մշակաբույսերի արտադրությունը:

Կապիտալիզմի զարգացումը գյուղում, բացի տնտեսական ոլորտից, փոփոխություններ առաջացրեց նաև սոցիալական ոլորտում: Ապրանքադրամական հարաբերությունները, հողի առք ու վաճառքը հարուցեցին գյուղացիության ունեցվածքային շերտավորում: Գյուղացիությունը տրոհվեց երեք շերտի՝ առավել աղքատ, միջին և հարուստ գյուղացիության: Հարուստ գյուղացիության ձեռքին էր գյուղատնտեսական արտադրանքով շուկայի մատակարարումը: Ապրանքադրամային հարաբերությունների զարգացման գործընթացում աստիճանաբար ավելի էր աղքատանում ազնվականության մեծ մասը: Նա աստիճանաբար կորցնում էր արտադրության հիմնական միջոցը՝ հողը: Կալվածատերերի մի մասը հաջողությամբ ընդգրկվեց զարգացող հարաբերություններում:

Ճորտատիրության վերացումից հետո Վրաստանում արագորեն զարգանում էին արտադրության զանազան բնագավառներ: Մանր արտադրողների արտադրանքն այլևս չէր դիմանում ֆաբրիկագործարանային արտադրության մրցակցությանը: Հիմնականում Ռուսաստանից և արտասահմանից ներկրված արտադրանքի հետ մրցակցությունում անկում էր ապրում տեղական արտադրողի տնտեսությունը: Դրանց փոխարինելու էր գալիս կապիտալիստական մանուֆակտուրան, թեև մանր արտադրությունը շարունակում էր գոյատևել: XIX դ. երկրորդ կեսից վերելք է ապրում հանքագործությունը: Արագ տեմպերով զարգանում էր պղնձագործությունը, քարածխի արտադրությունը, մանգանի արդյունահանումը և այլն:

Վրաստանի տնտեսական կյանքի առաջընթացին և կապիտալիզմի զարգացմանը նշանակալիորեն ազդեց հաղորդակցության ճանապարհների բարելավումը: 50–ական թվականներից սկսած մեծ ուշադրություն էր դարձվում Վրաստանի և Ռուսաստանի միջև ծովային ճանապարհով կապի հաստատմանը: Փոթին վերածվեց Վրաստանի կարևորագույն նավահանգիստներից մեկի:

1872 թ. ավարտվեց Թիֆլիսից Փոթի երկաթուղու կառուցումը: 1877 թ. Ռիոնի կայարանից երթուղագիծ անցկացվեց մինչև Քութայիս, որի հետևանքով Արևմտյան Վրաստանի այդ խոշորագույն կենտրոնը երկաթուղով կապվեց մի կողմից՝ Թիֆլիսի, մյուս կողմից՝ Սև ծովի հետ: 1883 թ. ավարտին հասավ Բաթում–Թիֆլիս–Բաքու երկաթուղին, որի շնորհիվ երկաթուղային կապ հաստատվեց Սև և Կասպից ծովերի միջև: 1894 թ. բացվեց Խաշուրի–Բորժոմ երկաթուղին:

1883 թ. Թիֆլիսում կազմակերպվեցին Հարավկովկասյան երկաթուղու գլխավոր արհեստանոցները, որոնցում XIX դ. վերջին աշխատում էր երեք հազար բանվոր: 1900 թ. Հարավկովկասյան երկաթգիծը ներգրավվեց երկաթուղիների ցանցի մեջ:

Երկաթուղագծերը մերձեցրին և տնտեսապես միմյանց շաղկապեցին Վրաստանի տարբեր շրջանները, արագացրին առևտրի զարգացումը և հանքային հարստությունների հանույթը, առհասարակ աշխուժացրին երկրի տնտեսական ու մշակութային կյանքը:

1850–1860–ական թվականներին էականորեն բարելավվեց նաև Վրաստանի փոստ–հեռագրական կապը, ընդլայնվեց փոստային կայանների ցանցը, անցկացվեցին հեռագրական գծեր: 1870–ական թվականներին Վրաստանի գլխավոր քաղաքները հեռագրական գծերով ոչ միայն կապված էին միմյանց, այլև բոլոր ռուսական արդյունաբերական կենտրոնների հետ:

Վրաստանում երկաթուղային շինարարության հետևանքով լեռնահանքային արդյունաբերությունը սկսեց արագորեն զարգանալ: 1870–1880–ական թթ. մեծ արագությամբ սկսեց զարգանալ քարածխի և մանգանի արդյունահանումը: Տղիբուլիի հանքավայրը վերածվեց վրացական խոշորագույն քարածխային կենտրոնի:

Բավականին արագ զարգանում էր նաև թեթև արդյունաբերությունը: 1870 թ. հայ խոշոր վաճառական և գործարար Գ. Միրզոևը Թիֆլիսում բացեց նորագույն տեխնիկայով սարքավորված բամբակյա կտորեղենի խոշոր գործարան: 1875 թ. մեկ

այլ հայազգի դրամատեր՝ Գ. Ադելխանովը, Թիֆլիսում կառուցեց կաշվի վերամշակման խոշոր ֆաբրիկա:

Մեծ նշանակություն ուներ Սամտրեդիա–Բաթում երկաթուղու գործարկումը: Շուտով երկաթուղային մայր գծին միացան նաև Ճիաթուրին և Տղիբուլին: 1899 թ. բացվեց Թիֆլիս–Ալեքսանդրապոլ գիծը: Կարևոր նշանակություն ուներ Բաքու–Բաթում նավթատարի կառուցումը և Բաթումում նավթավերամշակման գործարանի հիմնադրումը: Վրաստանի արդյունաբերական արտադրանքի կենտրոնը Թիֆլիսն էր, որը նաև երկաթուղային հանգույց էր՝ իր երկաթուղային վերանորոգման արհեստանոցներով:

Ճորտատիրության վերացումից հետո ընկած ժամանակը բնութագրվում է որպես Վրաստանի ներքին և արտաքին առևտրի զարգացման աննախադեպ շրջան: Արտաքին առևտրի ոլորտում բնութագրական է այն հանգամանքը, որ Վրաստանում փաստորեն մրցակցություն էր ընթանում Ռուսաստանի և եվրոպական երկրների միջև: Գերակշռությունը Ռուսաստանի կողմն էր: Ռուսաստանից Վրաստան էին ներմուծվում շաքար, ալյուր, երկաթե արտադրանք և այլն: Եվրոպական երկրներից ներմուծվում էին այլևայլ գործվածքներ, պողպատ և պողպատե արտադրանք, ապակի, լուցկի, շաքար և այլն: Վրաստանից Ռուսաստան և եվրոպական երկրներ արտահանվում էին գինի, հացահատիկ, ծխախոտ, հում մետաքս և այլն: Մեծ նշանակություն էր տրվում մանգանի և փայտանյութի արտահանմանը:

Ներքին շուկայում զարգացմանը նպաստեց քաղաքի և գյուղի միջև առևտրական հարաբերությունների ծավալումը: Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը նպաստեց քաղաքային կյանքի զարգացմանը, քաղաքաշինությանը և քաղաքային տնտեսության կազմակերպմանը: Նշանակալիորեն աճեց քաղաքային բնակչությունը: Եթե Թիֆլիսի բնակչության ընդհանուր թվաքանակը 1865 թ. կազմում էր 71 051 մարդ, 1897 թ. այն հասավ 159 790 մարդու: Աստիճանաբար բարելավվեց նաև քաղաքային տնտեսությունը, մասնավորապես տրանսպորտը: Կառուցվում էին նոր մեծ քարե տներ ու կամուրջներ, լայնացվում էին հին նեղ փողոցները:

Թիֆլիսից հետո առևտրի նշանավոր կենտրոնի էր վերածվել Բաթումը, որը թուրքական լծից Աջարիայի ազատագրման շրջանում ավելի շատ նմանվում էր գյուղի, քան քաղաքի: Թիֆլիսից հետո առավել արագորեն աճեց ու մեծացավ Քութայիսը: Զարգացում ապրեցին նաև Գորին, Թելավը, Սղնախը, Ախալցխան, Զուգդիդին, Օզուրգեթը և այլն:

1870 թվականից սկսած՝ Ռուսաստանի քաղաքներում մտցվել էր կառավարման նոր համակարգ, որը 1874 թվականից տարածվեց նաև Թիֆլիսի, իսկ ավելի ուշ՝ նաև Վրաստանի այլ քաղաքների վրա: Այդ նոր բարեփոխումը իսպառ վերացնում էր դասային ընտրական համակարգը: Այդուհետև ընտրություններին իրավունք ունեին մասնակցելու, անկախ իրենց դասային պատկանելությունից, քաղաքային բոլոր բնակիչները, որոնք վճարում էին հարկեր: Ընտրությունների համար վճռական նշանակություն ուներ գույքային ցենզը՝ քաղաքի իսկական տեր էր դառնում հարուստ հողատերերի և խոշոր բուրժուազիայի մի ոչ մեծ խումբ:

Վրաստանում քաղաքային կառավարման բարեփոխումը ձգձգվեց: Քութայիսում և Բաթումում այդ ռեֆորմն իրականացվեց միայն 1888 թ., Սուխումում և Փոթիում՝ 1892 թ., իսկ Գորիում, Դուշեթում, Ախալցխայում, Ախալքալաքում, Սղնախում և Թելավում՝ 1894 թ.: Նշված քաղաքներում բարեփոխումն իրականացվեց ավելի պարզեցված ձևով, քան Թիֆլիսում:

Ռուսաստանում իրականացված բուրժուական բարեփոխումներից առավել հետևողական էր դատական ռեֆորմը, որն իրականացվեց 1864 թ.: Ըստ այդ բարեփոխման՝ հին դասային–ճորտատիրական դատարանը փոխարինվեց նոր՝ ընդհանուր դատարանով: Դատական բարեփոխումները Հարավային Կովկասում կիրառվեցին 1868–1871 թթ.: Սակայն ցարական կառավարությունը չցանկացավ Վրաստանում դատական ռեֆորմ իրականացնել այն տեսքով, ինչպես այն իրականացվել էր Ռուսաստնաում: Ռուսական իշխանությունները դա պատճառաբանեցին նրանով, որ իբր «բնակչությունը պատրաստ չէ դրան», որ «Վրաստանում առկա են տեղական «յուրահատուկ պայմաններ» և այլն»:

Կապիտալիզմի զարգացումը Վրաստանում, ինչպես և այլ երկրներում հանդես էր բերում հասարակության մեջ երկու նոր դասի՝ բուրժուազիայի և բանվորության ձևավորում: Այդ գործընթացը Վրաստանում ուներ իր առանձնահատկությունները:

Որոշակի պատճառներով վրաց ժողովրդի ոչ մի սոցիալական շերտ կապիտալի նախասկզբնական կուտակման գործընթացին ակտիվորեն չէր մասնակցում: Այդ է պատճառը, որ կապիտալիզմի զարգացումը հենց առաջին փուլում անցավ հայերի ձեռքը, և հետագայում հայերը հիմնադրեցին նաև խոշոր կապիտալիստական ձեռնարկություններ: Խոշոր արտադրություններ հիմնում էին ռուս, եվրոպացի և ամերիկացի կապիտալիստ գործարարները: Գրեթե կապիտալիստական ողջ արտադրությունը օտարազգի բուրժուազիայի ձեռքին էր: Ակնհայտ է, որ թույլ վրաց ազգային բուրժուազիան չէր կարող մրցակցել օտար կապիտալի հետ: Ազգային բուրժուազիան դանդաղ և մեծ դժվարություններով հարթում էր իր ուղին: Այդ բուրժուազիայի թուլությունը Վրաստանում կապիտալիզմի զարգացման հիմնական առանձնահատկությունն էր:

Վրաստանում ինքնատիպ էր նաև բանվորական շերտի ձևավորումը: Քաղաքներում կապիտալիստական արտադրության մեջ զբաղված բանվորները չէին կտրում կապը գյուղի հետ: Գյուղատնտեսությունից ստացվող բերքը նրանց համար դառնում էր գոյատևման լրացուցիչ աղբյուր: Այդպիսի բանվորներն ունեին նաև իրենց ինքնատիպ հոգեբանությունը. հոգեբանորեն նրանք ո՛չ լիարժեք բանվորներ էին, ո՛չ լիարժեք գյուղացիներ: Վրաստանի բանվորության երկակի սոցիալական էությունը երկրի կապիտալիստական հարաբերությունների առանձնահատկություններից մեկն էր: Կապիտալիզմի զարգացման այս ինքնատիպությունն իր հետքն էր թողել վրաց ժողովրդի պատմության վրա:

Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը և Վրաստանի քաղաքական ու տնտեսական համախմբումը պայմաններ ստեղծեցին նաև վրացական ազգի ավարտուն ձևավորման համար:

Վրացական ազգի, այսինքն՝ «Էրիի» ստեղծման գործընթացը տևական պատմական զարգացման արդյունք էր: Վրաց ժողովրդի այնպիսի բնութագրիչներ, ինչպիսիք են վրացերենը, ընդհանուր տարածքը, ինչպես նաև վրացական մշակութային ընդհանրությունը, գոյություն են ունեցել դեռևս կապիտալիզմի ծնունդից շատ առաջ: Սակայն վրացական ազգի ստեղծման պայմանները հասունացան միայն XIX դ. երկրորդ կեսին: Այդ ժամանակ արդեն վրացիներն իրենցից ներկայացնում էին մարդկանց այնպիսի կայուն ընդհանրություն, որն անցել էր պատմության փոթորիկների միջով և օժտված էր ազգի բոլոր հիմնական հատկանիշներով՝ կայուն էթնիկ ինքնագիտակցությամբ, ինչպես նաև լեզվի, տարածքի, տնտեսական կյանքի և հոգեկան կերտվածքի ընդհանրությամբ, որը դրսևորվում էր նաև մշակույթի միասնության ընկալման մեջ: Որոշակի դեր էր խաղում նաև վրացիների բոլոր հատվածների էապես ընդդիմադիր կեցվածքը նոր և արդեն ընդհանուր տիրակալ Ռուսական կայսրության հանդեպ:

XIX դ. երկրորդ կեսին հիմնականում ավարտվեց վրացական տարածքի ամբողջականության վերականգնումը, և ստեղծվեցին պայմաններ, որ ապահովում էին վրացական հողերի հուսալի պաշտպանությունը Թուրքիայի և Իրանի ոտնձգություններից, ինչպես նաև կովկասյան լեռնականների հարձակումներից:

Վրացական ազգի ձևավորմանը նպաստող կարևոր գործոններ դարձան XIX դ. երկրորդ կեսին երկրում տեղի ունեցած այնպիսի խոշոր իրադարձություններ, ինչպիսիք էին ներքին տնտեսական կապերի ստեղծումը, ճորտատիրական կարգերի անկումը, հասարակական աշխատանքի բաժանման զարգացումը, առևտրի աննախընթաց ընդլայնումը, խճուղիների ու երկաթուղիների կառուցումը, քաղաքների աճը, արդյունաբերության ու գյուղատնտեսության մեջ կապիտալիստական հարաբերությունների արագ զարգացումը:

Վրաստանի տնտեսական կյանքի վերածնունդը նպաստեց ժողովրդի հոգեկան կերտվածքի ընդհանրության ստեղծմանը, որը ազգի հիմնական հատկանիշներից մեկն է: Վրացիների հոգևոր նկարագրի յուրահատկությունները, նրանց «ազգային խառնվածքը» ձևավորվել են տևական ժամանակամիջոցում և բնորոշվել են ոչ միայն Վրաստանի աշխարհագրական դիրքով ու բնակչության խտությամբ, այլև գլխավորապես այնպիսի գործոնով, ինչպիսին էր վրաց ժողովրդի պատմական կյանքի պայմանների առանձնահատկությունը:

XIX դ. 60–70–ական թվականներին վրացական մշակույթն արդեն հանդես էր գալիս որպես միասնական ողջ վրաց ժողովրդի համար ընդհանուր մշակույթ:

3. ՑԱՐԻԶՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԵՏՌԵՖՈՐՄՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ: ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԸՆԴՎԶՈՒՄՆԵՐԸ

Գյուղացիական ռեֆորմը չարդարացրեց վրաց գյուղացիության հույսերը: Ըստ էության՝ այն անխաթար թողեց կալվածատիրական հողատիրությունը: Ցարական կառավարությունը տարբեր ճանապարհներով Վրաստանում ձեռք բերեց հսկայական չափերի հասնող հողատարածքներ: Գյուղացիական ռեֆորմից հետո Վրաստանում ցարին և պետական գանձարանին էր պատկանում 3 862 723 հեկտար հող, որը կազմում էր ողջ հողատարածքների 57,6 տոկոսը: Ցարից և գանձարանից հետո խոշորագույն հողատերեր էին վրացական իշխաններն ու ազնվականությունը: Գյուղացիական ռեֆորմից հետո նրանք տիրապետում էին 2 091 354 հեկտար հողերի: Միայն Թիֆլիսի նահանգում հաշվվում էին 567 խոշոր հողատերեր, որոնցից յուրաքանչյուրն ուներ ավելի քան հինգ հարյուր դեսյատին հող:

Գյուղացիական ռեֆորմից հետո հողերի մի զգալի մասն անցավ վաճառականների, արդյունաբերողների, դրամատերերի, ցարական աստիճանավորների և նմանատիպ այլ տարրերի ձեռքը: Ինչ վերաբերում է հողն անմիջականորեն մշակողներին՝ գյուղացիությանը, ապա նրա տրամադրության տակ որպես սեփականություն եղած հողերը չնչին չափերի էին հասնում: Գյուղացիությունը տիրապետում էր 418 110 հեկտար հողերի, որոնք կազմում էին ընդհանուր հողային տարածքի լոկ 6,4 տոկոսը: Ընդ որում, այդ հողերի մեծ մասը գյուղացիության վերնախավի ձեռքում էր:

Գյուղացիության ծանր վիճակը է՛լ ավելի էր խորանում նրանով, որ ռեֆորմի իրագործումից հետո հարաճուն ավելանում էին ամեն տեսակի հարկերը: Գյուղացիների համար առնձնապես ծանր էր անտառներից ու արոտավայրերից օգտվելու հարկը: Ծանր բեռ էին նաև եկեղեցական հարկերը:

Հողազուրկ կամ փոքր հողակտորներ ունեցող գյուղացիների ծանր դրությունից օգտվում էին վաճառականները, վաշխառուները և գյուղական կուլակները: Նրանք չնչին գներով ձեռք էին բերում ոչ միայն գյուղացիների աշխատանքի արդյունք հանդիսացող բարիքները՝ հացը, գինին, տնային անասունները և այլն, այլև նրա խղճուկ հողակտորը իր խրճիթի հետ միասին:

Ուստի բնավ պատահական չէ, որ ռեֆորմն իրագործվելուց հետո գյուղացիության դժգոհությունը Վրաստանում գնալով ավելի ու ավելի էր ակնհայտ դառնում և ուժեղանում: Հաճախացան գյուղացիական զինված ելույթներն ու արյունահեղ ընդհարումները: 1875–1876 թթ. ապստամբություն բռնկվեց Սվանեթում: Այդ լեռնային երկրամասում հողերի պակասը զգացվում էր ավելի ուժեղ, քան Վրաստանի մյուս շրջաններում: Կառավարական զորքերի հետ լեռնականների ընդհարումները կրում էին կատաղի բնույթ: Խալդի գյուղը, որը ապստամբների կենտրոնատեղին էր, գրավվեց գրոհով և հավասարեցվեց հողին, իսկ պաշտպանական աշտա-

ռակները պայթեցվեցին: 1876 թ. գյուղացիական ապստամբություն բռնկվեց Զուգդիդիի գավառում: 1878 թ. ապստամբեցին Կիզիկիի գյուղացիները: Այդ երկրամասում դժգոհությունը լեռնացել էր տարիների ընթացքում, սակայն այն խորացավ մեծ երաշտի և 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմի կապակցությամբ սահմանված նոր հարկերի պատճառով: Զինվելով մահակներով, դաշույններով ու կացիններով՝ ապստամբները հոծ խմբերով շարժվեցին Սղնախի գավառի ազնվականության և ցարական աստիճանավորների վրա: Այդ ժամանակ գավառապետ բարոն Տիզենհաուզենը, զորքերի հրամանատար գեներալ Օրբելիանին և մյուս աստիճանավորները Բակուրցիխե գյուղում հյուրընկալվում էին իշխան Վաչնաձեի դաստակերտում: Հունիսի 5–ին հինգ հազարից ավելի ապստամբներ ջախջախեցին իշխանի դաստակերտն ու տունը, դաժան ծեծի ենթարկեցին բարոն Տիզենհաուզենին, Օրբելիանիին և նրանց ուղեկցող անձանց, իսկ ապա ցրվելով գյուղերում՝ սկսեցին հարձակվել գյուղական ավագների, կուլակների, վաճառականների, վաշխառուների վրա:

Կառավարությունը զինված ուժի օգնությամբ վերջ տվեց այդ հախուռն ու անկազմակերպ շարժմանը: Ապստամբության ակտիվ մասնակիցները՝ թվով 21 հոգի, դատապարտվեցին տաժանակիր աշխատանքների:

1880–ական թվականներին գյուղացիության հակակառավարական ելույթներն ընդգրկեցին ողջ Վրաստանը: Չնայած ցարական կառավարության ձեռնարկած վճռական միջոցառումներին՝ գյուղացիության դժգոհությունը չէր դադարում, այն պոռթկումներ էր ունենում մերթ այս, մերթ այն վայրում:

XIX դ. երկրորդ կեսին Վրաստանում ծայր առած դժգոհության շարժմանը ցարիզմը պատասխանեց իր գաղութային քաղաքականության ուժեղացմամբ: Դա դրսևորվում էր բազմապիսի բնագավառներում՝ կառավարման պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններում, դպրոցներում, դատարաններում, մամուլում: Իշխանությունները հատկապես ուժգին հսկողություն էին սահմանել վրացական մամուլի նկատմամբ՝ խստացնելով նաև գրաքննության գործը, որոնում էին ամեն տեսակի հնարավորություններ վրացերեն գրքերի, ամսագրերի, թերթերի հրատարակությունը սահմանափակելու համար: Ցարական կառավարությունն ուժեղացրել էր նաև Վրաստանի բնակչության դիմահեղման ու ռուսականացման քաղաքականությունը: Այդ քաղաքականության իրագործումը հեշտանում էր նրանով, որ վրացական ազնվականության մի մասը, առաջնորդվելով իր նեղ շահերով, մեծագույն նվիրվածությամբ ծառայում էր ցարական կառավարությանը՝ իր սեփական երկրի շահերը փոխանակելով աստիճանների ու շքանշանների հետ:

Ռուսաստանում ծնունդ առած նարոդնիկական շարժումը թափանցեց նաև Վրաստան: Նարոդնիկների գաղափարները պարարտ հող գտան վրաց մտավորականության մի զգալի շրջանում: 70–ական թթ. Թիֆլիսում, Քութայիսում, Գորիում, Թելավում և Օզուրգեթում հայտնվեցին առաջին նարոդնիկական կազմակերպությունները, որոնք Պետերբուրգում և Մոսկվայում բնակվող վրացի նարոդնիկների միջոցով մշտական կապերի մեջ էին ռուս նարոդնիկների հետ:

1870–ական թթ. հրապարակ իջավ վրաց հայրենասեր երիտասարդների մի խումբ, որը հայտնի է «խալխոսնեբի» (բառացի՝ «նարոդնիկներ») անվամբ: Նրանք իրենց գործունեության հիմնական նպատակն էին համարում գյուղացիության շահերի պաշտպանությունը, մասնավորապես գյուղացիներին հողի տրամադրումը: Այդ նպատակով ռուս նարոդնիկների օրինակով նրանք «գնացին դեպի ժողովուրդը»: Վրացի նարոդնիկները, ինչպես նաև ռուսական նարոդնիկները մտադիր էին իրականացնել գյուղացիական հեղափոխություն:

Վրացական հեղափոխական տրամադրություններ ունեցող՝ երիտասարդության բավականին մեծ թվով ներկայացուցիչներ ստեղծեցին բազմաթիվ գաղտնի խմբակներ և ձեռնամուխ եղան ակտիվ ընդհատակյա աշխատանքի: Վրաստանում նարոդնիկական շարժման հայտնի ղեկավարներ էին Էգնատե Իոսելիանին, Իսիդոր Ցիկոձեն, Միխայիլ Ղիփիանին, Ստեփան Չրելաշվիլին, Սոֆրոն Մգալոբլիշվիլին, Շիո Դավիթաշվիլին, Գոլա Չիտաձեն և ուրիշներ: Վրացական նարոդնիկների սոցիալ–քաղաքական հայացքները հիմնականում չէին տարբերվում ռուս նարոդնիկների հայացքներից, սակայն նրանք իրենց ծրագրի մեջ մտցրին նաև ազգային հարցը:

1881–1883 թթ. վրացական լիբերալ նարոդնիկները Թիֆլիսում հրապարակում էին «Իմեդի» («Հույս») ամսագիրը, իսկ Քութայիսում «Շրոմա» («Աշխատանք») թերթը: Այդ հրատարակություններում նարոդնիկները կոչ էին անում համաձայնության ու համագործակցության եզրեր գտնել ցարական կառավարության հետ իբր այն բանի համար, որ բարեփոխումների ճանապարհով ձեռք բերվի աշխատավորների վիճակի բարելավում:

Սակայն վրաց նարոդնիկների հեղափոխական քարոզչությունը և նրանց «շարժումը դեպի ժողովուրդը» չտվեցին շոշափելի գործնական արդյունքներ: Դա բացատրվում է նրանով, որ նարոդնիկները ծանոթ չէին գյուղացիության կյանքի և կտրված էին նրանից: Ընդհանուր առմամբ, նարոդնիկները նշանակալի ազդեցություն ունեին Վրաստանում: Բացի այդ՝ 1870–ական թվականներին վրաց նարոդնիկների չափից ավելի մեծ ազգայնականությունը և ցարիզմի նկատմամբ նրանց համաձայնողական քաղաքականությունը 1880–1890–ական թվականներին նրանցից վանեց Վրաստանի բազմազգ բնակչությանը: Վրացական նարոդնիկությունը վրաց ավատամիապետական շարժման նման քիչ թե շատ նկատելի հետք չթողեց Վրաստանի հասարակական կյանքի վրա:

1876 թ. ցարական ոստիկանությունը ջախջախեց նարոդնիկական կազմակերպությունները, և վրաց նարոդնիկների մեծ մասը դադարեցրեց հեղափոխական պայքարը ինքնակալության դեմ՝ որոշելով գյուղացիության վիճակի բարելավմանը հասնել կուլտուր–լուսավորչական գործունեության, գյուղատնտեսական ընկերությունների ստեղծման և այլ նմանատիպ լեգալ միջոցառումների ճանապարհով: 1890–ական թվականներին նարոդնիկական շարժումը որպես գաղափարական ուղղություն դադարեց գոյություն ունենալուց: Բոլորի համար պարզ դարձավ, որ

նարոդնիկական սոցիալիզմի և մանր բուրժուական տիպի այլ գաղափարները սնանկ են և ոչ պիտանի:

Վրաստանում մինչև գյուղացիական ռեֆորմը գյուղացիներին, քաղաքային արհեստավորներին, մանր վաճառականներին, ինչպես նաև բուրժուազիային, այսինքն՝ «երրորդ դասին» մեկ միասնական դրոշի ներքո միավորում էր ատելությունը իր դարն ապրած ճորտատիրական կարգերի նկատմամբ: Սակայն ճորտատիրական իրավունքի վերացումից հետո նրանց միջև սկսվեց տնտեսական հակամարտություն, որի հետևանքով տեղի ունեցավ «երրորդ դասի» քայքայում: Ունեցվածքային անհավասարության աճը տարանջատեց ու հակադրեց աղքատ բնակչության և բուրժուազիայի շահերը սկզբում տնտեսական, ապա նաև քաղաքական ոլորտներում:

Հասարակական կյանքի նման զարգացումը չէր կարող առաջ չբերել նաև թերքդալեուլների խմբի քայքայում՝ որպես միասնական գաղափարական հոսանքի: 1876 թ. գարնանը թերքդալեուլների խումբը հանդիսավորությամբ նշում էր իր գլխավոր տպագիր օրգանի՝ «Դրոեբա» թերթի տասնամյակը: Այն ժամանակ նրանց շարքերում դեռևս իշխում էր համաձայնությունն ու համախոհությունը, սակայն շուտով դրության մեջ տեղի ունեցավ փոփոխություն: Իլյա Ճավճավաձեն դուրս եկավ «Դրոեբա»–ի խմբագրական կազմից և 1877 թ. հիմնեց նոր լրագիր՝ «Իվերիա» անունով: Շուտով «Դրոբեա»–ի խմբագրական կազմը լքեցին նաև Ն. Նիկոլաձեն և Գ. Ծերեթելին: Ն. Նիկոլաձեն 1878 թ. սկսեց հրատարակել ռուսերեն «Օբզոր» թերթը: Այդ նորաստեղծ տպագիր օրգանների միջև սկսվեց բանավեճ քաղաքական և տնտեսական բնույթի սուր հարցերի վերաբերյալ:

Թերքդալեուլների խմբի քայքայումից հետո ստեղծվեց մի նոր գաղափարական հոսանք, որն իր գոյության առաջին շրջանում համեմատաբար ակտիվորեն պայքարում էր ցարիզմի և հետադիմական ազնվականության դեմ: Այդ հոսանքի ղեկավարներ ու նշանավոր գործիչներ էին Նիկո Նիկոլաձեն, Գեորգի Ծերեթելին, Գեորգի Զդանովիչը (կեղծանունը՝ Մալաշվիլի) և ուրիշներ: Նրանք քննադատում էին իրենց նախկին գաղափարակիցների այն տեսակետը, որ ազգի ղեկավարման գործը պետք է պատկանի լուսավորյալ ազնվականությանը: Նրանք ասում էին, որ ազնվականությունը որպես դաս վաղուց արդեն ապրել է իր դարը, և այժմ այն չի կարող հավակնել ազգի առաջնորդի դերին: «Ազգի և երկրի փրկարարը աղքատությունից ու ստրկությունից, տգիտությունից ու անհավասարությունից միշտ և ամենուրեք եղել է և կմնա լոկ բուրժուազիան»,— գրում էր Ն. Նիկոլաձեն:

Սակայն արդեն 1890–ական թթ. վերջերին բուրժուա–դեմոկրատական այս հոսանքը նույնպես վերասերվեց և իսպառ հեռացավ իր դավանած հայացքներից:

Թերքդալեուլների միասնական խմբավորման քայքայումից հետո ծնունդ առավ «ուշ թերքդալեուլի» կոչված մի նոր խմբավորում, որի անդամները համախմբված էին Իլյա Ճավճավաձեի և Ակակի Ծերեթելիի շուրջը: Այդ խմբի մեջ մտնում էին նաև Յա. Գոգեբաշվիլին, Ռ. Էրիսթավին, Ս. Մեսխին և ուրիշներ: 1880–ական թթ. վեր-

ջին այդ խմբին միացան նաև վրաց մեծ գրողներ Ալեքսանդր Կազբեկին և Վաժա Փշավելան:

Այդ նորաստեղծ խմբի գաղափարական առաջնորդների կարծիքով այն արտահայտում էր վրաց ազգի աշխատավորական մեծամասնության շահերը: Սակայն կյանքն առաջ էր գնացել, իսկ թերքդալեուլների գաղափարները հնացել էին և այլևս չէին համապատասխանում պատմական նոր պայմաններին: Թեքդալեուլների նոր խումբն առաջ էր քաշել նաև դասերի հաշտեցման վերաբերյալ տեսություն, ըստ որի՝ բոլոր վրացիները, անկախ իրենց դասային պատկանելությունից, եղբայրներ են ու պետք է ոչ թե պայքարեն միմյանց դեմ, այլ միավորվեն որպես մեկ ընտանիքի անդամներ և ապրեն կատարյալ համերաշխության պայմաններում: Իլյա Ճավճավաձեն և նրա համախոհները կարծում էին, որ Վրաստանում տարբեր դասերի միջև պայքարի սրումը կթուլացնի վրաց ժողովրդին, իսկ դրանից կօգտվի ցարիզմը: Նրանք պահանջում էին վրացի ժողովրդի միասնություն հենց այն բանի համար, որ նա ի վիճակի լինի ցարական կառավարության գաղութային քաղաքականության նկատմամբ ցուցաբերել համառ և աննկուն դիմադրություն:

Սակայն թերքդալեուլների այդ բարի ցանկությունները անիրականանալի էին: Նրանք դարձյալ հաշվի չէին առնում այն իրողությունը, որ վրաց ազնվականությունն իր նեղ շահերը շատ ավելի բարձր էր դասում ազգային շահերից, և հնարավոր չէր որևէ միջոցով ստիպել նրան կամավոր հրաժարվել իր դարավոր արտոնություններից, իր կյանքի փառահեղ պայմաններից և վերածվել գյուղացիների և առհասարակ ընչազուրկների հետ իրավահավասար դասի: Ուստի դասերի հաշտեցման այդ ճանապարհով վրաց ազգի հզորացման քարոզն այդ պահին դատարկ երազանք էր:

1880–ական թթ. Ռուսաստանում ծայր առած տևական ու դաժան ռեակցիայի ժամանակաշրջանն իր բացասական արձագանքներն ունեցավ նաև Վրաստանում: Նոր ցար Ալեքսանդր Գ–ի կառավարությունը հալածանքներ սկսեց առաջադիմական հայացքներ դավանող հասարակական դեմքերի հանդեպ, ցարական գործակալները սկսեցին հրահրել ազգամիջյան թշնամանք, ուժեղացավ ռուսաֆիկացման քաղաքականությունը: Վերջինիս գործնական ներմուծումը հրամայաբար պահանջում էր նաև կովկասյան բարձրագույն վարչության փոփոխություն, որին Պետերբուրգը ձեռնամուխ եղավ 1882 թ.: Մասնավորապես Կովկասում ցարական փոխարքայի պաշտոնը վերացվեց և նրա փոխարեն ստեղծվեց Գլխավոր պետի պաշտոնը: Նախկին փոխարքա մեծ իշխան Միխայիլ Ռոմանովին հետ կանչեցին Ռուսաստան, իսկ գլխավոր պետի պաշտոնում նշանակվեց իշխան Դոնդուկով–Կորսակովը, որն այդ պաշտոնում մնաց մինչև 1890 թ.: Նրանից հետո գլխավոր պետ էր իշխան Շերեմետևը, որին 1896 թ. փոխարինեց իշխան Գոլիցինը: Այս բոլոր նորահայտ կառավարիչները ծայրահեղ հետադիմականներ էին և Կովկասում եռանդուն իրականացնում էին մեծապետական–շովինիստական քաղաքականություն:

Ցարիզմի կոպիտ գաղութային քաղաքականությունն առանձնակի կտրուկ ձևով դրսևորվեց վրացական դպրոցների նկատմամբ: 1880–ական թթ. վերջին վրացերենը հանվեց նույնիսկ տարրական դպրոցներից, և դպրոց հաճախելու հենց առաջին օրվանից երեխաները բոլոր առարկաները սովորելու էին ռուսերենով: Դպրոցներում նույնիսկ խստորեն արգելվում էր վրացերեն խոսելը: Աշակերտներից պահանջվում էր խոսել միայն «հասկանալի լեզվով»: Վրացի ուսուցիչներն ազատվում էին աշխատանքից, և նրանց փոխարեն նշանակվում էին այնպիսի մանկավարժներ, որոնք բոլորովին չէին տիրապետում վրացերենին:

Այդ բոլորին վրաց ժողովուրդը պատասխանեց ինքնակալության դեմ պայքարի հուժկու վերելքով: Մտավորականությունը ռուսաֆիկացման քաղաքականության դեմ պայքարում էր իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով. կազմակերպվում էին տարբեր տիպի հասարակական և մշակութային–լուսավորչական հիմնարկություններ, վրացական և ռուսական մամուլում հրատարակում էին կրակոտ հոդվածներ, ի հեճուկս իշխանությունների արգելքի լույս էին ընծայվում վրացերեն դասագրքեր: Օրինակ՝ հայտնի մանկավարժ Յակով Գոգեբաշվիլին վրացերենով գրեց մի քանի փայլուն դասագիրք՝ «Դեդա էնա» («Մայրենի լեզու»), «Բունեբիս կառի» («Բնության դարպասներ») և այլն: 1879 թ. ստեղծվեց «Վրացիների շրջանում գրագիտությունը տարածելու ընկերություն», որն ունեցավ լուսավորչական խոշոր նշանակություն: Տարբեր վայրերում ընկերությունը հիմնադրում էր դպրոցներ, գրադարաններ, հրատարակում գրքեր: Ընկերությունն իր առջև նպատակ էր դրել նպաստել վրաց ժողովրդի ազգային ինքնագիտակցության արթնացմանն ու զարգացմանը և գաղափարներ պատրաստել զանգվածների հետագա շարժման համար: Այդ նույն նպատակին էր ծառայում նաև Կրծանիսի ճակատամարտի հարյուրամյակը և Հերակլ Բ–ի մահվան տարելիցը նշելու հանդիսավոր արարողությունը և Աղա Մուհամմեդ–խանի ռոմակների դեմ ճակատամարտում զոհված հերոսների հիշատակի միջոցառումը: Կրմանիսի դաշտում հավաքվածները ծնկաչոք իրենց հարգանքը մատուցեցին իրենց նախնիներին:

XIX դ. 70–90–ական թթ. կապիտալիզմի զարգացման ընթացքում ձևավորվեց Վրաստանի բանվոր դասակարգը: Դարի վերջին հաշվվում էր շուրջ 36 հազար արդյունաբերական բանվոր: Վարձու աշխատողների ընդհանուր թիվը 120 հազար էր:

XIX դարի 60–ական թվականների վերջից Վրաստանի ձեռնարկություններում տեղի են ունեցել առաջին գործադուլները: Դարավերջին դրանք ընդունել էին ավելի լայն ծավալ ու թափ: 1887 թ. Թիֆլիսում հիմնադրվեց Այսրկովկասի առաջին բանվորական կազմակերպություններից մեկը՝ «Բանվորական միությունը»:

Ռուսաստանում մարքսիզմի տարածումը որոշակի ազդեցություն ունեցավ վրացական հասարակական մտքի վրա: Այդ ուսմունքի տարածումը Վրաստանում սկսվում է XIX դ. 90–ական թվականներից: Այդ շրջանում հայտնվում են առաջին մարքսիստական կազմակերպությունները:

1892 թ. վերջին ձևավորվեց վրացական մարքսիստական կազմակերպությունը՝ «Մեսամե դասին» («Երրորդ դաս»): Նրա անդամների մեծ մասը՝ Ն. Ժորդանիայի գլխավորությամբ, ուներ ռեֆորմիստական դիրքորոշում:

XX դ. սկզբին Վրաստանում բանվորական շարժումը թևակոխեց նոր փուլ: Վրացական բանվոր դասակարգը սկսեց զանգվածային քաղաքական պայքար: 1900–1902 թթ. խոշոր գործադուլներ տեղի ունեցան Թիֆլիսի, Բաթումի ձեռնարկություններում և Ճիաթուրայի արդյունաբերական շրջանում:

Սակայն հարկ է նշել, որ 1900 թ. Ռուսաստանում սկիզբ առած լարվածությունը Վրաստանում ընդհանուր առմամբ չէր զգացվում: Չէր նկատվում նաև տնտեսական անկում: Հիմնական խոշոր արտադրական կազմակերպություններում, Թիֆլիսում գտնվող Այսրկովկասյան երկաթուղու արհեստանոցներում և այլն նախկինի նման շարունակվում էին աշխատանքները: Նույնը կարելի է ասել նաև Բաթումի նավթավերամշակման գործարանի մասին: Ուստի Վրաստանում սկիզբ առած բանվորական շարժումը պայմանավորված չէր տնտեսական ճգնաժամով կամ քաղաքական բնույթի պատճառներով: Դա սովորական հասարակական շարժում էր, որն ուղեկցում է կապիտալիզմի զարգացմանը: Ինչ վերաբերում է գյուղում ընթացող սոցիալական շարժումներին, ապա դրանք պայմանավորված էին մի կողմից՝ ճորտատիրական մնացուկներով, իսկ մյուս կողմից՝ կապիտալիզմի մուտքով գյուղական միջավայր, ինչը հարուցում էր գյուղացիության սոցիալական շերտավորումը: Այդ պատճառով գյուղում սոցիալական հարաբերությունները հարաճուն լարվում էին:

Սոցիալական շարժումները Վրաստանում ընթանում էին քաղաքների բանվորության և բուրժուազիայի միջև հակադրության ձևով: Պատճառները և պահանջները տնտեսական էին (աշխատանքային օրվա կրճատում, աշխատավարձի բարձրացում, սոցիալական երաշխիքներ և այլն): Այդ շարժումները Վրաստանում մեծ հակամարտության չվերածվեցին այն պատճառով, որ բանվորությունը փոքրաթիվ էր և թույլ կազմակերպված: Միաժամանակ, նրա մեծ մասը հավաքված էր լոկ երկու արդյունաբերական կենտրոններում՝ Թիֆլիսում և Բաթումում: Քաղաքի բանվորներն անգամ բոլորը չէ, որ քաղաքների բնակիչներ էին, դրանք գյուղի հետ կապերը պահպանող մարդիկ էին՝ հոգեբանությամբ խիստ տարբեր քաղաքային բանվորության մտքերից ու շահերից: Գյուղից եկած բանվորները աշխատանքից զրկվելու դեպքում հեշտությամբ թողնում էին քաղաքը և վերադառնում գյուղ:

Գյուղում սոցիալական շարժումն ընթանում էր գյուղացիության և հողատերերի միջև հակամարտության ձևով: Մեկ նպատակի շուրջ գյուղացիության համախմբմանը խանգարում էր այն հանգամանքը, որ այդ դասը բաժանված էր երեք շերտի՝ հարուստ, միջին և աղքատ: Այդ երեք շերտերի շահերը, որպես կանոն, չէին համընկնում: Գյուղացիական շարժումները կրում էին զուտ տնտեսական բնույթ:

Ինչպես ողջ Ռուսաստանում, Վրաստանում ևս սոցիալ–դեմոկրատները ձգտում էին բանվորության և գյուղացիության սոցիալական շարժումներն օգտագործելու իրենց նպատակների համար: Վրաց սոցիալ–դեմոկրատները ձգտում էին

բանվորական շարժմանը հաղորդելու քաղաքական երանգներ: Մասնավորապես նման փորձեր եղան Թիֆլիսում 1901 թ. և Բաթումում 1902 թ. տեղի ունեցած ցույցերի ժամանակ:

Թիֆլիսի 1901 թ. ցույցերի օրերին բանվորության մեջ քաղաքական ելույթներ կազմակերպելու անհաջող փորձեր էր կատարում Իոսիֆ Ջուղաշվիլու կողմից ստեղծված «Հեղափոխական սոցիալ–դեմոկրատական խումբը»: Փոխարենը նրանց հաջողվեց Բաթումում կազմակերպել ցուցարարների և ոստիկանության միջև ընդհարումներ, որի ժամանակ եղան զոհեր: Դրանով իսկ տնտեսական պատճառներով սկսված ցույցերը ձեռք բերեցին քաղաքական բնույթ:

1902 թ. Արևմտյան Վրաստանում լայն ծավալ ընդունեցին ազգային շարժումները: Դրանք քաղաքական երանգ չստացան: Գուրիայում գյուղացիական շարժումը իշխանությունների կողմից հարուցեց հալածանքներ, գյուղացիները ընդհարվեցին ժանդարմերիայի և զորքի հետ:

Հայտնի իրողություն է, որ XX դ. սկզբին Ռուսական կայսրությունում սուր բնույթ ընդունեց ազգային հարցը: Տերության տարածքում ապրող ժողովուրդների իրավունքների պաշտպանության հարցադրումներով սկսեցին հանդես գալ տարբեր գաղափարական ուղղությունների ներկայացուցիչներ: Եղան նաև եկեղեցական ազգայնականության պաշտպանության ջատագովներ, որոնցից մեկն էր, օրինակ, Ն. Դուռնովոն: Իր հրապարակախոսական ելույթներում նա անարդարացի էր համարում ցարական կառավարող շրջանների դիրքորոշումը վրաց ժողովրդի նկատմամբ, որը, նրա բառերով, բազմիցս ապացուցել էր իր նվիրվածությունը ցարին: «Ազգերից և ոչ մեկն այնպիսի հավատարմություն ցույց չի տվել կայսրությանը, ինչպես վրացիները: Այժմ ինչո՞ւ են նրանց նկատմամբ անվստահություն դրսևորում»,— բողոքում էր նա:

Նման ոգով ելույթ ունեցողները Ռուսաստանի իշխող շրջաններին հիշեցնում էին վրացիների և ռուսների հոգևոր միասնության ու դավանակցության մասին:

1902–1903 թթ. գյուղացիական շարժումներ ծավալվեցին նաև Քարթլիում: 1904 թ. նման շարժումներ տեղի ունեցան Կախեթում: Բոլոր այդ շարժումներն ընթանում էին անկազմակերպ, չունեին համակարգողներ և որոշակի ծրագրեր, ուստի և հեշտությամբ ճնշվում էին:

1905–1907 թթ. Ռուսաստանում տեղի ունեցող հեղափոխության ալիքներն արձագանք գտան նաև Վրաստանում, որտեղ իրադարձություններն ընդունեցին ազգային–ազատագրական շարժման տեսք: Վրաստանի մի շարք քաղաքներում՝ Բաթումում, Սուխումում, Փոթիում, Ճիաթուրայում, Տղիբուլիում, Շորապանում, Միխայլովոյում (Խաշուրի) և այլ քաղաքներում սկսվեցին գործադուլային շարժումներ, որոնք ուղեկցվում էին փողոցային ցույցերով, իսկ առանձին դեպքերում տեղի էին ունենում զինված բախումներ զորքերի ու ոստիկանության հետ: Ողջ Վրաստանով պայքարի դուրս եկավ նաև գյուղացիությունը: Ոստիկանության հետ գյուղացիների զինված բախումներ եղան Գորիի, Թիանեթի գավառներում, Կախեթի,

Մեգրելիայի գյուղերում: Գյուղացիները կրակի էին մատնում գյուղական գրասենյակները, իրար մեջ բաժանում կալվածատիրական հողերը:

Գյուղացիության հետ բանակցություններ վարելու նպատակով Գուրիա գործուղվեց Կովկասի գլխավոր պետին կից խորհրդի անդամ Սուլթան Ղրիմ–Գիրեյը: Նրա հետ հանդիպումների ժամանակ գյուղացիությունը ներկայացնում էր հետևյալ պահանջները. գյուղացիներին վերադարձնել այսպես կոչված «օտրեզոկ» հողերը, բռնագրավել կալվածատիրական, կաբինետային (ցարական ընտանիքի անձնական տնօրինության տակ գտնվող) և եկեղեցական–վանական հողերը և դրանք անվճար հանձնել գյուղացիությանը, վերացնել պետական, եկեղեցական, անուղղակի և այլ կարգի հարկերը, եկեղեցին անջատել պետությունից, դպրոցները՝ եկեղեցուց, մինչև 16 տարեկան երեխաների համար մտցնել համընդհանուր, անվճար և պարտադիր ուսուցում վրացերենով և այլն:

Պարզվեց, որ Սուլթան Ղրիմ–Գիրեյի առաքելության արդյունքներն անցանկալի են կառավարության համար, և նա հետ կանչվեց Թիֆլիս: Գյուղացիական շարժումները «խաղաղեցնելու» նպատակով տեղական իշխանությունները գյուղերն էին ուղարկում պատժիչ ջոկատներ, այդ նույն նպատակով ձևավորվում էին «սև հարյուրյակներ»:

Հեղափոխական խմորումների դեմ պայքարն արդյունավետ դարձնելու համար ցարական կառավարությունը վերակազմակերպեց Կովկասի բարձրագույն վարչությունը: Հեղափոխական շարժումների պայմաններում Պետերբուրգն այլևս նպատակահարմար չէր համարում բացահայտ ռուսականացման միջոցառումները և առօրյա կյանքում կոպիտ բռնարարքները, որոնք իրականացնում էր կառավարչապետ Գոլիցինը: 1905 թ. փետրվարին Գլխավոր պետի պաշտոնը վերացվեց, և վերականգնվեց ցարական փոխարքայի պաշտոնը, որը զբաղեցնում էր կոմս Ի. Ֆ. Վորոնցով–Դաշկովը (1905–1916 թթ.): Փոփոխություններ իրականացվեցին նաև հոգևոր բնագավառում: Վրաստանի էկզարխ Ալեքսիյին (Օպոցկի) փոխարինեց Նիկոլայը (Նալիմով 1905–1906 թթ.), իսկ ռուսականացման քաղաքականության եռանդուն ջատագով Ի. Վոստորգովը հեռացվեց Վրաստանից:

1905 թ. մարտի 30–ին նորանշանակ փոխարքան Պետերբուրգից հեռագիր ուղարկեց Կովկասի փոխարքայության բնակչության անունով, որտեղ նա խոստանում էր երկրամասում հաստատել զեմստվային հիմնարկություններ, վերակազմակերպել դատարանները, պետական հողերը տրամադրել գյուղական համայնքներին:

Սակայն միաժամանակ կառավարության հրամանագրով 1905 թ. մայիսից Կովկասում ուժեղացվում էր ոստիկանությունն ու ժանդարմերիան, ստեղծվում էր ոստիկանապետի պաշտոն, նշանակալիորեն ավելացվում էին գաղտնի ոստիկանության ծախսերը: Գորոդեցկի ազգանունով մի ռուս հոգևորական «անկարգությունների» դեմ պայքարի նպատակով ստեղծեց «Հայրենասերների ընկերություն» անունով մի կազմակերպություն, որը բաղկացած էր բացառապես միապետական տրամադրություններ ունեցող ռուս բնակչությունից: Ի պատասխան «անկարգու-

թյունների հրահրիչների»՝ 1905 թ. հոկտեմբերի 21–22–ին սև հարյուրյակները Թիֆլիսում կազմակերպեցին «հայրենասիրական» ցույց սրբապատկերներով ու ցարի մեծադիր նկարներով: Ռուսաստանում հեղափոխական շարժումների սկսվելուն պես Նիկոլայ Բ–ն դիմել էր Սրբազան Սինոդին՝ հույս հայտնելով, որ հոգևորականությունն կարելին կանի իր հոտում խաղաղությունը վերականգնելու համար: Ըստ այդմ՝ վրաց իմերեթական սինոդական գրասենյակը շտապում է հեղափոխական շարժումների մասին ընդունել 24 կետերից բաղկացած մի ծավալուն որոշում, որը կոչված էր էկզարխության ծխերում հոգևորականության միջոցով ուժեղացնելու հակահեղափոխական աշխատանքները: Բացի այդ՝ 1905–1907 թթ. ընթացքում վրացական էկզարխության կողմից հրատարակվեցին բազմաթիվ գրքեր, տարածվում էին մեծ թվով թռուցիկներ՝ հակահեղափոխական կոչերով: Պարբերաբար հրավիրվում էին «հայրենասիրական երեկոներ», որտեղ հակահեղափոխական հակումներով անձինք հանդես էին գալիս «անիշխանությունն ու քաոսը» դատապարտող դասախոսություններով:

Սակայն չնայած այդ բոլորին՝ այնուամենայնիվ, էկզարխիային չի հաջողվում վրաց հավատացյալներին հեռու պահել «հեղափոխության վարակից»: Ավելին՝ հեղափոխությունն իր խոր հետքը թողեց նաև վրաց ժողովրդի եկեղեցական գիտակցության վրա: Վրաց ուղղափառ եկեղեցու ընդերքում ակնառու կերպով սկսեցին ուժեղանալ ազգային միտումները: Հոգևոր գործիչների մեջ հասունացավ ազգային եկեղեցու ինքնավարության վերականգնման անհրաժեշտության պահանջը: Այդ գործիչներն անթաքույց և բացահայտորեն հակադրվեցին վրացական էկզարխությանը: Եկեղեցու ինքնավարության կողմնակիցների շարքում առաջին շարերում էին Սուխումի եպիսկոպոս Կիրիոնը և Գուրիա–Մեգրելիայի եպիսկոպոս Լեոնիդը: Հատկապես հենց վերջինիս նախաձեռնությամբ 1905 թ. սկիզբ առավ վրաց եկեղեցական ինքնավարության շարժումը: Վրաց հոգևորականությունը պահանջում էր վերականգնել վրացական և իմերեթական կաթողիկոսությունը, հեռացնել ռուս քահանաներին ու հոգևոր սպասավորներին՝ որպես հոտի լեզուն չիմացողների, իսկ ծխական դպրոցների ցածր դասարաններում ուսուցումը վարել վրացերենով:

Ի վերջո երկրում մտցնելով ռազմական դրություն՝ տեղական ցարական իշխանությունները զորքերի և ոստիկանական ուժերի օգնությամբ 1907 թ. ճնշեցին հեղափոխական շարժումները:

Հարկ է նշել, որ Ռուսական կայսրության այլ ազգային ծայրամասերի համեմատությամբ Վրաստանում 1905–1907 թթ. հեղափոխական շարժումներին մասնակից ուժերն ունեին իրենց առանձնահատկությունը: Լեհաստանում, Մերձբալթիկայում, Ֆինլանդիայում, Ուկրաինայում արտակարգ աշխուժացավ տեղի ազգայնական բուրժուազիան, որը ձգտում էր իրեն ցանկալի հունի մեջ դնելու սկսված շարժումները: Այս դեպքում ազգային բուրժուազիան կատարում էր ազգայնական ուժերի համախմբողի դեր և անցավ շարժման գլուխ: Վրաստանում ազգային բուրժուազիա փաստորեն գոյություն չուներ: Բուժական դասը հիմնականում բաղկա-

ցած էր հայ արդյունաբերողներից ու վաճառականներից, ուստի և նրա կապը ազգային շարժման հետ բացակայում էր: Ընդհակառակը՝ հայ բուրժուազիան թիկունք եղավ Կովկասի գաղութային վարչակարգին: Ազգային բուրժուազիայի դերը վրացական ազնվականությունը չէր կարող ստանձնել, քանի որ սկսված հեղափոխությունը, մասնավորապես գյուղացիական շարժումներն ուղղված էին հենց ժառանգական հողատիրության, այսինքն՝ նրա դեմ:

Վրաստանում թույլ էր կազմակերպված նաև գյուղացիությունը: Սոցիալ–դեմոկրատիան նրա որոշակի խնդիրների համար չէր պայքարում (տնտեսական դրության բարելավում, սոցիալական երաշխիքների ձեռքբերում), այլ սոցիալիզմի մասին ընդհանուր հայտարարություններով ձգտում էր նրանց կապելու հեղափոխության հետ: Սկզբնական շրջանում բանվորությունը հետևեց սոցիալ–դեմոկրատներին, սակայն երբ հեղափոխությունը առաջին լուրջ պարտությունը կրեց, բանվորները երես դարձրին նրանցից: Այդուհետև Վրաստանի բանվորական դասն այլևս քաղաքական պահանջներ չէր առաջադրում և պայքարի գլխավոր նպատակ հայտարարում էր տնտեսական վիճակի բարելավումը, սոցիալական երաշխիքների տրամադրումը:

Վրաստանում գյուղացիությունը ևս անհրաժեշտ չափով չհամախմբվեց: Միայն Գուրիայի գյուղացիությունը դրսևորեց կազմակերպվածության բարձր մակարդակ և առաջադրեց ագրարային հարցերի լուծման ինքնատիպ ծրագիր: Վրաց մտավորականությունը ևս հեղափոխության մեջ առանձին կազմակերպությամբ հանդես չի եկել: Մտավորականությունը բաշխվել էր այլևայլ կուսակցությունների և հոսանքների մեջ և այդպիսով իր սոցիալական շահերը չէր ներկայացնում: Անկուսակցական մտավորականները շատ փոքրաթիվ էին և իրադարձությունների ընթացքի վրա չէին կարող ազդել:

1905–1907 թթ. իրադարձություններից հետո ցարիզմը Վրաստանում սկսեց իրագործել համընդհանուր խստությունների քաղաքականությունը: Ոստիկանական հսկողությունն ուժեղացնելու նպատակով ստեղծվեց հատուկ մարմին՝ «Կովկասյան շրջանային պահնորդական բաժանմունք»: Ձերբակալությունները, խուզարկությունները, աքսորը դարձան վրացական կյանքի սովորական երևույթներ: Բանտերը լեփ–լեցուն էին: Հազարավոր մարդիկ առանց դատ ու դատաստանի, վարչական կարգով աքսորվում էին Ռուսաստանի հեռավոր, ցուրտ վայրեր: 1908 թ. ընթացքում ռազմադաշտային դատարանների վճռով կախաղան բարձրացրին հարյուրավոր հեղափոխականներ: Բացի այդ՝ ժանդարմերիայի գործակալների կողմից ոչնչացվում էին դեռևս ազատության մեջ գտնվող «հանցագործները»:

Նախահեղափոխական շրջանի համեմատ՝ բանվորների տնտեսական վիճակը վատացավ, գյուղացիության դրությունը ևս դարձավ անտանելի այն շրջաններում, որտեղ գյուղացիները ըմբոստացել էին: Հեղափոխական շարժումների օրերին գյուղացիական ապստամբություններից ահաբեկված կալվածատերերը թաքնվել էին քաղաքներում: Շարժման պարտությունից հետո նրանք վերադարձան գյուղերը՝ վրիժառության մոլուցքով լցված, դաժանորեն հաշվեհարդար տեսնելով իրենց անձ-

նական թշնամիների և ըմբոստ գյուղացիների հետ: Ցարական կառավարությունը ստիպում էր գյուղացիությանը փոխհատուցել կալվածատերերի կրած վնասները հեղափոխության օրերին: Դա իրագործելու համար իշխանությունը գյուղերն էր ուղարկում հատուկ պատժիչ ջոկատներ, որոնց սնունդը, կեցության և այլ կարիքների ծախսերը բավարարելու պարտավորությունը նույնպես դրված էր գյուղացիների վրա: Քայքայված և ծայրաղքատության հասած գյուղացիները հնարավորություն չունեին բավարարելու իշխանությունների այդ ապօրինի պահանջները և հարկադրված կրկին զենք էին վերցնում դիմադրելու համար, որի համար դաժանորեն պատժվում էին:

1912 թվականից գյուղացիական շարժումը կրկին սկսեց վերելք ապրել: Վերստին ծայր առան արյունահեղ բախումները գյուղացիության և կալվածատեր ազնվականների միջև: 1913 թ. դեկտեմբերին Ախալքալաքի գավառում տեղի ունեցավ գյուղացիական խոշոր ելույթ, որը ճնշվեց հրավիրված զորքերի միջոցով: Կալվածատերերի հետ գյուղացիների զինված բախումներ էին տեղի ունենում նաև Սենակիի, Զուգդիդիի, Օզուրգեթի, Թիֆլիսի և այլ գավառներում: Բոլոր նշաններից երևում էր, որ վրաց գյուղացիությունը խռովահույզ վիճակում էր:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՎՐԱՍՏԱՆԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ: ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

Առաջին աշխարհամարտը սկսվեց 1914 թ. օգոստոսի 1–ին, իսկ հոկտեմբերի 29–30–ին գերմանա–թուրքական նավատորմը Թուրքիայի աջակցությամբ հարձակում գործեց Ռուսաստանի սևծովյան նավահանգիստների՝ Թեոդոսիայի, Սևաստոպոլի, Օդեսայի, Նովոռոսիյսկի վրա: Դրանից հետո Ռուսաստանը նոյեմբերի 2–ին պատերազմ հայտարարեց Օսմանյան կայսրությանը: Վերջինս պատերազմի մեջ էր մտնում Հյուսիսային Կովկասը և Այսրկովկասը նվաճելու նպատակով: Թուրքական գլխավոր շտաբի կողմից մշակված ռազմավարական ծրագրի համաձայն՝ օսմանյան բանակը պետք է արագորեն գրավեր Հարավային Կովկասը և դրանով ապահովեր իր հետագա առաջխաղացումը դեպի Ռուսաստանի մուսուլմաններով բնակեցված շրջանները, ինչպես նաև հարևան երկրները: Ուստի Թուրքիայի համար ռազմական գործողությունների գլխավոր թատերաբեմը Կովկասյան ճակատն էր:

Կովկասյան ճակատում պատերազմական գործողությունները սկսվեցին 1914 թ. նոյեմբերի 2–ին թուրքական զորքերի խոշոր ուժերի հարձակմամբ և ներխուժմամբ Բաթումի մարզը: Նրանց հրամանատարությունը պատերազմի հենց սկզբից բացառիկ կարևորություն էր տալիս մուսուլման վրացիներով բնակեցված Աջարիային՝ ռուսական զորքերի թիկունքում աջարներին զինված ելույթների հրահրելու հույսով:

Պատերազմի հենց սկզբին Օսմանյան գերակշռող ուժերի ճնշման տակ ռուսական զորքերը ստիպված էին նահանջել, և թուրքերը նոյեմբերի սկզբին գրավեցին Արդվինն ու Արտանուջը: Ռուսական զորքերը հարկադրված էին նահանջել մինչև Բաթումից ոչ հեռու գտնվող Աջարիս–Ծղալի գետը:

Նկատի ունենալով կովկասյան ռազմաճակատի կարևորությունը՝ նոյեմբերի վերջին Նիկոլայ Բ ցարն այցելեց Վրաստան: Վրաց ազնվականությունը ցնծությամբ ու մեծ հանդիսավորությամբ ընդունեց միապետին: Իմերեթի ազնվականության պարագլուխ Դ. Նիժարաձեն ցարին խոստացավ ռազմաճակատ ուղարկել վրացի ազնվականներից կազմված զինված ջոկատներ: Շուտով ճակատ մեկնեցին երկու լեգիոններ՝ Ջանդիերիի և Ճավճավաձեի հրամանատարությամբ: Մարտունակ ազնվականության նշանակալից մասը կամավոր մեկնեց ռազմաճակատ: Ազնվականների դուստրերը ցանկություն հայտնեցին դառնալու գործող բանակի գթության քույրեր: Վրաց ազնվականության արտակարգ ժողովը որոշում կայացրեց

պատերազմի կարիքների համար հանգանակել 25 հազար ռուբլի: Նմանատիպ որոշումներ կայացվեցին նաև Բաթումում, Քութայիսում և այլ քաղաքներում:

1915 թ. օգոստոսին Կովկասի փոխարքա և Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար նշանակվեց մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչ Ռոմանովը, որը, շարունակելով իր նախորդի՝ Ի. Վորոնցով–Դաշկովի գործը, ձեռնամուխ եղավ Հարավային Կովկասի ռեսուրսների մոբիլիզացմանը:

Բոլշևիկները ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Հարավային Կովկասում, այդ թվում նաև Վրաստանում հանդես եկան «Իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու» կարգախոսով: Ինչ վերաբերում է վրաց մենշևիկներին, ապա նրանք բանվորներին դիմեցին հայտարարությամբ, որտեղ ասվում էր. «Մենք ձեզ կոչ չենք անում կազմակերպելու գործադուլներ ու ցույցեր: Դա կլիներ օգնություն մեր թշնամիներին»: Մենշևիկները պատերազմի առաջին իսկ օրից պատրաստակամություն հայտնեցին օժանդակելու Ռուսաստանի և նրա դաշնակիցներ Անգլիայի և Ֆրանսիայի բանակների հաղթանակին:

1915–1916 թթ. վրաց ազգայնականները՝ ազգային–դեմոկրատները և ֆեդերալիստները, որոնք այնքան էլ հավատ չէին ընծայում ցարական խոստումներին Վրաստանին ինքնավարություն շնորհելու վերաբերյալ, ակտիվացրին իրենց գործունեությունը: Նրանք ձեռնամուխ եղան ցարիզմի նկատմամբ ընդդիմադիր քայլերի: Համոզվելով, որ ցարիզմին մնացել է ապրելու չափազանց քիչ ժամանակ, վրաց ազգայնականները նախ գաղտնի, իսկ հետագայում նաև բացահայտ սկսեցին որոնել նոր հովանավոր: Որպեսզի իրադարձությունները վրաց ազգայնականներին խուճապի չմատնեն, նրանք Գերմանիայում, Ավստրիայում և Թուրքիայում կազմակերպեցին «Վրաստանի անկախության կոմիտեներ»:

Վրացական ֆեդերալիստների օրգան «Սախալխո փուրցելի» («Ժողովրդական թերթիկ») լրագիրը, ազնվական մտավորականության «Կլդե» («Ժայռ») շաբաթաթերթը, հանդես գալով պատերազմում Ռուսաստանի հաղթանակի պաշտպաններ, պահանջում էին վերջ տալ դասակարգային տարաձայնություններին և գործադրել բոլոր ջանքերը թշնամուն հաղթելու համար: 1915 թ. հունիսի 20–ին վրացական սոցիալիստ–ֆեդերալիստների կուսակցության օրգան «Սաքարթվելո» («Վրաստան») թերթը գրում էր. «Պետությունը վտանգի մեջ է, մոռացե՛ք ներքին տարաձայնությունների, անձնական անախորժությունների, կուսակցական պայքարի մասին և ոգևորվե՛ք մի մտքով ու կամքով»:

Համաշխարհային պատերազմի շրջանում չափազանց հրատապ դարձավ ազգային հարցը: Այդ հարցի նկատմամբ ևս վրացական տարբեր քաղաքական կազմակերպությունների ու հոսանքների դիրքորոշումները տարբեր էին: Բոլշևիկյան քարոզչության հետևանքով Կովկասյան ճակատի զորամասերում տեղի էին ունենում խռովություններ, դասալքություն և այլն: 1914 թ. սեպտեմբերին խռովություն բարձրացրեց Դուշեթի 116–րդ հետևակային գումարտակը: Խռովության պարագլուխները դաժանորեն պատժվեցին. վեց հոգու դատապարտեցին գնդակահարության, իսկ չորսին՝ տաժանակիր աշխատանքների:

Պատերազմի հետևանքով տնտեսական քայքայումը Վրաստանում ընդունեց աղետալի չափեր: Պատերազմական ճակատներ էին ուղարկվել երկու հարյուր հազար մարդ, որի հետևանքով տնտեսությունը զրկվել էր աշխատող ձեռքերից, այդ թվում նաև որակյալ աշխատուժից: Վրաստանի արդյունաբերության մի շարք ճյուղեր աշխատում էին պատերազմի կարիքների համար: 1914 թ. դեկտեմբերի 24–ին ընդունած օրենքով ցարական կառավարությունը 50 տոկոսով բարձրացնում էր հարկերը, ինչպես նաև ավելացնում պետական հողերից գանձվող պարհակը:

Օգտվելով բանվորության վերելք ապրող դժգոհությունից՝ 1915 թ. բոլշևիկները Թիֆլիսի արդյունաբերական ձեռնարկություններում, ֆաբրիկաներում և տպարաններում կազմակերպում էին գործադուլներ, սաբոտաժ: 1916 թ. սկզբին խոշոր գործադուլներ և հուզումներ տեղի ունեցան Հարավկովկասյան երկաթուղու Թիֆլիսի գլխավոր արհեստանոցներում և այլ ձեռնարկություններում: Դրանց հետևեցին Տղիբուլիի, Ճիաթուրայի և այլ վայրերի նմանատիպ գործադուլային շարժումները: Հուզումների և դժգոհության ալիքը տարածվեց նաև գյուղացիության շրջանում: Այն առանձնակի վերելք ապրեց 1915–1916 թթ.: Տեղի ունեցան գյուղացիության զինված ընդհարումներ բանակային ստորաբաժանումների հետ:

1917 թ. հունվարին Այսրկովկասում քաղաքական լարվածությունը դրսևորվեց առանձնակի սրությամբ: Հունվարի 29–ին Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարը հրապարակեց հատուկ հրամանագիր, որում նա սպառնում էր, որ ռազմաճակատ կուղարկվեն պաշտպանական արդյունաբերության մեջ աշխատող այն բանվորները, որոնք կհամարձակվեն դիմելու գործադուլների: Սակայն այդ հրամանագիրը սպասվող ազդեցությունը չունեցավ:

1917 թ. Ռուսաստանում տեղի ունեցած փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխության լուրը կայծակնային արագությամբ հասավ Հարավային Կովկաս: Պետրոգրադից Կ. Չխեիձեն անմիջապես գաղտնագրված հեռագիր էր ուղարկել Թիֆլիս ցարի գահընկեց լինելու վերաբերյալ: «Մթավրոբաձեն [վրացերեն մթավրոբա նշանակում է կառավարություն] մեռավ, հաղորդե՛ք հարազատներին ու ծանոթներին»,— ասվում էր հեռագրում:

Կովկասի փոխարքա Ն. Ռոմանովը, ստանալով հեղափոխության հաղթանակի լուրը, մարտի 2–ին իր մոտ կանչեց Թիֆլիսի քաղաքագլուխ Ալեքսանդր Խատիսովին (Խատիսյան), հոգևորականության ու մամուլի ներկայացուցիչներին և հայտնեց, որ ճանաչում է Պետական դումայի ժամանակավոր կոմիտեն: Միաժամանակ նա շեշտեց պատերազմը շարունակելու և թշնամու նկատմամբ հաղթանակ տանելու անհրաժեշտությունը: Փոխարքան հույս հայտնեց, որ Թիֆլիսի, ինչպես նաև Այսրկովկասի բնակչությունը հանգստություն կպահպանի: Նույն օրը Թիֆլիսի քաղաքային դումայի արտակարգ նիստում Ա. Խատիսյանը հայտարարեց, որ Կովկասի ցարական վարչությունը հանձին փոխարքայի ճանաչում է Պետական դումայի ժամանակավոր կոմիտեն որպես օրինական կառավարություն՝ դրան ավելացնելով, որ տեղական ու ցարական վարչության միջև հակասություններ չկան:

1917 թ. մարտի 5–ին Թիֆլիսում տեղի ունեցավ վրացական ազնվականության և ազգային–ժողովրդական ու այսպես կոչված դաշնակցային մտավորականության համագումար: Համագումարը Ռուսաստանի Ժամանակավոր կառավարությանն ուղարկեց ողջույնի հեռագիր, որտեղ նաև ասվում էր, որ իրենք պաշտպանում են պատերազմը մինչև հաղթական ավարտը շարունակելու քաղաքական գիծը: Այդ նույն օրերին մենշևիկների առաջնորդներ Ն. Ժորդանիան և Ն. Ռամիշվիլին այցելեցին փոխարքային իրենց կուսակցության հետագա վարքագիծը որոշելու համար: Զրույցի ընթացքում փոխարքան իր գոհունակությունը հայտնեց, որ Կովկասի բնակչությունը հանգիստ է վերաբերվում Պետրոգրադի դեպքերին: Միաժամանակ, դրսևորելով իր վերաբերմունքը մենշևիկյան կուսակցության նկատմամբ՝ նա նշեց, որ սոցիալ–դեմոկրատիան, որը մեծ ազդեցություն ունի Կովկասում, «կարգ ու կանոնի պահպանման կողմնակից է»:

Ժամանակավոր կառավարությանը աջակցելու կարգախոսով հանդես էին գալիս Վրաստանի ազնվականական–ազգային կուսակցությունները, որոնք, ինչպես և մենշևիկները, եռանդուն ջանքեր էին գործադրում, որպեսզի իշխանությունը չընկնի բոլշևիկների ձեռքը: Այդ նպատակով նրանց հաջողվեց համոզել Թիֆլիսի Բանվորների պատգամավորների խորհրդին (Սովետին) ընդունել որոշում տեղական իշխանության մարմին ստեղծելու մասին: Այդ մարմնին, որն անվանակոչեցին Թիֆլիսի Գործադիր կոմիտե, հավասար թվով անդամակցելու էին Թիֆլիսի Բանվորական պատգամավորների խորհրդի և քաղաքային վարչության ներկայացուցիչները: Ի դեմս այդ կոմիտեի՝ ստեղծվեց կոալիցիոն կառավարման բնույթի մի իշխանություն, որի գլուխ էին կանգնած Բյուրոն և երեք կոմիսարներ. մենշևիկ Ն. Ժորդանիան, «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցության անդամ Ա. Խատիսյանը և մենշևիկ սպա Դ. Պոպովը:

Վրաստանի մի շարք քաղաքական հոսանքներ, ինչպես, օրինակ՝ ազգային ժողովրդավարները և սոցիալիստ–ֆեդերալիստները, պահանջում էին Վրաստանի ինքնավարություն:

Մենշևիկների առաջարկով Թիֆլիսի սովետը Ժամանակավոր կառավարության առջև հարց հարուցեց՝ երկրամասի կառավարման համար Հարավային Կովկաս ուղարկել կոմիսարների: 1917 թ. մարտի 9–ին Ժամանակավոր կառավարությունը որոշեց վերացնել Կովկասի փոխարքայությունը և Հարավային Կովկասը կառավարելու համար ստեղծել Այսրկովկասի Հատուկ կոմիտե (ՕԶԱԿՈՄ)՝ կազմված Պետական դումայի անդամներ Վ. Վառլամովից (կադետ), Մ. Պապաջանյանից (կադետ), Մ. Զաֆարովից (կադետ), Կ. Աբաշիձեից (սոցիալիստ–ֆեդերալիստ) և Պ. Պերևերզևից (կադետ): ՕԶԱԿՈՄ–ի նախագահ նշանակվեց Վ. Խառլամովը: Հայտարարվեց, որ ՕԶԱԿՈՄ–ը Այսրկովկասում պետական իշխանության բարձրագույն մարմինն է: Մենշևիկները դժգոհ մնացին ՕԶԱԿՈՄ–ի կազմից՝ պատճառաբանելով, թե այսրկովկասյան դեմոկրատիան չունի իր ներկայացուցիչը այդ մարմնում: Ուստի Ժամանակավոր կառավարությունը Պ. Պերևերզևի փոխարեն ՕԶԱԿՈՄ–ի կազմ մտցրեց մենշևիկ Չխենկելուն:

ՕԶԱԿՈՄ–ը Ժամանակավոր կառավարության տեղական մարմինն էր, որը գործելու էր Ժամանակավոր կառավարության օրենքների հիման վրա և վերջինիս անունից: Այսրկովկասի հատուկ կոմիտեն իրեն համարում էր իշխանության բարձրագույն մարմին ողջ Հարավային Կովկասում: 1917 թ. մարտի 18–ին ՕԶԱԿՈՄ–ը հանդես եկավ Այսրկովկասի ժողովուրդներին ուղղված ուղերձով, որտեղ խոստանում էր երկրամասում ստեղծել տեղական պայմաններին ու կարիքներին համապատասխան նոր իրավակարգ: Սակայն այնպիսի հարցերի լուծումը, ինչպիսիք էին բանվորական, ագրարային, ազգային հարցերը, թողնվում էր Սահմանադիր ժողովին:

ՕԶԱԿՈՄ–ն իր խնդիրներից մեկն էր համարում ինքնավարության մարմինների կազմակերպումը երկրամասում: Ժամանակավորապես՝ մինչև Սահմանադիր ժողովի հրավիրումը, գյուղերում, գավառներում, նահանգներում և մարզերում ընտրությունների միջոցով պետք է կազմակերպվեին գործադիր կոմիտեներ, որոնք լինելու էին ՕԶԱԿՈՄ–ի՝ Ժամանակավոր կառավարության մարմիններ:

ՕԶԱԿՈՄ–ը 1917 թ. ամռանը դիմեց գյուղացիներին՝ հորդորելով նրանց չգրավել կալվածատիրական հողերը, այլ սպասել Սահմանադիր ժողովի կողմից հողային հարցի լուծմանը:

Սակայն կարճ ժամանակաշրջանի ընթացքում ՕԶԱԿՈՄ–ի ներսում ծագեցին սուր տարաձայնություններ ազգային հարցի շուրջը: Մասնավորապես վեճը գնում էր Հարավային Կովկասի տարածքների վերաբաժանման սուր հարցի շուրջը:

1917 թ. հոկտեմբերին Ռուսաստանում տեղի ունեցած բոլշևիկյան հեղաշրջումը Վրաստանում ընկալվեց ոչ այլ կերպ, քան դավաճանություն: Վրաց մենշևիկներն ի սկզբանե որդեգրեցին հակաբոլշևիկյան դիրքորոշում: 1917 թ. հոկտեմբերի 26–ին Թիֆլիսի բանվորական, զինվորական և գյուղացիական պատգամավորների Հարավկովկասյան երկրամասային կենտրոնն ու Թիֆլիսի պատգամավորների խորհրդի գործադիր կոմիտեի միացյալ նիստը որոշում կայացրեց Ռուսաստանում Ժողովրդական կոմիսարների խորհրդի իշխանությունը չճանաչելու մասին:

Հարկ է, սակայն, նշել, որ վրաց մենշևիկները բոլշևիկյան հեղաշրջումը գնահատեցին նաև որպես բարենպաստ իրողություն Ռուսաստանից անջատվելու և ազգային պետություն կերտելու ճանապարհին:

Հարավային Կովկասի քաղաքական կուսակցությունները որոշեցին ՕԶԱԿՈՄ–ի փոխարեն ստեղծել երկրամասի կառավարման նոր մարմին, մանավանդ որ Հարավային Կովկասի հատուկ կոմիտեն՝ ՕԶԱԿՈՄ–ը, կատարելապես վարկաբեկվել էր: Ըստ այնմ՝ 1917 թ. նոյեմբերի 15–ին (28–ին) ստեղծվեց հարավկովկասյան երկրամասային իշխանություն՝ Այսրկովկասյան կոմիսարիատ, որը բաղկացած էր 13 անդամից, որոնցից երեքը հայ էին: Դրա ղեկավարը դարձավ մենշևիկ Ե. Գեգեչկորին: Կոմիսարիատը ստեղծեց վրացական ազգային զորամիավորումներ, ժողովրդական գվարդիա և վրացական ազգային խորհուրդ:

Այսպիսով՝ վերջ տրվեց երկիշխանությանը: 1917 թ. նոյեմբերի 29–ին (դեկտեմբերի 12–ին) մենշևիկները Ջուղելիի գլխավորությամբ գրավեցին բոլշևիկների

հսկողության տակ գտնվող Թիֆլիսի զինանոցը, զինաթափեցին բոլշևիկյան պահակազորը, փակեցին բոլշևիկյան թերթերը և Թիֆլիսում մտցրին ռազմական դրություն:

Հարավային Կովկասում, մասնավորապես Վրաստանում տեղի ունեցող իրադարձությունները Ռուսաստանի բոլշևիկյան իշխանության կողմից գնահատվեց որպես իր կենսական շահերի դեմ ուղղված քայլեր:

Ժողովրդական կոմիսարների խորհուրդը, 1917 թ. դեկտեմբերի 16–ին հատուկ քննարկման ենթարկելով Կովկասում ստեղծված դրությունը՝ Ստեփան Շահումյանին նշանակեց Կովկասի ժամանակավոր արտակարգ կոմիսար: Նա 1918 թ. հունվարին ժամանեց Թիֆլիս և ձեռնամուխ եղավ իր պարտականությունների կատարմանը:

Այսրկովկասյան կոմիսարիատը հրամայեց ձերբակալել Ս. Շահումյանին: Այն Հարավային Կովկասի բոլշևիկյան տրամադրություններ ունեցող շրջաններում հայտարարեց ռազմական դրություն: Կոմիսարիատը գոյություն ունեցավ մինչև 1918 թ. փետրվարի 10–ը՝ մինչև այսպես կոչված Այսրկովկասյան սեյմի ստեղծումը:

1918 թ. փետրվարին Անդրկովկասյան սեյմի ստեղծումով Հարավային Կովկասը հայտարարվեց «Անկախ Դաշնային Ժողովրդավարական Հանրապետություն»: 1918 թ. ապրիլի 9–ին (22–ին) Սեյմը հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ ասվում էր, որ երկրամասն անջատվում է Ռուսաստանից և հայտարարում իր անկախության մասին: Սեյմի ապրիլի 13–ի (26–ի) նիստում հռչակվեց Հարավային Կովկասի Դաշնային Ժողովրդավարական Հանրապետության ծնունդը: Ստեղծվեց կառավարության նոր կազմ՝ Ա. Չխենկելիի գլխավորությամբ:

Այսրկովկասի այդ հանրապետությունը գոյատևեց ընդամենը 47 օր: 1918 թ. մայիսի 26–ին Այսրկովկասյան սեյմը դադարեցրեց իր գործունեությունը, և նրա փոխարեն ձևավորվեցին երեք անկախ հանրապետություններ՝ Վրաստան, Հայաստան և Ադրբեջան: Վրաստանի անկախությունը հռչակվեց 1918 թ. մայիսի 26–ին, իսկ մայիսի 28–ին հռչակվեց Հայաստանի անկախությունը: Վրաստանը հայտարարվեց անկախ հանրապետություն, որը մայիսի 28–ին ճանաչվեց Գերմանիայի կողմից: Մայիսի վերջին–հունիսի սկզբին Վրաստանի կառավարության հրավերով Վրաստան մուտք գործեցին գերմանական զորքեր՝ դրանով իսկ վրացական նորաստեղծ պետությունը փրկելով թուրքական զորքերի կողմից ռազմակալման ենթարկվելու վտանգից:

1918 թ. հունիսի 4–ին Վրաստանի հանրապետության կառավարությունը Բաթումում պայմանագիր կնքեց Թուրքիայի հետ, որով Վրաստանի տարածքի մի մասը՝ Աջարիան ամբողջությամբ, Ախալքալաքի գավառը և Ախալցխայի գավառի մի մասը, անցնում էր Թուրքիային:

1918 թ. դեկտեմբերին գերմանական զորքերին փոխարինեցին անգլիականները, որոնք Վրաստանում մնացին մինչև 1920 թ. հուլիսը:

1920 թ. սկզբին քաղաքացիական պատերազմի ճակատներում Խորհրդային Ռուսաստանը ձեռք է բերել լուրջ հաղթանակներ: 1920 թ. ապրիլի 28–ին Ադրբեջա-

նում հաստատվել էր Խորհրդային իշխանություն: Մտավախություն ունենալով, որ երկրի ներսում կսկսվեն հեղափոխական խմորումներ, իսկ բոլշևիկյան Կարմիր բանակը մոտենում է Վրաստանի սահմաններին, երկրի կառավարությունը դիմեց Խորհրդային Ռուսաստանին՝ խնդրելով Վրաստանի հետ կնքել խաղաղության պայմանագիր: Այն ստորագրվեց 1920 թ. մայիսի 7–ին: Ըստ այդ պայմանագրի՝ Վրաստանի բոլշևիկյան կազմակերպությունները ստանում էին լեգալ գործունեության իրավունք: 1920 թ. նրանք միավորվեցին, և ստեղծվեց Վրաստանի կոմունիստական կուսակցությունը:

1920 թ. նոյեմբերի 29–ին Հայաստանում ևս հաստատվեց Խորհրդային իշխանություն: 1921 թ. փետրվարի 11–ին Վրաստանի կոմունիստական կուսակցությունը կազմակերպեց զինված ապստամբություն, որն արագորեն տարածվեց Բորչալուի, Դուշեթի, Գորիի, Ռաչիի, Քութայիսի, Սենակիի գավառներում:

Ապստամբությունը ղեկավարելու համար ստեղծվեց Հեղափոխական կոմիտե, որի կազմի մեջ մտան Ֆ. Մախարաձեն, Մ. Օրախելաշվիլին, Ճ. Էլիավան, Ա. Գեգեչկորին, Բ. Կվիրկվելիան, Ա. Նազարեթյանը և ուրիշներ: Հեղափոխական կոմիտեն Վրաստանը հայտարարեց Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն: 1921 թ. փետրվարի 25–ին Կարմիր բանակի զորամասերը մուտք գործեցին Վրաստանի մայրաքաղաք, և Վրաստանի դեմոկրատական կառավարությունն ընկավ:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՅԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Վրաստանում հայերն ապրում են վաղնջական ժամանակներից: Աղբյուրների հավաստի վկայությամբ՝ V դարում վրաց Վախթանգ Գորգասալ թագավորը Տփղիսը (Թիֆլիս, Թբիլիսի) իր պետության մայրաքաղաք դարձնելուց հետո այն բնակեցրել է մեծ թվով հայերով: Հավաստիորեն հայտնի է, որ հետագայում հայերը Բերդի թաղում կառուցել են երկու եկեղեցի՝ 631 թ. Ս. Գևորգ եկեղեցին և 754 թ. Հրեշտակապետացը: XI դարի վրաց պատմիչ Լեոնտի Մռովելին գրում է, որ VII դարում Քարթլիում տարածված վեց լեզուներից մեկը հայերենն էր: Այդ վեց լեզուները, վկայում է պատմիչը, «գիտեին բոլորը՝ Քարթլիի թագավորները, այրք և կանայք»:

Վրաց ժողովուրդն ասպնջական վերաբերմունք է ունեցել դարավոր հարևան և դավանակից հայ ժողովրդի նկատմամբ: Դարեր շարունակ ենթարկվելով տարբեր օտար զավթիչների, բռնակալ տերությունների հալածանքներին և պատերազմական արհավիրքներին՝ հայերն ապաստան են գտել վրացական հյուրընկալ երկրում: Օրինակ՝ հայտնի է, որ 1045 թ. Անիի Բագրատունյաց թագավորության անկումից հետո մեծ թվով հայեր, դիմելով արտագաղթի, հաստատվել են Վրաստանի այլևայլ վայրերում՝ Տփղիսում, Գորիում, Դմանիսում, Թմուկում, Գրեմիում և այլ քաղաքներում ու գյուղական վայրերում:

Մատթեոս Ուռհայեցի պատմիչը վկայում է, որ վրաց Դավիթ Բ Շինարար թագավորի օրոք (1089–1125) կառուցվել է Գորի քաղաքը, որը վերածվել է վաճառաշահ կենտրոնի՝ բազմամարդ հայկական գաղութով, որը բաղկացած էր արհեստավորական, առևտրական և հոգևորական խավերից: Պատմիչը նաև տեղեկացնում է, որ հայերը կառուցել են Գորիի և մոտիկ շրջակայքի (Ուփլիսցիխե, Քվախրելի և այլն) հայկական եկեղեցիներն ու վանքերը:

XII դարի Տփղիսը դարձել է վիրահայոց թեմի առաջնորդանիստը: XIII և հետագա դարերում ծաղկում են ապրում հայկական գաղութները Ալիում, Դմանիսում, Թմուկում (Թմոգվի) և այլուր, իսկ XV դարից նաև Կախեթի մայրաքաղաք Գրեմիում:

1319–1352 թթ. միջև ընկած ժամանակաշրջանում Տփղիսում հայերի կողմից կառուցվում է եռասեղան և եռագմբեթ Վանքի տաճարը:

Ի դեպ՝ Գրեմիում հայտնաբերված հայերեն արձանագրությունները, ինչպես նաև Տփղիսի XVII–XVIII դդ. բազմաթիվ շինարարական և այլ բնույթի վիմագրերը վկայում են, որ ուշ միջնադարում հայ առևտրական և արհեստավորական խավերը նշանակալի դեր են խաղացել բովանդակ Արևելյան Վրաստանի կյանքում:

Պատմության նոր դարաշրջանի այգաբացին ևս վրաց թագավորները խրախուսել են հայերի մուտքը Վրաստան՝ նրանց հատկացնելով բնակության վայրեր հատկապես Քարթլիում և Կախեթում, տրամադրելով կեցության համար բարենպաստ պայմաններ, հատկացնելով զանազան արտոնություններ ու իրավունքներ, ինչպես նաև շնորհելով պետական բարձր պաշտոններ, որոնք, որպես կանոն, փոխանցվում էին ժառանգաբար: Մասնավորապես Հերակլ Բ թագավորը զանազան վայրերից հայ բնակիչներ էր տեղահանում և բնակեցնում Վրաստանի տարբեր վայրերում:

Վրաստանի միացումը Ռուսաստանին վիրահայության համար ունեցավ կարևոր նշանակություն նախ այն պատճառով, որ այդ նոր քաղաքական պայմաններում այն ձեռք էր բերում կարևոր դիրքեր: Նշված շրջանում Վրաստանում, մասնավորապես վրացական պետության արևելյան շրջաններում՝ Քարթլիում և Կախեթում, հայերն ունեին բավականին խոշոր թվաքանակ: Ըստ 1801 թ. Վրաստանի կցումից հետո ռուսների կողմից կազմված Վրաստանի գյուղերի անվանական ցուցակի՝ Քարթլիում և Կախեթում կային 53 զուտ հայաբնակ գյուղեր և 147 այնպիսի գյուղեր, որոնց ազգաբնակչությունը խառն էր՝ բաղկացած հայերից ու վրացիներից: Բացի այդ՝ գոյություն ունեին նաև հայ և թուրք ազգաբնակչությամբ խառը գյուղեր:

Վրաստանում ճորտատիրական իրավունքի գոյության պայմաններում երկրի ամբողջ գյուղական ազգաբնակչությունը, այդ թվում նաև հայերը ճորտ էին՝ լինելով կա՛մ պետության, կա՛մ ազնվականական դասի, կա՛մ եկեղեցու սեփականությունը:

Ըստ որոշ տվյալների՝ հայ գյուղական ազգաբնակչությունը կազմում էր Վրաստանի քրիստոնյա ազգաբնակչության ավելի քան մեկ երրորդը:

1804–1813 թթ. ռուս–պարսկական պատերազմի շրջանում Գանձակի և Արցախի խանություններից մեծ թվով հայեր գաղթել են Կախեթ, Սոմխիթ և Քարթլի: Առաջին ռուս–պարսկական պատերազմի հենց սկզբում՝ 1804 թ., Արևելյան Հայաստանից ավելի քան երկու հազար հայեր, դիմելով արտագաղթի, բնակություն են հաստատել Թիֆլիսում՝ դնելով հետագա «Հավլաբար» թաղամասի հիմքը:

Քաղաքներում վրացի տարրը փոքրամասնություն էր կազմում, ուստի քաղաքային բնակչությունը Արևելյան Վրաստանում բաղկացած էր գլխավորապես հայերից: Թիֆլիս, Գորի, Անանուր, Սղնախ քաղաքներում հայերը մեծամասնություն էին:

Վրաստանում առկա էր «մոքալաք» հասկացությունը: Սկզբում մոքալաք էին կոչվում բոլոր քաղաքները, բայց այնուհետև այն դառնում է մի տեսակ պատվանուն, որ վրաց թագավորների կողմից տրվում էր Թիֆլիս և Գորի քաղաքների այն բնակիչներին, որոնք ունեին քաղաքաբնակի ծագում և վճարում էին մախթա կոչված հարկը: Մինչև XIX դ. սկզբները մոքալաքներն առավելապես հայեր էին:

Մոքալաքները վայելում էին վրաց թագավորների հովանավորությունը և օգտվում էին մի շարք արտոնություններից: Նրանց շնորհված արտոնությունները հավասարազոր էին վրաց ազնվականությանը տրված արտոնություններին: Մոքալաքները կարող էին լինել պաշտոնյա, կառավարիչ և այլն, իրավունք ունեին նաև

գյուղացիներ գնել: Քրեական հանցանքի համար մոքալաքները մահվան պատժի չէին ենթարկվում, ինչպես հասարակ խավը, այլ ենթարկվում էին դրամական տուգանքի: Վրաց Վախթանգ թագավորի սահմանած օրենսդրության համաձայն՝ մոքալաքի և վրաց երկրորդ կարգի ազնվականի արյան գինը նույնն էր: Թագավորն ամեն անգամ դիմում էր մոքալաքների օգնությանը, երբ դրամական փոխառության կարիք էր զգում: Այդ նույն կերպ մոքալաքները դրամական փոխառություններ էին տրամադրում նաև վրաց ազնվականությանը: Վրաստանը պարտավոր էր պարսից շահերին աղջիկներ և պատանիներ տալ իբրև հարկ, մոքալաքները դրամական վճար կամ փրկագին տալու միջոցով ազատվում էին այդ յուրահատուկ տուրքից: Մոքալաքներն ունեին իրենց միջից ընտրված դատավորներ, որոնք վճռում էին նրանց մեջ ծագած քաղաքացիական վեճերը: Որպես կանոն՝ հայ վաճառականները պատկանում էին մոքալաքների դասին:

Թիֆլիսում մոքալաքներից անհամեմատ բազմամարդ դաս էին հայ արհեստավորները, որոնք, սակայն, չէին վայելում մոքալաքների արտոնությունները: Վրաստանի հայաշատ կենտրոնը, անշուշտ, Թիֆլիսն էր, որտեղ հայերը բնակվում էին անհիշելի ժամանակներից: 1803 թ. Թիֆլիսում ապրում էին 8700 հայեր, որոնք կազմում էր ողջ բնակչության 74 տոկոսը: Մեծ թվով հայեր էին ապրում նաև Վրաստանի այլ քաղաքներում, օրինակ՝ Մցխեթում, Գորիում, Սուրամում, Ախալգորիում, Անանուրում, Դուշեթում, Թելավում, Սղնախում, Քութայիսում, Ախալքալաքում, Ախալցխայում, Սուխումում և այլն: Ընդ որում՝ որոշ քաղաքներում նրանք կազմել են մեծամասնություն (Թիֆլիսում, Գորիում, Անանուրում, Թելավում, Սղնախում): 1817 թ. Թիֆլիսում հայերի թիվը կազմում էր 11 200 մարդ՝ ընդհանուր բնակչության 75,6 տոկոսը, իսկ վրացիներինը՝ 2800 (18,9 տոկոս): XIX դ. կեսերից քաղաքի բնակչությունը խոշոր աճ է արձանագրում: 1864 թ. այնտեղ բնակվում էր 28 500 հայ (47,4 տոկոս) և 14 900 վրացի (24,9 տոկոս), 1876 թ.՝ 37 600 հայ (41 տոկոս) և 22 200 վրացի (24,1 տոկոս), 1899 թ.՝ 63 000 հայ (36,4 տոկոս) և 44 900 վրացի (26 տոկոս):

Թիֆլիսի նահանգում 1886 թ. հայերի թիվը 195 946 մարդ էր, որոնց մեծ մասն առաքելական էր, իսկ կաթողիկե եկեղեցու հետևորդների թիվը 16 173 մարդ էր: Հայերը ներկայացված էին Թիֆլիսի նահանգի վարչական կառույցներում, դատական ու ոստիկանական համակարգում, զինված ուժերում, ուսումնական ոլորտում, գիտության, գրականության, արվեստի, բժշկության և այլ բնագավառներում:

Թիֆլիսահայերը եղել են նաև քաղաքային Դումայի անդամներ, հաճախ նաև քաղաքագլուխներ: Ուշագրավ է, որ քաղաքային կյանքի բարելավման նպատակով ստեղծվում է Թիֆլիսի տեխնիկական բյուրոն՝ ինժեներ Էնֆիաջյանցի և Գրիգորյանի գլխավորությամբ: Այն պետք է զբաղվեր քաղաքում վերակառուցվող ու նոր շինությունների հատակագծերը կազմելու և նորոգելու, ջրմուղի, կամուրջների, ջրամաքրման համակարգի ստեղծման գործերով և այլն:

Թիֆլիսում, ինչպես նաև Վրաստանի մյուս հայաբնակ քաղաքներում հայերի հիմնական զբաղմունքը եղել է առևտուրը, ձեռնարկատիրական գործունեությունը, արհեստագործությունը: Գյուղական վայրերում հայերը զբաղվել են հողագործությամբ, այգեգործությամբ, անասնապահությամբ, բանջարաբուծությամբ, շերամապահությամբ և այլն: Թիֆլիսի հայ խոշոր վաճառականները զբաղվել են նաև միջազգային առևտրով եվրոպական և ասիական երկրների հետ:

Թիֆլիսի վաճառականների համքարությունը օտարերկրյա վաճառականության մրցակցությունից խուսափելու նպատակով ստիպում էր նրանց կատարել ապրանքների միայն մեծածախ առևտուր: 1808 թ. կազմված Վրաստանի մաքսային ծառայության տեղեկագրի համաձայն՝ հայերը Հնդկաստանից ներմուծում էին ակնեղեն, բրդյա և մետաքսյա գործվածքներ, ներկեր, պողպատ, համեմունքներ, սառնաշաքար, թեյ, սուրճ, վառոդ, ասեղներ, պղնձարջասպ, հախճապակե իրեր և այլն: Նրանք չափազանց աշխույժ առևտրական հարաբերությունների մեջ էին նաև Իրանի, Թուրքիայի, արաբական երկրների հետ: 1812 թ. կազմված մի զեկուցագրի համաձայն՝ Թիֆլիսն առևտրական լայն կապերի մեջ էր Էրզրումի, Կարսի, Բայազետի, Կոստանդնուպոլսի, Թեհրանի, Սպահանի, Բենդեր–Բուշեհրի և այլ քաղաքների հետ: Առհասարակ հայ առևտրական բուժուազիան կարևորագույն դերակատարություն ուներ ողջ Մերձավոր ու Միջին Արևելքում: Այդ ստվարաթիվ դասը իր սեփական միջավայրից ծնունդ տվեց արդյունաբերական բուրժուազիային, որը ողջ Հարավային Կովկասում, այդ թվում նաև Վրաստանում ձեռք բերեց տիրապետող ու գերակշռող տնտեսական դիրքեր: Հայ արդյունաբերական բուրժուազիայի ձեռնարկատիրական գործունեությունն աննախընթաց մղում հաղորդեց Թիֆլիսի գործարար կյանքին՝ միաժամանակ նպաստելով քաղաքի զարգացմանը, արդիականացմանը և նրա բնակչության ընդհանուր բարեկեցությանը:

1858 թ. Վրաստանի մայրաքաղաքում կային 71 արդյունաբերական ձեռնարկություններ, 1879 թ. նրանց թիվը հասել էր 214–ի, որոնց մեծ մասը պատկանում էր հայերին: Դրանք ունեին հարյուրավոր, երբեմն նաև հազարավոր բանվորներ, օրինակ՝ Գ. Ադելխանովի գործարանում աշխատում էին 2000, Յարալովի մեխանիկական գործարանում՝ 900, Էնֆիաջյանցի ֆաբրիկայում՝ 600 մարդ:

Մի շարք խոշոր ձեռնակատերեր միաժամանակ ունեին մի քանի գործարան: Հայերին էր պատկանում նաև նոր ձեռնարկությունների բացման և շահագործման առաջնությունը: Հայ դրամատերերն ու ձեռնարկատերերը ֆաբրիկաներ ու գործարաններ ունեին նաև Վրաստանի մյուս քաղաքներում:

Թիֆլիսի և այլ քաղաքների ունևոր հայերը ձեռնարկատիրական գործունեությունը համատեղում էին նաև բարեգործության հետ: Այն չէր սահմանափակվում լոկ իրենց ազգակիցների շրջանով, այլ տարածվում էր նաև հայրենակից վրացական շրջաններում՝ նպաստելով հարազատ քաղաքի զարգացմանն ու ծաղկմանը: Թիֆլիսի խոշոր բարերարներից հատկապես հիշատակության արժանի են Մանթաշյանների (Մանթաշովների), Արծրունիների, Անանովների, Արամյանցների, Փիթոևների և շատ ուրիշների ընտանիքները:

Անժխտելի իրողություն է, որ Թիֆլիս քաղաքի զարգացման, կառուցապատման և ընդլայնման գործում չափազանց էական է հայ առևտրական և արդյունաբերական կապիտալի ներկայացուցիչների ներդրումը: Նրանք կառուցել են տներ և պալատներ, կամուրջներ, թատրոններ, հիվանդանոցներ և այլն:

Հայ հասարակական–մշակութային կյանքի կարևոր մարզերից էր թատրոնը:

1851 թ. Թիֆլիսի հարուստ վաճառական, քաղաքի պատվավոր քաղաքացի Գաբրիել Թամամշևի միջոցներով Երևանյան հրապարակում շահագործման է հանձնվել թատրոնի հրաշագեղ շենքը: Դա Այսրկովկասում առաջին թատրոնի շենքն էր, որտեղ ներկայացումներ էին խաղում զանազան թատերական խմբեր և օպերային թատրոնը: XIX դ. 60–ական թթ. թատերասերների կողմից Թիֆլիսում ստեղծված աշխուժությունը 70–ականների սկզբին առավել կազմակերպված բնույթ է ստանում՝ թատերական ներկայացումները դարձնելով հայ հասարակության կենցաղի անբաժանելի մասը: Հայկական թատրոնի վարչության ջանքերով ստեղծվում է ազգային թատերական բեմացանկ, ներկայացվում են եվրոպական և դասական հեղինակների պիեսներ: Կ Պոլսից Թիֆլիս են հրավիրվում հայ դերասաններ՝ Պետրոս Ադամյանը և ուրիշներ:

Թիֆլիսի հայ խոշոր առևտրական և բարեգործ Իսայի Փիթոևի տրամադրած միջոցներով կառուցվել և 1901 թ. շահագործման է հանձնվել Վրաստանի մայրաքաղաքում գեղեցկագույն կառույցներից մեկը՝ «Արտիստական ընկերության» շենքը (ներկայումս՝ Թբիլիսիի Ռուսթավելիի անվան պետական ակադեմիական թատրոնի շենքը):

Թիֆլիսում կային հայկական անվանումներով բազամաթիվ վայրեր. Երևանյան և Մադաթովյան հրապարակներ, Մադաթովի, Արծրունու, Շելկովնիկովի, Լոռիս–Մելիքովի, Տեր–Ղուկասովի, Լազարևի, Բեհբութովի, Արղութինսկու, Աշտարակի, Էջմիածնի, Սուրբ Նշանի, Սուրբ Մինասի, Սուրբ Կարապետի և այլ անվանումներով փողոցներ: Տնտեսական նոր հարաբերությունների մուտքը Հարավային Կովկաս խթանեց նաև կրթական ոլորտի զարգացումը: Լուսավորության մարզում դրական փոփոխություններն ու նկատելի տեղաշարժերը XIX դ. երկրորդ կեսի իրականության նշանակալից նվաճումներից էին: Սկսվում է ազգային դպրոցների ձևավորման և կայացման գործընթացը: Հայկական դպրոցների ձևավորումն առաջին հերթին պայմանավորված էր 1836 թ. մարտի 16–ի Կարգագրով, որով կանոնակարգվում էին հայոց եկեղեցու և ցարական կառավարության փոխհարաբերությունները, լուծվում էր ազգային դպրոցների խնդիրը՝ դրանք դնելով եկեղեցու ենթակայության տակ: Ռուսական իշխանությունների համոզմամբ՝ «երիտասարդ սերնդի կրթության և դաստիարակության գործը» կարելի էր վստահել միայն եկեղեցուն:

Վրաստանի գրեթե բոլոր հայաբնակ գավառներում, քաղաքներում և գյուղերում գործում էին հայկական դպրոցներ: 1814 թ. Վրաստանի թեմի առաջնորդ է նշանակվում պատրիարք–կաթողիկոս Ներսես Ե Աշտարակեցին: Մեկ տարի անց Վանքի եկեղեցում նրա կողմից բացվում է տարրական դպրոց, իսկ 1824 թ. նա բացում է

Թիֆլիսում առաջին հանրակրթական ուսումնական հաստատությունը, որը 1837 թ. ցարական աստիճանավորների պահանջով վերածվում է թեմական հոգևոր սեմինարիայի, իսկ հետագայում կոչվում է Ներսիսյան վարժարան: 1858 թվականից սկսած՝ այն դառնում է հայ մտավորական գործիչների պատրաստման նշանավոր դարբնոց: Իր մեկդարյա գոյության ընթացքում նրա ավելի քան երկու հազար շրջանավարտներ դառնում են գիտության, գրականության, մշակույթի, գյուղատնտեսության, առողջապահության բնագավառների նշանավոր գործիչներ:

XIX դ. երկրորդ կեսից Վրաստանում հայկական դպրոցների թիվն անընդհատ աճել է: 1830 թ. Ախալցխայում բացվում է Կարապետյան դպրոցը (Կարապետ արքեպ. Բագրատունու անունով): Այդ դպրոցը համարվում էր Ներսիսյան դպրոցից հետո իր նշանակությամբ երկրորդը Կովկասում: Դպրոցներ են բացվում նաև Ախալքալաքում (Մեսրոպյան, 1836), Մուղնիում, Ախալգորիում, Ցխինվալում, Կասպիում, Կախուրելիում, Կարախաչում, Աղբուլաղում, Դաղես–Խաչենում, Դուռնուկում, Ծղնեթում, Կումիսում, Մանգլիսում, Շամշուլդեում և այլ քաղաքներում:

Կովկասում ցարական իշխանության պաշտոնաթերթ «Кавказ»–ի հաղորդմամբ՝ 1846 թ. Թիֆլիսի ուսումնարաններում սովորող 1301 աշակերտներից 497–ը (շուրջ 1/3 մասը) հայեր էին:

Կրթության հարցերի կարգավորմանը էապես նպաստել է նաև 1849 թ. ընդունված Կանոնակարգը, որը թեև ուժեղացրեց իշխանությունների վերահսկողությունը դպրոցական ծրագրերի նկատմամբ, սակայն առավել կանոնակարգված դարձրեց կրթարանների գործունեությունը: Արդյունքում բացվեցին նորանոր դպրոցներ:

XIX դարի երկրորդ կեսին Թիֆլիսում բացվում են մի շարք իգական դպրոցներ, որոնց կոչումն էր հայկական դպրոցների համար պատրաստել վարժուհիներ: 1836 թ. սկսում է գործել Թիֆլիսի Բեթղեհեմի Ս. Աստվածածին եկեղեցու օրիորդաց Մարիամյան դպրոցը և նախակրթարանը: 1869 թ. բացվում են Գայանյան, 1870 թ.՝ Եղիսաբեթյան, 1877 թ.՝ Մարիամյան, Հովնանյան վարժարանները: Հիշատակության արժանի են նաև Բեթղեհեմի Ս. Աստվածածին եկեղեցու (1858), Զրկինյանց Ս. Կարապետ եկեղեցու արական ծխական, Զրկինյանց Ս. Կարապետ եկեղեցու Եղիսաբեթյան իգական (1866) դպրոցները, Թիֆլիսի հայկական մասնավոր օրիորդաց գիմնազիան (1885), Հավլաբարի Հռիփսիմյան օրիորդաց (1866), Հավլաբարի Ս. Մինաս եկեղեցու Իզմիրյան արական (1848), Հավլաբարի Շամքորեցոց Ս. Գևորգ եկեղեցու (1861), Մուղնու Ս. Գևորգ եկեղեցու արական միջնակարգ դպրոցները (1849), Նորաշենի Ս. Աստվածածին եկեղեցու Մարիամյան օրիորդաց դպրոցը (1866) և այլն:

Եղել են նաև բազմաթիվ հայկական մեկդասյան և երկդասյան դպրոցներ: 1881 թ. Թիֆլիսի նահանգում հաշվվում էր 80 հայկական հոգևոր վարժարան: 1876 թ. Թիֆլիսում գործող 66 դպրոցներից 18–ը հայկական էին: Հայկական դպրոցների ծախսերը հոգում էին եկեղեցին, հայ հասարակությունն ու մասնավոր մեծահարուստ բարեգործները, հայ բարեգործական ընկերությունները և այլն:

1881 թ. Թիֆլիսում բացվում է «Հայուհիների բարեգործական ընկերությունը», որի խնդիրն էր նպաստել հայ կանանց կրթության զարգացմանը: 1882 թ. Վրաստանի մայրաքաղաքում ստեղծվում է առաջին ժողովրդական մանկապարտեզը, իսկ Ս. Արղության–Երկայնաբազուկի նախաձեռնությամբ բացվում է քաղաքի առաջին մանկական գրադարանը:

Այդ ժամանակ և հետագա տարիներին Թիֆլիսում գործում էին ոչ քիչ թվով հայկական մասնավոր ուսումնական հաստատություններ: Դրանց թվում էին Տեր–Ակոպովի պանսիոնը, Մարիա Աթարբեկովայի մասնավոր իգական պանսիոնը, Բարխուդարովի ուսումնական հաստատությունն ու պանսիոնը, Լոռիս–Մելիքովի արհեստակցական ուսումնարանը և այլն:

Հարկ է նշել, որ Լիսիցյանների վարժարանում իրականացվում էր այդ ժամանակների համար հազվագյուտ երևույթ հանդիսացող տղաների և աղջիկների համատեղ ուսուցումը:

XIX դ. 80–ական թթ. սկզբից դպրոցների հանդեպ վարվող քաղաքականությունը կտրուկ փոխվեց: Կովկասյան վարչության ուսումնական մասի հոգաբարձու Կ. Յանովսկին խստացրեց ազգային դպրոցների և բարեգործական ընկերությունների նկատմամբ վերահսկողությունը, ինչն էլ ազգային դպրոցների փակման պատճառ դարձավ: Սակայն նույնիսկ այդպիսի պայմաններում կրթություն ստանալու ձգտումը ոչ միայն չէր նվազում, այլև ավելանում էր:

Կրթական գործի կազմակերպմանը մեծապես նպաստել են Պերճ Պռոշյանը, Գայանե Մատակյանը, Սոֆյա Բաբայանը, Պետրոս Շանշյանը, Խորեն Ստեփանեն և ուրիշներ: Նրանք ակտիվորեն զբաղվում էին ծխական և եկեղեցական դպրոցների հետագա զարգացման, իգական դպրոցների կազմակերպման և ժողովրդական ուսուցիչների շարքերի համալրման գործով: Ուսուցչական կադրերի պատրաստման խնդրի լուծմանն էին ուղղված ուսուցչական համագումարները:

Թիֆլիսը նաև հայ տպագրության խոշոր կենտրոն էր: 1823 թ. իր կողմից բացված դպրոցում Ներսես Աշտարակեցին հիմնադրեց առաջին տպարանը, որը գործեց մինչև 1860 թ. կեսերը: Հենց այդ տպարանում է առաջին անգամ տպագրվել Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը:

1860–1880–ական թվականներին Ա. Էնֆիաջյանցի տպարանում առաջին անգամ տպագրվել են հայ գրականության բազմաթիվ դասականների երկերը: Այնուհետև Թիֆլիսում իրար հետևից բացվում են արդիական սարքավորումներով օժտված մի շարք նոր տպարաններ: Ախալցխայում տպագրական լայն գործունեություն են ծավալում Մարտիրոսյանների և Ավետիսովների տպարանները: Տպարաններ են բացվում նաև Վրաստանի այլ քաղաքներում:

1880 թ. Թիֆլիսում հիմնադրվում է Հայկական հրատարակչական ընկերությունը, որը չափազանց մեծ դեր է խաղացել հայ գրողների ստեղծագործությունները, ինչպես նաև թարգմանական գրականություն հրատարակելու գործում: Մինչև 1900 թ., այսինքն՝ ցարական արգելքի պատճառով նրա փակվելը, այդ ընկերության կողմից հրատարակվել է 174 անուն գիրք, որից 108–ը՝ թարգմանական: Մեկ այլ

հայկական ընկերություն՝ Թիֆլիսի հայկական ազգագրական ընկերությունը, գնահատելի աշխատանք է կատարել հայագիտական և կովկասագիտական գրականություն հրատարակելու գործում:

Թիֆլիսում եղել են նաև հարուստ հայկական գրադարաններ: Իր ժամանակի համար գրականությամբ շատ հարուստ էին Ներսիսյան դպրոցի և Կովկասի հայկական բարեգործական ընկերության գրադարանները:

Վիրահայ համայնքի պատմությունն ամբողջական չի լինի առանց գիտական մտքի լուսաբանման: XIX դ. կեսերին ազգային ձեռագրերի հավաքման ու պահպանման խնդիրը ծառանում է նաև Թիֆլիսի հայ մտավորականների առջև: 1889 թ. Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերությունը որոշում է գրադարաններ բացել հայերեն ձեռագրերի, պատմական և հնախոսական փաստաթղթերի պահպանման համար: Նահանգապետի համապատասխան թույլտվությունը ստանալուց հետո ընկերությունը միջոցներ է հայթայթում Թիֆլիսում գրադարանի շենք գնելու և այնտեղ գրադարան–ընթերցարան հիմնելու համար: Շուտով Թիֆլիսում բացվում է նաև մանկական գրադարան:

1910 թ. Թիֆլիսում սկսում է գործել ազգագրական թանգարանը, որի հիմնադիր, հայտնի ազգագրագետ Երվանդ Լալայանի կողմից հավաքվում են մեծ քանակությամբ արժեքավոր նյութեր հայ նյութական և հոգևոր մշակույթի վերաբերյալ: Լալայանը Թիֆլիսում հրատարակում էր առաջին հայ մասնագիտական ամսագիրը՝ «Ազգագրական հանդես»–ը:

Զարգացում է ապրում նաև հայ պատմագիտական միտքը: Թիֆլիսում գործող հայ գիտնականներից առավել նշանավոր էին Գյուտ Աղանյանցը, Ալ. Երիցյանը, Լեոն, Խաչատուր Աբովյանը և ուրիշներ:

Թիֆլիսը նաև հայ մամուլի նշանավոր կենտրոն էր: Այնտեղ սկսում են լույս տեսնել մեծ թվով հայերեն թերթեր և ամսագրեր: Մինչև 1920 թվականը Թիֆլիսում հրատարակվել է ավելի քան 180 անուն պարբերական մամուլ:

Թիֆլիսի հետ է կապված նաև հայ նոր դասական գրականության զարգացումը: Այդ քաղաքում է ընթացել հայ գրականության այնպիսի ականավոր ներկայացուցիչների ստեղծագործական կյանքը, ինչպիսիք են Խաչատուր Աբովյանը, Ռաֆֆին, Նար–Դոսը, Մուրացանը, Հովհաննես Թումանյանը, Ղազարոս Աղայանը, Գաբրիել Սունդուկյանը, Ալ. Շիրվանզադեն և ուրիշներ:

Թիֆլիսում հայ գրականության զարգացմանը նպաստել է Հ. Սպենդիարյանի գլխավորած հայերեն գրքերի հրատարակության ընկերությունը, որը հայերենով կամ ռուսերեն թարգմանությամբ տպագրում էր հայ գրողների ստեղծագործությունները:

Թիֆլիսում են գործել հայ գրողների շփման աչքի ընկնող կենտրոնատեղիներ «Վերնատունը» և Հայ գրողների կովկասյան ընկերությունը: Հայ գրականության ներկայացուցիչներին նյութապես աջակցելու նպատակով Ա. Արասխանյանցը և Ա. Քալանթարը որոշում են ստեղծել հայ գրողների օգնության ընկերություն:

Թիֆլիսը նաև հայ արվեստի նշանավոր կենտրոն էր: XIX դարի արևելահայ գեղանկարչությունը սերտորեն կապվում է թիֆլիսաբնակ Գևորգ Բաշինջաղյանի (1857–1925) անվան հետ: Ավարտելով տեղի նկարչական ուսումնարանը, ապա և Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիան՝ նա վերադարձել էր Թիֆլիս և ձեռնամուխ եղել բուռն ստեղծագործական գործունեության:

XIX դարում Թիֆլիսում են գործել հայ գեղանկարչության անվանի դեմքեր, Նաղաշ Հովնաթանի արժանավոր ժառանգներ Մկրտում և Հակոբ Հովնաթանյանները:

Հնուց անտի Վրաստանում եղել են բազմաթիվ հայկական եկեղեցիներ: 1825 թ. Թիֆլիսում գործում էր 25 առաքելական եկեղեցի, իսկ քիչ ավելի ուշ՝ 27: Այդ քաղաքում ամենահինն է համարվում Սուրբ Գևորգ եկեղեցին: Վրաստանում հայկական եկեղեցիներ կային ոչ միայն մայրաքաղաքում, այլև մյուս քաղաքներում՝ Ախալցխայում, Ախալքալաքում, Բաթումում, Փոթիում, Սուխումում, Ցխինվալում, Քութայիսում, Գորիում, Սղնախում, Թելավում, Վելիսցիխեում, Ցինանդալիում, Գրեմիում, Ախալգորիում, Դուշեթում, Կոջորում, Շուլավերում, Բոլնիսում:

Թիֆլիսում բազմամարդ մի դաս էին հայ արհեստավորները: Եթե առևտուրն այդ քաղաքում բացառապես հայերի ձեռքում էր, ապա արհեստագործության մեջ տեղ էին գտնում նաև ուրիշ ազգություններ: Սակայն արհեստագործության բնագավառում զբաղվածների մեծ մասը դարձյալ հայերն էին: Հայ արհեստավորները Վրաստանում միավորված էին նշանավոր արհեստակցական կազմակերպությունների՝ համքարությունների մեջ: Վրաստանի արհեստավորների արտադրանքը մեծ պահանջարկ ուներ ինչպես ողջ Հարավային Կովկասում, այնպես էլ նրա սահմաններից դուրս՝ եվրոպական և ասիական շուկաներում:

Կասկածից վեր է, որ Թիֆլիսում և առհասարակ Վրաստանում հայոց դերակատարությունը երկրի տնտեսական կյանքում պայմանավորված էր հայերի ինչպես թվաքանակով, այնպես էլ սոցիալական դրությամբ: Հայ գործարար դասն իր ձեռնարկատիրական գործունեության ընթացքում ստացել է նաև իշխանությունների աջակցությունը: Այսպիսով՝ հայազգի բնակչությունը ըստ ամենայնի նպաստել է իր երկրորդ հայրենիքի վերածված երկրի բարգավաճմանը ինչպես նյութական–ֆինանսական ներդրումով, շինարարությանը, առանձնապես՝ քաղաքաշինությանը նպաստելու, այնպես էլ իրենց պաշտոնավարության ընթացքում տնտեսական ու մշակութային առաջընթացին սատարելու առումով:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՄՇԱԿՈՒՅԹ

XIX դ. առաջին կեսին վրացական մշակույթից աստիճանաբար սկսեցին դուրս մղվել անցյալում այնտեղ թափանցած արևելյան, մուսուլման մոտիվները: Այսուհետև նկատելի դարձավ ռուսական մշակույթի ազդեցությունը: Ռուսական կայսրությանը Վրաստանի միանալուց հետո վրացական մշակույթը մերձեցել է նաև արևմտաեվրոպական մշակութային աշխարհին:

Առհասարակ, XIX դարում վրացական մշակույթի բոլոր բնագավառներում ձեռք բերվեցին խոշոր նվաճումներ: Մշակութային կյանքը Վրաստանում ընդունել էր համազգային բնույթ: Մշակույթի բոլոր բնագավառներն առանց բացառության առաջընթաց էին ապրում վրացական ազգային դարավոր, հարուստ ավանդույթների հենքի վրա:

1. ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՄԱՄՈՒԼ

Վրացական ժողովրդական լուսավորությունը դարավոր պատմություն ունի: Մինչև Ռուսաստանի հետ միացումը Վրաստանում կրթությունը գլխավորապես հոգևորականության ձեռքին էր: Թիֆլիսում կային ընդամենը հինգ դպրոցներ, որտեղ սովորում էր մոտ 400 երեխա:

Վրաստանում իր դիրքերը նշանակալից չափով կայունացնելուց հետո ցարական կառավարությունը լուսավորության գործը ենթարկել է իր քաղաքական նպատակներին: Մասնավորապես դպրոցները կոչված էին պատրաստելու ցարական կառավարությանը նվիրված չինովնիկների՝ կառավարման կառույցներում աշխատելու, ինչպես նաև բանկային ծառայության համար:

Ռուսաստանին միանալուց հետո Վրաստանի տարբեր քաղաքներում բացվել են նոր դպրոցներ: Օրինակ՝ 1804 թվականից Թիֆլիսում սկսում է գործել ռուսական չորս դասարան ունեցող ուսումնարան: Այդ դպրոցում ընդունում էին վրացական բարձր խավի ներկայացուցիչների և ռուս չինովնիկների զավակներին: Կառավարությունն անհրաժեշտ էր համարում, որ տեղական աստիճանավորները, բացի ռուսերենից, տիրապետեն նաև վրացերենին: Ուստի սկզբնական շրջանում այդ դպրոցում դասավանդում էին նաև վրաց լեզու և գրականություն:

1830 թ. չորս դասարան ունեցող այդ ուսումնարանը վերածվեց գիմնազիայի: Նույն տարում Թիֆլիսում բացվեց իգական դպրոց: Այնուհետև իրար հետևից Թիֆլիսում, Գորիում, Թելավում, Սղնախում, Քութայիսում, Մեգրելիայի Սուջանա գյուղում բացվեցին գավառային ուսումնարաններ:

1803 թ. ռուսական կառավարությունը հրապարակեց հրամանագիր՝ թվով 12 վրաց ազնվականական զավակների Մոսկվա ուղարկելու և համալսարանում պետության հաշվին բժշկագիտության բաժնում սովորելու համար: 1805 թ. թույլատրվեց նաև ազնվականների զավակներին ուղարկել Ռուսաստան՝ կայսերական զինվորական կորպուսներում ծառայելու համար: 1829 թ. օգոստոսին հաստատվեց «Այսրկովկասյան ուսումնարանների վերաբերյալ կանոնակարգը», որը հնարավորություն ընձեռեց գավառային ուսումնարաններ բացելու Թելավում, Սղնախում, Գորիում և Քութայիսում:

1840 թ. Թիֆլիսի իգական դպրոցը վերափոխվեց Հարավային Կովկասի օրիորդաց ինստիտուտի: Մինչև 1848 թ. գործում էին նաև Թիֆլիսի Ազնվականական ուսումնարանը, Առևտրային գիմնազիան:

Կրթության հարցերի կարգավորմանն էապես նպաստեց Կովկասի ուսումնական մասի Հոգաբարձության ստեղծումը, ինչպես նաև 1849 թ. ընդունված Կանոնակարգը կովկասյան ուսումնական հաստատությունների մասին, որը կանոնակարգում էր կրթարանների գործունեությունը: Դրանք բաժանվում էին ծխական եկեղեցական և մասնավոր դպրոցների ու պանսիոնների:

1850 թ. Թիֆլիսում բացվում է երկրորդ գիմնազիան: Գիմնազիա բացվեց նաև Քութայիսում: Ընդհանուր առմամբ՝ 1855 թ. Վրաստանում եղել է 150 դպրոց: 1850 թ. Վրաստանի ուսումնական հաստատություններում աշակերտների թիվը երեք հազար էր, որը կազմում էր երկրի ողջ բնակչության 0,3 տոկոսը:

Քրիստոնեական եկեղեցու սպասավորներ պատրաստելու համար ցարական կառավարությունը Վրաստանում հիմնեց մի շարք հոգևոր ուսումնարաններ: 1817 թ. Թիֆլիսում բացվեց ուղղափառ հոգևոր սեմինարիա, իսկ 1822 թ.՝ հայկական հոգևոր սեմինարիա (Ներսիսյան դպրոցը): Ուսումնական հաստատություններում ուսուցումը կատարվում էր ռուսերենով:

1867 թ. ընդունվեցին դպրոցական նոր կանոններ: Աստիճանաբար սկսեց աճել պետական դպրոցների թիվը: Պետական դպրոցներին զուգահեռ սկսեց ավելանալ նաև ազգային դպրոցների քանակը: Ռուսերենը հաստատուն կերպով դարձավ ուսուցման պարտադիր լեզու:

1880–ական թթ. սկզբներից ազգային դպրոցների նկատմամբ իշխանությունների քաղաքականությունը կտրուկ փոխվեց: Կովկասի փոխարքայությանը փոխարինած Կովկասյան վարչությունը՝ հանձին ուսումնական մասի հոգաբարձու Կ. Յանովսկու, տեղական բնակչության ռուսաֆիկացման նպատակով 1881 թ. ուժեղացրեց վերահսկողությունը ազգային դպրոցների և բարեգործական ընկերությունների հանդեպ՝ հսկողությունը տարածելով նաև մասնավոր ուսումնական հաստատությունների վրա և, ըստ էության, բացառելով տարրականից բարձր ազգային դպրոցների գոյության հնարավորությունը:

Հետաքրքիր է, որ նույնիսկ այս պայմաններում կրթություն ստանալու ձգտումը չէր նվազում: 1882 թ. տվյալների համաձայն՝ սովորողների թիվն ըստ ազգություն-

ների ուներ հետևյալ պատկերը. ռուսներ՝ 46 տոկոս, հայեր՝ 25 տոկոս, վրացիներ՝ 17 տոկոս: Նրանց մեջ զգալի էր աղջիկների թիվը:

Վրաց ազգային դպրոցի կայացման գործում մեծ է անվանի մանկավարժ, հրապարակախոս և մանկագիր Իակոբ Գոգեբաշվիլու (1840–1912), Իոսիֆ Օցխելու, Թեդո Ժորդանիայի, Շիո Չիտաձեի, Թեդո Ռազիկաշվիլու դերակատարությունը:

Կրթության ազգային համակարգի ձևավորման գործում չափազանց կարևոր նշանակություն է ունեցել 1879 թ. հիմնված «Վրացիների շրջանում գրագիտության տարածման ընկերությունը», որը գյուղերում և քաղաքներում բացել է ժողովրդական դպրոցներ, նպաստել մեծահասակ բնակչության շրջանում գրագիտության տարածմանը, դասագրքերի և մանկավարժական գրականության ստեղծմանը: Ընկերությունն ավելացրել է սեմինարիաների և կանանց ուսումնական հաստատությունների թիվը:

XIX դ. 60–ական թթ. վրացական առաջատար գործիչներ Ի. Ճավճավաձեն, Ա. Ծերեթելին, Ն. Նիկոլաձեն, Ի. Գոգեբաշվիլին և ուրիշներ պայքարել են հանուն դպրոցի և կրթության ժողովրդավարականացման:

1914–1915 ուսումնական տարում Վրաստանում գործել են 1677 տարրական դպրոցներ՝ 187 հազար 700 աշակերտով, և 48 միջնակարգ ուսումնական հաստատություններ:

XX դ. սկզբներին բացվել են նաև առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունները, 1909 թ.՝ Թիֆլիսի իգական բարձրագույն դասընթացները, 1917 թ.՝ Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտը, 1918 թ.՝ Թիֆլիսի համալսարանը:

Վրացերեն առաջին պարբերականը 1819 թվականից հրապարակվող «Սաքարթվելոս գազեթի» շաբաթաթերթն էր (հետագայում՝ «Քարթուլի գազեթի» («Վրացական լրագիր»)), որը լույս է տեսել Կովկասի փոխարքա Երմոլովի անմիջական հովանավորության ներքո: Մամուլի պատմաբան Վատեյշվիլու համոզմամբ՝ նրա նախատիպ է ծառայել «Արևելյան ծանուցմունք» հայերեն պարբերականը: Նա միաժամանակ նշում է, որ վրաց թերթի համար ֆինանսապես ծանր օրերին Ներսես Աշտարակեցին նրան շուրջ հարյուր բաժանորդ էր ապահովել: Այդ թերթը դադարեցնում է իր գործունեությունը 1821 թվականին:

1828 թ. Ի. Պասկևիչը Թիֆլիսում նախաձեռնում է ցարական իշխանության առաջին երկշաբաթյա պաշտոնաթերթի՝ «Тифлисские ведомости» պարբերականի հրատարակությունը: Պասկևիչը մտադիր է եղել հետագայում հրատարակել նրա վրացերեն, հայերեն և պարսկերեն հավելվածները: Սակայն իրականում լույս են տեսնում պարբերականի վրացերեն և պարսկերեն հավելվածները: Վրացերեն հավելվածը լույս էր տեսնում «Թբիլիսիս ուծդերանի» անվամբ, որը շարունակում է տպագրվել մինչև 1832 թվականը:

Հետագայում՝ 1830 թ. «Նահանգային վեդոմոստների հրատարակության մասին» Կանոնակարգի հաստատվելուց հետո, Թիֆլիսում սկսում է հրատարակվել ցարական իշխանության նոր պաշտոնաթերթը՝ «Кавказские областные ведомости» անունով, որը 1838 թ. վերանվանվում է «Кавказский вестник»–ի: Կովկասի նոր

փոխարքա Մ. Վորոնցովը 1846 թ. նախաձեռնում է «Кавказский вестник» շաբաթաթերթի հրատարակությունը: Վերոնշյալ պարբերականները հրատարակվում էին նաև վրացերենով (իսկ «Кавказ»–ը՝ նաև հայերենով), սակայն դրանք առավելապես ռուսերենի կրկնօրինակներ էին:

Վրացերեն լիովին ինքնուրույն առաջին պարբերական կարելի է համարել լիբերալ ազնվականության «Ցիսկարի» («Արշալույս») գրական ամսագիրը, որի հիմնադիրն ու խմբագիրն է եղել գրող, դրամատուրգ և հասարակական գործիչ Գեորգի Էրիսթավին: Սակայն այդ ամսագիրն ունեցել է կարճ կյանք, այն լույս է տեսել միայն 1852–1853 թթ.:

XIX դ. երկրորդ կեսին վրացական մշակույթի վերելքի լավագույն ցուցանիշներից մեկն էր վրացական մամուլի արագ զարգացումը: 1863 թ. Թիֆլիսում Իլյա Ճավճավաձեի կողմից լույս է տեսնում մտավորականության նոր սերնդի մարտական հակումներն արտահայտող «Սաքարթվելոս մոամբե» («Վրաստանի ավետաբեր») ամսագիրը, որը թերքդալեուլների շարժման առաջին պաշտոնաթերթն էր: Երբ չափազանց ծանր գրաքննության պայմաններում այդ ամսագիրը մեկ տարուց հետո փակվեց, թերքդալեուլները սկսեցին ուղիներ որոնել նոր պարբերական հրատարակելու համար: Ի վերջո 1866 թ. նրանց հաջողվում է հիմնադրել «Դրոեբա» թերթը, որն իր ուրույն տեղն ունի վրաց մամուլի պատմության մեջ: Հրատարակության ողջ ժամանակահատվածում թերթն իր հիմնական նպատակն էր համարում ազգային վերածննդի խնդիրների վերհանումը: Այդ պարբերականի առաջին խմբագիրն էր թերքդալեուլների շարժման ականավոր դեմքերից մեկը՝ Գեորգի Ծերեթելին:

1885 թ. ինքնակալությունը փակեց «Դրոեբան» իր հակակառավարական ուղղվածության համար: Ուստի վրացի առաջադեմ գործիչները համախմբվեցին դեռևս 1877 թվականից Իլյա Ճավճավաձեի կողմից հրատարակվող «Իվերիա» թերթի շուրջը: Տարիներ շարունակ այդ թերթը վրացական միակ ամենօրյա լրագիրն էր: Ավելի քան քառորդ դար այն կատարում էր Վրաստանի հասարակական–քաղաքական կյանքը համակարգողի դերը՝ ուղղորդելով ազգային ինքնության պահպանմանն ուղղված պայքարը:

1893 թ. վրացական մամուլը համալրվեց «Քվալի» լրագրով, իսկ 1894 թ.՝ «Մոամբե» ամսագրով: Պաշտոնական տվյալների համաձայն՝ XIX դ. վերջին (1892) Թիֆլիսում լույս էր տեսնում 12 անուն պարբերական, որոնցից 4–ը՝ ռուսերեն («Кавказ», «Новое обозрение», «Анонс», «Тифлисский листок»), 2–ը՝ վրացերեն («Իվերիա», «Նորաթի») և 5–ը՝ հայերեն («Նոր–Դար», «Արձագանք», «Մուրճ», «Տարազ», «Աղբյուր»):

Վրաց մամուլի զարգացմանը զուգընթաց ձևավորվում և կայանում էր վրաց հրապարակախոսությունը, որի ակունքներում էին անվանի մտավորականներ՝ հրապարակախոսներ, հասարակական գործիչներ և գրողներ Իլյա Ճավճավաձեն, Նիկո Նիկոլաձեն, Գեորգի Ծերեթելին, Սերգեյ Մեսխին: Նրանց քարոզած ազգային

հրապարակախոսների նոր սերունդը, որոնց թվում էին Արչիլ Ջորջաձեն, Նոյե Ժորդանիան, Ցիտա Աբաշիձեն:

Զարգացման որոշակի քայլեր էր կատարում նաև վրաց լեզվով գրատպությունը: Մինչև 1860–ական թթ. վրացերեն հրատարակվել են 160–180 գրքեր: Այդ նույն ժամանակաշրջանի ընթացքում ամբողջ Վրաստանում գոյություն ուներ ընդամենը երեք վրացական տպարան, որի հետևանքով վրացի գրողների ստեղծագործությունները չէին կարող ամբողջապես հասու դառնալ վրացական լայն հասարակության համար:

2. ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ, ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԹԱՏՐՈՆ, ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

XIX դ. առաջին կեսի վրացական կերպարվեստի հիմնական բնագավառն այսպես կոչված «Թբիլիսյան դպրոցի» դիմանկարն էր, որը ծաղկում է ապրել 1830–1860–ական թվականներին:

XIX դարի երկրորդ կեսին Վրաստանում ստեղծվեց խորապես ազգային կերպարվեստ: Հանդես եկան ակադեմիական կրթությամբ մի շարք արվեստագետներ, որոնք ոչ միայն ստեղծեցին նոր արժեքներ, այլև ընդարձակեցին վրացական արվեստի թեմատիկան: Առանձնակի հաջողությամբ զարգանում էր գեղանկարչությունը: 1880–ական թթ. սկզբին ստեղծագործական ասպարեզում հանդես եկան մի շարք տաղանդավոր նկարիչներ: Նոր վրացական ռեալիստական գեղանկարչության հիմնադիրը և խոշոր ներկայացուցիչը Գիգո Գաբաշվիլին էր (1862–1936): Նա ստեղծել է ավելի քան երկու հազար կտավ, որոնց թվում՝ դիմանկարներ, բնանկարներ, բնապատկերներ, թբիլիսյան և խևսուրական տիպի պատկերներ: XIX դարի 90–ական թվականներից վրաց գեղանկարչությունն ապրում է վերընթաց զարգացման նոր շրջան, որն անմիջականորեն կապված է նկարիչներ Ալեքսանդր Մրևլիշվիլու, Մոսե Թոիձեի, Նիկո Փիրոսմանիի անունների հետ: Մեծ տարածում է ստանում դիմանկարչությունը, որի անզուգական վարպետ էր Գրիգոլ Մայսուրաձեն (1810–1885): Հետագայում այս ասպարեզում աչքի ընկան նաև Ռոմանոզ Գվելեսիանին (1859–1884), Ալեքսանդր Բերիձեն (1858–1917), Գ. Թաթիշվիլին (1838–1911):

Իր ստեղծագործական գործունեությունը Թիֆլիսում է ծավալել հայ անվանի նկարիչ Հակոբ Հովնաթանյանը, որին ժամանակակիցներն անվանել են «վրացական Ռաֆայել» (նա նկարիչների ավանդական հայտնի դինաստիայի ներկայացուցիչն էր):

1890–ական թվականների վերջին սկսում է գործել հայտնի վրացի քանդակագործ Իակոբ Նիկոլաձեն, ով աշխատել էր ֆրանսիացի անվանի նկարիչ ու քանդակագործ Օգյուստ Ռոդենի արվեստանոցում: Նրա ստեղծագործությամբ XIX–XX դդ. սահմանագծին դրվել են վրացական ռեալիստական քանդակագործության հիմքերը: Նշված շրջանում վրաց արվեստագետները ձգտել են արվեստի նոր հոսանքներն օրգանապես միահյուսել ազգային ավանդույթների հետ: Նիկոլաձեի

առավել հայտնի ստեղծագործություններից է «Սգացող Վրաստանը» արձանը, որը կանգնեցված է Իլյա Ճավճավաձեի գերեզմանին:

XIX դարում նշանակալից զարգացում ապրեց նաև վրաց ճարտարապետությունը: 1795 թ. Աղա Մուհամմեդ–խանի կողմից Վրաստանի մայրաքաղաքի հիմնովին ավերումը, երբ ոչնչացվեցին մեծ թվով հին ճարտարապետական հուշարձաններ, դժվարանում էր պարզել ուշ միջնադարյան քաղաքային ճարտարապետության լիակատար պատկերը: Սակայն Թիֆլիսում պահպանված առանձին շինությունները, ինչպես նաև Վրաստանի նահանգային քաղաքներ Թելավի, Սղնախի, Դուշեթի, Գորիի, Սաչխերի, Քութայիսի շենքերը արժեքավոր նյութ են մատակարարում նշված շրջանի քաղաքային ճարտարապետության վերաբերյալ գաղափար կազմելու համար:

Վրաստանը Ռուսաստանին միացվելուց հետո վրաց ճարտարապետությունն աստիճանաբար ձերբազատվեց ուշ միջնադարի մուսուլման ազդեցությունից և ձեռք բերեց եվրոպական կլասիցիզմին բնորոշ երանգներ: XIX դարի առաջին կեսի Վրաստանի պաշտոնական կառույցները, որպես կանոն, ռուսական կլասիցիզմի ոճի են: Սակայն վրացական ազգային ճարտարապետության ավանդույթները կայուն եղան: Վրաստանում կլասիցիզմի ոճը չէր կրում մեխանիկական ընդօրինակման բնույթ, այն վերաիմաստավորված էր և հարմարեցված տեղական պայմաններին: Բնակելի տներն իրենց ճարտարապետությամբ ազգային ավանդույթները զուգակցում էին ռուսական կլասիցիզմի հետ: Թիֆլիսում կառուցված շենքերի զգալի մասն այդ ժամանակաշրջանում Եվրոպայում և Ռուսաստանում տարածված ոճերի էին՝ ամպիր, նեոկլասիցիզմ, մոդեռն: Մինչդեռ դարի երկրորդ կեսի ճարտարապետության մեջ իշխել է համաեվրոպական էկլեկտիզմը: Միայն XX դ. սկզբին փորձեր են արվել՝ վերածնելու հին վրացական ճարտարապետական ձևերը:

Դարերի ընթացքում Վրաստանի ճարտարապետության բնագավառում խոշոր ավանդ են ունեցել նաև հայերը: Նրանք Վրաստանի տարբեր վայրերում կառուցել են աշխարհիկ և պաշտամունքային մեծ թվով շենքեր, որոնց թվում են Թիֆլիսի, Սղնախի, Վելիսցիխեի, Թելավի, Ախալցխայի, Աբասթումանի, Մուխրանի և բազմաթիվ այլ վայրերի աշխարհիկ շինությունները, եկեղեցիները և այլն:

Թիֆլիսի կենտրոնում էին տեղակայված հայ մեծահարուստների շքեղ առանձնատները, առևտրական տներն ու գրասենյակները, հայկական թատրոնների շենքերը՝ Արտիստական ընկերության (ներկայումս՝ Ռուսթավելու անվան դրամատիկական թատրոն), Զուբալովի գեղեցկագույն շենքը (այժմ՝ Մարջանիշվիլու անվան թատրոն):

Հայ գործարար Արամյանցի միջոցներով XX դ. սկզբին ճարտարապետ Գ. Տեր–Միքայելյանի նախագծով կառուցվել է «Մաժեստիկ» (ներկայումս՝ «Թբիլիսի») շքեղ հյուրանոցի շենքը:

XIX դ. 30–ական թթ. վրաց երիտասարդությունը ձեռնամուխ է լինում ազգային թատրոնի ստեղծմանը: Շարժման ակունքներում կանգնած էր դրամատուրգ

Գ. Էրիսթավին: Հենց նրա ջանքերով 1850 թ. սկսում է գործել վրացական թատրոնը: Մինչ այդ՝ 1846 թ., Թիֆլիսում հիմնվել էր ռուսական թատրոնը:

1850 թ. Թիֆլիսի գիմնազիայում բեմադրվում է Գ. Էրիսթավիի «Բաժանում» պիեսը: 1856 թ. ֆինանսական դժվարությունների պատճառով թատրոնը դադարում է գործելուց: Մինչ 1870–ական թթ. վերջերը վրացական թատրոնը մշտական դերասանական կազմ չուներ և պահպանվում էր լոկ սիրողական խմբերի ուժերով:

Վրացական բեմադրական արվեստի նոր, արդյունավետ շրջանը սկսվում է 1879 թվականից, երբ Թիֆլիսում մի խումբ գործիչներ Ի. Ճավճավաձեի և Ա. Ծերեթելիի գլխավորությամբ կարողացան կրկին այն վերականգնել արհեստավարժ թատերախմբով: Մեկ տարի անց վրաց դրամատիկական թատրոն է բացվում նաև Քութայիսում:

Իրենց դերասանական և ռեժիսորական վարպետությամբ տարբեր տարիների վրաց թատրոնում փայլել են Վասո Աբաշիձեն, Լադո Մեսխիշվիլին, Նատո Գաբունիան, Մակո Սափարովա–Աբաշիձեն, Կոտե Ղիփիանին և ուրիշներ: Թիֆլիսի թատրոնի շինության նպաստավորներից էր հայ գործարար Թամամշյանը:

Իր երկարատև պատմության ընթացքում վրաց ժողովուրդը ստեղծել է նաև հարուստ և բազմազան երաժշտություն: Արդեն XIX դ. 50–60–ական թթ. վրացական երաժշտական կյանքը նշանակալիորեն աշխուժացել էր: Թիֆլիս էր հրավիրվել իտալական օպերային դերասանների մի խումբ, և բացվել էր օպերային թատրոն, որը նշանակալի նպաստ է բերել Վրաստանի երաժշտական կուլտուրայի զարգացմանը:

1860 թ. Թիֆլիսում, հետագայում նաև Քութայիսում ստեղծվում է եկեղեցական երգեցողության վերածնության կոմիտեն, որը պետք է զբաղվեր շարականների վերամշակմամբ: Այդ գործում մեծ է Փիլիմոն Կորիձեի (1829–1911) դերը: Նա հավաքել և հրատարակել է շարականների չորս ժողովածու:

Վրաց նոր երաժշտության նշանավոր ներկայացուցիչներից էին երգիչ Խարլամպի Սավանելին (1845–1890) և դաշնակահար ու երգահան Ալոիզ Միզանդարին (1838–1912): Վրաց նոր երաժշտության պրոպագանդման գործում մեծ է նաև Լադո Աղնիաշվիլու կողմից հիմնադրված վրաց ազգային երգչախմբի դերը:

1880–1890–ական թթ. վրացական երաժշտական գործիչների շրջանակը նշանակալիորեն ընդլայնվել էր: Հանդես եկան բազմաթիվ հայտնի երգահաններ և կատարողներ: Ստեղծվում են մեծ թվով նոր երաժշտական ստեղծագործություններ՝ ռոմանսներ, երգչախմբային խմբերգեր, փորձեր են կատարվում՝ ստեղծելու վրացական օպերաներ: Այդ աշխատանքների ակունքներում կանգնած էր Մելիտոն Բալանչիվաձեն (1862–1937): 1907 թ. Պետերբուրգում դրվել էին հատվածներ նրա «Դարեջան Ցբիերի» օպերայից: Դա վրացական օպերայի ստեղծման առաջին փորձն էր: Բալանչիվաձեի սկսած գործը շարունակեցին հայտնի երգահաններ Զախարի Պալիաշվիլին և Դիմիտրի Արաքիշվիլին:

Վրաց աշուղական ժառանգության վերածնության ու հրատարակության գործում անուրանալի վաստակ ունի Սկանդար–Նովան:

3. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

XIX դարում վրացական մշակույթի վերելքն առանձնակի ցայտունությամբ արտահայտվեց գեղարվեստական գրականության մեջ: Վրաստանը Ռուսաստանի հետ միավորվելուց հետո վրաց հոգևոր կյանքը սկսում է աստիճանաբար ներգրավվել զարգացման ոլորտ, լույս են տեսնում հանդեսներ և թերթեր, տեղի է ունենում հասարակական մտքի զարթոնք:

Վրաց գրականության նոր փուլը նշանավորվում է ռոմանտիզմի երևան գալով: Այդ հոսանքը վրաց գրականության մեջ իշխել է ողջ 1830–1840–ական թթ., որը շարունակել է իր գոյությունը նաև դարի երկրորդ կեսին՝ դառնալով տիրապետող ուղղություն վրաց գրականության մեջ: Գրական այդ ուղղության նախահայրը Ալեքսանդր Ճավճավաձեն էր (1786–1846): Քաջատեղյակ լինելով համաշխարհային գրականությանը, համաեվրոպական և ռուսական ռոմանտիզմին՝ նա միջնադարի ազգային պոեզիայի պենազարդությանը «միահյուսեց եվրոպական ռոմանտիզմի բույրերը և, ինչպես ռոմանտիզմի նոր տարբերակ կամ նոր տեսակ» (Վ. Կոտետիշվիլի), արմատավորեց հայրենի գրականության մեջ:

Վրաց գրականության մեջ ռոմանտիզմի գրական ուղղության երկրորդ խոշոր ներկայացուցիչը Գրիգոլ Օրբելիանին է (1804–1883), որի ստեղծագործություններում կարևոր տեղ են գրավում ազգային մոտիվները: Ռոմանտիկական շրջանի այդ վառ անհատականությունը բազմերանգ դարձրեց մի շարք մոտիվներ՝ ողբը, հոռետեսությունը եղերերգությունը, զգայական սերը, կյանքի ունայնությունն ու անցողիկությունը, անցյալի գովքը, ստեղծեց սպիտակ ոտանավորի հիանալի նմուշ, նոր բովանդակություն հաղորդեց բանաստեղծության որոշ տեսակների (ձոն, էպիտաֆիա և եղերերգություն):

Վրացական ռոմանտիզմն իր բարձրակետին է հասցրել Նիկոլոզ Բարաթաշվիլին (1817–1845): Նա անգնահատելի ծառայություն մատուցեց իր ժողովրդին, բարձրացրեց ազգային ինքնագիտակցությունը, լայնացրեց գրականության թեմատիկան, գեղարվեստական մտածողության ու բանաստեղծական հնարքների շրջանակները: Նրա ստեղծագործության պսակը «Մերանին» է՝ խոհափիլիսոփայական մտքերով տարողունակ, գեղարվեստական խոսքով հարուստ, քերթողական արվեստի արժանիքներով ընդգրկուն խորհրդանշական մի երկ, որտեղ շեշտված է մի կողմից՝ անհատի գաղափարների և իրականության՝ ողբերգության հասնող հակասությունը, մյուս կողմից՝ անհատի նպատակասլաց պայքարն ընդդեմ անարդար հասարակարգի և ուխտադրուժ ճակատագրի:

1840–1850–ական թթ. երկրի տնտեսական և հասարակական–քաղաքական կյանքում տեղի ունեցող փոփոխությունները (նահապետական կարգերի քայքայում, կապիտալի նախնական կուտակում, ասիաբարո վաճառականների կենսակերպ գյուղում և քաղաքում, սերունդների գաղափարական բախում) արտացոլում գտան Գեորգի Էրիսթավիի (1813–1864) և Զուրաբ Անտոնովի (1820–1854) կենցա-

ղագրական կատակերգություններում ու վոդևիլներում, Դանիել Ճոնքաձեի (1830–1860) և Լավրենտի Արդազիանիի (1814–1870) վեպերում ու վիպակներում:

1860–ական թթ. գրական ասպարեզ են մտնում Իլյա Ճավճավաձեն, Ակակի Ծերեթելին, Գեորգի Ծերեթելին, որոնք վրաց հասարակական մտքի պատմության մեջ հայտնի են «թերգդալեուլիներ» (Թերեք գետից ջուր խմածներ) անվանումով և բարձրագույն կրթություն էին ստացել Ռուսաստանում, Մերձբալթիկայում, Ուկրաինայում, եվրոպական այլ երկրներում, իսկ վերադառնալով հայրենիք՝ դրոշ էին պարզել հանուն ազգային անկախության ու բարեկեցիկ կյանքի:

Թերգդալեուլները հրապարակում էին իրենց հավատամքն արտացոլող գեղարվեստական երկեր, տեսական հոդվածներ, որտեղ արծարծվում էին ռոմանտիկական և ռեալիստական ուղղությունների, ինչ և ինչպես թարգմանելու, գրական լեզվի, կյանքի ու գրականության հարաբերակցության խնդիրները: Նրանք այդ հարցերին անդրադառնում էին՝ հիմք ունենալով Չեռնիշևսկու, Դոբրոլյուբովի, Պիսարևի, Գերցենի գեղագիտական հայացքները:

Թերգդալեուլիների ջանքերով 1860–ական թթ. ռեալիստական գեղագիտության, գրականագիտության և քննադատության սկզբունքներն ամուր հաստատվում են վրաց գրականության մեջ:

XIX դարի վրաց գրականության ամենամեծ բարենորոգիչը Իլյա Ճավճավաձեն էր (1837–1907), որի գեղարվեստական երկերը, տեսական–քննադատական հոդվածները, թատերգությունը, հրապարակախոսությունը ուղենիշ դարձան վրաց գրականության և ազգային–ազատագրական պայքարի ճանապարհին: Նա սոցիալական հրատապ հարցերին զուգընթաց («Մի քանի էպիզոդ») ուշադրության կենտրոնում էր պահում նաև հայրենիքի և անհատի ազատագրության խնդիրը («Մուրացկանի պատմածը», «Ճամփորդի գրառումները», «Ղաչաղ Կակոն»): Վրաց գրականության որակական նոր փուլ ազդարարեցին Ճավճավաձեի «Տեսիլքը» և «Ճգնավորը» պոեմները:

Վրաց գրականության ականավոր ներկայացուցիչներից էր Ակակի Ծերեթելին (1840–1915), որն առաջինը հատուկ ուշադրություն դարձրեց բանահյուսությանը՝ որպես գեղարվեստական գրականության հիմնական աղբյուրներից մեկի թե՛ ընձեռած գեղարվեստական միջոցների առումով, թե՛ ժողովրդական լեզվի հարստությամբ ու գունագեղությամբ: Առաջին իսկ քերթվածքներում ու քննադատական ելույթներում դրսևորվեց Ծերեթելիի հավատամքը՝ արվեստը պետք է ծառայի ժողովրդին. («Զոնգուր», «Բանաստեղծի ծրագիրը», «Խորհուրդ», ծրագրային բազում ոտանավորներ): Նրա հերոսները պատմության մեջ հայտնի հզոր, անձնուրաց անհատներ էին, որոնք հայրենիքի համար ճակատագրական պահերին ասպարեզ են մտնում և փրկում անխուսափելի կործանումից. այդպիսիք են Բագրատ V–ը, Թոռնիկե Էրիսթավին, Նաթելան՝ համանուն պոեմներից: Երկրի միավորման խնդիրն է արծարծվում «Պատարա Կախի» պոեմում և «Բաշի Աչուկ» վիպակում: Իսկ «Իմ կյանքը» երկում նկարագրված են իր մանկությունն ու պատանեկությունը, ուսումնառությունը ծննդավայրում և Ռուսաստանում, ավատատերերի ու գյուղա-

ցիների կենցաղը, սովորույթներն ու բարքերը: Հեղինակի վկայությամբ՝ երկը հիսուն տարվա վրաց իրականությունն արտացոլող անխարդախ հայելի է:

Ա. Ծերեթելիի գրական ժառանգության մեջ զգալի տեղ է գրավում սիրո թեման. բազմադարյա վրաց քնարերգության մեջ առաջին անգամ նրա պոեզիայում արտահայտվեցին սիրո թեմայի հոգեբանական ելևէջներ ու անհատական խոր ապրումների նրբերանգներ:

Արձակագիր Գեորգի Ծերեթելին (1842–1900) քննադատական ռեալիզմի դիրքերից պատկերում է ճորտատիրական ռեֆորմի անցկացման խաբուսիկ էությունը, սոցիալական շերտավորումը, առևտրական ու արդյունաբերական կապիտալի մուտքը տնտեսական կյանք, ազնվականական դասի սնանկացումն ու բարոյական անկումը, բուրժուազիայի բարքերն ու շահատակությունները («Մեր կյանքի ծաղիկը», «Գորշ գայլը», «Հորաքույր Ասմաթը», «Գուլքան», «Առաջին քայլը»):

Այնուհետև հանդես են գալիս նարոդնիկության գաղափարակիր գրողներ Ն. Լոմոուրին, Ե. Գաբաշվիլին, Ս. Մգալոբլիշվիլին, որոնք մեծ տեղ էին հատկացնում բարձարգույն կրթությամբ երիտասարդության գործունեությանը. նրանք մեկնում են գյուղ և գյուղացուն ազատում ցեցերի ու չինովնիկների խարդավանքներից, լուսավորություն տարածում, գյուղատնտեսություն զարգացնում, մարդկանց օրենքներ ու բժշկություն ուսուցանում: Միաժամանակ քարոզում են չընդվզել, չդիմադրել բռնությանը, համբերել և գութ ու խղճմտանք արթնացնել տերերի հոգում:

XIX դարի 80–ական թթ. վրաց գեղարվեստական կյանքի ամենանշանակալից էջերը գրեցին Ալեքսանդր Ղազբեգին և Վաժա Փշավելան: Ա. Ղազբեգին (1848–1893) անդրադառնում է մարդկային ողբերգության սոցիալական ակունքների, ժողովրդի տառապանքի, լեռնցի երիտասարդ մարդկանց ճակատագրերի՝ հագեցած սիրո, միասնության, բարեկամության ու ասպետության մոտիվներով, հոգեկերտվածքի ու զգացմունքների բացահայտմանը: Նրա երկերում գերիշխում է ողբերգականը. դրական հեռոսները պարտվում են, բայց դա չարի հաղթանակ չէ, պարզապես պետք է մարտնչել մինչև վերջ («Հայրասպանը», «Էլգուջա», «Էլիոս», «Դաստիարակը»): Նա գրականությունը դիտում էր որպես ազգը միավորող կարևորագույն գործոն: Ղազբեգին նաև իդեալականացրել է թեմական–ազգատոհմային հասարակության արժանիքները («Խևիսբերի Գոչա»):

Ազգային խոշորագույն բանաստեղծ Վաժա Փշավելան (1861–1915) վրաց էպիկական պոեզիայի չգերազանցված վարպետն է, բայց նրա տաղանդը փայլատակեց նաև քնարերգության, թատերգության և արձակի բնագավառներում: Էպիկական պոեմներում նա արծարծել է ազատատենչ անհատի և հասարակության բախման փիլիսոփայական ու բարոյական խնդիրները («Ալուդա Քեթելաուրի», «Հյուրը և տանտերը», «Օձակերը»), իսկ արձակում նկարագրել բյուրոկրատ ծառայողների, վաշխառուների անիրավությունները («Դարեջանը», «Փորը», «Ուժասպառ էշը», «Պապի ընտանիքի ողբը»): Հայրենասիրական մոտիվներն են հնչում նրա «Բախտրիոնի», «Գոգոթուր և Ափշինա» պոեմներում ու բազմաթիվ բանաստեղծություններում: 1880–ական թթ., երբ արգելվում էր խոսել ազգային հարցերի մասին, բա-

նաստեղծը կոչ էր անում պատերից իջեցնել սրերը, հեսանել ու գործի դնել («Ձայն գերեզմանից»):

Վ. Փշավելան բնությունը համարում է մարդկային հոգու գաղտնիքների շտեմարան և կենդանական ու բուսական աշխարհի փոխաբերական պատկերներով արտահայտում տիեզերքի խորհուրդները, նաև ժողովրդի անցյալի ու ներկայի ցավոտ էջերը («Եղնիկի ձագի պատմածը», «Մանուշակը», «Լացող ժայռը», «Բարձր լեռներ»): Սիրային թեմային անդրադառնալիս նա հավատարիմ է ժողովրդական բանահյուսության զգայական ոգուն:

Հաջորդ տասնամյակում գրական ասպարեզ իջած Է. Նինոշվիլին («Ապստամբություն Գուրիայում»), Վ. Բառնովը («Իսանիի արշալույսը»), Ճ. Արագվիսպիրելին (նորավեպերի շարք) առաջին պլան մղեցին հասարակության մեջ անհատի դերի ու կոչման խնդիրը, փորձ արեցին երկիրը փրկելու նոր ուղիներ նախանշել:

XX դ. առաջին տասնամյակում գրողների մի խումբ արտացոլում էր հեղափոխականորեն մտադրված քաղաքային աշխատավորների ու գյուղացիների նկրտումները, աստիճանաբար սրվող հակասությունների դրդապատճառները: Դ. Կլդիաշվիլին, Ճ. Արագվիսպիրելին, Ճ. Լոմթաթիձեն զգալի դեր են խաղացել գրականության դեմոկրատացման, շարքային մարդու հոգեբանության պատկերման գործում: Խոսքի նուրբ վարպետ Դ. Կլդիաշվիլին կատարելության հասցրեց փոքր ձևի արձակը՝ պատմվածքը և նորավեպը: Ոմանք էլ (Ի. Էվդոշվիլի, Ս. Շամշիաշվիլի, Ա. Աբաշելի) իրենց ստեղծագործական կարողությունները նվիրաբերում են հեղափոխական պայքարի արտացոլմանը, գրում են մարտաշունչ երգեր, բայց ռեակցիայի տարիներին արտահայտում են անկումային տրամադրություններ. խոսում են խորտակված պատրանքների մասին: Նրանց քնարական հերոսը վշտահար է, հուսահատ, որին հալածում է «սև տեսիլքը»:

Նույն ժամանակ ի հայտ եկան սիմվոլիզմի, նեոռոմանտիզմի, ֆուտուրիզմի տեղայնացված նմանակումներ:

Գրիգոլ Ռոբաքիձեն (1880–1962), Վալերիան Գափրինդաշվիլին (1889–1941), Տիցիան Տաբիձեն (1895–1937), Պաոլո Իաշվիլին (1895–1937) միավորվեցին և ստեղծեցին «Ցիսփերի դանձերի» («Երկնագույն եղջյուրներ») սիմվոլիստական խմբակը: Նրանց խնդիրը «բանականությունը կորցրած ժողովրդին դեպի երկնագույն տաճար առաջնորդելն էր»: Նրանք ևս ռեալիստական արվեստի սկզբունքներին հակադրում էին դեկադենտական տրամադրություններ, արտահայտում անհատապաշտական մտքեր, կյանքը ներկայացնում իբրև ստվերներով, տեսիլներով ու կրկնակներով բնակեցված միստիկական աշխարհ: Քարոզում էին բոհեմական կյանք, գրողին հեռացնում միջավայրից և նրա բնական վախճանը համարում խելագարությունն ու ինքնասպանությունը:

Այդուհանդերձ, «եղջյուրականները» նորացրին ազգային չափածոյի մոտիվները, արտահայտչական միջոցներն ու տաղաչափական ձևերը: Եվրոպական ուղղության հետ ունեցած ընդհանրությամբ հանդերձ՝ վրացական սիմվոլիզմն ինքնատիպ է և բավականին հետաքրքիր:

Նշված գրականության պատմությամբ, ժամանակակից գրական երկերի վերլուծությամբ, գրականության և արվեստի փիլիսոփայության հարցերով զբաղվել են Միքայել Թումանովը (1817–1875), Նիկո Նիկոլաձեն (1843–1928, «Մեր գրականությունը», «Քննադատությունը և նրա նշանակությունը»), Ալեքսանդր Խախանովը (1864–1912, հիմնարար աշխատությունը՝ Մոսկվայում լույս տեսած «Վրաց գրականության պատմությունը»), Կիտա Աբաշիձեն (1870–1917), Իվանե Գոմարթելին (1875–1938) և ուրիշներ:

Ժառանգելով ու զարգացնելով ազգային բազմադարյա գրականության ավանդույթները՝ վրաց գրողները XX դարի սկզբին ստեղծեցին նորագույն շրջանի գրականությունը, որն առնչվում է երկրի պետականության վերականգնման գործընթացի (1918–1921), խորհրդային ժամանակների հետ և որակական հատկանիշներով զգալիորեն տարբերվում է իր նախորդից՝ վրաց նոր շրջանի գրականությունից:

4. ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

XIX դ. առաջին կեսը նշանավորվեց նաև պատմագիտական մտքի զարգացմամբ: Վրաստանի սպասված նվաճումը Ռուսաստանի կողմից անհրաժեշտություն էր դարձրել հետադարձ հայացք նետել սեփական երկրի պատմության հարցերին: Այդ առումով պատմագիտական մտքի զարգացման մեջ իրենց ավանդն ունեցան արքայազն Իոանե (Հովհան) Բագրատիոնին (1772–1830), որը 15 տարվա տքնաջան աշխատանքով ստեղծեց վրաց գիտական հանրագիտարանը՝ «Կալմասոբա»–ն: Նա հեղինակել է բառարանագիտական, պատմագիտական, աշխարհագրական և այլ բնույթի աշխատություններ:

Պատմագիտական ու օրենսգիտական աշխատություններ է հեղինակել նաև Վրաստանի վերջին թագավոր Գեորգի XII–ի որդին՝ Դավիթ Արքայազնը (1767–1819): Նրա գրչին են պատկանում «Վրաստանի պատմություն», «Նոր պատմություն» աշխատությունները:

Վրացագիտական հետազոտությունների զարգացման մեջ իր ավանդն է ունեցել Թեյմուրազ Արքայազնը (1782–1846):

XIX դ. երկրորդ կեսին վրացագիտությունը մեծ առաջընթաց ապրեց: Վրացագիտության և Վրաստանի պատմության հարցերի լուսաբանման գործում բազմաթիվ գիտական աշխատությունների հեղինակ է Մարի Բրոսեն (1802–1880): Հատուկ նշելի է նրա աշխատությունը՝ «Վրաստանի պատմություն»–ը:

Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների և բանասիրության վրաց լեզվի ու վրաց գրականության ամբիոնի պրոֆեսոր Դավիթ Չուբինաշվիլին (1814–1891) կազմել է վրացերեն–ռուսերեն–ֆրանսերեն բառարան, վրացերեն–ռուսերեն և ռուսերեն–վրացերեն բառարաններ, վրացական գրականության քրեստոմատիա և վրացերենի քերականություն:

XIX դ. երկրորդ կեսին իրենց գործունեությունը շարունակում էին նշանավոր վրացի պատմաբան Պլատոնի Իոսելիանին (1809–1875) և Սուլխան Բարաթաշվիլին (1821–1866): Պ. Իոսելիանիի գրչին է պատկանում «Գիորգի Տասներեքերորդի

կյանքը», «Վրաստանի եկեղեցական պատմությունը» և այլ աշխատություններ: XIX դ. երկրորդ կեսին ակտիվ գիտական գործունեություն էր ծավալել նշանավոր վրաց պատմաբան Դիմիտրի Բաքրաձեն (1827–1890), որը Ռուսական ակադեմիայի թղթակից–անդամ էր: Նշելի է նրա «Վրաստանի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև X դարի վերջը» աշխատությունը: Վրաստանի պատմության կարևոր շատ խնդիրներ է գիտականորեն հետազոտել Սուլխանի Բարաթաշվիլին: Նա ռուսերեն հրատարակել է ընդհանրացված բնույթի «Վրաստանի պատմություն» աշխատությունը:

XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբներին գործող պատմաբաններից վրաց պատմագիտության մեջ մեծ ավանդ են ներդրել Ալեքսանդր Ցագարելին (1844–1929), Թեդո Ժորդանիան (1854–1916), Մոսե Ջանաշվիլին (1855–1934), Ալեքսանդր Խախանիշվիլին (1862–1911) և Նիկողայոս Մառը (1867–1934): Թ. Ժորդանիան հրատարակել է մեծարժեք «Ժամանակագրություններ և այլ նյութեր Վրաստանի պատմության վերաբերյալ» վերնագրով աշխատությունը: Այդ եռահատոր երկում ընդգրկված են կարևոր աղբյուրներ Վրաստանի պատմության համար: Մոսե Ջանաշվիլին գիտականորեն մշակել է և հրատարակել հին վրաց մատենագրության շատ հուշարձաններ: Նա գրել է նաև Վրաստանի պատմության ձեռնարկ: Մոսկվայի համալսարանի և Լազարյան ուսումնարանի պրոֆեսոր Ալեքսանդր Խախանիշվիլին շատ աշխատություններ է նվիրել Վրաստանի պատմության ուսումնասիրությանը: Կարևոր է նրա քառահատոր հետազոտությունը՝ «Վրաց բանահյուսության պատմություն»: Վրացագիտության զարգացման գործում մեծ նշանակություն ունեն Պետերբուրգի համալսարանի վրացագիտության դպրոցի ակնառու ներկայացուցիչ Նիկողայոս Մառի ուսումնասիրությունները վրաց լեզվաբանության, մատենագրության և Վրաստանի պատմության հարցերի վերաբերյալ:

XX դարասկզբին ասպարեզ են մտնում վրացագետ պատմաբանների նոր սերնդի ներկայացուցիչներ Միխեիլ Թամարաշվիլին, Իվանե Ջավախիշվիլին, Էքվթիմե Թաղայշվիլին, Հովսեփ Ղիփշիձեն, Ակակի Շանիձեն, Կոռնելի Կեկելիձեն և ուրիշներ: Ի. Ջավախիշվիլու (1876–1940) աշխատություններով և մասնավորապես նրա «Վրաց ժողովրդի պատմություն» բազմահատորյակով, որի առաջին հատորը հրատարակվել էր 1908 թ., իսկ երկրորդը՝ 1914 թ. («Հին վրաց պատմական մատենագրությունը V–VIII դդ.», տպ. 1916 թ.), նոր փուլ սկսվեց վրաց պատմագիտության զարգացման մեջ: Գիտական իր բեղմնավոր գործունեության հետ միասին Ի. Ջավախիշվիլին մեծ ջանքեր է գործադրել գիտության կազմակերպման ու զարգացման համար և դարձել Վրաստանի առաջին համալսարանի հիմնադիրներից մեկը (1918 թ.):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթօջախների պատմության, հտ. 2, Երևան, 1964:
2. Աղանեան Գ., Վրաստանի հայերը, «Տարազ», Թիֆլիս, 1919:
3. Անառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, Երևան, 2002:

4. Բայրամյան Հ., Ակնարկներ վրաց նոր գրականության պատմության, Երևան, 1983:
5. Բայրամյան Հ., Վրաց գրականությունը V–XIX դդ., գիրք Ա, Երևան, 2007:
6. Բուխնիկաշվիլի Գ., Գաբրիել Սունդուկյանը և վրացական թատրոնը, Երևան, 1976:
7. Բուխնիկաշվիլի Գ., Գորի. պատմական ակնարկ, Երևան, 1940:
8. Գրիգորյան Զ., Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական նշանակությունը, Երևան, 1978:
9. Դիլոյան Վ., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ–ռուսական հարաբերությունները, Երևան, 1989:
10. Դիլոյան Վ., Հայ–ազգային–ազատագրական շարժման «կողմնորոշման» հարցի շուրջը, «Պայքար», 1995, թիվ 6–7, էջ 13–18:
11. Երեմեան Ա., Թիֆլիսի հայոց պանթէոններում, Վենետիկ, 1940:
12. Երիցեան Աղ., Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք XIX դարում (1800–1832), մասն Ա, Թիֆլիզ, 1894:
13. Երիցեան Աղ., Թիֆլիսի հայք և նոցա վիճակագրութիւնը, «Փորձ», 1879, հ^{մր} 10:
14. Ջավարյան Մ., Ուրվագծեր, հայ–վրացական գրական–կուլտուրական կապերի պատմության, Երևան, 1959:
15. Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հտ. Ա, Հայաստան, Վենետիկ, 1806:
16. Կարապետյան Ս., Թիֆլիսի քաղաքագլուխները, Երևան, 2003:
17. Կարապետյան Տ., Վրաց գրական միտքը Հայաստանի և հայերի մասին, Երևան, 1962:
18. Ճեմճեմեան Հ. Սահակ, Տպագրիչ Պողոս Սրապեան եւ Մաղալեան Վ., Դաղեթ–Խաչեն, Երևան, 1999:
19. Մելիքսեթ–Բեկ Լ., Հայերը Վրաստանում, «Кавказ и Византия», вып. 1, Ереван, 1979.
20. Մելիքսե–Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հտ. 3, Երևան, 1955:
21. Մելքոնյան Ա., Նյութեր Ախալցխայի և Ախալքալաքի դպրոցների պատմությունից (XIX դար — XX դարի սկիզբ), Երևան, 2005:
22. Մելքոնյան Ա., Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Երևան, 2003:
23. Ներսիսյան Մ., Նարոդնիկական խմբակները Անդրկովկասում, Երևան, 1940:
24. Շերմազան Գ., Երևելի հայկազունք ի Պարսկաստան, Ռոստով (Դոնի վրայ), 1890:
25. Չամչեանց Հ. Մ., Պատմութիւն Հայոց, հտ. Գ, Վենետիկ, 1786:
26. Զոբանյան Պ., Վրաց ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին, Երևան, 1981:
27. Պետրոսյան Ա., Մոքալաքները հայ–վրացական տնտեսական–քաղաքական հարաբերություններում, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1966, թիվ 12:
28. Սարուխանյան, Վրաստան և հայերը, Վենետիկ, 1939:
29. Սուրգուլաձե Ա. Ն., Գեորգիևսկի պայմանագիրը և նրա առաջադիմական նշանակությունը, ՊԲՀ, 1983, թիվ 2–3:
30. Օրմանյան Մ., Ազգապատում, Ս. Էջմիածին, 2001:
31. «Весь Кавказ, промышленность, торговля и сельское хозяйство Северного Кавказа и Закавказья», Баку, 1914.
32. «Обозрение российских владений за Кавказом в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношениях, ч. IV, СПб, 1836.
33. «Акты собранные Кавказской Археографической комисией» (АКАК), т. I, Тифлис, 1886, т. II, 1868, т. IV, 1870, т. VII, 1876, т. X, 1885, т. XI, 1888.
34. Авалов З., Присоединение Грузии к России, СПб, 1906.

35. Адамия В. И., Из истории английской интервенции в Грузии (1918–1921 гг.), Сухуми, 1961.
36. Аладашвили Н. А., Монументальная скульптура Грузии, Москва, 1977.
37. Амиранашвили Ш. Я., История грузинского искусства, Москва, 1963.
38. Анчабадзе З. В., Очерки экономической истории Грузии первой половины XIX в., Тбилиси, 1966.
39. Андроникашвили Б. Б., Страницы прошлого читая…, Тбилиси, 1987.
40. Антелава И. Г., Государственные крестьяне Грузии в XIX в., ч. II, Пореформенный период 1864–1900 гг., Тбилиси, 1962.
41. Антелава И. Г., Государственные крестьяне Грузии в первой половине XIX века.
42. Анчабадзе Ю. Д., Волкова Н. Г., Старый Тбилиси: город и горожане в XIX веке, Москва, 1990.
43. Аргутинский–Долгорукий А. М., Борчалинский уезд в экономическом и политическом отношениях, Тифлис, 1897.
44. Ахвердов Ю. Ф., Тифлисские амкары, Тифлис, 1883.
45. Багратиони Д. Г., История Грузии, Тбилиси, 1971.
46. Бакрадзе Г. К., Возникновение и развитие капиталистической промышленности в Грузии в XIX в., Тбилиси, 1958.
47. Бакрадзе Д. и Берзенов Н., Тифлис в историческом и этнографическом отношениях, СПб, 1870.
48. Бакрадзе Д., История Грузии на основании новых изысканий, СПб, 1873.
49. Бердзенишвили Н. А. и др., История Грузии, Тбилиси, 1946.
50. Броссе М., Переписка грузинских царей с российскими государями, Санкт–Петербург, 1861.
51. Бурнашев С., Картина Грузии или описание политического состояния царств Карталинского и Кахетинского, сделанное… Бурнашевым в Тифлисе в 1786, Тифлис, 1896.
52. Бутков П. Г., Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 года, часть III, СПб, 1869.
53. Вахушти, История царства грузинского, Тбилиси, 1976.
54. Вермишев Х., Материалы для истории грузино–армянских отношений, СПб, 1904.
55. Воронов Н. И., Сборник статических сведений о Кавказе, т. 1, Тифлис, 1850.
56. Габилашвили Н. А., Грузинская деревня в 30–х — начале 60–х годов XIX в., Тбилиси, 1980.
57. Гагеместер Ю., Закавказские очерки, Санкт–Петербург, 1845.
58. Гамахария Д., Святой Священномученник Кирион II (Садзаглишвили) и Абхазия, Тбилиси, 2006.
59. Гастгаузен А., Закавказский край, ч. 1–2, СПб, 1857.
60. Георгиевский трактат, Тбилиси, 1983.
61. Гильденштедт И., Географическое и статистическое описание Грузии и Кавказа, СПб, 1809.
62. Гозалишвили Г., Заговор 1912 г. Свод документов, Тбилиси, 1935.
63. Горгиджанидзе П., История Грузии, Пер. Р. К. Кикнадзе и В. С. Путуридзе, Исследование и указатели Р. К. Кикнадзе, Тбилиси, 1990.
64. Грузия. Краткий исторический очерк, Тбилиси, 1966. Грамоты и другие исторические документы XVIII столетия, относящихся к Грузии, т. 1, Под ред. А. А. Цагарели, СПб, 1891.
65. Гугушвили П. В., Развитие промышленности в Грузии и Закавказье в XIX–XX вв., Тбилиси, 1967.
66. Гугушвили С. И., Обзор фабрик и заводов Тифлисской губернии, Тифлис, 1883.
67. Давид царевич Грузинский. Краткая история Грузии. С предисловием К. Н. Бегичева, Тифлис, 1893.
68. Джавахов А., Город Гори. Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. II, Тифлис, отд. 1, Тифлис, 1882.
69. Джамбеpидзе Н. Ш., Цициашвили И. Н., Архитектура Грузии от истоков до наших дней, Москва, 1976.
70. Джамбеpидзе Н. Ш., Цициашвили И. Н., Грузинская архитектура, Москва, 1976.

71. Дубровин Н., Георгий XII последний царь Грузии и присоединение ее к России, СПб, 1867.
72. Дубровин Н., Закавказье с 1830–1866 гг., СПб, 1866.
73. Дубровин Н., История войны и владычества русских на Кавказе, т. I–IV, СПб, 1871–1888.
74. Дурново Н. Н., Исторический очерк автокефальных церквей: Иверской и Имеретинской с списками 120 епархий и католикосов Мцхетских и Имеретинского–Абхазских, Москва, 1910.
75. Дурново Н. Н., Судьбы грузинской церкви (По вопросу о грузинской церковной автокефалии), Русский стяг, Москва, 1907.
76. Дякин В. С., Национальный вопрос во внутренней политике царизма (XIX–начало XX вв.), СПб, 1998.
77. Жизнь Артемия Араратского. Издание подготовил К. Н. Григорян при участии Р. Р. Орбели, Москва, 1981.
78. Жордания О. К., История крестьянской реформы в Грузии, Тбилиси, 1982.
79. Жордания О. К., К вопросу о революционной ситуации в Грузии в конце 50–х начале 60–х годов XIX в., Тбилиси, 1971.
80. Зубов П. Л., Шесть писем о Грузии и Кавказе, Москва, 1834.
81. Иваненко В. И., Гражданское управление Закавказьем от присоединения Грузии до наместничества великого князья Михаила Николаевича. Исторический очерк. «Утверждение русского владичества на Кавказе», Тифлис, 1901.
82. Игумен Кирион, Обозрение Картлинских царей Высоко–преосвещеннейшему Владимиром, Экзархом Грузии с историко–археологическими замечаниями, 1901 г.
83. Иоаннисян А. Р., Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия, Ереван, 1958.
84. Иоселиани П., Описание древностей города Тифлиса, Тифлис, 1866.
85. История Грузии, Тбилиси, 1960.
86. История Грузии, Учебное пособие, Тбилиси, 1968.
87. Киняпина Н. С., Блиев М. М., Догоев В. В., Кавказ и Средняя Азия во внешней политике России, Москва, 1984.
88. Кишмишев С. Г., Последние годы грузинского царства, Тифлис, 1898.
89. Мамулов С., Армяне в Грузии, Москва, 1995.
90. Маркова О. П., Восстание в Кахетии 1812 г., Москва, 1951.
91. Материалы для изучения Закавказского края, т. I–VII, Тифлис, 1885–1887.
92. Материалы по истории Грузии и Кавказа, вып. I–III, Тбилиси, 1940.
93. Материалы социально–экономической истории Грузии (XIX — начало XX вв.), Тбилиси, 1989.
94. Махарадзе Р., Грузия в XIX столетии, Тбилиси, 1933.
95. Месхиа Ш. А., История Грузии. Краткий обзор, Тбилиси, 1968.
96. Мурадян П. М., Армянская эпиграфика Грузии (Картли и Кахети), Ереван, 1985.
97. Мурадян П. М., Армянская эпиграфика Грузии (Тбилиси), Ереван, 1988.
98. Очерки истории Грузии в XIX в., том 5, Тбилиси, 1990.
99. Паичадзе Г. Г., Георгиевский трактат, Тбилиси, 1983.
100. Панухава А. Я., Вопросы аграрной истории Грузии первой половины XIX в., Тбилиси, 1973.
101. Панухава А. Я., К вопросу о развитии аграрных отношений в дореформенной Восточной Грузии, Москва, 1957.
102. Папаскири З. В., У истоков грузино–русских политических взаимоотношений, Тбилиси, 1982.
103. Иоселиани П., Города, существовавшие и существующие в Грузии, Тифлис, 1850.

104. Покровский Н., Краткий очерк церковно–исторической жизни православной Грузии со времени появления в ней христианства и до вступления ее в подданство России. «Тифлисский листок», 1905.
105. Пурцеладзе Д., Грузинские Дворянские грамоты, Тифлис, 1881.
106. Сборник законов грузинского царя Вахтанга, VI, Тифлис, 1887.
107. Сборник сведений о Кавказе на основании камерального описания 1871–1877 гг., т. I, Тифлис, 1871, т. VII, Тифлис, 1881.
108. Сборник статистических сведений о Кавказе, т. I–II, Тифлис, 1869.
109. Списки населенных мест Кавказского края. V выпуск. Кутаисская губерния, Тифлис, 1879.
110. Страницы из истории Грузии (Сборник статей), Тбилиси, 1966.
111. Стуруа Н. И., Вопросы новой и новейшей истории Грузии, т. 1, Тбилиси, 1987.
112. Стуруа Н. И., Грузия в 1917 году, Тбилиси, 1964.
113. Сургуладзе А. Н., Прогрессивные последствия присоединения Грузии к России, Тбилиси, 1982.
114. Хаханов А. С., Положение армян в грузинском царстве, Братская помощь пострадавшим в Турции армянам, Москва, 1898.
115. Хачапуридзе Г. В., К истории Грузии первой половины XIX в., Тбилиси, 1950.
116. Хоштария Э. В., Очерки социально–экономической истории Грузии, Тбилиси, 1974.
117. Церцвадзе М. В., Революционное движение в Грузии в 1914–1917 гг., Москва, 1957.
118. Цинцадзе К., Историческая справка по вопросу об автокефальности грузинской церкви, Ар. В. Кутателадзе, Тифлис, 1906.
119. Чапигадзе З., История Грузии: популярные данные из европейских источников об этноистории Кавказа и ее роли в европейской цивилизации, Тбилиси, 2016.
120. Чеишвили Н. И., Из истории Грузии XIX века, Батуми, 1960.
121. Эсадзе С., Историческая записка об управлении Кавказом, т. I–II, Тифлис, 1902.
122. Allen W. E., A History of the Georgian People. From the Beginning down to the Russian Conquest in the Nineteenth Century, London, 1932.
123. Brosset M. F., Histoire de la Géorgie, depuis l'antiquitée jusqu'au XIX siècle, t. II, St.–Petersbourge, 1850.
124. Brosset M., Additions of ecclaircissement à l'histoire de la Géorgie, St.–Petersbourge, 1851.
125. Eszer Ambrosius, Missionen im Halbrund der Länder zwischen Schwarzen Meer, Kaspisee und Persischen Golf, Krim, Kaukasien, Georgien und Persien. "Sacrae Congregationis de propaganda fide memoria rerum", vol. II, 1700–1815, Herder, Rom — Freiburg, 1973.
126. Kandelaki K., The Georgian question before the free World, Paris, 1953.
127. Klaproth J., Voyage en Month Caucase et en Georgie, t. I, Paris, 1823.
128. Lang D. M., A Modern History of Georgia, London, 1962.
129. Long D. M., The last years of the Georgian Monarchy 1658–1832, New York, 1957.
130. Suny R. G., The Making of the Georgian Nation, Indiana University Press, 1994.
131. Բենդիաշվիլի Ա., Դաուշվիլի Ա., Սամսոնաձե Մ., Քոքլաշվիլի Խ., Ճումբուրիձե Դ., Ջանելիձե Օ., Ռուսուլի կոլոնիալիզմի սաքարթվելոշի, Թբիլիսի, 2008:
132. Գելաշվիլի Ա., Կախեթիս 1812 ծլիս աջանկղեբա, Թբիլիսի, 2003:
133. Գոզալիշվիլի Գ., 1832 ծլիս շեթքմուլեբա, Թբիլիսի, 1976:
134. Գոնիկիշվիլի Մ., Իմերեթիս սամեփիս գաուքմեբա, Թբիլիսի, 1978:
135. Գուռուլի Վ., Կուպատաձե Բ., Սաքարթվելոս իստորիա, XIX սաուկունե, Թբիլիսի, 2004:
136. Գուռուլի Վ., Սաքարթվելո դա ռուսեթի, Թբիլիսի, 2010:
137. Գուռուլի Վ., Մփարվելոբիդան անեքսիամդե, Թբիլիսի, 2010:

138. Գուռուլի Վ., Սաքարթվելո դա գարեսամկղարո, Թբիլիսի, 2011:
139. Գուռուլի Վ., Գեորգիէվսվիս տրաքտատի (1783 ծ.), Թբիլիսի, 2013:
140. Դումբաձե Մ., Դասավլեթ Սաքարթվելո XIX ս. պիրվել նախեվարշի, Թբիլիսի, 1957:
141. Վաճրիձե Գ., Իմերեթիս դրոէբիթի մմարթվելոբա (1810-1840 ծլեբի), Քութաիսի, 1999:
142. Կակուլիա Շ., Ք. Թբիլիսիս մոսախլեոբա 1803–1970 ծծ. (ստատիստիկուր–էկոնոմիկուրի նարկվեվի), Թբիլիսի, 1979:
143. Կուպրաշվիլի Հ., Դիդի ռուսիանոբա սաքարթվելոշի (XIX սաուկունիս պիրվելի նախեվարի), Թբիլիսի, 2011:
144. Լոմսաձե Շ., Սամցխե–Ջավախեթի (XVIII սաուկունիս շուա ծլեբիդան XIX սաուկունիս շուա ծլեբամդե), Թբիլիսի, 1975:
145. Ռոգավա Գ., Ռելիգիա գա էկլեսիա սաքարթվելոշի XIX–XX ս. ս., Թբիլիսի, 2002:
146. Սուրգուլաձե Ակ., Սուրգուլաձե Պ., Սաքարթվելոս իստորիա 1783–1990. Թբիլիսի, 1991:
147. Սուրգուլաձե Ակ., Քարթուլի սազոգադոէբրիվի ազրի XIX սաուկունիս մեորե նախեվարսի, Թբիլիսի, 1973:
148. Տոգոնիձե Վ. Ի., Քարթլիս մթիանեթիս գլեխթա աջանկղեբա 1804 ծելս, Թբիլիսի, 1951:
149. Քորթուա Ն., Սաքարթվելո 1806–1812 ծլեբիս ռուսեթ–թուրքեթիս օմշի, Թբիլիսի, 1964:
150. Շվելիձե Դ., Սաքարթվելոս մփարվելոբա դա դապկղրոբա ռուսեթիս միէր, Թբիլիսի, 2014:
151. Շշվելիձե դ., 1832 ծլիս շեթքմուլեբրիվի մոձրառբիս իստորիիդան, Թբիլիսի, 2014:
152. Ճումբուրիձե Դ., Կիկնաձե Վ., Քոքրաշվիլի Խ., Սառալիձե Լ., Ռուսեթ–սաքարթվելոս ուրթիէրթոբա XVIII–XXI սաուկունեէբշի (սամեցնիէրո ծկղարոէբիսա դա լիտերատուրիս միխեդվիթ), Թբիլիսի, 2016:
153. Խաճապուրիձե Գ., Սաքարթվելոս XIX դա XX սաուկունիս իստորիա, Թբիլիսի, 1940:
154. Խոմերիկի Մ., 1819–1820 ծլեբիս աջանկղեբա դա իմերեթիս բագրատիոնեբի, Թբիլիսի, 2012:
155. Ջավախիշվիլի Ի., Դամոկիդեբուլեբա ռուսեթսա դա սաքարթվելոս շորիս մե–XVIII–ե սաուկունեշի, Տիփլիսի, 1919:
156. Ջանելիձե Օ., Նարկվեվերբի սաքարթվելո–ռուսեթիս ուրթիէրթոբիս իստորիիդան, Թբիլիսի, 2014:

ԲԱԺԻՆ 5

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԸ XVIII ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XIX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

1. ՌՈՒՍ–ԻՐԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ԵՎ ԳՅՈՒԼԻՍՏԱՆԻ ՈՒ ԹՈՒՐՔՄԵՆՉԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

Պատմության նոր դարաշրջանի արշալույսին Իրանը կրկին նետվել էր անիշխանության և ներքին պատերազմների հորձանուտը: XVIII դարի երկրորդ կեսին Իրանի ներքին կյանքի անկայունությունը հնարավորություն էր ընձեռել երկրի առանձին մարզերի կառավարիչներին՝ խաներին ու բեկլարբեկերին, իրենց անհնազանդությունը դրսևորելու երկրի կենտրոնական իշխանության նկատմամբ և վարելու ինքնուրույն ներքին ու արտաքին քաղաքականություն: Երկրի մի շարք ծայրամասային շրջաններում փաստորեն սկսել էին ձևավորվել ինքնուրույն իշխանություններ: Այդ երևույթը նկատելի էր նաև Արևելյան Այսրկովկասում, որտեղ ստեղծվել էին Ղուբայի, Դերբենդի, Բաքվի, Շամախիի, Շաքիի և Գանձակի իշխանությունները կամ խանությունները:

1780–1790–ական թվականներին Իրանում գահակալական պայքարի նոր ծավալումը հանգեցրեց ղաջարական թյուրքալեզու տոհմի հզորացմանը, որի արդյունքում 1790–ական թթ. սկզբից Իրանի առավել հզոր տիրակալ արդեն դարձել էր Մուհամմեդ Հասան–խան Ղաջարի որդին՝ Աղա Մուհամմեդ–խան Ղաջարը: Վերջինս, տարված լինելով փառասիրական նպատակներով, երազում էր վերականգնել Իրանի նախկին հզորությունը և ստեղծել մեծ կայսրություն: Կարճ ժամանակամիջոցում նրան հաջողվեց իր գերիշխանությունը հաստատել համարյա ողջ Իրանի տարածքում: Սակայն շահ հռչակվելու համար անհրաժեշտ էր գրավել նաև Այսրկովկա-

սը, որի տարբեր մասերը փաստորեն դուրս էին եկել Իրանի հնազանդությունից: 1794 թ. վերջին Աղա Մուհամմեդը սկսեց պատրաստություններ տեսնել դեպի Այսրկովկաս արշավանք կազմակերպելու համար՝ Վրաստանը և Արևելյան Այսրկովկասի ինքնագլուխ խանությունները վերստին Իրանի իշխանությանը ենթարկելու նպատակով:

Սակայն մինչ ռազմական գործողությունների դիմելը նա որոշեց նախ փորձել հարցը լուծել դիվանագիտական ճանապարհով, ուստի նամակով դիմեց Արևելյան Վրաստանի թագավոր Հերակլ Բ–ին և Այսրկովկասի խաներին՝ նրանց կոչ անելով առանց գործը արյունահեղության հասցնելու, կամովին իրենց հնազանդությունը հայտնել իրանական պետությանը: Հնազանդության այդ կոչին դրական արձագանքով պատասխանեցին Ղուբայի, Բաքվի, Շիրվանի, Շաքիի և Գանձակի խաները: Արցախի խանի ու Հերակլ Բ–ի կողմից հնազանդություն հայտնելու մերժումը հանգեցրեց Աղա Մուհամմեդ խանի Այսրկովկաս արշավանք կազմակերպելուն: 1795 թ. գարնանը վերջինս, 60–հազարանոց բանակի գլուխ անցած, Խուդաֆերինի կամրջի վրայով անցավ Արաքս գետը և շարժվեց դեպի հյուսիս: Այդ պատժիչ արշավանքի նպատակն էր ողջ Այսրկովկասի և Դաղստանի վերանվաճումը:

Աղա Մուհամմեդին հաջողվեց գրավել Շուշին, որտեղ ապաստանել էին Արցախի Իբրահիմ խանն ու հայ մելիքների մեծամասնությունը՝ իրենց զինված ջոկատներով: Իսկ Արցախի մելիքներից Աղա Մուհամմեդին իր հնազանդությունն էր հայտնել և նրա հետ համագործակցում էր մելիք Մեջլումը՝ հուսալով Շուշիի գրավումից հետո արժանանալ նրա զոհունակությանը և նրա կողմից իրեն իշխանություն պարգևելուն: Անհաջողությունից մոլեգնած Աղա Մուհամմեդը իր զայրույթը թափեց Արցախի խաղաղ բնակչության վրա՝ նրան ենթարկելով անխնա կողոպուտի: Այնուհետև շարժվելով դեպի Թիֆլիս՝ նա ճանապարհին պատժեց նաև թալիշներին, որոնք կապի մեջ էին մտել Ռուսաստանի հետ: 1795 թ. սեպտեմբերի 12–ին գրավելով Թիֆլիսը՝ պարսկական զորքերը զարհուրելի կոտորածի ու կողոպուտի ենթարկեցին նրա բնակչությանը:

Թիֆլիսի իրադարձություններից սարսափի մատնված Այսրկովկասյան խաները՝ Երևանի Մուհամմեդ–խան Ղաջարը, Դերբենդի, Բաքվի և Գանձակի (Գյանջայի) խաները անմիջապես իրենց հնազանդությունը հայտնեցին Աղա Մուհամմեդին: Բռնելով հետդարձի ճանապարհը՝ 1796 թ. մայիսին Մուղնիում Աղա Մուհամմեդը հրավիրվեց էմիրների, խաների, զորահրամանատարների, ցեղապետերի և շիայական բարձրագույն հոգևորականության մեծ ժողովում ղուռուլթայի, որտեղ հռչակվեց իրանական պետության շահնշահ:

Անկասկած, Այսրկովկասում ծավալված այդ իրադարձությունները իրենց սուր ծայրով ուղղված էին Ռուսաստանի դեմ, քանի որ Այսրկովկասում Իրանի գերակայության վերահաստատումով հարցականի տակ էր դրվում Ռուսաստանի ազդեցությունը: Ուստի Աղա Մուհամմեդին պատժելու և նրա հետագա ռազմաշունչ ոտնձգությունները Այսրկովկասում կասեցնելու նպատակով Եկատերինա Բ կայսրուհու հրովարտակով 1796 թ. գեներալ Վալերիան Զուբովի հրամանատարու-

թյամբ ռուսական բանակ ուղարկվեց Այսրկովկասը նվաճելու: Փետրվարի 19–ին Վ. Ա. Զուբովին տրված կայսերական հրահանգներում նշվում էր, որ արշավանքի ընթացքում պետք է անցնել Կուր և Արաքս գետերը և հիմնական նպատակ դարձնել «Աղա Մուհամմեդ–խանի ուժերի և իշխանության ոչնչացումը»: Ռուսական բանակը առանց լուրջ դիմադրության գրավեց Դերբենդը, Ղուբան, Բաքուն, Շամախին, Շաքին ու Գանձակը և մոտեցավ Արցախին: Նշված խանությունները, խուսափելով ռազմական առճակատումից և անկարող լինելով ռուսական կանոնավոր բանակի դեմ կազմակերպելու արդյունավետ զինված դիմադրություն, փորձում էին հնազանդություն հայտնելու միջոցով պահպանել իրենց իշխանությունը: Արցախի Իբրահիմ խանը ևս Զուբովի ռազմական ճամբարն ուղարկեց իր որդուն՝ Լյութֆալի–բեկին՝ հայտնելով իր հնազանդությունը:

Իրադարձությունների անսպասելի շրջադարձը արմատապես փոխեց վիճակը: 1796 թ. նոյեմբերի 6–ին Եկատերինա Բ կայսրուհու մահը և Ռուսաստանում Պավել Ա–ի գահակալումը շրջեց իրադարձությունների ընթացքը: Պավել կայսրը հրամայեց, որ բանակը լքի գրաված բոլոր տարածքները և հետ քաշվի Ռուսաստան: Դա ուղղակի նվեր էր Աղա Մուհամմեդ շահի համար, որը որոշեց իր երկրորդ արշավանքը կազմակերպել դեպի այսրկովկասյան խանությունները և Վրաստան՝ նրանց կատարելապես ընկճելու համար:

1797 թ. գարնանը շահական զորքերն անցան Արաքսը: Կովկասի տեղական կառավարիչների անունով կրկին ուղարկվեցին շահական հրամանագրեր (ֆերմաններ), որոնցում պահանջվում էր ճանաչել Իրանի գերագույն իշխանությունը: Անհնազանդներին հրամանագիրը սպառնում էր չարաչար պատիժների ենթարկել:

Շահի վրեժխնդրությունից խուսափելով՝ Արցախի Իբրահիմ խանն իր գերդաստանով հեռացավ Դաղստան, իսկ շահն առանց դիմադրության հանդիպելու 1797 թ. գարնանը մուտք գործեց Շուշի՝ այնտեղ սպասելով, թե երբ ռուսական զորքերը կհեռանան Այսրկովկասից (Իրանում տեղյակ էին Ռուսաստանի նոր կայսր Պավել Ա–ի հրամանին ռուսական զորքերի դուրսբերման և գեներալ Վ. Զուբովի արշավանքի դադարեցման վերաբերյալ): Սակայն այդ օրերին տեղի ունեցավ մի իրադարձություն, որն արմատապես փոխելու էր դեպքերի ընթացքը՝ շահը զոհ գնաց կազմակերպված դավադրության: 1797 թ. մայիսի 14–ին Շուշիի ամրոցում՝ իր վրանում, գիշերը՝ քնած ժամանակ, Աղա Մուհամմեդ շահը սպանվեց: Այդ սպանությունը կանխեց արշավանքի շարունակումը: Զորամասերի հրամանատար խաները և ցեղերի առաջնորդները խուճապահար սկսեցին հեռանալ իրենց տիրույթները, իսկ բանակն արագորեն ցրվեց: Այդ ընդհանուր խուճապի և խառնաշփոթության օրերին Իրանում գահի շուրջը ծավալվեց պայքարի նոր ալիք:

1798 թ. մարտին Բաբախանը թագադրվեց շահական գահի վրա՝ ընդունելով Ֆաթհ Ալի շահ (1798–1834) գահակալական անունը: Նա լի էր վճռականությամբ Այսրկովկասում Իրանի լիարժեք գերակայությունը վերականգնելու գաղափարով, առավել ևս, որ Նապոլեոն Բոնապարտի գործակալները շահին հուշում էին, որ եթե նա չդրսևորի վճռականություն, վաղ թե ուշ կկորցնի Վրաստանը և Այսրկովկասի

խանությունները: Այդ բանը հասկանում էին նաև Թեհրանում՝ ակնառու տեսնելով, որ Ռուսաստանը Կովկասում իր ժամանակավոր նահանջից հետո քայլ առ քայլ ուժեղացնում է իր նվաճողականությունը և որ ռուսական իշխող շրջանների մշակած ռազմավարության համաձայն՝ առաջընթաց նվաճողական շարժման վերջնական նպատակ էր լինելու ողջ Այսրկովկասի ռազմակալումը և կայուն բնական սահմանի հաստատումը Կուր–Արաքս–Ախուրյան գետաբաժան գծով: Այդ ծրագրի իրականություն դառնալու հնարավորությունը կտրուկ մեծացավ, երբ Պետերբուրգում 1801 թ. դեկտեմբերի 24–ին գահը ստանձնեց Ալեքսանդր Առաջին կայսրը (1801–1825): Նա իր գահակալության հենց առաջին օրերին հրաման էր արձակել Ռուսաստանի հովանու ներքո ստեղծել Արևելյան Այսրկովկասի խաների միջև «կայուն դաշինք»: Դա նշանակում էր, որ ցարական կառավարությունը կովկասյան ուղղությամբ իր նվաճողական քաղաքականության օրակարգ էր մտցնում Այսրկովկասի յուրացումը: Ընդ որում, կայսրության սահմաններն ընդարձակելու այդ լայնահուն ծրագիրն իրագործելու ճանապարհին ցարիզմն այլևս կարիք չուներ հանդես գալու Կովկասի ժողովուրդների «ազատարարի» ու «փրկարարի» դիմակի տակ, ինչպես կատարվում էր Եկատերինայի ժամանակ: Անկասկած, ցարիզմին չի մտահոգել բռնապետական Պարսկաստանի կողմից խոշտանգված հարավկովկասյան ժողովուրդների ճակատագիրը: Ցարիզմի բուն նպատակն է եղել Այսրկովկասը ծառայեցնել իր գաղութատիրական շահերին:

XIX դ. սկզբին Այսրկովկասի վարչական քարտեզն ուներ հետևյալ պատկերը. Քարթլիի և Կախեթի միացյալ թագավորություն, Իմերեթիայի թագավորություն, Գուրիայի, Մեգրելիայի, Աբխազիայի, Աջարիայի իշխանություններ, Ախալցխայի փաշայություն, Երևանի, Նախիջևանի, Արցախի, Գանձակի, Ղուբայի, Շաքիի, Շիրվանի, Բաքվի և Թալիշի խանություններ: Նշված խանությունները մտնում էին Իրանի դաջարական պետության կազմի մեջ: Սակայն ինչպես նշվել է վերևում, օգտվելով XVIII դ. կեսերին Իրանում ծայր առած միջավատական երկպառակությունների և արյունահեղ բախումներից՝ ինքնագլխության ձգտող այդ խանությունները կարողացել էին ձեռք բերել գրեթե անկախ կամ կիսանկախ վիճակ: Նրանք անընդհատ բախումների մեջ էին միմյանց հետ՝ փորձելով ընդարձակվել իրենց հարևանների հաշվին:

Ռուսական տիրակալության տարածումը Կովկասյան լեռնաշղթայից հարավ հիշյալ խանություններին դրել էր երկընտրանքի առջև՝ անցնելով ռուսների կողմը՝ անվերապահորեն ճանաչել իրանական շահի գերագույն իշխանությո՞ւնը, թե՞ պայքարել՝ պահպանելու իրենց կիսանկախ գոյությունը:

1801 թ. սեպտեմբերի 12–ի մանիֆեստով պաշտոնապես ձևակերպվեց Արևելյան Վրաստանի միացումը Ռուսաստանին: Այդ իրադարձությունը բարենպաստ հնարավորություններ էր ստեղծում ցարական կառավարության համար՝ Արևելյան Այսրկովկասում ևս հուժկու թափով ծավալելու իր նվաճողական քաղաքականությունը: Ակնհայտ էր, որ Ռուսաստանը չէր կարող բավարարվել միայն Վրաստանով

և պետք է ընդարձակեր իր տիրապետությունը Այսրկովկասում՝ դուրս մղելով Իրանին: 1800 թ. Թալիշի խանությունն անցավ Ռուսաստանի հովանավորության տակ:

Ալեքսանդր Ա–ի 1801 թ. սեպտեմբերի 12–ի մանիֆեստում ասվում էր. «Հարաբերություններ հաստատելով շրջակա վայրերի տիրակալների և ժողովուրդների հետ՝ աշխատել ավելացնել Ռուսաստանի նկատմամբ հակում ունեցողների թիվը, հատկապես աշխատելով Ռուսաստանի կողմը ներգրավել Երևանի, Գանձակի, Շեքիի, Շիրվանի, Բաքվի և այլ վայրերի խաներին, որոնց նկատմամբ Բաբա–խանի [Ֆաթհ Ալի շահի — Վ. Բ.] իշխանությունը դեռ չի հաստատվել և այդ իսկ պատճառով ներկա պայմաններում իրենց անվտանգությունն ապահովելու համար անկասկած ավելի հակված կլինեն դեպի Ռուսաստանը»:

1801 թ. Թալիշի, Բաքվի և Ղուբայի խանությունների ներկայացուցիչները, տեղեկանալով Ռուսաստանին Վրաստանի միացման մասին, շտապեցին մեկնել Ալեքսանդր Ա–ի (1801–1825) արքունիք իրենց կողմից ևս Ռուսաստանին միանալու պայմանների վերաբերյալ բանակցություններ վարելու համար: Թեհրանի արքունիք հասած այդ տեղեկությունները ծայրահեղ շիկացրին մթնոլորտը:

Մինչև վճռական գործողությունների դիմելը Ֆաթհ Ալի շահը որոշում է նախ փորձել իր առջև հառնած մարտահրավերները լուծել խաղաղ դիվանագիտական ճանապարհով՝ աչքի առաջ ունենալով նաև այն իրողությունը, որ իր նախորդի՝ Աղա Մուհամմեդ–խանի 1795 թ. պատժիչ արշավանքը դեպի Այսրկովկաս ոչ միայն հարցին լուծում չտվեց, այլև, ընդհակառակը, արագացրեց Վրաստանի վերջնական անջատումը Իրանից: Վերջապես Թեհրանի արքունիքի համար գաղտնիք չէր, որ Այսրկովկասի ժողովուրդները ձգտում են ժամ առաջ ազատագրվել պարսկական օրըստօրե ծանրացող ատելի լծից, մի հանգամանք, որը չէր կարող լրջորեն չմտահոգել իշխող վերնախավին: Վրաստանի Գեորգի ԺԲ թագավորին ուղղված Ֆաթհ Ալի շահի սպառնալից վերջնագիրը խուճապի մատնեց նրան, սակայն միևնույն ժամանակ այն ամրապնդեց Ռուսաստանի մտադրությունը՝ արագացնելու Վրաստանի գրավումը և Այսրկովկասում ամրապնդվելը:

Ի դեպ՝ շահական կառավարությունն առանձնակի շահագրգռվածություն էր դրսևորում Արցախը չկորցնելու և իր կազմում պահելու հարցում: Ռազմավարական այդ առաջնակարգ կարևորություն ունեցող երկրամասում XVIII դ. վերջին և XIX դ. սկզբին տեղի էին ունեցել քաղաքական լուրջ փոփոխություններ: Հայկական նախկին հինգ մելիքությունները՝ Գյուլիստանը, Ջրաբերդը, Խաչենը, Վարանդան և Դիզակը, արդեն կորցրել էին իրենց նախկին կիսանկախ վիճակը: Արցախի Իբրահիմ Խալիլ խանը զանազան խարդավանքներով ու մեքենայություններով յուրացրել էր նրանց տիրույթները և դրածոների միջոցով ինքնագլուխ կառավարում էր դրանք: Ուստի 1802 թ. Ֆաթհ Ալին Իբրահիմ Խալիլ խանի մոտ ուղարկեց դեսպան Փիրզուլի խան Ղաջարին, որը տիրական տոնով խանից պահանջեց հնազանդվել Իրանին՝ հակառակ դեպքում շահի անունից սպառնալով ավերիչ ասպատակ սփռել նրա տիրույթներում: Նմանատիպ պահանջ շահը ներկայացրեց նաև Բաքվի Հու-

սեյին–դուլի խանին: Այսպիսով՝ Արևելյան Այսրկովկասի խանությունների վրա կախվեց իրանական նոր արշավանքի սպառնալիքը:

Դիվանագիտական այդ ժամանակավրեպ ճնշումը ոչ միայն իր նպատակին չծառայեց, այլև՝ ընդհակառակը, արագացրեց իրադարձությունների ընթացքը: 1802 թ. վերջին Հյուսիսային Կովկասում Արևելյան Այսրկովկասի և Դաղստանի մի շարք ավատական տիրակալների և ռուսական հրամանատարության միջև սկսվեցին բանակցություններ, որոնք ավարտվեցին դեկտեմբերի 26–ին Գեորգիևսկում կնքված պայմանագրով: Նրանում ասվում էր, որ փաստաթուղթը ստորագրած Ղուբայի և Թալիշի խաները, ինչպես նաև Դաղստանի մի խումբ ավատական կառավարիչներ ընդունվում են Ռուսաստանի «գերագույն հովանավորության տակ» իրենց հոժար կամքով ու սեփական խնդրանքով: Նրանք պարտավորվում էին Իրանի հարձակման դեպքում հանդես գալ Ռուսաստանի հետ համատեղ: 1803 թ. ռուսական հպատակություն ընդունելու վերաբերյալ պարտավորություն ստորագրեց նաև Բաքվի խանության ներկայացուցիչը: Այն նախատեսում էր ռուսական զորքեր մտցնել Բաքու:

Արևելյան Վրաստանի տարածքն օգտագործելով որպես հենակետ՝ ցարական կառավարությունը որոշեց նախ և առաջ իրեն ենթարկել Վրաստանի և Դաղստանի հետ սահմանակցող Ջարո–Բելոքանի ջամաաթները (ազատ համայնքները), որոնց տարածքն ուներ կարևոր ռազմավարական նշանակություն: Իրանը և Թուրքիան ձգտում էին այդ վայրերի ռազմաշունչ մուսուլման ցեղերին օգտագործելու ռուսական զորքերին դիմադրություն ցույց տալու և նրանց առաջխաղացումը դեպի Կովկաս կանխելու համար: Հիշյալ ջամաաթները ռուսական գրավումից պաշտպանելու համար Իրանը որոշել էր օգտագործել իր վասալ վրացական արքայազն Ալեքսանդրին, որը, շահի հրամանով մի խոշոր ջոկատի գլուխ անցած, 1802 թ. մուտք գործեց Ջարո–Բելոքանյան ջամաաթները: Այդ նույն նպատակով օսմանցիներն օգտագործում էին Կովկասյան դավանակից սուննի բնակչության ճանաչված առաջնորդ Սուրխայ–խան Ղազիկումուխցուն:

Սակայն այդ ուժերին, չնայած նրանց գործադրած մոլեգին ջանքերին, չհաջողվեց խափանել ռուսների ծրագրերը: 1803 թ. մարտին դեպի Ջարո–Բելոքան շարժվեց ռուսական զորքերի մի ուժեղ ջոկատ գեներալ Գուլյակովի հրամանատարությամբ և Ջարո–Բելոքանյան ջամաաթները 1804 թ. հարկադրված եղան ճանաչել ռուսական դրոշը և անցնել կայսեր իշխանության տակ: Օրակարգում դրված էր Գանձակի խանությունը նվաճելու խնդիրը: 1803 թ. նոյեմբերին գեներալ Պ. Ցիցիանովը Թիֆլիսից Շամխորի վրայով զորաշարժ կատարեց դեպի այդ խանությունը և 1804 թ. հունվարին գրոհով վերցրեց Գանձակի բերդը և ապա նույնանուն խանությունը: Կռիվների ժամանակ Գանձակի Ջավադ խանը, որը ռուսական զորքերին ցուցաբերել էր կատաղի դիմադրություն, սպանվեց: Գանձակ քաղաքն ի պատիվ Ալեքսանդր Ա–ի կնոջ վերանվանվեց Ելիզավետպոլ, իսկ խանությունը, վերանվանվելով Ելիզավետպոլի մարզ, միացվեց Վրաստանին և ընդգրկվեց Ռուսաստանի կառավարման ոլորտի մեջ:

Գանձակի խանության գրավումը կարևոր նշանակություն ունեցավ ռուսական զորքերի կողմից Արևելյան Այսրկովկասի մյուս խանությունները ևս նվաճելու գործում: Այդ խանության անկումից հետո ստիպված էր իրեն Ռուսաստանի հպատակ ճանաչել Գանձակի խանից վասալական կախման մեջ գտնվող Սամուխի կառավարիչ Շիրին բեկը, որը դարձավ ռուսական իշխանությունների հարկատուն:

Այդ իրադարձությունները ռուս–իրանական հարաբերությունները հասցրին ծայրահեղ լարվածության: Կողմերի միջև հասունանում էր պատերազմը:

Պարսկական արքունիքը եռանդուն պատրաստություններ էր տեսնում՝ կենաց և մահու գոտեմարտի բռնվելու ռուսական պետության ծավալումը դեպի հարավ կասեցնելու, ինչպես նաև իր կորցրած տիրույթները վերանվաճելու համար: Արդեն 1804 թ. գարնանը ավելի քան 50–հազարանոց պարսկական բանակը գահաժառանգ Աբբաս Միրզայի գլխավորությամբ սպասում էր շահի հրամանին՝ Այսրկովկաս ներխուժելու համար:

1804 թ. մայիսին շահական կառավարությունը պահանջեց ռուսական զորքերը անհապաղ դուրս բերել գրաված տարածքներից: Սակայն այդ առթիվ Թեհրանի ներկայացրած նոտան մերժվեց Ռուսաստանի կողմից:

1804 թ. հունիսի 10–ին տեղի ունեցավ դիվանագիտական հարաբերությունների խզում: Սկսվեց ռուս–իրանական առաջին պատերազմը: Ֆաթհ Ալի շահը հայտարարեց, որ «բոլոր երկրամասերը մինչև Ղզլար (Կիզլյար) մաքրվելու են գյավուր ռուսներից»: Իսկ ցարական կառավարությունը մտնում էր պատերազմի մեջ՝ իրականացնելու համար Արաքս գետը ռուս–պարսկական սահմանագիծ դարձնելու իր վաղեմի ծրագիրը: 1804 թ. ամռան սկզբին ռուսական զորքերը Ցիցիանովի հրամանատարությամբ շարժվեցին դեպի Երևանի խանություն: Ձեռք բերելով մի շարք հաղթանակներ իրենց թվաքանակով ռուսական զորքերին գերազանցող պարսկական ուժերի նկատմամբ՝ ռուսները, սակայն, չկարողացան գրավել Երևանի բերդը և 1804 թ. աշնանը դիմեցին նահանջի:

1805 թ. սկզբներին գեներալ Ցիցիանովը ուժեղացնում է իր ճնշումը Արցախի Իբրահիմ Խալիլ խանի վրա՝ պահանջելով ընդունել ռուսական հպատակություն: Արցախը Ռուսաստանի համար նաև դիտվում էր որպես նախադուռ Իրանի Ատրպատական նահանգ ներխուժելու համար: Ձգտելով խանգարել Արցախի խանության միացումը Ռուսաստանին՝ շահը 1805 թ. հունվարին զորքեր ուղարկեց այդ երկրամաս: Սպառնալիքների և կաշառքի միջոցով պարսկական դիվանագիտությունը փորձում էր ազդել Արցախի խանի վրա: Սակայն այն բանից հետո, երբ ռուսական մի ուժեղացված ջոկատ մուտք գործեց Արցախ, Իբրահիմ խանն այլևս այլընտրանք չուներ: 1805 թ. մայիսի 14–ին Գանձակից ոչ հեռու գտնվող Քյուրակ–չայ գետի ափին խփված վրանում Ցիցիանովը և Իբրահիմ Խալիլ խանը ստորագրում են պայմանագիր՝ Արցախի՝ ռուսական հպատակություն ընդունելու մասին: Այդ պայմանագրով Արցախի խանն իրեն ճանաչում էր որպես Ռուսաստանի վասալ: Նա հավատարմության երդում տվեց Ռուսաստանին՝ միաժամանակ պարտավորվելով իր թոռանը պատանդ («ամանաթ») թողնել ռուսների մոտ: Շուշիի ամրո-

ցում և խանության ռազմավարական նշանակություն ունեցող մյուս տարածքներում պետք է տեղակայվեին ռուսական զորամասեր: Պայմանագրի ստորագրմանը ներկա էին Թիֆլիսի և Գանձակի առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոս Գեղարդակիրը և Վարանդայի մելիք Ջումշուդ Մելիք–Շահնազարյանը: Այդ պայմանագրում, սակայն, մոռացված էր հայ ժողովուրդը՝ Արցախի հին և բնիկ տերը՝ իր դարավոր իրավունքներով: Մինչդեռ Քյուրակ–չայի պայմանագրից միայն վեց տարի առաջ էր, որ Պավել կայսրն իր հրովարտակի մեջ հայ մելիքներին ճանաչում էր որպես Արցախի միահեծան ու բնիկ տերեր:

1805 թ. մայիսի 21–ին նույն Քյուրակ–չայի ափին ռուսների հետ նույնպիսի պայմանագիր ստորագրեց և ռուսական հպատակությունն ընդունեց նաև Շաքիի Սելիմ խանը: Այժմ ռուսների առջև դրված հերթական խնդիրը Շիրվանի, Բաքվի և Ղուբայի խանությունների նվաճումն էր: Անդրադառնալով ռուսական հրամանատարության առջև դրված ռազմավարական այդ կարևորագույն խնդրին՝ դեպքերին ժամանակակից Միրզա Ադիգյոզալբեկը գրում էր, որ Արցախի և Շաքիի խանությունները Ռուսաստանին միանալուց հետո Ցիցիանովի նպատակն էր «…վերցնել այն բոլոր հողերը, որոնք գտնվում էին Կասպից և Սև ծովերի միջև»:

1805 թ. նոյեմբերի վերջին անցնելով Կուր գետը՝ ռուսական զորքերը շարժվեցին դեպի Շամախի՝ նպատակ ունենալով գրավել Շիրվանի ուժեղ, հարուստ և ընդարձակ խանությունը և ճանապարհ բացել դեպի Կասպից ծով: Աննշան դիմադրությունից հետո Շիրվանի Մուսթաֆա խանը ստիպված էր զենքը ցած դնել: 1805 թ. դեկտեմբերի 27–ին ստորագրվեց պայմանագիր Շիրվանի խանությունը ռուսական տիրապետության տակ անցնելու վերաբերյալ:

Ե՛վ Պետերբուրգը, և՛ Թեհրանը առանձնակի կարևորություն էին տալիս Բաքվի խանությանը, որը լուրջ ռազմավարական նշանակության հետ մեկտեղ ուներ նաև առաջնակարգ տնտեսական նշանակություն: Առևտրական մաքսերից, ինչպես նաև նավթի ու աղի վաճառքից ստացվող եկամուտները գայթակղիչ էին և՛ ռուսների, և՛ պարսիկների համար: Բաքուն նաև Կասպից ծովի լավագույն նավահանգիստն էր: Սակայն ամբողջ խնդիրն այն էր, որ Բաքվի Հուսեյին–ղուլի խանը և նրա շրջապատի բեկերն ու շիա հոգևորականությունը Իրանի հետ սերտ կապերի մեջ էին և հանդես էին գալիս Ռուսաստանի դեմ: Խանը դիմեց Իրանի գահաժառանգ, պարսկական բանակի հրամանատար Աբբաս Միրզային՝ խնդրելով օգնություն ռուսներից պաշտպանվելու համար: Աբբաս Միրզան հրամայեց Ուրմիայի Ասկեր խանին անհապաղ զորքերով շարժվել Բաքվի խանին օգնության:

1806 թ. հունվարին Ցիցիանովի զորքերը մոտեցան Բաքվի ամրոցին: Միաժամանակ ծովից ամրոցը շրջափակեցին ռուսական կասպյան նավատորմի ռազմանավերը: Ցիցիանովը Հուսեյին–ղուլի խանին ուղարկեց Ռուսաստանի տիրապետության տակ անցնելու վերաբերյալ պայմանագրի մի նախագիծ: Խանը հայտարարեց, որ ընդունում է նրանում առաջադրված պայմանները և Ցիցիանովի հետ հանդիպման ժամանակ նրան կհանձնի Բաքվի ամրոցի դարպասների բանալիները:

Սակայն 1806 թ. փետրվարի 8–ին Հուսեյին–ղուլի խանի հետ հանդիպման ժամանակ Ցիցիանովը դավադրաբար սպանվեց:

Այդ միջադեպը թև տվեց Դաղստանի ու Արևելյան Այսրկովկասի մի շարք ավատական տիրակալների: Մուսուլման այն խանությունները, որոնք պայմանագրեր էին կնքել ռուսների հետ և տվել հավատարմության երդումներ, դիմեցին ընդվզման՝ ձգտելով վերականգնելու իրենց անկախությունը: Կազմվեց մի ընդհանուր հակառուսական դաշնակցություն, որի մեջ կովկասյան ազգերից չէին երևում միայն հայերը և Քարթլիի ու Կախեթի վրացիները: Այդ շարժման գլուխ էին կանգնած Դաղստանի ցեղերը: Սուրխայ–խան Ղազիկումուխցին և ավատական խաներն արշավանքներ կազմակերպեցին դեպի Այսրկովկաս և մոտեցան Կուր գետի ափերին, սակայն հանդիպելով ռուսների հակահարվածին՝ ստիպված էին վերադառնալ իրենց լեռնաստանները:

1806 թ. հունիսի 2–ին ռուսական զորքը գեներալ Գլազենապի հրամանատարությամբ Հյուսիսային Կովկասից Կասպից ծովի ափերով շարժվեց դեպի հարավ: Թարքուի շամխալը միացավ ռուսներին: Այդ միասնական ուժերը հունիսի 22–ին մոտեցան Դերբենդին, որի բնակչությունն առանց մարտի հանձնեց ամրոցը:

Անմիջապես Դերբենդ մեկնեցին Բաքվի և Ղուբայի խաների ներկայացուցիչները՝ ռուսական զորքերի հրամանատարին հայտարարելու, որ նշված խանությունները խնդրում են իրենց ընդունել ռուսական հպատակության տակ: Սեպտեմբերի 5–ին ռուսական զորքերը մոտեցան Բաքվին: Հուսեյին–ղուլի խանը փախուստի դիմեց Իրան: Բաքուն միացվեց Ռուսաստանին, և Բաքվի խանությունը վերացվեց:

Որոշ ժամանակ անց գեներալ Բուլգակովի զորքերը շարժվեցին դեպի Ղուբայի խանություն, որն առանց մարտի հանձնվեց, իսկ Շեյխ Ալի խանը փախավ լեռները:

Սակայն շուտով Արևելյան Այսրկովկասի խանություններում սկսեցին բռնկվել հակառուսական ապստամբություններ, որոնցից հատկապես վտանգավոր էր Շաքիի խանության ապստամբությունը: Այն ճնշելուց հետո ռուսները Շաքիի խանությունում իշխանությունը ժամանակավոր կառավարման պայմանով հանձնեցին ռուսական կողմնորոշում ունեցող տեղական բեկերին: Այնուհետև ռուսական զորքերը շարժվեցին Ջարո–Բելոքանյան ջամաաթների վրա, որոնք նույնպես բռնված էին ապստամբության կրակով: Այդ ազատ համայնքները ի վերջո ստիպված եղան իրենց կատարյալ հնազանդությունը հայտնել ռուսներին՝ միաժամանակ պարտավորվելով նրանց վճարել հարկեր:

Ճնշելով բոլոր ապստամբություններն ու խռովությունները՝ ռուսական զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Գուդովիչը պաշտոնազուրկ արեց բազմաթիվ տեղական ավատական տիրակալների և նրանց փոխարեն նշանակեց ռուսական կողմնորոշում ունեցող անձանց: Այսպես՝ Դերբենդի ու Ղուբայի խանությունները ժամանակավորապես դրվեցին Թարքուի շամխալի իշխանության տակ, իսկ ավելի ուշ վերածվեցին կայսրության նահանգների: Շաքիի խան նշանակվեց ռուսների կողմն անցած Խոյի Ջաֆար–ղուլի խանը: Խոյի խանությունից կազմակերպվեց զգալի թվով հայերի և մուսուլման բնակչության արտագաղթ Շաքի, որտեղ ստեղծ-

վեցին մի շարք նոր գյուղեր, ինչպես նաև կազմավորվեց Նուխիի մի նոր արվարձան, որը կոչվեց Ենիքենդ: Արցախում Գուդովիչը խան կարգեց նախկին խան Իբրահիմ Խալիլի որդուն՝ Մեհդի–ղուլի խանին:

1812 թ. հոկտեմբերի 19–ին Արաքսի ափին՝ Ասլանդուզ կոչվող վայրում, ռուսական զորքերը գլխովին ջախջախեցին Աբբաս Միրզայի բանակը: Դրան հաջորդեց 1812 թ. դեկտեմբերի 31–ի — 1813 թ. հունվարի 1–ի ռուսական բանակի նոր հաղթանակը, որը նշանավորվեց Լենքորանի նորակառույց բերդի գրավումով: Իրանն այլևս ի վիճակի չէր շարունակելու պատերազմը: Շահը հարկադրված էր խնդրել հաշտություն: 1813 թ. հոկտեմբերի 12–ին Հյուսիսային Արցախի Գյուլիստան բերդավանում կնքվեց հաշտության պայմանագիր, որի համաձայն՝ Իրանը ճանաչում էր Ռուսաստանի բոլոր նվաճումները Այսրկովկասում: Մասնավորապես շահական արքունիքը ճանաչեց Արցախի, Գանձակի, Շաքիի, Շիրվանի, Դերբենդի, Ղուբայի, Բաքվի, Թալիշի խանությունների, ինչպես նաև Լոռու, Փամբակի, Շամշադինի, Զանգեզուրի և Շորագյալի գավառների միացումը Ռուսաստանին: Սակայն ռուս–իրանական առաջին պատերազմը կողմերից ոչ մեկին ռազմա–քաղաքական ծրագրերի կենսագործում չապահովեց: Ուստի, թեև Գյուլիստանի հաշտությունը համարվում էր «մշտնջենական», սակայն այն չէր կարող բավարարել կողմերից և ոչ մեկին: Հատկապես Ռուսաստանին չէր հաջողվել Արաքս գետը վերածել Իրանի հետ իր սահմանի: Իսկ Թեհրանը չէր կարողանում հաշտվել Այսրկովկասում իր երբեմնի տիրույթների կորստյան հետ:

Գրավված խանություններում ռուսներն առժամանակ պահպանեցին խանական կարգերը: Կարևոր է նաև նշել, որ Գյուլիստանի պայմանագրով միայն Ռուսաստանն իրավունք ուներ ռազմական նավատորմ պահել Կասպից ծովում:

1826–1828 թթ. ռուս–պարսկական երկրորդ պատերազմի ավարտին կնքված Թուրքմենչայի պայմանագրով (1828 թ. փետրվարի 10–ին) ռուս–պարսկական պետական սահմանագիծը հարավում հասցվեց մինչև Արաքս գետը: Այսպիսով՝ Ռուսաստանին հաջողվել էր իրագործել Այսրկովկասում իր հետապնդած հիմնական ռազմավարական խնդիրը: Իրանը ճանաչում էր Երևանի և Նախիջևանի խանությունների և Օրդուբադի գավառի միացումը Ռուսաստանին:

Թուրքմենչայի պայմանագիրն արձանագրեց Իրանի կատարյալ ու վերջնական հրաժարումը Այսրկովկասի նկատմամբ ունեցած հավակնություններից: Վերջապես ռուս–իրանական երկրորդ պատերազմը լուծեց ռազմա–քաղաքական այն խնդիրը, որն իր առջև ցարական կառավարությունը դրել էր դեռևս դարասկզբին: Ռուսական կայսրության սահմանները ծավալվեցին մինչև «բնական սահմանները»՝ Արաքս գետը: Ռուսաստանն Այսրկովկասում վերջնականապես հաստատեց իր տիրապետությունը:

2. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՆԱԽԿԻՆ ԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ: ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐԱՍՏԵՂԾ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

Այսրկովկասի նորանվաճ հողերն արդյունավետ կառավարելու համար առաջնահերթ կարևորություն ուներ այդ ընդարձակ երկրամասում միասնական վարչակարգի ստեղծումը, որը գործելու էր ռուսական օրենքներով: Այդ նպատակով 1833 թ. ստեղծվեց «Այսրկովկասի բարեկարգման հատուկ կոմիտե» անունով կառույցը, որի խնդիրն էր լինել նշված տարածաշրջանի համար բարեփոխումների ծրագրերի մշակումը և դրանց իրականացումը:

Ձգտելով նորանվաճ հողերում ամրապնդել իր դիրքերը՝ ռուսական կառավարությունը որոշեց խանական կառավարումը փոխարինել ռուսական ռազմական վարչությամբ: Առաջին ռուս–իրանական պատերազմի ժամանակ վերացվեցին Գանձակի, Բաքվի և Ղուբայի խանությունները: Ավելի ուշ վերացվեցին Շաքիի (1819 թ.), Շիրվանի (1820 թ.), Արցախի (1822 թ.) և Թալիշի (1826 թ.) խանությունները: Նախկին խաներից շատերը փախան Իրան՝ հույսեր փայփայելով, որ շահի օժանդակությամբ կհաջողվի վերադարձնել կորստյան մատնված իրենց տիրույթները: Խաներին պատկանող հողերը, այգիները և զանազան կալվածքները բռնագրավվեցին հօգուտ ռուսական գանձարանի: Ռուսական իշխանություններն Արևելյան Այսրկովկասում սահմանեցին ռազմական վարչություն: Խանությունները վերածվեցին նահանգների ու գավառների: Ռուսաստանին միացված այդ երկրամասի տարածքներում ստեղծվեցին վեց նահանգներ՝ Բաքվի, Ղուբայի, Շաքիի, Շիրվանի, Արցախի ու Թալիշի, և երկու գավառներ՝ Ելիզավետպոլի ու Ջարո–Բելոքանի գավառները: Ռուսական կառավարության՝ Այսրկովկասում իրականացրած վարչական բարեփոխումների արդյունքում 1824 թ. մայիսի 5–ի հրամանագրով նախկին խանությունների տարածքը բաժանվեց երկու տեղամասերի՝ այսպես կոչված մուսուլմանի, որն ընդգրկում էր Շիրվանի, Շաքիի, Արցախի և Թալիշի խանությունները, և Դաղստանի, որն ընդգրկում էր Բաքուն, Ղուբան և Դերբենդը:

Շաքիի, Շիրվանի, Արցախի և Թալիշի նահանգները ենթարկվում էին ռազմա–շրջանային պետին, որը կոչվում էր «մուսուլման նահանգների կառավարիչ»: Նրա նստավայրը Շուշին էր: Բաքվի և Ղուբայի նահանգները դրվեցին Դերբենդում նստող ռազմա–շրջանային պետի ենթակայության տակ:

Յուրաքանչյուր նահանգի կառավարումն անմիջականորեն կենտրոնացվում էր «պարետի», այսինքն՝ Կովկասում գլխավոր հրամանատարի կողմից նշանակվող ռուսական բանակի սպայի ձեռքում: Նման վարչական կառույցը կոչվեց պարետային կառավարման համակարգ:

Պարետներն օժտված էին լայն իրավունքներով: Նրանք իրավասու էին նշանակելու վարչական պաշտոնյաների, կարող էին բեկերին շնորհել կամ նրանցից հետ վերցնել հողեր, իրենք էին սահմանում պետական հարկերի չափը և իրագործում էին հարկագանձումը, օժտված էին նավթահորերը, աղահանքերը, ձկնաբուծարանները և այլն կապալով տալու իրավունքով, ինչպես նաև բազմապիսի այլ իրավունքներով

ու արտոնություններով: Նրանք նաև դիվանների (դատարանների) նախագահներն էին:

Սակայն պարետներն իրավունք չունեին կայացնելու մահվան դատավճիռներ և, ի տարբերություն լիիշխան ու ամենազոր խաների, ընդամենը ֆաբրիկագործարանային Ռուսական կայսրության ռազմավարչական ապարատի բազմաշերտ աստիճանակարգային պաշտոնեությանը հաշվետու չինովնիկներ էին:

Նահանգներում պահպանվեց մահալների բաժանման հին վարչական կարգը: Դրանց գլուխ էին կանգնած այսպես կոչված մահալային նայիբներ: Այդ պաշտոններում պարետները նշանակում էին ռուսական կառավարությանը անվերապահորեն նվիրված բեկերին:

Մահալային նայիբների պարտականությունները նահանգներում և նույնիսկ տարբեր մահալներում նույնը չէին: Սակայն ընդհանուր առմամբ դրանք հանգում էին հետևյալներին. նրանք գյուղերի միջև բաժանում էին պարետների կողմից որոշված հարկերն ու տուրքերը, գյուղացիներին ստիպում էին ժամանակին ու ճշտիվ կատարել հարկային մուծումները, լուծումներ էին տալիս բնակչության միջև ծագած վեճերին, ապահովում դատական վճիռների ի կատար ածումը և այլն:

Գյուղերը կառավարվում էին քեդխուդաների (գյուղական ավագների) և յուզբաշիների կողմից: Գյուղական ավագներին կից կային մի քանի «օնբաշիներ» (տասնապետեր) և «եսաուլներ» (ստրաժնիկներ կամ պահնորդներ):

Մահալային նայիբները, գյուղական ավագները և այլք դրամական ռոճիկ չէին ստանում, նրանք վարձատրվում էին կա՛մ գյուղացիներից հավաքվող ռենտա–հարկի հասույթներից, կա՛մ նրանց հատկացվում էին անբնակ հողեր և ռանչպարներ:

Արցախում և Շաքիում ստեղծվեցին նահանգային դատարաններ: Դատարանի նախագահը պարետն էր, իսկ երկու ատենակալներն ընտրվում էին տեղական բեկերից: Բաքվում, Ղուբայում և Գանձակում գործում էին քաղաքային դատարաններ: Վերացվեցին խաների կառավարման շրջանում գոյություն ունեցած այնպիսի դաժան միջնադարյան պատիժներ, ինչպես աչքեր հանելը, ձեռքերը, քիթ ու ականջ կտրելը:

Յուրաքանչյուր նահանգի հոգևորականության գլուխ էր կարգվում ղազին: Գլխավոր ղազին զբաղվում էր նաև ամուսնական, ամուսնալուծական, ընտանեկան, ժառանգական և այլ քաղաքացիական գործերով: Արևելյան Այսրկովկասում դարեր շարունակ գոյություն ունեցած հոգևոր–շարիաթական դատարանը շարունակում էր բնակչության նկատմամբ ունենալ որոշակի ազդեցություն: Ուստի պատահական չէ, որ առավել բարդ ու խճճված գործերը ցարական իշխանությունները ոչ հազվադեպ հանձնում էին հոգևոր դատարաններին:

Հարկ է նշել, որ ռուսական դատական համակարգը վճիռներ կայացնելիս հաշվի էր առնում տեղական սովորույթները, անշուշտ՝ հիմքում ունենալով ռուսական օրենքները:

Անկասկած, ռուսների կողմից նվաճված երկրամասի քրիստոնյա բնակչությունը, մասնավորապես հայերը, որոնք հոծ զանգվածներով ապրում էին քաղաքներում

և գյուղական վայրերում, ուրախ էին, որ իրենց վրայից թոթափվում է պարսկական շահերի բռնակալական լուծը, ուստի խաչով էին դիմավորում ռուսներին՝ որպես ազատարարների: Սակայն առաջնորդվելով այսպես կոչված խաղաղ ծավալման քաղաքական սկզբունքով՝ ցարական կառավարությունը բոլոր խանություններում, բացառությամբ Գանձակի, պահպանեց խանական ռեժիմը և փաստորեն նրանց ներքին ինքնավարությունը: Ինքնըստինքյան, այդ երևույթն անխաթար էր թողնում ճնշման ու շահագործման հին մեքենան: Հասկանալի է, որ դրա հետևանքով առաջին հերթին ոտնակոխ էին լինում հպատակ քրիստոնյաների իրավունքները: Ավելին՝ ձգտելով խաներին հետ պահել խռովություններից ու դավաճանությունից՝ ցարական իշխանությունները մատների արանքով ու ներողամտորեն էին նայում խաների և նրանց պաշտոնյաների շատ ապօրինությունների ու շահատակությունների:

Նախկին խանություններում նման քաղաքականության հիմքը դրել էր հայատյաց գեներալ Ցիցիանովը, որը քրիստոնյա Ռուսաստանի հանդեպ հայ ժողովրդական զանգվածների նվիրվածության մեջ տեսնում էր ինքնավարական ձգտումներ և այդ ոգով ներշնչումներ էր կատարում ռուսական բարձրագույն իշխանություններին: «Վստահ լինելով, որ մուսուլման ծովում երերվող քրիստոնյա հայությունը այլ հենարան չունի, քան ինքը, ցարիզմը անտարբեր էր դառնում վերջինիս նկատմամբ և ամենևին էլ մտահոգված չէր «մակերևույթի վրա քրիստոնյաներին հաստատելով»,— նկատում է նշված ժամանակաշրջանի հետազոտող Վ. Դիլոյանը:

Անկասկած, այդ բոլորի մեջ փոքր դեր չէր խաղում նաև ռուսների կողմից իրենց նվաճումների սկզբնական շրջանում երկրամասի առանձնահատկությունները չըմբռնելու իրողությունը: Այդ մասին է վկայում այն, որ վերոհիշյալ հարցերում հետագայում իրենց քաղաքականության մեջ ռուսական իշխանությունները մտցրին որոշ փոփոխություններ ու ճշտումներ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԸ XIX ԴԱՐԻ 30–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ԴԱՐԻ ՎԵՐՋԸ

1. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ: ԵՐԿՐԱՄԱՍՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Արևելյան Այսրկովկասը Ռուսաստանին միանալու շրջանում հետամնաց ագրարային երկրամաս էր, որտեղ արտադրության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն էր, իսկ բնակչության ջախջախիչ մեծամասնությունը կազմում էր գյուղացիությունը: Մշակող գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերը մնում էին նույնը, ինչպես խանությունների ժամանակ, այսինքն՝ ցանվում էր ցորեն, գարի, կորեկ, բամբակ, բրինձ, քնջութ, վուշ, ծխախոտ և այլն:

Հացահատիկային մշակաբույսերի արտադրությունն առանձնապես զարգացած էր Ղուբայի, Թալիշի, Շիրվանի նահանգներում և Ելիզավետպոլի գավառում: Հացի ապրանքային ավելցուկը հաճախ արտահանվում էր Իրան, իսկ մնացածն օգտագործվում էր տեղական բնակչության պահանջների բավարարման համար:

Աշխատանքի գործիքները գյուղատնտեսության մեջ պարզունակ էին ու սակավ արդյունավետ: Գյուղացիները չունեին բավարար չափով քարշող անասուններ: Հողագործության վրա բացասական ազդեցություն էին ունենում տարերային աղետները՝ Կուր և Արաքս գետերի հեղեղումները, մորեխների հարձակումները և այլն:

Արևելյան Այսրկովկասի տնտեսական կյանքում կարևոր դեր էր խաղում անասնապահությունը: Անասնապահությամբ էին զբաղվում գլխավորապես էլյաթները, այսինքն՝ քոչվորական ու կիսաքոչվորական կյանք վարող ցեղերն ու խմբերը: Արտադրության ավատատիրական եղանակի պայմաններում բնակչության այդ մասի մոտ տևական ժամանակ պահպանվում էին նահապետական կենցաղի մնացուկները: Չնայած այն հանգամանքին, որ սկսվել էր էլյաթների անցում նստակեցության, քոչվոր ու կիսաքոչվոր բնակչության տեսակարար կշիռը դեռևս մեծ էր հատկապես Շիրվանի և Արցախի նահանգներում: Կիսաքոչվոր անասնապահությամբ զբաղվող գյուղացիները, որպես կանոն, իրենց այդ զբաղմունքը զուգորդում էին հողագործության հետ:

1840–1850–ական թթ. նշանակալիորեն աճեց խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը: Անասնապահության գլխավոր ճյուղերից մեկը ոչխարաբուծությունն էր, որն ապահովում էր համեմատաբար բարձր եկամտաբերություն:

Երկրամասում որոշ տարածում ուներ նաև ձիաբուծությունը: Իր զարգացման մակարդակով առավել աչքի էր ընկնում ձկնաբուծությունը և ձկան որսը: Այդ բնագավառում 1840–1850–ական թթ. կատարվեցին ռուսական խոշոր ներդրումներ և ռուսական կապիտալը (այդ թվում նաև հայկական առևտրա–վաշխառուական կապիտալը) նշված բնագավառում ձեռք բերեց կարևորագույն դիրքեր:

Արևելյան Այսրկովկասի գրավումից հետո ցարական կառավարությունն իր ուշադրությունը բևեռեց երկրամասում բամբակագործության զարգացման խնդիրների վրա: Բամբակի մշակումը առավել լայն տարածում գտավ Շիրվանի, ինչպես նաև Արցախի ու Ղուբայի նահանգներում: 1828 թ. փորձ կատարվեց Արցախում ստեղծելու բամբակի պլանտացիաներ: Սակայն դա գանձարանին չբերեց էական եկամուտներ: Ընդհանուր առմամբ, Արևելյան Այսրկովկասում բամբակի մշակումը լայն տարածում չգտավ: Դրա կարևոր պատճառներից մեկն այն էր, որ երկրամասում բրնձի, ցորենի և մյուս հացահատիկային կուլտուրաների գները չափազանց բարձր էին, որի հետևանքով բամբակի արտադրությունը տնտեսապես ձեռնատու չէր:

Այդ շրջանում տեխնիկական կուլտուրաներից առավել կարևոր նշանակություն ուներ տորոնը, որի արմատներից պատրաստվում էին ներկանյութեր: Դրանց հիմնական սպառողը Ռուսաստանի տեքստիլ ֆաբրիկաներն էին: Բաքվի նահանգում մշակվում էր զաֆրան: 1830–1840–ական թվականներից սկսած զարգացում ապրեց ծխախոտագործությունը: Ծխախոտի մեծ մասը գնում էր տեղական բնակչության պահանջները բավարարելու համար:

Ցարական կառավարությունը լրջորեն զբաղվեց նաև շերամապահության զարգացման խնդրով՝ կայուն մետաքսի թանկարժեք հումք ստանալու համար: Առհասարակ ամբողջ Այսրկովկասը դառնում էր ռուսական մետաքսի արդյունաբերության հումքի կարևոր և հիմնական հենակետը: Դրան նպաստում էին բարենպաստ կլիմայական պայմանները և կերային բազայի առկայությունը: Շերամապահությունը բերում էր նաև մեծ եկամուտներ: Մետաքսի արտադրության բնագավառում ողջ Այսրկովկասում առաջատար տեղ էին գրավում Շաքիի և Արցախի նահանգները:

Ուշադրություն էր դարձվում նաև այգեգործության, մասնավորապես խաղողի, ինչպես նաև տեխնիկական կուլտուրաների մշակության վրա: Մուսուլման բնակչություն ունեցող գյուղերում կրոնական արգելքի պատճառով գինի չէր արտադրվում: Գյուղացիները ստացված բերքը կա՛մ հանում էին շուկա վաճառքի, կա՛մ խաղողից պատրաստում էին դոշաբ և այլ քաղցրավենիք: Այդ պատճառով Արևելյան Այսրկովկասում գինեգործությունը համարյա ամբողջապես կենտրոնացված էր հայերի ձեռքում, որոնց պատրաստած բարձրորակ գինիները մեծ պահանջարկ ունեին ինչպես Այսրկովկասում, այնպես էլ Ռուսաստանում:

Երկրամասի բոլոր նահանգներում կային մրգատու այգիներ և բանջարանոցներ, որոնք լիովին ապահովում էին տեղական կարիքները: XIX դ. 40–50–ական թթ.

Արևելյան Այսրկովկասում սկսեցին աճեցնել կարտոֆիլ, որը բերել էին ռուս վերաբնակիչները:

Նախկին բնատնտեսությունն աստիճանաբար իր տեղը զիջում էր գյուղացիական ապրանքային տնտեսությանը: Երկրամասի տնտեսական վերելքը նպաստեց նաև բնակչության աճին: Այդ աճի պատճառներից մեկն էլ այն էր, որ առաջին և երկրորդ ռուս–իրանական պատերազմների ավարտից հետո ցիրուցան եղած ու փախուստի դիմած և կամ գերության քշված գյուղացիներն ու քաղաքային բնակիչները սկսեցին վերադառնալ հարազատ վայրերը: Դրանում շահագրգռված էին նաև ռուսական իշխանություններն ու տեղական ավատատերերը, որոնց ձեռնտու էր աշխատող ձեռքերի ավելացումը և հարկատու բնակչության թվի մեծացումը:

Ռուսաստանին միացվելուց հետո Արևելյան Այսրկովկասի քաղաքներում նպաստավոր պայմաններ էին ստեղծվում նաև առևտրի և արհեստների, արդյունաբերության զարգացման համար: Դրան նպաստում էր նաև այն, որ երկրում հայտնվել էր ռուս զինվորականությունը և պաշտպանությունը՝ իր պահանջարկով:

Հայ ազգաբնակչությունը սփռված էր ամբողջ Այսրկովկասով մեկ և առաջնային դեր էր խաղում ինչպես արհեստագործական արտադրության ու արդյունաբերության, այնպես էլ առևտրի ասպարեզում:

Արհեստի հիմնական ճյուղերը մնում էին բրուտագործությունը, կաշեգործությունը, դարբնությունը, դերձակությունը, կոշկակարությունը, գորգագործությունը, հացագործությունը, գզրարությունը, ջուլհակությունը, պղնձագործությունը, արծաթագործությունը, ոսկերչությունը, ներկարարությունը և այլն: Քաղաքներում արհեստավորները, ինչպես նաև առևտրականները, միավորված էին համքարությունների մեջ:

Արևելյան Այսրկովկասի միացումը Ռուսաստանին այդ երկրամասի առևտրի զարգացման համար նոր հնարավորություններ ստեղծեց: Դրան խթանող ամենակարևոր ազդակը կյանքի ու ունեցվածքի ապահովությունն էր: Ռուսական տիրապետության շրջանում առևտուրն ու առևտրականները վայելում էին պետության հովանավորությունը: Հատկապես մեծ նշանակություն էր տրվում հայ վաճառականների գործունեությանը, խրախուսվում նրանց գործուն մասնակցությունը երկրամասի առևտրատնտեսական կյանքին: Այդ քաղաքականությունը նպաստավոր պայմաններ ստեղծեց Արևելյան Այսրկովկասի, հատկապես Շաքի, Շամախի և Բաքու քաղաքներում գործող հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչների համար: Աստիճանաբար հայ վաճառականների ձեռքում կենտրոնանում էր ձկան, աղի, մետաքսի կապալը և հատկապես նավթի հանույթը:

Առևտրի զարգացման համար ոչ պակաս կարևոր նշանակություն ունեցավ նաև այն, որ սկսեցին խորտակվել ներքին մաքսային պատնեշները և ամեն տեսակի խանական միջնորմները, որոնք դժվարացնում էին փոխանակությունը: Ստեղծված էին նաև դրամագլուխը գործառնությունների մեջ դնելու լայն հնարավորություններ: Մի խոսքով՝ ռուսների մուտքը Այսրկովկաս երկրամասի առևտրատնտեսական կյանքի համար ստեղծել էր միանգամայն բարենպաստ հնարավորություններ: Անդ-

ռադառնալով այդ հարցին՝ ժամանակին Դավիթ Անանունը գրել է. «Այսրկովկասը անմիջական հարաբերությունների մեջ մտավ մի ընդարձակ և համեմատաբար բարձր կուլտուրա ունեցող երկրի հետ, ինչպիսին էր Ռուսաստանը: Երկրորդ՝ Այսրկովկասում հաստատվեց մի ստվար տարր՝ ռուս պաշտոնեությունը և զորքը, որը, որպես սպառող, նոր պահանջներ առաջադրեց երկրի առևտրին: Եվ այդ տարրը նման չէր նախկին պաշտոնեությանը. նա ոչ միայն բաժին էր ստանում երկրի արտադրած բարիքներից, այլև վճարում էր ստացած բաժնի արժեքը: Ռուսները խոշոր քանակությամբ դրամ մտցրին Այսրկովկաս: Մշտական պատերազմները խոշոր ծախքերի դուռ էին բացում: Բնակչությունը, այսպիսով, հնարավորություն ուներ դրամի վերածելու իր մթերքները և արհեստի արդյունքները: Իսկ դա նշան էր, որ հին կայացած իրավիճակը տեղի էր տալիս, երկրի բնատնտեսության հիմքերը խախտվում են, և սկիզբ է առնում ապրանքներ արտադրող, ապրանքներով փոխհարաբերություն ստեղծող հասարակարգ: Ռուսական տիրապետությունն Այսրկովկասի տնտեսական կյանքի համար ունեցավ հեղաշրջող նշանակություն»:

Ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Իրանի հետ առևտրում կարևորագույն դերակատարություն ուներ Բաքվի նավահանգիստը: 1840–ական թթ. կեսերին Բաքվի և Աստրախանի միջև ստեղծվեց շոգենավային հաղորդակցություն: 1859 թ. Կասպից ծովում ծովային հաղորդակցության ընդլայնման նպատակով ստեղծվեց «Կավկազ ի Մերկուրի» ընկերությունը: Բեռնափոխադրումների համար միաժամանակ օգտագործվում էր նաև առագաստային նավատորմը: Առանձնապես ընդլայնվեցին Կասպից ծովով կատարվող առևտրական գործառնությունները, և նրանց կարևորագույն կենտրոն դարձավ հենց Բաքուն: Կտրուկ ավելացավ նավատերերին պատկանող առագաստանավերի թիվը:

Լայն թափ ստացավ հատկապես առևտուրը Ռուսաստանի հետ: Բաքուն ապրանքափոխանակության և առևտրական լայն հարաբերությունների մեջ մտավ Իրանի, Անդրկասպյան երկրամասի, Դաղստանի, Ռուսաստանի հետ: Միայն 1851–1860 թթ. ընթացքում Բաքվի նավահանգիստ տարեկան մուտք է գործել 207 նավ: Ծավալում ստացան նաև ներքին առևտուրը և առևտրական գործառնությունները Վրաստանի ու Արևելյան Հայաստանի հետ:

Արևելյան Այսրկովկասի վրայով իրականացվում էր նաև Ռուսաստանի տարանցիկ առևտուրը Իրանի և Մերձավոր ու Միջին Արևելքի այլ երկրների հետ: Երկրամասի կարևորագույն առևտրական կենտրոն դարձավ Շուշին, որտեղ հաճախ առևտրական գործերով գալիս էին վաճառականներ Թավրիզից, Թեհրանից, Սպահանից, Կոստանդնուպոլսից, Հնդկաստանի Լահոր քաղաքից և այլ հեռու ու մոտիկ վայրերից: Իրենց հերթին կովկասյան վաճառականները առևտրական գործերով մեկնում էին Արևելքի տարբեր երկրներ ու Արևմտյան Եվրոպայի այլևայլ պետություններ և նույնիսկ առևտրական գործարքներ էին կատարում Լայպցիգի միջազգային տոնավաճառում:

Արևելյան Այսրկովկասում Ռուսաստանին միանալուց հետո ցարական զանձարանի տնօրինության տակ անցան մեծ թվով գյուղացիներ՝ ռայաներ և ռանչպար-

ներ, որոնք նախկինում խաներից ու բեկերից ավատատիրական կախման մեջ էին: Սակայն գանձարանին կամ պետությանը պատկանող տնտեսություններում աշխատանքի արտադրողականությունը ցածր էր, այդ պատճառով շուտով դրանք վերացվեցին:

Իր սոցիալական հիմքերը Արևելյան Այսրկովկասում ամրապնդելու նպատակով ցարական կառավարությունը բռնագրավում էր անբարեհույս բեկերին պատկանող հողերը և դրանք շնորհում իրեն անվերապահորեն նվիրված ավատատերերին: Առհասարակ, ցարական չինովնիկները ժխտում էին «թիուլդար» (թիուլատեր) բեկերի հողատիրության իրավունքը և նրանց դիտում էին որպես հողերի ժամանակավոր կառավարիչներ:

Կարևոր է նշել, որ իրավական առումով տեղական ավատատերերին շնորհվում էր ոչ թե հող, այլ միայն հողային հարկը (ռենտա) գանձելու իրավունքը: Ինչ վերաբերում է ավատատերերի ու գյուղացիների միջև եղած փոխհարաբերություններին, ապա այդ ժամանակ ավատատիրական ինստիտուտների մեծ մասը շարունակում էր մնալ նույնը, ինչ եղել էր նախկինում՝ խանական կառավարման ժամանակ: Իրականում գյուղացիների և ավատատերերի միջև փոխհարաբերությունները խարսխված էին ինչպես ավատական իրավունքի նորմերի, այնպես էլ տեղական սովորույթների՝ ադաթների վրա:

Արևելյան Այսրկովկասում գոյություն ունեին հողի նկատմամբ ավատատիրական սեփականության երկու հիմնական ձևեր՝ պետական ու մասնավոր հողատիրություն:

Ցարական գանձարանը իր ձեռքերում կենտրոնացրեց հսկայական չափերի հասնող հողեր: Նրա տրամադրության տակ էին ոչ միայն այն հողերը, որոնք նախկինում անձամբ պատկանել էին խաներին, այլև նախկինում «դիվանի» հողերի ֆոնդը: Սակայն դրանով հանդերձ՝ հողերի նշանակալի մասը տեղական ավատատերերի ձեռքում էր որպես մյուլք, խալիսե, թիուլ և այլն:

Իսկ կախյալ գյուղացիները բաժանվում էին երկու խմբի՝ պետական և մասնավոր: Պետական գյուղացիների թիվն Արևելյան Այսրկովկասի բոլոր նահանգներում շատ ավելի մեծ էր, քան մասնավորներինը: Բացառություն էր կազմում միայն Արցախը:

Եթե գանձարանի օգտին հարկերը քիչ թե շատ կանոնակարգված էին, ապա մասնավոր հողատիրության ասպարեզում նման կանոնակարգում գոյություն չուներ: Դա ավատատերերին հնարավորություն էր տալիս գյուղացիներից գանձելու հարկեր ու տուրքեր՝ ըստ իրենց հայեցողության և տեղական սովորույթներին համապատասխան: Ռայաները պարտավոր էին բեկերի հողը հերկել, հավաքել բերքը, խոտ հնձել, անտառից փայտ կտրել որպես վառելանյութ, բեկին տրամադրել ածուխ, փայտ, յուղ, պանիր, տնային թռչուններ, ձու, մրգեր, բանջարեղեն, ինչպես նաև տարբեր առիթներով նրան բերել պարտադիր «նվերներ»:

Տեղական ավատատերերին տրամադրված չէր գյուղացիների նկատմամբ դատական–ոստիկանական իշխանություն, թեև բեկերը փաստացի օգտվում էին դրանից: Ցարական վարչությունը միշտ բեկերի կողմն էր:

XIX դ. սկզբներին Արևելյան Այսրկովկասում ռանչպարության, ինչպես նաև մի շարք այլ ավատական ինստիտուտներ որոշ չափով ընդլայնվեցին: Ռանչպարությունը արգելակում էր արտադրողական ուժերի զարգացումը, քանի որ ռանչպարների աշխատանքը նվազ արդյունավետ էր:

XIX դ. 30–ական թթ. սկզբին տեղի ունեցավ նախկին խանություններում գոյություն ունեցող դրամական տարբեր միավորների փոխարինում միասնական համառուսական դրամական միավորով: 1840–ական թթ. սկսվեց նաև խիստ բազմազան չափ ու կշիռների փոխարինումը Ռուսաստանում ընդունված միավորներով:

Խանական կառավարման շրջանում Արևելյան Այսրկովկասում գոյություն ունեին ներքին մաքսային պատնեշներ, այսպես կոչված «ռահդարային մաքսատուրքեր», որոնք արգելակում էին առևտուրը տարբեր խանությունների միջև: Ռուսական իշխանությունները աստիճանաբար վերացնում էին դրանք: Իսկ 1851 թ. «առևտրական տարիֆով» Այսրկովկասում արտադրված ապրանքները կարող էին արտահանվել Ռուսաստան առանց մաքսատուրքեր գանձելու:

Այսրկովկասի հումքային ռեսուրսների օգտագործումը ցարական իշխանությունների սևեռուն ուշադրության կենտրոնում էր: Ֆինանսների մինիստր կոմս Կանկրինը 1827 թ. այդ կապակցությամբ գրում էր. «…Այսրկովկասը ոչ առանց հիմքի կարող է անվանվել մեր գաղութը, որը պետք է պետությանը մատակարարի իր հարավային կլիմայի կարևոր արտադրանքները»:

Այդ կապակցությամբ ռուսական իշխանությունների կողմից մշակվել էին երկրամասում արդյունաբերական հումքի արտադրության բազմաթիվ նախագծեր, որոնց իրագործումը ռուսական արդյունաբերության զարգացման առջև կարող էր բացել նոր, վիթխարի հնարավորություններ: Օգտակար հանածոների հանույթն ու մշակումը դեռևս ցածր մակարդակի վրա առևտրավաշխառուական էր: Նավթի, աղի, պղնձի հանքաքարի և այլն հանույթի համար հիմնականում օգտագործվում էր գյուղացիների քիչ արդյունավետ հարկադրական աշխատանքը:

Արդյունաբերական զարգացման տեսակետից Արևելյան Այսրկովկասը լոկ Ռուսաստանին միանալուց հետո սկսեց կատարել իր առաջին քայլերը: Եթե բացառելու լինենք նավթի հանույթը և լեռնարդյունաբերությունը, «գործարանային արդյունաբերություն» անվան տակ հիշատակվող ձեռնարկությունները ոչ այլ ինչ էին, եթե ոչ չնչին մասշտաբների մանուֆակտուրային, շատ ավելի հաճախ՝ տնայնագործական արհեստանոցներ միայն:

Արևելյան Այսրկովկասի միացումը Ռուսաստանին նպաստեց նաև քաղաքների ու քաղաքային բնակչության աճին: Համեմատաբար արագ տեմպերով սկսեց աճել Շամախիի, Ղուբայի, Նուխիի, Շուշիի և այլ քաղաքների բնակչությունը: Քաղաքային բնակչության հիմնական մասը զբաղված էր արհեստներով և առևտրով: Քաղաքաբնակների մի մասը զբաղվում էր հողագործությամբ: Այսպես, օրինակ՝ 1849 թ.

Նուխիի 17 հազար բնակիչներից մոտ 2 հազարը հողագործներ էին: Քաղաքաբնակներն ունեին ոչ միայն այգիներ, բանջարանոցներ, այլև վարելահողեր, պահում էին անասուններ և այլն: Քաղաքների աճի հետ միաժամանակ աստիճանաբար փոփոխության էր ենթարկվում նաև նրանց արտաքին տեքստը:

Արևելյան Այսրկովկասի յուրացումը Ռուսաստանի կողմից քաղաքական առումով հեշտ ու սահուն չիրականացավ: Թեև ցարիզմն իր գաղութային քաղաքականությունը Այսրկովկասում վարում էր մեծ զգուշությամբ, սակայն, այնուամենայնիվ, դա գաղութարարական քաղաքականություն էր և անխուսափելիորեն առաջ էր բերելու հակազդեցություն ու դիմադրություն, առավել ևս, որ բնակչության վրա դրված հարկային լուծը շարունակում էր մնալ ծանր, որը մեծ դժգոհությունների տեղիք էր տալիս: Աղալարների և բեկերի նախկինում կատարելապես արտոնյալ դասը, չհաշտվելով իր համար ստեղծված նոր իրողությունների հետ, շարունակում էր դիմադրություն ցույց տալ ռուսական իշխանություններին:

Առկա էր նաև կրոնական գործոնը: Այժմ Արևելյան Այսրկովկասի մուսուլման բնակչությունը հայտնվել էր «անհավատների» լծի տակ: Այդ տրամադրությունները ուժ էին ստանում սահմանի այն կողմից՝ Իրանից: Վերջինիս գործակալների կողմից երկրամասի մուսուլման բնակչության շրջանում իրականացվող կրոնական քարոզչությունը բավականին արդյունավետ էր, մանավանդ որ երկու կողմերն էլ դավանում էին իսլամի շիայական ուղղությունը:

Դժգոհությունը սնուցող կարևոր պատճառներից էին նաև ցարական իշխանությունների չարաշահումներն ու կամայականությունները, կոպտությունը, արհամարհանքը տեղական բնակչության նկատմամբ, տարբեր պատրվակներով ունեցվածքի անօրինական բռնագրավումները, դատական ապօրինությունները և այլն: Այդ հողի վրա դեռևս XIX դ. 30–ական թթ. տեղի ունեցան մի քանի խոշոր ապստամբական շարժումներ, որոնք գլխավորապես ուղղված էին ցարական իշխանությունների, մասամբ նաև տեղական ավատատերերի դեմ: Դրանցից առավել զանգվածայինը 1837 թ. Ղուբայի նահանգի գյուղացիության ապստամբությունն էր: Այն ստիպեց ցարական իշխանություններին հանգամանալից քննության ենթարկել Այսրկովկասում ստեղծված իրավիճակը, այդ նպատակով 1837 թ. երկրամաս գործուղվեց պետական հատուկ հանձնաժողով՝ սենատոր Գանի գլխավորությամբ: Կատարելով մանրակրկիտ ուսումնասիրություն՝ հանձնաժողովը 1838 թ. փետրվարին կազմեց մի հանգամանալից զեկուցագիր և ներկայացրեց կառավարություն: 1840 թ. ապրիլի 10–ին այն վավերացվեց կայսեր կողմից և օրենքի ուժ ստացավ:

1836–1842 թթ. կիրառված հարկային նոր կոպարային կամ դրույքային համակարգին փոխարինելու եկավ դրամական տուրքի համակարգը, որը մեծ դժգոհություն առաջացրեց գյուղացիության շրջանում: Հարկային նոր համակարգով Արևելյան Այսրկովկասի բոլոր գյուղացիները ճանաչվեցին պետական գյուղացիներ՝ բաժանվելով երկու կարգի՝ պետական հողի վրա ապրող գյուղացիներ և մուլքադարական հողի վրա ապրող շինականներ: Տուրքերի վճարման գործում գյուղացիության վրա հաստատվեց համապարտ երաշխավորության սկզբունքը:

Հարկային ճնշման ուժեղացումն անտանելի ծանր վիճակ էր ստեղծում նաև գյուղացիության սակավահողության պատճառով:

Սակավահողության խնդիրն է՛լ ավելի էր բարդանում ցարիզմի վարած բնակչության վերաբնակեցման քաղաքականության հետևանքով: 1830–ական թթ. Ռուսաստանի ներքին գավառներից և Ուկրաինայից ցարիզմը Արևելյան Այսրկովկաս էր վերաբնակեցնում դուխոբորների, մոլոկանների և այլ աղանդավորների, որոնց համարում էր անբարեհույս տարրեր: Այդ ժամանակից սկսած՝ Շամախիի և Ելիզավետպոլի գավառներում ստեղծվեցին աղանդավորների բնակավայրեր: Դեռևս 1819 թ. Ելիզավետպոլի մոտ Վյուրտեմբերգից վերաբնակեցված գերմանացիները ստեղծել էին Ելենենդորֆ (ներկայիս՝ Խանլար), իսկ ապա Աննենֆելդ (ներկայիս՝ Շամքոր) բնակավայրերը:

Մասնավոր հողերի վրա բնակվող գյուղացիությունը տառապում էր ոչ միայն ցարական չինովնիկների կամայականությունների ու չարաշահումների, այլև կալվածատեր–բեկերի անլուր շահագործման և ապօրինությունների պատճառով: Գյուղացիների համար առանձնակի ծանր լուծ էին կոռային աշխատանքները բեկերի կալվածքներում: Բեկերը նույնիսկ միջամտում էին գյուղացիների անձնական կյանքին: Նրանց դաժանությունների, կամայականությունների և չարաշահումների վերաբերյալ ստանալով բազմաթիվ բողոքներ՝ ցարական իշխանությունները ոչ միայն ընթացք չէին տալիս դրանց, այլև պաշտպանում ու արդարացնում էին բեկերին, իսկ հաճախ նույնիսկ պատժում բողոքավորներին:

Բողոքի ձևերից մեկը փախուստն էր բեկերից: Ծայրահեղ քայքայման հասած գյուղացիները փախչում էին այլ նահանգներ կամ ապաստան գտնում անտառներում ու լեռներում: Սակայն փախստականներին բռնի վերադարձնում էին և դաժանորեն պատժում:

Այդ բոլորի հետևանքով տարբեր վայրերում բռնկեցին գյուղացիական հուզումներ ու ապստամբություններ, որոնցից ցարական իշխանությունների համար առանձնակի վտանգ էին ներկայացնում Զարո–Բելոքանյան ջամաաթում (1830 թ.), Թալիշում (1831 թ.), Ղուբայում (1837 թ.), Շաքիում (1838 թ.) և այլ վայրերում բռնկված ապստամբությունները, որոնք ճնշվեցին ցարական զորքերի կողմից:

Այդ ապստամբությունները նաև վկայում էին այն մասին, որ պարետային կառավարման համակարգը սպառել է իրեն: Այն այլևս չէր ծառայում Արևելյան Այսրկովկասում ցարիզմի քաղաքական դիրքերի ամրապնդմանը: Բարձրագույն ցարական աստիճանավորները հույս ունեին, որ նրա վերացումը կհանգստացնի տեղական բնակչությանը:

1840 թ. ապրիլի 10–ին ցարական կառավարությունն ընդունեց օրենք «Այսրկովկասյան երկրամասի կառավարման համար հաստատակարգ» անվամբ, որով Այսրկովկասում անցկացվեց վարչական բաժանում: Օրենքն ուժի մեջ մտավ 1841 թ. հունվարից: Երկրամասում վերացվում էր պարետային կառավարումը և արմատավորվում վարչական կառուցվածքի համառուսական ձևը: Այսրկովկասը բաժանվում էր Վրաց–Իմերեթական նահանգի՝ Թիֆլիս կենտրոնով, և Կասպիական մար-

զի («Մուսուլման պրովինցիա»), որի գլխավոր քաղաքը լինելու էր Շամախին: Վրաց–Իմերեթական նահանգի մաս էին կազմելու Երևանի, Նախիջևանի, Ալեքսանդրապոլի, Գանձակի (Գյանջայի, Ելիզավետպոլի) գավառները, իսկ Կասպիական մարզի կազմի մեջ Արևելյան Այսրկովկասի տարածքի մեծ մասը՝ Շամախիի, Շուշիի, Նուխիի, Լենքորանի, Բաքվի, Ղուբայի և Դերբենդի գավառները:

1840 թ. օրենքի վարչատարածքային բաժանման հիմքում ընկած էին դեռևս XIX դ. սկզբին Իրանում գոյություն ունեցած վարչամիավորումների՝ խանությունների տարածքային սահմանները: Օրինակ՝ Ելիզավետպոլի գավառն իր մեջ ներառում էր նախկին Գյանջայի իշխանության ողջ տարածքը և հարակից Շամշադինի ու Ղազախի տեղամասերը: Այսրկովկասի Գլխավոր վարչության որոշմամբ հիշյալ գավառները բաժանվելու էին ավելի փոքր վարչական միավորների՝ տեղամասերի, որոնց մեծ մասն իրենց աշխարհագրական դիրքով և սահմաններով դարձյալ համընկնում էին պարսկական նախկին մահալների սահմաններին:

Տեղամասերը ղեկավարվում էին այսպես կոչված ատենակալների կողմից: Այդ պաշտոնը նշանակովի էր: Ատենակալի իրավունքները և պարտականությունները որոշվում էր զեմստվոյի, այսինքն՝ տեղական ինքնավարության ոստիկանության կողմից: Տեղամասի ատենակալի պաշտոնն իր մեջ ներառում էր մի շարք գործառույթներ. նա ոստիկանական աստիճանավոր էր, հաշտարար միջնորդ, դատական քննիչ և հաշտարար դատավոր:

1840 թ. օրենքի կիրառմամբ տեղական կառավարումը Այսրկովկասում (և առհասարակ ողջ Կովկասում) դառնում էր եռաստիճան՝ տեղամասային, գավառային և նահանգային՝ դրանց համապատասխան պաշտոններով (տեղամասի ատենակալ, գավառապետ, նահանգապետ):

Հարկ է նշել, որ վարչական միավորները կազմելիս անտեսվում էին տվյալ վայրում ապրող ժողովուրդների պատմական հայրենիքի տարածքային սկզբունքները և բնակչության ազգային պատմաէթնիկական հատկանիշներն ու առանձնահատկությունները:

Վերացված կառավարման հին հիմնարկություններին գալիս էին փոխարինելու նորերը: Մահալային նայիբների պաշտոնները վերացվեցին: Մուսուլման չինովնիկները հեռացվում էին վարչական ապարատից և նրանց փոխարեն նշանակվում էին ռուս չինովնիկներ:

Իրականացվեց նաև վարչադատական բարեփոխում: Ստեղծվեցին նահանգային, մարզային և շրջանային դատարաններ, որոնք գործելու էին համառուսաստանյան օրենքների հիման վրա: Բացառություն էին կազմում ամուսնական և ապահարզանային գործերը, որոնք մնում էին հոգևորականության իրավասության ներքո: Հոգևոր դատարաններին լայն իրավունքներ շնորհելու միջոցով ցարական կառավարությունը ձգտում էր ամրապնդելու իր դաշինքը մուսուլման հոգևորականության հետ և նրա ազդեցությունն օգտագործել Կովկասում իր դիրքերի ամրապնդման համար:

1840 թ. վարչադատական ռեֆորմը նպաստեց երկրամասի ավատական տրոհվածության որոշակի հաղթահարմանը: Ռեֆորմն արագացրեց դրամական համակարգի ունիֆիկացումը, միասնական չափ ու կշռի արմատավորումը, մաքսային խոչընդոտների՝ ռահդարների վերացումը և այլն: Սակայն միևնույն ժամանակ այդ ռեֆորմն ուժեղացրեց ազգային–գաղութային ճնշումը տեղական բնակչության նկատմամբ: Կառավարման բոլոր մարմիններում և դատարաններում գործավարությունը սկսեց իրագործվել միայն ռուսերենով: Երկրամասի տեղական բնակչությունից ընտրված ծառայողները ամենուրեք փոխարինվեցին ռուս չինովնիկներով: Ավելացվեցին գյուղացիներից գանձվող հարկերն ու տուրքերը: Նոր վարչաստիկանական ապարատում հաճախ պաշտոններ էին ստանում նախկին պարետները և այն մարդիկ, որոնք աչքի էին ընկել բնակչության նկատմամբ գործած իրենց չարաշահումներով ու կամայականություններով:

1840–ական թթ. սկզբի բարեփոխումները առաջացրին ոչ միայն հասարակ ժողովրդի, այլև բեկերի և աղալարների դժգոհությունը, որոնք անհանգստացած էին, որ կզրկվեն թիուլային հողերից ու նրանցից ստացվող եկամուտներից: Ողջ Արևելյան Այսրկովկասում ծայր առան փոքր ու մեծ խռովություններ: Սկսվեցին զինված հարձակումներ ռուս չինովնիկների ու սպաների, վարչական հիմնարկությունների վրա և այլն: Արևելյան Այսրկովկասում ծայր առած այդ շարժումները մեծ վտանգ էին ներկայացնում ցարիզմի համար հատկապես այն պատճառով, որ նշված ժամանակաշրջանում նա լարված պայքար էր մղում Կովկասի լեռնականների դեմ:

Անհանգստացած ցարական կառավարությունը 1842 թ. շտապեց դադարեցնել աղալարներից հողերի հետգրավումը: Միաժամանակ որոշվեց լուրջ փոփոխություններ մտցնել 1840 թ. ռեֆորմի մեջ: Ձախողվեց նաև Պետերբուրգի մտահղացած ծրագիրը Արևելյան Այսրկովկասում ռուսական ազնվականության զանգվածային բնակեցման մասին, որը ծառայելու էր որպես ցարիզմի հուսալի սոցիալական հենարան:

Կովկասում իր դիրքերն ամրապնդելու նպատակով 1844 թ. ցարիզմը այնտեղ հիմնեց փոխարքայություն: Քաղաքացիական և ռազմական ամբողջ իշխանությունն այսուհետև կենտրոնացվելու էր փոխարքայի ձեռքում: Վերջինս անմիջականորեն ենթակա էր լինելու ցարին:

Կովկասում առաջին փոխարքա նշանակվեց 63–ամյա կոմս Մ. Ս. Վորոնցովը (1844–1854 թթ.), որն օգտվում էր Նիկոլայ Ա–ի անսահման վստահությունից: Հաշվի էր առնվել նաև նրա մեծ փորձը ռազմական, վարչական և դիվանագիտական ասպարեզում, ինչպես նաև այն, որ նա համոզված միապետական էր և ինքնակալության գաղութային քաղաքականության ջերմեռանդ կողմնակից:

1846 թ. դեկտեմբերի 14–ի որոշմամբ Վորոնցովը կատարեց Այսրկովկասի նոր վարչական բաժանում: Ողջ երկրամասը բաժանվեց չորս նահանգների՝ Թիֆլիսի, Քութայիսի, Շամախիի և Դերբենդի: Նահանգները բաժանվեցին գավառների, իսկ գավառները՝ տեղամասերի: Նահանգներից յուրաքանչյուրում գլխավոր ղեկավարությունը հանձնարարվում էր զինվորական նահանգապետերին՝ նրան տրամադ-

ռելով նաև քաղաքական մասի կառավարումը: Շամախիի նահանգը կազմավորվեց Կասպիական մարզի հետևյալ գավառներից՝ Շիրվանի (վերանվանվեց Շամախիի), Բաքվի, Թալիշի (վերանվանվեց Լենքորանի), Շաքիի (վերանվանվեց Նուխիի): Ցարական կառավարությունը նորաստեղծ Շամախիի նահանգին կցեց նաև Արցախի գավառը, որը ստացավ Շուշի անվանումը: Նահանգային կենտրոն ճանաչվեց հին Շամախին:

Ավելի ուշ՝ 1849 թ., կազմավորվեց նաև Երևանի նահանգը: Այդ վարչատարածքային կազմակերպությունը հաշվի չէր առնում բնակչության ազգային կազմը: Փոփոխություններ մտցվեցին նաև Այսրկովկասում պետական ունեցվածքի կառավարման բնագավառում: Միաժամանակ, նոր իշխանությունը ձգտում էր ամրապնդելու դաշինքը մուսուլման ավատատերերի հետ: 1846 թ. դեկտեմբերի 6–ին հրապարակվեց Նիկոլայ Ա–ի հրամանագիրը, որով ցարական կառավարությունը պաշտոնապես ճանաչում էր բեկերի, աղալարների ու մելիքների սեփականատիրական իրավունքները ոչ միայն մյուլքերի ու մյուլք խալիսեների, այլև թիուլների նկատմամբ: Այդ հողերի ավատատերերի իրավունքները երաշխավորվում էին ցարական օրենքներով: 1846 թ. հրամանագիրը հնարավորություններ էր ստեղծում հողային սեփականության կենտրոնացման համար ավատատերերի ձեռքում: Ցարիզմը որպես բեկերի ու աղալարների սեփականություն նրանց էր տրամադրում այն բոլոր հողերը, որոնք խանական տիրապետության շրջանում պատկանել էին նրանց: Միաժամանակ հստակեցվում էին գյուղացիների պարտավորությունները հողատերերի նկատմամբ: Այսպիսով՝ կայանում ու ամրապնդվում էր ցարիզմի դաշինքը բեկերի հետ: Վերջիններս սկսեցին անվերապահորեն պաշտպանել ինքնակալության քաղաքականությունը, հոգով ու սրտով ծառայել նրան և եռանդուն աջակցել ցարական իշխանություններին՝ երկրամասի անդորրը ապահովելու և գյուղացիական ելույթները ճնշելու համար:

Ցարական կառավարությունը որոշեց ունիֆիկացման ենթարկել նաև Արևելյան Այսրկովկասի հարկային համակարգը՝ առավելագույն չափով այն մոտեցնելով Ռուսաստանի կենտրոնական նահանգներում ընդունված համակարգին: Ըստ այնմ, 1851 թ. հոկտեմբերի 23–ին հաստատվեց նոր հարկային համակարգ: Ոչ միայն կանոնակարգվում էին հարկերն ու նրանց գանձման չափերը, այլև բնամթերային հարկից անցում էր կատարվում դրամական հարկի գանձմանը:

Սակայն հարկային այդ բարեփոխումը դույզն–ինչ չթեթևացրեց գյուղացիության վիճակը: Ընդհակառակը, այն է՛լ ավելի վատացավ, որովհետև նոր համակարգով գյուղացիները պետք է ավելի շատ մուծումներ կատարեին ցարական գանձարանին: Այդ հողի վրա կրկին ծայր առան հուզումներ ու խռովություններ:

XIX դ. 50–ական թթ. ողջ Արևելյան Այսրկովկասում տեղի էին ունենում բեկերի կողմից գանձարանին պատկանող հողերի զավթումներ: Իշխանությունները ոչ միայն արգելք չէին լինում դրան, այլև ընդհակառակը՝ խրախուսում էին այդ հողազավթումները և դրանց վերածումը մասնավոր սեփականության: Դրա հետևանքով աննախընթաց չափերով մեծացավ ու ընդլայնվեց խոշոր ավատատիրական հո-

ղային սեփականությունը ի հաշիվ պետական հողերի: Ցարական իշխանությունները մատների արանքով էին նայում առաջին հայացքից իրենց համար ոչ ձեռնտու այդ երևույթին: Սակայն միանգամայն ակներև էր, որ այդ քաղաքականությունը ևս կոչված էր Արևելյան Այսրկովկասում ցարական իշխանությունների համար ապահովելու կայուն սոցիալական հենարան:

1853–1856 թթ.՝ Ղրիմի կամ Արևելյան պատերազմի ժամանակ, Արևելյան Այսրկովկասում Ռուսաստանի համար ստեղծվեցին նոր խնդիրներ: Մասնավորապես պատերազմի նախօրյակին և տարիներին երկրամասում իրենց գործունեությունն ակտիվացրել էին Կովկասի լեռնականները՝ Շամիլի գլխավորությամբ: 1853 թ. օգոստոսին Շամիլը մի խոշոր ջոկատով մուտք գործեց Արևելյան Այսրկովկաս՝ ձգտելով երկրամասի բնակչությանը ապստամբության հանելու Ռուսաստանի դեմ: Պատերազմի տարիներին Թուրքիան ևս փորձեր էր անում նշված վայրերի մուսուլմաններին հրահրելու «անհավատների» դեմ ապստամբությունների ու խռովությունների: Սակայն այդ փորձերը շոշափելի արդյունքներ չտվեցին, որովհետև Արևելյան Այսրկովկասում ավատական վերնախավը, որին գոհացրել էին ռուսների կողմից իրենց հատկացված իրավունքներն ու արտոնությունները, չցանկացան տուրք տալ մուսուլման համերաշխությանը, Շամիլի և Թուրքիայի կոչերին և հանդես գալ ռուսական իշխանությունների դեմ:

Ցարական կառավարությունը Ղրիմի պատերազմից հետո Արևելյան Այսրկովկասում իր վարչական կառավարման համակարգը ճկուն և արդյունավետ դարձնելու նպատակով անընդհատ փոփոխություններ էր կատարում: Այսպես, օրինակ՝ Շամախիում 1859 թ. մայիսի 30–ին տեղի ունեցած աղետալի երկրաշարժի պատճառով, Կովկասի փոխարքա Ա. Բարյատինսկու առաջարկով, կենտրոնական նահանգական վարչությունը տեղափոխվեց Բաքու: 1859 թ. դեկտեմբերի 6–ին Ալեքսանդր Բ–ի հրամանագրում այդ մասին ասվում էր հետևյալը. «Այժմյան Շամախիի վարչությունը և այդտեղ գտնվող այս նահանգի բոլոր նահանգային հիմնարկները Շամախիից տեղափոխել Բաքու քաղաք: 2. Բաքուն բարձրացնել նահանգային քաղաքի աստիճանի: 3. Շամախի նահանգն այսուհետև կոչել Բաքվի նահանգ»: 1860 թ. Բաքվի նահանգի վարչատարածքային կազմում ձևավորվեց նաև Ղուբայի գավառը, իսկ երբեմնի Շիրվանի նահանգից կազմավորվեցին Գյոքչայի և Ջավատի գավառները:

Նահանգային կենտրոնը Բաքու տեղափոխելը կարևոր նշանակություն ունեցավ քաղաքի հետագա զարգացման համար: Հարկ է նշել, որ նահանգային կենտրոնական վարչությունը Բաքու տեղափոխելուց հետո մեծ թվով շամախահայեր հաստատվեցին Բաքվում՝ ստվարացնելով այդ քաղաքում հայ բնակչության թիվը: Դեպի Բաքու սկսված արտագաղթի հետևանքով 1861 թ. քաղաքում արդեն կար հայապատկան 689 տուն, իսկ 1862 թ.՝ 700 տուն:

1867 թ. դեկտեմբերի 9–ին ցարական իշխանությունները կատարեցին նոր վարչատարածքային բաժանում՝ հերթական անգամ վերաձևելով Այսրկովկասի վարչական քարտեզը: Ձևավորվեցին Բաքվի, Քութայիսի, Թիֆլիսի, Գանձակ–Ելիզավետ-

պոլի և Երևանի նահանգները: Գանձակ–Ելիզավետպոլի նահանգը կազմավորվում էր Բաքվի, Թիֆլիսի և Երևանի նահանգների տարածքների հաշվին: Վարչական այս նոր բաժանման արդյունքում Բաքվի նահանգի կազմից դուրս մնացին և նորաստեղծ Գանձակ–Ելիզավետպոլ նահանգին կցվեցին Շուշիի, Նուխիի (Շաքի) և Արեշի գավառները: Այսպիսով՝ վերջնականորեն ձևավորված Բաքվի նահանգն ընդգրկում էր Բաքվի, Գյոքչայի, Շամախիի, Ղուբայի, Ջավատի և Լենքորանի գավառները:

2. ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ: 1870 Թ. ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՌԵՖՈՐՄԸ: ԵՐԿՐԱՄԱՍՈՒՄ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1861 թ. փետրվարի 19–ին Ալեքսանդր Բ–ի (1855–1881 թթ.) հրապարակած կանոնադրությամբ (մանիֆեստ) վերացվեց ճորտատիրական իրավունքը Ռուսաստանում: Անհրաժեշտություն դարձավ նաև Այսրկովկասում գյուղացիական ռեֆորմ անցկացնելու հարցը: Այդ հողի վրա ամենուրեք տեղի էին ունենում գյուղացիական հուզումներ, խռովություններ, ապստամբություններ: Որպես բողոքի ձև լայն տարածում գտավ կալվածատիրական տնտեսությունների հրկիզումը, ավատատերերի և ցարական չինովնիկների սպանությունները, հրաժարումը հարկեր մուծելուց և այլն: Ցարական իշխանությունները գիտակցում էին, որ միայն հալածանքների ու հետապնդումների միջոցով հնարավոր չէ հաղթահարել գյուղացիական այդ բռնկումները: 1861 թ. մարտին Կովկասի փոխարքա Ա. Բարյատինսկուն արքունիքից տեղեկացնում են, որ կայսրն անհրաժեշտ է համարում գյուղացիական ռեֆորմն իրագործել նաև Այսրկովկասում: Դեռևս 1846 թ. հոկտեմբերի 13–ին հրապարակվել էր օրենք Վրաստանում ճորտատիրական իրավունքի վերացման մասին: Հայաստանում և Արևելյան Այսրկովկասում ռեֆորմն իրականացնելու համար Կովկասի փոխարքան հանձնարարել էր գյուղացիական գործերի Հարավկովկասյան կենտրոնական կոմիտեին 1847 թ. դեկտեմբերի 26–ի, այսպես կոչված, Աղալարական կանոնադրությունը վերանայել Թիֆլիսի և Քութայիսի նահանգներում արդեն ընդունված կանոնադրությունների ոգով: Կոմիտեն հանգել էր այն եզրակացության, որ աղալարները, իրենց դիրքն օգտագործելով, «հաճախ կամայականորեն էին տնօրինում գյուղացիական հողը, իսկ պարհակները երբեմն պահանջում էին մեծացրած չափերով»: Հիշյալ կոմիտեն տևական աշխատանքներից հետո մշակեց 1861 թ. ռեֆորմի պահանջներից ելնող նոր կանոնադրություն:

Արևելյան Այսրկովկասի կալվածատիրական գյուղացիության «ազատագրության» մասին գյուղացիական օրենքը սահմանված էր 1846, 1847, 1851 թթ. ցարական օրենսդրական ակտերի հիման վրա: Այդ օրենքը կամ կանոնադրությունը հրապարակվեց 1870 թ. մայիսի 14–ին: Կանոնադրության հոդվածները հիմնականում վերաբերում էին երեք հարցերի. գյուղացիների անձնական կախման վերացման, հողի և հարկերի մասին:

Կանոնադրությունը հռչակում էր, որ վերացվում է գյուղացիների անձնական կախումը հողատեր բեկերից: Այն հողի սեփականատեր էր ճանաչում կալվածատերերին, իսկ գյուղացիներին միայն իրավունք էր տալիս օգտվելու դրանից: Կանոնադրությունը գյուղացիների հողաբաժնի հասանելիք չափը սահմանեց 15 տարեկանից բարձր արական ամեն մի շնչին 5 դեսյատին՝ թողնելով նրանց տրամադրության տակ այն բոլոր հողամասերը (վարելահողերը, խոտհարքները, խաղողի և պտղատու այգիները, բանջարանոցները, տնատեղերը և այլն), որոնք կային մինչև 1870 թ.: Կանանց և երեխաներին հողաբաժին չէր հասնում:

Նոր կանոնադրությունը թույլատրում էր գյուղացիներին փրկագնել իրենց հողաբաժինը՝ 7 դեսյատինից ոչ պակաս և 15 դեսյատինից ոչ ավելի: Ստացվում էր, որ գյուղացիներն իրենց հողաբաժինները փրկագնելիս պետք է վճարեին նրանց արժեքից երեք–չորս անգամ ավելի:

Կանոնադրությամբ ամեն մի ծխի համար սահմանվում էր տուրքի վճարման անհատական կարգ: Իսկ հաշտարար միջնորդներին իրավունք էր տրվում տուրք չվճարողների կամ խուսափողների նկատմամբ հարկադրանք գործադրելու:

1870 թ. մայիսի 14–ի կանոնադրությունը գյուղացիներին իրավունք էր վերապահում իրենց հողաբաժինները հետ գնել կա՛մ ամբողջ համայնքով, կա՛մ անհատապես՝ ընտանիքներով: Սակայն պետությունը հողաբաժնի հետգնման դեպքում գյուղացիներին ոչ մի վարկ կամ նյութական աջակցություն չէր տալիս: Հենց այդ պատճառով հետագա 40 տարվա ընթացքում հողի հետգնման մի քանի դեպքեր են միայն հայտնի:

Կանոնադրությունը անտառներից, մարգագետիններից և ջրապաշարներից օգտվելու կարգ չէր սահմանում: Դա որոշվելու էր գյուղացիների և կալվածատեր–բեկերի միջև կնքվող հատուկ համաձայնագրերով:

Այսպիսով՝ փաստորեն ստացվում էր, որ գյուղացիներն «ազատագրվում» էին առանց հողի: Նրանց հողակտորները նախկինի պես մնում էին որպես կալվածատեր–բեկերի սեփականություն:

1870 թ. գյուղացիական ռեֆորմը Արևելյան Այսրկովկասում պահպանեց գոյություն ունեցող ավատատիրական հարաբերությունները: Այն նպաստեց մի կողմից՝ կալվածատիրական հողատիրության ընդարձակմանը, իսկ մյուս կողմից՝ գյուղացիության սակավահողության ու հողազրկության ուժեղացմանը: Ռեֆորմն, ըստ էության, պահպանեց գյուղացիների կալվածատիրական պարտավորությունները և դրանց գանձման ու կատարման համար գործադրվող արտատնտեսական հարկադրանքի գրեթե բոլոր ձևերը:

Այնուամենայնիվ, Այսրկովկասում իրականացված գյուղացիական ռեֆորմը ստեղծեց որոշակի պայմաններ երկրամասում կապիտալիստական հարաբերությունների զարգացման համար: Ռեֆորմը կալվածատիրական որոշ բնատուրքեր վերածեց դրամականի և այդպիսով նպաստեց ապրանքադրամական հարաբերությունների զարգացմանը: 1870 թ. մայիսի 14–ի կանոնադրությունը գյուղացիներին տվեց նաև քաղաքացիական որոշ իրավունքներ: Կանոնագրերը կնքելիս նրանք

կարող էին հանդես գալ իրենց անունից, հաշտարար դատավորը չէր կարող դրանք կնքել առանց նրանց համաձայնության:

1870–1872 թթ. ցարական կառավարությունը հրապարակեց մի շարք օրենքներ, որոնք չափազանց մեծ իրավունքներ ու արտոնություններ էին տրամադրում հոգևորականությանը: Արևելյան Այսրկովկասում կառավարությունը բարձրագույն հոգևոր պաշտոններում նշանակեց իրեն ցանկալի անձանց:

Այսրկովկասի մուսուլմանների կրոնական կյանքը ղեկավարելու համար 1872 թ. ստեղծվեցին Այսրկովկասյան երկու հոգևոր կրոնական վարչություններ, որոնք կոչված էին վարելու սուննի և շիա բնակչության գործերը: Այդ վարչությունները լինելու էին երկրամասի կայսերական վարչակազմի ենթակայության ներքո: Վարչությունների իրավասությունը տարածվում էր Թիֆլիսի, Բաքվի, Ելիզավետպոլի, Երևանի և Քութայիսի նահանգների, ինչպես նաև Կարսի, Բաթումի մարզերի և Սուխումի շրջանի վրա: Շիայական և սուննիական վարչությունները ղեկավարում էին հոգևոր–կրոնական առաջնորդներ շեյխ–ուլ–իսլամը և մուֆթին, որոնք փոխարքայի առաջարկությամբ նշանակվում էին ռուսական կայսեր կողմից: Նրանց նստավայրը Թիֆլիսն էր:

1894–1907 թթ. ընթացքում Այսրկովկասի շիաների առաջնորդ շեյխ–ուլ–իսլամը Մոլլա Աբդուլ Սալամ Ախունդ–զադեն էր, իսկ սուննիական վարչությունը գլխավորում էր մուֆթի Հուսեյին էֆենդին (1884–1917 թթ.):

Մուսուլման հոգևորականները պետության ուղղակի վերահսկողության ներքո էին և անվերապահորեն ենթարկվում էին պետության սահմանած կանոններին, որոնցում ամրագրված էին նրանց աստիճանները, արտոնություններն ու պարտականությունները: Կրոնական սպասավորների գործունեությունը վերահսկում էին աստվածաբան դատավոր դադիները: Նրանց իրավասության ներքո էին շարիաթական գործերը (ամուսնություն, ամուսնալուծություն, ժառանգության խնամակալության հարցեր և այլն): Ամենաբարձր կարգում նահանգների մեջլիսներն էին, որոնց անդամները բարձրաստիճան հոգևորականներն էին: Մեջլիսները վերահսկում էին թե՛ մզկիթների սպասավորներին, թե՛ դադիներին: Մուսուլման հոգևորականությանը շնորհված էր պետական կարգավիճակ: Նրանք ազատված էին տուրքերից և ստանում էին բարձր աշխատավարձ: Մուսուլման հոգևորականությունը պարտադիր պետք է հավատարմության երդում տար կայսրին:

Այսրկովկասի սուննի և շիա հոգևոր վարչությունների գործունեությունը վերահսկվում էր Կովկասի փոխարքայի կողմից:

1860–ական թթ. ցարական իշխանությունները իրականացրին նաև որոշ փոփոխություններ երկրամասի վարչական կառուցվածքի մեջ՝ կառավարման գործը ավելի արդյունավետ դարձնելու համար:

1867 թ. դեկտեմբերի 9–ին կատարվեց վարչական նոր բաժանում, ըստ որի՝ ձևավորվեցին Քութայիսի, Թիֆլիսի, Բաքվի, Երևանի և Ելիզավետպոլի նահանգները: Վերջինիս մեջ՝ Գանձակ կենտրոնով, ներառվեցին Արեշ, Ղազախ, Շուշի, Նուխի, Զանգեզուր, Ջեբրայիլ և Ջևանշիր գավառները:

Շամախիում տեղի ունեցած երկրաշարժի հետևանքով նահանգային կենտրոնը տեղափոխվեց Բաքու, իսկ նահանգը վերանվանվեց Բաքվի նահանգ: Բաքվի վերածումը նահանգային քաղաքի որոշակիորեն նպաստեց նրա հետագա զարգացմանը: 1860 թ. Դերբենդի նահանգը վերացվեց: Զարո–Բելոքանյան ռազմական շրջանը վերափոխվեց Զաքաթալայի շրջանի: 1868 թ. Բաքվի, Թիֆլիսի և մասամբ Երևանի նահանգների տարածքների հաշվին ստեղծվեց Ելիզավետպոլի նահանգը՝ Ելիզավետպոլ (Գանձակ) կենտրոնով: 1883 թ. Արևելյան Այսրկովկասում ստեղծվեցին երկու նոր գավառներ՝ Ջեբրայիլի և Ջևանշիրի:

Միաժամանակ ցարական կառավարությունը մի շարք միջոցառումներ ձեռնարկեց վարչատարածքային՝ երկրամասում իր վարչական–ոստիկանական ապարատն է՛լ ավելի ամրապնդելու համար: Ինչպես ցարական Ռուսաստանի բոլոր ծայրամասային ազգային շրջաններում, այնպես էլ Արևելյան Այսրկովկասում տեղական բնակչությունը զրկված էր երկրամասի կառավարմանը մասնակցելու իրավունքից: Միայն աննշան թվով տեղացիների էր հաջողվում թափանցել ցարական վարչության, ոստիկանական մարմինների մեջ:

Ոստիկանական–դատական և վարչական հիմնարկներում ծաղկում էին կաշառակերությունն ու կամայականությունը: Չինովնիկների չարաշահումների ու սանձարձակության վերաբերյալ բողոքները ոչ մի արդյունք չէին տալիս:

1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմի ժամանակ Կովկասը հեղեղված էր թուրքական գործակալներով՝ մոլլաներով, շեյխերով, դերվիշներով և այլն, որոնք վարում էին հակառուսական քարոզչություն՝ տեղական մուսուլման բնակչությանը հորդորելով դուրս գալ «սրբազան պատերազմի» («ջիհադ») «անհավատ–գյավուրների» դեմ: Պատերազմի թեժ պահին՝ 1877 թ. սեպտեմբերին, Ղուբային սահմանակից Դաղստանի շրջաններում բռնկեց խռովություն, որը հրահրված էր թուրքական գործակալության կողմից: Խռովարարները գրավեցին Ղուբայի գավառի հյուսիսարևմտյան մասը: Խռովությունները ծավալվեցին՝ ընդգրկելով նաև Նուխիի և Զաքաթալայի շրջանները: Միայն 1877 թ. նոյեմբերի սկզբներին ռուսական զորքերին հաջողվեց ճնշել թուրքամետ ուղղվածություն ունեցող այդ վտանգավոր խռովությունները:

XIX դ. երկրորդ կեսին Արևելյան Այսրկովկասի տնտեսական զարգացման հիմնական գծերից մեկը գյուղատնտեսության ապրանքային ճյուղերի, ինչպես նաև լեռնահանքային ու վերամշակող արդյունաբերության զարգացումն էր: Հետռեֆորմյան շրջանում նկատվում էր գյուղատնտեսական արտադրանքի աճ: Մեծանում էր արտադրվող մի շարք գյուղատնտեսական կուլտուրաների ապրանքայնությունը:

Գյուղատնտեսության մի շարք ճյուղերում արտադրությունը վերաճեց ապրանքային–կապիտալիստականի: Դա մասնավորապես նկատվում էր տորոնի արտադրության բնագավառում՝ Ղուբայի գավառում, խաղողագործության ու գինեգործության՝ Շամախիի գավառում և հատկապես հացահատիկային կուլտուրաների ար-

տադրության բնագավառում Մուղանում բնակվող՝ Ռուսաստանից եկած վերաբնակիչների կողմից:

Ներքին շուկայի ընդլայնման կապակցությամբ տեղի էր ունենում Արևելյան Այսրկովկասի գավառների մասնագիտացում գյուղատնտեսական արտադրանքի տարբեր տեսակների արտադրության բնագավառում: Կուր գետին հարող շրջանները մասնագիտանում էին բամբակի արտադրության մեջ: Մետաքսագործության կենտրոններ էին Նուխիի, Շամախիի և Շուշիի գավառները, այգեգործության՝ Ղուբայի գավառը և Զաքաթալայի շրջանը: Գյուղատնտեսական հումքի տեխնիկական վերամշակման ձեռնարկությունները տեղակայված էին գերազանցապես հումքի արտադրության շրջաններում: Գավառներում գյուղատնտեսության մասնագիտացումը ծնունդ էր տալիս նրանց միջև նոր տնտեսական կապերին:

Արևելյան Այսրկովկասում կապիտալիզմի զարգացման, նրա հեռավոր շրջանների ներգրավումը ապրանքադրամական հարաբերությունների մեջ ապահովելու, երկրամասի տնտեսական մեկուսացումն ու պարփակվածությունը վերացնելու գործում չափազանց կարևոր նշանակություն ունեցավ երկաթուղագծի կառուցումը (1883 թ.), որն, անցնելով մի շարք գավառներով, երկրամասը կապում էր Վրաստանի հետ, իսկ ապա (1900 թ.) նաև՝ Ռուսաստանի կենտրոնական նահանգների հետ: Ոչ պակաս կարևոր նշանակություն ունեցավ նաև Կասպից ծովում առևտրական ծովագնացության ընդլայնումը:

Կարևոր է նշել, որ Արևելյան Այսրկովկասի գյուղատնտեսության զարգացման գործում որոշակի դեր են խաղացել ռուս վերաբնակիչ գյուղացիները, որոնք իրենց հետ բերում էին նաև գյուղատնտեսության բնագավառի առաջավոր գիտելիքներ, աշխատանքային փորձ և նորագույն տեխնիկա: Մինչև Արևելյան Այսրկովկասի միացումը Ռուսաստանին կարտոֆիլը ծանոթ չէր այս վայրերում: Շնորհիվ ռուս աղանդավոր գյուղացիների՝ երկրամասում սկսեցին մշակել ոչ միայն կարտոֆիլ, այլև տարածում գտան լոլիկը, կաղամբը և ուրիշ կուլտուրաներ, որոնց հետ մինչ այդ ծանոթ չէին: Այգեգործները սկսեցին մշակել պտղատու ծառերի նոր տեսակներ: Արագորեն զարգանում էր նաև մեղվաբուծությունը: Ռուս վերաբնակիչների ազդեցությունը դրսևորվում էր ոչ միայն տնտեսության մեջ, այլև կենցաղում:

Հարկ է նշել, որ Արևելյան Այսրկովկասի հայ բնակչության դերը ևս չափազանց մեծ էր երկրամասի տնտեսական զարգացման բնագավառում: Հայերը Թիֆլիսից, Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի տարբեր քաղաքներից բերում էին ոչ միայն նորագույն գործիքներ ու տեխնիկական սարքավորումներ, գյուղատնտեսական մեքենաներ և այլն, այլև նորագույն գիտելիքներ: Ժամանակակիցները վկայում են, որ հայերի կողմից մշակված հողերը աչքի էին ընկնում բարձր բերքատվությամբ:

Արևելյան Այսրկովկասում գյուղատնտեսության բնագավառում նոր կապիտալիստական հարաբերությունները, աստիճանաբար քայքայելով ավատատիրական արտադրողական հարաբերությունների հիմքերը, ի վիճակի չեղան, սակայն, նշված ժամանակաշրջանում փոփոխության ենթարկել հասարակական արտադրության բնույթը, որը մնաց մինչկապիտալիստական: Այլ կերպ ասած՝ գյուղատնտեսության

մեջ կապիտալիստական տնտեսաձևի տեսակարար կշիռը դեռևս մեծ չէր: Երկրամասում ավելի մեծ չափերով, քան Ռուսաստանի կենտրոնական նահանգներում, պահպանվեց նաև մինչկապիտալիստական հողային հարկը՝ ռենտան: Կապիտալիստական հարաբերությունների զարգացումն արգելակվում էր նաև ցարիզմի ազգային ճնշման քաղաքականության հետևանքով:

Արևելյան Այսրկովկասը Ռուսաստանի այն ծայրամասային շրջաններից մեկն էր, որտեղ նոր ծնվող, դեռևս թույլ կապիտալիստական հարաբերությունները սերտորեն միահյուսված էին ավատատիրական հարաբերությունների և նահապետական մնացուկների հետ:

1870 թ. հողային «կանոնադրությունը» չբավարարեց գյուղացիական լայն զանգվածներին: Արևելյան Այսրկովկասում, ինչպես նաև կայսրության մյուս վայրերում գյուղացիները շարունակեցին պայքարը ռեֆորմի «այլանդակ բյուրոկրատական» բնույթի դեմ: Այդ շրջանում գյուղացիության պայքարի ձևերը բազմազան էին՝ հրաժարում հարկեր մուծելուց, կալվածատերերի հողերի բռնագրավում, նրանց կալվածքների հրկիզում, բեկերի սպանություն և այլն: Այդ բոլորի գլխավոր պատճառը, անտարակույս, հողային հարցն էր: Այդ մասին նույնիսկ խոստովանում էին ցարական բարձրաստիճան չինովնիկները:

Տարեցտարի ավելանում էր գյուղացիների ելույթների թիվը ցարական իշխանությունների և հողատեր բեկերի դեմ: Որպես կանոն՝ ցարական իշխանությունները փորձում էին այդ ելույթները ներկայացնել որպես սովորական «հանցագործություններ», «ավազակային գործողություններ» և այլն, սակայն Ռուսաստանի կառավարող վերնախավը գիտակցում էր, որ դա այդպես չէ:

Գյուղացիների բախումները բեկերի հետ ավելի ու ավելի հաճախ էին ավարտվում արյունահեղությամբ: 1878 թ. միայն Ղուբայի գավառում սպանվեցին 120 բեկեր և տիրապետող խավերի այլ ներկայացուցիչներ:

Քիչ չէին այն դեպքերը, երբ գյուղացիներն ամբողջ համայնքներով հրաժարվում էին վճարել հարկեր: Երբեմն գործը հասնում էր հարկահավաքների նկատմամբ բռնություններ գործադրելուն:

Հաճախ զինված գյուղացիները, կազմելով ոչ մեծ ջոկատներ, հարձակվում էին բեկերի ու ցարական չինովնիկների վրա՝ նրանցից բռնագրավելով իրենց ունեցվածքը և այն բաժանելով չքավորներին: Դա գյուղացիական ելույթների մի հատուկ ձև էր, որը լայնորեն տարածված էր Կովկասում: Ժողովուրդն այդ տիպի շարժումների մասնակիցներին անվանում էր «ղաչաղներ» («փախստականներ»): Ղաչաղների շարժումը լայնորեն տարածված էր ոչ միայն Արևելյան Այսրկովկասում, այլև Հայաստանում ու Վրաստանում:

Բնակչությունը պաշտպանում ու թաքցնում էր այն ղաչաղներին, որոնք պայքարում էին հանուն ժողովրդի ու նրա շահերի, ամեն տեսակի ցեցերի ու հարստահարողների դեմ: Հենց շնորհիվ ժողովրդի աջակցության՝ ղաչաղներից շատերը անորսալի էին և տասնյակ տարիներ պայքար էին մղում ցարական իշխանությունների և բեկերի դեմ:

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

ՆԱՎԹԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՈՒՌՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ: ՀԱՅԵՐԻ ԴԵՐԸ ՆԱՎԹԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1. ԲԱՔՈՒՆ՝ ՆԱՎԹԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆ ԿԵՆՏՐՈՆ

Հետռեֆորմյան ժամանակաշրջանում արագ զարգացող ռուսական կապիտալիզմն իր հորձանուտի մեջ ներքաշեց կայսրության ծայրամասերը: Կապիտալիզմը Կովկասը ևս ներգրավում էր համաշխարհային ապրանքաշրջանառության մեջ՝ ձգտելով նաև այդ հարուստ երկրամասի տնտեսությունն ի սպաս դնելու ռուսական զարգացող կապիտալի պահանջներին: Ռուսական կապիտալիզմը ձեռնամուխ եղավ լայնամասշտաբ գործողությունների, որոնց մեջ կարևորագույն տեղ էր հատկացվում ճանապարհների ու երկաթուղազծերի շինարարությանը:

1872 թ. շահագործման հանձնվեց Փոթի–Թիֆլիս երկաթուղին: 1883 թ. սկսեց գործել Թիֆլիս–Բաքու երկաթգիծը: Ճանապարհաշինության բուռն զարգացման շնորհիվ Այսրկովկասի արդյունաբերական ու հանքային հարստությունների գլխավոր կենտրոնները կապվեցին Կենտրոնական Ռուսաստանի հետ:

Այդ շրջանում Արևելյան Այսրկովկասը թույլ զարգացած երկրամաս էր: Տեղական բուրժուազիա համարյա գոյություն չուներ, ուստի առկա չէր նաև տեղական կապիտալ, որն ի վիճակի լիներ հիմնադրել արդյունաբերական ձեռնարկություններ: Նման պայմաններում երկրամասի արդյունաբերության այնպիսի կարևորագույն ճյուղեր, ինչպիսիք էին նավթարդյունաբերությունը և լեռնահանքային արդյունաբերությունը, որոնք ծնունդ էին առել Ռուսաստանում կապիտալիզմի զարգացման հետևանքով, հայտնվեցին հայկական, ինչպես նաև ռուսական ու արտասահմանյան կապիտալի ձեռքերում: Այդ ժամանակ Այսրկովկասի հայ դրամատերերից շատերը սկսեցին իրենց միջոցները առևտրական շրջանառության ոլորտից տեղափոխել արտադրության ոլորտ և ստեղծել զանազան գործարաններ ու ֆաբրիկաներ: Տեսնելով հանքային հանածոների արտադրության շահութաբերությունը՝ նրանք իրենց միջոցները ներդրեցին առավելապես լեռնային արդյունաբերության մեջ:

Արևելյան Հայաստանի տնտեսական հետամնացության, արդյունաբերական զարգացման ցածր մակարդակի, ավատատիրական հարաբերությունների մնա-

ցուկների առկայության, մեծ քաղաքների և երկաթուղային ճանապարհների բացակայության հետևանքով հայ բուրժուազիան կազմավորվեց նախ Այսրկովկասի արդյունաբերական գլխավոր կենտրոններում՝ Բաքվում և Թիֆլիսում:

Թեև Արևելյան Այսրկովկասի բնական ռեսուրսների թվում առաջին տեղը գրավում էր նավթը, սակայն տևական ժամանակ այն չուներ արդյունաբերական նշանակություն և Ռուսաստանում չուներ լայն սպառում: Թերևս դրանով կարելի է բացատրել նավթային գործում կապալային համակարգի տևական գոյությունը, որի շնորհիվ ցարական կառավարությունը ձգտում էր ձեռք բերելու հնարավորին չափ շատ եկամուտներ:

1850–ից մինչև 1872 թ. նավթահորերը և նրանցից նավթի շահագործումն անընդմեջ տրվում էին կապալով: 1825 թ. ցարական կառավարությունն իր ձեռքն էր վերցրել նավթահանքերի տնօրինման գործը: Սակայն չստանալով բավարար եկամուտներ՝ հաջորդ տարի նա հրաժարվեց իր այդ մենաշնորհից և նավթադաշտերը վարձակալության տվեց մուսուլմաններին, որոնք, 1826–1832 թթ. չնչին ծավալներով շահագործելով դրանք, ի վիճակի չեղան կառավարության համար ապահովելու քիչ թե շատ կայուն եկամուտներ: Ուստի կառավարությունը որոշեց կրկին տնօրինել նավթարդյունահանման գործը, սակայն կրկին անհաջող և, ի վերջո, 1850 թվականից լիովին հրաժարվեց նավթի արդյունահանումից՝ որոշելով անցնել կապալատվության:

Հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչներն առաջիններից էին, որ կանխազգացին Բաքվի նավթի նշանակությունը և սկսեցին զբաղվել հանույթով ու նավթի վերամշակմամբ:

1850–1854 թթ. խոշոր կապալառուներ դարձան թիֆլիսաբնակ վաճառականներ Կուկուջանյանը, Բաբանասյանը, Արշակ Տեր–Ղուկասովը (հետագայում՝ ռուսական բանակի գեներալ): 1863–1867 թթ. հայ կապալառուների թվին միացավ նաև Հովհաննես Միրզոյանը:

Աստիճանաբար կապալներով հարստացած հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչները անցում կատարեցին դեռևս սաղմնային վիճակում գտնվող նավթարդյունաբերության:

Առաջին նավթավերամշակման կամ նավթազտման գործարանը Բաքվում (Սուրախանիում) հիմնադրել է ռուս մանուֆակտուրիստ Կոկորևը (1857 թ.): Նրա օրինակին անմիջապես հետևել են հայերը. 1862 թ. կերոսինի գործարան է հիմնել Ա. Վերմիշյանը, 1863 թ.՝ Վ. Մելիքյանը, 1865 թ.՝ Թաթոսյանը, 1869 թ.՝ Տեր–Հակոբյանը, Շարաբանդյանը, 1870 թ.՝ Քալանթարյանը, 1871 թ.՝ Դիլդարյանը, Թառայանը: Հայկական կապիտալի ներկայացուցիչները, հիրավի, եղան Ապշերոնյան նավթի շահագործման պիոներները՝ փաստորեն հիմք դնելով նավթարդյունաբերությանը:

1872 թ. նոյեմբերին ռուսական կառավարությունը աճուրդի հանեց 460 դեսյատին ընդհանուր տարածքով 68 նավթաբեր տեղամաս: Մեփականատեր դարձան 12 ռուսներ և 11 հայ դրամատերեր (Հովհաննես Միրզոյան, Գ. Լիանոսյան, Բեժանյան,

Օնիկյան, Վերմիշյան, Ծուրինյան, Լալայան, Ղարաբեկյան, Տեր–Հակոբյան և Սարգսյան եղբայրները, ինչպես նաև «Սուչաստնիկ» անունով մեկ հայկական ընկերություն): Վերոհիշյալ աճուրդին մասնակցեցին միայն երկու կովկասյան թաթար՝ Սելիմխանովը և Հաջի Զեյնալ Աբդին Թաղիևը:

Անկասկած, նավթարդյունաբերության մասնավորեցումը սկիզբ դրեց նշված բնագավառում խոշոր ֆինանսական ներդրումների, նավթաբեր շրջանում բնակչության թվի կտրուկ աճի և Բաքվի բուռն զարգացմանը:

Այսպիսով՝ 1872 թ. հետո Ապշերոնյան թերակղզում հաջորդաբար շահագործման են հանձնվում նավթաբեր խոշոր հողատարածությունները: Անզուսպ մրցավազք է առաջանում ավելի շատ նավթ արդյունահանելու ու արտահանելու, խոշոր կապիտալներ կուտակելու համար: 1872 թ. 180 դեսյատին նավթագոտու փոխարեն 1900 թ. արդեն օգտագործվում էր 906 դեսյատին:

1872 թ. 26 հազար տոննայի դիմաց 1901 թ. արդյունահանվեց 11,4 միլիոն տոննա նավթ, որը կազմում էր այդ ժամանակ նավթի համաշխարհային հանույթի մոտ 50 տոկոսը: Նավթային այդ բումի պատճառներից մեկն էլ այն էր, որ XIX դ. 60–ական թթ. սկսած՝ նավթը սկսեց օգտագործվել որպես արդյունաբերական ձեռնարկությունների վառելիք: Այդ կապակցությամբ կտրուկ մեծացավ նաև նավթամթերքների պահանջարկը: Բուռն թափով սկսվեց նավթի արտադրության տեխնիկական ու տեխնոլոգիական գործընթացների կատարելագործումը:

1863 թ. Փիրալլահի կոչված կղզում կատարվեց նավթահորի հորատման փորձ, որը, սակայն, ավարտվեց անհաջողությամբ: Միրզոյանն առաջինն էր, որ 1869 թ. կատարեց հաջող հորատում: Սակայն երբ հորատող սարքը հասավ նավթային շերտին և ընդերքից լսվեց ուժգին ստորգետնյա դղրդյուն, վախեցած հորատող վարպետը հրամայեց նավթահորը լցնել քարով ու ավազով և փակել այն: Երկու տարի անց Բալախանիում կապալառու Տեր–Ղուկասովը հաջող հորատում կատարելուց հետո սկսեց արդյունահանել օրական 700 փութ նավթ:

Արդեն 1879 թ. միայն Միրզոյանների ընտանիքն ուներ 137 դեսյատին նավթաբեր հող: Հայերն առանձին և այլ ազգերի ընկերակիցների հետ միասին շահագործում էին 155 նավթահոր, ռուսներն ու եվրոպացիները՝ 79, իսկ մյուս ազգերի դրամատեր ձեռնարկատերերը՝ 61 հոր:

Իրար հետևից Բաքվում նավթային հարստությունների շահագործման կապիտալիստական հարաբերությունների շրջապտույտի մեջ են մտնում, բացի Միրզոյաններից ու Տեր–Ղուկասովներից, հայ մեծահարուստ–դրամատերերը՝ Ա. Հ. Մանթաշևը (Մանթաշյան), Գ. Ս. Լիանոզովը, Փիթոև եղբայրները, Գ. Տեր–Մարգարյանը, Մայիլովը, Մ. Արամյանցը, Թաղևոսյանը, Ավան–Յուզբաշևը, Դոլուխանովը, Զուբալովը, Այվազովը, Մելիք–Աղամիրովը և ուրիշներ: Մեծ է եղել նրանց դերը Ապշերոնյան թերակղզու նավթի արդյունահանման և վաճառքի կազմակերպման գործում: Հայ նավթարդյունաբերողներն են կառուցել Բաքու–Բաթում առաջին նավթամուղը: Նրանք ռուսահպատակ շվեդներ Նոբել եղբայրների, Ռոտշիլդի և նավ-

թային այլ մագնատների հետ միասին դառնում են միջազգային համբավ ունեցող նավթարդյունաբերողներ:

Նոբելի ընկերության հիմնական դրամագլուխը Բաքվում XX դ. սկզբին կազմում էր 15 միլիոն, իսկ Ռոտշիլդինը՝ 6 միլիոն ռուբլի: Նույն ժամանակաշրջանում Մանթաշովի հիմնական դրամագլուխն անցնում էր 22 միլիոնից, Միրզոյան եղբայրներինը՝ 3 միլիոնից, Եղիազարյանինը՝ 2 միլիոն ռուբլուց:

Բաքվի և նրա նահանգի առևտրական ձեռնարկությունների 25 տոկոսից ավելին նույնպես պատկանում էր հայերին: Բաքվի նավթի շնորհիվ հարստացած հայ բուրժուազիան իր կուտակած կապիտալներն օգտագործում էր ինչպես բուն Բաքու քաղաքի, այնպես էլ երկրամասի այլ քաղաքների զարգացման համար: Օրինակ՝ նրանց ներդրած միջոցներով Բաքվում կառուցվեցին զանազան ֆաբրիկաներ ու գործարաններ, խոշոր շենքեր և այլն:

Հայկական բուրժուազիան իր ձեռնարկատիրական գործունեությունը չէր սահմանափակում լոկ Բաքվի և Արևելյան Այսրկովկասի շրջանակներով, այլ տարածել էր ողջ Այսրկովկասի վրա: 1890 թ., օրինակ, Բաթումում նավթի արտահանությամբ զբաղվող 18 ձեռնարկություններից 5–ը պատկանում էր հայերին: Հայկական բուրժուազիան խոշոր մասշտաբների հասնող ձեռնարկատիրական գործունեություն էր ծավալել նաև Այսրկովկասի արդյունաբերական մյուս կարևոր կենտրոնում՝ Թիֆլիսում, որտեղ Ադելխանովը, Էնֆիաջյանցը, Թայիրյանը, Բոզարջյանը, Թամամշևը և շատ ուրիշներ արդյունաբերության ամենատարբեր բնագավառներում և շինարարության մեջ ներդրել էին խոշոր կապիտալներ:

Հայ խոշոր բուրժուազիայի ներկայացուցիչներ կային նաև Մոսկվայում, Պետերբուրգում, Դոնի Ռոստովում, Խարկովում, Աստրախանում և Ռուսաստանի այլ քաղաքներում:

Նավթամթերքների աճող պահանջարկը նպաստեց Բաքվի շրջակայքում նավթավերամշակման արդյունաբերության ստեղծմանը: 1859 թ. Սուրախանիում՝ կրակապաշտների հին տաճարի կողքին, ռուս դրամատերեր Կոկորևի և Գուբոնինի կողմից կառուցվում է կերոսին արտադրող առաջին գործարանը: Հետագայում նրա արդիականացմանն իր մասնակցությունն է բերում ռուս մեծ գիտնական–քիմիկոս Դ. Ի. Մենդելեևը: Այդ օրինակը եղավ վարակիչ: Իրար հետևից կերոսինի գործարաններ կառուցեցին Միրզոյանը, Ջավադ Մելիքովը, Տարաևը և ուրիշներ:

Մինչև 1864 թ. նավթի հանույթի գործում օգտագործվում էր Բալախանիի գյուղացիության հարկադրական աշխատանքը: 1864 թ. այն արգելվեց, որի հետևանքով նավթային ձեռնարկություններում հայտնվեցին ազատ վարձու բանվորներ, մի բան, որ վկայում էր նավթային արդյունաբերության մեջ սկսված կապիտալիստական հարաբերությունների արմատավորման մասին:

Առաջին տեխնիկական նորամուծությունների հետևանքով Բաքվում նավթի հանույթը կտրուկ աճեց: 1864 թ. այն հասավ 538,9 հազար փութի, իսկ 1869 թ.՝ 1685 հազար փութի:

Հետռեֆորմյան Ռուսաստանում արդյունաբերության վերելքը և նավթի պահանջարկի մեծացումը հրամայողաբար պահանջում էին վերացնել այն բոլոր արգելքները, որոնք խոչընդոտում էին նավթային տնտեսության զարգացմանը: Խոսքը վերաբերում է առաջին հերթին կապալային համակարգի վերացմանը: 1872 թ. փետրվարի 17–ին ռուսական կառավարության հրապարակած օրենքով նավթի շահագործման կապալային համակարգը վերացվեց: Նավթաբեր հողամասերը այսուհետև հատկացվելու էին մասնավոր անձանց հասարակական աճուրդի միջոցով՝ միաժամանակյա գումար մուծելու պայմանով: 1872 թ. դեկտեմբերի 31–ին տեղի ունեցավ նավթաբեր տեղամասերի առաջին աճուրդը, որի ժամանակ թեժ պայքար ծավալվեց նավթարդյունաբերողներ Միրզոյանի և Կոկորևի միջև: Աճուրդում հաղթող դուրս եկավ հայազգի դրամատեր–արդյունաբերողը: Առաջին աճուրդների ժամանակ նավթային տեղամասեր ձեռք բերեցին նաև ռուս արդյունաբերողները:

Նավթային արդյունաբերության նկատմամբ հետաքրքրությունը գնալով մեծանում էր: Տարեցտարի մեծանում էր այն ընկերությունների թիվը, որոնք զբաղվում էին նավթի արդյունահանմամբ: Եթե 1873 թ. Բաքվում կային 12 նման ընկերություններ, ապա 1899 թ. նրանց թիվը հասավ 61–ի:

Նավթային գործի նկատմամբ հետաքրքրության հարաճուն վերելքը և հսկայական եկամուտների հեռանկարները գնալով մեծացնում էին նավթաբեր հողերի արժեքը: Արդյունաբերությունն աճում էր, իսկ պետական նավթահողերի տեղամասերը չէին ավելանում: Այնժամ նավթային մագնատների շոշափուկները ձգվեցին դեպի հարևան գյուղերի գյուղացիների հողերը: 1882 թ. և 1890 թ. հատուկ կարգադրությամբ ցարական կառավարությունը թույլ տվեց, որ Ապշերոնի տասնմեկ գյուղերի հողատարածքներ հատկացվեն նավթի հանույթի համար:

Նավթարդյունաբերության լուրջ զարգացումը պահանջում էր առավել խոշոր կապիտալ ներդրումներ, մինչդեռ տեղական կապիտալի ներկայացուցիչները, որոնք նետվել էին նավթաբեր հողեր ձեռք բերելու մրցավազքի մեջ, իրենց տրամադրության տակ չունեին այդպիսի խոշոր միջոցներ: Ուստի ցարական կառավարությունը սկսեց ամեն կերպ խրախուսել օտարերկրյա կապիտալի ներգրավումը նավթարդյունաբերության մեջ: XIX դ. վերջին քառորդին տեղի էր ունենում ֆրանսիական, շվեդական, գերմանական և անգլիական կապիտալների ներթափանցում Բաքու: Օտարերկրյա կապիտալների հոսքը նպաստեց նավթի հանույթի և վերամշակման տեխնիկայի բարելավմանը, նավթամթերքների տեղափոխման միջոցների կատարելագործմանը և Բաքվում արդյունահանված նավթի դիրքերի ամրապնդմանը միջազգային շուկաներում:

Նավթահանքերի բացառիկ հարստությունը, աշխատող ձեռքերի էժանությունը, մշտապես կատարվող տեխնիկական կատարելագործումները նպաստում էին Բաքվում նավթի հանույթի արագ աճին: Հայկական կապիտալն այդ գործում հանդես էր գալիս առաջատար դիրքերում: «Եղբայրներ Միրզոևներ և Ընկ.» նավթային խոշոր ընկերությունն արտասահմանյան կապիտալի լուրջ մրցակից էր:

Բաքվի նավթը թափանցում էր Եվրոպայի և Ասիայի ամենահեռավոր անկյունները: Բաքուն վերածվեց Արևելյան Այսրկովկասի և առհասարակ ողջ Այսրկովկասի կարևորագույն արդյունաբերական և առևտրական կենտրոնի, որտեղ նավթահանույթի և նավթավերամշակման ձեռնարկությունների հետ միասին աճում էին նաև արդյունաբերության այլ ճյուղեր: Բնականաբար, դա իր անմիջական ներգործությունն էր ունենալու ողջ Արևելյան Այսրկովկասի տնտեսական զարգացման վրա, քանի որ Բաքուն կարիք ուներ մեծ քանակությամբ ցորենի, մսի և գյուղատնտեսական այլ մթերքների: Արդեն XIX դ. վերջին այդ քաղաքը Կասպից ծովի ավազանի երկրամասում երկաթուղային և ծովային հաղորդակցությունների հանգույցն էր, որը կլանում էր Արևելյան Այսրկովկասի արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրության զգալի մասը:

1883 թ. շահագործման հանձնվեց Թիֆլիս–Բաքու երկաթուղին, որը խոշոր իրադարձություն էր ողջ Այսրկովկասի կյանքում:

Դեռևս XIX դ. 40–ական թթ. Կասպից ծովում հայտնվեցին առաջին շոգենավերը: 1859 թ. Բաքվում սկսվեց խոշոր նավահանգստի շինարարություն: 1860–ական թթ. վերջերին ռուսական «Կավկազ ի Մերկուրի» ընկերությունը կազմակերպել էր նավային կանոնավոր չվերթներ Իրանի և Աստրախանի միջև՝ Բաքվի նավահանգիստը մուտք գործելու պարտադիր պայմանով: 1889 թ. Կասպից ծովում բեռնափոխադրումներ են կատարել նաև հայ դրամատերերին պատկանող առևտրական և նավթափոխադրող նավեր: 1912 թ. Բաքվում կար 66 նավատեր անհատ և ընկերություն, որոնցից 14–ը հայեր էին և ունեին 24 նավ:

Ծովային և երկաթուղային տրանսպորտի զարգացման, խճուղային և այլ ճանապարհներ անցկացնելու հետ միաժամանակ Արևելյան Այսրկովկասում ստեղծվում էին նաև կապի միջոցներ: 1868 թ. Թիֆլիսը հեռագրական կապով կապվեց Բաքվի, Նուխիի, Գանձակի և այլ քաղաքների հետ: 1879 թ. ավարտվեց Բաքու–Կրասնովոդսկ հեռագրական գծի կառուցումը, որն անցնում էր Կասպից ծովի հատակով: Հեռախոսային գծերով առաջին անգամ Բաքուն կապվել է այլ քաղաքների հետ 1886 թ.:

XIX դ. 90–ական թթ. տեղի էր ունենում նաև Բաքվի բնակչության բուռն աճ: Առհասարակ, բնակչության աճի տեմպերով Բաքուն առանձնանում էր ոչ միայն Ռուսաստանի քաղաքների շարքում, այլև ընդհանրապես համաշխարհային մասշտաբով: XIX դ. երկրորդ կեսին քաղաքը ուժգին թափով մեծանում ու ծավալվում էր: Նրանում ընթանում էր բուռն շինարարություն, կառուցվում էին ժամանակակից գեղեցիկ շենքեր: Սակայն ընդհանուր առմամբ, հատկապես ծայրամասերում, քաղաքի արտաքին տեսքը հրապուրիչ չէր: Կենտրոնում հարուստների տներն էին, բանկերը, արդյունաբերական ու առևտրական ընկերությունների գրասենյակները և այլն: Սակայն քաղաքի ծայրամասային շրջաններում ու գործարանային թաղամասերում խղճուկ խրճիթներ էին, որտեղ ապրում էին բանվորներն ու քաղաքային չքավորությունը: Այդ թաղամասերում փողոցները մեծ մասամբ սալահատակված չէին, և գոյություն չունեին կենցաղային նվազագույն պայմաններ:

Արևելյան Այսրկովկասի մի շարք քաղաքների բնակչությունը XIX դ. առաջին կեսի համեմատությամբ նկատելիորեն աճել էր: Բաքվից բացի՝ հարաբերականորեն արագ զարգանում էր նաև Ելիզավետպոլը (Գանձակ, Գյանջա), որին նպաստում էր այդ քաղաքի նահանգային կենտրոն լինելու հանգամանքը: XIX դ. 70–ական թթ. ինչպես Գանձակը, այնպես էլ առհասարակ Արևելյան Այսրկովկասի մյուս քաղաքները՝ Շամախին, Ղուբան, Նուխին, Զաքաթալան և այլն, ունեին ագրարային տեսք: Ավելի շուտ դրանք գյուղաքաղաքներ էին՝ ամբողջովին թաղված խաղողի և մրգատու այգիների մեջ: Քաղաքային բնակչության նշանակալից մասը արհեստների ու առևտրի հետ միասին զբաղվում էր նաև այգեգործությամբ, խաղողագործությամբ, գինեգործությամբ, անասնապահությամբ և այլն:

Հարավկովկասյան երկաթուղու կառուցումը նոր թափ հաղորդեց Ելիզավետպոլի զարգացմանը: Այնտեղ, ինչպես նաև առհասարակ Արևելյան Այսրկովկասի մյուս քաղաքներում բնակվում էր հոծ հայ բնակչություն: 1897 թ. նրա բնակչությունը կազմում էր 33 090 մարդ, Շուշիինը՝ 25 881, Նուխիինը՝ 24 734, Շամախիինը՝ 20 007, Ղուբայինը՝ 15 363, Սալյանիինը՝ 11 787:

XIX դ. 70–ական թթ. սկսած Արևելյան Այսրկովկասում գործում էր քաղաքային ինքնավարության համակարգը: Քաղաքներում գործում էին այսպես կոչված «քաղաքային դումաները», որոնց անդամները մեծ մասամբ հարուստներն էին ու կալվածատերերը: Քաղաքային հիմնարկներում ծաղկում էին չարաշահումներն ու կաշառակերությունը:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԸ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԲՈՎՈՒՄ: 1900–1903 ԹԹ. ՃԳՆԱԺԱՄԸ

1900–1903 թթ. համաշխարհային տնտեսությունն առաջին անգամ մխրճվել էր խոր ճգնաժամի մեջ: Ճգնաժամի ազդեցությունը Ռուսաստանում շատ ավելի մեծ էր, քան մյուս կապիտալիստական երկրներում: Նշված տարիների ընթացքում երկրում փակվեցին մինչև երեք հազար խոշոր ու մանր ձեռնարկություններ, կտրուկ կրճատվեց երկաթուղային շինարարությունը:

Ճգնաժամը ուժգին ցնցումներ առաջացրեց նաև Բաքվի նավթարդյունաբերության մեջ՝ որոշակի ազդեցություն գործելով նաև մի շարք այլ ճյուղերի վրա: Դեռևս 1900 թ. վերջին նկատվեց նավթի գերարտադրություն: Կտրուկ խզում առաջացավ արտադրվող նավթի և դրա շուկայական պահանջարկի միջև: Նավթի գները սկսեցին անկում ապրել գլխապտույտ արագությամբ: Բաքվի նավթային բորսայում սկսվեց խուճապ: Գործարքները համարյա դադարեցին, իսկ եթե նույնիսկ կատարվում էին, ապա չափազանց ցածր գներով:

Նման պայմաններում, երբ նավթամթերքների նկատմամբ պահանջարկը սրընթաց կրճատվում էր, իսկ Բաքվում առաջարկը՝ մեծանում, նավթահանքերում հանույթը շարունակում էր մեծանալ: Միայն 1901 թ. մարտի 1–ին կուտակվեց 163 միլիոն փութ նավթ, որը սպառում չէր գտնում: Այդ բոլորը ճնշում էր շուկայական գների վրա՝ դրանք կտրուկ նվազեցնելով և ստեղծելով անկայուն վիճակ: Խիստ կրճատվեց նաև նավթի արտահանումը արտասահմանյան երկրներ:

Ցարական կառավարությունը խիստ անհանգստացած էր արդյունաբերական ճգնաժամի պատճառով: Երբ Բաքվում նավթի գները սկսեցին կտրուկ անկում ապրել, կառավարությունն անհապաղ ընդառաջ գնաց նավթարդյունաբերողներին՝ 30 տոկոսով իջեցնելով նավթաբեր հողերի վարձակալման գինը: Բաքու, Բաթում, Պորտ–Պետրովսկ և Նովոռոսիյսկ ուղարկվեց ֆինանսների մինիստրության հատուկ հանձնարարությունների չինովնիկ Ս. Ի. Գուլիշամբարովը, որը նավթարդյունաբերողների ու գործարանատերերի հետ անցկացրեց խորհրդակցություններ՝ քննարկելով նավթամթերքների գների կտրուկ անկման, ինչպես նաև երկրից դրանց արտահանմանը խոչընդոտող պատճառները:

Չնայած այդ միջոցառումներին՝ նավթային արդյունաբերության մեջ սկսված ճգնաժամը շարունակում էր աճել: 1901 թ. նավթամթերքների գները նախորդ տարվա համեմատությամբ ընկան 48,3 տոկոսով:

Ճգնաժամը կործանարար ազդեցություն ունեցավ նավթարդյունաբերության բոլոր ճյուղերի վրա: Այն լրջորեն խաթարեց նաև նավթի հանույթով ու վերամշակմամբ զբաղվող ընկերությունների գործունեությունը: Դրանցից շատերը դադարեցրին իրենց գործունեությունը: Բազմաթիվ նավթավերամշակման գործարաններ ուղղակի կանգնեցին: Մեծ թվով մանր ու միջին գործարաններ, որոնց տերերն իրենց տրամադրության տակ չունեին ազատ կապիտալներ և նավթի խոշոր պահեստարաններ, կորցնում էին իրենց ձեռնարկությունները, որոնք անցնում էին ավելի խոշոր ձեռնարկատերերի ձեռքը:

Թեժ պայքար ծավալվեց նաև նավթի արտահանման բնագավառում: Այդ պայքարից հաղթող դուրս եկան խոշոր ընկերությունները («Նոբել եղբայրներ», «Մանթաշև և Ընկ.» և այլն), որոնք վաղուց ի վեր սերտ կապերի մեջ էին համաշխարհային շուկաների հետ և միաժամանակ վայելում էին կառավարական շրջանների հովանավորությունը: Ըստ էության, նրանք նավթի արտահանման մենաշնորհը համարյա ամբողջապես կենտրոնացրին իրենց ձեռքերում:

Հատկանշական է, որ նույնիսկ ցածր գների պայմաններում Բաքվի նավթարդյունաբերությունը, ամբողջությամբ վերցրած, շարունակում էր մնալ եկամտաբեր: «Նոբել եղբայրներ» ընկերությունն, օրինակ, 1902–1904 թթ. ընթացքում ստացավ 9,3 միլիոն ռուբլու մաքուր եկամուտ:

Ճգնաժամի տարիներին նավթամթերքների գների կտրուկ անկումը հանգեցրեց բազմաթիվ մանր ու միջին ձեռնարկատերերի սնանկացմանը:

1901 թ. Բաքվում գոյություն ունեցող 146 ընկերություններից հինգ ամենախոշորները (*Կասպյան նավթային ընկերությունը*, *Նոբել եղբայրներ*, *Ռոտշիլդ*, *Մանթաշև և Կասպյան ընկերություն*) իրենց ձեռքերում կենտրոնացրին ողջ նավթի հանույթի 42,5 տոկոսը՝ դառնալով մոնոպոլիստներ:

Կենտրոնացում էր տեղի ունենում նաև նավթավերամշակման արդյունաբերության բնագավառում, ինչպես նաև բանկային կապիտալի միահյուսում արդյունաբերականի հետ, որի հետևանքով այն վերածվում էր ֆինանսական կապիտալի: Վերջինս միահյուսվում էր նաև նավթարդյունաբերական կապիտալի հետ, որը հանգեցնում էր նավթային արտադրության մեջ ֆինանսական կապիտալի տիրապետությանը:

Դրամատների տերերը հաճախ իրենց ազդեցությանն էին ենթարկում նավթային ընկերությունները: Նավթարդյունաբերողներ Մանթաշևը, Նոբելը և Լիանոսյանը սերտորեն կապված էին ռուսական և արտասահմանյան բանկերի հետ: Միաժամանակ չափազանց սերտ էին նրանց կապերը ինչպես Ռուսաստանի ֆինանսական–տնտեսական բուրժուազիայի, այնպես էլ ցարական բարձրագույն բյուրոկրատիայի հետ: Շատ հաճախ նավթարդյունաբերության մեջ ակտիվ մասնակցություն էին ցուցաբերում ցարական բարձր աստիճանավորները: Կովկասի փոխարքա կոմս Վորոնցով–Դաշկովը, օրինակ, Բալախանիում ուներ իր նավթահորերը: Առհասարակ, ցարական աստիճանավորների շահերը սերտորեն միահյուսված էին նավթային արքաների շահերի հետ:

Չնայած այն հանգամանքին, որ ստեղծվել էր հարաբերականորեն անբարենպաստ վիճակ տնտեսական կյանքի զարգացման բնագավառում, սակայն XX դ. սկզբին շարունակվում էր օտարերկրյա կապիտալի հոսքը Բաքու, որտեղ նրա դիրքերը չափազանց ուժեղ էին:

Ճգնաժամային երևույթներն իրենց զգացնել էին տալիս նաև արդյունաբերության մյուս ճյուղերում, որտեղ նկատվում էր արտադրության կտրուկ անկում: Սակայն ճգնաժամը չշոշափեց Արևելյան Այսրկովկասի արդյունաբերության այնպիսի ճյուղերը, ինչպիսիք էին մետաքսե գործվածքների արտադրությունը, գինեգործությունը, ծխախոտի արտադրությունը: Իրենց արտադրական հզորությամբ և արտադրանքի ծավալով Արևելյան Այսրկովկասի ծխախոտի արտադրության մեջ առաջին տեղը զբաղեցնում էին Միրզաբեկյանց եղբայրների և Տեր–Գրիգորևների ծխախոտի ֆաբրիկաները Բաքվում:

Ճգնաժամի տարիներին որոշակի փոփոխություններ տեղի ունեցան նաև Արևելյան Այսրկովկասի գյուղատնտեսության բնագավառում: 1900 թ. մայիսի 1–ին ցարական կառավարությունը օրենք հրապարակեց «Այսրկովկասի պետական հողերում բնակվող գյուղացիների հողաշինարարության գլխավոր հիմունքների մասին»: Այդ օրենքի համաձայն՝ հողերի բաշխման նախկին վիճակն առանձին գյուղերի, համայնքների ու ավանների միջև մնում էր անփոփոխ, իսկ գյուղացիներին առաջարկվում էր տիրել իրենց հողաբաժնին՝ առաջվա նման մշտապես օգտվելու իրավունքով: Օրենքը թույլ էր տալիս շինականներին հողի համայնական օգտագործումը փոխարինել ծխականով, եթե այդ որոշման օգտին քվեարկի գյուղի բնակչության 2/3–ը: Գյուղացիներն իրենց հողաբաժնից օգտվելու համար պարտավոր էին պետությանը վճարել հողահարկ կամ բահրա: Պետական հողերը ենթակա չէին վերաբաժանման առանձին գյուղերի և համայնքների միջև, իսկ հողաբաժինները չէին կարող լինել վաճառքի կամ գրավ դնելու առարկա: Գյուղացիների հողաբաժնի մեջ մտցվում էին ոչ միայն պիտանի, այլև անբերրի, անպետք հողերը: Նպատակահարմարության դեպքում օրենքը կարելի էր տարածել նաև երկրամասի քոչվորների վրա:

Այսպիսով՝ ցարական կառավարության հողային նոր օրենքը փաստորեն փոփոխություն չէր մտցնում Այսրկովկասի, այդ թվում նաև Արևելյան Այսրկովկասի գյուղում: Այն իրավապես ձևակերպում էր հողատիրության և հողօգտագործման փաստացի վիճակը, ամրապնդում պետության իրավունքները երկրամասի հողերի մեծ մասի նկատմամբ, պահպանում պետական ավատական հողատիրությունը, հնարավորություն ստեղծում ցարիզմի գաղութային քաղաքականության իրագործման համար, չէր կարգավորում գյուղերի միջև եղած վեճերն ու անհավասարությունները, չէր վերացնում նրանց սակավահողությունը և գյուղացիներին առաջվա նման կարիքի մեջ էր թողնում:

1900 թ. մայիսի 1–ի օրենքի հրապարակումից անմիջապես հետո ցարական կառավարությունը ձեռնամուխ եղավ ռուս գյուղացիներին Այսրկովկասում վերաբնակեցնելու գործին: Իշխանությունները երկրագործության ու պետական ունեցվածք-

ների մինիստրության հարավկովկասյան լիազորին առընթեր ստեղծեցին բաժիններ՝ դրանց հանձնարարելով եկվորներին հողատարածքներ առանձնացնել: Կովկասյան իշխանությունները միայն 1900 թ. ընթացքում ռուս վերաբնակիչների համար առանձնացրին 258 հազար դեսյատին պիտանի հող: Ծրագրված էր նաև Արևելյան Այսրկովկասում ոռոգել Մուղանի տափաստանը՝ այնտեղ ռուս վերաբնակիչներ տեղավորելու համար:

Ռուս վերաբնակիչներն իրենց հետ Արևելյան Այսրկովկաս էին բերում գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ, որը դրական ազդեցություն էր թողնում երկրամասի գյուղատնտեսության զարգացման համար, քանի որ այնտեղ ապրող գյուղական բնակչության աղքատության ու հետամնացության պատճառով գյուղատնտեսական մեքենաների օգտագործումը ծայրահեղ անմխիթար վիճակում էր: Գյուղացիները ծանոթ չէին նաև հողի մշակման նորագույն եղանակներին:

Ընդհանուր առմամբ, գյուղատնտեսական արտադրությունը ծայրահեղ հետամնացության վիճակում էր: XX դ. սկզբին գյուղատնտեսությունը, ինչպես և նախկինում, հաճախ տուժում էր տարերային աղետների, երաշտի, ոռոգման ջրի անբավարար լինելու, գետերի հեղեղումների, գյուղատնտեսական վնասատուների և այլ պատճառներով: Զարգացման բարձր մակարդակ չուներ նաև անասնապահությունը, թեև Արևելյան Այսրկովկասում էին ամենախոշոր անասնապահական շրջանները: Կենդանիների համաճարակների դեմ պայքարը ցածր մակարդակի վրա էր, ուստիև հաճախ տեղի էին ունենում կենդանիների զանգվածային անկումներ: Անասնապահների հիմնական մասը քոչվորներ էին: Անասունների ցեղատեսակները ևս քիչ արտադրողական էին: Անասունների բուծման և նրանց կաթնատվության բարձրացման գծով ավելի արդյունավետ և կատարյալ մեթոդներ էին օգտագործում գերմանացի վերաբնակիչները. նրանց անասուններն ավելի խոշոր էին, և կաթնատվությունը՝ ավելի բարձր, ուստի նրանց գաղութներում խիստ զարգացած էր անասնապահական մթերքների արտադրությունը:

Անասունները, միսը, կաշին և բուրդը լայն առևտրի ապրանքներ էին: Արևելյան Այսրկովկասում արտադրված բրդի վաճառքի գլխավոր կենտրոններն էին Թիֆլիսը, Բաքուն և Բաթումը: Տարեկան մոտ 300 հազար փութ բուրդ էր արտահանվում Բաթում՝ այնտեղից արտասահման կամ Ռուսաստանի տեքստիլ արդյունաբերության կենտրոններ ուղարկվելու համար:

Ցածր էր նաև հողերի բերքատվությունը: Գյուղատնտեսական արտադրանքի ծավալը չէր համապատասխանում երկրի աճող պահանջներին և ամբողջությամբ վերցրած՝ բնակչության աճի տեմպերին: Առհասարակ, XX դ. սկզբին ևս Արևելյան Այսրկովկասը շարունակում էր սոցիալ–տնտեսական առումով մնալ հետամնաց, հողագործական երկիր:

Արդյունաբերական ճգնաժամը չափազանց ծանր անդրադարձներ ունեցավ Արևելյան Այսրկովկասի թե՛ քաղաքային և թե՛ գյուղական բնակչության վրա: 1901–1903 թթ. ընթացքում փողոց շպրտվեց Բաքվի բանվորների մոտ 30 տոկոսը: Գործազրկությունն իր հետ բերում էր բանվորների աշխատավարձի կտրուկ նվա-

զում: Դրությունն է՛լ ավելի էր ծանրանում այն պատճառով, որ անընդհատ հոսքով Ռուսաստանից քայքայված գյուղացիներ և անգործ մարդիկ էին հորդում Բաքու: Մի պահ տեղական իշխանությունները ստիպված էին հազարավոր գործազուրկների արտաքսել քաղաքից:

Գործազրկությունն աճում էր նաև Արևելյան Այսրկովկասի մյուս քաղաքներում: Դա ձեռնարկատերերին հնարավորություն էր տալիս ուժեղացնելու շահագործումը, իջեցնելու աշխատավարձը, բարձրացնելու աշխատանքի ինտենսիվությունը, վատթարացնելու աշխատանքային պայմանները: Ճգնաժամի տարիներին հաճախակի դարձան բանվորների անօրինական տուգանումները, ավելի վատթարացան նրանց կենցաղային պայմանները: Սովորական երևույթ էր ինչ–ինչ զանցանքների համար բանվորներին ծեծի ենթարկելը: Կենսամակարդակի ընդհանուր անկումը հանգեցնում էր բանվորների մահացության բարձրացմանը կամ, լավագույն դեպքում, երիտասարդ տարիքում աշխատունակության կորստին ու վաղ ծերացմանը:

Այդ բոլորի հետևանքով երկրամասում և հատկապես Բաքվում ծայր են առնում հեղափոխական խմորումներ: Սկսվում են բանվորական գործադուլներ: 1902 թ. ապրիլին Բաքվում տեղի ունեցավ զանգվածային քաղաքական ցույց: Ցարական իշխանություններին մեծ դժվարությամբ հաջողվեց ցրել այդ ցույցը: Սկսվեցին հալածանքներն ու ձերբակալությունները:

Արևելյան Այսրկովկասում հեղափոխական շարժումը լայն թափ ընդունեց 1903 թ.: Բաքվում տեղի էին ունենում հսկայական ցույցեր և համընդհանուր գործադուլներ: 1903 թ. մարտի 2–ին Բաքվում տեղի ունեցավ զանգվածային քաղաքական ցույց, որի ընթացքում ցուցարարների և ոստիկանության ու կազակների միջև ընդհարման ժամանակ եղան մեծ թվով զոհեր ու վիրավորներ: Ցուցարարներն առաջ էին քաշում քաղաքական պահանջներ: Հուլիսի 19–ին հայտարարվեց համընդհանուր գործադուլ, որը, սակայն, որևէ շոշափելի հաջողություն չարձանագրեց: Ոստիկանությանը և զորքերին հաջողվեց մեծ դժվարությամբ ճզմել այն: Մուսուլման բանվորները համեմատաբար պասիվ մասնակցություն էին ցուցաբերում այդ շարժումներին:

Բաքվի հուլիսյան համընդհանուր գործադուլն իր անմիջական արձագանքներն ունեցավ ողջ Կովկասում: Նրա ազդեցության ներքո Ռուսաստանի հարավի բազմաթիվ քաղաքներում՝ Օդեսայում, Կիևում, Եկատերինոսլավում, Նիկոլաևում, Նովոռոսիյսկում, Կերչում և այլն նույնպես սկսվեցին գործադուլներ և ցույցեր: Շարժումը տարածվեց նաև Արևելյան Այսրկովկասի գյուղացիության շրջանում: Գյուղական շրջաններում ավելի հաճախակի դարձան գյուղացիների կողմից կալվածատիրական հողերի բռնագրավումները, հրաժարումը հարկեր ու տուրքեր վճարելուց, զինված ելույթները բեկերի և ցարական իշխանությունների դեմ: Հաճախ այդ ելույթները վերածվում էին արյունոտ ընդհարումների:

Գյուղացիական զայրույթի ուժեղ պոռթկում առաջ բերեց իշխանությունների պահանջը, որպեսզի բնակիչները համապատասխան փաստաթղթեր ներկայացնեն իրենց հողերի սեփականատիրական իրավունքի մասին: Եվ քանի որ նման փաս-

տաթղթեր ոչ ոք չուներ, գյուղացիները, որպես պատասխան, սկսեցին դրսևորել անհնազանդություն՝ տարերային ձևով դուրս գալով ցարական չինովնիկների դեմ: 1903 թ. ուժեղացավ նաև դաչաղների շարժումը: Սակայն որպես կանոն՝ այդ շարժումները կարճ ժամանակամիջոցի ընթացքում մեծագույն դաժանությամբ ճնշվում էին ցարական իշխանությունների կողմից, քանի որ դրանք ունեին անկազմակերպ ու հախուռն բնույթ, ցրված էին և կտրված հարևան շրջաններից:

Մուսուլման մտավորականության վերաբերմունքը ևս նման հեղափոխական բնույթի շարժումների նկատմամբ խիստ կրավորական էր: Այդ փոքրաթիվ և հասարակության վրա չնչին ազդեցություն ունեցող մտավորականությունն իրեն հեռու էր պահում հակապետական ամեն տեսակի շարժումներից:

1904–1905 թթ. ռուս–ճապոնական պատերազմում Ռուսաստանի կրած պարտությունն ավելի սրեց հեղափոխական իրադրությունը: Քանի որ ժողովրդական զանգվածների շրջանում այդ պատերազմը ժողովրդականություն չէր վայելում, ցարական կառավարությունը կազմակերպում էր այսպես կոչված «հայրենասիրական ցույցեր»: 1904 թ. այդպիսի ցույցեր կազմակերպվեցին նաև Բաքվում: 1904 թ. փետրվարի 9–ին նմանատիպ ցույց կազմակերպվեց Նուխիում: Միաժամանակ կառավարության հանձնարարությամբ տեղական իշխանությունները ֆաբրիկաներում և գործարաններում կազմակերպում էին հանգանակություններ պատերազմական կարիքների համար, ընդ որում՝ նրանք, ովքեր հրաժարվում էին դրանց մասնակցելուց, անմիջապես հեռացվում էին աշխատանքից: Քրիստոնեական եկեղեցիներում և մուսուլման մզկիթներում կազմակերպվում էին աղոթքներ, որոնց մասնակիցները թախանձում էին «աստծո օգնությունը ռուսական զենքին հաջողություն բերելու գործում»:

Այսրկովկասի մուսուլմանների ղեկավար շեյխ–ուլ–իսլամ Աբդուլ–սալամ Ախունդ–զադեն հրապարակեց ռուս–ճապոնական պատերազմի կապակցությամբ հատուկ կոչ՝ ուղղված մուսուլման հավատացյալներին: Նրանում արտահայտվում էին ռուսական ցարի նկատմամբ հավատարիմ հպատակության զգացումներ և մուսուլմանների կողմից պատրաստակամություն՝ մասնակցություն բերելու պատերազմին՝ ընդդեմ «ուխտադրուժ ճապոնացիների»:

Ցանկանալով իսլամադավան բնակչությանը հեռու պահել հեղափոխության ալիքից՝ մոլլաները հորդորում էին. «Մուսուլմաննե՛ր, շուրջը խռովություն է, այդ խռովությանը մասնակցելը հանցանք է իսլամի դեմ»: Հեղափոխության ընթացքում Այսրկովկասի շիա և սուննի մուսուլմանների առաջնորդները միավորվեցին՝ իրենց հավատակիցներին կոչ անելով վերջ տալ թշնամանքին և հարթել դավանաբանական պառակտումը:

Արևելյան Այսրկովկասի բուրժուազիան խոշոր գումարներ էր հատկացնում հոգուտ պատերազմական ֆոնդի:

Պատերազմի հետևանքով ստեղծված իրադրությունը խոշոր եկամուտներ էր բերում Բաքվի նավթարդյունաբերության արքաներին: Այսպես, օրինակ՝ *Նոբել եղբայրներ* նավթարդյունաբերական ընկերության եկամուտները 1904 թ. կազմեցին

4 միլիոն ռուբլուց ավելի, նավթարդյունաբերական և առևտրաբաժնետիրական ընկերության մաքուր եկամուտն այդ նույն տարում կազմեց 1,5 միլիոն ռուբլի:

Ռուս–ճապոնական պատերազմի հետևանքով ողջ ժողովրդական տնտեսությունը հայտնվեց ծանր վիճակում: Հազարավոր բանվորներ հայտնվեցին փողոցում: Աճում էր թանկությունը, բանվորների իրական աշխատավարձը նվազեց 25 տոկոսով:

Այսպիսով՝ Ճապոնիայի հետ պատերազմը սրեց Ռուսաստանում հասարակական կյանքի բոլոր հակասությունները և արագացրեց հեղափոխությունը: Երկրում հասունանում էր խոր հեղափոխական ճգնաժամ, մոտենում էին նոր հեղափոխական փոթորիկների ահեղ ամպերը, որոնք շուտով մինչև հիմքերը ցնցեցին կայսրությունը:

1905 թ. Ռուսաստանում սկսված հեղափոխության ալիքը հասավ նաև Այսրկովկաս: Հեղափոխական շարժումները սկսեցին վերելք ապրել նաև Արևելյան Այսրկովկասում: Բաքուն դարձյալ ընթանում էր հեղափոխական շարժման առաջին շարքերում: Քաղաքի մի շարք արդյունաբերական ձեռնարկություններում սկսվեց գործադուլային պայքար: Թեև Բաքվի նահանգապետը պահանջեց անհապաղ դադարեցնել գործադուլը՝ բանվորներին սպառնալով ազատել աշխատանքից և արտաքսել Բաքվից, սակայն գործադուլը շարունակվում էր չթուլացող թափով: Գործադուլային շարժումը տարածվեց նաև երկրամասի մյուս քաղաքներում:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՅ–ԹԱԹԱՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ԲԱՔՎՈՒՄ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Ինչպես նշվել է վերևում, Այսրկովկասում և հատկապես նրա արդյունաբերական ամենախոշոր կենտրոնում՝ Բաքվում, դեռևս XIX դ. երկրորդ կեսից նկատվում էին հակասություններ հայ և թուրքալեզու մուսուլման կամ, ինչպես Ռուսաստանում էին նրանց անվանում, «թաթարական» բուրժուազիայի միջև: «Այդ նախանձոտ ատելութիւնը դէպի հայ տարրը՝ ամենէն ուժով կը շեշտուէր Բագուի մէջ: Բագուն՝ ռուսական և համաշխարհային նաւթարդիւնաբերութեան խոշորագոյն կենտրոններէն մին, կենտրոնն էր միանգամայն անդրկովկասեան թաթարներու, ոստանն էր անոնց նորաբողբոջ մշակոյթի, գրականութեան և հրապարակագրութեան: Բագուի մէջ էր կենտրոնացած թաթարական ընտրանին, այնտեղ էր ոչ միայն թուրք բուրժուազիան, հանքատէրերու դասակարգը իր վիթխարի հարստութիւններով, այնտեղ էր թաթար ազդեցիկ կղերը, մոլեռանդ և հայատեաց, որ իր կարգախօսները կ'ընդունէր հեռաւոր Կ–Պոլիսէն. այնտեղ էր համիսլամական շունչով վարակուած թուրք մտաւորականութիւնը»,— գրում էր Միքայել Վարանդյանը:

Այդ ամբողջ զանգվածը, որ իր ձեռքում էր պահում ողջ հարավկովկասյան թրքության ղեկը, վաղուց ձգտում էր հայությանը դուրս մղելու ոչ միայն Ապշերոնյան թերակղզուց, այլև ողջ Արևելյան Այսրկովկասից: Թուրք–թաթարական բուրժուազիան, որը մրցակցային տնտեսական պայքարում անզոր էր դուրս մղելու լավ կազմակերպված, խոշոր կապիտալների տեր, ձեռներեց ու ճկուն հայկական բուրժուազիային, հարմար պահի էր սպասում իր այդ նպատակը քաղաքական ճանապարհով լուծելու համար: Այդ հարմար պահը կարծես թե եկել էր. հեղափոխության հետևանքով ստեղծված քաոսն ու անկայունությունը ստեղծում էր հիանալի պայմաններ՝ մեկ հարվածով լուծելու իր համար կենսական նշանակություն ունեցող խնդիրը:

Մուսուլման մամուլում, մզկիթներում և այլն սկսվեց կատաղի հակահայկական քարոզչություն, որն ըմբռնումով էր ընկալվում մեծ մասամբ անգրագետ, կրոնամոլ ու հետամնաց մուսուլման զանգվածի կողմից: Մոլի պանթյուրքիստների և պանիսլամիստների ձեռքում հայատյացությունը բորբոքելու ազդու լծակներից մեկն էլ այն էր, որ նրանք ներշնչում էին մուսուլման–թյուրք զանգվածին, որ Օսմանյան կայսրությունում տասնյակ տարիներ ի վեր հայերը պայքար էին մղում իրենց ցեղակից թուրքերի ու նրանց կառավարության դեմ՝ ձգտելով Եվրոպայի օգնությամբ ստեղծել ազատ ու անկախ Հայաստան:

Համառուսական հեղափոխության այդ օրերին թյուրք–թաթարական վերնախավը անվերապահորեն ու հստակ բռնեց ցարական կառավարության կողմը: Նրանց հաշվարկը կառուցված էր այն բանի վրա, որ XIX դ. վերջին և XX դ. սկզբին ցարիզմը վարում էր հայահալած քաղաքականություն, մի հանգամանք, որն իր համար բարեպատեհ առիթ էր ստեղծում՝ միանալով հակահեղափոխական ուժերին՝ Արևելյան Այսրկովկասը մաքրել հայությունից և թրքության ու թյուրք բուրժուազիայի համար ստեղծել «ազատ շնչելու» հնարավորություն:

Բաքվի թյուրք–թաթարական պարագլուխները ենթադրում էին, որ իրենց այդ քայլով իրենք մեծ օժանդակություն կցուցաբերեին «եղբայր» օսմանցիներին՝ բովանդակ Օսմանյան կայսրությունը մաքրելու հայերից: Կովկասյան թաթար գործիչների շրջանում նաև այն մտայնությունն էր իշխում, որ հայ–թաթարական հակամարտությունը նպաստելու է իրենց «էթնիկ հավաքական գիտակցության բարձրացմանը»: Կովկասյան թաթարներին մղում էր հաղորդում նաև հայերի ստեղծած նյութական արժեքներին տիրանալու ձգտումը:

Առաջնորդվելով այդ գաղափարներով՝ Բաքվի մուսուլման վերնախավը հետևողականորեն սկսեց թյուրք բնակչությանը զինել և գրգռել հայերի դեմ: Ցարական իշխանություններն անմիջապես հասկացան, թե ինչպիսի հիանալի հնարավորություններ են ստեղծվում թյուրքական ազգայնամոլությունը հեղափոխության ակտիվ ուժերի դեմ օգտագործելու և ազգը ազգի դեմ հանելով՝ իրագործելու «բաժանի՛ր, որ տիրես» հայտնի սկզբունքը՝ զանգվածներին հեղափոխական պայքարից հեռացնելու համար: Հիրավի, ցարիզմը երկու ձեռքով կառչեց այդ փրկարար օղակին: Ցարական իշխանությունները նաև շեշտված խանդով էին վերաբերվում Բաքվում և առհասարակ Այսրկովկասում հայկական բուրժուազիայի կողմից ձեռք բերած տնտեսական լծակներին, որը հակասում էր ռուսական բուրժուազիայի շահերին: Ուստի նրանք շահագրգռված էին հայերին դուրս մղել և «ազատ շնչելու» տեղ բացել ռուսական ազգային կապիտալի համար:

Ցարական ոստիկանությունն ինքն էր զենք տրամադրում առճակատող կողմերին, որպեսզի արյունահեղությունը հնարավորին չափ մեծ լինի: Անգիտակից զանգվածներին բոցավառելու համար ցարական «ախրանկան» շշուկներ էր տարածում, թե «հայ կոմիտեները» հարձակում են պատրաստում թուրքերի վրա, սպասվում է մեծ կոտորած և այլն: Այդպիսով ոստիկանության գործակալները «մշակեցին» թյուրք–մուսուլման բնակչության տականքներին, որոնցով լիքն էր նավթաշխարհը: Թալանի և հայերի ունեցվածքին տիրանելու մոլուցքը գրգռում ու խանդավառում էր քաղաքային խուժանին ու տականքներին: «1905 թ. սկիզբներուն Բազուի թուրքերու մէջ արդէն իսկ տարածուած էր այն չարաշուք համոզումը, որ կարող են անպատիժ թալանել ու կոտորել հայերը, և որ կառավարութիւնը իրենց կողմն է: Թաթար կղերն ալ իր եռանդուն աջակցութիւնը կը բերէր խուժանավար «ընտրանիին», հրահրելով մութ ամբոխի կրոնական մոլեռանդութիւնը, հնչեցնելով «ջիհադի»՝ սրբազան պատերազմի կարգախօսը, հաւաստիացնելով ամենուրեք, թէ իբր հայ կո-

միտէները կռիւ են հայտարարել իսլամի դէմ և մտադիր են օդը հանել մզկիթները»,— գրում էր Միքայել Վարանդյանը:

1905 թ. հունվարին Բաքվի նահանգապետ Նակաշիձեն հատուկ կանչվել էր Պետերբուրգ՝ ստանալու համապատասխան հրահանգներ հեղափոխական շարժման դեմ պայքարի վերաբերյալ: Վերադառնալուց հետո նա իր ենթակաների՝ փոխնահանգապետ Լիլեևի և ոստիկանապետ Դեմինսկու օգնությամբ և թյուրք–մուսուլման տարրերի անմիջական աջակցությամբ Բաքվում սկսեց հրահրել հայ–թուրքական ազգամիջյան ընդհարումներ:

1906 թ. փետրվարի 6–ին թուրք «ղոչիբաշիները» իրենց զինված խմբերով սկսեցին հարձակումներ գործել հայերի վրա և աջ ու ձախ սպանել նրանց: Հաջորդ օրը սկսվեց թուրքերի զանգվածային գրոհն ու հայերի կոտորածը: Ոստիկանությունը կտրել էր ճանապարհները և արգելում էր հայերի հոսանքը շրջակա վայրերից դեպի քաղաք, կամ եթե նույնիսկ թույլատրվում էր, նախապես զինաթափ էր անում նրանց: Մինչդեռ թուրք տարրն ազատորեն և զինված երթևեկում էր:

Բաքվի նահանգապետ հայատյաց Միքայել Նակաշիձեն շնականորեն ղեկավարում էր թուրք հրոսակների արշավները հայ անզեն ժողովրդի դեմ: Ձին հեծած, կազակների ուղեկցությամբ նա երթևեկում էր փողոցներում, և այդ սարսափները կատարվում էին նրա աչքի առջև: Երբ զոհերը աղերսանքով, լաց ու կոծով դիմում էին իրեն, նա պատասխանում էր, որ անզոր է կոտորածի դեմ, թե չունի բավարար քանակությամբ զորք և այլն: Մինչդեռ զորքի անգործության վերաբերյալ հանդիմանություններին բազմաթիվ զինվորներ ու սպաներ պատասխանում էին, որ իրենց հրամայված է չմիջամտել: Նահանգապետը մերժեց նաև հայերի խնդրանքը՝ զենք տալ իրենց ինքնապաշտպանության համար: Պատմաբան Ա–Դօն իրավացիորեն նշում էր, որ ընդհարումները հրահրվել էին ցարական կառավարության կողմից՝ նպատակ ունենալով ազգամիջյան բախումներով Կովկասը հեռու պահել Ռուսաստանում հասունացող հեղափոխությունից: Հակահայկականությունը շիկացվում էր նաև օսմանյան գործակալների կողմից:

Հանկարծակիի եկած և դեռ հուսալով, որ աղետը վաղանցուկ է, հայերը դիմադրություն չէին ցուցաբերում, իսկ «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության Բաքվի մարմինը բավարարվում էր ռուս հեղափոխական կուսակցությունների հետ թռուցիկներ հրատարակելով և խաղաղության հորդորներ կարդալով թուրքերին: Իսկ հայ բոլշևիկները (Ալեքսանդր Բեկզադյան և ուրիշներ) «անարգանքի սյունին էին գամում» ցարական սադրիչներին և բավարարվում «բոլոր ազգերի բանվորների և գյուղացիների եղբայրական միասնության» քարոզներով: Այդ նույն դիրքորոշումն էին որդեգրել նաև թյուրք և այլազգի բոլշևիկները (օրինակ՝ Մ. Ազիզբեկովը, Մ. Կասումովը, Ս. Էֆենդիևը, Ա. Ախունդովը, Ա. Ջափարիձեն, Պ. Մոնտիևը): Նրանց միակ մտահոգությունն էր այդ արյունալի իրադարձությունները ևս օգտագործել ռուսական միապետության դեմ իրենց քաղաքական պայքարում:

Երբ դաշնակցությունը համոզվեց, որ կոտորածը սարքված է բարձր իշխանությունների ձեռքով, մի սպառնագիր ուղղեց նահանգապետ Նակաշիձեի անունով,

որտեղ ասվում էր. «Պաշտպանեցե՛ք ժողովուրդը, եթե ոչ, անձամբ պատասխանատու կլինեք»:

Սարսափը պատել էր քաղաքը: Երբ ջարդարար խուժանը տեսավ, որ հայերը փակվել են իրենց տներում և այլևս փողոց դուրս չեն գալիս, սկսեց այրել տները: Ճատերը զոհվեցին իրենց տների մեջ: Անշուշտ, եղան նաև դիմադրության առանձին փորձեր, սակայն հայերն անզեն էին, իսկ ամենակարևորը՝ շփոթահար, սասանված ու խելակորույս՝ շղթայազերծ աղետի հանդեպ: Ջարդն ուղեկցվում էր համատարած թալանով:

Ի վերջո, դաշնակցության ջանքերով կազմակերպվեց ինքնապաշտպանություն, որի ոգին Նիկոլ Դումանն էր: Չորս օր տևած ահավոր մղձավանջից հետո կայացվեց զինադադար կամ հաշտություն: Դաշնակցությունը հայերեն և ռուսերեն լեզուներով հրապարակեց թռուցիկ՝ ուղղված Բաքվի թյուրք–մուսուլմաններին: Նրանում ասվում էր. «Մեր քաղաքը արյունալի, ամոթաբեր գործողությունների ասպարեզ էր դարձել: Չորս օր ականատես և ակամա մեղսակից էինք անմիտ, զզվելի եղբայրասպանության: Թափվեց շատ անմեղ արյուն, ընկան բազմաթիվ մարդկային զոհեր:

Թե ում վրա է ընկնում այդ սարսափելի օրերի պատասխանատվությունը, մենք դեռ հետո կվերադառնանք դրան: Այժմ անկեղծ սրտով ողջունում ենք վերականգնված խաղաղությունը… Մենք այդ արյանը ծարավի չէինք… Մեծ զզվանքով ենք հիշում դեռ նոր անցած օրերը և ի գործ կը դնենք մեր բոլոր ուժերը, որ նրանք այլևս չկրկնվեն: Նույն հաշտությանն ենք հրավիրում ձեզ, մուսուլմանն՛ը, մի՛ փնտրեք թշնամուն այնտեղ, ուր նա չկա…»:

Դաշնակցությունը որոշեց պատժել արյունոտ մղձավանջի գլխավոր հեղինակներից մեկին՝ նահանգապետ Նակաշիձեին: Դրաստամատ (Դրո) Կանայանի կողմից նետված ռումբը վերջ տվեց նրա կյանքին: Ահաբեկչության ենթարկվեցին նաև մի շարք երկրորդական կարգի ոճրագործներ, որոնք զինել և խրախուսել էին ջարդարարներին Բաքվի հայերի դեմ:

Այդ դեպքերից հետո ցարական կառավարությունը որոշեց խստացնել հսկողությունը Կովկասի նկատմամբ: 1905 թ. փետրվարի 15–ին ժամանակավորապես սահմանվեց Բաքվի գեներալ–նահանգապետի պաշտոն, իսկ փետրվարի 18–ին Նիկոլայ Բ–ի հրամանագրով Բաքվում և Բաքվի նահանգում մտցվում էր ռազմական դրություն: Փետրվարի 26–ին վերացվեց Կովկասում գլխավոր պետի (главнокомандующий) պաշտոնը, և վերականգնվեց 1882 թ. վերացված Կովկասյան փոխարքայությունը: Փոխարքա նշանակվեց կոմս Ի. Ֆ. Վորոնցով–Դաշկովը (1905–1916 թթ.), որին կառավարությունը հատկացրեց արտակարգ լիազորություններ: Վերջինս, լինելով ցարական վարչության առավել զգույշ և փորձառու ներկայացուցիչներից մեկը, աշխատում էր չսրել Այսրկովկասում առանց այն էլ խիստ լարված վիճակը և վարում էր լայն խոստումների քաղաքականություն:

Թյուրքախոս մուսուլման բուրժուազիան, բեկերն ու հոգևորականությունը, սողալով ցարական իշխանությունների առջև, հիացմունքով գովերգում էին Վորոն-

ցով–Դաշկովին՝ նրան անվանելով «մեծ բարեփոխիչ» և «երկրամասի իմաստուն կառավարիչ»: 1905 թ. ապրիլին նրանք մի դիմում ներկայացրին փոխարքային և մինիստրների սովետի նախագահ Վիտտեին: Դիմումը ստորագրել էին հայտնի բուրժուա–կալվածատիրական ու ազգայնական գործիչներ Ա. Թոփչիբաշևը, Ա. Աղաևը, Մ. Վեքիլովը, Ճ. Ասադուլլաևը, Ռաշիդ–խան Շիրվանլին, Ա. Զայաթ-խանովը, Գ. Զյուլքադարովը և ուրիշներ:

Դիմումում պահանջվում էր թյուրքախոս մուսուլման կապիտալիստների և բեկերի իրավունքները հավասարեցնել ռուսական կապիտալիստների ու կալվածատերերի իրավունքների հետ, հնարավորություն ստեղծել, որ Կովկասի երկրամասի բոլոր հիմնարկություններում մուսուլմանները կարողանան անցնել պետական ծառայության, որ առանց սահմանափակումների նրանք մասնակցություն ունենան կովկասյան քաղաքների ինքնավարական մարմիններին, լուծում ստանա խաների և բեկերի ազնվականական իրավունքների մասին հարցը, մասնավորապես նրանց իրավունքներ տրամադրվեն՝ ստեղծելու ազնվականական կազմակերպություններ:

Պահանջվում էր նաև, որ ժողովրդական կրթության գործը ամբողջապես հատկացվի մուսուլման հոգևորականությանը, թույլտվություն էին խնդրում ստեղծելու բարձրագույն մուսուլման հոգևոր ուսումնարաններ, ինչպես նաև իրավունք, որ դպրոցներում երեխաները սովորեն մայրենի լեզվով: Այդ բոլորի հետ միաժամանակ թյուրքախոս մուսուլման բուրժուազիան ու կալվածատերերը պահանջ էին առաջադրում, որ պետության տնօրինության ներքո գտնվող վաքֆային (մզկիթապատկան և այլն) հողերը անցնեն մուսուլման հոգևորականության իրավասությանը, որը կհանգեցներ նրա տնտեսական դիրքերի ամրապնդմանը:

Թյուրք–մուսուլման վերնախավը բավարարված չէր հայերի և թուրքերի միջև Բաքվում կայացած «բարըշըլըղով»՝ հաշտությամբ: Յոթ ամիս անց ջարդերը տեղի ունեցան ավելի մեծ ծավալով. սկզբում՝ 1905 թ. օգոստոսի 16–ից 21–ը՝ Շուշիում, իսկ օգոստոսի 20–ից՝ Բաքվում, որը տևեց 11 օր: Թյուրք–թաթարական այդ երկրորդ «պոգրոմի» ժամանակ սպանվեցին շուրջ 400 հոգի՝ հայեր և թուրքեր: Հրդեհվեցին Բալախանիի հանքերը, կրակի ճարակ դարձան հայերին պատկանող նավթահորերը Սաբունչիում, Ռոմանիում, Բիբի–էյբաթում: Հասցված վնասը կազմում էր շուրջ 25 միլիոն ռուբլի:

Օգոստոսի 22–ին իշխանությունները Բաքվում հայտարարեցին պաշարողական դրություն: Սակայն դրանից հետո ևս քաղաքի վիճակը չկայունացավ: Շարունակվում էին գործադուլներն ու զանգվածային ցույցերը, հայ–թուրքական բախումները և այլն: Հարավկովկասյան թրքության միջնաբերդը՝ Բաքուն, չէր խաղաղվում:

Թուրքական պոգրոմների ալիքը տարածվեց Այսրկովկասի բոլոր հայաբնակ գավառներում, մասնավորապես ջարդերի հողմը Բաքվից անցավ Երևանի նահանգը: Հատկապես հայերի խոշոր ջարդեր տեղի ունեցան Նախիջևանում, որտեղ խաները տեր ու տիրական էին: Տասնյակ հայկական գյուղեր ավերվեցին ու այրվեցին: Նախիջևանից հետո հայերի ջարդեր տեղի ունեցան Շարուր–Դարալագյազում, Զան-

գեզուրում, Արցախում և այլն: Հատկապես քստմնելի բարբարոսություններ էին տեղի ունենում այն վայրերում, որտեղ հայերը կազմում էին փոքրամասնություն:

Միանգամայն ակնհայտ էր, որ այդ բոլորը տեղի էր ունենում Բաքվում մշակված հատուկ ծրագրով, որի նպատակն էր Արևելյան Այսրկովկասը և առհասարակ Այսրկովկասը «մաքրել» հայ տարրից: Դա պետք է իրականացվեր կոտորածների և հայերին գաղթի մղելու ճանապարհով: Այդ ծրագիրը ոգեշնչվում էր Թուրքիայի կողմից: Նույնիսկ շշուկներ էին պտտվում, թե Թուրքիան, օգտվելով Ռուսաստանի տագնապալի կացությունից, պատրաստվում է ներխուժելու Կովկաս և ոտքի հանելու երկրամասի ողջ իսլամական բնակչությանը:

Ինչպես հայտնի է, հեղափոխական զանգվածների ճնշման ներքո ցարական կառավարությունը 1905 թ. հոկտեմբերի 17–ին ընդունեց մանիֆեստ, որում խոստանում էր մտցնել խոսքի, մամուլի, ժողովների, միությունների ազատություն և օրենսդրական դումայի գումարում:

Թյուրքախոս մուսուլման բուրժուազիան ցնծությամբ ընդունեց ցարական այդ մանիֆեստը: «Կասպիյ» թերթն այն գնահատեց որպես «թագավոր–կայսեր կողմից սիրահոժար կերպով շնորհված սահմանադրություն»: Ցարական կառավարության պաշտպանությամբ հանդես եկավ նաև մուսուլման հոգևորականությունը: Հատկանշական է, որ 1905 թ. ցարական իշխանությունները առանձնակի ջանասիրությամբ նպաստում էին Արևելյան Այսրկովկասի քաղաքներում ու գյուղերում նոր մզկիթների բացմանը:

1905 թ. աշնանը Շուշիի, Զևանշիրի և Արևելյան Այսրկովկասի մի շարք շրջաններում ստեղծվեց թունդ ազգայնական–իսլամիստական «Դիֆայի» («Պաշտպան») կազմակերպությունը: Այն գլխավորում էին մի խումբ բեկեր ու ազգայնականներ, ինչպիսիք էին, օրինակ՝ Կ. Մեհմանդարովը, Ա. Աղաևը, Մ. Հաջինսկին: Հանդես գալով «հայ դաշնակներից մուսուլմանների պաշտպանության» դրոշի ներքո՝ «Դիֆային» հրահրում էր հայ–թյուրքական ազգամիջյան ընդհարումներ: Նրա գործունեության մեթոդներից մեկը անհատական ահաբեկչությունն էր: «Դիֆային» ահաբեկչության էր ենթարկում ոչ միայն հայերին, այլև նրանց, ովքեր մեղադրվում էին «դաշնակցությանն աջակցելու մեջ»:

Հակահայկական նույնպիսի գործունեություն էր ծավալել նաև Գանձակում և հարակից շրջաններում գործող «Մուդաֆիյե» («Պաշտպանություն») անունով կազմակերպությունը, որը հենվում էր գլխավորապես Գանձակի բեկերի վրա: Այդ կազմակերպության ղեկավար, խոշոր կալվածատեր Իսմայիլ–խան Զիյադխանովը նույնպես հակահայ ձեռնարկումների եռանդուն մասնակից էր: Նմանատիպ գործունեությամբ էր զբաղվում նաև 1905 թ. նոյեմբերին Բաքվում կազմակերպված «Իթթիֆաղ» («Դաշինք») ծայրահեղ ազգայնական կազմակերպությունը, որի գործունեության մեթոդը ևս ահաբեկչությունն էր: Ընդ որում, այդ կազմակերպությունը լայնորեն օգտագործում էր «ղոչիների» բանդաները: Նրա ղեկավարներն էին Ա. Շարիֆզադեն, Մ. Զուվարլինսկին, Մ. Մելիքովը: Բաքվում սևհարյուրյակային

բանդաների ձևավորման գործում ակտիվ մասնակցություն ունեին նաև հայտնի նավթարդյունաբերող–կապիտալիստներ Թաղիևը, Մուխտարովը, Աշուրովը:

1905 թ. հոկտեմբերի 20–ից 23–ը ղոչիները Բաքվում և Արևելյան Այսրկովկասի մի շարք շրջաններում կազմակերպեցին հայերի նոր ջարդեր: Առհասարակ այդ օրերին ողջ երկրամասի տարածքում չէին դադարում հակահայկական ելույթներն ու մասնակի ջարդերը:

Հարկ է նշել, որ թյուրքախոս մուսուլման բուրժուազիան, զգալով իր թուլությունը, ձգտում էր միավորելու իր գործունեությունը Ռուսաստանի մյուս մուսուլման ժողովուրդների բուրժուազիայի գործունեության հետ, իսկ հաճախ փորձում էր նաև հանդես գալ Ռուսական կայսրության բոլոր մուսուլմանների անունից:

Թաթարական պանիսլամիստական շրջանների հետ համատեղ թյուրքախոս պանիսլամիստները ձգտում էին գլխավորելու Ռուսաստանի մուսուլման նահանգների ազգայնական–իսլամիստական շարժումները: Այսրկովկասի թյուրքախոս մուսուլմանների և թաթարական իսլամիստների նախաձեռնությամբ 1905 թ. օգոստոսի 15–ին Նիժնի Նովգորոդում գումարվեց Համառուսական մուսուլման համագումար, որին մասնակցում էին Արևելյան Այսրկովկասի, Թաթարստանի, Ղրիմի, Թուրքեստանի և մուսուլման այլ նահանգների մոտ 150 ներկայացուցիչներ: Համագումարը, որն ընթանում էր հայտնի պանիսլամիստ Ա. Թոփչիբաշևի նախագահությամբ, որոշում կայացրեց Համառուսական մուսուլման միության՝ «Իթթիֆաղ–ի մուսլիմին» կազմակերպության ստեղծման մասին: Համագումարում պանիսլամիստական ոգով ընդունված որոշումներում Ռուսաստանի մուսուլմաններին կոչ էր արվում հանդես գալ «որպես մեկ ազգ»: Այդ կազմակերպության գործունեությունը ղեկավարելու համար համագումարը որոշում ընդունեց ստեղծել կենտրոնական կոմիտե, որի կենտրոնը լինելու էր Բաքուն:

Ռուսաստանում առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխության պարտությունից հետո ահաբեկված ցարիզմն անցավ հարձակման: Ցարական կառավարությունը Կովկասը հայտարարեց ռազմական դրության մեջ և ոստիկանական հսկողությունն ուժեղացնելու համար ստեղծեց հատուկ մարմին՝ «Կովկասյան շրջանային պահնորդական բաժանմունք», ավելացրեց ոստիկանների թիվը: Կովկասի փոխարքան 1907 թ. հունիսերեքյան հեղաշրջման հաջորդ օրը կարգադրում է նահանգապետերին ոչ մի դեպքում «չթույլատրել անկարգություններ–ցույցեր»:

Ողջ Կովկասում ծավալվում էր մեծապետական շովինիզմի սանձարձակ քաղաքականությունը: Ավելի ուժեղացան ազգային ճնշումները: Հակահայկականությունը կրկին դարձավ Ռուսաստանի հետադիմական շրջանների քաղաքական հավատամքը: Սևհարյուրյակային Վ. Պուրիշկևիչը հայերին մեղադրում էր «անջատողականության» ու «անիշխանության» հրահրման մեջ: Իրականում ցարական կառավարությանը և առհասարակ ռուսական հետադիմությանը կատաղեցնում էր այն փաստը, որ հայ ժողովուրդը ակտիվ դեր էր խաղում համառուսական հեղափոխական շարժման մեջ:

Ցարական իշխող շրջանների այդ տրամադրությունները համահունչ էին Արևելյան Այսրկովկասի թյուրքախոս մուսուլման բուրժուական–ազգայնական ու բեկական շրջանների տրամադրություններին, որոնք հայերին մեղադրում էին «խառնակչության», երկրամասը ապակայունացնելու և հեղափոխականացնելու մեջ:

Աննախընթաց թափ ընդունեց նաև պանիսլամիզմի քարոզչությունը: Ընդ որում, հայերը մեղադրվում էին մուսուլմանների միասնությունը խաթարելու ձգտումներ ունենալու մեջ:

Արևելյան Այսրկովկասում ազգամիջյան հարաբերությունների վատթարացման վրա անմիջական ներգործություն ունեցավ երկրամասի տնտեսական կյանքի անկումը: 1908–1909 թթ. Ռուսաստանում սկսված տնտեսական նոր ճգնաժամը ծանր անդրադարձներ ունեցավ Արևելյան Այսրկովկասի ողջ տնտեսության, այդ թվում՝ նավթարդյունաբերության վրա: Բաքվում նշանակալիորեն կրճատվեց նավթի հանույթն ու վերամշակումը: Նավթարդյունաբերության լճացումը առաջ էր բերում գործազրկություն՝ դրանով իսկ կտրուկ վատթարացնելով բանվորության վիճակը և Է՛լ ավելի սրելով սոցիալական հարաբերությունները:

1912–1913 թթ. Արևելյան Այսրկովկասում աննախընթաց ուժեղացավ պանթյուրքիզմի քարոզչությունը: Բալկանյան պատերազմներում պարտություն կրած Թուրքիայում այդ ռասիստական գաղափարախոսությունն ընդունել էր աննախընթաց թափ: Իթթիհադական պանթյուրքիստները, արևմուտքում կրելով պարտություններ, ավելի վճռականորեն էին իրենց հայացքն ուղղում դեպի Արևելք՝ դեպի Թուրան: Նրանց լայնահուն նվաճողական ծրագրերում Արևելյան Այսրկովկասի թյուրքալեզու բնակչությունը խաղալու էր կարևորագույն դեր: Դա մի հենակետ էր, որի վրայով հնարավոր էր համարվում հատել ու անցնել Կասպից ծովը և մուտք գործել Կենտրոնական Ասիա՝ թրքության բնօրրան:

Բաքվում պանթյուրքիստական քարոզչության ամենաաչքի ընկնող խոսափողերից մեկը «Շելալե» («Ջրվեժ») ամսագիրն էր, որը լույս էր տեսնում 1913–1914 թթ.: Նշված ամսագիրը զարգացնում էր Այսրկովկասի թյուրքախոսների և օսմանյան թուրքերի «արյան կանչի» մասին պանթյուրքիստական տեսակետներ: Ամսագիրը ժխտում էր Արևելյան Այսրկովկասի թուրքերի ինքնատիպությունը՝ համարելով, որ նրանք ընդհանուր թրքության մի մասն են, և ոչ մի տարբերություն չկա անատոլիական և ապշերոնյան թուրքերի միջև:

1911 թ. թյուրքախոս մուսուլման բուրժուազիան ստեղծեց իր կուսակցությունը՝ «Մուսավաթը» («Հավասարություն»): Դա ակնհայտ ազգայնական կուսակցություն էր: Այն իր ծրագրի հիմքում դրել էր երիտթուրքերից փոխառված պանթյուրքիզմի գաղափարախոսությունը: Նրա անդամներից Մեհմեդ Էմին Ռասուլզադեն 1912 թ. եղել էր Թուրքիայում և սերտ կապեր հաստատել երիտթուրքերի հետ: Իր ելույթներում ու հոդվածներում նա քարոզում էր պանթյուրքիզմի կարկառուն գաղափարախոսներից մեկից՝ Զիյա Գյոքալփից վերցված երեք հիմնական կարգախոսները. «թուրքլեշմեք, իսլամլեշմեք, մուասիրլեշմեք» («թյուրքիզացում, իսլամիզացում, արդիականացում»):

Արևելյան Այսրկովկասում իրենց գործունեությունը ծավալել էին նաև ռուս մեծապետական շովինիստները՝ սևհարյուրյակայինները, որոնք ձգտում էին իրենց ազդեցությանը ենթարկելու ռուս բանվորների մի մասին:

Առհասարակ ազգային հարցը Կովկասում, այդ թվում նաև Արևելյան Այսրկովկասում նշված շրջանում ուներ վերին աստիճանի սուր բնույթ: Հարցի կապակցությամբ մի շարք հետաքրքիր հոդվածներով հանդես եկավ այդ շրջանում Բաքվում գտնվող Ստեփան Շահումյանը: Նրա «Ազգային–կուլտուրական ինքնավարության մասին», «Ինտերնացիոնալիզմ և ազգայնականություն» և այլ հոդվածներում համակողմանի քննության էր ենթարկում Այսրկովկասում ազգային հարցի լուծման ուղիների խնդիրը:

Առաջին աշխարհամարտի նախօրյակին Կովկասը հեղեղված էր թուրքական գործակալներով, որոնք մուսուլման բնակչության շրջանում վարում էին պանթյուրքիզմի և պանիսլամիզմի ակտիվ քարոզչություն:

Երիտթուրքերի կուսակցությունը դեռևս 1913 թ. Բաքու, Գյոքչայ, Աղդաշ, Նուխի և Քյուրդամիր քաղաքներում ստեղծել էր կուսակցության տեղական կոմիտեներ: Կովկասյան թաթարների «ազգային շարժման» կենտրոնն էր Գանձակ–Ելիզավետպոլը, որտեղ գործում էին «Մուսուլման հասարակական կազմակերպությունների խորհուրդը» (ղեկավար՝ Ալի Մարդամբեկ Թոփչիբաշև) և նրա գործադիր կոմիտեն (ղեկավար՝ Մամեդ Հասան Հաջինսկի): Երիտթուրքերի հենարանը Այսրկովկասում «Մուսավաթ» կուսակցությունն էր: Այն տենդորեն նախապատրաստում էր թուրքերի առաջխաղացումն Այսրկովկաս արագացնելու և ինքնավարության պահանջով Արևելյան Այսրկովկասում թուրքական պետություն ստեղծելու գործը: Ինքնավարության հարցը բարձրացվեց 1917 թ. ապրիլի 15–20–ը Բաքվում տեղի ունեցած Կովկասի մուսուլմանների համագումարում: Քանի որ Օսմանյան կայսրության պաշտոնական կրոնը իսլամի սուննիական ուղղությունն էր, իսկ կովկասյան թաթարների դավանանքը՝ շիայականությունը, համագումարում պաշտոնապես ուշագրավ հայտարարություն արվեց, որ «այլևս ներհակութիւն կամ տարբերութիւն չկայ սիւննի և շիակրօնական հատուածների միջև, թէ ամբողջ աշխարհի մուսուլմանների մի մարմին են, մի հոգի»:

Առաջին աշխարհամարտում կովկասյան թաթարները զինապարտ չէին, հետևապես չունեին զենք և ռազմական կազմակերպություն, ուստի Փետրվարյան հեղափոխությունից հետո մուսուլման կազմակերպությունների ազգային–հասարակական գործունեության ամենակարևոր բնագավառներից մեկը իսլամական զինված գնդեր ստեղծելն էր: Զենք ձեռք բերելու, իրենց գնդերը զինելու և թուրքերի առաջխաղացումն արագացնելու նպատակով կովկասյան թաթարները 1918 թ. հունվարի 9–13–ը հարձակվեցին տուն վերադարձող ռուսական զորամասերի վրա և Գանձակ քաղաքից ոչ հեռու գտնվող Շամխոր կայարանում կոտորեցին ավելի քան 2000 ռուս զինվորի՝ խլելով նրանց զենքն ու զինամթերքը:

1918 թ. սկզբին Գանձակի նահանգի գրեթե ողջ մուսուլմանությունը զինված էր: Տագնապալից իրավիճակ ստեղծվեց նաև հայերի համար: Բաքու–Թիֆլիս երկա-

թուղու շրջանում թաթարական զինված ջոկատները Քյուրդամիր, Հաջի–Կաբուլ, Ուջար, Մյուսիսլի և Աղստաֆա կայարաններում աջ ու ձախ սպանում էին հայերին: Առհասարակ հայերի որսն ու նրանց ոչնչացումը դարձել էր համատարած երևույթ: Սպանություններն ուղեկցվում էին կողոպուտով:

Այսրկովկասում պանթյուրքիստական և պանիսլամիստական քարոզչության հիմնական կենտրոնը Բաքուն էր: Այնտեղ լույս տեսնող թուրքալեզու «Կասպիյ» և «Թարջուման» («Թարգմանիչ») թերթերը վարում էին թուրքանպաստ պանթյուրքիստական քարոզչություն՝ կոչ անելով Այսրկովկասի բոլոր մուսուլմաններին միավորվելու և համախմբվելու իսլամի դրոշի ներքո: Այդ նույն նպատակին էին ծառայում նաև Այսրկովկասի տարբեր վայրերում ստեղծված՝ այսպես կոչված «բարեգործական ընկերությունները», որոնք կապված էին Թուրքիայի հետ և նրա օգտին իրականացնում էին տարբեր տեսակի աշխատանքներ:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

1914 թ. Առաջին աշխարհամարտը սկսվելուց հետո Օսմանյան կայսրության գլխավոր նպատակներից մեկը Կովկասի և Ատրպատականի նվաճումն էր: Իթթիհադականները հույսեր էին փայփայում, որ իրենց կհաջողվի ուժի օգնությամբ «Կովկասը ևս պոկել ռուսների ճանկերից»: Հայտնի պանթյուրքիստ Թեքին Ալփը թուրքերին կոչ էր անում թյուրքական ժողովուրդներին փրկելու «ռուսական գերությունից» և Ռուսաստանից նվաճելու ու Թուրքիային միացնելու մուսուլմաններով բնակեցված հողերը:

Պատերազմը սկսվելուց հետո թյուրքախոս մուսուլման վերնախավը՝ Բաքվի հայտնի նավթարդյունաբերողներ Թաղիևը, Նազիևը և ուրիշներ, բեկերը, հոգևորականության ներկայացուցիչները և այլք շտապեցին իրենց հավատարիմ հպատակության զգացմունքները հայտնել Նիկոլայ ցարին և ռուսական իշխանություններին: Դրանք հիմնականում այն մարդիկ էին, որոնք իրենց ճակատագիրը կապել էին ինքնակալության հետ և հազար ու մի թելերով կապված էին նրա հետ: Սակայն այդ նույն վերնախավի հիմնական կամ մեծագույն մասը, ինչպես նաև ամբողջությամբ վերցված մուսուլման զանգվածը պանթյուրքիստական ու պանիսլամիստական գաղափարների ազդեցության տակ էր և անձկությամբ էր սպասում արյունակից եղբայր–թուրքերի գալստյանը Այսրկովկաս:

Կարևոր է նաև նշել, որ Այսրկովկասի տնտեսական կյանքում առաջատար դիրքերը պատկանում էին հայկական բուրժուազիային: Վրաց ազնվականության ու կովկասյան թաթարների ազգայնական–բուրժուական և կալվածատիրական–բեկական շրջանները թշնամաբար էին տրամադրված հայ դրամատեր–բուրժուական դասակարգի նկատմամբ՝ այդ ատելությունն ու թշնամանքը հանիրավի տարածելով նաև հայ լայն զանգվածների վրա: Պատերազմի ժամանակ հակահայկականության հողի վրա Արևելյան Այսրկովկասի կովկասյան թաթարների բուրժուազիան ու կալվածատերերը դաշինքի մեջ մտան վրաց ազնվականության հետ՝ հույս ունենալով ուժերի միավորման ճանապարհով հայկական բուրժուազիային դուրս մղելու Այսրկովկասից և ասպարեզը մաքրելու իրենց ազատ ու անկաշկանդ գործունեության համար:

1917 թ. փետրվարյան բուժուադեմոկրատական հեղափոխության հետևանքով ցարական միապետությունը տապալվեց: Հեղափոխության ալիքները հասան նաև Այսրկովկաս: 1917 թ. մարտին Բաքվում ստեղծվեց Բանվորական պատգամավորների խորհուրդ, որի նախագահ ընտրվեց Ստեփան Շահումյանը: Բանվորների,

գյուղացիների և զինվորների խորհուրդներ ստեղծվեցին նաև Արևելյան Այսրկովկասի մյուս քաղաքներում՝ Շուշիում, Ելիզավետպոլում, Լենքորանում և այլն:

Ձգտելով նոր ստեղծված իրադրության պայմաններում համախմբելու իր ուժերը՝ կովկասյան թաթարների բուրժուազիայի կողմից ստեղծվեցին այսպես կոչված «մուսուլման խորհուրդներ», որոնց մեջ ընդգրկվեցին ազգայնական մտավորականության, բուրժուակալվածատիրական շրջանների և մուսուլման հոգևորականության ներկայացուցիչները: Մուսուլման ազգային խորհուրդների մեջ առավել ազդեցիկն էր Բաքվի մուսուլման խորհուրդը, որը ստեղծվեց 1917 թ. մարտի 29–ին: Նրա Ժամանակավոր կոմիտեի կազմի մեջ մտան թյուրքախոս զանգվածի թունդ ազգայնական մտավորականության ներկայացուցիչներ, պանիսլամիզմի ու պանթյուրքիզմի ջատագով այնպիսի դեմքեր, ինչպիսիք էին Հաջինսկին, Ռասուլզադեն, Թոփչիբաշիևը, ինչպես նաև կալվածատեր Խան–Խոյսկին, նավթարդյունաբերող և վաճառական Ասադուլլաիը և ուրիշներ: Բաքվի մուսուլման խորհուրդը և Արեևելյան Այսրկովկասի մյուս քաղաքներում գործող նրա բաժանմունքները որդեգրեցին շեշտված հակահայկական քաղաքականություն:

1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո Այսրկովկասում տարածքային հարցը դարձավ հրատապ ու գերիշխող: Ընդ որում՝ այդ հարցում անմիջապես դրսևորվեց հայության խոցելիությունը և դիրքերի թուլությունը, ինչը դիպուկ բնորոշել է սոցիալ–դեմոկրատ Բ. Իշխանյանը: «…Հայերը միակն են Այսրկովկասի տեղական ժողովուրդների մէջ, որոնք թաւական բաժանումների և տերիտորիական ցրուածության վերաբերմամբ ամենաանպաստ պատկերն են ներկայացնում, անպաստ ամենից առաջ ազգային–կուլտուրական առաջադիմութեան շահերի տեսակէտից: Իսկ ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի արդի յաղթական մոմենտին այդ ցրուածութիւնը աննպաստ է նաև քաղաքացիական իրավունքների պաշտպանութեան և քաղաքական ծանրակշիռ պրոբլեմների յաջողակ լուծման տեսակէտից»:

1917 թ. հոկտեմբերին Ռուսաստանում բոլշևիկյան հեղափոխությունից հետո՝ նոյեմբերի15–ին, Թիֆլիսում կազմավորվեց Այսրկովկասյան կոմիսարիատը: Դա գործադիր մարմին էր, որի նպատակն էր պահպանել երկրամասի ինքնուրույնությունն ու ամբողջականությունը: Դա նաև մի փորձ էր՝ ստեղծելու Այսրկովկասյան պետություն:

Ռուսաստանում տեղի ունեցած հոկտեմբերյան հեղաշրջումից հետո՝ 1917 թ. նոյեմբերի 2–ին հրավիրված Բաքվի խորհրդի ընդլայնված նիստը հավանություն տվեց Ստ. Շահումյանի առաջադրած բանաձևին, և խորհուրդն իրեն հայտարարեց Բաքվի ու նրա շրջանների գերագույն իշխանություն: Նույն նիստում խորհուրդը վերանվանվեց Բանվորների և զինվորների պատգամավորների խորհուրդ: Ընտրվում է նաև նոր գործկոմ՝ Ստ. Շահումյանի նախագահությամբ:

Բաքվում հռչակված այդ խորհրդային իշխանությունը Մուսավաթի կողմից ընդունվեց անսքող թշնամանքով, քանի որ կովկասյան մուսուլմանության քաղաքական կարգավիճակը այդ կուսակցությունը տեսնում էր «անկախ պետականության»

ստեղծման մեջ: Մուսավաթի և Խորհրդային իշխանության բախումն անխուսափելի էր դառնում: Նրանց միջև սկսվեցին մարտեր, որոնք ավարտվեցին ապրիլի 1–ին մուսավաթականների պարտությամբ:

Մուսավաթի դեմ տարած այդ հաղթանակից հետո Խորհրդային իշխանությունը Բաքվի նահանգում ամրապնդվեց: Ապրիլի 12–ին Բաքվում կազմավորվեց Ժողկոմխորհը՝ Խորհրդային Ռուսաստանի Ժողկոմխորհի կողմից 1917 թ. դեկտեմբերի 29–ին (16–ին) Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար նշանակված Ստ. Շահումյանի գլխավորությամբ, որով իշխանությունը վերջնականապես անցավ բոլշևիկների ձեռքը:

Այդ իշխանությունը հայտնի է նաև «Բաքվի կոմունա» անունով: Այն գոյատևել է մինչև 1918 թ. սեպտեմբեր ամիսը, երբ թուրքական զորքերը գրավեցին Բաքուն:

Արդեն 1918 թ. հունվարի կեսերին կովկասյան թաթարները Ելիզավետպոլում և Բաքվի նահանգի գերակշռող մասում նվաճեցին իշխանությունը: Իսկ նույն թվականի մայիսի 27–ին հայտարարվեց Ադրբեջանի հանրապետության ստեղծման մասին:

1918 թ. սեպտեմբերի 15–ին թուրքական զորքերը թաթար և քուրդ հրոսակային խմբերի հետ միասին ներխուժեցին Բաքու: Գրավելով քաղաքը՝ թուրքական զորքերը Ադրբեջանի Հանրապետության կառավարության հետ սերտ համագործակցությամբ կազմակերպեցին հայ բնակչության արյունոտ նախճիր, որին զոհ գնացին և գերի տարվեցին հազարավոր հայ մարդիկ: 1918 թ. սեպտեմբեր–նոյեմբեր ամիսներին Բաքվում տեղի ունեցածն անկասկած ցեղասպանություն էր՝ արևմտահայոց ցեղասպանության շարունակությունը:

1918–1920 թթ. հայկական ջարդերից հետո Բաքվում հայերի թիվը կտրուկ նվազեց: Մուսավաթական կառավարության կողմից հայկական ջարդերի ալիքը տարածվեց նաև Նուխիի, Արեշի, Շամախիի, Գյոքչայի, Ղուբայի, Զավատի և Լենքորանի գավառներում: Հայ բնակչության նկատմամբ իրագործված ցեղասպանության ու էթնիկական զտման քաղաքականության հետևանքով Արևելյան Այսրկովկասի տարածքում Կուրից մինչև Ապշերոնյան թերակղզի էթնոժողովրդագրական պատկերը զգալի փոփոխություն կրեց ի վնաս հայ բնակչության:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ՀԱՅԵՐՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ: ՀԱՅԵՐԻ ԴԵՐԸ ԵՐԿՐԱՄԱՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔՈՒՄ

Հայերն Արևելյան Այսրկովկասի տարածքում բնակվել են վաղնջական ժամանակներից: Այսրկովկասի արևելյան մասում հնուց անտի եղել է հոծ հայ բնակչություն: Խոշոր զանգվածներով հայերն ապրել են Կուր գետից մինչև Կասպից ծովն ընկած երկրամասի ողջ տարածքում: Այդ տարածաշրջանի բաղկացուցիչ մաս կազմող Արցախը հայ ժողովրդի դարավոր բնօրրանն է:

Արևելյան Այսրկովկասը Ռուսաստանին միանալուց հետո երկրամասում նկատվեց տնտեսական և մշակութային կյանքի նշանակալից վերելք, որի մեջ իր խոշոր լուման ուներ հայ բնակչությունը: Հարկ է նշել, որ Արևելյան Այսրկովկասի գաղութային տնտեսության զարգացման յուրահատուկ պայմանների շնորհիվ հայությունը երկրամասում ի սկզբանե եղավ տնտեսական և մշակութային կյանքին մղում հաղորդող առաջատար ուժը: Ռուսական պաշտոնական վավերագրերից մեկում նշվում էր, որ 1840–ական թթ. Այսրկովկասի առևտուրը գրեթե բացառապես հայերի ձեռքում էր: Ռուսական իշխանություններն ամեն կերպ խրախուսում էին հայ վաճառականների գործուն մասնակցությունը երկրամասի տնտեսական կյանքին: Շատ հաճախ նրանք հայ վաճառականներին էին տրամադրում բանակի մատակարարման, պետական հիմնարկների համար շինություններ կառուցելու, արդյունաբերական, արդյունաբերական որոշ ճյուղեր շահագործելու և այլ բնույթի կապալները: Ընդհանրապես Այսրկովկասում կապալառուների դերում հիմնականում հանդես էին գալիս հայերը: Հայտնի է, օրինակ, որ դեռ 1808 թ. Բաքվի տուրքերը գանձելու իրավունքը չորս տարի ժամանակով կապալով տրվել էր հայտնի վաճառական Բաբա Թառումյանին: Նա ստացել էր նաև Շիրվանում նավթահորերը և աղալճերը շահագործելու կապալը: Մեկ այլ հայ վաճառական՝ Մելիքյանը, ցարական իշխանություններից ձեռք էր բերել Զագլիկի (Փիփի) պաղլեղի գործարանը շահագործելու կապալը: 1810 թ. Արցախի հայերից Պետրոս Մանչեյանը համաձայնագիր է ստորագրում, որպեսզի կապալով իրեն տրվեն Ղուբայի ծովային ձկնորսարանները, նավթահորերը, ջրաղացներ, այգիներ և այլն: Մինչև 1823 թվականը՝ իր մահը, նա փորձում է փորել նավթի հանքահորեր, բայց ջանքերն ապարդյուն են անցնում, և բավականին մեծ պարտքի տակ է ընկնում:

Կովկասի փոխարքա Վորոնցովը հատուկ ուշադրություն էր հանդես բերում հայ կապալառուներ Արշակունու, Միրիմանյանի, Սվեշնիկյանի, Միրզոյանի և այլոց նկատմամբ՝ նրանց համարելով կառավարության համար օգտակար մարդիկ:

1846 թ. Բաքվում մեկ միլիոն ռուբլի հիմնական կապիտալով հիմնադրված դիրքեր էր զբաղեցնում «Եղիազարով և Ընկ.» հայ առևտրական ընկերությունը, որը զբաղվում էր ռուսական ապրանքների արտահանմամբ Իրան: 1857 թ. այն վերանվանվեց «Ասիայի հետ առևտրի Անդրկասպյան ընկերություն»: Այդ նույն ժամանակ Բաքվում հիմնադրվեցին մոսկովյան վաճառականների ընկերություններ, որոնց մեջ աչքի ընկնողներից էր նաև հայազգի Անանովի ընկերությունը: 1846 թ. հիմնվեց «Անդրկովկասյան առևտրական սկզբնական դեպոն», որին անդամակցում էին նաև բազմաթիվ խոշոր հայ վաճառականներ:

Արևելյան Այսրկովկասում բուրժուազիայի դասակարգը սկսել է ձևավորվել XIX դ. երկրորդ կեսին և շարունակվել XX դ. սկզբին: Ի սկզբանե երկրամասում ձևավորվող բուրժուազիան բազմազգ էր: Նրա կազմում աչքի ընկնող տեղ էին գրավում հայերը և ռուսները: Այդ դասակարգի կազմի մեջ մտնում էին խոշոր նավթարդյունաբերողները, զանազան այլ կարգի ձեռնարկությունների տերերը, վաճառականները, նավատերերը, խոշոր տնատերերը, արհեստագործական ձեռնարկությունների տերերը և այլն: Երկրամասում բուրժուազիայի ձևավորման կարևորագույն կենտրոնը Բաքուն էր:

Ժամանակի ընթացքում բուրժուազիայի տարբեր ազգային խմբերի միջև բորբոքվեց թեժ պայքար, որի հիմքում սկզբնական շրջանում գլխավորապես ընկած էին տնտեսական շահերը: Տնտեսապես ուժեղ և կենսունակ հայկական բուրժուազիայի գործունեությունը, որը նվաճել էր կայուն դիրքեր ոչ միայն Արևելյան Այսրկովկասում, այլև Վրաստանում, բնականաբար, չէր կարող առաջ չբերել թույլ ու անկարող կովկասյան թաթարների ու վրացական բուրժուազիայի հակազդեցությունն ու դիմադրությունը: Հենց այդ պարարտ հողի վրա և՛ Արևելյան Այսրկովկասում, և՛ Վրաստանում ձևավորվեց հակահայկական ազգայնականություն:

XIX դ. երկրորդ կեսին թյուրքախոս բուրժուազիայի մեջ աչքի ընկնող դեմք էր Գ. Թաղիևը, որի կապիտալների մեծ մասը դրված էր նավթարդյունաբերության, մասամբ նաև արդյունաբերության այլ ճյուղերի և գյուղատնտեսության մեջ: Սակայն կովկասյան թաթարների բուրժուազիան հիանալի գիտակցում էր, որ իր թուլության պատճառով ի վիճակի չէ հայ բուրժուազիայի հետ մրցակցային պայքարում հաղթող դուրս գալ: Ուստի նա այդ պայքարում տնտեսական լծակներից բացի աշխատում էր օգտագործել նաև քաղաքական և այլ կարգի լծակներ, այդ թվում նաև թյուրքալեզու մամուլը:

Կովկասյան թաթարների բուրժուազիայի շահերը ինչ–որ չափով համընկնում էին ռուսական բուրժուազիայի շահերի հետ այն առումով, որ նրանք երկուսն էլ շահագրգռված էին երկրամասում տիրապետող դիրքեր ունեցող հայկական բուրժուազիային մղելու երկրորդ պլան: Ճիշտ է, կովկասյան թաթարների և ռուսական բուրժուազիաների միջև ևս գոյություն ունեին որոշակի տնտեսական ու քաղաքա-

կան տարաձայնություններ, սակայն դրանք չունեին վճռական նշանակություն և չէին կարող հասնել սուր առճակատման:

Անհրաժեշտ է նշել, որ XIX դ. վերջին և XX դ. սկզբին հայ և մուսուլման բուրժուազիաների ներհակ շահերն ավելի ցցուն կերպարանք էին ստանում: Բացի այդ՝ նրանց միջև տնտեսական մրցակցությունն արագորեն ընթանում էր դեպի քաղաքական առճակատման կողմը:

Կարևոր է նշել, որ XIX դ. երկրորդ կեսին Արևելյան Այսրկովկասի մուսուլման բնակչության շրջանում ազգային զգացումները դեռևս մթագնած էին: Որպես մուսուլման «ումմա»՝ առաջնությունը տրվում էր կրոնին, այլ ոչ թե ազգությանը: «Թյուրքախոս ազգ» հասկացությունը դեռևս հեռու էր իրողություն լինելուց: Էթնիկ համախմբման (կոնսոլիդացիայի) և ազգի ձևավորման գործընթացը դեռ նոր էր սկսվում:

Ժողովրդական զանգվածների խավարի ու հետամնացության վիճակը «ամենազոր մոլլաների» ուժեղ ազդեցության պայմաններում բարենպաստ պայմաններ էր ստեղծում պանիսլամիզմի և պանթյուրքիզմի գաղափարների՝ Արևելյան Այսրկովկաս ներթափանցման համար: Այդ գաղափարների քարոզչության մեջ ներգրավված էին Ահմեդ բեկ Աղաևը, Ալի բեկ Հուսեյին զադեն, Ալիմարդան բեկ Թոփչիբաշևը և շատ ուրիշներ: Նրանց քարոզչության հիմնական թիրախներից մեկը հայերն ու հայկական բուրժուազիան էին: Պանիսլամիստներն ու պանթյուրքիստները աշխատում էին ներշնչել մուսուլման բնակչությանը, որ հայ բուրժուազիան «տզրուկի պես ծծում է մուսուլմանների արյունը», որ հայերը ձգտում են «քանդել ու ոչնչացնել Օսմանյան կայսրությունը» և այլն:

XIX դ. 70–ական թթ. սկզբի տվյալներով՝ Ապշերոնի բոլոր նավթահորերը գլխավորապես հայկական կապիտալի ձեռքում էին: Նավթային արդյունաբերության մեջ մուսուլման դրամատերերը մղվել էին հետին պլան հայկական, ռուսական, իսկ ավելի ուշ՝ նաև օտարերկրյա կապիտալի կողմից:

XIX դ. երկրորդ կեսին Բաքվում գոյություն ունեցող 167 նավթարդյունաբերական ձեռնարկություններից հայ ձեռնարկատերերին պատկանում էին 55 ընկերություն (32,9%), ռուսներին՝ 21 (12,8%), հրեաներին՝ 17 (10,2%), վրացիներին՝ 6 (3,6%), օտարերկրացիներին՝ 19 ընկերություն (11,3%):

Եթե նավթային արդյունաբերության մեջ մուսուլմանների կապիտալը ներկայացված էր առավելապես մանր և միայն մասնակիորեն՝ միջին ձեռնարկություններում, ապա հայկական և ռուսական կապիտալները գերակշռում էին միջին և խոշոր ձեռնարկություններում: Այսպիսով՝ կապիտալի թյուրքախոս մուսուլման ներկայացուցիչներն իրենց ձեռքում էին պահում հիմնականում մանր և աննշան թվով միջին ձեռնարկությունները: Նույնպիսի վիճակ էր տիրում նաև նավթավերամշակման արդյունաբերության և մի շարք այլ բնագավառներում: 1907 թ. Բաքվում արտադրվող 447 միլիոն փութ նավթի 54,4 տոկոսը, 1917 թ.՝ 368 միլիոն փութի 53 տոկոսը պատկանել է հայերին: 1907 թ. քաղաքում գործող 154 ընկերություններից 89–ը

եղել են հայկական: Քաղաքի խոշորագույն առևտրական տունը պատկանել է Թումանյան եղբայրներին:

Բաքվի նավթային արդյունաբերության զարգացումը մեծ քանակությամբ բանվորական ուժ էր պահանջում: Այսրկովկասի տնտեսապես քայքայված, սակավահող ու հողազուրկ գյուղացիությունը հոսում էր դեպի Բաքու՝ օրվա հաց վաստակելու համար: Այստեղ ժամանակավոր կամ մշտական աշխատանքի էին գալիս գրեթե բոլոր ազգերի ներկայացուցիչները՝ հայեր, ռուսներ, թյուրքախոս մուսուլմաններ, վրացիներ, պարսիկներ և ուրիշներ:

1904 թ. Բաքվի հայ բնակչության ընդհանուր թիվը արդեն 51 340 շունչ էր: 1897 թ. տվյալներով՝ այդ քաղաքի նավթարդյունաբերության մեջ աշխատող բանվորների 29 տոկոսը հայեր էին (որոշ աղբյուրներում՝ 32 տոկոսը): Նրանց մոտավորապես 43 տոկոսը կադրային էին, իսկ 20 տոկոսից ավելին՝ վարպետներ: Մեխանիկական գործարանների բանվորների 30,8 տոկոսը նույնպես հայեր էին: Հայերն ավելի մեծ թիվ էին կազմում շինարարությունում և ծխախոտի ֆաբրիկաներում:

1880–ական թվականներից սկսած՝ Բաքուն Զանգեզուրից հազարավոր երիտասարդ կարող ուժ էր կլանում: Միայն 1884 թ՝. 10 ամսվա ընթացքում, Զանգեզուրից Բաքու աշխատանք որոնելու է մեկնել 2925 մարդ:

Բանվորության արտագնա հոսքն առանձնակի ուժեղանում էր անբերրի տարիներին (1883–1893, 1897–1898 և այլն): Զանգվածորեն Բաքու էին մեկնում նաև Երևանի նահանգից, Գանձակի, Արցախի, Զևանշիրի, Զեբրայիլի և այլ շրջաններից: Արտագնա բանվորների մի մասը, լրիվ կտրելով իր կապը գյուղի հետ, դառնում էր կադրային պրոլետար, մյուս մասը քաղաքում աշխատում էր տարվա որոշ ամիսներին, իսկ գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ վերադառնում էր իրենց գյուղերը:

Հատկապես մարդկային խոշոր զանգվածներ էին հոսում «սև ոսկու» քաղաքը Ատրպատականից: 1880 թ. տվյալներով այնտեղից եկող արտագնա բանվորների թիվը Բաքվում կազմում էր տարեկան 30–35 հազար մարդ: Իրականում նրանց թիվն ավելի մեծ էր, որովհետև շատերը սահմանն անցնում էին անլեգալ, առանց անձնագրի: Այդ բանվորների մեծ մասը մնում էր Բաքվում, իսկ մնացած մասն աշխատանք որոնելու փնտրտուքներում ցրվում էր ողջ Այսրկովկասով և Մերձկասպյան շրջաններով:

Այդ բանվորության մեծագույն մասը, չունենալով որևէ մասնագիտություն և աշխատանքային որակավորում, զբաղվում էր ցածր վարձատրվող սև աշխատանքով: Սակայն Բաքու էին գալիս նաև որակյալ բանվորներ Այսրկովկասի քիչ թե շատ խոշոր քաղաքներից և հատկապես Ռուսաստանի խոշոր արդյունաբերական կենտրոններից:

Հենց այս ամենով պայմանավորված՝ Բաքվի բանվորությունը բազմազգ էր: Ուշագրավ է նաև, որ հաճախ արդյունաբերողները և ձեռնարկությունների տերերն աշխատում էին իրենց մոտ աշխատանքի վերցնել սեփական ազգության բանվորներին: Այդ առթիվ Բաքվի ոստիկանապետը գրում էր. «Ամենուրեք ձգտում է նկատ-

վում ունենալու ծառայողներ ու բանվորներ իրենց ազգություններից: Օրինակ՝ Նոբելի մոտ շվեդացիներ են, անգլիական ընկերություններում՝ անգլիացիներ, տեղացիների մոտ, ինչպես, օրինակ՝ Մանթաշևի, Փիտոևի, Կասպիական ընկերության, Կովկասյան ընկերության և այլն, համարյա բոլորը հայեր են»:

Քանի որ գործարաններում աշխատանքը պահանջում էր բարձր որակավորում, իսկ թյուրքախոս մուսուլման բանվորներն իրենց ճնշող մեծամասնությամբ մասնագիտական որակավորում չունեին, ուստի գործարաններում բանվորների մեծ մասը հայեր ու ռուսներ էին: Իսկ կովկասյան թաթար բանվորներն առավելապես կատարում էին սև աշխատանք:

XX դ. սկզբին արդյունաբերության բազմաթիվ ճյուղերում օգտագործվում էր կանանց էժան աշխատանքը: Դա հատկապես բնորոշ էր մետաքսի գործարաններին, որտեղ կանայք կազմում էին հիմնական աշխատուժը: Լայնորեն օգտագործվում էր նաև անչափահասների և երեխաների աշխատանքը:

Արևելյան Այսրկովկասում բանվորները՝ նավթագործները, երկաթուղայինները, լեռնահանքային արդյունաբերության, կաշվի և այլ ձեռնարկությունների աշխատողներն անասելի շահագործման էին ենթարկվում: Շատ երկար էր աշխատանքային օրը, ցածր՝ վարձատրությունը, անմխիթար էին բանվորների կենցաղային պայմանները: Դրան ավելանում էր նաև ինքնակալության կողմից վարվող դաժան բռնությունների ու հարստահարման քաղաքականությունը ոչ ռուսների նկատմամբ: Լայնորեն կիրառելով «Բաժանի՛ր, որ տիրես» քաղաքականությունը՝ ցարական կառավարությունը ազգերին հանում էր միմյանց դեմ, կազմակերպում ազգամիջյան երկպառակություններ, բախումներ, կոտորածներ, ինչպես նաև բռնի ռուսաֆիկացման քաղաքականություն: Ազգային ճնշումների նկատմամբ դիմադրության ամեն մի շարժում ճզմվում էր անողոք դաժանությամբ:

XIX դ. երկրորդ կեսին ձևավորվեց մեծապետական շովինիզմի ազգայնական գաղափարախոսությունը, որը ատելությամբ էր լցված ռուսական կայսրության «ծայրամասային շրջանների» ճնշված ժողովուրդների նկատմամբ:

Ռուսաստանում ազգային–գաղութային ճնշումը առանձնակի այլանդակ ձևեր ընդունեց XIX դ. 80–ական թթ., երբ Ալեքսանդր Բ ցարի դեմ մահափորձից հետո ուժգին հալածանքներ սկսվեցին կայսրության ոչ ռուս ժողովուրդների նկատմամբ: Ցարական գրաքննության խիստ հսկողության տակ վերցվեցին պարբերական մամուլը, մշակութային–լուսավորական և բարեգործական ընկերությունները: Ռուսական իշխանությունները անվստահություն էին տածում տեղացիների նկատմամբ՝ նրանց վարչակառավարչական ապարատում ներգրավելու հարցում, ուստի թափուր պաշտոնները զբաղեցնելու համար, որպես կանոն, հրավիրում էին մարդկանց Ռուսաստանի հեռավոր անկյուններից՝ նշանակելով բարձր ռոճիկներ:

Բնական է, որ այդ քաղաքականությունը առաջ էր բերելու հակազդեցություն, ինչպես նաև տեղիք էր տալու դժգոհությունների, հուզումների, խլրտումների և նույնիսկ ապստամբական շարժումների: Միաժամանակ պատմական ասպարե-

զում մուսուլման բնակչության կազմից հանդես էին գալիս մարդիկ, որոնք ունակ էին կրոնի գաղափարները տարբերելու ազգություն հասկացությունից:

Հասարակական գրգռվածության ալիքները, որոնք XIX դ. 50–60–ական թթ. համակել էին ողջ Ռուսաստանը, հասնում էին նաև Կովկաս, այդ թվում նաև Արևելյան Այսրկովկաս: Ստեղծված վիճակից ելք գտնելու ուղիների մասին հարցը վերածվեց հասարակությանը հուզող կարևոր խնդիրներից մեկի: Հանուն հասարակական առաջընթացի շարժման սկսեցին հանդես գալ մուսուլման մտավորականության մի շարք աչքի ընկնող ներկայացուցիչներ, որոնց թվում էին Կ. Բ. Ղաքիրը, Մ. Ֆ. Ախունդովը և ուրիշներ, որոնք 1850–1860–ական թթ. անողոք քննադատության էին ենթարկում փտած ու իրեն սպառած ավատատիրական կարգերը, խավարամտությունն ու հետամնացությունը, ինչպես նաև ցարիզմի ազգային–գաղութային ծանր լուծը: Սակայն մուսուլման մտավորականության շարքերում քիչ չէր նաև այն մարդկանց թիվը, որոնք երկրի առջև կանգնած մարտահրավերների լուծումը փնտրում էին նախասկզբնական կամ Մուհամմեդ մարգարեի ժամանակների իսլամին վերադառնալու մեջ: Նրանց կարգախոսն էր. «Մենք գնալու ենք մեր նախնիների ճանապարհով»:

Իր քաղաքական զարգացման բնազավառում առաջին քայլերը կատարող կովկասյան թաթարների բուրժուազիան, որը կոչված էր ղեկավարելու սեփական ժողովրդի պայքարը ցարիզմի ազգային ճնշումների դեմ, հաճախ այդ խնդիրը մղում էր երկրորդ պլան՝ առաջնությունը տալով այլազգի և առաջին հերթին հայկական բուրժուազիայի դեմ մղվող պայքարին: Այդ բուրժուազիան հակված էր նաև դաշինքի մեջ մտնել ռուսական ցարիզմի հետ հանուն իր գլխավոր նպատակի՝ հայկական ազգային բուրժուազիայի դուրս մղման: Այդ նույն նպատակով նա սերտորեն համագործակցում էր նաև մուսուլման կալվածատիրական–կղերական տարրերի հետ:

Մի խոսքով՝ թյուրքախոս մուսուլման բուրժուազիան գնալով ավելի ու ավելի էր վերածվում հետադիմական ուժի: Այն ամբողջապես թաթախված էր պանիսլամիզմի և պանթյուրքիզմի գաղափարախոսությամբ: Բաքվում հրատարակվող «Կասպիյ» թերթում պանիսլամիզմի գաղափարների քարոզչությամբ հանդես էին գալիս Ահմեդ բեկ Աղաևը, Ալի բեկ Հուսեյինզադեն և ուրիշներ: Պանիսլամիզմը թյուրքախոս հանրույթի պատմուճանով հանդես էր գալիս այլադավան «անհավատների» դեմ, ձգտում էր Այսրկովկասում սրել ազգամիջյան հարաբերությունները, մուսուլմաններին հրահրել հայերի դեմ:

Հակահայկական առավել ռազմաշունչ տրամադրություններով էր համակված պանթյուրքիզմը, որն իր առջև նպատակ էր դրել համախմբելու համայն աշխարհի թրքությանը օսմանյան Թուրքիայի տիրապետության ներքո և Այսրկովկասի վրայով ճանապարհ բացելու դեպի Թուրան՝ դեպի թրքության բնօրրան Կենտրոնական Ասիա: Իթթիհադականների կողմից շրջանառության մեջ դրված ռասայական այդ գաղափարախոսությունը հանդես էր գալիս որպես հայ ժողովրդի ոխերիմ թշնամի: Պանթյուրքիզմի գաղափարախոսությունը համահունչ էր Այսրկովկասի

թյուրքախոս բուրժուակալվածատիրական շրջանների քաղաքական ձգտումների հետ:

Միայն նավթարդյունաբերությունը չէր, որտեղ հայկական կապիտալը ձեռք էր բերել առաջատար դիրքեր:

Մետաքսագործության և մետաքսյա կտորեղենի արտադրության բնագավառում ևս հայ ձեռնարկատերերը զբաղեցնում էին կարևորագույն դիրքեր: Այդ բնագավառում խոշոր արդյունաբերողների թվին էին պատկանում Մեսրոպովն ու Միքայել Գյանջունցևը Նուխիում, Արունյանցը, Քյամալյանցը, Ներսեսովը, Զուրաբովը և ուրիշներ Արցախում:

Ձկնարդյունաբերության մեջ ևս առաջատար դիրքերը պատկանում էին հայ ձեռնարկատերերին: Այդ բնագավառը հիմնականում կենտրոնացած էր Միրզոևի, Կորգանովի, Անանևի, Մանթաշևի, Լիանոզովի, Ղուկասովի, Մայիլովի, Փիրալովի, Կամոևների, Փիթոևների, Վենեցովների և այլոց ձեռքում: Հայկական կապիտալը լայնորեն ներկայացված էր նաև ծովային և գետային տրանսպորտի, գինեգործության, սպիրտի արտադրության (Արունյաններ), ծխախոտագործության (Միրզաբեկյաններ), աղի հանույթի և բազմաթիվ այլ բնագավառներում: Նշված բոլոր բնագավառներում մուսուլման կապիտալի մասնակցությունը խիստ աննշան էր:

Երկրամասի տնտեսական կյանքի կարևորագույն բնագավառներից էր նաև ներքին և արտաքին առևտուրը: Առևտրական խոշոր կենտրոններ էին Բաքուն, Շամախին, Գանձակը, Շուշին, Նուխին, Օրդուբադը և այլն: Առևտրի բնագավառում ևս չափազանց ուժեղ էին հայկական կապիտալի դիրքերը: Այնպիսի խոշոր հայ վաճառականներ, ինչպիսիք էին Արամյանցը, Անանովը, Մայիլովը, Օգանեսովը, Արաֆելովը, Դովլաթովը, Ջանփոլադովը, Աֆրիկովը և ուրիշներ, խոշոր առևտրական գործառնություններ էին կատարում Թիֆլիսում, Բաքվում, Երևանում, Թավրիզում, Կոստանդնուպոլսում, Ռուսաստանի քաղաքներում և Եվրոպայի այլևայլ վայրերում:

Արևելյան Այսրկովկասի քաղաքների մեջ առանձնակի աչքի էր ընկնում Շուշին, որի հայ վաճառականները զբաղվում էին միջազգային առևտրով, հատկապես Իրանի հետ: Քաղաքի հայ վաճառականները սերտ կապերի մեջ են եղել նաև Մոսկվայի, Պետերբուրգի և եվրոպական այլ քաղաքների հետ:

Քաղաքներում բարձր զարգացման էր հասել նաև մետաքսագործությունը, գորգագործությունը, բամբակագործությունը, գինեգործությունը և այլն: Շուշիի գորգագործների ու մետաքսյա կտորեղենի արտադրանքները տարածվել են Ռուսաստանում և Արևմտյան Եվրոպայում: Լինելով Թիֆլիսից Բաքու և Կասպից ծովի ափեր տանող առևտրական կարևոր ուղու վրա՝ Շուշին առևտրական ու արհեստագործական կարևոր կենտրոններից մեկն էր ողջ Այսրկովկասում: Շուշին ոչ միայն քաղաք էր, այլև ամրոց: Չափազանց մեծ էր նրա ռազմավարական նշանակությունը:

Շուշին ունեցել է հարուստ կրթական և մշակութային կյանք: Այնտեղ գործում էին հայկական դպրոցներ, գրադարաններ, տպագրություն և այլն: Քաղաքում

ձևավորվել էր նաև ստվարաթիվ հայ մտավորականություն: 1820–ական թթ. կեսերից այնտեղ գործել են Բազելի Ավետարանական ընկերության միսիոներական հայկական դպրոցը և տպարանը: Դպրոցը տվել է մեծ թվով ուսուցիչներ ու քարոզիչներ, իսկ տպարանը հրատարակել է հոգևոր ու աշխարհիկ բովանդակությամբ բազմաթիվ գրքեր: 1837 թ. ցարական կառավարությունն արգելել է միսիոներների գործունեությունը, սակայն հայկական տպարանը շարունակել է գործել: 1838 թ. բացվել է Շուշիի թեմական դպրոցը, որը հիմնականում պատրաստել է տարրական դպրոցի ուսուցիչներ: Դպրոցում ստեղծվել է քաղաքի առաջին գրադարանը: Այդ դպրոցը թեմի միակ ազգային արական միջնակարգ դպրոցն էր: Դասավանդվել են հայոց լեզու, ռուսաց լեզու, պարսկերեն, թվաբանություն, կրոն, երգեցողություն և այլն: Թեմական դպրոցը 1917 թվականից գործել է որպես լրիվ միջնակարգ դպրոց:

XIX դ. վերջին և XX դ. առաջին քսանամյակում Շուշիի ուսումնական կյանքում խոշոր դեր է կատարել ռեալական դպրոցը, որը հիմնադրվել է 1881 թ.: Դպրոցում դասավանդել են ռուսաց լեզու ու գրականություն, գերմաներեն, մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, բնագիտություն, վայելչագրություն, գծագրություն, երգ և երաժշտություն, կրոն: Հայերենը եղել է ոչ պարտադիր: Դպրոցը հիմնականում պատրաստել է տարրական դպրոցի ուսուցիչներ և առևտրի աշխատողներ: Սովորողների գերակշիռ մասը եղել են հայեր: Դպրոցը պահվել է պետական միջոցներով, ունեցել է հարուստ գրադարան և ուսումնական կաբինետներ: XIX դ. սկզբին շուշեցի վաճառական Գ. Ա. Առաքելյանի (Առաքելով) միջոցներով կառուցվել է ուսումնարանի նոր շենք:

Շուշիում լույս են տեսել տասնյակից ավելի թերթեր ու հանդեսներ: Առաջինները՝ ամենօրյա կրոնական–մանկավարժական «Հայկական աշխարհ» (1864–1871, 1874–1879), ապա՝ «Քնար խոսնակ» (1881) պարբերականներն են, որոնց հետևեցին «Գործ (1882–1884), «Ազգագրական հանդես»–ի առաջին գիրքը (1895), «Ղարաբաղ»–ը (1911–1912), «Ծիածան» ամսագիրը (1916), «Փայլակ»–ը (1915–1917), «Նեցուկ»–ը (1917):

Շուշին տվել է գրական մի շարք նշանավոր դեմքեր: Այստեղ են ծնվել ականավոր պատմաբան գրող Լեոն, Մուրացանը:

Շուշիի առաջին թատերախմբի ներկայացումները տրվել են քաղաքի լսարան–ակումբում: 1865 թ. թիֆլիսահայ դերասաններ Գ. Չմշկյանը, Մ. Ամրիկյանը, Ս. Մանդինյանը տեղական ինքնագործ ուժերի հետ միասին բեմադրել են «Վարդան Մամիկոնյան», «Շուշանիկ», «Ծկոլի վարժապետը» և այլն, որոնց օրինակով հետագայում բեմադրվել են նաև Ղարաբաղի բարբառով գրված պիեսներ: 1882 թ. այստեղ հյուրախաղերով հանդես է եկել Պետրոս Ադամյանը: 1891 թվականից Շուշիում գործել է «Խանդամիրյան թատրոնը», որի բեմում հաճախ տրվել են նաև ռուսերեն ու թուրքերեն ներկայացումներ: Թատրոնում ու քաղաքի այլ ակումբներում հյուրախաղերով հանդես են եկել Սիրանույշը, Գ. Պետրոսյանը, Հ. Աբելյանը, Գ. Ավետյանը, Հ. Զարիֆյանը, Սաֆրազյան ամուսինները: Հ. Աբելյանը հայ ու կով-

կայան թաթար դերասանների ուժերով առաջին անգամ Արևելյան Այսրկովկասում բեմադրել է Շեքսպիրի «Օթելլոն»:

Շուշին զգալի դեր է խաղացել նաև ժողովրդական երաժշտական արվեստի զարգացման գործում: Այսրկովկասում ճանաչված են եղել շուշեցի երաժիշտները, որոնք մշակել–կատարելագործել են արևելյան երաժշտության զանազան ժանրեր: Շուշիում են ծնվել ու ստեղծագործել բազմաթիվ հայ երաժիշտ–կատարողներ ու երգահաններ:

Շուշիում քաղաքաշինությունը զարգացել է Արցախը Ռուսաստանին միանալուց հետո: Առաջին գլխավոր հատակագիծը կազմել են ռուս ռազմական ինժեներները 1820–ական թթ. (վերակազմվել է 1837, 1844 և 1855 թթ.): Կառուցապատվել են հայաբնակ թաղամասերը, որոնցից յուրաքանչյուրն ունեցել է իր եկեղեցին: Կառուցվել են քաղաքատիպ բնակելի և հասարակական շենքեր՝ տպարաններ, դպրոցներ, ուսումնարաններ, ակումբ–գրադարաններ, խանութներ, հյուրանոցներ: Շուշիի բնակելի տները XIX դ. հայկական ժողովրդական ճարտարապետության արժեքավոր նմուշներ են: Սրբատաշ կրաքարից կառուցված եկեղեցիները հինգն էին՝ Կուսանաց անապատի Ս. Աստվածածինը (1816 թ., չի պահպանվել), Ս. Հովհաննես Մկրտիչը («Կանաչ ժամ», 1818), Ագուլեցոց Ս. Աստվածածին (1822), Մեղրեցոց Ս. Աստվածածին (1838), Ղազանչեցոց Ամենափրկիչ մայր տաճարը, որն իր չափերով հայկական մեծ եկեղեցիներից է:

Բնակչության ընդհանուր հետամնացության և համատարած անգրագիտության պայմաններում Արևելյան Այսրկովկասի գավառներում գրադարանները համարյա լրիվ բացակայում էին: Բավական է ասել, որ թյուրքախոս մուսուլմանների առաջին հանրային գրադարանը բացվել է 1894 թ.: Ուստի երևույթ էր, որ դեռևս XIX դ. 50–ական թվականներին Շամախիում հայերի կողմից բացվում է հանրային գրադարան, որը ստանում էր մինչև 128 օրինակ պարբերական հրատարակություններ ռուսաց և հայոց լեզուներով: Դարձյալ հայերի կողմից մի ոչ մեծ գրադարան է բացվում Գանձակում 1868 թ.: Իսկ 1887 թ. միայն Բաքվում արդեն գործում էր 3 գրադարան:

Բաքուն եղել է Այսրկովկասի հայերի հասարակական–քաղաքական ու մշակութային նշանավոր կենտրոններից մեկը: Բաքվում հայերը բնակվել են վաղ միջնադարից: Մինչև XIX դ. 20–ական թթ. Բաքվի հայ ընտանիքների մեծամասնությունը դեռևս ապրում էր Ս. Աստվածածին եկեղեցու շրջակայքում, հին քաղաքի կենտրոնական մասում, նրա միջուկը կազմող բերդի շրջանում՝ բերդաթաղում: Քաղաքի աստիճանական զարգացման հետևանքով հայերը սկսում են բնակվել նաև բերդի և քաղաքի հարավային կողմում՝ արվարձանում:

1820–1860–ական թվականներին ռուսական իշխանությունները Բաքուն ծառայեցրել են որպես աքսորավայր: Տարբեր պատճառներով այստեղ են աքսորվել նաև մի շարք հայեր, որոնց թվում՝ Արցախի մելիքներ՝ ռուսական կառավարության նկատմամբ «անհավատարմության» մեղադրանքով:

XIX դ. 40–ական թթ. սկզբներին Բաքուն աստիճանաբար զարգանալով բերդաքաղաքից վերաճում էր աչքի ընկնող առևտրական ու տնտեսական կենտրոնի: Արդյունաբերական քաղաքի վերելքի հետ այնտեղ աճել է նաև հայության թիվը: 1897 թ. մարդահամարի տվյալներով՝ Բաքվի բնակչության ընդհանուր թիվը կազմել է 182 897 մարդ, որից հայ՝ 22 506: 1915 թ. տվյալներով՝ Բաքուն ունեցել է 86,5 հազար հայ բնակիչ: Հայերն ապրել են որոշակի թաղամասերում ու քաղաքի մերձակա ավաններում: XX դ. սկզբին թաղամասային սահմանները վերացել են. հայաշատ են մնացել Հայկաշեն (Արմենիքենդ) և Զավակզալնի կոչված թաղամասերը, ինչպես նաև քաղաքի կենտրոնը: Բաքուն եղել է հայ մշակույթի նշանավոր կենտրոն: Քաղաքում լույս են տեսել բազմաթիվ պարբերականներ, գրքեր, գործել են հայկական դպրոցներ, մշակութային այլազան կենտրոններ: Քաղաքում չափազանց մեծ է եղել հայ տեխնիկական մտավորականության տեսակարար կշիռը:

1863–1869 թթ. Բաքվի հայերը կառուցել են Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին (Կույսի աշտարակի մոտ): 1895 թ. օծվել է Բաքվի հայկական գերեզմանատան Ս. Հովհաննես Մկրտիչ մատուռ–եկեղեցին, 1911 թ.՝ Ս. Թադեոս և Բարդուղիմեոս եկեղեցին: Հայկաշեն թաղամասում գործել է Ս. Թարգմանչաց եկեղեցին:

Բաքվում առաջին հայկական դպրոցը բացվել է 1860 թ.՝ Ա. Տեր–Ղուկասյանի ջանքերով: XIX դ. վերջին գործում էր հայկական 12 դպրոց: Մինչև 1918 թ. դպրոցների թիվը հասել է 21–ի: 1903 թ. մարդահամարի տվյալներով՝ բաքվեցիների մեջ բարձրագույն կրթություն ունեցողների թիվը ռուսների շրջանում կազմել է 1,2 տոկոս, հայերի մեջ՝ 1,5 տոկոս, իսկ թաթարների ու պարսիկների մեջ՝ 0,1 տոկոս:

Բաքվի հայ համայնքի ներքին ազգային կյանքը այլ կազմակերպությունների հետ տնօրինել է Հայոց կենտրոնական ազգային բյուրոյի ներկայացուցչությունը, 1917 թվականից՝ Բաքվի Հայոց Ազգային խորհուրդը (կազմալուծվել է 1920 թ.): 1864 թ. մայիսի 21–ին հիմնված Բաքվի Հայոց մարդասիրական բարեգործական ընկերությունը (լրիվ անվանումը՝ «Հայոց մարդասիրական ընկերութիւն յանուն Ս. Գրիգորի Լուսաւորչին») զգալի ներդրում է կատարել Արևելյան Այսրկովկասի հայության շրջանում դպրոցներ և մշակութային օջախներ ստեղծելու գործում: Նրա հիմնական նպատակը եղել է «լուսավորութիւն և բարեգործութիւն տարածել ռուսի հպատակ գտնուած Հայոց մէջ առանց զանազանելու նոցա կոչումը և դաւանութիւնը»:

«Մարդասիրական ընկերությունը» հիմնվել է բժշկապետ Դ. Հ. Ռոստոմյանցի, Մ. Զ. Զոհրապյանցի և Բաքվի այլ ազդեցիկ հայերի նախաձեռնությամբ՝ լուսավորական, մշակութային և բարեգործական գործունեություն ծավալելու նպատակով: Իրավունք է ունեցել գործելու Ռուսաստանի հայաբնակ վայրերում: Հաշվետու է եղել Կովկասի փոխարքային և Բաքվի նահանգապետին: Մինչև 1875 թ. գործունեություն է ծավալել հիմնականում Բաքվում: Ընկերության աշխատանքն առավել բեղմնավոր է եղել 1875–1899 թթ.: Այն ընդգրկել է Ռուսաստանի հայաբնակ վայրերը, մասամբ նաև Արևմտյան Հայաստանը և նյութական օգնություն է ցույց տվել կարիքավոր հայ ուսանողներին, աշակերտներին, մտավորականությանը, այրինե-

ին, որբերին, գաղթականներին, նշել է մշակութային և հասարակական գործիչների ու կազմակերպությունների հոբելյանական տարելիցները, կազմակերպել դասախոսություններ, համաճարակների դեմ պայքարի սանիտարական խմբեր, բացել է հիվանդանոցներ, ճաշարաններ, կար ու ձևի դասընթացներ: 1870–1879 թթ. Մարդասիրականը բացել է թանգարան, որտեղ հավաքվել են ձեռագրեր, հնատիպ գրքեր, հայ գործիչների արխիվներ: 1870 թ. բացվել է գրադարան (1880–ին՝ կից ընթերցարան), որտեղ տարբեր տարիների աշխատել են Ծիրվանզադեն և Լեոն: Գրադարանից ու ընթերցասրահից օգտվել են բոլորը՝ առանց ազգի և կրոնի խտրության: 1894 թ. ստեղծվել է գրական ֆոնդ: Մարդասիրական ընկերությունը մասնակցել է Բաքվի հասարակական–քաղաքական կյանքին, ներկայացուցիչ ունեցել խորհրդում: Կառուցել է դպրոցներ, դրանք ապահովել գույքով և դասագրքերով: Նյութական օգնություն է ցույց տվել նաև Ղուբայի, Գանձակի, Նուխիի, Շամախիի գավառների հայկական դպրոցներին:

1899 թ. Ռուսաստանի ներքին գործերի նախարար Ի. Լ. Գորեմիկինը հաստատել է Մարդասիրական ընկերության նոր կանոնադրությունը, որով այն զրկվում էր մշակութային և ուսումնական գործունեություն ծավալելու իրավունքից: Այդ պատճառով ընկերությունն իր գումարների մի մասը նվիրաբերել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանին, Շուշիի հայոց հոգևոր դպրոցին և Բաքվի քաղաքային ինքնավարությանը:

Մարդասիրական ընկերությունը նյութական օգնություն է ցույց տվել 1904–1905 թթ. ռուս–ճապոնական պատերազմում վիրավորվածներին և զոհվածների ընտանիքներին, 1902 թ. Շամախիի երկրաշարժից, 1904 թ. և 1910 թ. Բաքվում խոլերայի համաճարակից տուժած բնակիչներին, 1908–1911 թթ. Բաքվից Արևմտյան Հայաստան վերադարձող գաղթականներին:

1900–1917 թթ. գործել է Մարդասիրական ընկերության թատրոնը, որտեղ ելույթներ են ունեցել Սիրանույշը, Աբեղյանը, Ալիխանյանը, Ազնիվ Հրաչյան, Հ. Զարիֆյանը և ուրիշներ:

1913 թ. ցարական իշխանությունները վերականգնել են Մարդասիրական ընկերության մշակութային և ուսումնական գործունեության իրավունքը: 1914 թ. ընկերությունը մասնաճյուղ է բացել Շամախիում: Առաջին աշխարհամարտի տարիներին այն հավաքագրել է կամավորներ, վիրավորների համար բացել հիվանդանոցներ: 1914 թ. Մարդասիրական ընկերությանը կից ստեղծվել է հայ կանանց կոմիտե, 1915 թ.՝ գաղթականական կոմիտե: Օգնություն է ցույց տրվել նաև այլազգի կարիքավորներին: 1918 թ. Մարդասիրական ընկերությունը մասնակցել է թուրքական բանակի դեմ Բաքվի պաշտպանությանը: 1920 թ. մայիսին Մարդասիրական ընկերությունը դադարեցրել է իր գործունեությունը: Հիրավի, Մարդասիրականը դարձել էր Բաքվի հայության ինքնակազմակերպման մի զորավոր և արդյունավետ մարմին: Հայաշատ այդ քաղաքում գործել է նաև «Բաքվի հայոց աղքատախնամ եկեղեցական հոգաբարձությունը», «Բաքվի հայոց կուլտուրական միությունը» և բազմաթիվ այլ մշակութային ու մարդասիրական կառույցներ:

Բաքվի հայկական թատրոնը զգալի դեր է խաղացել ազգային թատերական արվեստի զարգացման գործում: Հայկական թատրոնի զարգացմանը մեծապես նպաստել են Մարդասիրական ընկերությունը և «Բաքվի հայոց կուլտուրական միությունը»:

Բաքվում առաջին տպարանը («Արոր») ևս հիմնել է Մարդասիրական ընկերությունը 1870 թ.: Իր գործունեության 13 տարվա ընթացքում տպարանը հրատարակել է 20–ից ավելի գրքեր, որոնցից նշանավոր են «Հնդկացւոյ անցքը անմարդաբնակ կղզիներում» թարգմանական վիպակը, «Սոխակ Հայաստանի» երգարանի չորս պրակները, Մխիթար Գոշի, Օլիմպիանոսի և Եզոպոսի առակները, Մարդասիրական ընկերության հաշվետվությունները: 1877–1878 թթ. այդ տպարանում է տպագրվել Խորեն Ստեփանեի «Հայկական աշխարհ» պարբերականը: 1874 թվականից Բաքվում գործել են «Մալաֆյանց և Ընկ.», 1876–ից՝ Ա. Ղասաբյանցի տպարանները: 1885–ից մինչև դարավերջ բացվել են նաև մի շարք նոր տպարաններ: 1906 թ. հասարակական–քաղաքական գործիչ Կ. Խատիսյանի ջանքերով Բաքվում հիմնադրվել է նաև «Բաքվի հայոց կուլտուրական միություն» հասարակական կազմակերպությունը, որի նպատակն էր ընդարձակել հանրակրթական և մասնագիտական դպրոցների ցանցը, նպաստել ինքնուրույն և թարգմանական գրականության հրատարակությանը, հայոց լեզվի, երաժշտության, կերպարվեստի, ճարտարապետության, բեմական գործի զարգացմանը: Ժամանակի խոշորագույն ձկնարտադրող Եղիա Մայիլյանը 1908 թ. Բաքվում կառուցում է օպերային թատրոնի շենքը, որն առաջինն էր ամբողջ մուսուլման աշխարհում:

Հայերը գործուն մասնակցություն են ունեցել Արևելյան Այսրկովկասի տնտեսական կյանքին: Խոշոր դրամատեր–արդյունաբերողների մեջ առանձնապես աչքի է ընկնում Ալեքսանդր Մանթաշյանը (Մանթաշև, 1849–1911): Նա եղել է «Թիֆլիսի առևտրական բանկ»–ի (մասնաճյուղեր է ունեցել Բաքվում և Բաթումում) գլխավոր բաժնետերը, 1899 թ. հիմնել է «Ա. Մանթաշյանց և Ընկ. առևտրական տուն» բաժնետիրական ընկերությունը: Ռուսական կառավարության հովանավորությամբ օտարերկրյա ընկերությունների հետ կատարել է մի շարք առևտրաֆինանսական գործարքներ և դարձել Ռուսաստանի մեծահարուստներից մեկը: Նրա ընկերությունը մասնաճյուղեր է ունեցել Ռուսաստանի, Լեհաստանի, Թուրքիայի, Ռումինիայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Եգիպտոսի, Իրանի, Հնդկաստանի տարբեր քաղաքներում:

Ալեքսանդր Մանթաշյանն ունեցել է բազմաթիվ շոգենավեր, կալվածքներ, տներ: Նա խոշոր գումարներ է ծախսել բարեգործական նպատակներով՝ Թիֆլիսում հիմնել է «Մանթաշյան առևտրական դպրոցը», կառուցել Ներսիսյան դպրոցի նոր շենքը, վերանորոգել Մայր եկեղեցին և այլն: 1894 թ. մեծ նվիրատվություն է կատարել «Կովկասի հայոց բարեգործական ընկերությանը»:

Քանի որ Բաքվի հայ առևտրաարդյունաբերողների առևտրական շրջանառության զգալի մասն իրականացվում էր Կասպից ծովով, հայ առևտրաարդյունաբերողներն ունեին նավամատույցներ և սեփական շոգենավեր: Այսպես՝ «Թուման» և «Մուխսախա», «Գրիգոր Թումանյանց» անուններով շոգենավերի տերն էր խոշոր

նավթարդյունաբերող Գր. Թումանյանը, Պողոս և Բաղդասար Սարգսյան եղբայրների ընտանիքներին էր պատկանում «Գրիգոր Արծրունի» շոգենավը, Ալ. Մանթաշյանցին է պատկանել «Հուսիկ» անունը կրող առագաստանավը: Բացի դրանից՝ նա բազմաթիվ շոգենավեր ուներ Բաթումում և Կ. Պոլսում, իսկ Պարսից ծոցում՝ նաև շոգենավային ընկերություն՝ «Ռուսական շոգենավային ընկերություն» անվամբ: Սեփական նավեր ունեին նաև Սաբուխանյանները, Լիանոսյանները և Թումանյանները: «Թումանյան եղբայրներ առևտրական ընկերությունը» մարդատար շոգենավեր ուներ Բաքվում ու Էնզելիում և երկու բեռնատար նավ:

Սեփական շոգենավերի, այդ թվում նաև օվկիանոսային նավերի տերեր էին Միրզոյանները, Ղուկասյան եղբայրները, «Եղբ. Ադամյան» առևտրական ընկերությունը, իսկ «Եղբ. Բունիաթյան» ընկերությունը Կասպից ծովում ուներ սեփական նավատորմիղ, որը համարվում էր ռուսական ներքին շուկայի խոշոր արտահանողներից մեկը: Կասպից ծովում բեռնափոխադրումներ են կատարել նաև հայկական այլ ընկերությունների և առանձին անհատների «Մասիս», «Արարատ», «Կիլիկիա», «Անի», «Սևան», «Արմենիա», «Արմենակ», «Արցախ», «Հայաստան», «Շուշանիկ», «Արաքս», «Վան», «Մուշ», «Զանգի», «Արծուի Վասպուրական», «Թամարա», «Արշալույս», «Աննա», «Մենաստան», «Վահան» մարդատար և ապրանքատար շոգենավերն ու առագաստանավերը:

Հայ նավթարդյունաբերողներն ունեին նաև կերոսին տեղափոխող հատուկ նավեր («Հայկական շոգենավային ընկերություն», «Արմենյակ», Արաֆելյանի «Ռաֆայիլ», Թումանյանի «Ադմիրալ», «Լազար», «Կոնստանդին»):

Բաքուն Այսրկովկասում հայ մտավորականության աչքի ընկնող կենտրոններից մեկն էր: Այդ քաղաքի հասարակական–քաղաքական կյանքի գրեթե բոլոր բնագավառներում հայերն ունեցել են առաջատար դիրքեր: Բաքվի և Ապշերոնյան թերակղզու մյուս բնակավայրերի կառուցման ու քաղաքաշինության ոլորտում չափազանց մեծ է հայ ճարտարապետների ու շինարարների խաղացած դերը:

Բաքվի քաղաքային բնակչության ընկերային կառուցվածքի մեջ հատկապես XIX դ. վերջին տասնամյակներին առանձնահատուկ տեղ ուներ հայ մտավորականությունը: Տեխնիկական մտավորականության հետ մեկտեղ այնտեղ հաստատվել էին նաև գրողներ, դերասաններ, երաժիշտներ, նկարիչներ, ուսուցիչներ, բժիշկներ և այլն:

Առհասարակ, հայերն ընդգրկված էին Բաքվի հասարակական–քաղաքական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում, պատասխանատու պաշտոններ էին վարում քաղաքի կառավարման համակարգում:

Բաքվի հայերից ոմանք եղել են քաղաքագլուխներ: 1840–ական թթ. կեսերին Բաքվի քաղաքապետն էր Արղության նշանավոր իշխանական տոհմի ներկայացուցիչ պորուչիկ Պավել Փարսադանի Արղության–Երկայնաբազուկը: Տարբեր տարիների մեծ թվով բարձրաստիճան հայեր պաշտոններ էին զբաղեցնում Բաքվի քաղաքային դումայի գործադիր մարմնում: Հայ ժողովրդի շատ զավակներ ակտիվ մասնակցություն են ունեցել Բաքվի և առհասարակ Արևելյան Այսրկովկասի քաղաքա-

կան կյանքին: Մեծ է եղել նաև հայ գործիչների դերը Բաքվի և Արևելյան Այսրկովկասի հայության պաշտպանության ու նրանց անվտանգության ապահովման գործում (Ստ. Շահումյան, Նիկոլ Դուման, Դրաստամատ (Դրո) Կանայան, Համազասպ, Արշակ Գավաֆյան («Քեռի»), Սեպուհ, Հաջի Գևո, Գ. Կորգանով և շատ ուրիշներ):

Բաքվի հասարակական–քաղաքական կյանքում հայերի ունեցած դերակատարությունը XX դարասկզբին դրսևորվեց նաև դիվանագիտության բնագավառում: Հատկանշական է, որ եվրոպական մի շարք երկրներ հիմնականում հայ գործիչներին էին Բաքվում նշանակում իրենց դիվանագիտական ներկայացուցիչներ: Օրինակ՝ երկար տարիներ Բելգիայի փոխհյուպատոսն է եղել Նիկոլայ Այվազյանը, Իտալիայինը՝ ախալցխացի Վահրամ Մութաֆյանը:

XIX դ. 90–ական թթ. սկզբներից Բաքվում գործում էին ՀՅ Դաշնակցության, Սոցիալ–դեմոկրատական հնչակյան, իսկ ավելի ուշ՝ Սոցիալ–դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության («Սպեցիֆիկներ») և Հայ Ժողովրդական կուսակցության մասնաճյուղերը: Հայ քաղաքական ուժերն իրենց մեծ դերակատարությունն են ունեցել նաև Ռուսաստանի սոցիալ–դեմոկրատական բանվորական (ՌՍԴԲԿ) և Սոցիալ–հեղափոխականների (Էսէռ) Բաքվի մասնաճյուղերի ստեղծման ու գործունեության մեջ: XIX դ. երկրորդ կեսի և XX դ. սկզբի հայ հասարակական–քաղաքական կյանքում զգալի դերակատարություն ուներ Ազգային բյուրոյի Բաքվի մասնաճյուղը: 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո, երբ դադարում է Ազգային բյուրոյի գործունեությունը, Բաքվի մասնաճյուղը վերանվանվում է Բաքվի հայ հասարակական և քաղաքական հոսանքների ժամանակավոր խորհուրդ (գործադիր կոմիտեի նախագահ՝ Հայկ Տեր–Միքայելյան, փոխնախագահ՝ Ա. Գյուլխանդանյան):

1917 թ. դեկտեմբերի 30–ին ստեղծվում է Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդի Բաքվի մասնաճյուղը, որի կազմում միջկուսակցական համաձայնությամբ առավել տեղեր է զբաղեցնում «ՀՅ Դաշնակցություն» կուսակցությունը:

Բաքվի քաղաքական կյանքում կարևոր դերակատարություն են ունեցել նաև հայ բոլշևիկները (Ստ. Շահումյան, Բ. Կնունյանց, Ս. Սպանդարյան, Ա. Միկոյան, Մ. Մելիքյան, Գ. Կորգանով, Ս. Հովսեփյան, Ա. Ամիրյան, Ս. Տեր–Գաբրիելյան և ուրիշներ):

Արևելյան Այսրկովկասի հայաշատ քաղաքների մեջ աչքի էր ընկնում նաև Շամախին, որը եղել է համանուն թեմի կենտրոնը: Այդ թեմին են ենթարկվել տարածաշրջանի բոլոր հայկական եկեղեցիները: Այդ քաղաքում պարբերաբար կրկնվող երկրաշարժերը (1668, 1806, 1828, 1859, 1902) նվազեցրել են հայերի թիվը: 1859 թ. երկրաշարժի հետևանքով քաղաքը մեծապես տուժել էր, սակայն բավականին արագ վերականգնվել և մտել էր բնականոն հունի մեջ:

Ըստ 1818 թ. Վիճակագրության՝ հայեր են ապրել Շամախիի մերձակա 38 գյուղերում, ինչպես նաև Նուխի քաղաքում և նրա մերձակա 47 գյուղերում: 1916 թ. Շամախիում ապրել է ավելի քան 4,5 հազար հայ: Քաղաքում գործել են տղաների և օրիորդաց (Ս. Սանդուխտյան) ծխական դպրոցները, Ս. Աստվածածին եկեղեցին:

1916 թ. Շամախիի և հարևան Գյոքչայի գավառներում գոյություն են ունեցել 45 հայաբնակ գյուղեր և ավաններ՝ ավելի քան 35 հազար հայ բնակչությամբ: Աչքի ընկնող բնակավայրերից էին Մադրասա ավանը, Ավանաշեն, Գանձակ, Գիրկ կամ Կիրկ, Զարգյարան, Հնդուր, Ղալագահ, Սաղիան և այլ գյուղեր: Այդ գյուղերում հայերը զբաղվել են այգեգործությամբ, հատկապես խաղողագործությամբ և շերամապահությամբ: Նրանց արտադրած գինիները արտահանվում էին Թիֆլիս, Բաքու, Անդրկասպյան երկրներ, Ռուսաստան:

Շամախին եղել է շիրվանահայության կրթական և մշակութային կյանքի հիմնական կենտրոնը: Արևելյան Այսրկովկասում առաջին օրիորդաց ուսումնական հաստատությունը բացվել է Շամախիում 1847 թ.: 1844 թ. հիմնվել է Շամախիի հոգևոր սեմինարիան, 1869 թ.՝ Սանդուխտյան օրիորդաց դպրոցը, 1864–ին՝ Ս. Ստեփանոս Նախավկա վանքին կից վանական դպրոցը: Գյուղերում գործել են եկեղեցական ծխական դպրոցներ, 1914–1915 ուսումնական տարում՝ 23 ծխական դպրոց:

1916 թ. Շամախիի հայոց թեմի երկու գավառներում գործել են 31 եկեղեցի և երկու վանք: Շամախիում գործել է հայկական թատրոն, գրադարան, ընթերցարան, տպարան: Քաղաքը եղել է Այսրկովկասում արհեստների և առևտրի նշանավոր կենտրոն: Նրա հայ վաճառականները զբաղվել են միջազգային և ներքին առևտրով: Նրանց ձեռքում է կենտրոնացած եղել հում մետաքսի առևտրի մեծագույն մասը: Շամախիում եղել են մետաքսաթելի արտադրության գործարաններ, որոնց գերակշռող մասը պատկանել է հայերին: Առհասարակ, այդ քաղաքը եղել է հայ առևտրական կապիտալի նշանավոր կենտրոններից մեկը:

1918 թ. օսմանյան զորքերի արշավանքի ժամանակ Շամախի քաղաքի և շրջակա գավառների հայ բնակչությունը թուրք ասկյարների և տեղական բաշիբոզուկների կողմից ենթարկվել է կոտորածի և ահավոր կողոպուտի:

Արևելյան Այսրկովկասի հայ բնակչություն ունեցող բնակավայրերից է եղել Զաքաթալան (պատմական Ճառ): Այդ քաղաքի հայկական համայնքը ձևավորվել է XIX դ. առաջին տասնամյակում, սակայն այնտեղ հայերը բնակություն են հաստատել դեռ միջնադարից: XVIII դ. առաջին կեսին Զաքաթալայի մի խումբ գյուղերի բնակիչների հարկադրել են իսլամ ընդունել: Քաղաքի հայերը 1851 թ. կառուցել են Ս. Գևորգ եկեղեցին, որին կից գործել է Ս. Վարդանյան դպրոցը: 1916 թ. Զաքաթալան ունեցել է ավելի քան 4,5 հազար բնակիչ, որից 2165–ը՝ հայեր, որոնք զբաղվել են հիմնականում առևտրով և արհեստներով: Զգալի թվով հայեր են բնակվել նաև մոտակա Կախի (Կախավան) գյուղաքաղաքում:

Զաքաթալայի հայ համայնքը անկում է ապրել 1918–1920 թթ. հակահայկական խժդժությունների հետևանքով:

Արևելյան Այսրկովկասի հնագույն հայկական բնակավայրերից է եղել Շաքին (մինչև 1968 թիվը այն կոչվել է Նուխի): Դեռևս VI դարում այն եղել է եպիսկոպոսանիստ քաղաք: Միջին դարերում Շաքիում բնակվել է հոծ հայ բնակչություն: XVIII դ. կեսին — XIX դ. սկզբին Շաքին եղել է Իրանի Շաքիի խանության կենտրոնը: 1805 թ.՝ Ռուսաստանին միանալուց հետո, Շաքիի խանությունը վերածվել է ռուսա-

կան ռազմական վարչությանը ենթակա գավառի, 1840 թվականին՝ Շաքիի գավառ Կասպիական մարզի կազմում, 1859 թվականից եղել է Բաքվի, 1868 թվականից՝ Ելիզավետպոլի նահանգի Նուխիի գավառի կենտրոնը:

1846 թ. ռուսական իշխանությունները Շաքին վերանվանել են Նուխի: Այդ անվանումը պահպանվել է մինչև 1868 թ., երբ Գանձակ–Ելիզավետպոլի նահանգի կազմավորումից հետո Նուխին դառնում է համանուն գավառի կենտրոնը: 1897 թ. անցկացված համառուսաստանյան առաջին մարդահամարի տվյալներով՝ Շաքիի հայ բնակչության թիվը եղել է 4186 մարդ, իսկ հետագայում աճ գրանցելով՝ 1916 թ. հասել է 8000 մարդու:

Նուխիի հայերի հիմնական զբաղմունքն են եղել արհեստները, այգեգործությունը, շերամապահությունը և այլն: Քաղաքում գործել են մետաքսաթելի գործարաններ, որոնց մեծ մասը պատկանել է հայերին: Քաղաքում գործել են «Ղարիպականաց» Ս. Աստվածածին, Ս. Հռիփսիմե և Ս. Մինաս եկեղեցիները, ինչպես նաև օրիորդաց Ս. Մարիամյան երկդասյա վարժարանը:

Նուխի գավառում մինչև 1918 թ. եղել են երեք տասնյակից ավելի հայաբնակ բնակավայրեր՝ ավելի քան 17 հազար բնակչությամբ: 1897 թ. տվյալներով՝ հայ բնակչության թիվը Նուխիի գավառում եղել է 14 713 մարդ, իսկ 1916 թ. հունվարի 1–ին՝ 17 751 մարդ:

1836 թ. մարտի 11–ին ցարական կառավարության կողմից ընդունված կանոնադրության («Պոլոժենիե») համաձայն՝ Նուխի և Արեշ գավառներն անցնում են Արցախի թեմի ենթակայության տակ: XIX դ. երկրորդ կեսին Նուխիի փոխանորդությունում կային գործող 45 եկեղեցիներ և 2 վանքեր:

Հայ բնակչության մի ստվար հատված բնակվում էր նաև Արևելյան Այսրկովկասի Ղուբա քաղաքում, որը ևս եղել է հայ առևտրական կապիտալի աչքի ընկնող կենտրոններից մեկը: Ղուբայի հայ վաճառականները հատկապես մասնագիտացել էին տորոնի առևտրի բնագավառում: Քաղաքի հայկական թաղամասում 1845 թ. կառուցվել է Ս. Աստվածածին եկեղեցին, գործել են հայկական ծխական արական ու իգական և եկեղեցական ծխական երկսեռ դպրոցներ: Ղուբայի գավառում եղել են հայկական երկու (Քիլվար, Խաչմաս) և մեկ մասամբ հայաբնակ (Ղարաջալի) գյուղեր:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ՄՈՒՍՈՒԼՄԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԷԹՆԻԿ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԳՐԱՎՈՐ ԹՅՈՒՐՔԱԼԵԶՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԻ ՎՐԱ

Ուսումնասիրելով թյուրքական ցեղերի գաղթը Արևելյան Այսրկովկաս՝ ամբողջ XIX դարում Ռուսական կայսրության քաղաքականության պայմաններում երկրամասի մուսուլմանների հասարակական կյանքում և գիտակցության մեջ տեղի ունեցած փոփոխությունները, Արևելյան Այսրկովկասի էթնիկ պատկերը, թյուրքալեզու գրավոր մշակույթի սկզբնավորումը և դրա ազդեցության տակ թյուրքախոս նոր մտավորականության ինքնության վերափոխումը՝ կարելի է գալ մի շարք խիստ ուշագրավ եզրահանգումների Արևելյան Այսրկովկասի մուսուլման բնակչության էթնիկ համախմբման գործընթացի վերաբերյալ:

Ինչպես ցույց է տրված հայ պատմաբանների աշխատանքներում, XIX դ. սկզբում Արևելյան Այսրկովկասի անցումը ռուսական տիրապետության տակ բեկումնային ազդեցություն է ունեցել երկրամասի մուսուլման բնակչության կյանքում: Նախ՝ մտնելով Ռուսական կայսրության վարչատարածքային համակարգի մեջ՝ Արևելյան Այսրկովկասը կտրվել է դարեր շարունակ շահական Պարսկաստանի հետ ունեցած քաղաքական կապերից: Ցարական իշխանության վարած քաղաքականությունը նպաստել է մնացյալ իսլամական աշխարհից տեղի մուսուլմանների նաև մշակութային, լեզվական և կրոնական հարաբերական մեկուսացմանը: Պարսկերենը, որը մինչև XIX դարը Արևելյան Այսրկովկասում պաշտոնական գրագրության և գրականության հիմնական լեզուն էր, ռուսական իշխանության կողմից աստիճանաբար արգելվել է: Դրան զուգահեռ՝ խրախուսվել է մինչ այդ տիրապետող խոսակցական լեզու եղած, սակայն գրավոր ձևով գրեթե չկիրառված թյուրքերենի ամրապնդումն ու տարածումը: Վերոնշյալ փոփոխությունների հետևանքով երկրամասի մուսուլմանների շրջանում տեղի է ունեցել կրոնական ինքնության տեղայնացում Արևելյան Այսրկովկասի սահմաններում: Իսկ արդեն դարավերջին ցարական ազգային քաղաքականությունն ու ազգայնական որոշ շրջանակների գործունեությունը նպաստել են թյուրքախոս մուսուլմանների էթնիկ ինքնագիտակցության ձևավորմանն ու «ադրբեջանցի» արհեստական ինքնանվան ներմուծմանը:

XIX դ. երկրորդ կեսին Արևելյան Այսրկովկասը ներկայացնում էր մուսուլման բնակչության մեծամասնությամբ, էթնիկապես խայտաբղետ տարածաշրջան: Մու-

սուլման թաթերի, թալիշների, լեզգիների, ավարների զգալի ներկայության պայմաններում մեծամասնություն էր կազմում թյուրքալեզու բնակչությունը: XIX դ. երկրորդ կեսին երկրամասում առաջին անգամ անցկացված ռուսական պաշտոնական մարդահամարները ամրագրել են թյուրքախոսների քանակական գերակայությունը, ինչն անշուշտ ազդել է տվյալ հանրույթի գիտակցության վրա: Բացի այդ՝ մարդահամարներում ռուսների կողմից ժամանակ առ ժամանակ «ադրբեջաներեն» և «ադրբեջանական թաթարներ» արհեստական եզրույթների կիրառումը նպաստել է, որպեսզի երկրամասի համար խորթ տվյալ անվանումները շրջանառության մեջ մտնեն:

1850–1860–ական թթ. Միրզա Ֆաթալի Ախունդովի գրական և հասարակական գործունեությունը դրել է Արևելյան Այսրկովկասում թյուրքերեն գրական լեզվի և գրականության հիմքերը: Ախունդովի կերպարն ինքնին իր մեջ խտացված ներկայացնում էր XIX դ. սկզբից Արևելյան Այսրկովկասում տեղ գտած փոփոխությունների ազդեցությունը: Ըստ էության, նա միաժամանակ և՛ ռուսական մտածելակերպով առաջնորդվող նոր տիպի մուսուլման մտավորական էր, և՛ աստիճանաբար թուլացող պարսկական մշակույթի ազդեցության կրող: Նման երկվության պայմաններում մեծապես Ախունդովի ջանքերով ստեղծվել է նոր թյուրքալեզու գրավոր մշակույթ, որը դուրս է մղել նախկինում արմատացած պարսկալեզվության ավանդույթները:

XIX դ. վերջին չորս տասնամյակների ընթացքում աստիճանաբար հանրայնացող թյուրքերենով գրվել և տպագրվել են գրական երկեր՝ դրամաներ, կատակերգություններ, բանաստեղծություններ, ինչպես նաև հրապարակախոսական երկեր: Արևելյան Այսրկովկասի համար լիովին նոր երևույթ էր թյուրքալեզու մամուլի ի հայտ գալը: Թյուրքերենով գրականությունն ու մամուլը ստեղծվում էր թյուրքալեզու նոր սերնդի մտավորականության կողմից, որի շրջանում աստիճանաբար ձևավորվում էր և դարավերջին ի հայտ եկավ էթնիկ ինքնագիտակցություն՝ հիմնված թյուրքերեն լեզվի և թյուրքական ծագման գաղափարի վրա: Այդ ինքնագիտակցությունը դրսևորվում էր վերոնշյալ գրական երկերում և մամուլի հրապարակախոսական հոդվածներում: XIX դ. վերջերին այս մտավորականությունը թյուրքախոս հանրույթի միակ շերտն էր, որի մոտ ձևավորվել էր էթնիկ ինքնություն:

Կարելի է պնդել, որ էթնիկ ինքնությամբ օժտված թյուրքալեզու մտավորականության շրջանում միասնական էնդոէթնոնիմ (ինքնանվանում) չկար: Առավել հաճախ հանդիպում էր «մուսուլման» կոնֆեսիոնիմը, որի տակ, սակայն, արդեն ենթադրվում էր Արևելյան Այսրկովկասի թյուրքախոս հանրույթը: Թյուրքախոսների ինքնության փնտրտուքի վրա էական ազդեցություն է գործել 1880–ական թվականներին Ռուսական կայսրությունում ծնունդ առած պանթյուրքիզմի գաղափարախոսությունը: Տվյալ ազդեցության արդյունքում պանթյուրքիզմի կողմնակից մի խումբ մտավորականների մոտ դարավերջին ծնվել էր Արևելյան Այսրկովկասը «Ադրբեջան» անունով, իսկ նրա թյուրքախոս բնակչությանը՝ «ադրբեջանցի» կոչելու գաղափարը:

Արևելյան Այսրկովկասի թյուրքախոս հանրույթը XIX դ. վերջին ընդհանուր առմամբ որպես էթնոս դեռ չէր ձևավորվել: Այն իրենից ներկայացնում էր համախմբման նախնական փուլում գտնվող էթնո–սոցիալական հանրույթ, որը նկարագրելու համար նպատակահարմար ենք համարել կիրառել ազգագրության կողմից առաջարկված «մետաէթնո–լեզվական հանրույթ» գիտական եզրույթը:

Այսպիսով՝ XIX դ. երկրորդ կեսը եղել է թյուրքախոս մետաէթնո–լեզվական հանրույթի էթնոհամախմբման և ժամանակակից ադրբեջանցի էթնոսի ձևավորման առաջին՝ սկզբնական փուլը, որը հող է նախապատրաստել և վճռորոշ նշանակություն ունեցել հետագա փուլերի համար: 1905–1906 թթ. հայ–թաթարական բախումներով սկսվել է թյուրքախոս մետաէթնո–լեզվական հանրույթի էթնոհամախմբման կամ այլ կերպ ասած՝ ժամանակակից ադրբեջանցի էթնոսի ձևավորման երկրորդ փուլը: Այն անմիջապես հաջորդել է XIX դարի երկրորդ կեսի — XX դարի սկզբի ժամանակահատվածին և տևել մինչև 1918 թվականին «Ադրբեջան» անունով պետության հիմնումը:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ՄՈՒՍՈՒԼՄԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Լուսավորություն: Մինչև Ռուսաստանին միանալը Արևելյան Այսրկովկասի մուսուլման երեխաները հաճախում էին այսպես կոչված «մեքթեբներ» և կրոնական դպրոցներ՝ «մեդրեսեներ», որտեղ դասավանդում էին կիսագրագետ մոլլաները: Մեքթեբներում մի քանի տարի շարունակ աշակերտներին սովորեցնում էին արաբերեն և Ղուրանի ընթերցում: Շիայական մեքթեբներում բացի այդ սովորեցնում էին պարսկերեն, իսկ սուննիական մեքթեբներում՝ թուրքերենով՝ կրոնական թեմաներով չափածո պատմվածքներ: Որպես կանոն՝ թյուրքախոս մուսուլմանների մեքթեբներում դասավանդվում էր նաև շարիաթական իրավունք, Նադիր շահի արշավանքների պատմությունը («Թարիխ–ի Նադիր–ի»), սովորեցնում էին նամակ գրել և այլն: Որոշ մեքթեբներում աշակերտներին տարրական գիտելիքներ էին տալիս Իրանի պատմության տարբեր շրջանների վերաբերյալ:

Մեքթեբներում մանկավարժական գործունեության ամենահուսալի միջոց էր համարվում այսպես կոչված «ֆալակկայի» միջոցով երեխաներին ծեծի ենթարկելը: Մեքթեբները մասնավոր ուսումնարաններ էին, մինչդեռ մեդրեսեները մուսուլման հոգևոր ուսումնարաններ էին և ստեղծվում էին բացառապես մզկիթներին կից: Մեդրեսեներ էին ընդունվում սովորաբար 16 տարեկանից բարձր աշակերտներ, որոնք գրաճանաչ էին, կարող էին գրել–կարդալ մայրենի լեզվով և ֆարսերենով: Նրանք ուսումնասիրում էին արաբերեն, շարիաթ, գրականություն, փիլիսոփայություն, տրամաբանություն, հոգեբանություն և հատկապես իսլամի պատմություն:

Մեդրեսեները բաժանվում էին երկու խմբի՝ սովորական և բարձրագույն: Բարձրագույն մուսուլման մեդրեսեներ Արևելյան Այսրկովկասում գոյություն չունեին: Այսրկովկասից շիա–սոֆթերը, որոնք ցանկանում էին սովորել բարձրագույն մեդրեսեներում, սովորաբար մեկնում էին Իրան՝ Ղում, Թեհրան, Թավրիզ, կամ Իրաք՝ Էն–Նաջաֆ, Քարբալա և այլն:

Արևելյան Այսրկովկասը Ռուսաստանին միանալուց հետո ռուսական մշակույթն ու լուսավորությունը աստիճանաբար սկսեց թափանցել այնտեղ: Հայտնվեցին առաջին ռուսական ուսումնական հաստատությունները: Սակայն դրանից հետո ևս բավականին տևական ժամանակ մեքթեբներն ու մեդրեսեները երկրամասի մուսուլման բնակչության համար լուսավորության միակ կենտրոններն էին:

Մուսուլման բնակչության համար առաջին գավառական ուսումնարանը բացվել է Շուշիում 1830 թ.: Այնուհետև նման ուսումնարաններ բացվեցին Նուխիում՝

1831 թ., Բաքվում՝ 1832 թ., Գանձակում՝ 1833 թ., Շամախիում՝ 1837 թ.: Նրանցում դասավանդում էին ռուսերեն և կովկասյան թաթարների թյուրքերեն, աշխարհագրություն և շարիաթ: 1858 թ. Շամախիի գավառում կային մեկ քառադասարանային և չորս գավառական տարրական դպրոցներ, որոնցում սովորում էր 580 աշակերտ: Նշված ուսումնական հաստատություններում ցարական իշխանությունները ռուսաֆիկացման անթաքույց քաղաքականություն էին իրականացնում:

Ռուսական ուսումնական հաստատություններին զուգահեռ Արևելյան Այսրկովկասում գործում էին մեքթեբներն ու հոգևոր մեդրեսեները, որոնց թիվը միայն Շամախիի գավառում 1858 թ. հաշվվում էր 299 հատ՝ 4700 աշակերտներով:

Բացելով դպրոցներ՝ ցարական կառավարությունը ձգտում էր իր վարչական ապարատի համար պատրաստելու «գիտակ» չինովնիկներ, ինչպես նաև ռուսաֆիկացման ենթարկել տեղական բնակչությանը:

1907 թ. «Սաադաթ» («Երջանկություն») մուսուլման ընկերության կողմից Բաքվում բացվեց կրոնական դպրոց՝ «Մեդրեսե–ի սաադաթ» անունով, որտեղ պարապմունքները տարվում էին Թուրքիայից վերցված ուսումնական ծրագրերով: Երկրորդ նման դպրոցը բացվեց 1908 թ., որը ղեկավարում էր պանթյուրքիստ Ա. Հուսեյինզադեն: Դասավանդումը կատարվում էր թուրքերենով: Նմանատիպ մի մեդրեսե բացվեց Գանձակում՝ Շահ–Աբբաս մզկիթին կից: Այդ դպրոցում 1912 թ. ստուգում անցկացրած հանձնաժողովը պարզել էր, որ նրանում «տիրապետում է Կ. Պոլսի ոգին», և Այսրկովկասի թյուրքերենի փոխարեն ուսումնասիրվում է օսմաներեն–թուրքերեն լեզուն, իսկ հայրենական պատմության փոխարեն՝ իսլամի ու Օսմանյան կայսրության պատմությունը: Տեղական պանիսլամիտներն ու պանթյուրքիստները, լինելով թուրքական ուսումնական հաստատությունների շրջանավարտներ, ձգտում էին տեղական դպրոցները հարմարեցնելու Կոստանդնուպոլսի ուսումնական ծրագրերին:

Արևելյան Այսրկովկասում ժողովրդական լուսավորության ամենահետամնացներից մեկը թյուրքախոս կանանց կրթության բնագավառն էր: Մուսուլման հոգևորականությունը հանդես էր գալիս կանանց կողմից կրթություն ստանալու դեմ:

Արևելյան Այսրկովկասում սովորողների թիվն աննշան տոկոս էր կազմում բնակչության ընդհանուր թվի մեջ: 1914–1915 ուսումնական տարում յուրաքանչյուր հազար բնակչին ընկնում էր միայն 32 աշակերտ: Գրագետները կազմում էին բնակչության միայն 10 տոկոսը: Երկրամասում եղած ուսումնական հաստատությունները ներառում էին դպրոցական տարիքի երեխաների լոկ մի փոքր մասին: Միայն Բաքվի նահանգում դպրոցական տարիքի երեխաների 82,5 տոկոսը դուրս էր մնում դպրոցից:

Պատմագրություն և արևելագիտություն: XIX դարում պատմագրությունը Արևելյան Այսրկովկասում թույլ էր զարգացած: Այն հիմնականում ներկայացված էր Ռզաղուլիբեկ միրզա Ջամալ օղլիի, Միր Մեհթի Միր Հաշիմ օղլի Խազանիի, Հասանալիխան Ղարադաղիի, Ահմեդբեկ Ջավանշիրի, Միրզա Ահմեդ միրզա Խուդավերդի օղլիի, Միրզա Ադիգյոզալբեկի, Քերիմաղա Ֆաթեհի, Հաջի Սեյիդ Աբդուլհամի-

դի և այլոց կողմից: Հիշյալ հեղինակների գործերը շարադրված էին միջնադարյան մուսուլման պատմիչ–տարեգիրների ոճով և գլխավորապես նվիրված էին առանձին խանությունների պատմությանը, խաների, պատմական գործիչների կյանքին ու գործունեությանը, առանձին ցեղերի պատմությանը և այլն: Այդ աշխատությունները, որպես կանոն, ունեին բանաքաղական (կոմպիլյատիվ) բնույթ և չունեին որոշակի գիտական արժեք:

Բացառություն է կազմում XIX դ. առաջին կեսի աչքի ընկնող պատմաբան, գրող, լուսավորիչ Աբբաս–ղուլի Աղա Բաքիխանովը (Քուդսի) (1794–1847), որի «Գյուլիստան–Իրամ» («Դրախտային ծաղկանոց») երկը գիտական արժեք է ներկայացնում: Նրանում շարադրված է Արևելյան Այսրկովկասի և Դաղստանի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 1813 թ.: Աշխատությունը շարադրվել է ֆարսի լեզվով և հեղինակի կողմից թարգմանվել ռուսերեն: Նրանում օգտագործված են միջնադարյան պատմիչների, աշխարհագիրների, ճանապարհորդների հաղորդած հարուստ վկայությունները: Մասնավորապես Ա. Բաքիխանովը ծանոթ է Հերոդոտոսի, Ստրաբոնի, Պլուտարքոսի, ատ–Թաբարիի, Ռաշիդ ադ–Դինի, Համդալլահ Ղազվինիի տեղեկություններին: «Գյուլիստան–Իրամ»–ում հավաքված են հարուստ պատմական տեղեկություններ Արևելյան Այսրկովկասի խանությունների միջև տեղի ունեցած ավատական պատերազմների, Դաղստանի, Աղուանքի պատմության մասին: Գրքի ամբողջական տպագրությունն առաջին անգամ իրագործվել է 1926 թ. ռուսերենով:

Ա. Բաքիխանովի գրչին են պատկանում նաև մի շարք ուսումնասիրություններ՝ նվիրված մանկավարժության, փիլիսոփայության, տրամաբանության, հոգեբանության և այլ գիտությունների տարբեր խնդիրներին:

Միրզա Ջաֆար Թոփչիբաշևը 1819 թվականից Պետերբուրգի համալսարանում դասավանդում էր արևելյան լեզուներ: 1835 թ. նա ստացել է պրոֆեսորի կոչում և նշանակվել պարսից լեզվի ամբիոնի վարիչ: Միաժամանակ աշխատում էր Արտաքին գործերի մինիստրության Ասիական դեպարտամենտին կից Արևելյան լեզուների ինստիտուտում: Նրա աշխատությունները նվիրված են պարսկերենի քերականությանը: Թոփչիբաշևը ընտրվել է Լոնդոնի թագավորական Ասիական ընկերության անդամ:

Աչքի ընկնող գիտնական–լեզվաբան և արևելագետ էր Միրզա Մուհամմեդալի Ղասիմ օղլի Քազեմբեկը (1802–1870): 1826 թ. նա հրավիրվում է Կազանի համալսարան՝ դասավանդելու պարսկերեն և թուրք–թաթարերեն, որտեղ շուտով ընտրվում է արևելագիտության ֆակուլտետի դեկան և նրան շնորհվում է պրոֆեսորի կոչում: Այսրկովկասի թյուրքերենի քերականությանը նվիրված նրա ուսումնասիրությունը հրատարակվել է երկիցս՝ 1839 թ. և 1846 թ.:

1845 թ. Մ. Քազեմբեկը տեղափոխվում է Պետերբուրգ և ստանձնում համալսարանի պարսկերենի ամբիոնի վարիչի պաշտոնը: Լեզվաբանությանը նվիրված նրա աշխատությունների մեծ մասը թարգմանվել էր եվրոպական տարբեր լեզուներով:

Նա ընտրվել էր Ռուսական Գիտությունների ակադեմիայի թղթակից–անդամ, Լոնդոնի Թագավորական ընկերության անդամ:

Մ. Քազեմբեկը մի շարք աշխատություններ է նվիրել նաև Արևելքի պատմությանը և Արևելքում հասարակական–քաղաքական հոսանքներին, որոնցից հիշարժան են «Պարսիկների դիցաբանությունը ըստ Ֆիրդուսու» և «Բաբն ու բաբիները. կրոնա–քաղաքական խռովությունները Պարսկաստանում 1844–1852 թթ.» աշխատությունները: Նրա ուշագրավ երկասիրություններից է նաև «Մուխթասար–ուլ–Վիքայաթ»–ը («Համառոտ օրենսդրություն»), որը շարադրված է արաբերենով և նվիրված է իսլամական օրենսդրության հարցերին: Այն ունեցել է երեք հրատարակություն: Մ. Քազեմբեկը ռուսերեն է թարգմանել պարսիկ մեծ բանաստեղծ Սաադիի «Գյուլիստան»–ը, անգլերեն՝ «Դերբենդ–նամեն» և գերմաներեն՝ իր իսկ շարադրած Այսրկովկասի թյուրքերենի քերականությունը:

Գրականություն: Արևելյան Այսրկովկասի գրականությունը սկզբնավորվել է ժողովրդական բանահյուսությամբ: Դեռ XIX դ. 30–40–ական թվականներին երկրամասի թյուրքախոսների գրականությունը հիմնականում ներկայացված էր գրական բանահյուսության գործերում, ժողովրդական բանավոր ստեղծագործություններում և աշուղական պոեզիայում: Աշուղների «Դաստան»–ներում գովերգվում էր քաջությունը, խիզախությունը, հավատարմությունը, սերը կնոջ և հայրենի եզերքի նկատմամբ: Քանի որ այդ գործերը բանավոր էին, դրանցից քչերն են հասել մինչև մեր օրերը:

Ժողովրդական ստեղծագործությունների մեջ առանձնապես աչքի են ընկել «Քյոռօղլու» էպոսը, «Ասլի և Քյարամ», «Աշուղ ղարիբ» և այլ վիպերգություններ, որոնք ունեն նաև հայկական պատումներ: Ի դեպ, XIX դ. երկրորդ կեսին Արևելյան Այսրկովկասում ստեղծագործում էին նաև մեծ թվով հայ աշուղներ, որոնք իրենց ստեղծագործությունները ստեղծում էին կա՛մ միայն թուրքերեն, կա՛մ հայերեն ու թուրքերեն: Նրանցից հատկապես մեծ համբավ էին վայելում աշուղ Մայիֆը, Եթիմ օղլանը, Դոնին, Բաբաջանը, Ղասսաբ օղլին, Սարդար օղլին, Միսկինը, Ղեյրաթին, Թալալ օղլին, Զյուլալ օղլին, Հալլաջ օղլին:

XIX դ. առաջին կեսին մուսուլման բնակչության շրջանում լայնորեն տարածված է եղել գազելների, քասիդների, ինչպես նաև կրոնական բնույթի ոտանավորների («մերսիյե») ժանրը: Այդ ժանրի ստեղծագործությունների առավել աչքի ընկնող հեղինակներ են Զեյնալաբադին Սաղարին, Իբրահիմ Նիջաթին, Մահմուդ Նաֆեն, Մոլլա Ղադիրը, Նաջի Շիրվանին, Միրզա Հուսեյինբեկ Սալարը, Աբուլֆաթ Թուրթին, Միրզա Աբուլղասըմը և ուրիշներ: Որպես կանոն՝ նշված բանաստեղծներն ունեին բեկական ծագում կամ սերում էին հոգևորական ընտանիքներից, ստացել էին կրոնական դաստիարակություն, ուստի իրենց ստեղծագործությունները տոգորված էին կրոնական գաղափարներով: Որպես ավատական դասի ներկայացուցիչներ՝ նրանք դեմ էին ամեն տեսակի օտար ազդեցություններին, երկրի արդիականացմանը, եվրոպականացմանը և գովերգում էին անցյալը, կոչ անում վերադառնալու իսլամի ակունքներին: Երբեմն նրանց գործերում արծարծվում էին նաև

քաղաքական մոտիվներ: Օրինակ՝ նրանք փառաբանում էին Իրանը և Թուրքիան՝ այդ երկրները համարելով իսլամի պատվարներ և դրանք հակադրելով «անհավատ» Ռուսաստանին:

Պոեզիայի նշված ուղղությանը հարում էր նաև բանաստեղծների մի խումբ, որոնց ստեղծագործությունները հագեցած էին սուֆիական–միստիկական գաղափարներով: Դրանց թվին էր պատկանում Միր Համզա Էֆենդի Սեյիդ Նիգարին, որն ուներ նաև իր բազմաթիվ հետևորդները:

XIX դ. առաջին կեսին, այսպես կոչված ռոմանտիկական պոեզիային զուգահեռ, երևան են գալիս գրական նոր ժանրեր՝ գեղարվեստական արձակի, երգիծական պոեզիայի և դրամատուրգիայի ժանրերը: Այդ շրջանի գրականության աչքի ընկնող ներկայացուցիչներն են Ա. Բաքիխանովը (Քուդսի), Միրզա Շաֆի Վազեհը և հատկապես Միրզա Ֆաթալի Ախունդովը, որը համարվում է ազգային դրամայի և արձակի հիմնադիրը: Նրա հետևորդներն էին գրողներ Սեյիդ Ազիմ Շիրվանին (1825–1888), Հ. Զարդաբին (1837–1907), Նաջաֆբեկ Վեզիրովը, Ասումբեկ Զաքիրը և ուրիշներ:

Արևելյան Այսրկովկասի թյուրքալեզու գրականությունը վերելք է ապրել XX դ. սկզբին: Այդ շրջանի գրականության նշանավոր դեմքերից են Միրզա Ալեքպեր Սաբիրը, Զալիլ Մամեդկուլիզադեն, Աբդուռահիմբեկ Հախվերդիևը, Սուլեյման Սանի Ախունդովը, Աբբաս Սիհհաթը, Ալիգուլու Գամքյուսարը, Միրզա Ալի Մոջուզը, Հ. Զավիդը, Մ. Խադին և ուրիշներ:

XX դ. սկզբի Արևելյան Այսրկովկասի թյուրքալեզու գրողներից ու հրապարակախոսներից ոմանք համախմբված էին ազգայնական–պանթյուրքական «Ֆիյուզաթ» և «Շելալե» ամսագրերի շուրջը: Դրանք քարոզում էին թյուրքալեզու ժողովուրդների միավորման ու համախմբման և թյուրքերի «արյան կանչի» գաղափարներ: Նրանց գրվածքներում մեծ տեղ էր տրվում նաև մուսուլմանների միասնական շահերի քարոզչությանը:

Երաժշտություն: XIX դ. առաջին կեսին զարգացում ապրեց թյուրքալեզու երաժշտական բանահյուսությունը, որը սերտորեն կապված էր ժողովրդական աշուղական պոեզիայի հետ: Այդ շրջանում աշուղները ստեղծել են ժողովրդական պրոֆեսիոնալ երաժշտության ժանրեր՝ դաստանը, բայաթին, մուղամը և այլն: Հարկ է նշել, որ թյուրքալեզու ժողովրդական երաժշտությունը աչքի է ընկնում ինքնատիպ ռիթմային բազմազանությամբ:

XIX դ. երկրորդ կեսին երաժշտությունը զարգանում էր երկու ուղղությամբ՝ աշուղական և այսպես կոչված «խանենդե» ու «սազանդարներ»: Նրանցից յուրաքանչյուրն ուներ իր երաժշտական–գործիքային համույթը և իր գեղարվեստական կատարման առանձնահատկությունները: Երգերը կատարվում էին լայնորեն տարածված «բայաթի» կոչված ձևերով, որոնցից հատկապես լայն տարածում ունեին «շիքեսթե» և «աղը» կոչված ձևերը:

Բազմազան ու հարուստ էին նաև պարային մեղեդիները, որոնցից առավել լայնորեն տարածված էին «պուզմեն», «թերեքեմեն», «յալլին», «կազախին» և «ջենգին»:

Այսրկովկասի թյուրքերենով առաջին ազգային օպերան՝ «Լեյլի և Մեջնունը», ստեղծել է Ուզեիր Հաջիբեկովը (այն բեմադրվել է 1908 թ.): Երկրամասի երաժշտական կյանքում ուղենշային է եղել՝ Ուզեիր Հաջիբեկովի «Քյոռօղլի» օպերան: Բալետի և սիմֆոնիզմի զարգացման մեջ մեծ ներդրում ունի Կարա Կարաևը: Մուղամները սիմֆոնիկ մշակման են ենթարկել Ֆ. Ամիրովը և Նիյազին:

Թատրոն: Այսրկովկասի թյուրքախոս ժողովրդի թատերական մշակույթն իր ակունքներով կապված է ժողովրդական ստեղծագործության, պաշտամունքային ծեսերի, օրացուցային տոնախմբությունների («նովրուզ», նոր տարի, գարնան տոն), խաղերի («Քեպենեկ») (թիթեռնիկ) հետ: Հրապարակային ներկայացումների բնույթ են ունեցել լարախաղացների («քյանդրբազների»), դերվիշների ելույթները, աշուղների արվեստը, ինչպես նաև տիկնիկային ներկայացումները («ղարագյոզ»):

Թյուրքալեզու թատրոնը սկսել է կազմավորվել XIX դ. երկրորդ կեսին: 1873 թ. Բաքվի ռեալական ուսումնարանի սիրողական թատերական խմբի կողմից առաջին անգամ թյուրքերենով բեմադրվել են Միրզա Ֆաթալի Ախունդովի «Լենքորանի խանության վեզիրը» և «Հաջի Ղարա» կատակերգությունները: Համարվում է, որ այդ ներկայացումներով սկզբնավորվեց թյուրքախոսների ազգային թատրոնը: 1883 թ. Բաքվի խոշոր նավթարդյունաբերող–դրամատեր Թաղիևը կառուցել է թատրոնի շենք:

1882 թվականից Շուշիում հայազգի Խանդամիրովի թատրոնի շենքում Հ. Մելիք–Հախնազարովի կողմից թյուրքերենով բեմադրվում են Միրզա Ֆաթալի Ախունդովի կատակերգությունները:

Սկսած XIX դ. 80–ական թվականներից՝ Արևելյան Այսրկովկասի թատերական կյանքում ակտիվ մասնակցություն էին բերում Սաֆրազյան ամուսինները, որոնք, շրջելով երկրամասի քաղաքներում, տեղական ուսուցիչների մասնակցությամբ կազմակերպում էին թատերական ներկայացումներ, այդ թվում նաև կովկասյան թաթարների թյուրքերենով: Նրանց հիմնական խաղացանկը ևս բաղկացած էր Մ. Ախունդովի, ինչպես նաև հայ դրամատուրգ Վասակ Մադաթովի ստեղծագործություններից:

1897 թ. Հ. Մելիքովը կազմակերպել է առաջին պրոֆեսիոնալ թատերական կոլեկտիվը: XIX դ. վերջի թյուրքալեզու դրամատուրգիայի ամենից աչքի ընկնող դեմքերից են Նաջաֆբեկ Ֆաթալիբեկ օղլի Վեզիրովը, Աբդուրաղիմբեկ Ախվերդովը, Ն. Նարիմանովը և ուրիշներ:

Արվեստ: Արևելյան Այսրկովկասում կերպարվեստի և առհասարակ նկարչության բնագավառում նշանակալից ձեռքբերումներ չեն արձանագրվել: Իսլամի կողմից սահմանված արգելքները չէին թույլատրում այդ բնագավառի քիչ թե շատ զարգացումը: Առկա են միայն մեկ–երկու անձանց անուններ, որոնք զբաղվել են կերպարվեստով: Դրանցից մեկն է Միրզա Կադիմ Իրավանին (1825–1879 թթ.), որը

կիրառական արվեստի, ինչպես նաև որմնանկարչության բնագավառում ունեցել է որոշ հաջողություններ:

Կիրառական արվեստի առավել զարգացած տեսակ էր գորգագործությունը: XIX դարում գորգագործության կարևորագույն կենտրոններն էին Ղուբան, Շամախին, Բաքուն, Գանձակը, Արցախը և Ղազախը: Լայն տարածում էր գտել նաև գեղարվեստական ասեղնագործությունը:

Արևելյան Այսրկովկասի գեղարվեստական արհեստների մեջ կարևոր տեղ էին գրավում կանացի մետաքսյա դաջանախշված գլխաշորերը, որոնք կոչվում էին դալագայի, ինչպես նաև դալեմքար կոչված դաջանախշ բամբակյա կտորեղենը: Լայն տարածում ունեին մետաղից պատրաստված գեղարվեստական իրերը՝ պղնձե ամանեղենը, դարբնային արտադրության գործերը, ոսկերչական զարդերը և այլն:

Պարբերական մամուլ: Արևելյան Այսրկովկասում պարբերական մամուլի տպագրությունը սկսվել է բավականին ուշ: Այսրկովկասի թյուրքերենով առաջին թերթերը լույս են տեսել Թիֆլիսում: 1832 թ. այնտեղ սկսեց լույս տեսնել «Թաթարական տեղեկագիր» լրագիրը, իսկ 1845–ին՝ «Կաֆկազըն բու թարաֆինըն խաբարլարի» («Այսրկովկասյան լրաբեր») թերթերը: 1875 թվականից կովկասյան թաթար գրող և լուսավորիչ Հ. Զարդաբին սկսում է հրատարակել «Էքինջի» («Մաճկալ», «Մշակ») թերթը, որը լույս է տեսնում մինչև 1877 թ.: Դրանից երկու տարի անց դարձյալ Թիֆլիսում սկսում է լույս տեսնել «Զիյա» («Լույս») շաբաթաթերթը, իսկ 1883–1891 թթ.՝ «Քեշքյուլ» («Սուֆիի պնակ») լրագիրը:

Թյուրքախոս հանրույթի հասարակական մտքի զարգացման համար կարևոր նշանակություն է ունեցել Թիֆլիսում 1903–1905 թթ. լույս տեսած «Շարգ ի ռուս» («Ռուսական Արևելք») թերթը:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին լույս էին տեսնում «Կասպիյ» (1881–1919), «Բաքու» (1902–1918), «Հայաթ» («Կյանք», 1905–1906), «Իրշադ» («Ուղեցույց», 1905–1908) թերթերը, «Ֆույուզաթ» («Բարիք», 1906–1907) և այլ ամսագրեր:

1906 թ. գրող Ջ. Մամեդկուլիզադեն ստեղծեց «Մոլլա Նասրեդդին» առաջին երգիծական ամսագիրը կովկասյան թաթարների թյուրքերենով (1906–1931), որը լայն տարածում գտավ ողջ Մերձավոր ու Միջին Արևելքում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Դիւան հայոց պատմութեան», մասն Ա–ԺԳ, հրատարակեց Գ. Աղանյանց, Թիֆլիս, 1893–1917:
2. «Քյոռ–օղլի», ժողովրդական վիպասանություն, Երևան, 1941:
3. Աբգար Աւագ քահանայ Տէր–Յարութիւնեանց, Հայ գաղթականները Բագու և նրանց վերադարձը, Բագու, 1903:
4. Աբրահամյան Ա. Գ., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Երևան, հատ. Բ, 1967:
5. Աբրահամյան Վ. Ա., Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում (XVIII դ. — XIX դ. սկզբին), Երևան, 1971:
6. Ա–Դօ (Հ. Տ. Մարտիրոսեան), Հայ–թուրքական ընդհարումը Կովկասում (1905–1906 թ.), Երեւան, 1907:

7. Ադրբեջանական կլասիկ գրականության քրեստոմատիա, Բաքու, 1953:
8. Աթիկեան Յ., Համառօտ պատմութիւն հայ գաղթավայրերու, Անթիլիաս–Լիբանան, 1985:
9. Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան, մասն Ա–Գ, Կահիրէ, 1941, 1955, 1961:
10. Աճառյան Հր., Հայ գաղթականության պատմություն, Երևան, 2002:
11. Առաքելյան Գ., Գանձակ–Ելիզավետպոլի բնակչությունը XIX դարում, Երևան, 2003:
12. Ատրպետ, Հեղափոխությունը Կովկասում, Ալեքսանդրապոլ, 1906:
13. Բալայան Մ., Հայ Աղուանից եկեղեցին (սկզբնավորումից մինչև մեր օրերը), Ստեփանակերտ, 2009:
14. Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, 2005:
15. Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր և դրացիք (Միջին Դաղստան), Թիֆլիս, 1893:
16. Բարխուտարեանց Մ., Արցախ, Բագու, 1895:
17. Բարխուտարեանց Մ., Պատմութիւն Աղուանից, Ա հատ., Վաղարշապատ, 1902:
18. Գալստեան Ա., Նկարագրութիւն հանդիսի Բագուայ հայոց Մարդասիրական ընկերութեան քսան և հինգ ամեայ յոբելեանի, Մոսկվա, 1891:
19. Գալստյան Վ., Արևելյան Այսրկովկասում թյուրքալեզու գրավոր մշակույթի ձևավորումը XIX դարի երկրորդ կեսին, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2017, h^մր 1, էջ 103–112:
20. Գալստյան Վ. Ա., Թյուրքախոսների էթնիկ ինքնագիտակցության վաղ դրսևորումները. Արևելյան Այսրկովկասի թյուրքալեզու և ռուսալեզու մամուլում (ԺԹ դարի վերջ), «Վէմ» համահայկական հանդես, 2017, h^մր 1, էջ 193–206:
21. Գրիգորյան Վ., Երևանի խանությունը, XIX դ. առաջին երեսնամյակին և հայ–ռուսական հարաբերությունները, Երևան, 1989:
22. Դաղայան Խ., Հայերը և Բաքուն (1850–ական թթ. — 1920 թ.), Երևան, 2006:
23. Դիլոյան Վ., Արևելյան Հայաստանը XIX դ. առաջին երեսնամյակին և հայ–ռուսական հարաբերությունները, Երևան, 1989:
24. Եսայի Հասան Ջալալյանց, Համառոտ պատմություն Աղվանից երկրի, թարգմանությունը, առաջաբան և ծանոթագրությունները՝ Բ. Ուլուբաբյանի, Երևան, 1997:
25. Երիցեան Ա., Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, մասն Ա, Բ, Թիֆլիս, 1894–1895:
26. Երիցյան Ալ., Հայերի մասնակցությունը Ռուսաստանի Անդրկովկասում արած տիրապետության մեջ, «Փորձ», 1877–1878, թիվ 2:
27. Թոփչեան Ե., Նաւթային արդիւնաբերութիւնը Կովկասում, Թիֆլիս, 1903:
28. Իշխանեան Բ., Բագուի մեծ սարսափները: Անկետային ուսումնասիրութիւն սեպտեմբերեան անցքերի 1918 թ., Թիֆլիս, 1920:
29. Իշխանեան Բ., Վիճակագրական ուսումնասիրութիւն անդրկովկասեան ժողովուրդների, Բաքու, 1919:
30. Լալայան Ե., Երկեր, հատ. 2, Արցախ, Երևան, 1988:
31. Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի 1838–1913, Թիֆլիս, 1914:
32. Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1958:
33. Խառատեան Հ., «Ադրբեջանցիները», «կովկասալեզուները» և «իրանալեզուները». ինքնութեան զարգացումներն Ադրբեջանում,— «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա–Երևան, 2012, սն. 271–334:
34. Հակոբյան Ա., Արեւելյան Այսրկովկասում հայկական և իրանական էթնոմշակութային ներդրումների շուրջ (Մի խմբի ձեևավորման օրինակով), Մերձավոր Արևելք, Երևան, 2002, էջ 26–43:
35. Հայ ժողովրդի պատմություն, հատ. V, Երևան, 1974, հատ. VI, Երևան, 1981:
36. Հայ սփյուռքի հանրագիտարան, Երևան, 2003:

37. Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918–1920 թթ.: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2003:
38. Հայկական սովետական հանրագիտարան, հատ. 8, Երևան, 1982:
39. Հայոց պատմություն, հատ. III, գիրք 2, Երևան, 2015:
40. Եսայի Հասան–Զալալեանց, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, Երուսաղէմ, 1868:
41. Մաղալյան Ա., Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII–XIX դդ., Երևան, 2007:
42. Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն: Թարգմանությունը՝ բնագրից, ներածություն և ծանոթագրությունները՝ Ք. Կոստիկյանի, Երևան, 2000:
43. Մկրտումյան Լ., Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը XVII–XIX դդ., Երևան, 2006:
44. Մկրտչյան Շ. Մ., Լեռնային Ղարաբաղի պատմա–ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1980:
45. Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Քննական բնագիրը և ներածությունը՝ Վարագ Առաքելյանի, Երևան, 1983:
46. Չամչեանց Մ., Պատմութիւն Հայոց, հատ. Գ, Վենետիկ, 1786:
47. Չոբանյան Պ., Հայ–ռուս–վրացական փոխհարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին, Ս. Էջմիածին, 2006:
48. Պարսամյան Վ., Հայ ժողովրդի պատմություն (1801–1917), հատ. երրորդ, Երևան, 1967:
49. Պողոսյան Ֆ., Խամսայի մելիքների իրավունքների և պարտականությունների մասին, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, № 1(13):
50. Սանթրոսյան Մ., Արևելահայ դպրոցը XIX դարի առաջին կեսին, Երևան, 1964:
51. Սարգսյան Գ., Մարդասիրական ընկերություն: Հայկական սովետական հանրագիտարան, հատ. 7, Երևան, 1981:
52. Սարգսյան Ս., Արցախ. պատմա–աշխարհագրական ճշտումներ, Երևան, 1996:
53. Սարուխան Ա., Ալեքսանդր Մանթաշեանց: Մեծ վաճառականն և բարեգործը: Յիշողութիւններ իր մահուան 20 ամեակի առթիւ, Վիեննա, 1931:
54. Սիմէօն Երևանցի, Ջամբռ, գիրք որ կոչի Յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս և իւրոյ շրջակայից վանօրէիցն, համաժողովեալ և շարադրեցեալ ի Սիմէօնէ ցաւահար և վշտակոծ կաթողիկոսէ Երևանցւոյ, Վաղարշապատ, 1873:
55. Ստեփանյան Գ., Բաքվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին (պատմա–ժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 2010:
56. Ստեփանյան Գ., Բաքու քաղաքի հայության պատմությունը (պատմա–ժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 2011:
57. Վարանդեան Մ., Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Բ հատ., Թեհրան, 1981:
58. Վարդան վարդապետ (Արևելցի), Հավաքումն պատմութեան, Վենետիկ, 1862:
59. Վարդանյան Թ. Ռ., Ազգամիջյան հակամարտությունը որպես էթնիկ ինքնության ձևավորման գործոն (1905–1906 թթ. հայ–թաթարական ընդհարումների օրինակով),— «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1, 2003, էջ 72–78:
60. Վարշամեանց Ս., Հաշիւ կամ համառօտ նկատողութիւն մարդասիրական ընկերութեան, Բաքու, 1873:
61. Տիտանյան Ռ., Հայկական աղբյուրները Աղա Մուհամմեդ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին (1795–1797 թթ.), Երևան, 1981:
62. Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, Երկերի ժողովածու, հատ. 9, Երևան, 1987:
63. Փաշայան Ա., Իսլամն Ադրբեջանում. անցյալը և ներկան, Երևան, 2014:
64. Аббас–Кули–Ага Бакиханов, Гюлистан–и Ирам: редакция, комментарии, примечания и указатели З. Буниятова, Баку, 1991.
65. Абуллаев Г., Азербайджан в XVIII в., и взаимоотношении его с Россией, Баку, 1965.

66. Абуллаев Г., Из истории северо–восточного Азербайджана в 60–80–х гг. XVIII века, Баку, 1958.
67. Авалов Э., Архитектура города Шуши и проблемы сохранения его исторического облика, Баку, 1977.
68. Агаян Ц. П., Бакиханов, Баку, 1948.
69. Агаян Ц. П., К вопросу об издании газеты «Экинчи». Труды Азербайджанского Государственного университета им. С. М. Кирова, вып. I, Баку, 1950.
70. Агаян Ц. П., Крестьянская реформа в Азербайджане в 1870 г., Баку, 1956.
71. Азербайджан в годы первой русской революции, Баку, 1965.
72. Акты, собранные Кавказской Археографической комиссией» (АКАК), тт. II–VII, Тифлис, 1867–1878, X, Тифлис, 1902, № 184.
73. Алибеков И., Елисаветопольские кровавые дни перед судом общества, Тифлис, 1906.
74. Алиев Ф. М., Азербайджано–русские отношения (XV–XIX вв.), Баку, 1985.
75. Антология азербайджанской поэзии, Москва, 1939.
76. Араслы Г., Мирза Фатали Ахундов, Баку, 1938.
77. Аргутинский–Долгоруков А., История сооружения и эксплуатации Закавказской железной дороги за двадцать пять лет ее существования (1871–1896), Тифлис, 1896.
78. Асатрян Г., Этническая композиция Ирана: От «Арийского простора» до Азербайджанского мифа, Ереван, Кавказский центр иранистики, 2012, 129 с.
79. Ахмедбек Джаваншир, О политическом существовании Карабахского ханства (с 1747 по 1805 год), Баку, 1961.
80. Ахундов Б. Ю., Монополистический капитал в дореволюционной бакинской нефтяной промышленности, Москва, 1959.
81. Багданович Н. Г., К вопросу о феодальной эксплуатации кочевников в Закавказском крае в первой трети XIX в., «Исторический архив», т. II, Москва–Ленинград, 1939.
82. Балаев А., Азербайджанская нация: Основные этапы становления на рубеже XIX–XX вв., М., 2012.
83. Бартольд В. В., Сочинения, т. 2, Часть 1, М.,1963.
84. Бромлей Ю. В., Очерки теории этноса, М., 1983.
85. Варданян Т., Азербайджанцы, История одного незавершённого этнопроекта, М., 2012.
86. Волкова Н. Г., Этнические процессы в Закавказье в XIX–XX вв.,— Кавказский этнографический сборник, т. IV, М., 1969, с. 3–70.
87. Балаян Б. П., Дипломатическая история русско–иранских войн и присоединения Восточной Армении к России, Ереван, 1988.
88. Бутков П. Г., Материалы для новой истории Кавказа с 1722, по 1803 года, ч. I–II, СПб, 1869.
89. Весь Кавказ. промышленность, торговля и сельское хозяйство Кавказа и Закавказья. Составил и издал М. С. Шапшович, Баку, 1914.
90. Гакстгаузен А. фон, Закавказский край, СПб, 1857.
91. Гинзбург М. И., Нефть и Бакинская нефтяная промышленность, Киев, 1915.
92. Гулишамбаров С., Очерки развития и современное состояние нефтяной промышленности Бакинского района (Сборник сведений о Кавказе), т. VII, Тифлис, 1880.
93. Гусейнов Г. Н., Выдающийся азербайджанский ученый профессор Мирза Казем–бек. Доклады АН Азерб. ССР, 1947, № 1.
94. Гусейнов Г. Н., Мирза Казем–бек о социальной сущности восстания бабидов. Доклады АН Азерб. ССР, 1948, № 8.
95. Джафаров Дж., Драматургия Ахундова, Баку, 1950.

96. Джафаров Дж., Путь развития азербайджанского театра. «Искусство Азербайджана», т. III, Баку, 1950.
97. Документы по истории Баку, 1810–1917. (Составители: Л. Алиева, М. Назарова, Н. Полумордвинова, Ш. Рзаева, Р. Руднева, Ч. Салахлы), Баку, 1978.
98. Дубровин Н. Ф., Закавказье от 1803 до 1806 гг., СПб, 1866
99. Дубровин Н., История войны и владычества русских на Кавказе, тт. I–VI, СПб, 1871–1886.
100. Евецкий О., Статистическое описание Закавказского края, СПб, 1835.
101. Егиазаров С. А., Исследование по истории учреждений в Закавказья, ч. 1, Сельская община, Казань, 1889.
102. Ениколопов И., Поэт Мирза Шафи, Баку, 1938.
103. Записки Алексея Петровича Ермолова, ч. II, 1816–1827, Москва, 1869.
104. Зелинский С., Описание города Шемаха, Тифлис, 1896.
105. Зубов П., Шесть писем о Грузии и Кавказе, написанные в 1833 г., Москва, 1834.
106. Ибрагимбейли Хаджи Мурад, Россия и Азербайджан в первой трети XIX века, Москва, 1969.
107. Иваненко В. Н., Гражданское управление Закавказьем, Тифлис, 1901.
108. Из истории аграрной политики царизма в Грузии, Азербайджане и Армении. (Сборник архивных материалов), Предисл. и введение В. Рштуни, Ереван, 1854.
109. Иоаннисян А. Р., Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX в., Ереван, 1958.
110. Искусство Азербайджана, т. 1–12, Баку, 1949–1968.
111. Исмаил–Заде Д., Население городов Закавказского края в XIX — начале XX в. (Историко–демографический анализ), Москва, 1991.
112. Исмаил М., История Азербайджана. (С древнейших времен до начала XX века), Баку, 2007.
113. Исторические записки об управлении Кавказом, Сост. С. Эсазаде, т. II, Тифлис, 1907.
114. История Азербайджана (краткий очерк), Баку, 1979.
115. История Азербайджана, том 2, Баку, 1960.
116. Калустянц А., Краткий исторический очерк состояния и деятельности Бакинского человекалюбивого общества во имя Св. Григория Просветителя Армении с 1864 по 1896 г., Баку, 1896.
117. Касимзаде Ф., Очерки по истории азербайджанской литературы XIX в., Баку, 1962.
118. Колониальная политика российского царизма в Азербайджане, Баку, 1936.
119. Левиатов В. Н., Очерки из истории Азербайджана в XVIII веке, Баку 1948.
120. Линден В., Высшие классы коленного населения кавказского края, Тифлис, 1917.
121. Литература азербайджанских татар, Тифлис, 1903.
122. Макаров А., Закавказье в торговом отношении, Москва, 1884.
123. Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края, Тифлис, т. I, 1885, т. II, ч. I–II, 1886, т. VI, ч. II, 1887, т. VII, 1887.
124. Мильман А., Политический строй Азербайджана в XX в., Баку, 1966.
125. Мирза Джамал Джаваншир Карабаги, Тарих–и Карабаг, Баку, 1959.
126. Мнацаканов Е., Азербайджанская народная музыка, Москва, 1963.
127. Могилевский и Ермолов, Описание Карабагской провинции, Тифлис, 1823.
128. Мустафаев Дж., Северное ханство Азербайджана и Россия, Баку, 1989.
129. Нагорный Карабах в международном праве и мировой политике (документы и комментарии), т. I, сост. проф. Ю. Барсегов, Москва, 2008.
130. Обзор Бакинской губернии за 1891 г., Баку, 1893.
131. Обозрения Российских владений за Кавказом (в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношениях), ч. I, СПб, 1836.

132. Отчет по Главному управлению наместника кавказского за первое десятилетие управления кавказским и Закавказским краем Его императорским высочеством великим князем Михаилом Николаевичем, 6 декабря 1862 — 6 декабря 1872 гг., Тифлис, 1873.
133. Петрович П., Рабочие бакинского нефтепромышленного района, Тифлис, 1911.
134. Петрушевский И. П., Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI — начале XIX вв., Ленинград, 1949.
135. Пичикян Г., Капиталистическое развитие нефтяной промышленности в Азербайджане. См. «История классовой борьбы в Закавказье», сборник статей, книга первая, Тифлис, ЗКУ, 1930.
136. Пожитнов А. К., Очерки по истории бакинской нефтедобывающей промышленности, Москва, 1940.
137. Полное собрание законов Российской империи, т. XV, СПб, 1841, т. XXI, СПб, 1847.
138. Потто В., Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, т. I, вып. I–IV, С. Петербург, 1887.
139. Рагозин, Нефть и нефтяная промышленность, Баку, 1884.
140. Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края, тт. I–II, Тифлис, 1887–1888.
141. Старцев Г. Е., Бакинская нефтяная промышленность, Баку, 1901.
142. Стригунов И. В., Из истории формирования бакинского пролетариата, Баку, 1960.
143. Сумбатзаде А. С., Кубинское восстание 1837 года, Баку, 1961.
144. Сумбатзаде А. С., Сельская хозяйство Азербайджана в XIX в., Баку, 1958.
145. Сысоев В. М., Краткий очерк истории Азербайджана (Северного), Баку, 1925.
146. Тунян В., Административно–экономическая политика самодержавия России в Закавказье первой половины XIX в., Ереван, 2003.
147. Тунян В., Политика самодержавия России в Закавказье XIX — начало XX вв., ч. I (1800–1826 гг.), Ереван, 2006.
148. Тунян В., Историческое пристрастие Азербайджана к истории Армении: мифы и реалии, Ереван, 2013.
149. Утверждение русского владычества на Кавказе, тт. I–III, Тифлис, 1901–1904.
150. Фадеев А. В., Россия и Кавказ первой трети XIX века, Москва, 1960.
151. Шахатунян А., Административный передел Закавказского края, Тифлис, 1918.
152. Шопен И., Исторический памятник Армянской области в эпоху присоединения ее к Российской империи, СПб, 1852.
153. Hosking G., Empire and nation–building in late imperial Russia,— Russian nationalism: Past and present, New York, 1998, p. 19–35.
154. Hroch M., How much does nation formation depend upon nationalism? East European Politics and Societies, Vol. 4,1, 1989, p. 101–115.
155. Swietochowski T., Collins B. C., Historical dictionary of Azerbaijan, Maryland & London, 1999.
156. Swietochowski T., Russian Azerbaijan, 1905–1920: The shaping of a national identity in a Muslim community, Cambridge, 1985.
157. Woods J., The Aqquyunlu (clan, confederation, empire), Salt Lake City, 1999.
158. Yıldırım İ. M., Azerbaycan'da metbuat hareketlerinin başlangıcı, Uluslararası Türkçe edebiyat, kültür, eğitim dergisi, № 2/2, Türkiye, 2013, s. 147–160.

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Ա

Աբաշելի Ա., 479
Աբաշիձե Կիտա, 456, 473, 480
Աբաշիձե Վասո, 475
Աբաշիձե Ցիտա, 473
Աբաշիձեներ, 401
Աբբաս II Հիլմի, 293, 297
Աբբաս Աղա, 70
Աբբաս Բուլուկիֆարր, 120
Աբբաս Իրավանի, 34
Աբբաս Խալիլ, 127
Աբբաս Հիլմի Ա, 284
Աբբաս Միրզա, 19, 22, 26–34, 39, 104, 109, 110, 119, 390, 493, 494, 496
Աբբաս Սիհհաթ, 568
Աբբաս–ղուլի Աղա Բաքիխանով (Քուդսի), 566
Աբգար Թոխաթեցի, 248
Աբդ ալ–Ազիզ ալ–Ջաբրա, 344
Աբդ Ալլահ–խան, 119
Աբդ ալ–Կադիր, 327
Աբդ ալ–Համիդ ալ–Զահրավի, 337
Աբդ ալ–Ռահման Քավաքիբի, 294
Աբդ Համիդ ալ–Զահրավի, 333
Աբդալլահ ան–Նադիմ, 367, 368
Աբդալլահ Մուսսի, 343
Աբդյուլիակ Համիթ Թարհան, 239
Աբդուլ Ազիզ Ա, 156
Աբդուլ Համիդ II / Աբդուլ Համիդ Բ / Աբդուլ Համիդ, 114, 165, 172–176, 178–184, 186, 188, 189, 191, 192, 194–197, 201–204, 232, 233, 244, 245, 289, 291, 294–296, 313, 314, 329, 330, 332, 355–358
Աբդուլ Մաջիդ, 283, 324, 327, 348,
Աբդուլ Մեջիդ Ա, 156
Աբդուլ Սալամ Ախունդ–զադե, մոլլա, 514, 530
Աբդուլլահ Ջևդեթ, 189
Աբդուլիակ Համիդ, 252
Աբդուրրահման Շերեֆ, 243, 246
Աբելյան Հ., 552
Աբեղյան, 555
Աբխազի Իվան, 406
Աբովյան Խաչատուր, 466, 467
Աբու ալ–Ղասեմ Նասիր ալ–Մուլք, 75
Աբուլ–Հասան խան, 26
Աբուլ–Ղասեմ Ֆարահանի, 22, 33
Աբուլֆաթ Թութի, 567
Ադամյան Պետրոս, 464, 552
Ադելխանով Գ., 438, 463, 521
Ադիբ Իսհակ, 367
Ադիբ Նիշապուրի, 124
Ազիզ ալ–Մըսրի, 295, 296
Ազիզբեկով Մ., 534
Ազնիվ Հրաչյա, 555
Աթաբեկ Ազամ, 66, 70
Աթաբեկ Ամին ալ–Սուլթան, 116
Ալեմդար Մուսթաֆա, 143, 144
Ալեքսանդր Ա, 27, 382, 383, 388, 390, 396, 490, 491, 492
Ալեքսանդր արքայազն, 386, 393, 409
Ալեքսանդր Բ, 56, 422, 424, 429, 433, 511, 512, 549
Ալեքսանդր Գ, 445
Ալեքսանդր Մակեդոնացի, 24
Ալեքսի (Օպոցկի), 449
Ալի Աքբար Դեհխոդա, 126
Ալի բեկ Հուսեյին / Ալի բեկ Հուսեյինզադե, 547, 550
Ալի Իհսան փաշա, 88
Ալի Հայդար, 252
Ալի Մոհամմադ, 40, 41
Ալի Մուբարաք, 366
Ալի Ջանիփ, 240
Ալի Ռեզա փաշա, 37
Ալի Ռիզա, 307–310
Ալի Սուավի, 164, 171, 178
Ալի փաշա, 152, 156, 157, 160, 161, 163, 165, 238, 419
Ալի–Աքբար Մուզայյին ալ–Դաուլա, 120
Ալիխանյան, 555
Ալ–Հաքիմ, 326
Ախունդով Ա., 534
Ախունդով Մ. Ֆ., 126, 550, 560, 568, 569
Ախունդով Սուլեյման Սանի, 568
Ախսայի Ահմեդ, 40
Ակնունի (Խաչատուր Մալումյան), 192
Ահմադ Արաբի, 289, 291, 292
Ահմադ Արսլան, 350
Ահմադ շահ Ղաջար, 87
Ահմադ Ֆարիս աշ–Շիդյակ, 366
Ահմեդ Լյութֆի էֆենդի, 243
Ահմեդ Միդհատ փաշա, 158, 159
Ահմեդ Միրզա, 75, 565
Ահմեդ Ջեմալ, 335
Ահմեդ Ռըզա, 189, 190, 199, 237
Ահմեդ Վեֆիկ, 175, 236, 237, 245

Ահմեդ փաշա, 419
Ահմեթ Նիյազի, 194
Աղա Բուգուրգ Նաղդաշբաշի, 120
Աղա խան Նուրի, 49, 50
Աղա Մուհամմեդ–խան, 16, 17, 375, 376, 378, 446, 474, 487–489, 491
Աղաև Ա., 536, 537
Աղաև Ահմեդ բեկ, 547, 550
Աղայան Ղազարոս, 467
Աղայով Ահմեդ աղա, 246
Աղանյանց Գյուտ, 467
Աղնիաշվիլի Լադո, 475
Ամիլախվարի Բ., 409
Ամին առ–Ռեյհանի, 368
Ամին–օս–Սալթան, 70
Ամիր Բահադուր–Զանգ, 73
Ամիր Նեզամ, 46, 47, 50, 108
Ամիր–ե Քաբիր, Ամիր Քյաբիր, 46–49, 125
Ամիրեջիր Գիորգի, 388
Ամիրյան, 558
Ամիրշահրի Մահշիդ, 129
Ամիրով Ֆ., 569
Ամրիկյան Մ., 552
Այվազյան Նիկոլայ, 558
Այվազով, 520
Անանև, 551
Անանով, 546, 551
Անդրանիկ Օզանյան, 86
Անդրոնիկաշվիլի Իվան, 418
Անինո Պ., 170
Անտոն (Անտոնիոս) կաթողիկոս, 382, 391
Անտոնով Զուրաբ, 476
Աշըգյան Խ., 232
Աշուրով, 538
Աուզլի Հենրի, 25
Ապուչեխցի, 248
Աջիլ, 308
Առաքելյան Գ. Ա. (Առաքելով), 552
Ասադ, 350
Ասադուլլաև Ծ., 536, 543
Ասկեր խան, 494
Ասումբեկ Զաքիր, 568
Աս–Սուվայդի, 343
Աստվածատուր Կոստանդնուպոլսեցի, 248
Ավան–Յուզբաշև, 520
Ավետիսովներ, 466
Ավետյան Գ., 552
Ատ–Թաբարի / Աթ–Թաբարի, 566
Արագվիսպիրելի Ծ., 479
Արամյանց, 474, 520, 551
Արամյանցներ, 463
Արապյան Պողոս (Օհաննեսյան), 248
Արասխանյանց Ա., 467
Արաքիշվիլի Դիմիտրի, 475
Արաֆելով, 551
Արդազիանի Լավրենտի, 477
Արեֆ Ղազվինի, 126, 129
Արթին Դաուդ,
Արծաթպանյան, տե՛ս Սերեբրյակով, 419
Արծրունիների ընտանիք,
Արղության Հովսեփ, 381, 466, 557
Արշակունի, 546
Արունյաններ, 551
Արունյանց, 551
Աքչուրա Յուսուֆ, 240, 246
Աֆրիկով, 551
դ'Արսի Վիլյամ Նոքս, 58

Բ

Բաբ, 41–46
Բաբախան / Բաբա–խան, 378, 489, 491
Բաբայան Սոֆյա, 466
Բաբանասյան, 519
Բագրատ V, 477
Բագրատիոն Գրիգոլ, 393
Բագրատիոնի Իվանէ (Հովհան), 386, 480
Բագրատիոնի Նինո, 395
Բագրատիոնի Պյոտր, 406
Բագրատիոնիների արքայատուն, 387
Բաժբեուկ–Մելիքով, 432
Բալանչիվաձե Մելիտոն, 475
Բայար Ջելալ, 213
Բայրոն, 145
Բաշինջաղյան Գ., 468
Բաշիր Բ Շիհաբ, 345, 346
Բաշիր Գ Բին Կասեմ, 349
Բարաթաշվիլի Նիկոլոզ, 476
Բարաթաշվիլի Ս., 480, 481
Բարաթով, 88, 90
Բարյատինսկի Ալեքսանդր, 417, 422, 423, 433, 511, 512
Բարնով Վ., 479
Բարտոլդ Վ. Վ., 46
Բաքրաձե Դիմիտրի, 481
Բեդրեդին Հասան, 252
Բեկզադյան Ալեքսանդր, 533
Բեհազին, 127
Բեհաէդդին Շաքիր, 190, 198
Բեհբեհանի Աբդոլլա, 68, 69
Բեհբության Մելիք Դարչի, 380
Բեջիհ էֆենդի, 148

Բերիձե Ալեքսանդր, 473
Բերինգ, 293
Բոզորգ Ալավի, 127
Բուալեկոնտ, 319
Բուլգակով, 495
Բույուկ Սուլեյման, 301–303
Բուտրուս ալ–Բուստանի, 330, 356
Բուրմով Թոդոր, 168
Բրյուգեր, 17
Բրոսե Մարի, 480
ֆոն Բյուլով Բեռնհարդ, 61

Գ

Գաբաշվիլի Գ., 473
Գաբաշվիլի Ե., 478
Գաբունիա Նատո, 475
Գազարին Ա., 422, 423
Գազանճյան Ռաֆայել, 249
Գամքյուսար Ալիգուլու, 568
Գավաֆյան Արշակ (Քեռի), 74, 558
Գարդան Կլոդ Մաթյե, 22–24
Գափրինդաշվիլի Վալերիան, 479
Գեգեչկորի Ա., 459
Գեգեչկորի Ե., 457
Գեորգի ԺԲ, 377, 378, 380–382, 389, 491
Գերցեն, 63, 477
Գևորգ եպիսկոպոս, 114
Գիլանի Աշրաֆ, 126, 129
Գիպիուս Ալեքսանդր, 186
Գլազենապ, 495
Գյանջունցև Միքայել, 551
Գյուլխանդանյան Ա., 558
Գյոքալփ Զիյա, 198, 204, 240, 539
Գոգեբաշվիլի Ի., 471
Գոգեբաշվիլի Յա., 432, 444, 446
Գոլիցին, 445, 449
Գոլշիրի Հուշանգ, 129
Գոմարթելի Իվանե, 480
Գորոդեցկի, 449
Գուբոն, 521
Գուդովիչ, 391, 495, 496
Գուլիշամբարով Ս. Ի., 525
Գուլյակով, 378, 492
Գուչկով, 389
Գուրիելի Գ., 418, 420
Գուրիելի Մ., 420
Գուրիելի Մաղաքիա, 420
Գուրկո–Կրյաժին Վ., 63
Գվելեսիանի Ռոմանոզ, 473
Գրեյ, 86
Գրիբոյեդով Ա., 32, 33
Գրիգորյան Կ., 224, 462

Դ

Դադիանի Գ., 395, 397, 416, 421
Դադիանի Ե., 422
Դադիանի Ն., 422
Դահդահ, 355
Դամադ Մահմուդ փաշա, 191
Դաուդ փաշա, 303–311, 354, 355
Դաուդյան Կարապետ–Հարություն, 354, 355, 358
Դավթյան Եփրեմ, 74–77
Դավիթ Անանուն, 503
Դավիթաշվիլի Շիո, 443
Դավուդ փաշա, 28, 29
Դարազի, 326
Դարեջան թագուհի, 380, 389
Դեդեշքելիա Կոնստանդին, 422, 423
Դեդեշքելիաններ, 422, 423
Դելամեն, 315
Դեհխոդա, 126, 129
Դեմինսկի, 534
Դը Բլիներ, 288
դը Լեսեպս Ֆերդինանդ, 285
Դիլդարյան, 519
Դիլոյան Վ., 499
Դիմիտրի արքայազն, 407
Դոբրոլյուբով, 477
Դոդաշվիլի Սոլոմոն, 406–408
Դոլուխանով, 520
Դոնդուկով–Կորսակով, 445
Դոնիցետի Ջ., 241
Դովլաթով, 551
Դուռնովո Ն., 448
Դրուվիլ Գասպար, 97

Ե

Եզոպոս, 556
Եկատերինա Բ, 376, 488, 489
Եղիազարով, 546
Երիցյան Ալ., 467
Երմոլով Ա. Պ., 27, 28, 392, 400–402, 471

Զ

Զայաթխանով Ա., 536
Զավեն պատրիարք, 234, 235
Զավրիև (Զավրյան), 403
Զարդաբի Հ., 568, 570
Զարիֆյան Հ., 552, 555
Զաքիր Ա., 568
Զաքիր Կ. Բ., 550
Զդանովիչ (Մալաշվիլի) Գեորգի, 444
Զելլ–ի Սուլթան, 34
Զեյդան Ջիրջի, 364, 368
Զեյն Զեյն, 355
Զեյն օլ աբեդին Մարաղեի, 126
Զեյնալաբադի Սաղարի, 520, 567
Զիյա փաշա, 171, 237
Զիյադխանով Իսմայիլ– խան, 537
Զյուլքադարով Գ., 536
Զոհրապ Գրիգոր, 201
Զոհրապյանց Մ. Զ., 554
Զուբալաշվիլի Յա., 403
Զուբալով, 474, 520
Զուբով Վալերիան, 376, 382, 488, 489
Զուրաբով, 551
ֆոն Զանդերս Լիման, 335

Է

Էդվարդ Յոթերորդ, 194
Էլիավա Շ., 459
Էլիոթ Հենրի, 170
Էմին Բյուլենթ, 240
Էնվեր, 83, 85, 191, 195, 198, 208–211, 214, 335
Էնֆիաջյանց, 462, 463, 466, 521
Էսսադ Բեյ, 166
Էվդոշվիլի Ի., 479
Էրիսթավի Գ., 408, 472, 475, 476
Էրիսթավի Դ., 408
Էրիսթավի Է., 407–409
Էրիսթավի Թ., 477
Էրիսթավի Ն., 420
Էրիսթավի Ռ., 407, 432, 444
Էրիսթավի Ռափիել, 407, 432, 444
Էֆենդիև Ս., 534

Թ

Թաբաթաբայի Մոհամմադ, 68
Թադեոս վարդապետ Բեկնազարյան, 114
Թադևոսյան, 520
Թաթարջըք Աբդուլա էֆենդի, 142
Թաթիշվիլի Գ., 473
Թաթոսյան, 519
Թալբոթ Ջոն, 57
Թալեաթ, 83, 190, 191, 198, 204, 205, 208, 209, 213, 215, 235
Թալեբով Աբդուռահիմ, 126, 127
Թահսին փաշա, 184
Թաղայշվիլի Էքվթիմե, 481
Թաղիև, 520, 538, 542, 546, 569
Թամամշև Գաբրիել, 464, 521
Թամարաշվիլի Միխեիլ, 481
Թանիուս Շահին, 351, 352
Թաուսսեենդ, 316
Թառայան, 519
Թառումյան Բաբա, 545
Թարաղի Գ., 129
Թեյմուրազ արքայազն, 480
Թեյմուրազ, 389
Թերքդալեուլներ, 432–434, 444, 445, 472
Թևֆիք Ֆիքրեթ, 239, 240
Թոիձե Մոսե, 473
Թումանիշվիլի Գ., 409
Թումանյան Հովհաննես, 467
Թումանով Միքայել, 480
Թուսուն, 278
Թոփչիբաշև Ալի Մարդամբեկ, 536, 538, 540, 547, 566
Թոփչիբաշև Միրզա Ջաֆար, 566
Թոֆիկ, 290

Ժ

Ժոբերին Ամեդեյ, 19
Ժորդանիա Թեդո, 471, 481
Ժորդանիա Ն., 447, 456, 473
Ժուանե, 24

Ի

Իաշվիլի Պաուլո, 479
Իբրահիմ Թեմո, 189
Իբրահիմ խան, 391, 488, 489, 491, 493, 496
Իբրահիմ Յազիջի, 356, 368
Իբրահիմ Նաղդաշբաշի, 119
Իբրահիմ Նիջաթի, 567
Իբրահիմ Շինասի, 237, 239

Իբրահիմ փաշա, 147, 280, 281, 282, 284, 286, 320–325, 346–348
Իբրահիմ, 278, 280, 281, 283, 319
Իգնատև Ն. Պ., 169, 170, 174
Իզզեթ փաշա, 184, 215
Իզմիրլյան Մ., 233
Իզվոլսկի, 71
Իշխանյան Բ., 543
Իոսելիանի Էգնատե, 443
Իոսելիանի Պլատոնի, 480
Իսկանդեր Յանկո Հուջի, 246
Իսմայիլ Ջալայիր, 119
Իսմայիլ Ջանբոլաթ, 190
Իսմայիլ փաշա, 279, 286, 287
Իսֆահանի Միհր–Ալի, 119
Իրակլի Բ, 375
Իրաջ Միրզա, 129

Լ

Լազարև Ի., 177, 377, 380, 382, 383, 389, 464
Լալայան, 467, 520
Լահութի, 129
Լամբտոն Է., 65
Լամմենզ, 355
Լեյկ Պերսի, 317
Լենկ Թեմուր, 24
Լեո, 17, 376, 381, 385, 467, 552, 555
Լեոնիդ եպիսկոպոս, 450
Լիանոզով Գ., 59, 520, 551
Լիանոզով Ս., 59
Լիլեև, 534
Լիմոնջյան Հ., 241
Լիսանևիչ, 391
Լիտտեն, 81
Լյախով Վ. Պ., 73
Լյութեր, 44
Լյութֆալի–բեկ, 489
Լյուսիեն, 22
Լոմթաթիձե Ճ., 479
Լոմոուրի Ն., 478
Լոուրենս Թ., 316
Լոռիս–Մելիքով Մ., 177
Լորթիփանիձե Կիրիլ, 432
Լուի Նապոլեոն Գ, 327, 328

Խ

Խադի Մ., 568
Խալիլ Ղանիմ, 356
Խալիլ Մուտրան, 368
Խալիլ փաշա, 316
Խալիլ Օլլա, 30
Խալիմ ալ–Ջազաիրի, 337
Խախանիշվիլի Ալեքսանդր, 481
Խախանով Ալեքսանդր, 480
Խայրեթ Էֆենդ, 25
Խապայան Սահակ, 235
Խառլամով Վ., 456
Խատիսյան Կ., 556
Խատիսով / Խատիսյան Ալեքսանդր, 455, 456
Խորասանանյան Գ., 224
Խուրշիդ, 326
Խուրշուդ փաշա, 266, 267
Խրիմյան Մ., 231, 232

Ծ

Ծերեթելի Ակակի, 432, 433, 471, 477
Ծերեթելի Գ., 432, 433, 444, 472, 477, 478
Ծերեթելիներ, 401

Կ

Կամոևներ, 551
Կանայան Դրաստամատ (Դրո), 535, 558
Կանկրին, 411, 505
Կառոլիդի, 246
Կասումով Մ., 534
Կարաև Կարա, 569
Կեկելիձե Կոռնելի, 481
Կեսարեցի Խաչատուր, 125
Կիկնաձե Փ., 408
Կիրիոն եպիսկոպոս, 450
Կլդիաշվիլի Դ., 479
Կոնրինգ, 380, 382, 383, 396
Կնունյանց Բ., 558
Կոլուբյակին, 442
Կոկորև, 519, 521, 522
Կոմիտաս, 128, 241
Կովալենսկի Պ., 377, 383, 389
Կոտետիշվիլի Վ., 476
Կորգանով Գ., 403, 551, 558
Կորիձե Փիլիմոն, 475
Կուկուջանյան, 519
Կույումջյան Հովհաննես, 358, 359

Կվիրկվելիա Բ., 459
Կրիմսկի, 355
Կրոմեր, 293
ֆոն Կրեսենշտայն Կրես, 299, 335

Հ

Հաբր Ջամիլ, 357
Հալիդ Ռեֆիք, 240
Հալիդե Էդիփ Ադըվար, 240
Հալիթ Զիյա Ուշաքլըգի, 240
Հալիլ, 201
Հախվերդիև / Ախվերդով Աբդուրաղիմբեկ, 568, 569
Հակոբ Մեղապարտ, 248
Համազասպ, 558
Համիդ Սադր, 129
Համոն, 276
Հայդար Աբու Լամա, 350
Հայրուլլա Էֆենդի, 236
Հաշիմ Ահմեդ, 240
Հաուրանի Ա., 232, 358
Հաջի Գևո, 558
Հաջի Զեյնալ Աբդին Թաղիև, 520
Հաջի Սեյիդ Աբդուլհամիդ, 565
Հաջիբեկով Ուզեիր, 569
Հաջինսկի Մ., 537, 540, 543
Հաջինսկի Մամեդ Հասան, 537, 540, 543
Հասան Իսմայիլ–զադե Չալիփա, 120
Հասան խան, 29
Հասան փաշա, 301
Հասան, 119
Հասանալիխան Ղարադաղի, 565
Հարֆորդ Ջոնս, 23–25
Հաֆիզ Իբրահիմ, 368
Հերակլ Բ, 376–378, 380, 386, 388, 446, 461, 488
Հերոդոտոս, 566
Հիթթի Ֆիլիպ, 355
Հիսուս, 42
Հիքմեթ Ահմեդ, 240
Հիֆնի Նասիֆ, 369
Հյուսեյն Զադե Ալի, 189
Հոսեյին Ղոլի խան Նավաբ, 81
Հովնաթանյան Հակոբ, 468, 473
Հովնաթանյան Մկրտում, 468
Հովսեփ Գեղեցիկ, 119
Հովսեփյան Ս., 558
Հուլոն, 380
Հուսեյին էֆենդի, մուֆթի, 514
Հուսեյին Համադանի, 120
Հուսեյին Քուլլալար Աղաս, 120
Հուսեյն իբն Ալի ալ–Հաշիմի, 338, 340
Հուսեյն Քամիլ, 297, 299, 343
Հուսեյն, 119

Ղ

Ղաեմ մաղամ Ֆարահանի, 125
Ղազբեգի / Կազբեկի Ալեքսանդր, 445, 478
Ղազիկումուխցի Սուրխայ–խան, 495
Ղազի–մոլլա, 408
Ղազնավի Մահմուդ, 123
Ղազվինի Համդալլահ, 566
Ղանբար, 119
Ղասաբյանց Ա., 556
Ղավամ–ադ–Դոուլե, 121
Ղարաբեկյան, 520
Ղիփիանի Դմիտրի, 434
Ղիփիանի Կոտե, 475
Ղիփիանի Մ., 443
Ղիփիանի Միխայիլ, 443
Ղիփշիձե Հովսեփ, 481
Ղորղանով (Կորգանով), 403
Ղուկասյան եղբայրներ, 557
Ղուկասով, 551

Ճ

Ճավճավաձե Ա., 393, 406
Ճավճավաձե Գ., 386, 390
Ճավճավաձե Ի., 432–434, 444, 445, 453, 471, 472–477
Ճևահիրճյան Գ., եպ., 235
Ճոնքաձե Դանիել, 432, 477

Մ

Մադաթյանց, 31
Մալեք օշ–շոարա Բահար, 126, 129
Մալքոլմ Ջոն, 18, 22, 23, 25
Մալքոմ (Մելքոն) խան, 63
Մախարաձե Ֆ., 459
Մակինցև Սամսոն, 110
Մակ–Մահոն, 297, 299, 338–340
Մահդի Հուսայնի, 119
Մահդի Ղուլի միրզա, 44
Մահդի, 40–42, 44, 293

Մահդի–ե Ուլիյա, 49
Մահմուդ Բ, 143, 145, 148, 149, 151–154, 217, 236, 242, 253, 278, 280, 281, 283
Մահմուդ Սամի ալ–Բարուդի, 290, 368
Մահմուդ–խան Մալիք ալ–Շուարա Սաբա, 119
Մամեդկուլիզադե Ջալիլ, 568, 570
Մայիլյան Եղիա, 556
Մայիլով, 520, 551
Մայսուրաձե Գրիգոլ, 473
Մանդինյան Ս., 552
Մանթաշև (Մանթաշյան) Ա. Հ., Մանթաշյաններ (Մանթաշովներ), 463, 520, 521, 526, 549, 551, 556, 557
Մանուկ բեյ Միրզայան, 144
Մանուչեհր խան Մոաթամեդ–օդ– Դոուլե, 43
Մանչեյան Պետրոս, 545
Մառ Նիկողայոս, 481
Մատակյան Գայանե, 466
Մատթեոս պատրիարք,
Մարզվանցի Գրիգոր, 248
Մարիամ թագուհի, 389
Մարտիրոսյաններ, 466
Մաքդոնալդ Քիններ, 103
Մաք–Նեյլ, 34, 35
Մաքսվել Ջոն Գրենվիլ, 296
Մաքքոլ Մալքոլմ, 186
Մգալոբլիշվիլի Սոֆրոն, 443, 478
Մելիք–Աղամիրով, 520
Մելիքյան Վ., 519
Մելիքյան, 545, 558
Մելիք–Շահնազարյան Դավիթ, 19
Մելիք–Շահնազարյան Ջումշուդ, 494
Մելիքով Հ., 569
Մելիքով Մ., 537
Մելիքով Ջավադ, 521
Մեհդի–դուլի խան, 496
Մեհմանդարով Կ., 537
Մեհմեդ Ե Ռեշադ, 314
Մեհմեդ Էմին Ալի փաշա, 156
Մեհմեդ Էմին Յուրդաքու, 240
Մեհմեդ Էմին Ռասուլզադե, 539
Մեհմեդ Ռեջայի էֆենդի, 243
Մեհմեդ Վահդէդդին Զ, 214
Մեհմեդ Ֆուադ փաշա, 156
Մենդելեև Դ. Ի., 521
Մեջլում, 488
Մեջմեր Էսֆահանի, 123
Մետեռնիխ, 350
Մեսխի Սերգեյ, 432, 444, 472
Մեսխիշվիլի Լադո, 475
Մեսրոպով, 551
Մերրեյ, 52
Միդհաթ Շյուքրյու, 190, 198
Միզանդարի Ալոիզ, 475
Միլյուկով, 92
Միխայիլ Ռոմանով, 445
Միկոյան Ա., 558
Մինորսկի Վլադիմիր, 92
Միր Համզա Էֆենդի Սեյիդ Նիգարին, 568
Միր Մեհթի Միր Հաշիմ օղլի Խազանի, 565
Միրզա Աբուլղասըմ, 567, 568
Միրզա Ադիգյոզալբեկ, 494, 565, 568
Միրզա Ալեքպեր Սաբիր, 568
Միրզա Ալի Մոջուզ, 568
Միրզա Ալի Ռեզա խան Ազուդ օլ–Մոլք, 75
Միրզա Ահմեդ միրզա Խուդավերդի օղլի, 565
Միրզա Կաղիմ Իրավանի, 569
Միրզա Հոսեյին Ալի Բահա–Ուլլա, 44
Միրզա Հոսեյին խան, 63
Միրզա Հուսեյինբեկ Սալար, 567
Միրզա Մալքոմ խան, 126, 127
Միրզա Մահդի Շիրազի, 120
Միրզա Մահմուդ խան, 83
Միրզա Մոհամմադ Ռեզա, 20, 21, 67
Միրզա Մուհամմեդալի Ղասիմ օղլի Քազեմբեկ, 566
Միրզա Յուսիֆ Մոսթաշար օդ–Դոուլե, 63
Միրզա Յուսուֆ Ներսեսով Ղարաբաղի, 565
Միրզա Շաֆի Վազեհ, 22, 24, 568
Միրզա Քուչեք խան, 90
Միրզա–Բաբայ, 119
Միրզաբեկյան եղբայրներ, 527, 551
Միրզադե Էշղի, 126, 129
Միրզայան Զորայր, 129
Միրզոև Գ., 437
Միրզոյան Հովհաննես, 519–522
Միրզոյան, 546, 557
Միրիմանյան, 546
Մխիթար Գոշ, 115, 556
Մյուհենդիսյան Հովհաննես, 248, 249
Մյունիֆ Էֆենդի, 237
Մոդ, 317, 318
Մոդարես Նարաղի, 129
Մոզաֆֆար–էդ–Դին շահ, 65, 69, 70
Մոլլա Նասրեդդին, 570
Մոհամադ Այուբի, 129
Մոհամմադ Ալի, 70, 72–77
Մոհամմադ Թաղի խան Ֆարահանի, 46
Մոհամմադ Յուսիֆ, 52
Մոհամմադ շահ, 34, 35, 43, 46, 47, 113, 118
Մոհամմադ Ռեզա խան, 20, 21
Մողադամ, 127
Մոնտեսքյո, 363
Մոնտիև Պ., 534
Մոշիր օլ–Դոուլե, 70
Մոսթոուֆի–օլ–Մամալեք, 83, 84, 87, 88, 101

Մովսես, 42
Մորգան Շուսթեր, 76
Մուդարիս, 88
Մութաֆյան Վահրամ, 558
Մուխտարով, 538
Մուխրանսկի, 416
Մուհամմեդ (Մոհամմադ) մարգարե, 42, 104, 106, 338, 550
Մուհամմեդ Աբդո, 294, 366, 367
Մուհամմեդ ալ–Թանթաուի, 366
Մուհամմեդ Ալի Աշթիանի, 30
Մուհամմեդ Ալի, 29, 122, 146–148, 263–287, 293, 303–306, 310, 319, 322–325, 346–348, 362–365
Մուհամմեդ Արսլան, 332
Մուհամմեդ Գաֆֆարի, 120
Մուհամմեդ Էլֆի, 268
Մուհամմեդ Համիդ, 120
Մուհամմեդ Հասան, 119
Մուհամմեդ Հասան–խան Ղաջարի, 487
Մուհամմեդ Հեյքալ, 369
Մուհամմեդ Միրզա, 31
Մուհամմեդ Մուդաբիր, 120
Մուհամմեդ Մուվեյլիհի, 368, 369
Մուհամմեդ Սադիղ, 119
Մուհամմեդ Ֆարիդ Վաջդին, 369
Մուհիէդդին, 173
Մուսա Պրենս, 329, 357
Մուսա, 119
Մուսթաֆա ալ–Մանֆալութի, 368
Մուսթաֆա Դ, 143
Մուսթաֆա խան, 494
Մուսթաֆա Նեդիմ, 186
Մուսթաֆա Նուրի, 349
Մուսթաֆա Ռեշիդ փաշա, 151, 154, 236
Մուսթաֆա Սամի փաշա, 243
Մուսթաֆա փաշա Բայրաքթար, 143
Մուսթաֆա Քամիլ, 367, 368
Մուսթաֆա Քեմալ Աթաթյուրք, 193, 202, 204, 247
Մուրադ Ե, 170, 172, 178
Մուրացան, 467, 552
Մոռվելի Լեոնտի, 460
Մրևլիշվիլի Ալեքսանդր, 473
Մրվան Մուդավար, 313, 329, 332

Յ

Յազբեկ Յուսուֆ, 355
Յահյա Արիանփուր, 126
Յաղմա Ջանդաղի, 124
Յանովսկի Կ., 466
Յաքուբ Քադրի, 240
Յուլոն, 380, 386, 388, 389
Յուսուֆ փաշա, 23
Յուսուֆյան Պողոս, 276

Ն

Նազգաշյան Միհրան, 249
Նադիր շահ, 24, 33, 564
Նազարեթյան Ա., 459
Նազիև, 542
Նալիմով Նիկոլայ, 449
Նակաշիձե Միքայել, 534, 535
Նամըք Քեմալ, 163, 164, 171, 238, 239, 252
Նապոլեոն Բոնապարտ, 17, 19–25, 260–262, 327, 345, 393, 489
Նաջի Շիրվանի, 567
Նաջիբ Ազուրի, 295, 313, 314, 331, 357
Նասր–էդ–Դին, 44, 46, 49, 54, 56–58, 62, 65, 101, 113, 114, 120–122
Նար–Դոս, 467
Նաֆե Մահմուդ, 567
Նեշաթ, 123
Նեջիբ Ասըմ, 245, 247
Ներսես Ե Աշտարակեցի, 464, 466
Ներսեսով, 551, 565
Նիզամ ալ–Սալթանե Մաֆի, 88
Նիժարաձե Դ., 453
Նիկիտին Վ. Պ., 44
Նիկոլ Դուման, 535, 558
Նիկոլաձե Ի., 473
Նիկոլաձե Ն., 432, 433, 444, 471, 472, 480
Նիկոլայ (բարոն), 425
Նիկոլայ I / Նիկոլայ Ա, 147, 281, 414, 415, 417, 509, 510
Նիկոլայ Բ / Նիկոլայ Երկրորդ, 72, 194, 450, 453, 535
Նիկոլայ Նիկոլաևիչ Ռոմանով, 454
Նիյազի, 194, 195, 569
Նինոշվիլի Է., 479
Նոբել եղբայրներ, 520, 521, 526, 530, 549
Նուբարյան Նուբար, 284–288
Նուր–Ալի–շահ, 119

Շ

Շակիկ Մուվայիդ ալ–Ազըմ, 337
Շահումյան Ստեփան, 458, 540, 542–544, 558
Շահվերդովներ, 431
Շամիլ, 399, 418, 420, 423, 511

Շամիմ Բահար, 129
Շամշիաշվիլի Ս., 479
Շանիզադե, 243
Շանիձե Ակակի, 481
Շանշյան Պետրոս, 466
Շաուքի Ահմադ, 368
Շապշալի, 73
Շարաբանդյան, 519
Շարիֆզադե Ա., 537
Շելկովնիկով Բ., 117, 464
Շեմսեդդին Սամի, 239, 245, 252
Շեյբանի, 124
Շեյլ, 51
Շեյխ Ալի խան, 495
շեյխ Ահմեդ, 40, 163
շեյխ Խազալ, 87
Շերեմետև, 445
Շերիֆ փաշա, 290
Շերմազան–Վարդանյան, 432
Շերվաշիձե Միխայիլ, 395, 419, 423, 424
Շերվաշիձե, 395, 419, 423, 424
Շեքեթ Մահմուդ, 202, 209, 214
Շիբլի Աթրաշ, 329
Շիբլի Արիան, 350
Շիհաբներ, 349
Շիրին բեկ, 493
Շիրվանզադե Ալ., 467, 555
Շլոշ, 309, 310
Շնորհք Մկրտիչ ամիրա, 227
Շուրիդե, 124
Շտյուսսե Ի., 403

Չ

Չաքեր Խոսրով, 115
Չեռնիշև, 414
Չերչյան Հակոբ, 254
Չիտաձե Գ., 443
Չիտաձե Շ., 471
Չխեիձե Կ., 455
Չխենկելի, 458
Չմշկյան Գ., 458
Չուբինաշվիլի Դավիթ, 480
Չուխաճյան Տ., 241, 252
Չրաքյան Արթին, 276
Չրելաշվիլի Ստեփան, 443

Պ

Պալիաշվիլի Զախարի, 475
Պալմերստոն, 35, 152, 319
Պալյան, 227
Պաուլուչչի, 392
Պապաջանյան Մ., 456
Պասկևիչ, 31, 411, 471
Պասմաճյան Գրիգոր, 227
Պավել Ա, 17, 376, 379, 381, 382, 489
Պետրոսյան Գ., 552
Պերևերզև Պ., 456
Պիկո Ժորժ, 317, 339, 340
Պիսարև, 477
Պլուտարքոս, 566
Պոլյակով Լազար, 59
Պոլյակով Լազար, 59
Պոպով Դ., 456
Պոտտինջերի Էլդրեդ, 34
Պուզիրևսկի, 402
Պուրիշկևիչ Վ., 538
Պոռշյան Պերճ, 466

Ջ

Ջալալ ալե Ահմադ, 127
Ջահիթ Հյուսեյին, 240
Ջամալ ալ–Դին ալ–Աֆղանի, 294
Ջամալ–Ջադե, 127
Ջանաշվիլի Մոսե, 481
Ջանդիերի, 453
Ջանփոլադով, 551
Ջավադ խան, 390, 492
Ջավախիշվիլի Իվանե, 481
Ջավանշիրի Ահմեդ բեկ, 565
Ջավիդ Հ., 568
Ջափարիձե Ա., 534
Ջաֆար–ղուլի, 495
Ջաֆարով Մ., 456
Ջեբրան Խալիլ Ջեբրանի, 368
Ջեմալ, 67, 211, 317, 335–337, 358, 359
Ջևդեթ փաշա, 236, 244
Ջորջաձե Արչիլ, 473
Ջորջաձե Դ., 407
Ջուղաշվիլի Իոսիֆ, 448
Ջուղելի, 457
Ջումբլաթներ, 345, 350
Ջուվարլինսկի Մ., 537

դը Ռեդքլիֆ Սթրադֆորդ, 152
Ռազիկաշվիլի Թեդո, 471
Ռահիմ խան, 75
Ռահման ալ–Զաբարթի, 362
Ռահմի, 190
Ռաղիբ փաշա, 291
Ռամիշվիլի Ն., 456
Ռաշիդ ադ–Դին, 566
Ռաշիդ–խան Շիրվանլի, 536
Ռաուֆ փաշա, 30
Ռաջափ–Ալի Նամի, 119
Ռասին, 363
Ռասուլզադե, 539, 543
Ռաֆի ալ–Թահթաուի, 363
Ռաֆիկ ալ–Ազըմ, 333
Ռեյթեր Ջուլիուս, 56, 57
Ռեջաիզադե Էքրեմ, 252
Ռեֆիկ Բեյ, 237
Ռզաղուլիբեկ միրզա Ջամալ օղլի, 565

Ռ

Ռըզա Բեյ, 173
Ռիդ Ջեյմս, 168
Ռիյադ փաշա, 289
Ռիպկա Յան, 125, 126
Ռիֆա, 363, 366
Ռոբաքիձե Գրիգոլ, 479
Ռոդեն Օգյուստ, 473
Ռոզեն, 408–410, 414
Ռոլեն–Ժեկմեն, 231
Ռոմիյո, 340, 341
Ռոմյե, 20
Ռոստոմյանց Դ. Հ., 554
Ռոտշիլդ, 520, 521, 526
Ռուհի Ամիրհոսեին, 129
Ռուշդի Հուսեյն, 296, 297
Ռուսանով Փեոֆիլակտ, 391
Ռուսո, 363
Ռտիշչև, 392, 393

Ս

դե Սասի Ս., 245
Սաբա, 123, 124
Սաբահէդդին, 189, 191, 192, 199–201, 334
Սադեղ Հեդայաթ, 127–129
Սադեղ Չուբաք, 127
Սաղըք Ռըֆատ, 243
Սադիկ ալ–Ազըմ, 314, 331
Սազոնով Ս. Դ., 84, 86
Սաիդ Հաքիմ, 343
Սաիդ փաշա, 302, 303
Սալիբի Քամալ, 355
Սալիհ Զահր ալ–Դին, 329
Սալիմ ալ–Բուսթանի, 364, 368
Սալման, 119
Սամսամ–օս–Սալթանե / Սամսամ–էս–Սալթանե, 75, 89
Սայիդ Հալիմ, 83, 234
Սայիդ Նաֆիսի, 127
Սայիդ փաշա, 285, 286
Սայիդ–Միրզա, 119
Սայքս Մարկ, 317, 339, 340
Սայքս Պերսի, 89, 90, 317, 339, 340
Սաննու Յակուբ, 365, 367
Սառուֆ Յակուբ, 364
Սավանելի Խարլամպի, 475
Սավֆեթ փաշա, 173
Սարդար Ասադ, 75
Սարդար Բահադուր, 75, 76
Սարդար Ռաշիդ, 86
Սափարովա–Աբաշիձե Մակո, 475
Սաֆրազյաններ, 552, 569
Սեբաստիան, 22
Սելիմ Գ, 20, 140–143, 146, 147, 152, 242, 261, 264, 266, 267, 269, 345
Սելիմ խան, 494
Սելիմ փաշա, 419, 420
Սելիմխանով, 520
Սեյեդ Հասան Թաղի զադե, 81
Սեյիդ Ազիմ Շիրվանի, 568
Սեյմուր ծովակալ, 291
Սեպուհ, 558
Սերեբրյակով, 419
Սերվիչեն, 171
Սև, գնդապետ, 273
Սեփահադար, 74
Սիմոնիչ, 34
Սիրանույշ, 552, 555
Սկանդար–Նովա, 475
Սյուքութի Իսհակ, 189
Սոլոմոն Բ, 394
Սոկոլով, 396
Սուբհ–ե Ազալ, 44
Սուլեյման Միրզա, 81
Սուլթան Աբդ ալ–Մաջիդ–Միրզա, 66
Սուլթան Հուսեյին, 22
Սուլթան Ղրիմ–Գիրեյ, 449
Սունդուկյան Գաբրիել, 467
Սուշոն Վ., 210
Սուրբ Նիկոլայ, 418
Սուրուշ, 124

Սուֆուկ, 309
Սպանդարյան Ս., 558
Սպենդիարյան Հ., 467

Վախթանգ Գորգասալ, 460
Վախթանգ Զ, 412
Վախթանգ, 386, 414, 462
Վահիդ Էֆենդի, 21
Վամբերի Ա., 245
Վաչնաձե, 442
Վառլամ, 391
Վառլամով Վ., 456
Վատեյշվիլի, 471
Վարանդյան Միքայել, 532, 534
Վարդովյան Հ., 242
Վարժապետյան Ներսես, 228, 231
Վեզիրով Նաջաֆբեկ, 568, 569

Տաբիձե Տիցիան, 479
Տատյան, 227
Տարաև, 521
Տետեյան Հ., 224
Տեր–Գաբրիելյան Ս., 558
Տեր–Գրիգորևներ, 527
Տեր–Հակոբյան, 519, 520

Ռաֆֆի, 467

Ցագարելի Ալեքսանդր, 481
Ցիկոձե Իսիդոր, 443

Ուբիչինի Մ., 228

Փազվանթօղլու Օսման, 142
Փալավանդիշվիլի Ի., 408, 409
Փառնավազ, 386, 388, 389, 390
Փիթոև Իսայի, 463, 464, 520, 521
Փիտոև, 549

Քազեմ Ռեշտցի, 41, 127
Քալանթար Ա., 467
Քալանթարյան, 519
Քահեն Լ., 245
Քամալ ալ–Դին Հուսեյն, 299

Սվեշնիկյան, 546
Ստեփանե Խորեն, 466, 556

Վ

Վելյամինով, 402
Վեհապետյան Հ., 232
Վենեցովներ, 551
Վերմիշյան Ա., 519, 520
Վեքիլով Մ., 536
Վիլսոն, 288
Վոլկոնսկի, 388
Վոլտեր, 363
Վոստորգով Ի., 449
Վորոնցով Մ. Ս., 414–416, 472, 509
Վորոնցով–Դաշկով Ի. Ֆ., 449, 454, 526, 535, 536, 546
ֆոն Վանգենհայմ, 210

Տ

Տեր–Ղուկասյան Ա., 464, 519, 520, 554
Տեր–Մարգարյան Գ., 520
Տեր–Միքայելյան Գ., 474, 558
Տեր–Միքայելյան Հայկ, 558
Տիզենհաուզեն, 442
Տյուզյան, 227
Տորմասով, 391, 398

Ր

Ց

Ցիցիանով Պավել (Ցիցիշվիլի), 397–391, 396–398, 406, 492–495, 499

ՈՒ

Ուինգեյթ Ռեջինալդ, 299

Փ

Փիրալով, 551
Փիրզուլի խան Ղաջար, 491
Փիրոսմանի Նիկո, 473
Փշավելա Վաժա, 445, 478, 479
Փուրցելիձե Անտոն, 432

Ք

Քամրան միրզա, 34
Քանդեմիր Դ., 241
Քանինգ Սթրադֆորդ, 146
Քասիմ Ամին, 367
Քարաբեքիր Քյազըմ, 204

Քարամ Յուսուֆ, 352, 355
Քարիմ–խան Զենդ, 118
Քելեքյան Տիրան, 246
Քեչիջի զադե Իզեթ Մոլլա, 148
Քերիմաղա Ֆաթեհի, 565
Քիթապչի Մարգար, 250
Քյամալյանց, 551

Օզանեսով, 551
Օլիմպիանոս, 556
Օլիվիե, 17
Օձելաշվիլի Արսեն, 428
Օմար խան, 377, 378
Օմար փաշա, 349, 350, 420
Օմար, 22
Օմեր Նաջի, 82, 198
Օմեր Սեյֆեդդին, 241
Օսման ալ–Թուրք, 329
Օսման Բարդիսի, 265, 268

Ֆադայինի Ալիմորադ, 129
Ֆառոխի Յազդի, 126
Ֆարահ Անթուն, 368
Ֆարիս Նիմր, 356, 364
Ֆեյսալ, 338, 340, 341, 344
Ֆիրդուսի, 124
Ֆուադ Ահմադ, 299
Ֆուադ Հասան Հաֆիզ, 329

Քյամիլ փաշա, 185, 197, 201
Քյոմուրճյան Երեմիա, 248
Քյոռոողլի, 569
Քոչար Մ., 238
Քուչուկ Սուլեյման, 302
Քրիստովուլուս Մուտավիդիս, 246

Օ

Օտյան Գրիգոր, 171, 172
Օրախելաշվիլի Մ., 459
Օրբելիանի Ա., 407, 408
Օրբելիանի Գ., 406, 418, 432, 476
Օրբելիանի Դ., 409
Օրբելիանի Վ., 393, 400, 407, 409
Օրբելիանի, 400, 416, 442
Օրմանյան Մ., 229, 233, 235
Օցխելի Իոսիֆ, 471
Օքրոպիր, 407

Ֆ

Ֆուադ փաշա, 152, 156, 157, 161, 163, 165, 244, 353
Ֆուադ Քյոփրյուլուն, 247
Ֆրոմ Էրիխ, 127
Ֆաթհ Ալի շահ, 17, 19, 20, 22, 24, 25, 26, 27, 34, 102, 104, 111, 113, 118, 119, 305, 378, 390, 489, 491, 493

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Ա

Աբադան կղզի, 85
Աբխազիա, 26, 376, 394, 395, 398, 413, 419–421, 423, 424, 431, 432, 434, 490
Ագուլեցոց Ս. Աստվածածին, 553
Ադանա, 202–204, 233, 280
Ադիլջևազ, 29
Ադրբեջան, 85, 91, 102, 103, 458, 544, 562, 563
Ադրիանապոլիս / Ադրիանուպոլիս, 37, 45, 147, 167, 176, 207, 208
Աթ մեյդան, 147
Աթենք, 208
Ալաշկերտ, 29, 177, 179
Ալբանիա, 207
Ալ–Բաշիր, 343
Ալեքսանդրապոլ, Գյումրի, 412, 418, 419, 438, 508
Ալեքսանդրետ, 338
Ալեքսանդրիա, 266, 268, 273, 275, 276, 281, 287, 291
Ալժիր, 313, 327
Ալ–Լեջա, 324
Ախալգորի, 462, 465, 468
Ախալցխա, 376, 388, 398, 399, 404, 411, 412, 418, 419, 426, 428, 438, 439, 458, 462, 465, 466, 468, 474, 490
Ախալքալաք, 26, 399, 404, 418, 439, 452, 458, 462, 465, 468
Ախլաթ, 29
Ախմետա, 392
Ախուրյան, 490
Ակկա, 280, 339, 345–347
Ահվազ, 53, 80
Աղդաշ, 540
Աղթամար, 227, 234
Աղստաֆա, 541
Աման, 214
Ամյեն, 262
ԱՄՆ, 36, 61, 76, 187, 315, 334, 358
Այաշ, 234
Այնթաբ, 339
Այսրկովկաս, 14, 17, 19, 20, 26, 27, 54, 74, 108, 215, 216, 375–377, 383, 390–393, 396, 398, 402, 410–414, 416, 418, 421, 424, 446, 447, 453, 455–458, 464, 470, 487–570
Անակլիա, 419
Անանուր, 384, 388, 461, 462
Անապա, 399
Անգլիա, 17–21, 23, 24, 26, 27, 31, 33–36, 49, 51–55, 57, 58, 60–63, 69, 71, 72, 76, 79–81, 84, 86–88, 110, 125, 146–149, 151, 152, 154–157, 164, 201, 221, 222, 252, 260–262, 264, 267–269, 279–284, 288, 289, 291, 293, 295–297, 299, 306, 311, 314, 315, 317, 324, 326, 327, 335, 337–340, 348, 352–354, 358, 359, 382, 417, 419, 454, 556
Անդրլիբանան, 324, 345, 352
Անդրկասպյան շրջան, 51
Անտիոք, 322
Ապշերոն / Ապշերոնյան թերակղզի, 519, 520, 522, 532, 544, 547, 557
Աջարիա, 376, 394, 399, 404, 418, 438, 453, 458, 490
Աջարիս–Ծղալի գետ, 453
Ասիա, 33, 51, 59, 60, 71, 80, 82, 85, 138, 170, 185, 219, 223, 224, 280–282, 385, 523, 539, 546, 550, 566
Ասիր, 278
Ասլանդուզ, 26, 496
Ասյութ, 275
Աստրաբադ, 58, 103
Աստրախան, 503, 521, 523
Ավանաշեն, 559
Ավստրիա, 36, 63, 155, 164, 221, 264, 283, 288, 289, 324, 327, 348, 350, 352, 353, 354, 359, 454
Ավստրո–Հունգարիա, 61, 173, 178, 179, 182, 185, 200, 207, 222, 295, 296, 314
Ատրպատական, 16, 29, 31, 36, 42, 46, 58, 70, 72, 74–77, 80–87, 91, 93, 102–104, 109, 110, 114–117, 493, 542, 548
Արաբական թերակղզի, 39
Արաբիա, 277–283, 319, 324, 325, 335, 338–340
Արաբկիր, 226
Արարա, 341
Արաք, 115
Արաքս, 14, 26, 31–33, 109, 389, 488–490, 493, 496, 500, 557
Արդահան, 177, 418, 419
Արդեբիլ, 102
Արդվին, 399, 453
Արեշ, 512, 515, 544, 560
Արևելյան Այսրկովկաս, 26, 411, 487, 488, 490, 492, 493, 495, 497, 498, 500–519, 521, 523, 524, 527–533, 537–540, 542–551, 553, 554, 556–562, 564–570
Արևելյան Թրակիա, 207

Արևելյան Հայաստան, 26, 29, 31, 109, 216, 461, 503, 518
Արևելյան Ռումելիա, 179
Արևելյան Սուդան, 279, 280, 319
Արևելյան Վրաստան, 384, 390, 392–394, 396, 397, 399, 401, 404, 418, 434, 436, 460, 461, 488, 490, 492
Արևելք, 13, 20, 222, 225, 249, 335, 338, 362, 382, 387, 394, 404, 418, 503, 539, 567
Արևմտյան Հայաստան / Արևմտահայաստան, 29, 114, 181–185, 187, 188, 196, 198, 204, 208, 211–213, 215, 226, 230–235, 340, 341, 411, 554, 555
Արևմտյան Վրաստան, 376, 390, 394–403, 418, 420, 421, 425, 434, 436, 437, 448
Արմենիքենդ, 554
Արտանուջ, 453
Արցախ, 19, 26, 27, 31, 102, 104, 390, 391, 412, 461, 488–491, 493, 494, 496–498, 500, 501, 504, 510, 537, 545, 548, 551, 553, 560, 570
Արփաչայ, 22, 23
Արքուր, 351
Աֆղանստան, 18, 24, 33, 35, 38, 51, 53, 71, 72, 85, 87, 90, 115

Բ

Բաալբեկ, 345, 347
Բագու, տե՛ս Բաքու
Բաթաք, 168
Բաթում, 177, 394, 419, 437–439, 447, 448, 453, 454, 458, 468, 514, 520, 521, 525, 528, 556, 557
Բալախանի, 520, 521, 526, 536
Բալկանյան թերակղզի / Բալկաններ, 80, 138, 149, 152, 155, 166, 176, 178, 179, 194, 195, 206, 214, 282
Բախթիարի, 93
Բակուրցիխե, 442
Բահարիսթան, 73
Բաղդադ, 28, 29, 37, 45, 61, 107, 120, 182, 212, 226, 235, 301–303, 306–312, 315–318, 320, 339, 342
Բաղեշ, 29
Բաղեշահ, 73
Բայազետ, 29, 177, 179, 419, 463
Բանդար Աբբաս, 72
Բաշ Ապարան, 31
Բաշկաղբքլար, 419
Բասրա, 37, 85, 107, 301, 304, 307, 311, 316, 339
Բաքու, 20, 26, 31, 59, 76, 85, 91, 214, 390, 391, 404, 412, 437, 438, 487–570
Բաքուբա, 342
Բեդաշտ, 43
Բեթղեհեմի Ս. Աստվածածին եկեղեցի, 465
Բելգիա, 36, 61, 164, 252, 558
Բելոքան, 386, 399, 412, 418, 492, 495, 497, 507, 515
Բեյթ ալ–Դին, 346, 350
Բեյլան, 280
Բեյրութ, 196, 223, 327, 328, 330, 333, 337, 338, 346, 348–352, 356, 359, 360, 364
Բենդեր Բուշեհր, 40, 463
Բենի Սայիդ, 29
Բեռլին, 38, 61, 72, 80, 86, 87, 177, 179, 181–183, 185, 232, 315, 354
Բեսարաբիա, 145
Բերդի թաղ, 460
Բիբի–Էյբաթ, 536
Բիթլիս, 188, 196, 207, 208, 212, 340
Բիրմա, 109
Բիրջանդ, 72
Բիքաա, 345, 352
Բոդբի, 392
Բոլնիս, 468
Բոմբեյ, 21
Բոսնիա, 154, 166, 200
Բոսնիա–Հերցեգովինա, 161, 200
Բոսֆոր, 61, 86, 147, 152, 175, 210, 215
Բորազջան, 52
Բորժոմ, 426, 437
Բորչալու, 409, 459
Բուլակ, 273
Բուլղարիա, 142, 149, 159–161, 166, 177, 179, 200, 206–208, 214, 227
Բուխարա, 27, 29, 51
Բուխարեստ, 25, 145, 399
Բուշեհր, 23, 35, 40, 52, 53, 61, 85, 463
Բուրջ, 337, 338, 360
Բրիտանական կայսրություն, 54, 143

Գ

Գալիպոլի, 211
Գանձակ, 19, 26, 31, 390, 397, 461, 487–494, 496–499, 508, 511, 512, 515, 523, 524, 537, 540, 548, 551, 553, 555, 559, 560, 565, 570
Գեորգիևսկ, 375, 383, 386, 397, 405, 492
Գերմանիա, 36, 60, 61, 63, 71, 72, 76, 80–82, 84, 85, 87, 173, 182, 184, 187, 207–210, 222, 234, 241, 289, 295, 296, 314–316, 335, 358, 454, 458

Գևորգյան ճեմարան, 555
Գիլան, 58, 74–77, 90, 91, 103, 126, 129
Գիրկ, 559
Գյանջա, տե՛ս Գանձակ
Գյուլիստան, 26–28, 32, 120, 392, 487, 491, 496, 566, 567
Գյումուշ թեփե, 76
Գյոքչայ, 511, 512, 540, 544, 559
Գորգան, 48, 59
Գորի, 381, 384, 404, 412, 426, 438, 439, 442, 448, 459–462, 468–470, 474
Գումգափու, 232, 248
Գունիբ, 423
Գուրիա, 26, 374, 376, 394–398, 402, 412–414, 418–421, 428, 434, 436, 448–451, 479, 490
Գրեմի, 460, 468

Դ

Դաղես–Խաչեն, 465
Դաղստան, 26, 85, 375–377, 387, 393, 399, 402, 423, 488, 489, 492, 495, 497, 503, 515, 566
Դամանհուր, 263
Դամասկոս, 196, 214, 320, 322, 326–328, 330, 333, 335–339, 341, 347, 350, 352, 356, 360
Դամյաթ, 275
Դանիա, 36, 61
Դանուբի նահանգ / Դանուբի վիլայեթ, 159, 160
Դարդանել, 86, 176, 211, 215
Դարիալի կիրճ, 392
Դեյր ալ–Զոր, 342, 343
Դեյր ալ–Կամար, 326, 346, 352, 354
Դերբենդ, 376, 390, 412, 415, 487–489, 495–497, 508, 515, 567
Դիադին, 29
Դիարբեքիր, 188, 204, 207, 208, 339, 343
Դիզակ, 491
Դիլման, 86
Դոնդոլա, 279
Դուշեթի, 392, 404, 454, 459, 474
Դուռնուկ, 465

Ե

Եգիպտոս, 119, 146–148, 155, 179, 182, 191, 211, 260–300, 303, 306, 310, 313, 315, 319, 320, 322, 324, 325, 330, 335–338, 340, 343, 346, 347, 356, 361–369, 556
Ելենենդորփ, տե՛ս Խանլար
Ելիզավետպոլ, 412, 492, 497, 500, 507, 508, 511, 512, 514, 515, 524, 540, 543, 544, 560
Եկատերինոսլավ, 529
Եմեն, 279
Ենիքենդ, 496
Եվպատորիա, 427
Եվրոպա, 17, 23, 44, 54, 62, 63, 98, 99, 109, 110, 116, 120, 128, 145, 146, 157, 160, 161, 163, 191, 206, 219, 220, 221, 223, 238, 242, 262, 267, 286, 313, 362, 365, 367, 404, 416, 425, 474, 503, 516, 523, 532, 551
Երևան, 19, 23, 26, 29, 31, 32, 102, 108, 109, 387, 388, 390, 391, 412, 415, 418, 419, 423, 488, 490, 491, 493, 496, 508, 510, 512, 514, 515, 536, 548, 548, 551
Երզնկա, 212
Երուսաղեմ, 212, 227, 235, 328
Եփրատ, 282, 311

Զ

Զագլիկ, տե՛ս Փիփ
Զակազիկ, 275
Զանգեզուր, 26, 496, 515, 536, 548
Զավակզալնի, 554
Զարգյարան, 559
Զաքաթալա, 418, 515, 516, 524, 559
Զեյթուն, 161, 187
Զենջան, 44
Զերգենդե, 75
Զմյուռնիա, 171, 219, 223, 226, 234, 287
Զոհաբ, 38
Զուգդիդի, 425, 438, 442, 452
Զուլֆաղար, 72
Զրկինյանց Ս. Կարապետ եկեղեցի, 465

Է

Էթ մեյդան, 146
Էնզելի, 57, 59, 77, 557
Էն–Նաջաֆ, 28, 38, 40, 41, 84, 107, 305, 311, 317, 564
Էջմիածին, 29, 108, 110, 115, 226, 235, 381, 464, 555
Էրզրում, 28, 30, 38, 177, 207, 208, 212, 357, 404, 411, 463

Թ

Թաթարստան, 538
Թալիշ, 26, 31, 91, 102, 412, 490–492, 496, 497, 500, 507, 510
Թավրիզ, 29, 31, 43, 44, 61, 65, 67, 74, 75, 77, 80, 81, 85, 86, 92, 94, 102, 109, 112, 114, 115, 116, 125, 503, 551, 564
Թարքու, 495
Թբիլիսի, 409, 460, 464, 471, 473, 474
Թել ալ–Քաբիր, 292
Թելավի / Թելավ, 377, 384, 392, 404, 412, 426, 438, 439, 442, 462, 468–470, 474
Թեհրան, 16, 18–20, 22–26, 31, 33–35, 48, 49, 51, 52, 56–59, 61, 62, 65, 67–70, 72, 73, 75–77, 81, 86–88, 91, 92, 94, 102, 107, 112, 115–117, 119, 121–123, 125, 127, 378, 463, 490, 491, 493, 494, 496, 503, 564
Թեոդոսիա, 427, 453
Թերեք, 432, 477
Թիանեթ, 448
Թիկրիտ, 318
Թիֆլիս, 16, 25, 375, 377–384, 388–390, 392, 398, 400, 403, 404, 408, 411–413, 415, 418–420, 423–426, 432–434, 437–439, 441–443, 446–450, 452, 455–458, 460–475, 488, 492, 494, 507, 509, 511, 512, 514–516, 518, 519, 521, 523, 528, 540, 543, 551, 552, 556, 558, 559, 570
Թմոգվի, տե՛ս Թմուկ
Թմուկ, 460
Թունիս, 179, 313
Թուրքեստան, 27, 85, 249, 332, 538
Թուրքիա, 15, 17, 20–23, 25, 27–31, 37, 38, 72, 81, 82, 84, 85, 87, 88, 90, 143, 144, 152, 155, 159, 162, 171, 176, 179, 183, 189, 193, 202, 206, 208, 210, 213, 226, 227, 229, 240–242, 244–247, 249, 252, 274, 277, 280, 281, 283, 284, 299, 306, 310, 311, 315, 316, 323, 324, 327, 333, 335, 337, 338, 348, 353–355, 359, 376, 377, 381, 386, 394–396, 399, 404, 406, 413, 418–420, 425, 440, 453, 454, 458, 463, 492, 511, 537, 539, 541, 542, 550, 556, 565, 568
Թուրքմենչայ, 32, 36, 109, 487, 496

Ի

Իմերեթ, Իմերեթիա, Իմերեթի թագավորություն, Իմերեթիայի թագավորություն, 26, 374, 376, 381, 386, 388, 392, 394–399, 401, 402, 408, 412, 413, 415, 420, 421, 425, 431, 434, 436, 453, 490, 507
Ինգուր, 420
Իսմայիլիա, 292
Իսպանիա, 36
Իտալիա, 36, 63, 173, 182, 206, 207, 222, 253, 284, 288, 289, 314, 358, 558
Իրան, 14–129, 210, 221, 375–378, 381, 384, 386, 388, 390–394, 398–400, 406, 440, 463, 487–497, 500, 503, 506, 508, 523, 546, 551, 556, 559, 564, 568
Իրանական Քրդստան, 37, 72, 76, 77, 83, 85, 93
Իրաք Աջմի, 103
Իրաք, 28, 38, 41, 42, 107, 277, 278, 282, 294, 301–308, 310–318, 321, 328, 333–335, 337–343, 358, 359, 564

Լ

Լայպցիգ, 503
Լանչխութ, 413, 420
Լեհաստան, 408, 409, 450, 556
Լեմնոս, 215, 360
Լենքորան, 31, 496, 508, 510, 512, 543, 544, 569
Լիբանան, 162, 212, 283, 294, 313–317, 324–328, 330, 333–340, 345–359, 362
Լիբիա, 206
Լիխի լեռնաշղթա, 394
Լյուլեբուրգաս, 206
Լոնդոն, 19, 23, 25, 29, 30, 34, 35, 38, 51–54, 63, 79, 84, 126, 151, 155, 206, 207, 224, 276, 283, 293, 339, 427, 566, 567
Լոռի, 26, 496
Լուրեսթան, 88

Խ

Խան Թուման, 341, 360
Խանասոր, 86
Խանդուշ, 29
Խանլար, 507
Խաշուրի (Միխայլովո), 437, 448
Խաչմաս, 560
Խարբերդ, 188, 207, 208
Խարտում, 279
Խարք կղզի, 21, 24, 35, 52
Խևսուրեթ, տե՛ս Խևսուրք
Խևսուրք, 388, 393
Խիվա, 38, 51

Խոյ, 31, 74, 80, 85, 109, 495
Խորասան, 17, 30, 33, 42, 58, 77, 103
Խորեզմ, 27
Խորհրդային Ռուսաստան, 458, 459, 544
Խուդաֆերինի կամուրջ, 488
Խուզիսթան, 87
Խուշաբ, 52

Ծ

Ծալկա, 411
Ծղնեթ, 465

Կ

Կախավան, տե՛ս Կախի
Կախեթ, 376, 381–383, 386, 387, 390, 392–394, 399, 400, 402, 403, 406, 408, 420, 448, 460, 461, 490, 495
Կախի, 559
Կախուրելի, 465
Կահիրե, 126, 261–264, 266–268, 270, 273, 275, 276, 278, 279, 289–295, 297, 333, 356, 363–365, 367
Կասպի, 465
Կասպիական նահանգ, 412, 413, 415, 507, 508, 510, 560
Կասպից ծով, 18, 26, 32, 43, 56, 57, 59, 62, 76, 90, 394, 416, 437, 494–496, 503, 516, 523, 539, 545, 551, 556, 557
Կավալլա, 264
Կատիֆ, 278
Կարախաչ, 465
Կարաչայ, 422
Կարին (Էրզրում), 177, 188, 212
Կարուն, 48, 52, 53, 56, 57, 80
Կարս, 155, 177, 404, 418, 419, 420, 463, 514
Կենտրոնական Ասիա, 33, 51, 60, 85, 539, 550
Կենտրոնական Աֆրիկա, 335
Կենտրոնական Իրաք, 316, 318, 339
Կեսարիա, 226
Կերչ, 427, 529
Կիև, 529
Կիզիկի, 442
Կիզլյար, 493
Կիլիկիա, 161, 202, 215, 227, 232, 235, 281, 283, 320–323, 325, 339, 557
Կիսլովոդսկ, 423
Կիրենայիկա, 206
Կիրկ, տե՛ս Գիրկ
Կոնիա, 280
Կոչոր, 411, 468
Կոստանդնուպոլիս, 20, 22, 30, 61, 82, 83, 85, 86, 91, 141, 141–143, 146, 147, 152, 157, 162, 163, 170, 173, 176, 177, 183, 185, 187, 189, 195, 201, 206–208, 210, 211, 214, 215, 219, 223, 226, 227, 229–235, 238, 248, 251, 253, 261, 266, 281, 283, 285, 287, 301, 303, 304, 306, 310, 311, 317, 324, 332, 333, 337, 340, 343, 349, 350, 354, 404, 417, 427, 463, 503, 551, 565
Կովկաս, 14, 17, 19–21, 27, 29, 32, 33, 51, 56, 60, 74, 82, 85, 86, 145, 155, 167, 176, 210, 211, 221, 249, 315, 375–384, 390, 392, 393, 399–401, 404, 406, 408–410, 414–416, 418–420, 423, 424, 426, 427, 433, 434, 439, 445, 449, 451, 453–458, 463–471, 489, 490, 492, 495, 497, 508, 509, 511, 512, 514, 515, 517, 518, 526, 528, 529, 533–538, 540, 542, 544, 546, 549, 550, 554
Կովկասյան լեռնաշղթա, 14, 375
Կուբան, 423
Կումիս, 465
Կուսանաց անապատի Ս. Աստվածածին, 553
Կուտ ալ–Ամարա, 316
Կուր, 14, 389, 426, 489, 490, 494, 495, 500, 516, 544, 545
Կրետե, 160, 181, 182, 200, 207, 281–283, 325

Հ

Հալեպ, 202, 214, 280, 294, 307, 308, 322, 329, 338, 339, 341, 342, 360
Համա, 280, 338, 339, 341, 343
Համադան, 88, 89, 94, 117
Համզա, 338
Հայաստան, 13–15, 26, 29, 31, 32, 109, 114, 147, 176, 177, 181–188, 196, 198, 204, 208, 211–213, 215, 223, 224, 226, 230–235, 340, 341, 357, 411, 418, 419, 458, 459, 461, 503, 512, 517, 518, 532, 554–557
Հայաստանի Հանրապետություն, 204
Հայկաշեն, տե՛ս Արմենիքենդ
Հայֆա, 280, 339
Հաուրան, 324, 326, 329
Հաջի–Կաբուլ, 541
Հասբիյ, 352
Հավլաբար, 461, 465
Հավլաբարի Ծամքորեցոց Ս. Գևորգ եկեղեցի, 465
Հավլաբարի Ս. Մինաս եկեղեցի, 465

Հաքյարի, 339, 340
Հեզր կղզի, 38
Հերաթ, 33–36, 51–54
Հերցեգովինա, 161, 166, 179, 200
Հիլլա, 307
Հիջազ, 184, 278, 338, 340, 344, 360
Հյուսիսային Աֆրիկա, 17
Հյուսիսային Իրաք, 305, 306, 316, 318
Հյուսիսային Կովկաս, 167, 384, 408, 409, 420, 423, 453, 492, 495
Հյուսիսային Մակեդոնիա, 194
Հյուսիսային Նուբիա, 279
Հնդկական օվկիանոս, 58, 60, 376
Հնդկաստան, 17–25, 27, 33, 34, 38, 51–53, 58, 60, 66, 71, 85, 87, 90, 109, 115, 211, 311, 463, 503, 556
Հնդուր, 559
Հոլանդիա, 36, 61
Հոմս, 280, 333, 338, 339, 341, 347
Հորդանան, 333, 338–340, 360
Հորիան ամրոց, 35
Հունաստան, 28, 30, 36, 62, 145–149, 160, 179, 181, 200, 206, 207, 223, 229, 280

Ղ

Ղազա, 280, 298
Ղազախ, 508, 515, 570
Ղազանչեցոց Ամենափրկիչ մայր տաճարը, 553
Ղազիկ, 72
Ղալագահ, 559
Ղանթարա, 298
Ղասրե Շիրին, 72, 89
Ղարաջալի, 560
Ղզլար, 493
Ղոթուր, 38, 86
Ղուբա, 26, 412, 487–492, 494–501, 505–508, 511, 512, 515–517, 524, 544, 545, 555, 560, 570
Ղում, 69, 70, 88, 564
Ղրիմ, 51, 52, 151, 155, 218, 221, 417, 421, 427, 429, 449, 511, 538

Ճ

Ճավա, 109
Ճիաթուրի, 438, 447, 448, 455

Մ

Մաան, 298
Մադինա, 278, 338
Մադրաս, 559
Մազանդարան, 42–44, 58, 91, 103, 115
Մալթա, 348
Մակեդոնիա, 179, 190, 193–195, 199, 264, 267
Մանազկերտ, 29
Մանասիֆ, 351
Մանավ, 393
Մանգլիս, 411, 465
Մասջեդ–ե Սոլեյման, 79
Մարաղա, 74, 109
Մարանդ, 31, 74, 80
Մարաշ, 283, 481
Մարդին, 339
Մարոկկո, 313
Մարսել, 61
Մարսուդ, 273
Մեգրելիա / Մենգրելիա, 26, 374, 376, 394–397, 402, 413, 416, 419–423, 428, 434, 436, 449, 450, 469, 490
Մեթն, 350, 351
Մեղրեցոց Ս. Աստվածածին, 553
Մեղրի, 26
Մեշհեդ, 34, 52, 58, 59, 65, 74, 92, 115
Մեսքենե, 342
Մերձավոր Արևելք, 83, 109, 182, 212, 263, 277, 361, 377, 396, 410, 417
Մերձբալթիկա, 450, 477
Մերսին, 338
Մեքրան, 90
Մեքքա, 166, 278, 279, 338, 340, 344
Միջագետք, 29, 61, 182, 315
Միջերկրական ծով, 51, 61, 155, 177, 179, 221, 376
Միջին Արևելք, 17, 23, 51, 52, 54, 60, 61, 81, 463, 503, 570
Մյուսիպլի, 541
Մոլդովա, 144, 145
Մոնաստիր (Բիտոլ), 195, 205, 206
Մոսկվա, 407, 442, 470, 480, 481, 521, 551
Մոսուլ, 29, 235, 305, 306, 317, 318, 339, 342, 343
Մորեա, 280
Մուդրոս, 215, 216, 360
Մուղան, 16, 20, 75, 516, 528
Մուղնի, 465, 488
Մուղնու Ս. Գևորգ եկեղեցի, 465
Մուշ, 29, 212, 357, 557
Մցխեթ, 428, 462

Յ

Յազդ, 30, 44, 89, 94, 121, 129, 130
Յանբո, 278
Յաֆա, 280
Յողզատ, 170

Ն

Նաբլուս, 341
Նաբուդա, 276
Նալչիկ, 423
Նախիջևան, 19, 23, 26, 31, 32, 109, 412, 490, 496, 508, 536
Նահր ալ–Ումար, 342
Նաջաֆ, տե՛ս Էն–Նաջաֆ
Նաջդ, 278, 279
Նավարին, 147
Նեյրիզ, 44
Ներսիսյան վարժարան, 465
Ներքին Եգիպտոս, 290
Ներքին Մակեդոնիա, 190
Նիգոեթի, 420
Նիզիբ, 148, 282, 324
Նիժնի Նովգորոդ, 538
Նիկոլաև, 529
Նիկոմեդիա, 226
Նյու Յորք, 61
Նյու Օռլեան, 61
Նովոռոսիյսկ, 453, 525, 529
Նոր Ջուղա, 94, 109, 110, 113–116, 125
Նորաշենի Ս. Աստվածածին եկեղեցի, 465
Նորվեգիա, 61
Նուխի, 496, 505, 506, 508, 510, 512, 515, 516, 523, 524, 530, 540, 544, 551, 555, 558, 559, 560, 564

Շ

Շաթ ալ–Արաբ / Շաթթ–էլ–Արաբ, 37, 38, 85, 315, 342
Շահ–Աբբաս մզկիթ, 565
Շահրիզուր, 29
Շահրուդ, 43
Շամախի, 390, 415, 489, 494, 502, 505, 507–512, 515, 516, 524, 544, 551, 553, 555, 558, 559, 565, 570
Շամխոր, 31, 492, 540
Շամշադին, 26, 496, 508
Շամշուլդե, 465
Շատիլի, 393
Շարուր–Դարալագյազ, 536
Շաքի, 19, 190, 198, 391, 412, 487–490, 494–498, 501, 502, 507, 510, 512, 559, 560
Շեմոքմեդի, 402
Շեյխ–Թաբարս, 44
Շեքվեթիլի, 418
Շիրազ, 40, 41, 43, 65, 67, 87, 89, 90, 94, 120–122
Շիրվան, 19, 26, 31, 102, 391, 412, 488, 490, 491, 494, 496, 497, 500, 501, 510, 511, 545,
Շորագյալ, 26, 496
Շորապան, 448
Շուբրա, 276
Շուլավեր, 468
Շումնա, 227
Շուշի, 31, 391, 488, 489, 493, 497, 503, 505, 508, 510, 512, 515, 516, 524, 536, 537, 543, 551–553, 555, 564, 569
Շուֆ, 350, 351
Շվեդիա, 36, 61

Չ

Չալդրան, 29
Չանղըր, 234
Չեհրիք, 43
Չեչնիա, 399
Չեռնոգորիա, 161, 172, 177, 179, 206
Չինաստան, 72, 82, 109, 332
Չիքիշլյար, 58
Չոլոկի, 420
Չոխատաուրի, 402
Չումլակ, 393

Պ

Պաղեստին, 212, 214, 280–283, 294, 298, 312–317, 319–325, 328–330, 333, 335–340, 346, 358–360
Պանտրմա, 226
Պարսից ծոց, 21, 23, 24, 35, 52, 53, 55–58, 60–62, 69, 80, 85, 87, 89, 107, 304, 310, 311, 324, 557
Պարսկաստան, 27, 56, 59, 67, 72, 77, 305, 306, 310, 311, 316, 490, 561, 567

Պենզա, 409
Պետերբուրգ, 26, 52, 56, 79, 169, 375–382, 388–390, 396, 398, 406, 407, 410, 412, 414, 442, 445, 449, 468, 475, 480, 481, 490, 494, 509, 521, 534, 566
Պետրոգրադ, 455, 456
Պլևեն, 176
Պորտ Սաիդ, 292, 343
Պորտուգալիա, 164
Պորտ–Պետրովսկ, 525
Պրուսիա, 20, 23, 283, 324, 327, 352, 353, 354, 359

Ջ

Ջավատ, 490, 511, 512, 544
Ջարո–Բելոքան (Սաինգիլո), 386, 399, 418, 492, 495, 497, 507, 515
Ջեբել Դրուզ, 329, 330, 336
Ջեբրայիլ, 515, 548
Ջեզին, 351
Ջերբ, 308, 309
Ջևանշիր, 515, 537, 548
Ջիդդա, 278
Ջուբեյլ, 345, 347
Ջրաբերդ, 491

Ռ

Ռազմա–Վիրական ճանապարհ, 387
Ռաճա, 434
Ռաշայյա, 352
Ռաչի, 459
Ռաս ուլ–Այն, 342
Ռեդուտ–կալե, 419
Ռեյունյոն, 61
Ռեշտ, 41, 59, 74, 75, 77
Ռեսեն, 194
Ռևել, 194
Ռիզե, 186
Ռիզվա, 45
Ռիոն, 420, 426, 437
Ռյազան, 391
Ռոզետա, 268
Ռոմանի, 536
Ռոստով, 427, 521
Ռումելիա, 141, 148, 179
Ռումինիա, 161, 176, 177, 252, 556
Ռուսական կայսրություն, տե՛ս Ռուսաստան
Ռուսաստան, 14, 15, 17–34, 36–38, 49, 51, 52, 54, 56–62, 69, 71, 72, 74, 76–90, 92, 99, 108–110, 121, 125, 127, 139, 140, 145, 147, 148, 152, 155, 168, 172–179, 181, 183, 186–188, 194, 207, 208, 210, 213, 221, 223, 246, 264, 280–283, 306, 311, 315, 324, 327, 339, 340, 352–354, 358, 359, 375–400, 402–407, 410, 411, 413, 415–417, 419, 421–425, 427, 429, 432, 433, 436–440, 442, 445–448, 450, 451, 453–459, 461, 469, 470, 474, 476, 477, 480, 488–498, 500–507, 510–512, 515–519, 521, 523, 525, 526, 528–532, 534, 537–539, 542–545, 548–556, 558, 559, 561, 562, 564, 568
Ռուսե (Ռուսչուք), 143, 161

Ս

Ս. Աստվածածին, 465, 553, 558, 560
Ս. Բարթուղեմեոս վանք, 110
Ս. Գևորգ եկեղեցի, 460, 465, 559
Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, 554
Ս. Թադե վանք, 110, 115, 554
Ս. Թարգմանչաց եկեղեցի, 554
Ս. Հովհաննես Մկրտիչ, 553, 554
Ս. Հռիփսիմե, 560
Ս. Մարիամյան վարժարան, 560
Ս. Մինաս, 465, 560
Ս. Ստեփանոս Նախավկա վանք, 559
Սաբզևար, 35
Սաբունչի, 536
Սալմաստ, 31, 74, 80, 109, 110
Սալյան, 31, 524
Սալոնիկ, 190, 191, 195, 201–203, 205, 206, 223, 240
Սաղիան, 559
Սամարղանդ, 27
Սամարրա, 38, 107, 315
Սամուխ, 493
Սամուրզականո, 394, 421, 422
Սամսուն, 196
Սամտրեդիա, 438
Սամցխե, 385, 394
Սայդա, 326, 328, 345, 346, 348, 350, 352
Սան Ստեֆանո, 177–179, 183
Սանդուխտյան դպրոց, 558, 559
Սաչխերի, 474
Սասուն, 186
Սարդինիա, 155
Սեբաստիա, 22, 188, 207, 208
Սենակի, 452, 459
Սեննար, 279

Սերբիա, 147, 149, 161, 172, 177, 179, 206, 207
Սև ծով, 83, 147, 155, 210, 340, 394, 396, 399, 419, 420, 437, 494
Սևաստոպոլ, 420, 453
Սեփահսալարի մզկիթ, 73
Սիամ, 109
Սիբիր, 75, 393, 428
Սինա, 211, 298, 331
Սինգապուր, 109
Սիոնի տաճար, 380, 382, 383, 391, 400
Սիսթան, 33, 58, 103, 107
Սիրիա, 162, 212, 214, 277, 278, 280–283, 294, 298, 312–343, 346, 352, 353, 355, 356, 358, 359, 361, 362, 364, 365, 368
Սղնախ, 384, 392, 404, 426, 431, 438, 439, 442, 461, 462, 468–470, 474
Սոխում, տե՛ս Սուխում
Սոմխիթ, 461
Սուդան, 279–283, 293, 299, 313, 319, 324, 325
Սուեզ, 60, 211, 285, 286, 292, 298, 299
Սուլեյմանիա, 306, 311
Սուլթանաբադ, 115, 117
Սուխում, 394, 399, 404, 419, 426, 431, 432, 439, 448, 450, 462, 468, 514
Սուջանա, 469
Սուվեյդիա, 330, 356
Սուր, 346, 347
Սուրամ, 388, 462
Սոֆիա, 176, 179
Սպահան, 16, 43, 62, 72, 74, 75, 88–90, 92, 94, 102, 113, 115, 121, 125, 462, 503
Սվանեթ, 374, 394, 395, 398, 421–423, 434, 441
Ստամբուլ, 126, 164, 228, 249
Ստավրոպոլ, 424

Վ

Վադի ալ–Թայմ, 326
Վալախիա, 28, 145, 154
Վան, 29, 170, 187, 188, 196, 207, 208, 212, 357, 557
Վանքի տաճար, 460, 464
Վաշինգտոն, 61, 76
Վառնա, 227
Վատիկան, 325, 362
Վեդեն, 399
Վելիսցիխե, 468, 474
Վենետիկ, 248
Վերին Եգիպտոս, 263, 265–267
Վիդին, 142
Վիեննա, 74, 221, 354
Վյատկա, 409
Վյուրտեմբերգ, 507
Վոլոգդա, 409
Վորոնեժ, 424
Վրաստան, 16, 17, 19, 21, 26, 32, 147, 176, 374–481, 488–492, 503, 512, 516, 517, 546
Վրացա–իմերեթական նահանգ, 412, 415

Տ

Տաիֆ, 278
Տամբով, 409
Տանտա, 275
Տավրոս, 215, 331
Տիբեթ, 71, 72
Տիգրիս, 311, 317
Տիզրոն, 316
Տիլզիթ, 23
Տղիբուլի, 437, 438, 448, 455
Տրանսիլվանիա, 144
Տրապիզոն, 196, 208, 212, 223, 398, 404, 427
Տրիպոլի, 326, 328, 346, 347, 356
Տրիպոլիտանիա, 206
Տփղիս, տե՛ս Թիֆլիս

Ց

Ցեբելդա, 394, 422, 423
Ցեյլոն, 292
Ցինանդալ, 468
Ցխինվալ, 426, 465, 468

ՈՒ

Ուկրաինա, 450, 477, 507
Ունքյար Իսքելեսի, 147
Ուջար, 541
Ուրմիա, 36, 43, 85, 86, 94, 109, 340, 494
Ուրֆա, 283, 339
Ուփլիսցիխե, 460

Փ

Փամբակ, 496
Փասանաուրի, 392
Փարիզ, 19, 23, 53, 54, 61, 128, 151, 155, 156, 171, 189, 191, 192, 224, 230, 253, 287, 313, 331, 333, 334, 356, 357, 363, 365, 429
Փիրալլահի, 520
Փիփ, 545
Փշավի, 388
Փոթի, 394, 398, 399, 404, 426, 427, 432, 437, 439, 448, 468, 518
Փոքր Ասիա, 80, 138, 170, 185, 219, 223, 224, 280–282

Ք

Քազեմեյն, 38, 107
Քարբալա, 28, 40, 41, 84, 107, 564
Քարթլի, 374, 376, 381–394, 397, 399, 400, 402, 406, 408, 431, 448, 460, 461, 490, 495
Քարթլի–Կախեթական թագավորություն, 383, 384, 389, 397
Քելմենչուրի, 386
Քեսրվան, 351, 352
Քերբելա, 302, 305, 311, 317
Քերեջ, 48
Քերման, 69, 72, 90, 94, 103
Քերմանշահ, 29, 30, 88, 89, 115
Քիլվար, 560
Քիրքուք, 29, 306
Քյութահիա, 281, 282
Քյուրդամիր, 540, 541
Քոբուլեթ, 419, 420
Քութայիս, 398, 404, 411, 412, 415, 420, 423, 425, 426, 434, 437–439, 442, 443, 454, 459, 462, 468–470, 474, 475, 509, 511, 512, 514
Քուլևի, 426, 427
Քուրակ, 391
Քսանի, 388, 391
Քվախրել, 460
Քրդստան, 37, 72, 76, 77, 83, 85, 93, 103, 305, 310, 311

Օ

Օդեսա, 76, 427, 453, 529
Օզուրգեթի, 414, 452
Օսիա, 388, 414
Օսմանյան կայսրություն, 14, 17, 20, 21, 27–30, 33, 37, 38, 47, 51, 61, 66, 81–85, 117, 138, 139, 142, 145, 147, 148, 150–158, 160–166, 168–229, 235–239, 242–254, 262, 263, 266, 268–270, 274, 277, 281, 282, 284, 287, 293, 295, 296, 301, 305–307, 310–315, 318, 324, 329–335, 337, 338, 340, 341, 351, 353, 355–358, 360, 361, 375, 376, 384, 394, 395, 398, 399, 417, 419, 453, 532, 533, 540, 542, 547, 565
Օրդուբադ, 496, 551
Օրենբուրգ, 409
Օրփիրի, 425

Ֆ

Ֆազօղլու, 279
Ֆաո, 311, 315
Ֆարս, 23, 42, 44, 87, 93, 103
Ֆեբրահ, 35
Ֆինլանդիա, 409, 450
Ֆինկենշտեյն, 21, 22, 24
Ֆումեն, 90
Ֆրանսիա, 17–24, 36, 51, 61, 63, 147, 151, 152, 155–157, 164, 173, 179, 182, 187, 188, 207, 210, 213, 315, 221, 222, 241, 262, 264, 267, 268, 270, 271, 276, 280–291, 295, 314, 315, 317, 319, 324, 326–328, 339, 340, 352–354, 356, 358, 359, 362, 363, 365, 408, 417, 419, 454, 556

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱԿԻՑ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՉՈՐՍ ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՏՈՐ III

ՆՈՐ ՇՐՋԱՆ

Հրատարակչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Տեխնիկական խմբագիր՝ Նվարդ Փարսադանյան
Կազմը և էջադրումը՝ Գրիգորի Հարությունյանի
Խմբագիր և սրբագրիչ՝ Նվարդ Փարսադանյան

Քարտեզների հեղինակ՝ Վարդան Մխիթարյան

Անվանացանկերի կազմողներ՝ Աննա Անտոնյան, Աշխեն Գևորգյան,
Վերոնիկա Թորոսյան, Մոնիկա Միրզոյան

ISBN 978–9939–99–018–7

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100/16: Թուղթը՝ օֆսեթ
Ծավալը՝ 37,5 տպ. մամ. օֆսեթ + 1,5 տպ. մամ. կավճ.: Տառատեսակը՝ GHEA Mashtots

«ԶԱՆԳԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28
info@zangak.am, www.zangak.am, www.book.am, www.facebook.com/zangak

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

HISTORY OF NEIGHBOURING COUNTRIES OF ARMENIA

IN FOUR VOLUMES

VOLUME III

MODERN TIMES

Director of Publishing House Emin Mkrtchyan
Technical Editor Nvard Parsadanyan
Cover and Layout by Grigori Harutyunyan
Editor and Proofreader Nvard Parsadanyan

Maps by Vardan Mkhitaryan

Indices by Anna Antonyan, Ashkhen Gevorgyan,
Monika Mirzoyan, Veronika Torosyan

ISBN 978–9939–99–018–7

Offset printing. Size 70x100/16. Offset paper
Volume 37,5 offs. quire + 1,5 coated quire. Font GHEA Mashtots

«ZANGAK» PUBLISHING HOUSE
49/2 Komitas Avenue, Yerevan, 0051, Armenia, tel.: (+37410) 23–25–28
info@zangak.am, www.zangak.am, www.book.am, www.facebook.com/zangak

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК АРМЕНИИ
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

ИСТОРИЯ СОПРЕДЕЛЬНЫХ С АРМЕНИЕЙ СТРАН

В ЧЕТЫРЕХ ТОМАХ

ТОМ III

НОВОЕ ВРЕМЯ

Директор издательства Эмин Мкртчян
Технический редактор Нвард Парсаданян
Обложка и верстка Григорий Арутюнян
Редактор и корректор Нвард Парсаданян

Автор карт: Вардан Мхитарян

Составители индексов: Анна Антонян, Ашхен Геворгян,
Моника Мирзоян, Вероника Торосян

ISBN 978–9939–99–018–7

Печать офсетная. Формат 70x100/16. Бумага офсетная
Объем 37,5 п. л. офсет. + 1,5 п. л. мелован. Гарнитура GHEA Mashtots

ИЗДАТЕЛЬСТВО «ЗАНГАК»
РА, 0051, Ереван, пр. Комитаса 49/2, тел.: (+37410) 23–25–28
info@zangak.am, www.zangak.am, www.book.am, www.facebook.com/zangak

Թեհրան, XIX դարի վերջ

Թեհրան, XX դարի սկիզբ

Սպահան, XX դարի սկիզբ

Սպահանի Սայյեդ մզկիթը, XIX դար



Սպահանի Մայր տաճարը, XIV դար



Սպահանի Մայր տաճարը ներսից



Նասր–էդ–Դին շահին նախապատրաստում են լուսանկարվելու

Եփրեմ Դավթյան

Ղաջարների զինանշանը

Մետաղադրամ՝ շահ Ահմադ Ղաջարի պատկերով

Կ. Պոլիս, Փերա, 1912 թ.

Տրապիզոն, XIX դարի վերջ



Էրզրում, XX դարի սկիզբ

Դոլմաբահչե պալատը

Սամսուն, ծխախոտի գործարան, XX դարի սկիզբ



Օսմանյան խորհրդարանը

Օսմանյան դրոշմանիշ, 1914 թ.

Նամիք Քեմալ, գրող, քաղաքական գործիչ

Տեղահանվող հայեր, Հայոց ցեղասպանություն, 1915 թ.

Ալ–Ազհարի համալսարանը Կահիրեում



Բաղդադ



Դամասկոս, XIX դար

Դամասկոս, քաղցրավենիք վաճառող, 1894 թ.

Մուհամմեդ Ալի

Դաուդ փաշա

Ջեբրան Խալիլ Ջեբրան, արաբ գրող



Թիֆլիս, XIX դար

Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը

Բաթում, XX դարի սկիզբ

Բաթումի Հայ առաքելական Սուրբ Փրկիչ եկեղեցին

Քութաիս, XX դարի սկիզբ

Բաքու, 1890 թ.

Բաքու, XX դարի սկիզբ

Բաքվի Սուրբ Թադեոս և Բարդուղիմեոս հայկական եկեղեցին

Ելիզավետպոլ



Նոբել եղբայրների գործարանը Բաքվում

Ղաջարական Պարսկաստանը (1795–1925 թթ.)



Օսմանյան կայսրությունը

Օսմանյան կայսրության անկումը

Ռուս-թուրքական պատերազմ (1877-1878 թթ.)

Եգիպտոսը Մոհամմադ Ալիի և նրա իրավահաջորդների օրոք (1805–1914 թթ.)

Լիբանանը 1914 թ.

Այսրկովկասը 1914 թ.

Սայքս-Պիկոյի համաձայնագիրը (1916 թ.)